Ֆ. ԱՍՏՈՒԱՅԱՆ

ԻՐԱԿԱՆԱՑՄ ՈՐԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑ ԼԵԶՎԻ


ՀԱՅԱ
ԱՍՏԱՂԱՄԱՍ

Академия Наук Армянской ССР
институт языка

Г. АЧАРЯН

ПОЛНАЯ ГРАММАТИКА АРМЯНСКОГО ЯЗЫКА

В СРАВНЕНИИ С 562 ЯЗЫКАМИ

ВВЕДЕНИЕ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1955

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կ91.99-5
Կ-50

Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՕՏՈՒՎՎԱԾ Է 1991 Թ.

ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ
562
ԼԵԶՈՒՆԵՐԻ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՏՊԱՐԱՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1955

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

Պատրաստեց տպագրության և խմբագրեց պրոֆ. Է. Բ. ԱՂԱՅԱՆ
Подготовил к печати и редактировал проф. Э. Б. АГАЯН

А VIII
814

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԸ ԵՎ ԻՐ «ՎԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ»

1953 թ. ապրիլի 16-ին վախճանվեց ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի արևելյան լեզուների ամբիոնի վարիչ, Չեխոսլովակիայի ակադեմիայի թղթակից անդամ, ՀՍՍՌ Գիտությունների վաստակավոր գործիչ, պրոֆեսոր-դոկտոր Հրաչյա Հակոբի Աճառյանը։

Բազմավաստակ գիտնական Հրաչյա Աճառյանն իր բեղմնավոր ստեղծագործական կյանքը, իր գիտական մեծ կարողությունները ի սպաս է դրել հայ լեզվաբանության ու բանասիրության զարգացման գործին։ Աշխարհի լեզվաբանական գիտական հասարակայնությունը նրան ճանաչում է որպես անխոնջ հետազոտողի, որպես հմուտ լեզվաբան-հայագետի, որ հարստացրել է հայագիտությունը մի շարք կապիտալ աշխատություններով։

Հրաչյա Աճառյանը ծնվել է 1876 թվականին, Կոնստանդնուպոլսում, արհեստավորի ընտանիքում։ Սկզբնական կրթությունն ստացել է իր ծննդավայրում՝ սովորելով Պոլսի Կենտրոնական վարժարանում, ապա՝ 1895 թ. մեկնել է Ֆրանսիա՝ բարձրագույն կրթություն ստանալու. այստեղ նա սովորել է Սորբոնի համալսարանում, աշակերտելով հատկապես Անտուան Մեյեին։ 1897 թվականին Փարիզի լեզվաբանական ընկերությանը (Société de linguistique de Paris) ներկայացնելով լազերենի ուսումնասիրությունը՝ ընտրվում է ընկերության անդամ։ Նույն թվականին մասնակցում է արևելագետների տասներեքերորդ կոնգրեսին՝ Փարիզում։ Այստեղ նա կարդում է երկու զեկուցում հայերենի մասին. հայագետ Հյուբշմանը, որ նիստի նախագահն էր, հավանելով զեկուցումները՝ հրավիրում է Աճառյանին իր մոտ՝ Ստրասբուրգ, յուր դասախոսությունները լսելու։ Ընդունելով այդ հրավերը՝ Հրաչյա Աճառյանը 1898 թվականին գնում է Ստրասբուրգ և մեկ սեմեստր

անկնդրում Հյուբշմանին։ Ավարտելով բարձրագույն կրթությունը և ստանալով լեզվաբանական մեծ պատրաստություն՝ Աճառյանը 1898 թվականին գալիս է Անդրկովկաս և ամբողջությամբ նվիրվում գիտական-մանկավարժական գործունեության, իբրև ուսուցիչ աշխատելով Էջմիածնում, Շուշում, Նոր Բայազետում և այլուր։ Սակայն Աճառյանի գիտական բեղմնավոր գործունեությունն սկըսվում է Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո։ Երբ հիմնադրվում է Երևանի Պետական համալսարանը, Աճառյանը հրավիրվում է որպես հայագիտական, լեզվաբանական ու արևելագիտական առարկաների դասախոս և անհուն սիրով ու ոգևորությամբ նվիրվում երիտասարդ սերնդի դաստիարակության պատվավոր գործին։ Հենց այդ շրջանում էլ Աճառյանը հրատարակում է իր խոշոր մենագրական աշխատությունները։ Նրա գրչին են պատկանում շուրջ երկու հարյուր գիտական մեծարժեք աշխատություններ։ Նրա «Հայերենի արմատական բառարանը», «Հայ բարբառագիտությունը», «Հայոց անձնանունների բառարանը», «Հայոց լեզվի պատմությունը», «Հայոց լեզվի լիակատար քերականությունը» և այլ մենագրական ստվարածավալ աշխատությունները մեծագույն ավանդ են ոչ միայն հայագիտության, այլև սովետական լեզվաբանական գիտության բնագավառում։

* * *

Արտակարգ բեղմնավորության հասնող իր գիտական գործունեությամբ Հրաչյա Աճառյանը ընդգրկել է հայոց լեզվի ուսումնասիրության բոլոր բնագավառները՝ հիմնադիր հանդիսանալով հայագիտության մի շարք ճյուղերի։

Ավարտելով ուսումը և լեզվաբանական անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելով՝ Աճառյանը նախ և առաջ իր ուսումնասիրության առարկա է դարձնում հայերենի բազմաթիվ ու բազմազան բարբառները։ Օդտագործելով հայերեն բարբառների մասին մինչև այդ եղած ուսումնասիրությունները և ավելացնելով իր հետազոտությունների տվյալները, նա առաջին հերթին զբաղվում է բարբառների գիտական դասակարգման հարցով և նրանց ընդհանուր նկարագրությամբ։ Դրան է նվիրված նրա «Classification des dialectes arméniens» («Հայ բարբառների դասակարգումը») աշխատությունը, որ իբրև դիսերտացիա ներկայացվել է Սորբոնի համալսարանին ու լույս տեսել 1909 թվականին՝ ֆրանսերեն լեզվով,

և որը վերամշակված և ավելի ընդարձակված, լույս է տեսել հայերեն՝ 1911 թվականին, Ն. Նախիջևանում, «Հայ բարբառագիտություն» խորագրով։

Հեղինակը ընդարձակ ներածությամբ նախ ծանոթացնում է հայ բարբառագիտության պատմությանը, ապա՝ տալիս բարբառների ուսումնասիրության հիմնական սկզբունքները։ Այնուհետև ծանոթություն տալով հայերի բնակած տեղերի և «Օտարախոս հայերի» մասին, անցնում է բուն նյութին։ Բաժանելով հայերեն բարբառները երեք ճյուղերի՝ նա տալիս է յուրաքանչյուր ճյուղի բարբառներից առավել կարևորների նկարագիրը և բերում նրանց նմուշները։ Այդ աշխատության արժանիքն իմանալու համար պետք է նկատի ունենալ, որ մինչ այդ հայերեն բարբառների մասին ընդհանուր բնույթի գիտական լուրջ ուսումնասիրություններ չկային, թեև շատերն էին շեշտել դրանց անհրաժեշտությունը. կային մի քանի բարբառների առանձին հետազոտություններ, որոնք հաճախ գիտական արժեքից զուրկ էին. իբրև ընդհանուր ուսումնասիրություն մնում էր դսրբձյալ Այանյանի «Նախաշավիղ»-ի հայտնի հատվածը, որ սակայն ընդհանուր-պատմական ակնարկ էր միայն։ Աճառյանն առաջինն էր, որ լեզվաբանորեն ուսումնասիրեց հայերենի բազմաթիվ բարբառները և գիտական հիմունքներով դասակարգից նրանք և այդպիսով իսկ հիմնադրեց հայ բարբառագիտությունն՝ իբրև հայ լեզվաբանության մի առանձին ճյուղ։ Աճառյանի այս գիրքը հայ բարբառագիտության հիմքն է հանդիսանում։

Թե որքան ճիշտ է կարողացել լուծել իր առջև դրած խնդիրը՝ հայերեն բարբառների դասակարգումը, պարզ է դառնում այն բանից, որ հետագա բարբառագիտական բոլոր ուսումնասիրությունները նորանոր տվյալներով հաստատեցին այդ դասակարգումը։ Իր աշխատության մեջ Աճառյանը ցույց է տալիս, որ աշխարհագրական դասակարգումը չի տալիս հայերեն բարբառների ճշգրիտ պատկերը. Արևելյան և Արևմտյան կոչված խմբերը իրենց մեջ ընդգրկում են բարբառներ, որոնք միանգամայն տարբեր են իրենց հիմնական քերականական հատկանիշներով. հնչյունական տարբերությունները նույնպես դասակարգման հիմք չեն կարող հանդիսանալ, որովհետև՝ մի կողմից՝ իրարից բոլորովին տարբեր, նույնիսկ տարբեր ճյուղերի մեջ մտնող բարբառները հնչյունական միևնույն հատկանիշներն ունեն (ինչպես՝ պայթականները Ագուլիսի և Մեղրու բարբառներում), մյուս կողմից, երբեմն միևնույն բարբառի խոսվածքները տարբեր հնչյունական հատկանիշներ

ունեն (ինչպես՝ պայթականները Նոր Նախիջևանի խոսվածքներում)։ Ելնելով այս բոլորից, Աճառյանը գտնում է, որ հայերեն բարբառների դասակարգման հաստատուն հիմք կարող են ծառայել ձևաբանական տարբերությունները։ Քննության առնելով բարբառների ունեցած ձևաբանական տարբերությունները, նա հանգում է այն եզրակացության, որ ամենից ավելի աչքի ընկնող ձևաբանական տարբերությունը սահմանական եղանակի ներկայի և անցյալ անկատարի կազմությունն է, «որին զուգադիպում է նաև ներգոյականի և երբեմն էլ բացառականի կազմության եղանակը։ Բարբառների մի մասը հիշյալ բայական ձևերը կազմում է ում մասնիկով, մի ուրիշ, ավելի սովար մասը՝ կը նախամասնիկով և մի ավելի փոքր մասն էլ ել վերջավորությամբ։ Այսպես՝ բերում եմ, բերում էի, — կը բերեմ, կը բերէի — բերել եմ, բերել եմ էր»։ Այսպիսով, Աճառյանը, հիմնվելով իր հետազոտությունների վրա, հայերեն բոլոր բարբառները բաժանում է երեք ճյուղի, կոչելով դրանք ում, կը, ել ճյուղեր։ Այս դասակարգումն է, ահա, որ ընդունված է հայ բարբառագիտության կողմից։ Հետագայում, ճիշտ է, այդ դասակարգումը ենթարկվել է որոշ ճշտումների ու լրացումների, բայց և այնպես նա մնացել ու մնում է իբրև հայերեն բարբառների գիտական դասակարգման հիմք։

Շարունակելով իր բարբառագիտական հետազոտությունները, Աճառյանը հատուկ ուշադրություն դարձրեց հայերեն բարբառների բառային կազմի վրա։ Այդ ուղղությամբ կատարած իր հետազոտությունների արդյունքներն ամփոփված են «Հայերեն դավառական բառարանի» մեջ, որ լույս է տեսել 1913 թվականին, Թիֆլիսում։ Ըստ էության սա նախորդ աշխատության լրացումը կարելի է համարել. եթե նախորդում նա տվել է հայ բարբառների տեսական նկարագրությունը, նրանց քերականությունը, ապա՝ այստեղ հավաքել է հայերեն բարբառների բառամթերքը, որը պարունակում է մոտ 30 000 բառ։ Բառարանի մեջ մտել են այն բառերը, որոնք ո՛չ օտար փոխառություններ են (նոր ժամանակի) և ո՛չ էլ գրաբարում կան, այսինքն՝ միայն բարբառային հայերեն բառերը։ Թեև, ինչպես հեղինակն է խոստովանում, հրատարակությունը կատարված է հակառակ իր կամքի և առանց իր հսկողության, որի պատճառով էլ հնարավորություն չի ունեցել վերանայելու և անհրաժեշտ լրացումներ ու փոփոխություններ կատարելու, բայց և այնպես, այդ վիճակում էլ հայերեն բարբառների լավագույն բա-

ռարանն է, թեև միակը չէ (իբրև մրցակից ունի Ամատունու «Հայոց բառ ու բանը», որ պարունակում է 16 000 բառ և ոճ)։

Վերջապես նրա բարբառագիտական հետազոտությունների արդասիքն են հանդիսանում բազմաթիվ բարբառների մենագրական ուսումնասիրությունները, որոնցից լույս են տեսել՝ Մարաղայի, Ագուլիսի, Նոր Ջուղայի, Նոր Նախիջևանի, Ղարաբաղի, Համշենի, Առտիալի, Վանի, Պոլսի բարբառներին նվիրված մենագրությունները։ Բացառիկ բարեխղճությամբ, մանրամասնությամբ ու բազմակողմանի ուսումնասիրելով այդ բարբառները, Աճառյանը ո՛չ միայն գիտական անգնահատելի ավանդ է մտցրել հայ բարբառագիտության մեջ, այլև ստեղծել է բարբառների ուսումնասիրության գիտական նեղանակ ու տրադիցիա, որին հետևում են ժամանակակից հայ բարբառագետները։

Այսպիսով՝ Հրաչյա Աճառյանը հիմնադիրն է հայ բարբառագիտության, որպես գիտական ճյուղի, և նրա մեծավաստակ մշակը։

Հ. Աճառյանի գիտական ուսումնասիրությունների կարևորագույն բնագավառներից մեկն էլ եղել է հայոց լեզվի բառագանձի քննությունը՝ ստուգաբանությունը։ Դրան է նվիրված շուրջ քառասուն տարիների անխոնջ աշխատանքի արդյունքը՝ «Հայերեն արմատական բառարանը» (Երևան, 1926—1932), վեց հատորից բաղկացած մի ծավալավալ աշխատություն, որին նայելն անգամ պատկառանք է ներշնչում։ Յոթերորդ հատորն է կազմում հավելվածը, որ լույս է տեսել 1935 թվականին։ Համեստ վերնագիր կրող այս աշխատությունը լիակատար ցանկն է հայերեն լեզվի արմատների, նրանց բացատրությամբ, քերականական տեղեկություններով ու ստուգաբանությամբ հանդերձ։ Փոքր ի շատե ամբողջական գաղափար կազմելու համար, ավելորդ չենք համարում ծանոթացնել բառարանի համակարգին։ Բառարանում հերթականությամբ ամփոփված են բոլոր հայերեն արմատները. յուրաքանչյուր բառի մասին խոսված է հինգ բաժնով. 1) Բառագիտություն, որտեղ տրվում են՝ արմատը (գլխատառով գրված), այդ արմատի հոլովական ու խոնարհման ձևերը, նշանակությունը, վկայություններ՝ բառի գործածության մասին, նրանից կազմված բառերը, և, վերջապես, տարբեր դրվություններ։ 2) Ստուգաբանություն, որ կազմում է բառարանի հիմնական, ամենակարևոր մասը. այստեղ հեղինակը բերում է արմատի ստուգաբանությունը, որի իր կողմից ճիշտ է համարված, բայց որովհետև շատ բառերի համար բազմաթիվ հեղինակների կողմից շատ ու շատ ստուգաբանություններ են առա-

ջարկված, ուստի և հեղինակը միայն իր ընտրությամբ չի բավականացել. նա յուրաքանչյուր ստուգաբանության ճիշտ կամ անճիշտ համարելու համար ստացել է Հյուբշմանի, իսկ նրա մահվանից հետո՝ Մեյեի հավանությունը. այնպես որ՝ «Այսքան զգուշությունից հետո, կարծում եմ որ իբր ուղիղ նշանակված ստուգաբանությունները իրոք կարելի է ստույգ համարել» (հատ. 7, էջ 17).

3) Ստուգաբանությունների պատմություն. այս բաժնում հեղինակն ամփոփում է այն բոլոր բառագիտական քննությունները կամ՝ նույնիսկ դիտողությունները, որոնք կատարվել են V դարից մինչև բառարանի հրատարակությունը՝ հայ կամ օտար հեղինակների կողմից։ Այստեղ հեղինակը բերում է տվյալ արմատի մասին եղած բոլոր ստուգաբանությունները, որոնք երկրորդ բաժնում տեղ չեն գտել իբրև անճիշտ, ինչպես և հայտնում, թե ո՛վ է առաջին անգամ առաջարկել ճիշտ ստուգաբանությունը. այսպիսով տրվում է հայերեն բառերի ստուգաբանության կատարյալ պատմությունը։ 4) Գավառական բառեր, որտեղ տրված են յուրաքանչյուր արմատի ստացած զանազան ձևերը հայերեն զանազան բարբառներում։ Այս բաժինն առանձնապես մեծ կարևորություն ունի հայերեն բարբառների ուսումնասիրության համար. հեղինակը կազմել է 30 գավառականի (բարբառներ և ենթաբարբառներ) բառացանկը և ներմուծել բառարանի այս բաժնի մեջ։ Այս մասի արժեքը է՛լ ավելի մեծանում է այն պատճառով, որ շատ հայերեն բարբառներ այժմ անհետացել են, մանավանդ առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ հենց պատերազմի հետևանքով, ուստի և նրանցից գիտության համար պահպանված նյութը միայն այստեղ եղածն է։ 5) Հայերենից փոխառյալ բառեր, որի մեջ տրված են, թե հայերեն այս ինչ բառը ո՛ր լեզվի մեջ է մտել՝ իբրև փոխառություն. այս բաժինը նույնպես կարևոր է այն տեսակետով, որ ցույց է տալիս հայերենի ազդեցությունը ուրիշ լեզուների վրա, մի բան, որով առհասարակ լեզվաբանները քիչ են զբաղվել։

Այս ծրագրին նայելն արդեն բավական է, գաղափար կազմելու համար այն ապշեցուցիչ աշխատանքի մասին, որ կատարել է հեղինակը։ Դժվար է հավատալ, թե մի մարդ կարող է այդքան բան անել. և, սակայն, արված է և այն էլ ինչպիսի՜ հմտությամբ, ինչպիսի՜ բարեխղճությամբ։ Հեղինակը կատարյալ հաջողությամբ իրականացրել է այդ զգնխիչ ծրագիրը՝ ստեղծելով մի անգնահատելի գործ։ Արմատական բառարանը ամփոփումն է հայ լեզվաբանության մի ճյուղի, այն է՝ ստուգաբանության. նրա մեջ

ամփոփված է այն ամենը, ինչ որ որևէ ժամանակ, որևէ մեկի կողմից որևէ հայերեն բառի մասին ասված է. դրա շնորհիվ է ահա, որ դարագլուխ կազմող այս աշխատությունը դարձել է հայագիտության ամենաամեծարժեք գործերից մեկը։ Արմատական բառարանն իր տեսակի մեջ բացառիկ երևույթ է լեզվաբանական գրականության մեջ[1]։ Հեղինակը բացի հայագետների տված ստուգաբանություններից, բազմաթիվ բառեր էլ ինքն է ստուգաբանել. դրանց մասին ավելի հարմար ենք գտնում բերել հեղինակի խոսքերը, որոնց մեջ լիովին պարզաբանված են իր ստուգաբանությունների բնույթն ու արժեքը. «Գիտությունների առաջարկած ստուգաբանություններից դուրս, ինքս էլ ունեմ բազմաթիվ ստուգաբանություններ, մի մասը արդեն հրատարակված զանազան տեղեր, մի մասը անտիպ։ Այն ստուգաբանությունները, որոնք այժմ անհիշտ եմ համարում, դրված են պատմականի շարքում, իսկ այն ստուգաբանությունները, որոնք ենթարկվել են Հյուբշմանի և Մեյեի հավանության, և կամ քննության խիստ բովից անցկացնելով կարծում եմ, թե համապատասխան են գիտության պահանջներին, համարձակվել եմ դնել ուղիղ ստուգաբանության շարքը, բայց նշանակելով միշտ Աճ. ստորագրությամբ, առ ի զգուշություն ընթերցողների։ Այս ստուգաբանությունների թիվն է 1604 (մեծ թիվ, բայց դրանցից միայն 136-ը բնիկ հայ, իսկ մնացյալը փոխառյալ կամ բնաձայն լինելով. քանակը մեծապես փոքրանում է)։ Ապագան ցույց պիտի տա, թե սրանցից որքանն են ընդունելի» (Անդ, էջ 17)։ Մեր կողմից կարող ենք ավելացնել, որ այդ ստուգաբանությունների նկատմամբ հեղինակը միանգամայն խստապահանջ է եղել, որով և նրանց ճշտությունը երաշխավորվում է։

«Արմատական բառարանի» լրացումը կարելի է համարել «Հայոց անձնանունների բառարանը», հինգ հատորից բաղկացած մի մեծածավալ աշխատություն, որի չորս հատորն է առայժմ հրատարակված (Երևան, 1942—1948)։ Այս աշխատության մեջ հեղինակը հավաքել, դասավորել և ուսումնասիրել է հայոց լեզվի մեջ գործածված բոլոր անձնանունները՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև տասնհինգերորդ դարը. 1500 թվականից հետո միայն գրականության ու պատմության մեջ նշանավոր անձերի անուններն է հավաքել։ Յուրաքանչյուր անվան մասին խոսում է երկու

[1] Ոչ մի լեզվով և ոչ մի լեզվի համար այդպիսի ընդարձակությամբ ստուգաբանական բառարան չկա. եղածներից ընդարձակագույնն է Boisacq-ի հունարեն ստուգաբանական բառարանը, որ սրա համեմատությամբ շատ սեղմ է (շուրջ 1500 էջ)։

հատվածում. առաջինում բերում է անունը՝ տալով նրա ծագումը կամ ստուգաբանությունը, և հիշելով նրա փաղաքշական ու ժողովրդական ձևերը։ Երկրորդ հատվածում պատմական հաջորդականությամբ բերված են նույն անունը կրող բոլոր անձինք՝ տալով նրանց մասին կենսագրական համառոտ տեղեկություններ (երբ կան), ապա և՝ այն բոլոր տեղերը, ուր հիշատակված է այդ անձը ամբողջ հայ հին մատենագրության, ձեռագրաց ցուցակների և հեղինակի կողմից առանձնապես կարևոր համարված նոր աղբյուրների մեջ։ Այս ընդարձակ ծրագիրը ևս հեղինակն ի կատար է ածել բացառիկ բարեխղճությամբ և ուշադրությամբ և այսպիսով իսկ տվել մի աշխատություն, որ չափազանց մեծ արժեք է ներկայացնում թե՛ հայ լեզվաբանության, թե՛ հայոց պատմության, և թե՛ հայ բանասիրության համար։ Այսուհետև երբ որևէ մեկը կամենա մի անձնավության, որևէ հայ գործչի մասին բիբլիոգրաֆիա կազմել, պետք չունի այլևս մեր ահռելի հին մատենագրությունը ծայրից ծայր կարդալու. այստեղ բոլորը հավաքված են ու նշված յուրաքանչյուր անձնանվան տակ։ Այս տեսակետից ճիշտ ենք համարում մեր ընկերներից մեկի խոսքերը, թե՝ Անձնանունների բառարանը նույն նշանակությունն ունի հայոց պատմության համար, ինչ որ Հայկազյան բառարանը՝ հայոց լեզվի համար։

Աճառյանի գիտական ուսումնասիրությունների կարևորագույն բնագավառներից մեկն էլ հայոց լեզվի պատմությունն է։ Իր երկարամյա գիտական գործունեության ընթացքում նա միշտ էլ զբաղվել է հայոց լեզվի պատմության հարցերով և իր հմուտ ուսումնասիրություններով լուծել հայոց լեզվի պատմական զարգացմանը վերաբերող շատ հարցեր։ Այս ուղղությամբ կատարած իր հետազոտությունները ամփոփված են «Հայոց լեզվի պատմություն» երկհատոր աշխատության մեջ (Ա մաս 1940, Բ մաս 1951)։ Նոր ժամանակներում շատ են գրել ու գրում են ուրիշ լեզուների պատմության, որոնք, սակայն, իրականում այս կամ այն լեզվի պատմահամեմատական կամ միայն պատմական քերականությունն են հանդիսանում։ Աճառյանի այս աշխատությունը բոլորովին այլ բնույթ ունի. այստեղ տրվում է նախ լեզվի բառամթերքի պատմությունը (Ա մաս, Բ մասի որոշ գլուխներ), ապա՝ հայերենի կրած փոփոխությունները իր պատմական զարգացման տարբեր շրջաններում և այդ շրջանների (վիպասանական, դասական կամ մեսրոպյան, հետմեսրոպյան, հունաբան հայերեն, միջին հայերեն, լատինաբան հայերեն, աշխարհաբար՝ բազմաթիվ բարբառներով

հանդերձ) լեզվի նկարագրությունը (Բ մաս)։ Բառամթերքի ուսումնասիրության տեսակետից այս աշխատությունը օրգանական շարունակությունն է կազմում «Արմատական բառարանի»։

Եթե «Արմատական բառարանում» ամփոփված են հայերեն արմատները և նրանց ստուգաբանությունը, ապա այստեղ այդ բոլոր ստուգաբանությունների հիման վրա խմբավորված են բոլոր բառերն ամենից առաջ ըստ իրենց ծագման, որով և նախ՝ պարզված է, թե ինչն է «բնիկ-հնդեվրոպականը», ապա՝ թե օտար լեզուներից հայերենն ինչ ազդեցություն է կրել բառամթերքի կողմից։ Դրանցից յուրաքանչյուրի մեջ էլ բառերը դարձյալ ըստ իրենց նշանակության տարբեր խմբավորումների ենթարկելով, հեղինակը ցույց է տալիս, թե ինչ արժեք են ներկայացնում նրանք հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական կյանքի պատմության համար, թե յուրաքանչյուր լեզվից փոխառած բառերը, յուրաքանչյուր լեզվի ազդեցությունը հայերենի վրա՝ ինչ նշանակություն է ունեցել հայ ժողովրդի համար՝ քաղաքակրթության (կուլտուրայի) տեսակետից։ Բնականաբար բառացանկերը տալուց առաջ հեղինակը լուսաբանում է պատմական այն հանգամանքները, այն պայմանները, որոնց մեջ այս կամ այն լեզվից հայերենը ազդեցություն է կրել։ Առաջին հերթին հայերի նախապատմության ու «հնդեվրոպական նախահայրենիքից» գաղթելու մասին խոսելով՝ նա նկարագրում է հնդեվրոպացիների, ապա՝ հայերի քաղաքակրթության աստիճանը նախնական շրջանում, այնուհետև տալիս հայերեն այն բոլոր բառերը, որոնք հնդեվրոպական ծագում ունեն, այսինքն՝ «բնիկ» հայերեն են. այստեղ յուրաքանչյուր բառի դիմաց տրված են հնդեվրոպական վերականգնված նախաձևը և ցեղակից լեզուների մեջ եղած համապատասխան ձևերը։ Այնուհետև հեղինակն անցնում է ուրիշ լեզուների ազդեցությանը։ Բառամթերքի պատմության տեսակետից գիրքն ամփոփում է այն ամենը, ինչ որ կատարված է այդ ուղղությամբ հայերենի ուսումնասիրության մեջ, անշուշտ, այդ բոլորը պատմահամեմատական մեթոդով քննության ենթարկելով և ընդունելով այն, ինչ որ գիտական է։

Հայտնի է, որ Աճառյանը տեսական հարցերում հետևել է Անտուան Մեյեի տեսությանը, որ ինչպես գիտենք, լեզվաբանության մեջ սոցիոլոգիական ուղղության խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է, և որ ընդհանուր լեզվաբանության մեջ Հյուբշմանի հարած ուղղությունից տարբեր ուղղության հետևելով, հայագիտության հիմնական հարցերում, հատկապես հայերենի ցեղակցու-

թյան հարցում, Հյուբշմանի դպրոցին է հետևում։ Աճառյանն իբրև այս դպրոցի վերջին և մեծագույն ներկայացուցիչ, իր աշխատություններին, հատկապես «Հայոց լեզվի պատմության» մեջ ամփոփել է այն բոլոր արդյունքները, որոնք ձեռք են բերված հայերենի ուսումնասիրության մեջ այս դպրոցի տարբեր ներկայացուցիչների կողմից՝ ավելացնելով իր ուսումնասիրությունների արդյունքները։

Առաջին հատորի մեջ առանձնակի կարևորություն են ներկայացնում առաջին երկու գլուխները («Հնդեվրոպական նախաշրջան» և «Հնդեվրոպական բարբառները և հայերենի դիրքը նրանց մեջ»), որտեղ հեղինակը քննության է առնում լեզվի պատմական զարգացման, լեզուների ցեղակցության, հայերենի և հնդեվրոպական լեզուների ցեղակցության ու ցեղակից լեզուների շարքում նրա կազմավորման հարցերը։ Աճառյանը ելնում է այն ճիշտ դրույթից, որ լեզուն՝ հասարակական երևույթ լինելով՝ զարգանում է հասարակության հետ. նա ունի իր անընդհատ զարգացման ընթացքը, ունի յուր «ձևափոխություններին» պատմությունը. «Պատմել մի որևէ լեզվի պատմությունը՝ նշանակում է նկարագրել այն բոլոր ձևափոխությունները, որոնց ենթարկվել է այդ լեզուն իր գոյության ընթացքում, սկսած իր նախնական շրջանից մինչև տվյալ րոպեն։ ...Լեզվի պատմությունը կապվում է նույն ազգի քաղաքակրթության պատմության, քաղաքական պատմության և գրականության պատմության հետ» (Հայ. լեզվի պատմ., I մաս, էջ 7)։ Ընդունելով լեզվի պատմականությունը և նրա կապը հասարակության հետ՝ հեղինակը գտնում է, որ լեզվի զարգացման համար գոյություն ունեն երեք գործոններ. առաջինը և ամենակարևորը լեզվի ներքին «բարեշրջություններն» է, նրա էվոլյուցիան, նրա բնական զարգացումը, որ մի հարատև պրոցես է լեզվի կյանքում. այսինքն՝ հեղինակը լիովին ընդունում է լեզվաբանական անընդհատականությունը։ Երկրորդ գործոնն է համարում օտար ազդեցությունները, որոնք նույնպես մեծ դեր են խաղում լեզվի զարգացման մեջ։ Վերջապես երրորդը՝ անհատական նորմուծություններն են, որոնք մասամբ գրական ճանապարհով են կատարվում և լեզվի զարգացման մեջ շատ ավելի փոքր դեր են խաղում. «Այդ ձևափոխություններից ամենամեծ մասը առաջացած է լինում ներքին, այսինքն բնական ճանապարհով, իբրև արդյունք բարեշրջության (էվոլյուցիայի) և բնական զարգացման. մի ուրիշ ստվար մաս առաջացած է լինում արտաքին ճանապարհով, այսինքն փոխառությամբ, իբրև արդյունք օտար ազդեցության, և վերջապես՝ երրորդ՝ ավելի փոքր մասը, առաջա-

ցած է լինում անհատական ճանապարհով, այսինքն գրական նորմուծութիւններով։ Այսպիսով, ամեն մի ձևափոխութիւն ունի իր բուն պատճառը՝ ներքին, արտաքին կամ անհատական» (Անդ)։ Լեզուների այս հարատև զարգացման, լեզվաբանական անընդհատականութեան հետ է կապված նաև նախալեզվի հարցը. լեզուներն իրենց ներքին զարգացմամբ առաջ են բերում իրենց բարբառները, որոնք այլ և այլ պատմական հանգամանքների շնորհիվ (գաղթ և այլն) կարող են դառնալ ինքնուրույն, անկախ լեզուներ. այսպիսով՝ մի նախալեզվից ժամանակի ընթացքում առաջացել են ցեղակից լեզուները, որոնք թեև շատ բաներում տարբերվում են իրարից, բայց հիմնական կետերում, առանձնապես քերականութեան մեջ, պահպանում են իրենց ցեղակցական հատկանիշները։ Այսպես են ստացվել նաև մեզ ծանոթ հնդեվրոպական լեզուները մի մայր լեզվից՝ հնդեվրոպական նախալեզվից։ Հնդեվրոպական բոլոր լեզուները նախապես կազմում էին «մի լեզու, որ խոսվում էր հնդեվրոպացիների կողմից նախահայրենիքում, հնագույն ժամանակ» (նախալեզվի և նախալեզվի տնօրութեան մասին ավելի մանրամասն կխոսվի ստորև)։

Հեղինակը, ինչպես և Մեյեն, գտնում է, որ այդ նախալեզուն վերականգնել հնարավոր չէ. այն, ինչ որ վերականգնվում է մեզ ծանոթ հնդեվրոպական ցեղակից լեզուների համեմատական ուսումնասիրութեամբ, չի ներկայացնում նախալեզվի ամբողջական պատկերը, մանավանդ նրա սկզբնական շրջանից մինչև տարբեր լեզուների բաժանման ժամանակի զարգացման պատմութեյունը. «Ինքնախաբեութեյուն է սակայն կարծել, թե ամենայն ինչ վերականգնված է կատարելապես և ամբողջապես։ Լեզվաբանական բոլոր քննութեյունները՝ ձայնաբանական, ձևաբանական, ու շարադասական՝ տալիս են մեզ նախալեզվի մասին միայն մի ընդհանուր գաղափար, բայց նրա ամբողջական պատկերը ինչպես նաև նրա զարգացումը և ընդհանուր միութեյան ժամանակաշրջանից մինչև բաժանման րոպեն եղած զարգացման պատկերը մեծագույն մասամբ մնում են անհայտ։ Մինչև անգամ նախալեզվի բառամթերքը որ լեզվի շատ ավելի հասարակ կողմն է, ամբողջովին երևան հանված չէ» (Անդ. էջ 9)։

Անցնելով մասնավորապես հայերենին, հեղինակը, իհարկե, անվերապահորեն հնդեվրոպական լեզու է համարում այն՝ հիմնվելով քերականութեյան վրա, որ ընդունվում է իբրև լեզվի անխառն մասը. «Լեզվաբանութեյունը հաստատել է, որ հայերենը պատկա-

նում է լեզուների այն մեծ ընտանիքին, որ հայտնի է գիտության մեջ հնդեվրոպական լեզվաբուն անունով» (Անդ, էջ 7)։

Հեղինակն ընդունում է հայերենի դիրքը լեզուների շարքում այնպես, ինչպես հաստատված է Հյուբշմանի և Մեյեի կողմից։ Այս հարցին նա նվիրել է մի մեծ գլուխ (էջ 23—99), որի մեջ ամփոփում է այդ խնդիրը որոշող բոլոր քննությունների արդյունքները, հատկապես Մեյեի «Les dialectes indoeuropéens» աշխատությունը։ Ամբողջը բաժանված է 16 կետերի, որը և ամփոփ կերպով բերում ենք այստեղ. հնդեվրոպական ցեղակից լեզուների (հնդեվրոպական բարբառների) զուգակցությունները հետևյալ պատկերն են ներկայացնում.

1. Մի խումբ բառեր գոյություն ունեն միայն բալթիկ-սլավոնական, գերմանական, կելտական և իտալական լեզուների մեջ և չկան արիական, հայ և հույն լեզուներում։ Այս բառերից շատերը քաղաքակրթական նշանակություն ունեն (մեծ մասամբ երկրագործական են), ուստի և ցույց են տալիս նույն լեզուներով խոսող ժողովուրդների առանձին զարգացումը։

2. Հնխ. կոկորդային k^1 և k^2 հնչյունների դիմաց իտալական, կելտական և գերմանական լեզուները, ինչպես և հաթերենն ու թոխարերենը ներկայացնում են կոկորդային հնչյուններ, մինչդեռ արիական, բալթիկ-սլավական, հայերեն, ալբաներեն, փռյուգերեն ու թրակերեն լեզուները երկու հնչյունները զանազանում են իրարից։ Առաջինի դիմաց դնում են շչական հնչյուններ, երկրորդը՝ պահում կոկորդային։

3. Հնխ. a և o ձայնավորներն անփոփոխ են մնում հունարեն, հայերեն, իտալական ու կելտական լեզուներում, իսկ արիական, բալթիկ, ալբանական ու գերմանական լեզուներում, այլև հաթերենում երկուսն էլ հավասարապես դառնում են a, «սլավական լեզուների մեջ՝ o, որ նշանակում է դարձյալ a»։

4. Արմատի վերջահանգ t-ի և նույն այդ հնչյունով սկսվող մասնիկի միացմամբ ստացված կրկնակ tt հնդեվրոպական նախալեզվի մեջ՝ ժառանգ լեզուներում վերածվում է երկու ձևի. իտալական, կելտական ու գերմանական լեզուներում դառնում է ss, մյուսներում՝ st.

5. Բառի միջին վանկերում եղած նախալեզվյան ձայնավորը մնում է սանսկրիտ, հունարեն, իտալական, կելտական, ինչպես և թոխարերեն լեզուներում, իսկ իրանյան, գերմանական, բալթիկ-սլավոնական և հայերեն լեզուների մեջ ջնջվում է։

6. Հնխ. շնչեղ պայթական ձայնեղները (bh, dh, g^1h, g^2h) զանազան ժառանգ լեզուների մեջ տալիս են այլ և այլ ձայնեղ բաղաձայններ, և միայն հունական և իտալական լեզուներում դարձել են խուլ, ապա՝ վերածվել շփականի։

7. Հնխ. շնչեղ խուլ բաղաձայնները (ph, th, kh) անփոփոխ են մնացել արիական ճյուղի և հայերենի մեջ. հունարենը մասամբ պահում է դրանք, իսկ մյուս բոլոր արևմտյան լեզուները «շփոթում են պարզ խուլերի հետ»։

8. Հնխ. s բառասկզբում դառնում է h՝ հայերեն, հունարեն, և իրանյան լեզուների մեջ, որոշ դեպքերում բառամիջում դառնում է š արիական, մասամբ նաև բալթիկ-սլավոնական ու հայերեն լեզուներում, իսկ մյուս արևմտյան լեզուներում այդ կարգի փոփոխություններ չկան։

9. Հնխ. բայերի կատարյալի նախահավելվածը գոնում ենք միայն արիական, հայերեն ու հունարեն լեզուներում (օր. բերեմ, եբեր)։

10. Բալթիկ-սլավոնական, գերմանական, կելտական և թերևս իտալական լեզուները կատարյալը կազմում են առանց կրկնության, իսկ արիական և հունական լեզուներում կատարյալը կրկնավոր է։

11. Ներկայի ye մասնիկը պահվում է հունական և արիական լեզուներում, բալթիկ-սլավոնական և հայերեն լեզուները պահում են անփոփոխ կամ դարձնում i, գերմանական, կելտական, իտալական լեզուները ձգտում են ջնջման։

12. Արիական և հունական լեզուները ածականի համեմատական աստիճանը կազմում են Հնխ. tero մասնիկով, իտալական, կելտական, գերմանական և բալթիկ-սլավոնական լեզուները՝ yes մասնիկով, իսկ հայերենը երկուսից էլ զուրկ է։

13. Իտալական, հայերեն և հունարեն լեզուները ունեն գոյականի o վերջավորությամբ իգականներ, որ հին հնդեվրոպական է, իսկ մյուս լեզուները կամ ջնջել են այն, կամ դարձրել են a։

14. Արիական, հունական, իտալական և կելտական լեզուների մեջ եղած գործիականի bh մասնիկի դիմաց բալթիկ-սլավոնական և գերմանական լեզուները ունեն ռնգային m, իսկ հայերենը՝ բ կամ ձայնավորից հետո՝ վ, ւ։

15. Հոգնակի ներգոյականի համար արիական և բալթիկ-սլավոնական լեզուներն ունեն su մասնիկը, հայերենը՝ s, հունարենը՝ si, իսկ մյուս լեզուները համապատասխան ձև չունեն։

16. Արիական, թոխարերեն, հայերեն և հունարեն լեզուները բայի արգելական ձևի համար ունեն ՀՆԽ. me մասնիկը, որ տվել է սանսկրիտ ma, հայերեն՝ մի, հունարեն՝ me, թոխարերեն՝ mâ։ Մյուս լեզուներն ունեն ne, որ հաթերենն ունի le ձևով (Անդ, էջ 24—27)։

Այս բոլորը ձևավորել ու ցուցադրել է մի դիագրամայի մեջ, որը ցույց է տալիս, որ ոչ մի լեզու լիովին անկախ և անջատ չէ մյուսներից. նմանություններն անկանոն կերպով գտնվում են տարբեր լեզուներում. բայց և այնպես այդ նմանությունների ու տարբերությունների վրա հենվելով՝ ցեղակից լեզուները կարելի է բաժանել երկու բարբառի. «հակառակ այն բանին՝ որ լեզուները բնորոշ գծեր չունեն, այնուամենայնիվ կարելի է բաժանել երկու դխավոր հնդեվրոպական բարբառի, արևելյան և արևմտյան։ Արևելյան ճյուղին են պատկանում արիական, բալթիկ-սլավական, հայկական (և ալբանական) լեզուները, արևմտյան ճյուղին են պատկանում իտալական, կելտական և գերմանական լեզուները, իսկ հունարենը բռնում է միջին դիրք... Բարբառների այսպիսի բաժանումը ենթադրել է տալիս, որ [նրանցով խոսող ժողովուրդը] մի շատ փոքր տարածության վրա չէր բնակվում, այլ փռված էր բավական մեծ տարածության վրա։ [Նա] չուներ նաև մի կուռ միություն, չէր կազմում մի քաղաքական ամբողջություն, չէր հպատակվում մի միակ թագավորի, այլ ինչպես արիական, հունդ, իտալական, կելտական, գերմանական, բալթիկ-սլավական ժողովուրդների սկզբնական շրջանի քաղաքական կազմակերպությունը ցույց է տալիս, ուներ արդի քրդերի նման աշիրեթային կազմակերպություն։ ...Բաղկացած էր զանազան ժողովուրդներից, որոնք թեև իրենց ընդհանուր միությունը զգում էին, կարող էին ի հարկի միանալ իրար հետ և կազմել մի դաշնակցություն, բայց ապրում էին իրարից անկախ ու անջատ» (Անդ, էջ 29—30)։ Անցնելով առանձնապես հայերենին, հեղինակը ցույց է տալիս, որ նա արևվելյան բարբառին է պատկանում. 16 կետերից երեքի համար անորոշ է հայերենի դիրքը. միայն 13 կետերի մեջ 10 անգամ արիականին է միանում, 8 անգամ՝ հունականին և հինգ անգամ՝ սլավո-լեթթականին։ Մնացյալներից իտալականի հետ միանում է երեք կետում, կելտականի հետ՝ երեք կետում, գերմանականի հետ՝ երկու կետում. այս բոլորի հետ էլ, սակայն, միանում է ոչ թե առանձնակի կերպով, այլ հունականի, սլավո-լեթթականի կամ արիականի հետ միասին։ Սրանցից էլ, ահա, հեղինակը հանում է իր

եզրակացությունը և տալիս վերջնական վճիռը ցեղակից լեզուների շարքում հայերենի բռնած դիրքի վերաբերմամբ, որ, իհարկե, ճշտությամբ համընկնում է Հյուբշմանի և Մեյեի ասածների հետ. «Այս բոլոր հանգամանքները ցույց են տալիս, որ հայերենը կանգնած է արիական, հունական և սլավական լեզուների միջև և գործ չունի մյուս եվրոպական լեզուների հետ» (Անդ, էջ 31)։ Ավելի պարզ ձևով ասած՝ հայերենը մերձավոր ցեղակիցն է հունարենի, ռուսերենի և պարսկերենի։ Այսպես որոշելով հայերենի ցեղակցության և հնդեվրոպական լեզուների շարքում նրա բռնած դիրքի հարցը՝ հեղինակն անցնում է արդեն ուղղակի հայերենի պատմությանը. այստեղ նա առաջին հերթին ցույց է տալիս հայերի կրած ազդեցությունը միջերկրական կամ եգեական քաղաքակրթությունից՝ «նախահայրենիքից» հեռանալուց հետո մինչև Հայաստան հասնելը, ապա առանձին գլխում նկարագրում է նախահայերենի վիճակը (որքանով այդ հնարավոր է) և հայերի քաղաքակրթությունը։ Խոսելով նախահայերենի մասին, հեղինակը նախ սահմանում է այդ տերմինի հասկացությունը. նախահայերենը, այդ սահմանումով, հնդեվրոպական հայրենիքից հեռանալու պահին հայերենի ունեցած վիճակն է։ Այդ վիճակն անշուշտ անփոփոխ չպիտի մնար. նոր հայրենիքում՝ Հայաստանում հայերը նորանոր ցեղերի հետ հարաբերության մեջ մտնելով, այլ և այլ ազդեցությունների պետք է ենթարկվեին նաև լեզվի կողմից. բայց անկախ այդ ազդեցություններից էլ հայերենը, ինչպես և ամեն մի լեզու, անփոփոխ չէր կարող մնալ, նա պետք է ունենար իր զարգացումը։ Այստեղից էլ, ահա, հեղինակն այն տեսակետն է հայտնում, թե հայերենը յուր պատմության ընթացքում կրել է երկու կարգի փոփոխություն. դրանցից առաջինը հենց լեզվի ներքին զարգացումն է, բարեշրջությունը (էվոլյուցիա), երկրորդը՝ օտար լեզուների ազդեցությունը։ Այս երկու կարգի փոփոխությունների շնորհիվ՝ բնիկ ձևերի զարգացման և օտար ձևերի նորանոր տարրերի ներմուծումով հայերենը հասել է այժմյան վիճակին, որ ներկայացնում է այդ երկու ձևերի ամբողջությունը, նրանց հանրագումարը. «Արդի հայերենը, ինչպես և որևիցե դարի հայերենը, ներկայացնում է այդ երկու կարգի ձևերի (բնիկ և փոխառյալ) գումարը» (Անդ, էջ 105)։

Այս սկզբունքով էլ, ահա, հեղինակը նկարագրում է նախահայերենի վիճակը և նախահայերի քաղաքակրթությունը բնիկ բառերի ուսումնասիրությամբ։ Այնուհետև հեղինակն անցնում է Հայերենի երկրորդ բաղադրության՝ փոխառյալ տարրերի ուսում-

նասիրության՝ առանձին գլուխներով քննելով յուրաքանչյուր լեզվից հայերենի կրած ազդեցությունը։

Երկրորդ հատորում առանձնապես հետաքրքրական են այն գլուխները, որոնց մեջ քննության են առնվում հայերենի քերականության կրած պատմական փոփոխությունները, հայերենի բարբառների առաջացման, միջին հայերենի ու ժամանակակից հայերենի կազմավորման հարցերը։ Հեղինակը լեզվական հարուստ փաստերի օգտագործմամբ նկարագրում է այն բոլոր քերականական փոփոխությունները, որոնք կրել է հայոց լեզուն դարերի ընթացքում, աշխատում է ճշտել դրանց մոտավոր ժամանակը և գտնել այդ փոփոխությունները առաջ բերող պատճառները։ Այդ բոլորով էլ, ահա, սույն աշխատությունը դառնում է մի հարուստ դանձարան, որի մեջ ամփոփված է հայոց լեզվի պատմության մեծահարուստ փաստական նյութը։ Հենց սրանից է բխում այն մեծ գիտական արժեքը, որ ներկայացնում է Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմությունը», որով հեղինակը հիմնադրել ու ինքն իսկ ամբողջական ուսումնասիրության է ենթարկել հայագիտության այս ճյուղը։

Այսպես, ուրեմն, Աճառյանը հայագիտության երեք ճյուղերը՝ բարբառագիտությունը, ստուգաբանությունը, հայոց լեզվի պատմությունը՝ գիտականորեն մշակել և ամբողջացրել է իբրև առանձին դիսցիպլիններ։ Այդ երեք ճյուղերի մեջ նա հանրագումարի է բերել նախորդ շրջաններում արվածը՝ խստագույն գիտական քննության բովով անցկացնելով այդ ամենը և իր կողմից ավելացնելով նորանոր բաներ (ստուգաբանություն և այլն)։

Այսպիսով Աճառյանի վերը հիշված գործերն իրենց ամբողջությամբ ու կատարելությամբ հայոց լեզվի ուսումնասիրության մեջ պատմա-համեմատական լեզվաբանության, այսպես ասած, վերջին խոսքն են հանդիսանում։ Արմատական բառարանը, Բարբառագիտությունը, Հայոց լեզվի պատմությունը և Անձնանունների բառարանը՝ մի մի գլուխ գործոցներ են իրենց տեսակի մեջ։ Դրանք հայոց լեզվի ուսումնասիրության այն անզուգական կոթողներն են հանդիսանում, որ հայագետ դառնալ առանց նրանք խորապես ուսումնասիրելու անկարելի է։ Այդ գործերի մեջ ամփոփված են հայոց լեզվի ուսումնասիրության այն արդյունքները, որ ձեռք են բերված մեկ հարյուրամյակի ընթացքում համեմատական լեզվաբանության կողմից։ Ճիշտ է, այդ գործերի մեջ արտահայտված սկզբունքներից մի քանիսը ընդունելի չեն մարքսիստական լեզվա-

բանության համար և դրանց մասին կխոսենք ստորև, բայց այդու հանդերձ այդ գործերը՝ իրենց պարունակած համապարփակ փաստական նյութով և այդ նյութերի գիտական մշակումով հայոց լեզվի ուսումնասիրության մեջ դարագլուխ են կազմում. եթե Հյուբշմանի ուղղությունը պատկերացնենք իբրև մի սյուն, որի պատվանդանն են հանդիսանում Հյուբշմանի ուսումնասիրությունները, ապա Աճառյանի աշխատություններն այդ սյունի խոյակն են կազմում: Աճառյանն այդ աշխատություններով չափազանց մեծ ավանդ է մտցրել հայագիտության մեջ, ավանդ, որ երբեք չի կորցնի յուր արժեքը: Դարեր կանցնեն, շատ գործեր կկորցնեն իրենց արժեքը և մոռացման կտրվեն, բայց Աճառյանի այդ գործերը միշտ էլ կունենան իրենց պատվավոր տեղը հայագիտության մեջ, միշտ էլ կպահպանեն իրենց արժեքը:

* * *

Հրաշյա Աճառյանի՝ մահվանից հետո իբրև գիտական ժառանգություն մնացած անտիպ աշխատությունների մեջ ամենակարևորն է «Վիճակատար քերականություն հայոց լեզվի» բազմահատոր մենագրությունը, որ բաղկացած է տասն հատորից.

1. Ներածություն
2. Ձևաբանություն
3. Գոյական
4. Ածական և թվական
5. Դերանուն
6. Բայ
7. Դերբայ, նախադասություն, շաղկապ
8. Շարահյուսություն
9. Բառաքննություն
10. Իմաստաբանություն:

Սրանցից հրատարակված են երկու հատոր, 1-ին հատորը՝ ածական և թվական, 2-րդ հատորը՝ դերանուն: Վերջին երեք հատորները (շարահյուսություն, բառաքննություն, իմաստաբանություն) ներկայացնում են անմշակ նյութեր, իսկ մյուսները հիմնականում ավարտված են և հրատարակության համար կարիք ունեն միայն մասնակի լրացումների:

Այժմ տպագրության հանձնվող այս հատորը հեղինակի կողմից նախատեսված էր իբրև առաջին հատոր, սակայն իր կենդանության

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

ժամանակ որոշ նկատառումներով (տես 1-ին հատորի առաջաբանը) իբրև առաջին հատոր հրատարակվեց ածականին ու թվականին նվիրված մասը։ Հատորների հաջորդականությունը չխախտելու համար այժմ այս հատորը լույս ենք ընծայում որպես ընդհանուր ներածություն։

Սույն հատորը, որպես ներածություն, շոշափում է լեզվաբանության ընդհանուր տեսական հարցերը։ Հատորը բաղկացած է երկու մասից. 1. Լեզվաբանության ներածություն, 2. Լեզուների դասակարգումը։ Առաջին մասում հեղինակը հանգամանորեն քննության է առնում այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են լեզվի բնորոշումը, լեզվի, որպես հասարակական երևույթի, բնութագրումը, լեզվի ծագումը, լեզվի զարգացումը և այլն, և այլն։ Բնորոշելով լեզվաբանությունը որպես գիտություն լեզվի մասին և ցույց տալով նրա տեղը հասարակական գիտությունների շարքում ու նրա կապը վերջինների հետ, Աճառյանը մանրամասնորեն խոսում է այն մասին, թե ինչ նշանակություն ունի հայերենի ուսումնասիրությունը ոչ միայն հայագիտության, այլև ընդհանուր լեզվաբանության համար և, իր իսկ հետազոտությունների փորձն օգտագործելով, ցույց է տալիս, որ հայերենի շատ տվյալներ կարող են օգտագործվել՝ ընդհանուր լեզվաբանության որոշ հարցերի լուսաբանման համար։ Այդ տեսակետից հեղինակն առանձնակի կարևոր է համարում բարբառների բազմազանությունը, հայերենի և ուրիշ լեզուների փոխազդեցությունները և այլն։

Անցնելով լեզվի բնորոշմանը և ճիշտ կերպով սահմանելով լեզուն որպես մարդկանց հաղորդակցման միջոց, հեղինակը մանրամասնորեն քննության է առնում մի կողմից՝ մարդկային լեզվի ու կենդանական «լեզվի», մյուս կողմից՝ հնչյունական լեզվի ու «նշանացի լեզուների» տարբերությունների հարցը։ Բազմաթիվ տվյալների օգտագործումով քննելով զանազան կենդանիների «լեզուները», հեղինակը ցույց է տալիս, որ կենդանիները չունեն այնպիսի լեզու, ինչպիսին է մարդկային լեզուն, որ նրանք ունեն միայն բնազդական ճիչեր, որոնք և կազմում են նրանց բնազդների ձայնական արտահայտությունը։ Նույնպես և՝ զանազան նշանների «լեզուները» զուրկ են ինքնուրույն հաղորդակցման միջոցի վերածվելու հնարավորությունից, որովհետև նրանք բոլորն էլ հիմնված են հնչյունական լեզվի վրա, պայմանավորված են նրանով և առանց նրան գոյություն չեն կարող ունենալ։ «Բոլոր տեսակի նշանացի լեզուները,— եզրակացնում է հեղինակը,— ինչպես վայրենիների

գործածած, նույնպես և մեր կյանքում հնարված այբուբեն, թվանշան, հեռագրանիշներ, լապտերներով կամ դրոշակներով խոսակցությունը, շևփորներով հաղորդագրությունը, կույրերի այբուբենը, գույների կամ ծաղիկների «լեզուն» և այլն և այլն, ոչ մի ճիշտ հասկացողություն չպիտի տային, եթե չունենայինք նրանց հոդավոր թարգմանությունը»։ Այդ պատճառով էլ, ահա, «լեզու ասելով այսօր հասկանում ենք միայն ձայնական հոդավոր լեզուն»։ Այսպես ճիշտ գնահատելով մարդկային լեզվի դերն ու էությունը՝ հեղինակն անցնում է լեզվի ծագման խնդրին։ Այստեղ հեղինակը համառոտակի շարադրում է այդ հարցի մասին եղած տեսությունները, վեր հանում այդ տեսությունների սխալները ու թերությունները և հիմնվելով Ֆրիդրիխ Էնգելսի դրույթների վրա, հիմնականում ճիշտ կերպով լուսաբանում լեզվի առաջացման պատմական պրոցեսը։ Պետք է նշել, առանձնապես, որ առաջին հայացքից թվում է, թե քննադատվող ոչ գիտական տեսությունները շարադրված են խիստ օբյեկտիվորեն, բայց իրականում այդ «օբյեկտիվիստական» շարադրանքը հեղինակը այնպիսի իրոնիայով է տվել, որ ինքն իսկ՝ շարադրանքը «տեսության» հերքումն է դառնում (տե՛ս հատկապես Գայգերի «տեսությանը» նվիրված հատվածը)։ Այս դժվի վերաբերյալ, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք գտնում անել հետևյալ դիտողությունները։ Շարադրելով Ռընանի և Մաքս Մյուլլերի «տեսությունները» և ճիշտ կերպով հերքելով դրանք, հեղինակն, այնուամենայնիվ, խիստ պարզունակ ձևով է ներկայացնում դրանք և ուշադրության չի առնում նրանց իսկական էությունը։ Ռընանը լեզվի ծագման հարցում պարզապես կանգնած է աստվածաբանական, կրոնամիստիկական տեսակետի վրա։ Գտնելով, որ լեզուն, լսողության ու տեսողության նման, մարդու բնածին կարողությունն է, Ռընանը հանգում է այն հակագիտական վարկածին, թե լեզուն, իբրև մարդու բնական կարողություն, աստվածային շնորհ է մարդուն։ Նույնպես և Մաքս Մյուլլերը, որը նատուր-բիոլոգիզմի դիրքերից ելնելով խոսելու կարողությունը համարում է մարդու բնական ունակություն, մի ունակություն, որ հատուկ է մարդուն բնությունից, անմիջապես ավելացնում է, թե բնությունից ասելով պետք է հասկանալ «աստվածային զորությունից»։ Այսպիսով՝ թե՛ Ռընանը, և թե՛ Մաքս Մյուլլերը լեզվի ծագման մասին արտահայտած իրենց կարծիքներով հանգում են աստվածաշնչի առասպելին ու գլորվում տերտերականության գիրկը, որ, սակայն, ցույց չի տրված սույն գրքի հեղինակի կողմից։

Ուշագրավ է հեղինակի քննությունը առարկայի և նրա բառային անվանման կապի հարցի վերաբերյալ։ Հայտնի է, որ այդ հարցը շատ է զբաղեցրել հին հույն փիլիսոփաներին, ինչպես և նոր ժամանակների լեզվաբաններին։ Բերելով բազմաթիվ փաստեր ու փաստարկներ՝ հեղինակը ճիշտ կերպով գտնում է, որ առարկայի ու նրա բառային անվանման մեջ բնական կապ չկա։ Ճիշտ նույնպես բացատրում է նաև տրամաբանական կապի գոյությունը։ Հիմնականում համաձայն լինելով այս վերջին դրույթին, անհրաժեշտ ենք համարում ասել հետևյալը. վերջին ժամանակներս այդ խնդիրը շոշափել են շատ լեզվաբաններ և, ընդհանուր առմամբ, ճիշտ կերպով են բացատրել բառային անվանման և առարկայի միջև եղած տրամաբանական կապը, սակայն դրա հետ միաժամանակ, այդ դրույթը այժմ հասցված է այնպիսի բացարձակության, որ նույնքան սխալ է, որքան և հակառակ դրույթը։ Այդ դրույթը գիտականորեն ճիշտ է այն դեպքում, երբ անհրաժեշտ վերապահում է արվում, այսինքն՝ երբ նա վերաբերում է ամենանախնական, լեզվի առաջացման պրոցեսում ստեղծված բառարմատներին. մյուս բոլոր բառերը իրենց իմաստով տրամաբանորեն կապված են իրենց նշած առարկաների հետ, այսինքն՝ նրանք արտահայտում են առարկաների էությունը, դերը, հատկությունը կամ հատկանիշը և այլն, այնպես, ինչպես որ գիտակցվում են դրանք հասարակության կողմից։ Իբրև օրինակ առնենք մարդ և ինքնաթիռ բառերը. իհարկե, այդ բառերի կազմում եղած հնչյունները որևէ բնական կամ տրամաբանական կապ չունեն մարդ-էակի կամ ինքնաթիռ-առարկայի հետ. սակայն այդ բառերը, որպես անուններ, հատկացված են դրանց միանգամայն գիտակցաբար ու տրամաբանորեն և արտահայտում են այն, ինչ որ մարդկանց կողմից ըմբռնված է որպես դրանք բնորոշող հատկանիշ. մարդ ստուգաբանորեն նշանակում է մահկանացու, իսկ ինքնաթիռ՝ ինքնին թռչող. հետևաբար՝ հասարակության կողմից դրանք գիտակցվել են այդպես և այդ պատճառով էլ ստացել են այդ անվանումները։ Նշանակում է, երբ ասվում է, թե բառանվանման և նրա նշանակած առարկայի միջև տրամաբանական կապ գոյություն չունի, ապա՝ պետք է նկատի ունենալ ամենանախնական բառարմատները, որոնց ծագումը և նախնական իմաստները (բնիմաստները) դևռևս լուսաբանված էլ չեն։

Վերջապես՝ հնչյունային լեզվի առաջացման հարցը քննելիս հեղինակը նախ խոսում է այն մասին, թե ինչու մարդիկ սկսեցին խոսել հնչյունային լեզվով և ոչ թե շարժուձևերի լեզվով և թվում է

երկու պատճառ. ա) շարժուձևերի լեզուն կարելի էր օգտագործել որոշ տարածության վրա և տեսանելիության պայմաններ ունեցող վայրում, բ) նրանով կարելի էր հաղորդակցվել միայն ցերեկը։ Այս երկու պատճառաբանություններն էլ, թեև ճշմարիտ, բայց երկրորդական են. հիմնական պատճառն այն է, որ շարժուձևերի «լեզուն» ինքնուրույն լեզու, հասարակական հաղորդակցման ինքնուրույն միջոց չէ, այլ հնչյունական լեզվին օժանդակ միջոց, որ գոյություն ունի միայն հնչյունային լեզվի հետ, և ոչ առանց նրան։ Ուստի և շարժուձևերի լեզուն չի կարելի դիտել որպես նախնական հաղորդակցության միջոց, որը հետագայում փոխարինվեց հնչյունային լեզվով, այլ միայն՝ որպես հնչյունային լեզվի հետ առաջացած, նրան սպասարկող, նրան ենթարկվող և նրանով պայմանավորված մի միջոց։ Այնուհետև, հեղինակը՝ թվելով շարժուձևերի «լեզվի» թերությունները՝ եզրակացնում է, թե այդ թերությունները տեսնելով մարդիկ մտածեցին օգտագործել ականջն ու ձայնը, խորհելով գտան հաղորդակցման հնչյունային միջոցը և ձեռնարեցին լեզուն։ Այսպիսի մոտեցումն, իհարկե, ճիշտ չէ. սրանից այն սխալ պատկերացումն է ստացվում, թե մարդը մարդ դարձավ, խոսելու, իր նմանների հետ հաղորդակից դառնալու կարիքն զգաց, և համեմատելով իր ունեցած գանազան միջոցները՝ ընտրեց հնչյունային հաղորդակցումն ու ստեղծեց հնչյունային լեզուն։ Իրականում հնչյունային լեզվի առաջացումը կազմում է կապկի՝ մարդու փոխարկվելու պրոցեսի անբաժան մոմենտներից մեկը և երբ մարդը հանդես է գալիս իբրև այդպիսին, նա արդեն ունի նաև իր հաղորդակցման միջոցը՝ հնչյունային լեզուն, բնականաբար, նախնական, պրիմիտիվ վիճակում։ Ուստի և միջոցների դիտակցական ընտրության ու լեզու հնարելու մասին խոսք լինել չի կարող։

Ուշադրավ են լեզվի հոգեբանական և բնախոսական կողմերին նվիրված գլուխները, որոնց մեջ հեղինակը հանգամանորեն քննության է առնում լեզվի՝ իբրև ճշմարտության, համառոտության, հիշողության, վերլուծման միջոցի և խոսողության բնախոսական նախադրյալների ու պրոցեսների հարցերը։ Հեղինակն այդ գլուխների մեջ ամփոփում է այն բոլորը, ինչ-որ մինչև այժմ կատարված է այդ ուղղությամբ և հանդում հետաքրքիր եզրակացություններ։ Հատկանշական կարևոր է ներքին լեզու և արտաքին լեզուն հատվածը, որի մեջ հեղինակը քննում է լեզվի և մտածողության կապը։ Այստեղ նա միանգամայն ճիշտ կերպով հանդում է այն եզրակացության, թե լեզուն և մտածողությունը մի անխախ-

տելի միասնություն են կազմում։ Նրանցից ոչ մեկը չի նախորդել մյուսին. չի կարող գոյություն ունենալ լեզու առանց մտածողության և, ընդհակառակն, մտածողություն՝ առանց լեզվական նյութական թաղանթի։ «Խոսքը և մտածողությունը մի անբաժան միասնություն են կազմում»,— եզրակացնում է հեղինակը։ Նա ճիշտ կերպով է ժխտում նաև այն հակապիտական տեսությունները, որոնց համաձայն լեզուն, իբր թե, հաջորդում է մտածողության, որ, իբր, նախ առաջացել են գաղափարներ, մտքեր մարդկանց գիտակցության մեջ և հետո միայն առաջացել է լեզուն՝ այդ գաղափարները արտահայտելու համար։ Սակայն, ճիշտ կերպով ժխտելով այդ «տեսությունները», Աճառյանը ցույց չի տալիս այն փաստարկների անանկությունը, որոնք կոչված են այդ սխալ, իդեալիստական տեսակետը «հիմնավորելու» համար, և որոնք ինքն էլ մեջ է բերում։ Այսպես, հեղինակը, ընդունելով լեզվի և մտածողության միասնությունը, ավելացնում է նաև, որ ոմանք հակառակ են այդ ճիշտ տեսության և հիշում է նրանց այն փաստարկը, թե, եթե լեզուն ու մտածողությունը միասնություն կազմեին, ապա իբր «նախնական մարդը, որ զուրկ էր խոսողությունից կամ հոդավոր բառերի տեղ զանազան շարժուձևեր էր գործադրում, զուրկ պետք է լիներ մտածողությունից։ ...Մանուկը, որ դեռ նոր է սովորում լեզուն և դեռ բառը չգիտե, ըմբռնում է նախապես բառի և նրա նշանակած առարկայի միջև գտնված հարաբերությունը, հետևաբար ունի դատողություն, ըմբռնողություն և մտածում։ Վերջապես համրերը, որոնք լեզու կամ խոսողություն չունեն, ունեն սակայն դատողություն, ըմբռնողություն և մտածում և երբեմն նույնիսկ ավելի լավ են դատում, քան խոսող մարդիկ, և հենց այդ դատողության ու մտածողության արդյունքով է, որ կարողանում են ստեղծել զանազան նշաններ՝ բացատրելու համար իրենց միտքը» (էջ 88)։ Բերելով այդ փաստարկները՝ բոլորովին չի քննադատում դրանք. մինչդեռ այդ փաստարկները բոլորովին էլ ճիշտ չեն։ Ամենից առաջ՝ սխալ է ասել, թե նախնական մարդը հոդավոր լեզու չուներ. վերն ասվեց արդեն, որ հոդաբաշխ լեզուն առաջացել է կապիկ-մարդացման պրոցեսում, ուստի և մարդը միշտ էլ ունեցել է լեզու, թեև իհարկե, նախապես նա եղել է շափազանց աղքատիկ ու անզարգացած։ Ճիշտ չէ նաև խուլ ու համրերի օրինակը։ Խուլ ու համրերը մտածում են ոչ թե աննյութ, անձև մտածողությամբ, այլ պատկերային մտածողությամբ. նրանց մոտ այդ պատկերները նույնպիսի նյութական միջոց են հանդիսանում մտածողության հա-

մար, ինչպես մեզ մոտ բառերը։ Վերջապես, ինչ վերաբերում է մանուկներին, ապա դա նույնպես սխալ է մեկնաբանվում։ Դեռևս լեզու չիմացող, չխոսող երեխան իր շրջապատից լսում է բառերը, դանդաղորեն յուրացնում դրանք, բայց նույնիսկ յուրացնելուց հետո էլ որոշ ժամանակ դեռ չի կարողանում վերարտադրել. այս դեպքում նա բնականաբար ներքնապես ունի լեզվական պաշարը և իր փոքրիկ մտքերը ձևավորում է լեզվի միջոցով, բայց դեռ լիովին չի կարողանում հաղորդել դրանք։ Բայց հենց դրա պատճառով էլ այդ վիճակում մանկական մտածողությունը դեռևս շատ թույլ է, մտքերը տարտամ ու ոչ լիովին տարորոշված։ Հեղինակը բերում է նաև որոշ լեզվաբանների կարծիքը գաղափարի և բառի կապի մասին դարձյալ առանց քննադատելու, թեև դրանից անմիջապես հետո ավելացնում է, թե «մարդու մոտ կատարված է բառի և գաղափարի միջև այնպիսի անլուծելի մի կապակցություն, որ նա չի կարող այդ երկուսը բաժանել իրարից և առարկան ու նրա անունը իրարից անջատ ըմբռնել» (էջ 89)։ Բանն այն է, որ այդ լեզվաբանները կարծում են, թե լեզուն և մտածողությունը անխախտելի միասնություն համարելը նշանակում է բառը գաղափարի նախապայման համարել և դրա դեմ առարկում են, ասելով թե «բառը գաղափարի նախապայման համարել այնպիսի անհեթեթություն է, ինչպես որ, ասենք, թե գրությունը գաղափարի նախապայմանն է։ Բառ և գրություն իրր միևնույն բաներն են. առաջինը գաղափարի ձայնական պատկերացումն է, երկրորդը՝ նշաններով, որի լավագույն օրինակն է գաղափարագիրը, որը և հաճախ ավելի լավ է պատկերացնում գաղափարը, քան հնչական գրությունը» (էջ 88)։ Այս առարկությունը ոչ միայն սխալ է ինքնին, այլև լեզվի ու մտածողության միասնության տեսությունը միանգամայն աղավաղված ձևով է բացատրում։ Ասել, թե առանց լեզվի չկա մտածողություն, առանց բառերի չի կարելի մտածել, չի նշանակում ասել, թե բառը գաղափարի նախապայմանն է։ Իհարկե հիմարություն կլիներ կարծել, թե նախ ստեղծվում է բառը առանց որևէ գաղափարի, այսինքն՝ առանց իմաստի, և հետո նրա մեջ որևէ առարկայի, երևույթի և այլնի գաղափար է դրվում։ Բայց նույն ձևով էլ չի կարելի կարծել, թե մարդկանց գլխում ստեղծվում է ինչ որ գաղափար, ավելի ճիշտ՝ հասկացություն, առանց բառային ձև, առանց բառային անվանում ստանալու, աննյութ ու անձև մնում նրանց մտածողության մեջ և հետո միայն ստանում բառային անվանում։ Իրականում «գաղափարը», այսինքն՝ առարկայի, երևույթի և այլնի հասկացությունը

և նրա բառային անվանումը միաժամանակ են հանդես գալիս։ Գիրն այս հարցում հակառակն ապացուցելու կռվան չի կարող լինել, որովհետև նա պայմանական նշաններով հաղորդում է հոդավոր լեզուն, մինչդեռ բառերը պայմանական նշաններ չեն։

Ճիշտ կերպով եզրակացնելով, որ լեզուն և մտածողությունը միասնություն են կազմում, հեղինակը, այնուամենայնիվ, իր կողմից մի հարց է առաջադրում և անպատասխան թողնում այն. «Վիճում են երբեմն,— ասում է հեղինակը,— որ մարդ զգում է մի բան, բայց չի գտնում բառ՝ արտահայտելու համար, և կամ սկսում է երկար դարձվածքներով արտահայտել։ Դիտեցեք վերջալույսը, որտեղ կան հարյուրավոր երանգներ, գույների զանազան նրբություններ, այդ բոլորը մենք տեսնում, զանազանում և տարբերությունը ըմբռնում ենք, բայց բառեր չունենք այդ նրբությունները նշանակելու համար։ Այսպես և մի տարօրինակ իր, նոր նյութ, ուտելիքի մի նոր տեսակ, մի անծանոթ բույս, քար կամ մետաղ, որոնք տեսնում ենք, բայց անունը չգիտենք։ Շատ անգամ մարդ զգում է մի բան, ասում է՝ «մի բան եմ լինում», բայց չգիտի բառը, որպեսզի արտասանե։ Արդյոք դա նշանակո՞ւմ է, թե զաղափարը կա, բայց բառը չկա։ Այսպես է լինում նաև բանաստեղծական ներշնչումների, երաժշտական մի զեղեցիկ հատվածի ունկնդրության ժամանակ, երբ մարդ զգում է հոգևոկան զանազան զգացմունքներ, ապրումներ, մինչև իսկ գրիչը ձեռքն է առնում թղթի վրա դնելու համար այդ բոլորը, բայց անկարող է, բառերը իրեն պակասում են կամ շատ տկար կերպով են թարգմանում այդ բոլորը, ինչ որ ներսում զգում է։ Արդյոք կա զաղափար կամ միտք, իսկ բառը կամ լեզուն չկա՞» (էջ 91)։ Փորձենք համառոտակի պատասխանել այդ հարցին. հիրավի, կարելի՞ է կարծել, թե հեղինակի կողմից թվարկված դեպքերում կա միտքը, բայց լեզուն չկա։ Ո՛չ, չի՛ կարելի։ Երբ մենք զգում ենք ինչ որ բան, բայց չենք կարողանում ասել լեզվի օգնությամբ, այդ նրանից է, որ մենք մեր զգացումն իսկ որոշակիորեն չենք գիտակցում, և չգիտենք, թե պարզապես ինչ ենք զգում։ Երբ մենք տեսնում ենք նոր առարկա, թեև նրա անունը չգիտենք, բայց մեր լեզվական պաշարը մեզ հնարավորություն է տալիս բառերի օգնությամբ այն տարբերակել ուրիշ առարկաներից. մենք ասում ենք «այն նոր իրը, նոր մեքենան», և այլն և այլն, որով տարբերում ենք այդ նորը մեր արդեն ճանաչած իրերից, որոնք այդպես չեն կոչվում, այլ իրենց անուններով։ Երբ տեսնում ենք հրաշագեղ վերջալույսը և հիանում նրա

բազմերանգ նրբություններով, մենք ընկալում ենք մեր տեսողությամբ, պատկերացում ստանում, բայց մենք չենք գիտակցում, թե որոշակիորեն ինչ երանգներ են դրանք, մեզ պակասում են այդ երանգների հասկացությունները և դրանց բառ-անվանումները, ուստի և չենք կարողանում խոսել նրանց մասին, իսկ այդ նշանակում է, թե չենք կարողանում նաև ամբողջական միտք կազմել, այլ միայն պատկերացնում ենք։ Երբ վերջապես, ներշնչված «բանաստեղծը» գրիչ է առնում ձեռքը և չի կարողանում արտահայտել իր հույզերը, այդ նրանից է, որ նա ինքն էլ որոշակիորեն չի գիտակցում իր հույզերը, որ այդ հույզերը միայն հոգեկան ապրումներն են, որոնք դեռ մտքերի չեն վերածվել։ Հենց սրա համար է, որ ասում են, թե նա է լավ գրում, ով լավ գիտե, թե ինչ է գրում և ինչ է ուզում ասել։ Հետևաբար, թվարկված դեպքերից ոչ մեկի ժամանակ էլ առկա չէ լեզվական թաղանթից զուրկ ինչ որ միտք։ Հենց այն հանգամանքը, որ նոր առարկա ստեղծելով, նրա անունը չիմանալու դեպքում մենք դիմում ենք լեզվական այլ և այլ միջոցների, կամ զանազան բառերի, ապացուցում է, որ նրանց մասին մտածում ենք դարձյալ լեզվի օգնությամբ, մեր իմացած բառերի և լեզվի ունեցած միջոցների օգնությամբ։

Գիտական մեծ արժեք են ներկայացնում այն գլուխները, որոնց մեջ քննության են առնվում՝ լեզուն որպես հասարակական երևույթ, լեզվի փոխանցումը, լեզվի էվոլյուցիան, լեզվի կենսաբանությունը։ Հեղինակն իրեն հատուկ բարեխղճությամբ ու մանրակրկիտ պրպտումներով կուտակած հարուստ փաստերով քննության է առնում հիշյալ խնդիրները և հիմնականում ճիշտ եզրակացությունների հանգում։ Բնորոշելով լեզուն որպես հասարակության հաղորդակցման միջոց՝ հեղինակը փաստերով ցուցադրում է լեզվի ընդհանրությունը, նրա համամարդկային բնույթի էությունը՝ հասարակական կյանքի տարբեր պայմաններում, ցույց տալիս այդ ընդհանրության աստիճանը՝ տարբեր հասարակական-քաղաքական հանգամանքներում։ Ճիշտ կերպով վերլուծելով լեզվական փաստերը՝ հեղինակը լեզվական հարուստ տվյալներով հերքում է լեզվի դասակարգայնության ոչ մարքսիստական տեսությունը և կանգնում մարքսիստական այն ճշմարիտ սկզբունքի վրա, որ դասակարգային լեզուներ գոյություն չունեն, որ լեզուն դասակարգային երևույթ չէ։ Խոսելով լեզվի, որպես հասարակական երևույթի մասին, հեղինակը, սակայն, չի անդրադառնում լեզվի ու վերնաշենքի փոխհարաբերության հարցին և ցույց չի տալիս նրանց

միջև եղած արմատական տարբերությունները։ Այս բացը, սակայն, առանձնապես ստվեր էլ չի ձգում աշխատության վրա այն պատճառով, որ հեղինակը որևէ տեղ չի էլ նույնացնում լեզուն վերնաշենքի հետ. ինչ վերաբերում է դրանց միջև եղած արմատական տարբերություններին, ապա դրանք բացահայտված են Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության մեջ և սովետական ընթերցողներին քաջ ծանոթ են արդեն։ Անցնելով լեզվի՝ սերնդից սերունդ փոխանցվելու և լեզվի զարգացման հարցերին՝ Հ. Աճառյանը բազմաթիվ փաստերով ու խոր վերլուծություններով կարողանում է ճիշտ պատկերացում տալ այդ մասին։ Այստեղ, սակայն, կարևոր է քննադատաբար մոտենալ լեզվի զարգացման մասին նրա ունեցած կոնցեպցիային։ Վերը մենք ասացինք արդեն, որ Աճառյանը լեզվի զարգացման հարցում հետևում է, այսպես կոչված, լեզվաբանական անընդհատականության տեսությանը։ Այս տեսության էությունն այն է, որ ընդունելով լեզվի էվոլյուցիոն զարգացումը, բացասում է լեզվի որակական անցումները։ Ստացվում է այնպես, որ լեզուն անընդհատ ձևափոխություններ է կրում, բայց երբեք որակական անցումներ չի կատարում. նոր լեզուն ոչ այլ ինչ է, եթե ոչ հին լեզուն՝ ձևափոխված վիճակում։ Այսպես օրինակ, այդ տեսության հիմնադիրներից մեկը՝ Անտուան Մեյեն, խոսելով իտալերեն և իսպաներեն լեզուների մասին, որոնք, ինչպես հայտնի է, առաջացել են ժողովրդական լատիներենից, եզրակացնում է, որ «նրանք լատիներեն լեզվի երկու ժամանակակից ձևերն են։ Ֆրանսերենը թեև պակաս չափով է նրանց նման, ոչ այլ ինչ է, եթե ոչ լատիներեն լեզուն, միայն ավելի ևս փոփոխված» (A. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М. — Л., 1938, էջ 50)։ Ճիշտ այդպես էլ Հ. Աճառյանը գտնում է, որ «լեզվի կյանքը լոկ բարեշրջական է», որ լեզուն գտնվում է անընդհատ էվոլյուցիայի պրոցեսում, առանց որակական անցումների։ Այս տեսության սխալն այն է, որ նա, ժխտելով որակական անցումները լեզվի մեջ, կամա թե ակամա նույնացնում է որակապես իրարից տարբեր հին և նոր լեզուները, ասենք, լատիներենն ու իտալերենը կամ իսպաներենը. մինչդեռ դրանցից յուրաքանչյուրը իր քերականական կառուցվածքով ու բառային հիմնական ֆոնդով մի ինքնուրույն լեզու է, որակապես տարբեր մյուսից, չնայած այն բանին, որ վերջին երկուսն առաջացել են լատիներենից։

Մյուս կողմից՝ ամեն ինչ հանգեցնելով ձևերի փոփոխության,

այդ տեսությունը, ըստ էության, հանգում է ֆորմալիզմին և անտեսում լեզվի զարգացման պրոցեսում բառային կազմի, բառերի իմաստների ու քերականական իմաստների փոփոխությունների հսկայական դերը։ Հակառակ այդ բոլորին, մարքսիստական լեզվաբանությունը գտնում է, որ լեզվի մեջ կատարվող էվոլյուցիոն փոփոխություններով, նոր որակի տարրերի աստիճանական կուտակումով և հին որակի տարրերի աստիճանական մահացումով տեղի է ունենում լեզվի անցումը որակական մի վիճակից մի նոր որակական վիճակի, ըստ որում այդ փոփոխություններն ընդգրկում են ոչ միայն լեզվի ձևերը, այլև՝ բառերը, բառերի իմաստներն ու քերականական իմաստները, հնչյունները, շարահյուսությունը, մի խոսքով՝ լեզուն իր բոլոր մասերով։

Լեզվի զարգացման խնդրի հետ է կապվում նաև միասնական, համամարդկային լեզվի հարցը, որ, սակայն, քննության է առնվում լեզվի, որպես հասարակական երևույթի ուսումնասիրությանը նվիրված գլխում։ Հեղինակը հանգամանորեն խոսում է այդ հարցի մասին, հիշում գիտնականների ջանքերի մասին՝ մի համաշխարհային լեզու ստեղծելու ուղղությամբ, ծանոթացնում արվեստական լեզուներից մի քանիսին, նույնիսկ տալիս էսպերանտոյի համառոտ քերականությունը և ճիշտ կերպով եզրակացնում, որ բուրժուական լեզվաբանության մեջ նշված միջոցներից ոչ մեկն էլ չի կարող ընդունվել միասնական համաշխարհային լեզու ստեղծելու համար։ Բայց հենց այստեղ էլ նա վերջակետ է դնում և փակում այդ հարցի քննությունը, առանց պատասխանը տալու։ Այդպես էլ անհայտ է մնում, թե, վերջապես, պետք է ստեղծվի՞ համամարդկային մի լեզու, թե ոչ, և եթե այո, ապա ինչպե՞ս, ի՞նչ միջոցով։ Հեղինակը չի հիշատակում բոլորովին, որ մարքսիզմ-լենինիզմը տվել է այդ հարցի պատասխանը։ Մարքսիզմը ուսուցանում է, որ ապագայի կոմունիստական հասարակությունը կունենա իր միասնական, համամարդկային լեզուն, ըստ որում այդ լեզուն չի ստեղծվի կոմունիզմի համաշխարհային մասշտաբով հաղթանակից առաջ։ Կապիտալիստական հասարակության սպանդամբ և սոցիալիստական հասարակության կառուցմամբ հնարավորություն է տրվում ազգերին՝ զարգացնելու իրենց ազգային լեզուն։ Հավասարության ու համագործակցության պայմաններում յուրաքանչյուր ազգ զարգացնում է բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան իր ազգային ձևով՝ ազգային լեզվով։ Ազգերի լիակատար իրավահավասարության ու համագործակցության պայմաններում՝ սո-

ցիալիզմի համաշխարհային մասշտաբով հաղթանակից հետո միայն ազգային լեզուները պետք է ձուլվեն ի մի համաշխարհային լեզու։ Մարքսիստական այս տեսությունը Ի. Վ. Ստալինը է՛լ ավելի պարզությամբ լուսաբանեց ընկ. Ա. Խոլոպովին տված պատասխանում։ Մի անգամ ևս ապացուցելով մարքս-լենինյան այս տեսության ճշմարտությունը, Ի. Վ. Ստալինը ցույց տվեց, որ այդ համաշխարհային լեզուն էլ միանգամից չի ստեղծվելու, որ նախ և առաջ բազմաթիվ ազգային լեզուների հիման վրա առանձնանալու են զոնալ լեզուները, իսկ դրանից հետո զոնալ լեզուները ձուլվելու են ի մի համաշխարհային լեզու։ Այս է համաշխարհային, համամարդկային միասնական լեզվի գոյացման միակ ճանապարհը։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում «լեզվի կենսաբանությունը» գլուխը, որ նվիրված է լեզուների ձևաբանական դասակարգմանը, ձևաբանական տարբեր տիպերի քննությանը և յուրաքանչյուր տիպի համար որևէ բնորոշ լեզվի քերականության համառոտ նկարագրությանը։ Այստեղ հեղինակը միանգամայն իրավացի կերպով քննադատության է ենթարկում այն տեսակետները, որոնց համաձայն լեզվի ձևաբանական տիպերը իբրև թե ներկայացնում են մտածողության, ժողովրդի կամ ազգի մտավոր զարգացման աստիճանը։ Պետք է ավելացնել միայն, որ լեզուների ձևաբանական տարբեր տիպերը (անջատական, կցական և այլն) ոչ միայն մտածողության զարգացման աստիճանը չեն որոշում, այլև չափանիշ չեն նաև լեզվի զարգացած կամ «անզարգացած», «նախնական» լինելու։ Ժամանակակից կյանքը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր լեզու էլ, լինի նա անջատական, կցական, թե թեքական, հնարավորություն ունի արտահայտելու այն ամենը, ինչ որ մտածում է նրանով խոսող ժողովուրդը։ Ինքը հեղինակն էլ այս բանը հաստատում է հետևյալ համեմատությամբ. «Եթե երեք հոգի ունենան հավասարապես հարյուրական ռուբլի, մեկը ոսկով, մյուսը արծաթով, մյուսը պղնձով, չի կարելի ասել, թե մեկը մյուսից հարուստ է. երեքն էլ հավասար են, միայն թե մեկի բեռը ծանր է, մյուսինը՝ թեթև» (էջ 292)։ Իրոք, եթե մի լեզու կցական է, մյուսը՝ անջատական, երրորդը՝ թեքական, չի կարելի ասել, թե նրանցից մեկը զարգացած է, մյուսը՝ անզարգացած։ Երեքն էլ կարող են հավասարապես զարգացած լինել, ինչպես, ասենք թե, անջատական չինարենը, կցական ֆրանսերենը և թեքական գերմաներենը։ Այլ կերպ չի էլ կարելի մոտենալ այդ հարցին, որովհետև

լեզվի զարգացման աստիճանը որոշվում է ոչ թե ձևաբանական տիպով, այլ բառային կազմի հարստությամբ ու բազմակողմանիությամբ։ Ի դեպ, մի այլ առիթով, խոսելով լեզվի հարստության մասին, հեղինակն այն կարծիքն է հայտնում, թե «լեզվի հարստությունը նրա բառերի քանակն է» (էջ 287)։ Այս մոտեցումը միակողմանի է. բառերի լոկ քանակային շատությունը դեռևս լեզվի հարստության չափանիշը չէ. հնարավոր է, որ հոմանիշների առատությամբ մեծանա բառերի քանակը, բայց դրա հետ միասին, բազմաթիվ երևույթների հասկացություններ արտահայտելու համար բառեր չլինեն։ Այդ պատճառով էլ լեզվի հարստությունը որոշվում է բառային կազմի ոչ միայն քանակային կողմով, այլ, որ նույնքան կարևոր է, բազմակողմանիությամբ (տե՛ս այդ առթիվ խմբագրական եզրակացությունը, էջ 302—3-ում)։ Խոսելով անջատական լեզուների, առանձնապես՝ չինարենի մասին, հեղինակը գտնում է, որ չինարենում «չկան նաև խոսքի մասեր. և միևնույն բառը միևնույն ձևով կարող է լինել գոյական, ածական և բայ, բայց նաև մասնիկ կամ վերջավորություն» (էջ 204)։ Այս տեսակետը ճիշտ չէ. հեղինակը տվյալ դեպքում հետևում է չինագետների այն ներ-կայացուցիչներին, որոնք ֆորմալիզմի դիրքերից ելնելով և խոսքի մասերի դասակարգումը բացառապես ձևական հատկանիշների վրա հիմնելով՝ ժխտում են խոսքի մասերի գոյությունն ու տարբերակումը չինարենում։ Իրականում չինարենի մեջ խոսքի մասերի դասակարգումը հիմնված է ոչ թե բառերի ձևի, այլ ձևաբանական, շարահյուսական և իմաստային առանձնահատկությունների վրա։

Հետաքրքիր է այն հատվածը, որի մեջ քննության է ենթարկված լեզվի մաքրության հարցը. հեղինակը մեջ է բերում տարբեր լեզվաբանների կարծիքը այդ մասին և քննում այդ կարծիքները, մերժում կամ հաստատում դրանք լեզվական հարուստ փաստերով։ Անցնելով այնուհետև հայերենի մաքրության հարցին, հեղինակը ընդհանուր առմամբ ճիշտ մոտեցում է ցուցաբերում բարբառային և նորամուտ փոխառյալ բառերի դերին։ Սակայն մի կարևոր հարցում նա ոչ ճիշտ տեսակետ է պաշտպանում։ Հեղինակի կարծիքով «եթե մի օտար բառ գործածված է գրաբարի մեջ, նա այլևս օտար չէ. այսպես՝ պատկեր, անտուկ և այլն» (էջ 359). սրա սխալն այն է, որ ժամանակակից հայերենի համար չափանիշ է դարձնում գրաբարը. որևէ բառի՝ գրաբարում գործածված լինելը դեռևս չի նշանակում, թե նա մեր ժամանակակից գրական լեզվի համար օտար չէ. օրինակ՝ ասպաստան, ատր, դեն և այլ պարսկերեն փոխառություններ գործածված են գրաբարում և այն էլ ոչ սա-

կավ, բայց և այնպես նրանք օտար են մեր արդի գրական լեզվի համար։ Ավելին, նույնիսկ ոչ փոխառյալ, այսպես կոչված, «բնիկ» հայերեն բառերը, եթե պատմականորեն դուրս են եկել գործածությունից և չեն պահպանվել մեր լեզվում, դարձյալ օտար են ու խորթ մեր արդի գրական լեզվին (օրինակ՝ ագանիլ «դիշերիլ», ամալ «թափել», առն «խոյ» և այլն)։ Այսպիսով՝ գրաբարում գործածված լինելը չափանիշ չէ տվյալ բառի ոչ օտար, հայերենին հարազատ դարձած լինելու համար։ Ժամանակակից հայերենին հարազատ են, օտար ու խորթ չեն այն բառերը, որոնք հաստատուպես մտել են նրա բառային կազմի մեջ, գործածվում են խոսողների և գրողների գոնե մեծամասնության կողմից։ Սա չի նշանակում, թե նոր փոխառված օտար բառերը չեն կարող այդպիսին դառնալ, քանի որ նրանք սկզբից գործածվում են դեռևս նեղ շրջանակներում և ընդհանուր ճանաչում չեն գտել։ Այդպիսի բառերը, ինչպես գիտենք, նորաբանությունների (նեոլոգիզմների) կարգին են պատկանում և ժամանակի ընթացքում կարող են ընդհանուրի ճանաչմանն արժանանալ և մտնել ոչ միայն լեզվի բառային կազմի, այլև բառային հիմնական ֆոնդի մեջ։

Առանձնապես կարևոր են «Օտար աղդեցություններ» և «Անհատական կամքը լեզվի մեջ» գլուխները. հեղինակը հսկայական լեզվաբանական նյութի խոր ու մանրակրկիտ քննությամբ ցույց է տալիս, որ լեզուների խաչավորումից, նրանց փոխազդեցություններից, նրանց ձուլումից չի կարող առաջանալ ինչ որ նոր, խառնածին լեզու։ Նա լեզվական հարուստ փաստերով ցույց է տալիս, որ առհասարակ խառնածին լեզու չկա։ Այս փաստը հատկապես կարևոր է հայագիտության համար, որովհետև, ինչպես հայտնի է, ոմանք հենց հայերենն են համարել խառնածին լեզվի տիպար։ Փաստերի խոր ու բազմակողմանի վերլուծությամբ հեղինակը մի անգամ ևս ապացուցում է, որ հայերենը խառնածին լեզու չէ, որ նա երկցեղ բնույթ չունի, այլ պարզապես հնդեվրոպական լեզու է, որ դարերի ընթացքում հարստացրել է իր բառային կազմը մի կողմից՝ իր սեփական բառակազմության միջոցներով, մյուս կողմից՝ այլ լեզուներից կատարած փոխառություններով։ Անդրադառնալով լեզվի զարգացման, մշակման ու հարստացման գործում անհատի ունեցած դերին, հեղինակը ճիշտ կերպով ցույց է տալիս, որ անհատների դերը սահմանափակվում է նորակերտ բառեր կազմելով և չի թափանցում լեզվի քերականության մեջ։ Այստեղ էլ, սակայն, պետք է ավելացնել, որ հեղինակը աչքաթող է անում նպատակասլաց, լեզվի զարգացման օրենքներից բխող լեզվաշինարարության

դերը, որ կատարվում է մարդկանց ակտիվ միջամտությամբ, նրանց կամքով. ըստ որում, եթե նախկինում այդ բանը կատարվել է տարերայնորեն, առանձին անհատների կողմից, և այդ պատճառով էլ ոչ միշտ և ոչ բոլոր նորմուծությունները են տարածվել և ընդունվել հասարակության կողմից, ապա սոցիալիստական հասարակության մեջ դրանով զբաղվում են հատուկ մարմիններ (գիտական հաստատություններ, տերմինաբանական կոմիտե և այլն), ըստ որում նրանց գործունեությունն էլ ենթարկվում է հասարակության հսկողության:

Հատորի երկրորդ մասը, ինչպես ասացինք, ընդգրկում է լեզուների դասակարգումը: Այստեղ հեղինակը նախ կանգ է առնում այն հարցի վրա, թե ինչ է լեզուների ցեղակցությունը և ինչպես է առաջացել այն: Բազմաթիվ օրինակներով ցույց տալով տարբեր լեզուների միջև եղած ընդհանրությունները՝ հեղինակը քննում է, թե ինչից կարող էին առաջանալ այդ ընդհանրությունները և հերքելով մի շարք վարկածներ, հանդում այն եզրակացության, որ այդ ընդհանրությունները հետևանք են ընդհանուր ծագման. այստեղից էլ, ահա, բխում է լեզուների ցեղակցության սահմանումը. «Ցեղակից են կոչվում այն լեզուները, որոնք միևնույն ծագումն ունեն, ընդհակառակը՝ ցեղակից չեն այն լեզուները, որոնք տարբեր ծագում ունեն: Ավելի գիտական բացատրությամբ՝ լեզուների ցեղակցություն ասելով հասկանում ենք այն պատմական իրողությունը, որով մի լեզու դարերի ընթացքում, աստիճանական փոփոխությամբ հասել է մի վիճակից մի ուրիշ վիճակի» (էջ 451): Այսպես ճիշտ սահմանելով լեզուների ցեղակցությունը, հեղինակն, այնուամենայնիվ, այդ երևույթը բացատրում է նախալեզվի տեսության համաձայն: Նա այն տեսությանն է հետևում, որի համաձայն ցեղակից լեզուները երբեմնի նախալեզվի շարունակություններն են: Ըստ այդ տեսության, նախնական ժամանակներում գոյություն է ունեցել, օրինակ՝ հնդեվրոպական միասնական մի ժողովուրդ, որ ապրել է մի որոշ տեղում, հեղինակի կարծիքով այժմյան Ռուսաստանում, հետագայում այդ ժողովուրդը մասնատվել է, նրա հատվածները գաղթել, տարածվել, բնակություն են հաստատել Ասիայի ու Եվրոպայի զանազան մասերում՝ կազմելով առանձին ժողովուրդներ, որոնցից էլ հետագա մասնատումներով առաջացել են դարձյալ նորանոր ժողովուրդներ և այսպես գոյացել են «հնդեվրոպական ժողովուրդները»:

Սրան համապատասխան էլ այդ նախնական միասնական ժողովրդի լեզուն՝ հնդեվրոպական նախալեզուն՝ իր ճյուղավորում-

ներն է առաջացրել, տարբեր տեղերում ու տարբեր հատվածների մոտ տարբեր ձևափոխությունների ենթարկվել և առաջ բերել հընդեվրոպական ցեղակից լեզուները, որոնք ըստ հեղինակի, ոչ այլ ինչ են, եթե ոչ, հնդեվրոպական նախալեզվի տարբեր էվոլյուցիաները։ «Ջանազան տվյալներից հասկացվում է,— ասում է հեղինակը,— որ հնդեվրոպական առաջին ժողովրդի գաղթականությունները ընդհանրապես եղել են ոչ թե ոստումներով կամ աշխարհակալական հեռագնաց արշավանքներով, այլ տարածմամբ ու հանդարտ առաջխաղացմամբ։ Ժողովրդի ու լեզվի այս հաջորդական տարածումը պատճառ է դարձել միությունը խախտելու և հնդեվրոպական ժողովրդից ու լեզվից նորանոր ժողովուրդներ ու լեզուներ դուրս բերելու» (էջ 466)։

Հասկանալի է, որ ժողովուրդների ու նրանց լեզուների պատմական պրոցեսի այսպիսի պարզունակ ու միակողմանի բացատրությունը ընդունելի չէ։ Իհարկե, չի կարելի ժխտել գաղթերի դերը ժողովուրդների կազմավորման պրոցեսում, և մարքսիզմի կլասիկները շատ հաճախ են շեշտել պատմության ընթացքում տեղի ունեցած գաղթերի հսկայական դերը։ Սակայն, որքան էլ մեծ լինի այդ դերը, այնուամենայնիվ չի կարելի ժողովուրդների ողջ պատմությունը վերածել գաղթերի ու տեղափոխությունների պատմության՝ անտեսելով ժողովուրդների կազմավորման ներքին պրոցեսի պատմական օրինաչափությունները։ Ժողովուրդների առաջացումը կապելով «հնդեվրոպական նախացեղի» մասնատման ու գաղթերի հետ՝ հեղինակն այդ ամբողջ պրոցեսը դիտում է որպես արդեն իսկ կազմավորված, մեկ ընդմիշտ պատրաստի ժողովրդի գաղթականություն և դրանով իսկ անտես առնում յուրաքանչյուր առանձին ժողովրդի կազմավորման պատմությունը։ Մինչդեռ իրականում յուրաքանչյուր ժողովրդի կազմավորումը մի կոնկրետ պատմական իրողություն է իր հատուկ պայմաններով, առանձնահատկություններով ու դրսևորումներով։ Այսպես, օրինակ, ելնելով իր ընդհանուր դրույթից՝ հեղինակը գտնում է, որ հայ ժողովուրդն էլ «հնդեվրոպացիների» մի գաղթականություն է, որն իբրև պատրաստի ժողովուրդ դուրս է եկել «հնդեվրոպական նախահայրենիքից», ներգաղթել է Հայաստան և, իրեն ձուլելով տեղական ցեղերին ու տոհմերին, շարունակել իր դոյությունը յուր նոր հայրենիքում։ Հայ ժողովրդի կազմավորման այսպիսի բացատրության հետ համաձայնել չի կարելի։ Անշուշտ մենք չենք ժխտում այն փաստը, որ հայ ժողովրդի մեջ մտել են եկվոր հնդեվրոպական ցեղեր և որ, նույնիսկ, այդ ցեղերը կամ ցեղախումբը կարող են նշանակալից

դեր խաղացած լինել հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում, մանավանդ, որ լեզվական տվյալներն էլ դրա օգտին են խոսում։ Բայց այդ դեռ չի նշանակում, թե հայ ժողովուրդը, իբրև այդպիսին, եկել է ինչ որ տեղից իբրև պատրաստի, կազմավորված ժողովուրդ։ Որքան էլ շատ լինեն հայ ժողովրդի կազմի մեջ մտած եկվոր ցեղերը, և ինչպիսին էլ լինի նրանց խաղացած դերը, հայ ժողովուրդը, որպես այդպիսին, կազմավորվել է պատմական Հայաստանում, որ իր՝ հայ ժողովրդի և՛ նախահայրենիքն է, և՛ հայրենիքը։ Ինչ վերաբերում է ցեղակից լեզուների առաջացմանը, ապա այդ էլ հեղինակը բացատրում է լեզվաբանական անընդհատականության տեսությունից ելնելով, տեսություն, որ, ինչպես վերը տեսանք, էվոլյուցիոնիզմի ցայտուն արտահայտությունն է լեզվաբանության մեջ։ Անշուշտ մարքսիստական լեզվաբանությունը ընդունում է լեզուների ցեղակցությունը, դիտելով այն իբրև ցեղակից լեզուների մեկ ընդհանուր աղբյուրից (նախալեզվից կամ հիմնալեզվից) առաջացած լինելու արդյունք։ Սակայն, ընդունելով ցեղակից լեզուների առաջացումը մեկ ընդհանուր աղբյուրից՝ մարքսիստական լեզվաբանությունը այդ երևույթը դիտում է իբրև պատմական իրողություն և լուսաբանում է այն պատմական մատերիալիզմի հիմունքներով։ Մարքսիստական լեզվաբանությունը գտնում է, որ ցեղակից լեզուների հիմքում, իրոք, ընկած է մեկ ընդհանուր լեզու, որ լեզվաբանության մեջ կոչվում է նախալեզու կամ հիմնալեզու։ Այդ լեզուն տվյալ լեզվական ընտանիքի մեջ մտնող լեզուներին ծառայել է որպես հիմք, որի պատմական զարգացմամբ, ժողովուրդների կազմավորման պրոցեսին զուգընթաց, կազմավորվել են առանձին ժողովուրդների լեզուները։ Հիշտելով, որ ժամանակակից լեզուների սաղմերն առաջացել են խոր հնադարում, մարքսիզմի կլասիկները ցույց են տալիս, որ տոհմային լեզուներից դեպի ցեղային լեզուները, ցեղային լեզուներից դեպի ժողովուրդների (народностей) լեզուները և ժողովուրդների լեզուներից դեպի ազգային լեզուները կատարված անցումները լեզվի պատմության մեջ որակապես տարբեր էտապներ են ներկայացնում։ Մարքսիստական այդ դրույթից ելնելով էլ պետք է բացատրել յուրաքանչյուր լեզվի կազմավորումը, տարբեր պատմական փուլերում տեղի ունեցած նրա որակական անցումներն ու զարգացումը։ Ցեղակից լեզուները, ունենալով մեկ ընդհանուր աղբյուրից՝ հիմնալեզվից ստացած հիմքը, զարգացրել, հարստացրել են այդ հիմքը յուրաքանչյուրն իր ուրույն ընթացքով, իր զարգացման ներքին օրինաչափություններին համապատասխան, իր ուրույն պատմա-

կան պայմաններում։ Այդ ընդհանուրին նրանցից յուրաքանչյուրը ավելացրել է պատմական զարգացմամբ ստեղծած իր սեփականը, այդ ընդհանուրից կորցրել այն, ինչ որ պատմական զարգացման պրոցեսում կորցրել է իր անհրաժեշտությունը, դրանով և ստեղծվել են ցեղակից լեզուների միջև եղած տարբերությունները։ Նշանակում է՝ ընդունելով լեզուների ցեղակցությունը և նրանց միջև եղած ընդհանրությունները մեկ ընդհանուր աղբյուրից դիտելով՝ չպետք է ցեղակից լեզուները այդ ընդհանուր աղբյուրի՝ մի նախնական լեզվի պարզ շարունակությունն ու ձևափոխությունները համարել, այլ ընդհանուր հիմքի վրա զարգացած ինքնուրույն որակներ՝ իրենց ընդհանրություններով ու տարբերություններով, իրենց զարգացման ներքին օրինաչափություններով։

Անցնելով աշխարհի լեզուների դասակարգմանը՝ հեղինակը մի առ մի թվարկում է լեզվական ընտանիքները, դրանցից յուրաքանչյուրի մեջ մտնող լեզուները և համառոտ տեղեկություններ տալիս ինչպես այդ լեզուներով խոսող ժողովուրդների, այնպես էլ իրենց իսկ՝ լեզուների մասին։ Այս մասի առավելությունն այն է, որ հեղինակը ամփոփում է աշխարհի լեզուների դասակարգման ուղղությամբ շուրջ մեկ և կես հարյուրամյակի ընթացքում կատարվածը։ Ըստ որում, սովետական լեզվաբանական գրականության մեջ այսպիսի ընդարձակությամբ դեռևս ոչ ոքի կողմից չի գրված ու նկարագրված աշխարհի լեզուների դասակարգումը։ Այստեղ էլ պետք է նկատի ունենալ, սակայն, որ որոշ լեզուների պատկանելությունը այս կամ այն ընտանիքին դեռևս վերջնականապես լուծված չէ և հեղինակի կողմից ընդունված կարծիքները մի քանի առանձին լեզուների վերաբերյալ առայժմ վիճելի են։ Այսպես, օրինակ, հեղինակը ընդունում է այն տեսակետը, թե ճապոներենն ու կորեերենը մեկ ընտանիքի մեջ են մտնում, մինչդեռ այդ հարցը առայժմ վերջնականապես ճշտված չէ և արևմտաեվրոպական լեզվաբաններից շատերը գտնում են այժմ, որ այդ երկու լեզուների միջև ցեղակցական կապեր գոյություն չունեն։

Խիստ հետաքրքիր է, առանձնապես հայ ընթերցողի համար, այն գլուխը, որ նվիրված է նախալեզվի վերականգնման հարցին։ Այստեղ հեղինակը հանգամանորեն ու շատ մատչելի կերպով շարադրում է պատմա-համեմատական մեթոդի սկզբունքները և հատկապես կանգ է առնում այդ մեթոդի ռեկոնստրուկտիվ դերի վրա՝ բազմաթիվ օրինակներով ցուցադրելով ու բացատրելով այն։ Նկատի ունենալով, որ հայերեն լեզվով պատմահամեմատական մեթոդի վերաբերյալ այդպիսի աշխատություն չկա, այս գլուխը կարելի է

դիտել որպես օժանդակ ձեռնարկ բոլոր նրանց համար, ովքեր ուզում են ծանոթանալ այդ մեթոդին։

Աշխատությունը վերջանում է «ընդհանուր նախալեզուս խորագիրը կրող գլխով, որի մեջ հեղինակը քննության է առնում այն տեսությունները, որոնց համաձայն բոլոր լեզվաընտանիքներն էլ, իբր թե, իրենց հերթին առաջացել են մի ընդհանուր նախալեզվից այնպես, ինչպես ցեղակից լեզուները՝ մեկ նախալեզվից։ Այս հարցը առանձնապես քննության է առնվել 20-րդ դարի մի շարք բուրժուական լեզվաբանների կողմից։ Հեղինակը շարադրում է այդ լեզվաբանների կարծիքները, քննարկում նրանց փաստարկները, որոնք հեղինակի հմուտ վերլուծություններով գրեթե անխտիր հերքվում են, և հանգում այն եզրակացության, որ ընդհանուր նախալեզվի տեսությունը իրական հիմքերից զուրկ է։ Հեղինակի այս եզրակացությունը ճիշտ է։ Իհարկե չի կարելի լիովին բացասել առանձին ընտանիքների երբեմնի միասնության հարցը. այսպես, օրինակ, այժմ շատերը ընդունում են ուգրո-ֆիննական, թուրքական ու տունգուս-մանջուրական ընտանիքների նախնական միասնությունը. էնգելսը խոսում է հնդեվրոպացիների ու սեմականների բաժանման մասին, որից կարելի է ենթադրել, թե նա ընդունում էր այդ երկու ընտանիքների նախնական միասնությունը, ինչպես ընդունում են նաև լեզվաբաններից շատերը։ Բայց այս բոլորը վերաբերում են առանձին, կոնկրետ լեզվական ընտանիքների վաղեմի միասնությանը. ինչ վերաբերում է ընդհանուր, մեկ համամարդկային նախալեզվին, որ սույն գրքի հեղինակը իրոնիայով կոչում է «նախատատ», ապա դա միայն որոշ լեզվաբանների կողմից առաջ քաշված վարկած է, որ զուրկ է գիտական ու պատմական հիմքից և հանգում է աստվածաշնչական առասպելին։

Այսպես ուրեմն, Հ. Աճառյանի «Վիճակատար քերականության» այս հատորն ընդգրկում է լեզվաբանության տեսական ամենակարևոր հարցերը։ Չնայած իր որոշ թերություններին ու վիճելի կարծիքների առկայությանը, հատորը գիտական մեծ արժեք է ներկայացնում բազմաթիվ հարցերի բազմակողմանի, խոր ու ճշգրիտ քննությամբ։ Սրանով էլ հենց այս հատորը մի խոշոր ներդրում է հանդիսանում սովետական լեզվաբանության մեջ։

* * *

Ինչպես հայտնի է, իր կյանքի վերջին տարիներում վատառողջ վիճակն ու աչքերի կուրությունը զրկել էին Հ. Աճառյանին աշխատելու հնարավորությունից։ Այդ պատճառով էլ «Վիճակատար քեր-

կանութեան», ինչպես և մյուս բոլոր լեզվաբանական աշխատութեյունների տպագրութեյան պատրաստելն ու հրատարակելը հանձնարարել էր տողերիս գրողին՝ լիազորելով նաև մեր կողմից անհրաժեշտ համարվող փոփոխութեյունները և հավելումները կատարելու։ Մինչև այժմ լույս տեսած երկու հատորները, ինչպես և Առտիալի ու Վանի բարբառները, որոնք պատրաստվել են տպագրութեյան ու խմբագրվել են մեր կողմից հեղինակի կենդանութեյան օրոք, ենթարկվել են մասնակի փոփոխութեյունների ու հավելումների, որոնք սակայն որևէ նշանով չեն նշանակվել, քանի որ դրանք արժանացել են հեղինակի հավանութեյանը և, հետևաբար, դարձել հեղինակային հավելումներ ու փոփոխութեյուններ։ Իր մահվանից հետո ձեռագիր վիճակում մնացած գործերի հրատարակութեյունը հեղինակը կտակել է դարձյալ տողերիս գրողին, օժտելով նույն իրավունքով՝ հավելումների ու փոփոխութեյունների հարցում։ Միաժամանակ, հեղինակը հանձնարարել է նաև բոլոր հավելումները առնել անկյունավոր փակագծերի մեջ։ Պարծանոք ընդունելով հանգուցյալ ուսուցչի հանձնարարութեյունը և աշխատելով մեր ուժերի ներածին չափ լավ կատարել նրա կամքը, այս հատորը տպագրութեյան պատրաստելիս օգտվելով մեզ տրված իրավունքից, բայց չշարաշահելով այն, կատարել ենք որոշ հավելումներ, որոնք և անկյունավոր փակագծերի մեջ ենք առել։

Անհրաժեշտ է նշել, որ սույն աշխատութեյան վրա հեղինակը աշխատել է տասնյակ տարիներ, որի հետևանքով և ժամանակի կնիքը մնացել է նրա լեզվի վրա։ Հեղինակի լեզվական, ոճական ու տերմինաբանական առանձնահատկութեյունները ընդհանրապես անփոփոխ ենք թողել. փոխել ենք միայն -ությանց (=ութեյունների), -ք (=ներ) և -ոց (—ների) վերջավորութեյունները, մասն բաեի (խոսքի մաս) տերմինը և խիստ հնաբանութեյունների մի քանի մասնակի դեպքեր։

Պրոֆ. Էդ. ԱՂԱՅԱՆ

ԱՒԱՋԻՆ ՄԱՍ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ԳԼՈՒԽ Ա

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞ՆՉ Է ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվաբանությունը այն գիտությունն է, որ ուսումնասիրում է լեզուների կյանքը ընդհանրապես, քննում է նրանց կրած հաջորդական փոփոխությունները իրենց պատմական կյանքի ընթացքում, երևան է հանում այն օրենքները, որոնց համաձայն լինում են այդ փոփոխությունները, և, վերջապես, հիմնվելով այդ օրենքների վրա, աշխատում է մխրճվել անծանոթ անցյալի մեջ և լուսաբանել բոլոր լեզուների, ինչպես և առհասարակ մարդկային խոսողության ծագումը։ Մի խոսքով՝ լեզվաբանությունը մարդկային լեզվի ընդհանուր գիտությունն է։

Իբրև այդպիսին լեզվաբանությունը, հիմնված լինելով առանձին լեզուների ուսումնասիրությունների վրա, չի նույնանում, սակայն, այս կամ այն առանձին լեզվի ուսումնասիրության հետ։ Վերանալով կոնկրետից ու մասնավորից՝ լեզվաբանությունն աշխատում է գտնել այն ընդհանուր օրինաչափությունները, որոնք հատուկ են մարդկային լեզվին ընդհանրապես։ Մյուս կողմից, լեզվաբանությունը, թեև հիմնված լեզվական իրական փաստերի վրա, չի հանդիսանում զուտ փորձառական (էմպիրիկ) գիտություն։ Լեզվաբանությունը ոչ միայն արձանագրում է լեզվական երևույթները, ոչ միայն երևան հանում այս կամ այն լեզվի մեջ եղած փաստերը, այլև տալիս է դրանց տեսական լուսաբանությունը և հանգում գիտական ընդհանրացումների։ Վերջապես՝ լեզվաբանությունը իր ունեցած իրական տվյալների հիման վրա աշխատում է տալ մարդկային լեզվի առաջացման, լեզուների զարգացման նախնական, գրավոր կամ բանավոր աղբյուրներով մեզ չավանդված շրջանների գիտական լուսաբանությունը, իսկ մյուս կողմից՝ նշել լեզուների հետագա զարգացման ուղին։

Այս տեսակետից առանձին լեզուների գործնական քերականությունները, որոնք ուսուցողական նպատակներ են հետապնդում, ընդհանուր լեզվաբանություն չեն, այլ նրա մասնավոր-կիրառական մասը։ Այս չի նշանակում, իհարկե, թե գործնական քերականությունները կամ թեկուզ նրանց ուսուցումը կտրված է լեզվաբանությունից։ Ընդհակառակը, նրանք սերտորեն կապված են լեզվաբանության հետ և նրա օրգանական մասերից մեկն են կազմում, և թեև նրանք հետապնդում են ավելի գործնական ու լեզվաբանության համեմատությամբ սահմանափակ նպատակներ, այնուամենայնիվ իրենց սկզբունքներով հիմնված են լեզվաբանության տեսական դրույթների վրա։

Ճիշտ չէ նաև լեզվաբանությունը նույնացնել համեմատական քերականության հետ, ինչպես անում էին անցյալ դարում և դարձյալ անում են ոմանք նաև այժմ։ Այդպես մտածողները բերում են երկու փաստարկ. նախ այն, որ անցյալ դարում, երբ հիմնադրվեց լեզվաբանությունն իբրև ինքնուրույն գիտություն, նա ոչ այլ ինչ էր, եթե ոչ համեմատական քերականություն. հենց այդ պատճառով էր, որ XIX դարում լեզվաբանությունը հավասարապես կոչվում էր նաև համեմատական լեզվաբանություն։ Երկրորդ՝ այն, որ ընդհանուր լեզվաբանությունը ոչ թե մի լեզվի որևէ շրջանի, և ոչ իսկ որևէ առանձին լեզվի բոլոր շրջանների, այլ բոլոր լեզուների ու նրանց պատմության բոլոր շրջանների ուսումնասիրության վրա հիմնված գիտություն է։ Իսկ բոլոր լեզուների ընդհանուր գիտությունն ակսվում է այն պահից, երբ համեմատության մեջ են դրվում առանձին լեզուների տվյալները, և նրանցից հանվում ընդհանուր տեսական եզրակացություններ։ Թեև այս առարկությունների մեջ ճշմարտություն կա, բայց դա հիմք չի տալիս ընդհանուր լեզվաբանությունը համեմատական լեզվաբանություն կոչելու կամ ավելի ևս համեմատական քերականության հետ նույնացնելու։ Ամենից առաջ՝ մարքս-լենինյան լեզվաբանությունը չի ընդունում բուրժուական լեզվաբանության մեջ գործադրվող պատմական-համեմատական մեթոդը անվերապահորեն։ Խոսելով այդ մեթոդի մասին, Ի. Վ. Ստալինը նշում է, որ նա ունի լուրջ թերություններ, որոնցից սովետական լեզվաբանությունը հրաժարվում է։ Այնուհետև՝ սովետական լեզվաբանությունը ոչ միայն համեմատական քննության է ենթարկում լեզվական երևույթները, այլև տեսական վերլուծու-

թյուններ է կատարում և տալիս լեզվի ընդհանուր տեսությունը. սրանով նա արմատապես տարբերվում է բուրժուական լեզվաբանությունից, որ գերազանցապես փորձառական (էմպիրիկ) գիտություն է։ Հիմնված լինելով մարքսիզմ-լենինիզմի հիմունքների վրա՝ սովետական լեզվաբանությունը չի կարող ինել բուրժուական էմպիրիկ գիտության աստիճանին։ Լեզվաբանությունը միաժամանակ և՛ տեսական, և՛ գործնական գիտություն է, իսկ համեմատական քերականությունը լեզվաբանության մի անհրաժեշտ մասն է և ոչ ինքը՝ լեզվաբանությունը։

Պետք չէ նաև շփոթել լեզվաբանությունը լեզվագիտության և բանասիրության հետ։ Լեզվագիտությունը մի կամ մանավանդ մի քանի լեզուների պարզ ծանոթությունն է. լեզվագետը հմուտ է մի լեզվի միայն մի շրջանին և սրա զանազան շրջանների համեմատության և մանավանդ ծագման հետ գործ չունի։ Ըստ այսմ լեզվագիտությունը, հակառակ իր անվան, գիտություն չէ։ Մի մարդ, որ առիթ է ունեցել ճանապարհորդելու և ապրելու զանազան երկրներում, կարող է խոսել շատ լեզուներով։ Միջերկրականի վրա գտնվող շոգենավերի նավաստինները առհասարակ բազմալեզվագետ են։ Այն երկրներում, ուր մի քանի ազգեր միասին են բնակվում, մարդիկ առհասարակ խոսում են մի քանի լեզվով։ Այսպիսի բազմալեզու երկրներ են Շվեյցարիան, Թյուրքիան, Կովկասը, Պարսկաստանը և այլն։ Շվեյցարիայում գրեթե ամեն մարդ խոսում է ֆրանսերեն, գերմաներեն և իտալերեն։ Թյուրքիայում մի ժամանակ ամեն հայ խոսում էր թյուրքերեն, հունարեն, հայերեն։ Կովկասում՝ ռուսերեն, ադրբեջաներեն, վրացերեն և հայերեն։ Պարսկաստանում՝ պարսկերեն, ադրբեջաներեն, հայերեն և այլն։ Եղել են և կան մարդիկ, որ առանձին ընդունակություն և հարմարություն են ունեցել բազմաթիվ լեզուներ սովորելու։ Օրինակ՝ Միհրդատ պոնտացոց թագավորի համար ասվում է, թե գիտեր կովկասյան բոլոր լեզուները։ Հեհահայ կարավանապետները խոսում էին եվրոպական և ասիական բոլոր լեզուներով. իբր օրինակ հիշատակվում է նրանցից մեկը, որ խոսում էր 98 լեզվով (F. Macler, Թրգմն. Եգիպտ. տարեց. 1926, էջ 153)։ Վոլապյուկ (Volapuk) կոչված միջազգային լեզվի հեղինակը՝ Շլեյերը, գիտեր 56 լեզու և այլն։

Բայց կարող է պատահել, որ բազմաթիվ լեզուներով խոսող մի անձ ոչ թե միայն նրանց պատմությունը կամ ծագումը,

այլ նույնիսկ հասարակ ընթերցանությունը չիմանա։ Եվ ընդհակառակը, պետք չէ զարմանալ բնավ, որ մի նշանավոր լեզվաբան, բացի իր մայրենի լեզվից որևէ ուրիշ լեզվով չկարողանա խոսել։ Մեր մեջ հատկապես լեզվագիտությունը շատ զարգացած է. չկա հայ, որ առնվազն երկու լեզվով չխոսի. բայց որքա՜ն սակավաթիվ են մեր լեզվաբանները։

Իբրև լեզվաբանի և լեզվագետի տարբերության շոշափելի օրինակ, կարելի է համեմատել բուսաբանին ուսում չունեցող պարտիզպանի հետ։ Առաջինը գիտունն է, որ ուսումնասիրում է բույսերի կյանքը. վերջինը՝ մի հասարակ արհեստավոր է, որ մշակում է այս ու այն բույսը։

Գալով բանասիրությանը, դա էլ կապ ունի ոչ թե լեզվի, այլ գրվածքի հետ։ Ուսումնասիրել, թե այսինչ գրվածքը ո՛ր շրջանին է պատկանում, բնագի՛ր է, թե՞ թարգմանություն, որո՛նք են իր աղբյուրները, թե ի՞նչ ազդեցություններ է կրել նախորդ հեղինակներից, կամ ի՞նչ ազդեցություն է գործել ուրիշ հեղինակների վրա և կամ ձեռագրերի համեմատական քննությամբ երևան հանել, թե ի՞նչ հաջորդական աղավաղումների է ենթարկվել մինչև մեր ձեռքը հասնելը, վրիպակ ընթերցումները ուղղագրել և նախնական բնագիրը վերականգնել,— այս է ահա բանասիրությունը՝ անձուկ մտքով առած. ավելի լայն իմաստով վերցրած՝ բանասիրությունը ներկայացնում է որևէ ժողովրդի մտավոր զարգացման ուսումնասիրությունը։ Առանց գրվածքի բանասիրություն չկա. բայց լեզվաբանությունը շատ գործ ունի նույնիսկ այնպիսի լեզուների հետ, որոնք գիր ու գրականություն անգամ չունեն։

Մեր մեջ լեզվաբանություն, լեզվագիտություն և բանասիրություն բառերը շփոթ կերպով գործ են ածվում իրար փոխարեն։ Եվրոպայի մեջ էլ մինչև XX դարը բանասիրություն նշանակում էր լեզվաբանություն։ Թողնենք այն, որ արտասահմանյան հայ լրագրական լեզվի մեջ բանասիրական բառով որակում են գրական կամ ուսումնական զանազան հոդվածներ, ինչ որ բոլորովին սխալ է։

Ամեն մի գիտություն ապրել է իր նախապատրաստական շրջանը և իր մանկությունը։ Այդ շրջանում մարդիկ շատ թերի, անորոշ, նույնիսկ շատ սխալ բաներ գիտեին ամեն մի գիտության մասին։ Աչքի առաջ բերենք քիմիան։ Հնագույն դարերում մարդիկ ճանաչում էին 4 տարր. օդ, ջուր, հող, հուր. այս-

օրվա քիմիան գիտե հարյուրի չափ տարրը, որոնց մեջ չկան օդ, ջուր, հող, հուր։ Աչքի առաջ բերենք բժշկությունը։ Որքան տարբերություն մեր և հների միջև։ Հին բժշկությունը ոչ կանոնավոր մարդակազմություն գիտեր, ոչ բնախոսություն, ոչ դեղաբանություն, ոչ մանրէ, ոչ վարակում, ոչ էլ ախտահանություն. չեմ խոսում ռենտգենյան ճառագայթների մասին, որով մարմնի ներքին խորշերն են գիտում և հիվանդությունները իրենց բնում քննարկում։ Ի՞նչ ասեմ ֆիզիկայի մասին, որ հները հազիվ էին ճանաչում. իսկ այժմ այդ գիտությունը այնքան առաջ է գնացել, որ Մոսկվայում՝ Կրեմլի աշտարակի ժամացույցը խփում է, և նույն ակնթարթում մենք այստեղ կարող ենք լսել։

Եթե այսպես են այս գիտությունները, որոնք հազարավոր տարիների կյանք են ունեցել և որոնք ամենօրյա կյանքի մեջ գործնական նշանակություն և արժեք ունեն, ինչ պիտի լիներ լեզվաբանական գիտությունը, որին հները հազիվ մատի ծայրով էին շոշափել, և որ իսկապես հազիվ $1^1/_2$ դարի կյանք ունի։ Այսքան նոր գիտություն է նա։ Ես այստեղ չեմ շոշափելու լեզվաբանության պատմությունը. դա մի առանձին գիտություն է. բայց համառոտ խոսքով ասեմ, որ հները լեզվաբանությունն իբրև գիտություն չէին ճանաչում։ Հների լեզվաբանությունը բառերի պատահական նմանության վրա հիմնված հաճախ զվարճալի, ընդհանրապես անմիտ ու անհամ բառախաղ էր։ Հները ոչ ձայնական օրենքների մասին գաղափար ունեին, ոչ լեզուների ներքին կապի կամ ցեղակցության մասին՝ որևէ տեղեկություն, ոչ էլ նույնիսկ լեզուների ճիշտ թիվը գիտեին։

Արդի լեզվաբանության տարբերությունը հնի համեմատությամբ չափազանց մեծ է։

2. ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

Գիտությունները երկու խմբի են բաժանվում. 1) բնական գիտություններ և 2) հասարակական գիտություններ։ Առաջինները ուսումնասիրում են բնությունը և հանում նրա օրենքները, իսկ երկրորդները ուսումնասիրում են հասարակությունը, հասարակական երևույթները և դուրս բերում նրանց զարգացման օրենքները։

Այժմ հարցնենք, թե ինչ դաղափար ունեն շատերը լեզվա-

բանության մասին և որտե՛ղ պետք է դնել լեզվաբանությունը իբրև գիտություն։

Ոմանք լեզվաբանությունը ամենևին գիտություն չեն համարում. այսպես են տգետները և սկեպտիկները։ Առաջինները ծանոթ չեն լեզվաբանության օրենքներին և նախապաշարված են հին լեզվաբանների կողմից, որոնց գիտությունը, ինչպես ասացինք, ոչ այլ ինչ էր, եթե ոչ զվարճալի բառախաղ։ Օր. սափոր մեկնում էին — «սա ունի փորց», երիտասարդ — «երից տասանց հասեալ է արդ», կանթեղ — «կայ անդ եղ» և այլն։ Այսպիսի հիմարություններ տեղի էին ունենում ամեն երկրում. եվրոպացիների մոտ դասական ծաղրական օրինակն է Վոլտերի այս խոսքը. «Լեզվաբանությունն այն գիտությունն է, որի մեջ ձայնավորները արժեք չունեն, իսկ բաղաձայնները կարևորություն չունեն. օր. „Paris դառնում է Rome.— ինչպես.— Pa դառնում է R, ris դառնում է ome, որով Paris-ից դուրս է գալիս Rome“։ Բայց այս բոլորը պատկանում են անցյալին, նոր լեզվաբանության հետ գործ չունեն, և եթե Վոլտերը կենդանի լիներ այժմ, այդ խոսքերը չէր ասի։ Վերջին հարյուրամյակում լեզվաբանությունը այնպես է կատարելագործվել, այնպիսի խիստ օրենքների տակ է դրվել, նույնիսկ լեզվաբանական քննության համար այնպիսի գործիքներ են հնարվել, որ այդ գիտությունը յուր շատ կողմերով որևէ փորձառական գիտությունից ամենևին ետ չի մնում։ Նվ եթե մինչ այժմ էլ լեզվաբանության մեջ կան զանազան չբացատրված կետեր, հատկապես լեզվի ծագման մասին, ապա դա ճակատագիրն է բոլոր գիտությունների, ուր մարդկային միտքը հասնում է մի կետի և այնտեղից այն կողմ անցնել դեռ չի կարող անհրաժեշտ տվյալներ չունենալու պատճառով։ «Ինչունն» շատ կետերում անհայտ է բոլորին։

Գալով սկեպտիկներին, որանք գիտություն ասելով հասկանում են բացարձակ դրական գիտությունները, ինչպես օրինակ՝ մաթեմատիկա, իսկ հասարակական գիտությունները, որոնց թվում, իհարկե, նաև լեզվաբանությունը, իսկական գիտություն չեն համարում։ Բայց այս էլ ըստ էության շատ չի տարբերվում տգիտությունից։

Արհամարհելով տգետներին (բայց ինչքան «գիտնականներ» կան այս տգետների շարքում) և անուշադրության մատնելով սկեպտիկներին, կարող ենք ասել, որ լեզվաբանությունը իր

որոշ մասերով այսօր կանգնած է համարյա դրական գիտությունների շարքում, իբրև նրանց հարազատ մի ընկերը (օր. ձայնաբանություն)։ Եվ ինչպես մի լեզվաբան ասել է՝ «Լեզվաբանությունը է, կամ գոնե ձգտում է դառնալ օրենքների գիտություն»։

Ստուգ է, որ լեզվաբանությունը շատ կետերով թերի գիտություն է. ամենից առաջ թերի է նա այն պատճառով, որ աշխարհիս մեջ այսօր խոսված լեզուների կեսից ավելին դեռ մինչև անգամ գրի առնված չէ, ուր մնաց թե՝ քննված։ Աշխարհիս բոլոր լեզուների թիվը է շուրջ 1500, որոնցից քերականորեն քննված են միայն 600-ը, իսկ մնացյալ 900-ը մնում է չքննված։ Այսպես են Ամերիկայի, Օվկիանիայի և Աֆրիկայի բնիկների լեզուները։ Բայց այս թերին կարելի է մի օր լրացնել՝ շնորհիվ քաղաքակրթության, որ ծավալվելով՝ գիտության լույսին պիտի մոտեցնե բոլոր ժողովուրդներին։ Եթե այսպես դեռ ծանոթ իսկ չեն շատ լեզուներ, ուր մնաց բարբառների ահռելի բազմությունը՝ սկսած ամենաակրթված ազգերից մինչև ամենից հետամնացներինը։ Ֆրանսիացիք ունեն բազմաթիվ գավառաբարբառներ[1], որոնցից միայն 638-ը քննված են պատշաճ ձևով. երբ պիտի քննվեն մնացածները, և արդյոք այդ բարբառները պիտի պահվե՞ն իրենց գոյությունը մինչև այն օրը, երբ դառնան քննության առարկա։ Մեր աչքի առաջ՝ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում կորան թյուրքերի բռնագրաված Հայաստանի, Կիլիկիայի և Փոքր Ասիայի հայ բարբառները, ոմանք հազիվ քննված, ոմանք բոլորովին անծանոթ. այս կորուստը անդարմանելի է, և գիտությունը այդ կողմից պիտի մնա միշտ թերի։

Լեզվաբանության մեծագույն թերությունը, սակայն, անցյալին է պատկանում. եթե այսօր, այս լուսավոր դարում, լեզուներ ու բարբառներ են կորչում, ինչքա՜ն ժողովուրդներ, լեզուներ ու բարբառներ կորած պետք է լինեն այն խոր հնության դարերում։ Այդ կորած ժողովուրդներից շատերի անունը միայն գիտենք, ոմանք էլ մեզ ծանոթ են լեզվական մանր-մունր մնացորդներով. մնացած շատ շատերը անհետ կորել գնացել են՝ առանց նույնիսկ իրենց գոյության մասին որևէ հիշատակություն

---

1 Dauzat, La philosophie du langage (Paris, 1912) գավառականների (խոսվածքների) թիվը գնում է շատ մեծ՝ 30 000.

թողնելու։ Գիտության համար շատ ցավալի մի կետ է այն հանգամանքը, որ «գիտության մայր ու դայակ» հին հույները, որոնք գիտության և իմաստասիրության բոլոր ճյուղերի մեջ էլ որևէ դեր ունեն, խստատ անծանոթ են մնացել լեզվաբանության։ Նրանք Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի շատ ու շատ ազգերի հետ սերտ հարաբերություն ունեին. նրանցից շատերի լեզուները հունարենի հետ ակնհայտ նմանություններ ունեին. հույները ուշադրություն չդարձրին այդ նմանությունների վրա (չէ որ բոլոր ազգերը նրանց համար «բարբարոս» էին) կամ եթե տեսան որոշ նմանություն, համարեցին արդյունք պատահականության։ Եթե հույները հետաքրքրված լինեին այդ նմանություններով, ուրիշ խոսքով՝ եթե ձեռնարկած լինեին լեզվաբանության, թեկուզ շատ տկար չափերով, անշուշտ պիտի տային մեզ որոշ չափով տեղեկություններ այդ ժողովուրդների լեզվի և նրանց լեզվական հարաբերությունների մասին։ Համակապես հիշենք Թրակացիներին, փռյուգացիներին, լյուդիացիներին, կապադովկիացիներին, խալդերին, հաթերին, լյուբիկեցիներին և այլն, և այլն, որոնց մասին կամ ոչինչ չգիտենք կամ շատ քիչ բան գիտենք։ Եվ այն ժամանակ որքան ճիշտ ու կատարյալ պիտի լիներ լեզվաբանությունը։ Ահա մի թերի կողմ, որը երբեք հույս չկա լրացնելու։

Հույների պես եղան և հնդիկները. սրանք աքանչելի լեզվաբաններ էին. նրանք տվել են հնդկերենի ձայնաբանության համար այնպիսի գեղեցիկ ուսումնասիրություններ, որոնք իրենց ճշգրիտ կանոններով ու մանրակրկիտ ոգով օրինակ են ծառայում նույնիսկ արդի գիտնականներին։ Դրանց մեջ նշանավոր է Պանինի (Pānini) հնդիկ քերականը, որ մեր թվականությունից 4 դար առաջ գրել է հնդկերենի մանրամասն քերականությունը։

Պանինիից ավելի առաջ է ապրել հնդիկ լեզվաբան Յասկան (Yāska), որ թեև ստուգաբանական գիտության հիմնադիրը չէ, բայց այն ամենահին հեղինակն է, որ զբաղվել է լեզվաբանությամբ։ Այս ասպարեզում ավելի բարձր քան Պլատոնն ու Արիստոտելը, որոնք ժամանակով նրանից հետո են, օգտվելով սանսկրիտ լեզվի բառակազմական ստույգ օրենքներից, վեդայի մեկնություններից և հնդիկ զանազան բարբառների համեմատությունից, նա ոչ միայն կարողացել է տալ զանազան ստուգաբանություններ, այլև գտել է իմաստաբանության հիմունքները։ Նա գտել է, որ բառի ձևը քմահաճույքի արդյունք չէ, ուստի և

լեզուն գիտական ուսումնասիրության առարկա կարող է դառնալ. նա ճանաչում է գոյականների և բայական արմատների կապը, և բնաձայն բառերին երկրորդական արժեք է տալիս և այլն։ Բայց այս բոլորով հանդերձ հնդիկներն էլ իրենց լեզվից այն կողմը չանցան և ամենևին չհետաքրքրվեցին ոչ իրանական լեզուներով, որոնք հնդկերենին այնքան մոտիկ նմանություն ունեին, ոչ թոխարերենով, որ իրենց սահմանի վրա խոսվող մի հնդեվրոպական լեզու էր (այժմ մեռած), և ոչ էլ իրենց դրացի և իրենց նվաճած բնիկ սեմարթների բազմաթիվ լեզուներով ու բարբառներով, որոնք այսօր կորել-գնացել են։

Այս կորուստները անդարմանելի են։

Լեզվաբանությունը ոմանք համարում են պատմական գիտություն, ուրիշները՝ բնական գիտությունների մի ճյուղը. ոմանք էլ համարում են հասարակական գիտություն։ Նրանք, որոնք հետևում են առաջին կարծիքին, հիմնվում են այն պատճառաբանության վրա, որ լեզուն մարդու ձեռակերտն է և ենթարկվում է այն ճակատագրին, որին ենթակա է և մարդը։ Նրանք, որ լեզվաբանությունը համարում են բնական գիտություն, հիմնվում են այն կետի վրա, որ լեզուն խոսողական գործարանների գործունեության արդյունքն է, հետևաբար՝ իբրև մարդակազմության և բնախոսության մի ճյուղ, պատկանում է բնական գիտություններին։ Վերջապես նրանք, որ լեզվաբանությունը համարում են հասարակական գիտություն, հիմնվում են այն հանգամանքի վրա, որ լեզուն, ինչպես հետո ավելի ընդարձակ տեսնելու ենք, մարդու հասարակական կյանքի արդյունքն է, առանց որի գոյություն էլ չպիտի ունենար։

Իրողությունն այն է, որ լեզվաբանությունը մի բազմակողմանի գիտություն է, որ սերտ հարաբերության մեջ է վերոհիշյալ բոլոր գիտությունների հետ։ Լեզվի ձայնախոսական մասը պատկանում է բնախոսության. դարերի ընթացքում կրած փոփոխությունները, օտար լեզուների ազդեցությունը և նրանցից վերցրած փոխառությունները կրում են պատմական բնույթ. իսկ իր առաջին ծագումն ու զարգացումը և այժմյան գործածության զանազան հանգամանքները հասարակական կյանքի արդյունքն են։ Հետևաբար՝ լեզվաբանությունը, թեև կապված այդ բոլորի հետ, չի նույնանում ոչ պատմագիտության, ոչ բնական գիտությունների, ոչ էլ հոգեբանական գիտության հետ,

նա մի ինքնուրույն գիտություն է հասարակական գիտությունների շարքում։

Իրրև այդպիսին նա ունի իր սեփական օրենքները, որոնք նման չեն ոչ մաթեմատիկայի օրենքներին, ոչ հոգեբանության օրենքներին, ոչ ֆիզիկայի օրենքներին, ոչ էլ քիմիայի կամ մի ուրիշ գիտության օրենքներին։ Այս օրենքները միայն լեզվաբանական են և լեզուների հին ու նոր վիճակների համեմատական ուսումնասիրությունից հանված լինելով՝ օգնում են գտնելու բոլոր լեզուների ընդհանուր օրենքները։

3. ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ՈՒՐԻՇ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ներկա գիտությունների մեջ չկա մեկը, որ բոլորովին անկախ ու անջատ լինի։ Գիտությունները առհասարակ իրար հետ սերտ հարաբերություն ունեն. օրինակ՝ պատմությունը աշխարհագրության հետ, ֆիզիկան՝ քիմիայի հետ, փիլիսոփայությունը՝ բոլորի հետ և այլն։

Ամեն մի գիտություն՝ ունենալով հանդերձ իրեն սեփական ասպարեզը, որի մեջ նա ազատ է իր մշակած մեթոդով վարվելու, պարտավոր է, սակայն, իր արդյունքները համաձայնեցնել և պատշաճ դուրս բերել մյուս բոլոր գիտությունների արդյունքներին։ Եթե որևիցե կետում նա հակառակ դուրս եկավ մի ուրիշ գիտության, մեկը կամ մյուսը սխալ է և պետք է վերաքննվի։ Ճշմարտությունը մեկ է։ Արդեն ընդունված, գիտականորեն հաստատված և իրրև ճշմարիտ ընդունված արդյունքներին հակասող մի այլ արդյունք անճիշտ է, չմոռանալով, սակայն, որ տվյալ ճշմարտությունն էլ հարաբերական է։

Որովհետև լեզվաբանության նյութն է լեզուն, իսկ լեզուն պարունակում է մարդկային մտքի բոլոր արտահայտությունները, ուստի և լեզվաբանից պահանջվում է բոլորի մասին ընդհանուր ծանոթություն. Օրինակ՝ երբ նա քննում է մի բույսի, մի քարի կամ մի աստղի անուն, պարտավոր է տեղյակ լինել բուսաբանության, հանքաբանության և աստղագիտության։ Բայց այս ծանոթությունները ընդհանուր են միայն, և այս կարգի գիտություններից խոր հմտություն չի պահանջվում։

Լեզվաբանությունը ավելի սերտ կապեր ունի բանասիրության, բնախոսության, բնագիտության, պատմության, աշ-

խարհագրության, հնագիտության, ազգագրության, հոգեբանության և այլ գիտությունների հետ։ Այս բոլորը գիտություններ են, որոնցից լեզվաբանությունը մեծապես օգտվում է։

Լեզուների հնագույն վիճակին ծանոթանում ենք արձանագրությունների, դրամների, պապիրուսների կամ ձեռագրերի միջոցով. դրանց ուսումնասիրությունը, հարազատը կեղծից զատելը, ձեռագրերի զանազան տարբերակներից ուղղագույն ձևը որոշելը բանասիրության գործն է։ Ուրեմն հին լեզուների ուսումնասիրության սկզբնական մասը անհրաժեշտորեն բանասիրական է։ Բանասիրությունը և լեզվաբանությունը երբեմն այնքան են խառնվում իրար հետ, որ իրար տեղ են բռնում։ Օրինակ՝ գտնելու համար հյ. ագի, ձետ, տատուն, դմակ հոմանիշների տարբերությունը, պետք է աչքի անցկացնենք մեր հին մատենագրության հայթայթած բոլոր օրինակները և համեմատենք թե իրար հետ, և թե մանավանդ ընագրերի հետ, եթե թարգմանություն են, և այս բոլորի համեմատությամբ կազմենք մեր եզրակացությունը։ Այս գործը միաժամանակ և՛ լեզվաբանական է, և՛ բանասիրական։

Փնտրել, թե Մորենացու պատմության մեջ կա՞ արաբերեն բառ և եթե չկա՝ ինչո՞ւ,— բանասիրական և լեզվաբանական է միաժամանակ։ Մի որևէ հեղինակի լեզուն համեմատել մի ուրիշի լեզվի հետ, որոշել և պատճառաբանել նրանց տարբերությունը,— բանասիրական և լեզվաբանական է միաժամանակ։ Երկու գիտությունների այս սերտ կապակցության պատճառով է, ահա, որ, ինչպես վերևում տեսանք, շատ անգամ անունով էլ բանասիրությունը և լեզվաբանությունը սխալ կերպով շփոթում են իրար հետ։

Լեզվաբանության առաջին մասը ձայնախոսությունն է, որ հիմնված է շնչի, ձայնական լարերի, կոկորդի, լեզվակի, բերանի, լեզվի, քիմքի, ատամների, շրթունքների և քթի գործունեության վրա։ Սրանց կազմության գործունեության եղանակի և այլնի ուսումնասիրությունը վերաբերում է մարդակազմությանը և բնախոսությանը։ Ձայների վերլուծումը, նրանց ծագման եղանակը և այլն պատկանում են ֆիզիկային, ուր կազմում են առանձին գլուխ (ձայն). Լսողական և շարժական պատկերների գործունեությունը, գաղափարների զուգորդության օրենքները և այլն պատկանում են հոգեբանությանը։ Լեզվի՝ իբրև մարդկային հաղորդակցության միջոցի, հասարակական

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

բնույթի քննությունը, լեզվի ծագման և զարգացման պայմանները պատկանում են հասարակության պատմությանը, որի մասին կխոսվի ստորև։

Հին լեզուները լավ բացատրելու և բառերի նշանակությունների զարգացումը հասկանալու համար, շատ անգամ պահանջվում է հին կյանքի գիտությունը, ինչ որ սովորեցնում են մեզ հնախոսությունը, պատմությունը և աղղագրությունը։ Լեզուների փոխադարձ հարաբերությունը, միմյանց վրա ունեցած ազդեցությունը, բառերի և գրական ձևերի փոխառությունը արդյունք են ժողովուրդների փոխադարձ հարաբերության, որ սովորեցնում է մեզ պատմությունը։ Լեզուների նույնիսկ պարզ թվարկումը կամ վիճակագրությունը պահանջում է աշխարհագրական գիտություն։ Առանց այս բոլորի գիտության՝ լեզվաբանությունը դառնում է մերթ անհամ և մերթ միայն զվարճալի բառախաղերի մի խառնուրդ՝ բոլորովին անարժան կրելու գիտության անունը։

Իր կողմից լեզվաբանությունը նպաստում է ուրիշ զանազան գիտությունների.— մանկավարժությունը, հատկապես լեզուների ուսուցումը, նրանով ձեռք է բերում դյուրաւսուցյց միջոցներ.— գրականությունը, հատկապես բառերի ձևի, կյանքի, նշանակության, ինչպես և ուղղագրության խնդիրները առանձնապես օգտվում են նրանից։— Բայց նրա գլխավոր ծառայությունը վերաբերում է պատմության ամենահին շրջանին։ Պատմությունը գրի գյուտից այն կողմը չի անցնում. նախապատմությունը նյութական կուլտուրայի մնացորդների և բրածոների միջոցով ուզում է պարզել պատմությունից ավելի այն կողմ գտնված շրջանը. այնուամենայնիվ կա մի տեղ, ուր պատմությունը և նախապատմությունը լռում են և ոչինչ չեն կարող մեզ պատմել։ Բայց կա մի բան, որ մարդկության այն հնագույն շրջաններից մինչև այժմ ճառում է. դա լեզուն է, որ սերընդից սերունդ անցնելով՝ եկել հասել է մեզ։ Լեզվաբանությունն է, որ վերականգնում է այդ հնագույն ժամանակների լեզուն և տեղեկություններ է տալիս մարդկության նախնական վիճակի, նրա քաղաքակրթության, ժողովուրդների ծագման, ցեղակցության և ծավալման կամ գաղթականության մասին։

[Նույնպես էլ կա մի գիտություն՝ հասարակության պատմությունը, առանց որի օգնության լեզվաբանությունը անկարող կլիներ գիտականորեն ուսումնասիրել իր առարկան։ Քանի

որ լեզուն գոյություն ունի միայն մարդկային հասարակության մեջ, որպես հաղորդակցման միջոց, և քանի որ լեզուն իր բառապաշարի մեջ անմիջականորեն արտահայտում է հասարակության կյանքում տեղի ունեցող յուրաքանչյուր փոփոխություն, ապա՝ լեզուն, նրա պատմությունը, նրա բառային կազմի պատմական փոփոխությունները կարելի է ճիշտ ուսումնասիրել և ճիշտ հասկանալ, նրա զարգացման օրենքները կարելի է ճիշտ կերպով ըմբռնել և լուսաբանել այն դեպքում միայն, եթե նա, լեզուն, ուսումնասիրվում է իրենով խոսող հանրության պատմության հետ կապված, այդ հանրության պատմական կյանքի տվյալների հիման վրա։]

Լեզուների թիվը շատ մեծ է, այնքան, որ նրանց բոլորի գիտությունն ու ուսումնասիրությունը մարդկային մի կյանքի ու ուղեղի համար աննհնարին է. ավելի հեշտ է ճանաչել աշխարհիս բոլոր բույսերն ու կենդանիները, քան լիակատար կերպով սովորել մի տասնյակ լեզու, որոնցից յուրաքանչյուրը 30 000-ից մինչև 100 000 բառ ունի։ Այս պատճառով լեզվաբանությունն էլ բաժանված է զանազան մասնագիտությունների, ինչպես՝ հնդեվրոպական լեզուների գիտություն, սեմական լեզուների գիտություն և այլն, կամ նույնիսկ ավելի մասնավորացնելով՝ սլավոնագիտություն, արևելյան լեզուների գիտություն, հնդկագիտություն, իրանագիտություն, հունագիտություն և այլն։ [Եթե բոլոր լեզուների ընդհանուր ուսումնասիրությունը կրում է ընդհանուր լեզվաբանություն անունը, ապա այս առանձին ընտանիքների, ճյուղերի կամ լեզուների ուսումնասիրությունը ընդհանուր անունով կոչվում է մասնավոր լեզվաբանություն (частная лингвистика)։]

Այսպիսի մասնագիտություններից մեկն է և հայագիտությունը, որին հատկապես նվիրված է ներկա աշխատությունը։

Սակայն այս մասնագիտություններից ոչ մեկը ինքը մենակ բավական չէ նույնիսկ իրեն վերաբերող հարցերը լուծելու համար։ Յուրաքանչյուր լեզվի առանձին քննությունը կարող է լինել միայն նկարագրական, այսինքն՝ դիտել և նկարագրել նրա վիճակը որոշ շրջանում, այնպես, ինչպես կա, առանց դատողության և առանց մտնելու պատճառների քննության մեջ։ Սա ունի միայն գործնական նպատակ, որը լեզու սովորելն է։ Ամեն մի մարդ իր աշակերտական շրջանում սովորում է իր մայրենի լեզուն՝ առօրյա գործածության համար։ Այս նպատակով են

ստեղծված ամեն մի ազգի մայրենի լեզվի համառոտ կամ ընդարձակ բազմաթիվ նկարագրական քերականությունները։ Երբ աշակերտը ավելի է առաջանում ուսման մեջ, կարևոր է համարվում, որ նա սովորի նաև մի կամ երկու լեզու ևս։ Այստեղ էլ պետք է նրան այդ լեզուների նկարագրական քերականությունը. բոլորն էլ գործնական կամ դպրոցական քերականություն են։ Պետականությունից զուրկ փոքր ազգերին պատկանող մարդիկ սովորում են ընդհանրապես երկու կամ երեք լեզու, այն է՝ մայրենի լեզու, պետական լեզու և գիտության ու կուլտուրայի լեզու։ Պետականություն ու բարձր կուլտուրա ունեցող ազգերի համար այս երեքը միանում են, և նրանք բավարարվում են հաճախ միայն մի լեզվով։

Այսպես՝ ռուսը կարող է միայն ռուսերենով բավականանալ, որովհետև սա իր մայրենի լեզուն է, միաժամանակ կուլտուրական լեզու է և մարդ նրա միջոցով կարող է բոլոր տեսակի գիտություններին ծանոթանալ, միաժամանակ մոտիկից ծանոթանալ նաև շատ ժողովուրդների գրականությանը, որովհետև ռուսերենը ունի հոյակապ թարգմանական գրականություն։ Փոքր ժողովուրդները զուրկ են այս առավելություններից, որովհետև կամ սեփական պետական կյանքից, կամ, երբեմն, նաև մայրենի գրականությունից զուրկ են, ուր մնաց թե գիտական գրականությունից։ Այսպիսի ժողովուրդները ստիպված են մի քանի լեզու սովորել։

Հայերս ունենք մայրենի լեզու (հին և նոր), որ և այժմ պետական լեզու է. մեր մայրենի գրականությունն էլ բավական ճոխ է, բայց գիտության զանազան ճյուղերի համար դեռևս բավական չէ։ Ուստի անհրաժեշտ է մեզ սովորել ռուսերեն, որ մեզ համար միաժամանակ թե կուլտուրական, և թե գիտական լեզու է։ Բայց այս լեզուների (հայերեն թե ռուսերեն) ուսուցումը լեզվաբանական նպատակ չի հետապնդում. նրանց քերականությունները, ինչպես ասացինք, նկարագրական կամ գործնական են միայն, և լեզվի կազմության օրենքների և պատճառների քննության մեջ չեն մտնում։

Պատճառների քննությունը որոշ չափով կատարում է պատմական քերականությունը, որ մի լեզվի հին ու նոր շրջանները համեմատելով իրար հետ՝ ցույց է տալիս երևույթների փոփոխության ընթացքը, որ միևնույն ժամանակ նոր երևույթների բացատրությունն է։ Սակայն երևույթների ավելի խորը և ավելի

հիմնական բացատրությունը տալիս է մեզ ճամեմատական քերականությունը: Նա է, որ միևնույն ընտանիքին պատկանող զանազան լեզուներ համեմատելով իրար հետ՝ հանում է նրանց ընդհանուր օրենքները, և, ավելի հինը վերականգնելով՝ աշխատում է գտնել նոր երևույթների պատճառը կամ բացատրությունը: Սրանից ավելի վերև կա վերջապես ընդհանուր լեզվաբանությունը, որ ընդհանրապես մարդկային լեզուները քննելով և համեմատելով իրար հետ՝ երևան է հանում մարդկային լեզվի, մարդկային խոսողության ընդհանուր օրենքները, որոնցով լեզուն ծնվում, ապրում ու փոփոխվում կամ թերևս մեռնում է:

Հները կարծում էին, թե լեզուն մի տրամաբանական գործողություն է, և աշխատում էին յուրաքանչյուր լեզվի ձևերը առանձին-առանձին և տրամաբանական դատողությամբ բացատրել: Այս կարծիքը սխալ է: Ո՛չ մի միջոց չկա տրամաբանորեն իմանալու, թե ինչու, օրինակ, էական բայը խոնարհում ենք յէմ, յէս, է, յէնք, էք, յէն. այսինքն՝ մի դեպքում յէ, մյուս դեպքում՝ է. ինչ են այդ վերջավորությունները, որ դրվում են արմատի վրա՝ թվերն ու դեմքերը ցույց տալու համար: Լեզուն նախորդ շրջանի պատմությամբ միայն կարող է լուսաբանվել: Պատմական քերականությունն է, ուրեմն, որ պիտի ցույց տա, թե դրանք գալիս են նախկին ե, է ձևերից, թե յէնք ծագում է եմք–ից, որի մեջ մ նույնն է՝ ինչ որ եմ ձևի մեջ, որ հետո ձայնաբանական այսինչ պատճառով վերածվել է ե–ի և այլն: Ավելի վեր՝ համեմատական քերականությունն է, որ պիտի բացատրի մեզ, թե ինչու տեղ-տեղ կան վերջավորություններ, սակայն երրորդ դեմքը (է) չունի վերջավորություն և ինչու նա է ձևն ունի, մինչդեռ մյուսները ե են և այլն:

Մենք մի փոքր օրինակ միայն վերցրինք հայերենից. բայց ինչպես հայերենը, նույնպես և մյուս բոլոր լեզուները լիքն են զարմանալի «անկանոնություններով», որոնց բացատրությունը իրենք՝ այդ լեզուները չեն կարող տալ: Ճիշտ այսպես է նաև մի աշխարհագրական քարտեզ, ուր զանազան երկրներ եզերված են անկանոն սահմանագծերով: Ո՞վ պիտի տա այս անկանոն սահմանագծերի ծագումն ու պատճառը: Ինչու ամեն մի երկիր կանոնավոր քառակուսիներ չի կազմում: Քաղաքական պատմությունն է, որ պիտի պատմի մեզ յուրաքանչյուր ազգի պատմությունը և այդ սահմանների մասին լուսաբանություններ պիտի տա: Ինչ որ պատմությունն է ժողովուրդների և ազգերի

համար, նույնն էլ պատմական քերականությունն է լեզուների համար։

Բայց պատմությունն էլ մի սահման ունի. երբ գրական աղբյուրները դադարում են, այլևս պատմաբանը ուրիշ միջոց չունի ավելի խոր գնալու, բացի նյութական կուլտուրայի տվյալներից։ Այսպես է նաև պատմական քերականությունը, որ կանգ է առնում լեզվի հնագույն աղբյուրների վրա։ Եվ դրանից այն կողմ համեմատական քերականությունն է, որ պիտի օգնության հասնի նրան, ավելի հին դեպքերը բացատրելու համար։

Հայ լեզվաբանությունն էլ, ուրեմն, պիտի լինի պատմական և համեմատական. յուրաքանչյուր դեպքի բացատրություն պիտի փնտրենք ոչ միայն ներկայի մեջ, այլև անցյալի, և ավելի խոր անցյալի մեջ, որ ուրիշ լեզուների հարաբերությամբ պիտի երևան գա։

Ի նկատի ունենալով պատմական այն բազմակողմ կյանքը, որ ունեցել է հայ լեզուն, այն բազմաթիվ ու բազմազան ազդեցությունները, որոնց ենթարկվել է նա իր նախապատմական ու պատմական շրջաններում, պետք է ասել, որ հայ լեզվաբանությունը դժվարագույն ճյուղերից մեկն է և պահանջում է ավելի մեծ աշխատանք և շրջահայեցություն, քան, օրինակ, որևէ եվրոպական լեզվի ուսումնասիրությունը։

4. ՀԱՅԵՐԵՆԻ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ

Աշխարհիս 2000 միլիոն ազգաբնակչության և 1500[1] լեզուների մեջ հայ ազգն ու հայերենը մի շատ փոքրիկ միավոր են կազմում։ Նախքան համաշխարհային առաջին պատերազմը հայերի թիվը 4 միլիոն էր, որից մի միլիոնը թյուրքերը չարաչար կոտորեցին Արևմտյան Հայաստանում, ուստի այժմ մեր թիվը վերածվեց շուրջ 3 միլիոնի, որից 2 միլիոնից ավելին գտնվում է Սովետական Միության մեջ։ Ըստ այսմ հայերեն լեզուն էլ, թեև չի կարելի քանակով համեմատել մեծածավալ լեզուների հետ (ռուսերեն, չինարեն և այլն), բայց անհամեմատ ավելի մեծ է մի խումբ կովկասյան, աֆրիկյան, ամերիկյան (կարմրամորթների) լեզուներից, որոնցից ոմանք մի քանի հազար կամ մի քանի հարյուր խոսող ունեն և կամ նույնիսկ խոս-

[1] Այլ հաշվումներով՝ երկու հազար հինգ հարյուր լեզու.— Խմբ.։

վում են միայն մի գյուղի մեջ (կովկասյան Արճի լեզուն, որ խոսում են համանուն գյուղում 800 հոգի։ Ուդե, կամ ինչպես իրենք են իրենց անվանում Ուդեխե, ժողովուրդ, թվով 1347 մարդ (1926 թ.) բնակվում է Սովետական հեռավոր Արևելքում՝ Սամարգե, Խորց, Խունգարի գետերի շրջակայքում, հիմնական զբաղմունքը, որսորդություն, ձկնորսություն և տեղ-տեղ գյուղատնտեսություն։ Լեզուն պատկանում է տունգուս-մանջուրական խմբին։ Սեփական գիր և այբուբեն չեն ունեցել մինչև Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիան)։

Այնուամենայնիվ հայերենի ուսումնասիրությունը շատ մեծ ծառայություններ է մատուցում ընդհանուր լեզվաբանական գիտությանը։

1. Նախ՝ հայերենը խոսվել ու կազմավորվել է մի այնպիսի միջավայրում, որտեղ ապրել են զանազան մեծ ու փոքր ցեղեր։ Ըստ իմ Հայոց լեզվի պատմության (Ա. մաս, էջ 203), քանի ցեղի ու ցեղային միությունների միացումն է կազմում հայ ժողովուրդը՝ նրանցից ամենագլխավորների՝ հայ-արմենների գերիշխանությամբ։ Մյուսները 19 զանազան ցեղեր կամ տոհմեր են՝ զանազան ծագումով. այսպես կովկասյաններից՝ տայեցիք, ազվանք և այլն, սեմականներից՝ ասորիներ կամ արամացեցիք, հնդեվրոպականներից՝ մարեր, մյուսները՝ անծանոթ ծագումով։ Խալդերի հարյուրավոր արձանագրությունները դեռ մնում են մեր երկրում և իրըև խոսուն վկա՝ պատմում անցյալի հիշատակները։ Այսպիսի մի բազմացեղ պետության ձևավորումը և մի լեզվի ընդհանրացումը՝ լեզվաբանական գիտության և հասարակության պատմության շատ հետաքրքիր հարցերից մեկն է, որ սպասում է դեռ իր լավագույն լուծմանը։

2. Երկրորդ՝ հայերենը լինելով հնդեվրոպական մի լեզու, թեև իր հնության չի կարող համեմատվել ոչ հաթերենի, ոչ հնդկերենի, ոչ հունարենի, և ոչ, նույնիսկ, լատիներենի հետ, բայց, այնուամենայնիվ, ունի մի գրականություն, որ 15 ու կես դար տևել է անընդհատ և այսօր էլ շարունակում է իր գոյությունը անասան՝ մեր ազգային լեզվով և 40-ի չափ բարբառներով։ Այսպիսով՝ նա ներկայացնում է միևնույն լեզվի հին, միջին, նոր ու նորագույն շրջանները։ Նա իր հնագույն շրջանում պահել է ձայնդարձի օրենքը և հանդող բառերի հոլովման մեջ (ճաբսե, ճաբսիե, ճաբսամբ, ճաբսունք) ոչ թե պատահական ճեացորդներով, այլ կանոնավորապես և ընդհանուր ձևով, որով նա

դառնում է մի հին և արժանահավատ վկա ձայնդարձի դոյութեան՝ հնդեվրոպական նախալեզվի հոլովման մեջ։— Երկու անդամ կրկնով ձայնաշրջութեան օրենքը (նախ ե դարից առաջ և երկրորդ՝ միջին հայերենի շրջանում) ներկայացնում է այդ օրենքի ծագման պայմանները, որոնց ուսումնասիրութեամբ լուծվում և հաստատվում են նաև գերմանական խմբի կրկին ձայնաշրջութեան օրենքները։— Իր հին բառագանձի բնիկ բառերի մեջ գրաբարը ունի 113 բառ, որ ծագում է ուղղակի նախալեզվից և բացի հայերենից պահված է նաև հնդեվրոպական քույր լեզուներից որևէ մեկի մեջ միայն. ուրիշ խոսքով՝ 113 հնդեվրոպական բառ վկայված են միայն երկու լեզվով, որոնցից մեկը հայերենն է։ Այս քիվը փոքր չէ։ Եվ եթե այդ այդպես է, ինչ արգելք կա ասելու, թե կան նաև ուրիշ շատ բառեր հայերենում, որոնք հնդեվրոպական նախալեզվի միակ ժառանգներն են և որոնք բացի հայերենից, ուրիշ ոչ մի լեզվում էլ պահված չեն[1]։ Ապացուցյով խոսելու համար՝ ես մեջ եմ բերում զօսի «մեջկապ» բառը, որ բարդ բառ է և որի երկրորդ եղրն է ակ «կապ» < հնխ. dē. առաջին եղրը բնականաբար պիտի լինի զաւ «մեջք», որ, սակայն, ո՛չ բնիկ հայերեն է, և ո՛չ էլ՝ որևէ լեզվից փոխառյալ։ Փաստ է, որ նա լինի նախալեզվից մնացած մի բացառիկ հնութիւն, որ նուիրիակ հայերենի մեջ անհետացել է, ինչպես անհետացել է ակ արմատի էլ անկախ գործածութիւնը։ Զօսի բառը այս դեպքում նման է ճովիվ բառին, որ հնխ. ovi-pā «ոչխարապահ» բարդութեան ժառանգն է, որ ոչ մի լեզվի մեջ չի պահված, և որի կազմիչ մասերը հայերենի մեջ էլ չկան, իսկ օտար լեզուներում կան առանձին, անկախ ձևերով։

3 Երրորդ՝ Հայաստանը և հայերը շրջապատված են եղել մեծ ու փոքր բազմաթիվ ժողովուրդներով։ Չհաշվելով մեր մշտական հարևան վրացիներին, ադրբեջանցիներին և կովկասյան մյուս ժողովուրդներին, հայերը հնագույն ժամանակներից սկսած կապ են ունեցել ասորեստանցիների, բաբելացիների, մարերի, պարսիկների, հռոմայեցիների, Փոքր Ասիայի զանազան ժողովուրդների (հաթեր, պոնտացիք, կապադովկիացիք, փռյուգիացիք, կիլիկեցիք և այլն), հույների, ավելի ուշ՝ արաբների, թաթարների, մոնղոլների, թյուրքերի, այժմ էլ՝ ռուսների և ՍՍՌՄ եղբայրական մյուս ժողովուրդների հետ։ Երբեմն իրրև նվաճող, հաճախ իրրև նվաճ-

[1] Տես «Հայոց լեզվի պատմութիւն», 1-ին մաս, էջ 81—82։

ված, կամ, վերջապես, բարեկամ ու դաշնակից, բայց միշտ իբրև դրացի, մեր ժողովուրդը շփման մեջ է եղել նրանց հետ։ Այս շփումից առաջացել են դանադան փոխառություններ ուրիշ լեզուներից հայերենի, ինչպես և հայերենից այլ լեզուների մեջ։ Այս բառերի ուսումնասիրությունը և պարզաբանումը մեծ լույս է սփռում հն միայն հայ բառարանի աղբյուրները ճշտելու և հայ քաղաքակրթության պատմության լուսաբանության, այլև փոխառու ազգերի բառական մթերքի ուսումնասիրության նրանց ձայնական դրության որոշման և հաճախ կորած ու անհետացած բառերը երևան հանելու գործի վրա։ Գահլավերեն բառերից շատերի ընթերցումը հայերեն փոխառությունների միջոցով է ստուգվում։

Չորրորդ՝ միջին դարերում հայերը նվաճվեցին թյուրքերի կողմից և 900 տարուց ավելի հայերի մի մասը ապրում էր նրանց գերիշխանության տակ և մինչև օրս էլ Հայաստանի հողերի մեծ մասը դեռ գտնվում է նրանց ձեռքում։ Բուն Հայաստանի և Փոքր Հայքի հայությունը դիմացավ թյուրքական ճնշման և հայերենը մինչև վերջն էլ պահպանեց։ Բայց Փոքր Ասիայի հայության, ինչպես նաև հուն ժողովրդի մեծագույն մասը կորցրեց իր մայրենի լեզուն և թրքախոս դարձավ։ Հայերը պահեցին, սակայն, իրենց մայրենի լեզվից մինչև 250 բառ, որ դեռ մինչև այժմ գործածում են։ Այս բառերը կազմում են դրանց լեզվի ենթաշերտը (substrat) և հայերենի միջոցով անցել են նաև թյուրքերենին։

Գիտության մեջ վերջին ժամանակներս շատ կարևորություն ստացավ ենթաշերտի հարցը. ամեն մի լեզվի մեջ սկսեցին ուսումնասիրել ենթաշերտի ճնացորդը։ Թրքախոս հայերի օրինակը, որ կենդանի է դեռ և շատ թարմ, գիտնականների համար մի ընտիր միջոց է հարցի ուսումնասիրության համար և կարող է լուսաբանել անցած-գնացած լեզուների ենթաշերտի հանգամանքները։

Հինգերորդ՝ իրենց անկախությունը կորցնելուց հետո, հայերը, չդիմանալով բարբարոս թյուրքերի տված նեղության, գաղթեցին հեռավոր երկրներ։ Չհաշվելով Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի և այլ հեռավոր գաղութները, որոնք շատ նոր կազմություն ունեն, հայերը հին գաղութներ են կազմել Հունգարիայից մինչև Հնդկաստան և այդ գաղութներում պահել են հայերենի մի որոշ բարբառ՝ ներքին և արտաքին հայ բարբառ-

ները միասին շուրջ 40 են։ Հայ բարբառագիտությունը հայ լեզվաբանության այն ճյուղն է, որ պիտի ուսումնասիրի, մի կողմից՝ այս բարբառների ներքին կազմությունը (ձայնաբանություն և ձևաբանություն), մյուս կողմից՝ նրանց ծագումը։ Այսպիսով՝ նա պիտի տա թարմ ու կենդանի նյութ՝ ընդհանրապես լեզուների ծագման ու զարգացման պատմության և նրանց օրենքների մասին։

Վեցերորդ՝ հայերենի հին և միջին շրջանի լեզուն պատմության գիրկն են մտել. մնացել են միայն, ինչպես ասացինք, շուրջ 40 կենդանի և խոսակցական բարբառ։ Բայց հայերը ԺԹ դարից սկսեցին գործածել մասամբ հին և միջին հայերենի ու ավելի մեծ մասամբ նոր հայերեն բարբառների վրա հիմնված նոր գրական լեզու։ Այս լեզուն ունեցավ երկու ճյուղ՝ մեկը արևելահայ գրական լեզուն, որ և դարձավ հայոց ազգային, իսկ այժմ նաև պետական լեզու, մյուսը՝ արևմտյան գրական լեզուն։ Որևէ հին, մեռած լեզվի մասնակի կամ ամբողջական վերակենդանացումը մարդկային աննկարելի կամ գոնե շատ դժվարին գործերից մեկն է համարվում։ Հրեաները կատարեցին առաջին բացառությունը աշխարհում, որոնք Պաղեստինում ստեղծելով հրեական նոր պետություն՝ վերականգնեցին իրենց հին, մեռած երբեմնական լեզուն։

Թեև հայերեն նոր, աշխարհաբար գրական լեզվի գործածությունը գրաբարի վերակենդանացումը չէ, և այդ չի կարելի համեմատել հրեական լեզվի վերակենդանացման հետ, այնուամենայնիվ նա որևէ զուտ խոսակցական ժողովրդական բարբառ էլ չէ։ Նրա բառամթերքի մեծ մասը, ինչպես և բառերի ուղղագրությունը գրեթե ամբողջապես գրաբարից է առնված. շարահյուսությունն է միայն, որ ամբողջապես նոր բարբառներին է պատկանում։ Իսկ ձևաբանությունը թեև ունի գրաբար տարրեր, բայց մեծագույն մասամբ նոր լեզվի վրա է հիմնված և աշխատում է հետզհետե ազատվել գրաբարի քերականական տարրերից։

Իսկ ինչ որ հետաքրքրական է այստեղ ընդհանուր լեզվաբանության համար, այդ այն է, թե ինչպես հայերը դեռևս մինչ սովետական կարգերի հաստատվելը, առանց քաղաքական անկախ միություն կազմելու, կարողացան նոր գրական լեզուն տարածել ընդհանուր հայության մեջ, և հեռու չէ այն օրը, երբ բոլոր բարբառները պիտի վերանան և գրական հայերենը պիտի դառնա ընդհանուր հայության միակ խոսակցական լեզուն։

ԳԼՈՒԽ Բ

Ի՞ՆՉ Է ԼԵԶՈՒՆ

Մարդը, որ հասարակական կյանքով է ապրում, իր խորհուրդներն ու իր զգացմունքները իր ընկերոջ հայտնելու և փոխադարձը նրանից իմանալու պետք ունի։ Այն միջոցը, որ ծառայում է այս հաղորդակցությունը կատարելուն, կոչվում է լեզու։

Այս սահմանումից հետևում է արդյոք, նախ՝ որ ընդհանուր առմամբ լեզու ասելով պետք չէ հասկանալ միայն ձայնական լեզուն, այլ՝ ամեն ինչ, որ իրրև միջոց է ծառայում հասարակական հաղորդակցության։ Երկրորդ՝ հետևում է, արդյոք, որ լեզուն հատուկ չէ միայն մարդուն, ինչպես առհասարակ ընդունում ենք, այլև ամեն մի կենդանու, որ ունի «հասարակական» կյանք։

Քննենք այս երկու կետերն առանձին։

Հասարակական հաղորդակցության իրրև միջոց կարող են ծառայել կենդանի էակի բոլոր գործարանները. — մեկի աչքի առաջ զանազան շարժումներ անելով կարելի է զանազան բաներ հասկացնել («տեսողական լեզու»). — կուրծքի ձեռքը կամ մարմնի մի ուրիշ մասը զանազան ձևերով շփելով՝ կարելի է այլևայլ բաներ հասկացնել («շոշափողական լեզու»). — կրծքին խրած այս կամ այն ծաղիկը, մեկին նվիրված մի ծաղկեփունջ, գրպանից դուրս թողնված կարմիր կամ կանաչ մի թաշկինակ, այսինչ կամ այնինչ անուշահոտություն, աչքով մի ակնարկ կամ դեմքի որևէ արտահայտություն, — այս բոլորը զանազան տեսակի «լեզուներ» են։ Երբ մի հանդիպումի կամ ծանոթության ժամանակ սեղմում ենք մի բարեկամի ձեռքը չոր կամ աշխուժով, կարճ կամ երկարատև, սառնությամբ կամ դուրգուրալի, մի ձեռքով կամ երկու ձեռքերով միասին, այս բոլորը առանց ձայնի, բայց արտահայտիչ «լեզուներ» են։ Դրանցից ոմանք բնական և ինքնին հասկանալի են։

Հին հեթանոսության ժամանակ, երբ քրիստոնեությունը նոր էր սկսվել և դեռ արգելված կրոն էր, անծանոթ քրիստոնյաները իրար ճանաչելու համար ցույց էին տալիս կամ նկարում էին մի ձուկ։ Դա նշանակում էր «ես քրիստոնյա եմ», մի պայմանական նշան, որի ծագումը հետևյալն է. հին հունարեն լեզվով ἰχθύς նշանակում է ձուկ, իսկ այդ բառի տառերով սկսվում են. Ἰησοῦς, Χριστός, Θεοῦ, Υἱός, Σωτήρ, որ նշանակում են հունարեն՝ «Հիսուս, Քրիստոս, աստուծո որդի, փրկիչ»։ Այսպիսի նշանները բազմաթիվ ու բազմատեսակ են։ Դրանց տարբեր տեսակներին ու նրանց գնահատությանը, սակայն, ավելի մանրամասնորեն անդրադառնալու ենք ստորև։ [Այժմ հարցն այն է միայն, թե այդ բոլոր միջոցները, որոնց օգնությամբ, այնուամենայնիվ, հաղորդակցում ենք, լեզու են, թե ոչ։ Բնականաբար՝ ոչ։ Դրանք բոլորն էլ, նույնիսկ դրանցից ամենամշակվածները ու կատարելագործվածները, պայմանական նշաններ են և ըմբռնելի են այն չափով, որչափով հիմնված են հնչյունական լեզվի վրա, բացատրվում են նրանով և ծառայում են համապատասխան բառեր կամ նախադասություններ հարուցելու մեր գիտակցության մեջ ըստ որոշակի պայմանականության։]

Եթե լեզուն հասարակական կյանքի պահանջն է, ուրեմն նա հատուկ կարող է լինել այն էակներին միայն, որոնք հասարակական կյանքով են ապրում։ Քարերը, ծառերը, քամին, ջուրը, մետաղները հասարակական կյանք չունեն։ Իրոք, մենք տեսնում ու լսում ենք միշտ նրանց շարժուն ու ձայնը, օրինակ՝ սարի գլխից ժայռը գլորվելով անտգին գղրդոցով տապալվում է ձորը կամ անտգին ճողփյունով ընկնում է ծովը և գնում-խորտակվում մինչև հատակը։—Ծառերի տերևները երբեմն մեղմ ու անուշ, երբեմն էլ արագ և ուժգին սոսափյուն կամ խշխշոց են հանում, այնպես որ հին հեթանոս հայերը Սոսյաց անտառներում նրանց սոսափյունից գանազան բաներ էին գուշակում։ Քամին սլվլում է, կամ փոթորիկը որոտում, առուն կարկաչելով տահում է, գետը խոխոջելով սրընթաց հոսում։—Զանգակը զոդանջում է և հեռագրաթելերը քամու ցնցուղներից հաճախ գեղեցիկ երգեր են հորինում։ Բայց այս բոլոր տեսակի ձայներն ու շարժուները ոչ կամավոր են, ոչ գիտակցական, և ոչ էլ նպատակավոր, որովհետև այդ անշունչ էակները հասարակական կյանք չունեն և հետևաբար չեն կարող լեզու ունենալ։ Բայց այդպես չեն կենդանիները։ Անասունների մեջ կան այնպիսիները, որոնք

ապրում են «հասարակականն» կյանքով, ուստի և թվում է, թե պետք է ունենան հասարակական կյանքի արտահայտության նաև այս ձևը, որ է լեզուն։ Արդարև, զարմանալի է մտածել, որ, օրինակ, մրջյունները, որոնք այնպես կանոնավոր «հանրապետություն» ունեն, գիտեն վարել կանոնավոր «պատերազմ», ունեն «հիվանդանոց», «վիրավորներ փոխադրող անձնախումբ» և նման «հաստատություններ», այս բոլոր «հաստատությունները» վարելու համար չունենան նաև իրար հետ հաղորդակցելու որևէ միջոց։ Նույնպես և մեղուները, որոնք թագուհի, զինվորական ու բանվորական «դասակարգ» ունեն, զարմանալի է, որ չունենան հաղորդակցելու որևէ միջոց։ Միջոցը կարող է լինել ամբողջապես նշանացի, ինչպես գլխի եղջերիկների շարժումով և այլն, բայց կարող է լինել նաև ձայնական։ Բայց այդ կենդանիների հասակի համեմատությամբ իրենց ձայնն էլ այնքան ահար պետք է լինի, որ մեղ համար անըմբռնելի է։ Դեռ չունենք մի այնպիսի մեքենա, որ կարենար հնչյալ նուրբ ձայները արձանագրել։

Գերմանացի կենսաբան Կարլ ֆոն Ֆրիշը՝ կատարելով զանազան փորձեր մեղուների «լեզվի» վրա՝ գտնում է, որ այդ «լեզուն» ոչ լսողական (ձայնական) է և ոչ տեսողական (այսինքն՝ շարժուձևերով), այլ՝ շոշափողական։ Շաքարաջրով հրապուրելով մի մեղու, տեսնում է, որ մեղուն ախորժելի ուտելիքը լավ վայելելուց հետո, վազում է դեպի փեթակը՝ ընկերներին լուր տալու և նրանց էլ դուրս կանչելու։ Փեթակը մութ է և մեղուները գիշերը չեն տեսնում. միևնույն ժամանակ այնտեղ տիրում է մյուս մեղուների խառնակ բզզյունը. հետևաբար մեղուն չէր կարող շարժուձևերով կամ ձայնով բացատրել իր միտքը։ Ուրեմն ինչ է անում՝ իր դյուտը ընկերներին հաղորդելու համար։ Փեթակ մտնելուց հետո, լրատար մեղուն իր վայելած նյութից բաշխում է ընկերներին, որպեսզի նրանք էլ լցնեն բջիջները մեջ. հետո սկսում է «մի շատ տարօրինակ ու եղական պար, ձևացնելով շարունակ շրջաններ և պտույտներ». մեղուները ուշադիր կանգնում են և իրենց գլուխը պատգամավոր մեղվին դարձնելով՝ աշխատում են դիպչել նրան՝ իրենց բողկուկներով. եթե դիպան, խելույն դուրս են թռչում դեպի որսը։ Սրանից հետևում է, թե մեղվի պարը նշանակում է «վար կա, ուտելու բան կա»։ Մեղուները դիպչելով նրան՝ հասկանում են նրա միտքը։ Ուրիշ փորձեր ցույց են տալիս, որ մեղուները իրենց բողկուկ-

ներէ մէջ հավաքելով պարզ մեղվի բերած նյութի հոտը՝ այդ հոտի առաջնորդությամբ գնում են այնտեղ, որտեղից եկել էր մեղուն։

Գերմանացի ուսումնասիրողը ավելի տեղեկություններ չի տալիս մեղուների այլ «բառերի» մասին։

Մի ուրիշ գիտնական՝ Մորիս Մետերլինկ (Maurice Maeterlinck), որ մեղուների կյանքի ուսումնասիրությանը մի ամբողջ հատոր է նվիրել (La Vie des Abeilles, Paris, 1924), նույնպես խոսում է մեղուների «լեզվի» մասին։ Նա քանիցս անգամ առիթ է ունենում հիշելու այն բազմատեսակ գործառնությունները, որոնք կատարում են մեղուները իրենց հանրապետության մեջ, և որոնք առանց մտավոր հաղորդակցության անկարելի պիտի լինեին։ Սրանցից աչքի է ընկնում հատկապես մեղուների պարսպի բաժանման և նոր բնակարանի ընտրության գործը։ Պարսպը թառած է մի ծառի ճյուղի վրա. մի խումբ գործավոր մեղուներ թռան գնացին խուզարկելու շրջակայքը և բնակության համար վայր ընտրելու։ «Մեկ ու մեկ վերադառնում են նրանք և հաշիվ են տալիս իրենց պաշտոնի մասին. և որովհետև անհնար է մեզ թափանցել մեղուների մտածմունքի մեջ, պետք է որ մարդկորեն թարգմանենք այն տեսարանը, որին ներկա ենք։ Հավանական է, ուրեմն, որ ուշադրությամբ լսում են նրանց տեղեկադիրը։ Ըստ երևույթին, մեկը գովարանում է մի ծառի խոռոչը, մյուսը գովում է մի հին պատի ճեղքի առավելությունները, մի քարայրի կամ լքված մի որջի գոգը։ Հաճախ պատահում է, որ ժողովը վարանում և մինչև մյուս առավոտ խորհրդակցում է։ Վերջապես ընտրությունը կայանում է, և համաձայնություն է գոյանում։ Տվյալ րոպեում ամբողջ ոհկույրը հուզվում է, վխտում, քանդվում, ցրվում և... ուղիղ գծով դիմում դեպի որոշ և միշտ շատ հեռավոր մի նպատակ։ Դժվար թե մարդը կարողանա հետևել նրանց» (էջ 100)։

«Լեզվի» մասին հատկապես խոսում է հեղինակը (էջ 120) հետևյալ ձևով.

«Մնում է քննել... թե ինչ ձևով են նրանք հաղորդակցում իրար հետ։ Ակներև է, որ նրանք իրար հասկանում են. այսքան ստվար մի հանրապետություն, որի աշխատանքները այնքան բազմազան և այնպես հիանալի կերպով ներդաշնակ են, չի կարող գոյություն ունենալ լռության և այնքան հաղարավոր էակների հոգեկան առանձնության մեջ։ Ուրեմն պետք է, որ նրանք

ունենան իրենց մտքերն ու զգացմունքները արտահայտելու կարողությունը, կամ ձայնական մի բառացանկի միջոցով, և կամ, ավելի հավանաբար, մի տեսակ շոշափողական լեզվի կամ մագնիսական ինտուիցիայի օգնությամբ, որ համապատասխանում է թերևս այնպիսի զգայությունների կամ նյութի հատկություններին, որոնք մեզ ամբողջապես անծանոթ են։ Այդ ինտուիցիայի կայանը կարող է գտնվել այն խորշրդավոր անուհների մեջ, որոնք շոշափում և ըմբռնում են խավարը և որոնք Զեշիրի հաշվով գործավոր մեղուների մոտ 12 000 շոշափողական մազերից են կազմված և 5000 հոտառական խոռոչներից։ Ապացուցելու համար, թե մեղուները միայն իրենց սովորական աշխատանքների վրա չէ, որ հասկացողություն են գալիս իրար հետ, այլև արտասովոր մի բան էլ հավասարապես անուն և տեղ ունի իրենց լեզվի մեջ, պետք է հիշել այն եղանակը՝ որով մի նոր լուր, հաջող կամ ձախորդ, սովորական կամ գերբնական, տարածվում է վեթակում։ Այսպես՝ մայր մեղվի կորուստը կամ վերադարձը, մի խորխոխի անկում, թշնամու մուտքը, օտար թագուհու ներս մտնելը, կողոպտիչ մի խմբի մոտենալը, մի «գանձի» գյուտը և այլն։ Ցուրաքանչյուր այսպիսի դեպքում մեղուների ընթացքը և բզզոցը այնքան տարբեր են լինում և այնքան բնորոշ, որ փորձառու մեղվապահը դյուրավ կարող է գուշակել, թե ինչ է անցնում-դառնում հուզյալ ամբոխի մեջ այդ խավարումն։

Ցույց տալու համար, թե մեղուները, իրոք, զանազան տեղեկություններ են հաղորդում միմյանց, հեղինակը պատմում է իր կատարած հետևյալ փորձը.—Մեղրով հրապուրելով մի մեղվի, տեսել է, որ շատ անգամ այդ մեղուն գնում է և իր հետ բերում ուրիշ ընկերներին։ — «Պատահեցի մի օր իտալական փոքրիկ արտասովոր մի մեղվի, որի լանջը կապույտ մի բծով նշանակել էի։ Հենց իր երկրորդ ճամբորդությանը մեղուն հասավ երկու ուրիշ մեղուների հետ։ Առանց իրեն դիպչելու, ես այն երկուսին բանտարկեցի։ Նա գնաց և ետ եկավ երեք ընկերների հետ, որոնց նույնպես բանտարկեցի, և այսպես իրար ետևից՝ մինչև երեկո։ Երեկոյան հաշվեցի բանտարկյալներիս և գտա, որ մեղուն լուրը հաղորդել էր 18 մեղուներին» (էջ 125)։

Բայց արդյոք կարելի՞ չէ մտածել, որ այն ուղեկից մեղուները ոչ թե լուր առնելով է, որ ուղեկցել են նրան, այլ տեսնելով նրա բերած մեղրը՝ պարզապես հետաքրքրվել և հետևել են նրան՝ մեղրի պաշարի տեղը իմանալու համար։ Այսպիսով, այս

վերջին փորձը մեղուների «լեզվի» մասին, կորցնում է իր արժեքը։

Բայց եթե այդքան զարգացած հասարակական կյանք ունեցող մրջյունների և մեղուների «լեզվի» մասին դրական ոչինչ չենք կարող ասել, գոնե նվազ հասարակական կյանք ունեցող, բայց ավելի մեծ կենդանիների «լեզվի» մասին շատ ավելի պարզ տվյալներ ունենք։ Հին հայերենը զանազանում է ձիու երկու տեսակ ձայն. խրխնջել և վրնջել. առաջինը՝ սովորական խմասոով, երկրորդը՝ էգի ցանկությամբ։ Ամենքը տեսել են և գիտեն, թե ինչպես մի շուն որևէ վտանգի դեպքում կամ մի օտար շուն տեսնելիս սկսում է մի հաչոց, որ լսելով՝ մյուս շներն իսկույն դուրս են թափվում. նշանակում է թե նա մի որոշ «միտք» արտահայտող բան էր, և որ շները այդ «միտքը» լսեցին և հասկացան։ Ուշադիր ականջը նույնիսկ կարող է զանազանել այս հաչոցները։ Հայերեն լեզուն գիտե՝ հաչել, ոռնալ, կաղկանձել, կնճկնճալ, վնգվնգալ, վնգստալ, թնճկալ, ինչպես և՝ վայրահաչ և լուսնահաչ բառերը։ Ղարաբաղի և Ղազախի գյուղացիք գիտեն զանազանել դեռ շատ ավելի տեսակ հաչոցներ.

օրինակ՝

մարդահաչ՝ մարդու վրա հաչելու ձևն է.

գյուլահաչ՝ գայլի վրա հաչելու ձևն է.

գզնահաչ՝ անասնոր գազանի վրա հաչելու ձևն է.

շնահաչ՝ օտար շուն տեսնելիս հաչելու ձևն է.

թռչնահաչ՝ թռչունի վրա հաչելու ձևն է...։

Այս բոլորը ցույց է տալիս, որ շունը զանազան տեսակի հաչոցներ, այսինքն զանազան «բառեր կամ խոսքեր» ունի, ինչ որ նշանակում է որոշ «լեզու» և այդ բառերը կամ խոսքերն էլ այնպես տարբեր են միմյանցից, որ գյուղացին կարևոր և կարելի է համարել առանձին բառերով որակել։ Գազաքներում ապրող շները թերևս այդքան հարուստ «բառարան» չունենան, բայց ուշադիր ականջը կարող է այստեղ էլ զանազանել հետևյալները.

1. Հինգ խաղերի էջք և ելք, որի ծայրին կարճ դադարից հետո՝ կրկնվում է վերջին խաղը մի քանի անգամ, հավասար դադարներով։

Այս ձևը գործ են ածում շները, երբ զգում են մի հեռավոր վտանգ, որ անմիջապես չի սպառնում իրենց։

2. Հավասար դադարներով ընդհատված մի զույգ խաղերի

երկարատև կրկնություն։ Այս ձևով հաչում են շները, երբ խըմբովին հալածում են մի օտար և զորավոր շուն։

3. Բավական երկար դադարներով մեկնուչյն խազի կրկնությունը։ Այս ձևով հաչում է շունը ուտելիք պահանջելու համար իր տիրոջից, որ ճաշում է։

4. Երկար և լալագին ձայներ, որ արձակում է շունը՝ ծեծ ուտելով՝ վախչելիս։

5. Որսորդության մեջ առանձին տեսակի հաչոց։

6. Բարկության ժամանակ հանած մռռոցը։

7. Բանտարկված ժամանակ հուսահատական ոռնոցը։

8. Ուրախ հաչոց, երբ մեկնում է տիրոջ հետ պտուտկի։

9. Աղաչական հաչոց, որով խնդրում է, որ դուռը կամ պատուհանը բանան։

10. Կարճ և կտրուկ հաչյուն, որ էգ շունը արձակում է մերժելու համար արվի քծնանքը։

Եղջերուն էլ ունի որոշ լեզուն, որով հաղորդում է իր «մխիթքը» իր ընկերներին։

Երբ եղջերուն հանկարծ գլուխը հետ է շարժում, բոլոր մյուսներն էլ նույնը կրկնում են. դա նշանակում է «լսեցեք»։ Եթե մի կասկածելի առարկա է տեսնում, արձակում է մի ցած նոտա, որ նշանակում է «զգուշացեք»։ Իսկ երբ տեսնում է, որ առարկան ոչ միայն կասկածելի այլև վտանգավոր է, արձակում է մի սուր ճիչ, որ նշանակում է «փախեք»։ Այսպիսով, եղջերվի «լեզվի» մեջ նկատելի են ուրեմն «լեզվի» երեք ձևեր. «շարժում, բառ և շեշտավորություն»[1]։

Կենդանիների «լեզվի» ամենազարգացած ձևը ներկայացնում են կապիկները։ Սրանց «լեզվի» վրա ուշադրություն դարձրել էր արդեն Հեկկելը (Häckel, Origine de l'homme, թարգ. ֆրանս. Laloy, էջ 23), որ ասում է. «Կապիկների հանած զանազան ձայները, որոնցով նրանք իրենց զգացումը, ցանկությունը, համակրանքն ու հակակրանքն են հայտնում, տարբեր չեն այն ձայներից, որ արձակում են մանկիկները, որ ուզում են լեզու սովորել։ Կա մինչև անգամ երգիչ մարդակերպ կապիկ, այն է՝ երգիչ գիբբոնը կամ սիամանգ (hylobates syndactylus), որ սկսում է հիմնական E ձայնից և բարձրանում է ամբողջ

[1] John Jaques, The ascent of man, ֆրանս. թրգմ. Drummond, L'évolution de l'homme, Saint-Blaise, 1909, էջ 148։

խրոմատիկ սանդուղքը, մի ամբողջ ությակ, արտաբերելով շատ մաքուր ձայներ, կանոնավոր կես ձայների միջոցով։

Բայց կապիկների լեզուն ուսումնասիրել է հատկապես Գարնըը (R. Garner) ուսումնականը, որ իր հետազոտությունների արդյունքը հրատարակեց մի առանձին հատորի մեջ (The speech of monkeys, London, 1892), որի ամփոփումը տալիս ենք այստեղ։

Գարնըրը այն կարծիքն ունի, որ ամեն կենդանի ունի խոսողական կարողություն. անասունները իրենց մեջ փոխադարձաբար հայտնում են իրենց մտքերը, մենք ենք, որ չենք կարողանում հասկանալ նրանց. այսպես՝ առյուծը, թռչունները և այլն, բայց այդ բոլորի մեջ մարդու լեզվին ամենամոտիկը, նրա կարծիքով, կապկի «լեզուն» է (էջ 137 և 246)։

Որովհետև կապկի ձայնը նույն կամ նման չէ մարդկային հոդավոր ձայնին, ուստի Գարնըրը գործ էր դնում ձայնագիր (ֆոնոգրաֆ) գործիքը, նրանց արտասանած կամ արձակած ձայները առնում էր ձայնագրի վրա և ձայնագրով էլ դրանք հաղորդում նրանց, մինչև որ ինքն էլ կարողացավ կեղծել նրանց ճիշտ ձայնը։

Կապիկները մարդկանց նման շարունակական խոսակցություն չունեն. նրանց «լեզուն» սահմանափակված է մի ձայնով (էջ 45), և այդ ձայնը կապված է գործողության հետ. գործողության հետ ընկերակցող այդ բառը կրկնում են շարունակ (էջ 70)։ Կապիկները մենակ չեն խոսում։

Կապիկների «լեզուն», ըստ Գարնըրի նկարագրության, բաղկացած է 13 «բառից», որոնք են.

1. Huw, նշանակում է «ուտելիք՝ հաց, խնձոր, բանան, գազար, նաև՝ քաղց, անօթություն կամ քաղցած, և երբեմն էլ՝ խմելիք». այս իմաստները զանազանվում են իրարից ձայնի թեթև երանգներով. արտաբերվում է F-ից մոտ երեք օկտավ ցածր։

2. Xöy, նշանակում է «կաթ, ջուր, խմելիք, կամ՝ խմել, ծարավ». արտաբերվում է F-ից մոտ երկու օկտավ ցածր։

3. Մի «բառ», որ նշանակում է «փորձանք կամ վտանգ կա». այս ձայնը կարելի է կեղծել ձեռքի երեսը դնելով բերանին և ուժեղ ու երկար համբուրելով. դաշնամուրի F ձայնն է։

4. Մի «բառ», որ նշանակում է «բարև կամ սա կապիկ է». արտաբերվում է մեղմ ձայնով (էջ 72)։

5. «Մի բառ», որ նշանակում է «օդը վատ է, քամի է, անձրևում է և դժգոհություն այդ մասին»։

6. «Ա՛չ, չէ՛». այս «բառը» կամ ձայնը արտաբերելիս կապիկը միաժամանակ գլուխը երկու կողմ է օրորում. բայց կարող է նաև այդ շարժումը կատարել առանց ձայնի ընկերակցության։ «Այո» նշանակող «բառ» կամ շարժում չկա (էջ 73—79)։

7. Մեկին կանչելու ձայնը (էջ 89)։

8. Ecgk, որ նշանակում է «զգույշ, վտանգը մոտ է», կամ «մարդ է գալիս, մարդու ոտքի ձայն է լսվում» (էջ 90)։

9. Xi, նշանակում է «եկավ, ահա եկավ». այս ձայնը արտաբերում է կապիկը, երբ մոտենում է իրեն մեկը կամ մի բան, որից վախ չունի (էջ 93)։

10. Հաշտություն կամ բարեկամություն արտահայտող մի «բառ» կամ «բարև», որ նույն կամ նման է «ուտելիք» «բառի» հետ (էջ 105)։

11. «Ծուր, ծուր ինձ». այս էլ դարձյալ նույն կամ նման է «ուտելիք» «բառինն» (էջ 106)։

12. «Սեր, բարի վերաբերմունք, լավ բարեկամություն» (էջ 107)։

13. «Մի գնար, ինձ մենակ մի թողդ», կաղկանձելու նման մի ձայն է (էջ 109)։

Գարները իր փորձերը կատարում էր Ամերիկայի զանազան քաղաքներում, կենդանաբանական այգիներում և գաղանանոցներում պահված հատ-հատ կապիկների վրա, կամ իր մոտ վանդակի մեջ պահելով մի կապիկ։ Կապիկները բերված էին զանազան երկրներից՝ Ասիայից, Աֆրիկայից և Ամերիկայից։ Զանազան տեսակի կապիկները զանազան «լեզուներ» կամ «բարբառներ» ունեն. բայց մի տեսակի բոլոր կապիկներն էլ միևնույն իմաստի համար միևնույն ձայնը կամ «բառն» ունեն։ Կան «բառեր» էլ, որոնք ընդհանուր են այս կամ այն տեսակի կապիկների «լեզվին» (էջ 42)։ Օրինակի համար № 1 «ուտելիք» գաղափարը, որի համար մի տեսակի կապիկները ունեն huw «բառը», մի ուրիշ տեսակի կապիկները ունեն nqu-u-w, երրորդը՝ wuh-uh-uh, չորրորդը՝ մի ձայն, որ գրով անկարելի է բացատրել։ Ամենազարգացած կապիկն է գորիլան, որի ձայնը ամենից ավելի մոտիկ է մարդկային ձայնին։ Սրանից հետո գալիս է շիմպանզեն։ Սրանց արտաբերած բառերը կարելի է մարդկային ձայնական գործարաններով էլ արտաբերել (էջ 134)։

Թե ինչ միջոցներով Գարնըրը կարողացել է գտնել ու ճըշտել վերը նշանակված «բառերի» իմաստը, բացատրենք մի քանի օրինակներով։

Մի անգամ նա այցելության գնաց բարեկամ մի կապիկի մոտ և արտասանեց xöy «բառը», որ նրանից էր լսել. շատ ագահ կապիկը վերցրեց այն ամանը, որի մեջ պահապանը նրան ուտելիք էր տալիս և կրկնեց նույն «բառը». Գարնըրը մի բաժակ ջուր բերեց. կապիկը ոտքը թաթխեց ջրի մեջ և սկսեց ծծել՝ կրկնելով շարունակ նույն «բառը». Գարնըրը բաժակը բռնած գնաց-կանգնեց հեռվում. կապիկը վանդակի միջից կրկնում էր դարձյալ նույն «բառը». պարզ է, որ xöy նշանակում էր «ջուր, կամ ծարավ եմ, ջուր տուր»։

Գարնըրը մի կապիկի հետ լավ բարեկամացել էր. ամեն այցելության նրան ուտելիք էր տալիս և կապիկը նրա ձեռքից ուտում էր։ Մի անգամ նա արտաբերեց նրա մոտ «վտանգ կա» «բառը» (№ 3). կապիկը խնկույն թողեց ու սարսափով փախավ վանդակի գլուխը. Գարնըրը կրկնեց. կապիկը ավելի հեռուն փախավ։ Երկու ամիս շարունակ կապիկը չհաշտվեց Գարնըրի հետ և ամեն անգամ, որ գալիս էր, հեռու էր փախչում նրանից։

Գարնըրը իր տանը մի կապիկ էր պահում. սենյակը գորնվում էր երկրորդ հարկում. սանդուղքները գորգով պատած էին. ամեն անգամ, որ Գարնըրը սանդուղքներից բարձրանում էր, կապիկը ոչ միայն լսում էր նրա ոտնաձայնը, որ գորգի վրա անշուշտ շատ թույլ էր, այլև ուրիշների ոտնաձայնից զանազանելով, ձայն էր տալիս տանտիկնոջը xi! xi! xi! (էջ 93)։

Ամեն անգամ, երբ տիկինը գնում էր, կապիկն մենակ թողնելով վանդակում, արտաբերում էր 13-րդ բառը, այն է «մի գնար, ինձ մի թողն։ Կապիկի առաջ մի հայելի էին դնում. կապիկը տեսնում էր նրա մեջ իրեն նման մի կենդանի, ուրախանում էր և արտաբերում մի բառ (№ 4), որ արտաբերում էին կապիկները իրար պատահելիս. Գարնըրը եզրակացնում է, որ դա մի բարև է կամ թե նշանակում է «կապիկ է»։

Հարց է, թե այս բոլոր «բառերը» կապիկների «լեզվի» մեջ լոկ բնազդական ձայնե՞ր են, թե գիտակցական ձայներ։ Գարնըրը հաստատում է, որ դրանք գիտակցական նշաններ են (էջ 201). դրան իբրև ապացույց է բերում՝ 1) կապիկը արտասանում է «բառը» այն նպատակով, որ խոսակիցը հասկանա և աչքերը հառած նայում է նրան, և երբ չհասկացավ, կրկնում է. 2) մեկ-

նույն գաղափարի համար միևնույն «բառը» միշտ միևնույն ձևով են ասում (էջ 23), կապիկը հասկանում է «բառը», երբ լսում է այն մի ուրիշ կապիկից կամ մարդուց և կամ ձայնագրից, առանց շարժուձևերի ընկերակցության. այս բանը ցույց է տալիս, որ այդ ձայնը իրոք ձայն է և ոչ ազմուկ, 3) տարբեր տիպի կապիկները, որոնք խոսում են տարբեր «բարբառներով», միասին ապրելով կարող են իրար «լեզուն» հասկանալ, սովորել (էջ 43—44), բայց խոսել չեն կարողանում։

Գալով կապիկների ձայների էության՝ Գարնըրը ասում է թե «չ մի այրուբեն կարող չէ ներկայացնել դրանք (էջ 81). այս հանգամանքը, սակայն, նրա կարծիքով, պատճառ չէ կարծելու, թե ուրեմն նա «լեզու» չէ։ Մարդկային լեզուների մեջ էլ կան այնպիսի ձայներ, որոնք կարելի չպիտի լիներ ներկայացնել, եթե սովորությամբ վարժված և առանձին նշաններով նշանակած չլինեին։ Կարող է գալ ժամանակ, երբ մարդիկ կապիկների համար էլ հնարեն նրանց ձայնը ներկայացնող նշաններ, այսինքն՝ կապիկների այբուբենը։ Կապիկների «լեզվի» մեջ, ըստ Գարնըրի, a, o ձայնավորները չկան, i ձայնավորը քիչ է պատահում, իսկ ամենաշատը u է։

Գարնըրը գտնում է, որ կապիկները նաև գիտեն հաշվել մինչև 3 թիվը։ Բայց այս մասին տես թվականներին նվիրված մասում (հատ. 1, Բ մաս)։

Իր ուսումնասիրությունը ավելի առաջ տանելով՝ Գարնըրը որոշում է փոխադրվել կապիկների հայրենիքը՝ Աֆրիկա։ Ֆրանսիական Կոնգոյում, հասարակածից երկու աստիճան ցած, Ֆերնան Վազ լճի հարավային կողմում, նկամի ցեղի հողամասում, անտառի մեջ նա կանգնեցնում է մի երկաթյա ամուր վանդակ, ուր իր պաշարը վերցրած բնակվում է 4 ամիս շարունակ (սկսած 1893 թ. ապրիլի 27-ից), այրեցյալ գոտու հեղձուցիչ տոթի և վայրի գազանների սարսափի մեջ, հեռու մարդկային ընկերությունից։

Այստեղ նա ուսումնասիրում է կապիկների ավելի բարձր տեսակի (շիմպանզեի և գորիլայի) կյանքն ու «լեզուն», իրենց անտառային ազատ ու բնական վիճակում։ Եվ այդ ուսումնասիրության արդյունքն է իր երկրորդ աշխատությունը՝ Apes and monkeys, their life and language (Boston, 1900)։ Գարնըրը ասում է իր այս գրքում, որ այդ ժամանակամիջոցում շիմպանզե կապիկների «լեզվից» որոշած իր «բառերի» թիվը գրեթե

հարյուր է, բայց դրանցից համարյա միայն 30 հատի իմաստն է կարողացել իմանալ (էջ 115)[1]։

Այս «բառերից» հիշատակվում է՝ (էջ 112—6)։

1. uh — կերակուր (կրկնվում է՝ 2—3 անգամ).

2. ūw — մեկին կանչելու համար.

3. uh — նշան բարեկամության.

4. Մի ուրիշը, որ շատ բարդ ձայն է, նշանակում է «լավ է» և համապատասխանում է մեր «շնորհակալություն» գաղափարին.

5. eh (կրկնելով) — եկավ, գալիս է (առանց երկյուղ արտահայտելու).

6. eh (ուժեղ տոնով արտահայտված)—վտանգ կա, վախեք.

7. Ծուրտ է կամ ինձ անհաճո է.

8. Ամել, ամելիք, ծարավ եմ.

9. Հիվանդ եմ.

10. Մեռնել, մահ, մեռավ։

Կան նշանները «այո» և «ոչ» գաղափարների համար. «այո» ասելու համար ձեռքը երկարում է դեպի անձը կամ առարկան, իսկ «ոչ» ասելու համար անում է ձեռքով ալեհեւ շարժում դեպի անձը կամ առարկան։

Ըստ Գարնըրի կապիկների «լեզուն» պարունակում է 16 բառ, որոնցից հիշենք մի քանիսը.

Կուի «անոթի եմ».

Քնել «այստեղ».

Ուրհ «ուր ես»։

Գարնըրը այնքան առաջ գնաց, որ մինչև անգամ ուզեց անգլերեն սովորեցնել կապիկներին։ Նա բաց արավ կապիկների համար «դպրոց», ուր սովորեցնում էր թվաբանություն, երկրաչափություն և նկարչություն։ Թվաբանության դասի համար իր առաջ դնում էր մի տուփ, որի մեջ կային մի քանի գնդակներ։ Գարնըրը տուփի միջից հանում էր գնդակները՝ հաշվելով բարձրաձայն 1, 2, 3 և հետո նորից հաշվելով՝ դնում էր տուփի մեջ։ Կապիկը, որ իր առաջ ուներ նույնպիսի մի տուփ, կապկում

[1] էջ 108, շիմպանզեի համար ասում է. «Նրանց լեզվի ամբողջ բառաքանն ընդգրկում է հավանաբար ոչ ավելի, քան 25 կամ 30 բառ։ Դրանցից շատերը կամ անորոշ են կամ բազմիմաստ... իմ հետազոտությունների ընթացքում ես սովորել եմ այդ կապիկների լեզվից տասը բառ...»։ Այս թվերը հակասության մեջ են միմյանց հետ։

էր ուսուցչին, ըստ կարելվույն ճիշտ կրկնելով նրա արտասանած թվերը։

Երկրաչափության դասին Գարնըրը մի տախտակի վրա բաց էր անում կրկու անցք, մեկը քառակուսի ձևով և մյուսը կլորակ-ձևքին ուներ երկու փայտ, մեկը տաշված քառակուսի ձևով և մյուսը կլորակ ձևով, բայց այնպես, որ ճիշտ հարմար գային հիշյալ անցքերին։ Այս փայտերը Գարնըրը խրում էր համապատասխան անցքի մեջ և նույնը հրամայում էր կրկնել կապիկին։ Եթե կապիկը քառակուսի փայտը խրեր կլոր անցքի մեջ կամ կլոր փայտը խրեր քառակուսի անցքի մեջ, բնականաբար չէր հաջողվի։ Վերջապես կապիկը ըմբռնում էր քառակուսի և կլոր ձևերի տարբերությունը։ Այնուհետև շինում էր եռանկյունաձև և այլ բազմանկյունի անցքեր, իրենց համապատասխան փայտերով։ Այսպիսով, սովորեցնում էր կապիկին բոլոր երկրաչափական ձևերը։

Նկարչության դասին՝ Գարնըրը տախտակի կեսը սև էր ներկում և կեսը՝ սպիտակ. յուրաքանչյուրի վրա բաց էր անում մի մեծ անցք. ուներ նաև երկու փայտ, մեկը՝ սև, մյուսը՝ սպիտակ. սև փայտը պետք էր խրել սև անցքի մեջ, իսկ սպիտակ փայտը՝ սպիտակ անցքի մեջ։ Դրանցից հետո ավելանում էին ուրիշ գույներով անցքեր և փայտեր, և կապիկը զանազան փորձերից հետո՝ սովորում էր ճանաչել գույները։

Գարնըրը կարծում է, թե մի օր կապիկները պիտի կարենան սովորել ու հասկանալ մեր լեզուն։ Ըստ Բուլի՝ կապիկների ուղեղի, խոչակի և լեզվական մկանների կազմությունը այնպես է, որ օրգանական տեսակետից շատ քիչ բան է պակասում իրենց՝ ձեռք բերելու այն հատկությունը, որ մարդը կամաց-կամաց զարգացրել է իր մեջ։

Այսպիսի մի փորձ արել է ամերիկացի գիտնական Ֆուրնեսը (Furness), որ մի փոքրիկ էգ օրանգուտանի սովորեցրել է 6 ամսվա մեջ papa «հայրիկ» և cup «բաժակ» բառերը։ Երբ հարցնում էին նրան, թե ո՞ւր է պապան, նայում էր իր տիրոջը. և երբ ծարավ էր, ասում էր cup։

Գարնըրի աշխատանքը, այնուամենայնիվ, պետք է խոստովանել, չունի մեծ լրջություն։ Այս պատճառով ոչ մի արձագանք չգտավ գիտական աշխարհում։ Նրա գործը շարունակեցին երկու գերմանացի ուսումնականներ՝ Բաստիան Շմիդտը (Bas-

tian Schmidt) և Գեորգ Շվիդեցկին (Georg Schwidetzky)։ Վերջինս Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի և ուրիշ երկրների զանազան գազանանոցներում զանազան կենդանիների կյանքը 10 տարի ուսումնասիրելուց հետո իր նորատիպ մի աշխատութեան մեջ ուզում է ապացուցել, որ ոչ միայն կապիկները, այլև ուրիշ կենդանիներ և կենդանիների նաև ավելի մարդին մոտիկանները, ունեն իրենց սեփական «լեզուն»։ Մարդկային լեզվին ամենամոտիկն է շիմպանզեինը, թեև կենսաբանական կազմութեամբ մարդու ամենամոտիկ կենդանին գորիլան է։

Շիմպանզեն, երբ տեսնում է արևի ծագելը. կանչում է ur-ur-ur. այսպես նաև Մադագասկարի կապիկները. որա արմատն է ur, և կապիկը, երբ զգում է տաք, գոչում է ur։ Երբ ուզի քնել, կանչում կամ ասում է huil. առավոտը դիմավորելիս կանչում է oo-oo-oo, որ է «բարև, բարի լույս»։

Գորիլայի և ուրիշ կապիկների «լեզվով» ոսկորը կոչվում է gnak, կատաղել եմ՝ gragk։

Օրանգուտանի լեզվով hu նշանակում է «վագր», lok «արջ», ung «լավ է, հաճելի է, դուրս եկավ» (այս վերջինն ունեն նաև կոկորդիլոսը և ուրիշ կենդանիներ)։

Գիբբոնը նույն իմաստի համար ասում է hok, hug, hag, nag guaggak, որ կարող ենք հասկանալ նաև «շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս»։ Նույն հաճույքը արտահայտելու համար գիբբոնը գործածում է նաև ուրիշ բառեր, ինչպես՝ pruit, huit, krig, thuiwwg։ Նրա լեզվով դարձյալ p-r-r-r նշանակում է «այստեղ արյո», ch-r-r-r «պատուղ»։

Աֆրիկյան բաբունի լեզվով gak նշանակում է «գնա, հեռացիր», ts-ts-ts (արտասանված բերանից և ոչ քիթ կոկորդից) նշանակում է «վտանգ կա, զգույշ, թշնամի եկավ», pk-pk-pk նշանակում է «ես ծարավ եմ»։

[Ինչպես Գարների, այնպես էլ Շմիդտի ու Շվիդեցկու եզրակացութիւնները համոզիչ չեն։ Կապիկների «լեզուն» բնազդական ճիչեր ունի միայն և ոչ՝ գիտակցված բառեր. էլ չենք խոսում այն մասին, որ կապիկները, որքան էլ վարժեցված լինեն, չեն կարողանում կապակցված խոսակցութիւն վարել։ Այս բանը հատկապես ապացուցված է սովետական գիտնականների ուսումնասիրութիւններով, առանձնապես Սուխումի կենդանա-

բանական այդու գիտական աշխատողների երկարամյա ուսումնասիրություններով[1]։

Այդ ուսումնասիրությունները հաստատում են, որ ինչպես բոլոր կենդանիները, այնպես էլ կապիկներն ունեն միայն ազդանշաններ, որոնք առաջանում են պայմանական ռեֆլեքսային կապակցությունների սկզբունքով[2]։

Ցածր աստիճանի կենդանիներից ձկների զանազան տեսակներ, երբ ջրից դուրս են ցատկում կամ որևէ պատճառով ցամաք են ընկնում, բերանով ինչ-որ ձայներ են հանում։

Աֆրիկյան գեքկո (gecko) կոչված մողեսը, որի լեզուն մի ճկուն ծայր ունի, նրանով արձակում է pk հնչյունը։

Կենդանիների «լեզվից» մասին խոսելիս՝ պետք է առանձին ուշադրություն դարձնել թռչունների վրա, որոնց ձայնը զանազան աղդեր նմանեցնում են մարդկային լեզվին. օրինակ՝ հյ. աքլորը խոսում է, Ղրր. տատրակը կարդում է, թրք. quš yaxši oxir (թռչունը լավ կարդում է)։ Պետք է կարծել, թե դաղթող թռչունները, որոնք այնպես կարգավորված դաղթային կազմակերպություն ունեն, մեղուների և մրջյունների նման որոշ «լեզու» ունեն, որ դեռ չի քննված։ Շատ պարզ է մանր թռչունների երգը, որ համարյա միշտ մի կամ երկու խազից է բաղկացած։ Աքլորի երգը ընդհանրապես հինգ խազ ունի։

Ամենաբարդ երգը ներկայացնում է սոխակը, որի գեղեցիկ և բազմազան դայլայլիկը ուսումնասիրել է Բեխշտայնը (տես հավելված № 1)։

Նկատելի հանգամանք է, որ անասունների «լեզվի» մեջ բառ և մանավանդ քերականություն չկա. կա միայն շարժուձև և պարզ մի ձայն, որ զանազան խազերով և զանազան դադարներով և շեշտերով կրկնվում է. նրանց «բառերը», որ բնական ձայներ են, միայն տոնով են զանազանվում։ Եվ այդ բանը հատուկ է նույն կենդանու բոլոր տեսակներին, աշխարհի որ կողմից էլ նրանք լինեն[3]։ Այսպես՝ շան մեկ տեսակի հաչոցները

---

[1] Այդ մասին տես. Л а д ы г и н а-К о т с И. И., Дитя шимпанзе и дитя человека в их инстинктах, эмоциях, играх и выразительных движениях, М., 1935, Проф. Г. З. Р о г и н с к и й, Навыки и зачатки интеллектуальных действий у антропоидов, Л., 1948; Н. Ю. В о й т о н и с, Предистория интеллекта, М.- Л., 1949.

[2] Н. Ю. Войтонис, Предистория интеллекта, էջ 24։

[3] Մեկնույն կենդանու ոչ միայն բնական ձայները, այլև բնազդական գործողությունները նույն են բոլ ժամանակի և տեղի։ սարդերը միասե-

միևնույն ձայն-ձավ ձայնի կրկնությունն են. կատուն ունի միայն միավ[1] ձայնը, ճճղուկը՝ ճի և այլն։

Կենդանիների այն բոլոր ձևերը, որոնց մասին խոսեցինք մինչև այստեղ, գործածում են կենդանիները բնականաբար իրենց մեջ։ Բայց մարդն էլ հնարած ունի մի ձևուն, որ գործածում է կենդանիների հետ խոսելիս, որ կենդանին էլ հասկանում է, բայց չի կարող գործածել իր նմանի հետ։ Ըստ որում այդ ձևուն բաղկացած է հոդավոր ձայներից։ Ահա մի ցանկ այսպիսի բառերի.

օ՜շտ, Գլ. չը՜խ. Ղրր.—շունը վանելու համար.

քշ, քշ, քշտ, քշտ, քշտ—հավ վանելու համար.

փի՜ստ, փի՜շտ — կատու վանելու համար.

փիսի-փիսի, փիշի-փիշի, փիշ-փիշ—կատու կանչելու համար.

չյո՜ւշ—էշ, ձի, ջորի կանգնեցնելու համար.

ճէսթ—էշ, ձի, ջորի մեկ կողմ քշելու համար.

դիճ—էշ, ձի, ջորի ճամբա հանելու՝ քշելու համար.

քուչու-քուչու—շուն կանչելու համար.

ո՜ւդր-ուդր (Սվեդ.)—օտար հավը քշելու համար։

Ինչպես նկատելի է այս ձևերի մեջ՝

1) բառերը ընդհանրապես միավանկ են.

2) վանողական ձայները ասվում են մի անգամ, կանչելու (փաղաքշական) ձայները կրկնվում են.

սակ ոսսայն են հյուսում. մեղուները նույն կյանքն են տպրում ամեն տեղ, նույն տեսակ վեցանկյունի բջիջներ են շինում ամեն տեղ։ Դ. դարի հեղինակ Բաբռեզ կեսարացին իր վեցօրյա ճառերի մեջ (տպ. Վենետիկ, 1830), էջ 164—7 մանրամասն պատմում է մեղուների բոլոր գործողությունները և այդ բոլորը նույն դարից մինչև այժմ, այն է՝ 1600 տարվա ընթացքում միևնույնն է մնում, մինչդեռ մեր լեզուն գոնե 3 անգամ փոխված կլինի։

[1] Կատուն ունի զանազան տեսակի մլավոցներ. այլ ձևով է մլավում, երբ ուտելիք է ուզում, այլ քնքշությամբ՝ երբ իր ձագուկին է կանչում, այլ ձևով, երբ մուկ է բռնել և հրավիրում է առնտիկնոջ՝ ցուցադրելու համար իր քաջությունը և կամ իր ձագուկին՝ որպեսզի խաղա հետը կամ ուտի, այլ ձևով՝ երբ մի տեղ բանտարկված է և սաքսափով չրեն այս ու այն կողմը է գցում և մինչև իսկ գեպի պատուհանը ցատկելով, ապակին չարդում և դուրս է պրծնում։ Բոլորովին այլ ձայն ունի, սակայն, կատուն, երբ արբունքի է հասել և այն ժամանակ նրա ձայնը այնպիսի կոշտ կոկորդային ձև ունի, որ պոլահայերը առանձին անուն են հատկացրել և կոչում են ոչ թե միավ, այլ մռլավ, և այդպիսի կատուներին էլ՝ մռլավ կատու։ Ամենքին հայտնի է, թե ինչպես այդ մռլավ կատուները կատուների վրա հավաքված, գիշերային հցայցերդերը և բաղմաղան հօպերաններ են սարքում։

3) բոլոր բառերը բայական արժեք ունեն և ներկայացնում են հրամայական ձև, ըստ որում անասունը մարդու ձեռքի տակ ծառայող մի արարած է և միայն նրա հրամանով է շարժվում։

[Այսպես նկարագրելով կենդանիների լեզուն, ինչ եզրակացության ենք գալիս։ Կենդանիները լեզու ունեն, թե ոչ։ Պատասխանը բացասական է։ Այն բոլոր միջոցները, որ նրանք գործադրում են իրար հետ «հաղորդակցվելու» համար, այն բոլոր ձայները, որ արձակում են նրանք իրրև այս կամ այն զգացողության արտահայտություն, բնական ձայներ են միայն։ Նրանք գոյություն ունեն այն ժամանակ միայն, երբ բնազդը թելադրում է կենդանուն անգիտակից կերպով արձակել դրանք։ Բնազդից անկախ այդ ձայները գոյություն չունեն։ Այստեղ զարմանալի ոչինչ չկա, քանի որ կենդանիների հասարակական կյանքն էլ բնական է։ Կենդանիները չունեն այնպիսի հասարակություն, ինչպիսին ունի մարդը։ Եվ այդպիսի հասարակական, հոգային կյանքի մեջ կենդանին կարիք էլ չունի լեզվի։ Նրա բնազդական ձայները միանգամայն բավական են իրեն։ Ինչ վերաբերում է ընտանի կենդանիներին, ապա նրանց մոտ մենք տեսնում ենք մարդու աղդեցությունը։ Այս մասին շատ գեղեցիկ բացատրություն է տալիս Ֆրիդրիխ Էնգելսը. «Բնական վիճակում,—ասում է Էնգելսը,—ոչ մի կենդանի չի զգում խոսել չկարողանալու կամ մարդկային խոսքը չհասկանալու անհարմարությունը։ Բոլորովին այլ բան է, երբ կենդանին ընտելացված է մարդու կողմից։ Շունը և ձին մարդկանց հետ շփվելու շնորհիվ հոգեբաշխ խոսքի նկատմամբ իրենց մեջ զարգացրել են այնպիսի զգայուն լսողություն, որ պատկերացումների իրենց համար հատուկ շրջանի սահմաններում նրանք հեշտությամբ սովորում են հասկանալ ամեն մի լեզու։ Բացի դրանից, նրանք ձեռք են բերել այնպիսի զգացումների ունակություն, ինչպես մարդու հետ կապվածության զգացումը, երախտագիտության զգացումը և այլն, որոնք առաջ խորթ էին նրանց համար։ Ամեն ոք, որ շատ է շփում ունեցել այդպիսի կենդանիների հետ, հաղիվ թե կարողանա հրաժարվել այն համոզմունքից, թե քիչ չեն դեպքերը, երբ նրանք խոսելու իրենց անընդունակությունն այժմ զգում են իրրև պակասություն։ Ճավոք սրտի, նրանց ձայնական օրգաններն այն աստիճան որոշակի ուղղությամբ են մասնագիտացած, որ նրանց այդ վշտին արդեն ոչ մի կերպ չի կարելի օգնել» (Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, Երևան, 1950, էջ 189)։]

* * *

Կենդանիների «լեզվի» զանազան տեսակները դիտելուց հետո՝ կարող ենք այժմ անցնել մարդկային լեզվին։ Ինչպես ասացինք, մարդն, իբրև հասարակական էակ, պետք ուներ իր նմանների հետ հաղորդակցելու։ Ի՞նչ ձևով կարող էր մարդ հայտնել իր միտքը և ըմբռնելի դարձնել ընկերին։

Դրա բնական միջոցն է արտաքին ձևը, այսինքն՝ նշանացի խոսակցությունը։

Նշանացի խոսակցությունը մի շատ տարածված ձև է. այսպես՝ նավային, երկաթուղային, հեռագրական և պինվորական հարաբերությունների մեջ կան նշաններ, որոնք իբրև միջազգային լեզու գործածական են բոլոր ազգերի մեջ էլ։ Օրինակ՝ դեղին դրոշակը նշան է հիվանդության, մասնավորապես ժանտախտի և խոլերայի։ Երկաթուղագծի մոտ, երբ պաշտոնյան պարզում է կարմիր դրոշակը կամ կարմիր լապտեր, նշան է, թե վտանգ կա, իսկ կանաչը նշան է ապահովության և ազատ ճանապարհի։ Պատերազմական գործողությունների մեջ սպիտակ դրոշակը նշան է հաշտության և խաղաղության։

Գիտենք, որ ամեն ազգ կամ պետություն ունի մի ազգային դրոշակ, որ իր գույներով կամ պինանշանով տարբերվում է մյուսներից. այսպես՝ ֆրանսիական պինանշանը մի աքլոր է, իսկ դրոշակը կապույտ, սպիտակ, կարմիր ուղղահայաց շերտերով։ Սովետական պինանշանն է մուրճն ու մանգաղը, իսկ դրոշակը՝ ամբողջապես կարմիր և այլն։

Ծովափներում կանգնած փարոսն էլ նշան է նավապետների համար ճանապարհ ցույց տալու. ամեն մի փարոս ունի գույների մի շարք սպակյա մեծ լապտերների վրա, որոնք շրջանակ պատվելով ցուցադրում են նույն շարքը։ Օրինակ x քաղաքի նավահանգստի փարոսը թող ունենա կարմիր, կանաչ, սպիտակ շարքը, y քաղաքի նավահանգստի փարոսը կանաչ, սև, կապույտ շարքը, z քաղաքի նավահանգստի փարոսը ունենա կանաչ, սպիտակ, կապույտ և այլն։ Մութ գիշերին և հատկապես, փոթորկահույզ ծովի վրա իր ճանապարհը կորցրած նավապետը, հեռվից դիտակով հանկարծ տեսնելով որևէ փարոս և նրա ցուցադրած գույները, հատուկ ալբոմի մեջ գտնելով, իմանում է, թե ուր է գտնվում։

Փարոսի վրա խարխափը նշանակում է նավահանգիստ,

կապույտ գույնը՝ ծով կամ լիճ, կանաչը՝ անտառ, ատամնավոր ղուգահեռական գծերը՝ երկաթուղի։ Մաթեմատիկայի մեջ + նշանակում է գումարում, — նշանը՝ հանում, × նշանը՝ բազմապատկություն, : նշանը՝ բաժանում, = նշանը՝ հավասարություն, ∞ անսահմանություն, < նշանը փոքրություն, > նշանը՝ մեծություն։ Երկրաչափության մեջ π նշանակում է տրամագծի և շրջագծի հարաբերական չափը։ Ակնաբուժության մեջ — նշանակում է գոգավոր (concave) ակնոց, իսկ + նշանակում է կորընթարդ (convexe) ակնոց։

Տպարանական վորձերի մեջ սրբագրիչը խոսում է գրաշարի հետ ի բացակայության միայն նշաններով, որոնք նշում է թղթի լուսանցքի վրա։

Եվրոպական երաժշտությունը միջազգային այբուբեն է, որ բաղկացած է զանազան ձայնական խաղերից (նոտաներից), որոնց միանում են նաև մի խումբ իտալերեն բառեր։

Հեղվարանության մեջ < նշան է ածանցման կամ ծագման, = ծագման նույնության կամ ցեղակցության։

Այս բոլորը գիտունների ձեռքով նոր հնարված ձևեր են. բայց մարդիկ միշտ ունեցել են խոսակցական հասարակ նշաններ էլ։ Երկու իրար լեզու չհասկացող մարդիկ բացատրվում են շարժուձևերով։ Համրերը պատմում են ամբողջ պատմություններ զանազան շարժուձևերով։ Նախնական ցեղերի մեջ շատ զարգացած է շարժուձևը։ Ամերիկյան բնիկների տարբեր ցեղերի անհատները առանց իրար լեզու իմանալու խոսում են միմյանց հետ ինչ-որ պետք է միայն շարժուձևերով, և շարժուձևը նրանց համար դառնում է միջազգային լեզու։ Այսպես՝ Մխախպի և ժայռոտ լեռների կարմրամորթները, որոնք հարյուրավոր զանազան բարբառներով են խոսում, իրար հետ խոսակցում և իրար հասկանում են այս միջոցով (Passy, Chang. phon., էջ 49)։ Շատ նախնական ցեղերի մեջ որոշ բառեր տղամարդկանց սեփականություն են, և նրանց դործածությունը կրոնապես արգելված է կանանց. կանայք էլ այդ բառերը արտասանելու փոխարեն նշաններով են ցույց տալիս։ Կարծիք կա, թե շատ նախնական ցեղեր ունեն թերակատար մի լեզու և իրենց լեզվի թերությունները լրացնում են շարժուձևերով. ուրիշ խոսքով բառերի կամ մասնիկների տեղ գործ են ածում որոշ նշաններ (John Jaques, The ascent of man, ֆրանս. թրգմ. Drummond, էջ 153)։ Օրինակ, աֆրիկյան կաֆա լեզվի մեջ բայի միևնույն ձևը

նույն ձևը թե ներկա ժամանակ է, թե անցյալ, և թե ապառնի. երբ հարկ է լինում ճշտել ժամանակը, գործ են ածում շարժուձևեր. այսպես՝ անցյալը ցույց տալու համար ուսից վերև շարժում են անում (M. Cohen, BSL, *83, 177*).

Այսպիսի թերակատար լեզու ունեցող ժողովուրդները մութի մեջ կամ հեռվից դարձած խոսելու ժամանակ իրար չեն կարող հասկանալ, որովհետև շարժուձևերը չեն տեսնում։ Բուշմեննները, որոնց լեզուն լիքն է այսպիսի նշաններով, երբ ուզենան գիշերը խոսել, ստիպված են հավաքվել կրակի շուրջը. այսպես նաև Հյուս. Ամերիկայի արապահոները (Lubbock, Les origines de la civilisation, էջ *409*)։

Էլիզե Ռեքլյու նշանավոր աշխարհագրագետը իր մեծ աշխարհագրության մեջ ասում է, թե ամերիկյան միքս (mixe) կոչված ժողովուրդը խոսում է մի շատ աղքատ լեզվով։ Այդ լեզվի բառերը լրացվում են այնքան շատ հոպտանքներով, որ ձերեկոյին, երբ լուսերը հանգչում էին, խոսակցությունը ստիպողաբար վերջանում էր։

Գրասերին, որ գրել է այդ լեզվի քննությունը, ասում է, թե այս լեզվի մանրամասն քննությունը չի հաստատում Ռեքլյուի ասածը։ Թե զոք (zoque), և թե միքս լեզուն ունեն ինքնաբավ բառարան և քերականություն. ճև ամենքս էլ գիտենք, որ նման լեզուները երբեմն շատ հարուստ են թե քերականությամբ, և թե բառարանով» (Grasserie, Langue zoque et langue mixe, Paris, *1898*, էջ *6*)։

Այդպիսի ցեղերի մեջ գործածված մի խումբ նշաններ և նրանց բացատրությունը տրվում են № 2 հավելվածում։

Բայց սրանցից բարձր և շատ ավելի քաղաքակիրթ մարդկանց մեջ էլ նշանացի խոսակցությունը կա։ Պյութագորաս հույն փիլիսոփան (Զ դար մ. Թ. ա.) իր աշակերտներին սահմանել էր հնգամյա լռություն, և այդ լուռ ենացող աշակերտները անշուշտ իրար մեջ նշաններով միայն պիտի խոսեին։ Ֆրանսիայում հիսուերկյան միաբանության մեջ (հիմնված 1098 թվին) խոսում էին նշաններով։

Նույնիսկ մենք մեր առօրյա խոսակցության մեջ չենք կարողանում զերծ մնալ նրանցից։ Նահապետական գյուղերում չխոսկան հայ հարսները ամբողջ խոսակցություն էին վարում շարժուձևերով։ Մեր մեջ դեռ չկա մի առանձին աշխատություն, ուր հավաքված լինեին բոլոր այդ շարժուձևերի նկարագրությունն

ու խմաստը, ինչ որ շատ կարևոր էր լեզվաբանության համար։ Նշանացի խոսակցությունը երբեմն դառնում է անհրաժեշտություն. այսպես, երբ երկու հոգի իրար լեզու չեն հասկանում, երբ ուզում են ուրիշներից գաղտնի մի բան ասել, կամ երբ իրարից այնքան հեռու են, որ իրար ձայն չեն լսում, բայց կարող են դանադան նշաններ տեսնել։ Վերջապես նշանացի խոսակցությունը հաճախ բնազդական է. երբ մենք մեր ընկերոջ հետ խոսելիս ասում ենք, օր. «Այսօր անձրև պիտի գա, անշուշտ նույն միջոցին մեր աչքը դեպի երկինք է բարձրանում, խոսակիցը կարող է այդ չնկատել, և մենք էլ չենք սպասում, որ նա էլ երկինք նայի, այստեղ մենք շարժվում ենք լոկ բնազդաբար։

Խոսակցական նշանները բաժանվում են երեք տեսակի.

ա) Ձգայանիշ. նշաններ, որոնք արտահայտում են մի զգացմունք և բխում են ինքնաբերաբար, անկախ նույնիսկ խոսողի կամքից։ Դրանք արտադրողը բնազդն է, որ թարգմանվում է արտաքին դիմագծերի միջոցով (տես հավելված № 3)[1];

բ) Գործանիշ. նշաններ, որոնք գործողությունը կամ առարկան պատկերացնում են արտաքին ձևերով։ Որովհետև գործողությունների և առարկաների թիվը անհամար է, ըստ այմ էլ գործանիշների թիվը անհամար է (տես № 4 հավելվածը, ուր մենք հիշում ենք նրանցից կարևորագույնները)։

գ) Գաղափարանիշ.[2] շարժուձևեր են, որոնք խոսակցին հայտնում են մի որոշ գաղափար։ Այս նշանները տարբերվում են նախորդներից նրանով, որ իբրև պայմանական նշաններ՝ կարող են տեղից տեղ և ազգից ազգ տարբերվել, և հետևաբար հասկանալի են միմիայն նրանց, ովքեր սովորել են նրանց արժեքը.

---

[1] Ձգայանիշ նշանները համապատասխանում են անասունների զանազան ձայներին։ Լացը իր զանազան բարձրությամբ, սաստկությամբ, կամ մեղմությամբ, դառնությամբ, նույնիսկ արցունքի քանակով, ջերմությամբ կամ սառնությամբ որոշ զգացմունքի արտահայտիչն է։ Հաղը ուժեղ կամ տկար, թույլ, մեղմ և հիվանդագին, առողջ կամ բարձրաձայն, համաբաձակ կամ վախկոտ և այլն արտահայտում է հազացողի տարբեր վիճակները։ Այսպես նաև հիվանդի ճիչը, օգնության կոչը (հավաքը, ամանն) և նման տեսակի ձայնաբերությունները ունեն միայն երանգ, տոն, ամանակ անասունների ձայնի պես և դրանով էլ տարբերվում են մարդկային հոդավոր ձայնից։

[2] Գաղափարանիշ բառը կազմված գաղափարագիր բառի օրինակով։ Ինչպես որ գաղափարագիրը մի գաղափար արտահայտող մի գիր կամ մի տառ է, նույնպես և գաղափարանիշը մի ամբողջ գաղափար արտահայտող նշան է։

մինչդեռ առաջիններըը, իբրև դուռ հոդերանական երևույթ և երկրորդները՝ իբրև գործողության պատկերներ, նույնն են ամեն տեղ և ամեն մարդու համար էլ՝ հասկանալի (տես հավելված № 5, ուր տրվում է այդպիսի նշանների ըստ կարելության կատարյալ մի հավաքածո)։

Նշանացի խոսակցությունը ուրեմն մարդու ամենանախնական և ամենաբնական միջոցն է իր դաղափարները հայտնելու իր ընկերին։

Երկրորդ միջոցը, որով մարդ էակը կարող էր իր միտքը հայտնել իր նմանին, դանազան տեսակի բացագանչություններն են, ոմանք առանձին, ոմանք էլ ընկերացած ձեռքի կամ դիմագծային շարժուձևերով. ինչպես՝ ա՛խ, օ՛խ, փուհ, բյո՛ւհ և այլն և այլն, որոնք նույնպես գրեթե բնական և հետևաբար ընդհանուր են բոլոր լեզուներին։

Բայց նշանացի «խոսակցություններից», ինչպես և բոլոր երգեցողական, շոշափողական կամ այլ կարգի «լեզուներից» անկախ, ինքնուրույն, հատակ ու հարուստ լեզու է հոդաբաշխ ձայնով լեզուն, որ գտել և սեփականացրել է իրեն մարդը և այնպիսի սերտ կերպով, որ լեզու ասելով այսօր հասկանում ենք միայն ձայնական հոդավոր լեզուն։ [Ավելին, դա է այն միակ լեզուն, որով բացատրվում են բոլոր մյուս նշանների «լեզուները», և այս վերջիններըը գոյություն էլ չպիտի ունենային առանց հոդավոր ձայնական լեզվի։]

Բոլոր տեսակի նշանացի լեզուները, ինչպես շարժուձևերի, նույնպես և մեր կյանքում հնարված այբուբեն, թվանշան, հեռագրանիշեր, լապտերներով կամ դրոշակներով խոսակցություն, շեփորով հաղորդակցություն, կույրերի այբուբեն, գույների կամ ծաղիկների «լեզու» և այլն և այլն, ոչ մի ճիշտ հասկացողություն չպիտի տային, եթե չունենայինք նրանց հոդավոր լեզվով թարգմանություն։ Բացառություն են կազմում միայն խուլհամրերը, որոնք իրար հասկանում են միայն գործնական միջոցներով, պատկերային մտածողության հիման վրա։ Ի նկատի ունենալով հոդային լեզվի այս դերը, մենք էլ կսկսենք մանրամասն խոսել նրա մասին։

ԳԼՈՒԽ Գ

ԼԵԶՎԻ ԾԱԳՈՒՄԸ

Մարդկային լեզվի ծագման մասին կան զանազան վարկածներ։

Հները լեզվին տալիս էին աստվածային ծագում և նկարագրում այսպես. մարդը ի բնե անկարող թեկուզ մի բառ կազմելու՝ ստացավ ուղղակի աստծուց բոլորովին պատրաստ մի լեզու։ Աստված, ստեղծելով Ադամին, դրախտում խոսում է նրա հետ և ասում. «Ցամենայն ծառոց որ է ի դրախտիդ՝ ուտելով կերիցես. բայց ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի՝ մի ուտիցես ի նմանէ. զի յորում աւուր ուտիցես ի նմանէ՝ մահու մեռանիցիս» (Ծն. Բ. 16—17)։ Այնուհետև աստված նրա մոտ հավաքում է բոլոր կենդանիներին և թռչուններին և հրամայում անուններ դնել։ «Եւ ստեղծ ևս Տէր Աստուած ցամենայն գազանս վայրի և ցամենայն թռչունս երկնից. և ած զնոսա առ Ադամ՝ տեսանել զինչ կոչեսցէ զնոսա. և ամենայն շնչոյ կենդանւոյ, զինչ և անուանեաց Ադամ, այն անուն է նորա։ Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց և ամենայն թռչնոց երկնից և ամենայն գազանաց վայրից» (Ծն. Բ. 19—20)։ Սրանից հետո Ադամը խոսքը ուղղում է ապագա սերունդներին և մինչև անգամ աստվածաբանություն էլ է անում. «Այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց և մարմին ի մարմնոյ իմմէ. սա կոչեցի կին, զի յառնէ իւրմէ առաւ։ Վասն այնօրիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր և երթիցէ զհետ կնոջ իւրոյ և եղիցին երկուքեան ի մարմին մի»։ Սրանից հետո դալիս է օձի խոսակցությունը Եվայի հետ, Եվայի խոսակցությունը Ադամի հետ, և վերջն էլ՝ աստուծոյ խոսակցությունը երկուսի հետ։

Ադամի լեզուն շարունակվեց մինչև Սենաարի աշտարակաշինության։ «Եւ էր ամենայն երկիր լեզու մի և բարբառ մի ամենեցուն»։ Այստեղ աստված, մարդկանց չար խորհուրդը

ոչնչացնելու համար, խառնակեց նրանց լեզուները: «Եւ ասէ Տէր. Ահա ազգ մի և լեզու մի ամենեցուն... եկայք իջցուք և խառնակեսցուք անդ զլեզուս նոցա, զի մի լսիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ: Եւ սփռեաց զնոսա Տէր Աստուած անտի ընդ երեսս ամենայն երկրի... վասն այնորիկ կոչեցաւ անուն նորա խառնակութիւն, զի անդ խառնակեաց Տէր Աստուած զլեզուս ամենայն երկրի և անտի ցրուեաց զնոսա Տէր Աստուած ընդ երեսս ամենայն երկրի» (Ծն. ԺԱ. 1—9): Ահա, ըստ Աստվածաշնչի, իբր այսպես առաջացան աշխարհիս բոլոր լեզուները:

Սենաարի աշտարակաշինության առասպելը թեև առասպել, բայց ես այժմ գտնում եմ նրա մեջ մի հետաքրքիր պատմական հիմք:

Սենաարը Բաբելոնի շուրջը գտնված հարթ երկիր էր, այնտեղ, ուր Եփրատ և Տիգրիս գետերը միանում են: Բաբելոնը՝ մեծ քաղաք, համանուն պետության մայրաքաղաքն էր: Աշխարհակալության, գերեվարության, վաճառականության պատճառով այնտեղ էին հավաքված բազմազգի ժողովուրդներ, որոնցից հիշենք հատկապես սաորեատացիներ, բաբելոնացիներ, ասորիներ, արաբներ, եբրայեցիներ, փյունիկեցիներ, թեև նաև՝ եթովպացիներ և այլն: Այս բոլոր սեմական ժողովուրդները խոսում էին իրար շատ նման, բայց իրարից տարբեր լեզուներով: Այսօր էլ անգրագետ մի մարդ, եթե լսի այդ լեզուները, կզգա նրանց բացարձակ նմանությունը: Այն ժամանակ հավանաբար, գտնվեց մի իմաստուն, որ մտածեց, թե այդ լեզուները նույն ծագումն են ունեցել (նա առաջին «լեզվաբանն» էր աշխարհի). և այդ ծագման նույնությունը և հետագա տարբերությունը բացատրելու համար հնարեց Աշտարակի առասպելը, թեև ազդվելով բաբել «խառնակություն» (Ծն. ԺԱ. 9) բառի պատահական նմանությունից. Բաբելոնում մի մեծ աշտարակ եղել է, որ տեսել և նկարագրել է նաև Հերոդոտը:

Հին գիտուններից մինչև անգամ «որոշում էին», թե ո՞րն է այն առաջին լեզուն, որ Ադամը աստվածային հայտնությամբ ստացել էր և խոսում էր: Շատերը կարծել են, որ այդ լեզուն եբրայեցերենն է. մահմեդականները կարծում են, որ արաբերենն է: Սրանց կարծիքով՝ Ադամը գիտեր խոսել ամեն լեզվով. նա ուներ բազմաթիվ որդիներ, որոնք խոսում էին առանձին-առանձին լեզուներով՝ իրենց որդիների, այն է՝ Ադամի

Թոռների հետ։ Ադամը ամենքի հետ խոսում էր իրենց լեզվով, բայց դրախտում իր խոսած ընթացիկ լեզուն արաբերենն էր։ Երբ Ադամի որդիքը իրենց որդիներով ցրվեցին զանազան երկիրներ, իրենց հետ տարան նաև իրենց սեփական լեզուն։ Այսպես առաջացան եբրայեցերենը, ասորերենը և այլն, իսկ արաբերենը Շեց Եմենում (Կամուս. Քրք. Քրմ. Բ. 19)։

Տաթևացին (Գիրք հարցմանց, էջ 297—9) գտնում է, որ Ադամի խոսած լեզուն էր «քաղդեացին, որ է արապնա»։ Լեզուների խառնակությունը Բաբելոնում՝ եղավ հետևյալ ձևով.

«Հողմն հնչեաց և ցրուեաց զաշտարակն. զի մի՛ վերստեսցէ զմարդիկ։ Եւ ի հողմոյն յայնմանէ հոտ անուշութեան դրախտին բուրեաց ի նոսա և տեսիլ իմանալի տեսին և լուր իմանալի լուան. և յայնմանէ մոռացան զառաջինն և որպէս ի քնոյ զարթուցեալք ոչ լսէին զլեզուս միմեանց»։ Առաջին լեզվից հետքեր Շեացել են զանազան լեզուներում. ահա այս է պատճառը, որ «բան և բառ և անուն խառն գտանին բազում ազգաց. որպէս ասելն գաւազան, աւազան, սապոն, ամէն և կամ այլ ինչ»։ Սակայն Ադամի լեզուն ամբողջապես Շեց Եբեր նահապետի մոտ և չխառնակվեց. և այդ է եբրայեցերենը. «Վասն այն ասի Եբեր, թէ զառաջին լեզուն նա եբեր»։

Մեր մեջ էլ կարծված է, որ հայերենը եղել է Ադամի լեզուն և այս մասին տրված են պատճառաբանություններ և փաստարկություններ, որոնք թեև նախորդներից խելացի, բայց գիտական որևէ հիմքից զուրկ են[1]։

Ժ.Ը դարում ֆրանսիացի մի խումբ «լեզվաբաններ» կարծում էին, թե Ադամի լեզուն բրետոներենն էր (Brache, Gr. hist., 42, էջ 23)։ Բայց այս մասին ավելի ընդարձակ խոսելը լեզվաբանության պատմության գործն է։

Ավելորդ է ասել, թե լեզվին վերագրել ինչ-որ աստվածային ծագում կամ հայտնություն, համապատասխան չէ արդի գիտության պահանջներին։ Դա հին աստվածաբանների և նրանց համախոհ գիտնականների կարծիքն է, որ հիմնված էր մարդու և նրա կարողությունների հանկարծական ծագման տեսության վրա, և որ վերջացավ Դարվինի՝ տեսակների ծագման տեսությամբ։ Այս մասին ավելի երկար խոսել և վիճաբանել ավելորդ ենք համարում։

---

[1] Մանրամասն տե՛ս Ջամչեան, Պատմ. հայոց, Ա., 153—164։

Աստվածաբանների այս տեսության իրր թե հակառակ, բայց իրապես համապատասխան է գալիս մի խումբ հոգեբանների այն կարծիքը, թե մարդը բնապես խոսող էակ է։ Ըրնանը ասում է. «Խոսքը մարդու մեջ բնական է թե օրգանական արտադրության կողմից, և թե արտահայտության արժեքի կողմից։ Եթե ընդունում ենք, որ անասունը բնապես ունի ճիչը, ինչու՞ մերժենք, թե մարդը բնապես ունի խոսքը։ Ինչո՞ւ կարծել, որ մարդկային խոսքը անասունի ճչի նմանությունն է միայն։ Որքան որ անմիտ կլիներ մտածել, թե մարդը հնարեց աչքից՝ տեսողություն և ականջից՝ լսողություն, նույնքան անմիտ կլիներ նաև ասել, թե մարդը հնարեց խոսքը իրրև միջոց արտահայտության» (Renan, De l'origine du langage, 1864, էջ 90)... Ճնորք է ուրեմն երևակայել մի այնպիսի նախնական վիճակ, երբ մարդը չէր խոսում, և հետո էլ մի վիճակ, երբ խոսակցության գործածությունը ձեռք բերավ։ Մարդը բնապես խոսող է, ինչպես բնապես խորհող է. և այնքան քիչ փիլիսոփայական է վերագրել լեզվին կամավոր սկզբնավորություն, որքան խորհողության։ Ո՞վ կհամարձակվի ասել, թե մարդկային կարողությունները մարդու ազատ հնարավորություններն են։ Լեզու հնարելը այնքան անկարելի էր, որքան մի որևէ կարողություն հնարելը։ Լեզուն, լինելով մտածողության արտահայտիչ ձևը և նրա արտաքին հագուստը, պետք է որ թե լեզուն, և թե մտածողությունը ժամանակակից լինեն։ Ուրեմն, մի կողմից խոսքը մարդու և նրա մեջ գտնվող ուժերի գործն է, մյուս կողմից՝ ոչինչ չկա մտածված, ոչինչ չկա արհեստականորեն սարքված, ինչպես լեզվի, նույնպես և մտքի մեջ։ Ամեն ինչ մարդկային բնության ներքին ուժերի գործն է, անգիտակից և իրրև թե աստվածության կենդանի տալավորության տակ (էջ 91—92)... Ամեն տեղ աստված է թաքնված, այն անհուն ուժը, որ գործելով անհատական հոգու բացակայության կամ նրա քնած միջոցին, արտադրում է այս հրաշալի արդյունքները և արհամարհում է գիտությունը՝ հասկանալու ինչ որ արտադրեց բնությունը առանց ջանքի։ Ժողովրդի բանականությունն է ուրեմն լեզվի ստեղծիչ ուժը, այսինքն՝ ինքնակամ (spontané) բանականությունը։ Մորմրդածությունը դեր չունի այստեղ. լեզուները դուրս են եկել մարդկային մտքի կաղապարից բոլորովին պատրաստ... լեզուն, հենց իր երևալու օրից, օժտված էր իր բոլոր էական մասերով (էջ 99—100)... իր երևալու օրից նա այնքան

կատարյալ էր, որքան այն մարդկային միտքը, որ նել կայացնում էր (էջ 119). մարդկությունը երբեք առանց լեզվի չի եղել, լեզուն չի հնարված անխոսության մի երկար շրջանից հետո» (էջ 204).

Այս դատողություններից դուրս է գալիս այն եզրակացությունը, թե լեզուն մարդ էակի բնածին կարողություն է, այնպես, ինչպես մարդու խորհողությունը, լսողությունը, տեսողությունը և այլն։ Բայց այստեղ ձայն և լեզու գաղափարները շփոթված են իրար հետ։ Ճիշտ է, որ տեսողությունը աչքի բնածին կարողությունն է և լսողությունը՝ ականջի. բայց կոկորդի բնածին կարողությունն էլ ձայնն է և ոչ՝ լեզուն։ Ձայնը կամ ճիչը և կամ բացագանչությունը կարող են բխել ներսից, առանց նույնիսկ գիտակցելու. բայց լեզուն այդպես չէ, նա զանազան հոդավորյալ ձայների գումարն է, որին տրված է այսինչ կամ այնինչ նշանակությունը գիտակցաբար։ Այս երկուսը իրարից բոլորովին տարբեր գաղափարներ են. դրա համար էլ ձայնը կամ բացագանչությունը ամեն ազգի մեջ էլ նույնն է, որ և մանուկն էլ ունի. բայց լեզուն տարբերվում է ամեն տեղ։ Եթե լեզուն մարդուն բնածին լիներ, ինչու՞ այն ժամանակ համրը լեզու չպիտի ունենար։ Ինչու՞ մանուկը չպիտի հասու լիներ։ Կույրը չի տեսնում, որովհետև աչքը ջնասված է. խուլը չի լսում, որովհետև ականջը ջնասված է. բայց համրը, որի կոկորդը բնավ չէ ջնասված, չունի լեզու, այլ՝ միայն ձայն, ճիչ կամ բացագանչություն։ Համրը չի խոսում միմիայն, որովհետև խուլ է, այսինքն՝ զրկված է լսելու և սովորելու կարողությունից։ Սրանից հետևում է անհրաժեշտաբար այն, որ լեզուն բնածին հատկություն չէ, այլ սովորովի մի բան։ Գալով այն մտքին, թե մարդկությունը երբեք անխոս չի եղել, սրա մասին կտեսնենք ավելի հետո։

Լեզվի ծագման իրրև երկրորդ վարկած՝ պետք է հիշել զանազան փիլիսոփաների այն կարծիքը, որով լեզուն համարվում է մի բնազդ։ Այսպես է կարծում, օրինակ, Մաքս Մյուլլերը (Max Müller, Science of language, *էջ 386). *Բայց ինչ են ուզում հասկանալ այս բառով։ Բնազդը ժառանգական մի հատկություն է, որ նախնիներից հաջորդաբար փոխանցվում է եկող սերունդներին։ Եթե լեզուն էլ լիներ բնազդ, նա էլ ժառանգաբար պիտի անցներ սերունդից սերունդ, այնպես ինչպես մարմնական ու հոգեկան զանազան հատկություններ։ Մինչդեռ,*

ընդհակառակը, մենք տեսնում ենք, որ լեզուն ձեռք է բերվում միայն ուսման միջոցով։ Համրերը, որ նույն բնազդով օժտված պիտի լինեին, նույնպես պիտի ժառանգեին իրենց ծնողների լեզուն, եթե, իրոք, լեզուն բնազդական մի հատկություն լիներ (Steinthal, Der Ursprung der Sprache, Berlin, 1877, էջ 48)։

Բնազդը անդիտակից է. բնազդով գործողը չգիտե նպատակը, որին դիմում է, և միջոցը՝ որով դիմում է այդ նպատակին։ Ըստ այսմ՝ մենք չենք կարող ասել, թե լեզուն բնազդ է, որովհետև մենք գիտենք թե լեզվի նպատակը, և թե նրա գործածելու ձևը։ Բնազդը միատեսակ և ընդհանուր է յուրաքանչյուր կենդանական տեսակի. աշխարհիս բոլոր կողմերում էլ սարդերը միատեսակ ոստայն են հյուսում. իսկ լեզուն, նույնիսկ այն դեպքում, երբ միայն առանձին ընտանիքներ են խոսում, իրարից տարբեր ձևեր կարող են ներկայացնել՝ ընդհանուրին զուգընթաց։

Լեզվի ծագման երրորդ վարկածն այն է, թե մարդկային լեզուն կենդանիների լեզվի զարգացման մեկ վիճակն է։ Այս ենթադրության կողմնակից էին դարվինականության առաջին հետևորդները, որոնք, հենվելով այն փաստի վրա, որ մարդը կապիկների մի տեսակի շարունակությունն է, ենթադրում էին, թե լեզուն էլ նույն կենդանական լեզվի շարունակությունն է։ Վերջերս գերմանացի Բաստիան Շմիդտը ձայնագիր մեքենայի վրա առնելով անասունների հանած զանազան ազմուկները և համեմատելով նրանք մարդկային ձայնի նկարների հետ, կարծում է, որ անասունների ձայնը մարդկային ձայնի շատ նախնական մի վիճակն է ներկայացնում, և թե, ուրեմն, անասունները գտնվում են բառակազմության նախնական աստիճանի վրա։

Այս խնդիրը ավելի առաջ տարավ Գեորգ Շվիդեցկին (տես վերը՝ էջ 40)[1], որ ուզում է հաստատել, թե մարդկային լեզվի բառերը անասունների գործածած բառերի ուղղակի շարունակությունն են։ Աֆրիկայի բուշմեններն ունեն շատ բառեր, որոնք, նրա դատողությամբ, նույնն են գորիլաների և ուրիշ կապիկների լեզվի հետ. օրինակ՝ «վտանգ կա, զգույշ կաց» նույնն է բառնուն ts-ts-ts ձայնի հետ. շատ «հիմնավորելով» ցեղերի մոտ

[1] Գրել է մինչև անդամ՝ Do you speak chimpanzee? (London, 1932) և Schimpansisch, Urmongolisch, Indo-germanisch (Leipzig, 1932) անունով գրքերը։

իրար բարև տալու համար անգայինն մի խռնչոց են արձակում. այսպես են նաև կապիկը և կոկորդիլոսը։ Բորնեոյի բնակիչների լեզվով hu նշանակում է «վագր», որ օրանգուտանի լեզվով էլ միևնույնն է։ Գորիլաների gnak «ոսկոր» բառը անցել է նեանդերթալյան մարդուն, որ գործածել է այդ բառը իր սիրած նյութերի, հատկապես ուտելիքի համար, որից առաջացել են գերմ. knochen «ոսկոր», անգլ. knock «զարնել», crack «կոտրել» և այլն։ Շիմպանզեի huil «քնել, քուն ունեմ» բառից առաջանում են գերմ. Höhle, անգլ. hole «ծակ, փոս, քարայր», ուր քնում էր նախամարդը։ Նույնից է նաև լտ. leo, ֆր. lion «առյուծ» և այլն, որ քարայրաբնակ մարդու մեծագույն թշնամին էր։ Կապիկների ur «տաք է» բառից առաջանում են լտ. uro «այրել» և ruo «հարձակվել, առաջ նետվել»։ Շիմպանզեի ur-ur-ur «արևը ծագեց» բառից առաջանում է լտ. aurora «արշալույս» և այլն։

Այս համեմատությունները, իհարկե, պատահականության արդյունք են և չեն կարող իրրև հիմք ծառայել այն գաղափարի համար, թե մարդկանց լեզուն կենդանիների «լեզվի» զարգացած մի վիճակն է։ Անասունների «լեզուն» երկու կողմ ունի. առհասարակ նա զգայական (affectif) է. բայց կան նաև այնպիսի ձայներ, որոնք ուրիշ անասունների վրա ազդելու համար են (իբր թե՝ հրամայական)։ Զգայական ճիչերը համապատասխանում են միայն մեր բացագանչություններին, և նրանցից չէն կարող մարդկային հոդավոր բառեր դուրս գալ, բայց հրամայական ձայները բանական էակը կարող էր բառերի վերածել։ Այս կետը կարոտ է դեռ լուրջ ուսումնասիրության։

Ավելի սովորական և ընդունված է այն տեսությունը, թե լեզուն առաջացել է բնաձայն բառերից։ Մարդկանց առաջին բառերը եղել են բնության ազմուկների նմանությամբ կազմված ձայներ։ Նախնական մարդուն բառակազմության իբրև օրինակ են ծառայել թռչունի երգը, անասունի ճիչը, որոտման ձայնը, ծովի շառաչը, գետի խոխոջը, առվի կարկաչը, քամու սլվլոցը, տերևների խշյունը և այլն։ Դեռ այսօր էլ մանկիկը, ինչ ազգի և ցեղի էլ պատկանի նա, նոր լեզու ելած ժամանակ ստեղծում է բնաձայն բառեր. օրինակ՝ հայոց մանկական բարբառով ընկնելը կոչվում է փաթ կամ թումփ, շոգենավը կամ շոգեկառքը՝ փոֆփոֆ, կտրել՝ խրր-խրր, ուտելը՝ ճամփ, լողանալը կամ լվացվելը՝ չոմփ-չոմփ և այլն։ Նույնիսկ մեծերը

շատ անգամ հնարում են այսպիսի բնաձայն բառեր։ Մադագ. օվկիանոսի կղզիների ցեղերը ֆրանսիացիներին անվանում են oui-oui, որ առնված է ֆրանս. oui «այո» բառից (John Jaques, անդ, էջ 157), Ավստրալիայում՝ wi-wi, Նոր-Կալեդոնիայում՝ oui-men (Jespersen, Language, էջ 399)։ Պոլսի հայոց ժողովրդական լեզվով կամ ծածկալեզվով էլ ֆրանսիացին կոչվում է պիտոն, որ հնարված է Սևաստոպոլի պատերազմի ժամանակ, երբ ֆրանսիացի զինվորների մի զորաբանակ եկած էր Պոլիս. ֆրանսիացիները իրար կանչելիս ասում են dis donc! «ասա ուրեմն». և ժողովուրդը այդ հաճախ լսված ձևը գարձրել է ընդհանուր անուն. ճիշտ նույն ձևով առաջացել է ջավայերեն orang-dee dong (orang «մարդ»), Ամերիկայում՝ ding-dong, Իսպանիայում՝ didones, որոնք նշանակում են «ֆրանսիացի»։

Փոնգտալը Բրազիլիայի տակունա (Tacuna) ցեղի լեզվով կոչվում է haiču, որ նույնն է Պոլսի հայոց ճեփչու համանիշի հետ։ Նախամարդը կարողացել է, ուրեմն, իրար հետ կապ չունեցող բոլորովին օտար բառերի մեջ մի նմանություն գտնել և ըստ այսմ առեղծել մի բնաձայն բառ։ Օրինակ՝ հարավ-աֆրիկյան բասուտո (Bassutos) ցեղի լեզվով պալատահաններբը կոչվում են ntsi-ntsi. թնչ բառ է սա.—ասվում կա մի սեռակ ճանճ, որ մարդ շուրջը պտտվելիս արձակում է այսպիսի բզզոց. սամիկները պալատահաններին նմանեցրել են այդ ճանճերին, որովհետև ճանճի պես պտտվում են իրենց դվխավորի շուրջը, և սրա համար էլ տվել են նույն բզզոցի անունը (John Jaques, անդ, էջ 158)։

Բնաձայնական սեռությունը թեև շատ տարածված, բայց, այնուամենայնիվ, ընդհանուր չէ։ Նրան կողմնակից են եղել ավելի մեջին շրջանի լեզվաբանները։ Նորերը համակիր չեն նրան և չեն ընդունում։

Եվ արդարև, թնչ է հասկացվում բնաձայն բառ ասելով։ Ամեն լեզվի մեջ էլ կան բնաձայն բառեր. այս կողմից հարուստ է հատկապես հայերենը, ինչպես՝ շշել, ճչալ, մրմնջալ և այլն։ Կան և ուրիշ կարգի բառեր, ինչպես՝ շրախկ, ճլոմփ, բրխկ և այլն. աքլորի կանչը կոչվում է ամեն տեղ էլ նման բառերով, ինչպես՝ ռուս. кукареку, ֆր. coquerico, անգլ. cock-a-doudle-doo, դան. kykeliky, շվեդ. kukeliku, գերմ. kikeriki, հյ. կուկուլիկու և այլն։ Բայց այս բոլորը լեզվի հիմնական բառերը չեն և «բնաձայն» են հենց նրա համար, որովհետև ներկայաց-

նում են բնության զանազան ձայները։ Բնաձայն բառերի մի երկրորդ խումբ կազմում են ագռավ, կկու, հոպոպ, ճնճղուկ, բու, ճայիոյել և նման բառեր, որոնցից մի քանիսը գրեթե բոլոր լեզուների մեջ էլ բնաձայն են։ Սիրամարգը գրավիդյան լեզուների մեջ կոչվում է marak, որ կազմված է rak ձայնից. սիրամարգը արթնանում է ավելի շուտ, քան աքլորը, և սկսում է կոշտ ձայնով կանչել rak-rak. այստեղից էլ նույն լեզուները կազմել են հիշյալ բնաձայն բառը։ Գարսկերենում խմելու ժամանակ ներս քաշված շունչը կոչվում է huft. կասկամ թռչունը գիշերը մինչև առավոտ կանչում է hu-hu և որա համար էլ ալբս. կոչվում է hūgūyak—հու-աս-իկ։

Բայց այս բառերն էլ լեզվի հիմնական մասի հետ գործ չունեն։ Կան նաև կատակով կազմված բառեր, ինչպես Գոլսի հայոց տիտոները «Ֆիրանսիացի» կամ Աղաղ օվկիանոսի կղզիների ցեղերի oui-oui-ն, բայց սրանք էլ լեզվի հիմնական մասը չեն։ Լեզվի հիմնական մասն են կազմում ես, դու, ճա, ճայր, մայր, եղբայր, մի, երկու, երեք, ցորեն, գարի, ջուր, պտուղ, ճաց և այլն, որոնք մեր կենսական պահանջներն են ներկայացնում։ Աշխարհիս մեջ չկա մի լեզու, որ այս կարգի բառերի համար մի որևէ բնաձայն ձև հորինած լինի։ Նվ իրոք, ինչպե՞ս կարելի է որևիցե բնաձայն ձևով ներկայացնել մայր, ճաց, մի կամ երկու և այլն գաղափարները, այսինքն՝ առարկան կամ հատկանիշը, ձևը, համը, հոտը և այլն, ներկայացնել ձայնով, ուրիշ խոսքով՝ մի զգայարանի դերը տալ մի ուրիշին և հատկապես աչքի տեսածը տալ ականջին։ Ձայնը առարկայի ձև չէ և չի կարող լինել։ Նույնիսկ այնպիսի առարկաներ, որոնք կարող էին և գուցե պետք էին բնաձայնով ներկայացվել, ոչ մի լեզվի մեջ էլ բնաձայն չեն։ Արդարև, կան լեզուներ, որոնց մեջ բնաձայնով են կոչում ջուրը (չերքեզ. ha), կամ կատուն (չին. maô, և կամ մի ուրիշ անուն։ Բայց սրանք բացառիկ և պատահական երևույթներ են։ Ո՞ր լեզվի մեջ ձին կոչվում է ճոռ կամ էշը՝ չո և այլն։ Ո՛չ մի։ Թողնում ենք խոսել վերացական բառերի մասին, որոնց համար ավելորդ է նույնիսկ մտածել, թե որևէ բնաձայնով կարելի է արտահայտել։

Կան բառեր, որ առաջին հայացքով բնաձայն են թվում. բայց երբ ուսումնասիրենք մի քիչ ավելի խորը, կտեսնենք, որ բնաձայնությունը կորավ։ Օրինակ՝ ամեն մարդ էլ կարող է կարծել, որ հյ. կառք բնաձայն է և ներկայացնում է անիվների

կո-կո թավալումը։ Բայց կառք փոխառյալ է լատին. carrus ձևից, սա էլ փոխառյալ է գալլերի carros «քառանիվ կառք» բառից (տես Ուրմ. բառարան)։ Սղոց թվում է առաջին հայացքով բնաձայն, իբր թե սղոցման սղ-սղ ձայնից առնված. բայց բավական է միայն հիշել, թե ղ հին հայերենում հնչվում էր լ, որով սղոց դառնում է սլոց և այլևս ջնջվում է սղ-սղ բնաձայնի ենթադրությունը։

Բնաձայնական տեսության շարունակությունն է կազմում լեզվի «ներքին զարգացողական» տեսությունը[1]։ Այս տեսությամբ լեզվի իբր սկիզբ դրվում է բնաձայն բառը, որ հետո կրելով բազմաթիվ ձայնական փոփոխություններ, ինչպես և իմաստից իմաստ անցնելով՝ ձևակերպել է մարդկային լեզուն։ Օրինակ առնենք հունարենի ps նախաձայնը.—p կարող է հաճախ փոխանակվել k ձայնով, ուստի ps դառնում է ks. այս երկուսը ծագում են sp, sk ձևերից. այսպիսով sp, sk, sch, sph նախաձայններն էլ նույնանում են նրանց հետ։ Հաճախ k ընկնում է, որով խմբից մնում է միայն s, բայց կարող է նաև s ձայնն ընկնել, որով վերիններից կմնան ch, g, k։ Սրանց կարող է ավելացվել n ձայնը, այնպես որ ps=kn, chn, որից k,ch ընկնելով՝ մնում է n=ps. որովհետև նկատված է, որ սանսկրիտի kš խմբի դեմ հունարենը տալիս է kt, chth, gd և pt, phth, bd, ուստի այս ձայնախմբերն էլ ծագում են նախնական ps-ից։ Հաճախ sp խմբից p ձայնն էլ է ընկնում, կամ qv դառնում է t, որով st համապատասխանում է ps խմբին, և ps-ի դեմ կարող ենք գտնել նախաձայն th կամ պարզ մի ձայնավոր։ Դարձյալ thr, thl, tr, dr = ps, ինչպես նաև՝ t = ps։ Ինելով sm իբր երկրորդ ձև sp խմբի, s-ի անկմամբ առանում ենք պարզապես m, որով m և th, m և k իրար համապատասխան են դուրս գալիս, բայց այստեղ էլ վանկի մեջ բաղաձայնի անկումով կարող ենք գտնել միայն ձայնավոր։ Այսպիսով, ահա, նախկին արմատական ձայնը կարող է բոլորովին փոխվել և մինչև իսկ անհետանալ, որով բնաձայնի և նրա հաջորդ վիճակի կամ վիճակների մեջ ոչ մի նմանություն չի մնա։

Ինքնին հասկանալի է, որ նույնիսկ եթե ձայնական այն փոփոխությունները, որոնք այնպես կամայական են, ուղիղ լի-

[1] Այս «տեսության» հիմնադիրն է Գայգերը (Geiger). մանրամասն բացատրությունը տե՛ս Steinthal, Der Ursprung der Sprache, Berlin, 1877, էջ 146—299, հատկապես էջ 241։

նեին, ընդունելի չպիտի լիներ այս տեսությունը, քանի որ հիմնված է բնաձայնական տեսության վրա, որի արժեքը տեսանք։ Լեզվաբանները վերակազմել են զանազան լեզուների նախնական ձևերը, և նրանց մեջ էլ գտնում ենք ես, դու, ես, մի, ճիճգ, տասը... բառերը, որոնք բնաձայն չեն և չեն էլ կարող լինել, որովհետև չի կարելի որևէ ձայնով, օրինակ, «հինգ» գաղափարը պատկերել և այլն։

Բնաձայնական տեսության ամենի թույլ պատկերն է ներկայացնում բացագանչական տեսությունը. իբր թե մարդկային առաջին բառերը առաջացել են ցավից կամ ուրիշ ուժեղ զգացմունքներից արձակված բացագանչություններից։ Այդ զգացմունքները այնպես են, որ իրենց հետ ընկերացնում են մի ձգտում՝ քթից կամ բերանից օդի մի հոսանք դուրս վանելու, որ ձևացնում է զանազան ձայներ. ինչպես՝ անախորժ հոտի համար՝ փի՜չ, համեղի մի բանի համար՝ օ՜ֆ, զարմանքի համար՝ օ՜հ, ցավալի մի բանի համար՝ ա՜խ և այլն։ Բայց այս տեսությունն էլ անբավարար է, որովհետև բացագանչությունները հանկարծական արտահայտություններ են և լեզվի հիմնական բառերի հետ գործ չունեն. նրանք իրապես անկախ հոդավոր ձայների պատկերն էլ չունեն. նրանք կամ միևնույն ձայներն են, զանազան տոներով արտաբերված, ինչպես՝ ա՛, ա, ա՛՛, ա՛, և այլն, և այլն, կամ կափկափյուններ, լեզվի շարժյուններ են. հաճախ չի կարելի թղթի վրա արձանագրել այդ ձայները մեր հոդավոր ձայներով և ձայնարկությունների գրավոր ձևը բնավ էլ համապատասխան չէ մեր արտասանության։ Բառի և ձայնարկության մեջ շատ մեծ տարբերություն կա. ձայնարկությունը լեզվի բացառություն է. բառը գործ ենք ածում, երբ խոսել ենք ուզում. ձայնարկությունը գործ ենք ածում, երբ խոսել չենք ուզում (Jespersen, անդ, էջ 415)։

Բնաձայնական տեսությանը մոտենում է նմանաձայնական տեսությունը, որ առաջարկել են շատերը։ Այս տեսության համաձայն որոշ ձայներ ունեն բնորոշ նշանակություն, և արմատները, որ մեզ համար անլուծելի տարրեր են, կազմված են այդ ձայներից և ներկայացնում են այդ ձայների նշանակության գումարը։ Այսպիսի մի «տեսություն» ունի մեր մեջ ոմն Սերովբե Թագվորյան («Փորձ լեզվագիտական մի դրության, յորում բովանդակի բացատրութիւն արմատոց այբուբենի տառից, պատշաճեալ հայերէն լեզուի», Տփխիս, 1881 և նույնը

ռուսերեն ու ֆրանսերեն հրատարակությամբ)։ Հայերեն տառերին տված նրա արժեքներն ու բացատրությունները համառոտակի տալիս ենք հավելվածում (№ 6)։

Այսպիսի մանկական մտածմունքներ մեզ մոտ չեն միայն հրատարակված. կան նաև եվրոպական գրականության մեջ. օրինակ՝ Կամիլ Մոնիե (Camille Monier) ֆրանսիացին իր Le langage «Լեզուն» (1903) աշխատության մեջ տալիս է այն տեսությունը, որ իբր կոկորդային ձայներին հաճելի, ախորժելի նշանակություններ են հատկացված, իսկ շրթնայիններին անախորժ, և տալիս է օրինակներ, որոնք, ասկայն, հակառակ են իր տեսության. ինչպես lisse, doux ախորժելի բառեր են (բայց արմատներն ունեին k.—lisk-, dulc-). amer <լ. amarus անախորժ բառ է (բայց արմատն ուներ քմային r և ոչ թե կոկորդային. Dauzat, La philosophie du langage, 1912, էջ 79)։

Ռուսերենում իբր թե l ցույց է տալիս դանդաղություն, հարթություն, r միացած ուրիշ բաղաձայնների հետ՝ ճայթյուն, հարված, t արգելք, խոչընդոտ և այլն (P. Шор. Язык и общество, 1926, էջ 42)։

Նման գաղափարներ ունի նաև Եսպերսընը իր Language, աշխատության մեջ (էջ 402 և այլն), ուր, օրինակ, i համարվում է «փոքրության» գաղափարի հատկանիշ ձայն. բայց ինչ անենք հյ. mի, որ նշանակում է «մեծ», կամ լազերեն didi «մեծ, շատ», վրաց. didi «մեծ» և այլն։

Նմանաձայնական տեսությունը նոր չէ. նրա ամենահին ներկայացուցիչն է Պլատոնը, որ 4-րդ դարում մ. թ. առաջ քարոզում է այս տեսությունը իր Κρατύλος—Տրամախոսության մեջ։ Սոկրատի հետ Պլատոնը գտնում է, որ r ձայնը նշանակում է շարժում (ինչպես՝ հն. ῥεῖν ῥοή), i ձայնը նուրբ տարրեր, ph, ps, s, z ձայները նշանակում են ցնցում, հուզում, ուռչել. b, t՝ կապվել կամ մի տեղում մնալ. l ձայնը՝ ողորկ, հարթ, սահուն. gl՝ փակչիլ, կպչուկ և այլն։ Ստոյիկյան փիլիսոփաները էլ ընդունել էին այս տեսությունը։ Նորերից Լայբնիցը, Հումբոլդտը, Յակոբ Գրիմմը ընդունեցին և պաշտպանեցին այս տեսությունը։ Լայբնիցը ևս, Պլատոնի նման, ընդունում է, որ r ուժեղ շարժման գաղափարն է ցույց տալիս և սրանից են առաջանում հն. ῥέω, գերմ. rinnen, rüren, ֆր. rutir, Rhenus, Rhodanus, Eridanus, Rura գետերի անուննները, գերմ. rauben, լտ.

rapere, գերմ. Rige, Keihe, լտ. regula, regere, գերմ. Reck «հակա», Reich, ֆր. riche «հարուստ» և այլն։

Նույն ձայնը նաև՝ աղմուկ, պատառել. ինչպես լտ. rumpere, հն. ῥήγνυμι, ֆր. arracher, իտալ. straccio։ Ընդհակառակը՝ l քնքուշ բառերի նշան է. ինչպես՝ գերմ. leben, laben, lieben, lind, laufen, legen, լտ. lenis, lentus և այլն. սրանց հետ դքտնում ենք նաև lion «առյուծ», lynx «լուսան», wolf «գայլ», որոնք, սակայն, քնքուշ բառեր չեն։ Այդ նրանից է, որ իբր մեկը, տեսնելով այդ կենդանիներին, կանչել է իր ընկերոջը՝ «փախիր» (Lefèvre, Race and language, London, 1894, էջ 31—33)։

Այս տեսության ավելի մեղմ տեսակն է այն, որ առաջարկում է Կալեն (Callet, Le mystère du langage, Paris 1929)։ Ըստ այս հեղինակի բոլոր մարդկային լեզուները առաջացել են n, s կամ f, m և r—k—g ձայներից. առաջինը ունգից դուրս եկած բնական մի ձայն է, որ արտաբերում է վայրենին, երկրորդը սուլոց է, երրորդը՝ բառաչյուն, չորրորդը՝ կոկորդի խռնչոց։ Այս բոլորը բնականից հատուկ են մարդուն։ Այս բոլորը նշանակեցին նախ՝ ծնող, առամ, հետո՝ մարդ, կծել, ուտել, ամեն տեսակի ուտելիք, հետո՝ թուք, չուր, ձեռք, ոտք և այլն։ Եվ այսպես այս 4 ձայնից առաջացան բոլոր լեզուների բոլոր բառերը։ Հեղինակը տասնյակ լեզուներով բերում է բառեր, որոնք ունեն այս ձայներից մեկն ու մեկը և ներկայացնում են նույն կամ նման նշանակություններ։

Ցույց տալու համար, թե նմանաձայնական տեսությունը անհիմն մի վարկած է, բավական է նկատել, թե միևնույն լեզվի մեջ միևնույն ձայնը նույնիսկ բոլորովին հակառակ դաղափարներ է արտահայտում. օրինակ՝ հյ. սուրբ և սատանա, սեր և սուր, սահեցնել և սպանել, սառչգ և սուտ, սահանել և սառանալ, սփռել և սպառել, սավար և սավեր, սեգ և սուգ և այլն, և այլն։

Այս ողորմելի տեսության վրա ավելի երկար խոսելու կարիք չենք զգում։

[Դրանից շատ առաջ չի անցնում նաև Ն. Մառի տեսությունը։ Մառը կարծում էր, թե ձայնական հոդավոր լեզուն առաջացել է մարդկային հասարակության զարգացման բարձր աստիճաններում, մոգական արարողությունների համար։ Լեզուների բառերը առաջացել են իբր նախնական չորս ձայնա-

կան տարրերից՝ Sal, Ber, yon, Rou[1], նրանց ձայնական փոփոխություններով։ Մառն էլ ճիշտ այնպես է վարվում այդ չորս տարրերից նոր բառեր հանելու համար, ինչպես Գայգարը, որի մասին վերը խոսվեց։ Եթե ընդունենք, որ ձայների կամայական փոփոխություններով կարելի է հասնել ամենանախնական վիճակին, ինչ որ ճիշտ չէ, ապա մենք կարող ենք բոլոր լեզուների բառերը հանել ոչ թե չորս, այլ մեկ տարրից, նույնիսկ մեկ հնչյունից։ Բայց այդ կլինի ոչ թե գիտություն, այլ միայն լեզվաբանական ձեռնածություն։ Ահա թե ինչու Ի. Վ. Ստալինը միանգամայն պարզ կերպով ասում է, թե Մառի տարրային տեսությունը «մղում է լոկ այն բանին, որ պառկեն տաք տեղ և սրճի մրուրի մեջ գուշակություններ անեն տխրահռչակ չորս տարրերի շուրջը» (Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, 1952, էջ 66)։]

Սամուել Բուտլերը[2] կարծում է, թե լեզուն նախապես եղել է մի խմբակի գաղտնի սեփականությունը, ինչպես մեհենագրերը սեփականություն էին եգիպտական քրմերի։ Սա նույնն է Մառի այն սխալ տեսության հետ, թե լեզուն հորինվել է մոգերի կողմից՝ մոգական արարողությունների համար։ Ուստի և այս մասին ավելի երկար խոսել ավելորդ է։ Պետք է հիշել նաև ամանց այն կարծիքը, թե լեզուն առաջացել է նախնական փաղաքշական բառերից, ինչպես՝ մամա, պապա և այլն։

Այս կարծիքն էլ գրեթե բնաձայնական տեսության ձևափոխությունն է և, այսպես ասած՝ անցման մի շրջան՝ նրա և վերջնական տեսության, որ պիտի տանք հետո։ Սակայն նկատելի է, որ փաղաքշական բառերը ինքնին գոյություն չունեն և միշտ էլ առաջացած են նախավոր մեծ բառերից, հարմարեցնելու համար մանկական բերաններին։ Այսպես՝ մամա բառը չկար նախքան մայր բառի առեղծումը. Գոլսի մանկական պաճուպաճ «պահել» կամ մեզ մոտ՝ մանկական չաշայ «թեյ» բառերն առեղծվել են պաճել, չայ բառերից հետո և այլն։ Այս տեսությունն էլ, ուրեմն, անճիշտ ենթադրություն է։

Կա վերջապես մի ուրիշ վարկած, որ ասում է, թե լեզուն առաջացել է լսողական շարժուձևերից (акустические жесты,

---

[1] Այդ «տարրերը» հանում էր սարմացի, իբեր, յաֆիացի, էտրուս ցեղանուններից.—հինը, նախնականը՝ նորագույնից!!!

[2] Wells, The outline of history, I, էջ 150։

gestes acoustiques)։ Բնականից մարդը սովորություն ունի իր զգացմունքները արտահայտել զանազան շարժուձևերով. այդ շարժուձևերի նշանակությունը զորացնելու համար սկսեց նրանց ընկերացնել՝ զանազան հոդավոր ձայներ, որոնք կարելի է կոչել լսողական շարժումներ: Ավելի հետո ձևական շարժուձևերը չեզոքացան և լսողական շարժուձևերը զորանալով դարձան բառ (Grègoire, Petit traité de linguistique, 1923, էջ 157)։ Անգլիացի Ռիչարդ Պեջետը (Rechard Paget) լեզվի ծագումը ենթադրում է այն ավել կամ պակաս ավտոմատիկ ձայներից կամ ձայների բաղադրություններից, որոնք առաջ են եկել կոկորդի մեջ՝ երեսի զանազան շարժուձևերի հետևանքով, ինչպես, օրինակ, բերանի բանալն ու փակելը։ Շատ բառերի ծագումը նա բացատրում է այս ձևով։

Բայց այս ենթադրությունն էլ տանում է մեզ նախորդ կարծիքներին. այդ «լսողական շարժուձևերից» առաջացած բնաձին ձայները հանգում են կամ Ռընանի բնական և կամ մյուսների բնազդական տեսության։ Իսկ եթե այդ «լսողական շարժուձևերից» առաջացած ձայները համարենք բնաձայն, այն ժամանակ էլ կհասնենք բնաձայնական տեսության, որ նույնպես ընդունելի չէ։

Սրա հետ նույն է գրեթե Վունդտի (Wundt) տեսությունը լեզվի ծագման մասին (տես նրա «Völkerpsychologie, I հա., բ. մաս, էջ 603—9)։ Վունդտը սկսում է այն կետից, որ բանականության և լեզու անբաժան և միասին են. մեկը մյուսից առաջ կամ հետո չէ. մարդ իր միտքը արտահայտելու համար դիմել է նախ «արտահայտչական շարժումների» (Ausdrucksbewegungen), որոնք դարձել են «միմիկական շարժուձևեր» (Geberde [geste]). այս միմիկական շարժուձևերը իրենց հետ բերել են միմիկական ձայն (Lautgeberde), որից առաջացել է հոդավոր ձայնը, որ է լեզուն։

Այս բացատրությունը, որ իրապես նախորդի հետ նույնն է, բավարար չէ մեզ համար։ Եթե նույնիսկ ընդունելու լինենք, թե լեզուն բանականության անբաժան մասն է և շարժումը լեզու է, որ միանգամայն սխալ է, ապա պետք է դարձյալ հարցնել, թե ի՞նչպես եղավ, որ շարժումը կամ միմիկան և կամ, առ առավելն, միմիկային ընկերակցող ձայնը հոդավոր ձայնի վերածվեց և այս կամ այն գաղափարի հայտարարը դարձավ։ Այս մասին Վունդտը ոչ մի բացատրություն չի տալիս։

Լեզվի ծագման մասին ամենանոր, բայց ամենատարօրինակ կարծիքն է հայտնում Եսպերսընը (Language, 1925, էջ 429—442), որ կարող ենք համառոտել հետևյալ ձևով.—Ելնելով այն իրողությունից, որ 1) նոր լեզուները ներկայացնում են մի պարզ վիճակ, մինչ հները բարդ ձևեր ունեն (օրինակ՝ դրբ. սիրեցից, հարց=աշխ. պիտի սիրեմ, հայրերի), 2) նոր լեզուները վերածված են ավելի կանոնավորության, մինչ հին լեզուները ունեն շատ անկանոնություններ, 3) հին լեզուները ավելի երգեցողական, ներդաշնակ ու բանաստեղծական են, մինչդեռ նորերը՝ ավելի տրամաբանական,—և հին լեզուների այս պատկերը դեպի է՛լ ավելի հինը տանելով, գտնում է, որ մարդկության առաջին լեզուն պիտի լիներ մի երգ՝ բաղկացած անկանոն ու անկարգ ձայների մի խճողումից, նման սիրահար կատուների երգին՝ կղմինդրների վրա, և կամ սոխակի սիրային դայլայլիկներին։ Այդ երգերը ոչ նախադասություններ էին կազմում, և ոչ բառ. ոչ մի քերականություն էլ չկար. արտահայտվում էր միայն զգացմունք։ Օրինակ՝ սիրահարները իրար նայելով երգում էին hey, ho, hey nonino կամ, թշնամու դիակի վրա պարելով՝ քաջերը երգում էին tarara-boom-de-ay! որ պիտի նշանակեր «գետի մյուս եղերքի սարսափելի թշնամին սպանվեց» կամ «մենք սպանեցինք գետի մյուս եզրի սարսափելի թշնամուն», «հիշում եք, ինչպես սպանեցինք նրան» և կամ ուրիշ նման իմաստներ։ Ընկերները նկատեցին սիրահարների այդ երգը և սիրահարին կոչեցին „hey և ho և hey-nonino“, որով զգացմունք արտահայտող աննշանակ ձայների խումբը դարձավ մարդու հատուկ անուն։ Եվ ինչպես որ այժմ էլ հաճախ պատահում է, նույն հատուկ անունը հետո դարձավ հասարակ անուն՝ որևէ առարկայի համար։ Հետո այդ հասարակ անուններին վերջին վանկը կտրելով՝ դրանից մասնիկ և վերջավորություն շինեցին և դրանով էլ կազմեցին քերականությունը։ Ուրեմն լեզվի հորինվածությունը ներկայացնում է հետևյալ շարքը.—նախ զգացում արտահայտող մի երգ, հետո՝ դրանից ստացված հատուկ անուն, հետո՝ հասարակ անուն, հետո՝ մասնիկ և վերջավորություն։

Այնքան ողորմելի է այս ենթադրությունը,—թեև մի նշանավոր լեզվաբանի տեսություն, որ ավելորդ է մինչև անգամ քննության առնել այն և քեր ու դեմ բացատրություններ տալ դրա մասին։

Լեզվի ծագման մասին միակ ճշմարիտ տեսակետն այն է, որ լեզուն անհրաժեշտության պահանջով ստեղծվել է մարդու կողմից և առանց որևէ կապակցության բառի և առարկայի միջև։

Այս կետը լավ ըմբռնելու և ճիշտ կշռադատելու համար մենք կարող ենք առաջնորդվել երկու ճանապարհով. տեսական և գործնական։

Տեսական ճանապարհն այն է, որ քննենք, թե մտածողությունը, որ լեզվի հետ սերտորեն կապված է, ժամանակի կողմից ինչ կապ ունի նրա հետ։ Պատասխանը երեք է. կամ մտածողությունը լեզվից առաջ է, կամ մտածողությունը լեզվից հետո է, և կամ մտածողությունը և լեզուն միաժամանակ են մարդու մեջ։

Դ գլխում մանրամասն քննելու ենք այն խնդիրը, թե լեզուն մտածողությունից առաջ է, թե հետո. և պիտի տեսնենք, թե մեծ անհեթեթություն է մտածել, որ լեզուն ավելի առաջ է քան մտածողությունը. սրա ակնհայտ ապացույցն է համրը։ Համրը չունի ձայնական լեզու, բայց ունի մտածողություն։ Չի կարելի երևակայել մի այնպիսի էակ, որ ունենա լեզու, առանց մտածողություն ունենալու, և խոսի։ Նույնիսկ թութակը չի խոսում իրանից, այլ կրկնում է մարդուց սովորած բառերը։

Գործնական ճանապարհով առաջնորդվելու համար պետք է քննենք, թե ինչ կապ կա առարկայի և նրա անվան միջև։ Այս հարցով շատ երկար զբաղվել են հին հույն փիլիսոփաները. շատերը կարծել են, թե առարկաների և նրանց անվան միջև կա մի բնական կապ. ուրիշներն էլ կարծում էին, թե բառերը պարզապես նախնիների հնարած ձայներն են[1] և արդյունք են զուտ պատահականության։ Եվ իրոք, ինչ կապ կարող է լինել առարկաների և նրանց անվան միջև։ Ինչու՞ համար, օրինակ, մեր երկիրը զարդարող կանաչը կոչում ենք բույս, խոտ, թուփ, ծառ և այլն, և ոչ թե ինչ որ սիլ, փոս, քիփ, չին կամ նման որևէ ձայնով։ Նշանակում է առարկայի և նրա անվան միջև ոչ մի բնական կապակցություն չկա. իմաստը ձայնի կամ ձայնը իմաստի տրամաբանական արդյունքը չէ։ Որովհետև, եթե մի այդպիսի կապակցություն լիներ, ինչու՞ աշխարհիս զանազան լեզուները միևնույն առարկային այնքան տարբեր, զանազան անուններ պիտի տային. օրինակ՝ միևնույն կեն-

[1] Այս կարծիքն ունի նաև Նղնիկը. հմմտ. ի մեր լեզու այս չբառնեմք, որպէս ի խորանաց հարցն մերոց առաջնոց քոտ սովորութեան ի մեզ պատմելոյ. էջ 92։

դանին կոչվեր հյ. ձի, *բրք.* at, *վրց.* ցխենի, *ռուս.* лошадь, *պրս.* asb, *ֆրանս.* cheval, *գերմ.* Pferd, *անգլ.* horse, *հին հն.* ἵππος, *նհն.* ἄλογο, *լտ.* equus, *ստ. լատ.* caballus, *սասր.* sūsyā, *չին.* ma, *ճապոն.* uma *և այլն, և այլն։ Եթե որևիցե կապակցություն լիներ առարկայի և նրա անվան միջև, մենք ինչու այնքան պիտի դժվարանայինք հասկանալու կամ սովորելու մի անծանոթ լեզու, և կամ վերլուծելու մի անծանոթ լեզվի արձանագրություն, որի ընթերցանությունը մեզ հայտնի է (ինչպես խալդերենը, էտրուսկերենը և այլն)։ Եթե որևիցե կապակցություն լիներ առարկայի և նրա անվան միջև, չէ՞ որ բոլոր մարդիկ էլ միևնույն ձայնը պիտի հատկացնեին միևնույն առարկային կամ միևնույն գաղափարին, և աշխարհս մեջ միայն մի լեզու պիտի գտնվեր։*

*Նկատենք, որ նույնիսկ միևնույն լեզվի բառերն ու ձևերը հաստատուն, անշարժ, կանգնած ձևեր չեն. իր առաջին օրից սկսած բառը շարունակ փոփոխում է իր ձևը. միևնույն բառ ամենահին ժամանակ արտասանվում էր *drak'ru, հետո եղավ* rdak'ru, *հետո՝* արտաւսր, արտասուք, *արդի բարբառներում՝* արտասունք, արցունք *և այլն։ Լտ.* calidus *և ֆրանս.* chaud «տաք», *լտ.* calx *և ֆրանս.* chaux «կրաքար», *որոնք միևնույն բառի հին ու նոր ձևերն են ներկայացնում, անհասկանալի կերպով իրարից բացարձակապես տարբեր են։*

Արդ՝ սրանցից ո՞րն է, որ իմաստին համապատասխան ձայնն է ներկայացնում. եթե որևէ մեկը է՛, մյուսները չեն. հետևաբար չկա կապ առարկայի և նրա անվան միջև։ Նմանապես՝ միևնույն լեզվի միևնույն բառի նշանակությունը անշարժ կանգնած չէ, այլ շարունակ դարերի ընթացքում փոփոխվում է. ֆրանս. bordeau, *որ նշանակում էր «ջրի եղերք», հիմա մեր մեջ թունդ կարմիր գույնի անունն է. ուրեմն ո՞ւր է կապը առարկայի անվան և առարկայի միջև։ Սրանից է բխում այն հակասությունը և անճահությունը, որ նկատում ենք հաճախ բառի նշանակության և ստուգաբանության միջև. օրինակ՝ հյ.* մելան *և ռուս.* чернила *ստուգաբանորեն նշանակում են «սև», բայց այժմ ասում ենք* կարմիր մելան, красные чернила *և այլն.—*սպիտակեղեն *ասելով հասկանում ենք մարմնի անմիջապես վրայից հագած շորերը, որոնք, առավելապես միայն սպիտակ գույնով էին լինում. այժմ կա* կարմիր սպիտակեղեն, դեղնագույն սպիտակեղեն *և այլն։*

Պատահում է շատ անգամ, որ զանազան լեզուների մեջ միևնույն բառը բոլորովին տարբեր բաներ է նշանակում։ Օրինակ՝ միևնույն կօր ձայնով հասկանում ենք հյ. կոր «ծուռ», գվո. կոր «կարիճ», ֆր. corps «մարմին», ռուս. корь «կարմրուկ», պրս. kōr «կուլը» և այլն։ Միևնույն պաս կամ բաս ձայնով հասկանում ենք հյ. պաս «պահք», թրք. bas «կոխիր», ֆր. basse «ցածր», արաբ. bahs «խոսք», պրս. pās «պահպանություն», լեհ. pas «կաշյա փոկ», անգլ. pass «անցագիր», հն. πᾶς «ամբողջ» և այլն։ Միևնույն բալ ձայնը նշանակում է հյ. բալ «համանուն պտուղը», թրք. bal «մեղր», պրս. bāl «թև», արաբ. bāl «հոգի, միտք», ֆրանս. bal «խնջույք», լեհ. bal «գերան», ռուս. балл «վարքի թվանշան», անգլ. bale «հակ, բեռ, թշվառություն, աղետ», երբ. baal «աստվածը» և այլն։ Երբեմն էլ միևնույն բառը միևնույն լեզվի մեջ իրարից շատ տարբեր բաներ է նշանակում. օրինակ՝ վեր ձայների խումբը նշանակում է ֆրանս. ver «որդ», verre «բաժակ», vert «կանաչ», vers «դեպի», vers «տոտանավոր», վեն խումբը նշանակում է vin «գինի», vain «իզուր», vingt «քսան», veine «երակ». սեն խումբը ֆրանս. նշանակում է 10 տարբեր բան. այսպես՝ saint «սուրբ», sain «առողջ», sein «կուրծք», seing «ստորագրություն», seine «ուռկան», scène «տեսարան», Seine «գետը», céne «ընթրիք», cinq «հինգ», ceint «շրջապատված»։ Այսպես նաև հյ. սեր «սիրելը», սեր «կաթի երես», ճոռ «ոչխարի խումբ», ճոռ «բույր», ճոռ «որթից կտրված ճյուղ», վեզ «հոճ», վեզ «հռիվ», կետ «կետ կենդանին», կետ «նշանը», կետ «ալիծակ», գեր «բարձր», գեր «պարարտ», գեր «ողբ», գայլ «գազանը» և գայլ «բերանակապ», սիճ «պարապ» և սիճ «պտուղը» և այլն։

Այս բոլորը չպիտի գոյություն ունենային, եթե առարկայի անվան և իմաստի միջև որևէ կապ գոյություն ունենար։

Ամեն լեզվի մեջ էլ կան բառեր, որոնք ձևով իրար շատ մոտիկ հնչում ունեն. եթե առարկայի և նրա անվան միջև որևէ կապ լիներ, բնականաբար այս բառերն էլ նման կամ մերձավոր նշանակություն պիտի ունենային. բայց ամենևին այդպիսի բան չի նկատվում որևիցե լեզվի մեջ։ Օրինակ՝ հյ. գարի (բույսը), կաբի «շատ», քարի «վեմ», գառի «գառնուկ», կառի «փուշ», կայրի «կլոր», գայռի «ցեխ», քայռի «մանյակ», ռուս. собор «տաճար», забор «ցանկապատ», запор «փորկապություն» և այլն։ Սրան հակառակ, շատ անգամ առարկաները

իրար հետ մերտ նմանություն ունեն, բայց նրանց հատկացված անունները իրար նման չեն միևնույն լեզվի մեջ. օրինակ. եզ, կով, եղբ, երինջ, ցուլ, զվարակ կամ թե՝ ձի երիվար, եովատակ, քուռակ, մարուկ, զամբիկ և այլն։ Նույնիսկ բնաձայն բառերը, որ իրապես նույնն են և նույն պիտի լինեին, շատ անգամ տարբերվում են լեզվից լեզու. այսպես՝ հյ. եազ, ռուս. кашель, ֆր. toux, թրք. öksürük, մսոր. šə'al, անգլ. cough, գերմ. Husten, հն. βήξ, որոնցից ո՛չ մեկը նման չէ մյուսին։ Կամ թե հյ. սուլել, ռուս. свистеть, ֆրանս. siffler, գերմ. pfeifen, և այլն։

Դեռ ավելին կա։ Պատահում է, որ միևնույն ձայնը տարբեր լեզուների մեջ նշանակում է իրար բոլորովին հակառակ բաները. օրինակ, հյ. չէ «ոչ» և չին. čê «այո», նմանապես՝ Սիբիրի խակաս լեզվով če «այո» (տես Дыренкова, էջ 121), հյ. մաս «կտոր» և ֆրանս. masse «զանգված, դեզ», հյ. սուտ «ոչ ճշմարիտ», սանս. satya «ճշմարիտ» և անգլ. sooth «ճշմարտություն», կամ արաբ. sidd «ճշմարիտ, ուղիղ խոսք». հյ. կուշտ և պրս. gušta «քաղցած», ֆրանս. vrai «ճշմարիտ» և քրդ. vər «սուտ», հյ. նախ «առաջ» և գերմ. nach «հետո», հյ. գվո. թէն «թացութիւն», և իռլ. ten «կրակ», հյ. և որոշյալ հոդ է, արաբ. un անորոշ հոդ է, հյ. ինն, բարբառներում՝ խին «հին» և չին. çin (խ'ին) «նոր», անգլ. better «լավագույն» և պրս. bedter «վատագույն», հյ. վատթար, անգլ. cold, գերմ. kalt «ցուրտ» և իտալ. caldo, լտ. calida «տաք», նհն. ναί «այո», իսկ շատ լեզուներում՝ ne «ոչ»։ Ամերիկյան չինանտեկ (chinantec) լեզվով թեև da, nda ձևով և իմաստով նույնն է հյ. դա բառին, բայց ընդհակառակը՝ na «ես», nah «մենք», no «դու, դուք», իսկ quia «ինա» և quiaha «ինրանք»։

Այս հակասականությունը երևում է նույնիսկ միևնույն լեզվի երկու բարբառների մեջ. այսպես՝ արևմտահայ՝ վեր «վերև», արևելահայ՝ վեր «ներքև» (օրինակ՝ վեր գալ=իջնել), երև. շոր «տաք» և Ղրբ. շօր «հով»։

Այս բոլորից հետևում է, ուրեմն, որ արդարև բառերի և նրանց նշանակած իրերի միջև ամենևին բնական կամ տրամաբանական կապակցություն չկա։

Լեզվի ծագման այս ընդհանուր սկզբունքը ընդունելուց հետո, պետք է քննել նրա ժամանակը և հանգամանքները։

Գիտունները ընդունում են, որ մարդ էակը կապիկների զարգացած մեկ ձևն է։ Ըստ Լիննեի՝ ուղիղ դիրքով քայլող կա-

պիկը, նուշնիկ առանց խոսելու ընդունակության, մարդ է։ Սակայն դա ճիշտ չէ։

Ահա թե ինչպես է նկարագրում Էնգելսը կապիկի անցումը դեպի մարդը։

«Շատ հարյուր հազարամյակներ սրանից առաջ, երկրագնդի զարգացման՝ դեռևս ճշգրիտ որոշման չենթարկվող այն ժամանակաշրջանում, որ երկրաբանները երրորդային են անվանում, ենթադրաբար այդ ժամանակաշրջանի վերջում, տաք գոտու ինչ-որ մի տեղում՝ ամենայն հավանականությամբ այն ընդարձակ մայր ցամաքում, որ այժմ Հնդկական օվկիանոսի հատակն է ուղված, ապրում էր արտասովոր բարձր զարգացման հասած մարդանման կապիկների մի ցեղ։ Դարվինը մեզ տվել է մեր այդ նախնիների մոտավոր նկարագրությունը։ Նրանք ամբողջովին ծածկված են եղել մազերով, ունեցել են մորուք ու սրածայր ականջներ և հոտերով ապրելիս են եղել ծառերի վրա։

Պետք է կարծել, որ առաջին հերթին, իրենց ապրելակերպի ազդեցության տակ, որը պահանջում էր, որպեսզի մագլցելիս ձեռքերն այլ ֆունկցիաներ կատարեն, քան ոտքերը, այս կապիկներն սկսեցին գետնի վրա քայլելիս թողնել ձեռքերի օգնությանը դիմելը և հետզհետե ավելի ու ավելի ուղիղ քայլվածք յուրացնել։ Դրանով վճռական քայլ արվեց կապիկից մարդուն անցնելու համար» (Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, 1950, էջ 185)։

Ուղիղ քայլել սովորելով կապկի ձեռքերը ազատվեցին, այլևս նա կարող էր իր ձեռքերը նվիրել զանազան աշխատանքների։

Կենդանիներն էլ առաջին երկու թաթերով զանազան աշխատանքներ են կատարում։ Կատուն երկու ոտքերի վրա նստած, առաջին թաթերը թքոտելով լվանում է իր երեսը, քորում ականջները, շփում իր վիզը։ Շունը գետնի վրա փռված, առաջին երկու թաթերով բռնում է իր որսը, պատառոտում և ուտում։ Բայց կապկի մոտ ձեռքի գործածությունը ավելի զարգացավ։ «Ձեռքի օգնությամբ կապիկներից մի քանիսը իրենց համար ծառերի վրա բներ են շինում կամ նուշնիկ, ինչպես շիմպանզեն, ճյուղերի միջև ծածկեր՝ վատ եղանակից պատսպարվելու համար։ Ձեռքով նրանք մահակներ են բռնում թշնամի-

ներից պաշտպանվելու համար կամ վերջիններիս ոմբակոծում են պտուղներով ու քարերով» (նույն տեղում, էջ 186)։

Նախամարդը աշխատանքի ընթացքում է՛լ ավելի զարգացրեց ձեռքը և նրա միջոցով է՛լ ավելի բարձր հմտություններ ձեռք բերեց։ Սակայն ձեռքը մարդու միայն մի օրգանն է։ Նկատված է, որ եթե մարմնի այս կամ այն օրգանը զարգանում է, զարգանում են նաև նրա այլ օրգանները, որոնք առերևույթ նախորդի հետ կապ չունեն։ Այսպես նաև ձեռքի հետ զարգացան նախամարդու մյուս օրգանները և վերջապես նախամարդը մարդ դարձավ։

Այս ամբողջը շատ ավելի կարճ ձևով ամփոփում է Էնգելսը այսպես. «Երբ հազարամյա պայքարից հետո, վերջապես, ձեռքը դիֆերենցվեց ոտքից և հաստատվեց ուղղահայաց քայլվածքը, ապա մարդը անջատվեց կապկից, և հիմք դրվեց հոդաբաշխ խոսքի զարգացմանն և ուղեղի հզոր զարգացմանը, որի շնորհիվ այդ ժամանակից ի վեր անանցանելի անդունդ գոյացավ մարդու և կապկի միջև։ Ձեռքի մասնագիտացումը գործիքի երևան գալ է նշանակում, իսկ գործիքը նշանակում է սպեցիֆիկ մարդկային գործունեություն, մարդու վերափոխիչ հակադարձ ներգործություն բնության վրա՝ արտադրություն» (նույն տեղում, էջ 21—22)։

Նախամարդու առաջին տիպարն է ներկայացնում պիտեկանտրոպուս էրեկտուսը (pithecanthropus erectus), որ Հեքելը կոչում է homo alalus pliocène և դնում է մարդկային ծննդաբանական դասավորության մեջ 29-րդ տեղը, որի հաջորդը՝ 30-րդ տեղն է խոսող մարդը։ Պիտեկանտրոպուս էրեկտուս կոչված էակը, որի կմախքի մնացորդները գտնված են Ջավայում, ապրում էր երրորդական շրջանի վերջում կամ ամենաուշը՝ չորրորդական շրջանի արշալույսին (Zittel, Grundzüge der Paläontologie, 1923, II, էջ 653)։ Նրա ուղեղը (ծավալը՝ 850 խորանարդ սմ. քաշը՝ 750 գրամ) արդի գորիլայի (550) և օրանդուտանի ուղեղի (600 խորանարդ սմ.) $1^1/_2$ անգամն էր, բայց ավելի պակաս էր արդի ամենացածր զարգացում ունեցող մարդու ուղեղից (1000 խոր. սմ., գրեթե $^2/_3$-ը)։ Ուղեղի ծալքերը՝ ավելի զարգացած քան գիբբոնինը, արդեն մարդկային են. ճակատային ստորին ծալքերը, շիմպանզեի համեմատությամբ, կրկնակի են, բայց արդի զարգացած մարդու ծալքերի կեսն են։ Նա ներկայացնում է իսկապես կապկի և մարդու միջին աստի-

ճանը։ Ազդրոսկրը ուղիղ է, որով ցույց է տալիս, թե ուղի վրա կանգնած քայլող մի արարած էր մեզ նման, բայց դեռ խոսողական կարողություն չուներ. և այս պատճառով էլ, ըստ Հեքելի, ստացել է alalus (անխոս) անունը (տես Häckel, Origine de l'homme, թարգ. ֆրանս. Laloy, էջ 29, 51, 61)[1]։

Պիտեկանտրոպուս էրեկտուսից հետո գալիս է նրան նման, բայց նրանից ավելի զարգացած մարդկային մի տիպար, որ կոչվում է սինանտրոպ (չինական մարդ)։ Այս տիպարը դտնվեց Չինաստանում, Պեկինի շրջակայքի քարայրներում։ Սրա ուղեղի ծավալն ավելի մեծ է, քան պիտեկանտրոպուսինը, բայց դեռ ավելի փոքր, քան մարդունը։ Նրա հետ գտնվեցին հասարակ քարե գործիքներ, այրված ոսկորներ, որից հետևում է, թե նա կրակ վառել գիտեր և գործիք էր գործածում։ Ռուս գիտնական-քանդակագործ Գերասիմովը սրա կմախքի հիման վրա պատրաստել է այն ժամանակի մարդու արձանը։ Սրանից հետո գալիս է շելյան (cheleén) շրջանի մարդը, որ կոչվում է հայդելբերգյան մարդ (homo Heidelbergensis). սրանից գտնված է երկու ատորին ծնոտ, մեկը՝ Գերմանիայում (Mauer-Heidelberg), մյուսը՝ Անգլիայում, երկու ուրիշ ծնոտ էլ գտնվել է Էրինգսդորֆում (Սաքսոնիա)։ Այս շրջանի մարդու գոյությունը ամեն տարակուսից վեր է։ Այս մարդը առաջինն է, որ կարողացավ հղկել կայծքարը և գործածել իբրև զենք։ Նրա ուղեղի ծալքերը մարդու համար ներկայացնում են ամենանախնական ձևը (Furon, էջ 69). ծնոտի կազմությունը այնպես է, որ նա գտնվում է «խոսող մարդու և բոլոր գազանների միջև» (Boule, էջ 155). նա դեռ այնքան նման է կապիկներին, որ պատահմամբ եթե ծնոտի վրա պահպանված չլինեին ատամները, կապիկ պիտի կարծվեր և ոչ մարդ (Peyrony, Elém. de préhist., էջ 29, Furon, էջ 67, Boule, էջ 457)։

Նախամարդու երկրորդ՝ ավելի զարգացած տիպարն է մուստիերյան կամ նեանդերթալյան մարդը (homo Neanderthalensis), որ ապրում էր սառցադաշտային դարաշրջանում։ Այս տիպից գտնված են 15 զանազան կմախքներ, որոնցից նշանավոր են երկու նմուշ՝ գտնված Ֆրանսիայում, մեկը՝

[1] Ուրիշ գիտնականներ չեն ընդունում, որ հիշյալ հակը մարդկային ցեղին է պատկանում, այլ համարում են գիբբոններից մի ներկայացուցիչ, որ այժմ վերացած է (տես R. Furon, La préhistoire, Paris, 1928, էջ 56)։

Moustier և մյուսը՝ Chapelle-aux-saints կոչված այրում, մի նմուշ Գերմանիայում՝ Neanderthal կոչված ձորում, մի քանի կմախքներ էլ Բորվաթիայում՝ Կրապինա կոչված վայրում։ Նրա ուղեղը նախորդից ավելի զարգացած էր և հասնում էր արդի ամենացածր զարգացում ունեցող մարդու ուղեղի աստիճանին։ Հատկապես ուղեղի ձախ մասը մի քիչ ավելի զարգացած էր, քան աջը, որից հետևում է, թե աջ ձեռքով գործելու հակում ուներ։ Նա կարող էր ուղղահայաց դիրքով կանգնել, բայց ոչ այնպես կատարյալ, ինչպես արդի մարդը։ Նա հասել էր որոշ կուլտուրայի, բնակվում էր այրերում և կրակ վառել գիտեր. նա ապրում էր խմբերով, թվում է, թե գիտեր իր մեռելները թաղել, ուստի կրոնի մասին դաղափար սկսել էր կազմել (Peyrony, էջ 48)։ Ճակատի ձախակողմյան երրորդ ծալքի քննությունը, ինչպես և կզակի բարձրությունը, որ շատ փոքր էր, ցույց տվին, որ նրա խոսելու կարողությունը շատ նախնական աստիճանի մեջ էր (Boule, էջ 239), բայց արդեն կար։

Նեանդերթալյան մարդու շրջանից մի երեխայի կմախք էլ գտնվել է վերջերս՝ Հարավային Ուզբեկիստանում, Թեշիկ-Թաշ կոչված քարայրում, որի համար այդ տիպը կոչվել է Թեշիկ-Թաշյան մարդ։ Ռուս գիտնական-քանդակագործ Գերասիմովը կարողացել է պատրաստել այդ շրջանի նախամարդու արձանը։

Սրանից հետո գալիս է բանական մարդը (homo sapiens), որ մեր ժամանակի մարդն է։

Այժմ տեսնենք, թե որքան հին են այս դարաշրջանները։ Գիտնականները շատ տարակարծիք են այս մասին, և գիտության արդի վիճակում ճիշտ պատասխան տալ այս հարցին անկարելի է (Boule, Les homme fossiles, 1923, էջ 56)։ Կան գիտուններ, որ իրարից տասն անգամ ավել կամ պակաս թվեր են դնում։ Առհասարակ չորրորդական շրջանի վերջը դնում են մեր թվականությունից 6 կամ 7000 տարի առաջ։ Մորտիյեն (Mortillet), որ նախապատմության գիտության հիմնադիրներից է, և որի նախապատմական բաժանումները շատերի կողմից ընդունված է, չորրորդական շրջանի տևողությունը դնում է 222 000 տարի, որով երրորդական շրջանի վերջը կհասնի մեր թվականությունից գրեթե 230 000 տարի առաջ։ Այս ժամանակից է պիտեկանտրոպուս էրեկտուս կոչված էակը։ Հղկված քարե դարի շրջանը (նեոլիթյան) Եվրոպայում սկսվում է մեր թվ. 7500 տարի առաջ, թեև արևելյան քաղաքակիրթ ազգերում շատ

ավելի հին է. այսպես՝ Կրետեում մեր թվ. առաջ 14 000 թվին, Եգիպտոսում՝ մ. թ. ա. 20 000 թվին (Boule, էջ 331 և 332). Այդ 22 200 տարիների շրջանն էլ կարելի է բաժանել հետևյալ ցուցակի համաձայն (հմմտ. Peyrony, էջ 148), որով նեանդերթալյան մարդը կլինի մոտ 106 000 տարի առաջ.

Չորրորդական շրջան	Նեոլիթյան	սկսվում է	7 000	մեր թվ. առաջ
	Մագդալենյան	»	18 000	» » »
	Սոլյուտրեյան	»	25 000	» » »
	Օրինյակյան	»	40 000	» » »
	Մուստիերյան	»	106 000	» » »
	Աշելյան	»	140 000	» » »
	Շելյան	»	228 000	» » »
Երրորդական շրջան	Պիտեկանտրոպուս էրեկտուս 230 000 մեր թ. առաջ			

Նախամարդու պատմության այս կարճ ամփոփումից երևում է, որ մարդ էակը գրեթե քառորդ միլիոն տարվա հնություն ունի. բայց այս երկար ուղղության կեսից ավելին նա դեռ իսկապես մարդ չէ, այլ մարդանման էակ է, անխոս է։ Մարդու խոսողությունն սկսում է միայն մեզանից շուրջ 100 000 տարի առաջ։ Ըստ այսմ՝ մի խումբ հոգեբանների և Ռընանի այն կարծիքը, թե մարդ բնապես խոսող էակ է, չի համապատասխանում իրականության և փաստերին[1]։

Ամբողջ այդ անխոս շրջանում մարդանման էակը գիտեր հավանաբար միայն հոտոտանքներ կամ շարժուձևեր անել և զանազան բացագանչություններ արտաբերել՝ իբրև մի անասուն կամ անասնության զարգացած մի տիպար։ Բուն մարդկային լեզվի սկզբնավորությունը լինում է այն ժամանակ, երբ մարդ զգում է աղմուկի և հոդավոր ձայնի տարբերությունը և տեսնում է, թե որքան մեծ է վերջինիս առավելությունը, որով կարելի է ամեն մի առարկայի և ամեն մի գործողության մի ձայն հատկացնելով՝ կազմել անջատ ու անկախ անուններ։ Անշուշտ մարդը միանգամից չսովորեց արտաբերել բոլոր հոդա-

[1] Պիտեկանտրոպուս էրեկտուս տիպարը գտնված է 1891 և 1892 թթ., բայց ուսումնասիրված է 1894 թ. (Boule, էջ 25 և 98), մյուսները՝ 1901 թ., 1908 թ. և ավելի հետո. ուստի բոլորն էլ՝ Ռընանից հետո (վեճ. 1892). միայն նեանդերթալյան տիպարն է, որ գտնվել է 1856 թվին։

վոր ձայները, այլ նրանց միայն մի մասը, այն է՝ նախ՝ ձայնավորները, հետո՝ շրթնայիններ։ Ենթադրվում է, թե մուստիերյան մարդը հասել էր առամնայիններ արտաբերելու կարողության, օրինյակյան մարդը՝ կոկորդայինը և քմայիններ արտասանելու, բայց դեռ բոլորն էլ կիսակատար էին. բուն ձայնական լեզուն կա արդեն մագդալենյան շրջանում, որ է մեզանից 20 000 տարի առաջ (Schmidt, Die Sprachfamilien, էջ 19)։

Մենք տեսանք, որ շարժուձևերի լեզուն էլ կարող է այնքան հարուստ լինել, որ նույնիսկ այժմ կարելի է մնջկատակներ սարքել։ Ուրեմն ինչ պատճառով մարդանման էակը պետք պիտի զգար ունենալու ոչ թե այդ լեզուն, այլ հաղորդակցության մի ուրիշ միջոց և կանգ առներ բանավոր լեզվի վրա։ Դրա պատճառը երկուսն էր. նախ, հոպտանքի լեզուն տեսանելի և, հետևաբար, հասկանալի էր մինչև մի որոշ հեռավորության վրա. անտառի մի ծայրին կանգնած վայրենին անկարող էր հոպտանքով խոսել իր ընկերոջ հետ, որ գտնվում էր անտառի մյուս ծայրին։ Նույնիսկ իրար կողքի կանգնած երկու մարդ, մեկը՝ ծառի այս, մյուսը՝ այն երեսում, հոպտանքով չէին կարող խոսել իրար հետ։ Երկրորդ՝ դիշեր ժամանակ այդ հոպտանքները նույնիսկ դեմ դեմի կանգնած անձերի համար անտեսանելի և անհասկանալի էին։ Ուստի անհրաժեշտ էր գտնել մի ուրիշ միջոց։

Մարդկային կազմության մեջ այս կողմից աչքից ավելի ուժեղ է ականջը, որի գործունեությունը չի խանգարվում բնավ մութի մեջ։ Հակառակ դրության մեջ գտնվում են այժմ մեր նավաստիները և այն բոլոր անձինք, որ հեռվից խոսելու կարիք ունեն. և որովհետև ականջը անբավարար է ձայնը լսելու, ուստի օգտագործել են աչքը և հնարել նշաններով խոսելու առանձին սիստեմ, ցերեկը՝ դրոշակներով, դիշերը՝ լապտերներով, որով և հայտնում են իրենց միտքը։ Ինչպես այժմ սրանց մոտ աչքն է օգտագործվում, այն ժամանակ էլ մարդիկ մոտածեցին հաղորդակցության իրրև օրգան առնել ականջը, այսինքն՝ ուժ տալ բացատկության։ Այս էր սրվեն ձայնավոր խոսակցության սկիզբը։ Անշուշտ սկզբում ստեղծվեցին զանազան բնաձայն բառեր, բայց շուտով նկատելի եղավ, որ ձայների թիվը չափազանց քիչ է առարկաների քանակության առջև, ուստի պետք եղավ բնաձայններից հրաժարվել, իրրև անբավարար միջոց։

Էնգելսը իր վերոհիշյալ աշխատության մեջ («Բնության դիալեկտիկա») խոսողության հիմնական դրդապատճառը համարում է աշխատանքը և աշխատանքի շնորհիվ առաջացած մարդկային համագործակցությունը, ուրիշ խոսքով՝ հասարակական կյանքը։ «...Աշխատանքի զարգացումն անհրաժեշտաբար նպաստում էր հասարակության անդամների ավելի սերտ համախմբմանը, որովհետև աշխատանքի շնորհիվ ավելի հաճախակի դարձան փոխադարձ աջակցության, համատեղ գործունեության դեպքերը, և ավելի պարզ դարձավ այն բանի գիտակցումը, որ այդ համատեղ գործունեությունն օգտակար է յուրաքանչյուր առանձին անդամի համար։ Կարճ ասած՝ ձևավորվող մարդիկ հասան այն բանին, որ նրանց մեջ երևան եկավ մեկմյանց ինչ-որ բան ասելու պահանջ։ Պահանջը ստեղծեց իր օրգանը. կապկի անզարգացած կոկորդի մոդուլյացիայի միջոցով դանդաղ, բայց անշեղորեն վերակերպվում էր ավելի ու ավելի զարգացած մոդուլյացիայի համար, իսկ բերանի օրգաններն աստիճանաբար սովորում էին հոդաբաշխ հնչյուններն արտասանել մեկը մյուսի հետևից։

Որ աշխատանքի պրոցեսից և աշխատանքի հետ մեկտեղ, լեզվի առաջացման այս բացատրությունը մեկ ճիշտն է, այդ ապացուցում է համեմատությունը կենդանիների հետ։ Այն քիչ բանը, որ վերջիններս, նույնիսկ նրանցից ամենաառարգացածները, ունեն միմյանց հաղորդելու, նա առանց հոդաբաշխ խոսքի էլ կարող է հաղորդվել։ Բնական վիճակում ոչ մի կենդանի չի զգում խոսել չկարողանալու կամ մարդկային խոսքը չհասկանալու անհարմարությունը։ Բոլորովին այլ բան է, երբ կենդանին ընտելացված է մարդու կողմից։ Շունը և ձին, մարդկանց հետ շփվելու շնորհիվ, հոդաբաշխ խոսքի նկատմամբ իրենց մեջ զարգացրել են այնպիսի զգայուն լսողություն, որ պատկերացումների իրենց համար հատուկ շրջանի սահմաններում նրանք հեշտությամբ սովորում են հասկանալ ամեն մի լեզու։ ...Նրանք խոսելու իրենց անընդունակությունն այժմ զգում են իբրև պակասություն։ Ցավոք սրտի, նրանց ձայնական օրգաններն այն աստիճան որոշակի ուղղությամբ են մասնագիտացած, որ նրանց այդ վշտին արդեն ոչ մի կերպ չի կարելի օգնել։ Սակայն այնտեղ, որտեղ կա համապատասխան օրգան, այդ անընդունակությունը որոշ սահմաններում կարող է անհետանալ։ Թռչունների բերանի օրգանները, իհարկե, արմատապես տարբերվում են

մարդու համապատասխան օրգաններից։ Բայց և այնպես թռչունները միակ կենդանիներն են, որոնք կարող են խոսել սովորել, և ամենագարշելի ձայն ունեցող թռչունը՝ թութակը, ամենից լավ է խոսում» (նույն տեղում, էջ 188—189)։

Մարդկային լեզվի այս նախնական շրջանի համար չունենք շոշափելի տվյալներ. ուստի պիտի անենք միայն ենթադրություններ։

Մի կողմից ունենք կենդանիների լեզուն. կատուն մլավում է, շունը հաչում է, գայլը ոռնում է, առյուծը՝ մռնչում, թռչունը՝ ծլվլում, կովը՝ բառաչում, իսկ կենդանիների բարձրագույն տեսակը՝ կապիկները, ինչպես տեսանք, ոչ միայն նույնիսկ հոդավոր ձայներ են արձակում ըստ Գարնըրի, այլև՝ երգում։ Իսկ կապիկների այն ավելի զարգացած տեսակը, որ այժմ անհետացել է, որից ծագել է մարդը, անշուշտ սրանցից ավելի զարգացած «լեզու» ուներ։

Մյուս կողմից, ծանոթ ենք մարդկային ցեղերի մեջ ամենաքիչ զարգացած, անգիր, մինչև անգամ քարե դարի շրջանում ապրող ցեղեր (Ավստրալիայի բնիկները)։ Բայց ինչքան էլ իջնենք ցած, այսօրվա մարդ կոչված էակը լեզու ունի։ Այդ լեզուն ինչքան անզարգացած համարել ուզենանք, այնուամենայնիվ կյանքի պահանջներին բավարարություն տվող, քերականորեն զարգացած լեզու է։ Գիտուններն հաճախ զարմացած են մնում այս «վայրենի» կոչված ցեղերի լեզուների կատարելության, կանոնավորության և հարստության վրա։

Բնականաբար չի կարելի համեմատության դնել արդի ամենացածր ժողովուրդների լեզուն այն նախամարդկային լեզվի հետ, որ ավելի քան 100 000 տարվա հնություն ունի, հետևաբար շուրջ 4000 մարդկային սերունդների միջոցով աշխատանքից է անցել (100 տարվա մեջ հաշվելով 4 մարդկային սերունդներ)։

Մարդ դառնալու պրոցեսում, մարդու կապկանման նախահայրը գտնվելով դեռ շատ անզարգացած վիճակի մեջ, չէր կարող ունենալ դեռ լեզու՝ այն մտքով, որ մենք հասկանում ենք։ Բայց հասարակական պահանջները պատճառ դարձան վերջ ի վերջո ստեղծելու լեզու այն մտքով, որ մենք հասկանում ենք։

Ոչ-մարդկային լեզվի և մարդկային լեզվի հիմնական տարբերությունը հոդավոր ձայնի մեջ է։ Եթե կապիկները արդեն

կարողանում են ինչ-որ հոդավոր ձայներ արտաբերել, առավել ևս պիտի լիներ նախամարդը։

Հոդավոր լեզվի զարգացման գլխավոր ազդակներից մեկն էլ եղել է նախամարդու ուղիղ դիրքը։ Ուղիղ դիրքով քայլվածքը կամ կեցվածքը պատճառ է եղել զարգացնելու կուրծքը և թոքերը և թոքերի զարգացմամբ կազմակերպվել է խոչակը, որով և թերատ հոդավոր ձայնը հետզհետե զարգացել և շատ ավելի մեծ բարձրության է հասել։ Ստացվել է վերջապես արդի մարդկային ձայնը, որի արդյունքն են մարդկային լեզվի առաջին արմատները և նրանցից առաջացած բառերը։

Այստեղ հարց է ծագում, թե ո՞վ և ինչպես կազմեց առաջին բառերը, որոնք, ինչպես վերևում ասացինք, բոլորովին պատահական ձայներ էին և ամենևին կապ չունեին իրենց նշանակած բառերի հետ։

Այստեղ կարծես մեզ ուղեցույց է լինում աղջագրությունը։ Ինչպես որ ժողովրդական բանահյուսությունը ամենքինն է, բայց ծագում է մեկից, այնպես էլ բառը ամենքինն է, բայց ծագում է մեկից։ Մի երգիչ ասում է մի երգ. մյուսները լսում են և իրենց ճաշակի համեմատ հավանում են կամ մերժում. հավանության դեպքում նա սկսում է տարածվել և ժողովրդի կողմից ենթարկվել զանազան բարելավումների, մինչև որ ստանում է որոշ կերպարանք, որ կարելի է համարել վերջնական։ Այսպես էլ եղան բառերը։ Մեկը մի առարկայի համար տվեց մի անուն կամ այսինչ ձայնը այսինչ առարկային հատկացրեց. եթե մյուսներին դուր չեկավ, նա ջնջվեց ու կորավ։ Այսպես կազմվեցին ու անկյանք մեռան միլիոնավոր բառեր, իսկ եթե ուրիշներին էլ դուր եկավ, ապա նա կրկնվեց, տարածվեց, ընդունվեց և որոշ ձևափոխություններից հետո հաստատվեց։ Այսպես առաջացան բառերն ու նախադասությունները, որոնց գումարն է լեզուն։

Այսպես է նաև այսօր, երբ այլևս լեզուն վաղուց ի վեր առաջացել է ու զարգացման երկար պատմություն ունի։ Որևէ նոր ոճ, ասացվածք, դարձվածք, պատկեր, զվարճալի նոր առում, ծածուկ կամ գաղտնի բառ և այլն, ինչպես և ամեն մի նորակազմ բառ, այս բոլորը անշուշտ բխում են մեկից և եթե պահանջին, տեղին ու հանգամանքներին բավարարություն տվեցին, տարածվում են։

Այս վերջին մի քանի տարվա ընթացքում հազարավոր բա-

ներ կազմվեցին մեզ մոտ ռազմական, տեխնիկական, իրավաբանական և այլ գիտությունների համար և կամաց-կամաց նրանք կյանք են ստանում։ Այսպես և օտար բառերը, որ գալիս մտնում են մեր լեզվի մեջ։ Վերջապես պետք է հիշել այն մի խումբ բառերը, որ ձեռագրական մի սխալ ընթերցվածքի, թյուրիմացության կամ անձնական քմահաճույքի միջոցով մտել են լեզվի մեջ և հաստատվել, ինչպես՝ շագանակ (փխ. շահդանակ), շերամ (փխ. շերաս), սուրճ և այլն։

[Որ անհատի ստեղծագործությունը դառնում է ժողովրդական, պատահական մի երևույթ չէ։ Հասարակական կյանքի զարգացման տվյալ էտապում այս կամ այն դեպքի, երևույթի գեղարվեստական վերարտադրումը հանդես է գալիս որպես անհրաժեշտություն, որ և ստեղծում է հասարակական համապատասխան մտայնություն, հասարակական ձգտում. ստեղծված անհրաժեշտությունն էլ հիմք է հանդիսանում այն բանի, որ ստեղծագործող մեկը կամ մեկերը հեղինակում են տվյալ ստեղծագործությունը։ Այստեղ անհատը հանդես է գալիս որպես հասարակության կյանքում ստեղծված անհրաժեշտության անմիջական բավարարողը և այսպիսով նա մարմնացնում է իր մեջ և՛ ստեղծված անհրաժեշտությունը, և՛ տենդենցը, և՛ դրան գործնականում բավարարելու ստեղծագործական ձիրքը, և՛, վերջապես, դրա իրականացումը։ Միայն այս բանի շնորհիվ է, որ անհատի ստեղծագործությունը դառնում է ժողովրդի սեփականությունը և իր հետագա մշակումների ընթացքում միանգամայն կորցնում իր ծագման անհատական բնույթը։ Ճիշտ այսպիսի պրոցես է ներկայացնում նաև բառերի ստեղծագործությունը։ Իրենց գործունեության մեջ մարդիկ գիտակցում են նորանոր իրեր, առարկաներ, երևույթներ ու հարաբերություններ, և ոչ միայն գիտակցում, այլև ստեղծում են այդպիսիք, և, բնականաբար, անհրաժեշտություն է ստեղծվում այդ նոր իրերը, առարկաները երևույթներն ու հարաբերությունները անվանելու։ Ահա այս անհրաժեշտության արդյունքն էլ լինում է այն, որ մեկը կամ մեկերը՝ իրարից անկախ՝ ստեղծում են այս կամ այն բառը, որ և նույն անհրաժեշտության շնորհիվ ընդունվում է հասարակության կողմից։ Հնարավոր է, որ միաժամանակ մի քանի բառեր ստեղծվեն նույն առարկայի համար, հասարակությունը դրանցից մեկը յուրացնի. հնարավոր է նաև, որ մեկի ստեղծած բառը հետագա ձևափոխության ենթարկվի հասարակության կողմից.

հնարավոր է վերջապես, որ միևնույն առարկայի համար միաժամանակ ստեղծված մի քանի բառերից մեկն ընդունվի այս-տեղ, մյուսը՝ մի այլ տեղ։ Կարևորն այստեղ այն է, որ բառի ստեղծումն էլ սկզբնապես անհատական աղբյուր ունի. բայց հենց այդ դեպքում էլ նա արդյունք է հասարակության կյանքում ստեղծված անհրաժեշտության, և իր հետագա գոյության ու գործածության համար անհրաժեշտ է, որ նա դառնա հասարակության սեփականությունը և հենց դրանով էլ կորցնի իր առաջացման նախնական պրոցեսի անհատական բնույթը։ Վերջապես, այս նշանակում է, որ այստեղ էլ մեկերը հանդես են գալիս իբրև հասարակական կյանքում ստեղծված անհրաժեշտության լավարարողը։ Այսպիսի երևույթ տեղի է ունենում միշտ և ամեն տեղ, նաև ամենազարգացած լեզուների մեջ, մեր իսկ առօրյա կյանքում, բայց դա այնքան բնական դարձած երևույթ է, որ մեզանից ոչ ոք չի նկատում և ուշադրություն էլ չի դարձնում՝ նկատելու համար։ Գիր ունեցող լեզուների մեջ նոր արմատներ սովորաբար չեն ստեղծվում, բայց չէ՞ որ ստեղծվում են բազմաթիվ նորանոր բառեր։ Ո՞վքեր են ստեղծում այդ բառերը. չէ՞ որ դարձյալ անհատներ՝ բանաստեղծներ, գիտնականներ, արվեստագետներ, քաղաքական գործիչներ և այլն, մի խոսքով՝ դարձյալ ինչ-որ մեկեր։ Ենթադրենք, թե նոր մեքենա հնարվեց. անմիջապես անհրաժեշտ է նաև նրա անունը, այսինքն՝ հարկավոր է նոր բառ, և գիտնականը, որ հնարել է այդ մեքենան, ստեղծում է այդ բառը, «կնքում» իր մեքենան, իսկ այնուհետև մյուսներն էլ, յուրացնելով այդ բառը, դարձնում են հասարակության սեփականությունը՝ իբրև ընդհանուր լեզվի մի անհրաժեշտ տարր։ Մեր օրերի այս երևույթը, սակայն, մի արմատական տարբերություն ունի նախնական բառաստեղծական պրոցեսից։ Այժմ բոլոր նոր բառերը կազմվում են արդեն լեզվի մեջ եղած պատրաստի արմատներից բարդության, ածանցման և այլ միջոցներով։ Մինչդեռ բառաստեղծական այդ նախնական պրոցեսում ստեղծվել են հենց արմատները՝ մեկերի կողմից։ Իսկ սրանից բխում է այն, որ մեր ժամանակում բառերի կազմությունը լիովին գիտակցական բնույթ է կրում, մինչդեռ նախնական այդ շրջանում հավանաբար այդպիսի գիտակցական բնույթ չէր կրում։]

Բառի ծագումը, այսպիսով, դնելով վերջ ի վերջո մեկից կամ մեկերից, մենք մոտենում ենք արվեստական լեզուների հեղի-

նակներին, որոնք անցյալ և այս դարի ընթացքում հնարեցին զանազան լեզուներ։ Նմանությունը, սակայն, շատ երևութական է։ Արվեստական լեզուների հեղինակները իրենցից ոչինչ չեն հնարում, այլ առնում են որևէ լեզվի այս կամ այն բառը և կամ քերականական ձևը։ Բառերի հեղինակները իրենք իրենցից են հնարում բառերը, հասարակությունը մասնակից է հորինման նրանով, որ կամ բոլորովին մերժում է և կամ՝ ձևափոխելով, ընդունելի դարձնում։ Այսպիսով հասարակությունն է, որ իր կնիքն է դնում յուրաքանչյուր բառի և ձևի վրա, և անհատականը դարձնում հասարակական։

Լեզվի բառերի այս կերպ հորինման համար մի գեղեցիկ օրինակ գտնում են այժմ Եսպերսրնի Language աշխատության 242-րդ էջում. ֆրանսիացի ճարտարագետ Վիկտոր Ռընոն, որ երկար ժամանակ ապրել է Հարավային Ամերիկայի բոտոկուդոս ցեղի մեջ, և հավաքել նրանց երկու ցեղի լեզվի բառերը, պատմում է թե ինչպիսի հեշտությամբ իրեն ընկերակցող վայրենիները հնարում էին բառեր ամեն մի բանի համար։ Նրանցից մեկը բարձրաձայն ասում էր բառը, իբրև թե հանկարծական մի գաղափարից շարժված, և մյուսները կրկնում էին ծիծաղով և գոռգոռոցով, և այսպիսով նա ընդհանուրի կողմից ընդունվում էր։ Բայց զարմանալին այն է, որ գրեթե միշտ կանայք էին, որ հնարում էին այդ բառերը, ինչպես և իրենց ժողովրդական երգերը, մեռելի ողբերը և այլ հոետորական վարձեր։ Անշուշտ այստեղ խոսքը վերաբերում է այն առարկաներին, որոնք բոտոկուդոսներին անծանոթ էին մինչև այն ժամանակ. ինչպես՝ ձի—krainejoune «գլուխ-առաջներ», եզ—po-kekri «ոտք-ճղված», էշ—mgo-jonne-orône «երկարականջ կենդանի»։ Բայց նաև արդեն ծանոթ բառերի տեղ հնարվում էին նորերը, որոնք ընդունվում էին խմբույն ընտանիքի կամ համայնքի մեջ և հետզհետե տարածվում։

Այն միտքը, թե լեզվի ստեղծագործական աշխատանքը բըխելով մեկից և ամբողջ համայնքից անցնելով դառնում է ընդհանուրի սեփականություն՝ անշուշտ անհեթեթ պիտի թվա մեզ, որովհետև այժմ մարդկային համայնքները ապրում են հաճախ մի շատ ընդարձակ տարածության վրա, և բաղկացած են հարյուր հազարավոր կամ միլիոնավոր շնչերից։ Ի՞նչպես կարող էր մի այդպիսի բազմություն է մի հավաքվել և իրեն համար լեզու ստեղծել։

Բայց հիշենք, որ մարդկային համայնքները այն հնագույն շրջանում չէին ներկայացնում այն վիճակը, ինչ որ այժմ։ Արօրի, կացինի և թիի գյուտից առաջ, որոնցով միայն կարելի եղավ հողը մշակել, անտառները մաքրել և զարգացած երկրագործությամբ պարապել, մարդկությունը չէր կարող մի տեղում հավաքված խոշոր բազմություններ ներկայացնել։ Երկրագործությունից առաջ դժվար է երևակայել, որ մի միակ կենտրոնում կես միլիոն մարդ հավաքված լիներ[1]։ Ամերիկայի Միացյալ Նահանգներում բնիկների ամենամեծ ցեղը (իրոկեզ) 26 000 հոգուց էր բաղկացած, իսկ սովորաբար ամեն մի ցեղ 2 000 շրջից պակաս էր[2]։ Հարավային Ավստրալիայի ցեղերը բաղկացած են 270 հոգուց, իսկ Ավստրալիայի այլ մասերում եղած ցեղերը ունեն ընդամենը 80–ից 100 հոգի, այր և կին միասին[3]։ Այս պարագայում այսքան փոքր խմբերի մեջ բառեր հնարելու և տարածելու գործը դառնում է մի շատ հաստարակ բան։

Երկրորդ անհեթեթ կետը բառերի քանակն է. այսօր ամենաաղքատ լեզուն էլ 10–ից մինչև 20 000 բառ ունի. կան լեզուներ, որ 100 000–ից ավելի բառ ունեն. ինչպես կարող էր այսքան բառ մեկի կողմից հնարվել և տարածվել։ Բայց չմոռանանք, որ այս ահագին բառամթերքի ամբողջ հիմքը կազմում է 3–400 արմատ, որով բառեր շինելու աշխատանքը դառնում է դարձյալ մի հաստարակ գործ, մանավանդ եթե ընդունենք, որ այդ ամբողջ բառապաշարը մի անգամից չի շինված այլ երկար ժամանակի ընթացքում և աստիճանաբար։

Այժմ եթե մի հետադարձ և ընդհանուր հայացք ձգենք լեզվի ու նրանով պայմանավորված հաղորդակցման մյուս տեսակների վրա և այդ բոլոր տեսակները (շոշափողական, տեսողական թե լսողական, շարժուձևերը, բացագանչությունները, թե հոդավոր ձայն) համեմատության դնենք իրար հետ, կտեսնենք, որ այդ բոլորը ուրիշ բան չէ, եթե ոչ մարդու ունեցած միջոցների օգտագործումը։

---

[1] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 121։

[2] Անդ, էջ 124։


[3] Տակտաև, Сравн. история развития человеческого общества, I л., 1924. էջ 120—121։ Ըստ Charles Stuart և ըստ Clement Hodkinson, Australia from Port Mackerie to Moreton Bay, London, 1845, էջ 222.

Հոդավոր լեզուն այդ օգտագործման լավագույն ձևն է։ Այդ լավագույնը, այդ կատարյալն էլ, սակայն, երբ ուրիշ տեսակետներից քննենք, կարող է թերակատար լինել, և մենք այդ դեպքում կարող ենք կարիք զգալ մի այնպիսի միջոցի, որով թափանցենք ուրիշի հոգու և մտքի խորքը։ Մենք շատ անգամ զգում ենք այդպիսի մի միջոցի կարիքը, երբ լսում ենք բուրժուական մի քաղաքագետի կամ վարչապետի, որ ժամերով խոսում է մի քաղաքական հարցի առթիվ մանվածապատ ձևերով և մութ ու երկդիմի դարձվածներով, որոնք իր միտքը ծածուկ պահելու են ծառայում միայն,—երբ տեսնում ենք մի հանցապարտ մարդ, որ դատավորի առաջ կանգնած նրա ամեն մի հարցումին ժխտական կամ սխալ պատասխաններ է տալիս՝ գործած հանցանքը ուրանալու կամ ծածկելու համար,—վերջապես, երբ ամեն օր տեսնում ենք կեղծավոր ու շողոքորթ մարդիկ, որոնք գրում կամ խոսում են հակառակ իրենց մտածածին ու զգացածին,—ասում ենք, ինչպես կեղծում է այս մարդը, ինչպես կուզեի նրա սիրտը թափանցել և նրա իսկական մտածմունքը երևան հանել. Արիստոն ասում է։ Quand la bouche a parlé, le coeur dit le contraire.—«բերանը խոսում է, սիրտը հակառակն է ասում»։ Ամերիկացիները հնարել էին մի էլեկտրական գործիք՝ դատարանի համար. մեղադրյալը դնում էր ձեռքերը այդ գործիքի վրա. եթե իր ցուցումները ճշմարիտ էին, գործիքը անշարժ մնում էր, իսկ եթե սուտ էր խոսած, գործիքը սկսում էր շարժվել. այդ շարժման պատճառը այն ներքին հուզմունքն էր, որ պիտի զգար հանցապարտը սուտ խոսելիս։ Բայց որքա՜ն մեծ էր թիվը այն մարդկանց, որոնք այնքան էին վարժված սուտ խոսելու, որ կարող էին նույնիսկ այդ գործիքը անշարժության դատապարտել։

Զգայանիշ նշանները չի կարելի կեղծել կամ դադել. ամոթից կարմրած մարդը չի կարող կարմրությունը հետ վանել, վախից դողացող մարդը չի կարող իր սարսուռը կանգնեցնել։ Գործանիշ նշանները կարելի է միշտ սխալ հասկանալ. դաղափարանիշը արդեն պայմանական է. իսկ լեզուն, այն է հոդավոր լեզուն, կարելի է միշտ կեղծել ու ստել։

Թե մեր լեզուն հաղորդակցման միջոց է միայն, այդ ցույց է տալիս համրերի և կուրերի «լեզուն»։ Համրերը իրրև հասարակական էակներ նույնպես պետք ունեին լեզվի. նշանացի խոսակցությունը անբավարար էր սովորականից բարձր մտքերի

համար. մի ֆրանսիացի աբբա (Abbé de l'Épée) հնարեց մատների այբուբենն. յուրաքանչյուր տառի համար որոշեց մի առանձին ձև, և այս ձևերով էլ խոսում են համրերը[1]։



Բայց այս միջոցը կարող է օգտակար լինել միայն նրանց համար, որոնք լավ սովորած էին այդ այբուբենը. ուրիշների համար անհասկանալի էր. և համրը համրի հետ, ինչպես և խոսունը համրի հետ կամ համրը խոսունի հետ չէր կարող խոսել։ Ուստի մտածեցին մի ավելի լավ միջոց։ Որոշեցին համրերին սովորեցնել մեր լեզուն, գործածելով ոչ թե ականջները, որ անզոր էին, այլ աչքն ու ձեռքը։ Համրի առջև արտասանում են ձայները, ձեռքով զգալ են տալիս բերնի և քթի շունչը, խոչակի թրթռումները և պահանջում են, որ կրկնի։ Համրը իր առաջ ունի մի հայելի և նրա մեջ տեսնում է իր փորձերը. մատով շոշափում է իր խոչակը և, վերջապես, երբ իր փորձերը հաջող ելք են ունենում և հավանություն են գտնում ուսուցչի կողմից, սովո-


---

1 Համրերի այբուբենը (ռուսերենի համար) արտադրել ենք Павленков-ի Энциклопедический словарь-ի 4-րդ հրատարակությունից (С.-П., 1910), էջ 847։ Կուլրերի այբուբենը՝ հայերենի համար, որ այժմ գործածական է Հայաստանում, հաղորդեց մեզ Կուլրերի ընկերության կենտ. վարչության նախագահ՝ աչգուրկ ընկ. Սոկրատ Շահնազարյանը (Երևան)։

Կուլրերի այբուբենի ուսուցման համար կա մի համառոտ տետրակ՝ Как абучать грамоте взрослых слепых, Москва, 1935.

րում և միտքն է պահում։ Այսպես, ձայներին վարժեցնելուց հետո՝ սովորեցնում են տառը։ Համրը միաժամանակ սովորում է կարդալ ձայնը խոսակցի շրթունքի, ինչպես և գրքի վրա։ Գալով քերականության և բառարանին՝ այստեղ էլ արել են մեծ կրճատումներ։ Ֆրանսերեն բառարանից պահել են միայն 7 000 բառ, այն է՝ ամբողջ բառամթերքի վեցերորդ մասը, որ և կազմում է համրի գիտությունը։ Այսքան բան սովորելուց հետո՝ համրը բավական լավ խոսում է և հասկանում ուրիշներին, մանավանդ եթե խոսակիցը գիտե հանդարտ խոսել։

Հակառակ վիճակի մեջ է գտնվում կույրը, որ գիտի լեզուն, լսում է և խոսում է, բայց չի տեսնում և, հետևաբար, չի կարող կարդալ մեր գրածը։ Այստեղ էլ, սակայն, գիտությունը օգնության հասավ՝ ստեղծելով կույրերի այբուբենը, որ հիմնված է շոշափողության վրա։ Ահա կույրերի այբուբենը (հայերենին հարմարեցրած)։



Այդ բոլորից ավելի դժվար է կույր-խուլ-համրի ուսուցման գործը։ Ամենքին ծանոթ է ամերիկացի մի օրիորդի վեպը, որ այդպիսի մի էակի՝ Ելենա Կելլերի (Helen Keller)՝ կրթության գործը հանձն առնելով՝ տարիների աշխատությունից հետո կարողացել էր սովորեցնել նրան կույրերի՝ զանազան լեզուների այբուբենով և տալ այնպիսի կրթություն, որ կարողանում էր կարդալ գրական ու փիլիսոփայական գրվածքներ։ Ավարտեց Հարվարդի

համալսարանը, որ կանանց բարձրագույն կրթարանն էր արտա-
սահմանում։ Որովհետև ոչ աչքը, և ոչ ականջը այդտեղ չէին կա-
րող որևէ դեր կատարել, ուստի ամերիկուհին հաղորդակցության
իբր միջոց վերցրել էր շոշափումը. կույր-խուլուհամրի ափում
մատով գրելով յուրաքանչյուր գաղափար, հաջողել էր, վերջապես,
սովորեցնել նրան այդ բոլորը։

Թև միջոցների օգտագործումը ինչպիսի ձևեր կարող է
ստանալ և մինչև ուր հասնել՝ ցույց է տալիս նորահնար ձայնա-
տես (оптофон) կոչված գործիքը, որով կույրը լսում է որևէ
տպագրված երկի ընթերցումը։ Այս գործիքը հնարել է դր. Ֆուր-
նիե դ'Ալբը Ֆրանսիացին։ Գործիքի էությունը կազմում է սելեն
կոչված մետաղակերպը, որի հատկությունն է՝ ստացած լույսի
քանակության համեմատ ավելի կամ պակաս էլեկտրականու-
թյուն հաղորդել։ Տպագրված գործը դրվելով սելենի դեմ՝ էլեկ-
տրական լամպով լույսը հաղորդվում է սելենին՝ ծակոտկեն ու
շրջուն մի ակավառակի միջով. յուրաքանչյուր տառի լույսը բնա-
կանաբար տարբեր ազդեցություն է գործում սելենի վրա, և սե-
լենը ըստ այնմ ներգործում է իր հետ կապված հեռաձայնի վրա։
Յուրաքանչյուր տառի համար հարմարեցրած է մի կամ մի քա-
նի ներդաշնակված նոտա, որ երգում է հեռաձայնը, հենց որ
ատանում է սելենի էլեկտրական ցնցումը։ Օրինակ՝ v տառի հա-
մար նշանակված է sol mi re do mi sol ձայնաշարքը։ Կույրը սովո-
րում է երաժշտական «այբուբենը» և լսելով հեռաձայնը՝ հասկա-
նում է նորօրինակ ընթերցանությունը կամ լեզուն, որի մեջ
բառը ոչ թե հնչյուններով, այլ երգի նոտաներով է նշանակվում։

ԳԼՈՒԽ Դ

ԼԵԶՎԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԸ[1]

ՆԵՐՔԻՆ ԼԵԶՈՒ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԼԵԶՈՒ

Մարդու հոգեկան բոլոր կարողությունները (խորհրդածություն, երևակայություն, պատկերացում, հուշմունք, գաղափար, ընդհանրացում, ուշադրություն, դատողություն, հիշողություն, ինքնաճանաչում, գաղափարների ղեկավարություն և այլն) կարող ենք վերածել երեք տեսակի. ղեկավարություն, մտածողություն և կամեցողություն։

Հոգեբանությունը սովորեցնում է, թե լեզուն ընկերության մեջ միայն մտքերի հաղորդակցության միջոց չէ, այլև այն միջոցը՝ որով մտածողությունը ստանում է ձև, վերածվում է նյութական նշանների, երևան գալիս արտաքին աշխարհում, հաղորդվում մյուսներին, այլև՝ անհատական մտածմունքների անհրաժեշտ օժանդակը։ Ըստ որում նյութական մի պատկեր ավելի ըմբռնելի է մեր մտքին, քան վերացական մի գաղափար, բայց որքան էլ ուժեղ նյութական լինի պատկերը, նրա մասին մտածելու համար մեզ հարկավոր է մի միջոց, որ է լեզուն։ Մտածել նշանակում է ինքն իր մեջ խոսել։ Սխալ չի լինի ասել, թե եթե կամեցողությունից առաջ կա մտածողությունը, և կամեցողությունը արտաքին աշխարհի հետ խոսելն է, ուրեմն և արտաքին աշխարհի հետ խոսելուց առաջ կա ներքին խոսողությունը. եթե նույնիսկ մարդը վակլված լինի միայն անձնական դիտակցության շրջանակում և չուզի խոսել ուրիշի հետ դարձյալ պետք ունի լեզվին, որովհետև անհրաժեշտորեն պետք ունի մտածողության։ Լեզուն այն միջոցն է, որով դիտակցությունը մարմին է առնում, մտածմունքը՝ նյութականանում։

---

[1] Հմմտ. Compayré, Psychologie, էջ 193—203, որից քաղում եմ թարգմանաբար՝ տեղ-տեղ հապավելով և տեղ-տեղ ընդարձակելով։

Ըստ այսմ մենք կարող ենք ընդունել երկու լեզու. մեկը՝ ներքին լեզու, որ ընդգրկում է մտածելու պրոցեսը, և մյուսը՝ արտաքին լեզու, որ մտածողության հաղորդումն է։ Այս երկուսից ոչ մեկը առանց մյուսի գոյություն չունի. ներքին լեզուն այն իդեալական էությունն է, որին ուղղակի կերպով հասնելու ոչ մի միջոց չկա. և չպիտի լինի նույնիսկ այն ժամանակ, երբ կարելի լինի, ինչպես փորձեր եղել են, նկարելու մտածողությունը լուսանկարչական ալիքներով։ Արտաքին լեզուն, մտածողությունը նյութապես դրսևորելու այն միջոցն է, որով այն հաղորդվում է ուրիշին, ըմբռնվում է, կյանք ստանում և ապրում, նույնիսկ գրի առնվելով՝ դարեր տևում, մինչդեռ մտածողությունը մի վայրկենական երևույթ է, որ գալիս ու անհետանում է թերևս միայն մտածողի մտածողության մեջ, առանց մի ուրիշին էլ հաղորդվելու։

A-ն խոսում է B-ի հետ։ A-ն տեսնում է B-ին, միտք ուներ մի բան ասելու նրան. ասում է. մտածումը ավելի առաջ է, քան խոսքը. խոսքը լսեց B-ն. պատասխանը պատրաստեց և ասաց A-ին. A-ի խոսքը ավելի առաջ է, քան B-ի մտածմունքը, բայց B-ի մտածմունքի պատճառն ու ծնուցիչն է. B-ն էս նախ մտածեց և ապա խոսեց. բայց իր խոսքը պատճառ եղավ A-ի մտածմունքին և հետո՝ նրա պատասխանին։ Այսպես շարունակ փոխադարձաբար, մինչև խոսակցության վերջը։ Կարող է լինել, որ փոխադարձ պատասխանները այնքան արագ կատարվեն, որ ռեֆլեքսի պես մի բան դառնան, ինչպես երբ հեռախոսով խոսելու ժամանակ խոսակիցը շարունակ ասի. այո, հա, հըմ, հը... ռեֆլեքսի նման. բայց այդ բոլորը ինչքան էլ կարճ ու արագ լինեն, դարձյալ մտածմունքի արդյունքն են և ոչ թե չմըտածված, անխորհուրդ ռեֆլեքս։

Արտաքին լեզուն կարող է զանազան լինել՝ շարժուձևերով, բնաձայն կամ բառերով, բերանացի, արձանագրվել գլանի վրա, նկարված, ձայնագրի վրա առնված կամ գրի առնված։ Վերջինը միշտ մի արվեստական կողմ ունի, որովհետև գրողը անշուշտ խորհրդածությամբ մշակած, չափած ու ձևած կլինի։ Գործող խոսակցությունը ամենից բնականն է։ Հին լեզուները, որ մեզ ավանդված են միայն գրավոր ձևով, ըստ այսմ միշտ մի արվեստական կողմ ունեն, երբեմն քիչ, երբեմն շատ։ Ավելացնենք սրա վրա այն ձևափոխությունները, որ զանազան գրիչները ավելացրած կլինեն հետագա ընդօրինակություններին մեջ։

Ներքին լեզուն անպայման անհրաժեշտ է, որի արդյունքն է արտաքին լեզուն։ Կարող է լինել ներքին լեզու առանց արտաքին լեզվի, բայց արտաքին լեզուն առանց ներքին լեզվի՝ չկա։ Ներքին լեզուն առանց արտաքին լեզվի այն է, երբ մարդ մտածում է, բայց չի ասում, կամ պատրաստվում է ասելու, բայց մեկը խանգարում է նրան։ Սա կոչվում է «խոսքը բերանս մնաց»։

Խոսքը և մտածողությունը մի անբաժան միասնություն են կազմում։ Ոմանք սրան հակառակ լինելով, առարկում են, թե եթե այսպես լիներ, ապա նախնական մարդը, որ զուրկ էր խոսողությունից, կամ հոդավոր բառերի տեղ զանազան շարժուձևեր էր գործադրում, զուրկ պիտի լիներ նաև մտածողությունից։ Մինչդեռ ասում են նրանք, ընդհակառակը, այժմ ընդունվում է այն կարծիքը, որ անասունն անգամ, որ անհամեմատ ավելի ցածր է մարդուց, ունի խորհողության կարողություն։

Մանուկը, որ դեռ նոր է սովորում լեզուն և դեռ բառը չգիտե, ըմբռնում է նախապես բառի և նրա նշանակած առարկայի միջև գտնված հարաբերությունը, հետևաբար ունի դատողություն, ըմբռնողություն և մտածում։

Վերջապես համրերը, որոնք լեզու կամ խոսողություն չունեն, ունեն, սակայն, դատողություն, ըմբռնողություն և մտածում, և երբեմն նույնիսկ ավելի լավ են դատում, քան խոսող մարդիկ, և հենց այդ դատողության ու մտածողության արդյունքով է, որ կարողանում են ստեղծել զանազան նշաններ՝ բացատրելու համար իրենց միտքը։

Վերը բերված կարծիքին հետևողները բերում են նաև ուրիշ առարկություններ։

Բառը, ասում են, գաղափարի նախապայման համարել այնպիսի մի անհեթեթություն է, ինչպես որ ասենք, թե գրությունը գաղափարի նախապայման է։ Բառ և գրություն իրր միևնույն բաներն են. առաջինը գաղափարի ձայնական պատկերացումն է, երկրորդը՝ նշաններով, որի լավագույն օրինակն է գաղափարագիրը, որ և հաճախ ավելի լավ է պատկերացնում գաղափարը, քան հնչական գրությունը։ Եթե թղթի վրա գրված տեսնենք գայլ բառը, չպիտի կարողանանք հասկանալ, թե նա ներկայացնում է գայլ գազանը, թե՝ բերանակապ. իսկ եթե լիներ գաղափարագիր, անշուշտ գայլ գազանն ու բերանակապը տարբեր նշաններ պիտի ունենային։ Զինարենում շատ գաղա-

փարներ միևնույն հնչմամբ են արտահայտվում, և երբ երկու չինացի իրար չեն հասկանում հնչման նույնության պատճառով, իսկույն դիմում են գրության, որ գաղափարագիր լինելով, անմիջապես պատկերացնում է ճիշտ գաղափարը։ Բայց ասել՝ թե գաղափարագիրը ավելի առաջ է, քան գաղափարը, անշուշտ ոչ ոք չպիտի մտածեր։

Մարդու մոտ կատարված է բառի և գաղափարի միջև այնպիսի անլուծելի մի կապակցություն, որ նա չի կարող այդ երկուսը բաժանել իրարից և առարկան ու նրա անունը իրարից անջատ ըմբռնել։

*Սրանից է բխում այն հակասությունը (տես վերը), որ նկատում են հաճախ բառի ստուգաբանական նշանակության և արդի իմաստի միջև. ասում ենք կարմիր մելան—*красные чернила, *մինչդեռ մելան և* чернила *ստուգաբանորեն նշանակում են «սև». ասում ենք կարմիր գույնով սպիտակեղեն և այլն։ Այս բոլորը ցույց է տալիս, որ առարկայի անունը այլևս մեզ համար անջատ գաղափար կամ առանց գաղափարի հնչյունախումբ է և անմիջապես կապված է առարկայի հասկացողության հետ։*

Վայրենու համար անունը ինքնագո մի բան է. նա անձը բաժանում է երեք մասի՝ հոգի, մարմին և անուն. անունը հոգի է, որի հետ կապված է որոշ կենսական կարողություն։ Այս գաղափարից է բխում տաբուն, որի մասին տես ընդարձակ Գլ. Զ. սրա համաձայն առարկայի անունը նույն ինքը առարկան է, որ նույնիսկ մահվանից հետո էլ մնում է. և առարկայի անվան դիպչել նշանակում է նույնիսկ առարկային դիպչել կամ նրա հետ գործ ունենալ։ Մենք էլ առանց բառի ընկերակցության գաղափար չունենք, և մինչև իսկ մեր ղուտ ներքին խորհրդածություններում մեջ գաղափարների խորհրդանշանները բառերն են, որ մենք մտավորապես որոճում ենք։ Երբ մենք բոլորովին առանձին և մեզ համար մտածում ենք՝ առանց մեր բերանն ու շրթունքները շարժելու, առարկաների անունները մեկ-մեկ անցնում են մեր մտքով, կարծես թե մեկը մեզ այդ բառերը թելադրում կամ հուշում է, և մենք լսում ենք նրա ձայնը։ Այս է, որ կոչվում է ներքին լեզու, որ ավելի առաջ է, քան խոսակցությունը։ Մարդիկ կան, որոնց մեջ այդ ներքին լեզուն այնքան ուժեղ է, որ նույնիսկ բացարձակ արտահայտվում է արտաքին լեզվով. այսինքն՝ մենակ մտածելու ժամանակ էլ խոսում են, իբրև թե մեկին ուղղելիս լինեին իրենց մտքերը։ Այս երևույթը

կոչվում է բարձրաձայն մտածել, որ և նկատելի է դառնում հատկապես բարկացած ժամանակ կամ գրգռված մի ջոցին։

Ներքին լեզվի գոյության ի հակառակն ապացույց է քուքակի խոսակցությունը։ Քուքակը լսում է իր շրջապատը և հաճախ մեր այսինչ կամ այնինչ բառը կրկնում տեղի անտեղի։ Բայց դա լեզու չէ, որովհետև կապված չէ մտածողության, այսինքն՝ ներքին լեզվի հետ։ Եթե քուքակը մտածեր արտահայտել այսինչ գաղափարը և այդ գաղափարը արտահայտելու համար արտասաներ այսինչ համապատասխան ձայները, այն ժամանակ կլիներ լեզու, այն է արտաքին լեզու՝ ներքին լեզվի հետ միասին։

Ներքին լեզվի գոյության ապացույցներից մեկն էլ այն է, որ եթե միևնույն մտածմունքը մտածենք նախ մայրենի լեզվով և հետո մի որևէ օտար լեզվով, որին լավ չենք տիրապետում, երկրորդը առաջինից ավելի դանդաղ կլինի, և այնքան ավելի դանդաղ, որքան քիչ ենք տիրապետում նրան։ Կլինեն մինչև անգամ տեղեր, երբ բառը չիմանալու պատճառով մտածողությունը կանգ կառնի, ապասելով այն ներքին հուշարարին որպեսզի գտնի բառը և թելադրի մեզ։

Ներքին լեզուն երևում է նաև մի ուրիշ խոսակցության ժամանակ։ Երբ մենք լսում ենք մի ուրիշի խոսակցությունը, ամեն մի բառն ու վանկը ամբողջությամբ չենք լսում և պակասորդը թելադրում-լրացնում է մեր ներքին լեզուն, ճիշտ ինչպես ընթերցանության ժամանակ մենք բոլոր տառերը առանձին-առանձին չենք դիտում, այլ ամբողջը միանգամից ցոլանում է ներս. և դրա համար էլ հաճախ վրիպակները աննկատելի են մնում։

Ներքին լեզվի լավագույն ապացույցը երազն է։ Երազի մեջ հաճախ է պատահում, որ մենք ամբողջ խոսակցություններ ենք ունենում զանազան մարդկանց հետ։ Ասում ենք, պատմում, դատում, երգում, հարց տալիս և այլն, և այդ բոլորը միայն ներքուստ, առանց որևէ արտաքին արտահայտության։ Եթե մեկը մեր երազի միջոցին դիպե մեզ, գուցե կնկատի մեր դեմքի վրա ջղային որևէ արտահայտություն, ժպտի մի ճառագայթում, հոնքերի պռոստում կամ նման շարժումներ, երբեմն նաև կլսի մի անորոշ ճիչ կամ գուցե ամբողջական բառեր կամ նույնիսկ նախադասություններ, բայց ոչ երբեք շարունակվող ամբողջական խոսակցություն։ Եվ, սակայն, երազատեսը վարում է այդ

խոսակցությունը, որ և արթնանալուց հետո սկիզբ հիշի և սկիզբ պատմի ուրիշներին, հաճախ երկար ու շատ երկար։

Այդ ամբողջը ներքին լեզու է, որը և գոյություն ունի միայն ու միայն հոդավոր լեզվի հիման վրա։

Սակայն լինում է երբեմն, որ մարդ զգում է մի բան, բայց չի գտնում բառ՝ արտահայտելու համար, և սկսում է երկար դարձվածներով իր միտքը արտահայտել։ Դիտեցեք վերջալույսը, որտեղ կան հարյուրավոր երանգներ, գույների զանազան նրբություններ. այդ բոլորը մենք տեսնում, զանազանում և տարբերություն ենք, բայց բառեր չունենք այդ նրբություններն նշանակելու համար։ Այսպես և մի տարօրինակ իր, նոր նյութ, ուտելիքի մի նոր տեսակ, մի անծանոթ բույս, քար կամ մետաղ, որոնք տեսնում ենք, բայց անունը չգիտենք։ Շատ անգամ մարդ զգում է մի բան, ասում է. «մի բան եմ լինում», բայց չգիտե բառը, որպեսզի արտասանե։ Արդյոք դա նշանակում է, թե գաղափարը կա, բայց բառը չկա։ Այսպես է լինում նաև բանաստեղծական ներշնչումների, երաժշտական մի գեղեցիկ հատվածի ունկնդրության ժամանակ, երբ մարդ զգում է զանազան հոգեկան զգացմունքներ, ապրումներ, մինչև իսկ երբեմն գրիչը ձեռքն է առնում թղթի վրա գրելու համար այդ բոլորը, բայց անկարող է, բառերը իրեն պակասում են կամ շատ տկար կերպով են թարգմանում այն բոլորը, ինչ որ ներսում զգում է։ Արդյոք կա գաղափար կամ միտք, իսկ բառը կամ լեզուն չկա։

Վերջապես լինում են նույնիսկ դեպքեր, երբ մարդ առանց մտածելու ավելի լավ է խոսում, քան երբ մտածում է։ Այսպես, երբ մեկը արտասանում է անգիր արած մի բան, մեքենաբար ավելի լավ է ասում, քան երբ մտածեր։ Եվ նույնիսկ, երբ մի բառ մոռացավ կամ թելը կորցրեց, մտածմունքը չի օգնում նրան, և նա ստիպված է նորից կրկնել արագ և մեքենաբար այդ անգիր արածը, և այս անգամ կհիշի մոռացածը։ Ճիշտ նույնն է նաև գրության մեջ. մեկը կարող է մոռանալ թե այսինչ բառը ինչպես պետք է գրել, հիշողությունը չի օգնում, գրիչը ձեռքն է առնում, կամ նույնիսկ մատով փորձում է գրել, և գտնում է մոռացած բառը կամ տառը։

Շատ սովորական է այն երևույթը, երբ մեկը մի որևէ անգիր բան է ասում (բարձրաձայն կամ փսփսալով), իսկ միտքը ուրիշ տեղ է։ Նույնիսկ նա ուզում է սևեռել իր ուշադրությունը իր անգիր ասածի վրա, բայց միտքը իրեն չի հպա-

տակվում, գնում է հեռու տեղեր և գաղափարների զուգորդությամբ, նյութից նյութ անցնելով, հասնում է մի անսպասելի վայր, և անգիր սսողը հանկարծ նկատում է, որ իր անդիրը վերջացել է անկախ իրանից։ Միտքը գործել է մեքենաբար՝ առանց գիտակցության. և որովհետև այդ միջոցին իր կոկորդը զբաղված էր բառերի արտասանությամբ, ուստի իր մտածած մյուս գաղափարները բառերով չէին, այլ պատկերներով։

Զգացմունքներին համապատասխան բառեր գտնելու համար հորինված է գաղափարների բառարանը (Dictionnaire des idées, Sachwörterbuch)։ Սա մի տեսակ բառարան է, որ ոչ թե ըստ բառաձևի է կազմված, այլ ըստ իմաստի։ Երբ մարդ գիտակցում է ինչ-որ նշանակություն կամ իմաստ, բայց նրա բառը չգիտե, փնտրում է այդ բառարանում և աչ ու ձախ թերթելուց հետո գտնում է։ Մի շատ հասարակ օրինակ տալու համար վերցնենք հրացանի ծայրը, որի անունը, ասենք թե չգիտենք, փնտրում ենք հրացանի ծայր իմաստը և գտնում համապատասխան բառը՝ կոթ, կամ կաղամբի գլխի ծայրը կամ միջուկը՝ կոչան (кочан) և այլն։

Որովհետև մենք ամենքս մանկությունից սկսած վարժված ենք թե ներքին, և թե արտաքին լեզվին, ուստի իսկապես չենք կարող դատել, թե ինչպիսի մտավոր ուժերության պիտի հասնեինք, եթե լեզվից զուրկ լինեինք[1]։ Առանց մտնելու դրա ուղ-

[1] Մտածողության արագությունը չափելու համար ես և ընկեր Գրիգոր Գարեգինյանը հետևյալ փորձը կատարեցինք։ Նոր Հայկազյան բառարանից նա կարդում էր արագությամբ ամբողջ բառաշարքեր։ Դիտել պետք է, որ ՆՀԲ-ում բառերը տող առ տող իրար չեն հաջորդում, այլ յուրաքանչյուր բառի մոտ գրված է տասնյակ տող բացատրություններ։ Պետք էր ուրեմն աչքով թռչել այդ տողերի վրայից և բառերը կարդալ իրար հետևից անընդհատ և սյունակից սյունակ անցնելով։ Մինչև հաշվով չափեցինք և գտանք, որ նա մի րոպեում կարդում էր 100 բառ ես ուշադրությամբ լսում էի բառերը, մտածում և որոշում, թե այդ բառերի շարքում որոնք էին, որ գրաբարում կամ աշխարհաբարում անեզական գործածություն ունեին, ուրեմն ես մեկ րոպեում լսողության միջոցով ընկալում, մտքումս դատում և վճիռ էի տալիս հարյուր բառի մասին, որ անում է մի վայրկյանում մեկ և կես բառ. չափազանց մեծ արագություն է։ Այդքան կարճ միջոցում ուրեմն ես կատարում էի 3 գործողություն՝ լսողությամբ ստացում, դատողությամբ գաղափար և վճռելով որոշում. այսինքն նախ բառ, հետո գաղափար, հետո բառ։ Առաջին կետը դուրս հանելով իբրև կրավորական, մնում է նախ գաղափար, հետո բառ։ Անհնարին է հերքել այս հաջորդականությունը, որովհետև ես չլսած և չմտածած չէի կարող որոշել, բայց այդ ժամանակամիջոցը այնքան կարճ է (1 բառի վճիռը 0,23), որ համարյա աննկատելի է։

դակի քննության մեջ, մենք կարող ենք, սակայն, քննել այն բոլոր ծառայությունները, որ լեզուն մատուցանում է մարդուն, որով և ի հակառակն դատելով՝ պիտի իմանանք, թե նրա պակասությամբ ինչ առավելություններից զրկված պիտի լիներ միտքը։

Լեզուն ծառայում է մարդու մտածողությանը հետևյալ տեսակետներով. 1) իբր գործիք թանձրացման, 2) իբր գործիք ճըշտության, 3) իբր գործիք համառոտության, 4) իբր միջոց հիշողության, 5) իբր գործիք վերլուծման։

1. ԼԵԶՈՒՆ ԻԲՐ ԳՈՐԾԻՔ ԹԱՆՁՐԱՑՄԱՆ

Առաջին տեսակետով արդեն վերևում քանիցս անգամ շոշափեցինք. լեզուն կամ բառը այն միջոցն է, որով գաղափարը ստանում է նյութական ձև։ Ավելացնենք այստեղ, որ ինչքան առարկան զգալի կամ շոշափելի է, այնքան էլ քիչ է բառի կարիքը. մենք կարող ենք ուղղակի ցույց տալ առարկան կամ գործողությունը։ Այն բոլոր շարժուձևային նշանները, որոնց մասին խոսեցինք Բ գլխում, ներկայացնում են այդ կարգի գաղափարներ։ Բայց հենց որ միտքը բարձրանում և հասնում է ընդհանուր գաղափարների և ուզում է արտահայտել վերացական դատողություններ, նա նյութապես արտահայտվելու ուրիշ միջոց չունի, եթե ոչ բառը։ Բանականությունը, որ միշտ պետք ունի մի նյութական կռվանի, առաջին պարագային հենց առարկան է դարձնում կռվան, իսկ երկրորդ պարագային միակ նյութական բանը, որ կա և կարող է իբր կռվան ծառայել, դա բառն է։ «Լուռ մտածածն այնքան զգալի չէ, որքան այն, երբ այդ մտածածը խոսքերով է արտահայտվում։ Մտքումդ ամենայն հանգստությամբ կարող ես հայհոյել, բայց բարձրաձայն—այդ շատ ծանր է» (Նար-Դոս, «Մահը», 497)։

Այս է՝ լեզուն իբր գործիք թանձրացման։

2. ԼԵԶՈՒՆ ԻԲՐ ԳՈՐԾԻՔ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ

Ամեն մարդ գիտե, թե ինչքան անորոշ ու տարտամ կմնան մեր մտածողությունները, ցորչափ նրանք չեն արտահայտված։ Մեր երևակայությունը մնում է շփոթ, քանի նա չէ ստացած իր բանավոր ձևը։ Շատ անգամ պատահում է, որ մենք մեծ արժեք ենք տալիս այս կամ այն անորոշ խոհին, բայց հենց որ ար-

տահայտում ենք, տեսնում ենք, թե որչափ տկար կամ անարժեք է նա։ Բառերը մեր մտքերի անողորմ թարգմաններն են, և նրանք են, որ երևան են հանում նրանց իրական արժեքը։ «Լեզուն բերանի մեջ ինչ է, ոմ իմաստուն,— ասում է Սաադին (Գուլիստան, Առաջաբան).— հնարիմաց մարդու դանձարանի դռան բանալին. երբ դուռը փակ է, ով ինչ է իմանում, թե դոհարավաճառ է, թե վերեզակ»։

Բացի այս ընդհանուր սկզբունքից, բառերը նաև այլապես միջոց են ճշտելու մեր գաղափարները և նրանց նուրբ երանգները գծելու։ Որքան նրբություն կա, օրինակ՝ գեղեցիկ և սիրուն,— պերճ, շքեղ, փարթամ, փառավոր, հոյակապ,—հարուստ, ճոխ, մեծատուն,— դուրեկան, հաճելի, ախորժելի,— ճոգեել, պարտասիլ, խոնջալ,— կշտանալ, հագենալ, հափրանալ,— ձեռ, ագի, դմակ, տուռն, պոչ և այլն, և այլն հոմանիշների մեջ, որոնցից որոշները նյութապես էլ ըմբռնելի են, իսկ մյուսները՝ մտավոր դաստողությամբ միայն։

Լեզուն այնքան կատարյալ է, որքան ընդունակ է ճշտապես ներկայացնելու մեր մտածողությունը։

3. ԼԵԶՈՒՆ ԻԲՐ ԴՈՐԾԻՔ ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅԱՆ

Երբ մի գաղափար ներկայանում է մտքին՝ նա մենակ ու անջատ չէ, այլ միշտ ավելի կամ պակաս չափով ընկերացած է ուրիշ պատկերների հետ։ Երբ մտածում ենք՝ ոովիտ, ինչքան էլ դանդաղ լինի մեր մտածմունքը, այնուամենայնիվ շուտով մեր երևակայության առաջ պատկերանում են մի դուրեկան տեղ, մարգագետիններ, շրջապատող սարեր, ծառեր, ծաղիկներ, մի վտակ, որ հոսում է հանդարտ նրանց միջով և այլն։ Երբ ասում ենք պատերազմ, մեր մտքի մեջ պատկերացնում ենք երկու թշնամի բանակներ, որոնք իրար դեմ շարված գաղանաբար կռտորում են իրար, թնդանոթներ են որոտում, գնդակներ են վըզրում ու սրեր են շողում։ Այսպես նաև վերացական գաղափարների համար, ինչպես, օրինակ՝ մարդկություն, որ մեզ ներկայացնում է մարդկանց ու ազգերի պանապան խմբակցությունները, ցեղերի ու սերունդների ամբողջությունը։ Ուրեմն բառը համառոտում է միտքը և այն բոլոր պատկերների ամբողջությունը միացնում է իր մեջ։ Երբ մենք կարդում ենք կամ խոսում, պետք չունենք յուրաքանչյուր բառի հետ գտնված բոլոր պատկերները մի առ մի ներկայացնելու, արդեն բառը ամբող-

ջությամբ տալիս է մեզ այն։ Բառը այս կողմից նման է գրահաշվական նշաններին, որոնցով համառոտ կերպով ներկայացնում ենք բոլոր թվաբանական գործողությունները, փոխանակ մի առ մի նկարագրելու նրանք։

Այս տեսակետից հիշելու արժանի են հատկապես բարդ և բարդածանց բառերը, որոնք ի մի են գումարում զանազան բարդ մտքեր. օրինակ՝ փոխանակ երկար բարակ նկարագրելու և անվանելու «պապական (կաթոլիկ, հռոմէական) կղերի կողմից պատրաստված այն մարդկանց (կրոնավորի սքեմ հագած), որոնք գալիս էին հատկապես մեր երկիրները հայ, հույն, ասորի, պտի և հնադարյան քրիստոնյա ժողովուրդների մեջ կաթոլիկ դավանանքը տարածելու և այդ ժողովուրդներին իրենց հայրենի հավատից հեռացնելով՝ պապին երկրպագու դարձնելու, կամ նույնպիսի նպատակով պատրաստված անգլիացի կամ ամերիկացի պաստորները, որոնք գալիս էին բողոքական դավանությունը տարածելու և իրենց պետության դաղութակալական քաղաքականությանը նպաստելուն», ասում ենք ներավատրս, և իրենց այդ գծուծ արհեստը՝ ներվատրսություն, գաղութարարություն։

Երբեմն ճշտությունը և համառոտությունը միանում, իրար հետ զուգընթաց են գնում։ Երբ ասում ենք դմակ, ոչ միայն համառոտում ենք մի ամբողջ միտք, այլև հավելվածական մասը, որ անասունների հետևում կախված է լինում», այլև ճշտում ենք հատկապես այն, որ այդ պոչը վերաբերում է ոչխարին, խոյին կամ գառնուկին և ոչ թե՝ անասունների մի ուրիշ տեսակի։ Այստեղ բառը կատարում է ճիշտ այն դերը, ինչ որ կատարում են հատուկ անունները (մարդու կամ տեղի). փոխանակ ասելու «Հայաստանի այն մասը, որ բարձրադույնն է բոլոր մյուսների մեջ, որ 5,146 ոտք բարձրություն ունի», ասում ենք համառոտու ճշտված ձևով՝ Մասիս։ Փոխանակ ասելու, այն զորավարը, որ «Հայաստանի սիրով վառված կռվեց Ալաթայրի դաշտում և նահատակվեց», համառոտված ու ճշտված ձևով ասում ենք Վարդան Մամիկոնյան և այլն։

4. ԼԵԶՈՒՆ ԻԲՐ ՄԻՋՈՑ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ

Լեզվի այս հատկությունը բխում է գլխավորապես նախորդներից, այն է՝ թանձրացումը, ճշտությունն ու համառոտությունը։ Այս հատկություններով նա հեշտացնում է մտածողությունը,

ավելորդ ծանրաբեռնվածությունները ջնջում, գործադրության դրվելիք նյութը սեղմում-ամփոփում, և սրանով էլ օգնում հիշողության: Մեր միտքը պիտի լիներ շփոթ մի քաոս, եթե փոխանակ թանձրացյալ բառերի կապակցությամբ կազմված նախադասության, ստիպված լիներինք գաղափարները առանձին-առանձին հիշել և հետո այդ գաղափարների կապակցությունը կազմելով՝ նորից մեր դատողությունները վերհիշել: Որքան դժվար գործ պիտի լիներ, օրինակ, եթե սկսեինք հիշել հայոց պատմության մեջ Հայկազանց բոլոր թագավորներին, սկսած Հայկից մինչև Վահե (45 անուն), փոխանակ ասելու մի բառով «Հայկազունք», կամ աշխարհագրության մեջ փոխանակ ասելու «Հին Հայաստանի նահանգները», մի առ մի հիշեինք. Բարձր Հայք, Զորրորդ Հայք, Աղձնիք, Տուրուբերան, Մոկք, Կորճայք, Պարսկահայք, Վասպուրական, Սյունիք, Արցախ, Փայտակարան, Ուտի, Գուգարք, Տայք, Այրարատ (15 անուն), կամ քիմիայի մեջ փոխանակ ասելու մի բառով «մետաղակերպներ» մի առ մի թվելինք՝ ֆլոր, քլոր, բրոմ, յոդ, թթվածին, ծծումբ, սելեն, տելուր, ազոտ, ֆոսֆոր, ծարիր, ածխածին, սիլիցիում, բոր (14 անուն) և այլն:

Ընդհանուր անունները կամ բառերը այստեղ դառնում են միջոց արվեստական հիշողության, ճիշտ ինչպես որ ավելի հետո՝ նոր կեղծ բառերով կարող ենք զանազան բառերի և գաղափարների մի ամբողջ շարք արվեստական կերպով սեղմել ու դյուրությամբ հիշել: Օրինակ՝ Խալդյան 15 թագավորների անունները իմանալուց հետո, փոխանակ մի առ մի միտք պահելու, թե ո՛ր թագավորը որին հաջորդեց, կարող ենք կազմել Ալշիմաշ Ռատեշիմ կեղծ բառը և դրա միջոցով էլ իսկույն հիշել, թե այդ թագավորներից առաջինն է Արամե, որին հաջորդեց Լուտիպրիս, սրան էլ հաջորդեց Շարիդուր (Սարդուր) Ա, հետո՝ Իսպունիս, Մենուաս Ա, Արգիստիս Ա, Շարիդուր Բ, Ռուսաս Ա, Արգիստիս Բ, Ռուսաս Բ, Երեմինա, Ռուսաս Գ, Շարիդուր Գ, Իրկուաս և Մենուաս Գ:

5. ԼԵԶՈՒՆ ԻԲՐ ԴՈՐՇԻՔ ՎԵՐԼՈՒԾՄԱՆ

Կոնդիլյակ Ֆրանսիացի փիլիսոփան ասել է, թե լեզուները վերլուծական մեթոդներ են: Մտածողության վերլուծումը անշուշտ նախ և առաջ մի ներքին գործողություն է, մտավոր մի աշխատանք, և լեզուն չէ, որ ուղղակի կատարում է այն, Բայց

Եթե լեզվի մեքենականությունը չէ, որ կատարում է վերլուծումը, նա գոնե հեշտացնում է այդ գործը։ Բացի սրանից, որոշ դատողությունները մտքի բոլորական գործողության արդյունքն են. լեզուն, սակայն, որ մի ընդհանուր զգացում չէ, այլ նյութականացած բառերի մի խումբ, պարտական է դատողության զանազան մասերը բաժանել իրարից, յուրաքանչյուրը դնել մի առանձին բառի կամ բացատրության մեջ և հետո կապակցել նրանք իրար հետ։ Այսպիսով, լսողը ավելի լավ կարողանում է համեմատել գաղափարների անջատ մասերը իրար հետ, ըմբռնել նրանց հարաբերությունը իրար հետ և հետո հասնել տրամաբանական եզրակացության։ Լեզուն այս ձևի տակ նմանում է մի վարձամանի, ուր քիմիկոսը տարրալուծում է մարմինը և այդ տարրալուծությամբ առաջացած զանազան տարրերը որոշելուց հետո՝ ըմբռնում է ամբողջ մարմնի կազմությունը։

Մեկնելով այս բոլոր տեսակետներից՝ մենք տեսնում ենք, սհա, որ լեզուն կազմում է մտածմունքի ամբողջացուցիչ մասը։ Լեզուն, ստեղծվելով մտածողության հետ, զարգացնում է նրան ինքն էլ, օգնում, ճշտում վերջապես մտքի բուռը թեթևացնում։ Մի վերջին նմանություն բավական է լեզվի ամբողջ պատկերը ցույց տալու։ Նա նման է թվաբանական համրիչի, ուր վերացական թվերը դառնում են քանձրացյալ կուտեր, և մտքի առաջնորդությամբ դես ու դեն հավաքվելով՝ օգնում են նույն մըտքին՝ հեշտությամբ կատարելու թվաբանական բարդ գործողություններ՝ ճիշտ և արագ։ Մարդս կարող է բազմապատկել և այլն որոշ չափով միայն մտքով, բայց դա միայն սահման ունի. իսկ թիվը, մանավանդ դրավոր թվանշանը, տալիս է նրան հնարավորություն անհուն հաշիվների։

Հեշտ է մարդկային մտքի համար հաշվել 6×4=24, 5×8==40, 9×9=81. այս բոլորը արդեն առանց հաշվելու էլ գիտենք Գյութագորյան աղյուսակից։ Դժվար չէ մեր մտքում բազմապատկել և գտնել քիչ մտածությամբ, օրինակ՝ 112×6=672, կամ 504×4=2016, բայց աննկարին է մտքով բազմապատկել 6238×××2364։ Սակայն հաշվիչ գործիքը, մանավանդ նորահնար հաշվիչ գործիքները այդ գործողությունները կատարում են ճիշտ ու ճիշտ։

Բայց ինչպես չի կարելի ասել, թե համրիչի կուտերը կամ թվանշաններն իրենք են, որ կատարում են հաշվումը, և ոչ՝ մարդը, նմանապես չի կարելի ասել, թե բառերը կամ ավելի վատ՝

նրանց բաղկացուցիչ ձայներն են կատարում մտածմունք և ոչ՝ միտքը։ [Լեզուն, այսպիսով, նյութականացնում է միտքը, նյութական հիմք դառնում նրա համար։ Եթե առանց համրիչի էլ, այնուամենայնիվ, հնարավոր է հաշվումները կատարել, թեև դժվարությամբ, ապա առանց լեզվի հնարավոր չէ մտածել։ Ուր որ դադարում է լեզուն, այնտեղ դադարում է նաև մտածողությունը. առանց լեզվի մենք կարող ենք ունենալ զգացողություն, պատկերացում, հոգեկան վիճակ, բայց ոչ՝ միտք և մտածողություն։ Լեզուն է, որ իր նյութականությամբ մարմին է տալիս մեր մտածողությանը, լեզվական մատերիայի հիման վրա ենք մեր պատկերացումները, զգացումները և այլն վերածում մըտքերի։]

ԳԼՈՒԽ Ե

ՀԵՋՎԻ ԲՆԱԽՈՍԱԿԱՆ ԿՈՂՄԸ

Երբ մի ընդհանուր հայացք ձգենք մարդկային մարմնի ներքին ու արտաքին կազմութեյան վրա, կտեսնենք, որ յուրաքանչյուր կենսական գործունեութեյուն տեղավորված է մի գործարանի մեջ, որ նույն գործունեութեյան առանձնահատուկ կատարիչն է։ Այսպես, օրինակ՝ մարսողութեյունը կատարում է ստամոքսը, մարսված իրերի ծծումը՝ աղիքները, արյան մղումը՝ սիրտը, շնչառութեյունը՝ թոքերը, քայլելը՝ ոտները, շոշափումը՝ ձեռքերը և այլն։ Այսպես և խոսողութեյունը կենտրոնացած է հռչակի ու բերանի մեջ՝ նրանց հարակից մասերով։ Եթե գանք ավելի խորը և քննենք յուրաքանչյուր գործարանի ստորաբաժանումները, սիրտ տեսնենք, որ սրանք էլ թեև ընդհանուր գործին ընդհանրապես մասնակից, բայց ամեն մեկը ունի իր առանձին պաշտոնը։ Օրինակ, ուտելու գործողութեյունը հատկացված է բերանին ընդհանրապես. բայց բերանի յուրաքանչյուր մասը ունի իր սեփական պաշտոնը. ատամները ծամում են (ոմանք կտրում, ոմանք աղում), լեզուն շաղախում, գեղձերը շաղախման համար կարևոր հեղուկ են մատակարարում և այլն։ Մի խոսքով, ընդհանուր մարմնի մեջ տիրում է աշխատանքի կատարյալ բաժանում։

Այնուամենայնիվ գործարաններից ոչ մեկը ինքնագլուխ չէ. բոլորի վերևը կանգնած է ուղեղը՝ իբրև գլխավոր դրդիչ և կառավարիչ, որ զգայական ու շարժիչ նյարդերի մի ամբողջ ցանցի միջոցով կառավարում է մարդու և կենդանիների ամբողջ օրգանական կյանքը։ Նյարդային համակարգն է, ուրեմն, այն կայանը, որ ներքին մարդը արտաքին աշխարհի հետ հաղորդակցութեյան մեջ է դնում, որ օրգանիզմը որպես մի ամբողջութեյուն, կապում է ներքին ու արտաքին աշխարհի հետ։

Սակայն ինչպես գործարանների և նյարդային համակարգի մեջ, նույնպես և ուղեղում ամբողջապես ամբողջ կենսական պրոցեսը մի կետի վրա չի տեղավորված։ Այստեղ էլ տիրում է կատարյալ աշխատանքի բաժանում։

Ամենից առաջ ուղեղը բաժանված է երկու կիսագնդերի, մեկը մյուսին կատարելապես հակադիր, որոնցից աջը կառավարում է մարմնի ձախ մասը, իսկ ձախը կառավարում է մարմնի աջ մասը։

Որովհետև մարդիկ առհասարակ աջլիկ են, ուստի երկու կիսագնդերից ավելի զարգացած է ձախը, քան աջը։ Ձախլիկ մարդկանց մոտ բնականաբար հակառակն է։

Մարդուս զանազան շարժական և հոգեկան կարողությունները կենտրոնացած են համապատասխան կիսագնդի այս կամ այն կետի վրա։ Այդ կետերը կոչվում են շարժիչ և հոգեկան կենտրոններ։

Այդ կենտրոնների տեղերը որոշելու համար հարկավոր է նախ համառոտ կերպով նկարագրել ուղեղի կազմը։

Յուրաքանչյուր կիսագնդի մեջտեղում գտնվում է Ռոլանդի ակոսը (RR), որի կողքին է Սիլվյան ճեղքը (SS)։ Այս երկուսը բաժանում են կիսագունդը չորս բլթակի, որոնք են.

1. Ճակատային բլթակ, որ գտնվում է Ռոլանդի ակոսի առաջակողմում։


2. Կողմնային բլթակ, որ գտնվում է նախորդի կողքին, ակոսի հետևում։

3. Քունքային բլթակ, որ գտնվում է Սիլվյան ճեղքի ներքևը։

4. Ծոծրակային (ենթատանդային) բլթակ, որ գտնվում է ծոծրակի բոլորովին հետևը՝ հետնուղեղի վերևը։


Ուղեղի մակերեսը ներկայացնում է շատ անկանոն խորդուբորդություններ, որոնք կոչվում են ծալքեր։ Ճակատային բլթակը պարունակում է 4 ծալք, որ պատկերի մեջ նշանակում ենք a, b, c, d տառերով։ Կողմնային բլթակը պարունակում է նույնպես 4 ծալք, որ նշանակում ենք e, f, k, l տառերով։ Քունքային բլթակը պարունակում է 3 ծալք, որ նշանակում ենք m, n, o տառերով, և, վերջապես, ծոծրակային բլթակը պարունակում է 3 ծալք, որ նշանակում ենք g, h, i տառերով։

Ահա այս ծալքերի վրա են հաստատված բոլոր շարժիչ և հոգեկան կենտրոնները, որոնց գլխավորները նշանակում ենք հետևյալ թվանշաններով.




Նկ. 3.

1) Ստորին անդամների մկանների շարժիչ կենտրոնը.
2) Վերին անդամների մկանների շարժիչ կենտրոնը.
3) Վզի և գլխի շարժման կենտրոնը.
4) Երեսի մկանների շարժիչ կենտրոնը.
5) Լեզվի շարժիչ մկանների կենտրոնը, որ գտնվում է ճակատային բլթակի ներքևում, Սիլվյան ճեղքի դիմացը։



Նկ. 4.



Նկ. 5.

6) Խոսողության կենտրոնը, որ գտնվում է ճակատային բլթակի վերջամասում, 3-րդ ծալքի ստորոտը, Ռոլանդի ակոսի մոտ, լեզվի շարժիչ մկանների հարևանության մեջ։ Այս կենտրոնը գտել և հաստատել է Բրոկա գիտնականը՝ 1861 թվին.

7) Լսողական կենտրոնը, որ գտնվում է քունքային բլթակի առաջամասում.

8) Բառերի լսողական հիշողության կենտրոնը, որ գտնվում է նույն քունքային բլթակի վրա, նախորդի հարևանության մեջ.

9) Տառերի տեսողական հիշողության կենտրոնը, որ գտնվում է կողմնային բլթակի վրա, Սիլվյան ճեղքից քիչ վերև.


10) Տեսողության զգայության կենտրոնը.

11) Աչքի շարժումների կենտրոնը։

Ահա սրանք են մարդկային գործունեության գլխավոր կենտրոնները, որոնք գիտնականների կողմից էլ բազմաթիվ փորձերով հաստատված և ընդունված են։ Ուրիշները դնում են դեռ ուրիշ շատ կենտրոններ, բայց նրանք կամ անստույգ և կամ մեզ համար անկարևոր են։ Այդպիսիներից մեկն է, օրինակ՝ երաժշտական հիշողության կենտրոնը՝ հարակից լսողական կենտրոնին, եթե ոչ մարդակազմական, գոնե բնախոսական տեսակետով։

Կենտրոններից մի մասը ի ծնե կա, և մանուկը զարգացնում է նրանք իր ամենօրյա գործունեությամբ։ Ուրիշները մա-

սամբ կամ բոլորովին ստացական են։ Ստացական կարողություն-ների թվումն է լեզուն, մանավանդ մի քանի լեզուների ուսումը։ Ավելի ստացական են գրչության և ընթերցանության կենտրոն-ները, որոնք ձեռք են բերում դաստիարակության միջոցով, և կարող են բոլորովին պակասել, ինչպես, օրինակ, անգրագետ-ների մեջ։




Նկ. 6.

Կենտրոնները, թեև անջատ, բայց բոլորն էլ կապված են իրար հետ զուգորդության թելերով և մշտական հաղորդակցու-թյան մեջ են։ Ավելին, այդ անջատվածությունը, ինչպես ցույց է տալիս ռուս մեծ ֆիզիոլոգ Պավլովը, չի նշանակում կենտրոն-ների մեկուսացածություն. կենտրոնների անցումը մեկից մյու-սին աննկատելի է, և մեկի ու մյուսի միջև վերջնական սահ-ման դնելը աննկարելի է։ Լավ հասկանալու համար կենտրոնների գործունեության եղանակը, քննենք, օրինակ՝ խաղողի պատկե-րացման եղանակը։ Երբ մեկը առաջին անգամ ձեռք է բերում այդ պտուղը, ստանում է նրանից զանազան տեսակ զգայու-թյուններ. օրինակ՝ գույնը, ձևը, փափկությունը, համը և այլն. այս բոլոր զգայությունները հաղորդվում են իրեն՝ տեսողական, շոշափողական, համառական, հոտառական և այլ կենտրոնների միջոցով՝ միաժամանակ բոլորը կամ հաջորդաբար։ Ցուրաքան-չյուր զգայություն՝ հասնելով իր կենտրոնում՝ կապ է պա-հում մյուս կենտրոնների հետ զուգորդության թելերի միջոցով,

իսկ ամբողջի միացումը տալիս է խաղողի մտապատկերը։ Կապակցությունը այդ կենտրոնների միջև այնպես է, որ եթե որևէ պատճառով մի կենտրոն զարթնի, թելերի հաղորդակցության միջոցով զարթեցնում է և բոլոր մյուսները, և մեզ ներկայացնում է խաղողի պատկերացումն իր ամբողջությամբ։ Կենտրոնները ավելանում են, եթե սովորենք նաև «խաղող» բառը մի կամ մի քանի լեզուներով և նրանց գրության ձևերը։

Հետևյալ, պատկերացման գործողությունը ներկայացնելու համար, տալիս է հետևյալ նկարը.




Նկ. 7

Մարդը տեսել է մի շուն և նրա երևույթը աչքի միջոցով փոխադրվել է տեսողական կենտրոնը (v). հետո լսել է նրա հաչոցը և այդ ձայնը ականջի միջոցով կենտրոնացել է լսողական կենտրոնում (A). կարելի է ավելացնել, որ նա փայփայել է շանը, և ձեռքի միջոցով շոշափողական զգայությունը (m) փոխադրվել է իր կենտրոնը (p). շունը կծել է մարդու ձեռքը, և ցավը զգայական նյարդերով (s) անցել է նույն կենտրոնը։ Վերջը մարդը լսել է շուն բառը, և այդ հիշողությունն էլ հաստատավել է իր կենտրոնում (P). վերջապես ավելացնենք շուն բառի գրությունը՝ իր կենտրոնում։ Այս բոլոր կենտրոնները միացած են իրար հետ և մեկի զարթնումը, օրինակ՝ շան հաչոցը կամ տեսքը և կամ միայն շուն բառը լսելը բավական է զարթեցնելու նաև մյուսները և շան մտապատկերը ամբողջությամբ՝ երևան հանելու։

Նույն սխեման ավելի պարզ ձևի տակ տալիս է Շարկոն։ Ներքևում դրված են արտաքին գործողությունները. մարդը տեսել է մի զանգ. լսել է նրա հնչյունը. ինքը արտասանել է այդ բառը, գրել է իր ձեռքով, լսել է «զանգ» բառը և կարդացել է.

այդ բոլորը զգայական նյարդերով հաղորդվել են իրենց կենտրոններին, որոնք շարված են պատկերի վերին մասում. այն է՝ տեսողության կենտրոն, լսողության կենտրոն, գրի կենտրոն, գրության կենտրոն, լեզվի կենտրոն, խոսողության կենտրոն, իսկ ամենաարժեքը դրված է զուգորդությունների կենտրոնը։ Բոլորը միացած են իրար և վերին կենտրոնի հետ։



Նկ. 8.

Այս բոլոր բացատրությունները ցույց են տալիս, թե խոսողական կարողությունը որքան որ կենտրոնացած մի տեղում, այնուամենայնիվ սերտորեն կապված է ուրիշ կենտրոնների հետ[1],

---

1 Սեչիրը, Язык, էջ 16, մինչև անգամ հաստատում է, որ նույնիսկ մտախոհ (լուռ) ընթերցանության կամ մտածմունքի ժամանակ նյարդերը այնպես են գրգռվում, որ խոչակի ձայնալարերը հոգնում են։ Այս երևույթը

հատկապես լեզվի շարժիչ մկանների (5), լսողական (7), բառերի լսողական հիշողություն (8), և եթե ունենք նոր ստացական կենտրոններ, նաև նրանց հետ, ինչպես տառերի տեսողական հիշողության կենտրոնը (9)։ Լեզու սովորել նշանակում է մանկությունից սկսած լեզվի հարստություն ամբարել իր խոսողական կենտրոնում և հաստատել ամուր կապակցություն դրա և մյուս կենտրոնների միջև։ Կարող է լինել, որ այդ կապերից կամ կենտրոններից մեկը մյուսներից ուժեղ լինի, նայելով թե ինչ ձևով է ձեռք բերված լեզուն։ Այսպես, օրինակ, գործնական ճանապարհով լեզու սովորելու ժամանակ խոսողական կենտրոնն է ամենից ավելի զարգացածը, և նրա հետ նաև լսողական ու բառերի լսողական հիշողության կենտրոնը։ Եթե միայն գրքեր կարդալով է սովորված լեզուն, բնականաբար զարգացած է տառերի տեսողական հիշողության կենտրոնը (9), մինչդեռ խոսողական կենտրոնը թույլ է։

Մարդկանց մեծագույն մասի, հատկապես հետամնաց ցեղերի և անկիրթների վիճակը ներկայացնում է առաջին պարագան, որ է մայրենի լեզվի կենդանի ուսումը։

Որպեսզի մեկը կարողանա կանոնավորապես պատասխանել մեզ, հարկավոր է, որ հետևյալ չորս գործողությունները կանոնավորապես տեղի ունենան իր նյարդային կենտրոններում. 1) պետք է լսի մեր խոսքը (լսողական կենտրոն, № 7). 2) պետք է որ հասկանա մեր խոսքը, այսինքն՝ նախապես լսածը, տեսածը, ըմբռնածը կարողանա զարթեցնել ու զուգորդել վերստին (լսողական հիշողության կենտրոն, № 8). 3) սրա հետևությամբ լսողական պատկերը պիտի հասնի խոսողական, որ է հոդավոր ձայնի հիշողության կենտրոնը և այստեղից էլ՝ 4) շարժիչ կենտրոններն ու մկանները։

Եթե սրանցից մեկը պակասի՝ խոսողությունը մասամբ կամ ամբողջապես կկնջվի։ Այդ բանը մեզ ապացուցում են պակասավորները և դանդաղ տեսակի հիվանդները կամ անդամալույծները։

Առաջին պայմանից զուրկ են խուլերը. լսողական նյարդը չի գործում և հետևաբար լսողական կենտրոնն էլ չի գործում. ուստի խուլը չպիտի կարողանա պատասխանել մեր հարցին, որ

հաստատված է շատ փորձերով։— Մենք նման երևույթ չենք նկատել, նույնիսկ այն դեպքում, երբ երկար հատվածներ կրկնել ենք անգիր մեր մտքում (առանց լեզուն շարժելու)։

միայն լսողական նյարդի և լսողական կենտրոնի միջոցով պիտի հաղորդվեր նրա մտավոր մյուս կենտրոններին։ Եվ եթե խուլը ի ծնե է, չպիտի էլ կարողանա խոսել սովորել, եթե լսողականից դուրս որևէ ուրիշ կենտրոնի միջոցով նրա հոգեվոր ձայնի կենտրոնին չստիպեն գործել։ Այս միջոցը պիտի լինի շոշափողական կենտրոնը, այն, որով շարժում է խուլը լեզուն, օրինակ՝ մաքրելու համար առաջները[1]։

Եթե պակասում է չորրորդ պայմանը, այդ անձը անդամալույծ է և խոսելու կարողությունից զրկված, թեև կարող է լսել և հասկանալ։

Եթե ջնասված կամ հիվանդ է խոսողության կենտրոնը (№ 6), ուրեմն պակասում է երրորդ պայմանը, և մարդը կորցնում է իր խոսողական կարողությունը։ Այս երևույթը կոչվում է աֆազիա։ Հիվանդը ճանաչում է բառերի նշանակությունը, լավ հասկանում է որևէ խոսակցություն, կարող է կարդալ ու իր միտքը բացատրել գրավոր կերպով, բայց անկարող է խոսել։ Նրա ձայնական մկանները անդամալուծված չեն, այնպես որ կարող է շարժել լեզուն, շրթունքները և խոչակը, որովհետև այս գործողություններին շարժման կենտրոնները ուրիշ են և գտնվում են նրա հարևանության մեջ. բայց կորցրել է ա՛յն շարժումների հիշողությունը, որոնք կարևոր են հոգեվոր ձայնի համար[2]։ Մենք գիտենք, որ ուղեղը ունի երկու կիսագունդ և մի կիսագնդի կենտրոնները համապիր ձևով կան նաև մյուս կիսագնդի մեջ։ Բայց խոսողության հիշողության կենտրոնը հատկապես զարգացած է ձախ կիսագնդի մեջ և միմիայն ձախակողմյան կիսագնդի այս մասը (ձախ աչքից քիչ վերև), եթե ջնասված է, բավական է կորցնելու խոսողությունը։ Սրա պատճառն այն է, որ մարդիկ առհասարակ աջլիկ լինելով՝ զարգացրել են միայն ձախակողմյան կիսագնդի կենտրոնը, անզարգացած վիճակի մեջ թողնելով աջ կիսագնդի կենտրոնը։ Խոսողության կորուստը կարող է լինել լիակատար, և հիվանդը անկարող է արտասանել որևէ բառ։ Բայց կարող է լինել նաև, որ նա հիշի մի քանի բառ կամ մի քանի վանկ, որ արտասանում է ամեն մի հարցման իբր պատասխան։

---

1 Լինում է դեպք, երբ ունկնդիրը խուլ չէ, բայց չի լսում մեզ, պատճառն այն է, որ նա ուշադրություն չի դարձրել, միտքը զբաղված է այլ բանով, և ձայնը պատշաճ չափով ու ձևով չի հասնում համապատասխան կենտրոնը։

2 Նա մոտավորապես գտնվում է մի մանկիկի դրության մեջ, որ արդեն հասկանում է ուրիշի ասածը, բայց դեռ խոսել սովորած չէ։

Բրոկան տեսել է մի այնպիսի հիվանդ՝ Լելոնգ (Le Long) անունով մի ֆրանսիացի, որ դիտեր միայն 6 բառ. oui (այո), non (ոչ), tois (սխալ արտասանված, փխ. trois «երեք»), toujours (միշտ), և իր անունը Le Lo (փխ. Le Long). «Երեք» բառով նա նշանակում էր բոլոր թվանշանները և աշխատում էր ձեռքով էլ ցույց տալ ուզած թվանշանը։

Մի ուրիշ դեպքում հիվանդը կրկնում է բոլոր այն բառերը, որ արտասանում են իր մոտ, բայց երբ ինքն է սկսում խոսել, բառերը իրար է խառնում. օրինակ՝ դանակ ասելու փոխարեն ասում է պատառաքաղ։ Կամ թե հիվանդը լսում է զանգի ձայնը, հասկանում է, որ ձայն է, բայց չի կարողանում որոշել զանգի ձայն է, թե մի ուրիշ բան[1]։

Երբ 8-րդ, այսինքն՝ բառերի լսողական հիշողության կենտրոնը ջնջված է, բառերի նշանակության հիշողությունն էլ ջնջվում է։ Հիվանդը կարող է խոսել, կարդալ և գրել. նրա լսողությունը ջնջված չէ, և նա լսում է խոսակիցներին, բայց չի հասկանում նրանց և միշտ կարծում է, թե իր հետ մի օտար և անծանոթ լեզվով են խոսում։ Երբեմն այս հիվանդությունը մասնակի է լինում, և հիվանդը մոռանում է իր իմացած լեզուներից մեկը միայն, մինչդեռ մյուսները դեռ հիշում է։ Կորած լեզվի հիշողությունը ձեռք բերելու համար նա նորից պիտի սկսի սովորել, այսինքն՝ նորից վերահաստատել այն արվեստական կապը, որ ուսուցմամբ հաստատված էր լսողական հիշողության և բառերի նշանակության հիշողության միջև, և որ կորել էր։

Ինչպես խոսողության կենտրոնը, նույնպես և քաղաքակիրթ մարդու մյուս ստացական կարողությունների կենտրոնները կարող են առանձնապես ջնջված լինել, այսպիսի դեպքերում հիվանդը զրկված է լինում նույն կենտրոնի կարողությունից, մինչդեռ մյուսները անվթար են։ Այսպես, երբ 9-րդ, այսինքն՝ տառերի տեսողական հիշողության կենտրոնն է ջնաս-

---

[1] Աֆազիայի ամենահատարակ ձևն է այն, որ պատահում է ամեն ժամանակ մեր կյանքում. խոսակցության ժամանակ հանկարծ մի անուն, մի դժվար բառ չենք հիշում, ասում ենք «Լեզվիս ծայրին է», հիշում ենք մոտավորապես, թե ինչ տառերից է բաղկացած. օրինակ՝ լ-ով է սկսվում և այլն. բայց ամբողջը անմիջապես չի ներկայանում մեր մտքին։ Կամ ընդհակառակը՝ այսինչ բառի տեղ դնում ենք այնինչ բառը՝ առանց մտադրության. օրինակ՝ Թիֆլիս ասելու տեղը ասում ենք Բաքու։ Այս բոլորը նման երևույթներ են։

ված, հիվանդը չի կարողանում կարդալ, որովհետև տառերը այլևս նրա համար նշանակություն չունեն. բայց կարող է խոսել ու հասկանալ ձայնավոր լեզուն։ Մի երաժիշտ, որ բռնված էր այդ հիվանդությամբ՝ նվագում էր լսելով (լսողական հիշողությամբ), բայց չէր կարող նվագել նոտաներով։ Կա և գրության կենտրոնի անդամալուծությունը, որով բռնված անձը կորցնում է գրելու ընդունակությունը, թեև լավ կարող է կարդալ ու խոսել։

Այս բոլոր երևույթները ապացույց են մեզ այն բանի, թե մարդկային կարողությունները կենտրոնացած են ուղեղի որոշ մասերում, նրանց թվում և խոսողությունը։

Ուղեղը ունի միլիոնավոր (ոմանց հաշվով 600 միլիոն) բջիջները և մի քանի միլիարդ թելեր (fibre). եթե ամեն մի բառ հիշողության մեջ մի բջիջ գրավի, նշանակում է՝ թե մարդ կարող է միլիոնավոր բառ ու բան իմանալ։ Ոչ ոք չի հաշվել, թե մարդ քանի բան գիտե, որովհետև յուրաքանչյուր բան իր հետ ունի բազմաթիվ կողմեր. օրինակ՝ խաղող բառը բացի ձայնից իր հետ զուգորդում է դույնը, համը, տեսքը, փափկությունը, հատկությունը, օգուտը, տեսակները, հասնելու եղանակը, գործածության ձևը և այլն, և այլն. այս բոլորը առանձին-առանձին բջիջներ են գրավում, թե բոլորը միասին մի բջիջի մեջ է պարփակվում։ Բացի այդ բոլոր բաներից և իրենց հատկություններից, մենք ճանաչում ենք և գիտենք հազարավոր մարդիկ, ազգական, բարեկամ կամ ծանոթ դեմք, յուրաքանչյուրը իր անունով, դիմագծերով, հագուստով, սովորություններով, բնավորությամբ, ձայնով և այլն, և այլն։ Վերջապես, մարդկային ծանոթությունների թիվը անհուն է և անսահման։ Այնուամենայնիվ մարդկային ամենահարուստ լեզուն էլ, որ ենթադրենք թե ունենա 100 000 բառ և յուրաքանչյուր բառ 10 տարբեր կողմ, այսինքն՝ ընդամենը 1 միլիոն կողմ, դարձյալ մի շատ ոչինչ բան է մտքի համար, եթե նույնիսկ ենթադրենք, որ մարդ կարող է լեզուն ամբողջությամբ իմանալ։ Որքան ահագին չափսարան է, ուրեմն, միտքը և որքան անսահման՝ մարդկային գիտության չափը։

ԳԼՈՒԽ Ջ

ԼԵԶՎԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՈՂՄԸ

Ինչպես մարդ սկզբից ևեթ հանդես է գալիս որպես հասարակական կենդանի, այնպես էլ լեզուն սկիզբ է առնում հենց հասարակության հետ։ Ոչ կարելի է ենթադրել հասարակություն առանց լեզվի, և ոչ լեզու՝ առանց հասարակության։ Չկա հասարակական երևույթների մեջ մի ավելի ընդհանրական երևույթ, քան լեզուն. իր ամենանախնական վիճակից մինչև ամենաբարձրը չի կարելի երևակայել մի հասարակություն, որ կարողանար առանց լեզվի շարունակել իր գոյությունը։

Եթե ոմանք ենթադրել են, թե կան այնպիսի ժողովուրդներ, որոնք զուրկ են լեզվից, սխալվել են. չկա մի ժողովուրդ (որքան էլ հետամնաց լինի նա), որ չունենա իր լեզուն թեկուզ շատ անկատար։ Աֆրիկայի գաճաճները, Ֆիլիպինյան կղզիների նեգրիտոսները և այլ ավելի հետամնաց ժողովուրդներ կամ ցեղեր, որոնց մասին կարծիք կար, թե սեփական լեզու չունեն, ըստ նորագույն քննությունների պարզվում է, որ ունեցել են և ունեն իրենց սեփական լեզուն և այդ լեզվով անգիր բանահյուսություն։

Հասարակական հաղորդակցման ամբողջ էությունը եղրափակվում է սրա մեջ. հաղորդել իր մտքերն ու զգացումները, հասկանալ ուրիշներին և հասկացնել իրեն, իսկ այդ բոլորին իրրև միջոց ծառայում է լեզուն։

Եթե այդպես է, և եթե լեզուն մտքերի հաղորդակցության համար է միայն ստեղծված, պետք է, որ նա ճիշտ ու ճիշտ նույնը լինի հաղորդակցող էակների մեջ։ Այդ էակները կարող են տարբեր զգացումներ, տարբեր հասկացողություններ և տարբեր ընդունակություններ ունենալ, բայց քանի որ լեզուն է միայն դրանց հաղորդման միջոցը, ապա անհրաժեշտ է, որ նա միատեսակ լինի, ապա թե ոչ առիթ պիտի տա տարբեր հասկա-

ցողությունների։ Լեզվական որևէ աննշան շեղում, արտասանության ամենափոքր տարբերություն ընդունվում է մյուսների կողմից ծաղրով։ Ջոկերը իրենց բարբառի համեմատ արտասանում էին՝ հայր, մայր, փայտ, որ, ինչպես գիտենք, ավելի հին և հարգի ձևեր են, քան ձէր, մէր, փէտ, որոնք բարբառային ձևեր են։ Բայց հենց որ ղոկը սկսում էր խոսել երևանցու հետ, իսկույն դարձնում էր ձէր, մէր, փէտ։ Նոր-Ջուղայի գյուղացիք արտասանում էին ձիճ, ճաց, ճայ, անաղարտ պահպանելով հին հայոց ճ հնչյունը. քաղաքում արտասանում էին խիճ, խաց, խայ. և գյուղացին, երբ գալիս էր քաղաք և քաղաքակրթվում էր, սկսում էր արտասանել խիճ, խաց, խայ։ Այդպես է պահանջում լեզվի ընդհանրությունը։

Կային առաջ լեզվաբաններ, և այժմ էլ կան ոմանք, որ կարծում են, թե լեզուն անհատական երևույթ է. ամեն մի անհատ ունի իր սեփական մտածելակերպը և այդ մտածելակերպը արտահայտելու ուրույն ձևերը, որոնք նման չեն ուրիշների արտահայտության ձևերին։ Ճիշտ է այս. բայց անհատը հասարակական էակ է. նա անդամն է այն հասարակության, որի մեջ որ ապրում է. ուստի նա պարտավոր է հարմարվել նրա պահանջներին, փոխել իր անհատական լեզվական ձևերը և նրանց տարբերությունը հասցնել նվազագույնի։

Այսպես, ուրեմն, լեզուն մի հասարակական երևույթ է, որի մեջ անհատի կամքը որևէ արժեք չունի և պարտավոր է ենթարկվել հասարակության պահանջին։ Հասարակական հաստատություններ շատ կան կյանքի մեջ, ինչպես ընտանիքը, պետությունը, օրենքները և այլն, այս բոլորի մեջ մարդիկ ստիպված են հպատակվել ընդհանուր ընդունված կարգերին, որոնք հասարակության ու ժամանակի ստեղծագործությունը կամ մշակած ձևերն են։

Այսպես է նաև լեզուն։ Մյուս հասարակական հաստատությունների մեջ շատ անգամ շեղումներ ներելի են լինում. մեկը կարող է ուտաբռնիկ ժողովի գնալ, դրանով ժողովը չի խանգարվում. մեկը կարող է գլխարկը հակառակ դիրքով դնել, դրանով ոչ նրա գլուխն է ճղվում, ոչ էլ մեկին մի որևէ վնաս հասնում։ Մեկը կարող է իր ընտանեկան կապերը չըմբռնել այնպես, ինչպես ուրիշներն են ըմբռնում կամ իրեն աններելի սանձարձակություններ թույլ տալ. այդ բոլորը կանցնի գուցե և առանց նկատվելու ուրիշների կողմից։ Կրոնի դեմ անսաստողներ են

եղել. դրանք եթե իր ժամանակին ոմանց կողմից դատապարտվել են, ապա ուրիշների կողմից էլ քաջալերվել են իբրև ազատամիտներ։ Սակայն լեզուն այդպես չէ, և ինչքան էլ մեկը ազատամիտ ու ազատախոհ լինի, դարձյալ լեզվի մեջ մեռած է պահպանողական։ Ո՛չ մեկը ոչ մեկին չի ներում լեզվական որևէ չեղումի։ Չի կարելի, օրինակ, շաքար ասելու փոխարեն սաքար ասել, կամ շաքար ասելով փոխանակ «շաքար» հասկանալու՝ «կատու» հասկանալ։ [Այսպիսով, յուրաքանչյուր լեզու ընդհանուր է իրենով խոսող հասարակութեան բոլոր անդամների համար։ Առանց այդպիսի ընդհանրութեան լեզուն չի կարող պահպանել իր գոյութիւնը, ինչպես և հասարակութիւնը չի կարող պահպանել իր գոյութիւնը՝ առանց ընդհանուր լեզվի։ Սրանից բխում է այն, որ ոչ միայն անհատները, այլև հասարակական խմբերը և հասարակութեան տարբեր դասակարգերը չեն կարող ունենալ իրենց առանձին լեզուները։ Իբրև նույն հասարակութեան բաղկացուցիչ մասեր, դասակարգերը պետք է որ խոսեն մի ընդհանուր լեզվով, առանց որի անկարելի պիտի դառնա հասարակական հաղորդակցումը։ Սրանից չի հետևում, իհարկե, թե դասակարգերը որևէ կերպ չեն ազդում լեզվի վրա։ Ընդհակառակը, դասակարգերը ազդում են լեզվի վրա, գործածելով որոշ քանակութեամբ բառեր ու արտահայտութիւններ, որոնք չկան ընդհանուր լեզվում, երբեմն փոխելով որոշ բառերի իմաստը, բայց դա հասցնում է ոչ թե «դասակարգային լեզուներին» հորինման, ինչպես սխալ կերպով կարծում էին Մառը և նրա հետևորդները, այլ միայն՝ դասակարգային ժարգոնների առաջացման։ Իսկ ժարգոնները լեզու չեն, այլ նրա ճյուղավորումները։]

Լեզուն գերազանցապես պահպանողական մի երևույթ է. նա չի ընդունում հեղաշրջումներ. նրա կյանքը լոկ բարեշրջական է։ Կյանքը առաջ է բերում բազմաթիվ փոփոխութիւններ, հեղաշրջումներ, ռևոլյուցիաներ, որոնք, սակայն, լեզվի մեջ չեն կարող նույնպիսի հեղաշրջումներ առաջացնել։ Նույնիսկ բառապաշարը, որ շատ ավելի փոփոխական է և անմիջապես է արտահայտում կյանքի փոփոխութիւնները, երբեմն ցույց է տալիս զարմանալի պահպանողականութիւն։ Հարյուր տարուց ավելի է, որ հնարված է մետաղյա գրչածայրը, բայց ռուսերեն դեռ շարունակում են ասել перо, որ սադի փետուրի գործածութեան ժամանակից է մնում. այսպես է նաև գերմաներեն, ֆրանսերեն,

իտալերեն և այլն։ Հայերեն գրիչ չեղոք բառ է և կարող է հարմարվել թե սագի փետուրի շրջանին, թե արդի մետաղյա գրչի շրջանին, և թե ապագա որևէ նոր գյուտի կամ ձևափոխության շրջանին։ Բայց մենք էլ ունենք ոճ բառը, «գրության ձև, կարգ» իմաստով, որ ոճ «ծղոտ, ցողուն» բառից է և սագի փետուրի գործածությունից էլ ավելի հին ժամանակ է հիշեցնում։

Կուռքերի և աստվածների պաշտամունքը վաղուց է վերացել, բայց մենք շարունակում ենք կոչել մայիս ամիսը, որ մեծագույն աստուծո (Արամազդի կամ Դիոսի) անունով է։ Կայսրների պաշտամունքը վաղուց է վերացել, բայց մենք շարունակում ենք անվանել ճուլիս և օգոստոս, որոնք հռովմեական Հուլիոս և Օգոստոս կայսրների անվան և պաշտամունքին են նվիրված եղել։ Ֆետիշական շրջանը շատ վաղուց է անցել-գնացել, բայց ամբողջ Եվրոպայի լեզուները ֆետիշական մտայնությամբ, հակառակ իրենց կուլտուրական բարձրության, դեռ շարունակում են անշունչ առարկաները կոչել ըստ սեռի՝ արական, իգական և չեզոք, այսինքն՝ ենթադրում են նրանց մեջ հոգի և կենդանություն, նայում են նրանց վրա իբրև շնչող, ապրող ու կենդանի էակներ։

Լեզվի պահպանողականությունը, հաճախ հետամնաց ու սխալ ըմբռնողությունը, կարելի է տեսնել ոչ միայն հասարակ առարկաներին, այլև գիտության զանազան ճյուղերում։ Այսպես, օրինակ, շարունակում ենք ասել շնչերակ՝ համաձայն այն հին կարծիքի, թե շունչը այդ երակումն է բնակվում։ Շատ լեզուներով ասում ենք կաթված իբր «անդամալուծություն, խլվածք» (օրինակ՝ լտ. gutta, ֆր. goutte, թրք. damla, վրաց. ծվեթի, գերմ. Tropt, սերբ. kāplja և այլն), համաձայն այն հին բժշկական կարծիքի, ըստ որում կաթվածը առաջանում է ուղեղից մի կաթիլ արյուն սրտի վրա կաթելուց։ Մաղձը կանաչ է միշտ, բայց ասում ենք դեռ մելամաղձ, մելանխոլիա, որ է սևամաղձ, համաձայն այն հին կարծիքի, թե մաղձի սևանալով մարդուն տխրություն է տիրում կամ թե տխրության ժամանակ մաղձը սևանում է։

Սովորական առարկաներից և գիտական ըմբռնումներից վեր՝ մեր հասարակական ու քաղաքական կյանքին վերաբերող մասն էլ լի է այսպիսի սխալներով ու հակասություններով։ Ասում ենք քաղաքականություն և հասկանում ենք պետությունների իրար հետ վարվելու եղանակը. մինչդեռ այդ բառը առաջանում է միայն քաղաք բառից և ներկայացնում է հին հունաց ժամա-

նակը, երբ ամեն մի քաղաք մի պետություն էր։ Ռուսաստանում Սովետական իշխանության հաստատումով ստեղծվեց բանվորա-գյուղացիական կառավարություն և բանվորն ու գյուղացին երկրի իսկական տերերը դարձան. բայց շարունակում են գյուղացուն կոչել крестьянин, որ ծագում է крест «խաչ» բառից, և նշանակում է բուն «խաչապաշտ», չնայած որ ժողովուրդն այժմ չի հավատում կրոնին։ Այսօր էլ ռուսները շնորհակալության հայտնելիս ասում են спасибо, այն է «աստված քեզ փրկի», թեև նրանք այլևս չեն ընդունում աստծու գոյությունը։

[Այս պահպանողականությունը, սակայն, հաճախ արտաքուստ է միայն. բերված օրինակներն իրենք ցույց են տալիս, որ բոլոր այդ բառերում պահպանված է միայն հին ձևը, մինչդեռ բովանդակությունը նոր է և համապատասխանում է այժմյան մեր մտածողության։ Ռուսերեն спасибо թեև ստուգաբանորեն նշանակում է «աստված քեզ փրկի», բայց իր այժմյան իմաստով նշանակում է «շնորհակալություն». այսպես և մյուս օրինակները։ Հետևաբար, լեզվի պահպանողականությունը չի կարելի դիտել որպես լեզվի զարգացման բացասում. նա միայն դանդաղեցնում է փոփոխությունները և անկարելի դարձնում հանկարծակի հեղաշրջումները։]

Լեզվի այսպիսի պահպանողականությունը անհրաժեշտ պայման է լեզվական միության՝ որևէ հասարակության մեջ։ Առանց դրան լեզուները, բարբառները և անհատական բացատրությունները այնպիսի անհուն չափերի պիտի հասնեին, որ մարդիկ շատ դժվարությամբ պիտի հասկանային իրար և չպիտի կարողանային մերձեցում ստեղծել իրար մեջ։ Հասարակ կենակցություններն անգամ դժվար պիտի լիներ, և լեզուն իր գոյության իրավունքից պիտի զրկվեր։

Բայց այն ինչ տարօրինակ հակասություն է. մարդկային միտքը նորանոր գյուտեր է անում, հասարակությունը հեղաշրջում է իր կյանքը, իսկ լեզուն, որ մտքի գերագույն արտահայտիչն է և ընկերության միակ կապը, իր քերականական կառուցվածքով, իր ձևաբանությամբ ու շարահյուսությամբ չի հետևում նրան, և անմիջական փոփոխությունների չի ենթարկվում։

Լեզվի պահպանողականությունը չի բխում բնավ մարդկային մտքի դանդաղությունից, այլ արդյունք է բոլորովին այլ

հանգամանքների, որոնք կարող ենք ամփոփել այստեղ հետևյալ ձևով.

1. Համայնքի մեջ սերունդները միշտ խառն են իրար հետ. միևնույն ըոպեում միևնույն համայնքի մեջ գտնվում են ամեն տարիքի մարդիկ, նորածնից սկսած մինչև պառամյալ ծերունին, այսինքն՝ բոլոր սերունդները ապրում են միաժամանակ և միասին. ուստի որևէ նորություն կամ նորմուծություն չի կարող ազատորեն մտնել լեզվի մեջ, և անշուշտ պիտի հանդիպի մյուսների դիմադրությանը։

2. Որքան ջանք են թափել մարդիկ սովորելու համար իրենց մայրենի լեզուն. ուրեմն որքան դժվար պետք է լինի մի ընդհանուր փոփոխություն նրա մեջ։

3. Մարդիկ առհասարակ գիտակից չեն այն բոլոր օրենքներին, որոնք գտնվում են իրենց խոսած լեզվի մեջ, և խորհրդածությամբ չէ, որ խոսում են, այլ գործնականորեն և ավանդաբար։ Արդ՝ ինչպե՞ս կարող են փոփոխել այն օրենքները, որ իրենք գիտակցորեն չեն հորինել։

4. Լեզվաբանական օրենքները խոսողների մեջ քննադատություն չեն առաջացնում. ամեն մի ժողովուրդ առհասարակ գոհ է իր լեզվից և բավարարվում է նրա տվյալներով։ Հետևաբար և՝ փոփոխելու կարիք չի զգում։

5. Լեզուն, լինելով հաղորդակցման գործիք, սրանով էլ աղատվում է փոփոխության պահանջից։ Լեզվի այս կամ այն կազմությունը քննադատության կամ քննարկության տեղ չունի։ Որևէ բան որևէ քննության ենթարկելու համար, պետք է որ հիմնված լինի որևէ բանական պատճառի վրա։ Կարելի է քննարկել, օրինակ, միակնությունը և համեմատելով բազմակնության հետ՝ պատճառներ գտնել մեկը կամ մյուսը ավելի բանական համարելու։ Կարելի է քննարկել նույնիսկ սիմվոլները (խորհրդանշան), որովհետև նրանք էլ որևէ կապակցություն ունեն իրենց խորհրդանշած առարկայի հետ։ Բայց լեզուն, որ որևիցե կապ չի պրել առարկայի և նրա անվան միջև, որևէ պատճառ չունի այսինչ ձևը փոխելով, այսինչ ձևը գործածելու։

6. Լեզվի գործածած ձևերը շատ բազմաթիվ են։ Կարելի էր փոխել մի այբուբեն, որովհետև բաղկացած է ընդամենը 2—3 տասնյակ նշաններից. կարելի էր փոխել նաև լեզուն, եթե նա էլ բաղկացած լիներ այդպիսի սահմանափակ թվով նշաններից.

բայց փոխել բառերի ու ձևերի այն անհուն պաշարը, որ ունի արևէ լեզու, շատ դժվար, ուղղակի անկարելի գործ է։

7. Ամեն մի լեզու իր ձայնական կողմով ներկայացնում է բնախոսական մի շատ բարդ կառուցվածք, որը հազիվ քերականագետները միայն գիտեն. սովորական խոսողը, որ ամենևին տեղեկություն չունի այդ կառուցվածքից, ինչպես պիտի կարողանա փոխել այն, կամ մանավանդ՝ մի ուրիշը հնարել նրա փոխարեն։

8. Ծևերը և զանազան պայմանական նշանները և այլն հաճախ մի որոշ թիվ մարդկանց համար են շինված և իմարկև, կարող են փոխվել։ Բայց լեզուն, որ մի ահագին հասարակության, նրա յուրաքանչյուր անդամի ամեն րոպեի գործածած բանն է, որին մասնակցում է ամեն ոք և ամեն րոպե, ինչպես կարող է հանկարծական փոփոխությունների ենթարկվել։

9. Լեզվի կազմությունը՝ բառերը, քերականությունը, հնչյունները, իր գոյության իրավունքը ուժի մեջ պահելու համար հիմնվում է ավանդականության վրա։ Ասում ենք մարդ, հաց, շուն, որովհետև այսպես են ասել մեր նախորդները (և խոսողը կարծում է, թե միշտ այսպես են ասել)։ Ավանդությունը այս դեպքում կազմում է լեզվի ուժը։ Ուրիշ բնագավառներում ավանդությունը չնչվում է, երբ ավելորդ և վնասակար է, կամ փոխվում է, և նրա տեղը դրվում է մի ուրիշը, որ ավելի լավ է համարվում։ Լեզվի համար չնչման խնդիր չկա։

Լեզուն արտահայտում է այն հասարակական միջավայրը, որի ծնունդն է և ինքը։ Որսորդությամբ պարապող մի ժողովրդի լեզուն պետք է որ հարուստ լինի նույն արվեստին վերաբերյալ բազմաթիվ բառերով. խաշնարածների լեզուն պետք է ունենա կենդանիների զանազան տեսակների և կաթնատնտեսության վերաբերյալ տեսակ-տեսակ բառեր։ Առուցյալ գոտու բնակիչների լեզուները շատ աղքատ են բուսանունների կողմից, որոնք վխտում են տաք գոտու բնակիչների լեզուների մեջ։ Անապատային արաբների լեզուն առատորեն օժտված է ջրի, անձրևի կամ ամպի, քամու, արմավի, կաթի, ջրհորի, ագռղի, ուղտի և ձայլամի վերաբերյալ բառերով։ Կամուսի ծովածավալ բառարանի յուրաքանչյուր երեսում մի բառ կարելի է գտնել այս կարգի ծանոթությունների վերաբերյալ. 500 բառ կա առյուծի մասին, 200 բառ օձի մասին, 80 բառ մեղրի մասին, 1000 բառ թրի մասին, 400 բառ «դժբախտություն» իմաստով

(Renan, De l'Origine du langage, 1864, էջ 141)։ Համմերը (Hammer). հաշվել և գտել է, որ ուղտի վերաբերյալ 5 744 բառ կա արաբերեն, գրեթե նույնչափ գտել է Դոզին (Dozi) հագուստի համար (անդ, էջ 142)[1]. լապոներենն ունի 30 բառ renne անասունի համար՝ համաձայն սեռի, տարիքի, գույնի և այլն. հին սաքսոներենը 30 բառ ունի ծովի համար և 27 բառ՝ նավի համար[2]. «Ջուր խմելու» դաղափարի համար ես կամուսից հավաքել եմ արաբերեն 150 բառ, իսկ գլխի պատռվածքը նշանակելու համար՝ 14 բառ[3]։

Միջավայրի հետ հավասար դծի վրա պետք է դնել հասարակական կարգերը, որոնց մեջ ապրում է մարդը։ Հնագույն շրջանում, երբ կռապաշտ էինք, ունեինք աստված, դիք, մեհյան, քուրմ, Անահիտ, Արամազդ, Վահագն, Նաևե և այլն բառերը. երբ քրիստոնյա դարձանք, մեր լեզվի մեջ առաջ եկան քահանա, վարդապետ, եպիսկոպոս, արեղա, կաթողիկոս, հայրապետ, սարկավագ, մյուռոն, պատարագ, եկեղեցի և այլն բառերը, այսօր, որ սովետական կարգեր են հաստատված Հայաստանում, ունենք կոլտնտեսություն, սովետ, կոմսոմոլ, Գերագույն Սովետ, Կոմպարտիա և այլն, և այլն։ Եվ այսպես յուրաքանչյուր ժամանակ և յուրաքանչյուր հասարակական կարգ բերում է իր հետ իրեն հատուկ բառերը։

Բայց միջավայրը, պարապմունքը և հասարակական պայմանները պատճառ են դառնում ոչ միայն բառեր, այլև յուրահատուկ արտահայտություններ կազմելու համար։ Ֆրանսիացի գողերի լեզվի մեջ աշխատել իմաստով ֆրանսերեն բառը նշանակում է գողանալ. մեր առևտրականների մեջ նույն աշխատել բառը նշանակում էր «շահվել»։ Բուրժուական դիվանագետների լեզուն երկար ու բարակ ծամածռություններ է ներկայացնում, մինչդեռ զինվորական լեզուն կարճ և ազդու է։ Ֆրանսիացի նավաստին հարբած մարդու պատկերը տալու համար ասում է il tangue, որ նավի ճոճման համար է գործածվում, իսկ Գոլսի նեղ փողոցների բնակիչը նույն պատկերի համար ասում է «այս պատը իմս է, այս պատը քունդ»։ Այսպես նաև ոճերն ու առած-

[1] Այս նույն թվերը տալիս է նաև Renan, Hist. des langues semit. I⁴, 1863, էջ 387—8։

[2] Jespersen, Growth and structure of the Engl. lang., 1930, էջ 48։

[3] Սրանց (խմել և գլխի պատռվածք) ցանկը տես «Լեզվի հատկություններ» գլխում։

ները. «Ջաղացքդ լավ է բանում» (= լավ ես ուտում) ներկայացնում է երկրագործ մարդու լեզվական պատկերը, մինչդեռ առևտրականը ասում է «Քո արշինովդ ես չափում», իսկ դուռնային՝ «Ներա դուդուկով պար մի գալ». «Ինչ գնով էլ լինի» = ֆր. á tout pris խանութպանային բացատրություն է. «100 տոկոսով» արտահայտությունը վիճակագրության կազմածն է։

Ջաղաքակրթությունը մեծ նշանակություն ունի լեզվի համար. նախ հարստանում է բառարանը, կազմվում են գիտական, իմաստասիրական կամ արվեստագիտական բառեր, մարդիկ զգացմունքների փափկությամբ աշխատում են հորինել նաև գեղեցիկ, նուրբ, փափուկ բացատրություններ. մինչև անդամ քերականական ձևերն են բարեփոխվում. ցածր զարգացման աստիճան ժողովուրդների լեզուները գիտեն երկակի թվի գործածությունը, քաղաքակրթությունը ջնջում է այն. առաջիններում ասում են «դուս», քաղաքակրթությունը ստեղծում է ես և դու բառերի համար քաղաքավարական դարձվածներ. ծառադ, ճվասաս, հրամանքդ, դուք և այլն։

Այսպիսի քաղաքավարական ձևերով շատ հարուստ է, օրինակ, ճապոներենը, որ ստեղծել է բազմաթիվ բառեր (գոյականներ և բայեր), մի կողմից՝ խոսակցին ի պատիվ, համաձայն իր դիրքի, և, մյուս կողմից՝ իր անձի խոնարհության։ Այսպես, օրինակ, մի ևնուչն «տիկին, կին» բառը, եթե իր համար է, ասվում է kanai, sai կամ omae, եթե ազնվական խոսակցի համար է, ասվում է okusama, մի ջին դասի համար՝ go šinzosama, ցածրը դասի համար՝ o kamisan, իսկ բացակա եղող Դ դեմքի համար՝ saikun, tsuma, nyōbō, tsureai (10 ձև մի բառի համար). ճիշտ նույնպես, ինչպես հայերեն՝ ընտանածս, քույրդ, մեր ընտանիքը, տղոցը մայրը, մեր տանեցին (Ա դեմք), տիկինը, հարգելի տիկինը (Բ դեմք), կնիկ, կին (Գ դեմք) կամ նաև՝ կողակից, կենակից, որ ճիշտ ճապոն. tsureai բառին է համապատասխանում։ Բացի սրանցից կան մի խումբ բայեր, որոնք, իրը օժանդակ, կցվում են մյուս բառերին, ճիշտ ինչպես հայերեն կարելի է ասել «կարդալ բարեհաճեցեք, ուտել հրամայեցեք» և այլն։ Ճապոներենում mas քաղաքավարական բայն է, որ ուղղակի իրրև մասնիկ կցվում է բայերի վերջին։

Կան նաև ուրիշ դանազան բայեր, որոնցից հիշենք morau «ստանալ», itadaku «գլխի վրա դնել», ageru «վերև բարձրացնել», որոնք իրրև օժանդակ են գործածվում։ Կան նաև բայեր,

որ առանձին քաղաքավարական ձևեր են. ինչպես «աչքի առաջ տանել» փխ. ցույց տալ, «աչքի առաջ բերել», գերմ. vor Augen treten փխ. տեսնել, «իրեն գետին ձգել և տեսնել», փխ. նկատել, դիտել։

Քաղաքավարությունը այդ լեզվի մեջ այնքան առաջ է գնացել և սովորական երևույթ դարձել, որ մինչև անգամ մի խումբ հասարակ բառեր առանում են նույն քաղաքավարական կամ աղնվականական բառերը։ Օրինակ՝ o ča «թեյ», o kaši «կարկանդակ», o tentō sama «արեգակ», o tsuki sama «լուսին», որոնք բուն նշանակում են «պարոն թեյ, պարոն կարկանդակ, տեր արեգակ, տեր լուսին» և այլն։

Մեծագույն տարբերությունը, որ կա հետամնաց ցեղերի լեզուների և քաղաքակիրթ ժողովուրդների լեզուների միջև, այն է, որ առաջիններըը լիքն են նյութական և մասնավոր գաղափարներով. քանի քաղաքակրթվում է ժողովուրդը, լեզուն հեռըզհետե ավելի վերացական և ընդհանուր է դառնում։

Բացի միջավայրից և հասարակական պայմաններից, լեզվի վրա մեծ ազդեցություն ունեն նաև հասարակական ներքին հանգամանքները, բարքերը, կարգերը և սովորությունները։ Եթովպիայի ամհարիկ լեզվի մեջ marraq նշանակում է «օրհնել, շնորհավորել», որ առաջանում է mərāq «թուք» բառից. եթովպացիների մեջ մեկի վրա թքելը օրհնության մի ձև էր[1]։

Հռովմայեցի հայրը իր աղջկա ամուսնության պայմանը կնքելու համար ասում էր spondeo «խոստանում եմ» և այդ րոպեից աղջիկը դառնում էր տղայի նշանածը։ Սրանից առաջացան ռոմանական լեզուների մեջ իտ. sponsa, ֆր. épouse «կին, жена» բառերը, որ է՝ «խոստացվածը»։

Պարսիկները, իբրև մահմեդական, բազմակին են, և մի մարդու զանազան կանայքը, որոնք մի տան մեջ են ապրում, իրար կոչում են առանձին բառով, որ է. āsnī, anbāγ կամ hamšuy. այսպիսի բառեր չեն կարող գտնվել միակին ազգերի լեզուների մեջ։

---

1 Եթովպացիների մոտ քահանա, սարկավագ և դպիր ձեռնադրելու ժամանակ եպիսկոպոսը պետք եղած ազոթքները կարդալուց հետո, «եթե անգամ երեսին կը փչե, և երեք անգամ ալ դեպ ի բերանին բու բու ընելով կը թքնե» (Տ. վրդ. Սաֆրիչյան, Ներկայ պանդխտություն ի Հապեշստան, Երուսաղեմ, 1871, հ. Բ, էջ 53)։

Նոր-Հիբրիդյան (Մելանեզիա) վեասիսի (weasisi) լեզվի մեջ «շոր լվանալ» բառը չկա, անշուշտ նրա համար, որ շոր լվանալու սովորություն էլ չկա։

Արաբները բազմաթիվ բառեր ունեն, որոնք ներկայացնում են մարդկանց կամ անասունների մերձավորության զանազան ոճերն ու տեսակները, և որոնց մասին մտածելը, մի ուրիշ լեզվի մեջ, առնվազն անպատկերաշտ կհամարվեր։

Էսկիմոսների մոտ մարդու անունը կենսական ուժ ուներ. հավատում էին, թե երբ մեկը մեռնի և մի ուրիշը վերցնի նրա անունը, կժառանգի նրա հատկությունները, իսկ մեռյալի հոգին չի կարող անցնել մյուս աշխարհը, մինչև որ մի երեխա նրա անունը չվերցնի։ Ըստ այսմ մահից հետո անունը բնակվում է մի հղի կնոջ մեջ և մնում մինչև երեխայի ծնունդը և նրա հետ ծնվում։ Այսպիսով՝ մինչև երեխայի ծնունդը և անվանակոչությունը երկյուղալի էր գործածել նրա անունը։

Լեզուն կապված է նաև հասարակական ըմբռնումների հետ. գիտենք, թե ինչ մեծ արժեք ունեն հետամնաց ժողովուրդների մեջ տաբուն (tabou)[1] և տոտեմը։ Որոշ բաներ սուրբ, միստիկ, անշոշափելի են, և նրանց անունն էլ արգելված է արտասանել։ Արգելված է գործածել ոչ միայն նրա անունը, այլև այն բոլոր բառերը, որոնք նրա հետ նույն կամ նման են, պետք է փոխանակել մի ուրիշ ներելի բառով, որ է noa։ Այսպիսով, լեզուն շարունակական և արագ փոփոխության մեջ է գոնե բառերի կողմից։

Կան ժողովուրդներ, որոնք տաբվա որոշ եղանակներին անասուններին իրենց բուն անունով չեն անվանում, այլ՝ մի նոր բացատրությամբ. ձկների անունները ծովի վրա շուտանդերեն էին, ցամաքի վրա՝ նորվեգերեն. հակառակը, ըստ նախապաշարմունքի, վնասակար էր։

Հին հնդեվրոպացոց մեջ տաբուի ենթարկված բառեր էին, օրինակ՝ լուսին, արջ, օձ, կամուրջ։

Լուսնի բուն անունն էր mēns, mēs, որից առաջանում է հյ. ամիս, բայց այս բառը հետո հանվեց և տեղը դրվեց «լուսավոր» բառը, այն է հն. σελήνη, հյ. լուսին, լտ. հսլ. luna և այլն։

Արջը, օձը, կամուրջը նմանապես ունեին իրենց սեփական

[1] Պոլինեզյան բառ է։

անունը (սրանց վրա մանրամասն տես Գ հատոր). բայց հետո նրանց փոխարեն եկան նորանոր անուններ։ Այսպես՝ օձը կոչվեց «սողացող» (լտ. serpens), «ցամաքային» (հսլ. zmĭja), «կանաչ» (լիթ. žalty˙s), «գարշելի» (հսլ. gadū) և այլն։ Արջը կոչվեց «մեղր ուտող» (ռուս. медведь), «թուխ» (գերմ. Bär), ինչպես որ մեր մեջ էլ՝ ժողովուրդն ասում է քեռի, լեռան ծաղկակոխ, տանճակեր և այլն.— կամուրջը կոչվեց սանս. «կապ», իրան. «անցք», լտ. «ճանապարհ» և այլն։

Ըստ կրեչմերի հին հն. ártos «հաց» և oînos «գինի» բառերը ընդվեցին ժողովրդական լեզվի մեջ, և նրանց փոխարեն նոր հն. ասվում է psōmí և krasí, որովհետև առաջիններն հատկացվեցին սրբության հացն ու գինին նշանակելու։ Գերմ. Abendmahl ընդվեց հասարակ գործածությունից՝ պահվելով «վերջին ընթրիքի» իմաստով, և նրա տեղը բռնեցին Abendessen, Abendmahlzeit, Ավստրիայում էլ՝ Nachtmahl բառերը, լտ. verbum բառը, հատկացվելով «բանին աստուծո», ընդվեց ռոմանական լեզուների մեջ, փոխանակվելով parabola բառով (ֆր. parole)։

Կարայիբների մոտ, կովի գնալու ժամանակ, բազմաթիվ բառեր կան, որ արտասանել արգելված է կանանց և երեխաներին. տղամարդիկ էլ որոշ քաղաքավարության համար ստիպված են այդ խորհրդավոր բառերը արտասանելու։

Ջուլուսների մոտ կինը իրավունք չունի արտասանելու իր սկեսրոջ և եղբայրների անունը, և եթե հասարակ լեզվի մի բառ նման լինի այդ անուններին, նույնպես արգելված է. նա պարտավոր է նրանց տեղ դնել համանիշ ուրիշ բառեր. այս օրենքին անսաստող կինը համարվում է կախարդ և սպանվում է։

Մեղ մոտ գյանաղան տեղեր օձ չեն ասում, այլ՝ թոկ, պաթան, կամ թրք. համանիշով՝ չաթու։

Սերաստիայում օձ բառը արտասանելուց հետո պետք է խոզույն և եթ արտաբերել նաև չի՞... բացագանչությունը, որով անասուններն են քշում կամ վարում։ Իբր թե օձ ասելիս օձը խոզույն կգա, իսկ չի՞... բացագանչությունը լսելով նորից կհեռանա։ Հայերենի մեջ որոշ տեղեր կարին բառը ընդված է. Ղրբ. ասում են կըռբիաքի, Ակն՝ կոր, որոնք նույն միջատի կեռ պոչի անկարկուտությամբ կազմված բառեր են։ Այսպես է նաև պրս. každum, որ է՝ «ծռուռ պոչ»։ Հավատում էին, որ եթե այս բա-

ռերի փոխարեն մեկը բուն անունը տար, միջատը վրա կհասներ և կխայթեր[1]։

Տարուի ենթարկված բառերի շարքում պետք է հիշել 13 թիվը։ Եվրոպացիների մեջ այս թիվը բոլորովին ձախորդ է համարվում. 50 տարի առաջ Փարիզում, այդ «լուսավորյալ» քաղաքում, այնքան առաջ էր գնացել այդ նախապաշարմունքը, որ 13 թվով ոչ տուն էինք գտնում, ոչ թատրոնի աթոռ և ոչ էլ տոմս։ Այդ բոլորի փոխարեն գրում էին միշտ 12 bis։ Ռուսների մեջ 13-ը կոչվում էր «սատանայի դյուժինն»։ Անոտիապաշտ պարսիկը չարագուշակ է համարում 13 թիվը, ուստի հաշվելիս 13 ասելու տեղ ասում է hič «ոչինչ» կամ ziāde «ավելի» (=12-ից մեկ ավելի)։ Սրա նման Պարսկաստանի ադրբեջանցիներն էլ 13-ի փոխարեն ասում են onuč deyil «13 չէ»։ Հայերի մեջ այս նախապաշարմունքը տարածված չէ և եթե կա, այն էլ եվրոպացիներից է փոխադրված։ Չգիտեմ Հնդկաստանում, Չինաստանում և կամ Արաբիայում 13-ի տարուն գոյություն ունի՞։

Կարծում են, թե 13-ի տարուն ծագել է Հուդա մաանիչի պատճառով, ըստ որում նա Հիսուսի հետ հաշված 12 առաքյալներից վերջինն էր։

Այժմ Ֆրանսիայում 13-ի տարուն իրը թե վերանում է. նրա ձախորդ անունը այնքան վատ ազդեցություն է գործել, որ առաջ է եկել նրա հակազդեցությամբ մի ուրիշ տեսակ տարուն։ Այժմ 13 թիվը Ֆրանսիայում կոչվում է „porte bonheur“, այսինքն՝ հաջողության բերող. կանայք իրենց կրծքի վրա կրում են ոսկի կամ արծաթ մի առանկյուն, որի վրա գրված է «13»։

Տարուն ջնջում են, բայց նոր տարու են ստեղծում։ Բժշկության մեջ հայտնի է ֆրանս. opération բառը, որ ռուսերեն դարձել է операция, իսկ արևմտահայոց մեջ թարգ-

---

[1] Եղնիկի հիշատակած տարուն մնում է մինչև այսօր Կովկասում. ալ ձեռքի թաթը պարզած շարժում են մեկի երեսին իրբև նախատական նշան։ Գոլսում այդ բանը կոչում են մուսի վրաս, որ է «մուրը ի վրադ, իմ մուրը քո վրա», Ղարաբաղում ասում են կա՛ է՞ կա, որ է գրբ. կա՛, կալ բայի հրամայականը, երևանում ասում են ա՛ռա, է՞, ա՛ռա, իսկ Մեղրիում հին սերունդը ասում է կա՛, է՛, կա, նոր սերունդը՝ ա՛ռ, է՛, առ։ Երկուսն էլ նշանակում են «առ, վերցրո՛ւ», մեկը հին լեզվով, մյուսը նոր լեզվով։

մանված է գործողություն։ Այս բառը հիվանդների վրա միշտ սարսափ էր ազդում, ուստի ֆրանսիացիները տաքուկ վերածելով այն, ստեղծեցին intervention «միջամտություն» բառը։

Մարոկկոյի բերբերներն էլ ունեն տարու, որ իրենց բառով կոչում են lfal. «չարաբաստիկ են» հատկապես այն առարկաների անունները, որոնք հիշեցնում են սևի գաղափարը։ Այսպիսի բառեր (մանավանդ առավոտները) փոխանակվում են ուրիշ բառով, որ «բարեբաստիկ» է համարվում կամ չարիքը ջնջում է։ Օրինակ՝ bu-uġrum «հաց եփելու պնակ» ասելու փոխարեն, ասում են umlil (սպիտակ). ϑasilϑ «պտուկ» բառի փոխարեն (տակը մուրով սևացած է լինում), ասում են ϑalma'unϑ «աման». lfaḫer «ածուխ» բառի փոխարեն՝ lbiaḍ «սպիտակ». «հուպրը» կոչվում է ϑamenϑ uulli «ոչխարի մեղր», ϑisent «աղ» դառնում է ϑaḍfi «քաղցրություն». չար ոգիները կոչվում են aiϑ wister rebbi կամ aiϑ wissen rebbi «անձինք, որոնց աստված պաշտպանում է կամ ճանաչում է» կամ նաև inselmen «մահմեդական». aġiul «էշ» դառնում է aḥðaði wašal «հողից սպիտակ, blanc de terre», šuari issegni «մսեղ» դառնում է lmefϑaḫ «բաց անողը», (արաբ. المفتاح al mifthah «բանալի» բառն է). lafit «կրակ» դառնում է asid «լույս». «վարազը» կոչվում է abulḫir, որ արաբ. ابو الخير abul-xayr «բարիք բերող» բառն է. ik'ab «աղվես» դառնում է bu ϑemjeberϑ կամ bu ϑfrut «երկարապոչ»։

Այն բոլոր անասունները, որոնց հանդիպումը չարաբաստիկ է, առավոտները կոչվում են war ṣbaḫ «որ չունի առավոտ»։

Ճամբարի փոփոխության հաջորդող առաջին գիշերը վրանի սովորական առարկաներից շատերը այսպիսի անուններ են առանում։

Արևելյան Աֆրիկայում, Մասայի կոչված տեղում արական սեռը երկու դասի է բաժանվում ըստ տարիքի. դասերը ունեն իրենց առանձին խիստ պայմանները. որոշ ուտելիքներ արգելվում են մեկին, և հետևաբար արգելվում են նաև նրանց անունները։ Տարիքառները իրավունք չունեն դիպչելու մորթված մի անասունի պոչին կամ գլխին. իսկ գլուխն ու պոչը անվանելու համար առանձին բառեր ունեն։ Պատանիները իրավունք չունեն ուտելու դդում։ Մեծ հանցանք են երկուսն էլ։ Սրանք ինարկե կրոնական հասկացողությունների արդյունքն են. պատանին մեծերի դասը անցնելու համար ունի զանազան ծեսեր, որոնցից մեկն էլ արգելված բառեր գործածելն է, թեև նորեկը

համաձայն նախկին սովորութեամբ սխալվում և հին բառերը շարունակում է գործածել։

Զրադաշտական կրոնի մեջ արարածները բաժանվում են երկուսի. բարի աստուծո (Որմիզդի) ստեղծածներն ու չար աստուծո (Ահրիմանի) ստեղծածները. երկու դասի արարածների մարմնի անդամները նշանակվում են տարբեր բառերով։

Ահա մի ցանկ այդ բառերից։

Բարի	*Չար*	*Նշանակութիւնը*
vaγδana	kamərəδa	*գլուխ*
uš, gaoša	kasəna	*ականջ*
zasta	gava-	*ձեռք*
aši	dōiθra	*աչք*
āh, staman	zafar	*բերան*
zanga	zangra	*ոտքի կոճ*
pad	zbaraθa	*ոտք*
manaoθri	grīvā	*ծոծրակ*

Մարմնի անդամներից դուրս կան նաև այլ կարգի բառեր, ինչպես՝

hanǰamana	handvarəna	*ժողով*
puθra	hunav, hunuš	*որդի*
zan	hav	*ծնել*
raēθ	mar	*մեռնել*
—	haota	*սերունդ*
—	drav	*վազել*
bipaitištana	bizangra	*երկուտանի*

Այս կարգի (բարի և չար) բառերի թիվը Ավեստայում քսան է։

Կան ցեղեր, որոնց մեջ այրերի խոսած լեզվի և կանանց խոսած լեզվի մեջ կա որոշ տարբերութիւն. օրինակ՝ հիւսերբոյան յուվագիր լեզվի մեջ էլ կան 2 ձայներ, որոնք կանանց ու տղամարդկանց մեջ տարբեր են հնչվում։ Այսպես č հնչվում է ty. ծերերը հնչում են իբր č (չ), կանայք և մանուկները՝ իբր ç (ց), իսկ բառավերջում կանայք հնչում են s (ս)։ Նաև ǰ հնչվում է իբր dy. ծերերը հնչում են ǰ (ջ), կանայք և մանուկները՝ dz (ձ). երկու ձայնավորի մէջև հնչվում է ž (ժ)։

Չուքչի կանանց արտասանությունը որոշ չափով տարբերէ տղամարդկանց արտասանությունից. կանայք ընդհանրապես տղամարդկանց č և r բաղաձայնների փոխարեն գործածում են š ձայնը. նաև այրերի rk և čh ձայնախմբերը դարձնում են šš. օրինակ.

Այրերի լեզվով		Կանանց լեզվով
rámkičhin	>	šámkiššin
párkala	>	páššalla
čaivúurgin	>	šaivúuššin

և որովհետև չուքչի լեզվի մեջ č և r բաղաձայնները հաճախ են գործածվում, ուստի և չուքչի կանանց մոտ š ձայնը բավական հաճախ է լինում, որով անծանոթ մարդը դժվարանում է նրանց հասկանալ։ Սակայն պետք չէ կարծել, թե չուքչի կանայք անկարող են արտասանել č կամ r, որովհետև երբ հարկ է լինում պատմել տղամարդկանց ասածը (ինչպես, օրինակ, հեքիաթներում), հնչում են č կամ r։ Սակայն սովորական խոսակցության մեջ տղամարդկանց արտասանությունը կնոջ համար անհարմար է համարվում։

Ամերիկայի կարայիբների լեզվի մեջ կանանց հատուկ բացառական մասնիկն է m, որ այրերը չեն գործածում. օրինակ՝ marametontina «չեն թաքցնում», որի դեմ այրերը ասում են arametupatina.

Գերմանական հրեաների մոտ էլ մինչև իսկ այսօր կան ըստ սեռի լեզվական տարբերություններ. բարևելու ժամանակ այրը գործածում է երբայեցերեն բառ, կինը՝ միշտ գերմաներեն։

Մեր մեջ էլ քահանան ասում էր «ողջույն», աշխարհականը՝ «բարև»։

Էսկիմոս ցեղերից ոմանց մեջ տղամարդիկ բառավերջում պարզ կերպով արտասանում են p, t, k, q, իսկ կանայք՝ m, n, n՛, ŋ՛։

Ամերիկյան սիուան (siouan) լեզվի մեջ հրամայական կազմելու համար բայի ծայրին այրերը դնում են yo, po մասնիկները, իսկ կանայք՝ ye, pe մասնիկները, ինչ որ մեզ հրամայականի ձևն է. ուրիշ խոսքով, այրն ասում է՝ pe՛p, կինը՝ կրեբե՛ա

Ճապոնացիների մեջ բարեվիրթ և ազնվական կինը պետք

չէ, որ բերանը շատ բանա. այս պատճառով նրանց մեջ a ձայնը դառնում է համարյա o։

Ամերիկայի բնիկներից յանա (yana) կոչված ցեղի մեջ էլ լեզվի երկու ձև կա՝ արական և իգական. արականն այն է, որ այրերը խոսում են իրար մեջ. իգականն այն է, որ կանայք խոսում են իրար մեջ կամ մարդկանց հետ և կամ մարդիկ կանանց հետ։ Արական խոսելակերպի մեջ բառերը ավելի լի են, իգականը՝ կրճատ. արական խոսելակերպի մեջ բառավերջը ունի մի ձայնավոր, որ իգականում ընկնում է և սրա հետևանքով բաղաձայններն էլ ձևափոխվում են։

Բոլիվիայի չիկիտոս (chiquitos) ցեղի մեջ (լեզուն կոչվում է չիկիտա) այրերը խոսակցության մեջ բառի ծայրին դնում են tii մասնիկը, իսկ կանայք՝ ոչ. օրինակ՝ «նա տուն գնաց» տղամարդկանց լեզվով լինում է yebotii ti n-ipoostii, իսկ կանանց լեզվով՝ yebo ti n-ipoos։ Վ. Հենրին (V. Henri) այս բանը բացատրում է այն ստորացրած դիրքով, որի մեջ գտնվում են կանայք։ Այսպես, երբ տղամարդը խոսում է աստվածների, հրեշտակների, դևերի և տղամարդկանց մասին, գործածում է որոշ հոլովական և բայական ձև (հատկապես հգ. հոլովման մեջ և բայի եզ. և հգ. 3 դեմքերի համար), մինչդեռ անշունչ իրերի, անուններին, նրանց հետ նաև կանանց համար՝ գործածում է այլ ձև։ Նրա խոսքերով՝ «Ինչ վերաբերում է կանանց, ապա նույնիսկ որևէ տղամարդու մասին խոսելիս նա չի կարող գործածել այլ ձև, քան կանացի հոլովումն ու խոնարհումը»։

Այս բավական չէ։ Նաև բառերը այրերի ու կանանց լեզվում տարբերվում են իրարից։ Շատ դեպքերում այրերի լեզվում ունեն բառասկզբում մի ձայնավոր կամ մի բաղաձայն, որից զուրկ է կանանց լեզուն. օրինակ՝

	Այրերի լեզուն	Կանանց լեզուն
ծովի կրյա	o—petas	petas
շուն	u—tamokos	tamokos
վայր	i—pis	pis
խալանացի	i—xaaras	xaaras
խալանացիներ	ma—xaaraca	xaaraca
մարդ	noneis	oneis
դև	yoichoborez	ichoborez
օտարական	yuzaus	uzaus

հղջերենի	ochepecis	chepecis
ճեղք	ucatas	catas
աստղ	oçutonez	çutonez

Կան բառեր էլ, որոնք բոլորովին են փոխվում, ինչպես՝

հայրս	izai	ixupu
մայրս	ipaqui	ipapa
եղբայրս	zaruqui	ichibauxi
քույրս	iquiaci	
որդեգիր	aitobotii	aibos
նրա մայրը	ipaquitostii	ipaquis
նրա կեսուրը	ipaquizotostii	ipaquizos

Ջավայում խոսվում է երեք տարբեր տեսակի ջավայերեն. 1) krâmâ, *որ քաղաքավարության լեզուն է և որի ամենի բարձր տեսակը* (krâmâ hinggil) *խոսում են թագավորների, իշխանների և մեծամեծների հետ. նամակագրության մեջ գործածվում է* krâmâ *լեզուն. 2)* ngoko, *որ հասարակ ժողովրդի լեզուն է. օրենքները և արքայական հրամանները այս լեզվով են հրատարակվում. 3)* mâdyâ, *որ հավասարները խոսում են իրար մեջ և «իրապես է՛ կամ ազնվացրած* ngoko *և կամ փչացրած* krâmâ» (Bohatta, Gram. der javam. Spr., էջ VI—VII)։

Հասարակագիտական տեսակետով շատ կարևոր է որոշել այս լեզուների էությունը։

ա) Բառական մթերքը.

1. Կան բառեր, որ երկուսի մեջ էլ բոլորովին նույնն են.

2. Կան բառեր, որ ներկայացնում են միևնույն բառի երկու տարբերակները.

3. Կան բոլորովին տարբեր բառեր։ Օրինակ, առնենք, թվանշանները։

	1	2	3	4	5
Kr.	sâ	kalih	tigâ	sa-kawan	gangsal
Ng	sâ, siyi	ro	təlu	pat	limâ
	6	7	8	9	10
Kr.	⎧nəm	⎧pitu	⎧wolu	⎧sângâ	sa-dâsâ
Ng	⎩	⎩	⎩	⎩	sa-puluh

բ) Քերականական հորինվածությունը երկուսի մեջ էլ միևնույն է. նույնն են մասնիկներն ու նախամասնիկները և հոլովման ու խոնարհման դրությունը: Երբեմն ձայնապես կարող են մասնիկները ներկայացնել ձևի տարբեր պրակները:

գ) Շարադասություն և համաձայնությունը բոլորովին նույնն են:

Ահա մի փոքրիկ օրինակ կրկին լեզուներով.

Kr.	čârâ	ǰawi	sangət	hangèl-lipun
Ng.	câră	ǰâwâ	bangət	hangèl-le

լեզու ջավայերեն շատ դժվարություն յուր = ջավայերեն լեզուն շատ դժվար է:

Այստեղ տեսնում ենք, որ čârâ «լեզու» և hangèl «դժվարություն» բառերը նույնն են երկուսի մեջ էլ. «ջավայերեն» բառը մի տեղ ǰawi ձևով է, մյուս տեղը՝ ǰâwâ. այսպես և «շատ» մի տեղ sangət, մյուս տեղ bangət. «յուր» բառը մեկում lipun ձևն ունի, մյուսում՝ le. բայց կարևոր է հիշել, որ այս երկու բառերը ջավայերենի ձայնարանական օրենքներով ծագում են իսկապես hipun և hé ձևերից, որոնց նախաձայն h-ն, ազդվելով նախորդ բառի վերջին l-ից, դարձել է l: Ըստ այսմ երկու լեզուների ձայնարանական օրենքներն էլ նույնն են:

Այս բոլորից հետևում է, որ այս երկու «լեզուները» ուրիշ բան չեն, եթե ոչ միևնույն լեզվի երկու տարբեր բարբառները: Ջավայի մի գավառի ժողովուրդը նվաճելով մյուսին և իշխանության գլուխը բարձրանալով, բարձրացրել է նաև իր բարբառի պատիվը: Նվաճված ժողովրդի լեզուն համարվել է հասարակ լեզու, նվաճողներինը՝ ազնվական: Այսպես է առաջացել կարծեցյալ «դասակարգային լեզուն», որ իրականում ժարգոն է: Մեր անցյալից նման մի օրինակ բերելու համար կարելի էր հիշել Շիրակի նախկին գյուղերից մեկը, ուր պետական պաշտոնյաները մի քանի երևանցիներ էին: Բնականաբար երևանցիները խոսում էին Երևանի դրական լեզվով, իսկ գյուղացիք՝ կարնո բարբառով: Առաջինը ասում էր, օրինակ.

— Դու այս մատյանում արձանագրված ես, այո:

Երկրորդը պատասխանում էր.

— Հա, ադ դաֆտարին մեջը գրված եմ:

Երկու նախադասություններն էլ, որ նշանակությամբ նույնն են, ոչ մի բառ չկա նույն. բայց այդտեղ չունենք երկու

տարբեր լեզու, այլ՝ երկու տարբեր բարբառ, որոնցից մեկը դեպքերի բերմամբ բարձրացել է և դարձել գրական լեզու, մյուսը մնացել է բարբառ։ Այսպես է նաև չավայերենը։ Այս բոլորը դասակարգային բաժանումների արդյունքն է, որ հասցնում է գործը մինչև ժարգոնների առաջացումը (տես գլուխ ժա, Օտար աղդ.)։

Գրեթե նման մի երևույթ տեղի է ունեցել անգլերենում. նորմանդացիների տիրապետությամբ ֆրանսերենը Անգլիայի պետական լեզուն դարձավ. ֆրանսերենը համարվեց ազնվական լեզու, իսկ անգլերենը՝ հասարակ կամ դեհիկ։ Այն բոլոր գաղափարները, որոնք ազնվական էին համարվում, ֆրանսերենից առան իրենց անունը, իսկ այն գաղափարները, որոնք դեհիկ էին համարվում, անգլերեն մնացին։ Եսպերսընը հիշում է Ջոն Վալլիսի այն դիտողությունը, որ շատ ուրիշներն էլ են կրկնել, թե անգլերենում անասունների անունները, քանի նրանք կենդանի են, անգլերեն են (այսպես՝ ox, cow, calf, sheep, swine, boar, deer), իսկ երբ մորթվել են՝ ֆրանսերեն (այսպես՝ beef, veal, mutton, pork, bacon, brawn, venison). առաջին դեպքում անվանել է անգլիացի հասարակ գյուղացին, որ պահում, մեծացնում է, երկրորդ դեպքում՝ միսը ազնվականության սեղանն է բարձրանում, ուստի անվանվում է ֆրանսերեն։

Հին լեզուները ունեին բազմաթիվ նվիրական բառեր, որոնք միայն հանդիսավոր ծիսակատարությունների ժամանակ կարելի էր արտասանել։ Այսպես՝ ըստ պատմագիրների Հռոմը ուներ մի խորհրդավոր անուն, որ արտասանել կամ գրել արգելված էր. ով այդ անունը տար մահվամբ կպատժվեր. և մեզ հայտնի չէ, թե ինչ էր այդ բառը։ Եբրայեցիները աստուծո անվան (Եհովա) չորս տառերը միայն գրում էին, բայց չէին արտասանում, այլ կարիք եղած դեպքում հայտնում էին զանազան բացահայտիչներով, ինչպես՝ տեր, տեր զորությանց։ Լոռիում կարիուտի անունը ուղղակի տալ խոցելի էր, ասում են՝ ջանանունը, էն անունը կտրածը։ Գառավ հայ կանայք մեր մանկության ժամանակ թույլ չէին տալիս գիշեր ժամանակ արտասանել սատանա կամ փերի բառը, հավատալով, որ հենց որ արտասաներինք, իսկույն այն չար էակները կգային որևէ վնաս հասցնելու իրենց։ Եվ պարտավոր էինք մի ուրիշ դարձվածով տալ նրանց անունը (սովորաբար մեծ աղեկներ)։ Այսօր էլ եթե այս կարգի նախապաշարմունքներ, անապաշուա-

թյուններ և կրոնական երկյուղներ վերացած են, կա այնուամենայնիվ քաղաքավարության կամ պատշաճության օրենքը, որ որոշ բառերի գործածության դեմ արգելք է դրել և որոշ բառերի համար էլ քաղաքացիության իրավունք տվել։

Կնոջ ծիծը ասել անպատշաճ է, բայց ստինք ներելի է։ Նեռ բառը արտասանել անքաղաքավարություն է, բայց մեզ ներելի է. ավելի քաղաքավարի է ասել չրնական կարիքը հոգալ, արտաթորություն կամ կղկղանք։ Նույնպես ներելի է գործածել զուգավորություն, մերձավորություն, ամոթուլք, առականք, հատակ, բայց անվանել իրենց բուն բառերով պատշաճության օրենքներին հակառակ է։ Ժողովրդական լեզուն գիտե բազմաթիվ պատկերավոր արտահայտություններ, անպարկեշտ առածներ, հայհոյանքներ, փուտանուններ, որ գրականության կամ քաղաքավարի խոսակցության մեջ թուլլատրելի չեն համարում։ Վարտիք բառը, մանավանդ կանանց մասին խոսելիս, ամոթ է եղել գործածել և իբր քաղաքավարի բառ դրել են փոխան (այինքն փոխանակ շապկի), հետո փոխանը սովորական և ամոթալի դարձավ, տեղը եկավ ռանգաշոր (որի հետ համապատասխան է գալիս գերմ. Beinkleider, նույնպես քաղաքավարական բառ, փոխանակ Hosan ասելու), այժմ ոտնաշորն էլ անքաղաքավարի է և տեղը դրվել է տեղ-տեղ ընկեր, շապկընկեր։ Ուրիշ բառերի հանդեպ մարդիկ ավելի մեղմ են և թուլլ են տալիս բարձրանալ մինչև ընտանեկան լեզվի մեջ, բայց ավելի բարձրը ներելի չէ։ Երբեմն էլ անքաղաքավարի համարված բառը առելուց առաջ ասում են՝ «անհարմար է ասել», նախկինում՝ «խոսքս ամոթ», կամ եթե կեղտոտ բառ է «հեռու լսողաց», նախկինում՝ «հեռու սուրբ երեսից», կամ եթե սեղանի վրա էր՝ ասում էին «հեռու սուրբ սեղանից»։ Ռուսերենում ասում են՝ «ներեցեք արտահայտությանս»։ Կան բառեր, որ թեև անպարկեշտ չեն, բայց համարվում են սովորական, հասարակ, ընթացիկ. ուրիշները, ընդհակառակը, բարձր ու վսեմ ոճի բառեր են կոչվում։ Ուստի՛ք «հասարակ» բառ է, իսկ պարեն, ուտեստ, ավելի «վսեմ» են. փուշ հասարակ բառ է, տատասկ՝ վսեմ. օգնել հասարակ ոճ է, «օգնության ձեռք կարկառել» վսեմ է. «ասում եք ասում» բիրտ և անքաղաքավարի ձև է, «ձեր ասածը չի համապատասխանում ճշմարտության» քաղաքավարի ձև է, «ճացից հետո քնում եք» գռեհիկ ձև է, «ճաշից հետո ճանգստանո՞ւմ եք» ավելի հարգալից ձև է և այլն, և այլն։ Ոչքան աշխատում են գրողները, հատկա-

պես արևմտահայ գրողները, գտնելու այսպիսի «վսեմ» արտահայտություններ, մերթ եվրոպական մի դարձված հայացնելով, մերթ գրաբարի խորքերում մոռացված մի բառ՝ մի հնություն կյանքի կոչելով, միտքանակ առօրյա մի ձևի, որ սովորական գործածություն շատ «հասարակ» է դարձել։

Այս բոլորը հասարակական ըմբռնումների արդյունք է։

Ըստ այսմ, լեզուն որևէ ժողովրդի ամբողջ հասարակական կազմակերպության, մտավոր ըմբռնումների, մի խոսքով՝ քաղաքակրթության պատկերն է։ Եթե մեզ տրված լիներ մի անծանոթ ազգի լեզուն, մենք այդ լեզվից պիտի կարողանայինք դուրս բերել նրա հասարակական վիճակը, նրա քաղաքակրթությունը, նրա կուլտուրան և այլն։

Այսպես, գիտնականները վերակազմելուց հետո հնդեվրոպական նախալեզուն, այդ լեզվի տվյալներով աշխատել են որքան կարելի է վերակազմել նաև քաղաքակրթության պատկերը այն հին ժողովրդի, որ մեզանից քանի քանի հազար տարիներ առաջ ապրել է, և որի գոյությունը նուիրական ենթադրության է գտնված։ Մի միտքդրիլ օրինակ բավական է այս մասին։ Գիտուններն են, որ հնդեվրոպական նախալեզվի մեջ արական կողմի ազգականների համար բավական առատ բառեր կան, իսկ կնոջ կողմի ազգականների համար եղած բառերը սակավաթիվ և անորոշ են. սրանից հետևում է, որ հնդեվրոպական այդ նախաշրջանում էլ ընտանիքը կազմված էր, կինը մտնում էր մարդու տունը և ոչ թե հակառակը, և ամուսինը կնոջ կողմի ազգականների հետ երկրորդական կապեր միայն ուներ։ Վերաբերական ածականը միայն արական սեռի համար կա. այսպես՝ վեդ. pitriya, հն. πάτριος և լտ. patrius «հայրական», բայց չկա «մայրական», որովհետև այն ժամանակ ամեն ինչ պատկանում էր հորը, մայրը ոչինչ չուներ։ Նկատում ենք նաև, որ անասունների վերաբերյալ բառեր շատ կան, ինչպես՝ շուն, եզ, կով, ձի, այծ, ոչխար, խոզ, գայլ, ճավ և այլն, բայց ձկների տեսակների համ նուիրական ընդհանուր բառ չկար։ Սրանից հետևում է, որ այդ ցեղը պարապում էր խաշնարածությամբ, ընտանեցրել էր զանազան անասուններ, պարապում էր զանազան կենդանիների որսորդությամբ, բայց ձկնորսություն չգիտեր։

Մի քանի օրինակ վերցնենք և մեր հին կյանքից։

Մերկապարանոց բառը գրաբարի մեջ «հայտնի, ակներև»

նշանակությունն ունի. սրանից երևում է, որ հին հայերը իրենց վիզը ծածկում էին. մերկ վիզը անպատշաճ էր համարվում բանալ հասարակության մեջ։ Դեղ «բժշկական ճարտ բառը ծագում է դեղ «խոտ» բառից, որից երևում է, որ հին հայոց բժշկությունը խոտերով էր միայն կատարվում։ Հերատուկ «մազերը կտրածը կնոջ համար նախատական է. ասվում է, օրինակ, Իրրև դհերատուկ և զանուանարկ վազէը. Ոսկ. մ. ը. 23. սրանից հետևում է, որ մազերը կտրել կամ կարճ պահել կնոջ համար ամոթ էր։

Մեր բառարանի քննությունը այս տեսակետից պիտի տար, ուրեմն, հին հայ հասարակական կյանքի պատկերը, քաղաքակրթության պատմությունը։

Վերևում ասացինք, որ լեզվի միասնությունը հասարակության հաղորդակցման անհրաժեշտ պայմանն է։ Բայց հասարակությունը իր մեջ ունի որոշ շերտավորումներ։ Այսպիսի շերտավորումներ գոյություն չունեն նախնական համայնական հասարակության շրջանում. բայց շուտով սկսվում է տարբերություն։ Հասարակության մեջ կազմվում են տարբեր խավեր. մի կողմից՝ առաջ են գալիս դասակարգային շերտավորումներ, մյուս կողմից դրան զուգընթաց՝ զանազան արհեստակցություններ և այլն։ Վերջապես գալիս են մասնագետների խմբերը. բժիշկները, դեղագործները, բուսաբանները, դրականագետները, փիլիսոփաները և այլն։ Եվ ահա սրանցից յուրաքանչյուրը կարիք է զգում կազմելու իր մասնահատուկ «լեզուն», որ անծանոթ և ավելորդ է մյուսի համար։ Նավաստիները պարտավոր են իմանալ ծովի, քամու, նավի վերաբերյալ զանազան բառեր, որ երկրագործի համար կարևոր կամ անհրաժեշտ չեն, և՝ ընդհակառակը։ Քուրմերը կամ կրոնավորները կազմում են իրենց մեջ մի առանձին ժարգոն, տոնական ու հանդիսավոր, որ դարերի ընթացքում էլ մեծ պահպանողականությամբ աշխատում են անփոփոխ պահել։

Աղնվականները էլ (իշխան կամ թագավոր, զինվորական և այլն) ունեին իրենց համար մի առանձին ժարգոն։ Իշխանական ատենաբանների, վարչական կարգերի, զենքերի տեսակների և նման բառեր կազմում են այդ ժարգոնի հիմքը։ Ռազմիկի համար այս կարգի բառերը կարևոր կամ անհրաժեշտ չեն, ուստի հաճախ նրա համար անծանոթ են, իսկ աղնվականի համար շատ կարևոր և սովորական են։

Ամեն մի դարում և ամեն մի երկրում, ուր եղել է իշխանություն կամ պետականություն, եղել է նաև պետական ժարգոն, որ որոշ չափով տարբերվել է ամբիկի լեզվից, և այդ տարբերության չափը այնքան ավելի մեծ է եղել, որքան պետականը կյանքը տարբերություններ է ունեցել ժողովրդի ընդհանուր կյանքից։

Պետական ժարգոն ունեին նաև տիբեթցիք. սրանց լեզվով մի խումբ բառեր բաժանվում են երկու կարգի. հարգական (že sahi skad) և հասարակ կամ ամբիկ (mn˙an gtam)։ Տիբեթերեն քերականության մեջ դրված է 196 բառերի մի ցուցակ, դեմ առ դեմ իրար համապատասխան ձևերը։ Այս ցուցակի մեջ կան ոչ միայն «հայր, մայր, որդի, դուստր, նախագահ», ոչ միայն հագուստեղենի անուններ, այլև մարմնի զանազան մասեր (գլուխ, աչք, քիթ, կռնակ, փոր, մեջք, բերան, գլխի մազ, քթի ծակ, աջ ձեռք, ձախ ձեռք, ձեռքի եղունգ, ոտքի եղունգ), այլև՝ ձեռնոց, թքաման, ատամնափորիչ, թուք, ոտք լվանալու ջուր, մեղ, ձի, ձիու կեր, ձիու ախոռ, ձիու սանձ, ձիուց ցած իջնելը, հիվանդության պատճառը, մեռել այրելու վայր և այլն։

Եթովպական ջանջերո (giangero) լեզուն ունի երկու կարգի բառեր, մեկը՝ արքայական և հարգական, մյուսը՝ հասարակ։ Այս բառերը մարմնի անդամների անուններ և սովորական բառեր են, իրարից բոլորովին տարբեր։ Արքայական ժարգոնի գործածությունը արքայական անձերից դուրս՝ մահվամբ էր պատժվում։

„L'uso del linguaggio regale per persona diversa da quella del re era considerato atto di lesa maestà e quindi punito con la morte“ (Cerulli, Studi etiopici, հատ. III, էջ 61, Roma 1938).

Ահա ցանկը այդ բառերի, որ հավաքել է հեղինակը

	հասարակ	արքայական
աչք	afā	kemā
գլուխ	somā	tosā, begbesi
ականջ	odō	wayā
ձեռք	kušu	zurma˙, ta'unā
ոտք	orgō	tišā
տեսնել	be'	kem
ցուցց տալ	bēs	kems
լսել	od	wēs

խոսել	maq	bur
երթալ	ham	zug
ուտել	mā	bos
խմել	uš	bos
գալ	y	muč
քնել	afa	bok
նիզակ	ēbō	me'ā

Կան նաև հարգական բառեր, որ գործ են ածում մեծամեծների հետ խոսելու ժամանակ.

		հարգ.
գալ	y	wof
ուտել	mā	ta
խմել	uy	kuyg
տալ	im	kuš
քնել	afa	gid, giggid

Մեր մեջ էլ անշուշտ եղել է հին ժամանակ յուրահատուկ աղնվական ժարգոն, որ տարբերվել է ժողովրդական սովորական ոամիկ լեզվից։ Այդ ժարգոնի բառերը անշուշտ առաջին հերթին վարչական ու զինվորական բառերն էին։ Եվ որովհետև հայ աղնըվականությունը մեծապես կապված էր այս կամ այն օտար իշխանության հետ (պահլավ կամ պարսիկ, հռոմայեցի կամ հույն և այլն), ուստի կային այդ լեզուներից կատարված զանազան փոխառյալ բառեր ոչ միայն վարչական ու զինվորական, այլև աղնվականների կյանքի և նիստ ու կացի վերաբերյալ։

Հ. Ն. Անդրիկյանը մի գեղեցիկ նկատողություն ունի (Բազմ. 1907, էջ 349) այն մասին, թե հայերը ե դարում ունեին կամ ճանաչում էին աղնվական ժարգոն։

Եվսեբեոսի Քրոնիկոնում կա այսպիսի մի հատված. «Քանզի հիւկն յաղնիւ լեզուն եգիպտացւոց «թագաւոր» նշանակէ և ուսուն «հովիւ» է. և հովիւք՝ ըստ հասարակացն խառնապանճն խօսից»։ Հ. Անդրիկյանը այս հատվածից հետևցնում է, որ ե դարում «Մեսրոպյանք ունեին աղնուական և ոամիկ լեզու»։ Այս հետևությունը ճիշտ չէ։ Թարգմանչի խոսքը հին եգիպտացիների մասին է, ուր, իրոք, կար հին գրականություն, հին լեզու և այդ լեզվի վրա կազմված աղնվական ժարգոն, որ տարբերվում էր մեծապես ժողովրդական լեզվից։ Թարգմանչի հատվածից կարե-

լի է միայն հետևցնել, թե ազնվական ժարգոնը մեսրոպյան շըրջանի հայերենով կոչվում էր «ազնիւ լեզուն», իսկ ժողովրդի լեզուն կոչվում էր «հասարակաց խառնաղանճ խոսք»։ Իսկ թե ե դարի հայերը ազնվական ժարգոն ունեին, և թե ինչ առանձնահատկություն ուներ նա ընդհանուր համաժողովրդական լեզվից, այդ մասին ոչինչ չի կարելի հետևցնել հատվածից։

Շատերը առանց խորանալու հարցի քննության մեջ, ասում կամ ընդունում են, թե այդ ազնվական ժարգոնը և ժողովրդական բարբառները, իրոք, իրարից տարբեր լեզուներ են միևնույն ժողովրդի մեջ։ Այս գաղափարը սխալ է։ Ինչպես ազնվական և ռամիկ, ինչպես քրմական և աշխարհիկ, նույնպես և բոլոր մասնագիտական «լեզուները» բառարանով միայն տարբերվում են ընդհանուրից և իրարից, և այն էլ միայն իրենց յուրահատուկ բառերով։ Իսկ մնացյալ բոլոր բառերը, քերականությունը, շարադասությունը և համաձայնությունը բոլորովին նույնն են։ Բժիշկն էլ, փիլիսոփան էլ, թադալորն էլ ու քրմապետն էլ, վաճառականն ու արհեստավորն էլ, ու վերջին մուրացիկն էլ միևնույն ձևով ասում են «ժամի քանիսն է. ես երկու եղբայր ունեմ» և այլն։ Այնպես, որ «լեզուն» կոչել այս ազնվական կամ ռամիկ, գիտական կամ հասարակ ժարգոնները, գիտականորեն բոլորովին անճիշտ է։

Ազնվական կամ ռամիկ «լեզվի» մի առանձին տիպարը տեսանք Ջավախի լեզվում։ Այդ այն է, երբ մի ժողովրդի մեջ՝ այսինչ բարբառը խոսող մի ցեղ կամ տոհմ ձեռք է բերում ամբողջ երկրի իշխանությունը և իր մեջ էլ գործածում է այդ բարբառը։ Այսպիսով այդ բարբառը բարձրանում է ազնվականության աստիճանին, ուր պիտի մնա մինչև այն ժամանակ, երբ բարբառները ձուլվեն կամ միանան։

Ազնվական ժարգոն կարելի է կոչել նաև այն դեպքում, երբ մի ժողովուրդ ունենում է հին ու նոր գրականություն։ Նոր գրականությունը ժողովրդի խոսած լեզուն է. հին գրականությունը և լեզուն թեև մեռած, բայց կենդանի է դեռ գրքերում։ Եվ գրագետը, գիտունը, քրմապետը, ինչպես և ազնվականը կարող են որոշ չափով տարբեր վերցնել այդ հին լեզվից և շարունակել իրենց առօրյա կյանքում։ Կարող է պատահել, որ նույնիսկ առանց հին գրականության, որոշ ասացվածքներ ավանդաբար պահված մնան նոր լեզվի մեջ էլ՝ ազնվականների կամ քուրմերի շրջանում։ Բայց դրանք արդեն պետք է, որ

շատ սահմանափակ քանակությամբ լինեն։ Այս դեպքում ազնվականական ժարգոնները ընդհանրապես ոչ թե ազնվական դասակարգի ծնունդ են, այլ գրականության կամ ավանդության։ Այսօր Թյուրքիայի, Միջագետքի ու Պարսկաստանի քրդերն էլ ունեն ազնիվ ու ռամիկ, բայց շեյխի, աշիրեթի, բեգի և վերջին հուվիվի լեզուն միևնույնն է, որովհետև չկա հին գրականություն, որ ժողովրդական և ազնվական խավերի մեջ տարբերություններ ստեղծե։

Այսպիսով, սույն քննությունը բերում է այն եզրակացության, թե ազնվականների կամ ռամիկների, բուրժուաների ու պրոլետարների, մի խոսքով՝ դասակարգերի լեզուներ գոյություն չունեն։ Կան միայն դասակարգային բարբառներ, որոնք ստեղծում են շահագործող դասակարգերի վերնախավերը։

Այսպես են ձևավորվում յուրաքանչյուր հասարակության մեջ առաջին դասակարգային բարբառները և մասնագիտական բառարանները։ Որքան սեղմ է հասարակությունը և այդ մասնագիտություններն էլ սահմանափակ, այնքան էլ մեծ է լեզվի միությունը և փոքր՝ մասնագիտական լեզուների բառարանը։ Բայց հենց որ մասնագիտությունները շատացան և զարգացան, շատանում և զարգանում է նաև նրանց բառապաշարը։ Օրինակ՝ այսօր բժշկության կամ բուսաբանության և կամ քիմիայի լեզուները, որոնք այնքան են հարստացել, որ ընդհանուր բառարանի մոտ մի առանձին բառարան էլ իրենք են կազմում, ոչ-մասնագետների համար բոլորովին անհասկանալի են։ Բացի առարկաբուժից ևլ կհասկանա, օրինակ, հետևյալ առարկաբուժական բառերը. էքսկավատոր, էքստրակցիա, էքստիրպացիա, շտոպֆեր, կլամմեր, կորնցանք, բույոնետ և այլն (Р. Шор, Язык и общество, էջ 101)։

Լեզվի տարբերակման մի առանձին աստիճան է կազմում գրական լեզուն, որ գրագետների ձեռքով փոխոխվելով ու կերպարանափոխվելով հասնում է վերջապես արվեստական լեզվի աստիճանին, թեև սկզբում նա նույն է ժողովրդի լեզվի հետ, բայց հետո բաժանվում է այնքան, որ կողք կողքի ապրում են երկուսը առանձին։ Երբ տարբերությունը մեծ աստիճանի է հասնում, այլևս իրար չեն հասկանում, մեռած գրական լեզուն մի կողմ են դնում և ժողովրդականն են գործածում։ Վանդրիևսը (Le langage, էջ 325) այս երևույթը նմանեցնում է մի գետի, որի երեսին մի խավ սառույց է պատել. սառույցը իրոք գետից

է գոյացել, և հենց ջուրը ինքն է, բայց գետը չէ. երեխան, երբ նայում է սառույցին, կարծում է, թե ջուրը կանգնել է, գետ չկա. մինչդեռ սառցի տակ հոսում է ջուրը. կոտրվում է սառույցը և ջուրը հանկարծ ժայթքում է դուրս։ Գրական լեզուն սառույցն է, տակից հոսող ջուրը՝ ժողովրդի կենդանի լեզուն. ցուրտը, որ ձևացրել է սառույցը, գրագետներն են ու զանազան տեսակի քերականները. արևի հալիչ ճառագայթները կյանքի ուժն է, որ ավանդության շղթաները խորտակելով հնարովի կանոնները դեն է շպրտում։ Այս վիճակն են ապրել հին գրական լեզուները։

Կան լեզուներ, որոնք պատմության ընթացքում ունեցել են շատ մեծ ծավալում. այսպես, օրինակ, արաբերենը, մեկնելով մի անզարգացած ու վոքր երկրից, որ խոսվում էր ոչ-բազմաթիվ մարդկանց կողմից, տարածվել է հետզհետե շատ ու շատ երկրների մեջ, ձուլել-կլանել է բազմաթիվ լեզուներ ու բարբառներ։ Նույնպես լատիներենը, ընդամենը մի քաղաքի լեզու, տարածվել է նախ Իտալիայի բոլոր կողմերը, հետո՝ Եվրոպայի մի ընդարձակ տարածության վրա և ամբողջ հռոմեական պետության սահմաններում։ Վերջապես չինարենը, որ տիրապետել է երկար ժամանակ և այսօր էլ դեռ մեծապես տարածված է Արևելյան Ասիայի մեջ։ Այսպիսի համատարած լեզուներ եղել են կամ են վերջապես ռուսերենը, պարսկերենը, անգլերենը, իսպաներենը և այլն։ Լեզուների տարածման միջոցը աշխարհակալություն, պետությունը և վարչությունն է. բայց հնում զորեղ միջոց են եղել նաև կրոնը և քաղաքակրթությունը։

Հնության մեջ, ինչպես ասացինք, ամենից մեծ տարածում ստացած լեզուն արաբերենն է։ Ահա թե ինչ է ասում Ռենանը այս մասին. «Ո՛չ մի աշխարհակալություն չեղավ նրա չափ ընդարձակ, նրա չափ հանկարծական։ Արաբերեն լեզուն, առանց հակառակության, այն լեզուն է, որ արշավել է աշխարհիս ամենամեծ տարածությունը։ Միայն երկու ուրիշ լեզու կա, հունարենն ու լատիներենը, որոնք նրա նման պատիվն ունեն դարձած լինելու համաշխարհային լեզու, այն է՝ զանազան տեղերի կրոնական և քաղաքական բարձրագույն մտածության օրգանը։ Բայց լատիներենն ու հունարենը չեն հասնում արաբերենի տարածման։ Լատիներենը խոսվում է Կամպանիայից մինչև Բրիտանական կղզիները, Հենոսից Ատլաս. իսկ հունարենը՝ Սիցիլիայից մինչև Տիգրիս, Սև ծովից մինչև Եթովպիա։ Բայց ինչ է

դա համեմատած արաբ լեզվի անհուն տիրապետության հետ, որ ընդգրկում էր Իսպանիան, Աֆրիկան մինչև հասարակածը, Հարավային Ասիան մինչև Ջավա, Ռուսաստանը մինչև Կազան» Renan, Hist. des langues sémit, I⁴. 1863, էջ 389)։

Երբ հասարակությունը մեծանում և տարածվում է ընդարձակ հողամասերի վրա, բնականաբար հասարակական կապն էլ ավելի թուլանում է և մինչև անգամ խզված չինվում է նրա զանազան մասերի միջև, լեզվի միությունը այլևս կորցնում է իր անհրաժեշտության իրավունքը և հետևելով իր առանձին պայմաններին՝ ընթացք տալիս իր առանձին զարգացման, յուրաքանչյուր իր նոր խմբակի մեջ։ Այսպես են կազմվում բարբառները. յուրաքանչյուր բարբառ ունենում է իր ենթաբարբառները և այլ մանր բաժանմունքներ։ Որքան ցրված և անջատ են ապրում ժողովուրդները, բարբառներն էլ այնքան շատ և զանազան են, իսկ որքան սերտ, հավաք, այնքան էլ մեծ է լեզվի միությունը։ Այսպես նաև հասարակության խավերը։ Գարսկերենը աքեմենյան պետության միջոցով Դանուբից մինչև Զինաստան էր տարածվել, բայց հենց որ, Ալեքսանդրի աշխարհակալության շրջանում, կայսրությունը կործանվեց, պարսկերենն էլ բաժան-բաժան եղավ և այսպես Ա դարից կազմվեցին իրարից անկախ բազմաթիվ լեզուներ։ Այսպես բաժանվեց նաև լատիներենը հռոմեական կայսրության կործանման հետ և վերածվեց բազմաթիվ բարբառների՝ Իտալիայում, Գալլիայում, Իսպանիայում և այլն, որոնք հիմք դարձան հետո իտալերեն, ֆրանսերեն, իսպաներեն և այլ լեզուների։ Նույն երևույթը նկատում ենք նաև այսօր իսպաներենի և անգլերենի համար։ Հարավային Ամերիկայի ռեսպուբլիկաների իսպաներենը բավական տարբեր է մայր ցամաքի լեզվից և արդեն կարելի է եղել կազմել Չիլիի իսպաներենի քերականությունը։ Նույնպես և Ամերիկայի անգլերենը արտասանությամբ և բառերով բավական տարբեր է Անգլիայի անգլերենից, և կան ամերիկացիք, որ չեն էլ ուզում արվեստական միջոցներով մոտեցնել Ամերիկայի անգլերենը Անգլիայի անգլերենին։ Ընդամենը 2 կամ 3 դար է, որ հոլանդական մի գաղութ հաստատվել է Աֆրիկայի ծայրը՝ իր հետ տանելով իր մայրենի լեզուն. բայց այդ լեզուն՝ կտրված հայրենի երկրից, արդեն այնպես փոփոխվել է, որ ձևացրել է մի լեզու, որ առանձին անունով կոչվում է աֆրիկաներեն (afrikaans)։

Եթե կա մի միջոց, որ ըստ կարելվույն կասեցնում է բարբառների արագ առաջացումը, դա քաղաքակրթությունն է, այս բառի տակ հասկանալով հատկապես գրականությունը։ Նույն ամերիկացիք, որ ահագին օվկիանոսով բաժանված են Անգլիայից, 400 տարվա ընթացքում անշուշտ մի բոլորովին ուրիշ լեզու պիտի ունենային, եթե չլիներ գրականությունը։

Վերևում ասացինք, որ բարբառների և լեզուների ծագման պատճառը հասարակության միասնությունը և տարածումն է, այսինքն՝ ժողովրդի բազմամարդությունը և հեռավոր վայրերում հաստատվելը։ Այս բանը, սակայն, պետք է առնել շատ հարաբերական իմաստով։ Հիմնական պատճառը կապի թուլացումը կամ բացակայությունն է՝ անկախ խոսողների թվից և սահմաններից։ Ամերիկան և Ավստրալիան, որ հազարավոր մղոններով հեռու են Անգլիայից, շնորհիվ քաղաքակրթության ավելի սերտ հարաբերության ունեն, քան հին Հռոմի գյուղերն ունեին մայր քաղաքի հետ. ուստի և Ամերիկայի և Ավստրալիայի անգլերենը շատ ավելի նման է մայր ցամաքի անգլերենին, քան Հռոմի գյուղերի բարբառը՝ մայրաքաղաքի լատիներենի հետ։ Միևնույն ժամանակ 180 միլիոն անգլիախոս ժողովուրդը ավելի քիչ բարբառներ է ներկայացնում, քան լատիներենը, թեև հին հռոմեական կայսրության ժողովուրդը թվով անհամեմատ պակաս էր։ Կապի բացակայությունը արդյունք է քաղաքական ու տնտեսական պայմանների։ Ըստ այսմ տեսնում ենք, որ Ամերիկայի և Օվկիանիայի զարգացման ցածր աստիճանի վրա կանգնած ցեղերի մեջ մի շատ փոքր տարածության վրա վրխտում են լեզուներն ու բարբառները։ Գաբելենցը և Մեյեն իրենց Մելանեզյան ուսումնասիրության մեջ ցույց են տալիս, որ Մակլայի ծովափում (Նոր Գվինեայի հյուսիս-արևելյան կողմը) գրեթե յուրաքանչյուր գյուղ ունի իր առանձին բարբառը, և իրարից 6—8 մղոն հեռու գտնված գյուղերի բնակիչները դժվար կարող են իրար հասկանալ։ Մեկ օրվա ճանապարհի վրա 2—3 Թարգմանի պետք կա։ Չըրչիլը (Churchill) ասում է, թե Մելանեզիան բազմաթիվ իրար համար անհասկանալի լեզուների մի թնջուկ է. Խաղաղականի վրա նա հարյուրից ավելի լեզուների հետ գործ է ունեցել։ Այնպիսի մի փոքր կղզյակ, ինչպիսին է Եռաբլուրը, որ միայն 6 մղոն երկարություն ունի, երկու բոլորովին տարբեր լեզու ունի։ Ըստ Կուռի (Curr) Ավստրալիայի մի քանի

հազար բնիկները 200-ից ավելի բարբառ ունեն. Տիմոր կղզու վրա, որ 100 000 բնակիչ ունի, 40 բարբառ կա։

Երբ պատահի, որ քաղաքական մի նոր բերումով որևէ երկրի անջատ մասերը նորից մոտենան իրար և մի ամբողջություն կազմեն, լեզվի միության պահանջը դարձյալ երևան է գալիս, որ գործում է թե պատմական ներքին զարգացման ճանապարհով, և թե արվեստական միջոցներով։ Առաջինը՝ պատմական զարգացման ճանապարհն այն է, որ մարդիկ ինքնաբերաբար, իրար հետ լավագույն հաղորդակցության միջոց ստեղծելու համար, մոռանում են մասնավորը և վերցնում ընդհանուրը։ Այս դեպքում տկարը տեղի է տալիս զորավորին, այս բառի տակ հասկանալով թե նյութական, և թե բարոյական ուժը կամ մեծությունը։ Այսպես՝ գյուղերը ձգտում են դեպի քաղաքը, և քաղաքները ձգտում են դեպի մայրաքաղաք։

Բարբառները բոլորն էլ իրար հավասար են. բայց հենց որ նրանցից մեկը իշխանության գլուխ անցավ, սկսում է տիրել անհավասարության զգացմունքը։ Մոսղները իրենք են սկսում արհամարհել իրենց լեզուն և զգում են այն՝ ստորին աստիճանի վրա։ Սկսում է տիրել այն սխալ կարծիքը, թե բարբառը մայրաքաղաքի լեզվից ցածր է արժանիքով ու պատվով և կամ տիրող կամ գրական լեզվի հետին ազատազրկյալ ծնունդն է։ Լեզվաբանի համար բոլոր բարբառներն էլ ներկայացնում են մի տիպի շարունակական ձևափոխություններ։ Լեզուն, կամ նաև գրական լեզուն էլ բարբառներից մեկն է և հաճախ ավելի ուշ կազմված, քան մի ուրիշ բարբառ։ Տգիտություն է բարբառներից մեկը մյուսին ստորադաս համարելը։ Որևէ լեզվի պետական լինելը (քաղաքական պատիվ) կամ ճոխ գրականությամբ մշակված լինելը (գրական պատիվ) արժեք չունի գիտության համար։ Բոլոր արդի լեզուներն էլ մի ժամանակ բարբառ էին մի ուրիշ, այս կամ այն ավելի հին լեզվի, իսկ հին լեզուները նույնպես բարբառ էին զանազան մայր լեզուների և այլն։

Եթե կա նախապատվության զգացմունքը բարբառների միջև, ինքնին հասկանալի է, որ նույնը ավելի մեծ չափերով պիտի լինի նաև լեզվից լեզու և հատկապես տիրող ազգերի և նվաճված ազգերի լեզվի միջև։ Այսպես՝ ցարիզմի ժամանակ հայերենը, վրացերենը և այլն ավելի ստոր էին համարվում ռուսերենից, Իրանում ստորներենը՝ պարսկերենից և այլն, և այլն։ Երբ այս զգացմունքը տիրում է մարդկանց մեջ, բնակա-

նաբար մարդը ինքն է խուսափում իր սեփական լեզվից և ամեն կերպ աշխատում է յուրացնել նախապատիվ համարված լեզուն։ Այս բոլորի մեջ, լեզվի միության հիմքում կա արժանավորության և անկախության կորուստը։

Այսպես ուրեմն, բարբառները արհամարհվելով հետզհետե ջնջվում են՝ ընդհանուր լեզվի մեջ լուծվելով։ Իսկ մինչ սոցիալևստական հասարակարգում, երբ միևնույն միջավայրում կան մի քանի ազգություններ և ժողովուրդներ, որոնք ապրում են իրար հետ կողք-կողքի, նա՝ որի ձեռքն է իշխանությունը, ավելի պատվավոր է համարվում և նրա լեզուն էլ շատ հաճախ բռնի կերպով տարածվում է ամենքի վրա և դառնում պետական լեզու։

Հունաստանում հին ժամանակ կային զանազան բարբառներ, մեր թվականությունից առաջ Դ դարում ատտիկյան բարբառը տարածվեց և բոլոր հույների ընդհանուր լեզուն դարձավ կոյնեն (κοινή). պատճառը այն քաղաքական ու կուլտուրական խոշոր դերն էր, որ ունեցավ Աթենքը՝ աքեմենյան պետության կործանումից հետո։ Այսպես և էտրուսկերենը և ուրիշ մանր մունր լեզուներ, որ խոսվում էին Իտալական թերակղզում, անհետացան լատիներենի մրցակցության առաջ, ինչպես որ Հռոմ քաղաքի լատիներենն էլ ջնջեց գյուղերում խոսվող գլատիներեններըն։ Գալդերենը, որ Հայաստանի հին բնիկների լեզուն էր, ուրիշ տեղական մանր լեզուների հետ միասին, մոռացվեց հայերենի առաջ։ Այսպես և շատ ուրիշ լեզուներ, որոնք ծանոթ են մեզ հնության, բայց այսօր չկան ու չեն խոսվում, ինչպես՝ փյունիկերենը, ասուրերենը, թոխարերենը և այլն։ Ֆրանսերենը ուներ բազմաթիվ բարբառներ. ֆեոդալական շրջանում յուրաքանչյուր կենտրոն մի բարբառով էր խոսում, որ և գրականության էր բարձրացել. գլխավորապես չորս բարբառ կար. ֆրանսերեն, նորմանդերեն, պիկարդերեն և բուրգինիոն. երբ Փարիզը, մայրաքաղաք դառնալով, միապետությունը տարածվեց ամբողջ Ֆրանսիայում, բարբառներն էլ ընկան (ԺԲ — ԺԴ դար)։ Փարիզի լեզուն դարձավ ամենից պատվավորը, մտավ պալատ, գրագետները նրանով գրեցին և նա վերջապես ընդհանուր լեզու դարձավ։ Այսօր էլ կան բարբառներ Ֆրանսիայում, բայց Փարիզի լեզուն արագությամբ ջնջելով այդ բարբառները, ամբողջ Ֆրանսիան է կլանում. նույնիսկ տարածվել է նրա սահմաններից դուրս, գաղութներում և գրականության միջոցով էլ զանա-

դան օտար երկիրներում։ Այսօր նույնիսկ ֆրանսախոսիք, ֆրանսերեն ասելով, հասկանում են միայն Փարիզի լեզուն, իսկ մյուսները անվանում են իրենց գավառի անունով։ Այսպիսի տարածմամբ ընդարձակվեցին ու կազմվեցին նաև մյուս լեզուները, ինչպես ռուսերենը, իսպաներենը, պորտուգալերենը, անգլերենը և այլն, յուրաքանչյուրը՝ իր քաղաքական կենտրոնում և քաղաքական ազդեցությամբ, որին հետևեց և գրականը։ Ավելի գրական ճամբով են կազմված գերմաներենը (Լութերի վերանորոգմամբ) և մանավանդ՝ իտալերենը։ Իտալիան իբրև բաժանբաժան մի երկիր, չունենալով քաղաքական միություն և ազդեցություն, չէնթարկվեց և որևէ քաղաքական կենտրոնի հրամանին։ Բարբառների միությունը առաջացավ այստեղ գրական ճանապարհով. Դանտեն, Պետրարքան, Բոկաչիոն գործածեցին Տոսկանայի բարբառը (Ֆլորենցիա), որ հետո նույն հեղինակների խոշոր ազդեցությամբ տարածվեց և, նվաճելով Միլանի, Վենետիկի և Նավարրայի բարբառները, Իտալիայի ընդհանուր լեզուն դարձավ (ԺԴ դար)։ Գերմանիան, թեև ուներ մի գրական լեզու, բայց չէր կազմում բացարձակ քաղաքական միություն, այլ կազմված էր զանազան պետություններից, յուրաքանչյուրը իր առանձին մայրաքաղաքով, գրական անձինքն էլ իրենց խոսակցական լեզվի մեջ ցույց էին տալիս զանազան բարբառային խառնուրդներ։

Լեզվի տարածման միջոցներն են գլխավորապես պետականությունն ու քանակը, իսկ որակը, լեզվի անցյալը, գրական արժանիքը և նման բարոյական հատկությունները արժեք չունեն. գերազանցապես կուլտուրական հունարենը, ինչպես և հայերենը, ղիջեցին թյուրքերի առաջ, և այսօր մարդ դժվարանում է հասկանալ, թե ինչպես Փոքր-Ասիայի հույները և հայերը իրենց մայրենի լեզուն կորցնելով թրքախոս դարձան։ Անշուշտ, պատճառը թրքական բանակալություն և թյուրք ժողովրդի ճնշող թվական գերակշռություն էր փոքրաքանակ հույների և հայերի համեմատությամբ։ Բուն Հայաստանում, ինչպես և բուն Հունաստանում, մայրենի լեզուն միայն և երբեք չդիջեց թյուրքերենին, նույնիսկ Պոլսում այդ երկու մայրենի լեզուները միացել և միում են մինչև այսօր։ Աֆրիկյան մի հետամնաց ցեղի լեզու՝ մանդինգ (mandingue) ըստ Դելաֆոսսի (Delafosse, La langue mand., էջ 19) ունի 2800000 խոսող, որոնց մայրենի լեզուն է. բայց շրջակա այլալեզու ժողովուրդներից

նաև 2 միլիոն անձ հասկանում են այդ լեզուն, ուրեմն գրեթե այնքան, որքան ընդհները։ Բայց այս լեզուն տարածելու համար ոչ քաղաքակրթությունն է գործել, ոչ գրականությունը, որովհետև նրանք էլ գիր չունեն։

Արվեստական միջոցները նրանք են, որ պետությունը գործ է դնում իրեն հատուկ լեզուն զանազան միջոցներով պարտադրելու համար հպատակներին, այն է՝ կրոն, գրականություն, դպրոց, պաշտոնյաներ, դատարաններ և այլն։ Այստեղ սկսվում է նորից բարբառների կամ լեզուների մրցությունը, մինչև պետության և հասարակության քայքայումը և նոր խմբակցությունների բաժանումը։

Նկատելի է, որ հասարակության զարգացման ցածր աստիճաններում ինչքան մի լեզու հարթ տարածության վրա խոսվի, այնքան քիչ բարբառներ կունենա, ընդհակառակը՝ ինչքան լեռնոտ լինի երկիրը, այնքան շատ բարբառներ կունենա։ Պատճառն ուրիշ բան չէ, եթե ոչ առաջին դեպքում հաղորդակցության հեշտությամբ ընդհանուր հասարակական կապի պահպանումը, երկրորդ դեպքում հաղորդակցության դժվարությամբ նույն ընդհանուր հասարակական կապի թուլացումը։ Այսպես՝ թաթարերենը և ռուսերենը, խոսվելով ահագին տափաստանների վրա, համեմատաբար քիչ բարբառներ ունեն, քան հայերենը, որ խոսվելով լեռնոտ երկրի մեջ, վերածվել է այնքան շատ բարբառների։

Այսպես ուրեմն՝ լեզուներն ու բարբառները գտնվում են մշտապես բաժանման ու միացման շարունակական վիճակի մեջ։ Առաջին հերթին լեզուն տալիս է իր ճյուղավորումները՝ իր զանազան տեղային բարբառները, երկրորդ հերթին՝ «դասակարգային բարբառները»՝ ժարգոնները։ Դասակարգերի ժարգոնները պետք չէ շփոթել բարբառների հետ. առաջիններն պատկանում են շահագործող դասակարգերի վերնախավերին. նրանցով ժողովուրդը չի խոսում. նրանք ունեն որոշ քանակով յուրահատուկ բառեր և արտահայտություններ, բայց սեփական քերականություն և բառային հիմնական ֆոնդ՝ ոչ։ Երկրորդները պատկանում են ժողովրդական մասսաներին և տարբերվում են իրարից և համաժողովրդական ընդհանուր լեզվից թե բառարանով, և թե քերականությամբ. դրանցից յուրաքանչյուրն ունի իր քերականությունը և իր բառային հիմնական ֆոնդը։ Առաջինները դրված են իրար վրա, ըստ բացատրության Ռուդեի (Roudet), մյուսները՝ իրար կողքի։ Օրինակ՝ ենթադրենք հայոց մեջ

ԺԹ դարում 6 տարբեր գավառ և շրջան. ճամար բառը A շրջանում ասվում է ենթադրենք ճամար, B շրջանում՝ խամար, C շրջանում՝ ճամօր, D շրջանում՝ ճամուր, E շրջանում՝ ճամա, F շրջանում խմա. այս բոլորը տեղական բարբառներ են՝ իրար ժամանակակից, որ ապրում են տարբեր տեղերում: [Այս երկուսից էլ (տեղային բարբառներից և «դասակարգային բարբառներից») տարբեր են մասնագիտական «լեզուները», որ տեղայնացած չեն, ինչպես և դասակարգային խորության արդյունք չեն:] Միևնույն թվին բոլոր գավառներում էլ կան բժիշկներ, տոմարագետներ և ուրիշ մասնագիտությունների հետևող մարդիկ, որոնք բոլորը, թեև գործ են ածում իրենց գավառի վերոհիշյալ բարբառային ձևը «համար» բառի համար, բայց ունեն նաև մի խումբ այնպիսի բառեր, որ չկան բարբառներում. բժիշկը գիտե թոքատապ, թոքառաջ, շնչերակային, գեղձակծիկ և այլն, և այլն. տոմարագետը գիտե՝ ինճևտասներյակ, զենիթ, ճակուղիղ, ճակարջային և այլն: Պիտի գա թերևս ժամանակ, երբ այդ 6 տարբեր գավառները, որ ձևով բաժանվել են իրարից, միանան նորից և 6 ձևերից մեկը հաղթե ու տիրե բոլորին՝ մտացության մատնելով մեացյալ հինգը: [Այդ բանը տեղի է ունենում այժմ, երբ մեր արդի հայերեն գրական լեզուն մասսաների խոսակցական լեզուն է դառնում, դուրս մղելով բարբառները: Դասակարգային բարբառները, դրան հակառակ, չեն կարող շատ երկար կյանք ունենալ. նրանք մահանում են իրենցով խոսող վերնախավի կործանման հետ:]

Հնագույն ժամանակներում, երբ հաղորդակցության միջոցները չափազանց տկար էին, հասարակական զանազան միությունների կապն էլ տկար էր: Ասիայում ապրող ժողովուրդները տեղեկություն չունեին ոչ միայն Եվրոպայի կամ Աֆրիկայի, այլև նույնիսկ Ասիայի ավելի հեռավոր վայրերի ժողովուրդների մասին: Այսօր գիտության շնորհիվ աշխարհը ներկայացնում է մի բոլորովին այլ կերպարանք: Նավային, երկաթուղային, փոստի և հեռագրական հաղորդակցությունը բոլոր ազգերին կապել է իրար. ասվածնակը հետզհետե զարգանալով օրերի և շաբաթների ճամբորդությունը ժամերի է վերածում. միևնույն օրում մենք նստած Երևանում ռադիոյի միջոցով կարող ենք խոսել ոչ միայն Մոսկվայի կամ Թեհրանի, այլև ավելի հեռու՝ Բեռլինի, Լոնդոնի կամ Նյու-Յորքի ու Կալիֆոռնիայի հետ: Համաշխարհային գիտությունն ու քաղաքակրթությունը հարա-

ճուն կերպով մոտեցնում են մարդկային զանազան ցեղերի մտածողությունը և ջնջում անջատ սովորությունները։ Հեռախոսը մի այնպիսի միություն է կազմում՝ որի մասին հները երևակայել անգամ չէին կարող։ Ռադիոն գերազանցում է ամեն մարդկային դատողություն։ Կինոյի և հեռախոսի միացումը (հեռուստատեսություն) այլևս մեզ համար վերացնում է ծովերի ու ցամաքների անջրպետը։

Տասնյակ տարիներ ի վեր, հակառակ մլիտարիզմի կատաղության, արդեն մեր երկրում ազգերի եղբայրության և ընդհանուր միության հիմքն է դրվել. կգա ժամանակ, որ ազգային զգացումները հարթելով՝ կոմունիզմը ամբողջ մարդկությունը մի միության, մի միասնական հասարակության կվերածե։ Իսկ հասարակության միասնությունը պահանջում է նաև ընդհանուր ու միասնական լեզու։

Կա և մի այլ հանգամանք։

Առաջին համաշխարհային պատերազմի իբր հետևանք՝ ավստրիական կայսրության և տաճկական սուլթանիզմի և ռուսական ցարիզմի կործանմամբ անկախություն ստացան բազմաթիվ ազգեր և նրանց լեզուն պետականություն ստացավ։ Սովետական իշխանությունը ավելի զարգացրեց այս խնդիրը. ազգեր և լեզուներ, որոնց անուննները լեզվաբանները միայն գիտեին, ասպարեզ քաշվեցին, ինքնավարություն ստացան, և ոչ միայն նրանց լեզուն պետականության բարձրացավ՝ այլև գրականություն ստեղծվեց, մինչև իսկ՝ գիտական գրականություն։ Եթե Եվրոպան ուներ 6 կարևոր պետական լեզու, այժմ նրանց թիվը հնգապատկվեց։ Եթե ցարական Ռուսաստանը նախապես բոլորին պարտադրում էր միմիայն ռուսերեն լեզուն, այժմ մեր միության մեջ յոթանասունից ավելի լեզվի գոյության իրավունքն է ճանաչվում։

Լեզուների այս մեծ քանակը գրականության, բայց մանավանդ գիտական գրականության համար ստեղծում է ամենադժվար մի վիճակ։ Անհնար է գիտունին այսքան լեզվի տիրապետել, այսքան գրականություն ուսումնասիրել։

Այս պարագային մի ընդհանուր միջազգային լեզվի ստեղծումը դառնում է հասարակական պահանջ։

Միջազգային լեզվի պահանջը արդեն զգացվել էր շատ ժամանակից ի վեր, և մարդիկ զանազան միջոցներով աշխատել են բավարարել այդ պահանջը։ Միջին դարերում գիտունները

ուսումնական միջազգային լեզու էին դարձրել լատիներենը, որ Շվեդիայից մինչև Սիցիլիա և Պորտուգալիայից մինչև Լեհաստան մի և ընդհանուր էր բոլոր համալսարանների համար. այսօր էլ բժշկությունը, քիմիան, բուսաբանությունը և այլ գիտություններ մեծ չափով օգտվում են նրանից։ Դիվանագիտական հարաբերությունների մեջ իբր միջազգային լեզու ընդունվել են ռուսերենը, ֆրանսերենը, անգլերենը, չինարենը։ Բայց մեր խոսքը ավելի անձուկ միջազգային լեզու ունենալու մասին է։

Այն գիտությունը, որ զբաղվում է ամբողջ մարդկության համար մի ընդհանուր լեզու գտնելու աշխատանքով, կոչվում է հանրախոսություն (пазилалия)։ Այս միտքը առաջին անգամ հղացել է Լայբնից փիլիսոփան, 1666 թ., բայց վերահաս մահը նրա խորհուրդը անկատար է թողել։ Նրան է հետևել անգլիացի մի եպիսկոպոս (Ջոն Վիլքինս), բայց նա էլ այնքան նշաններ էր հնարել, որ փորձը անհաջող է անցել։

Միջազգային լեզվի մասին ժամանակակից բուրժուական լեզվաբանության մեջ երկու սկզբունք կա. ոմանք կողմնակից են մի նոր արվեստական լեզվի ստեղծման, ուրիշներ՝ մի որևէ կենդանի լեզու ընդհանուր միջազգային լեզու դարձնելուն։

80-ական թվականներից սկսած դուրս են եկել արվեստական լեզուների հեղինակներ և ներկայացնում են մեզ մեկը մյուսից ավելի հեշտ նոր արվեստական լեզուներ։ Այդ հեղինակների թվում կա նույնիսկ մի զմյուռնացի հայ, որ կազմել է սահլեռայ անունով մի համաշխարհային լեզու (այդ լեզվով սահլե նշանակում է «աշխարհ» և ռայ «լեզու»)։ Սահլեռայից ավելի անվանի են՝ վոլապյուկը, որ հնարեց Շլայեր անունով մի գերմանացի կրոնավոր, 1878 թ., էսպերանտոն, որ հնարեց լեհացի դոքտ. Զամենհոֆը, ունիվերսալը, որ հնարեց դոքտ. Մոլենարը, և լանգ-բլոն (langue-bleue), որ հնարեց Բոլլաքը՝ 1900-ին, Փարիզում։ Մինչև վերջերս մեծագույն հաջողությունն ուներ էսպերանտոն կոչված լեզուն, բայց գիտունները գտան, որ նա էլ լավ կազմված լեզու չէ. հեղինակը, լինելով սլավ, իր հնարած լեզվին էլ տվել է սլավական քերականության ոգին։ Օրինակ՝ ուղղականի և հայցականի տարբերությունը հոլովման մեջ։ Դրա համար Բոֆրոնը (Beaufront) և Կուտյուրան (Coutural) նոր բարեփոխություններ մտցնելով նրա մեջ՝ կազմեցին իդո լեզուն, իբրև էսպերանտոյի ավելի զարգացած ձևը։

1900 թվականին հնարվեցին, գրեթե միաժամանակ, ուրիշ երկու նոր լեզուներ՝ օքսիդենտալ և նովիալ (վերջինս հայտնի լեզվաբան Ջսպերսընի գործն է), երկուսն էլ հորինված զուտ լատինական հիմքի վրա և անգլերենի քերականության սկզբունքներով, որ պարզագույնն է աշխարհիս բոլոր լեզուների մեջ։ Անգլիայում հորինվեց ինտերլինգվա լեզուն։ Վերջապես 1947 թվին Փարիզում Սորբոնի դասախոս Մարտինեի կողմից հնարվեց ԻԱԼԱ (IALA) լեզուն[1]։

Արվեստական բոլոր լեզուների հեղինակներն էլ աշխատել են Եվրոպայի լեզվական երեք մեծ ընտանիքներից (ռոմանական, գերմանական և սլավական) հավաքել այն բոլոր բառերը, որ քիչ թե շատ ընդհանուր են արդեն բոլորին, ապացյալ բառերի համար այս կամ այն լեզվից ընտրել են ավելի կարճ, ավելի ներդաշնակ, ավելի հարմարավոր ձևերը, և կամ իրենք են հորինել նախորդ արմատներից, կազմել են ըստ կարելվույն պարզ և տրամաբանական քերականություն, և ահա պատրաստ է լեզուն։

Գործնականորեն ցույց տալու համար արվեստական լեզվի կազմության պատկերը, դնում եմ այստեղ էսպերանտո լեզվի քերականությունը։

Էսպերանտոյի հեղինակ լեհացի դոքտ. Զամենհոֆը (Zamenhof) ինքը կազմել է արդեն իր հորինած լեզվի քերականությունը էսպերանտո լեզվով, որ և հրատարակված է էսպերանտական ակադեմիայի պաշտոնական դասագրքում (Oficiala klasika libro de esperanto, Paris, 1924)։ Քերականությունը 8 էջ է և պարունակում է ընդամենը 16 կանոն։ Նույն կանոնները թարգմանված և հրատարակված են նաև բազմաթիվ լեզուներով, որոնց մեջ նաև հայերեն (տպված Պոլիս)։

Ավելի ընդարձակ մի դասագիրք է կազմել հայերեն լեզվով Գ. Սևակը. «Ձեռնարկ էսպերանտո միջազգային լեզվի», Երևան, 1930 թ.։ Պաշտոնական դասագրքում հրատարակված է նաև էսպերանտո լեզվի արմատների բառարանը, ուր բոլոր բառերի թիվը է 3045։ Սրանցից կարելի է կազմել նույնքան ածական, նույնքան բայ, ինչպես նաև բարդել ինչքան որ հարկ լինի։

[1] Արվեստական լեզուների թիվը այնքան շատացավ (հաբյուրավորներ), որ մինչև անգամ կազմվել են այդ լեզուների պատմության համար առանձին աշխատություններ. օրինակ՝ Couturat և Leau, Hist. de la langue universelle, Paris, 1907.

Սրանցից դուրս կա նաև 1250 բառ, որոնք ընդհանուր են եվրոպական բոլոր լեզուներին և իրավունք ունեն կոչվելու միջազգային բառեր։

Ահա էսպերանտոյի 16 կանոնները (թարգմանել է Գ. Սևակը՝ հատուկ իմ այս գրքի համար)։

ԷՍՊԵՐԱՆՏՈՅԻ ԼՐԻՎ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
(Լ. Լ. Զամենհոֆ)

1. Անորոշ հոդ գոյություն չունի. գոյություն ունի միայն որոշող հոդ (la)՝ բոլոր սեռերի, հոլովների և թվերի համար։

Նաևորություն. հոդի գործածությունը նույնն է, ինչ որ ուրիշ լեզուներում։ Մարդիկ, որոնց համար հոդի գործածությունը դժվարություններ է ներկայացնում, կարող են առաջին ժամանակ բոլորովին չգործածել այն։

2. Գոյականները ունեն o վերջավորությունը. հոգնակին կազմելու համար ավելացնում են j վերջավորությունը։ Գոյություն ունի միայն երկու հոլով՝ ուղղական և հայցական։ Վերջինս ստացվում է ուղղականի վրա ավելացնելով n վերջավորությունը. մնացած հոլովները արտահայտվում են նախդիրների օգնությամբ (սեռականը՝ de-ով, տրականը՝ al-ով, գործիականը՝ per-ով կամ այլ նախդիրներով՝ ըստ իմաստի)։

3. Ածականը վերջանում է a-ով։ Հոլովները և թվերը՝ ինչպես գոյականի համար։ Բաղդատականը կազմվում է pli բառով, գերադրականը plej բառով. բաղդատականի հետ գործածվում է ol շաղկապը։

4. Հիմնական թվականները (չեն հոլովվում), որանք են՝ unu (1), du (2), tri (3), kvar (4), kvin (5), ses (6), sep (7), ok (8), nau (9), dek (10), cent (100), mil (1000)։ Տասնյակները և հարյուրյակները կազմվում են թվականների հասարակ հարադրությամբ։ Դասական թվականներ կազմելու համար ավելացնում են ածականի վերջավորությունը, բազմապատիկականների համար՝ obl հետամատնիկը, կոտորակայինների համար՝ on, հավաքականների համար՝ op, բաշխականների համար՝ po։ Բացի դրանից, կարելի է գործածել թվական գոյական և թվական մակբայ։

[1] Հեղինակը գրել է ablativo—բառացի՝ բացառական. թեև իմաստով նույնն է հյ. գործիականի հետ։

5. Անձնական դերանուններն են mi (ես), vi (դուք), li (նա), ši (նե), ĝi (այն, առարկայի կամ կենդանու համար), si (ինքը), ni (մենք), vi (դուք), ili (նրանք) oni (չի թարգմանվում . անդեմ է): Սեռացականները կազմվում են ածականի վերջավորությամբ: Դերանունները հոլովվում են գոյականի պես[1]:

6. Բայը չի փոխվում ըստ դեմքի և թվի: Բայի հիմնական ձևերը. ներկա ժամանակն առանում է as վերջավորությունը, անցյալ ժամանակը՝ is, ապառնի ժամանակը՝ os, պայմանական եղանակը՝ us, հրամայական եղանակը՝ u, անորոշ եղանակը՝ i: Դերբայներն են (ածականի կամ մակբայի իմաստով)— ներգործական ներկան՝ ant, ներգործական անցյալը՝ int, ներգործականի ապառնին՝ ont, կրավորականի ներկան՝ at, կրավորականի անցյալը՝ it, կրավորականի ապառնին՝ ot: Կրավորականի բոլոր ձևերը կազմվում են esti (լինել) բայի համապատասխան ձևից և պահանջվող բայի կրավորական դերբայից. կրավորականի նախադրն է de (կողմից):

7. Մակբայները վերջանում են e-ով. սրանց համեմատության աստիճանները նույնն են ածականի հետ:

8. Բոլոր նախդիրները պահանջում են ուղղական:

9. Ցուրաքանչյուր բառ կարդացվում է, ինչպես որ գրվում է:

10. Շեշտը միշտ նախավերջին վանկի վրա է:

11. Բարդ բառերը կազմվում են բառերի հասարակ միացումով (գլխավոր բառը դրվում է վերջում): Քերականական վերջավորություններն էլ համարվում են իբրև ինքնուրույն բառեր:

12. Այլ ժխտական բառի դեպքում ne (չը, ոչ) բառը դուրս է ընկնում:

13. Ուղղություն ցույց տալու համար բառը առանում է հայցականի վերջավորությունը:

14. Ցուրաքանչյուր նախդիր ունի որոշ և հաստատ նշանակություն, սակայն եթե հարկավոր է գործածել որևէ նախադրություն, բայց ճիշտ իմաստը չի ցույց տալիս մեզ, թե որ նախադրությամբ պետք է գործածվի, այն ժամանակ գործածում ենք je նախադրությունը, որ ինքնուրույն իմաստ չունի: Je նախադրության փոխարեն կարելի է գործածել նաև հայցականն առանց նախադրության:

---

1 Գոյություն ունի եղակի երկրորդ դեմքի ci (դու) դերանունը, որը համարյա չի գործածվում:

15. Այսպես կոչվող օտար բառերը, այսինքն՝ այն բառերը, որ լեզուների մեծամասնությունը վերցրել է մի աղբյուրից, էսպերանտոյի մեջ գործածվում են առանց փոփոխության՝ միայն առանալով այս լեզվի ուղղագրությունը. սակայն մի արմատից կազմված տարբեր բառերից գերադասելի է գործածել անփոփոխ կերպով միայն հիմնական բառը, իսկ ճնացածները կազմել վերջինից՝ էսպերանտո լեզվի կանոններով։

16. Գոյականի և հոդի վերջին ձայնավորը կարող է դեղչվել՝ փոխարինվելով ապաթարցով։

* * *

Իբրև նորություն յուրաքանչյուր արվեստական լեզու իր սկզբնական շրջանում ունեցել է բավական մեծ հաջողություն. խոսողների և հետևորդների թիվը հասել է մեծ բազմության. օրինակ՝ վոլապյուկը 1887 թվականին ուներ 300 000 հետևորդ. էսպերանտոն ուներ շատ ավելի մեծ թվով հետևորդներ, կազմակերպվում էին կոնգրեսներ, հրատարակվում էին գրքեր ու թերթեր և այլն։ Բայց ինչ արժեք ունի այդպիսի մի թիվ որևէ եվրոպական կենդանի լեզվով խոսողների թվի համեմատությամբ։ Այնուհետև հետևորդների թիվը կանգ է առել և միջազգային լեզվի գաղափարը նորից մնացել է այնտեղ, որտեղ և էր։

Արվեստական միջազգային լեզվի հակառակորդները հետևյալ առարկություններն են մեջ բերում.

1. Ինչպես էլ լինի արվեստական լեզուն, կարելի չպիտի լինի իրագործել և պահպանել, որովհետև հենց որ հաստատվեց, շատ ժամանակ չանցած՝ նա պիտի փոփոխվի և զանազան երկրներում պիտի ստանա նորանոր ձևեր, այնպես որ միևնույն միջազգային լեզվից պիտի ստանանք զանազան լեզուներ կամ բարբառներ, ինչպես եղել են աշխարհիս բոլոր կենդանի լեզուները։ Այս առարկությունը ճիշտ չէ. լեզուների բաժանումը և բարբառների առաջացումը նախ հատուկ է կենդանի լեզուներին, և երկրորդ՝ արդյունք է երկար ժամանակի և հասարակական սերտ հարաբերությունների բացակայության։ Արվեստական լեզվի համար այս պատճառները գոյություն չունեն. նա չպիտի լինի երբեք կենդանի լեզու, այն մարքով՝ ինչ մարքով որ հասկացվում է, օր. հայերենն, ռուսերենն կամ չինարենն և այլ լեզուների համար։ Նա պիտի լինի իբրև մի մեռած լեզու, այնպես՝ ինչպես և սանսկրիտը

Հնդկաստանի համար, գրաբարը՝ մեր կեղծ դասական գրականության համար, կամ լատիներենը՝ եվրոպական գիտական գրականության համար։ Այս լեզուները գոյություն ունեն կենդանի լեզուների կողքին և միշտ են անփոփոխ դարեր ի վեր և պիտի միշտ էլ անփոփոխ։ Երկրորդ՝ եթե նույնիսկ ժամանակը փոփոխելու է միջազգային լեզուն, այդ ժամանակը այնքան հեռավոր է, որ նրա երկյուղով ներկան զոհել անմտություն է։ Եթե ապագայի փոփոխությունները ի նկատի ունենալով չուզենայինք միջազգային լեզվով գրել, այն ժամանակ պետք էր հրաժարվել բոլոր լեզուներից, որովհետև բոլոր լեզուներն էլ ուշ թե շուտ փոփոխվելու են։ Վերջապես՝ խոսք չի կարող լինել այստեղ հասարակական հարաբերությունների բացակայության մասին, որ քանի գնում՝ այնքան ավելի է զարգանում, առաջադիմելով դեպի ապագայի միասնական կոմունիստական հասարակությունը։

2. Արվեստական լեզուն, ում կողմից էլ որ շինված լինի, անշուշտ մի որևէ ազգային լեզվի վրա պիտի լինի ձևված, ուստի պիտի բախվի մյուս ազգերի նախանձին և ազգային առևելության։ Նույնիսկ հեղինակի ազգությունը նշանակություն ունի այս ազգային առևելության խնդրում։ Սրա դարմանն ու պատասխանը չափազանց դյուրին է։ Բոլոր ազգերի ներկայացուցիչներից կազմվում է միջազգային մի ժողով, որ բոլորի համաձայնությամբ հորինում է միջազգային արվեստական լեզուն, որով ոչ հեղինակի հարց կլինա, և ոչ էլ տիպար լեզվի ազգության։

3. Արվեստական լեզուները չեն կարող հաջողություն ունենալ, որովհետև լեզուն օրինակելելու և տարածվելու համար պետք ունի կենդանի խոսողների։ Ուստի պետք է վերցնել մի որևէ կենդանի լեզու և ընդհանուր համաձայնությամբ միջազգային դարձնել այն։

Այս սկզբունքին հետևողները կարծում են, որ ժամանակը ինքնին շինում է արդեն այն. ըստ այդմ՝ Եվրոպայի մեծ լեզուները հետզհետե կուլ տալով կամ առնվազն գործածությունից հեռացնելով մանր լեզուները, վերջ ի վերջո պիտի հանգեն միության։

Այս ենթադրությունը մասամբ ճիշտ է. իրոք որ զանազան մանր լեզուներ, հատկապես Ամերիկայի և Աֆրիկայի շատ ցեղերի լեզուներ, օրեցօր անհետանալու վրա են՝ տեղի տալով գաղութակալների լեզուներին, որոնք են անգլերենը, իսպաներենը և ֆրանսերենը։ Սակայն նույնիսկ ենթադրելով մի րոպե, թե

հենց բոլոր լեզուները անհետացան և մեզանից միայն հիշյալները, լեզվի միությանը հասած չենք լինի։ Եվ պետք կա նրանց թիվը ավելի ևս կրճատելու։ Դա անշուշտ անկարելի է, քանի որ բախվելու ենք ազգային ամենախոչոր հակառակության։ Այդ բոլորը նկատի ունենալով, ամենք այժմ այն կարծիքն են առաջ քաշում, թե հարմարագույն միջոցն է առանց սպասելու, որ մանր լեզուները ջնջվեն, միջազգային համաձայնությամբ ընդունել մեծ լեզուներից մեկը և դպրոցների միջոցով նրա ուսումը դարձնել պարտադիր ամեն երկրի մեջ, յուրաքանչյուր ազգային լեզվի կողքին։ Այդ լեզուներից էլ հարմարագույնն են համարում անգլերենը, որ իբր «համաշխարհային բնույթ առացած» մի լեզու է, խոսվում է մարդկության մի խոշոր մասի կողմից իբրև մայրենի լեզու (Անգլիա, Ամերիկա, Ավստրալիա, Նոր-Զելանդիա և անգլիական շատ գաղութներում), տարածված է իբրև կուլտուրական լեզու աշխարհիս մեծագույն մասի վրա (Ճապոնիա, Հնդկաստան, Եգիպտոս, Հյուսիսային Եվրոպա), և վերջապես ներկայացնում է միջազգային դառնալու լավագույն հատկությունները՝ իր ներքին կազմությամբ.— պարունակում է ֆրանսերեն և գերմաներեն փոխառությունների մի մեծ տոկոս, չունի սեռ, ինչ որ մի անհաղթելի դժվարություն է ներկայացնում լեզուների մեջ, բացի սրանից, ունի չափազանց պարզ քերականություն։ Այս բոլոր կետերի մեջ ֆրանսերենը նրանից շատ ավելի հետ է հատկապես սեռի և բարդ քերականության պատճառով։ Ինչ վերաբերում է ուղղագրական դժվարության, դա մի շատ երկրորդական հանգամանք է և հեշտությամբ կարելի է վերացնել, որովհետև ոչ մի լեզվի մեջ ուղղագրությունը օրգանական որևէ կապ չունի քերականական կազմության հետ։

Ահա այս հանգամանքը նկատի ունենալով Զախրիսոնը (Zachrison) վերցրել է անգլերեն լեզուն, սրբագրել նրա ուղղագրությունը և այդպիսով հնարել անգլիկ (anglic) լեզուն (1932 թ.), որ բռնում է կենդանի լեզվի և արվեստական լեզվի միջին տեղը։ Օրինակ՝ անգլ. special, usual, agent բառերը նոր՝ անգլիկ լեզվի մեջ գրվում են speshl uezhooal, aejent և այլն։ Բայց ինչպես տեսնում ենք, այդ ուղղագրությամբ այնքան է խեղաթյուրվում բառի կերպարանքը, որ իսկական միջազգային կերպարանքը բոլորովին կորցնում է։ Շատ ավելի ըմբռնելի և հասկանալի ձևեր են special, usual, agent և այլն, քան սրանց սրբագրյալ ձևերը։ Նշանակում է, թե Զախրիսոնի ճանապարհն էլ սխալ է։ Ավելի

լավ պիտի լիներ, եթե նա պահեր անգլերենի ուղղագրությունը դրեթե այնպես, ինչպես կա և փոխեր անգլիական արտասանությունը, որ խանգարված ու այլայլված է։

Նմանօրինակ, բայց շատ ավելի խոհական ճանապարհ է բռնել անգլիացի Օգդենը (Ogden), որ 1928 թվականին հնարել և երկու տարի փորձելուց հետո՝ 1930 թվականին հրատարակել է բեյսիկ անգլերեն (Basic English) լեզուն։ Այս լեզուն նախապես պատրաստված է եղել առևտրական նպատակով, ծառայելու համար իբր կապ՝ մի մեծ անգլո-ամերիկական առևտրական ընկերության բազմազգի գործակալների միջև, որոնք կարիք ունեին կարճ ժամանակում սովորելու անգլերենը։ Այս պատճառով էլ Օգդենը հնարել է բեյսիկ լեզուն, որի անունը հենց այդ ընկերության անվան նախատառերից է կազմված.—British-american scientific international commercial (English)։

Բեյսիկ լեզուն մի նոր հնարովի ինքնուրույն լեզու չէ, այլ ներկայացնում է անգլերեն սովորական լեզվի պարզացրած մի վիճակը։ Ըստ Օգդենի՝ Վեբստերի New international Dictionary կոչված անգլերեն բառարանը պարունակում է 500 000 բառ. Օգդենը, կրճատելով այս մեծ բառապաշարը, դուրս գցելով բոլոր հոմանիշները և ավելորդ ճոխություն կազմող բառերը, ընտրել է միայն 850 բառ, որոնք մի քանի մասնիկների հավելմամբ բավական են լրացնելու համար 20 000 անգլիական առօրյա ամենագործածական բառերի պահանջը։ Քերականությունը ամբողջապես նույնն է անգլերենի հետ, ինչպես և ուղղագրությունը և արտասանությունը։ Միայն թե Օգդենը բայերի խոնարհման դժվարությունն էլ վերացնելու համար՝ ջնջել է առհասարակ բայերի գործածությունը և պահել է նրանցից միայն 16 բայ, որոնք են՝ come «գալ», get «ձեռք բերել», give «տալ», go «գնալ», keep «պահել», let «թողնել», make «անել», put «դնել», seem «թվալ», take «վերցնել», be «լինել», do «անել», have «ունենալ», say «ասել», see «տեսնել», send «ուղարկել». ավելացնենք սրանց վրա և՝ may «կարող է», will «պիտի»։

Այս 16 բայերը ծառայում են իբրև օժանդակ, և նրանցից կազմվում են բոլոր բայերը. այսպես՝ փոխանակ ասելու ծիծաղել, բանալ, սիրել և այլն, ըստ բեյսիկի ասում են ծիծաղ տալ, բաց անել, սեր ունենալ և այլն. խոնարհման ժամանակ էլ բնականաբար խոնարհվում է օժանդակը և սովորական բայերի խոնարհումը վերջանում է։

Բնականաբար անհնարին է երևակայել 850 բառով մի ամբողջ լեզու։ Ուստի ասենք, որ այս թվի մեջ չեն մտնում թվականները, օրերի և ամիսների անունները, 50 ընդհանուր գիտական բառ, 100 գիտական առանձին բառ՝ յուրաքանչյուր մասնագիտության համար, և բազմաթիվ միջազգային բառեր։ Բայց ավելացնենք մանավանդ բարդ և ածանց բառերը, որոնք առատորեն կազմվում են դանազան մասնիկներով։ Այսպիսով 850 թիվը անշուշտ մի քանի անգամ բազմապատկված է լինում։

Թեև նախապես բեյսիկը հնարված է եղել առևտրական նպատակով և անգլո-ամերիկյան առևտրական ընկերության գործակալների համար, բայց այնուհետև անցել է, իբրև միջազգային լեզու, անգլիական ու ամերիկյան գաղութները և բանում է արվեստական լեզվի ու բնական լեզվի միջին տեղը։ Ավելի հետո սկսել է տարածվել իբրև մանկավարժական հեշտ մեթոդ անգլերեն սովորելու համար, քան որում բեյսիկը զուտ անգլերեն է, ոչնչով չի տարբերվում բուն անգլերենից և հրապուրիչ է այն կողմով, որ հիմնված է միմիայն 850 բառի վրա։ Բեյսիկը սովորելուց հետո՝ արդեն հեշտությամբ անցնում են բուն անգլերենին։

Մեր նյութից դուրս է խոսել մանկավարժական մեթոդների, հետևաբար բեյսիկ լեզվի այս առավելության մասին, մենք այստեղ նկատի ունենք բեյսիկը իբր նորատեսակ կատ բնական և արվեստական լեզվի և իբր նոր ձևի «միջազգային» լեզու, բայց այդ պարագային անհրաժեշտ է արտասանության և ուղղագրության հարցը տարբեր հիմքերի վրա դնել։

Ծանոթություն.— Բեյսիկ լեզվով հետաքրքրվել են նաև մեր Միության մեջ. հիշենք այս առթիվ բեյսիկ լեզվի ծանոթացման համար գրված հոդվածները „Иностранный язык в средней школе“ ժուռնալի 1935 թ. № 1-ում։

Այս երկու տեսակ միջազգային լեզուներն էլ (բնական թե արվեստական) հավասարապես հոդավոր լեզուներ են։ Կան գիտուններ, որոնք հուսահատված այն բանից, թե երբևիցե որևէ կենդանի կամ արվեստական լեզու կկարողանա ընդհանուր միջազգային լեզու դառնալ, մտածում են գտնել մի ուրիշ միջոց, որ արդեն ամբողջ մարդկության սեփականությունը եղած լինի և ըստ այնմ կարողանա ծառայել իբրև գաղափարների հաղորդակցության միջոց բոլոր ազգերի համար։ Այդ միջոցը պետք է հոդավոր լեզուներից դուրս լինի, որովհետև որ լեզուն էլ որ առնենք կամ ինչպիսի արվեստական լեզու էլ որ շինենք, դարձյալ

նա ամբողջապես կամ մասամբ այս կամ այն ազգի մասնավոր լեզուն է լինելու։ Այդ միջոցը կարող է լինել գրավոր նշանները, այնպես որ ամեն մի մարդ որ ազգին և լեզվին էլ որ պատկանի, միայն տեսնելով ըմբռնի ու հասկանա։ Այսպիսի նշանները են, օրինակ, թվանշանները (1, 2, 3, 4, և այլն) և թվաբանական նշանները +, —, ×, :, √ և այլն։ Ով էլ որ տեսնի 1393 թվանշանը, կկարդա և կհասկանա իր լեզվով «հազար երեք հարյուր իննսուն երեք»։ Այս սկզբունքի համեմատ են կազմված գաղափարագիր կամ մեհենագիր այբուբենները. օրինակի համար բևեռագիրների մեջ գաղափարագիրը ներկայացնում էր «մարդ», գաղափարը, և ինչ ազգի մարդ որ տեսներ այն, ասորեստանցի, բաբելացի, հրյա կամ պարսիկ, իսկույն իր լեզվով կարդում ու հասկանում էր «մարդ»։ Նույն ձևով է կազմված նաև չինական գրությունը, որի յուրաքանչյուր նշանը արտահայտիչ է մի որոշ գաղափարի, առանց ունենալու որևէ կապակցություն առարկայի անվան հետ. այնպես որ Չինաստանի 500 միլիոն ժողովուրդը թեև խոսում է բազմաթիվ բարբառներով, սակայն բոլորն էլ միանում և ըմբռնում են իրար չինական գրության մեջ։

Լեզվական այս նոր գրությունը կոչվում է «հանրագրություն» (пазиграфия) իբր հակառակը «հանրախոսության», որ տեսանք վերը։ Հանրագրության իբր առաջին փորձ ծանոթ է ինձ այն աշխատությունը, որ հրատարակեց Մեմիյոն (J. de Maimieux) Փարիզում, 1797 թվականին, "Pasigraphie ou premiers éléments du nouvel art-science d'écrire et d'imprimer en une langue de maniére a' être lu et entendu dans toute autre langue sans tradutction". Սրանից հետո երկրորդ փորձն է անում Պաիկը (M. Paik), հրատարակելով „Pasigraphie mittels arabischer Zählzeichen" աշխատությունը (Semlin, 1859): Ավելի նոր է Sinibaldo de Mas, L'idéographie, Mémoire sur la possibilité et la facilité de former une écriture générale au moyen de laquelle tous les peuples puissent s'entendre mutuellement sans que les uns connaisse la langue des autres, 1863: Նմանօրինակ մի աշխատություն կատարված է նաև մեր մեջ ավելի նոր ժամանակներում։ Վենետիկի միաբաններից մեկը (Հ. Աթանաս Տիրոյան) հորինել է «հանրագրություն»[1] անունով

[1] Հ. Աթ. Տիրոյան, Հանրագրություն որ է համազգային կրթության նոր ոճ մը, Վենետիկ, 1907։

մի եղանակ, որով զանազան ազգի մարդիկ, առանց միմյանց կամ մի ընդհանուր լեզու իմանալու, կարող են բանակցել իրար հետ։

Հանրագրությունը հորինված է թվագրական դրությամբ.— բոլոր գոյականները վերածված են 30 խմբի և կարգով առացել են մի թվահամար, հետևյալ ձևով.

11—599 նյութական ու բանական գործեր.
601—699 առաքինություններ.
701—799 մոլորություններ.
801—899 հոգևոր և կրոնական.
901—999 օդային և երկնային.
1001—1099—հողային և երկրային.
1101—1199 ջրային և հեղուկներ.
1201—1399 մարդ և մարմնի մասեր.
1401—1499 ազգականություն.
1501—1599 ցամաքային կենդանիներ.
1601—1699 ջրային կենդանիներ և սողուններ.
1701—1799 թռչուններ.
1801—1999 բույսեր, ծառեր և թուփեր.
2001—2099 արմտիք, բանջարեղեն.
2101—2199 խոտեր և ծաղիկներ.
2201—2299 հանքեր, մետաղներ, ակնեղեններ.
2301—2399 գույն, ներկ, վոսկերիք, էլեկտրականություն.
2401—2499 բնական ձայներ.
2501—2599 ուտելիք և խմելիք.
2601—2699 շորեղեն և հագուստ.
2701—2799 կարասիք, զարդեր և խաղալիք.
2801—2999 մեքենաներ, գործիք, նվագարան.
3001—3099 հիվանդություններ, դեղեր.
3101—3199 գրական, գիտական գործեր.
3201—3399 քաղաք, բնակարան.
3401—3499 կողմ, դիրք, ձև, չափ.
3501—3599 առևտուր, հաշիվ, դրամներ.
3601—3799 արհեստներ, պաշտոն, տիտղոսներ.
3801—3899 ժամանակ.
3901—3999 զինվորական.

Թիվ 1—9 դերանուններ են. իսկ որևէ թիվ որ վերջանում է 0-ով, հոգնակի է։

Մյուս խոսքի մասերը կազմվում են զանազան նշաններ ավելացնելով այս թվերի վրա. ինչպես՝

, ցույց է տալիս ածական.

/ (շեղ գիծ) անձնականները վերածում է ցուցականի. ինչպես 1/ այս, 2/այդ, 3/այն.

// (երկու շեղ գիծ) կազմում է ստացական. ինչպես՝

1// իմ, 2// քո, 3// իր։

՝ և ՝ նշանակում են որոշյալ և անորոշ հոդեր. ինչպես՝ 1348 մարդ, ՝1348 մարդը, ՝1348 մի մարդ։

Հոլովներն ու նախադրությունները առանձին թվանշանով 1-ից մինչև 40 մի շեղ գծով կցվում են գոյականին. ինչպես 1819 ծառ (ուղ. կոչ.), 1819 /2 ծառի, 1819/3 ծառին, 1819/4 ծառով, 1819/5 ծառից, 1819/6 ծառը (հյց.), 1819/7 ծառի մեջ, 1819/8 ծառի մասին, 1819/9 ծառի վրա, 1819/10 ծառի շուրջը... 1819/40 մինչև ծառը և այլն, և այլն։

Բացասական կազմելու համար սկզբից դնում ենք 0, ինչպես՝ 1252 վտանգ, 01252 անվտանգ։

Բայերի նշաններն են. √ ներգործական, √- կրավորական, √‾ չեզոք, իսկ բայերի խոնարհման եղանակներն ու ժամանակները նշանակելու համար սույն նշանի ձախ կողմը դրվում են 1—14 թվերը, իսկ դեմքերը 1—6՝ անկյունի մեջ. դերբայները նշանակվում են շեշտերով. ինչպես՝

1 $\overset{1}{\vee}$ 175 սիրում եմ,	*1 $\overset{1}{\vee}\!\!\!

Մասնիկներն էլ ունեն 50-ից ավելի թվանշաններ, որոնք շեղ գծով միանում են բառին։

Ահա մի օրինակ այս ոճով գրության. «Ծառի վրա մի սոխակ կանգնած անուշիկ և անկասկած երգում էր».

$$1819/9\ \text{‘}1735\ \sqrt{\ }\ 421''\ 539.\ 10)\ 1\ 089)\ 2\ \sqrt[3]{\ }\ 2409:$$

Ամեն մի լեզվով հրատարակված պիտի լինեն բառերի ցուցիչ թվանշանները և հակառակը՝ թվանշանների նշանակությունը, որով ամեն մեկը առանց խոսակցի լեզուն իմանալու և առանց մի բառ արտասանելու, միայն թվանշանների արժեքը փնտրելով, պիտի բացատրվի նրա հետ։

Ինչպես տեսնում ենք, այս ամբողջ գրությունը չափազանց ծանրաբեռնված է, և նույնիսկ եթե կարելի լինի շատ ավելի պարզ մի գրության էլ վերածել, այնուամենայնիվ գործնական արժեք չունի։ Այս գրությամբ մարդիկ պետք է վերածվեին բանական համբերի։

Պետք է ավելացնենք, թե միջազգային արվեստական լեզվի մասին եղած վերաբերմունքը շատ է փոխված վերջին ժամանակներս։

Նույնիսկ ամենալուրջ լեզվաբանները, որոնք արվեստական լեզուների հարցը իրենց նյութից բոլորովին դուրս էին համարում, այժմ սկսել են զբաղվել նրանով։ Մեկի Les langues dans l'Europe nouvelle *աշխատությունը ուրիշ նպատակ չունի, եթե ոչ բազմաթիվ «նորակոչ» լեզուների քաոսի մեջ մի ելք գտնել, և այդ ելքը դնում է արվեստական լեզուն։ Ամերիկայի լեզվաբանական ընկերությունը առանձին զբաղմունքի առարկա է դարձրել միջազգային լեզուն, որի քննության և ուսումնասիրության համար կազմել է* International Auxiliary language association *«Միջազգային լեզվաբանական օժանդակ միություն»։ Այս միությունը արդեն ունի իր հրատարակություններըւ Առայժմ քննում են, թե այսինչ կամ այնինչ լեզվական բացատրությունը ինչ ձևերով է արտահայտում դանազան լեզուների մեջ։ 1931 թ. Ժնևում գումարված լեզվաբանական կոնգրեսում օրակարգի նյութ դարձավ միջազգային լեզվի հարցը, և այս առթիվ կազմվեց* Iala *անունով մի ընկերություն, որին հանձնվեց աշխատանքի շարունակությունը։ Բայց այս բոլորից անկարելի է սպասել գործնական արդյունք, քանի որ նրանք կամ մի քանի գիտնականների գլխում հղացած մտքեր են, կամ քաղաքական որոշ շրջանների կողմից թելադրվող ցանկություններ։*

Ահա այն բոլոր գլխավոր կետերը, որոնք վերաբերում են լեզվի և հասարակության փոխադարձ հարաբերության։ Եվ այս կապերը ի նկատի ունենալով է, որ այժմ մի խումբ լեզվաբաններ, որոնք կրում են նոր-լեզվաբան (неолингвист) անունը, լեզվաբանությունը համարելով հասարակական գիտություն, ուզում են լեզվի բոլոր երևույթները կապել ուղղակի հասարակական երևույթների հետ և նրանցով էլ բացատրել։ Իհարկե, սա մի ուրիշ ծայրահեղություն է, ինչպես ծայրահեղություն է լեզուն հասարակական կյանքից անջատելը։ Ո՛չ քաղաքական կազմակերպությունները, ո՛չ աշխարհագրական բաժանումները, և ո՛չ իսկ հասարակական մեծ ռևոլյուցիաները չեն կարող լեզվի մեջ հիմնական փոփոխություններ մտցնել։ Հին հույները կազմել էին իրարից անկախ զանազան պետություններ և թեև ունեին զանազան բարբառներ, բայց հունարենը մի ընդհանուր լեզու էր։ Դրան հակառակ՝ Շվեյցարիայի ազգաբնակությունը թեև կազմում է մի միություն, բայց խոսում է երեք լեզվով (ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն), և այս վիճակը շատ վաղուց է, որ տիրում է։ Ֆրանսերենը ոչ միայն Ֆրանսիայի լեզուն է, այլև՝ Բելգիայի, Շվեյցարիայի և մասամբ Կանադայի։

Իտալիան 13-րդ դարից մինչև 20-րդ դարը քաղաքական մեծամեծ փոփոխությունների է ենթարկվել, բայց իտալերենը քիչ է փոփոխվել. ընդհակառակը, Ֆրանսիան նույն ժամանակաշրջանում ավելի քիչ քաղաքական փոփոխություններ է կրել, բայց ֆրանսերենը ավելի է փոփոխվել։ Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում մանրակրկիտ քննություններ են կատարել կրոնական, տների կառուցման տիպի և հասարակական զանազան սովորությունների վերաբերյալ, տեսնելու համար, թե դրանց սահմանագիծը ինչ չափով է կապակցվում լեզուների և բարբառների սահմանագծի հետ։ Արդյունքը գրեթե ոչինչ է եղել։

Կա մի հասարակական հաստատություն, ուր լեզվի փոփոխությունը ամենից ավելի զգալի պիտի լիներ, քան իր կազմակերպության. դա է ընտանիքը, ուր երեխան ստանում է իր լեզուն։ Արդ՝ ընտանիքը, միակին թե բազմակին, մայրական թե հայրական, չի մտցնում լեզվի մեջ սպասված խոշոր փոփոխությունները, և նույնիսկ այնպիսի ցեղերի մեջ, ուր մարդիկ ու կանայք խորապես բաժանված են կրոնական, քաղաքական և տնտեսական տեսակետներով, լեզուն չի ճանաչում քերականական սեռը։

Վերջապես, մեր աչքի առաջ ունենք մի մեծ և թարմ օրինակ, որ է Հոկտեմբերյան ռևոլյուցիան։

Այդ ռևոլյուցիան ոչնչացրեց բուրժուական հասարակարգը, բարձրացրեց բանվոր դասակարգի իրավունքները, ցրեց կրոնական համոզումները, բայց ոչ միայն չմտցրեց որևէ փոփոխություն լեզվի քերականական հորինվածության մեջ, այլև նույնիսկ նոր բառերով չփոխեց воскресенне *«կիրակի» (հարության Քրիստոսի),* спасибо *«շնորհակալ եմ» («աստված քեզ փրկի») և նման բառեր, որոնք քրիստոնեական կրոնի արդյունք էին։*

Լեզվի մեջ նրա արդյունքը եղավ զուտ կալվածատիրական ու բուրժուական հասարակարգի հետ կապված մի խումբ բառերի ջնջումը (ինչպես՝ барин *«իշխան, աղնվական, ազա»,* господин *«պարոն» և այլն, և մի խումբ նոր բառերի ստեղծումը (ինչպես՝* колхоз, совхоз *և այլն)։*

Գոյությունից դրկված բանները առանց այն էլ իրենց անունը պիտի կորցնեին և նոր իրերը նոր անուն պիտի ստանային։ Վերջապես որոշ քանակով բառեր էլ փոխեցին իրենց իմաստը։ Այս բոլորից հետևում է, որ լեզուների էվոլյուցիան հասարակական ռևոլյուցիաների մի դրսևորումը չէ. նրա կրած ձևափոխությունները զուգահեռ չեն հասարակության կերպարանափոխությունների հետ, հասարակության կրած բոլոր կերպարանափոխությունները չեն ցոլանում անմիջապես և անհրաժեշտորեն նաև լեզվի քերականության, նրա կառուցվածքի մեջ։ Լեզուն բոլոր հասարակական երևույթների մեջ ամենից պահպանողականներից մեկն է, և լեզվաբանությունը ինչ կապերով էլ որ կապվի հասարակության պատմության հետ՝ դարձյալ նա իր անկախ դիրքը պետք է որ պահի[1]։

---

[1] Lalo, Science du langage, Paris, 1925. էջ 224—226։

ԳԼՈՒԽ Է

ԼԵԶՎԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

Լեզուն, որ մարդկային խորհրդածության բնական արդյունքը կամ տրամաբանական եղրակացությունը չէ, այլ հասարակական հաղորդակցման միջոցը, որ ընդհանուր է հասարակության բոլոր անդամների համար, բնականաբար չի կարելի ինքնաբերաբար կամ անհատական ջանքերի միջոցով ձեռք բերել։ Սրա ամենապարզ ապացույցն այն է, որ, նույնիսկ պատմական ու լեզվաբանական մեր այնքան մեծ պաշարով հանդերձ, այսօր չենք կարողանում մի որևէ անծանոթ լեզվի հիշատակարան կամ արձանագրություն վերլուծել, ուր միայն թե բոլորովին ոչնչից վերականգնել։ Նույնիսկ, երբ դեպքից, շրջապատից կամ զանազան հանգամանքներից վստահ ենք լինում, թե այսինչ անծանոթ բառը պետք է այսինչ նշանակությունը ունենա, հաճախ մեր վստահ կարծիքը խաբուսիկ է դուրս գալիս։ Օրինակ՝ Ոսկեբերանի այս հատվածի մեջ. «Եվ կամ խոստանայր ոք ասել թէ որչափ որոթք են ջրոյ ի ծովու, և միւս զայն չգիտել, ոչ ապաքէն անգիտութիւնն խմաստնագոյն գտանէր» (Ոսկ. Գող. Ա. 874), որոթ անծանոթ բառը, շրջապատից դատելով, անշուշտ, պիտի նշանակեր «ալիք» կամ «կաթիլ».— «Եթե մեկը ասեր, թե գիտեմ ծովի մեջ քանի կաթիլ ջուր կա, իսկ մյուսը թե՝ չգիտեմ, այս չգիտենալը գիտենալուց ավելի իմաստուն չէ»։ — Սակայն հույն բնագրի համեմատությունը[1] ցույց տվեց, որ որոթ նշանակում է «բաժակ»։

Լեզուն չկա, եթե այդ լեզվով խոսողը չկա։ Լեզուն կարող է շարունակել իր գոյությունը, ուրիշ խոսքով կարելի է լեզուն ատանալ մի մխիթարյան փոխանցման միջոցով, նրանով խոսող հասարակության մեջ, և այն էլ բերանացի միջոցով։ Լեզուն մի ավանդ է, որ սերունդները փոխանցում են միմյանց դարուց

[1] Վարդանյան, ՀՍ, 1914, 639։

դար, առանց ընդհատման։ Հենց որ որևիցե տեղ ընդհատում առաջացավ, լեզուն ջնջվում է անդառնալի կերպով, և այլևս մարդկային որևէ ուժ չի կարող նույնը նորից վերականգնացնել։

Այսպես կորան անհետ բյուքթանացիների, պափլագոնցիների, մարերի և այլ բազմաթիվ հին ժողովուրդների լեզուները։

Պետք չէ այս օրինքին հակառակ համարել այն երևույթը, որ, օրինակ, Բուլղարիայի հայերը Թյուրքական տիրապետության տակ հայերենը խոսատ կորցնելուց և բոլորովին Թյուրքախոս դառնալուց հետո, 1890-ական թվերի դաղթի ժամանակ նորից հայախոս դարձան։ Երևույթը նույնը չէ, որովհետև նորից սովորված լեզուն նախկին բուլղարահայ բարբառը չէ, և ոչ էլ մի ուրիշ մեռած լեզու։

Լեզվի փոխանցումը սովորաբար կատարվում է ծնողներից մանուկներին և սակավ դեպքում միայն չափահասից՝ չափահասին, երբ այս վերջինը մի երկար անհատ է, որ մի ուրիշ միջավայրից փոխադրվել է նոր օտար միջավայր։ Բայց այդ փոխանցումը կատարվում է ոչ որևիցե ուսուցողական մեթոդով, և ոչ էլ որևէ հրահանգով՝ մեծերի կողմից։ Ծնողները մանուկներին ոչ արտասանության դասեր են տալիս, ոչ քերականական կանոններ են սովորեցնում, որովհետև հենց իրենք էլ զուրկ են սովորաբար այդ գիտություններից։ Լեզուն ավելի հին է, քան քերականական գիտությունը։ Այն մի քանի տարվա ընթացքում, որ լեզվի փոխանցման շրջանն է կազմում, մանուկը պիտի յուրացնի իր նախորդների կատարած հազարավոր տարրների աշխատանքը, պիտի յուրացնի հոգեկան, լսողական և շարժական զուգորդությունների սիստեմները, պիտի սովորի բառերը և քերականությունը։ Այդ տարիների ընթացքում շարունակ մանուկը լսում է իր շրջապատին, աշխատում է կապկել, անթիվ ու անհամար փորձեր է անում շրթունքներով, լեզվով, քիմքի վրա կամ կոկորդի մեջ և վերջապես հասնում է մի արդյունքի, որ համարվում է բավարար։

Մանկան կողմից լեզվի յուրացման մեջ մի զարմանալի երևույթ կա։

Սովորական է տեսնել կյանքում չափահաս մարդիկ, որոնք տարիներ շարունակ աշխատանք են թափում և, հակառակ ուսուցիչների, գրքերի, բառարանի և քերականության, չեն կարողանում մի օրևէ օտար լեզու սովորել։ Ի՞նչ հրաշալի ուժ ունի ու-

բեմն մանկիկը, որ առանց կանոնի, իր այդ տևեղձ մտքով, դեռ շրջապատի առարկաներն ու անձերը դիտելու, որոնելու և նոր ճանաչելու ու դաղափարներն ըմբռնելու անհրաժեշտության շնորհիվ, այնքան կարճ ժամանակում (ընդամենը երեք տարվա մեջ) լեզու է սովորում։ Ամեն մի լեզու ունի և կունենա որոշ դժվարություններ. մեր գրաբարը անհաղթահարելի դժվարություն է ներկայացնում իմանալու բառի հոլովումը. ռուսերենի դժվարություններն են շեշտը, բաղաձայնների կոշտն ու փափուկը, բայերի կերպը. ասիխաղերենը մի քանի բաղաձայններ խճողում է մի ձայնավորի վրա. զուլուսը գիտե հնչել զանազան ճիչեր, այն է. լեզուն կոացնելով կպցնում է դեմքին և շաչեցնում. արաբերենում ամեն մի գոյականի հոգնակին առանձին ձև ունի և նրանց կազմության համար կանոն չկա։ Մեծահասակները, երբ սովորում են այսպիսի լեզուներ, անշուշտ մեծ դժվարություն են կրում. նույնիսկ պարակերենը, որ իր պարզությամբ և հեշտությամբ կարող է պարծենալ, ունի բազմաթիվ անկանոն բայեր։ Բայց մանուկը, որ իր մորից սովորում է այսպիսի որևէ դժվար մի լեզու, նույնիսկ հայտնի չէ, թե կրճում է, իրոք, այնպիսի դժվարություն։ Նա սովորում է բոլորովին բնական ճանապարհով և նրա մատաղ ուղեղում այնպես են տպավորվում բառերը, հնչյունները և ձևերը, որ նա առանց մի կանոն իմանալու, կանոնավոր խոսում է մեծերի լեզուն։ Նույնիսկ զարմանալի է տեսնել, թե անապատի բեդևինը (արաբը), անկանոն հոգնակիների կողքին, ունենալով նաև կանոնավոր հոգնակի, թողնում է այս կանոնավորը և անկանոն ձևն է գործածում միշտ։

Ահա այսքան ուժեղ է մայրենի լեզվի տպավորությունը մանկական ուղեղի վրա. տպավորություն, որ մի անգամ, մանուկ հասակում հաստատվելուց հետո մեռնում է մինչև մահը և մահվանից հետո էլ շարունակվում է շատ սերունդներ և դարեր։ Եվ այն էլ՝ այնպիսի հավատարմությամբ, որ չի թույլ տալիս որևէ շեղում բառերի հնչման և կանոնների գործադրության մեջ։ Ինքնին ոչ մի նշանակություն չունի, եթե սեղան ասելու տեղ մենք սուղան ասեինք։ Բայց ոչ ոք չի համարձակվում այդպիսի մի փոփոխություն մտցնելու դարերից ավանդված իր մայրենի լեզվի մեջ։ Լեզուն այստեղ նման է մի երգի. երգում ենք Մի-ծե-ռնակ (sol, do, mi). կարելի էր նաև նույնը երգել mi, do, sol կամ մի ուրիշ ձևով, որ դուցե երաժշտական տեսակե-

ից ավելի գնահատելի էլ լինի. բայց այդ չի լինում. ավանդական սովորությունը այնպես ուժեղ է մեր մեջ, որ չի թույլ տալիս այդպիսի ձեափոխություն։ Այսպես է նաև լեզուն։

Անշուշտ պետք է ընդունել, թե մանկան ստացական կարողությունը այդ 3 տարիների ընթացքում ավելի ուժեղ է, քան ետագայում իր կյանքում։ 3-րդ տարին մանկան համար լեզու սովորելու ամենազորեղ շրջանն է. այդ շրջանում նրա այդ ընդունակությունը գերազանց է, որ, սակայն, շատ կարճ է տևում. 4-ից 5-րդ տարում արդեն այդ կարողությունը բավական պակասած է լինում։ Բայց դրա հետ միասին ունենք այլ հանգամանքներ էլ, որոնք գործակցում են նրա ստացական կարողությանը։

Մանկավարժությունը և հոգեբանությունը որոշում են երեք միջոց, որով մանուկը կարողանում է ձեռք բերել այն բոլոր ունակությունները, որ անհրաժեշտ են իրեն, իր մարդկային գոյության համար. դրանք են՝ ժառանգականություն, անձնական փորձ և ճմանողություն[1]։ Ժառանգականությունը բավական չէ մեն մենակ, և խաղը գալիս է օգնության՝ ոչ միայն ուժեղացնելու այն գործերը, որ նա ուրվագծել է մեր ներվային կենտրոններում, այլև բոլորովին նորերն ստեղծելու։ Անձնական փորձն էլ բավական չէ, որովհետև այդ դեպքում մանկությունը պիտի տևեր մի անագին ժամանակ, և մանուկը պիտի աշխատեր իր անձնական փորձերով գտնել այն բոլորը, որ իր նախորդ սերունդները գտել են։ Նմանողությունն է, որ ազատում է մեզ այս հավիտենական վերսկսումներից և հնարավորություն է տալիս մեզ օգտվելու մեր նախորդների փորձերից և դարավոր աշխատանքից։ Նմանողությունը գործադրություն է այն բնական օրենքի, որ կոչվում է ճվազագույն ճիգ։ Ամբողջ կրթությունը ուրիշ բան չէ, եթե ոչ նմանողություն, սկսած ամենաւիրբ առաւիճանից, այն է՝ ուտել, խմել, առնել, նետել, քայլել, խաղալ, մինչև ավելի բարձրը՝ խոսել, երգել, կարդալ, գրել, դատել, և դեռ ավելի բարձրը՝ գեղարվեստի, գրականության և գիտության պանդան ձևերը։ Նմանողության դերը այնքան մեծ է, որ բուժուական սոցիոլոգներից մեկը՝ Տարդը (Tarde) մինչև անգամ հասարակության ամբողջ գործունեությունը համարում է նմա-

[1] Claparède, Psychologie de l'enfant et pédagogie expérimentale, Genève, 1911, էջ 193—202 և 247—251; Alangry, Psychologie et Education, հմ. բ., 2-րդ տպ., էջ 85—100, 148—154, 253—259։

նողություն և մխիթարական նմանողության գործիք, ժխտելով անձնական հնարագիտությունը և առաջադիմությունը, ինչ որ, անշուշտ, ընդունելի չէ։

Ուրեմն նմանողությունը մանկան զարգացման համար հիմնական կարևորություն ունեցող մի միջոց է։

Լավ հասկանալու համար նմանողության դերը՝ քննենք, թե ինչ է այդ գործողության հոգեբանախոսական պրոցեսը։

Նմանել նշանակում է վերարտադրել ինքնին այն, ինչ որ տեսնում կամ լսում ենք ուրիշից։ Ուստի նմանողության համար անհրաժեշտ է, որ տեսողական կամ լսողական մի ըմբռնողություն զարթեցնի այն անդամների շարժումը, որոնք ընդունակ են վերարտադրելու այն, — ձայնի համար՝ բնականաբար խոչակի շարժումները։ Եվ որպեսզի այդ դրդումը լինի, պետք է, որ լինի մի զուգորդություն այդ ըմբռնողության և շարժիչ մատապատկերների միջև։ Ժառանգականությունը չի տալիս մեզ այդ զգայաշարժիչ զուգորդությունների մեծագույն մասը, որովհետև նրանց թիվը անհուն է. պետք է, որ մարդ իրանից ստեղծի։ Եվ ահա այդ կապը ստեղծելու միջոցն է նմանողությունը։ Մանուկը իր տեսած շարժումները և իր լսած ձայները աշխատում է կրկնել ու կրկնել, մինչև որ ճիշտ օրինակի հասնի։ Մատապատկերները, առհասարակ, մեր մեջ ձգտում ունեն վերածվելու համապատասխան շարժման. երբ մեկին հարցնենք, թե ինչ բան է ճառանը, պիտի տեսնենք, որ մարդը բացատրության հետ մի համապատասխան շարժում էլ է անելու։ Այսպես և մանկան մեջ ամեն պատկեր առաջ է բերում նմանվելու մի շարժում, իսկ այդ շարժումը կրկնվում է, որովհետև մանկան մոտ կա անհրաժեշտություն՝ հասնելու համապատասխան օրինակին։

Նմանողությունը իր զարգացման ընթացքի մեջ անցնում է 3 աստիճանով. նախ՝ բոլորովին ավտոմատ է, այսինքն բնազդական. մանուկը տեսնում է մեկին ծիծաղելիս, ինքն էլ է ծիծաղում, տեսնում է լաց լինելիս, ինքն էլ է լաց լինում.— երկրորդ աստիճանը գիտակից է, չլինելով կամավոր. մոմը փչել, ձեռքերը շփել և այլն այս կարգին են պատկանում.— երրորդ աստիճանը նպատակավոր կամ կամավոր է, ինչպես՝ մենակ ուտելը կամ խմելը և այլն։ Մանուկը շարունակ կրկնում է իր տեսածն ու լսածը։

Սակայն մանուկը չի օրինակում ամեն բան։ Նախ նմանողության կարողությունը սահմանափակված է մարդակազմա-

կան հորինվածությամբ, որ հնարավորություն է տրամադրում մեզ վերարտադրել միայն այս կամ այն ձայնը. եթե կտավաքաղ թռչունի ձագուկները մեծացնենք արտույտի ձագուկների հետ՝ կսովորեն արտույտի երգը. բայց եթե շան հետ մեծացնենք՝ հաչոց չեն սովորի։

Սակայն նույնիսկ այն օրինակների մեջ, որ մանուկը կարող էր օրինակել, այնուամենայնիվ նա ընտրություն է անում։ Ինչից է դրդված այս ընտրությունը։ Դա մեր զարգացման պահանջներից մեկն է. ուստի և փոխոխվում է համաձայն տարիքի և բույսի պահանջների։ Մանուկը օրինակում է, ինչ որ համապատասխանում է իր զարգացման աստիճանին։

Բայց մանուկը կրկնում է նաև այնպիսի բաներ, որոնք նոր են մարդկային կյանքում. ինչպես՝ ծխել, լրագիր կարդալ, ավտոմոբիլի դեկը շուռ տալ և այլն. այս բոլորը ժառանգականությամբ չեն հասել իրեն։ Սրա պատճառը պետք է փնտրել այն հեղինակավորության մեջ, որ ունեն մեծերը մանուկի աչքում։ Մանուկի զարգացման անհրաժեշտությունը պահանջում է շարունակ ջանալ օրինակել նրանց, որոնք իր մակարդակից բարձր են երևում և այդ է, որ առաջ է բերում ընդօրինակության մեջ ընտրություն։ Նա օրինակում է ավելի այն, որ իրեն շահագրգռում է։ Այս կարգի նմանողությունները պատկանում են նմանողության երրորդ աստիճանին, այն է՝ նպատակավոր կամ կամավոր նմանողության։

Մանկան մեջ նմանողությունը դառնում է նպատակ և միջոց միաժամանակ.— երբ ավարտական կուրսի ուսանողները փորձնական դասեր են տալիս տարրական դպրոցում, նրանք թե ուսուցիչ են, և թե աշակերտ, որովհետև սովորում են սովորեցնելով։ Այսպես և՝ մանուկը։

Նմանությամբ ձեռք բերված ամենադյուրավար կարողությունների շարքում պետք է դնել և լեզուն։

Լեզվական կարողությունը մանկան մեջ բնականից է։ Բնականից նա գիտե լալ, ճչալ, հևկևալ, փռշտալ, հազալ և այլն։ Բնությունը օժտել է նրան թոքերով, շնչառությամբ և մի կոկորդով, որ ժառանգականորեն ընդունակ է ձայն արտադրելու։ Նա ունի նաև նյարդային համակարգ և լսողական օրգաններ՝ լսելու համար։ Երբ թոքերից շունչը բարձրանում է, խոչակից անցնելով՝ բաց բերանից դուրս է գալիս, բնականաբար արտադրվում են ա, հա, ահ ձայները, երբ շրթունքները որոշ չափով

սեղմված են, այդ ձայնը դառնում է ու. երբ բերանը մոր ստինքով է զբաղված, և շունչը ստիպված է քթից դուրս գալ, արտադրվում է և ձայնը։ Այս ձայները ինքնին վերցրած ոչ մի արժեք չունեն, որովհետև զուրկ են իմաստից. ուրիշ խոսքով՝ բառ չեն։ Նրանց ընկերանում է, սակայն, զգացմունքը՝ ուրախ կամ տխուր, քաղցած կամ կուշտ, հանգիստ կամ անհանգիստ, գոհունակ կամ մի տեղը ցավելիս. և այս զգացմունքների համեմատ այդ ձայները ստանում են որոշ ելևէջ։ Ելևէջը այս պարագային նույն ձայներին տալիս է մի իմաստ, և այսպիսով այդ աննշանակ ձայները դառնում են բառեր։ Մայրերն ու դայակները վարժվում են այդ ձայների համեմատ հասկանալ մանկան միտքը։

Ձայնալարերը՝ լինելով հարաշարժ, իրենց կծկումներով ու լայնացումներով տալիս են ձայների զանազան նոտաները և 6-րդ կամ 7-րդ ամսին արդեն մանուկը կարողանում է արտադրել նոտաների ամբողջ ձայները։

Շուտով բնականը վերածվում է գիտակցականի։ Երբ մանկիկը քաղցած է, կաթ ուտել է ուզում, բնականաբար կատարում է այն շարժումները, որոնք կաթ ուտելիս պիտի աներ. այսինքն՝ հավաքում, կծկում է շրթունքները, լեզուն խփում է քիմքին, և դարձյալ իր ցավագին կամ խնդրական նոտաներն է արտասանում, բերանը բաց անում կամ փակում։ Այս դրության մեջ դուրս են գալիս մ, մա, ամ, ամմա, բա, աբ և այլ ձայները։ Մայրը կամ դայակը զգալով, որ մանկիկը քաղցած է, կաթ է տալիս։ Մանկիկը դոհ է մնում։ Երևույթը շարունակ կրկնվելով՝ մանկիկը հասկանում է, որ մա, ամմա և այլն արտասանելիս կաթ է ստանում։ Ահա այստեղից սկսում է բնականից առաջացած ձայնին գիտակցաբար տալ որոշ նշանակություն. մա, մամա դառնում է ՙուտել, ուտելիք՚։ Ոմանք դեռ ավելի առաջ են տանում այս բացատրությունը և կարծում են, թե մամա, մայր գաղափարն էլ առաջանում է նրանից, որ, իբր թե, մանուկը կաթ ուտելու գաղափարի հետ կապում է կաթ տվող անձի՝ մոր, գաղափարը։ Սա, իհարկե, գիտականորեն դժվար է ապացուցել։

Ուրեմն լեզվի կարողությունը տրված է ժառանգականությամբ, այսինքն՝ այն, որ մանուկը ունի խոսելու ընդունակությամբ օժտված օրգան։ Անասուններն էլ, իրըև օրգան, ունեն, լեզու, բայց չգիտեն խոսել, որովհետև խոսողության կարողու-

թյունը չեն ժառանգել։ Դեռ քննելի հարց է, թե ժառանգականությունը ինչ չափով է նպաստում մանուկին՝ լեզու սովորելու գործում։ Այս հարցը կարելի էր ուսումնասիրել զանազան փորձերով։

Գիտենք, որ լեզուն ցեղի հետ կապված չէ. և ամեն մի մանուկ՝ ինչ ցեղի էլ որ պատկանի, ինչ ցեղի մեջ էլ որ մեծանա, սպատրեն կխոսի նրա լեզուն։ Շատ անգամ ծնողները պահում են օտարազգի դայակ և երևման հեշտությամբ և բնական ձևով սովորում է այն օտար լեզուն, որով խոսում է իր հետ դայակը։ Բայց քննելի կետ է, թե արդյոք մանուկը ավելի հեշտությամբ չի՞ սովորում իր մայրենի լեզուն, որի համար ժառանգական տվյալներ ունի, քան թե մի օտար լեզու, որի համար այդպիսի ժառանգական տվյալներ չկան։ Այսպիսի միտք է պաշտպանում օր. բժ. Առուտմյանցը («Մայրենի լեզուն բնագիտական տեսակետից», «Մշակ», 1882, № 171), որ գտնում է, թե ժառանգականությունը ուղեղի վրա մեծ ազդեցություն ունի, և նույնիսկ օտարախոս մի մանուկ ավելի հեշտությամբ է սովորում իր մայրենի լեզուն, քան մի դուստ օտար մանուկ։ Օր. ոոստովցի մի հայ երեխա, որ հայերեն բնավ չգիտե և ոոստովցի մի ռուս երեխա, միանման ընդունակություն ունենալով հանդերձ, եթե բերենք երևան և հայերեն սովորեցնենք, առաջինը շնորհիվ իր ժառանգականության ավելի շուտ պիտի սովորեր, քան երկրորդը։ Հավանական է թվում, բայց ապացույց չկա։ Նույնիսկ որևէ օտար լեզու իբրև մայրենի լեզու սովորելիս արժեք ունի՞ այն հանգամանքը, որ այդ լեզուն պատկանում է ծնողների խոսած լեզվի ընտանիքին և կամ բոլորովին մի այլ տիպի լեզու է։ Գուցե բոլոր դեպքերում էլ ուսուցումը միևնույն արագությամբ է գնում։ Դարձյալ. արժեք ունի՞ այն հանգամանքը, որ մանուկը երկլեզվյան կամ բազմալեզվյան ժողովրդի զավակն է, և կամ թե նրա ծնողները անհատապես (հայրը կամ մայրը առանձին և կամ երկուսն էլ) գիտեին խոսել զանազան լեզուներով։ Այս փորձերը կատարելով բազմաթիվ մանուկների վրա օտար լեզուների ուսման գործում, կարելի պիտի լիներ գտնել ժառանգականության ուժը։ Մինչև այժմ եղած այդ կարգի փորձերը դեռ մի դրական արդյունք չեն ունեցել։ Սակայն այդպիսի փորձեր, նախ՝ շատ սակավաթիվ, երկրորդ՝ շատ միակողմանի կամ պատահական են եղել։ Բայց ինչքան էլ մեծ լինի այդ ուժը, ժառանգականությունը մենակ բավական չէր լի-

դու ձեռք բերելու, որովհետև գիտենք, որ ոչ մի մանուկ մենակ ինքնաբուխ չի կարող լինքնին լեզու սովորել։ Դա կնմաներ մի երեխայի, որի ձեռքը՝ տված է մի շեփոր. մանուկը չի կարող փչել և ձայն հանել շեփորից։ Պետք է, ուրեմն, անձնական փորձը. մանուկը շեփորը դարձնում է այս ու այն կողմ և վերջապես պատահմամբ փչվում է. մանուկը լսում է ձայնը, ուշադրություն դարձնում և նույնը կրկնում։ Այսպես և՝ իր խոսողական օրգանների համար։ Մանուկը փորձեր է անում բերանով ու լեզվով, իր արտաբերած ձայնը լսում է նախ ինքը, այնուհետև նա կըրկնում է և վերջապես նույնը սովորում։

Բայց անձնական փորձն էլ շատ երկար է. մանուկը ինչքան երկար փորձեր պետք է աներ, մինչև որ պատահաբար գտներ ու սովորեր շեփոր փչելը։ Որքան պիտի հնշտանա գործը, եթե մեկը շեփորը ձեռքն առնե և ցույց տա, թե ինչպես պետք է փչել։ Ահա այստեղ սկսվում է ևմանողությունը։

Ոմանք կարծում են, թե լեզվի նմանողությունը սկսվում է տեսողականից, այսինքն՝ մանուկը դիտում է աչքով, թե մեծերն ինչպես են արտասանում իրենց արտաբերած ձայները, և որովհետև այդ ձայների մեջ ամենից ավելի հեշտ տեսանելին մ կամ բ ձայնն է, որ արտաբերվում է շրթունքներով, ուստի մանուկն էլ սովորում է նախ այդ ձայները և ոչ թե կ, լ և այլն, որոնք բերանի ներսում կազմված ձայներ լինելով՝ դժվար են տեսնվում։ Բայց այս ենթադրությունը ճիշտ չէ։ Եթե լեզվի ուսումը մանկան մոտ սկսվեր տեսողությամբ և ոչ թե լսողությամբ, նույնը ավելի մեծ չափերով պիտի դտնեինք նաև մեծերի մոտ. բայց մենք գիտենք, որ ոչ մի մարդ, որն ուզում է սովորել մի օտար լեզու, բացի լեզվաբանական կրթություն ստացածներից, ամենևին չի գործադրում աչքը՝ նկատելու համար, թե բերանը ինչ շարժուձևեր է անում այսինչ անծանոթ ձայնը արտաբերելու համար, այլ միայն սրում է իր լսողությունը, մոտ է բերում ականջը։

Եթե մանուկը աչքերով սկսած լիներ դիտել, հապա ինչպես պիտի տեսներ նույնիսկ բ և պ ձայների զանազանությունը, որ կոկորդի թրթռումների մեջ է կայանում, որոնք մինչև իսկ մեծերի համար էլ անտեսանելի են և ըմբռնելի են դառնում միայն լեզվաբանական քննությունների միջոցով։ Ավելին կա. կույր ծնված երեխան, որ շրթունքների շարժումները դիտելու կարողությունից զուրկ է, չպիտի կարողանար սովորել լեզուն

այնպես, ինչպես մյուսներն են սովորում։ Այս նկատողություններից երևում է, որ մանկան մոտ էլ ինչպես մեծերի մոտ, նմանողությունը սկսում է ոչ թե տեսողության միջոցով, այլ միայն լսողության։

Մանկան առաջին շրջաններում անշուշտ դրսի ձայները մեծ ազդեցություն ունեն. նա աշխատում է նմանվել նրանց, թութակի պես կրկնում է լսածը և ոչ միայն սովորում է ձայները արտաբերել, այլև այդ ձայներին իմաստներ է տալիս։ Այսպես՝ շան համար ճամ-ճա՛վ, կատվի համար միամ և այլն. Ավելի հետո ընդհանրացման օրենքով այդ բնաձայն բառերը փրկենց իմաստը տարածում են ավելի հեռու՝ զանազան առարկաների և գաղափարների վրա, որոնք քաոս երևույթին կապ չունեին նույն նախագաղափարի հետ։ Ընդհանրացման մի հետաքրքրական օրինակ տալիս է Դարվինը։ Մի երեխա բադը ձայնի նմանությամբ կոչում էր couac. այնուհետև գաղափարների զուգորդությամբ ջուրն էլ կոչեց couac. նմանության և ընդհանրացման օրենքով այնուհետև մի կողմից ամեն հեղուկ և մյուս կողմից ամեն թռչուն կամ մի քիչ մեծ կենդանի նույն անունով։ Մի անգամ երեխան տեսավ մի դրամ, որի վրա նկարված էր մի արծիվ. այդ օրվանից բոլոր դրամները սկսեցին կոչվել couac։ Այսպես՝ մի ինուն ձայնը, որ նախապես գրադ էր և ներկայացնում էր առարկայի բնաձայն անունը, հետզհետե ընդարձակվելով, նշանակեց այնպիսի բաներ, որոնք բնավ կապ չունեին նրա հետ, ինչպես՝ ճաճճ, գինի, դրամ։ Մանուկը կարող էր դեռ շարունակել իր գործունեությունը, մանավանդ որ շրջապատող էլ, որ լսում է նրանից հաճույքով, աշխատում է գուշակել և սովորել մանկան այս ճոխությունը և շատ անգամ էլ հետը նույն բառերով է խոսում։ Բայց մինչև ուր պիտի գնար այդ։ Շուտով մանուկը նկատում է, որ շրջապատը ուրիշ տեսակ է խոսում. նա սկսում է անհրաժեշտաբար գործադրել բուն նմանողությունը և աշխատում է սովորել այդ լեզուն։ Մանկան այն շրջանին, երբ հասկանում է մեր լեզուն, բայց չի կարող խոսել, և այն շրջանի միջև, երբ արդեն սկսում է խոսել, կա անշուշտ մի նշանավոր անջրպետ։ Ոչ ոք չի ուսումնասիրել այդ երկու շրջանների անջրպետը, և մենք չգիտենք, թե մանուկը ինչ մտավոր և հոգեկան ապրումներ է ունենում այդ միջոցին և ինչ անցումներով մեկից անցնում է մյուսին։ Նախ՝ նա սովորում է հասկանալ այն, ինչ որ ուրիշներն են ասում, բայց դեռ երկար ժամանակ չի կարող խոսել.

հաճախ դեռ անխոս երեխային հարց են տալիս. «Ձուր է հայրիկը, մայրիկը, քիթիկդ ուր է, ականջդ....» և նա աչքերով կամ ձեռքերով ցույց է տալիս. մանկիկի այս դրությունը ճիշտ նման է օտար լեզու սովորող աշակերտին, որ կարող է թարգմանել, բայց չի կարող շարադրել կամ խոսել։ Այնուհետև սկսում է խոսել։

Այս նմանողությունն էլ սկզբնական շրջանում չի կարող լինել կատարյալ, որովհետև մանուկը բոլոր ձայները արտասանելու ընդունակ չէ դեռ։ Եվ այն ձայները, որ արտասանում է, այնպես անորոշ են, որ իր շրջապատի մարդիկ միայն, որոնք վարժվել են նրան, հասկանում են։ Նա շատ սխալներ է անում, թե՛ արտասանության, թե՛ բառերի իմաստի, և թե՛ քերականության կողմից։ Իր բառարանն էլ չափազանց համառոտ է. իր բառերն են պապա, մամա, կաթ և այլն։ Բայց նա շարունակ ուղղում և կատարելագործում է իրեն. նա իր արտասանած ձայնը լսելով՝ հենց ինքը համեմատում է մոր արտասանածի հետ և շարունակ ձգտում է հասնել վերջինին։

Ջանազան դիտումներ ուսումնասիրել են այս շրջանի լեզուն և մինչև իսկ օրենքներ են գտել դրա համար։ Այսպես՝ նկատելի է, որ մանուկը լսում է ավելի բառի շեշտյալ վանկը և առաջին վանկը, մյուսները նվազ նկատելի են ՝ևում. բաղաձայնների խմբի մեջ այս կամ այն բաղաձայնը ընկնում է. մի բաղաձայնի տեղ դրվում է մի ուրիշ բաղաձայն. վանկերը փոխում են իրենց տեղը. երկբարբառները դառնում են պարզ ձայնավոր, բաղաձայնների մեջ հաճախ տեղի է ունենում առնմանության (ассимиляция) և տարնմանության (диссимиляция) երևույթը։ Այս բոլորը լեզուների պատմության և էվոլյուցիայի մեջ տեղի ունեցող երևույթներն են, որոնք բնական ճանապարհով երևան են գալիս նաև մանկան լեզվի մեջ։

Սխալ է կարծել, որ նոր լեզու ելնող մանկան մոտ նկատված լեզվական սայթաքումները անկարգ ու անկանոն երևույթներ են, իբրև արդյունք պարզ դիպվածի։ Ո՛չ։ Դիտող անձը պիտի նկատի, որ դրանք շատ կանոնավոր երևույթներ են. մանուկը միևնույն բառը մերթ այսպես, մերթ այնպես չի արտասանում, այլ որոշ շրջանում միշտ միևնույն ձևով, նման ձայնական երևույթների մեջ միշտ միևնույն թերությունները են երևան գալիս։ Պատճառն այն է, որ իր օրգանները դեռ կարմարկերպված չեն և ծուռ քանոնից ծուռ գիծ է դուրս գալիս, բայց միշտ միևնույն ծռությամբ։ Օրինակի համար, Գրամմոնը, որ

քննել է երկու ֆրանսիացի երեխաների նորաթնեք լեզուն, դտնում է, որ դրանցից մեկը ուներ ձայնավորների տարնմանության կոչված երևույթը. երբ բառը պարունակում էր երկու i. առաջինը դարձնում էր e. օրինակ՝ bibi > bebi, nini > neni և այլն, և այլն. և այս երևույթը համառորեն ու կանոնավոր կերպով տևել է 3 ամիս՝ բոլոր, թեկուզ նոր սովորած, բառերի վրա (Grammon, Mélanges Meillet, էջ 65)։

[Մի երեք տարեկան հայ երեխայի մոտ պ-ն առնմանության համար դառնում էր կ բոլոր այն բառերում, ուր կար կ. օրինակ՝ կապել > պապել, պակաս > պապաս, կապիտան > պապիտան, կապույտ > պապույտ։]

Անշուշտ ամեն մի մանուկ միաժամանակ չի ունենում միևնույն տեսակի լեզվական ու ձայնական բոլոր երևույթները, այլ նա էլ ունի իր շրջանները. այսինչ ամսում այսինչ կամ այնինչ երևույթներն են նկատվում. 3 շարաթ կամ մի ամիս հետո ուրիշ տեսակի երևույթներ։ Հետո՝ այսինչ մանկան մոտ այսինչ փոփոխություններն են նկատվում, մի ուրիշի մոտ՝ ուրիշ։ Սրանք էլ դարձյալ լեզվի զարգացման հարազատ պատկերն են. ամեն մի լեզու բոլոր ձայնական փոփոխությունները չի ներկայացնում միանգամից և այդ փոփոխություններն էլ տարբեր են լեզվի այսինչ կամ այնինչ շրջանում։

Մի ուրիշ հետաքրքրական երևույթ, որ նկատել է Գրամմոնը, այդ այն է, որ միջին ձևեր գոյություն չունեն. du sucre «շաքար» բառը մանուկը դարձրել է cötüc, որին հասնելու համար կատարել է մի քանի ձայնափոխություններ (r-ի ջնջում, ձայնավորների տարնմանություն, և բաղաձայնի տարնմանություն). բայց այս բոլորը կատարվել են միանգամից, միաժամանակ, և նրանց պատրաստության համար առանձին շրջաններ գոյություն ունեն միայն մանկան մտքում. իրականության մեջ ոչ մի ձևով արտահայտված չեն նրանք։ Այս երևույթը խրատական է նաև լեզուների ուսումնասիրության համար, ուր լեզվաբանները տեսնում են շարունակ միջին ենթադրական ձևեր։

Երրորդ հետաքրքրական երևույթը մանկան՝ ձայնական երևույթներ ամբարելու ընդունակությունն է։ Նույն մանուկը դեռ անխոս ժամանակ ունեցել է մի իտալուհի դայակ, որ ֆրանսերենը արտասանելիս է եղել իտալական ձևով։ Դայակի հեռանալուց մեկ ամիս հետո մանուկը լեզու է երնում. բայց նա

սկսում է հնչել իտալական արտահայտությամբ։ Ուրեմն այդքան ժամանակ ձայնական երևույթները հասկացված և ամբարված էին նրա ուղեղում, թեև չէին կարող արտահայտվել. բայց հենց որ մանուկը ընդունակություն ձեռք բերեց խոսելու՝ նույն երևույթները երևան հանեց (Grammon, անդ, էջ 74). իտալական հնչումը ենացել է մանկան մոտ մի տարուց ավելի։

Նույնպիսի մի դեպք պատմում է նաև Շտեռնը (տես Jespersen, Language, էջ 143) մի երեխայի մասին, որ իր կյանքի առաջին 18 ամիսները անց էր կացրել Սիլեզիայում և հետո անցավ Բեռլին, ուր ոչ մի առիթ չուներ լսելու սիլեզիական արտասանություն։ Արդ՝ այդ մանուկը հինգ տարեկանում սկսեց հանկարծ գործածել բազմաթիվ սիլեզիական ձևեր. Այդ ձևերն ամբարված էին, ուրեմն, մանկան ուղեղի մեջ, առանց սակայն այնքան ժամանակ արտահայտություն գտնելու։

Երկրորդ տարվանից մանուկը ցույց է տալիս մեծ շահագրգռվածություն դեպի լեզուն, դեպի բառերը։ Եվ ահա այս շահագրգռությամբ առաջացած աշխատանքն է, որ այդ փոքրիկ էակին տալիս է հարատև ջանք, հաջողությամբ կատարելու համար այն հսկայական գործը, որ է՝ խոսել սովորելը։

Մեր ուղեղն այնպես է կազմված, որ իր զարգացման որոշ վայրկյանին պետք ունի կերտելու կամ յուրացնելու բառերը, ինչպես որ նա պետք ունի յուրացնելու ֆոսֆորը և կերտելու նևրոնները։ Ըստ այսմ մանկիկը սկսում է ամբարել բառեր, ոճեր, առացվածներ, նույնիսկ առանց հասկանալու։ Բառը իր համար բացատրություն էլ է, հաստատուն էլ է։ Եթե սեղանի վրա տեսնի մի անծանոթ գործիք և հարցնի, թե ինչ բան է, և իրեն պատասխանեն, թե սա աքցան է, նա բավարարվում է։ Իր հետաքրքրությունը իրերի անվանումից այն կողմ չի գնում։ Հարցասիրությունը պիտի սկսի նրա մեջ շատ ավելի ուշ։ Առայժմ նա բառերի սերն ունի հենց բառերի համար. մի նոր բառ սովորելը հրճվանք է։ Մի որոշ ժամանակ նա նույնիսկ այս բանը մոլորության է հասցնում. բառ է որսում, հավաքածո է կազմում, և երբ մի նորը գտավ, հաղթանակով տանում դնում է իր տեղը։ Նա լցնում է իր «բերանը» բառերով, ինչպես որ ապագայում պիտի լցնե իր գրպանը ճամբին հավաքած ամեն կարգի իրերով։ Հավաքելու ձգտումը նախ բառից է սկսվում։

Մանկիկը երբեմն իր բառերի շտեմարանին այցի է ելնում. առավոտը անկողնում սկսում է ցուցադրել իր ապրանքը. կըրկ-

նում է բառերը, իրար կողքի է շարում, շուռ է տալիս այս ու այն կողմ, փուչի չէ թե արտադրում է անմիտ ձարտուրներ։ Նա խաղում է բառերի հետ և, կարծես թե, հաճույք է զգում հենց նրանք ունենալու և նրանք հնչեցնելու մեջ, ինչպես հայտնի առակի ժլատը, որ սենյակում փակված՝ սիրում է հնչեցնել իր դիզած ոսկին։

Լեզվական այս մոլեռւթյան նպատակը ինքնին հասկանալի է։ Մտածենք մի րոպե, թե ինչքան բառ պիտի սովորի մանուկը, ինչքան դարձվածքներ ու նախադասություններ, այնպիսի մի տարիքում, ուր իր կամավոր ուշադրությունը հարաբերաբար թույլ է, և ուր ոչ մի տրամաբանական հասկացողություն չկա օգնելու իրեն՝ այս ահագին գործում։ Բառերը լսելու հաճույքն է միայն, որ գրգռում է նրան միտքը պահելու այն, ինչ որ արտասանում են, և արտասանելու այն, ինչ որ միտքն է պահել, մինչև որ վերջնականապես տպավորվին իր հիշողության մեջ։ Արտասանության յուրացումը կարելի է դեռ հեշտ համարել. ավելի դժվար է քերականությունը։ Սկզբում նա հարբագրում է բառերը առանց քերականության. հոլովում և խոնարհում չունի. գոյականները լոկ ուղղական հոլով են. բայերն էլ, ավելի ճիշտ խոսելով՝ իրը բայ ծառայող բառերն էլ լոկ բայարմատներ են, որոնք չեն կարող ոչ մի բայական վերջավորություն առանալ, բայց բոլոր եղանակներին, բոլոր ժամանակներին, բոլոր թվերի և դեմքերի նշանակությունն էլ ունեն։ Կան դեռ մի կարգ բառեր, որոնք ավելի պարզ և ավելի սաղմնային մի վիճակ են ներկայացնում. այդ բառերը չեն պատկանում որոշ խոսքի մասի, այլ ըստ տեղի գոյական են կամ բայ. այսպես կծ. բայարմատը նշանակում է. «1. առատ. 2. կծել». ևզ բայարմատը՝ «1. ճրագ, կրակ, մոմ, լամպ, 2. այրել», բու՝ «1. ջուր, 2. խմել» և այլն։

Տալիս ենք, ահա, մի քանի օրինակ մանկական բարբառի նախադասություններին, որոնք ընտրված են Պոլսի մանկական բարբառից.

Ավօ բէբէ «գեղեցիկ մանկիկ» կամ «գեղեցիկ մանկիկը».
Բէբէ ավօ «մանկիկը գեղեցիկ է, լավ է».
Թաթիկ ևզ «ձեռք այրել», այսինքն՝ «ձեռքս այրվեց, ձեռքըդ կայրի, կայրե» և այլն, և այլն.
Ավօ մամա հաճի «լավ միրգը, ուտելիքը կեր, կերա, պիտի ուտենք» և այլն, և այլն.
Մամա ավօ, հա՛փ «միրգը լավ է, կեր».
Հօփպալա «ելիր, ել, ելա» և այլն.

Փոչիկ խոթխոթ, ճափ «ոչխարը պիտի մորթենք, ուտենք, կերանք» և այլն, և այլն.

Հօփպա տպչտայ «աղգականին, բարեկամին հյուր երթանք, գնաց» և այլն.

Օշօշ քխ, փիսիկ ավօ «շունը կեղտոտ է, գեղեցիկ չէ, բայց կատուն սիրուն է, գեղեցիկ է».

Տուռխ ուֆ «տոքդ կցավի, ցավեց» և այլն.

Տայտայ թաթիկ ապիս «աղգականի, հյուրի ձեռքը համբուրիր» և այլն:

Այնուհետև սկսում է, իհարկե մայրերի առաջնորդությամբ, սովորել քերականական ձևերը՝ իրը ամբողջություն. հետո սկսում է միմիայն իր մտավոր ներքին վերլուծմամբ զանազանել նրա կազմիչ մասերը, ըմբռնել հոլովումը և խոնարհումը և իր համար կանոններ ստեղծել: Դժյականները կունենան հոլովում. նախկին բայարմատները կսկսեն խոնարհվել օժանդակների օգնությամբ. օրինակ՝ ես աեել «այրել», ես կաեմ «կայրեմ», ես արի «այրեցի», ես պիտի աեմ «պիտի այրեմ», ես լինել «այրվել», ես եղա «այրվեցի» և այլն, և այլն: Այստեղ իրեն առաջնորդ է ընդհանրացումը. երբ նա լսում է ճաեցի, գցեցի, ծծեցի և նրանց դեմ ճաե՛ր, գցի՛ր, ծծի՛ր, մի օր էլ, երբ լսի՝ լսի՛ր, դրա դեմ պիտի ասի լսեցի և այլն: Այսպես բոլոր քերականական ձևերը:

Բառարանն ու քերականությունը իրենց հետ զուգընթաց շատ կռմեր ունեն. նախ՝ շեշտը, որ եթե հայերենի, ֆրանսերենի, թյուրքերենի և այլ լեզուների մեջ վերջավանկումն է և միշտ միատեսակ ու հեշտ, ռուսերենի, անգլերենի, հունարենի և այլ լեզուների մեջ զանազանակերպ և դժվար է: Երկրորդ՝ մասնիկների գործածությունը. կան մասնիկներ, որոնք անխտիր կարող են դրվել ամեն բառի վրա, բայց կան էլ, որ միմիայն այսինչ կամ այսինչ բառի վրա են դրվում (տգեղ, տձև, տհաս, բայց ոչ բնավ՝ տբեր, տգին և այլն): Երրորդ՝ կան ձևեր, որոնք քարացած մի վիճակ են ներկայացնում, ինչպես արևմտահայերեն այվըցներ, մասվըցներ, ձեռվըցներ և այլն, ուր -վըցներ հին երկակիի մնացորդն է, բայց չի կարելի ամեն մի բառի վրա նույն -վըցներ մասնիկը կպցնել. չի կարելի ասել, օրինակ՝ գրիչվըցներ, պատուղվըցներ և այլն: Չորրորդ՝ կան բոլորովին պատրաստ առացվածներ, որոնք ժամանակը և սովորությունը նվիրագործել են, և որոնք հաճախ խիստ տրամաբանության չեն դիմանում. օրինակ՝

իրար նոր պատահելուց ասում ենք՝ բարի լույս (ամանց մոտ նաև՝ բարի առավոտ, որ սովորական չէ), բարի կեսօր, բայց ոչ՝ բարի ցերեկ, բարի երեկո, բայց ոչ՝ բարի գիշեր. այս վերջինը ասում ենք մեկնելու ժամանակ (իբր՝ մնաք բարով), որի պատասխանն է գիշեր բարի (իբր՝ երթաք բարով), մեկը մյուսին հակառակ դիրքով (ինչպես է մահմեդականների մոտ. սելամուն ալեյ քում «բարև», ալեյքում սելամ «բարին»): Այս բոլորը չի կարելի մի որևէ օրենքի հպատակեցնել, կամ որևէ տրամաբանական դատողությամբ երևան հանել: Նրանք լեզվի մեջ մասնակի երևույթներ են. և եթե քերականությունը կարելի է համաբանությամբ սովորել, սրանք պետք է մի առ մի և իրարից անջատ, առանձին-առանձին սովորել: Վերջապես՝ կա բառերի շարադասությունը, ենթակայի, սեռի խնդրի, հատկացուցիչ-հատկացյալի, ածականի ու գոյականի և այլն, և այլն տեղը նախադասության մեջ:

Բացի բառի ձևից և քերականական ձևերից, որոնք գոնե հնչմամբ լսելի են, կա և բառերի նշանակությունը: Եթե առարկան թանձրացյալ է՝ դեռ բավական հեշտ է. իսկ եթե մի բոլորովին վերացական գաղափար է...: Մանուկը լսում է այդ բառերը զանազան նախադասությունների մեջ և ըստ տեղի աշխատում է իմաստը գտնել: Բառեր կան, որոնց իմաստը մենք էլ չենք կարող բացատրել, և երեխային էլ ոչ ոք չի բացատրում, և նա պետք է գտնի այդ: Անշուշտ այստեղ երեխան շատ սխալներ է գործում, բառերը գործածում է սխալ իմաստներով, մինչև որ զանազան վարժություններից ու փորձերից հետո հասնում է ճիշտ իմաստին: Առաջին շրջաններում նրա համար բոլոր բառերը, կանոններն ու իմաստները տարտամ կամ ընդհանուր են: Պապա և մամա նշանակում են նրա համար սիրող և խնամող էակներ, որոնք շորերով են միայն տարբերվում. և հաճախ նա այդ անունը պիտի տա նաև բոլորովին օտար մարդկանց, որոնք նույն ձևով են հագնված: Ջուրը և կաթը չի զանազանում. նա ճանաչում է միայն նրանց համից և գույնից. լավը իր համար ուրիշ բան չէ, եթե ոչ համեղ: Նյութական գաղափարից բարոյական ու վերացական գաղափարին անցնելու համար նա դեռ շատ ժամանակ ունի:

Երկու տարեկան և 3 ամսական մի մանուկ սովորել էր «ճա» ասել. տատը միշտ կրկնում էր, թե «ճա չպետք է ասել», այլ՝ «այո՛»: Վերջապես մանկիկը սովորեց և ասում էր այո՛: Մի

օր մի հյուր գալով նրանց տունը՝ հարցրեց մանկիկին. «Դու ճայ ես»: Մանկիկը պատասխանեց. «Ոչ, ես այո՛ եմ»[1]:

Այսօր, երեկ և վաղը ժամանակի ընդհանուր գաղափարներ են, որոնք շփոթվում են իրար հետ. նմանապես՝ ուտել և խմել, մեկ, հինգ կամ տասը և այլն: Երեխան ասում է. «Ես վաղը չայ կերած չեմ, կը դարձեմ, բերեցի, ուտեցի, կերեցի, առեցի, իրե-կունվա», փոխանակ՝ կդառնամ, բերի (այսինքն՝ դարձա կատարյալի վրայից կանոնավորապես կազմված երկրորդ լծորդության ներկան և բերել անկանոն բայը վերածված կանոնավոր կատարյալի՝ առաջին լծորդության համեմատ)[2], իրիկվա (այսինքն իրիկուն բառից կանոնավոր սեռական՝ -վա մասնիկով):

Նման երևույթներ նկատելի են ուրիշ լեզուների մանկական բարբառների մեջ էլ. օրինակ՝ ֆրանսիացի մանկիկը.

un zarbre (les arbres-*ից ազդված*)
ce nos (un os-*ից ազդված*)
tiendre *իբր* tenir *բայի անորոշը*
s'assir «*նստել*» *փխ.* asseoir
prendu «*վերցրած*» *փխ.* pris
couri «*վազած*» *փխ.* couru
ouvri «*բացած*» *փխ.* ouvert
mon mien «*իմը*» (le mien-*ից ազդված*) *և այլն*[3]:

Գերմանացի մանուկը՝ gesingt (*փխ.* gesangt), gegeht (*փխ.* gegangen), tunen (thun), sēnen (*փխ.* sehen), Handen (*խփ.* Hände)[4],

Համաբանությունը մանկան գլխավոր առաջնորդն է:

Լեզվի յուրացումը ինքնին պարունակում է մի ամբողջ հաջորդական առաջընթաց. սկզբում մանկիկը գործ է ածում միայն գոյականներ, որոնք ցույց են տալիս թանձրացյալ առար-

---

[1] *Մանկիկին է Ռուբինը. պատն է՝ կանացի հիվանդությունների բժիշկ Գ. Հարությունյանը, սատն է քիմիկոս տիկին Աշխեն Հարությունյանը:*

[2] *Այսպիսի դրության մեջ են նաև նոր լեզու սովորող մեծերը. օրինակ՝ թրքախոս հայերը, երբ սովորում են հայերեն, կանոններդը ընդհանրացնում են. հոլովում են հայրի, մայրի, քույրի, անցողական են կազմում բերեցնել, ծիծեցնել (տես Ս. Քարաջյան, Նորհրդային Հայաստանի հայ ուղղագրությունը, Գևյբուբ, 1926, էջ 29):*

[3] Grammon, *անդ, էջ 250:*

[4] Richter, Wie Wir Sprechen, *էջ 81:*

կաներ. հետո բայերն են սկսում երևալ իր բառարանի մեջ, հետո՝ շաղկապները, ածականները, թվականները և, վերջապես՝ դերանունները։ Այս շարքը հաստատուն է և ունի տեսական մեծ կարևորություն, որովհետև ցույց է տալիս մանկան մտքի զարգացման զանազան շրջանները։

Դաղափարների հաջորդության այս շարքը, սակայն, կախում չունի այն հանգամանքից, թե ու՞ր տարիքի մեջ է մանուկը սկսում սովորել լեզուն և թե ինչպես է սովորում։ Այսպես՝ հայ-ֆրանսիական ամերիկուհի կույր խուլուհամր Ելեն Կելլերի մոտ լեզվի զարգացումը եղել է նույն ընթացքով, ինչ որ առողջ երեխայի մոտ, թեև նա խոսել է սովորել 7 տարեկան հասակում և շոշափելիքի միջոցով, և թեև նա առաջադիմել է ավելի արագ. 7 ամսվա մեջ նա անցել է այն բոլոր շրջանները, ինչ որ առողջ երեխան երկու տարվա մեջ է անցնում (տես Stern, Hellen Keller, Berlin, 1905)։

Մեզ համար հետաքրքրական է քննել այն բառապաշարը, որ ունի մանուկը իր ամենասկզբը տարիքից սկսած։ Մի ամերիկացի տիկին կատարել է այս հաշիվը իր երեխայի վրա և գտել է, որ նա գիտեր՝

10	ամսականում	3	բառ
11	»	12	»
12	»	24	»
13	»	38	»
14	»	48	»
15	»	106	»
16	»	199	»
17	»	232	»

Վեց տարեկան հասակում նրա բառերի թիվը հասել էր 2688, որոնց ցանկը տպված է Journal of Childhood and Adolescence հանդեսում, հունվ. 1902։

Նման մի վիճակագրություն հաղորդում է մեզ Վունդտը (Völkerpsychologie, հտ. I, Բ մաս, էջ 308) առնելով Վերթհայմեր (Wertheimer) և Համֆրայս (Humphreys) անունով գիտնականներից. առաջինը երկու տարեկան գերմանացի մի աղջկա, երկրորդը՝ երկու տարեկան անգլիացի մի աղջկա վերաբերյալ. այս երկուսի բառապաշարը ներկայանում է մեզ հետևյալ ձևով.

	գոյական	բայ	ածական	մակբայ	այլ բառեր	դումար
գերմաներեն	249	119	23	46	52	489
անգլերեն	592	283	114	56	76	1121

(գերմաներեն նորմալ զարգացման տեր երեխա է եղել, անգլերենը՝ նորմալից բարձր)։ Դժբախտաբար, ինչպես նկատում է Վունդտը, «այլ բառեր» կոչումը պարզ չէ, և չի խմացվում, թե ինչ կարգի բառեր են դրանք։ Չի տրված նաև գործածված բառերի հաճախականությունը, ինչ որ շատ կարևոր էր երեխայի մտավորը ուսումնասիրելու համար։

Երեխայի այս վերջին, արդեն «խոսուն» շրջանն էլ ունի իր առանձնահատկությունները, այն է՝ զանազան հնչական թերություններ, որոնք դրեթե ընդհանուր են բոլորին. այսպես՝ 1) ր, ռ ձայները վերածված յ-ի. օրինակ՝ բեյան «բերան», բյնեցի «բրոնեցի» և այլն, 2) ր-ն վերածված լ-ի. կելթամ «կերթամ», 3) ճ, ջ, շ, ձայները վերածված ծ, ձ, ց, ս-ի- ինչպես՝ ծարել «ճարել», ալօցիկ «աղջիկ», ցուցեմ «չունեմ», ձուլ «ջուր», սաքար «շաքար», ցիկա «չկա» և այլն. 4) գ, կ, ք վերածված դ, տ, բ, որ կարող է երկար ժամանակ էլ տևել, ինչպես՝ տուբամ «կու գամ» տիհին «տիկինը», դիյք «գիրք», բաբիտ «թաթիկ» և այլն։

Ամենց կարծիքով,— ինչ որ հետաքրքրական է դիտել մեզ համար այստեղ,— մանուկի խոսողության պրոցեսը ներկայացնում է հենց մարդկության անցած շրջանները լեզվի առաջման մեջ։ Մանուկի խոսողության շրջանը կարող ենք բաժանել 3-ի՝ ճիչ, ճովողյուն, խոսողություն. վերջինս էլ բաժանելով 2-ի՝ մանկական բարբառ և մեծերի լեզու (Jespersen, Language, 1925, էջ 103)։ Այսպես և՝ մարդկությունը. նախ՝ շարժուձև կամ ելևէջ, հետո բնաձայն բառեր, հետո հոդավոր լեզու. և այս էլ՝ նախապես անջատական, հետո վերածված կանոնավոր քերականության։ Որքան էլ այդ կարծիքը առաջին հայացքից հավանական է թվում, այնուամենայնիվ չի կարելի հաստատուն համարել։ Ինչպես վերը ասվեց, անկարելի է մտածել, թե նախամարդիկ խոսել են միայն շարժուձևերով, ապա՝ ճիչերով և այլն։

Հոգեբանությունը մեզ սովորեցնում է, որ այն բոլոր շարժուձևերը, որոնց սկզբունքը բնազդը, մտադրությունը կամ ջանքն է, հետզհետե գործադրվելով դառնում են սովորություն։ Սովորությունը մարդուս գերագույն կարողություններից մեկն է, որ հետո դառնում է նույնիսկ անգիտակից։ Օրինակի համար՝

որքան հասարակ բան է քայլելը. բայց որքան դժվարությամբ է ձեռք բերում մանուկը այդ հասարակ բանը. և եթե սովորությունը չլիներ, մենք հավիտյան պիտի կրեինք այն չարչարանքը, որ կրում է մանուկը նոր քայլելու ժամանակ։ Որքան հասարակ բան է դրելը, բայց եթե սովորությամբ ձեռք բերած չլիներինք այդ կարողությունը, նորուս երեխայի պես շաբունակ պիտի օրինակեինք տառերը՝ ծուռ ու մուռ՝ անկանոն գծերով։ Այսպես նաև երգելը, նվագելը և այլն։ Այդ բոլորը մենք կատարում ենք առանց նրանց վրա խորհելու։ Սրանց կարգին է պատկանում նաև խոսելը, և այն բոլոր շարժուձևերը (բերանի, կոկորդի, շրթունքների, լեզվի կամ ուղեղային կենտրոնների), որոնք վերաբերում են առհասարակ խոսողության և որոնք սկզբում այնպես դժվարությամբ են ձեռք բերվում, դառնում են հետո սովորություն։ Ամեն երևակայությունից դուրս է, եթե ասենք, թե միայն մի ա արտասանելու համար, սկսած լանջքից ու թոքերից մինչև շրթունքներն ու քիթը, ուղեղի հետ միասին, գործում են ամբողջ մարմնում 10000 մկան կամ նյարդ! (Richter, անդ, էջ 26) և այդ բոլորը կատարում են բոպեապես ու անգիտակցաբար՝ իբր շատ հասարակ մի բան։

Այս բոլորի հետ միասին պետք է ասենք, որ լեզուն չի կարող ամբողջական կերպով փոխանցվել, որովհետև առօրյա կյանքի մեջ միայն առօրյա լեզուն է գործածական։ Ուրեմն՝ անգործածական կամ անսովոր բառերը կորչում են, որովհետև չեն փոխանցվում նոր սերունդին։ Թե արտասանության, և թե կանոնների փոխանցման ժամանակ կարող են բնականաբար տեղի ունենալ որոշ ձևափոխություններ։ Եթե այդ ձևափոխությունները անհատական են, խոսողը համարվում է պակասավոր, իր ձևափոխությունները արժանանում են հասարակության ծաղրին և կամ ուղղվում են, կամ ջնջվում խոսողի մահով։ Իսկ եթե ձևափոխությունները ընդհանուր են, այսինքն երևան են գալիս միևնույն ժամանակ միևնույն շրջանում ծնված բոլոր մանուկների մոտ իբրև արդյունք լեզվի էվոլյուցիայի, հաստատ են մնում ենթակայի ամբողջ կյանքում, դառնում են լեզվի ընդհանուր սեփականությունը և նոր փոխանցումով անցնում հաջորդ սերունդին։

Այսպես է կատարվում լեզվի յուրացումը, և մանուկները դառնում են դրա առաջին գործիչները, եթե նրանք հարազատո-

րեն շարունակում են լեզվի մեջ երևան եկած որևէ փոփոխություն։

Մենք ներկայացրինք լեզվի փոխանցման գործը իր իսկական պատկերով, այնպես, ինչպես դիտել ու հաստատել են նորագույն հոգեբանները, մանկավարժները ու լեզվաբանները։ Ավելի հին հոգեբանները կարծում էին, թե մանուկի առաջին լեզուն, այսպես ասած, մանկական բարբառը, հենց մանկան հնարածն է, որ սովորում են նույնիսկ մայրերը և նրանով էլ խոսում մանկան հետ։

Այս հարցը շատ կարևոր է. իրոք մանուկը ընդունակ է ինքնին լեզու սովորելու, և եթե մի քանի մանուկներ բոլորովին մենակ ևնացած լինեին (այսինքն չեզոքացրած լինեինք մեծերի նմանողությունը) պիտի կարողանային որևէ հնչական միջոց ստեղծել իրար հետ հաղորդակցելու համար։

Հերոդոտը իր պատմության մեջ (Բ. 2) պատմում է այս մասին մի փոքր, որ բավական հետաքրքրական է։

— Եգիպտական Փսամետիկոս թագավորը, ուզենալով իմանալ, թե ովյուգացիներն են ավելի հին ժողովուրդ, թե եգիպտացիները, երկու նորածին մանուկի փակել տվեց մի տեղ և հրամայեց, որ ոչ ոք նրանց մոտ ոչ մի ձայն չարտասանի։ Մի քանի ամիս հետո մտան երեխաների մոտ, տեսնելու համար, թե ինչ բառ պիտի արտասանեին. երեխաները կանչեցին bekos, որ փռյուգերեն նշանակում է հաց։ Սրանից Փսամետիկոսը հետևցրեց, թե փռյուգերենը հնագույն լեզուն է։ Մենք էլ սրանից պիտի հետևցնենք, թե լեզուն առհասարակ բնածին և ժառանգական է մարդու մեջ, եթե, սակայն, Հերոդոտի այս պատմությունը ճշմարտություն լիներ։ Ավելի ստույգ է պարսից Շահ-Աբբաս թագավորի փորձը, որի մասին խոսում է ԺԸ դարի պատմիչ Խաչատուր Աբեղա Ջուղայեցին (Պատմություն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 136—138)։ Դնում ենք այստեղ այդ պատմությունը ամբողջովին։

«Ապա խոսիլ սկան ի վերայ բարբառոց քաղցրութեան և փարթամութեան, և տարակուսեալք հարցանէին առ միմեանս թէ Արդեօք ո՞ր լեզուն իցէ լեզու և բարբառ առաջին, որ տուաւ յԱդամայ։ Առ որոյ ոմանք ասացին Երբայեցւոց լեզուն գոլ առաջին, ոմանք Քաղդեացւոցն, իսկ ոմանք այս և այն ազգի բարբառ ասացին. և ապացուցութիւն ոչ ոք ի յորոց կարաց արտաբուծեալ բացայայտել զտարակուսութիւն։ Իսկ արքայն ոչ հաւա-

տալ ի վերայ անհեթեթ ասացելոց նոցին, վասն որոյ հրամայէ Խալաբէկ նախարարին իւրոյ և ասէ. Ես արդեօք քէ որքան ազգ լեզու գտանի յԱսպահան քաղաքիս եւ յամենայն ազգաց, որք գոն իսկ ահաւասիկ արդ բնակեալք ի քաղաքիս, ժողովեա դու ի յորոց զմանկունս առնդեայս, որք տակաւին արձակեալք չիցեն զլեզուս իւրեանց խօսս հայրենական: Եւ զամենեսեան զնոսա ամփոփեա ի տուն միում, որ իցէ բացագոյն ի շինէ և ի ժողովրդենէ, զի ամենեքին մի լսել կարիցեն զրարբառ և զխօսս մարդկան: Եւ ներքինիս երկուս կացո ի վերայ նոցա, զի յորժամ ոք ի նոցանէ լացցի, փութանակի ազդ առնիցին մարց նոցա, որք եկեալ լռեցուսցեն զնոսա, և ապա արձակեալք գնասցեն յայլում տան բնակեսցեն, և զծախս նոցա յարքունուստ լիցի, և ապա տեսցուք իսկ արդեօք քէ զինչ բարբառ այնոքիկ մանկունք ի տան անդր արձակեսցեն, իսկ և իսկ ամենեքեանս անվերկբայ հաւատասցուք այն գոլ առաջին լեզուն, որ ետ Աստ նախնոյն Ադամայ: Իսկ Խալաբէկ իշխանն քարց իրիք սպասաւորոյ՝ արար զամենայն հրամանս քագաւորին՝ որպէս հրամայեցաւ նման յարքայէ: Իսկ զժողովեալ մանկունս էին ի յայլոց ազգաց, այսինքն ի հայ, ի յոյն, ի լատին, յասորի, ի վիր, յաղուան, ի տաճիկ, ի պարսիկ, ի գիւտս, ի մար, ի լօռ, ի լէկղի, յհօղրէկ, ի գիլաք, ի ջհուտ, ի հնդիկ և ի հաբաշ և յայլ ազգաց ևս, որք գտան ի յԱսպահան քաղաքոյ ժողովեաց զնոսա, և տարեալ արուս և էգ ելից ի տունն, և եթէ ոք ի յորոց դէպ լինէր մեռանել, փոխանակ այնր մանկանց, զայլս բերէին ի տեղի նորա: Եւ իբրև մերձեցաւ ժամանակ արձակման լեզուի նոցա, բացին զբերանս իւրեանց, և խօսէին խեցրեհագոյն և կորճարար զրարբառ խժական, որ ոչ մի ի յորոց երեւիւր երբէք զրուն խօսս հայրենական ազգի իւրեանց. և մարդիկք եկեալ անմտանէ ունկըն դնէին և լսէին զխօսս նոցա և ոչ իմանային: Եւ ինքեանք ընդ միմեանս կռուէին, ծիծաղէին, խաղային և լային. և յորժամ մարք նոցա մտանէին առ նոսա, խուճապեալք ընթանային և գային առ մարսն իւրեանց մրմռոքեալք ողոքէին: Իսկ յաւուր միում գայ արքայն Արաղ և մտանէ առ նոսա, և իբրև լսէ զխեղաթիւր և զխժական խօսս նոցա՝ հրամայէ տարածել չամիչս առաջի որոց. իսկ նոքա կոնչալով և կատաչելով արձակեցան ի վերայ չամչիցն և ուտէին, և ոչ ոք իսկ գիտաց, քէ զինչ արդեօք լեզու նոքա խօսէին: Վասն որոյ հրամայեաց շահն առ ժամայն կոտորել զմանկունս ամենայն, զի մի ասէ արմատացեալ

աճեսցի զբարբառդ այդ. իսկ յառաջադէմ իշխան Ալաբէկ մատուցեալ ընդ յառաջ արքային, ոչ եթող սրախողող մահուամբ կորուսանել զանմեղ մանկունս. այլ ասէ գնասցէ իւրաքանչիւր ոք առ մայր իւր և ուսցի զբարբառ ազգին իւրոյ: Անսաց արքայն զբանից նորա, արար նոյնպէս, որպէս նա խօսեցաւ որոց գնացեալ առ ծնողսն իւրեանց՝ փութով ուսան վաղվաղակի զհայրենական բարբառն»:

Նույն պատմությունը տալիս է նաև Զաքարիա Սարկավագը (Պատմութիւն, Վաղարշապատ, 1870, էջ 55—56), որ թեև գրեթե նույնն է, բայց ունի մի քանի կարևոր մանրամասնություններ, ինչպես այն, թե քանի տարեկան էին հավաքված մանուկները և թե ինչքան ժամանակ Շացին առանձնացած: Դնում ենք և այս պատմությունը ամբողջապես.

«Ցաւուր միում ժողովեալ էին առ նա (Շահ-Աբբաս) ամենայն աւագանին և խօսէին վասն հաւատոյ և լեզուաց քաղցրութեան և փարթամութեան: Եւ վասն առաջին լեզուին, որ տուաւ Ադամայ, ոմանք ասացին՝ Հրէից լեզուն գոլ առաջին, ոմանք Եթովպացւոցն, ոմանք այս և ոմանք այն: Իսկ Շահն ոչ հաւանեցաւ ասացելոց միում ի նոցանէ: Այլ հրամայեաց Ալաբէկ իշխանին և ասէ. Տես թե որքան ազգի լեզու գտանի յաշխարհիս Ասպահանու, դու ժողովեա յամենայն ազգաց մանկունս արու և էգ, որ չև իցեն արձակեալ լեզուս իւրեանց, և լից ի տուն մի արձակ և մեծ. ի գիշերին վառեա ջերմագ, եթե ցերմացի, լոյց խարոյկ, և մարց նոցա պատուիրեա բնաւ ոչ խօսիլ և ժպտալ. այլ զսպել և մաքրել, դիեցուցանել և լռացուցանել առանց խօսելոյ և ոչ դնել յօրօրոց և ոչ ի ճօճ, այլ ի յերկրի ի մահիճ. և զծախսն յարքունուստ եղիցի մարց և տղայոցն. ի գիշերի ննջեացեն մարքն առ մանկունս և ի տունջեան կացցեն յայլում տան և կացուսցեն երկու ներքինիս պահապան նոցա. զի թէ ոք լացցէ, նոքա ազդ առնիցեն մարցն նոցա՝ լռելեայն, զի եկեալ դարմանեսցեն տղայն: Զայս պատուիրեաց առնել և ասէ. Տեսցուք, զինչ լեզու արձակեն նոքա, այն է լեզուն որ տուաւ Ադամայ: Իսկ իշխանն Ալաբէկ արար զհրամանն: Եւ զարդարեաց զտուն մի բացագոյն ի շինութենէ, զի մի լուիցեն զձայնս երգոց և գուսանաց: Եւ ժողովեաց մանկունս ի քանի ազգաց, որք գտան յԱսպահան, որք են ի քրիստոնէից եօթն ազգ և յայլ ազգաց երեքտասան. Նախ ի քրիստոնէիցն՝ այսոքիկ են հայ, յոյն, լատին, ասորի, վիր, աղուան, բոշայ: Եւ յայլ ազգաց

ժ (ուղղել երեքտասան) ազգ, որք էին տաճիկ, պարսիկ, վլաք, դեաւռ, մար, լօռ, լակզի, օղբէկ, ջաղաթայ, գիլաք, հրեայ, հնդիկ, եթովպացի։ Յայսքան ազգաց ժողովեաց բազում մանկունսն երկամեան և ելից զտունն արու և էգ։ Եւ եթէ ոք մեռանէր ի նոցանէ բերէին փոխանակ նորա այլս։ Եւ յետ տարւոյ միոյ արձակեցին լեզուս յօդաւորս. և ահա ոչ մի էր լեզուացն, այլ խժական և բեկբեկ։ Եւ գային բազումք անմոռունչ և լսէին զխօսս նոցա և ոչ իմանային։ Կռուէին, խաղային, ծիծաղէին, լային։ Եւ յորժամ մարք նոցա մտանէին առ նոսա, և նոքա գային և խուճապէին զմարրքն և մորմոքէին։ Իսկ Շահն ևս եկն և եառս զխժական խօսս նոցա և հրամայեաց սիրել չամիչ. և նոքա թափեցան ի վերայ ճուալով և ճչալով. և ոչ ոք գիտաց՝ թէ զինչ լեզու էր։ Եւ ասէ Շահն. կոտորեցէք զդոսա, զի մի ամեսցի բարբառդ այդ։ Բայց Լալարէկն ոչ եթող կոտորել և ետ ցմարս իւրեանց և ասէ. երթեալ ուսանին զլեզու մօր իւրեանց։ Եւ արարին այնպես. և փութով ուսան զնայրենի լեզուն։ Զայս պատմեաց Մարկոս վարդապետն Զուղայեցի, որ էր առաջնորդ Հաւուց-Թառու և ասէր. ժողովեալ մանկանց մինն հօրեղբայրն իմ է լեալ։

Դժբախտաբար Շահ-Աբբասի այս հետաքրքրական փորձն էլ չէ կատարված գիտութեան պահանջած մեթոդով, և կամ պատմագիրները չեն տալիս մեզ գոհացուցիչ տեղեկութիւններ։ Նախ և առաջ հայտնի չէ երեխաների տարիքը. երկու պատմիչներն էլ հավասարապես ասում են, որ նրանք դեռ լեզու ելած չէին և սանդեայ էին. բայց Զաքարիան ավելացնում է, թե երկամեայ էին։ Այս բառը շատ է խանգարում փորձի ընթացքը։ Եթե երկամյա էին, ուրեմն սանդյա չէին, որովհետև մեկ տարեկանից արդեն մանուկներին կտրում էին կաթից, անշուշտ սկսել էին լեզու ելնել։ Արդյոք երկամյա բառը երկամսյա պետք է կարդալ։ Շահ-Աբբասը պահել է երեխաներին մեկ տարի և լավ է արել, որ բոլորովին հեռու է պահել մարդկային ձայներից։ Մեկ տարի հետո երեխաները խոսել են։ Սակայն եթե երկամյա էին հավաքված երեխաները, 14 ամսական չէին կարող լեզու ելած լինել։ Իսկ եթե մի տարի պահվելուց հետո լեզու են ելել, ուրեմն հավաքված ժամանակ մոտ մի տարեկան էին։ Սխալ է արել Շահ-Աբբասը, որ մի տարեկան երեխաներին է հավաքել. նա պետք է հավաքեր բոլորովին նորածին մանուկներին և ոչ նույնիսկ երկամյաներին, որովհետև սրանք թեև դեռ անխոս, բայց իրենց մտքում

ունեին մարդկային ձայնի տալաղորութիւնը։ Մանուկները խոսել են «խեցբեկագոյն, կորճաբար, բեկբեկ, խժական, խեղաթիւր» մի բարբառ։ Այս բառերը ոչինչ ճշդրիտ բան չեն ասում մեզ, գաղափար չեն տալիս այն մասին, թե երեխաների խոսածը ինչ էր։ Ջաքարիան նուիրնիակ նրանց խոսածը կոչում է «լեզու յոգաւորք», որ անշուշտ չպետք է առնել մեր իմաստով։ Ստուգիդ է միայն այն, որ նրանք «կանչում, կառաչում, ճլում և ճչում» էին և թե նրանց խոսածը ոչ մի լեզվի նման չէր։ Այս բաները, սակայն, առանց այն էլ հայտնի են և ոչինչ նոր բան չեն ասում։

Նոր լեզվաբաններից Նսպերսենը առիթ է ունեցել դիտելու անձամբ Դանիայում չորս տարեկան մի քանի լքյալ մանուկներ, որոնք իրենք իրենց մէջ լեզու էին հնարել։ Բայց այդ լեզուն էլ ուրիշ բան չէր, եթե ոչ մեծերի խոսած լեզվի այլափոխյալ մի նմանութիւնը, ըստ որում նրանք բոլորովին առանձնացած չէին մեծացել։

Բայց նուիրնիակ եթե առանձնացրած էլ լինեին, ինչպես Շահ-Աբբասի հավաքած երեխաները, հարց է, թե նրանք կարող պիտի լինեին հնարել այնպիսի մի բան, ինչ որ մենք հասկանում ենք լեզու ասելով։

Մանուկը երբեք չպիտի ունենար լեզու, եթե ականջ չունենար լսելու։ Սրան ապացույց են խուլուհամրերը, որոնք լռութիւնից զուրկ լինելով՝ չեն կարողանում սովորել լեզուն, ոչ միայն մանուկ հասակում, այլև հասուն ժամանակ։ Եթե լեզուն մանուկի բնականից հնարածը լիներ, բոլոր խուլուհամրերն էլ մի լեզու պիտի ունենային, իրարու նման կամ տարբեր, որովհետև լեզվական հոգեվորումը չէ, որ պակասում է նրանց, այլ լսողութիւնը։

Մինչև այստեղ մենք խոսեցինք մայրենի լեզվի փոխանցման մասին՝ մանուկների միջոցով։ Այժմ մի քանի խոսք էլ պետք է ասենք մեծերի միջոցով լեզվի փոխանցման մասին։ Խոսքը այստեղ օտար լեզուների ուսման մասին է։

Այստեղ էլ դրութիւնը էապես նուինն է, ինչ որ մանուկներինը։ Սկզբունքը լեզուն կազմող բոլոր միավորների ու ձևերի ամբարումն է հիշողութեան միջոցով։ Տարբերութիւնն այն է, որ սովորողը այստեղ առարկաների էութիւնը ճանաչելու, քերականական վերլուծութիւններ անելու անհրաժեշտութեան մեջ չի գտնվում, այլ ուղղակի անցնում է հիշողութեան աշխատանքին։ Ամենակարևոր նկատելի հանգամանքն այն է, որ ով էլ լինի

օտար լեզուն սովորողը, հասարակ անուս մարդ, քե մի հայանի գիտնական, նա գտնվում է մշտապես այն պատկերացումների և լեզվական ըմբռնողության պղտիցության տակ, որ ստացել է մայրենի լեզվից։ Առաջին անգամ սովորած լեզվի հիշատակը չի ջնջվում մտքից։ Մայրենի լեզուն դառնում է մի կաղապար, որի մեջ ձուլվում են բոլոր նոր եկած նյութերը. և երբ մենք սովորում ենք մի օտար լեզու, դա ուրիշ բան չէ, եթե ոչ մեր բնական հնչմամբ, բայց օտար բառերով կազմված մի քարգմանություն մեր մայրենի լեզվի։ Շատ դժվար, մինչև իսկ անհնարին է մոռանալ մայրենի լեզուն և լիովին տիրանալ մի այլ լեզվի։

Բայց լեզվի ուսումը երբեք վերջ չունի, և չի կարելի ասել, թե արդյոք կա՞ մեկը, որ գոնե իր մայրենի լեզուն իմանա ամբողջապես, յուրացնելով այն բովանդակ բառապաշարը, որ գրերի աշխատանքն է ստեղծել։ Մանուկը արդարև մի քանի տարվա մեջ յուրացնում է իր մայրենի լեզվի քերականությունը, սովորում է այն բառապաշարը, որ իր շրջապատում առօրյա կյանքի մեջ գործ են ածում։ Բայց լեզուն այդքանով չի վերջանում։ Եթե նա ավելի մեծանա և մտնի դպրոց, այստեղ պիտի սկսի սովորել և նոր միայն սովորել այն, որ կոչում ենք գրական լեզու։ Եթե մտնի մի արհեստի կամ մի մասնագիտության, այստեղ էլ պիտի սկսի սովորել նույն մասնագիտության բառերը։ Իսկ մյուս մասնագիտությունների բառերը։ Դրանք անշուշտ իր համար պիտի մնան խորթ անծանոթ։ Վիտնեյ լեզվաբանը (La vie du langage, էջ 21) անգլերեն բառերի թիվը հաշվելով մոտ 100 000, գտնում է, որ հազիվ դրանից 30 000 գործածական է կրթված մարդու լեզվի մեջ։ Անգլերեն բառերի $^3/_5$ մասը բավական է մի կրթված մարդու համար։

ԳԼՈՒԽ Ը

ԼԵԶՎԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ

Ինչպես բոլոր երևույթների, այնպես էլ լեզվի զարգացման մեջ գործում է էվոլյուցիայի օրենքը։

Երբ մի որևէ լեզվի հնագույն շրջանը համեմատենք նրա նորագույն շրջանի հետ, զարմացած պիտի մնանք՝ տեսնելով այն փոփոխությունների գումարը, որ կրել է լեզուն տվյալ ժամանակամիջոցում. փոփոխում, ջնջում կամ հավելում ձայների, բառերի, ձևերի և նշանակություններին։

Ահա մի փոքր հատված գրաբար և աշխարհաբար.

«Հնուր ևկի արկանել յերկիր. և զինչ կամիմ, թէ արդեն իսկ բորբոքեր» (Ղուկ. ժԲ. 49)։

«Ես եկա կրակ գցելու աշխարհը. և ինչ կուզեի, եթե հենց բորբոքվեր»։

Այստեղ ջնջված են՝ ճուր, արկանել, երկիր, կամիմ, արդեն իսկ, նրանց տեղ ավելացված են՝ կրակ, գցել, աշխարհը, կուզեի, հենց. փոփոխված են՝ եկի, զի՞նչ, թէ, բորբոքեր և դարձած՝ եկա, ի՞նչ, եթե, բորբոքվեր։

1500 տարվա ժամանակ է ընկած այս երկու գրվածքների միջև, բայց արդեն իրարից այնքան տարբեր են, որ այլևս առաջինն անհասկանալի է դարձել։ Եվ եթե մի 1500 տարի ևս անցնի մեր այսօրվա լեզվի վրա, տարակույս չկա, որ նա էլ անհասկանալի պիտի դառնա գալիք սերունդներին։

Սկսած լեզվի ամենափոքր տարրերից մինչև ամենամեծերի մեջ տեղի ունեցած փոփոխությունը այնպիսի մի ընդհանրական երևույթ է, որ հատուկ է բոլորին և որի մեջ ոչ մի լեզու բացառություն չի կազմում։

Ահա մի քանի օրինակ էլ այլ լեզուների հին ու նոր վիճակից.—

Լատիներեն

Pro Dei amore et pro christiano populo et nostra communi salvatione de ista die in antea quantum Deus sapere et posse mihi donat sic salvaro ego istum meum fratrem Karlum...

Հին ֆրանս. Թ դար. ամենահին գրվածքը

Pro Deo amur et pro cristian poblo et nostro commun salvament, d'ist di en avant, in quant Deus savir et podir me dunrat, si salvarai eo cist meon tradre Karlo...

Նոր ֆրանսերեն

Pour l'amour de Dieu et pour le peuple chrétien et notre salut commun, dorénavant, autant que Dieu savoir et pouvoir me donnera, je soutiendrai mon frère Charles...

Որքան մեծ է ժամանակամիջոցը երկու շրջանների միջև, այնքան մեծ են և տարբերությունները։

Ոչ ոք չի տեսնում և չի տեսել, թե ինչպես առաջին դաստիարակիչ արխեոպտերիքսը դարձավ սրաթռիչ արծիվ, ծանրաշարժ կրիֆոդոնը կամ էոհիպուսը դարձավ արագընթաց ձի, կամ աննշան նախակենդանին դարձավ կապիկ, և կապիկը՝ մարդ։

«Հիմնական գծերով սահմանված է օրգանիզմների զարգացման շարքը՝ սակավաթիվ պարզ ձևերից մինչև ավելի ու ավելի բազմապիսի-բարդ ձևերը, ինչպիսին մենք տեսնում ենք մեր ժամանակում, վերջացրած մարդով։

Դրա շնորհիվ ոչ միայն հնարավոր դարձավ օրգանական կյանքի գոյություն ունեցող ներկայացուցիչների բացատրությունը, այլև հիմք է տրված մարդկային ոգու նախապատմության համար, նրա զարգացման տարբեր աստիճանները հետազոտելու համար, սկսած ամենաստորին օրգաններից հասարակ, անկառուցվածք, բայց գրգիռներ զգացող պրոտոպլազմայից և վերջացրած մարդու մտածող ուղեղով։ Իսկ առանց այդ նախապատմության մարդկային մտածող ուղեղի գոյությունը մնում է իբրև հրաշք» (Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, էջ 218—219)։

Էվոլյուցիայի օրենքը գործում է չափազանց դանդաղ, աննկատելի կերպով, բայց միշտ հարատևուն, տևական և շարունակական։ Նրա ընթացքի մեջ կա մի զարմանալի կանոնավորու-

թյուն։ Այսպես է նաև լեզվի էվոլյուցիան, որ պահում է այն՝ մշտական փոփոխության մեջ։ Էվոլյուցիայից առաջացած ձևափոխությունները կրում են ընդհանուր բնույթ և սկսում են երևան գալ փոխանցման միջոցին, նույն ժամանակի և նույն շրջանի բոլոր մանուկների կամ նրանց մեծամասնության մոտ։ Այդ ձևափոխությունները այնքան փոքրիկ, այնքան աննշան են, որ մյուսների համար մնում են գրեթե աննկատելի, համատարվում են նոր սերնդի մեջ և փոխանցման ճանապարհով անցնում հաջորդ սերնդին։ Այսպես է մոռացվում հինը, և տիրապետում նոր ձևը։

Այս է, որ լեզվաբանության մեջ ժառանգականություն է կոչվում, բայց իրականում ավանդություն է. ավանդության օրենքը էվոլյուցիայի օրենքի անբաժան մասն է կազմում. առանց ավանդության էվոլյուցիայի քայլերը կանգ են առնում։

Էվոլյուցիայի օրենքը անխուսափելի է. չկա մի լեզու, որ բացառություն կազմի. բոլորն էլ ենթարկվում են նրան. տարբերությունը միայն նրանումն է, որ էվոլյուցիայի օրենքը հավասար արագությամբ չի գործում։ Բնության երեք թագավորությունները այս կողմից չափազանց տարբերվում են իրարից. հանքային թագավորությունը ամենից անփոփոխն է. երկրի շերտերը կամ խավերը հազարավոր դարերից ի վեր մնում են անփոփոխ. նրանցից պակաս է բուսական թագավորությունը, եթե մարդկային ձեռքը չի միջամտում և նոր փոփոխություններ չի առաջացնում։ Ծեյլոն կղզում Բուդդայի սրբազան ծառը, որի տակ իբր թե Բուդդան կանգնած քարոզում էր, մնում է մինչև այժմ, իր ամբողջ գրեթե մի անտառի վերածված և 2500 տարվա կյանք ունի. իսկ որ լեզուն է, որ գոնե 1000 տարի անփոփոխ մնացած լինի։ Նա ամենից ավելի փոփոխականն է։

Բայց լեզուները նաև իրարից են զանազանվում էվոլյուցիայի մեջ. հինթիներենը, որի առաջին արձանագրությունները մ. թ. ա. 1950 թվերից են, նույնիսկ այդ թվերին ավելի նորաձև լեզու էր, քան հին հունարենն ու սանսկրիտը՝ նրանից հազար տարի հետո. այնքան, որ լեզվաբաններից ոմանք, գոնե սկզբում, վարանում էին ընդունել հինթիներենն իբրև հնդեվրոպական լեզու։

Այսօր էլ եթե առնենք երեք ժամանակակից լեզու՝ ռուսերեն, հայերեն և անգլերեն, ռուսերենը ավելի հարազատ ձևով

պահում է իր հնդեվրոպական հատկանիշները (որովհետև պահում է 3 սեռ, 6 հոլով, բայի կերպերը և մանավանդ շարժական շեշտը), հայերենը պակաս չափով (որովհետև թեև ջնջել է սեռը կերպը և շեշտը, բայց ավելի լավ է պահել հոլովումն ու խոնարհումը), իսկ անգլերենը ամենից ավելի նորատիպ է (որովհետև ջնջել է սեռ, կերպ, հոլովում ու խոնարհում միանգամայն և համարյա չինարենի նման մի անջատական լեզու է դարձել)։ Այսպիսով, երեք ժամանակակից լեզուներից ռուսերենը ամենահնատիպն է, հայերենը՝ միջակ, անգլերենը՝ նորատիպ, հնդեվրոպական նախալեզվի նկատմամբ ունեցած մերձավորության առումով։

Կան լեզուներ, որոնք շուտ են փոխոխվում, ձևափոխվում, ընդհակառակը՝ կան այնպիսիները էլ, որոնք շարունակ մնում են իրենց նախկին վիճակի մեջ։ Այս վերջին կարգից է, օրինակ՝ ամբողջ սեմական ընտանիքը, որի համար ահա թե ինչ է ասում Ռենանը. «Սեմական լեզուները չեն ապրել, այլ տևել են. արաբերենը այսօր էլ խոնարհում է բայը ճիշտ այնպես, ինչպես եբրայեցերենը ամենահին ժամանակ. ամենակարևոր արմատները մի տառ անգամ չեն փոխել մինչև մեր օրերը, և կարելի է հաստատ ասել, թե առաջնակարգ պիտանի իրերի անունները թե Սամվելի ժամանակակից խորայելացու, և թե ԺԲ դարու մի բնակչի համար հավասարապես հասկանալի են։ Ունենք եբրայական բնագիրներ, որոնք անտարակույս գրված են մեր թվականությունից առնվազն հազար տարի առաջ և, հետևաբար, 3000 տարվա ընթացքում ոչ արմատները, և ոչ էլ քերականությունը զգալի փոփոխություն չեն կրել...» (Renan. Hist. des langues sémit., 4, 1863, էջ 434)։

Լեզուներից ամենք շարժվում են շատ դանդաղ, ուրիշները ավելի արագ. այսպես՝ հայերենը ամենահին հնդեվրոպական լեզուն է, բայց ձևով ավելի նոր է, քան հին հունարենը։ Թյուրքական բարբառները, որոնք ծանոթ են մեզ ԺԲ դարից, մինչև այսօր, գրեթե մի հազարամյակի մեջ, չեն կրել զգալի փոփոխություններ։ Գալինդայան կղզիների բնակիչների լեզուները, թեև իրարից անագին հեռավորությամբ անջատված, բայց գրեթե միևնույն ձևն ունեն։ Այնպես որ, եթե համեմատության դնենք միևնույն լեզուների էվոլյուցիայի տարբերությունը, կտեսնենք, որ որոշ լեզուներ ասավել փոփոխված են, ուրիշները՝ պակաս, և այդ նկատի ունենալով՝ նրանք կոչվում են հնավիճակ

և նորավիճակ, որ իհարկե, կապ չունի լեզվի զարգացած կամ անզարգացած լինելու հետ և նրա չափանիշը չէ։ Պետք է խուսափել նաև «հարազատ», «մաքուր», «աղավաղված» և այլն անգիտական բացատրություններից գործածելուց։

Կան դեպքեր, երբ մի տեղում լեզուների էվոլյուցիան ընդհանրապես ավելի արագ է, քան մի ուրիշ տեղում. այսպես է Եվրոպայի հյուսիս-արևմտյան մասը, ուր խոսված լեզուները (ֆրանսերեն, անգլերեն, հոլանդերեն և բրետոներեն) համեմատաբար շատ ավելի են հեռացած իրենց նախատիպերից, քան Եվրոպայի հարավային մասում խոսվող լեզուները (իսպաներեն, պորտուգալերեն, իտալերեն, Meillet, BSL, 94, 118)։

Գիտուններից ոմանք կարծում են, թե մի լեզու, մնալով իր բուն հայրենիքում, ավելի քիչ ենթակա է ձևափոխության, քան գաղթելով մի ուրիշ երկիր. այսպես՝ լիտվաներենը շատ քիչ փոխված լեզու է, ըստ որում գտնվում է գրեթե հայրենիքում. այսպես նաև՝ արաբերենը։ Այս կարծիքը ճիշտ չէ, և երևույթները պատահական են։ Հայտնապես գիտենք, որ Սարդինիա կղզու հարավակողմի ժողովուրդը ավելի հարազատ ռոմանական մի լեզվով է խոսում, քան նույնիսկ Հռոմի բնակիչը իր տեղում (Nöldeke, Die Semit. Spr., էջ 11)։ Հայաստանի շատ գավառների հայերենը ավելի է ձևափոխված, քան Պոլսի հայերենը (օրինակ՝ Ագուլիս, Ղարաբաղ, Ոզմի, Մոկք և այլն)։ Սուչավայի հայերը թեև հեռու հայրենիքից, պահում են դեռ գրաբարի զ նախադիրը, որ Աբարատի ստորոտում կորած է (սրանց մասին ավելի ընդարձակ տես «Ձայնական փոփոխություններ» հատորում)։

Էվոլյուցիայի արագությունը զանազանվում է ոչ միայն լեզվից լեզու, այսինքն՝ երկրից երկիր, և բարբառից բարբառ, այսինքն՝ գավառից գավառ, այլև միևնույն լեզվի կամ բարբառի մեջ՝ շրջանից շրջան և երևույթից երևույթ։ Այսպես՝ հայերենը և վրացերենը հարևան լեզուներ են. նրանց մատենագրությունը ծանոթ է մեզ՝ մոտ 15 դարից ի վեր. և սակայն ինչքան փոխված է արդի հայերենը համեմատությամբ գրաբարի, և որքան անաղարտ է արդի վրացերենը համեմատությամբ հին վրացերենի։ Միևնույն լատիներենը տարածվել է Իտալիա, Գալլիա, Իսպանիա, Պորտուգալիա, Ռումինիա և առեղծել է նորլատին լեզուները. բայց որքան զանազանություն իտալերենի, ֆրանսերենի, իսպաներենի, պորտուգալերենի և ռումիներենի միջև՝ իրենց համամայր լատիներենի համեմատությամբ։ Միևնույն գերմանականը,

մի կողմից՝ ավել է գերմաներեն և, մյուս կողմից՝ անգլերեն. անգլերենը ամեն բան տակն ու վրա է արել։ Նույնքան ժամանակամիջոցում ֆրանսերենը տակնուվրա է արել լատիներենը, մինչդեռ իտալերենը այնքան քիչ է ձևափոխել։ Ժդ դարից մինչև այժմ ֆրանսերենի կրած փոփոխությունը շատ ավելի մեծ է, քան իտալերենինը՝ նույնքան ժամանակում։ Միևնույն հայերենը տվել է մեզ 40 բարբառ, և որքան զանազանություն Երևանի բարբառի և Ագուլիսի բարբառի միջև, կամ Սեբաստիայի և Կիլիկիայի բարբառների միջև։ Էվոլյուցիայի արագության տարբերությունը զանազանվում է մի լեզվի զանազան շրջաններում. այսպես, օրինակ, պարսկերենը մ. թ. ա. 2 դարում հնաձև մի լեզու էր. մեր թվականության առաջին դարում արդեն ստացել էր նոր լեզվի կերպարանք և այն օրից մինչև այսօր մնում է առանց մեծ փոփոխության (Meillet, La méthode comp., էջ 45)։ Վերջապես, էվոլյուցիայի արագության տարբերությունը նկատելի է միևնույն լեզվի միևնույն բարբառի երկու տարբեր երևույթների միջև. օրինակ՝ Ագուլիսի բարբառում ձայնավորները բոլորովին այլափոխված են, բայց բաղաձայնները մնում են անաղարտ։ Ընդհակառակը՝ Պոլսի բարբառում բաղաձայնները փոփոխվել, իսկ ձայնավորները մնում են անաղարտ։ Էվոլյուցիան մի գետ է, որ թեև երբեմն արագ ու հոսանուտ, երբեմն էլ դանդաղ ու հանդարտ, բայց միշտ հոսում է և բնավ կանգ առնել չգիտե։ Եթե մենք տեսնում ենք հին լեզուները գրականության մեջ տասնյակ դարեր միևնույն ձևի տակ քարացած, անփոփոխ վիճակում, դա խաբուսիկ է. լեզուն ժողովրդի մեջ շարունակ փոխվում է, գրագետները են, որ հին լեզուն միշտ գրքերից սովորած ձևի տակ շարունակում են պահել։ Լեզվից լեզու էվոլյուցիայի ուժի տարբերությունը ցույց տալու համար իբր լավագույն օրինակ կարող են ծառայել շատ անգամ փոխառյալ բառերը։ Երբեմն մի բառ անցնում է մի լեզվից մի ուրիշ լեզվի. սակայն տեսնում ենք, որ փոխառու լեզուն շատ անգամ ավելի անվթար պահում է նույն բառի ձևը, քան փոխառու լեզուն։ Օրինակ՝ Թյուրքերը հայերենից փոխ են առել պարան, քարման բառերը, որ հիմա հնչում են գավառներում՝ Ակն, Ատն. baran, Հճ. kermen, որոնք ավելի հարազատ ձևով պահված են, քան, օրինակ՝ Համշի հայոց մեջ, ուր նույն բառերը դարձել են բայօն, քայմօն։ Նշանակում է, թե էվոլյուցիան ավելի ուժեղ է եղել հայերենի, քան Թյուրքերենի մեջ։ Հիշենք նույնպես այն հարյուրավոր փոխառությունները, որ հայերենը փոխ է առել հին իրա-

նական լեզվից, որի շարունակությունն է արդի պարսկերենը. հայերենը շատ ավելի անփոփոխ է, քան պարսկերենը. օրինակ՝ պհլ. varāz > հյ. վարազ — պրս. gurāz:

Այս բոլորից հետևում է, որ լեզվական փոփոխություններից դատելով չի կարելի որոշել որևէ լեզվի տարիքը. լեզվաբանն իր գործով այս կետում բնավ չի նմանվում երկրաբանին, որ երկրի շերտերը և նրանց կազմությունը դիտելով որոշում է նրանց տարիքը:

Այսուհանդերձ էվոլյուցիայի օրենքը այս կամ այն շրջանի համար ունի որոշ համանմանություն և տարածականություն: Չի կարելի կարծել, որ մի որևէ բնորոշ ձևափոխություն տեղի է ունենում և մնում միմիայն մի որևէ թաղում կամ գյուղում: Այսպես՝ հին հայերենի ասպանիկ և սաորագասականի անհետացումը հատուկ չեղավ միայն մի գավառի. կայ ու ձևի գործածությունը իրրև սահմանականի մասնիկ՝ կը ձևով, տարածվեց ոչ միայն բուն Հայաստանի մեջ, այլև նրանից դուրս՝ ուր որ հայ կա: Նրանից հետո՝ սահմանականի նոր դրությունը ներգոյական հոլովով (սաում եմ, սահլիս եմ, սահս եմ) տարածվեց Մասիսի հարավային կողմերից մինչև Կովկասի հյուսիսային սահմանները: Հ > Ø ձայնափոխությունը ամփոփված չէ միայն Վանի մեջ, այլ տարածվում է Վանա ծովի արևելյան ու հարավային սահմաններից (Բուլանըխ, Մոկք, Խիզան, Շատախ) սկսած մինչև Մարաղա, Ուրմիա, Սալմաստ, Թավրիզ, Խոյ, Նախիջևան, Իգդիր և Բայազետ: Այսպես նաև ավելի մանր ձևափոխություններ՝ համաձայն իրենց ուժի, հետզհետե ավելի փոքր սահմաններում. այսպես, օրինակ՝ շարունակական ներկայի կոր մասնիկը, որ տարածվում է Ալխից մինչև Թրապիզոն և այլն:

Կան երևույթներ, որոնք մի փոքրիկ տեղում, նույնիսկ մի գյուղի մի թաղումն են ամփոփված. այսպես, օրինակ՝ Մանիսասյի վերի թաղը խոսում է Խարբերդի բարբառով, իսկ վարի թաղը՝ Ջմյուռնիայի բարբառով. Իգդիրում մի թաղը խոսում էր տեղի բարբառով, մյուսը՝ պարսկահայ բարբառով (հոս):

Երևանում էլ Կոնդի թաղի բնիկները արտասանում են բ > պ, գ > կ, դ > տ, ձ > ծ, ջ > ճ (այսինքն՝ Քրթուն պայթականները՝ պարզ խուլ), իսկ մյուս թաղերի բնիկները Քրթուռները դարձնում են շնչեղ (բ > բ', գ > գ', դ > դ', ձ > ձ', ջ > ջ'), ինչպես ասում են նաև քանաքեռցիները և էջմիածնեցիները: Թավ-

բիզի Ղալա Թաղը խոսում էր տեղի բարբառով, իսկ Լիլավա Թաղը՝ Մուժումբարի ու Ղարադաղի բարբառով և այլն։

Բայց այս երևույթը մեզ չպետք է խաբի։ Դրանք լեզվաբանական կղզյակներ են՝ առաջացած գաղթային զանազան հոսանքներից։ Երբ ժողովուրդները գաղթում են տեղից տեղ, առաջանում է երկու երևույթ, տարբեր շրջանների մարդիկ հավաքվում են կողք կողքի, և մինչև նրանց միախառնումը մենք տեսնում ենք միևնույն տեղում իրար հետ ոչ մի առնչություն չունեցող բարբառներ միասին ապրելիս. կամ գրից գալիս է մի մեծ խումբ և հաստատվելով մի ուրիշ վայրում, տարածում է իր բարբառը. բնիկ ժողովուրդը պահում է իր բարբառը որոշ ժամանակ, և մենք տեսնում ենք դարձյալ երկու բոլորովին անջատ բարբառներ, մեկը ընդհանուր տարածված, մյուսը՝ թեկուզ մի թաղում ամփոփված։

*Էվոլյուցիայի օրենքը գործում է զարմանալի հետևողականությամբ, առանց ոստումների, և հաջորդականությամբ. այնպես որ, եթե մարդ հանկարծ վերցնի շղթայի վերջին օղակներից մեկը և համեմատի առաջինի հետ, առանց ի նկատի ունենալու միջին օղակները, մանավանդ՝ անցման վիճակները, զարմացած պիտի մնա և չպիտի հավատա եղած փոփոխության, ճիշտ ինչպես այսօր մեզ զարմանալի է թվում, որ մարդը կապկից կամ դեռ ավելի նախնական մի էակից առաջացած լինի։ Ո՛վ կարող է հավատալ, թե լ. aqua դառնում է ֆրանս. ô «ջուր». բայց անա նրանց ձևափոխության հաջորդական աստիճանները. aqua > agwa > aiwa > aive > e've > eave > eaue > eau > ô։ Գերմ. je «երբեք, երեւիցե» ծագում է հնխ. aiwom ձևից այսպես՝ *aiwom > *aiwan > * aiwa > գոթ. aiw, հրգ. ēwo > ē > eo > io > ie > je > jē։ Հնխ. bhrā'tēr > bhrā'tr > հյ.* բրայր > *բղայր > *ղբայր > եղբայր։*

Հնխ. pedo > *հյ.* ոիետ > *մհ.* խտ, *Ոգմ.* խա։ *Լ.* calidum > calidu > caldu > cald > calt > *ֆր.* tšalt > tšaut > šaut > šót > šó «տաք»։ *Այսպես նաև՝ ֆր.* oui < hoc ille, ce < ecce istum, diner < disjejunare *և այլն։*

Այս բոլորի մեջ նմանություն ոչ մի հետք չկա առաջինից վերջինի մեջ։

Այս հաջորդականությունն էլ, սակայն, վայրիվերո չէ, և լեզվի ամբողջ էվոլյուցիան գնում է շատ որոշ կանոնավորությամբ. այդ կանոնավորությունն է, որ լեզվաբանությունը դարձնում է

գիտությունն և առանց նրա՝ լեզուն կլիներ անմիտ ու անկարգ երևույթների մի քաոս։

Լեզվի էվոլյուցիայի ընթացքը գիտուններին շատ անգամ կապում են նույն լեզվով խոսող ժողովրդի քաղաքականության ընթացքի հետ։ Կան շատ դեպքեր, երբ այս երևույթը ճիշտ է դուրս գալիս. օրինակ՝ նկատված է, որ երկակի թիվը կա և գոյություն ունի զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող ժողովուրդների մեջ, քաղաքակրթությունը չնչում է այն։ Այսպես՝ հնագույն հնդեվրոպական լեզուները գիտեն, նորերի մեջ չնչված են։ Առարկանները դասերի վերածելով՝ ըստ այնմ նաև քերականական ձևերը հորինել — մի օրենք է, որ ճանաչում են Աֆրիկյան լեզուներից շատերը. բայց նրանց ավելի քաղաքակրթ վիճակում այդ օրենքը վերանում է։ Անշուշտ առարկաներին սեռ վերագրելը անշուշտ նախնական ըմբռնողության արդյունքն է, քանի քաղաքակրթվում է մարդը, սեռի ըմբռնողությունն էլ վերանում է և այլն։ Բայց այս բոլորը ընդհանուր և պատահական երևույթներ են միայն։ Երբ մտնենք խնդրի ավելի խորքը և քննենք երևույթները կամ մեկնույն երևույթը համեմատենք զանազան լեզուների մեջ և բաղդատության դնենք ժողովուրդների քաղաքակրթական վիճակը, կտեսնենք, որ իրոք այդպես չէ։ Այսպես, օրինակ՝ թրքական լեզուները սեռ չունեն, իսկ հնդեվրոպական և սեմական լեզուները սեռ ունեն. բայց կարելի՞ բան է ասել, որ թրքական ցեղերը երբևիցե ավելի քաղաքակիրթ են եղել, քան այնպիսի հնդեվրոպացիները, ինչպիսիք են ռուսները։ Նույնիսկ մանանավորելով հարցը մի միակ լեզվախմբի մեջ, ալիտի տեսնենք, թե հայերենը, աֆղաներենը և քրդերենը սեռ չունեն, իսկ ռուսերենը, ֆրանսերենը, գերմաներենը կամ իտալերենը ունեն. ուրեմն հայերը, աֆղանները և քըրդերը ավելի քաղաքակիրթ են, քան ռուսները։ Երկակի թիվը, որ բոլոր հնդեվրոպական լեզուների մեջ չնչված է, գոյություն ունի մինչև այսօր չեխերենի մեջ. ուրեմն չեխերը հնդեվրոպացիների ամենից ավելի անքաղաքակիրթ տոհմերն են։

Այս բոլոր օրինակները ցույց են տալիս, որ էվոլյուցիայի օրենքը առանձին կապ չունի քաղաքակրթության հետ, այլ ուրիշ հանգամանքների արդյունք է, որին իրը մեծագույն ապացույց կարելի է հիշել այն հանգամանքը, որ հիշեցինք քիչ առաջ. էվոլյուցիայի արագությունը տարբերվում է նույնիսկ

միևնույն լեզվի միևնույն բարբառի երկու տարբեր ներկայիններ միջև:

Ոմանք լեզվի էվոլյուցիայի ընթացքը կապում են այդ լեզվով խոսող ազգի գործունեյա լինելու հետ: Օրինակ՝ Ռենանը (Hist. des langues sémit., էջ 435) ասում է. «500 փարսախ հեռավորության վրա, ուսը ուսին նման է, մինչդեռ 10 փարսախ հեռավորության վրա՝ նույնը կատարելապես տարբեր է նույնից: Սեմական միտքը միշտ նույնն է եղել, ուստի լեզուն էլ միշտ նույնն է մնացել. մինչդեռ արիական ցեղը շարունակ մտավոր հեղափոխության մեջ է եղել, ուստի և լեզուն էլ շարունակ փոխվել է: Կարծիք է կազմված, թե Արևելքը անշարժ է. դա ճիշտ է միայն սեմական ժողովուրդների համար, և այդ մասնավոր երևույթը ընդհանրացած է ամբողջ Արևելքի համար: Մինչդեռ Ասիայի ինդոեվրոպական ժողովուրդներն էլ այնքան ձևափոխվել են, ինչպես եվրոպացիները: Հնդկաստանը, որ համարում են անշարժության երկիր, իրոք աշխարհիս այն կետերից մեկն է, ուր լեզուն, բարքերը և օրենքը շարունակ ձևափոխվել են: Լեզվի, ինչպես և կյանքի սովորությունների կազմից, թափառական ժողովուրդները, ընդհակառակը, նշանավոր են իրենց էապես պահպանողական ոգով»: [Այս կարծիքն էլ, սակայն, ճիշտ չէ: Չկան «գործունեյա» և «անգործունեյա» ժողովուրդներ, ուստի և էվոլյուցիան չի կարող այդպիսի չեղած հատկությունների արդյունք լինել:]

Էվոլյուցիայի օրենքը էակի կամքից անկախ է և գործում է նույնիսկ հակառակ նրա կամքին. ոչ մի մարդ չի ցանկանում իր լեզուն փոխելով խոսել. բայց նաև ոչ մի մարդկային ջանք՝ անհատական թե հավաքական, չի կարող կասեցնել լեզուն իր ընթացքից: Որչափ աշխատեցին, որչափ ջանք թափեցին մեր գրաբարյանները կանգնեցնելու համար աշխարհաբարի ընթացքը և վերանորոգելու գրաբարը, բայց այդ բոլորը դուր անցավ և էվոլյուցիան իր ընթացքը կատարեց: Որչափ գրվեց, որչափ միջոցներ առաջարկեցին մի ժամանակ՝ փոխելու համար արևմտահայ տառադարձությունը, բայց բոլորը դուր և ապարդյուն. էվոլյուցիան շարունակում է իր ընթացքը, առանց ուշադրություն դարձնելու ուսումնականների և գրագետների (պահպանողականների) աշխատանքին: Միայն մեր մեջ չէ այսպես: Եվրոպայի և Ասիայի բոլոր խոշոր գրա-

վանութ յունները կենթարկվել են նույն փորձանքին և՝ ապարդյուն։

Առնենք լատիներենը՝ հռոմեական «իմպերիական» պետության փառավոր լեզուն։ Հռչակավոր մատենագիրներ, անվանի դիտնականներ, մեծամեծ պետական գործիչներ, կայսրներ ու զորավարներ մշակեցին, տարածեցին, պահեցին ու պահպանեցին այն, և պետք էր կարծել, որ «հավիտենական քաղաքի» լեզուն հավիտենական էլ կմնար։ Բայց ի զուր։ Հռոմեական դասական դրականութ յունը 180 տարուց ավելի չապրեց. հսկա կիկերոնը հենց ինքը ականատես եղավ լատիներեն լեզվի անկմանը։ Ադրիանոս կայսեր օրով համաշխարհային լեզու դարձած՝ արքունի դիվանների մեջ էլ չկարողացավ պահվել։ Ջուր աշխատեց կլավդիոսը՝ բռնադակ կայսերական իշխանութ յամբ կանգնել նրա անկումը։ Բայց ամեն կողմից կառուցված պատնեշներն ու թումբերը անբավական գտնվեցին։ Հարյուրավոր տարիներ կյանքի ու մահվան մեջ երերաց լատիներենը և վերջապես 9 — 10 դարերի միջև իր վերջին շունչը փչեց (Այտն., Քնն. քեր., էջ 253)։ Եվրոպացի գիտնականները, որոնք այդ լեզվի մահվանից հետո էլ պահում-պահպանում էին նրա հիշատակը, սովորում ու սովորեցնում լատիներենը դպրոցներում, համալսարաններում ու գրականութ յան մեջ, անմիտ երազն ունեցան նորից կենդանացնելու մեռյալ լեզուն։ Անհաշիվ ջանքեր թափվեցին Եվրոպայի դանդաղ երկրներում, սկզբում այնպես երեվաց, որ ահա մեռյալ լեզուն հարութ յուն է առնում՝ նույնիսկ շրթունքների վրա. բայց ինչ ստեղծվեց. լատիներենի անվան անարժան մի կալկութ յուն, որ ոչ հին էր, և ոչ նոր։ Ֆերրարին դանգատվում էր, թե հարյուրից մեկը հազիվ կարող էր մաքուր ու անսխալ լատիներեն գրել և հազարից մեկը հազիվ գաղափար ուներ լատինարանութ յան մասին։ Երազմոսը գրում էր, թե կիկերոնի անունը բերանից չգցողները շարունակ նրա անունն են խայտառակում։ Հունգարիայի թագավոր Մաթիաս Կորվինը աշխատեց լատիներենը իր ժողովրդի խոսակցական լեզուն դարձնել. բայց կիկերոնյան լեզվի տեղ «հուսարի լատիներեն» առացվեց (Այտն., Քնն. քեր., էջ 299)։ Այսօր այլևս այդպիսի երազ տեսնող չկա, և լատիներենը նույնիսկ գիտական գրականութ յան մեջ տեղ չունի. նրա ամբիոնը հռոմեական եկեղեցու խորանն է միայն։

կարելի էր առարկել, թե լատիներենը մեռավ, որովհետև հռոմեական կայսրությունն էլ մեռավ։ Զանազան օտարացեղ ժողովուրդներ (ֆրանսիացի, իսպանացի, պորտուգալացի, բելգիացի) պարտական չէին մի օտար լեզու ընդգրկել ու անպարտ պահել։ Առնենք այդ դեպքում հունարենը։

Հունարենն էլ, հին մարդկության այն գլուխ գործոց լեզուն, որով երգեց Հոմերոսը, որով գրեցին անհամար բանաստեղծներ, փիլիսոփաներ, ճարտասաններ ու դիտուններ, որով ծաղկեց հին հունական անմահ գրականությունը, այն էլ տեղի տվեց բյուզանդական հունարենին, իսկ բյուզանդական հունարենն էլ փչեց իր չունչը նույն Ք — ժ դարերի ընթացքում։ Եվ հետո, հակառակ զանազան հերինականների մեծամեծ ջանքերի, հին հունարենը (էլենիկա) չվերակենդանացավ, այլ նրա փոխարեն՝ խոսակցական ռամիկ լեզուն՝ նոր հունարենը (ռոմեկա) գրականության աստիճանին բարձրացավ։

Էվոլյուցիայի անկախությունը մարդկային կամքից ունի և մի ուրիշ պատճառ. խոսողների սակայ մեծամասնություններ բնավ չի հետաքրքրվում, թե ինչպես է խոսվում, այլ թե ինչ է խոսվում (պահելով անշուշտ լեզվի միության անհրաժեշտ պայմանը)։ Եվ այս կետը չափազանց ուժեղ է անքակտելիորեն լեզուների համար։ Միայն այն ազգերի մեջ, ուր մարդիկ հասել են քաղաքակրթության մի գերազույն աստիճանի, այն ազգերի մեջ միայն մարդիկ, ավելի ճիշտ ոմանք՝ գրողներ, փնտրում են նուրբ բառեր, հրաժարվում են գործածելուց կոշտ ձայներ, մերժում են այսինչ կամ այնինչ բառը և այլն։ Այստեղ արդեն սկսում է գործել մարդկային կամքը. բայց նրա դերը համեմատած ժողովրդի մեծամասնության հետ՝ շատ փոքր է։ Գրականության բացակայությունը կարող է ավելի անձնաձակ ասպարեզ տալ լեզվի բնական ձևափոխությանը, բայց նրա գոյությունը չի կարող հոսանքը կասեցնել կամ փոխել. հին պարսկերենը գրականություն չուներ, ուստի շատ արագ էլ փոխվեց. բայց արաբերենը, որ Ղուրանի միջոցով անհպելի լեզու էր դարձել, չկարողացավ արգելել նոր բարբառների առաջացումը։ Այսպես նաև Հռոմի պաշտոնական լատիներենը չկարողացավ արգելել նորալատին լեզուների առաջացումը։

Մի գեղեցիկ օրինակով Վանդրիեսը այս երևույթը նմանեցնում է Օվկիանյան հետամնաց ցեղերի կամավոր անդամահատություններին. գեղեցիկ երևալու նպատակով նրանք ճղում են

իրենց շրթունքը, ծակում են քիթը, ականջները և այլն. բայց այս բոլորը կարող են մարդկային կազմի բնախոսական էվոլյուցիան խանգարել (Vendriès, Mélange Meillet, էջ 119)։ 3500 տարի է, որ հրեաները սերունդից սերունդ անխափան թլպատվում են. բայց դեռ ոչ մի հրեա չի ծնվում թլպատված. Այսպես և կանանց ականջ ծակելը։

Սակայն, երբ ասում ենք, թե լեզվի էվոլյուցիան մարդկային կամքից անկախ է, չենք ուզում ասել, թե լեզուն մարդուց բոլորովին անկախ է. մարդուց դուրս լեզու չկա. մարդը ինչպես եղել է լեզվի ստեղծողը, այնպես էլ նրա պահողն ու աճեցնողն է. ինքն է, որ արմատները բարդում է իրար հետ, կպցնում է նրանց զանազան մասնիկներ, ստեղծում է պատկերներ, փոխաբերություններ, այլաբանություններ, որով և առաջ է բերում նշանակության մեջ նորանոր առումներ, երանգներ, նրբություններ և այլն։ Մարդուց անկախ է ձայների ու ձևերի փոփոխությունը, որ լեզվի ներքին զարգացման գործն է. բայց մարդը կարող է միշտ ընտրություններ կատարել այդ ձևերի ու ձայների մեջ, մի ձևը գործածությունից վտարել, մի ուրիշ ձևի ավելի ընթացք տալ։

Կան ոմանք, որոնք էվոլյուցիայի վրա նայում են հոռետես հայացքով, ուրիշները, ընդհակառակը, լավատես են. ոմանց համար ամեն մի փոփոխություն, որ ժամանակը բերում է լեզվի մեջ՝ անկում է. ոմանք հիանում են հին լեզուների գեղեցկության վրա և նոր լեզուները համարում են աղճատում. այսպես՝ լատիներենը համեմատած ֆրանսերենի հետ, գրաբարը՝ աշխարհաբարի հետ և այլն։ Ուրիշներն էլ՝ հակառակը։

Սրանցից ոչ մեկը ճիշտ չէ։ Ամեն մի լեզու ունի իր առավելությունները և իր պակասությունները. և շատ անգամ չի կարելի ասել, թե ինչ է լեզվի առավելությունը։ Այս մասին ավելի երկար պիտի խոսենք լեզվի հատկությունները գլխում (գլ. Ժ.)։

Լեզվի էվոլյուցիան նկատի ունենալով՝ սովորություն է դարձել առհասարակ լեզուն նմանեցնել մի կենդանի էակի, որի նման ծնվում է, աճում, զավակներ ունենում և մեռնում։ Ասում ենք, օրինակ՝ լեզվի կյանքը, բառի մահը, մայր լեզու, քույր լեզուներ և այլն։ Սա մի այլաբանություն է միայն, որ ուղիղ դատողությամբ ճիշտ չէ, որովհետև լեզուն մի օրգանական մարմին չէ, ինչպես բույսը կամ կենդանին, նա առանձին գոյություն ունեցող մի բան չէ և կա միայն մարդկային գիտակցության մեջ։

Բնության օրենքով ծնունդ կա այնտեղ, ուր կա ծնող և ծնված, որոնք ուրույն մարմիններ են և իրենց գոյությունը շարունակում են անջատաբար։ Նույնպես ծնունդը սկսվում է մի որոշ րոպեից, երբ կյանք է առնում ծնվողը։ Այս երեք պայմանները գտնում ենք բոլոր կենդանի էակների՝ թե անասունների, և թե բույսերի մեջ։ Կովը ծնում է մի հորթ. կովը և հորթը տարբեր մարմիններ են, ապրում են առանձին և ծնունդը եղել է դարնան սկզբին՝ այսինչ օրը։ Բայց լեզվի մեջ այսպես չէ։ Երբ գրաբարի հուր, հաց, ջուր բառերը աշխարհաբարի մեջ գործյալ մնում են հուր, հաց, ջուր, այստեղ ոչ մի ծնունդ չկա, որովհետև տարբեր մարմին չկա. խոսքերը գրբ. արտասուք գտնում է աշխ. արցունք, այստեղ գործյալ ծնունդ չկա, որովհետև երկուսն առանձին և միաժամանակ չեն ապրում, այլ առաջինը կամաց-կամաց ձևափոխվելով գտնում է երկրորդին և այն րոպեին, որ դգալի է երկրորդը, առաջինը արդեն գոյություն չունի։ Հորթի ծննդյան ժամանակը որոշ է, բայց ինչպես կարելի է որոշել արցունքը բառի ժամանակը, որ բազմաթիվ մանր ու անզգալի ձևափոխությունների մի վերջին օղակն է միայն։ Ծնունդ չի կարելի համարել նաև, երբ օտար մի բառ գալիս մտնում է մի լեզվի մեջ, և երբ գրագետները հնարում են նոր բառեր. առաջինը տարածում է միայն, երկրորդը՝ արդեն եղած նյութերի շահագործում կամ ձևափոխություն, բայց ոչ ծնունդ, այն մրքով, ինչպես էակն է ծնվում։ Մահ չէ գործյալ, երբ մի բառ կամ մի մասնիկ կամ մի քերականական ձև այլևս չի գործածվում. դա մոռացումն է և ոչ մահ։ Կենդանի էակի պատկեր է նույնպես, երբ ասում են՝ բառերի մրցում, երկու հոմանիշներից մեկի հաղթում, լեզուների և բարբառների մրցում, որի հետևանքը լինում է մեկի հաղթությունը, մյուսի նվաճումը, կամ մահը։ Լեզվի մահը՝ նրա անցումն է մի նոր վիճակի, կամ նրա խաղաց ջնջվելը։

Եթե մեր ձեռքին ունենանք մեղրամոմի մի գունդ, որ վերածենք խորանարդի, հետո բուրգի, հետո կոնի և այլն, չենք կարող ասել, թե գունդը ծնեց խորանարդ, խորանարդը ծնեց բուրգ, բուրգը ծնեց կոն և այլն։ Նույնպես, եթե ունենանք մեր ձեռքին մի կաթ սառույց, որ հալեցնելով՝ վերածենք ջրի, հետո էլ գոլորշիացնենք, չենք կարող ասել, թե սառույցը ծնեց ջուր, ջուրը ծնեց գոլոր-

չի, այլ՝ թե նույն նյութը կրեց դանազան ձևափոխություններ[1]։

Այսպես է նաև լեզուն։

Ոմանց կարծիքով լեզվի կրած ձևափոխությունները համապատասխան են Դարվինի տեսակների ծագման օրենքին, ինչպես ասում է հենց ինքը Դարվինը։ Կենդանական և բուսական տեսակները իրենց կենսունակությունը կարող են պահել 100 000 տարի։

Եգիպտոսում, պեղումների ժամանակ, գերեզմաններից դուրս բերին ցորենի հատիկներ, որոնք ցանելով ծլեցին. ուրեմն, նրանք իրենց կենսունակությունը 4000 տարվա մեջ դեռ չէին կորցրել։ Ճշլոն կղզում, ինչպես ասացինք, մնում է դեռ այն ծառը, որի տակ իբր Բուդդան քարոզում էր իր նոր կրոնը՝ շուրջ 2500 տարի առաջ։ Բայց չկա մի լեզու, որ 1000 տարի անփոփոխ մնացած լինի։

Պարսկերենը 1500 տարվա մեջ (մ. թ. ա. 6 — մ. թ. հ. ժ դար) առնվազն երեք ձև է ստացել, որ առանձին անուններով կոչում ենք՝ հին պարսկերեն, պահլավերեն և նոր պարսկերեն։ Հայերենը 1500 տարվա մեջ (6 դարից մինչև հիմա) առնվազն երկու ձև է ստացած, գրաբար և աշխարհաբար (չհաշվելով միջին հայերենը և արդի դանազան բարբառները)։ Բայց այս անվանակոչությունները դեռ ընդհանուր առմամբ աքարեր են, ապա թե ոչ անկարելի է որոշել թե ուր է սկսվում լեզուն և ուր վերջանում։ Եվ 6 դարից մինչև այժմ եթե մենք հայերենի համար դրինք երկու լեզու, նույնքան իրավացի կերպով կարող էինք դնել մի տասնյակ և ավելի լեզու և կամ ճիշտ հակառակը՝ միայն մի լեզու։ Բյուխները «Դարվինյան տեսության մասին» իր գրքում, խոսելով լեզուների ծագման ու էվոլյուցիայի մասին, ասում է, թե «եթե դժվար է որոշել բնական պատմության մեջ տեսակները զանազանությունից (variété), նույնպես և լեզուների և բարբառների մեջ. և ինչպես բնագետները տեսակների թվի մասին համաձայնած չեն, նույնպես և լեզվաբանները՝ լեզուների թվի մասին»։

---

[1] Հրաչյա, Լեզուները չեն ծնվիր, այլ իրենց ձևը կը փոխեն, «Թատրոն», 1874, № 2։

[2] Տես Darwin, On the origine of species, Նաև Շլյախեր՝ Տեսություն Դարվինի և լեզվաբանությունը (1863), Լիել՝ Հնություն մարդկային սեռի և այլն։

Ոմանց կարծիքով, խիստ ձևով նայելով խնդրին՝ կարելի է ասել, թե յուրաքանչյուր սերունդ ներկայացնում է մի լեզու, և յուրաքանչյուր անձ ներկայացնում է մի բարբառ, նույնիսկ յուրաքանչյուր անձի այս կամ այն վայրկյանը ներկայացնում է մի ենթաբարբառ, հատկապես ի նկատի ունենալով այն՝ երբ միևնույն մարդը խոսում է մի գեղուհու, մի իշխանի, մի աշակերտի, թե մի ընկերոջ հետ, և կամ այն նյութը, որի մասին նա խոսում է մի պաշտոնական հայտարարություն է, թե սիրային բացատրություն, հանդիմանություն մեկին, թե ընկերական խոսակցություն և այլն: (Նման միտք հայտնել են Վիկտոր Հյուգոն և Վանդրիեսը)[1]:

---

[1] Il y a autant de langages différents, que d'individus. (Vendriès, Le lang., 274).

ԳԼՈՒԽ Թ

ԼԵԶՎԻ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այն ժամանակ, երբ մարդ էակը նոր էր սկսում իր լեզուն ստեղծել, լինելով դեռ շատ վայրենի վիճակում, բնականաբար չէր կարող ճանաչել այն բոլոր առարկաներն ու գաղափարները, որ մենք այսօր գիտենք և դանազանում ենք առանձին-առանձին բառերով։ Հետևաբար և նրա բառարանը պիտի լիներ շատ աղքատ ու պիտի պարունակեր միայն այն բառերը, որ ներկայացնում էին նրա անձուկ շրջապատը և ավելի անձուկ աշխարհայացքը։ Բացի սրանից, այդ նույն վայրենին չէր կարող միանգամից ըմբռնել և հաղորդել այն բոլոր առնչությունները, որ մենք այսօր դնում ենք մեր խոսակցության մեջ առարկաների և գործողությունների փոխադարձ հարաբերությունը պարզելու համար։ Ոմանք, ինչպես ասել ենք, կարծում են, թե լեզուն նախապես մտքերի հաղորդումն է եղել։ Երբ վայրենին, օրինակի համար, ուզում է ասել, թե «Պտուղը ծառից ընկավ ցած», շարժուձևերով խոսելու ժամանակ մոտավորապես հետևյալ շարժումները պիտի աներ. նախ՝ ձեռքին կլորակ մի ձև պիտի տար, որ պտուղի պատկերն է. երկրորդ՝ թևը պարզելով դեպի վեր պիտի բարձրացներ՝ ցույց տալու համար ծառը. երրորդ՝ հանկարծ ձեռքը վերևից ցած պիտի շարժեր ուժով, որ նշանակում է ընկնելու գործողությունը. չորրորդ՝ ձեռքով պիտի ցույց տար հողը, որ է՝ ցածը գետինը։ Այսպես պիտի խոսեր այսօր էլ համրը, եթե նույն միտքը ուզենար արտահայտել։ Բայց մենք, որ սկզբից ևեթ դնում ենք ձայնական լեզուն, փոխանակ շարժուձևերի՝ դնենք մի-մի հոդավոր նշան՝ յուրաքանչյուր պատկերի համար. վերոհիշյալ նախադասությունը կդառնա. «Պտուղ ծառ անկում գետինն»։ Ահա լեզվի նախնական վիճակի մի նախադասություն, որ կարող ենք կոչել անվանական, որովհետև նրա մեջ կողք-կողքի շարված են միայն գոյական-

ները, կամ ավելի ճիշտ՝ արմատ-բառեր. առանց որևէ առնչության բառերի միջև, ուրիշ խոսքով՝ լեզու առանց քերականության։ Այսպես է կազմվում այսօր էլ նախագաստությունը մանկական բառերի մեջ. օրինակ՝ օշօշ կօկօր հաֆ ջշունը ոսկորը կերավ, տիտի տաֆտաֆ. ճո՞փ ջձի նատենք, հյուր երթանք։

Շուտով կյանքի պայմանները և շրջապատի պահանջները ստիպում են մարդուն հնարել որոշ ձևեր, որոնք առարկաների փոխադարձ առնչությունը քիչ թե շատ պարզեին կամ նախադասության ընդհանուր իմաստը ավելի մատնավորեին. այսպես՝ ես, դու, նա, առաջ, ճետո, այսօր, վաղը, կողքին և այլն։

Լեզվի այս առաջին վիճակը կոչվում է անջատականություն։ Կան լեզուներ, որոնք մինչև այսօր էլ լեզվական հորինվածքի այս նախնական դրությունը պահում են և կոչվում են անջատական լեզուներ։ Նրանց մեջ ամենից նշանավորն են՝ չինարենը, աննամերենը, սիամերենը, տիբեթերենը և այլն։

Լեզվի նախնական հորինվածքի պատկերը ավելի լավ բմբռնելու համար, համառոտ կերպով տալիս ենք այստեղ չինարեն և աննամերեն լեզուների քերականական հորինվածությունը, և մի կարճ հատված՝ իբրև դրծնական օրինակ։

Չինարեն բոլոր բառերը միավանկ և անփոփոխ են[1], ինչ պաշտոն էլ որ ունենան նախադասության մեջ. այն բոլոր մասնիկների փոխարեն, որոնք մենք գործածում ենք բառերի զանազան քերականական ձևերը երևան հանելու համար, չինարենը գործածում է այնպիսի բառ-արմատներ, որոնք իրենց ամրողջական նշանակությունը պահել են, և կամ՝ բառերի քերականական առնչությունները որոշում է նախադասության մեջ նրանց բռնած տեղով։ Այս բոլորից բացի չկան նաև խոսքի մասեր. միևնույն բառը միևնույն ձևով կարող է լինել գոյական, ածական և բայ, բայց նաև մասնիկ կամ վիրջավորություն։

Չինարենում գոյականը հոլովում չունի, երբ բառը նախադասության սկիզբը կամ բայից առաջ է դրված, ուղղական է. երբ բառից հետո է դրված՝ տրական կամ հայցական. երբ տրականը և հայցականը միասին են, առաջինը տրականն է դրվում, որով երկրորդը կլինի հայցական։ Սեռականի համար կա ti մասնիկը (միակը՝ որ չինարենում այնպես հաճախական գործածություն ունի), հայցականի համար կարելի է դնել նաև pa

[1] Seidel, Chin. gram.

Նախադասա բառը, որ բուն նշանակում է «առնել», իսկ տրակա-նի համար կարելի է գոյականից առաջ դնել kei[3] *«տալ» բառը։*

Հոդնակին նույնն է եզակիի հետ. թվեր կամ շատութիւն ցույց տվող դանագան բառեր կարող են ցույց տալ, որ բառը հոդնակի է։ Շատ կարևոր դեպքերում կարելի է կրկնել գոյակա-նը և կամ (եթե բառը անձ է ցույց տալիս) ավելացնել mən *«դասա» բառը։*

Դերանուններըը թիվ և հոլով կազմում են ճիշտ գոյական-ների նման։ Օրինակ.

žen	*մարդ,*	žən-žən	*կամ*	žən-mən	*մարդիկ*
wo	*ես,*	wo-mən	*մենք,*	wo-mən-ti	*մեր*
ni	*դու,*	ni-mən	*դուք,*	ni-mən-ti	*ձեր*
t'a	*նա,*	t'a-mən	*նրանք,*	t'a-mən-ti	*նրանց*

žən-ti ma	*մարդու ձին* wo-ti ma *իմ ձին*
kei wo čien	*տուր ինձ փող*
pa čien kei wo	*փող տուր ինձ*
kei wo-mən čien	*տուր մեզ փող*
ni-mən-ti ča	*ձեր թեյը*
wo čie kei lao-ye	*ես փոխ տվի պարոնին*
ես փոխտվի ց պարոն	
wo ai ni	*ես սիրում եմ քեզ*

Բայը նմանապես անփոփոխ է. չունի խոնարհում, դեմքն-ու թիվը իմացվում են նախադաս դերանունից. ժամանակը և եղանակը իմացվում են ըստ տեղի. օրինակ՝ lai *նշ. «գալ, արի, եկէք, գալիս եմ, գալիս էի, եկա, կգամ»։ Կարևոր դեպքերում, ավելի լավ որոշելու համար ժամանակը, դնում են. կատարյալի համար՝* la, *որ նշանակում է «կատարել, վերջացնել» կամ* kuo *«մոտով անցնել», ապառնիի համար՝* čiu *«այնուհետև»,* pi *«անշուշտ»,* k'uai *«իսկույն», «շուտով»,* čiang-lai *«ապագայում»,* xou-lai *«հետագայում»,* čiu-pi *«հետո, անշուշտ» բառերը, կամ* yāo *«ուզել» և կամ* k'uai liao *«շուտով վերջացնել» բառով, ան-ցյալ ապառնիի համար սրանց հետ ավելացնում են նաև* la, *կատարյալի իմաստը ավելի աստիճանելու համար՝* wan *«վեր-ջացնել»,* tē *«կատարել պրծնել»,* xāo *«լավ» բառերը։ Ահա մի քանի օրինակներ և նախադասութիւններ։*

wo lai — գալիս եմ, եկա, կգամ.
wo lai la
wo lai kuo
wo lai wan la — եկա
wo lai tē la

wo çie xāo la — գրեցի, գրել եմ
wo čiu lai
wo pi lai
wo čiu pi lai
wo k'uai lai — պիտի գամ
wo čiang-lai lai
wo xou-lai lai
wo yāo lai
wo pi yāo lai
wo čiu-lai la — ես եկած կլինեմ
wo čiu-pi lai la — իսկույն կգամ
wo lai k'uai liao

ni-ti	çien	pu	kou	wo čiu	čie	kei-ni	yi-tien
քո	փողը	չ	բավ է,	ես կ	փոխ առամ	քեզ	մի բան

wo	pu	yāo	čē-ko	çiāo	fing-cə
ես	չ(եմ)	ուզում	այս	փոքր	առնը

čē-ko	fan	çi	pu	tē
Այս	բրինձը	ուտել	չի	լինում

wan-šang	çu	mən	pu	xāo
Երեկո-յան	գնալ	դուրս	չէ	լավ

lao-ye-mən	mei	yo	lai
Պարոն-ները	չ	են	եկել

Աննամերենի մեջ բառերը միավանկ են. գոյականը անփոփոխ է, այսինքն՝ չունի ոչ թիվ, ոչ սեռ, ոչ հոլով, ոչ էլ կարող է առանալ ածանցիչ մասնիկներ։ Այն դեպքերում, ուր մենք դիմում ենք մասնիկների օգնության, նրանք գործածում են առանձին բառեր, որոնք հարաբերում են հիմնական բառին. ինչպես՝ an «ուտել», do «բան, առարկա», do an «ուտելիք, անուռդ,

պարենա, mai *«կարելը»*, t'ö *«գործավորը»*, t'ö mai *«դերձակ, կարող»*։

Սեռը որոշելու համար դնում են oŋ *«պարոն, տերը»*, ba *«տիկինը»*, trai *«տղան»*, gai *«աղջիկը»*, dük *«արուն»*, kai *«էգը»*, troŋ *«արուն»*, mai *«էգը բառերը. օրինակ՝* bo *«առավարը»*, bo kai *«հովը»*, bo dük *«ցուլ, եզ»*, ga troŋ *«աքլորը»*, ga mai *«հավը»*։

Նվազական կազմելու համար դնում են nʸo *«փոքրը» կամ* kon *«տղան», իսկ առավելականի համար* lön *«մեծը», ինչպես՝* tçuoŋ *«պանդը»* tçuoŋ nʸo *«բուժոժը»*, tau lön *«նավը»*, ŋüa *«ձին»*, ŋüa kon *«քուռակը»*, tço *«շունը»*, tço kon *«լակոտը»*։

Հոգնակի կազմելու համար դնում են ka, het, het t'ay, het ka, moi, may, nʸüŋ, kak, tçuŋ *բառերը, որոնք նշանակում են «մեծեն, բոլորը», և կամ գոյականը կրկնում են. օրինակ՝* moi ŋay *կամ* ŋay ŋay *«օրերը»*։

Հոլովումը հետևյալ ձևով է.

Սեռականի համար դնում են kua *«բան, իր, առարկա», տրականի համար՝* tço *«տալը», բացառականի համար՝* böi *կամ* tço k'oi *«մի բանից», ինչպես՝* kua me *«մորը»*, tço me *«տրա-կան՝=մորը»*, böi me *«մորից»*։

Բայը խոնարհում չունի, դերանունը բավական է դեմքը և թիվը ցույց տալու համար, իսկ ժամանակը կարելի է իմանալ որևէ մակբայի միջոցով.—ծայրահեղ դեպքում դնում են. ներկան ցույց տալու համար՝ ray *«ներկայումս, հենց հիմա», անցյալը ցույց տալու համար՝* ko *«ուներևնալը», da «արդեն», կատարյալը ցույց տալու համար՝* roi *«վերջացնելը».—նախադաս* da *(կամ* ko*) և միևնույն ժամանակ հետադաս* roi *ցույց են տալիս գերակա-տարը, se կամ* fai *«պարտավոր լինելը» ցույց են տալիս ապառ-նին* (Dirr, Gr. annam.)։

Իբրև նմուշ դնում ենք հետևյալ հատվածը, որ վերցնում ենք Դիռի (Dirr) *քերականությունից (էջ 65—68 և 93)*։

Մի նմուշ աւնամերենից

Ko hai vö tçoŋ·	Vö t'i it-oi t'iet-t'a
(ուներևնալ) երկու կին այր.	*կին արդ քիչ-մի միամիտ*
երկու ամուսիններ կայինն.	*կինը մի քիչ միամիտ,*

tçoŋ t'i k'uŋ k'uŋ yai yai . Vi no
այր ևս ապուշ-մապուշ խեղճ-մեղճ . որովհետև նա
մարդն էլ մի քիչ ապուշ և խեղճուկ էր . որովհետև նա

k'ō k'oŋ di k'ŋ biet tçuyen gi
ապուշ ոչ երթալ ոչ դիտեննալ պատմութեան ինչ
ապուշ էր շատ, ոչ մի բան չգի-

het. Vō no ko maŋ . da töi
բոլոր կին նա ունեննալ կրկ . արդեն հասնել
տեր. կինը հղի էր . հասավ

ŋay nam bep. San no ko ŋghe
օր պառկել վառարան նա ունեննալ լսել
ապառվելու օրը . նա լսել էր

ŋüōi ta noi : he la tço de t'i
մարդ մենք ասել բոլոր լինել շուն ծնել յայնժամ
այն խոսքը թե՝ բոլոր շները երբ ցնկնում

yu lam, t'üōŋ, t'üōŋ, hay kan.
չար շատ սովորաբար սիրել կծել
են, շատ չար են լինում և հաճախ սիրում են կծոտել։

No mōi ŋghi no yūt min^{y}
նա յայնժամ մոտծել նա դողալ մարմին
նա մոտծեց այս մասին և սկսեց դողալ։

„Tça tça ! vō min^{y} de ko k'i
օյ օյ . ինչ մարմին ծնել ունեննալ ժամանակ
օյ օյ . կնիկս ծնի, թևերս

no yū lam.“ Nen k'i no dem
նա չար շատ դրա վրա ժամանակ նա բերել
շատ չարանա . դրա վրա երբ բերում է

köm tço vō, t'i no duŋ ça ça.
բրինձ տալ կին, յայնժամ նա կանգնել հետու հետու
ճաշը կնկան, նա մի քիչ հետու է կանգնում

k'ŋ yam leo lai gan;
ոչ համարձակել գալ մոտ
և չի համարձակվում մոտենալ,

Bo t'üöŋ yi ki,
դրությունը պարմանալի տարօրինակ
Այս շատ տարօրինակ դիրքը

vö no t'ay vay tūk kūöi No mōi
կին նա տեսնել այսպես գրգռել ծիծաղել նա այժմ
կինը տեսնելով, սկսեց ծիծաղել։ Նա այս ժամանակ

noi troŋ minʸ no . Ay! ho noi t'at.
ասել մեջ մարմին նա ա՛յ, մարդիկ ասել ճշմարիտ
ասաց ինքնիրան . Ա՛յ ճիշտ են ասում,

he de t'i huŋ No vak kay lai
բոլոր ծնել յայնժամ չար նա կրել գայլազան գալ
ամեն ծննդական չար կլինի. Նա բերեց մի գայլազան

no dap vö no mot kay . Kon ay
նա ձեծել կին նա մի գայլազան (հոդ) նա
և ձեծեց կնոջը . Նրա կա-

non ya yeu goi tçay
փախուկ կաշի թուլ հիվանդ ծուռնկ վազել
շին փախկացել, ծնկները կթոտ էին, չկարողացավ

k'ŋ kip tçet tūöi tai yūöŋ
ոչ ոչ ժամանակին մեռնել թարմ վրա անկողին
փախչել և տեղն ու տեղը մեռավ, երկանց

ku.
պահել.
անկողնում.

Միայն չինարենն ու աննամերենը չեն, որ անջատական լեզուներ են, ուրիշ լեզուներ էլ պատկանում են նրանց թվին, օրինակ՝ լաոսերենը, որ սիամերենին նման մի լեզու է, չունի խոսքի մասեր. բոլոր բառերը անփոխոխելի են. միևնույն բառը կարող է լինել գոյական, ածական, բայ, մինչև անգամ մակբայ կամ նախադրություն։ Դերանունը և բայը, կողք-կողքի դրված, կազմում են ներկայի խոնարհումը. ինչպես՝ khō'i khiē'n *«ես գրել=գրում եմ», ավելացնելով սրա վրա* phuēm *«ընթացքում», կստացվի ներկայի շարունակականը, ինչպես* khō'i phuēm khiē'n *«ես կգրեմ կոր». անցյալի համար դնում են* dai *«ունենալ» կամ* lê'o *«արդեն», ինչպես՝*

khō'c	dai	khiē'i	գրել եմ, գրեցի
»	khiē'n	lê'o	» »
»	dai	khiē'n lê'o	» »

Ապառնին կազմելու համար ավելացնում են si', tʸāk, tʸ āh *բառերը, որոնք նախադաս են բային, ինչպես՝*

si' khiē'n *պիտի գրեմ։*

Անկատարն ու գերակատարը իմացվում են հաջորդական բայից։ Անցյալի ապառնին կազմվում է պարզ ապառնիի ձևերի վրա ավելացնելով նաև dai, *ինչպես՝*

si'	dai	khiē'n	գրած կլինեի, կգրեի		
tʸ āk	»	»	»	»	»
tʸ āh	»	»	»	»	»

Մարդկության մեջ ընդհանուր օրենք է, որ երկրորդական համարված բառերը նվազ ուշադրություն, նվազ ջանք ու ճիգ գրավեն։ Մյուս կողմից՝ բնական օրենք է, որ հաճախակի գործածված բառերը ավելի մաշվեն ու տկարանան։ Այսպես էլ անջատական շրջանի նախադասության երկրորդական բառերը, արտասանվելով ավելի թույլ շեշտով և հաճախակի գործածությամբ իրենց առջից ու վերջից հպավվելով՝ առաջ բերին վերջապես բառերի մի կրճատ ձև, որ մենք այսօր կոչում ենք մասնիկ։ Մասնիկներն, ուրեմն, նախապես ամբողջական բառեր էին՝ ձևվով բոլորովին հավասար արմատ-բառերին և միայն գործածության մեջ երկրորդական արժեք ունեին, որով և հասան մասնիկի վիճակին։

Օրինակի համար հին հայերենի մեջ պիտի առանձին և անկախ բառ է «պետք է, հարկավոր է, կարևոր է» նշանակությամբ. հմմտ. Եղիշե. Բայց ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի։ Աշխարհաբարի մեջ այդ նույն պիտի-ն դարձավ ապառնի կազմելու հատուկ միջոց, որով բառը իր անկախությունը կորցրեց ու դարձավ երկրորդական. այս վիճակի մեջ հարատև գործածությամբ նա անընդհատ մաշվեց և բարբառների մեջ դարձավ մասնիկ՝ պիտ, պի, տի, պ, տ, ձևով. պասեմ, տասեմ և այլն։ Գերմ.—heit «-ություն» նախապես բառ էր. այսպես հբգ. և մբգ. heit *«կերպ, ձև», որով կազմված է՝* schönheit *«գեղեցիկ ձև». գերմ.* lich *նշ. «մարմին, արտաքին երևույթ», հիմա մասնիկ է, օրինակ՝* mannolich *նշանակել է «մարդակերպ», իսկ հիմա՝* männlich *«մարդկային»։ Սրա անկախ ձևն է գերմ.*

Leiche «դիակ», հունգ. nö «կին» բառից առաջացել է nē իգ. մասնիկը, ինչպես՝ mošonē «լվացարարուհի», bâratnē «բաբեկամուհի» և այլն։ Ֆրանս. finirai<լ. finire habeo-ից, ֆրանս.—ment<լ. mente «մտօք, մտքով» առանձին բառ է. bonnement «բարի մտքով» բարդ բառ էր, իսկ հիմա՝ ածանցավոր։ Բարդության մեջ առանձին բառից մասնիկի անցնելու շատ դեղեցիկ մի օրինակ տալիս է ռուսերենը։ Այս լեզվում ժողովրդական բարբառի մեջ գործածական էր с մասնիկը, որը դրվում էր մի քանի բառերի ծայրին և արտահայտում էր խոսողի ծառայական (կամ առնվազն շատ քաղաքավարական) վերաբերմունքը դեպի իր ազնվական խոսակիցը։ Այսպես էին ռուս. да-с «այո», нет-с «ոչ», так-с «այդպես է», пожалуйте-с «համեցեք»։ Արդ՝ այս с ուրիշ բան չէ, եթե ոչ ռուս. сударь «տեր» բառի համառոտությունը։ Նախապես ասել են да сударь «այո, տեր» և այլն, հետո կրճատվելով ստացվել է մի աննշան մասնիկ։

Այստեղ սկսվում է լեզվի կենսաբանության երկրորդ վիճակը, ուր յուրաքանչյուր արմատի վրա դրված ենք տեսնում այլևայլ մասնիկներ, որոնք որոշում են ընդհանուր գաղափարի մասնավոր պարագաները կամ առարկաների միջև եղած առընչությունները։ Լեզվի այս վիճակը կոչվում է կցականություն։ Բազմաթիվ լեզուներ կանգնած են կենսաբանական այս երկրորդ շրջանի վրա և կոչվում են կցական լեզուներ։

Կցական լեզուների դասական օրինակը թյուրքերենն է։ Մի գաղափար տալու համար՝ դնում ենք այստեղ նրա քերականական հորինվածության ամիսուի պատկերը։

Տաճկերենի մեջ հոլովումը կազմվում է ուղղականի վրա ավելացնելով հետևյալ հետմասնիկները.

սեռականի համար	in, ən
տրականի համար	e, a
հայցականի համար	i, ə
բացառականի համար	den, dan
ներգոյականի համար	de, da
դործիականի համար	(i) le, (ə) la

Հոգնակին կազմվում է ler կամ lar մասնիկով, որի վրա կարող ենք ավելացնել միևնույն հոլովական մասնիկները, ինչ որ եզակիում։ Օրինակ՝

եզակի		հոգնակի
Ուղ. ev	«տուն»	ev-ler

Սեռ.	ev-in	ev-ler-in
Տր.	ev-e	ev-ler-e
Հյց.	ev-i	ev-ler-i
Բցռ.	ev-den	ev-ler-den
Ներգ.	ev-de	ev-ler-de
Գործ.	ev-ile	ev-ler-ile

Դերանունների հոլովումն էլ նույն կազմությունն ունի, ինչ որ գոյականներինը,— միայն հոգնակին տարբեր է. Այսպես՝

Ուղ.	ben *ես*	biz *մենք*
Սեռ.	ben-im (*փխ.* ben-in)	biz-im
Տր.	ban-a (*փխ.* bene)	biz-e
Հյց.	ben-i	biz-i
Բցռ.	ben-den	biz-den
Ներգ.	ben-de	biz-de
Գործ.	benim-ile	biz-im-le

Ուղ.	sen *դու*	siz *դուք*
Սեռ.	sen-in	siz-in
Տր.	san-a	siz-e
Հյց.	sen-i	siz-i
Բցռ.	sen-den	siz-den
Ներգ.	sen-de	siz-de
Գործ.	senin-le	sizin-le

Ուղ.	o *նա*	on-lar *նրանք*
Սեռ.	on-ən	on-lar-ən
Տր.	on-a	onlar-a
Հյց.	on-ə	on-lar-ə
Բցռ.	on-dan	on-lar-dan
Ներգ.	on-da	on-lar-da
Գործ.	onən-la	on-lar-la

Սեռական ածականների փոխարեն գոյականը սեռնում է զանազան սեռական հոդեր, այսպես՝

ev-im *տունս* ev-in *տունդ* ev-i *տունը*
ev-im-iz *մեր տունը* ev-in-iz *ձեր տունը* ev-ler-i *նրանց տունը*

Սրանք հոլովվում են ճիշտ գոյականների նման, օրինակ՝

Ուղ.	ev-im	ev-ler-im
Սեռ.	ev-im-in	ev-ler-im-in
Տր.	ev-im-e	ev-ler-im-e
Հյց.	ev-im-i	ev-ler-im-i
Բցս.	ev-im-den	ev-ler-im-den
Ներդ.	ev-im-de	ev-ler-im-de
Գործ.	ev-im-le	ev-ler-im-ile

Ժամանակները շատ հարուստ է։ Հիշվելով օժանդակով կազմված պանապան ձևերը կան հետևյալ 25 պարզ ձևերը (դնում ենք միշտ եզ. գ. դեմքը)։

Արմատը sev «սիրել», *անորոշը՝* sev-mek, հրմ. sév

Ներկա— sev-er

Անմիջական ներկա— sev-iyor

Անկատար— sev-er-idi × *անորոշ անկ.* sev-iyor-əməš

Անմիջական անկ.— sev-iyor-ədə

Կատարյալ— sev-di

Հարակատար— sev-miš (dir) × sev-miš-imiš

Գերակատար— sev-miš-idi × sev-di-idi

Ապառնի— sev-eǰek (dir) × sev-eǰek-imiš

Անցյալ ապ.—sev-eǰek-idi

Ըղձական ներկ.— sev-e

Ըղձական անկ.— sev-e-idi

Ստոր. ապ.— sev-se

Ստոր. անկ.— sev-se-idi

Ստոր. ներկ. անմիջ. — sev-iyor-ise

» » sev-er-se

» *անկ.* sev-iyor-ise-idi

» » sev-er-se-idi

» *գերակ.* sev-miš-ise

» *կատր.* sev-di-ise

» *ապ.* sev-eǰek-ise

» » *անց.* sev-eǰek-idi-ise

Հարկադրական— sev-meli

» *անկ.* sev-meli-idi

sev-meli-imiš

Ստոր. հրկ. sev-meli-ise

» » *անկ.* sev-meli ise-idi

Բարդ ձևերը պիտի հիշենք ձևաբանության մեջ։

Դեմքերի վերջավորությունները ցույց տալու համար առնում ենք միայն պարզ ներկայի պատկերը, որին նման են նաև մյուսները։

sev-er-im	sev-er-iz
sev-er-sin	sev-er-sin-iz
sev-er	sev-er-ler

Ավելի հետաքրքրական են բայի ածանցական ձևերը, որոնք կազմվում են արմատի վրա ավելացնելով հետևյալ մասնիկները.

Կրավոր.	sev-il-mek
Անցողական	sev-dir-mek
Կրկին անց.	sev-dir-t-mek
Անցողական կրավ.	sev-dir-il-mek
	sev-il-dir-mek
Կրավ.—չեզոք.	sev-in-mek
» » *կրավ.*	sev-in-il-mek
Կրավ.—չեզ. անցող.	sev-in-dir-mek
» » » *կրավ.*	sev-in-dir-il-mek
Փոխադարձ	sev-iš-mek
» *կրավ.*	sev-iš-il-mek
» *անց.*	sev-iš-dir-mek
» » *կրավ.*	sev-iš-dir-il-mek
Կարողական	sev-e-bil-mek
» *կրավ.*	sev-il-e-bil-mek
» *անց.*	sev-dir-e-bil-mek
» »	sev-dir-il-e-bil-mek
» *կրավ. չեզ.*	sev-in-e-bil-mek
» » » *կրավ.*	sev-in-il-e-bil-mek
» » » *անցող.*	sev-in-dir-e-bil-mek
» » » » *կրավ.*	sev-in-dir-il-e-bil-mek
» *փոխադարձ*	sev-iš-e-bil-mek
» » *կրավ.*	sev-iš-il-e-bil-mek
» » *անց.*	sev-iš-dir-e-bil-mek
» » » *կրավ.*	sev-iš-dir-il-e-bil-mek

Այս բոլորը կարող են ունենալ իրենց բացասական ձևը, որ կազմվում է անորոշի մասնիկից անմիջապես առաջ դնելով me *կամ* ma *մասնիկը.*

Փոխադարձ բացաս. sev-iš-me-mek

Կարող. վիճ. անց. կրավ. բցս. sev-išdir-il-e-bil-me-mek

Ահա օժանդակով կազմված բայական մի բարդ ձև.

sev-in-dir-il-e-bil-é-me-miš ol-meš ol-sa-ədə-m

«Եթե հրճվել տրվելու կարողացած եղած չլինեի»:

Վերջապես տալիս ենք մի կարճ նախադասություն, բաղկացած 5 բառից, որ սակայն ունի 45 մասնիկ!—

Al-də -γə-m-əz-la al-dər-aǰak-lar-ən-əz-ə

Մեր առածները և ձեր առնել տալիք բանները.

ve ev-ǰiγ-ez-ler-im-iz-de-ki-ler-im-iz-den-de

և մեր շատ փոքրիկ տներում գտնված մեր իրերիցն էլ նրանք, որ

get-ir-t-der-e-bil-dik-ler-im-iz-i hisab-laš

մենք կարողացանք բերել տալ հաշվակցել

dər-arak halal-la-š-a-bil-dir-il-é-me-meli-mi-iz

տալով արդյոք՝ չպիտի կարողանանք իրար հետ հաշտեցնել:

Թյուրքերենի օրինակը չպետք է ենթադրել տա, որ կցականությունը միայն հետամասնիկների հարադրությամբ է. կան նաև նախամասնիկների հարադրությամբ կազմված կցական լեզուներ: Այսպես են աֆրիկյան բանտու լեզուները և պոլինեզյան լեզուները. այսպես է Ամերիկայի կարրիեր (Բրիտանական Կոլումբիայի Աֆաբասկ երկրում) կոչված ժողովրդի լեզուն, որ չափազանց մանրակրկիտ ուսումնասիրությամբ քննել է Մորիս անունով ամերիկացի քարոզիչը (The Carrier language, Վիեննա, 1932, հտ. 2 միասին, 1335 մեծադիր էջ)։ *Այս լեզուն ունի մինչև 500 (!) նախամասնիկ, որոնք մի առ մի և երկարորեն քննված են նույն աշխատության մեջ (հտ. 1, էջ 555—660 և հտ. 2, էջ 7—127): Օրինակ՝* na-hwe-n-e-s-gen *«նորից եմ սկսում ես երգել», ուր արմատն է* gen *«երգ, երգել», իսկ մյուս 5 նախդիրները ցույց են տալիս՝* նորից, ես *(առաջին դեմքը),* ներկա *և այլն (անդ. հտ. 1, էջ 223):*

Այսպես են նաև վրացերենը, աբխազերենը և մյուս կովկասյան շատ բազմաթիվ լեզուները, որոնք գործածում են միաժամանակ թե նախամասնիկներ, և թե հետամասնիկներ: Այս հետաքրքրական լեզուների կազմության վրա պիտի խոսենք բային նվիրված հատորում:

Այս ճանապարհն են բռնել նաև արդի եվրոպական լեզուները, որոնք հոդերը, անձնական դերանունները և բայերի գոնազան օժանդակ ձևերը հավաքելով բառի ու բայի սկիզբը, ներկայացնում են նախամասնիկներով կցական լեզվի պատկեր, ինչպես՝

Je	te	ne	le	dis pas
ես	քեզ	չեմ	այդ	ասում

Աբխազերենը սիրում է խոսքի գոնազան մասերը նախամասնիկների ձևով դնել բայի վրա և ամբողջից մի բայ կազմել ինչպես՝

i-	u-	ccə-	s-ĭ-u-eit	= քեզ հետ ուտում եմ այն
այն	դու	հետ	ես	ուտել

ԴԱՍԱՆՇԱՎՈՐ ՏԻՊ

Կցական լեզուների խմբի մեջ մի առանձին տիպ են կազմում այն լեզուները, որ կարող ենք կոչել դասանշավոր լեզուներ։ Այս տիպին են պատկանում հատկապես աֆրիկյան լեզուները, մանավանդ՝ բանտու լեզուները։

Դասանշավոր լեզուների մեջ բոլոր գոյականները բաժանված են դասերի. ընդամենը կա 8 կամ 10 դաս. և յուրաքանչյուր դասի համար կա մի որոշիչ մասնիկ (դասանիշ), որը անհրաժեշտորեն անխախտ պիտի կցվի նույն դասին պատկանող բոլոր գոյականների սկզբին։ Բանտուի համար առանց այդ նախամասնիկի գոյական անուն գոյություն չունի։

Անշուշտ այն ժամանակ, երբ դասանշավոր լեզուները նոր էին հորինում այս տիպի մի կազմություն, բնականաբար գոյականները բաժանել էին որոշ սկզբունքով. օրինակ՝ ապրող էակները կազմում էին մի դաս, բույսերը կազմում էին մի երկրորդ դաս, անասունները՝ մի երրորդ դաս, հանքեղենները՝ մի չորրորդ դաս և այլն։ Ժամանակ անցնելով՝ դասերը խառնվեցին, այնպես որ այսօր դարմանալի է մեզ համար տեսնել, որ հանկարծ տունը, քաղաքը և նավը պատուղների հետ միևնույն դասին են պատկանում։

Նմանապես լեզուների այդ նոր կազմության ժամանակ, անշուշտ իրրև դասանիշ գործածվող մասնիկները ամբողջական բառեր էին՝ որոշ ու հայտնի նշանակությամբ։ Բայց ինչպես որ

ամեն երկրորդական և օժանդակ բառ հետագայում մաշվելով վերածվում է մի մասնիկի, նմանապես և՝ սուլն դասանիշ բառերը։

Եվ այսօր, ինչպես որ մեզ համար դժվարին մի բան է սովորել ու իմանալ օրինակ, ռուսերենի ամեն մի գոյականի արական, իգական կամ չեզոք լինելը, նմանապես և ավելի դժվարին ու անըմբռնելի բան է սովորել ու իմանալ դասանշավոր լեզուների գոյականների այդպիսի դասակարգերը։

Այս բանը գեղեցիկ կերպով ցույց է տալիս, օրինակ՝ միկրոնեզյան տրուկ (truk) լեզուն, որ նույնպես ունի դասանիշներ՝ թևև տարբեր տեղում գործածված։ Այսպես im նշանակում է «առուն» և դարձել է նաև «կտուր ունեցող շենքերի» դասանիշը. ufouf նշանակում է «զգեստ» և uf ձևով դարձել է «շորեղեն» նշանակող բառերի դասանիշը։

Զանազան լեզուների օրինակից գիտենք, որ բառերը նախադասության մեջ բոլորովին անկախ և ինքնագլուխ չեն, այլ կապված են իրար հետ որոշ համաձայնության համբ. օրինակ՝ ածականը գոյականի հետ, ենթական բայի հետ՝ սեռով, թվով կամ հոլովով։ Այսպես էլ դասանշավոր լեզուների մեջ ածականը, թվական անունը, դերանունը և մինչև անգամ բայը պետք է կրի այն դասանիշը, որը կրում է նույնին պատկանող գոյականը։ Այսպիսով գոյականից դուրս գտնված բոլոր բառերը ըստ դասերի ստանում են զանազան ձևեր և, մյուս կողմից՝ միևնույն նախադասության մեջ շարունակ կրկնվում են միևնույն դասանիշները։

Իբրև գործնական օրինակ դասանշավոր տիպի լեզուների, առնենք աֆրիկյան սվահիլի լեզվի կազմությունը (ըստ Seidel, Praktische Grammatik der Suaheli-sprache, 2-րդ տպ.)։

Սվահիլի լեզվի մեջ գոյականները բաժանվում են 8 դասի։

Ա դասի մեջ մտնում են մարդիկ և շնչավոր էակները. դասանիշն է m-· օրինակ՝ mtu «մարդ», mtumwa «ստրուկ». mke «կին», mtumiši «ծառա», mjakazi «գերուհի», mganga «բժիշկ» mpiši «խոհարար» և այլն։

Բ դասի մեջ մտնում են ծառերը, բույսերը և զանազան անշունչ իրեր. դասանիշն է դարձյալ m-. ինչպես՝ mti «ծառ», mtungi «կուժ», mwiko «շերեփ», mfuko «գրպան», mšipi «գոտի» և այլն։

Գ դասի մեջ մտնում են դանազան առարկաներ՝ բառն նշանակությամբ. դասանիշն է ki-. *ինչպես՝* kitu «բան, առարկա», kisu «դանակ», kiǰiko «գդալ», kioo «հայելի», kikapu «կողով» և այլն:

Դ դասի մեջ մտնում են ամեն տեսակի իրեր, հատկապես արաբերենից փոխառյալ բառերը. դասանիշն է n-, *որ հաճախ պակասում է (հետո է ընկել), մանավանդ արաբերեն բառերի մեջ. օրինակ՝* nguo «շոր», njia «ճամբա», nyumba «տուն», ndizi «բանան», kahawa «սուրճ» և այլն:

Ե դասի մեջ մտնում են վերացական բառեր, կատեգորիաներ և արաբերենից առնված անձ ցույց տվող անուններ, դասանիշը եղել է ǰi-, *որ հիմա ընկել է և միայն միավանկ բառերի սկզբում է մնում. ինչպես՝* ǰiwe «քար», ǰua «արեգակ», gari «կառք», maǰi «ջուր», yai «ձու» և այլն:

Զ դասի մեջ մտնում են վերացական բառերը և մասամբ ուրիշ բառեր. դասանիշն է u. *ինչպես՝* uzuri «գեղեցկություն», ugonǰwa «հիվանդություն», urefu «երկարություն», upepo «քամի», umeme «կայծակ», utambi «պատրույգ» և այլն:

Է դասի մեջ մտնում են բոլոր բայերի անեղևույթները, որոնք իրրև գոյական են գործածվում. դասանիշն է ku-. *ինչպես՝* kupenda «սիրել», kupiga «զարկել, ծեծել» և այլն:

Ը դասն է կազմում միայն՝ արաբերենից փոխառյալ mahali «տեղ, վայր» *բառը, որ դասանիշ չունի:*

Երբ ուզում ենք մի բառ հոգնակի դարձնել, դասանիշը փոխում ենք մի ուրիշ ձևով. օրինակ՝ Ա. դասի մեջ m *դառնում է* wa, *ինչպես՝* mtu «մարդ», watu «մարդիկ», mganga «բժիշկ», waganga «բժիշկներ», mke «կին», wake «կանայք» և այլն: *Ըստ այսմ մյուս դասերը առանում են՝*

Բ դաս — mi.
Գ դաս — vi.
Դ դաս — *նույն է եզակիի հետ.*
Ե դաս — ma.
Զ դաս — n.
Է դաս — *չունի հոգնակի.*
Ը դաս — *նույն է եզակիի հետ:*

Երբ գոյականը առանում է ածական, այդ ածականը քե եզակի, և քե հոգնակի թվում վերցնում է այն դասանիշը, որ

ունի իր դոյականը. օրինակ՝ zuri «դեղեցիկ» բառը լինում է՝

ա դաս —	եզ. mzuri	հոգ. wazuri
բ դաս —	mzuri	mizuri
դ դաս —	kizuri	vizuri
դ դաս —	nzuri	nzuri
ե դաս —	zuri	mazuri
զ դաս —	uzuri	nzuri
է դաս —	kuzuri	—
ը դաս —	pazuri	—

Ըստ այսմ ասում են՝

եզակի			հոգնակի
mtu mzuri	դեղեցիկ մարդ		watu wazuri
mti mzuri	»	ծառ	miti mizuri
kisu kizuri	»	դանակ	visu vizuri

Ո՛չ միայն պարզ ածականները, այլև բոլոր թվականները, ստացական, ցուցական, հարցական, հարաբերական և անորոշ ածականները բոլորը համաձայնում են թե եզակի, և թե հոգնակի առանձին-առանձին ձևերով իրենց համապատասխան դոյականի հետ։ Ավելորդ ենք համարում մի առ մի բերել այս ձևերը, բայց հիշում ենք մի քանի օրինակներ։

vikombe	vizuri	viwili	2 դեղեցիկ բաժակ
բաժակք	դեղեցիկք	երկու(ք)	
visu	vizuri	viwili	hivi
դանակք	դեղեցիկ	երկու(ք)	այնոքիկ

kitu kipi ? ո՞ր բանը — հոգ. vitu vipi ?
vitu vyako քո բանները
vitu vyangu իմ բանները

Հոլովման մեջ սեռականի մասնիկն էլ թե եզակի, և թե հոգնակի փոփոխվում է ըստ դոյականի դասի (հատկացյալի և ոչ հատկացուցչի). ինչպես՝

mtumwa	wa	mzungu	գերի եվրոպացւոյ
watumwa	wa	mzungu	գերիք »
mkate	wa	»	հաց »

mikate	ya	»	հացք	»
kisu	ča	»	դանակ	»
visu	vya	»	դանակք	»

Անձնական դերանվան երրորդ դեմքը (նա, նրանք) քն եզակի, և քն հոգնակի փոփոխվում է ըստ դասի. այսպես.

	եզ.	հոգ.		եզ.	հոգ.
ա դաս	a	wa	*և դաս*	li	ya
բ »	u	i	*ղ »*	u	zi
գ »	ki	vi	*է »*	ku	—
դ »	i	zi	*ը »*	pa	—

Այս բոլորի մեջ բայը անփոփոխ է, դեմքը ցույց է տալիս միայն դերանունը, իսկ եղանակն ու ժամանակը որոշում են na, li, ka, ta, ki, me *և այլն մասնիկները, որոնք միշտ անփոփոխ են։*

Եզակի և հոգնակի ա և բ դեմքերի մեջ բայի խոնարհումը դրած չունի դասանիշների հետ, բայց երրորդ դեմքի մեջ, քն եզակի, և քն հոգնակի, երևան է գալիս դասանիշը։ Սվահիլի լեզվի հատկությունն է, որ երբ ենթական երրորդ դեմքի է, գոյականի հետ կցվում է նաև երրորդ դեմքի դերանունը, ըստ գոյականի դասանիշի, ինչպես նշանակեցինք քիչ առաջ. այսպես՝

mwanamke	a	na	mtungi
կինը	*(նա)*	*ունի*	*կուժ*
watoto	wa	na lala.	
երեխաները	*(նրանք)*	*քնում են։*	

Ինքնությունները ցույց են տալիս, որ

1) աֆրիկյան բոլոր լեզուները ունեցել են նախապես դասանշանավոր դրություն.

2) դասերը և հետևաբար նաև դասանիշները եղել են նախապես ավելի բազմաթիվ, քան այժմ, յուրաքանչյուրը ունեցել է որոշ իմաստ և նրանց գործածությունը ճշտված՝ նույն դասին պատկանող բոլոր բառերի համար։

3) հետագայում դասանիշները կորցնում են իրենց իմաստը, սկսում են խառնվել իրար և նրանց թիվը շարունակ պակասում է։

Ըստ Մայնհոֆի բանտու լեզուները ունեցել են 21 դաս, որոնք հետո հետզհետե պակասելով այժմ իջել են մինչև 6-ի։ Այսօր դասանիշների ամենամեծ թիվը ցույց է տալիս բանտու լեզուներից սուկումա (sukuma) լեզուն, որ ունի 18 դաս. կիկոնգա (kikonga) լեզվի մի բարբառը ունի 15 դասանիշ, մյուս լեզուներից՝ կինգան (kinga) ունի 13, կագուրու, տիվ, ջինդի լեզուները ունեն 11, լուն յորո, մաշոնա, լալա, կիկամբի՝ ունեն 10, կամբա, տաիտա, յաո, շոնա ունեն 9, զուլու, սենա, Բոնգա-շոնգա, չիլուբա, ցվա, քաֆիր, նյանջա, կալանգա, շիլենգե ունեն 8, բենդա, սեսուտո, նգոնի՝ 7, յաունդե (jaunde)՝ 6 դաս, ուրիշները՝ ավելի քիչ։

Կան լեզուներ էլ, որոնք հասցրել են նրանց Թիվը չորսի կամ նույնիսկ երկուսի։ Այս վերջիններդ դասանիշը վերածել են համարյա արականի և իգականի, կամ շնչավորի և անշունչի նշանների։

Վերջապես՝ կան լեզուներ, որոնք բոլորովին ջնջել են դասանիշը, պահելով որոշ բառերի մեջ անջատ հետքեր, այնպես որ համեմատական քերականությունը միայն կարող է տեսնել որևէ դասանիշ։ Բայց հաստատելու համար, որ այդ լեզուներն էլ նախապես ունեցել են դասանիշներ, կարելի է հիշել այն հանգամանքը, որ այդ լեզուների այսինչ բարբառը չունի դասանիշ, բայց մի ուրիշ բարբառը ամբողջությամբ պահել է։

Աֆրիկյան գանգ լեզուն դասերը իջեցրել է միայն երեքի, և սրանցից էլ միայն առաջինը կարելի է կոչել իսկական դաս, որովհետև եզակին ունի la դասանիշը, որի հոգնակին էլ լինում է lu։ Այս դասը բովանդակում է գործող անձինք (-ող, -իչ), տեղի անուններ և այլն։ Երկրորդ դասը բովանդակում է գլխավորապես աղգականական անուններ, դասանիշ չունի և հոգնակին էլ անկանոն է։ Երրորդ դասը բովանդակում է լեզվի Ճեպյալ բոլոր բառերը, ոչ դասանիշ ունի, և ոչ էլ հոգնակի։

Աֆրիկյան բասա լեզուն էլ դասանիշները սկսել է կորցնել. որոշ բառեր արդեն առանց դասանիշի են գործածվում։ Հոգնակիներն էլ, թեև դասանիշի ձևափոխությամբ են կազմվում, բայց քանի որ դասանիշները չնջվում են, իրենք էլ կամ առանց դասանիշի Ճեպով նման են լինում եզակիին և կամ պահում են հին հոգնակիի դասանիշը։

Աֆրիկյան վոլոֆ լեզուն այժմ դասանիշ չունի. բայց դասանիշների հետքը Ճեում է նրանով, որ դանազան բառերի եզա-

կին ու հոգնակին տարբեր բաղաձայն ունեն բառասկզբում. իսկ ընդհանրապես այս լեզվում քիվ չկա։

Դասանիշի գործածությունը տարբերվում է նաև բուա տեղի. դասանիշները մեծ մասամբ նախամասնիկ են, բայց կան լեզուներ էլ, որ դարձրել են դրանք հետամասնիկ և կան լեզուներ էլ, որոնք գործածում են այդ նշանները քե բառի սկզբում, և քե վերջում։ Այսպես «հող կամ երկիր» բառը մոսի լեզվով լինում է ten-ga, կոնկո լեզվով՝ ka-ten, գուրմա լեզվով՝ ga-ten-ga (BSL, հա. 27, 1927, № 81, էջ 43—50)։

Կան դեպքեր, երբ մի բառի վրա երկու կամ երեք դասանիշ է դրվում, ինչ որ դասանիշի իսկական գաղափարի հղծումն է։ Օրինակ՝ ըստ Մարկոնեսի (Marconnès) կարանգա լեզվի մեջ ունենք՝

m'budzi	«այծ» բառից՝
zi-m'budzi	«խոշոր այծ»,
či-m'budzi	«մի չտեսնված այծ»,

mu-ti «ծառ», zi-mu-ti «խոշոր ծառ», հոգ. ma-mi-ti, ma-zi-mi-ti,

mu-nu «մարդ», zi-nu, zi-mu-nu, «խոշոր մարդ», հոգ. ma-zi-nu, ma-mu-nu, ma-zi-mu-nu «խոշոր մարդիկ»,

zi-so «մի աչք», հոգ. ma-zi-so կամ me-so,

zi-zi-so «մի խոշոր աչք», հոգ. ma-zi-zi-so «խոշոր աչքեր»։

Աֆրիկյան սերեր լեզուն էլ ունի դասանիշներ, որոնց քիվն է 9. բայց սրա դասանիշները տարբերվում են մյուս լեզուներից նրանով, որ սրանք երկու կողմից են՝ բառասկզբից և բառավերջից. օրինակ՝ 7-րդ դասը սկզբից ունի gi և վերջից՝ la, սրա հոգնակին սկզբից ունի a և վերջից՝ aha. 9-րդ դասը եզակիում ունի o և վերջից՝ onga, իսկ հոգնակիում՝ սկզբից՝ fu, վերջից՝ na։ Բոլոր կարգերի վերջնահար դասանիշները հանգում են a ձայնավորով, որ ցույց է տալիս առարկայի հեռու լինելը կամ անորոշ լինելը. իսկ եթե a դարձնենք e, կստացվի մոտիկ առարկա կամ որոշյալ առարկա։

Կան լեզվաբաններ, որոնք ասում են, թե դասանիշը ի վերջո վերածվում է հոդի. եթե այդպես է, նրանց միջին օղակը կարող ենք համարել հայծորդը, որ է որոշիչ մասնիկ։

Աֆրիկյան վոլոֆ լեզուն ունի այս որոշիչ մասնիկները.— ամեն մի գոյական իր հետ ունի մի մասնիկ, որ բակացած է

մի բաղաձայնից +i կամ e. օրինակ՝ bi, be. արանցից bi նշանակում է «այս», be «այն»։ Բայց բացի իրրև ցուցական դրծածվելուց, առաջինը (bi) նշանակում է, թե այդ առարկան աչքի առջև է կամ թե՝ դործողությունը կատարվում է հենց այդ միջոցին, իսկ երկրորդը (be) ցույց է տալիս, թե առարկան հեռու է կամ թե դործը անցյալ ժամանակի է պատկանում. օրինակ՝ wax-bi «այս խոսքը, որ արտասանվում է այժմ», wax-be «այն խոսքը, որ լսվել է առաջ»։

Ամենից ավելի գործածականն է be, bi զույգը. բայց էլի կան 7 զույգ մասնիկներ, ամեն մեկը տարբեր բաղաձայններով, որոնց համար ոչ մի կանոն չկա, իմացվում են վարժությամբ և բառարանում էլ նշանակված են։

Ռաումը (Raum) սխալ է համարում այն կարծիքը, թե բանտու լեզուների դասանիշները որոշիչ հոդ են, որովհետև նրանք չեն հայտնում ինչ որ որոշ բան, այլ ընդհանուր տեսակ են ցույց տալիս։ Ոմանք էլ այդ դասանիշները նմանեցնում են ուրիշ լեզուների սեռերին, բայց սխալ է նաև այս (ըստ Ռաումի), որովհետև այս դասանիշներն ունեցող բառերը սեռի հետ գործ չունեն, և նրանց մոտ կարելի է դնել արու և էգ նշանակող բառերը, եթե հարկավոր լինի։

Բանտուները այնպես են վարժված իրենց դասանիշներին և իրենց վանկային դրության, որ եվրոպական նոր փոխառությունները էլ հպատակեցնում են նրանց։ Այսպես, օրինակ՝ եթե մտածենք, թե ֆրանսերենում ընտանի կենդանիների անունները սկսվում են ch բաղաձայնով, ինչպես chat «կատու», chien «շուն», chèvre «այծ», cheval «ձի», chameau «ուղտ»։ Անշուշտ այս օրինակը կեղծ է, բայց բանտուի մտայնության համար իրական է. օրինակ՝ Ռոնգա-շոնգա բանտու լեզուն փոխառությունները ունի անգլ., գերմ. և պորտուգալերեն լեզուներից. դրանք հարմարեցրել և դրել է մի որևէ դասի մեջ. անգլ. school «դպրոց» դարձել է ši-ko-lo, glass «ապակի, հայելի»>gilazi, magilazi, book «գիրք»> buku, tibuku և այլն։

Այսպիսի դեպքերում բառին իրրև դասանիշ է ծառայել նրա առաջին վանկը, որով և որոշվել է դասը։ Այսպես՝ պորտուգալերեն meza «սեղան» բառը կոնգոյի լեզվում դրվել է այն դասում, ուր գտնվում է տեղական meso «աչքեր» բառը (երկուսի նախավանկն էլ է me-)։ Նմանապես անգլ. letter «տառ» և book «գիրք» փոխառնելով նույն կոնգո լեզվում, դրվել են

8-րդ դասի մեջ և դարձել են eletela և ebuku. բայց իս սրանք էլ անգլ. a (կարդալ՝ e) անորոշ հոդի պատճառով մտել են այդ դասի մեջ՝ առանձնով e դասանիշը։

Բացի բանաոս լեզուներից՝ աշխարհիս գանազան կողմերում կան դասանիշ ունեցող ուրիշ լեզուներ էլ։ Այսպես են օրինակ՝ լառաերենը, որ սեմականի նման մի լեզու է. ունի դասանիշներ, որոնցից դլխավորները հետևյալներն են.

phū՛	«նա ար»	ցույց է տալիս	անձ.
tō	«էակ»	» »	անասուն.
kōk	«ծառ»	» »	պտղատու ծառեր.
mai	«միայն»	» »	ոչ-պտղատու ծառեր.
māk	«պտուղ»	» »	պտուղներ.
dōk	«ծաղիկ»	» »	ծաղիկներ.
khī՛	«աղր» կամ din	«հող» ցույց են տալիս	փխրուն հանքանյութեր.
hīn	«քար» կամ lēk	«երկաթ». ցույց են տալիս	կարծր հանքանյութեր և այլն, և այլն։

Այս դասանիշները դրվում են միայն գոյականի վրա և չեն կրկնվում հարակից բառերի հետ. օրինակ՝

Phū sāy	vao nam	phū ñiń
տղամարդիկ	խոսում են	կանանց (հետ)։

Դասանշավոր լեզուներ են նաև հյուսիսային կովկասյան լեզուները և նորագյուտ վերշիկերենը։

Զևշեներեն լեզվի մեջ մինչև 6—8 դաս կա, մինչդեռ արչիներենում կա 4 դաս (Дирръ. Арч. язык, էջ 3), որոնք են. 1) բանական արական էակներ, 2) բանական իգական էակներ, 3) անբանական հասունության հասած էակներ, առանց սեռի խտության և գանազան առարկաներ, 4) անբանական հասունության չհասած էակներ և գանազան առարկաներ։ Առաջին դասի նշանն է w, երկրորդինը՝ d, երրորդինը՝ b, չորրորդը չունի նշան։ Այս չորս դասանիշները երևան են գալիս բերականական բոլոր կարգերում. ահա մի քանի օրինակներ.—

Էական բայի եզ. գ դեմքն է՝ արականի համար wi, իգականի՝ di, երրորդ դասի համար՝ bi, չորրորդի համար՝ i։

Առաջին դեմքի առացականն է ար. wis, իգ. dis, երկրորդ դասի համար՝ bis. չորրորդի համար՝ is, որոնք բոլորը նշանակում են «իմ»։

Բայը ունի 4 ձև. այսպես՝ միևնույն «փնտրել» բայը արաբականի համար պահում է wirkus, *իգականի համար՝* dirkus, *երրորդ դասի համար՝* birkus, *չորրորդ դասի համար՝* irkus.

Ահա չորս նախադասություն, ուր բայը և դերանունը ստանում են չորս դասանիշներն ըստ իրենց կարգի.

ա)	zari	was	l°ur	wassawu	lo
	ինև	*քեզ*	*տուեալ*	*իւր*	*որդի*
	(որդիս քեզ եմ տալիս)				
բ)	zari	was	dul°or	dassaru	lo
	ինև	*քեզ*	*տուեալ*	*իւր*	*աղջիկ*
	(աղջիկս քեզ եմ տալիս).				
դ)	zari	was	bul°or	bassalu	noš
	ինև	*քեզ*	*տուեալ*	*իւր*	*ձի*
	(ես	*քեզ*	*տալիս եմ*	*իմ*	*ձին)*
դ)	zari	was	l°or	assat'u	biš
	ինև	*քեզ*	*տուեալ*	*իւր*	*հորթ*
	(ես	*քեզ*	*տալիս եմ*	*իմ*	*հորթը)*

Դասերի քիվը քշացել և չորսի է հասել նաև վերշիկերենի մեջ, ուր ունենք. 1) շնչավոր արական էակներ, 2) շնչավոր իգական էակներ, 3) ուրիշ կենդանի էակներ, 4) դանազան առարկաներ։ Նկատելի է, որ ինչպես արչիներենում, նույնպես և վերշիկերենի մեջ վերջին երկու դասերը շփոթված են իրար հետ։ Այսպես է նաև չեչեներենի մեջ, ուր ունենք. 1) բանական արական էակներ, 2) բանական իգական էակները, իսկ 3—8 իրար հետ շփոթված խառնուրդ՝ դանազան շնչավոր և անշունչ առարկաներ։

Դասերի քայքայման պրոցեսն է այս, որը դասանիշները վերացնելով հասցնում է լոկ քերականական սեռի գիտակցության, ինչպես գտնում ենք բազմաթիվ լեզուների մեջ, որ և ավելի հետո նույնպես չնչվում-վերացվում է։

Կովկասյան լեզուների դասերի մասին խոսում են նաև այլ հեղինակներ, որոնց կարծիքը հավաքում եմ այստեղ. ըստ Բոկարևի (Бокарев) *կովկասյան ճամալալ լեզուն ունի ծ դաս. ա) Առաջին դասը պարունակում է արական սեռի բառերը, որոնց մեջ է նաև աստված. բ) Երկրորդ դասը պարունակում է իգական սեռի բառերը. գ) Երրորդ դասը պարունակում է անուններ մեծամասնությունը, միջատներ, բնության երևույթները,*

երկնային մարմիններըը (արև, լուսին, աստղեր), օր, քամի, լեռ, բույսեր, պտուղներ, մետաղներ, մարմնի մասեր և այլն. դ) Չորրորդ դասը պարունակում է որոշ կենդանիներ, բնության երևույթներ, պտուղներ և կաթնեղեն. ե) Հինգերորդ դասը պարունակում է այլ տեսակի կենդանիներ, բնության երևույթներ, անուններ, հաց, միս, խաղող, գործիքներ և ամանեղեն։

Դասանիշներն են՝

ա դաս — vi, gu
բ դաս — yi, yii, i, gv
գ դաս — bi, b, gu
դ դաս — yi, gū, l
ե դաս — yi, i, gl

Ածականներն էլ ունեն նույն դասերը. օրինակ՝ aru «լայն» բառից կազմվում են՝

ա դաս՝ aru, բ դաս՝ arv, գ դաս՝ arub, դ դաս՝ arul, ե դաս՝ arvi։ Բայերն էլ ունեն իրենց դասերը, որոնք կազմվում են նույն մասնիկներով, և վերջապես մակրայներն էլ ունեն իրենց դասերը։

Չեչեներենի դերանուններն են՝ so «ես», xo «դու», iza «նա», txo «մենք», šu «դուք», izuš «նրանք»։

Էական բայը խոնարհման ժամանակ ստանում է 4 ձև՝ անկախ վերի դերանուններից. այն է՝ yu, vu, bu, du, օրինակ՝ «ես եմ» լինում է, so vu. so yu, so bu, և so du, «մենք ենք» լինում է՝ txo du, txo yu, txo bu. այս տարբերությունները, որ ուրիշ բայերի և մի խումբ ածականների էլ է հատուկ, ցույց են տալիս դասերի գոյությունը չեչեներենում։ Սրանց մասին ոչ մի կանոն չի գտնված, և ժողովուրդը խոսում է ամենադարաբ։ Հայտնի է միայն, որ բանական էակների արտականը ստանում է vu, իգականը՝ yu, իրերը և անբան անասունների անունները, նույնպես և երբ բանական էակի սեռը չուզենան որոշել, լինում են bu կամ du, բայց թե այս երկուսից հատկապես որը՝ հայտնի չէ։

Չերքեզերեն և ուբիխերեն լեզուները բոլորովին չունեն դասեր. ընդհակառակը, աբխազերեն լեզուն գիտե գոնազանել, մի կողմից՝ բանական էակներ (մարդ, երկնային էակներ) և, մյուս կողմից՝ անբաններ (անասուն, իրեղեն, վերացական բառեր). սեռ ունեցող էակների մեջ էլ գոնազանում է արական և իգական, բայց միայն բանական էակների համար։ Աբխազերենը

հոգնակիում զանազանում է բանական և անբան, այսպես և՝ թվականների մեջ։ Իսկ անձնական դերանուններին, ստացական հոդերի և բայի դերանվան մեջ զանազանում է եզակի թվում բանական և անբան, բանականների մեջ էլ արական և իգական սեռ։ Այս բոլորը նախկին դասանիշների մնացորդներն են։

Չեչեներենի պես ինգուշերենն էլ ունեցել է դասեր և ըստ այնմ դասանիշներ, որոնք անհետացել են այժմ. բայց նրանց հետքը մնում է դեռ էական բայի գործածության մեջ և մի քանի ուրիշ դեպքերում։ Առայժմ երևան է հանված 6 դաս, բայց այդ դասերի տարբերությունը հայտնի չէ։ Կանոն չկա նաև իմանալու համար, թե ինչ բառ ինչ դասի է պատկանում։ Ժողովուրդը խոսում է այդ տարբերություններին անգիտակ կերպով (Мальсагов, էջ 18—19)։

Կովկասյան դարձվա լեզուն էլ դասանիշների հետքը պահում է. այսպես. սեռը ունի 4 ձև.— 1) արական, 2) իգական, իսկ չեզոքը բաժանվում է երկուսի. 3) անասուններ և 4) անշունչ իրեր։ Սրանց համար դրվում են բառասկզբում w, d, b և բառավերջում՝ r նշանը (սրանք չեչեներենի և ինգուշերենի դասանիշների ընկերներն են)՝ ըստ սեռի, ըստ թվի (եզ. և հոգ.) և ըստ դեմքի՝ ա, բ, գ դեմք (Жирков, էջ 13—14)։

Դասանիշների մնացորդներ կան նաև կովկասյան տարաասարան լեզվի մեջ (Жирков, էջ 86)։ Այս լեզվի մեջ ածականները իրրև վերջահար ստանում են r ձայնը, եթե ածականը վերաբերում է մարդու (անձի), կամ b, երբ ածականը վերաբերում է անշունչ իրերի, կենդանիներին, բնական երևույթների կամ վերացական գաղափարների, օրինակ՝

axyur *մեծ (անձ)* և axyub *մեծ (իր)*.

եղել է նաև d վերջահարը՝ ժամանակի իմաստով։

* * *

Մասնիկների հարադրությունը արմատի վրա կամ շեշտի զանազան ձևակերպումները պատճառ են դառնում ձևափոխության. երբեմն արմատի վերջահանգ ձայնավորը հաջորդ մասնիկից առաջ սղվում է, կամ նրա վերջաձայն բաղաձայնը, մասնիկի բաղաձայնի հետ շփվելով, նոր կերպարանք է ստանում, և կամ արմատի միջին ձայնավորը մասնիկի երանգի կամ շեշտի ուժի համեմատ մերթ այս և մերթ այն ձևն է ստանում. մի խոսքով՝

արմատը այլևս քարացած անշարժ մի ձև չէ, այլ գործածության, տեղի ու դիրքի համաձայն զանազան կերպարանքներ է առնում, թեքվում է: Լեզվի այս վիճակը կոչվում է թեքում, և նրան հետևող լեզուները կոչվում են թեքական լեզուներ: Այս կարգին են պատկանում սանսկրիտը, հունարենը, լատիներենը, հայերենը, ռուսերենը և այլն:

Առնենք մի հատված հին հայերենից՝ թեքական ձևերը բացատրելու համար:

Յորժամ զաներևութէն և զնորին զմշանջենաւոր զօրութենէն ճառիցէ ոք, քանզի մարմնաւոր լեալ է, պարտի զմիտս յստակել և զխորհուրդս սրբել, զյոյզս շարժմանց պարզել, զի յայնց զոր առաջի եդ՝ հասանել կարասցէ:

Այս կարճ հատվածի մեջ ունենք մի քանի շատ թեքական ձևեր. օրինակ՝ զնորին, զմշանջենաւոր, զօրութենէն, մարմնաւոր, լեալ, սրբել, եդ, կարասցէ, շարժմանց: Առաջինը նոյն բառի սեռականն է և այս էլ նա բառից է առաջացած. բայց նա-նոյնորին ձևերի մեջ այնքան փոփոխություն և խառնուրդ կա, որ նրանց նույնությունը անհնարին է ճանաչել.— զմշանջենաւոր կազմված է միշտ բառից, որի ի ձայնը կորել է, հետո ավելացել է մի մասնիկ, որի բուն ձևն անգամ հայտնի չէ (պիտի լինի ինջ կամ ուջ, որա վրա ավելացել է -եան մասնիկը, որ շեշտից դրկվելու պատճառով կորցրել է ա ձայնը. որա վրա էլ ավելացել է ա-ւոր, որ բեր (բերել) բառի մի ուրիշ կերպարանքն է, այնքան փոփոխված, որ առանձին լեզվաբանական աշխատանքի պետք կա նրանց նույնությունը հաստատելու համար. բուն որում բ դարձել է ւ, որովհետև երկու ձայնավորի մեջն է ընկել և ե դարձել է ո՝ ձայնդարձի օրենքով, որին հետո պիտի ծանոթանանք.— զօրութենէն կազմված է 5 տարրերից. արմատը՝ զաւր, մասնիկները՝ ոյր, իւն, է և ն. առաջինը շեշտի պատճառով դարձել է ուր, երկրորդը՝ իւն հոլովման ժամանակ դարձել է եան, հետո շեշտի պատճառով եղել է են. երրորդը՝ է առաջանում է յ ձայների խառնուրդից. չորրորդը՝ ն համառոտված ձևն է նա կամ այն բառի.— կարասցէ կազմված է կար արմատից, որի վրա ավելացել է նախ ա ձայնավորը, հետո -ցից մասնիկը, որ ձայնավորի պատճառով եղել է ցց, ապա առաջին ց՝ երկրորդի մոտ տարանմանվելով՝ սց, որի վրա ավելացել է է, որ յ ձայների խառնուրդն է. ուրիշ խոսքով՝ կարասցէ ներկայացնում է կար[ա]ցիցեյ.— շարժմանց ներկայացնում է շարժ արմատը, որի վրա

ավելացել է, նախ՝ -ումն մասնիկը, ձայնավորից զրկված և հոլովման համար ա ներմուծված, հետո՝ ց նշանը, որ ինքնին մի քանի ձայների խառնուրդն է ներկայացնում. սրբել կազմված է սուրբ արմատից, որ շրջված է սուրբ ձևից, հետո՝ ու ազված. սրա վրա ավելացել են նախ՝ ե ձայնավորը և հետո լ, որ ազված է նախավոր լո ձևից. այնպես որ սրբել ներկայացնում է հնագույն *սուրբլո ձևը։—Թողնում ենք մյուս ավելի պարզ ձևերը։

Թեքականության գերազանց աստիճանը ներկայացնում են սեմական լեզուները, որոնց մեջ արմատն ու մասնիկները այնպիսի մի խառնուրդ են կազմում, որ երկու տարրերը իրարից բաժանել հաճախ անկարելի է։ Ծույց տալու համար, թե մինչև ուր կարող է հասնել մարդկային մտքի կարողությունը աննշանակ ձայների զարմանալի խառնուրդներով նորանոր ու բազմազան իմաստներ ստեղծելու մեջ՝ դնում ենք այստեղ արաբերեն լեզվի (որ սեմական ճյուղի ամենանշանավոր և կենդանի ներկայացուցիչն է) քերականական հորինվածության համառոտ, բայց լրիվ պատկերը։

Ինչպես բոլոր սեմական լեզուների, այնպես և արաբերենի մեջ յուրաքանչյուր բառ կազմված է երեք արմատական բաղաձայնից[1]։ Սրա համար իբրև տիպար է առնվում فعل f'l «գործ, գործել, գործողություն» արմատը։ Բոլոր ածանցումները, հոլովումն ու խոնարհումը կատարվում են արմատի երեք ձայների միջև մտցված զանազան ձայնավորներով։ Թեև կան լեզվի մեջ նախամասնիկներ և հետամասնիկներ, բայց սրանք քիչ քիչ են, և քիչ երկրորդական արժեք ունեն, մանավանդ՝ բառակազմության մեջ։ Արաբ քերականները, սակայն, փոխանակ արմատի վրա կատարված փոփոխությունները առանձին կանոններով բացատրելու, տալիս են մեկայն տիպար օրինակը։ Օրինակ՝ գործողություն կազմելու համար փոխանակ ասելու, թե պետք է բայի առաջին արմատական բաղաձայնից հետո ավելացնել երկար ā ձայնը և երկրորդ արմատական բաղաձայնից հետո ավելացնել կարճ i ձայնավորը, այդ բոլորը կատարում են f'l արմատի վրա և ասում են պարզապես فاعِل fā'il ձևով։ Այսպես և՝ ամբողջ քերականությունը։

Արաբերենի մեջ ع ' ձայնը շատ լավ զգալի մի բաղաձայն է, և դրա շնորհիվ էլ տիպար օրինակները արաբներին շատ լավ

[1] Դյուրության համար մի կողմ ենք թողնում քառաձայն արմատները, որոնք շատ սակավաթիվ են։

ըմբռնելի են։ Բայց մեր մեջ՝ բաղաձայները գոյութիւն չունի և մեզ համար անհասկանալի է, ուստի և մենք կարող ենք առնել فعل fγl *բառատիպարը (մի կետով միայն տարբեր)։*

Ահա մի քանի կարևոր ածանցական ձևեր.

Նվազական կամ փաղաքշական բառերը կազմվում են فُعَيل fuγail *ձևով. ինչպես՝* kalb *շուն»,* kulaib *շնիկ»։*

Տեղ ցույց տվող բառերը կազմվում են مَفْعَل mafγal, مَفْعِل mafγil, مَفْعَلة mafγala *ձևերով, ինչպես՝*

ktb	*գրել,*	maktab	*դպրոց,*
sǰd	*երկրպագել*	masǰid	*մզկիթ*
qabr	*գերեզման,*	maqbara	*գերեզմանատուն*

Վերջին ձևը գործածվում է, երբ գործողությունը այնտեղ շատ անգամ է կատարվում, մյուսները՝ ավելի քիչ անգամ. համմտ. maktab *«դպրոց» և* maktaba *գրադարան։*

Գործիք ցույց տվող բառերը կազմվում են مِفْعَال mifγāl, مِفْعَلة mifγala *ձևերով. ինչպես՝*

fth	*բանալ—*	miftāḥ	*բանալի*
kns	*ավլել—*	miknasa	*ավել*

Արհեստ ցույց տվող բառերը կազմվում են فَعَّال faγγāl *ձևով. ինչպես՝*

ḥammāl—*բեռնակիր*
ǰarrāh —*վիրաբույժ*
baqqāl —*խանութպան*
qaṣṣāb —*մսագործ*
dallāk —*սափրիչ*
dallāl —*միջնորդ*
naǰǰār —*հյուսն*
ǰallād —*գահիճ*

Արաբերենում գոյականը ունի սեռ, թիվ և հոլով։ Սեռը երկու է. արական և իգական։ Թիվը երեք է. եզակի, երկակի և հոգնակի։ Երեք է նաև հոլովը. ուղղական, հայցական և սեռական։ Երկակին կազմվում է ավելացնելով ān *կամ* ayn։

Հոգնակին կազմվում է 3 ձևով.

1. Կանոնավոր արական հոգնակի մասնիկը՝ ون -ūn. *ինչպես՝* kātib *«գրագիր»,* kātibūn *«գրագիրներ».*

2. Կանոնավոր իգական հոգ. մասնիկը՝ ات -āt. *ինչպես՝* kātibāt *«գրագրուհիներ».*

3. Բևեյալ հոգնակի, որ կազմվում է նորամուծ ձայնավորների դանազանակերպ հավելումներով, ծույլ տալու համար, թե որքան բարդ և անկանոն է արաբերենի քերականական հոլինվածության այս ձևը, տալիս ենք թեքական հոգնակիի բոլոր տիպերից օրինակներ.

		եզակի		Հոգ.
1. fuγl	ձևով	asad	*առյուծ*	usd
2. fiγal	»	millat	*ազգ*	milal
3. fuγal	»	dawlat	*պետություն*	duwal
4. fuγul	»	kitāb	*գիրք*	kutub
5. fiγāl	»	ǰabal	*լեռ*	jibāl
6. faγil	»	himār	*էշ*	hamīr
7. fuγūl	»	malik	*թագավոր*	mulūk
8. fuγγal	»	ḥākim	*դատավոր*	ḥukkam
9. fuγγāl	»	kātib	*գրագիր*	kuttāb
10. faγalat	»	»	»	katabat
11. fuγalat	»	vālī	*կառավարիչ*	vulāt
12. fiγlat	»	γazāl	*վիթ*	γizlat
13. afγul	»	qufl	*կողպեք*	aqful
14. fiγālat	»	ṣāḥib	*տեր*	ṣiḥābat
15. fuγūlat	»	ʾamm	*հորեղբայր*	ʿumūmat
16. afγāl	»	šarīf	*ազնվական*	ašrāf
17. afγilat	»	silāḥ	*զենք*	asliḥat
18. afγilā	»	ṣadīq	*բարեկամ*	aṣdiqā
19. faγla		ǰarīḥ	*վիրավոր*	ǰarhā
20. fuγalā	»	vazīr	*վեզիր*	vuzarā
21. fiγlān	»	γulām	*ծառա*	γilmān
22. fuγlān	»	balad	*քաղաք*	buldān
23. afiγla	»	ṭabīb	*բժիշկ*	aṭibbā
24. fawāγil	»	ḥādiθat	*նորություն*	ḥavādiθ
25. faγāʾil	»	ʿaǰība	*զարմանալիք*	ʿaǰāʿib
26. faγāl	»	ahl	*մարդիկ, ժողովուրդ*	ahāl
27. faγālī	»	ahl	» »	ahālī

Անկանոն հոգնակիներից մի քանի ձև գործածվում են ցույց տալու 3—10 առարկա. այսպես՝ ẓuīr *«եղունգ»,* aẓfār *«3—10 եղունգներ». զարմանալի է, որ կա այս կարգի անկանոն հոգնակիների նվազականը. օրինակ՝* uẓaifār *«3—10 հատ փոքրիկ եղունգներ»։*

Ահա գոյականի հոլովման պատկերը. օրինակ՝ malik *«թագավոր».*

	եզ.	երկ.	սր. հոգ.	իգ. հոգ.	անկ. հոգ.
Ուղ.	maliku	malikā(ni)	malikū (na)	malikātu	mulūku
Հ.	malika	malikai(ni)	malikī (na)	malikāti	mulūka
Ս.	maliki	»	»	»	mulūki

Մյուս հոլոմները սեռականի ձևն ունեն և որոշվում են նախդիրներով. այսպես՝ սր. li-maliki *(բուն՝ «թագավորի հարց»). բաց.* min-maliki, *գործ.* ma'-maliki, *ներգ.* fi-maliki։

Հոդը երկուսն է. որոշյալ (al), *որ դրվում է բառի սկիզբը և աննոլով է և անորոշ* (n), *դրվում է բառի վերջը։*

Ածականի սովորական ձևն է فَعِيل faγīl. *ինչպես՝* كبير kabīr *«մեծ»* شريف šarīf *«փառավոր»։ Բազդատականը կազմվում է* afγal *ձևով. ինչպես՝* akbar *«մեծագույն»,* ašraf *«փառավորագույն»։ Նույնը կրնա ստանալ հոդ, կդառնա գերադրական, որ ունի իր իգականը* فُعْلَى fuγla *ձևով. ինչպես՝* al-akbar *«ամենամեծ»,* al-ašraf *«ամենափառավոր»,* իգ. kubra, šurfa.

Ածականը սեռով, թվով, հոլովով, նաև հոդով համաձայնվում է գոյականի հետ, որին հետադաս է. միայն բազդատական ածականն է (բայց ոչ գերադրականը), որ անփոփոխ է մնում։

Թվականները 1—10 հետևյալներն են.

	1	*2*	*3*	*4*
սր.	aḥ'ad	iṯnān	ṯalāṯa	arba'a
իգ.	aḥda	iṯnatān	ṯalāṯ	arba'
	5	*6*	*7*	*8*
սր.	xamsa	sitta	sab'a	ṯamāniya
իգ.	xams	sitt	sab'	ṯamān
	9	*10*		
սր.	tis'a	'ašara		
իգ.	tis'	'ašr		

Դասականները կազմվում են fāγil *ձևով.*

avval, ðānī, ðāliθ, rābiʿ, xāmis,
sādis, sābiʿ, ðāmin, tāsiʿ, ʿāšir

Սրանց իգականներն են՝ ūla, ðāniya, ðāliθa, rābiʿa, xāmisa *և այլն և այլն։*

Կոտորակի ձևը կազմվում է fuʕl *կամ* fuʕul *ձևով.*

ðulθ, rubʿ, xums, suds, subʿ, ðumn tusʿ ʿušr
ðuluθ, rubuʿ, xumus, sudus, subuʿ, ðumun tusuʿ ʿušu

$^1/_3$ $^1/_4$ $^1/_5$ $^1/_6$ $^1/_7$ $^1/_8$ $^1/_9$ $^1/_{10}$

Սրանց հոդնակին էլ կազմվում է afʕal *ձևով.*

aθlāθ, arbāʿ, axmās, asdās, asbāʿ, aθmān, atsāʿ, aʿšār, *որոնք նշանակում են՝* «$^1/_3$-ներ, $^1/_4$-ներ, $^1/_5$-ներ և այլն»։

Անգամ ցույց տվող ձևերը կազմվում են مفعّل mufaʕʕal *ձևով. ինչ.* muθanna «*երկիցս*», maθallaθ «*երիցս*», murabbaʿ «*չորիցս*» *և այլն.*

Թվականների կազմության այս մանրամասնությունները մեզ բերեցինք ցույց տալու համար, թե ինչպիսի դրամաշվական ճշտություն և միօրինականություն կա այս լեզվի մեջ։

Անձնական դերանունները հետևյալներն են.

	եզակի	երկակի	հոգնակի
	Ա. դեմք		
Ուղ.	anā *ես*		naḥnu *մենք*
Հյ.	iyyāya *ինձ*		iyyānā *մեզ*
	Բ. դեմք		
Ուղ.	anta *ար.*	antumā *ար. և իգ.*	antum *ար.*
Հյ.	iyyāka *ար.*	*Հյ.* iyyākumā *ար. և իգ*	iyyākum *ար.*
Ուղ.	anti *իգ.*		antunna *իգ.*
Հյ.	iyyāki *իգ.*		iyyākunna *իգ.*
	Գ. դեմք		
Ուղ.	huwa *ար.*	humā *ար. և իգ.*	hum *ար.*
Հյ.	iyyāhu *ար.*	iyyāhumā *ար.*	iyyāhum *ար.*
Ուղ.	hiya *իգ.*		hunna *իգ.*
Հյ.	iyyāhā *իգ.*		iyyāhunna *իգ.*

Այս դերանունները ունեն իրենց վերջնահար ձևերը, որոնք կցվելով գոյականին և նախդիրներին, ունենում են սեռականի իմաստ, որով դառնում են առացական ածական, իսկ կցվելով բայերի՝ առնում են հայցականի իմաստ. այսպես՝

	եզակի	երկակի	հոգնակի
Ա.	-ī *(բայով* nī)		-nā
Բ.	-ka *ար.*	-kumā *ար. իգ.*	-kum *ար.*
	-ki *իգ.*		-kunna *իգ.*
Գ.	-hu *ար.*	-humā *ար. իգ.*	-hum *ար.*
	-hā *իգ.*		-hunna *իգ.*

օր. kitābuhu *«նրա գիրքը»*, ḍarabahu *«ծեծեց նրան»*, lahu *«նրա համար»*, minhu *«նրանից»*:

Գոյականներն են՝

	եզակի		երկակի	հոգնակի
այս՝	ðā *ար.*			
	ðī ðihi,	*իգ.*	bāni *ար.*	ūla, ūlāi *ար. և իգ.*
	tī, tihi		tāni *իգ.*	
	tā, tih, tihī			

Սրանց ավելացնելով -ka *Բ դեմքի վերջնահար դերանունը՝ և* li *«դեպի, առ»*.

այդ՝ ðāka	*ար.*	ðānika	*ար.*	ūlāi'ka	*ար. և իգ.*
(այն) ðalika		ðānnika		ūlāka	
				ūlālika	
tāka	*իգ.*	tānika	*իգ.*		
tīka		tānnika			
tilka					

Սրանք գործածվում են բոլոր հոլովների համար, միայն երկակիները լինում են սեռ. և հյց. ðaini *ար.*, taini *իգ. «սրանց»*, ðainika, ðainnika *ար.*, tainika, tainnika *իգ. «նրանց»*.— *«Այս» բառի ձևերը կարող են առանալ նաև* ha- *նախամասնիկը. ինչպես* haðā *և այլն:*

«Որ» հարաբերականը հոլովվում է հետևյալ ձևով.

	արական	իգական
եզ.	Ու.Հ.Ս. allaðī ար.	allatī իգ.
երկ.	Ու. ʻallaðāni ար.	allatāni իգ.
	Հ.Ս. allaðaina ար.	allataini իգ.
հոգ.	Ու.Հ.Ս. allaðīna ար.	allātī, իգ. allāti
	» alāwalī	allawātī, allawāti
	որոնք	allā'ī, allā'i որոնք

Բայի գլխավոր ժամանակներն են կատարյալ (ماضى) *և* aoriste (مضارع) *խոնարհումը հետևյալ ձևով է.*

կատարյալ

եզակի	երկակի.	ճոգնակի
1. katabtu *գրեցի, գրել եմ*		katabnā
2. katabta *ար.*	katabtumā	katabtum
katabti *իգ.*		katabtunna
3. kataba *ար.*	katabā	katabū
katabat *իգ.*	katabatā	katabna

կատարյալի իմաստը զորացնելու համար հաճախ ավելացնում են qad *«արդեն» բառը. ինչ.* qad kataba *«արդեն գրեց (գրել է)»։*

Կատարյալին միացնելով kāna *«էր, եղել է, կար» բայը խոնարհված ձևով, ստացվում է գերակատար. ինչպես՝* kāna kataba *«գրել էր» և այլն։*

aoriste-*ը խոնարհվում է հետևյալ ձևով.*

եզակի	երկակի	ճոգնակի
1. aktubu *գրում եմ, կգրեմ*		naktubu
2. taktubu *ար.*	taktubāni	taktubūna
taktubīna *իգ.*	»	taktubna
3. yaktubu *ար.*	yaktubāni	yaktubūna
taktubu *իգ.*	taktubāni	yaktubna

Այս ձևի վրա ավելացնելով sawfa *կամ սրա համառոտված ձևը* sa-, *ստացվում է ապառնին. ինչպես՝* sawfa yaktubu *կամ* sayaktubu *«պիտի գրե»։*

Ավելացնելով kāna *«էր, եղել է, կար» բայը խոնարհված ձևով, ստացվում է մեր անկատար ձևը. ինչպես.*

Kāna yaktubu *գրում էր*։

Ավելացնելով qad, *ստացվում է ներքևյա նշանակություն ինչպես՝* qad yaktubu *գրել է անցյալում գրում է*։

Ավելացնելով kāna *բայի անկատարը որևէ բայի կատարյալին՝ ստացվում է բուն ապառնի. ինչպես՝* yakūnu kataba *գրվելու է, գրված է լինելու*։

Առիստի (مضارع) *վերջածայն* u *փոխվելով* a *կամ* ni *հանգը չնջելով՝ ստացվում է* conjonctif *ձևը, որ համապատասխանում է մեր ստորադասականին, օր.* yaktuba *որպեսզի գրի*։

1. aqtuba		naktuba
2. taktuba	taktubā	taktubū
taktubī	»	taktubna
3. yaktuba	yaktubā	yaktubū
taktuba	taktubā	yaktubna

Սրանց վերջածայն a *կրճատելով, ստացվում է* modus apocopatus *(կամ* jussif*) ձևը, որ պայմանական է, եթե սկիզբը դրվի* in, *հրամայական՝ եթե դրվի* lā (Belot, *էջ 27, 31*).

1. aktub		naktub
2. taktub	taktubā	taktubū
taktubī	»	taktubna
3. yaktub	yaktubā	yaktubū
taktub	taktubā	yaktubna

Կա նաև սրա սաստկական ձևը, որ կազմվում է ավելացնելով -an *կամ* -anna *մասնիկը, կոչվում է սաստկական ձև* (modus energicus) I *և* II. *Նշանակությունն է «անշուշտ, պետք է որ գրի» և հաճախ ստանում է* la- *նախամասնիկը*։

Սաստկական I.

1. aktubanna		naktubanna
2. taktubanna	taktubānni	taktubanna
taktubinna	»	taktubnānni
3. yaktubanna	yaktubānni	yaktubunna
taktubanna	taktubānni	yaktubnānni

Սաստկական II.

1. aktuban	naktuban
2. taktuban	atktubun

taktubin
3. yaktuban yaktubun
taktuban

Հրամայական

2. aktub *ար.* uktubā uktubū *ար.*
uktubī *իգ.* „ uktubna *իգ.*

Կա և սաստիկական հրամայականի երկու ձև (Belot *30*), *որ է.*

1. uktubanna *կամ* uktuban *ար. և իգ., երկակի* uktubāni, *հոգ.* uktubunna, uktubu *ար.,* uktunbnānni *իգ.:*

Ներկա դերբայը կազմվում է fāγil *ձևով. ինչպես՝* kātib «*գրող, գրագիր*», *անցյալ դերբայը* mafγūl *ձևով. ինչպես՝* maktūb «*գրվածք*», *անորոշը արմատի ձևն է, որ միևնույն ժամանակ գոյական է. ինչպես՝* qatl «*սպանել, սպանություն*»:

Ներկա դերբայը՝ kāna *(էր) բայի հետ կազմում է մեր անկատարը. ինչպես՝* kāna kātiban=*անգլ.* was writing «*գրում էր*»:

Կրավորական բայը կազմվում է՝ կատարյալում առաջին երկու վանկերի ձայնավորը դարձնելով u, i, *իսկ անկատարի մեջ՝* u, a. *ինչպես՝*

կար. kutiba, kutibat, kutibta *և այլն.*

անկ. yuktabu, tuktabu *և այլն:*

Արաբերենը ունի նաև մի խումբ ածանցական բայեր, որոնք են՝

1. تفعيل tafγīl—*ցույց է տալիս սաստկություն. օրինակ՝* qatl «*կտրել*»>taqtīl «*կտոր-կտոր անել*». *երբեմն էլ անցողական է. ինչպես՝* ʻlm «*գիտենալ*»>taʻlīm «*սովորեցնել, նաև՝* «*համարել, կարծել*». *ինչպես՝* taktib «*սուտ համարել*», taṣdīq «*հաստատել, ճիշտ համարել*»:

2. فعال fiγāl—*մեկի վրա կատարել այդ գործը կամ ջանալ, փորձել. ինչպես՝* ktb «*գրել*»>kitāb «*մեկին գրել, նամակագրություն անել*», *նաև՝* «*աշխատել*» *կամ* «*ջանալ անելու*». γilāb «*հաղթելու ջանալ*»:

3. اِفْعَال ifγāl—*անցողական է կազմում. ինչպես՝* ǰls «*նըստել*»> iǰlas «*նստեցնել*»:

4. تَفَعُّل tafaγγul — *իր վրա կատարված գործողություն (1-ին ձևի). ինչպես՝* ta'allum «սովորել», takabbur «հպարտանալ». *նաև կրավորական է։*

5. تَفَاعُل tafāγul — *փոխադարձ կատարված գործողություն (2-րդ ձևի). ինչպես՝* taqātul «իրար հետ կռվել». *երբեմն նաև մի բան կեղծել կամ ձևացնել։*

6. اِنفِعَال infiγāl — *պարզ եռաձայն բայի վրա կազմված ձևն է, հաճախ կրավորական. ինչպես՝* ksr «կոտրել»>inkisār «կոտրվել»։

7. اِفتِعَال iftiγāl — *պարզ բայի՝ իր վրա կատարված ձևը. ինչպես՝* jm՝ «հավաքել»>ijtimā՝ «հավաքվել». *երբեմն էլ՝ կրավորական և փոխադարձ։*

8. اِفعِلَال ifiγlāl — *գույն կամ պակասություն ցույց տալու համար, ինչպես՝* ihimrār «կարմրել»։

9. اِستِفعَال istifγāl — «ուզել, խնդրել». *ինչպես՝* istiγfār «ներում խնդրել»։

10. اِفعَالّ ifγāll — *նույնն է 8-րդի հետ, որի սաստկականն է։*

11. اِفعِيلَال ifγīlāl
12. اِفعَوَال ifγauwāl
13. اِفعَنلَل ifγanlal
14. اِفعَنلَى ifγanla

հազվագյուտ գործածություն ունեցող բայեր՝ սաստկական և այլն։

15. مفاعَلَه mufāγala — *փոխադարձ բայ. ինչպես՝* ktb «գրել»>mukātaba «թղթակցել»։

Ահա երկու հատված արաբերենով. առաջինը կազմել եմ

հատկապես ktb *արմատի արմատական զանազան ածանցները ցույց տալու համար (10 ձևով).*

الكاتبُ كَتَبَ مَكتوبا فى المَكتب على المكاتبات المكاتب و
اَرسَلَ اِلَى مُكاتِبه مع كتابٍ من الكُتُبِ المكتبتِ

Al-kātibu kataba maktubān fi l-maktabi ‘al-al-mukātabāti l-makātibi va arsala ila mukātibihi ma‘ kitābin min al-kutubi l-maktabati.

«Բարուեզարը գրեց մի նամակ դպրոցում, ուսուցիչարանների գրագրությունների մասին, և ուղարկեց իր թղթակցին մի գրքով՝ մատենադարանի գրքերից»:

ظَرَبَ رَجُل بابَ أَحدِ اُلظَرفاءِ فَقَالَ من هذا اَجابَهُ اَنَا
فقَالَ لهُ اَذهب فَاِنّي لا اعرفُ مِن اصحابى اَحَداً اِسمُهُ اَنَا

Daraba raǰulu babi ahadi ḍḍurafāi, faqaāla: mán haẓa. Aǰābahu: ana. Faqaāla lahu aẓhab fānna la arifa min aṣhābi ahadan ismuhu ana.

Մի մարդ ծեծեց մի խեղկատակի դուռը։ Եվ ասաց (հարցրեց). ով է այդ։ Պատասխանեց նրան.— ես։ Եվ ասաց. իմ բարեկամներից չեմ ճանաչում մեկին, որի անունը լինի ես:

* * *

Լեզվի կենսաբանական երեք դրությունների միջև կանգնած մի լեզու է էվէներեն (կամ լամուտերեն) կոչված տունգուսական լեզուն, որ, ըստ Ցինցիուսի, գտնվում է կցականի և թեքականի անցման շրջանում։

Այս երեք հիմնական կարգերից դուրս կա նաև մի չորրորդը, որ, մի կողմից՝ նման է կցական դրության և, մյուս կողմից՝ թեքական դրության։ Ավելի ճիշտ՝ բռնում է երկուսի միջին տեղը։ Այդ է համադրական (պոլիսինթետիկ) դրությունը։ Համադրական է կոչվում լեզուների այն դրությունը, ուր բառերը կպչում-միանում են իրար հետ՝ բարդության ձևով, և կազմում են բարդ բառերի երկար շարքեր, որով մեր յուրաքանչյուր նախադասությունը երևան է գալիս մի բարդ բառի ձևով։ Երևույթը նույնն է, ինչ որ կցական դրության մեջ. միայն թե

մի տեղ մասնիկներն են իրար վրա բարդվում, մյուս տեղ՝ բառերը։

Համապրական դրության են պատկանում հիպերբորյան (Սիբիրի հյուսիս-արևելյան ծայրում) լեզուները (որոնց մեջ նշանավոր է գիլյակ կոչված լեզուն) և էսկիմոսների լեզուն, որը խոսվում է Գրենլանդիայում, Հյուսիսային Ամերիկայի մի մասում և այլն։ Տալիս ենք էսկիմոսերենի կազմության պատկերը, օգտվելով Բոասի էսկիմոսերենի քերականությունից (Handbook, I, էջ 970 և 1052—59) և մասամբ Ֆինկից (Die Haupttypen, էջ 31—46)։

Էսկիմոսերենի մեջ նախադասության հիմքը բարդություն է, որ հասնում է ամենամեծ չափերի. այսպես՝

1. Գոյականը կարող է միանալ գոյականին և կազմել մի բարդ բառ. ինչպես՝ il°l°o «տուն», mio «բնակիչ» և ko «ծառ» բառերից ունենք il°l°umio «տան բնակիչ, տնային», il°l°uko «տան ավերակ, տնավեր»։

2. Ածականը հետադաս ձևով միանում է գոյականին և կազմում է բարդ բառ. ինչպես՝ il°l°o «տուն», qoyaq «նավակ», ŋguaq «փոքր», ssuaq «մեծ» բառերից ունենք՝ il°l°oŋguaq «փոքր տուն», qoyarssuaq «մեծ նավակ»։

3. Մակրայը միանում է բայի հետ և կազմում է մի բարդ բառ. ինչպես՝ takor-para «տեսնում եմ», tusar-para «լսում եմ», ator-para «գործածում եմ» բայերից (r)nar- կամ (r)qaar- «առաջին անգամ, զառաջինն» մակրայներով, օրինակ՝

takornarpara «առաջին անգամ եմ տեսնում, նախատեսնում եմ».
tusarnarpara » » » » լսում, նախալսում եմ».
atorqaarpara » » » » գործածում, նախագործածում եմ»։

4. Բայը՝ միանալով մի ուրիշ բայի հետ՝ կազմում է մի բարդ բայ. ինչպես՝ uter-poq «վերադառնում է», asuar-(poq) «շտապում է» բայերից կազմվում է՝ uterasuarpoq «շտապում է վերադառնալ (դարձաշտապում է)»։

5. Բայը՝ միանալով իր խնդրի հետ՝ կազմում է մի բարդ բայ. օրինակ՝ il°l°o «տուն» և liorpoq «շինել» բառերից՝ il°l°uliorpoq «նա մի տուն է շինում (տնաշինում է)». nassuq «հղջյուր» և migarpaa «հարել» բառերից՝ nassumigarpaa «եղջերահարում է, պղտահարում է», il°l°o «տուն» և qarpoŋa «ունեմ» բառերից՝ il°l°oqarpoŋa «ես մի տուն ունեմ (տնունեմ)»։

Վերի միացումների մեջ բառերը կազմում էին միշտ մի մի դույզ. բայց կարող է բարդությունը ընդարձակվել նորանոր հավելումներով. օրինակ՝ բային մի խնդիր և այդ խնդրի վրա էլ մի ածական ավելացնելով՝

qayarssuaqarpoga

Ես մի մեծ նավակ ունեմ

(ssuaq «մեծ», qayaq «նավակ», qarpoga «ունեմ» բառերից)։

Այսպիսով մեր մի նախադասությունը դառնում է միայն մի բարդ բառ։

Բայց կարելի է բառը շատ ավելի ընդարձակել. ինչպես՝ pe «իր, բան» +si «ուսանել, ձեռք բերել» *բառերից՝* pisiwoq «նա մի բան է ձեռք բերում». *ավելացնելով սրան* niar «ջանալ, աշխատել» *և* ler «սկսել» *բայերը՝* pisinialerpoq «սկսում է ջանալ ձեռք բերել մի բան» (որ է՝ աշխատում է մի բան գնել). *սրա վրա էլ ավելացնելով* fik «տեղ» *գոյականը և վերածելով բայական ձևի՝* pisinialerfik «տեղ, ուր սկսում են բան ծախել», pisinialerfiŋaa «այստեղ էր, որ նա սկսեց բան ծախել»։

Բացի բարդություններից՝ մեծ տեղ ունի նաև ածանցումը։

Էսկիմոսերենը չափից դուրս շատ մասնիկներ ունի. լեզվի բառերի մեկ վեցերորդ մասը մասնիկ է. մասնիկները գերազանցում են հնդեվրոպական լեզուներից ոչ միայն իրենց քանակությամբ, այլև որակով. բազմաթիվ այնպիսի մտքեր, որ մենք արտահայտում ենք առանձին ածականներով կամ մակբայներով և կամ ամբողջ դարձվածքներով, այստեղ արտահայտվում են մասնիկներով։ Այսպես, օրինակ՝ մասնիկ են.

°l°lappoq, l°l°attiarpoq «մի կարճ ժամանակ».
l°l°attaarpoq «երբեմն երբեմն, ժամանակ առ ժամանակ».
l°l°arpoq «առաջապարանոք, ամբողջ ուժով».
lerpoq «սկսում է».
leriwoq «գլխովին է այսինչ բանը անելով»,
mmaaq «կարող է, վարժված է».
mukarpoq «գնացել է այսինչ ուղղությամբ»
mukaarpoq «զետեղված է այսինչ ուղղությամբ».
nnaarpoq «ուրախությամբ շարունակում է».
naraa «համաձայն է այդ մասին».
naweerpoq «այլևս չի կարող».
naweersarpaa «արգելում է նրան».

nerarpaa «ասում է քեզ».
rqissiwoq «այժմ ավելի լավ կարող է, քան առաջ».
soraa «ենթադրում է քեզ».
umaarpoq «ոչ այժմ անմիջապես, այլ քիչ հետո, ապագայում»:

Մեր լեզուների մեջ մասնիկները մի-երկու ձայնից բաղկացած ձայնախմբեր են, որոնք ունեն մի միակ առանձին և սահմանափակ իմաստ. օրինակ -իկ, որ նշանակում է «փոքր»: Իսկ էսկիմոսերենի մասնիկները, ինչպես տեսնում ենք, բավականին երկար բառեր են և պարունակում են ամբողջական մրթքեր: Ավելացնենք սրա վրա այն, որ մի մասնիկ կարող է առանձնալ նաև մի ուրիշ մասնիկ և այսպիսով բառի իմաստը չափազանց կընդարձակվի:

Մեր մասնիկները մեծ մասամբ անկենդան ձևեր են, և նրանց գործածության սահմանը ավանդություն է որոշում. կարող ենք ասել թեյարան, սրճարան, ուսումնարան, բայց չենք կարող ասել մրգարան, ածխարան, գինարան և այլն: Էսկիմոսերենի մասնիկները այդպես չեն. ընդհակառակը, նրանք մեծ մասամբ կենդանի են միշտ, և ամեն բոպե էսկիմոսը պատրաստ ունի իր շրթունքի վրա, ինչպես իր ուզած բարդությունը, նույնպես էլ իր ուզած ածանց-բառը իր ուզած մասնիկով. էսկիմոսերենում բառակերտությունը ամեն բոպե կատարվող մի հոլորական գործ է ամենքի համար:

Մեր լեզուներով վարժված մարդիկ կարող են հեշտությամբ ըմբռնել բարդ բառերի ոգին և նրանց մեծաքանակ բաղմությունը, մանավանդ նրանք, որ վարժված են գերմաներենին: Մեզ համար դժվար է ըմբռնել միայն այն, թե ինչպես բայը, մանավանդ դիմավոր բայը, կարող է բարդության մեջ կազմել և նախադասության ամբողջությունը իր մեջ հավաքել: Բայց այս երևույթն էլ կգտնի իր հասարակ բացատրությունը, երբ նկատի ունենանք, որ էսկիմոսերենի մեջ բայը գեռ գոյականից բաժանված չէ և ըմբռնվում է իբրև գոյական: Բայերի դեմքերը որոշող վերջավորությունները միևնույն ատացական հոդերն են: Այսպես, օրինակ, խոնարհում ենք «հասնել բայը».

tikippoga «հասնում եմ».
tikipputit «հասնում ես».
tikippoq «հասնում է» և այլն:

Այս ձևերը իսկապես նշանակում են՝

ժամանումս
ժամանումդ
ժամանումը և այլն։

Դնում ենք այստեղ գոյականներով ու բայերով կազմված մի ավելի երկար օրինակ։

āųlisakpoq «ձուկ է բռնում», որից՝ -ut «գործիք» մասնիկով՝

āųlisa-ut «ձուկ բռնելու թել կամ կարթ».

āųlisa-ut-is̄'ak «ձկան կարթի պարագաներ».

āūlisa-ut-is̄'ak-siwu-ŋa «ձուկ-գործիք-պարագաներ-ստացում-իմ = ձեռք եմ բերում ինձ համար ձուկ բռնելու կարթի պարագաներ».

āųlisa-ut-is̄'ak-si-niakpu-ŋa «ձուկ- գործիք- պարագաներ- ստացում- որոնում- իմ = աշխատում եմ ձեռք բերել ձուկ բռնելու հատուկ կարթի պարագաներ» (Finck, էջ 32)։

Էսկիմոսներենից գուրս մի ուրիշ լեզվից էլ օրինակ տալու համար առնենք ամերիկյան ալեուտերեն լեզուն։ Այս լեզվի քերականությունը գրեց մի ռուս քահանա՝ Вениаминов (Петербург, 1846)։ *Հետաքրքիր են հեղինակի խոսքերը իր գրքի մասին։ «Ո՞ւմ համար եմ գրում,— ասում է նա,— այս գիրքը։ Ռուսների համար. ձեմ դարձն է վեր կենալ ալեուտների լեզուն սովորել։ Ալեուտների համար. նրանք առանց քերականության էլ գիտեն իրենց լեզվով ճիշտ խոսել. բայց իրենք էլ այնքան քիչ են, որ մի քանի տարուց հետո իրենք էլ կմոռանան։ Գուցե պատահի մի մարդ, որ հետաքրքրվի նրանց լեզվով. ահա նրա համար եմ գրում այս գիրքը»։*

Գրքի տպագրությունից 100 տարի հետո գնացի Մոսկվա և ինստիտուտի գրադարանում գտա այս գիրքը. թերթերը դեռ կտրած չէին. կարդացի մեծ հաճույքով և հարցեցի ուսուցիչներս հեղինակի հիշատակը։

Մեր օրերին մի ամերիկացի էլ (Jochelson) *ուսումնասիրել է այս լեզուն։ Նա հիշում է ռուս քահանայի աշխատությունը. տալիս է նաև ժողովրդի համառոտ վիճակագրությունը։ Ըստ իրեն՝ խոսողների թիվը ընդամենը 2 000 շունչ է (Ալյասկայում՝ 2 գյուղ, 7 Ալեուտյան կղզիներում և 2 ռուսական կղզի էլ կամ-*

չատկայի մոտ)։ Հեղինակը գտնում է, որ այս լեզուն պատկանում է էսկիմոսներենին, «ինչ որ հայտնի երևում է նույնիսկ մակերեսային քննությամբ»։

Ահա այս գրքից (էջ 102) առնում եմ հետևյալ նախադասությունը.

iqya-sī-guta-qali-kâ·ku-x'

Նշանակում է «նա կարող է նորից սկսել շինել մի նավակ» (նավակն է iqyax', որ է հատկապես «փոքրիկ կաշյա նավակ»). բառացի՝ «նավակ- շինել- նորից- սկսել- կարող է- այժմ- նա»։

Ըստ Պիլսոֆերի պատուասներեն լեզուն էլ համադրական է. արմատը արմատին, բառը բառին, մասնիկը մասնիկին կցվելով՝ կազմում են մի մեծ բառ կամ նախադասություն։ Մի ամբողջության մեջ միանում են գոյական, ածական, դերանուն և հոլովական մասնիկներ։ Գոյականները ուրիշ գոյականների հետ մասնիկներով միանալով կազմում են մի բառնախադասություն։ Բայարմատի և վերջավորության միջև մըտնում են զանազան միջամասնիկներ։ Այսպիսով կազմվում են մեծ երկարությամբ բառաշարքեր։

Թեև հիշյալ հեղինակը այսպես է ասում, բայց իր գրքի վերջում դրված չորս և կես էջանոց պատմության մեջ մի բառ միայն գտա 7 վանկով, մի բառ էլ 8 վանկով. ճնշյալը բոլոր 4—5 վանկանի սովորական մեծության բառեր են։ Ամենաերկար բառը այն է, որ էջ 25-ում օրինակ է բերել, honecyopayâmbâyke-kopac «ես նրան տեսնում եմ լրագրում»։

Համադրական լեզուներն էլ իրենց բազմաթարդ ձևերի հետ ունեն նաև կարճ ձևեր։ Այսպես է, օրինակ, հիպերբորյան նիմիլյան կամ կորյակ լեզուն, որ ըստ Կորսակովի, պատկանում է հարաթարդ լեզուների խմբին, բայց երկարաբան բարդ նախադասությունների հետ գիտե նաև կազմել կարճ ու պարզ ձևեր, ինչպես երեխաներն ասելիք ճեռագրասյուեաշարք կամ ճեռագրական սյուների շարքը։ Այս նշան է, թե հարաթարդ լեզուներն էլ մտնում են փոփոխման շրջանը։

Լեզվական հիշյալ երեք դրույթյունները ներկայացնող մի շատ շոշափելի պատկեր տալու համար գնում ենք հետևյալ հասարակ օրինակը. ձեռքներիս բռնած մի կտոր հաց, առաջներս դրած մի աման մածուն, ուտում ենք։ Դա անջատական ասոցճանն է, որովհետև հացն ու մածունը առանձին ու անջատ են։ Հացի վրա քսում ենք մածնի մի շերտ. դա լինում է կցական

վիճակը։ Իսկ երբ բրդուճ ենք շինում, այսինքն հացը փշրելով մածնի մեջ, խառնում, հարում ու տրորում ենք, այնպես, որ էլ ոչ հացն է երևում առանձին և ոչ մածունը, դա լինում է թեքական վիճակը։

Անցատում, կցում ու թեքում, ահա ուրեմն այն երեք հիմնական շրջանները, որոնցով անցնում է լեզուն իր կենսաբանական հարինվածության մեջ։ Ինչպես ամեն էվոլյուցիայի ընթացքում, նույնպես և այստեղ բնականաբար ոստում չկա և լեզուները ներկայացնում են մեզ այդ երեք շրջանների միջին զանազան աստիճանները։ Այսպես՝ չինարենը, որ կոչեցինք անջատական, որոշ կետերում անջատական չէ և ստանում է կցական դույն։ Հնդկաչինի լեզուները գտնվում են անջատականության և կցականության միջին աստիճանի վրա. վրացերենը, տունգուսերենը, ճապոներենը՝ կցականության և թեքականության միջին աստիճանի վրա. իսկ արաբերենը ներկայացնում է թեքականության գերազանց օրինակը։ Շատ անգամ ավելի խորը դիտելով նկատում ենք, որ միևնույն լեզվի մեջ կան միաժամանակ երեք աստիճաններից էլ. այսինչ ձևը անջատական է, այսինչ ձևը կցական և այսինչ ձևը թեքական։ Այսպես հայերեն «բարեկամներիդ պիտի բարևես» նախադասության մեջ բարեկամ/ներ/ի/դ կցական է, պիտի անջատական, բարևես թեքական։

Լեզվի կենսաբանական այս երեք վիճակները թեև ձևական, բայց առաջ են բերում նաև էական մի տարբերություն լեզուների հարինվածության մեջ։ Այդ տարբերությունն այն է, որ մի բառի բոլոր քերականական առնչությունները անջատական լեզուների մեջ առանձին-առանձին և անկախ բառերով են արտահայտվում, կցական լեզուների մեջ առանձին-առանձին մասնիկներով, իսկ թեքական լեզուների մեջ բոլորը միասին մի տեղ են հավաքված։ Այսպես՝ եթե չինարեն ասում ենք wo-mən-ti «մեր», ունենք երեք անջատ բառ, որոնցից առաջինը՝ wo «ես», ներկայացնում է հիմնական գաղափարը, երկրորդը՝ mən, տալիս է հոգնակիի գաղափարը և երրորդը՝ ti, տալիս է սեռականի գաղափարը. մինչդեռ թեքական մեր ձևի մեջ այդ երեքը անբաժանելի կերպով միացած են. մեր առաջին դեմքի դերանվան հոգնակի սեռականն է ամբողջությամբ։ Նույնպես չին. wo-lai-la «եկա» ձևի մեջ lai տալիս է գալու գաղափարը, wo «ես» ցույց է տալիս ա դեմք, եզակի, և la «վերջացնել» ցույց է տալիս կա-

տարյալ ժամանակը. իսկ հյ. եկա (գրբ. եկի) ամբողջությամբ եզ. ա դեմքի կատարյալն է։

Այսպես նաև կցական լեզուների մեջ. օրինակ՝ Քյուրքերենում ata-lar-ən, ana-lar-ən բառերը կազմված են ata «հայր», ana «մայր» բառերի վրա ավելացնելով երկու մասնիկ, lar իրբև հոգնակիի նշան և ən իրբև նշան սեռականի, մինչդեռ հյ. ձարց, մարց ունեն միայն ց մասնիկը, որ միանգամայն ներկայացնում է թե հոգնակին, և թե սեռականը։ Նույնպես նաև Թրք. sev-er-ler «սիրում են» ձևի մեջ sev «սիրել» արմատի վրա կա երեք մասնիկ, որոնցից առաջինը (er) ցույց է տալիս ներկա ժամանակը, երկրորդը՝ (ler) ցույց է տալիս հոգնակի թիվը և երրորդը (dir, որ հապավված է) ցույց է տալիս երրորդ դեմքը։ Իսկ հայերենի մեջ (սիրեն) -են վերջավորությունը միանգամից ցույց է տալիս ներկայի հոգնակի երրորդ դեմքը։

Այսպես է նաև ծայրահեղ թևքական սեմական լեզուների մեջ. օրինակ՝ արաբ. qatala «սպանեց» ամբողջությամբ ներկայացնում է qtl «սպանել» բայի կատարյալի եզ. երրորդ դեմքի արական սեռը։

Էվոլյուցիան կանգ առնել չգիտե։

Որովհետև թևքականության մեջ այնպես է, որ բառ, արմատ, մասնիկ ու վերջավորություններ խառնված են իրար, և շատ անգամ հայտնի չէ, թե ուր է սկսում արմատը և ուր վերջանում, կամ մի տեղ այս ձևն ունի և մի ուրիշ տեղ այն ձևը, մարդկային միտքը, որ սիրում է վերլուծությունը, միօրինակությունը, համաձևությունը և պարզությունը, աշխատում է մի կարգ դնել այդ ձևերի մեջ։ Արմատների դանագան ձևերի մեջ այն, որ ավելի լիքն է, ընդհանուր է դառնում և մյուսները ջնջվում են։ Թուլացած և անարտահայտիչ մասնիկներին ուժ տալու համար օգնության են կանչվում առանձին բառեր, որոնց հաստատումից հետո մասնիկներն այլևս ավելորդ համարվելով՝ ջնջվում են։ Եվ այսպես սկսում է լեզվի մեջ մի հետադարձ շարժում։ Թևքականությունը վերածվում է անջատականության։ Մինչև որ սա էլ իր հերթին վերածվի կցականության, հետո թևքականության և այսպես շարունակ։

Ամբողջ բնության մեջ տեսնում ենք այս խոսքը. տարրերը, մարմիններըը մշտապես բաղադրության ու տարրալուծության պրոցեսի մեջ են. այսպես է նաև լեզվի մեջ։

Մի քանի օրինակներ ավելի լավ պիտի պարզեն լեզվի այս հարափոփոխ ընթացքը։— Դրարարը լավագույն թեքական լեզուներից մեկն է. իրեն հատուկ ձևերից՝ երկիցս, երիցս քանակականները, սիրեցից, խօսեցայց ապառնիները, աւուրց, յաւուրց, աւուրբք հոլովաձևերը կատարյալ թեքական ձևեր են. բայց աշխարհաբարը ջնջել է այս ձևերը և դործ է ածում նրանց տեղ երկու անգամ, երեք անգամ, պիտի սիրեմ, պիտի խոսեմ, օրերի, օրերից, օրերով, որոնք, թեքականությունը կորցնելով, դարձել են՝ առաջին չորսը՝ անջատական, վերջին երեքը՝ դուտ կցական ձևեր։ Բայց միևնույն անջատական ձևերը՝ պիտի սիրեմ, պիտի խոսեմ, բարբառներում եղել են տսիրեմ, տխօսիմ, որոնք կցական ձևեր են։ Այսպես նաև լտ. intrabo «մտից, պիտի մտնեմ», թեքական ձև է, բայց սորին լտ. intrare habes նույնի անջատական ձևն է։ Սա դարձել է ֆր. j'entrerai, որ հիմա դառնում է je vais entrer, այսինքն թեքականից՝ անջատական, անջատականից՝ կցական և կցականից՝ նորից անջատական։

Գերմանական լեզուները կատարյալ թեքական լեզուներ են. բայց նույն գերմանական խմբին պատկանող անգլերենը՝ կորցնելով իր թեքականությունը, ջնջելով բառերի ամեն տեսակի վերջավորությունները, դարձել է անջատական լեզու, և շատ տեսակետներով այսօր նա ոչնչով տարբեր չէ չինարենից։ Այսպես, օրինակ, հետևյալ նախադասության մեջ. I will go to walk with my son in the garden of my neighbour.

Երթայց շրջել ընդ որդւոյ իմում ի պարտիզի դրացւոյ իմոյ։

Ցուրաքանչյուր բառ առանձին և անփոփոխ արմատական ձև է և ընդհանուրը ոչ մի տարբերություն չունի չինարեն նախադասության կազմից։

Առհասարակ մի քանի նոր լեզուներ բռնել են այս ընթացքը և աշխատում են բառի բոլոր քերականական առնչությունները ցրել և ամեն մեկի համար առանձին ու կիսանկախ բառեր հատկացնել թե՛ հոլովման, և թե՛ խոնարհման մեջ. ինչպես՝

ֆրանս.	de mes livres	դրքերից
անգլ.	from my books	
պրս.	az kitāb-hā-i man	
ֆրանս.	il a été mangé	«կերվեց»
անգլ.	he is been eaten	

որոնց մեջ գիրքը կամ ուսուցչի գազափարի շուրջը շարված են 2—3 մանր-մունր բառեր, որոնք ցույց են տալիս սեռ, թիվ, հոլով, ժամանակ, եղանակ, դեմք և այլ քերականական առնչություններ։ Այսպիսով, առացվում է կցական դրություն, միայն ոչ թե բառի վերջից, այլ առաջից, ուրիշ խոսքով՝ առեղծվում է նախամասնիկային դրություն. երբ ֆրանսերեն ասում ենք je te ne le dis pas սկզբում ունի 4 մասնիկ. il ne se redécompose pas ունի 6 մասնիկ։

Նոր լեզուների այս ձևափոխությունը հանդեպ հին լեզուների թեքականության, կոչվում է վերլուծական դրություն։

Անշուշտ՝ ժամանակ անցնելով և համախակի գործածությունից հետզհետե մաշվելով՝ այս ձևերն էլ պիտի փոխվին և ծնունդ տան նոր կցական կամ թեքական ձևերի. արդեն անգլ. I will սղվելով շատ անգամ գործ է ածվում I'll ձևով. I do not know ջղիտեմ֊ը կրճատմամբ դարձել է I don't know; he's= he is. he has; I'd=I had, I would; he'll=he will; don't won't, can't, օրինակ՝ I don't write. he doesn't write, I didn't write և այլն, և այլն։

Կարծիք կա նույնիսկ, թե չինարենը, որ այսօր կատարյալ միավանկային անջատական լեզու է, հնագույն շրջանում թեքական բազմավանկային լեզու էր։

Լեզվի հնախոսության տեսակետից դատելով, անջատականության ունը նրա նախնական վիճակի արտահայտությունն է, կցականությունը ներկայացնում է միջին վիճակը, իսկ թեքականությունը՝ բարձրագույն շրջանն է։ Բայց դատելով լեզվի կենսաբանության տեսակետից՝ այս բնորոշումները դուրս են գալիս սխալ. քանի որ տեսնում ենք, թե անապատի անդրագետ քոչվոր արաբները խոսում են աշխարհիս գերագույն թեքական լեզվով, որ իր թեքականությամբ գերազանցում է նույնիսկ Պաբիլեսի դարի հունարենը, մինչդեռ անգլիացիք խոսում են մի լեզվով, որ անջատական է։ Պետք է ասենք ուրեմն, որ լեզվի հիշյալ երեք վիճակները պարզապես նրա ամման տարբեր երևույթներն են՝ մեքենաբար առաջացած մեկը մյուսից, և ուրիշ ոչինչ։

Ամենք, նույնիսկ լեզվաբանները, այն կարծիքն ունեն, թե ձևաբանական այս երեք դրությունները (անջատական, կցական և թեքական) համապատասխանում են մարդկային քաղաքակրթական աստիճաններին։ Իբր թե անջատական դրությունը ներկայացնում է մարդկային քաղաքակրթության ամենաստորին

աստիճանը, կցականը՝ միջին աստիճանը, իսկ թեքականը՝ ամենաբարձր աստիճանը։ Եվ այս միտքը առաջ տանելով պարծենում են, թե հնդեվրոպական նախալեզուն՝ լինելով թեքական լեզու՝ ներկայացնում է հնդեվրոպացիների քաղաքակրթության բարձրությունը։

Այս ենթադրությունը ճիշտ չէ և իր հերքումը հենց իր մեջ է պարունակում։

Նախ՝ հայտնի է, որ հնդեվրոպացիները մ. թ. ա. 2500 թվին դեռ մետաղները չէին ճանաչում և մետաղագործության ծանոթ չէին. մինչդեռ եգիպտացիները արդեն վաղուց ծանոթ էին երկաթին։ Ուրեմն ոչ էր ավելի քաղաքակիրթ։ Հնդեվրոպացիները՝ ցրվելով զանազան երկիրներ և ծանոթանալով զանազան ազգերի հետ՝ սովորեցին նրանցից մետաղագործությունը և ուրիշ արհեստներ։

Երկրորդ՝ հնդեվրոպացիները այն ժամանակ դեռ գիր ու գրականություն չունեին. մինչդեռ գիտենք, որ եգիպտացիները, չինացիները և ասորեստանցիները գիր ու գրականություն ունեին, և հաթերը այս վերջիններից սովորեցին բևեռագիր գրության ձևը։

Երրորդ՝ չինացիները թեև մինչև այսօր անջատական լեզվով են խոսում, բայց մ. թ. ա. 551—470 թվին ունեին գազափարագիր գրություն և իրենց մեծ փիլիսոփա Կոն Ֆու-ցին գրել է այդ ժամանակ բարձր բարոյականով առլցուն իր վարդապետարանը։

Չորրորդ՝ տեսանք, որ ձևաբանական դրությունները լեզվի մեջ կայուն բաներ չեն, այլ շարժական. անջատականից անցնում են կցականին, կցականից թեքականին և թեքականից նորից հետ դառնալով կրկին հասնում են կցականին և անջատականին։

Հինգերորդ՝ այս հիման վրա դատելով՝ կարող ենք ասել, թե այսօրվա անգլիացիները, որ այժմ անջատական լեզու ունեն, ավելի հետամնաց են, քան նախորդ դարերի անգլիացիները, որոնց լեզուն դեռ թեքական էր։ Նմանապես պետք է, ուրեմն, ասենք, թե հայերս, 20-րդ դարում, երբ մեր աշխարհաբարը կցական ձևեր է առնչել, ավելի հետամնաց ենք, քան ե դարի հայերը, որոնք լինելի թեքական լեզու ունեին։

Վեցերորդ՝ ինչպես եղավ, որ անապատաբնակ արաբները առնչեցին ծայրահեղ թեքական մի լեզու, Ամերիկայի «կխսա-

վայրենի», հետևեցաց կարմրամորքները արտադրեցին իրենց բարդ համադրական լեզուները, իսկ վաղուցվա կուլտուրական չինացիները դեռ մնում են իրենց անջատական լեզվով։

Նեհեցները, որոնք ձկնորսությամբ պարապող մի փոքր ժողովուրդ են (15 000 հոգի), խոսում են մի լեզվով, որ քան Տերեշչենկոյի միջին տեղն է բռնում կցական և համադրական դրության, ունի և անջատական տարրեր, ինչպես նաև բառի ներքին թևքական ձև՝ արաբերենի նման։

Այժմ, երբ դանազան լեզվաբաններ հնարում են, այսպես ասած, ընդհանուր միջազգային լեզու, այդ լեզուն լինում է ոչ թե թևքական, այլ՝ գլխավորապես կցական։

Այս բոլորից հետևում է, որ լեզվի ձևաբանական դրությունը կապ չունի ազգի մտավոր զարգացման հետ։

[Նա չափանիշ չէ նաև լեզվի զարգացած կամ «անզարգացած», «նախնական» լինելու։ Ժամանակակից կյանքը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր լեզու էլ, անջատական, կցական, թև թևքական, հնարավորություն ունի արտահայտելու այն ամենը, ինչ որ կարող է մտածել նրանով խոսող ժողովուրդը։]

ԳԼՈՒԽ Ժ

ԼԵԶՎԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Միևնույն համայնքում, միևնույն լեզվով խոսող մարդկանց մեջ հաճախ նկատելի են որոշ տարբերություններ. մեկը խոսում է արագ, մյուսը՝ դանդաղ տեմպով, մեկը խոսում է պարզ և դյուրահասկանալի ձևով, մյուսը՝ մութ և խորհրդավոր, մեկը զվարթ և երգիծական ոճ ունի, մյուսը՝ լուրջ կամ ծանրախոհ, մեկը շատ բառեր, ոճեր, առածներ, առակներ ու դանդաղ դարձվածներ է մեջ բերում, մյուսը պատմում է շատ հասարակ ձևով և այլն։ Լեզվի այս հատկությունները (արագաբանություն, պարզություն, երգիծանք, պատկերավորություն կամ սրանց հակառակը) սեփական են այս կամ այն անձին և չեն կազմում այդ լեզվի ընդհանուր հատկությունները, ըստ որում անձից անձ փոխվում են։ Այսպիսի հատկությունները կոչում ենք մասնավոր հատկություններ։ Սրանք, իրրև անհատական երևույթներ, չեն մտնում ընդհանուր լեզվաբանության մեջ։

Բայց լեզուն ունենում է նաև այնպիսի հատկություններ, որոնք սեփական են հենց լեզվին և ըստ այսմ պարտադիր կերպով երևան են գալիս նույն լեզվով խոսող բոլոր անհատների մեջ։ Այս հատկությունները կոչում ենք ընդհանուր հատկություններ։

Լեզվի ընդհանուր հատկություններն են՝ 1) դեղեցկություն 2) հարստություն, 3) ճոխություն կամ ձևաշատություն, 4) համառոտություն, 5) սեղմություն, 6) կանոնավորություն, 7) հրատակություն, 8) պարզություն, 9) մաքրություն։

Խոսենք յուրաքանչյուրի վրա առանձին-առանձին։

1. ԼԵԶՎԻ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆԸ

Առհասարակ վերցրած գեղեցկությունը մի հատկություն է, որի ըմբռնումը հարաբերական է։ Գեղեցկությունը մենք զգում

ենք իր գործած տպավորությամբ. նրա չափանիշն է ճաշակը և ճաշակը արդյունք է սովորության, հայացքների և ըմբռնումների։ Հենց որ փոխվեցին դրանք, փոխվում է և ճաշակը, փոխվում է նաև գեղեցկության զգացմունքը։ Եթե այսպես չլիներ, գեղեցկությունը բնդհանուր, հավիտենական և անփոփոխելի մի ճշմարտություն պիտի լիներ. մինչդեռ, բնդհակառակը, տեսնում ենք, որ նա տեղի և ժամանակի համեմատ տարբեր է։ Այսպես՝ արևելյան ժողովուրդների համար գեղեցիկ են վառ գույները, արևմտյան ժողովուրդների համար՝ մեղմ գույները, արևելյան ժողովուրդների համար գեղեցիկ է կլոր, սպիտակ, գեր, կարմրայտ և կցահոն դեմքը, մինչդեռ արևմտյան ժողովուրդների համար՝ ձվաձև, թխթխուր, նիհար, դժգույն և երբահոն դեմքն է հարգի։ Մի ժամանակ գեղեցիկ էին համարվում կանացի այն երկար շրթերը, որոնք փողոցի աղբն ու փոշին էին ավլում, այսօր, բնդհակառակը, կարճ շորն է համարվում գեղեցիկ։

Այսպես, ուրեմն, գեղեցկությունը փոփոխական է համաձայն հասարակական միջավայրի և ըմբռնումների։

Այս բանը մեծագույն չափով նկատելի է լեզվի գեղեցկության հասկացողության մեջ. մենք գեղեցիկ ենք համարում այս կամ այն լեզուն և ձեր ոչ թե նրա համար, որ նա էապես գեղեցիկ է, այլ որովհետև այսպես է մեզ սրամադրում մեր հասարակական միջավայրը։

Մի ձև որ գործածական է ժողովրդի բարձր խավերում մտավորականների, պետական գործիչների և նմանների մոտ, հենց դրանով էլ մեզ համար գեղեցիկ է երևում, քան այն ձևը, որ գործածական է ամբիկի և գյուղացու բերանում։ Մի ժամանակ հայերենը հենց շատ հայերի համար թվում էր նվազ գեղեցիկ և նվազ քաղցրահնչյուն, քան ռուսերենը, որովհետև ռուսները ավելի մեծ, ավելի հզոր և ավելի քաղաքակիրթ էին, ինչպես որ ռուսերենն էլ ռուս պաշտոնյաներին թվում էր նվազ գեղեցիկ և նվազ ախորժալուր, քան ֆրանսերենը, որովհետև ֆրանսիացիները ռուս օտարազգի պաշտոնյաների կողմից ռուսներից ավելի կուլտուրական ժողովուրդ էին համարվում։ Ի հակառակին դատելով՝ հայերենը ավելի «բարձր» լեզու էր համարվում, քան թյուրքերենը կամ քրդերենը, որովհետև թյուրքերն ու քրդերը «անքաղաքակիրթ» էին։ Բայց այս բոլորը սուբյեկտիվ վերաբերմունք է միայն և շատ անգամ չի դիմանում ամենափոքր քննադատության։ Օրինակի համար, երբ լսում ենք վանեցի գյուղացու բերանից ախ բառը կամ դարաբաղցի մի կնոջից

լիւ ձևը, մեզ արհամարհելի է թվում և աննկատելի, մինչդեռ գրական դու, լու ձևերը գտնում ենք ավելի ախորժալուր, ավելի գեղեցիկ։ Բայց դնենք այդ երկու հնչյունները ֆրանսերենի մեջ, որ հայերենից ու ռուսերենից ավելի նրբաշնորհ էին համարում, և կտեսնենք, թե որքան անախորժ պիտի երևան դու, լու ձևերը, փոխանակ ասելու tu, lu «դու, կարդացածդ։ Ուրեմն մեր ռամիկ, գեղջուկ տիւ, լիւ ձևերը, որոնք գրական դու, լու ձևերի համեմատությամբ անդուրեկան ու արհամարհելի էինք գտնում, այդպես չեն, այլ նույնիսկ ավելի «գեղեցիկ ու նրբաշնորհ։ Այժմ այդ միևնույն ֆրանսիական tu, lu ձևերը դարձնենք իտալերենի, որ աշխարհիս «ամենագեղեցիկ» լեզուն է համարվում և պիտի տեսնենք, թե որքան անդուրեկան պիտի թվա tu, lu արտասանությունը. այստեղ էլ պիտի մեզ դուր դան դու, լու ձևերը, որոնք մեր գրականին հատուկ հնչյուններ են։

Այս բոլորից հետևում է, որ մեր վերաբերմունքը և ըմբռնողությունը լեզվի գեղեցկության վերաբերմամբ շատ սխալ և անհատատատ է։ Բայց սխալի գոյությունը չի հերքում ճշմարտության գոյությունը. անշուշտ կա լեզվի մեջ նաև էական գեղեցկությունը, որը պետք է գտնել ամեն նախապաշարումից վեր, և ինչպես որ հասարակական կյանքի մեջ գտնվում են այնպիսի անձեր, որոնք կարողացել են վտարել իրանցից զանազան նախապաշարումներ, կարելի է և նույնը անել լեզվի վերաբերմամբ։

Լեզվի գեղեցկությունը, ըստ որում լեզուն ձայնական է, նշանակում է ներդաշնակություն. իսկ ներդաշնակությունը մեծագույն մասամբ կապված է դյուրալուր, դյուրահնչուն լինելու հետ։ Դյուրահնչուն են այն բառերը, որոնք բաղաձայնների խճողում չեն ներկայացնում, այլ ձայնավորների որոշ քանակությամբ բարեխառնված են։ Այսպիսով, ուրեմն, լեզվի գեղեցկությունը ամենից առաջ կախված է ձայնավորների և բաղաձայնների տոկոսային հարաբերությունից։

Համաձայն իմ կատարած վիճակագրության (հրատ. Ոստան, 1912, № 6, էջ 272—288) մեսրոպյան շրջանի հայերենի ձայնական տոկոսներն են՝

Ձայնավորներ 36,7 %.
Երկբարբառներ 8,2 %.
Բաղաձայններ 54,9 %.

Աշխարհաբարի համար ունենք՝ կլոր հաշվով

Ձայնավորներ՝ 41%.
Բազաձայններ 59%

Գրաբարը աշխարհաբարից 4%-ով ավելի ներդաշնակ է։

Որպեսզի այս տոկոսները մեզ մի բան ասեին, պետք էր համեմատել մի քանի ուրիշ լեզուների հետ։ Դժբախտաբար բացի սանսկրիտից, որի վիճակագրությունը կազմել է Վիտնեյը (Whitney, Ind. Gram. էջ 27), ուրիշ որևէ լեզվի ձայնների վիճակագրություն ձանոթ չէ ինձ։

Վիտնեյի կազմած տախտակը սանսկրիտի ձայնների համար հետևյալն է.

	āi	e	a	ā	o	āu	
	0,51	*2,84*	*19,78*	*8,19*	*1,88*	*0,18*	*ձայնավոր*
	i	ī	ṛ	ṝ	ḷ	u	ū
	4,85	*1,19*	*0,74*	*0,01*	*0,01*	*2,61*	*0,73*
բրթռուն	y	r	l	v			*կիսաձայն*
	4,25	*5,05*	*0,69*	*4,99*			
	ñ	ṅ	ṇ	n	m		*անգային*
	0,22	*0,35*	*1,03*	*4,81*	*4,34*		
	ḥ	*0,63*					*հագագային*
	h	*1,07*					
	ḳ	*1,31*					*վիսարգա*
խուլ			ç	ṣ	s		*շչական*
			1,57	*1,45*	*3,56*		
	gh	ǰh	ḍh	dh	bh		
	0,15	*0,01*	*0,03*	*0,83*	*1,27*		
բրթռուն	g	ǰ	ḍ	d	b		
	0,82	*0,94*	*0,21*	*2,85*	*0,46*		*պայթական*
	kh	čh	ṭh	th	ph		
	0,13	*0,17*	*0,06*	*0,58*	*0,03*		
խուլ	k	č	ṭ	t	p		
	1,99	*1,26*	*0,26*	*6,65*	*2,46*		
	կոկորդ	*քմ.*	*դանկ.*	*ատամն.*	*շրթ.*		

Վիտնեյը այս համեմատական տախտակը կազմել է 10 տարբեր հատվածներից, որոնք են՝ 2 կտոր Ռիգ-վեդայից, մեկ կտոր՝ Աթարվավեդայից, 2 կտոր՝ դանազան Բրահմանաններից, մի կտոր

էլ Մանուի օրենագրքից, Բհագավադ —Գիտայից, Շակունտալայից, Հիտոպատեջայից և Վասավադատտայից։ Ցուրաքանչյուր հատված պարունակում է հազար ձայն, և բոլորը միասին 10 000 ձայն։

Ձայնավորների և բաղաձայնների գումարը վիճակը չի տվել, բայց բոլորը միասին գումարելով (երկբարբառները դնում եմ ձայնավորների հետ միասին, իսկ ձայնավոր r և l դնում եմ բաղաձայնների հետ), ունենում ենք՝

Ձայնավորներ 42,76
Բաղաձայններ 57,24

100.—

Ձայների վիճակագրության այս թերին մասամբ լրացնելու և համեմատության մի եզր ունենալու համար՝ ես կատարեցի նաև The Gospel in many tongues (London, 1921) գրքից հետևյալ լեզուների վիճակագրությունը և գտա, որ մեկնուն հատվածի մեջ՝

Ճապոներենն	ունի	150	ձայն,	որից 52%	ձայնավոր	48% բաղաձ.
իտալերենն	»	108	»	52%	»	48% »
ֆրանսերենն	»	79	»	48%	»	52% »
հին հունարենն	»	107	»	48%	»	52% »
թյուրքերենն	»	106	»	46%	»	54% »
պարսկերենն	»	118	»	45%	»	55% »
ռուսերենն	»	102	»	43%	»	57% »
վրացերենն	»	144	»	42%	»	58% »
հայերենն	»	117	»	40%	»	60% »
անգլերենն	»	97	»	36%	»	64% »
գերմաներ.[1]	»	106	»	32%	»	68% »

Հետևաբար, ձայնավորների և բաղաձայնների տոկոսային հարաբերությամբ ամենից ավելի ներդաշնակ լեզուներն են ճապոներենը և իտալերենը (երկրորդը առաջինից մի քանի տասնորդական պակաս, որ չնշանակեցի ցուցակում), նրանցից հետո գալիս են ֆրանսերենն ու հին հունարենը, մինչև տեղը բռնում

[1] Ըստ մի ավելի մանրամասն հաշվի, ձայնավորների տոկոսը բաղաձայնների համեմատությամբ ֆրանս. 43,36% է, իտալ.՝ 47,73%, սերբերեն՝ 46,47%, գերմ. 38,86% (Meillet, Gr. serbe 16)։

են հայերենը[1], ռուսերենը, վրացերենը, Թյուրքերենը, պարսկերենը։ Իսկ վերջին տեղն են բռնում անգլերենն ու գերմաներենը։

Բայց ներդաշնակության չափը որոշելու համար բավական չէ միայն իմանալ ձայնավորների և բաղաձայնների ընդհանուր, տոկոսական չափը, այլ կարևոր է նաև նրանց բաշխումը։ Օրինակի համար հյ. գրծերով և տեղափոխված օգրծրվոէ ձևերը միևնույն տոկոսն ունեն, բայց արքան դժվարաձայն է երկրորդը՝ բաղաձայնների խճողման պատճառով։ Նույն գրքից մեր քննության առած վրացերեն հատվածում կա ծարհսծղմդես բառը, որի մեջ 7 բաղաձայն միասին են, բայց այնուամենայնիվ վրացերենի տոկոսը մի քիչ ավելի բարձր է դուրս եկել, քան հայերենը, ուր այսպիսի կուտակումներ չկան։

Այս նկատառումով հաշվեցի նաև նույն հատվածների տոկոսական բաշխումը ըստ վանկերի։ Վանկատության ժամանակ բնականաբար պետք չէր առնել բառերն առանձին առանձին, այլ ամբողջ նախադասությամբ։ Օրինակ՝ «Ասում այնպես սիրեց» պետք էր վանկատել՝

ա) Աս/վա/ծայն/պես/ սի/րեց և այլն։

Վանկերի տեսակները ըստ կազմության հետևյալներն են.

1. Երկրաց վանկ, որ բաղկացած է մի միակ ձայնավորից, ինչպես՝ a։

2. Բաց վանկ, որ սկսվում է մի բաղաձայնով և վերջանում մի ձայնավորով, ինչպես՝ ba.

3. Փակ վանկ, որ սկսվում է մի ձայնավորով և վերջանում մի բաղաձայնով, ինչպես՝ ab.

4. Երկփակ վանկ, որ սկսվում է մի բաղաձայնով և վերջանում մի բաղաձայնով, ինչպես՝ bab.

5. Կրկին բաղաձայնով սկսվող և մի ձայնավորով վերջացող վանկ, ինչպես՝ bra.

6. Մի ձայնավորով սկսվող և երկու բաղաձայնով վերջացող վանկ, ինչպես՝ abr.

---

[1] Մի գերմանացի կվազի-հայագետ հայերենի մասին ասում է, թե նա խճողված է բաղմաթիվ բաղաձայններով, և որպես օրինակ առնում է չմեսնջենավոր բառը, որ հայերենի համար գերմանական անբավարար այրուբենով գրելով, կդառնա tschmschtnöschenavor. արդարև մի անընթեռնելի բառ, ուր 14 բաղաձայն գալիս են իրար հետից և ապա՝ մի ձայնավոր։ Մինչդեռ այդ բառը, ըստ գիտական տառադարձության, հնչվում է. čəməštənjenavor.

7. Մի բաղաձայնով սկսվող և երկու բաղաձայնով վերջացող վանկ. ինչպես՝ babr.

8. Մի բաղաձայնով սկսվող և երեք բաղաձայնով վերջացող վանկ. ինչպես՝ babrb.

Համաձայն այս բաժանման՝ հիշյալ լեզուները ներկայացնում են մեզ հետևյալ վիճակը.

%	a	ba	ab	bab	bra	abr	babr	babrb
հայ.	10	87		3				
իտալ.	23	53	12	10	2			
ֆր.	8	67	—	22	3			
հն.	13	60	10	17				
Քրք.	4	9	5	21				
պրս.	4	68	2	26				
ռուս.	7	50	2	26	7		2	
վրց.	8	57	3	18	3			1,7
հյ.	2	54	—	37 (+2)		2		
անգլ.	3	26		57 (+8)			3	3
գերմ.	2	35	4 (+2)	44	2		9	

Բացի բաղաձայնների բաշխումից կարևոր է իմանալ նաև, թե հատկապես ինչ կարգի բաղաձայններ կան լեզվի մեջ և ինչ համեմատությամբ են գործածվում դրանք։ Օրինակի համար խ, ղ, ծ, ճ *դժվարալուր ձայներ են, և եթե նրանք հաճախ պատահին մի լեզվի մեջ, ինչ.* հյ. խաղող, խաղաղ, խաղճախուղճ *բառերի մեջ, տարակույս չկա, որ շատ անախորժ տպավորություն կգործեն ականջի վրա, թեկուզ և տոկոսական չափը չխանդարեն, կամ նույնիսկ եթե այդ տոկոսական չափը բավական բարձր էլ լինի։ Այսպիսի անախորժ ձայներից է, օրինակ՝ արաբ.* ع, *որի արտասանության ժամանակ կոկորդը բավական չարչարվում է (հայերենի մեջ չկա այս ձայնը)։*

Բաղաձայնների տեսակը որոշելը շատ կարևոր է նաև վանկերի տեսակը որոշելու ժամանակ։ Երբ որևէ վանկ սկզբից կամ վերջից ունի մեկից ավելի բաղաձայն, շատ հեշտ է լինում հընչյունը, եթե անցման բաղաձայնը նայ կամ սեղմ է և շատ ավելի դժվար, եթե պայթական է։ Այսպես՝ bra, bla, psa *կամ* arb, alb, asp *և այլն շատ հեշտ են հնչվում և անախորժելի են, ընդհակառակը,* šča, čto, *որոնք այնպես սովորական են ռուսերենում, կամ հյ.* տկա, ճկա *և այլն, դժվար ու ծանրալուր են։ Հեշտ է հատկապես և անախորժելի՝ յ կիսաձայնը, որով հարուստ է*

հայերենը (ինչպես՝ ձայն, կյանք և այլն) և որ նախորդ ձայնավորին փափկություն է տալիս միայն։ Սրա համար էլ վերոհիշյալ ցուցակում այս ձայնը մենք դրինք փակագծի մեջ։

Բայց բաղաձայնների տեսակը և նրանց փոխադարձ տոկոսական հարաբերությունը որոշել կարելի չէ մի փոքրիկ հատվածի վրա։ Դրա համար պետք է առնել երկար հատվածներ՝ գոնե տիպի բավանդակություն։ Ձեռնարկելով մի այդպիսի աշխատանք վերոհիշյալ լեզուներով, բավականանում եմ տալով հայերենի տվյալները։

ՀԱՑԵՐԵՆԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՇՎՈՎ*

Լեզվի ձայնավորների և բաղաձայնների քանակը, նրանցից յուրաքանչյուրի՝ մյուսների հետ ունեցած համեմատությունը և այլն որոշելու, հետևաբար նույն լեզվի ներդաշնակության աստիճանը գտնելու համար մի պարզ միջոց կա, որ թեև շատ ձանձրալի է, բայց և շատ ապահով արդյունք է տալիս։ Այն է՝ հաշվել որոշ հատվածի մեջ գտնված ձայնների թիվը և թվաբանական հաշվով կազմել նրանց համեմատական տախտակը, ինչպես արել է Վիտնեյը սանսկրիտ լեզվի համար (տես վերը)։

Հայերեն լեզուն ներկայացնում է երեք գլխավոր ձև կամ կերպարանք (գրաբար, արևմտյան աշխարհաբար և արևելյան աշխարհաբար). մենք էլ, ուրեմն, պետք է այս երեքը առանձին-առանձին քննության առնենք։

Գրաբարի համար քննության առարկա է եղել հայ լեզվի հնագույն վիճակը, այն՝ որ երևան է գալիս մեսրոպյան շրջանի առաջին թարգմանիչների գրիչների տակ՝ իր ամենից մաքուր, ամենից անարատ, ամենից ավելի բնիկ ու անխառն ձևի մեջ։ Ըստ այսմ՝ Եղիշե, Փարպեցի, Խորենացի, Մամբրե, Հովհան Մանդակունի և ուրիշ համեմատաբար հետնագույն մատենագիրներ մեր հաշվից դուրս են մնում. բոլորովին մի կողմ ենք դնում հունարան հեղինակների չինած հունարան հայերենը, ունիթորների հնարած լատինարան հայերենը և վերջապես կիլիկյան կամ միջին հայերեն լեզուն։ Այս վերջինը, անշուշտ, նույնպես հետաքրքիր էր քննության առնել, բայց որովհետև այդ լեզվի պատ-

* Տպված է արևմտահայ գրական լեզվով «Ոստան» ամսաթերթում, 1912, № 6, էջ 272—288։ Այստեղ վերատպագրում ենք ժամանակակից հայերենով և մանակի չակուճներով։

կերը իր հարազատ կերպարանքով ներկայացված չէ դեռ, ուստի մենք էլ առայժմ զանց ենք առնում։

Բայց որովհետև նույնիսկ մեր ընտրած (մեսրոպյան) շըրջանի մատենագրությունը ոճով և ձևով բազմազան պեսպիսություններ, կամ նյութի իսկ պատճառով՝ բազմաթիվ կրկնություններ է տալիս, ուստի մեսրոպյան մատենագրությունից էլ ընտրել ենք այնպիսի հատվածներ, որոնց մեջ կարելվուչն չափ նվազ լինեն հատուկ անունները և նույն բառերի կրկնությունները, որով և ներկայացրած կլինենք այն ժամանակի ասվորական լեզվի պատկերը։ Այս պատճառով չենք վերցրել Ագաթանգեղոս, Բուզանդ, Կորյուն, Հին Կտակարան և այլն։

Մեր քննության մեջ մտել են հետևյալ ութ հատվածները.

1. Գործք Առաքելոցից՝ Գլուխ ԺԷ. համար 16—34. «և (Յաբէնս) ի Քաղն նոցա (Պաւղոսի)... անկեալք ի նա հաւատացին»։

2. Նույնպես Գործք Առաքելոցից՝ Գլուխ ԻԸ. համար 1—10. «յայնժամ գիտացաք Թէ...որ ինչ պէտք էինն»։

3. Եղնիկ Կողբացու առաջին գրքի առաջին երեք գլուխները, ուր ամփոփված է Եղնիկի ամբողջ ճարտարությունը. «Ցորժամ զաներևութէն... ընդ չորս անկիւնս տիեզերաց արշաւեցուցանել» (Տպ. Վենետ. 1826, էջ 5—18)։

4. Սերբերիանոսի եպիսկոպոսի Եղեսացւոյ ճառ Ա.-ի մեծի աւուր ճրագալուցին, խօսեցեալ յերուսաղէմ վասն հաւատոյ և ի հօրէ ծննդեանն. մեկ էջ. «այլ Թերևս պարտ և պատշաճ իցէ... և դուք արժանի արարէք լսել»։

5. Կիւրղի Երուսաղեմացւոյ Կոչումն Ընծայութեան, ճառ Ա. Որք եկեալ էին կնիք առնուլ յերուսաղէմ մատուցելոց. «Աշակերտք նորոց կտակարանաց... օրհնութեան ընդ վեհասւերան»։ Վիեննա, 1832։

6. Նորին Կիւրղի ճառ երրորդ. Ասացեալ վասն մկրտութեան, «ուրախ լիցին երկինք և ցնծասցէ երկիր... խոնարհութեան մեծութիւնք»։

7. Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի Մատթէոսի մեկնութիւն. ճառ Բ (գիրք Ա. էջ 18—20, Վենետիկ 1826)— Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու. «յիշեցէք արդեօք զպատուէրն՝ զոր տուաք ձեզ... զի այդչափ փութաս յանմուռս մտանել»։

8. Սրբոյն Բարսղի Կեսարացւոյ Վեցօրէից ճառք, ճառ Դ.

«Ազգի ազգի տեսիլք մալնգինք... ախորժելով նոցին լինիցին ունկնդիրք». Վենետիկ, 1830։

Ամենից առաջ ուսումնասիրենք այն խնդիրը, թե լեզվի ներդաշնակությունը քննելու ժամանակ տառերը պիտի նկատի առնենք, թե ձայները։ Տառ և ձայն բոլորովին տարբեր բաներ են։ Գրում ենք ու, բայց մի տեղ կկարդանք ֆրանսերեն ou, ուրիշ տեղ էլ՝ v։ Գրում ենք n, բայց բառի սկզբում կարդում ենք vo, ուրիշ տեղ՝ o։ Արդ՝ ու երկու տառ է, ou կամ v միակ ձայներ են։ Ընդհակառակը՝ n մեկ տառ է, բայց vo երկու ձայն է։ Եթե նկատի առնենք գրերը, ou կամ v, և o կամ vo միևնույն հաշվի տակ պիտի մտնեն, մինչդեռ վ = v, o = o տարբեր հաշիվների տակ պիտի մտնեն։ Լեզվի ներդաշնակությունը լսողական երևույթ է. տեսողության հետ գործ չունի, հետևաբար գիրը, այսինքն հնչյունը, այս կամ այն ձևով գծագրելու սովորությունը երբեք նկատի չպետք է առնել ներդաշնակության խնդրում։ Ներդաշնակության խնդրում նկատի պիտի առնենք միմիայն ականջի կրած տպավորությունը, այսինքն՝ ձայնը և, հետևաբար, ու = v և ու = ou, n = o և n = vo տարբեր տարբեր հաշիվների տակ պիտի մտնեն, մինչդեռ ու = v, վ = v, և ւ = v կամ n = o, o = o և ոյ = o իրրև միևնույն բաները պիտի նկատվեն։

Ներդաշնակության քննության մեջ ձայները միայն ի նկատի առնելու սկզբունքը ընդունելուց հետո, դժվար չէ բմբռնել նաև, թե գրաբարի ներդաշնակության հաշվի մեջ՝ նկատի պիտի առնենք տառերի ոչ թե այժմյան այլափոխված հնչումը, այլ այն, որ ուներ հայ լեզուն մեսրոպյան շրջանում և որ լեզվաբանական ու բանասիրական քննությունները երևան են հանել։ Այսպես՝ ա, ե, ի երկբարբառներ էին, ուստի և չէին հնչվում av, yev, iv, ինչպես այժմ սովորություն ունենք հնչելու։ Վերջին պարագայում հիշված երկբարբառները չպիտի կարծրանային իրրև առանձին տարր ներկայանալ մեր ցանկում, այլ լուծվելով իրենց մասերին՝ պիտի անցնեին ա, ե, յ, ի, վ ձայների հաշվի մեջ։ Նույնպես պետք է իմանալ նաև ու, եա, ոյ, և այլն ձայների համար։ Ինչպես տեսնում ենք, սրանք բոլորը իրրև առանձին և անկախ հնչյուններ նշանակված են մեր ցանկում։

Գալով յ և ւ տառերին, սրանցից առաջինը ներկայացնում է մեր ցանկում բառասկզբի յ-ն, ուր երկբարբառի մաս չի կազմում, այլ բոլորովին անկախ է։ Իսկ երկրորդը՝ հոգույ, որդույ և այլ բառերում պատահած ւ տառն է։ Պատշաճ դատեցինք նաև

առանձին նշանակել o ձայնը, որ ուրիշ բան չէ, եթե ոչ նույն աւ երկբարբառը՝ բաղաձայնի մոտ։

Անցնենք այժմ ը գրին։ Հարց է, թե հին հայերը ինչպես էին հնչում երկու կամ ավելի հաջորդական բաղաձայնների խումբը, այսինքն՝ ինչպես էին հնչում, օրինակ, գլուխ, ճաթսն, ծաղր, բրթռալ, չմշտնջենավորապահ և այլ այսպիսի բառեր, որ մենք հիմա կարդում ենք գլուխ, ճաթսն, թրթռալ, չմշտնջենավորապահ և այլն։ Կարելի է կարծել, թե հին հայերը մեզանից ավելի արագ և փութկոտ առոգանությամբ արտասանում էին գլուխ, ճաթսն, թրթռալ և այլն, կարող ենք կարծել, սակայն, նաև, որ մեր այժմյան ընթերցումը նրանց էլ սովորական ձևը լիներ։

Այս խնդրի լուսաբանության համար առանձին մի հոդված ունի Մեյյեն (MSL, XI, 16)։ Մեյյեն նկատում է, որ բայերի կատարյալ ժամանակի դեմքերը, երբ վերջավանկ են, ե են ստանում. օրինակ. ե-ճաթ, ե-տու, ե-կի, ե-դի, ե-բեր և այլն, բայց երկվանկ բայերը չեն ստանում. օրինակ՝ սիրեցաց, բերի և այլն։ Երկրորդ՝ ապառնիում երկվանկ բառերը ներկայացնում են -ցց-, իսկ եռավանկերը՝ -ացց-, օրինակ՝ բացցես, թացցես, կացցես, լացցես, կեցցես, խցցես, լցցես, անցցես, ցուցցես, և այլն, բայց՝ սիրեացես, խօսեացես և այլն։ Արդ՝ գնամ, գրել բայերի կատարյալը լինում է գնաց, գրեաց, ապառնին՝ գնասցես, գրեսցես։ Կատարյալում ձայնավորի հավելված չկա. ուրեմն, գնաց, գրեաց միավանկ չեն, այլ երկվանկ՝ գրեաց, գրրեաց։ Նույնպես ապառնիում չենք գտնում -ցց-, այլ -ացց-, ուրեմն գնասցես, գրեսցես երկվանկ չեն, այլ եռավանկ՝ գրեասցես, գրրեսցես։ Սրանցից հետևում է, որ բաղաձայնների խմբերը հին ժամանակ էլ այսօրվա պես ը ձայնավորով էին արտասանվում։

Մի կետ կա, սակայն, որ Մեյյեն իր հոդվածում նկատի չի առել. այս էլ ս, զ, շ բաղաձայններով սկսվող բառերն են։ Սրանց վրա էլ անդրադառնում է իր քերականության մեջ (Esquisse, էջ 30)։ Եվ որովհետև սա կարևոր խնդիր է, ուստի մենք էլ մի քիչ ավելի ընդարձակ կխոսենք։

Այսօր այս կարգի բառերը արտասանվում են ը-ով, ինչպես՝ ըշտապ, ըստուգ, ըստացող և այլն։ Ի՞նչպես էր, սակայն, հների մոտ։ Մեյյեի հնարագյուտ ձևով դատելով՝ վերցնենք, օրինակ, սպանանել, ստեղծանել և ստանալ բայերը։ Առաջին երկուսի կատարյալը լինում է սպան, ստեղծ. թեև մենք վարժված ենք նաև ասելու. եսպան, եստեղծ, սակայն սրանք ընտիր ձևեր չեն. Աստ-

վաճաչունչն ունի 77 անգամ սպաս և 18 անգամ ստեղծ ձևերը, բայց մեկ անգամ իսկ չկա եսպաս, եստեղծ: Ասել է, թե սպաս, ստեղծ երկվանկ են, քանի որ իրենց վրա չեն կարող վերցնել, ուրիշ խոսքով՝ կարդացվում են ըսպաս, ըստեղծ: Սառնամ բայի ապառնին լինում է ստասցիս. որ ունի -ս, ուրեմն եռավանկ է և ոչ երկվանկ, ուրիշ խոսքով՝ կարդացվում էր ըստասցիս և ոչ թե՝ ստասցիս:

Այս բոլորից հետևում է, որ մեսրոպյան շրջանում ս, շ, զ գրերից առաջ ը ձայնը ավելանում էր: Վերջին ժամանակներում այս ձայնը վերացավ և այն ժամանակ սկսեցին գրել եստեղծ, եսպաս, ինչպես որ՝ Խորենացին (եստեղծ զնշանագիրս). այսօրվա արտասանության մեջ պահպանվել է ե. դարի վիճակը:

Ը-ի համար հետևյալ ձևով ենք վարվել մեր ցանկում. գրված ը՝ ասելով, հաշվել ենք ընդ, ընտանի, ընդունիլ և այլն բառերի մեջ պահված ը ձայնը. ջանգիր ը՝ ասելով հաշվել ենք գրչուխ, պտուղ և այլ բառերում գտնված ը-երը. սակայն՝ ստանալ, ստեղծել և այլ բառերի ը ձայնը, որ շատ փոքր թիվ է կազմում, նկատմամբ հաշվի մեջ չենք առել:

Հիշված ութ հատվածների ամբողջությունը պարունակում է 17,196 տառերի մի հավաք. կամ՝ եւ, աւ, իւ, ուս, այ, ոյ, եա մեկ մեկ ձայն հաշվելով, հաշվելով նմանապես անգիր ը-երը, ընդամենը 16,339 ձայն, ինչ որ կազմում է գրեթե տպագրական ամբողջ մի թերթ: Սրանց մեջ ա-երի թիվը ճիշտ 2000 է և ր՝ 200:

Յուցակս ունի երկու կարգի թվանշաններ. առաջին կարգում համեմատության եղր է առնված ա-ի քանակությունը, նշանակում է, թե երբ խոսքի մեջ հարյուր հատ ա ձայն գտնվի, համեմատաբար քանի բ, քանի գ և այլն պիտի գտնվի: Իսկ երկրորդում համեմատության հիմքը խոսքի ձայնների հանրագումարն է, նշանակում է, թե երբ խոսքի մեջ 100 ձայն գտնվի, դրանցից քանի՞ հատը ա է, քանի՞ հատը բ, քանի՞ հատը՝ գ և այլն:

Յուցակից երևում է նաև, որ 100 ձայնից բաղկացած խոսքի մեջ (ը-երը՝ գրված, թե անգիր, միշտ միասին հաշվելով) ձայնավորների ընդհանուր գումարը 36,762%, երկբարբառներինը՝ 8,294%, իսկ բաղաձայններինը 54,944%:

Ձայնավոր	*36,762%*
Երկբարբառ	*8,294%*
Բաղաձայն	*54,944%*
Գումար՝	*100%*

Նույնպես նաև, եթե խոսքի մեջ հարյուր անգամ ա ձայնը կա, նույն խոսքի մեջ գտնված բոլոր ձայնավորների գումարը (ա-ն միասին հաշվելով) 300,35 է. երկբարբառներինը՝ 67,80, բաղաձայններինը՝ 448,80. ուստի և նույն խոսքը պարունակում է ընդամենը 816,95 ձայն:

Ձայնավոր	300,35
Երկբարբառ	67,80
Բաղաձայն	448,80
Գումար	816,95

Ցուցակիս տված վերջին արդյունքը, այսինքն՝ 54% բաղաձայն հայերենի մեջ՝ շատ մխիթարական է. սրանով հայերենը անցնում է ներդաշնակ լեզուների խմբի մեջ:

Գործածության քանակության կողմից՝ ահավասիկ մեր ձայների կարգը:

ա, ե, ը, ի, ը (անդիր), ե, ո, մ, ս, ց, ու, կ, և, զ, տ, լ, ք, է, բ, այ, չ, դ, եա, բ, պ, գ, ճ, ռ, իւ, աւ, ղ, յ, շ, խ, ծ, վ, ոյ, օ, ժ, ձ, ջ, փ, ը (գրված), ճ, ւ, ֆ:

ՅՈՒՑԱԿ

ա-երի գումարը 100-ից		ձայների գումարը 100-ից
ա	100	12,240
բ	10	1,224
գ	8,85	1,083
դ	10,25	1,254
և	39,45	4,828
զ	20,7	2,533
է	16,9	2,068
ը	անդիր 43	5,263
ը	գրված 2,5	0,305
ք	13,45	1,646
ժ	2,9	0,355
ի	44,9	5,496
լ	19,75	2,417
խ	5,85	0,716
ծ	5,50	0,673
կ	21,70	2,656
հ	8,65	1,057
ձ	2,85	0,348
ղ	6,75	0,826
ճ	1,95	0,239

ա-երի գումարը 100-ից		ձայների գումարը 100-ից
բ	27,85	3,409
ջ	6,55	0,801
ն	86,85	10,631
շ	6	0,734
ո	31,10	3,806
չ	11,95	1,462
պ	9,05	1,107
ջ	2,80	0,342
ռ	8,40	1,028
ս	27,60	3,378
վ	5,45	0,667
տ	20,65	2,527
ր	53,35	6,530
ց	22,80	2,790
ւ	0,70	0,085
փ	2,55	0,312
ք	17,10	2,093
և	21,55	2,637
օ	4,45	0,544
ու	6,90	0,844
իւ	7	0,856
ուս	22,50	2,754
եա	10,20	1,248
ոյ	5,35	0,654
այ	12,35	1,511

բ

Ահավասիկ գրաբարի ներդաշնակության աստիճանները. Հիմա անցնենք քննելու մեր աշխարհաբարի ներդաշնակության աստիճանը։

Արևմտյան աշխարհաբարի ներդաշնակության քննությունն սկսելու ժամանակ երկու տարբեր միտք ունեցա։ Մեկ հատվածներ վերցնել իրեն նմուշ Դուրյանից, Գևշիկ Պաշլյանից, Օտյանից, Տեմիրճիպաշյանից, Նար-Պեյից, Զարոնյանից և ուրիշ նշանավոր գրողներից էջեր վերցնել, բեև նախորդ գրաբար հատվածները աշխարհաբարի թարգմանել։ Առաջինի կողմն էր նշանավոր հեղինակների անունը, մեկի ճոխ լեզուն, մյուսի պատեհարավոր դարձվածները, երրորդի խորիմաստ արտահայտությունները և այլն, իսկ երկրորդի կողմն էր համեմատության ճշտությունը։ Սրանից բացի, մեր հիշած հեղինակներից գրեթե ոչ մեկը մաքուր աշխարհաբար չի գրել. բոլորն էլ խառն են, գրաբարի ձևա-

յորդներով։ Հետևաբար՝ նրանցից կազմված աստիճանաչափը չէր կարող ուղիղ լինել։ Երկրորդ՝ որ լեզվի դեղեցկությունը, բառերի ընտրությունը, բովանդակության վեհությունը, դեղեցիկ ոճեր ու պարձվածներ, այս բոլորը նշանակություն չունեն տառերի թվաբանական հաշվի մեջ, ուր ամեն բան տոկոսների վրա է հիմնված։ Մինչդեռ երկրորդ ձևին դիմելով՝ մենք պիտի ունենայինք մի քանի առավելություններ. նախ պիտի կարողանայինք գրաբարը համեմատել ուղղակի աշխարհաբարի հետ. եթե որևէ միտք գրաբարի մեջ այսքան ձայներով է արտահայտվում, նույն միտքը աշխարհաբարի մեջ քանի՞ ձայներով կարտահայտվի. երկրորդ՝ տոկոսական թվերը, որ կազմեցինք գրաբարի համար, ճիշտ իրենց համեմատելի եղրը պիտի ունենային աշխարհաբարի մեջ, որովհետև երկուսն էլ հավասարաչափ և նույն ոգին ունեցող հատվածներից են առնված։

Այս պատճառով որոշեցի, ուրեմն, գրաբարի հիշված ութ հատվածները թարգմանել աշխարհաբարի։ Թարգմանությունը կատարեցի ըստ ամենայնի ճիշտ, գրաբար ձևերից բոլորովին ազատ, բայց նաև ամբարտանությունից հեռու։ Օրինակ՝ եանց, ոց, ից և այլն հոլովումներ չեմ գործածել բոլորովին. կը՛ լինի, կը լիներ ձևերի փոխարեն դրել եմ աշխարհաբար կըլլայ[1], կըլլար ձևերը. ուր որ աշխարհաբարը երկնակի ձևեր ունի, աշխատել՝ եմ երկուսն էլ գործածել փոփոխակի, որպեսզի տոկոսական թիվը ավելի ընդհանուր լինի, մխակոզմանի չլինի. ինչպես՝ ատեն և ժամանակ, պէս և նման և այլն։

Տառերի հաշվի մեջ բացարձակապես հետևել եմ ձայնական դրության։ Աշխարհաբարի մեջ երկրաբառ չկա, ուստի՝ եւ = yev ոյ = ouy, այ = ay, եա = ya և այլն իրենց մասերին են վերածվել և այնպես հաշվի մեջ մտել։ Չկարդացված տառերը հաշվի մեջ չեն առնվել, օրինակ՝ բառավերջի յ ձայնը[1]։ ե և է միևնույն հնչումն ունեն, ուստի միևնույն հաշվի տակ են մտել։ Ամեն բառի մեջ երկու մ են հնչում, ուստի երկու անգամ եմ հաշվել։ Ը ձայնը՝ գրված թե չգրված՝ ամեն տեղ էլ հաշվի եմ առել։ Ղ դիրը երբեմն խ է կարդացվում (ինչպես թուղթ,), դրանք առանձին եմ հաշվել, որպեսզի խ-ին գումարվի։ Յ ձայնը բառի սկզբում հ է

[1] *Նկատի ունենալով, որ հաշվումները կատարված են հին (նախաոսմանական շրջանի) ուղղագրության համաձայն, այստեղ էլ թե արևմտյան, և թե արևելյան աշխարհաբարից բերվող օրինակները թողնում ենք հին ուղղագրությամբ, բացի ուա-ից, որ դարձրել ենք վա։*

հնչվում, միջում յ, վերջում անձայն է. ես էլ սկզբնատառ յ հաշվել եմ ի-ի հետ, բառամերջինը չեմ հաշվել, իսկ իմ նշանակած յ գիրս ներկայացնում է բառամիջի յ, որի վրա ավելացրել եմ՝ նախատառ ե ձայնի սկզբում հնչվող յ ձայնը, երկու ձայնավորների մեջ մտած անգիր յ ձայնը (ինչպես միայն, որ կարդացվում է միյայն), ես, իւ վանկերի սկզբում գտնված յ ձայնը: Ո ձայնը ցուցակիս մեջ չկա, որովհետև հնչվելով բառասկզբում վօ, մեջտեղում օ, հաշվված է վ և օ ձայների վրա: Ոյ կարդացվում է ույ (քնքույշ), օ (առտուծոյ), օյ (խոյ). ամեն մեկը իր հնչման համաձայն մասերի է վերաժված և այն ձայների վրա է հաշվված: Վ ձայնի հաշվի մեջ մտել են ν հնչյունն ունեցող բոլոր գրությունները (այն է բառասկզբի ո = νο, վ, ւ, ու): Ըստ այսմ՝ ու ձայնը միայն ձայնավոր ու-ն է (ֆր. ου), որի մեջ մտել է նաև ոյ (= ույ, տմմա. քնքույշ) և իւ (= you, տմմա. ութիւն). վանկերի միջի ու ձայնը: Իւ երկու տեսակ հնչում ունի արևմտյան աշխարհաբարում՝ ֆրանս. u և you (ինչպես՝ ձիւն, -ութիւն): Արևելյան աշխարհաբարում այս երկուսին մեկ հնչում են տալիս, բայց արևմտահայերի մոտ այդպես չէ. ուստի ես էլ հաշվել եմ իւ առանձին՝ ձիւն, սիւն և այլն բառերի մեջ, և մասերի վերաժելով -ութիւն և այլն ձևերում:

Ահավասիկ արևմտյան աշխարհաբարի ձայների ստոհոսական ցուցակը.

ա-երի գումարը 100-ից		ձայների գումարը 100-ից
ա	100	12,770
բ	9,492	1,212
գ	7,392	0,944
դ	6,474	0,826
ե	5,030	0,642
է	82,589	10,547
ը	40,988	5,234
թ	11,811	1,508
ժ	1,706	0,217
ի	31,408	4,011
լ	14,304	1,826
խ	4,855	0,620
ծ(=խ)	0,787	0,100
հ	7,611	0,972
կ	28,827	3,681
հ	12,904	1,648
ձ	2,799	0,357

ա-հի	գումարը	100-ից	ձայնեի	գումարը	100-ից
	ղ	6,561		0,837	
	ճ	1,706		0,217	
	մ	26,334		3,363	
	յ	32,633		4,167	
	ն	77,996		9,960	
	շ	6,649		0,849	
	չ	9,842		1,256	
	պ	9,273		1,184	
	ջ	3,980		0,508	
	ռ	6,649		0,849	
	ս	17,322		2,212	
	վ	43,482		5,553	
	տ	23,578		3,011	
	ր	58,573		7,480	
	ց	9,011		1,150	
	փ	2,055		0,262	
	ք	12,860		1,642	
	օ	38,013		4,854	
	ու	26,946		3,441	
	եւ	0,568		0,072	

Երկու ցուցակները համեմատելով իրար հետ՝ հետևյալ զգալի տարբերությունները ենք տեսնում։ — Դ ձայնը գրաբարի մեջ 1, $^1/_2$ % է, արևմտահայ գրականում 0,8, այս գլխավորապես ըստ մանրիկի ջնջումից է առաջացել և երկրորդ՝ դ, դարպ, այդորիկ, այդր, այդ, և այլ ձևերից, որոնք արևմտահայ գրականում կամ ջնջվում են կամ ա-ով են գործածվում, ինչպես այդ մարդը, ատոր, ատիկա և այլն։ Ջ ձայնը գրաբարի մեջ 2,5 % է, արևմտահայ գրականում՝ բնական էր սպասել 0,6, հայցականի զ նախդրի ջնջման պատճառով։ Գրաբարի մեջ է ձայնի համար ունենք 2 %, բայց սրա վրա պետք է ավելացնել նաև 4,8 % ե և 2,6 % եւ, որով ընդհանուր գումարը կլինի 9,5. այսպիսով՝ ե-է ձայնների քանակը (10,5) ավելի մեծ է, քան գրաբարում. սրա էլ պատճառը եր, ներ, երու, ներու, երով, ելով և այլ ձևերն են, որոնց դեմ գրաբարն ունի ք, ից, աց, ոց, օք, եալ և այլն։ Ը-ի տոկոսը (5,2) մի քիչ պակաս է գրաբարից (5,5). սա մի քիչ զարմանալի է, որովհետև արևմտահայ գրականը իր բազմաթիվ կը-երով և ը հոդով պետք է որ ը-ի շատ ավելի մեծ քանակ ներկայացներ գրաբարի դեմ։ Բայց խնդիրը պարզվում է, եթե նկատենք, որ գրաբարի մեջ թեև ը հոդը չկա, բայց ձայնը կա (ինչպես՝ ճա-

ցքն, մատնանքն). *երկրորդ՝ գրաբարը կը չունի, բայց գրա փոխարեն ունի ընդ, բուա նախդիրները, մեծ քանակությամբ ղ (որ հնչվելով ըզ՝ տալիս է անգիր ը-երի խոշոր թիվ) և դոյականների վրայի ըն հավելվածը (ինչպես հարսըն, ձուկըն, մուկըն) և այլն։ Այսպիսով, մեկի կրճատը մյուսի հավելվածով փոխանակվելով, արդյունքը այսպես է եղել։ Ի ձայնը գրաբարի մեջ 5,4% է, արևմտահայ գրականում՝ միայն 4. այս բավական մեծ պակասը բացատրվում է գրաբարի ից, իւ, իւք հոլովներով, որոնք այսօր եղու, ով, ներով ձևերն առանալով՝ ի ձայնի մեծ կրճատում է տեղի ունեցել։ Գրաբարի մեջ ունենք 2,4% ւ, արևմտահայ գրականում՝ պակաս է եղել՝ 1,8%. սա տեսանել-տեսներ, կերտել-կերբեր և այլն ձևերի փոփոխության պատճառով է։ կ ձայնը գրաբարի մեջ 2,6% է, այսօրվ բարձրացել է 3,6%-ի չափով, անկատար և ապառնիի կը մասնիկի պատճառով։ ց ձայնի դեմ գրաբարում գտնում ենք 0,8%, այսօրվ 4,1. այս խոշոր տարբերությունը շատ հասկանալի է նրանով, որ գրաբարի մեջ ունենք այ, ոյ, եա երկբարբառները և բառասկզբի և ձայնավորը, որոնք գրաբարի մեջ առանձին ենք հաշվել, իսկ այսօրվ յ ձայնի վրա ենք անցկացրել։ Ն ձայնը գրաբարում 10,6 % է, արևմտյան գրականում՝ 9,9, պակասը ն հոդի կրճատումն է. այս պակասը, անշուշտ, չափավորված է աշխարհաբարի հոդնակի ներ-ի հավելումով։ Ռ ձայնը գրաբարում 1% է, այսօրվ եղել է 0,8, պատճառը առ մասնիկի կորուստն է և երկրորդ՝ առնել-բնել բայը։ Ս գրաբարի մեջ 3,3% է, այսօրվ՝ 2,2, այսչափ պակասելու պատճառը գրաբարի հայցականի ս մասնիկն է, որ ջնջվել է։ վ ձայնի տոկոսն է գրաբարում 0,6%, այսօրվ՝ 5,5, այս խոշոր տարբերությունը բնականաբար առաջացել է նրանից, որ երկրորդի համար վ ձայնի հաշվի մեջ մտցրել ենք ոչ միայն վ, այլև ու, եւ, աւ, իւ երկբարբառների երկրորդ մասը և նախատառ ո (vo) ձայնավորի առաջին մասը։ տ ձայնը գրաբարի մեջ 2,3%, այսօրվ 3% է. տոկոսի բարձրացումը առաջացել է առ, առիկա, առոր, առոնք և այլ բառերից, որոնք գրաբարում ոչ առով են գրվում։ Ր գրաբարում 6,3%, այսօրվ 7,4% է. տոկոսական առավելությունը առաջացել է հոդնակի եր, ներ, երս, երով (գրբ. ք, ց, ս,) հոլովումից և գերբայական -եր ձևից (բսեր, բերեր, գրբ. -եալ)։ Շատ իջել է ց ձայնի տոկոսը (գրբ. 2,7, այսօրվ՝ 1,1), որի պատճառը նախ գրաբարի հոդնակիի հոլովումն է (սեռ. տր. քաղաքաց, բաց. ի քաղաքաց), երկրորդ՝ ց*

նախդիրը, որ ջնջվել է և երբորդ՝ անցողական բայերի -եցուցանել ձևը, որ դառնալով -ցնել, մեկ ց կորցրել է։ Ք ձայնը գրաբարում 2 % էր, այստեղ՝ 1,6 %, տարբերության պատճառը հոգնակիակերտ ք մասնիկի անկումն է։ Օ ձայնի դեմ արևմտյան գրականում գրված են 4,8 %, գրաբարում 0,3 %, բայց սրա վրա պետք է ավելացնել նաև 3,8 % ո, որ աշխարհաբարում միասին ենք հաշվել. որանով տոկոսական չափերը բավական մոտենում և համապատասխանում են իրար նրանով, որ մինչդեռ, մեկ կողմից՝ գրաբարի ո հոլովումը (գետոյ, գետոց, ձիոյ) պակասում է աշխարհաբարում, մյուս կողմից՝ բոլոր դործիականները ո հոլովման են անցնում (ինչ. քաղաքով, քաղաքներով)։ Ու գրաբարում 2,7 % է, արևմտահայ գրականում 3,4. ավելացման պատճառը հոգ. ուս. երու, ներու ձևն է և ու շաղկապը. որ գրաբարի մեջ չկա։ Վերջապես հիշենք՝ ի ձայնը, որ գրաբարում 0,85 % է, աշխարհաբարում՝ 0,07 %. այս չափազանց կրճատման պատճառն այն է, որ գրաբարի մեջ հաշվի ենք առել ի գրությունը ամեն տեղ, իսկ աշխարհաբարում՝ միայն ի (ֆրանսերեն u) հնչումով (սիւն, ձիւն), իսկ ճովիւ, -ուիւն և այլն իրենց տարրերին վերածելով՝ հաշվել ենք մյուս ձայների վրա։

Յուցակից երևում է, որ արևմտյան գրականում 100 ձայնից բաղկացած խոսքի մեջ ձայնավորների ընդհանուր գումարը 40,9 է, բաղաձայններինը 58,7. նույնպես նաև, եթե խոսքի մեջ հարյուր անգամ ա ձայնը կա, նույն խոսքի մեջ գտնված բոլոր ձայնավորների գումարը (ա-ն միասին հաշվելով) 320,512 է, իսկ բաղաձայններինը՝ 462,496, ուստի և նույն խոսքը պարունակում է ընդամենը 783,008 ձայն։ Այս թվերը համեմատելով գրաբարի տոկոսական թվերի հետ, տեսնում ենք, որ այստեղ բաղաձայնների տոկոսը 3,8 % ավելի է, քան գրաբարինը. սրա պատճառը երկբարբառներն են, որոնց բաղաձայնային մասը (գրեթե 10 %) գրաբարի բաղաձայնների վրա գումարված չէ, իսկ այստեղ գումարված է։ Ուրիշ խոսքով գրաբարը իր բազմաթիվ երկբարբառների պատճառով ավելի նեղդաշնակ է, քան արևմտյան գրականը, որ ջնջել է երկբարբառները։

Շատ հետաքրքիր է մյուս եղրակացությունը. որևէ հատվածի գրաբարը պարունակում է 816 ձայն, իսկ արևմտյան գրականը՝ 783 ձայն (մինչև անգամ երկբարբառները առաջինում իրր մեկ ձայն, իսկ երկրորդում՝ իրենց տարրերին վերածված հաշվելով)։ Սա շատ հակառակ է այն ընդհանուր կարծիքին, որով

գրաբարը համարվում է ավելի կարճ, սեղմ ու ամփոփ լեզու, իսկ աշխարհաբարը ավելի ճապաղ և երկարաբան։ Քննությունը հակառակն է ցույց տալիս։ Գրաբարի երկարաբույան պատճառը պետք է լինի նախդիրների առատությունը, նրանց կրկնությունը, ածականների համաձայնությունը և այլն։ Այսպես՝ օրինակ՝ զ, ի, յ, առ, ընդ, ըստ պակասում են աշխարհաբարում և շատ անգամ միևնույն միտքը առանց նախդրի է բացատրվում (տուն գնաց = գնաց ի տուն). նախդիրների կրկնությունը բավական երկարացնում է խոսքը, որից աշխարհաբարը բոլորովին զուրկ է (ընդ աւուրն ընդ այնոսիկ = այն օրերը). ածականների համաձայնություն բնավ գոյություն չունի աշխարհաբարում (մեծ տիկնոջ = մեծ տիկնոջ)։ Սրանցից բացի, գրաբարի շատ բառեր արևմտյան աշխարհաբարում կրճատ ձևով են, ինչպես սիրեցուցանել-սիրցընել, ժողովել-ժողվել, սովորիլ-սորվիլ, հաւանեցուցանել-հաւնեցնել և այլն։ Աշխարհաբարն էլ ունի իր երկարաբանությունները, ինչպես հոգնակիի հոլովները (քաղաքներու, քաղաքներով), բայերի մեջ կը և պիտի (կը սիրեմ, կը սիրէի, պիտի սիրեմ) և այլն, բայց այս բոլորը գրաբարի երկարաբանություններից ավելի քիչ են։

Գործածության քանակի կողմից՝ ահավասիկ արևմտյան աշխարհաբարի ձայնների կարգը.

ա, է, ն, ր, վ, ը, օ, յ, ի, կ, ու, մ, տ, ս, լ, հ, գ, թ, չ, բ, պ, ց, ծ, դ, ո=շ, զ, դ, ղ, խ, ջ, ձ, փ, ժ=ճ, իւ, ֆ։

Գ

Այժմ անցնենք արևելյան աշխարհաբարին։

Ինչպես արևմտյան, նույնպես և արևելյան աշխարհաբարի ներդաշնակության ատոիճանը քննելու ժամանակ ավելորդ համարեցի ընտրել արևելյան աշխարհաբարով գրված անկախ հատվածներ, այլ՝ համեմատության ավելի ճշտության համար՝ նույն 8 գրաբար հատվածները թարգմանեցի մաքուր գրական լեզվով և նրանց քննությունը կատարեցի։

Քննության արդյունքը բավական հետաքրքիր եղավ. ձայներից ոմանք ավելացան, ոմանք պակասեցին, բայց սովորաբար միևնույն ձայները, տեղ-տեղ ավելանալով և տեղ տեղ պակասելով՝ գրեթե նույն թվով մնացին։

Ահավասիկ սրանց մանրամասն հաշիվը։

Բովանդակ 8 հատվածների մեջ ա ձայնի գումարը արև-

մըայան աշխարհաբարում 2286 էր. արևելյան աշխարհաբարում դրանցից 114 հատ պակասեց, բայց 118 հատ ավելացավ. այնպես որ նույն հայտնածների թարգմանության մեջ բոլոր ա-երի դումարը եղավ 2290։ Արևելյան աշխարհաբարում ա-երի կրճատման պատճառներն են. 1. -ած ձևով դերբայների քիչ գործածությունը. տուած եմ-ավել եմ, 2. կատարյալի ու վերջավորության փոխարեն եց ձևի գործածությունը, տուաւ-տվեց, ըսաւ-ասաց. 3. -ցաւ վերջավորության տեղ -ցին. խօսեցաւ-խօսեցին, կարգուեցաւ-կարգվեցին. 4. նույն -աւ վերջավորության ամբողջական չնջումը. խօսեցավ-խօսեց, վարժուեցաւ-վարժվեց. 5. -ալ շաղկապի փոխարեն՝ էլ. 6. ասիկա, ատիկա, անիկա դերանունների բացակայությունը։ Ա-ի ավելացման պատճառներն են. 1. ըսել, ընել ձևերի տեղ՝ ասել, անել ձևերի գործածությունը. 2. բազմավանկ բառերի մեջ ա-ի պահպանությունը, որ արևմտյան աշխարհաբարում չնջվել է։ Բաժնել-բաժանել, պակսիլ-պակասել, ցամքեցնել-ցամաքեցնել, կը պատռտի-կը պատառոտվի, դադրելով-դադարելով, առաջվնէ-առաջվանից։

Բ ձայնը արևմտյան աշխարհաբարում 217 էր, արևելյանում՝ 213։

Գ ձայնը առաջինում 169 էր, երկրորդում այս թվից 5 հատ պակասեց և 11 հատ ավելացավ, որով եղավ 175։ Ավելանալու պատճառն է երկրորդի գնալ բայը, որի փոխարեն առաջինը գործածում է երթալ։

Դ ձայնը առաջինում 148 էր, երկրորդում 3 ավելանալով դարձավ 151, պատճառը դա, դրա, դրանք ձևերն են, որոնք առաջինում տ-ով են գրվում (տա, տափիկա, տառնք և այլն)։

Ջ ձայնը առաջինում 115 է, երկրորդում՝ 8 պակասելով դարձավ 107. պակասելու պատճառը հայցականի զ մասնիկն է, որ առաջինում երբեմն գործածվում է դերանուններին մեջ, ինչպես զանոնք, զանիկա և այլն։

Է ձայնը առաջինում 1888 էր, երկրորդում՝ դրանից 166-ը պակասեց, բայց 158 ավելացավ, որով եղավ 1880։ Պակասելու պատճառն է 1. բացառականի է մասնիկը, որ երկրորդում ից է, քաղաքէն-քաղաքից, որմէ-որից. 2. բայերի ինչ-ինչ ձևերի մեջ է-ի փոխարեն ի-ի գործածությունը. օրինակ՝ որպէս զի առնէ-որպէսզի առնի, կը պաուէ-կը պաուի. 3. ներգոյականի մեջ բառի տեղ ում-ի գործածությունը. քաղաքին մէջ-քաղաքում. 4. իրեն, իրենք, իրենց բառերի դեմ երբեմն գործածված իրաւ, իրաւք, իրաւց

բառերը. 3. լեցնել բայի գեմ լցնել: է ձայնի ավելացման պատճառներն են 1. -ած ձևով գերբայի տեղ -ել գերբայի գործածությունը՝ առած եմ-ավել եմ. 2. ալ շազկապի գեմ՝ էլ. 3. բայերի ինչ-ինչ ձևերի մեջ է ձայնի գործածությունը, որ առաջինում ուրիշ ձևով է. ինչպես՝ գոյացրեց-գոյացուց, տվեց-առաւ, արեցըրաւ, բողնել-բողուլ. 4. երկրորդ յոգնության փոխարեն առաջինի գործածությունը. կըխօսին-կը խօսեն, թող սորվին-թող սովորեն, շարժիլ-շարժվել. 5. միևնակ բառի փոխարեն մենակ:

Ը ձայնը առաջինում 937 է, երկրորդում՝ քարդմանության մեջ 234-ը պակասում է և 110 ավելանում, որով լինում է 813: Պակասելու պատճառներն են. 1. մը հոդի տեղ մի-ի գործածությունը. 2. հայցականում ը հոդի տեղ -ին՝ բշնամիները ջարդեցբշնամիներին ջարդեց. 3. բազմավանկ բառերի մեջ գեղչված ձայնավորը փոխանակող ը- ի գեմ բուն ձայնավորի գործածությունը. առաջվընէ-առաջվանից, պատռել-պատառոտել. 4. ըլլալ, ընել, ըսել բայերի տեղ լինել, անել, ասել: Ը-ի ավելացման պատճառներն են. 1. անշեշտ ձայնավորների կրճատումը գրաբարի սճով, որ առաջինում գրեթե չկա. ջուրի-ջրի. 2. միավանկ բայերի կու մասնիկի փոխարեն կը. օրինակ՝ կտայ, կգայ, կլայ. 3. սրանք, սրանց, նրանք, նրանցից և այլն դերանունները, որոնց համապատասխան ձևերը արևմտյան աշխարհաբարում ը չունեն. 4. անցողականի մեջ ը- ի գործածությունը. գոյացրեց, խօսեցրեց. 5. լցնել՝ փոխանակ լեցնել:

Թ ձայնը առաջինում 270 է, երկրորդում՝ 264, պակասը երբալ բայի պատճառով է, որի փոխարեն գործածում ենք գնալ:

Ժ ձայնը առաջինում 39 է, երկրորդում 44, ավելացման պատճառն է ժամանակ բառը, որի գեմ արևմտահայը շատ անգամ գործածում է առեն:

Ի ձայնը առաջինում 718 է, երկրորդում 138 պակասել է և 270 ավելացել, որով լինում է 850: Պակասելու պատճառն է. 1. նեոգոյականի տարբեր գործածությունը. բաղարիճ մէջ-բաղարում. 2. ասիկա, ատիկա, անիկա դերանունների ջնջումը. 3. անշեշտ ի ձայնի կրճատումը հոլովման մեջ. արաբիչէն-արաբչից. 4. ի հանդող բառերի անո., տը., բաց. հոլովը՝ գինիի, գինիէն-գինու, գինուց, 5. ապառնիի պիտի մասնիկի փոխարեն -լու ձևը, գնալու եմ, պետք է գնամ-պիտի երթամ. 6. միևնակ բառի փոխարեն մենակ. 7. երկրորդ յոգնության փոխարեն առաջինի գործածությունը. շարժիլ-շարժվել: Ավելացման պատճառներն են. 1. մը հոդի փոխա-

բեն մի. 2. բացառականի է-ի փոխարեն -ից. որմէ-որից. տուեցե-տուից. *3. հոդ. սեռ. հոլովի մեջ* ի. քաղաքներու-քաղաքների. *4. եզակիում ուհոլովման փոխարեն* ի. հայու-հայի, ամէնուն-ամէնին. *5. շնչավոր էակների որոշյալ հայցականի* -ին *ձևը՝* տղային կանչեցէք-տղան կանչեցէք. *6. բայերի երկրորդ յոլորդության փոխարեն առաջինի գործածություններ.* կարգուեցաւ-կարգվեցին, խօսեցաւ-խօսեցին. *7. ապառնիի մեջ է-ի փոխարեն* ի. կը պահէ-կպահի, առնէ-առնի:

Ա. *ձայնը առաջինում 327 է, երկրորդում պակասում է 31, ավելանում է 26, գումարը կլինի 322: Պակասելու պատճառներն են. 1.* ըլլալ *բայի դեմ լինել (մեկ լ պակաս). 2. լեռ. բառի տեղ՝* սար: *Ավելանալու պատճառներն են. 1.* -ած, -եր *ձևով դերբայների դեմ* -ել. կերած եմ, կերեր եմ -կերել եմ. *2. բայերի մեջ արևմտահայ բ ձևի դեմ լ կամ ոչինչ.* չուտեր, չի թերաւար-չի ուտի(լ), չի թերաւա(լ). *3. աղեկ բառի դեմ միայն լաւ բառի գործածություններ:*

Ե *ձայնը արևմտահայ աշխարհաբարում 111 է, արևելահայերենում 1 պակասել և 2 ավելացել է, որով լինում է 112: Պատճառն է կաճուխ-վաղ, տղայ-երեխայ, աճուշ-քաղցր բառերի գործածությունը:*

Ը *ձայնը առաջինում 174 է, որից 4 պակասում է, 1 ավելանում, գումարը կլինի 171: Պակասելու պատճառը* -ած *ձևով դերբայն է, որ արևելյանում քիչ է գործածվում և երկրորդ՝ ինծի ձևը, որի դեմ ունենք միայն ինձ: Ավելանալու պատճառն է մուխ բառի դեմ միշտ ծուխ ձևի գործածությունը:*

Կ *ձայնը առաջինում 659 է, երկրորդում պակասել է 183, ավելացել է 14, գումարը՝ 490: Պակասելու պատճառներն են. 1. կը մասնիկի տեղ ում ձևի գործածությունը.* կը բերեմ, կը բերէի-բերում եմ, բերում էի. *2.* ասկէ, ատկէ, անկէ, ուրկէ, ճոսկէ, ասիկա, ատիկա, անիկ, աղեկ *բառերի բացակայությունը: Ավելանալու պատճառն է ապառնիում կը մասնիկի գործածությունը:*

Հ *ձայնը առաջինում 295 է, երկրորդում 15 պակասում է, 9 ավելանում, գումարը լինում է 289: Պակասելու պատճառն են* ճոս, ճոդ, ճոճ, ճով, յառաջացեալ *բառերը, որոնց տեղ գործածում ենք* այստեղ, այդտեղ, այնտեղ, քամի, առաջացաւ: *Ավելանալու պատճառն է* ետ-յետ, եռեւ-յետև *ձևը:*

Ձ *ձայնը առաջինում 64 է, երկրորդում՝ 66. ավելացումը՝* ինձ-ինծի *բառի պատճառով է:*

Ղ ձայնը առաջինում 150 է, երկրորդում, 16 ավելանալով, լինում է 166. ավելացման պատճառն է ճոս, ճոգ, ճոճ, կրճամ բառերի դեմ այստեղ, այդտեղ, այնտեղ, կարող եմ բառերի գործածությունը:

Ճ ձայնը (39) անփոփոխ է մնացել: (Ճերմակ–ապիտակ բառը մեր հատվածների մեջ չի հանդիպել):

Մ ձայնը առաջինում 602 է, երկրորդում 27 պակասում է, 189 ավելանում, որով լինում է 764: Պակասելու պատճառն է որմէ, ինձմէ, քեզմէ, ձեզմէ և այլ ձևերի դեմ որից, ինձնից, քեզնից և այլն: Ավելանալու պատճառն է սահմանականի և ներգոյականի ում մասնիկը, որ մ ձայնի անագին քանակություն է ավելացնում գրաբարի և արևմտահայ գրականի համեմատությամբ:

Յ ձայնը առաջինում 746 է, երկրորդում 13 պակասում է, 47 ավելանում, որով լինում է 780: Այս ավելացման պատճառն է. 1. իւ երկրաբարբառը, որ առաջինում շատ անգամ հնչվում է իւ (ֆրանս. u), իսկ մեզ մոտ՝ միշտ յու (ֆր. you). 2. գիտութեան, մեծութեան և այլ ձևերի դեմ գիտութիւնից, մեծութիւնից, որոնք յ ձայնը կրում են. 3. սահմանական ներկայի և անկատարի մեջ շեշտյալ բառերի մոտ նախադաս էականի գործածությունը, որ ավելորդ յ ձայնն է առաջացնում. բարի են (ֆրանս. yen) կոչվում, արևմտահայ՝ պարզապես բարի կը կոչուին 4. Ներման յ ձայնի ավելացումը ե-ով սկսվող բայերի վրա (y) երևում են– կ'երևան: Պակասելու պատճառն է երբայ բայը, որի փոխարեն գործածում ենք գնալ:

Ն ձայնը առաջինում 1783 է, երկրորդում պակասում է 220, ավելանում է 148, մնում է 1711: Պակասելու պատճառն է. 1. հոդի սակավ գործածությունը արևելյան գրականում. դպրոցին դուռը = դպրոցի դուռը. 2. ան, վան հոլովման տակ այ, ինչպես՝ աղջկան = աղջկայ, տարուան = տարվայ, հիմակուան–հիմիկվայ. 3. ներգոյականի ում ձևը, որ մեկ ն պակասեցնում է. քաղաքին մեջ = քաղաքում: Ավելանալու պատճառներն են. 1. ասով, առով, անով ձևերի դեմ սրանով, դրանով, նրանով և այլն. 2. դերանուններում մ–ի փոխարեն ն. քեզնից, մեզնից, ձեզնից, քեզանով և այլն = քեզմէ, մեզմէ, ձեզմէ, քեզմով. 3. թողուլ բայի դեմ՝ թողնել. 4. շնչավոր էակների հայցականում –ին, –ներին, օրինակ՝ կովին, կովերին = կովը, կովերը:

Շ ձայնը առաջինում 152 է, երկրորդում պակասում է 12 և լինում է 140 (աւուշ = քաղցր բառի պատճառով):

Զ ձայնը առաջինում 225 է, երկրորդում 6 ավելանալով լինում է 231, ավելացման պատճառն է բացասականների վրա կրկնված չ ձայնը, որ առաջինում գոյություն չունի, օրինակ՝ ոչինչ չունի = ոչինչ ունի:

Պ ձայնը (212) անփոփոխ է մնացել:

Ջ ձայնը առաջինում 91 է, երկրորդում 15 պակասում է և լինում 76. պակասը ներգոյականի պատճառով է (քաղաքում = քաղաքին մէջ):

Ռ ձայնը առաջինում 152 է, երկրորդում լեռ = սար բառի բացակայության պատճառով 2 պակասելով՝ լինում է 150:

Ս ձայնը առաջինում 396 է, երկրորդում պակասում է 3, ավելանում է 13, լինում է 406: Ավելացումը ժամանակակից հայերենի լիս ձևի և սար = լեռ բառի պատճառով է. խօսելիս = խօսած ատեն, լալիս է = կուլայ: Պակասը վիս բառի համար է, որի դեմ գործածում ենք միշտ ինձ:

Վ ձայնը առաջինում 994 է, երկրորդում 28 պակասում է, 24 ավելանում, լինում է 990: Պակասը՝ 1. երկրորդ լծորդության պատճառով է. օր. խօսեցաւ = խօսեց. բորբոքուեցաւ = բորբոքվեց. 2. նմանապես տուաւ, ըսաւ, ըրաւ, և այլ ձևերի դեմ տվեց, ասեց, արեց ձևերի գործածության պատճառով. 3. որովհետև ինով, քով, բառերի դեմ գործածվում են միայն քամի, մօտ: Ավելանալու պատճառն է ո ձայնով սկսվող բայերի խոնարհումը, առաջինում ասվում է կ'ողողէ, որով ո ձայնը բառի մեջ ընկնելով հնչվում է օ, իսկ մեզ մոտ ասվում է ողողում է և ո բառասկզբում մնալով հնչվում է վո:

Տ ձայնը առաջինում 539 է, երկրորդում պակասում է 5, ավելանում է 21, լինում է 555: Ավելացման պատճառն է նոս, նոդ, նոն, քով բառերի փոխարեն այսաեղ, այդաեղ, այնտեղ, մօտ բառերի գործածությունը: Պակասելու պատճառն է ատիկա, ատոր և այլ ձևերի փոխարեն այդ, դրա և այլ բառերի գործածությունը:

Ր ձայնը առաջինում 1339 է, երկրորդում պակասում է 33, ավելանում 61, լինում է 1367, պակասելու պատճառն է բայերի խոնարհման մեջ ր-ի գործածությունը. ինչպես չեմ տար = չեմ տալիս, չի թերանար = չի թերանա(լ), ավելացման պատճառն է. 1. անցողականի մեջ ներմուծված ր ձայնը. գոյացուց = գոյացրեց. 2. դերանուններների մեջ ավելացած ր ձայնը՝ սրանով = սոսվ, նրանք = անոնք, դրանց = ատոնց, նրանցից = անոնցմէ.

3. սար բառի գործածութիւնը՝ փոխանակ լեռ. 4. քաղցր բառի գործածութիւնը՝ փոխանակ անուշ:

Յ ձայնը առաջինում 206 է, երկրորդում պակասում է 9, ավելանում 104, լինում է 301. այս խոշոր ավելացման պատճառն է. 1. բացառականի ից մասնիկը. փողոցից, նրանցից. 2. բայերի մէջ -ց վերջավորութիւնը. տուաւ, ըսաւ, ըրաւ, բերաւ = տվեց, ասեց, արեց, բերեց. 3. անուշ բառի տեղ բաղցր բառի գործածութիւնը: Պակասելու պատճառն է գրաբարի հոգ. սեռ. -ց ձևի սահմանակ գործածութիւնը:

Փ ձայնը առաջինում 47 է, երկրորդում՝ 49:

Ք ձայնը առաջինում 294 է, երկրորդում 13 պակասում է, 25 ավելանում, լինում է 306: Պակաս պատճառն է. բով-մօտ բառի գործածութիւնը. 2. անեղական բառերի ք ձայնը. օր. ձեռքեր = ձեռներ, կրօնքի = կրօնի են. Ավելանալու պատճառն է. 1. ամէնուն բառի դեմ ամէնքին. 2. հով բառի դեմ քամի. 3. անուշ բառի դեմ քաղցր բառի գործածութիւնը:

Օ ձայնը առաջինում 869 է, երկրորդում 68 պակասում է, 19 ավելանում, լինում է 820, պակասելու պատճառն է. 1. ասոնք, ասոնց, և այլ ձևերի դեմ սրանք, սրանց ձևերի գործածութիւնը. 2. հոս, հող, հոն մակբայների տեղ այստեղ, այդտեղ, այնտեղ: Ավելանալու պատճառներն են. բաղմավանկ բառերի մէջ գևշված ո-ի վերականգնումը. ինչպես պատուել = պատառոտել, սորվիլ = սովորել. 2. կրնալ բայի դեմ՝ կարողանալ:

Ու ձայնը առաջինում 616 է, երկրորդում 127 պակասում է, 219 ավելանում, լինում է 708. պակասելու պատճառն է առաջինում ու-ի սղման բացակայութիւնը. ինչպես՝ ջուրի = ջրի. 2. ու հոլովման պակաս տարածումը արևելյան գրականում. հայու = հայի, ամէնուն = ամէնքին. 3. հոգ. սեռ. -երու, -ներու մասնիկի տեղ -երի, -ների, օրինակ՝ քարերու = քարերի. 4. միավանկ բայերում կու մասնիկի տեղ կը. օր. կուտայ, կուգայ = կտայ, կգայ. 5. անցողականում ու ձայնավորի տեղ և. գոյացուց = գոյացրից: Ավելանալու պատճառներն են. 1. ում մասնիկի գործածութիւնը բայերում և նեղգոյականի վրա. ուտում եմ = կուտեմ, փողոցում = փողոցի մէջ, փողոցը. 2. ի հանգող բառերի ու հոլովումը, գիհիի = գիհու. 3. իւ ձայնի յու հնչումը. և սրան համեմատ՝ 4. -ութիւն հանգող բառերի հոլովման ձևը. գիտութենէ-գիտութիւնից:

Իւ (ֆրանս. u) ձայնը արևելյան աշխարհաբարում չկա: Ամ-

փոփելով այս բոլորը՝ տեսնում ենք, որ մեր բնագրերի Թարգմանության մեջ առաջինը գործածում է 17 900 ձայն, երկրորդը՝ միևնույն միտքը բացատրելու համար 18 026 ձայն. ընդամենը ավելացած է 1 623 ձայն, պակասել է 1 497 ձայն, որով ավել-է մնում 126 ձայն։

Ձայնավորների և բաղաձայնների քանակության կողմից դնում ենք հետևյալ արդյունքը։ Առաջինը ունի 10 573 բաղաձայն և 7 327 ձայնավոր, երկրորդը ունի 10 665 բաղաձայն և 7 361 ձայնավոր։

Անհատական այդ երկուսի ձայնավորների և բաղաձայնների համեմատական տախտակը։

	Արևմտյան	ածխարհաբար		Արևելյան	ածխարհաբար
ա	2286	մ	602	2290	764
բ	217	յ	746	213	780
գ	169	ն	1783	175	1711
դ	148	շ	152	151	140
ե	115	չ	225	107	231
է	1878	պ	212	1880	212
ը	937	ջ	91	813	76
թ	270	ռ	152	264	150
ժ	39	ս	396	44	406
ի	718	վ	994	850	990
լ	327	տ	539	322	555
խ	111	ր	1339	112	1367
ծ	174	ց	206	171	301
կ	659	փ	47	490	49
հ	295	ք	294	289	306
ղ	64	օ	869	66	820
ղ	150	ու	616	166	708
ղ (խ)	18	և	—	18	13
ճ	39	Գումար	17.900	39	18026

Լեզվի ներդաշնակությունը որոշելու համար կարևոր է նաև քննել ձայնավորների բազմազանության աստիճանը։ Մի լեզու, որ թեև ձայնավորների տեսակով բարձր է, բայց հաճախ կրկնում է միևնույն ձայնավորը, չի կարող համարվել ներդաշնակ։ Այսպես է, օրինակ, սանսկրիտը, որ շարունակ կրկնում է a ձայնավորը. ինչպես՝ Mahabharata, Râmayana, Manavadharmaçastra նշանավոր գրական երկերի անուններում։ Սանսկրիտում ա ձայնավորը այնքան շատ է, որ (ինչպես հայերենում ը) որոշել են գրության մեջ չգրել և ամեն բաղաձայնից հետո կարդալ ա, եթե

ուրիշ ձայնավոր չի գրված։ Սակայն վիճակը նշանավոր հնդկագետը սանսկրիտի իր մեծ քերականության մեջ ասում է, թե հնդիկները իրենց այդ ձայնավորը հնչում են ոչ թե ə, այլ իրր ə (ը), և միայն եվրոպացիներն են, որ սովորություն են դարձրել գրել և հնչել ա։

Մենեվիչյանը իր «Գիրք գրելու արուեստքը» աշխատության մեջ (Վիեննա, 1926), էջ 13—14 օրինակ է առնում այս առթիվ հյ. անկարելիությունը բառը և համեմատելով 9 ուրիշ լեզուների համանիշ բառի հետ՝ գտնում է, որ

լա.	impossibilitas	*ունի*	6	*վանկ,*	3	*ձայնավոր*
իտ	impossibilita	»	»	»	»	»
ֆր.	impossibilité	»	6	»	4	»
անգլ.	impossbility	»	6	»	2	»
գերմ.	unmöglichkeit	»	4	»	4	»
հունգ.	lehetetlenség	»	5	»	2	»
հն.	ἀδύνατον	»	4	»	3	»
թրք.	mümkinsizlik	»	4	»	2	»
սերբ.	nemogučnost	»	4	»	3	»

իսկ հայերենը ունի 6 վանկ՝ 5 տարբեր ձայնավորներով, որից և եզրակացնում է, թե այս բոլորի մեջ ամենից ներդաշնակը հայերենն է։

Բայց մի բառի համեմատությունը ոչինչ չի ապացուցանում։ Հայերենի մեջ էլ ունենք ա-երի շատ մեծ հաճախություն. ինչպես՝

Ապահարզան, մահտարաժամ, պատրաստական, համաբարբառ, այլազան, համախառնական, ազատամարտ, ճակատամարտ, համարձակամայն, համատարած, արդարադատ, ճարտարարան, սարսափահար, փառապանծ, հաճոյաբաշատ, խարդավանանք, ապահատակ, անտառապատ, գրականական, վանահայականական, հրապարակական, դավադրական *և այլն, և այլն, որոնք ունեն միայն ա ձայնավորը։*

Հայերենի մեջ ամենից ավելի գործածական ձայնը ա է. քիչ են այն բառերը, որ իրենց մեջ չունեն ա ձայնավորը[1], *որ*

---

[1] Հետաքրքրության համար նշում ենք, սակայն, Սպիտակից 8 նախադասություն, որոնք ամբողջապես զուրկ են ա-ից.

Փորձեցեր զսէրս իմ և քննեցեր ի զիշերի. փպ. 3.
Ի բէն է զովութիւն իմ, յեկեղեցիս մեծս օրհնեցից զբեզ.
Իա. 26.

թևև երաժշտության մեջ շատ հարդի է, բայց նրա հաճախակի կրկնությունը ականջի համար հաճելի չէ։ Առձեռն բառարանի մեջ (որ ունի ընդամենը 849 էջ) առաջին 184 էջերը ունեն ա–բա սկսվող բառերը, որ անում է ամբողջ բառարանի մեկ հինգերորդը։

Լեզվի ներդաշնակության աստիճանը որոշելու համար կարևոր է նկատի առնել նաև լեզվի շեշտը։ Այն լեզուները, որոնք շեշտը դնում են առաջին վանկի վրա, դժվարալուր տպավորություն են թողնում։ Այսպես է, օրինակ՝ հունգարերենը։ Մեղմ տպավորություն է թողնում շեշտը, երբ վերջավանկի վրա է. այսպես են ֆրանսերենը, տաճկերենը և հայերենը։ Ծանր է լինում տպավորությունը նաև, երբ շեշտը բարձր կամ ուժեղ է, ինչպես են, օրինակ, անգլերենը, գերմաներենը։

Վերջապես շատ կարևոր նշանակություն ունի լեզվի տոնը։ Յուրաքանչյուր լեզու, այսինքն յուրաքանչյուր ժողովուրդ, ունի իր որոշ խոսակցական տոնը։ Հաճախ այդ տոնը տարբերվում է միևնույն լեզվի մեջ՝ բարբառից բարբառ։ Օրինակ՝ Շամախու հայոց բարբառը երկարաձայն և երգեցիկ է, Ախալցխայի բարբառը ցածր ու դանդաղ, Նոր-Նախիջևանի բարբառը՝ արագ ու բարձրաձայն։ Նմանապես անգլերենը ցածր, խուլ ու դանդաղ է, ֆրանսերենը՝ աշխույժ և արագ, հունարենը՝ շատ արագ, հայերենը միջին տեմպ ունի։

Դործ դնելով բոլոր չափանիշները, որքան որ կարելի է, հայերենի վրա, գտնում ենք, որ հայերենը լեզվի զեղեցկության տեսակետով գտնվում է միջին դիրքի վրա, մի կողմից՝ իտալերենի ու ֆրանսերենին, մյուս կողմից՝ անգլերենի ու գերմաներենի, ռուսերենի և վրացերենի նման։

Մեծ եղև մինչև յերկինս ողորմութիւն քո. Սղ 11.
Ցույց մեզ, տէր, ողորմութիւնս քո և զփրկութիւնս
քո տուր մեզ. Զդ. 8.
Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի, և ոչ ի նետէ
որ թռչի ի տուէ. Ղ. 5.
Որպէս դի մեծ են գործք քո, տէր, և յոյժ խոր են
խորհուրդք քո. Ղա. 6.
Զօրութիւն իմ և օգնութիւն իմ տէր և
եղև ինձ ի փրկութիւն. ՃԺէ. 14.
Նկեսցեն յիս զթութիւնք քո և կեցից, զի օրէնք քո
խօսք իմ էին. ՃԺը. 77.

Այստեղ կարևոր եմ համարում դնել մի կարճ հատված այն լեզուներից, որոնք ընդհանրապես գեղեցիկ են համարվում.

Իտալերեն
(Սովետական Միության հիմնից)

Union di repubbliche libera e salda
La Russia immortale in eterno fondò.
Evviva dei Soviet l'Unione potente,
Che unita volere di popol creò!

Gloria a te Patria, libera e forte,
Di popoli amici baluardo d'acciar!
Insegna dei Soviet, bandiera di popolo,
Ognor vittoriosa im campo starà!.

Պրովանսալ լեզվով
(Ժբ դարից)

Quan la douss' aura venta
De ves nostre pais,
M'es vejaire qu'ieu senta
Odor de paradis.
(Bernat de Ventadour)

Թարգմ.

Երբ փչում է անուշ քամին
Դեպի մեր երկիրը,
Ինձ թվում է, թև չունեմ եմ
Ես բուրմունքը պրախաի։

Պարսկերեն
(e հնչիւն ă)

Meh né-ǰuyem, meh mera rúy-i tu bes,
Gul né buyem, gul mera bùy-i tu bes,
A'šq-i men divané-i húsn-i tu gešt
Bénd-eš ez- zenǰir-i gisúy-i tu bes.
E'šk-i men barán-i bi ebrest lik
Èbr-i bi-baran xém-i múy-i tu bes.
Ayine ez-dest b'úfken, kez sefa
Púšt-i dest, ayinè-i' rúy-i tu bes.

Լուսին չեմ որոնում, իրրև լուսին
քո դեմքն ինձ բավական է,
Վարդ չեմ հոտոտում, իրրև վարդ
քո բուրմունքն ինձ բավական է.
Սերս ինձ քո գեղեցկության դիմահար
դարձրեց.
Նրան կապելու համար քո մազերի շղթան
բավական է.
Իմ արցունքը առանց ամպի անձրև է, սակայն
Առանց անձրևի իրր ամպ քո մազերի
ոլորքը բավական է.
Հայելին ձեռքից դեն գցիր, որովհետև...
Ձեռքիդ երեսը իրր երեսիդ հայելին
բավական է:

Լադիներեն
(«Հայր մեր»)

Bap nos, quel chi est in ils cels. Fat songh vegnia teis nom. Teis reginom vegna nan pro no. Tia vöglia dvainta in terra sco in cel. Nos pan d'iminchia di da a no»hoz. Perduna'ns noss debits, sco no perdunain a nos debitatuors. (Conradi, էջ XI).

Ռոմաներեն (1611 թվից)
(«Հայր մեր»)

Bab noss, ilg qual eis enten tschiel, Soing vengig faig tieu num. Tieu raginavel vengig nou tiers. Tia velgia daventig, sco enten tschiel, aschi er sin terra. Niess paun da minchiagi dai a nus oz. A nus pardunne nos puccaus, sco nus pardunein a noss culponts.

Եվրոպացիները և նրանց ճաշակով մեծացած մարդիկ ընդհանրապես արհամարհում են հետամնաց ժողովուրդների լեզուները՝ իրրև տգեղ, բարբարոս և աննշերդաշնակ: Բայց այս կարծիքը ճիշտ չէ: Հետամնաց ժողովուրդների լեզուները, ինչպես որ քերականական կազմության կողմից հաճախ շատ կանոնավոր, պարզ, բայց նաև հարուստ են, ներդաշնակության կողմից էլ բռնում են երբեմն շատ բարձր դիրք:

Ահա մի նմուշ Աֆրիկյան կարանգա (Karanga) լեզվից[1]։

Širi dzi no bururukira ku mi ti dzi no vaka me tendere, dzi no kanda ma z'ahi. dzi no tsvagira v'ana m'behu na ma konye.

Թռչունները թռչում են վերև ծառերի մեջ, շինում են բույներ, ածում են ձվեր, ուտելիք են փնտրում իրենց ձագերի համար՝ սերմեր և որդեր։

Gara yi mu mu ša we du, no mu dzi mba dze du, nyika ye nyu i ri kure; ti no gara pamwe, ti no batsirana mu ku sevenza.

Մնացեք մեր գյուղում և մեր տներում. ձեր երկիրը հեռու է. մենք միասին կապրենք, կօգնենք իրար՝ աշխատանքի մեջ։

Մի նմուշ տիրեերենից

(Այս լեզվի բառերը մեծագույն մասամբ միավանկ են. երկվանկ բառերը բացառություն են կազմում. ունի շատ մասնիկներ, բայց դրանք գրվում են առանձին և հնչվում են առանձին։ Այսպիսով միավանկ բառերը միշտ էլ մնում են միավանկ։ Լևդուն բոնում է միավանկային և կցական լեզուների միջին տեղը)։

Dehi çe na yul Varanaser trang srong
այն ժամանակ ում երկիր Բենարես ճգնա- վոր
nga dya žig ne te trang srong de dag ge
5 100 մեկ բնակե-լով ճգնա- վոր այն (հգ.)(անո.)
ton pa Udpala žes čava.
ուսուցիչ (ար.) Ուդպալա այսպես կոչված։

(Այն ժամանակ, Բենարես երկրում ապրում էին 500 ճգնավորներ. այս ճգնավորների ուսուցիչը կոչվում էր Ուդպալա)։

---

[1] *Այդ լեզվի մասին Մարկոնեսը* (Marconnès) *հետևյալ դովասանական խոսքերով է արտահայտվում.*

Եթե մենք նկատի ունենանք կարանգա լեզվի արտակարգ հարստությունը, որը բխում է գոյականի տեսակի, ցուցական դերանունների և մակբայական մասնիկների բազմազանությունից ու համարյա անթիվ ածանցական ձևերից, և նկատի միաժամանակ հիշենք, որ այդ բոլորը արտահայտում է մի այնպիսի նուրբ և ներգաշնակ հնչյունական սիստեմով, որը գերազանցում է նույնիսկ իտալերենին՝ ապա չկիսի գործանալ J. dos Santos-ի վրա, որը կարանգա լեզվի մասին ասում է «ամենահղկված լեզուն է, որ տեսել եմ Եթովպիայում»։ կարանգա բնագրով գրված գրականություն կարգալը, իրոք, մի կատարյալ հաճույք է (Marconnès F. A grammar of Central Karanga, 1931, *էջ 13*)։

Երկու վոքր հատված Աֆրիկյան Կոնգո (Congo) *լեզվից* (Bentley, *էջ 526*).

O matadi mama mampembe
ը (հոդ) քարերը այս սպիտակ
mampwena i mau mama
մեծ են նրանք որ
twamwene ezono.
տեսանք երեկ։

(Այս մեծ սպիտակ քարերը նրանք են, որ տեսանք երեկ)։

E kinkutu kiaku kiavididi ezono
ը (հոդ) վերարկու ձեր կորցրած երեկ
kisolokele, akieyi? i kiau kiki
վերադարձավ, ուր է, նա այս գնա
O mo nzo mbwene kio.
ի (the) *տան տեսնում եմ գայն.*

(Ձեր վերարկուն որ երեկ կորել էր, վերադարձվել է. ուր է նա. այստեղ է. տեսնում եմ այն՝ տանը)։

Այնու լեզվով պատմվածք

Čup oruš guru orušpe

Otdeeda anakne ona itak unu itak šomo nu; awakka tare yakka kopan. Aine, kamui iruška gusu čup kamui samata aande: mošir' epitta aupakašnu gusu an gun'ne. Čup oruš gun ne. Tambe gusu šinrit itak wen yakka pirika yakka anup ne na. Tambe ne yakka utar'ebitta nu yan.

Լուսնի միջի մարդը

Հին ժամանակ եղել է մի տղա, որ իր հորն ու մորը չէր հնազանդվում. նույն իսկ չէր ուզում ջուր քաշել։ Աստվածները բարկացան և դրին նրան լուսնի կողքին՝ իբրև խրատ ամբողջ աշխարհին։ Այս է լուսնի միջի մարդը։ Սրա համար թող բոլոր մարդիկ հասկանան, թե պետք է հնազանդվել ծնողների խոսքին, լինեն նրանք լավ, թե վատ։

(Batchelor J.—An Ainu- English—Japanese dictionsary, *էջ 120*)։

Նմուշ Տահիտի (Tahiti) լեզվից

— E hoa Heroa.
— O!

— Ua eu hia anei to tatou maa?
— Ee, ua eu.
— I hea râ e amu ai ?
— I nia te matie.
— E hoa! a mai, e tamaa.
— Teie te miti, te pape haari, te ia ota, te taro, te uru, te fei; a amu, a paia.
— E mea oi maitai to oe tipi.
— E mau haari maitatai teie.
— A inu oe, mea haumaru te pape.
— E mau meia mona-mona teie.

Մ՛վ Հերոա, բարևկամ։— Ի՞նչ կա։— Մեր ուտելիքները սիրել են։— Այո, սիրել են։— Ո՞ւր գնանք ուտելու։— Ծառի վրա։ — Բարեկամ, արի կեր.— Ահա ասում, կոկոսի ջուր, հում ձուկ, taro, urụ, fei (պանդանան ուտելեղեններ), կեր, կշտացիր։— Դանակդ լավ է կարում.— Այս կոկոսները լավ են.— Ամբը, ջուրը քաղցր է։— Բանաններդ քաղցր են։

(M. Sénac. Gram. tahitienne, էջ *126*)։

Մի ճոռոշ Ամերիկյան տուկուդ (tukudh) լեզվից

Kwundui nyukkwun nili, akọ kikyik wanjik nizhook nilį
(Կյանքը կարճ է, իսկ արվեստը երկար)։

Ettrie, kettuntigwidičyo, kwitukwje, akọ khujnjil:wutudhut natshi *(Ծուլությունը բերում է աղքատության, մոլության և թշվառության)։*

Tinjih kwizyeį tit tinjtkwittizhit nintei tsut kukwadhut
(Իմաստուն մարդը կառավարում է իր կրքերը)։

Ndotigwiyin vahkwitunduinut nyiwhah tsi
(Առաքինությունը պահպանում է մեզ)։

Kwjrzįkwičančyo kwitinutrikwutahtsay *(Բարությունը կմարձատրվի)։*

Einut khuttutsut oungitilli, yinjitkwit činttluth ha tungittiyin *(Ոխերը նեղում են՝ պահմտարար են վարվում)։*

Kwirzyoọtigwittiyin nersitkwitčač yo natshi *(Մոլությունը բերում է թշվառության)։*

(Macdonald, A grammar of the Tukudh Land., London, 1911, էջ *78—80*)։

Ավստրալիական տուրուրուլ (turrubul) լեզվից

Mumbal		ɔambillebu		yugāri,		
Աստված		*ստեղծեց*		*աշխարհը*		
muddān	na	muddān		bīgi.	Yutta	bigi
երեք	*և*	*երեք*		*օրում.*	*առաջին*	*օր.*
Mumbal		yāri.		„kittibilla	bulka!“	Berren
աստված		*ասաց,*		*«Լույս*	*լինի»,*	*իսկույն*
kittibilla		bulkurri.		Mumbal	kittibilla	nānni.
լույս		*եղավ:*		*Աստված*	*լույսը*	*տեսավ.*
kittibilla		murrumba.		Mumbal	kittibilla	
լույսը		*լավ էր:*		*Աստված*	*լույսը*	
pūnmāngillin		kurunkurunti.		Mumbal	kittibilla	
բաժանեց		*խավարից:*		*Աստված*	*լույսը*	
naiiburri	bigi.	wunnal		kurunkurun	naiiburri	
կոչեց	*օր,*	*նա*		*խավարը*	*կոչեց*	
ɔūunū.	Bigibirpi	ɔa	ɔūnnūɔubbu		bigī	kunnar.
գիշեր:	*Երեկո*	*և*	*առավոտ,*		*օր*	*առաջին:*

(Ridley,- Kamilaroi, Dippil and Turrubul, Sydney, 1866, *էջ 76)*:

Աֆրիկյան ագնի լեզվով[1]
ռազմական երգ

Ma mi aire ne tūi,
aima me ko[2].
Me kunde me kpe be ti.
Be le bla be ti krama.
Be se kẹ be le sika.
Ne sạ ke me bu kʸeūi.
Ne sạ ke me so amwị
Me kunde me kpe be ti.
Ma mi aire ne fūi.
Տուր ինձ վառոդ և հրացան,
վաղը պիտի մեկնեմ[2]:
Նրանց գլուխը պիտի կտրեմ.
Նրանք ունեն սիրուն կանայք.

---

[1] Delafosse M., Essai de manuel de la langue agni, Paris, 1900, *էջ 180:*

[2] *կրկնել ամեն տողից հետո:*

Ասում են քե ոսկի ունեն.
Այսօր գնդակ պետք է շինեմ.
Այսօր մատաղ պետք է անեմ.
Նրանց գլուխը պիտի կտրեմ.
Տուր ինձ վառոդ և հրացան։

Գովասանք եմ կարդացել լեզվաբանական մի գրքում դրավիդյան Թամիլ (tamil) *լեզվի, իբրև աշխարհիս գեղեցկագույն լեզուներից մեկի մասին։*

Սակայն բերված նմուշը չի արդարացնում այդ կարծիքը։

Մի նմուշ թամիլ լեզվից

Oru	maṉušaṉukku	iraṇḍu	kumārar
Մի	*մարդ*	*երկու*	*որդի*
irundārgal.	Avargaḷil	iḷeiyavaṉ	tagappaṉei
ուներ.	*Նրանցից*	*կրտսերը*	*հորը*
nōkki,	„tagappaṉ-ē,	āstiyil	eṉakku.
դիմելով	*ա՛ռ հայր,*	*ինչքից*	*ինձ*
varum	paṅgei	enakku-ttara-vēṇḍum“	eṉṟāṉ.
ընկած	*բաժինը*	*տուր ինձ»*	*ասաց.*
Andappaḍi	avaṉ	avargaḷukku-ttaṉ	āstiyei-ppaṅ-
Համաձայն սրան նա		*Նրանց իր*	*ինչքը բաժա-*
giṭṭu-	kkoḍuttāṉ.	S'ila	nāḷeikku-ppinbu
նելով	*տվեց.*	*Քիչ*	*օրեր հետո*
iḷeiya	magaṉ	ellāvarreiyum	s'ērttu-
կրտսեր	*որդին*	*բոլոր*	*ունեցածը*
kkoṇḍu	dāṟą	dēs'attukku-ppuṟappaṭṭu-ppōy	
հավաքելով	*հեռու*	*երկիր գնալով*	
aṅgē	duṇmārkkam-āy		jīvaṉam-
այնտեղ	*վատ ճանապարհ բռնելով*		*կյանք*
paṇṇi	taṉ	āstiyei	aṟittu-ppōṭṭāṉ.
վարելով	*իր*	*ինչքը*	*վատնեց։*

(Grierson, Ling. survey, *հտ. Դ, էջ 315*)։

Ամերիկյան, աֆրիկյան և այլ հեռավոր ցեղերի լեզուները հաճախ հարուստ են ձայնավորների կողմից. բառերը վերջանում են ձայնավորով, որ եթե շեշտից հետո գտնվի, լավ ապավորություն է թողնում ականջի վրա։ Օրինակ՝ ամերիկյան տիմուկվա (timuqua) *լեզվում բոլոր բառերը ձայնավորով են վերջա-*

նում, և բառամիջումն էլ բաղաձայնների խճողում չկա։ Ահա մի քանի բառ այս լեզվից. mukubine «արցունք», narekonoma «գործիք», amiti «եղբայր», puenonikala «բերում եմ», pahana «առուն», ia:ila «ուժեղ մի բան», ano yuca himetela «երկու հոգի-դալիս ենք»։

Մի ճմուշ մարքիզյան լեզվից

U՛ haáfautaū le manu i՛ úna he puhu; úa moe i úna; úa ona mei úna, úa ona i te étaha, úa ona mei ȯto, úa uú i o՛to he puho, úa tata me te puho; úa tau i՛ úna he tohua; mei io Ferari tenei manu.

Թարգմ.

Թռչունը սավառնում է վանդակի վերևում. նա հանգստանում է նրա վրա. նա թռչում է նրա վրայից, թռչկոտում է նրա շուրջը, դուրս է թռչում ներսից, մտնում է վանդակի մեջ, մտաենում է վանդակին, խփվում է գետնին։ Այս թռչունը ֆրանսիացիների մոտից է գալիս։

2. ԼԵԶՎԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվի հարստություն ասելով հասկանում ենք գումարը այն միջոցների, որոնցով լեզուն արտահայտում է մեզ շրջապատող առարկաները և մեր մտածությունները։ Կարճ խոսքով՝ լեզվի հարստությունը նրա ունեցած բառերի քանակն է։

Պետք է զանազանել անհատի գործածած բառերի քանակը լեզվի ընդհանրապես ունեցած բառերի քանակից։ Անհատը՝ նայած իր պահանջներին, կրթությանն ու մասնագիտությանն, գործածում է ավելի կամ պակաս քանակով բառ. բայց այդ քանակը միշտ ավելի պակաս է լեզվի բառերի ընդհանուր քանակից, քան որում ընդհանուր լեզուն պարունակում է բոլոր տեսակի մասնագիտություններն և կրթական ու կուլտուրական բոլոր աստիճանների պահանջած բառերը[1]։

Դաղափար կազմելու համար լեզվի ընդհանուր բառապաշարի մասին, ես հաշվեցի մի քանի լեզուների ամենամեծ բառարանի բոլոր բառերը մի առ մի, կատարյալ ճշտությամբ։ Ահա իմ ստացած արդյունքը.

---

[1] *Անհատական բառամթերքի մասին կխոսվի բառաքննության նվիրված հատվածում։*

Հայերէն Առձեռն բառարանը (Բ տպ., Վիեննա, 1865) ունի 56 410 բառ (չհաշված ոճերը և միևնույն բառի տարբեր գրչութիւնները կամ տարբեր առումները, որ Առձեռնը հաճախ իբր առանձին բառ է հիշում)։

Ռուսերէնը, ըստ Ուշակովի քառահատոր բառարանի, ունի 85 289 բառ (հաշիվը բառարանի հեղինակինն է)։ Հաշվի մէջ չեն մտել միևնույն բառի տարբեր գրչութիւնները։

Ֆրանսերէնը Քեւե Ակադեմիայի բառարանի 1878 թ. հրատարակութեան մէջ (ըստ Brachet և Dussonchet, Gram. fr. Cours sup. *1903, էջ 14) ունի շուրջ 32 000 բառ, բայց եւ, հաշվելով* Petit Larousse illustré *(1919) բառարանը, գտա 45 287 բառ։*

Լատիներէնը ունի 50 644 բառ (գործածել եմ Guicherat և Daveluy, Dict. latin-franç. *47-րդ տպ. Paris, 1913, որ լատիներէնի լիակատար բառարանն է և պարունակում է սկզբից մինչև 2 դար գործածված բոլոր բառերը. չեմ հաշվել, բնականաբար, հատուկ անուններն և քերականական ձևերը, որ այս բառարանի մէջ հիշված են բառերի շարքում՝ իբրև առանձին բառ)։*

Հին հունարէնը ունի 80 000 բառ (գործածել եմ M. A. Bailly, Dictionnaire grec-français, *6-րդ տպ., որ հունարէնի ամենամեծ բառարանն է. չեմ հաշվել հատուկ անուններն և քերականական ձևերը, որ այս բառարանի մէջ ևս հիշված են բառերի շարքում՝ իբրև առանձին բառեր)։*

Սանսկրիտը ունի 105 177 բառ (հաշվեցի Otto Böhtlingk և R. Roth, Sanskrit-Wörterbuch, Petersburg, 1855—75, *յոթ հատոր ամենամեծ բառարանը. հաշվիս մէջ չեմ մտցրել միևնույն բառի տարբեր գրչութիւնները և ձեռագրական սխալ ձևերը, որ այս բառարանում հիշված են առանձին-առանձին։ Բայց հաշվի մէջ մտցրել եմ նաև հատուկ անունները, որոնք, սակայն, սանսկրիտում իմաստ ունեցող հասարակ անուններ են)։*

Արաբերէնի բառերի թիվը է 63 610. հաշվեցի Կամուսի ծոյլածալ բառարանը, որ ունի 3 հատոր, ընդամէնը (943 + 939 + 971) = 2853 էջ մեծագիր, ամեն մի էջը 41 տող. բառերը տողասկիզբը չեն դրված, այլ բացատրութեան հետ խառն, առանց կետադրութեան և առանց նոր տողի։ Բայց Կամուսը առնում է*

* *Աբաբ մի բառագիր ասել է, թե արաբերէնն ունի 12 305 412 բառ. այս տեղեկութիւնը տալիս է* Renan, Hist. des lang. Sémit. I 4 1863, *էջ 386, որին, անշուշտ, ինքն էլ չի հավատում և դրել է էջի տակի ծանոթության մէջ։*

նաև հատուկ անուններ՝ մարդկանց և տեղի, որաք և օտար և չկա նշան (գլխատառ կամ այլ նշան) բաժանելու սրանք երբերից։ Հաճախ հատուկ անունները ال հոդը չունեն, բայց երբեմն հատարակ անունն էլ տրված է առանց հոդի, ամեն մեկ բառը ջոկել շատ դժվար է, ուստի միասին հաշվեցի, երբեմն հայտնի հատուկ անունները դուրս հանելով։ Բացի սրանից, մի բառի մի քանի ձևերը իրր առանձին բառ հաշվեցի, օրինակ՝ հտ. Գ, էջ 787 الجواة الجياء الجياة «կաթսայի տակ դնելու շորթ», որոնք շատ չնչին տարբերություն ունեն, հաշվված են իրր ջոկ ջոկ բառեր։

Թյուրքերենը ունի 29 320 բառ. հաշվել եմ Պետրոս Չեքի Կարապետյանի Օսմ-հայ. բառարանը (Պոլիս, 1912), որ ավելի ընդարձակ է, քան Ալբիկյանի բառարանը։ Թղթի խնայողության համար կազմված է շատ անհարմար ձևով. ոճեր, ասացվածներ, օրինակներ և սրանց հետ նաև ածանց բառեր խառնիխուռն հիշված են (գծիկներով) ընդհանուր արմատ ձևի տակ։ Ածանցները ջոկել եմ ասացվածներից ու ոճերից և առանձին-առանձին հաշվել։

Ասորերենը ունի 14 844 բառ. հաշվեցի Brockelmann-ի Lexicon Syriacum, Berlin, 1895 ասորերենից լատիներեն բառարանը (էջ 404, երկսյուն), որ ասորերենի միակ (և լավագույն) բառարանն է։ Սրա բառերի թիվը դուրս եկավ 12 658 (չհաշվելով ձևաբանական վրիպակները և տարբեր ընթեցվածները, որոնք երբեմն հիշված են այս բառարանում). Ավելացնելով նաև ածանցյալ բայերի ձևերը (afel, pael, efpeel, peal, ettafal և այլն), որոնց թիվը է 2186, ընդհանուր գումարը կլինի 14 844։

Սակայն բոլոր այս հաշիվները կեղծ են և իրականության մասին ճիշտ գաղափար չեն տալիս։ Չի կարելի մի որևիցե լեզվի բառերը ճիշտ հաշվել. բոլոր հաշիվները սխալ են, իսկ եթե հաշվենք էլ, տրված թվերը լեզվից լեզու իրար հետ համեմատել չի կարելի։

Ենթադրենք, թե ուզում ենք հաշվել հայերեն բառերը։ Նախ՝ սրա համար բառարան չունենք։ Առձեռն բառարանը, որ եղածներից ամենակատարյալն է, պարունակում է միայն գրաբարի հարստությունը, աշխարհաբար, գավառական և նորակերտ բառերը չի պարունակում[1]։ Բայց գրաբար բառերն էլ ո՛չ թե ժա-

[1] Եթե գավառական բառերի ընդհանուր թիվը դնենք 40 000 և նորակերտ բառերը 20 000, բոլոր հայերեն բառերի թիվը կլինի մոտ 120 000։

մանակի լեզվից է հավաքած, այլ գրական մնացորդներից։ Արդ՝ գրական մնացորդները ամենաքիչ գաղափարն են տալիս լեզվի մասին։ Գրագետները, մանավանդ կեղծ գրականները, հնարում են ամեն տեսակի բառեր, որոնք գոյություն չունեն լեզվի մեջ։ Ընդհակառակը, որովհետև ամեն նյութի մասին չեն գրում, ուրիշ չեն ունենում գործածելու բազմաթիվ բառեր, որոնք ապրում են ժողովրդի մեջ. ինչպես՝ բույսերի, կենդանիների անունները, գյուղատնտեսական, երկրագործական բառեր և այլն։ Ենթադրենք, թե մենք այսօր կազմեցինք մի նոր բառարան, որ պարունակի հայերենի բոլոր բառերը։ Կան կեսեր, ուր շվարած պիտի մնանք և չգիտի կարողանանք վճիռ տալ. օրինակ՝ ինչպես պիտի վարվենք ամենա- գերադրական մասնիկի և -ություն վերացական մասնիկի հանդիպ։ Ամեն մի հայերեն ածական կարող է այսօր առնալ ամենա- գերադրական մասնիկը և ամեն մի ածական ու ածականաբար առնված գոյական կարող է առնալ -ություն մասնիկը։ Այս բոլոր բառերը պիտի առնենք բառարանի մեջ։ Եթե այո, բառերի թիվը անհունապես պիտի ավելանա. եթե ոչ, լեզվի բառերի թվի մասին ճիշտ գաղափար կազմած չպիտի լինենք։ Ուրիշ օրինակ. բացասականով կազմված բառերը իրրև առանձին բառ պիտի հիշենք, թե ոչ. օրինակ՝ չանս, չունևոր, չքաշաճա, չվճռասակար, չպետ բառերը, անշուշտ, պիտի հաշվենք. իսկ չուտել, չերթալ, չճամարձակվել... բոլոր բացասական բայերը։ Այսպես, ուրեմն, նույնիսկ ճիշտ վիճակագրության դեպքում կան հարցեր, որ անլուծելի են։

Ենթադրենք, թե մի թիվ կազմեցինք. ինչ արժեք ունի այդ թիվը համեմատությամբ մի ուրիշ լեզվի, որ բառակերտության մեջ տարբեր կառուցվածքի է հետևում։ Օրինակի համար ֆրանսերենի մեջ ամենա- գերադրականը բացատրվում է առանձին բառերով (le plus...), որով և, գերադրականը իրրև առանձին բառ չպիտի հաշվենք։ Նույնպես բացասականը (չ-) կազմվում է ne...pas առանձին բառիկներով, որով այս ձևերն էլ պիտի դուրս մնան վիճակագրությունից։ Դրանով դուրս պիտի գա, որ հայերենը մի չափազանց հարուստ լեզու է, իսկ ֆրանսերենը մի աղքատիկ լեզու։ Բայց այսպես է իրականությունը։

Կան լեզուներ, որոնք չափազանց սիրում են բարդություններ. առաջին կարգին է պատկանում գերմաներենը, երկրորդ կարգին, օրինակ՝ հայերենը։ Գերմաներենը կարող է ամեն մի հատկացուցիչ-հատկացյալ միացնել և առանց մինչև իսկ հո-

դակապի՝ մի բառ կազմել։ Այնքան սովորական և բնական է այս երևույթը գերմաներենի մեջ, և այնքան շատ է այս կարգի բառերի թիվը այդ լեզվում, որ բառարանները դրանց ամենամեծ մասը չեն գրում և չեն էլ կարող գրել։ Բայց կան լեզուներ էլ, որոնք սովորաբար չեն ճանաչում բարդություն. այսպես է ֆրանսերենը։ Օրինակ՝ հայերենը քաջ բառից կազմել է 300-ից ավելի բարդություն (օրինակ՝ քաջակորով, քաջագանգուր, քաջահասակ, քաջահանճար և այլն), որոնցից ոչ մեկի համապատասխանը չի գտնվում ֆրանսերենում։ Ուրեմն ահա մնաց համեմատությունը գերմաներենի ու հայերենի, հայերենի ու ֆրանսերենի, և մանավանդ գերմաներենի ու ֆրանսերենի միջև։

Մի ուրիշ օրինակ էլ վերցնենք գերմաներենից։ Այս լեզվով «բառարանը» կոչվում է Wörterbuch, որ բարդ բառ է, մինչդեռ հյ. բառարան, ինչպես և ֆրանս. dictionnaire, *ռուս.* словарь, *անգլ.* dictionary և այլն բարդ բառ չեն, այլ ածանց, թեև հայերեն էլ կարելի է ասել բառ(ա)գիրք, որ բարդ բառ է։ Բառարանների տեսակներից կարող ենք գերմաներեն ասել՝ Handwörterbuch «ձեռնեն բառարան», Taschenwörterbuch «գրպանի բառարան», Namenwörterbuch «անունների բառարան», Personennamen-Wörterbuch «անձնանունների բառարան», Ortsnamen-Wörterbuch «տեղանունների բառարան», Fremd-Wörterbuch «օտար բառերի բառարան», Wurzel-Wörterbuch «արմատական բառարան» և այլն։ Այս բոլորը (7 բառ) գերմաներենում առանձին բառեր են, իսկ հայերենում չկան։ Չկան նաև ուրիշ լեզուներում. ինչպես՝ ֆրանս. dictionaire portatif, dictionnaire de poche, dictionnaire des noms propres, dictionnaire des noms propres personnels, dictionnaire des noms de lieux, dictionnaire des mots étrangers, *ռուս.* словарь иностранных слов, карманный словарь, настольный словарь, коренной словарь և այլն։

Ուրեմն գերմաներենը հայերենից, ֆրանսերենից, ռուսերենից 7 (և ավելի) անգամ հարուստ է[1]։

1 Գերմաներեն լեզվի բառային հարստությունը ցույց տալու համար հիշենք Գերմաներեն-հայերեն բառարանի հեղինակ Կոլլովի խոսքը իր բառարանի առաջաբանում. «...հարկ է խոստովանիլ անկեղծ բառարանագրի մը հետ, թե գերմաներեն լեզվի ընդարձակ կատարյալ բառարան մը հրատարակելու համար ոչ միայն 10ն տպագրական թերթ չէր բավեր, այլ եթե այս ծավալը տասնապատկեինք, թեպետ այս ևս չէր բլլար ի վիճակի լեզվին ամբողջ մթերքը բովանդակելու։

Բայց ինչ է ավելացնում այդպիսի բարդությունների գոյությունը լեզվի մեջ։ Ոչինչ։ Իմաստը նույնն է, բովանդակությունը նույնն է, միայն ինչպես ինչի վրա մի քիչ տեղ է խնայվում։ Հիմա խոսում այն անպատեհությունների մասին, որ ներկայացնում են երկու բառից ավելի բարդությունները, որոնց մասին խոսելու ենք ժ. գլխում։

Եթե 3 հոգի ունենան հավասարապես 100-ական ռուբլի, մեկը ոսկով, մյուսը արծաթով, մյուսը պղնձով, չի կարելի ասել, թե մեկը մյուսից հարուստ է. երեքն էլ հավասար են. միայն մեկի բանը ծանր է, մյուսինը՝ թեթև։

Երբ կարդում ենք արաբերեն բառարանը պարմացած ենք ինում այն տարօրինակ բառերի հանդեպ, որով լցված է այդ լեզուն, ավելի ճիշտ այդ լեզվի բառարանը։ Կան բառեր, որոնց բացատրության համար մի ուրիշ լեզվի մեջ մի քանի նախադասություններ են հարկավոր։

Ահա այս կարգի բառերից մի հավաքածո, որ կազմել եմ կամուսի բառարանից։

دويل davīl *«երկու տարվա չոր խոտ՝ որի վրայով մի բան անցած լինի» (Գ. 213)։*

غيث ɣaiθ *«անձրև, որ 12 մզոն տարածություն է բռնում»։*

لبد labd *«մի քիչ բուրդ գզելով, ջրով թրջել և, թաղիքի պես կարելով՝ քրի պատյանի ծայրին փաթաթել, որպեսզի հագուստը չկտրատի» (Ա. 686)։*

جردبيل ǰardabīl *«այն անձը, որ սեղանի դլխին մի քիչ կերակուր վերցնելով, ձախ ձեռքում պահում է և աջ ձեռքով մյուսների հետ միասին ուտում է. երբ սեղանի վրայի կերակուրը վերջանում է, այն ժամանակ ձախ ձեռքում պահածը հանում ուտում էր» (Գ., էջ 162)։*

احجال iḥǰāl *«ուղտի ձախ ձեռքից (!) կապը քանդելով՝ աջ ոտքին կապել» (Գ., էջ 174)։*

خاذ dixāl *«մի անգամ արդեն ջուր խմած ուղտը երկու ծարավ ուղտերի մեջտեղը դնելով ավազան տանել, որպեսզի, նրանց բավականաչափ խմած չէր, նրանց հետ էլ խմելով կշտանա» (Գ. 209)։*

نشّال naššāl *«երբ ընկերների և բարեկամների հետ է՝ նրանց ուշադրություն չդարձնելով, մենակ կաթսայի մեջ հացը քաքախելով ուտող անկիրթ մարդ» (Գ. 362)։*

تبظرم tabazrim «մատին մատանի ունեցող մի անխելք մարդ, խոսած ժամանակ մատանիով մատը դեպի խոսակցի երեսը բռնելով կամ ցույց տալով խոսել» (Գ. 402)։

جردمة ǰardama «բարքի առորությամբ՝ կերակուր կերած ժամանակ ձախ ձեռքով կերակուրի երեսը ծածկել, որպեսզի ուրիշը չուտի» (Գ. 416)։

صروم ṣurūm «այն անասունն է, որ ավազանին չի մոտենա ջուր խմելու՝ մինչև որ մյուս ուղտերը ավազանից ջուր խմելով չհեռանան և ավազանը բոլորովին պարապ չմնա» (Գ. 496)։

زبون zubūn «այնպիսի ջրհոր, որի եզերքը դրված այն քարը, որի վրա կանգնելով մարդ ջուր պիտի քաշի, բավական հեռու դրված լինի» (Գ. 642)։

هياف hiyāf «ուղտը ծարավից բերանը hayf կոչված քամուն բանալով զովանալ» (Բ. 862)։

استيداف istidaf «կաթնամանի կափարիչը բանալով կաթի ինչպես լինելը քննել» (Բ. 855)։

واف vaḫif «դույլ, որի չորս անկյունի փոկե կապերից երկուսը կտրվելով՝ միայն երկուսը մնացած լինի» (Բ. 854)։

انقاف inqāf «մեկին մի ոսկոր տալ, որպեսզի մեջի ծուծը հանի» (Բ. 852)։

حيفة hīfa «շապիկի վզից մինչև գոգնոցը դրված կարկատան.— իսկ եթե առաջի կողմից լինի, կոչվում է كيفة kīfa» (Բ. 745)։

دفاء daffā' «անձ, որ սեղանի վրա կերակուր կերած ժամանակ, եթե կերակրի ամանի մեջ իր առաջ ոսկոր եկած լինի, ոսկորը մեկ կողմ կքշի, որպեսզի նրա փոխարեն միս գա (Բ. 572)։

ترعظ tara'uz «մինչդեռ բեռնավորված ուղտը քայլել է սկսել, տերը, չկանգնելով՝ բեռները ուղղացնել կամ հարդարել» (Բ. 532)։

تخرط taxarruṭ «թռչունի փետուրների տակը ուղղելու ժամանակ փետուրների ծայրով յուղամանին խփելով յուղը վերցնել» (Բ. 468)։

انفاج infāǰ «հաթ կթելու ժամանակ կթիչը ծծերից մի քիչ հեռու բռնել, որպեսզի փրփուրը բարձրանա. հակառակն է الباد ilbād (Ա., էջ 447)։

متضيح mutaðyyiḥ «այն անձն է, որ ավազանի ջուրը մեծ մասամբ խմվելով, մնջը գանագան առուրկաններով պղտորված մի քիչ ջուր մնացած ժամանակ ավազան կիանդի» (Ա. 494)։

Գլխի պատռվածքը արտահայտելու համար արաբերենը ունի 12 աստիճան և այդ յուրաքանչյուրի համար ունի մի առանձին բառ (երբեմն էլ երկու), հետևյալ ձևով (Ա., էջ 533)։

1. جارِشة jārišа «պատռած, բայց արյուն դուրս չեկած (որ և قاشرة qāširа)»։

2. دامعة dāmi'a «արյուն դուրս եկած, բայց չհոսած»։

3. دامية dāmiya «արյունն էլ հոսած»։

4. متلاحمة mutalāḥima «կաշվից հետո միսն էլ կտրված»։

5. بازعة bāzi'a «միայն մորթը կտրված»։

6. موضحة muvazziḥa «մինչև ոսկորը կտրված»։

7. ملطاء malṭā կամ قصرى qaṣrī «մորթն ու միսը ամբողջ կտրված»։

8. هاشمة hāšima «ոսկորն էլ կոտրված»։

9. منقلةmuntaqila «ոսկորը տեղից խախտված»։

10. آمّة amma «մինչև ոսկորի ծուծը ճեղքված»։

11. دامغة dāmiγa «մինչև ոսկորի ծուծի կաշին կտրված»։

12. سمحاق simḥāq «ոսկորին հասած, բայց ոսկորը չկոտրած»։

Ջրմուղ գաղափարի համար կամուսից հավաքել ենք 153 բառ, որոնց ցանկը հետևյալն է (արմատի վերջամասնի այբուբենական կարգով).

حصا ḥaṣā «տավարի ուժեղ ուժեղ խմելը»։

ارتثاء irtiθa «քիչ խմել»։

قبّ qabba «շատ խմելով ուռչել»։

امدا imda «կաթը շատ խմել»։

نسا nasā «շատ քունդ դինի խմցնել»։

جذب jaðb «ամանի ջուրը մեկ շնչով քաշել-խմել»։

تجذب tajaððub «խմել»։

جرعبة jar'aba «ջուրը ախորժակով խմել»։

تحسيب taḥsīb «կշտանալու չափ ջուր խմցնել»։

زاب zāb «ջուրը ուժով խմել»։

تزعب taza''ub «շատ ուտել և շատ խմել»։
بحسب saḥb «ուժով ուժով ուտել և ջուր խմել»։
بشر šar'b «խմել»։
بصاب ṣāb «չարփազանց շատ խմելով տկռել»։
بصابب taṣabub «ամանի մեջի մնացորդը խմել»։
بصريب taṣrīb «բիթաս կաթ խմել»։
بضرب ḍarb «կաթ խմել»։
بعّ 'abb «առանց շունչ առնելու շուռ-շուռ խմել»։
بعبب ta'abbub «մի բան շատ խմել»։
بعاب 'abāb «ջուր խմել»։
عثلب 'aṯlab «ջուրը արագ և կում-կում խմել»։
تعريب ta'rīb «լալ ջրից շատ խմել»։
غبّ γabb «առավարը երկու օրը մեկ ջուր խմել»։
قاب qāb «ամանի մեջ եղած ամբողջ ջուրը խմել տկռել»։
اكثاب ikṯāb «ամանի տակը եղած մի կաթիլ ջուրը խըմցնել»։
كوب kaub «կուժով ջուր խմել»։
اكتياب iktiyāb «կուժը ուժով, դժվարությամբ, գլուխը բարձրացնելով ջուր խմել»։
نغب naγb «թռչունի կում-կում ջուր խմելը»։
ابت abt «ջուրը շատ խմելով ուռել»։
اجتلات iǰtīlāt «մի բան ամբողջովին խմել»։
سفت saft «շատ խմել, բայց դարձյալ ծարավը չանցնել»։
غتّ γatt «ամանը, բերանից չհեռացնելով, մեջի ջուրը կում-կում խմել»։
فتفت fatfata «ուղտը ջուրը չգոհանալու չափ խմել»։
اكتلات iktilāt «խմել»։
خنث xanṯ } «տակի բերանը դուրս դարձնելով ներանից
اختناث ixtināṯ } ջուր խմել»։
ثعيث ta'ayyuṯ «ջուրը կշտանալու աստիճանից պակաս խմել»։
غنث γanaṯ «շունչ առնելով ջուր խմել»։

امتياز imtiyāz «չորքոտանը ջրով հարելով խմել»։
جز azǰ «չափազանց շատ խմել»։
جذ ǰāǰ «ամբողջ մեկ շնչով կամ կամաց-կամաց խմել»։
جذ ǰalǰ «ջուրը կում-կում խմել»։
جذ ǰavǰ «խմել»։
تزلج tazalluǰ «շատ ու արագ խմել»։
تسلج tasalluǰ
استلاج istilāǰ «չափազանց շատ խմել»։
سملجة samlaǰa «քիչ-քիչ և հանդարտ խմել»։
عثج ʿaθǰ «քիչ-քիչ խմելով շատ խմել»։
عذج ʿaðǰ «խմել»։
غبج γabǰ
غمج γamǰ «ջուրը մեկ անգամից չխմել, այլ կամաց-կամաց»։
كدج kadǰ «չափազանցության չգիտելով՝ բավարար չափով խմել»։
لذج laðǰ «ջուրը քիչ-քիչ, կում-կում խմել»։
همج hamǰ «ուղտը մեկ անգամից այնքան խմել, որ կշտանա»։
ترنّح tarannuḥ «քիչ-քիչ խմել»։
تزنّح tazannuh
تزنيح taznīh «մի անգամ խմելուց հետո նորից խմել»։
تصبيح taṣbīḥ «նռնավոտյան նոր կիսած կաթ խմցնել»։
استباح iṣtibāḥ « » » » » խմել»։
تضيح taḍayyuḥ «մեջը ջուր խառնած կաթ խմել»։
فلقة falqaḥa «ամանի մեջ եղած ջուրը ամբողջ և մեկ անգամից խմել»։
فنح fanḥ «ջուրը չհշտանալու չափ խմել»։
قنح qanḥ
تقنّح taqannuḥ «ջրից հշտանալուց հետո էլի բոնի խմել»։
مكسحة mukāsaḥa «ամբողջ խմել վերջացնել»։
املاء imlāḥ «անասուններին ապի ջուր խմցնել»։

حشو nušūh «գոհանալուց պակաս խմել»։
حضو naôḥ «ծարավը մի քիչ կոտրելու չափ խմել»։
خلو malx «այծի նոխազի իր մեզը խմելը»։
ابترا ibtirād «ներսը հովացնելու համար սառը ջուր խմել»։
اجتلا iǰtilād «ամանի մեջի ջուրը ամբողջ խմել»։
سعد saad «խմել»։

ّرد ridda «ուղտը երկրորդ հերթում ջուր խմել»։
تصرد taṣrīd «հյուտանալուց պակաս ջուր խմցնել անասունին»։
سوغ suvād «առնդ տվող ճահճային ջուր խմել»։
عشارية ǰāšariyya «առավոտյան ուղտի կաթ խմել»։
تجرجر taǰarǰar «կոլթ-կոլթ ձայնով խմել»։
استعناد isti'nād «տիկը ծռելով բերնից խմել»։
اغماد imγād «խմիչքը չափազանց շատ խմել»։
جأظ ǰaôẓ «մեկ շնչով խմել»։
تجبر taǰabbur «խմելու մեջ չափազանցել»։
بسر basr «ամածունը դեռ թան չեղած խմել»։
بغر baγr «խիստ շատ ջուր խմել»։
خمر xamr «մեկին գինի խմացնել»։
تساور tasāvur «գինու միացորդը խմել»։
قبع qab' «խոպայի բերանը դեպի ներս ոլորելով խմել կամ խոպայի ծծակը բերանը դնելով խմել»։
قمع qam' «խոպայի բերանը դեպի դուրս ոլորելով խմել»։
ّفر raffi «ամեն օր կաթ խմել»։
ّفس saff «շատ ջուր խմելուց հետո չհյուտանալով նորից ծարավ միալ»։
ّفاشتا tašāff «ամբողջ ամանը խմել»։
استفاف ištifāf «ամանի մեջի ամբողջ ջուրը խմել վերջացնել»։
اعساف i'sāf «միշտ մեծ ամանով խմել»։
تعفّف ta'affuf «ծծի մեջի միացորդ կաթը խմել»։

علق ʿalf «չար խմել»։

عافرا iʿāfa «ամբարը դժխով չուր չխմել»։

قحف qaḥf
قحتفا iqtiḥāf } «ամանի ամբողջ ջուրը խմել»։
قعف qaʿf

نضف naḍf «անասուններին յակելը (յեղով խմել)»։

نصف naṣf «ամանի մեջ եղած ջրի կեսը խմել»։

انتشأ intišāʾ «կիսած ժամանակ կաթի երեսի փրփուրը խմել»։

انتضأ intiḍāʾ } «ուղտի ձագի՝ մոր ծծում եղած ամբողջ
نضف naḍf } կաթը խմել»։

ترمّق tarammuq «քիչ-քիչ և ժամանակաւ ժամանակ խմել»։

ذقذق zaqāq «սեղանի վրա՝ կիրակուր ուտելիս ջուր խմել»։

طرق tarq «պղտոր ջուր խմել»։

غرق ɣarq «մի ումպ ջուր խմել»։

مغتبق muɣtabaq «երեկոյան կաթ և այլն խմել»։

تغفّق taɣaffuq «ամբողջ օրը գինի խմել»։

فرق faraq «ամանով ջուր խմել»։

تمقّق tamaqquq «առտիճանաբար, կամաց-կամաց խմել»։

معق maʿq «ուժով խմել»։

تمهق tamahhuq «ժամեմ ժամ խմել»։

تفوّك tafavvuq «ուղտի ձագի երբեմն-երբեմն կաթ խմելը»։

نهك nahk «մի բան խմել վերջացնել»։

تمتّك tamattuk «կում-կում» խմել»։

تثفّل taθfīl «ուտելիս մեկ-մեկ էլ կաթ խմել»։

تثمّل taθammul «ամանի ամբողջ միացօրդը խմել»։

ضفثلة ḍaθfala «կիրակրի ամանի տակը միացած մսաջուրը խմել»։

تسمّل tasammul «սովազանի տակի միացօրդ ջուրը խմել»։

علل ʿalal «մեկ անգամ խմելուց հետո երկրորդ անգամ խմել»։

اعلال iʿlāl «մեկին տալարը երկրորդ հերթին ջուր խմել»։

قبل qabl «ջուրը ավազանը թափվելիս խոզովակից խմել»։

قيل qayl
تقيل taqayyul } «կեսօրին կաթ խմել»։

نقيل niqāl «ուղտը առանց մեկի առաջնորդության ինքնագլուխ երթալ ջուր խմել»։

نهل nahal «առաջին անգամ ջուր խմել»

جرجم ǰarǰima «խմել»։

تجرجم taǰarǰim «չափազանց խմել»։

زاما zāma «ուժով ուտել ու խմել»։

تسغيم tasγīm «կում-կում ջուր խմցնել»։

سم samm «մեկին թույն խմցնել»։

صام ṣām «չափազանց շատ ջուր խմել»։

ظلم ẓalm «կաթը մերելուց հետո դեռ մածուն չեղած խմել»։

فهم faḥm «մայրամուտից հետո մթանը գինի խմել»։

قدم qaδam «կում-կում ջուր խմել»։

نغم naγm «մի քիչ խմել»։

ثمان iθmān «ութ օրը մեկ ուղտի ջուր խմելը»։

لبن labn «կաթ խմցնել»։

صفا safa «պետք եղածից ավելի խմել»։

مصافاها musāfaha «կարասը մոտը դնելով շարունակ խմել»։

استفاه istifāh «նախապես քիչ խմելուց հետո՝ առատ ջուր դոնելով՝ մի լավ խմել»։

ميه mayh «ջուր խմցնել»։

حسو ḥasv «թոչունի ջուր խմելը»։

احتسا iḥtisā «ապուր կամ նման մի բան դլալ-դլալ խմել»։

ارتغاء irtiγā «կաթի փրփուրը առնել խմել»։

ريا rivā «խմել կշռանալ»։

سقا saqā «ջուր խմցնել, մատուցանել»։

اضراء iδrā «արմատացու խմել»։

عقى ʻaqī «նորածնի ընկերքը թափելու համար մեղրաջուր խմացնել»։

اغا ighā «միշտ սուրճ խմել»։

لتل laθi «մի քիչ ջուր խմել»։

لغل layī «խիստ շատ ջուր խմել, բայց էլի չկշտանալ»։

Գարգ մի ակնարկ հիշյալ բառացանկի վրա բավական է տեսնելու համար, որ խմելը զանազանվում է՝

1. Ըստ նյութի (ջուր խմել, կաթ խմել, քան խմել, քթու կաթ խմել, գինի խմել, հարած չորքան խմել, նոր կթած կաթ խմել, մեջը ջուր խառնած կաթ խմել, ագի ջուր խմել, ճահճային ջուր խմել, ուզտի կաթ խմել, փքփուրը խմել, պղտոր ջուր խմել, մաջուր խմել, արմավաջուր խմել, մեղրաջուր խմել, սուրճ խմել և այլն)։

2. Ըստ գործողի (մարդու խմելը, տավարի խմելը, ուզտի խմելը, ոչխարնի խմելը և այլն)։

3. Ըստ ձևի (ամանով խմել, կաբասից խմել, խողովակից խմել, տակից խմել և այլն)։

4. Ըստ ժամանակի (առավոտը խմել, մթանը խմել, ճաշից հետո խմել, երկրորդ հերթի խմել, երկու կամ 8 օրը մեկ խմել և այլն)։

5. Ըստ քանակի (կում-կում խմել, մեկ շնչով խմել, ամանի կեսը խմել և այլն)։

Կամ թե սրանց խառնուրդները, ինչպես՝ առավոտյան ուզտի կաթ խմել, առավոտյան նոր կթած կաթ խմել, երեկոյան կաթ խմել, կեսօրին կաթ խմել, մայրամուտից հետո մթանը գինի խմել և այլն։

Ծաղիկը բույսի այն մասն է, որ հետո անպէտ պիտի տա։ Բայց երկու տեսակ ծաղիկ կա. առաջինն՝ այն ծաղիկը, որ ծաղիկ էլ պիտի մնա (ինչպես՝ վարդը, մեխակը, մանիշակը, շահովքրամբը և այլն), երկրորդ՝ այն ծաղիկը, որ հետո պտուղ պիտի դառնա (ինչպես՝ ծիրանի ծաղիկը, կեռասի ծաղիկը և այլն)։ Ամեն լեզու էլ այս երկուսի համար միևնույն բառն ունի. բայց կան լեզուներ, որ այդ երկուսը զանազանում են. այսպես՝ պրս. ušxuvān «ծառի ծաղիկ», šikūfa «ծաղիկ». անգլ. flower, bloom, blossom.

Նման նախադասություն գտնում ենք նաև հայկունի մեջ[1]. «պոչ» բառի համար ունենք հետևյալ համանիշները.

[1] *Երբ վենետիկի միաբան եղ. Հյուրմյուզը թարգմանեց Ֆենելոնի Տելեմաքը դրաբարի և շատերը չնորհավորում էին նրան իր հաջող թարգմանության համար, նա պատասխանեց. «Ես կարող էի թարգմանել այդ միաբը 8 տարիներ առաջ»։ Այս խոսքը թեև ընդհանրապես իր հայկունի հմտության չափն է որոշում, հատկապես ցույց է տալիս, թե որքան հարուստ է հայկունը համանիշներով։ Բայց, անշուշտ, Հյուրմյուզը չափազանցնում էր. այդքան համանիշ չունինք։*

պոչ — ընդհանուր բառ, գործածական միայն աշխարհաբարի մեջ.

ագի — երկար մազե թելերից բաղկացած պոչ, ինչպես՝ ձիու, էշի, եզան և այլն.

ձետ — ոչ թե մազ, այլ վրան բուրդ պատած պոչ, ինչպես՝ շան, աղվեսի, առյուծի.

տտուն. — մարմնի անբաժան շարունակությունը կազմող փշից կամ ոսկորից պոչ. ինչպես՝ օձի, թռչունի, ձկան.

դմակ. — պարարտ ավելամիս կազմող պոչ, ինչպես՝ ոչխարի մի տեսակինը։

Բայց ինչ կարիք կա ծանրաբեռնել լեզուն այսպիսի հարբուստություններով։ Եթե պիտի զանազանենք «կաթ խմելը, թթու կաթ խմելը, նոր կթած կաթ խմելը, մեջը ջուր խառնած կաթ խմելը», ինչու չզանազանել նաև ջրախառն գինի խմել, շաքարախառն գինի խմել, շաքարաջուր խմել, կաթով սուրճ խմել, թեյ խմել, կաթով թեյ խմել և այլն, և այլն, վերջապես բոլոր տեսակի հեղուկների և նրանց զանազան խառնուրդների համար զանազան բառեր ինչու չստեղծել։

Բայց այն ժամանակ ինչպիսի՜ քաոս կստեղծվի մարդկային մտքի համար։ Ահա թե ինչ է ասում Ռընանը արաբերենի հարբուստության համար.

«Արաբերեն լեզվի բառերի չափազանց մեծ հարստությունը ավելի շատ անպատեհություններ է տեղիք տալիս, քան օգուտ առաջ բերում։ Նրա արդյունքն է լինում մի տարտամ լայնություն, որ շատ ճնշող է բերում հատակության։ Մի տեսակ գլխի պտույտ է զգում մարդ, երբ տեսնում է այն զանազան և հարմարյա հականաման իմաստները, որոնք արաբական բառարաններում շարված են իրար ետևից։ Ճշտության այսպիսի պակասությունը անտանելի թերություն է» (Renan, Hist. des lang. sémit, I 4. 1863, էջ 385)։

Այս պատճառով է, ահա, որ աշխարհաբարը ընդելով գրաբարի հարստությունը (ագի, ձետ և տտուն) գործածում է պոչ ընդհանուր բառը, պահելով միայն ոչխարի դմակը, որ տնտեսության համար առանձնապես կարևոր է։

Շատ անգամ այլևայլ հարևան համարված մի լեզու հանկարծ որոշ դեպքերում բոլորովին աղքատ է դուրս գալիս. օրինակ, գերմաներենը գիտե՝

gehen «ոտքով գնալ»
reiten «ձիով գնալ»
fahren «կառքով գնալ»։

Բայց «փոխ տալ» և «փոխ առնել» իրար հակառակ գաղափարների համար ունի միայն lehnen, *որ ԲԷ մինն է, և ԲԷ մյուսը, մինչդեռ «աղքատ» ֆրանսերենը առանձին-առանձին ունի* prêter *և* emprunter։

Այս բոլորից հետևում է, որ լեզվի հարստությունը արտաքին և ձևական երևույթ է, և շատ անգամ էլ ավելորդ ծանրաբեռնություն։ ԵԲԷ հայերենը մի բառով ասում է ամենամեծ, իսկ ֆրանսերենը երեք բառով le plus grand, *սրանով ոչինչ չի փոխվում. նույնիսկ* le plus grand, *հակառակ երևույթին, ավելի խնայողական է, քան ամենամեծ, որովհետև* le plus grand *3 վանկ է, ամենամեծ՝ 4 վանկ, ձայների քվով էլ* le plus grand (lə plü grą) *8 ձայն ունի, ամենամեծ (ամմենամեծ) 9 ձայն։*

ԵԲԷ կոն Ֆու-ցեի և Բուդդայի խորախորհուրդ վարդապետությունները կարելի է եղել արտահայտել չինարենի նման մի «աղքատ» լեզվով, ԵԲԷ Շեքսպիրը, որ այնպիսի գունագեղ ու զարդարուն լեզու ունի, կարելի է թարգմանել ֆրանսերենի, որ մի «աղքատիկ» բառապաշար ունի, առանց հեղինակի մտքերից որևէ բան կորցնելու, նշանակում է, ԲԷ ամեն մի լեզու էլ բավականաչափ ճկուն է մարդկային մտքերը արտահայտելու համար և կարևորը միայն այն է, որ նա կրած լինի պետք եղած մշակույթը։ Ուրիշ խոսքով՝ բառերի սուկ քանակը չի կազմում լեզվի հարստությունը. կարևորն այն է, որ դրա հետ միաժամանակ լեզուն գիտնականների և գրականագետների միացյալ աշխատանքով ճշտած լինի յուրաքանչյուր բառի ճիշտ նշանակությունը, նրա գործածության տեղն ու ձևը, որոշված լինի, ԲԷ մշակված ուրիշ լեզուների բառերի դեմ ինչ ու ինչ համապատասխան ձևեր պետք է հատկացնել կամ ԵԲԷ չկա՝ հորինել. փույթ չէ ԲԷ այդ բացատրությունը մի բառից բաղկացած կլինի, ԲԷ մի-երկու բառից։

[Իսկ այս էլ նշանակում է, ԲԷ լեզվի հարստությունը՝ նրա ունակությունն է ավելի շատ գաղափարներ, հետևաբար՝ ավելի զարգացած մտածողություն արտահայտելու համար։ Այսպես օրինակ, արաբերենը, որ 153 բառ ունի «խմել» գաղափարի համար, 12 բառ «գլխի պատռվածքի» նշանակության համար և այլն, չունի բազմաթիվ բառեր, որոնք ամենօրյա գործածության մեջ

են ժամանակակից ռուսերենում, հայերենում և այլ լեզուներում և որոնք արտահայտում են ռուս, հայ և մեր Միության մյուս ժողովուրդների տնտեսական ու քաղաքական կյանքի, կուլտուրայի ու կենցաղի, գիտության ու տեխնիկայի զարգացման բարձր աստիճանը։ Ուստի և՝ լեզվի հարստությունը միայն բառերի քանակական շատությամբ չէ որոշվում այլև՝ նրանց բազմակողմանի ընդգրկումով՝ կյանքի բոլոր բնագավառների երևույթներն արտահայտելու համար։ Եվ այս կարգի հարըստությունն ու բազմակողմանիությունն էլ, ինչպես ցույց է տալիս Ի. Վ. Ստալինը, որոշում է լեզվի զարգացած լինելը.

«Բառային կազմը,— ասում է Ի. Վ. Ստալինը,— արտացոլում է լեզվի վիճակի պատկերը, որքան ավելի հարուստ և ավելի բազմակողմանի է բառային կազմը, այնքան ավելի հարուստ ու ավելի զարգացած է լեզուն»։

3. ԼԵԶՎԻ ՃՈՒՇՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես որ լեզվի հարստություն ասելով՝ հասկանում ենք նրա բառամթերքի առատությունը, նմանապես լեզվի ճոխություն ասելով հասկանում ենք նրա քերականական ձևերի առատությունը և բազմազանությունը, այն է՝ ձևաշատությունը։

Երբ համեմատում ենք չինարենի հորինվածությունը որևէ կլասական կամ թեքական լեզվի քերականական հորինվածության հետ, երբ տեսնում ենք, որ այնտեղ ոչ հոլով կա, ոչ խոնարհում, և մարդկային միտքը ստիպված է բառերի տեղին, դիրքին, շեշտին ու տոնին ուշադրությամբ հետևել՝ իմաստը ճիշտ ըմբռնել կարենալու համար, զգում ենք զանազանությունը ձևաշատ ու ձևազուրկ լեզուների միջև, առաջինի առավելությունը երկրորդի հանդեպ։

Սանսկրիտը մի շատ ճոխ լեզու է և խոնարհման ժամանակ մինչև 10 ձև է ստանում. ավելի ճոխ է արաբերենը, ուր, ինչպես տեսանք, բայը կարող է ստանալ 15 ձև. կան ուրիշ, նույնիսկ հետամնաց կամ «վիճակավայրենի» ցեղերի լեզուներ, որոնք էլ ավելի ճոխ են բայի տեսակների մեջ և յուրաքանչյուր գործողության համար զանազանում են շուտ թե կամաց, միանգամից թե տակավ առ տակավ, մեկ անգամ թե քանիցս անգամ կրկնված, ընդհատված թե մշտաձև, մի հոգով կատարված թե մի քանի

հոգու ընկերակցությամբ, պատահարար թե մտապրությամբ կատարված գործողություններ։

Աֆրիկյան բանտու լեզուները, ինչպես անանք, ընդունում են դասերի բաժանումը և յուրաքանչյուր գոյական, նրան հետևելով նաև ածականը, դերանունն ու բայը, ընդունում են բազմազան դասանիշներ։

Բազմաթիվ լեզուներ ընդունում են սեռը, և գանազան վերջավորություններով կամ այլ նշաններով արտահայտում են, թե քարը, փայտը, սեղանը կամ գրչակոթը արական գաղափար է, իգական, թե չեզոք. և նրանց հետևող ածականը, հոլը կամ բայն էլ հաճախ ընդունում են սույն նշանները կամ վերջավորությունները, և այսպիսով առնդվում է լեզվի մեջ ձևերի ճոխ բազմազանություն։

Կան լեզուներ,—ավելի հնագույն շրջանում,— որոնք եզակիի և հոգնակիի կողքին ընդունում են նաև երկակի թիվը, կամ կրկին հոգնակիի, որ նաև երբեմն սեռով էլ է տարբերվում և գանազան ձևեր առանում։

Վերջապես՝ շատ սովորական է լեզուների մեջ համաձայնության։ ինչ թիվ, սեռ կամ հոլով ունի գոյականը՝ նույն թվով, սեռով և հոլովով պիտի դրվի նաև ածականը կամ ածականները. և այսպես միևնույն մասնիկները իրար հետևից շարունակ պիտի կրկնվեն։ Օրինակ՝ ռուս. С предыдущей какой либо согласной буквой, и теряют коренную свою конечную букву в прочих косвенных падежах.

Այս բոլորը, ինչպես էլ որ արդարանան լեզվի ծագման ու զարգացման պատմությամբ, մարդկային մտքի համար ավելորդ ծանրաբեռնություն են. և ինչքան էլ որ ճոխություն, զարդ կամ գեղեցկություն, պերճախոսություն կամ շքեղություն համարվին, հակառակ են լեզվի պարզության և դյուրըմբռնելիության։

Որքան որ լերկ է չինարենի ձևագրությունը, այնքան և ավելի ումպետ ու ավելորդ է սանսկրիտի կամ արաբերենի ձևաշատությունը։ Լեզուն մի գործիք է մարդկային մտքի ճիշտ արտահայտության համար. պետք չկա որ այդ գործիքը նաև ավելորդ զարդերով ու նկարներով ծանրաբեռնված լինի։ Երբ հնարված են լեզվի մեջ նախադրություններն ու մակբայները, և կարելի է շատ պարզ ու շատ հասկանալի ձևով ասել, օրինակ՝ քաշել, տակից քաշել, կողքից քաշել, ցած քաշել, վերև քաշել, ներից քաշել, ներից ու ներից քաշել, շարունակ քաշել, կամաց կամաց

քաշել, ընդհատաբար քաշել, անընդհատ քաշել, այս ու այն կողմ քաշել, ուժգնորեն քաշել, թույլ քաշել, միևչև վերջ քաշել և այլն և այլն, կարիք չկա սրանցից յուրաքանչյուրի համար բայական առանձին նորանոր ձևեր ստեղծել, լինեն դրանք բոլորովին նոր արմատներ, որ շատ ավելի ավելորդ են, թե նույն արմատից կազմված նոր բայական ձևեր։

Կարևորն ու անհրաժեշտը լեզվի մեջ այն է, որ սովորական հոլովական ձևերը, բայերի սովորական ժամանակներն ու եղանակները պարզ, դյուրըմբռնելի և կարճ ձևի տակ ներկայացված լինեն։

Լավը այն չէ, որ մի լեզու մի որևէ միտք արտահայտելու համար բազմատեսակ ծամածռություններ, ջղաձգություններ, նյարդերի կծկումներ անի, այլ այն է լավը, երբ նվազագույն ճիգով և հանդարտությամբ այդ միտքը կարողանա արտահայտել։ Օրինակ առնենք սանսկրիտը և գերմերենը իրենց ճոխությամբ և նրանց հետ համեմատենք պարսկերենը՝ իր պարզությամբ։ Այսպես է նաև ֆրանսերենը՝ լատիներենի համեմատությամբ, աշխարհաբարը՝ գրաբարի համեմատությամբ և այլն։

Հին հայերենն էլ ունեցել է ճոխ ձևեր։ Հնագույն ժամանակ ունեցել է սեռի և երկակի թվի գործածություններ։ Գրաբարի մեջ արդեն դրանք ջնջված են և հաղիվ նրանց հետքերն են երևում։ Գրաբարը, բացի սովորական հոլովներից, ուներ նաև պատմական ու պարառական, նախադրավոր կազմություն. աշխարհաբարը դրանք ջնջել է։ Գրաբարը ճոխաբար ուներ բազմատեսակ հոլովում (ի, ի–ա, ա, ո, ու, եաց, ք, ին կամ աց և այլն), որոնց համար որևէ կանոն էլ չկար (անկանոնություն էլ ավելի մեծ «ճոխություն ու պերճանք» է համարվում!). աշխարհաբարը վերացրել է դրանք և ըստ կարելվույն միօրինակություն ու պարզություն մտցրել։ Գրաբարը ուներ ածականների ու գոյականների համաձայնության օրենքը, աշխարհաբարը բոլորովին վերացրել է այդ։ Բայերի խոնարհման մեջ գրաբարը ուներ էլ ավելի մեծ պեպեխություն ու ճոխություն, լծորդություններն մինչև 8 տեսակ, ապառնիի և ստորադասականի բարդ կազմություն, աշխարհաբարը ջնջել է դրանք կամ ըստ կարելվույն պարզել։

Լեզվի ճոխությունը հակառակ է պարզության գաղափարին։

Մի դեղեցիկ մաթեմատիկական օրինակ կա լեզվի ճոխության ու պարզության համար։ Գրաբար ասում ենք.

Ի վերայ պարսպացն այնոցիկ մեծաց, բարձանց և հաստատանց.

a b c d e

Աշխարհաբար նույնը լինում է.

Այն մեծ, բարձր ու հաստատուն պարիսպների վրա։

b c d e a

Հոգնակի սեռականի վերջավորությունը գնելով x, առաջինը լինում է ax+bx+cx+dx+ex
իսկ երկրորդը՝ (a+b+c+d+e)x.

որ ներկայացնում է առաջին ֆորմուլայի պարզացրած ձևը։

[Նշանակում է, լեզվի մեջ ձևերի բազմազանությունն ու առատությունը նրա կատարելության նշանը չէ, ինչպես և դրանց սակավությունն ու միատեսակությունը անկատարության արատավորությունը չէ։ Ժամանակակից պարսկերենը ծայրահեղ միօրինակության է մատրել հոլովման մեջ. ոչ միայն բոլոր գոյականները, այլև գերանունները հոլովվում են մի միակ հոլովմամբ, եվ այնուամենայնիվ նա հետաքրքրաց կամ աղքատիկ լեզու չէ։ Քինարևը հոլովում և խոնարհում չունի, բայց իր միջոցներով՝ առնով, բառերի դասավորությամբ և օժանդակ բառերի միջոցով արտահայտում է այն ամենը, ինչ որ կարող է արտահայտել, օրինակ, արդի գերմաներենը, որ ձևաշատ լեզու է։ Մյուս կողմից՝ նույնիսկ միևնույն լեզուն, մի դեպքում ձևերի առատությունն ու բազմազանությունը ցուցաբերելով, մյուս կողմից՝ աղքատ կարող է լինել, կամ ընդհակառակը։ Նույն պարսկերենն, օրինակ, հոլովման բացառիկ պարզություն ունենալով, խոնարհման մեջ՝ բայի ժամանակային հիմքերի (ներկայի և անցյալի հիմքեր) կազմության մեջ ցուցաբերում է արտակարգ բազմազանություն, մինչ այն աստիճան, որ հազիվ մի քանի բայեր կարելի է գտնել կանոնավոր, այսինքն չձևափոխված հիմքերով։

Այսպիսով՝ ձևերի բազմությունն ու առատությունը կամ դրանց սակավությունը լեզվի առավել կամ պակաս զարգացած լինելու չափանիշը չեն։]

4. ԼԵԶՎԻ ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվի համառոտություն ասելով՝ հասկանում ենք նվազագույնը այն ձանքերի, որ գործ է դնում լեզուն արտահայտելու համար մի որևէ դաղափար։ Դրաբար դից և աշխարհաբար աստվածների միևնույն իմաստն են արտահայտում, բայց առաջինը երկրորդից 4 անգամ կարճ է. այսպես նաև, թրք. allahlarən, որ աշխարհաբարին համապատասխանում է։

Որչափ կարճ են լեզվի բառերը, այնչափ էլ համառոտ է լեզուն, հետևաբար նա նվազ էներգիա է պահանջում։

Բառի երկարության հետ կապ չունի երկարաբանությունը, որ ոճաբանության է վերաբերում։ Մարդիկ կան, որ լակոնական ոճով են խոսում և դրում. մարդիկ էլ կան, որ ավելորդ ու անտեղի կրկնություններով ծանրաբեռնում են խոսքը։ Միջակը լավագույնն է։

Հաջորդ տողերով տալիս եմ երկարաբան խոսակցության մի օրինակ, որ Գոլսում դասական է դարձել։

Խոսակցություն ասածդ երկու կողմից պետք է լինի. մեկը երբ մեկին մի բան է ասում, նա էլ սրա պատասխանը պետք է տա, երբ նա է սրան բան ասում, սա նրա պատասխանը պետք է տա. օրինակ, եթե ես քեզ մի բան ասեմ, դու իմ պատասխանը պետք է տաս, եթե դու ինձ մի բան ասես, ես պետք է քեզ պատասխան տամ։

Եթե մեկը մեկին մի բան ասի և նա նրա պատասխանը չտա, կամ թե սա նրան մի բան ասի և նա սրա պատասխանը չտա, օրինակ, եթե ես քեզ մի բան ասեմ, և դու նրա պատասխանը չտաս, կամ եթե դու ինձ մի բան ասես, և ես քեզ պատասխան չտամ, այն խոսակցությունն առաջ չի գնա։

(Այս երկարաբանությունը, որ թյուրքերեն լեզվով է, հնարված է լազերի խոսակցությունը ծաղրելու համար)։

Այսպես նաև հաջորդը։

Մի պառավ կին մի պառավ կնոջ ասաց. ե՛յ պառավ կին. ես ասում եմ պառավ կին, որովհետև պառավ կին ես և ո՛չ թե երիտասարդ կին. եթե երիտասարդ կին լինեիր, պառավ կին չէի ասի, այլ երիտասարդ կին. բայց որովհետև երիտասարդ կին չես այլ պառավ կին, ես էլ ասում եմ պառավ կին։

Նմանապես ես էլ պառավ կին եմ. ուստի դու էլ ինձ պիտի ասես պառավ կին և ոչ թե երիտասարդ կին. եթե երիտասարդ

կին լինեի, պառավ կին չէիր ասի, այլ երիտասարդ կին. բայց որովհետև երիտասարդ կին չեմ, այլ պառավ կին, դու էլ ասում ես պառավ կին:

Երկուսս էլ պառավ կին ենք, ուստի երկուսս էլ իրար պիտի ասենք պառավ կին և ոչ թե երիտասարդ կին. եթե երկուսս էլ երիտասարդ կին լինեինք, իհարկե պառավ կին չպիտի ասեինք, այլ երիտասարդ կին. բայց որովհետև երկուսս էլ երիտասարդ կին չենք, այլ պառավ կին, ուստի երկուսս էլ իրար պիտի ասենք պառավ կին:

Ոչ թե միայն մենք երկուսս պառավ կին ենք, ուստի երկուսս էլ իրար պիտի ասենք պառավ կին և ոչ թե երիտասարդ կին, այլ եթե մի ուրիշ պառավ կին էլ լիներ, նրան էլ պիտի ասեինք պառավ կին, և ոչ թե երիտասարդ կին, որովհետև երիտասարդ չէր. իսկ եթե երիտասարդ կին եղած լիներ, այն ժամանակ ուրիշ բան է. մենք նրան կասեինք երիտասարդ կին և ո՛չ թե պառավ կին, որովհետև երիտասարդ կին էր:

Եվ այսպես ամեն պառավ կին, եթե պառավ է, պառավ ենք ասում, և եթե երիտասարդ է, երիտասարդ ենք ասում. անկարելի է, պառավ կին ասենք, եթե երիտասարդ կին է, և երիտասարդ ասենք, եթե պառավ կին է[1]:

Կան լեզուներ, որոնց բոլոր բառերը միայն մի վանկից են բաղկացած. այսպես են միավանկային լեզուները (չինարեն, անամերեն). արարերենում բոլոր արմատական բառերը միավանկ են. ջավայերենը հատուկ սեռ ունի երկվանկ բառերի. այսպես միավանկ և եռավանկ բառերը պատահական բնույթ ունեն և բացառություն են կազմում: Միավանկ են ասում մի ջրկություն, շաղկապ, հարաբերական և այլ նույնպիսի բառեր. այս էլ այն պատճառով, որ անշեշտ են և հնչման մեջ կապվելով հաջորդ կամ նախորդ բառի հետ, իրենց անհատականությունը կորցնում և միասար են կարդացվում: Եռավանկ են օտար բառերը և կամ որևէ մասնիկով ածած բառերը: Իսկ ավելի վանկով բառերը բարդ են. բառերի ձևացյալ անպակին մեծամասնությունը երկվանկ է: Երբ մի բառ ի բին միավանկ է, աչքաառում են կամ սկզբից մի մասնիկ դնելով և կամ վանկը կրկնելով երկվանկի վերածել (ավելացնում են ha, hé, hu վանկերը). այս-

[1] *Այս երկու պատմությունները էլ պատմեց բանասեր-բահանայ Կ. Հ. Բասմաջյանը, Փարիզում, 1897 թվին:*

պես՝ սանսկրիտից փոխառյալ stri «կին», woh «պատուհան» դառնում են héstri huwoh և ro «երկուս», pat «չորս» դառնում են loro, papat (Bohatta, Prak. Gram. d. Jav. Spr., էջ 30)։

Ուրիշ լեզուների համար այսպիսի կանոններ չկան. բառերը կարող են լինել մի կամ ավելի վանկերով. շատ երկար են լինում գերմանական բարդ բառերը և ավելի երկար են էսկիմոսների լեզվի բառերը։ Բուենոս-Այրեսում հաստատված մի բանկի անունն էր Iturriberrigorricoerrotaberricoechea (17 վանկ), որ բուն նշանակում է «վերի նոր կարմիր ապրյուրի նոր ջաղացքի տունը» (BSL 34, N 102, էջ XXVII)։

Ահա մի քանի երկար բառ դանազան լեզուներից.

Ամերիկյան արտավակ լեզվով՝

Massukussukuttunnuanikabibu

(դու այսօր) չպիտի լվացվիր

(Crevaux-Sagot-Adam, էջ 225)

Kabbuhintimaninumakanniman

«ուրախանամ» (անդ, էջ 185)։

Հայերենի մեջ սկսած միաձայն ու միավանկից (շաղկապ) ունենք երկվանկ, եռավանկ, քառավանկ, հնգավանկ բառեր։ Գրաբարի բառերը ավելի կարճ են, քան աշխարհաբարինը, ուր մանավանդ վերացական բառերի հոլովական ձևերը (-ությունների, -ություններով) չորս վանկով երկարացնում են բառը։ Գրաբարի ամենաերկար բառերն են հետևյալ անսովոր ձևերը.— նախանձապարճորդեցուցանել (10 վանկ, 24 տառ). «Բանիւք և հարմամբ նախանձանապարհորդեցուցաներ՝ թոյլն տալով երթալ ի լանջան. Ոսկ. յհ. Բ. 26.— սրանից կարճ է կայծակնաճաճանչեցուցեալ (8 վանկ, 22 տառ). «Այլ այնչափ կայծակնաճաճանչեցուցեալ, որով զգայարանքն մոգուցն լեզուք» (Նոր. Գ. կե)։ Սեռականի պատճառով սրանից մի վանկ ավելի է Նոսրվիկ. էջ 4 «առ աճզուգաչարափառազուն (20 տառ) միւսոյ մասին». Չենք հաշվում Թեոդորոս Բոթինավորի կանգունաչափ արվեստակյալ բառերը, որոնք նույնիսկ Հայկազյան բառարանի մեջ չեն առնված. ինչ. վերնագագաթնակատարաձերմ (9 վանկ, 22 տառ), հրալուսանանաճշդեղնութիւն (10 վանկ, 25 տառ)։

Արդի լեզվի նորակերտ բառերի մեջ ամենաերկարներից է՝ նաճապարճաշինաբարություն, որի հոդ. գրծ. ձևն էլ պիտի լինի՝ նաճապարճաշինաբարություններով (11 վանկ, 27 տառ).

(Երկու վանկ պիտի պահանջի, եթե ասեինք ուղեշինարարություն):

Աչխարհաբարի մեջ էլ, սակայն, կարող ենք գտնել միավանկ բառերով ամբողջական նախադասություններ կազմել. ինչպես՝ «Ծկ, բե՛ր այդ, դի՛ր ինձ մոտ, և երբ որ քեզ պետք գա, վե՛ր առ քեզ ետ ու տար քո տունն ու լաւ-լաւ կեր (24 միավանկ բառ):

Դրաբար կարելի է կազմել՝ «ես եմ Ձեւս մեծ և հայր այլ դից» (8 միավանկ բառ):

Համառոտության կողմից մի լեզու ուրիշ լեզուների հետ համեմատելու ամենահասարակ միջոցն է բառերի համեմատությունը: Օրինակ՝ հյ. ծառ միավանկ բառը հավասար է անգլ. tree (Քրի) ձևին, բայց կես վանկ ավելի կարճ է գերմ. Baum և մի կամ երկու վանկ ավելի կարճ է Քրք. ağaj, պրս. dirext, հն. δένδρον, ֆրանս. arbre, իտալ. albero, ռուս. дерево և այլ համանիշներից: Հյ. տուն բառը հավասար է ռուս. дом, Քրք. ev բառերին և կես վանկ պակաս է անգլ. house, գերմ. Haus համանիշներից և մի վանկ պակաս է ֆր. maison, իտալ. casa, պրս. xāne, հն. οἶκος համանիշներից: Հյ. գյուտ մի վանկ է, նրա համանիշներից ֆրանս. invention 3 վանկ, ռուսերեն изобретение 6 վանկ:

Բայց բնդհակառակը հյ. խաղաղություն չորս անգամ ավելի երկար է, քան ռուս. мир, ֆրանս. paix, անգլ. peace համանիշները: Հյ. իրոք երկու վանկ է, իսկ սրա համապատասխան ռուս. ձևը на самом деле 5 վանկ է:

Հյ. ծալք մի վանկ է և հավասար է ֆրանս. pli համանիշին, բայց սրա մի ուրիշ համանիշը (circonvolution) 5 անգամ ավելի երկար է:

Ալյասկայի բնիկների (koloschen) լեզվով, մի կողմից՝ կան չափազանց կարճ բառեր և, մյուս կողմից՝ չափազանց երկար բառեր, օրինակ՝

a «ծով», in «ջուր», za «փոքր կենդանին», ta «ապիտակ կղզի», kandgeheenya-hente «պեղին», juschkatetachani «դնել», jakujikzhizagi «առագաստ» (նավի), akachhekuchagetsch «ծածկել»:

Ըստ այսմ զանազան բառերի պատահական համեմատությունը ոչ մի արժեք չունի լեզուների համառոտության համեմատական աստիճանը որոշելու համար:

Նույնիսկ այն դեպքում, – երբ մի բառ ավելի կարճ է հա-

մեմատելի բառից, նրան հարակից մի ուրիշ բառ էլ կարող է լինել ավելի երկար, որով համաչափությունը դառնում է նույն։

Օրինակ՝ հյ. դժբախտաբար մի վանկ ավելի կարճ է ֆրանս. malheureusement *համանիշից, իսկ բարերախտաբար՝ մի վանկ ավելի երկար է իր համանիշ* heureusement *ձևից։ Սակայն սրանց միացումը՝*

բարերախտաբար թե դժբախտաբար
heureusement ou malheureusement
հավասար են (երկուսն էլ 10 վանկ)։

Ավելին կա։ Դեպքեր են լինում, երբ հայերեն մի բառ ավելի երկար է համապատասխան մի օտար ձևից, բայց գործածության մեջ (հոդի, հոլովման կամ խոնարհման պատճառով) հավասարվում է նրան և կամ նույնիսկ ավելի կարճ դուրս գալիս։

Օրինակ հյ. խմոր *մի վանկ ավելի երկար է ֆրանս.* pâte *համանիշից, բայց ֆր.* pâte *առանձին մերկ ու մենակ գործածություն չունի. նախադասության մեջ նա պարտավոր է ստանալ որոշյալ կամ անորոշ հոդ, հոլովական նախդիրներ և այլն, ինչպես՝*

խմոր (անորոշ)	*2—*	de la pâte 3
խմորի, խմորից	*3—*	de la pâte 3
խմորով (որոշյալ)	*3—*	avec la pâte 4
խմորով (անորոշ)	*3—*	avec de la pâte 5

Մի օրինակ էլ բայերից՝

ուտել 2— manger 2

ուտենք 2, կուտենք 2, ուտում ենք 3— nous mangeons 3, *ուտե՞նք (հրմ.) 2—*mangeons ! 2 *(որ) ուտենք (ստոր.) 2—* (que) nous mangions 4.

Հյ. գիւղ ռուս. село *բառից մի վանկ կարճ է. բայց հոգ. սեռ. գրբ. գիւղից, աշխ. գյուղերի 1 և 2 վանկ ավելի են ռուս.* сёл *ձևից։ Այս բոլոր ասածներիցս երևում է, որ անջատ բառերի համեմատությունը պատահական բնույթ միայն ունի և չի կարող ծառայել իբրև չափանիշ՝ լեզուների համառոտությունը որոշելու համար։*

Լեզվի համառոտության իբրև չափանիշ կարող է միայն մի ամբողջական հատվածի համեմատական քննությունը ծառայել։ Առնում ենք մի հատված, թարգմանում ենք այս ու այն լեզվով, հաշվում ենք յուրաքանչյուրի բովանդակած ձայները, որը ավելի

քիչ է՝ նա ավելի համառոտ է, որը ավելի շատ է՝ նա ավելի երկարաբան է։

Այսպիսի մի համեմատական քննություն կատարել է Ես-պերսենը (Ling. 330), որ վերցրել է ամբողջ Մատթեոսի Ավետարանը, մի գիրք, որ կատարյալ հավատարմությամբ թարգմանված է հունարենից զանազան լեզուների, հաշվել է վանկերի թիվը և գտել է, որ

հին հունարենը ունի շուրջ	39 000	վանկ.
շվեդերենը ունի շուրջ	35 000	»
գերմաներենը » »	33 000	»
դանիերենը » »	32 500	»
անգլերենը » »	29 000	»
չինարենը » »	17 000	»

Սրանից հետևում է, որ հիշյալներից ամենահամառոտ լեզուն չինարենն է, ամենից երկարաբանը հունարենը, որ չինարենի կրկնապատիկն է և էլ ավելի։

Դժբախտաբար այս ցանկը երկու պակասություն ունի. նախ չեն հաշվված մեզ հետաքրքրող մի քանի կարևոր լեզուներ, ինչպես՝ ֆրանսերենը, իսպերենը, ռուսերենը, և երկրորդ՝ հաշիվը կատարված է վանկերի և ոչ թե ձայնների թվով։ Ըստ այսմ, օրինակ, հյ. ու և գերմ. Schlacht միևնույն գծի վրա պիտի ենան, մինչդեռ առաջինը միայն մի ձայն է, երկրորդը՝ հինգ։

Այս թերին մասամբ լրացնելու համար ևս հաշվեցի հայերեն ամբողջ Մատթեոսի ավետարանը, իսկ հայերենի հետ նաև մյուս լեզուներով The Gospel in many tongues գրքի ծանոթ հատվածը։ Ահա արդյունքը.

Մատթեոսի ավետարանը հայերեն (գրաբար) ունի 34000[1] վանկ (հաշված նաև վանկային ը-երը)։ The gospel հատվածը ունի՝

չինարեն[2]	57 ձայն	իտալերեն	108 ձայն
ֆրանսերեն	79 »	հայերեն	117 »
անգլերեն	97 »	պարսկերեն	118 »
ռուսերեն	102 »	վրացերեն	144 »
գերմաներեն	106 »	ճապոներեն	150 »
իսպերեն	106 »		
հին հուն.	107 »		

[1] Ճիշտ թիվ 33 998 վանկ։

[2] Չինարենը հաշվել եմ մանդարին (mandarin) խոսակցական լեզուն (որ նույն գրքում կրում է 80-րդ համարը և ունի 29 վանկ)։

Այս հաշվով ամենից համառոտ լեզուն Ճապոներենն է. ներանից հետո գալիս են ֆրանսերենն ու անգլերենը. միջին տեղը բռնում են ռուսերենը, գերմաներենը, թյուրքերենը, հունարենը, իտալերենը, հայերենը, պարսկերենը, վրացերենը. իսկ ամենից երկարաբան լեզուն է ճապոներենը:

Հետաքրքրությունից դուրկ չէ նաև մի այլ հաշիվ, որ կատարեցի ինքս:

Վերցրի Ներսես Համբրոնացու «Մեկնութիւն ժողովոյ» գիրքը, որ գերմաներեն թարգմանությամբ հանդերձ հրատարակել է Մաքսը (Leipzig, 1929): Թարգմանությունը շատ հարազատ է. տպագրության մեջ տողերը իրար հավասար և տառերն էլ, թե՛ հայերեն, և թե՛ գերմաներեն համաչափ մեծությամբ լինելով, կարելի է ճիշտ համեմատություններ անել:

Ամբողջ հայերեն բնագիրը՝ 188 էջ, ունի ընդամենը 5 287 տող. որից դուրս հանելով կիսատ տողերը (բոլորը 223), կունենանք ճիշտ 5 064 տող:

Գերմաներեն թարգմանությունը՝ 188 էջ, ունի ընդամենը 7 135 տող, որից դուրս հանելով կիսատ տողերը (բոլորը 195), կունենանք ճիշտ 6 940 տող: Գերմաներեն թարգմանության մեջ երբեմն վանկագծով դրված են բացատրական բառեր. սրանք էլ հաշվելով 40 տող, բոլորը կլինի 6 900 տող, որ համեմատելով հայերենի հետ՝ կունենանք:

հայերեն 100 տող—գերմ. 136 տող.

Հաշիվը համապատասխան չէ նախորդի հետ: Տարբերությունը կարծում եմ պետք է վերագրել նախ ուղղագրության ձևին (ş=sch, ç=tsch և երկրորդ՝ հոդերի անջատ գրության ձևին (der, die, das= ն, ը):

Իրրև հավելված այս գլխի տալիս եմ այստեղ հայերենի բոլոր միավանկ և մեկուկես վանկանի բառերի ցուցակը: Բառերը քաղել եմ Առձեռն բառարանից (2-րդ տպ.), որի վրա ավելացրել եմ մի խումբ բառեր, որոնք պակասում էին այստեղ: Այս բառացանկը պատկանում է բնականաբար գրաբարին, աշխարհաբարը և բարբառները է՛լ ավելի բառեր կարող են ունենալ: Ցուցակիս մեջ հավաքված բառերի թիվը է 1 935:

Աբ	Աղբր	Ալ (տատապելական չար ոգի)
Աբրն	Աղն	
Աղդ	Ալ («լիսեռն»)	Ալք
Աղդ	Ալխ	Ախտ

Ած
Ակն (աչք)
Ակն (քար)
Ակ
Ակ
Ակր
Ակռ (փականք)
Ակռ (կարասիք)
Ակկը
Ակտ (ակ)
Ակտ (կնդտ)
Ակցք
Ակճ
Ամ
Ամպ
Այր
Այգ
Այդ
Այդր
Այժմ
Այլ
Այլ (բայց)
Այծ
Այն
Այսն
Այս
Այս (դև)
Այսր
Այտ
Այր (մարդ)
Այր (քարայր)
Այց
Անգդ
Անդ (արտ)
Անդ (այնտեղ)
Անդր
Անք
Անկ (հարմար)
Անկ (բանվածք)
Անձն
Անալ (բուլսը)
Անց, անցք
Աշմ (հատապտ)
Աչք
Աջ
Ած (նախդիր)
Առ, առք (առնելը)
Առն (ոչխար)
Ասկն (սուտակ)
Ասպ
Աստ
Աստղ
Աբ
Աբք
Աբր
Արդ (ձև)
Արդ (այժմ)
Արդն (նիզակ)
Արդն (պաղլեղ)
Արքր (տարբր)
Արկ
Արկղ
Արմ
Արջ
Արջն
Արտ (դուրս)
Արտ
Արփ, արփի
Աւր (քամի)
Աւր (մաղձ)
Ափ (ձեռքի)
Ափն (ջրի)
Աք (ատք)
Բա
Բար (դուռ)
Բադ (կապ)
Բադ (բաժին)
Բադ
Բաժ
Բալ (պատուղը)
Բալ (մշուշ)
Բախ (բախչուն)
Բախտ
Բակ
Բահ
Բազ (կից)
Բազ (որ, քն)
Բազձ
Բամբ
Բայ
Բայ (որջ)
Բայց
Բան (խոսք)
Բան (իր)
Բան (վայրի կապին)
Բանդ (խոտը)
Բանկն (առաստպել)
Բանտ
Բաշ
Բաշխ
Բառ
Բառտ (բախտ)
Բարդ
Բարկ
Բարձ
Բարձր
Բարք
Բաց
Բաւ
Բեռն (ձեռք)
Բեկ (կոտրած)
Բեղ, պեխ
Բեղն (բեղուն)

Բեմ, բեմբ
Բեռն
Բեր, բերք
Բեր (խազը)
Բերդ
Բեք (շատ լավ)
Բէժ (վարագույրը)
Բէկ (իշխան)
Բէշկ (կատու)
Բէջ (ուռ)
Բիբ
Բիժ
Բիլ
Բիծ
Բիտ (հավիթ)
Բիր
Բիրտ
Բիւր
Բոբ
Բոգ (խոտը)
Բոզ
Բոխ
Բոկ
Բոհ (ավերակ)
Բոհ (շողիք)
Բող (բույս)
Բողկ
Բոյթ (մատը)
Բոյժ
Բոյլ
Բոյծ
Բոյն
Բոյս
Բոյր
Բոռ (պիծակ)
Բով
Բոր
Բորբ
Բոց
Բու
Բույթ
Բուժ (կեղտ)
Բուլ (կոնդակ)
Բուծ (գառնուկ)
Բուղխ
Բուն
Բունծ
Բուշտ
Բուռ (ծեփ)
Բուռն
Բուստ (մարջան)
Բուտ (կեր)
Բուտ (պերետուտ)
Բուրդն
Բուրդ
Բուք
Բօթ

Գար (բույսը)
Գար (բերան)
Գար (կեռ)
Գաղ (վուշը)
Գահ (աթոռ)
Գահ (բարձր տեղ)
Գաղթ
Գաղձն (խոտը)
Գաղջ
Գաղտ
Գամ (գալ)
Գամ (մեխ)
Գամ (անգամ)
Գամ (կռվան)
Գամփռ
Գայթ (սահել)
Գայթ (վտրի քամի)
Գայլ (գազանը)
Գայլ (կապ)
Գայտ
Գայտ
Գան (ծեծ)
Գանդ (գանգիւն)
Գանկ
Գանձ
Գանձ (երդ)
Գառն
Գարշ
Գեզ
Գել
Գեհ
Գեղ (տեսք)
Գեղձ (խզձ)
Գեղձ (խուլլ)
Գեղձ (բույսը)
Գեղմն
Գետ
Գեր (վերև)
Գեր (լաց)
Գերբն (քուրջ)
Գերծ (ածխլածծ)
Գէզ (բիծ)
Գէթ
Գէջ (ծուռ)
Գէն (խաթրու)
Գէշ (դխակ)
Գէշ (վատ)
Գէջ
Գէս (մատ)
Գէտ (գետակ)
Գէր (չաղ)
Գի (գիհի)
Գիլ
Գիծ
Գիհ (հոտ)
Գին

Գինդ
Գինձ
Գիշա (գդակ)
Գիր
Գիրգ (չաղ)
Գիրկ
Գիրք
Գիւղ
Գիւտ
Գոգ (գիրկ)
Գոգ (գոգցնս)
Գոգ
Գոլ (գաղջ)
Գոլ (լինել)
Գոհ
Գող
Գողկ, գոզտ (մահիճ)
Գոզտր
Գոմ (ախոռ)
Գոյ
Գոյժ
Գոյն (երանգ)
Գոյն (խաղը)
Գոյչ (գգուչչ)
Գոյք
Գոնգ (բուլյսը)
Գոնջ
Գոռ (գոռալ)
Գոռ
Գոռ (անռելի)
Գոռ (քիմբուկ)
Գոմ, գոմք
Գորգ
Գործ
Գորչ
Գորտ
Գուբ
Գուղ (կամաց)
Գուբ
Գուլ
Գուղձ
Գուճ (ծնկան)
Գուճ (կծծի)
Գումմ (գումարտակ)
Գուն (ձևրպ)
Գուն (ջանք)
Գունդ (կլոր)
Գունդ (խումբ)
Գունց (կոմս)
Գուչ (տաչտ)
Գուչպ (ձևրպ)
Գուռն (ամպռան)
Գուրչ (քիմբուկ)
Գոչ (քոռակ)
Գօռ (չորացած)

Դա
Դագ
Դալ
Դահ
Դազձն
Դամ (քակարտ)
Դամ (երգիչ)
Դան (դանակ)
Դանկ (փող)
Դաչն
Դաչտ
Դաչտ
Դաչտ (խաղը)
Դաման
Դաս
Դաստ
Դատ
Դար (100 տարի)
Դար (բարձունք)
Դար (դուրդ)
Դարձ
Դաւ
Դափ
Դեհ (կողմ)
Դեզ
Դեկր (դեկին)
Դեղձ
Դեն
Դեռ
Դեր
Դեւ
Դէզ
Դէմ
Դէմք
Դէն
Դէպ
Դէպք
Դէտ
Դի
Դիր, դիրք
Դիրգ (գրգռվել)
Դիրտ
Դիւթ
Դիւր
Դիք
Դոհան
Դող
Դող (խաղը)
Դոճ
Դոյզն
Դոյլ
Դոյն (այգ)
Դոյր, դիւր
Դու
Դուժ
Դուլ
Դուխտ
Դում (հարբուխ)
Դուն (քիչ)

Դուն (դաշույն)
Դուռնչ
Դուռն
Դուստր
Դուր
Դուրդն
Դուրք
Դուքս

Եզ (մեկ)
Եզն
Եզր
Եթ (ևեթ)
Եկ, ելք
Եկ
Եղ (յուղ)
Եղ (եղած)
Եղծ
Եղկ
Եղն (եղնիկ)
Եմ, ես, է
Ենթ
Եռ (3)
Եռ, եռք
Ես
Ետ
Ետղ
Ե՛ր (եղբ)
Երբ
Երգ
Երդ
Երթ
Երկ (դարձ)
Երկն (մոր ցավ)
Երր (թարախ)
Երփն
Երք (քոս)
Եւ

Եւս
Եփ
Եօթն

Զանգ
Զանց
Զատ
Զարդ
Զարկ
Զարմ
Զեռն
Զեղխ
Զեղծ
Զեղջ
Զեն (զոհ)
Զերթ
Զերծ
Զէնք
Զի
Զիգն
Զիլ
Զիկ
Զիղջ
Զինչ
Զիստ
Զիրկ
Զոհ
Զոմ
Զոյգ
Զով
Զուկ (ստինք)
Զուկ (ստուգիս)
Զուսպ
Զուտ
Զուր
Զուրկ
Զօդ
Զօշ
Զօր, զօրք

Է
Էգ
Էլ
(էմք)
Էն
Էշ
Էջ, էջք
Էչ (պրքի)
Էր
Է՞ր

Ընդ
Ըստ

Թագ
Թաթ
Թակ
Թաղ
Թաղ(իք)
Թաղթ
Թաղծ
Թամ (թշնամի)
Թամբ
Թայլ
Թան
Թանգ (թամբի կապ)
Թանթ
Թանկ
Թանձր
Թանձր (թոչունը)
Թանչ
Թանց
Թառ
Թաս
Թատր
Թարց
Թարխ
Թաց

թաւ
թափ
թել
թելն
թեղ
թեմ
թեռ
թեր
թերթ
թև
թեփ
թեք
թէ
թէղք
թէյ
թի
թիզ
թիլ (բլուր)
թիկն
թին (կուտ)
թինդ
թիռ (թռիչք)
թիռ (փափագ)
թիւ
թիւմ
թիւն
թիւր
թոն և թոն
թոզ
թոյլ
թոյն
թոյր
թոնծ (ձևոնատ)
թոնձ (խեցի)
թոռն
թոր
թորթ (բույտ)
թուզ
թութ
թութք
թուխ
թուղր
թուղթ
թումբ
թունդ
թուշ
թուպ (ճոպան)
թուռ
թուր
թուրծ (թուշ)
թուրծ (թրծած)
թուրմ
թուրջ
թուփ
թուք
թոք
թօդ
թօն
թօշ (լայն)
ժաժ (խռիվ)
ժաժ (շարժ)
ժախ (բույսը)
ժահ
ժահր
ժամ
ժամ (տաճար)
ժայռ
ժանգ
ժանտ
ժեխ
ժիտ
ժիր
ժոյժ
ժուկ
ժում
ժուռ (խակ)
ժուռ (մանր գալ)
իբր
իժ
իլ
իղձ
իմ
ի՞մ (ինչու)
իմն
ինձ (գազանը)
ինձ
ինն
ինչ
ինչք
ինքն
ի՞շ
ի՞շտ
իսկ (բայց)
իսկ
իր
ի՞ր
իւղ
իւր
իք
լալ (քարը)
լալ
լախտ
լաճ
լամր (օդակ)
լայն
լայնք
լանջք
լաստ
լար
լայց
լաւ

Լափ
Լեալ
Լեառն
Լեարդ
Լեղ (ծարիք)
Լեշկ
Լեր
Լերկ
Լեփ
Լի
Լիթ (քար)
Լիկ (լիճ)
Լիկն
Լիճ
Լիճ (ապիկի)
Լինդ
Լիսր
Լիր
Լիրը
Լից (կոճի ոսկր)
Լից
Լիփա (քամին)
Լոկ
Լող
Լոյծ
Լոյս
Լոյտք
Լոր
Լորձ
Լորտ
Լորցք (ջղի)
Լու (լսել)
Լու
Լուծ (եզան)
Լուծք (զուլպ)
Լուռ
Լուսն
Լուր

Լուր (օր)
Լուրթ
Լուրջ
Լուրտ (լորտու)
Լուք, լոք (ձուկը)
Լօշ (բույսը)
Լօշ (լավաշ)
Լօտ (մամուռ)

Խար
Խատ
Խատ (գլիծ)
Խատ (վառված)
Խատմ
Խաժ (հատտ)
Խաժ (գույն)
Խալ
Խած
Խակ
Խան
Խաղ
Խաղ (ճահիճ)
Խաղը
Խաղք
Խամ
Խայթ
Խայծ
Խայտ
Խան (սեղան)
Խան (խջևան)
Խան (փշրանք)
Խանդ
Խանձ (կևը)
Խանձ (այրել)
Խանտ
Խաշ (բույսը)
Խաշ (կերակուր)

Խաշն
Խաչ
Խառ (փշաբույս)
Խառն
Խառնք
Խար (չոր խոտ)
Խարը (թուր)
Խարը (անզգամ)
Խարճ
Խարտ
Խաւ
Խափ, խափք
Խեթ
Խելք
Խելք (նավի)
Խեղ
Խեղդ
Խեղճ
Խենթ
Խեչ (չխչ)
Խեռ
Խեր
Խեց
Խէթ
Խէժ
Խէչ (կողքը)
Խըմղ
Խիթ (ցավ)
Խիթ (լեռան)
Խիթ (կոկորդիլոս)
Խիլ
Խիծ
Խիղ
Խիղը
Խիղճ
Խիճ
Խինդ
Խինձ

խխաա
խխա
խխր (ձագիկը)
խխրա
խխց
խխ
խխս
խոզ
խոզ (անխիխ)
խոխ (խոխել)
խոխ (խոչունը)
խոկ
խոհ (կերակուր)
խոյ
խոյզ
խոյք
խոյլ
խոյս տալ
խոյր
խոնճ
խոնջ
խոչ
խոպ
խոռ
խոռն (բույսը)
խոռա
խոռա
խոր
խորզ (խուրձ)
խորզ (կռունկ)
խորխ
խորխ
խորհ
խոց
խուխ
խուժ
խուժդն

խուլ
խուխ
խուզ
խուզր
խուճ
խում (խմել)
խուսմ (խազը)
խուսմբ
խուն
խունգ
խունկ
խունճ
խուռն
խուրձ
խուրճ
խուց
խուփ
խոփ
խոխ
խօխ
խօլ
խօսք

Ծագ
Ծալ
Ծախ, ծախք
Ծաձք
Ծակ
Ծագ, ծալ
Ծագր
Ծամ
Ծայխ
Ծայր
Ծանծ
Ծանր
Ծաո
Ծափ
Ծեծ
Ծեղ

Ծեր
Ծերպ
Ծեփ
Ծէս
Ծիլ
Ծիծ
Ծիղ
Ծին
Ծիտ
Ծիր
Ծիրտ
Ծիւ
Ծոմ
Ծոյլ
Ծոպ
Ծով
Ծոր (ծորիլ)
Ծոր (բույսը)
Ծոց
Ծուխ
Ծուծ
Ծուծք (քիթածակ)
Ծուկ
Ծունր
Ծուռ
Ծուփ
Ծծ

Կա՛
Կագ
Կագ (շոր)
Կազմ
Կաթ
Կաթն
Կալ (ցորենի)
Կալ (լուանի)
Կախ

կահ
կաղ
կաճ
կամ (շաղկապ)
կամ (կոր)
կամ, կաս, կայ
կամն
կամք
կայ
կայք
կայթ (կողով)
կայթ (կայթել)
կայծ
կայմ
կայս
կայսր
կայր
կանդ
կանթ
կանչ
կապ
կապ (տոկոս)
կառն
կառք
կասկ (գարի)
կասկ (շագանակ)
կասս (աքցան)
կար (կարել)
կար (կարճնալ)
կարգ
կարթ
կարժ
կարծ (կարծել)
կարծր
կարճ
կարշն
կացք
կաւ

կափ (թակ)
կեամ
կեանք
կել
կեղ
կեղ ի կեղ
կեղթ
կեղծ
կեղտ
կեմ
կեշտ
կեռ
կեռս (կողով)
կեր
կերպ
կերտ
կէս
կէտ (.)
կէտ (ծովէ)
կիզ
կիզն
կիթ
կիծ
կիճ (կուճ)
կիճ (ծերպ)
կին
կինճ
կինք
կիռ
կիսր
կիր (քիրեճ)
կիր, կիրք
կիր (կիրառել)
կիրթ
կիրճ
կից
կիցք
կիւ

կլուս
կոզն
կոթ
կոխ
կոծ
կոկ
կող, կողք
կողճ
կողր
կոճ (շէնքէ)
կոճ (վեգ)
կոճ (բիտ)
կոճ (փայտէ)
կոճ (վրացէ)
կոճղ
կոմս
կոյ
կոյշ
կոյս
կոյս (կողմ)
կոյտ
կոյր
կոն
կոն (պատկեր)
կոնք
կոշտ (հողէ)
կոշտ (ածւ.)
կոչ
կոպ
կոռ
կոռն
կով
կոր (ծուռ)
կոր (կարիճ)
կորպ
կործ
կորկ
կորճ

կու
կուզ (կենդ.)
կուզ (ած.)
կուլ (այգու)
կուժ
կուլ
կուղ
կուղը
կուղխ
կուճ
կումբ
կունդ
կունդն
կունձն
կուշտ (կող)
կուշտ (հագ)
կուպը
կուռ
կուռն
կուռք
կուռք (քթան)
կուտ
կուր (կևը)
կուր (նավակ)
կուրծ (կրծել)
կուրծք
կուրտ
կուց
կոճ
կօն

Հաղ
Հալ, հալք
Հակ
Հաղ
Հաղրք
Հաճ
Համ (ճաշակ)
Համ (մասնիկը)
Համք
Համր (խումբ)
Համր
Հայ
Հայք
Հայ հուշ
Հայս
Հայր
Հայց
Հան
Հանք
Հաչ
Հաչմ
Հաչտ
Հապ
Հաս
Հասկ
Հաստ
Հատ
Հարթ
Հարկ (տուրք)
Հարկ (կարիք ևն)
Հարկք (կոչունք)
Հարճ
Հարսն
Հարց
Հարցն (երդ)
Հաց
Հաւ (թռչուն)
Հաւ (պատ)
Հաւ (սկիզբ)
Հեգ
Հեգն (հեգնանք)
Հեղ
Հեծ (հառաչ)
Հեղ
Հեղգ
Հեղձ
Հեղք (հյուղ)
Հեմ (հիմա)
Հեշտ
Հետ
Հետկ.
Հետտ
Հետ, հետք
Հետ (միասին)
Հետ (անգամ)
Հեր (մազ)
Հերկ
Հերձ
Հեց (անվի)
Հէգ
Հէն
Հէմ
Հիմն
Հին
Հինգ
Հինչք
Հիտ
Հիր
Հիւթ
Հիւղ
Հիւս (մազի)
Հիւն (ձյան)
Հիւսն
Հիւր
Հոգ
Հոծ
Հող
Հողմ
Հոյ
Հոյզ
Հոյլ
Հոյծն (պատուղը)
Հոս, հոսք

Հավ
Հաստ
Հար (չրխ)
Հար (փեսա)
Հարդ
Հարճ
Հաս
Հասմ
Հասնդ
Հասնճ
Հասնչ
Հասչա
Հուչ
Հասպ
Հասան (քղանցք)
Հասակ
Հասր
Հօտ (ոչխարի)
Հօտ (ճյուղ)

Ձագ
Ձախ
Ձաղ (ծաղիր)
Ձաղկ
Ձայն
Ձառ
Ձար
Ձեռն, ձեռք
Ձեռ
Ձեր
Ձեւ
Ձէթ
Ձի
Ձիգ
Ձիր
Ձիւթ
Ձիւն

Ձող
Ձոյլ
Ձոր
Ձորճ
Ձու
Ձուկն
Ձունճ
Ձօն

Ղաղ (քարը)
Ղեկ
Ղերճ
Ղխար
Ղարդ
Ղարկ
Ղօղ

Ճախար
Ճակ (թաց)
Ճակ (էգ ճի)
Ճահ
Ճայ
Ճայղ
Ճան (վեգ)
Ճանկ
Ճանճ
Ճաշ
Ճառ
Ճար
Ճարպ
Ճաւր (քարը)
Ճեղ (ճաղատ)
Ճեղ (ճյուղ)
Ճեղք
Ճեմ (ման գալ)
Ճեմ (սանճ)
Ճենճ

Մագ
Մագդ
Մալ
Մալխ
Մաճ
Մակ
Մահ
Մահր
Մաղ
Մաղթ
Մաղճ
Մաճ
Մամ
Մայր

Մայր
Մայր (ծառը)
Ման (պտուկ)
Ման (մանանա)
Ման (մասունք)
Մանկ
Մանր
Մաշ (մաշած)
Մաշ (ոլոռ)
Մաշկ
Մաո (մշուշ)
Մասն
Մաստո
Մատան (մատ)
Մատան (մատանիչ)
Մատաք
Մար (չափը)
Մար (տէր)
Մարգ
Մարդ
Մարզ (նահանգ)
Մարզ (չափ)
Մարթ
Մարխ
Մարձ
Մարտ
Մաքս
Մեծ
Մեկն (պարզ)
Մեզ (ոչխար)
Մեղծ
Մեղկ
Մեղմ
Մեղր
Մեղք
Մեռ
Մեր
Մերթ

Մերկ
Մերձ
Մեց
Մեք
Մէգ
Մէզ
Մէկ
Մէն
Մէջ
Մէջք
Մէտ
Մի (մեկ)
Մի
Միգն
Միթը
Միլ
Միծ
Միհր
Մին
Մինչ
Մինչք (սինչ)
Միշտ
Միս
Միտ, միտք
Միրգ
Միւս
Մոգ
Մոթ
Մոլ (ամճ)
Մոլ (շաղախ)
Մոզ (ծուռ)
Մոմ
Մոյթ
Մոյկ
Մոյն
Մոյր
Մորթ
Մորճ

Մորմ (բույսը)
Մու (մեկ)
Մու (բույսը)
Մուզ
Մութ
Մուխ (ծուխ)
Մուխ (ջուր տալ)
Մուկն
Մուղ (վարժ)
Մուղ (ջորի)
Մուղտ
Մուն
Մունջ
Մուշկ
Մուշկ
Մուշտ
Մուռ
Մուռտ
Մուտ, մուտք
Մուր
Մուրկ
Մուրճ
Մուրտ
Մուրց
Մօտ
Մօր
Մօրտ

Յադ
Յաթ
Յահ
Յաղթ
Յամ
Յամր
Յայտ
Յանդ (վերջ)
Յանկ (պատշաճ)
Յանձն

Յանց
Յաշտ
Յար (կից)
Յար (միշտ)
Յարդ
Յարդ
Յարկ
Յեղմ (մեղմ)
Յեղց (լիքը)
Յեռ
Յետ
Յետս
Յեց
Յի
Յոգն
Յոյզ
Յոյժ
Յոյլ
Յոյն
Յոյս
Յոյր
Յովտ
Յորդ
Յուշ
Յօդ
Յօնք
Յօշ յօշ
Յօտ (ճյուղ)

Նա (այն)
Նա՛ (մանավանդ)
Նապ
Նալ
Նախ
Նայ (թաց)
Նայն (նա)
Նաշ
Նարդ
Նարմ
Նարտ
Նաւ
Նաւթ
Նեարդ
Նեխ
Նեղ
Նենդ
Նեռն
Նետ
Ներ (մեջ)
Ներ (տագերակին)
Ներ (դաբ)
Ներկ
Ներս
Ներտ
Ներքս
Նէ
Նիազ
Նիգ
Նիհ
Նինջ
Նիշ
Նիատ
Նիրհ
Նիւ
Նիւթ
Նիւս
Նողկ
Նոճ
Նոյն
Նոր
Նու
Նուշ
Նուռն
Նուրբ
Նօթ
Նօսր
Նօտր

Շահ
Շաղ
Շամբ
Շանթ
Շաչ
Շատ (խոտվություն)
Շատ (շեկ)
Շատ
Շար, շարք
Շար (քող)
Շար (դար)
Շարժ
Շեախ
Շեղ
Շեղջ
Շեմ
Շեշտ
Շեպ
Շեր
Շերտ
Շէկ
Շէն
Շէնք
Շէր
Շիգդ
Շիթ
Շիլ
Շիկ, շիկն
Շիճ
Շիշ
Շիշ (շեր)
Շիշք
Շիտ (պալար)
Շիւ (խաղողի)
Շիւ (ոստայնի)
Շիւղ
Շիփք
Շոգ

Շոգ
Շոմ
Շոճք (ևրգ)
Շոյտ
Շոպ
Շոր
Շուն
Շունչ
Շուշտ
Շուտ գալ
Շուտ
Շուտ (պալար)
Շուրթն
Շուրջ
Շուփ
Շուք
Շօթ

Ո՞ (ով)
Ոխ
Ո՞հ
Ոզր
Ոզն
Ոզջ
Ոճ
Ոճն
Ոյգ
Ոյժ, ուժ
Ոյծ
Ոյն
Ոչ
Ոս, ոսք
Ոսկր
Ոսպն
Ոստ
Ով
Ո՞վ
Ոտն

Որ
Որբ
Որդն
Որթ, հորթ
Որթ (խաղողի)
Ործ
Որձ
Որմ
Որջ
Որս
Ու
Ութ
Ուլ
Ուլն
Ուլն, ուլունք
Ուլն (վհգ)
Ուխտ
Ուղ, ուղք
Ուղխ
Ուղտ
Ուզփ
Ումպ
Ուն
Ունգ
Ունգ

Ունկն
Ունչ
Ունջ (տակը)
Ունջ (մուր)
Ուշ (խևլք)
Ուշ (անտագան)
Ուտ
Ուտն (մուրճ)
Ուտ
Ուտտ
Ուտտր
Ուր
Ուրդ

Ուրջ
Ուրց
Ուփ
Ուք

Զադգ
Զաչ
Զար
Զափ
Զաք
Զեչ (ծակ)
Զեչ (խաղողի)
Զև
Զէ
Զէրն
Զիզջ
Զինչ
Զիտ
Զիր
Զիւր
Զիք
Զոր
Զորս, չորք
Զու
Զում

Պախ
Պակ
Պահ
Պահք, պաս
Պադ
Պայ
Պայլ
Պան (մեզրի)
Պան (բույսը)
Պապ
Պատ
Պար

Պարզ
Պարծ
Պարկ
Պարս (պարսեւտ)
Պարս (մեղուների)
Պարտ, պարտք
Պեւտ
Պևրճ
Պէս
Պէտ, պէտք
Պիղմ
Պիծ
Պին
Պիղծ
Պին
Պինդ
Պինչ
Պիշ
Պիտտ (բուսատ)
Պիրկ
Պոկ
Պոյտ(ն)
Պոչ
Պոր
Պորտ
Պուլ
Պուկ
Պուտ
Պուրճ
Պ...
Պօզ

Ջահ
Ջապը
Ջամբ
Ջամբռ
Ջայլ
Ջան, ~ք
Ջանգ
Ջառք
Ջասմ
Ջարդ
Ջեր
Ջերմ, ~ուհի
Ջեք
Ջիլ, ջիղ
Ջին
Ջինջ
Ջիտ
Ջիրդ
Ջիք
Ջղջ (թաց)
Ջոխ
Ջոկ
Ջոջ
Ջով
Ջուր
Ջօշ

Ռազմ
Ռահ
Ռամ
Ռայ
Ռատտ (հալոդ)
Ռատտ (ամպ)
Ռատտ
Ռեկ (ճեղք)
Ռետ(ին)
Ռիմ (քեռն)
Ռիշտ
Ռումբ
Ռունգն
Ռուպ
Ռուփ

Սա
Սագ
Սաթ
Սալ
Սակ
Սակռ
Սակս
Սակր
Սահ, սահիլ
Սահ (գունդ)
Սաղմն
Սայլ
Սայր
Սան (անուցածը)
Սան (կաթսա)
Սանդ
Սանձ
Սանտր
Սապռ
Սառն
Սաստ
Սատր
Սար (լեռ)
Սար, սարք
Սարդ (թռչուն)
Սարդ (ծառը)
Սարդ (մի չատը)
Սեամ
Սեաւ, սև
Սեխ
Սեկ
Սեղմ
Սեպ (գամ)
Սեպ (ցցված)
Սեռ
Սեռն (սայլի)
Սեռն (հատակ)

Սեր (սերտունդ)
Սեր (կաթի)
Սերկ
Սերմ, -ից
Սերտ
Սէ
Սէգ
Սէղ
Սէր
Սիգղ (կնիք)
Սիգղ (շուն)
Սիկ (ցեխ)
Սիկղ (չափը)
Սին (դատարկ)
Սին (պտուղը)
Սինձ (սոսինձ)
Սինձ (բույսը)
Սխող (դույլ)
Սխր (պարան)
Սխր (թաց)
Սխր (շլխտի)
Սխրտ
Սիւն
Սիւք
Սոթ
Սոխ
Սոդ
Սոյդ
Սոյլ
Սոյն
Սոնթ
Սոնք
Սոս (60 տարի)
Սոսկ (մենակ)
Սոսկ (վախ)
Սոսր (կոկորդ)
Սով
Սոր (ծակ)

Սուգ
Սուղ
Սուն (անունդ)
Սուն (քիչ)
Սունկն
Սուսր
Սուտ
Սուր
Սուրբ
Սուք (ամուլ այր)
Սօթ
Սօս (ծառը)
Սօս (հպարտ)

Վագր
Վազ, վազք
Վախ (երկյուղ)
Վախ (բարձր տեղ)
Վազ (շուտ)
Վազ (էգուց)
Վազր
Վայ
Վայր
Վան (վանառել)
Վան, վանք
Վանկ
Վաշ
Վաշխ
Վաշտ
Վաչ
Վառ (վառած)
Վառ (եղանակ)
Վառ (քաղ)
Վառն
Վատ
Վար, վարք
Վարդ
Վարզ

Վարժ
Վարկ
Վարձ
Վարմ
Վարս
Վաք (աստղը)
Վահ
Վահ
Վահատ
Վեր
Վերջ
Վերտ (շրջան)
Վերտ (ամուր)
Վեց
Վէգ (ճան)
Վէգ (վեճ)
Վէմ
Վէմ
Վէմ
Վէպ
Վէս
Վէտ
Վէր, վէրք
Վիգ (օգնական)
Վիգն (բույսը)
Վիզ
Վիթ
Վիհ
Վին
Վիշտ
Վիտ (փիլոն)
Վիրգ
Վուլ
Վուշ
Վուտ

Տագր
Տալ

Տախտ
Տած
Տակ
Տաղ (երգ)
Տաղ (դաղել)
Տաղտ (ձանձրույթ)
Տամ, տաս, տայ
Տամկ (թաց)
Տայգր
Տանձ
Տանջք
Տաշ
Տաշխ
Տաշտ
Տատ
Տատ
Տասն
Տար (հեռու)
Տարմ (խումբ)
Տարմ (թռչունը)
Տարր
Տարփ
Տափ
Տաք
Տեղ (տեղէ)
Տեղ (անձրև)
Տենդ
Տենչ
Տեռ (լաչակ)
Տեռ (կաշին պոկել)
Տես, տեսք
Տեսր
Տև
Տէգ
Տէր
Տի, տիք
Տի (հասպա)

Տիբս (ոռւպ)
Տիգք
Տիղ
Տիկ
Տիղմ
Տիպ
Տիպ (խեցեմորթ)
Տիրփ
Տից
Տիւ
Տիւր
Տոկ
Տոհմ
Տող
Տողք (շողիք)
Տոմ
Տոմս
Տոյժ
Տոռն
Տորգ
Տորր
Տուկ
Տուղտ
Տուն
Տունկ
Տուռն
Տուտ (ճյուղ)
Տուտն
Տուր, տուրք
Տուփ
Տօթ
Տօն

Բախ
Բամ
Բոպ
Բուպ (տրուպ)

Ցախ
Ցած
Ցակն
Ցայգ
Ցայժմ
Ցայլք
Ցայն
Ցայտ
Ցան
Ցանկ (ցուցակ)
Ցանկ (միշտ)
Ցանկ (փափագ)
Ցանկ (տղընդեր)
Ցանկ (ցանկապատ)
Ցանց
Ցարդ
Ցաւ
Ցեխ
Ցեծ
Ցեղ
Ցերր
Ցեց
Ցին
Ցինկ (խոտը)
Ցխտ
Ցիր
Ցիրդ
Ցից
Ցիւ
Ցոլ, ցոլք
Ցող (ցողուն)
Ցողկ
Ցոյց
Ցուլ
Ցում, ցումն
Ցունց
Ցուպ

Յուրա
Յուցք
Յուփ
Յօղ

Իխիթ (հյուխթ)
Իխին (խուչն)
Իխուս (հյուսաք)
Իխուր (յուր)

Փախ
Փակ (փակած)
Փակ (գավազան)
Փահլ (ձի)
Փաղ (խոչունք)
Փաղ (փուխր)
Փաղփ
Փայլ
Փայտ
Փապ
Փառ (մաշկ)
Փառք
Փաս (ամառն)
Փասա
Փասր (քամի)
Փարթ
Փարչ
Փարտ
Փեղկ
Փեւտ (փետուր)
Փերթ
Փէք (խշտաո)
Փին
Փիլ
Փիծ
Փիղ, փիւղ
Փին
Փոթ

Փոխ (տալ)
Փոխ (սպրմոսի)
Փոկ (կաշի)
Փոկ (կենդանի)
Փող (վիզ)
Փող (դրամ)
Փող (փողոց)
Փող (սրինգ)
Փոյթ
Փոշտ
Փոս
Փոս (չափ)
Փոր (փոս)
Փոր (խոչուն)
Փոր (ձուկ)
Փոր (որովայն)
Փորձ
Փոսլ
Փուխ, փուխր
Փուղձ
Փունդ
Փունջ
Փուշ
Փուշ (խաղ)
Փուտ
Փուտն
Փուտտ
Փուրծ
Փուք
Փուք (կճեպ)
Փուք (տիկ)
Փուքս
Փոքր

Քաճ
Քակ
Քազ (այծ)
Քազ (մոլախոտ)

Քազգ
Քազգր
Քամ
Քայլ
Քայտ
Քան
Քանդ (քանդել)
Քանցք
Քաշ (ծանրութ.)
Քաշ (կուշտը)
Քաշ (կրոն)
Քաշմ (կապնդեղ)
Քաջ
Քաջք
Քաո
Քար
Քարք
Քարշ
Քարց
Քաւ
Քաւդ
Քաք
Քեծ
Քեր
Քեց
Քէն
Քէնթ
Քեշ
Քիթ
Քիլ
Քիլ (քսու)
Քիմք
Քիչ
Քիչ
Քխաո
Քխրան
Քիւ
Քո

Քող	Քուրմ	Օդ (կոշիկ)
Քոյր	Քուրջ	Օթ
Քոռ	Քուց	Օծ
Քոս	Քուք (դավաղան)	Օճ
Քոր	Քուք (ողբ)	Օղ
Քուդ	Քօշ	Օ՜ն
Քուն		Օ՜շ
Քունք	Օգն	Օր
Քուռ	Օդ	Օրհն
Քուրճ		

5. ԼԵԶՎԻ ՍԵՂՄՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես լեզվի համաոտոութ յունը նշանակում է բառերի կարճությունը, նմանապես լեզվի սեղմությունը կայանում է ձևերի կարճության մեջ։ Թրաբարի դից բառի մեջ հոգնակի սեռական նշանը (ց) միայն մի հնչյուն (կամ մի տառ) է, իսկ աշխարհաբարի մեջ (ատավածնեքի) երկու ամբողջ վանկ կամ չորս հնչյուն է. այսպես նաև թրք. allah-lar-ən (երկու վանկ, հինգ հնչյուն)։

Գրբ. քի ընդամենը մի վանկ է, իսկ աշխարհաբար քեզանով երեք ամբողջ վանկ. թրք. sen-in-le երկու վանկ կամ չորս հընչյուն, նմանապես լտ. amo, գրբ. սիրեմ ձևերի մեջ սահմանական ներկայի եղակի առաջին դեմքի վերջավորությունը՝ o, եմ մի վանկ է՝ մի կամ երկու հնչյուն, իսկ աշխ. սիրում եմ կամ թրք. sev-er-im, sev-iyor-im՝ երկու կամ երեք վանկ, 4-ից մինչև 6 հնչյուն։ Ինչից է առաջանում լեզվի մեջ այս սեղմությունը կամ ընդարձակությունը, ինչ նշանակություն ունի այն, և որ լեզուներն են ավելի սեղմ կամ ընդարձակ։

Ինչպես տեսանք և հետո ավելի մանրամասն պիտի տեսնենք, լեզուներից ոմանք հետևում են այն սկզբունքին, որ քերականական մի քանի կարգեր միասին ամփոփում են մի մասնիկի մեջ, իսկ ուրիշներ ամեն մի կարգը ներկայացնում են առանձին մասնիկով։ Առաջիններըը կոչվում են համադրական (սինթետիկ), երկրորդներըը՝ վերլուծական (անալիտիկ)։ Այսպես, վերի օրինակների մեջ գրբ. ց միաժամանակ հոգնակիի և սեռականի մասնիկ է, իսկ աշխ. ներ-ի և թրք. lar-ən կազմված են երկու անջատ մասերից, ներ, lar հոգնակիի նշան են, ի, ən—սեռակա-

նի։ Դրբ. քև ձևի մեջ, ուր արմատն է ք, և մասնիկը ներկայացնում է երկու անջատ մաս, և բուն և ւ եզակի գործիականի վերջավորությունը։ Աշխ. թեզանով ձևի մեջ գտնում ենք թ արմատը, և բունը, զ տրականի նշանը, որի վրա ավելացել են ան հավելվածը և գործիականի ով մասնիկը։ Նախավեռ թրք. sen-in -le պարունակում է in սեռականի մասնիկը, որի վրա ավելացել է գործիականի le մասնիկը։

Լտ. -o և գրբ. -եմ սահմանականի ներկայի եզակի առաջին դեմքի մասնիկն են միաժամանակ, իսկ աշխ. -ում եմ և թրք. er-im ձևերի մեջ սահմանականի մասնիկն է -ում, -er, եզակի առաջին դեմքի մասնիկն է եմ, im, թյուրքերենը ավելացնում է դեռ անմիջական ներկայի համար -iyor մասնիկը. մի ուրիշ լեզու կարող էր էլ ավելի բաժանել նույն քերականական կարգերը և գնել սահմանականի համար առանձին մասնիկ, ներկայի համար առանձին մասնիկ, եզակիի համար առանձին մասնիկ և առաջին դեմքի համար առանձին մասնիկ։

Ընդհանրապես թևքական լեզուներն են, որ հետևում են առաջին սկզբունքին, այն է՝ մի մասնիկի մեջ միացնում են քերականական զանազան կարգեր, իսկ կցական լեզուները հետևում են երկրորդ սկզբունքին, այն է՝ քերականական յուրաքանչյուր կարգ ներկայացնում են առանձին մասնիկով։ Հայերենը, թեև գրաբարի շրջանում բոլորովին թևքական լեզու էր, բայց աշխարհաբարի մեջ շատ կոդմերով, ինչպես սեռական, ընդունել է կցական հորինվածք, այսուհետև էլ գրաբարի նախկին սեղմությունը հետզհետե վերացել և հասել է ընդարձակման դրության։ Բարբառների մեջ տեղ-տեղ այս ընդարձակման դրությունը ավելի է առաջ գնում. օրինակ՝ անկատարի էի, էիր, էիր, էիք, և այլ ձևերը, որ նոր են գրաբարի և աշխարհաբարի մեջ, Ադուլիսի, Մոյի, Մարաղայի բարբառներում, բաժանվելով մասերի, դարձել են.

էի — ըմ ճել, իմ էր
էիր — ըս ճել, իս էր
էինք — ա ճել, ինք էր
էիք — ըք ճել, էք էր

ուր անցյալ անկատարի նշանը ճել, էր առանձին բառիկ է դարձել՝ կցված ներկային։

Լեզվի սեղմությունը արժեք ունի խնայողական տեսակետով, բնականաբար բարձրանում է լեզվի համառոտության աստիճանը, բայց ընդարձակումը արդարանում է տրամաբանության, մանավանդ պարզության տեսակետով։

6. ԼԵԶՎԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվի կանոնավորությունը կայանում է կանոնների միօրինակության մեջ։ Երբ մի լեզու իր ընդունած այսինչ կամ այնինչ կանոնի դեմ հանում է մի խումբ (հաճախ տասնյակներով) բացառություններ, հակառակ է գնում կանոնավորության սկզբունքին։ Այսպես՝ գրաբարի մեջ հատուկ անունները հետևում են ա հոլովման։ Տրդատ դառնում է սեռ. Տրդատայ։ Երբ հատուկ անունը վերջանում է է, այդ է ձայնը դառնում է ե. այսպես՝ Հռիփսիմէ, սեռ. Հռիփսիմեայ։ Բայց այս կանոնների դեմ իրրև բացառություն ունենք Գրիգոր—Գրիգորի կամ նաև Գրիգորոյ, Յովսէփ—Յովսէփու և այլն, և այլն։

Միօրինակությունը կարելի է ըմբռնել երկու հայեցակետով. մասնավոր և ընդհանուր։ Վերի օրինակում Գրիգոր և Յովսէփ բացառություններ են հատուկ անունների հոլովման մասնավոր կանոնին. Հռիփսիմէ—Հռիփսիմեայ ձևը ավելի է մասնավոր, բայց նույնիսկ բոլոր հատուկ անունների -այ հոլովումը մի բացառություն է հանդեպ հոլովման ընդհանուր կանոնին, որ չկա գրաբարում։ Գրաբարում հոլովում ենք ևաց—ևացի, քաղաք—քաղաքի — քաղաքաց, գետ — գետոյ, տիտան— տիտանայ, խրատ—խրատու, գինի—գինւոյ, Հռիփսիմէ—Հռիփսիմեայ, փոքր —փոքու, ոսկր—ոսկեր, մեծութիւն—մեծութեան, հիմն—հիմանց, գառն—գառին, հայր—հօր, աղջիկ—աղջկան, օր—աւուր, կին—կնոջ, տիւ—տուընջեան, տասնյակ հոլովումներ և կանոններ, որոնցից ոչ մեկը ընդհանուր չէ և միջոց էլ չկա իմանալու, թե այսինչ բառը ո՛ր հոլովման տակ է գնում։ Ամեն ինչ վարժությամբ է։ Գրաբարի հոլովման նման անկանոն երևույթ քիչ կա լեզուների մեջ։ Այդ անկանոնությունները կարելի է բացատրել ձայնաբանական և այլ օրենքներով, բայց պատճառաբանությունը չի վերկում իրողությունը։

Աշխարհաբարը կատարել է շատ խոշոր քայլ դեպի կանոնավորությունը. նախ հաստատել է մի ընդհանուր կանոն, այն, որ սեռականը կազմվում է ի մասնիկով. վերի ձևերը դառնում

են սեռ. ճացի, քաղաքի, գետի, սիտանի, խրատի, գինիի (և գինու), Հաբիսիմեի, փորրի, ոսկորի, ձիմի, գառի, և ձեում են միայն ճացյալ մի քանի ձևերը, որոնք շարունակում են գեռ բացառություն կազմել ընդհանուր կանոնից, ապասելով, որ ժամանակը նրանց էլ մի օր կանոնավորության վերածի։ Երկրորդ, հոգնակին, որ դրսարարի մեջ կազմվում է եզակիից տարբեր, առանձին մասնիկներով, աշխարհաբարի մեջ ա՛չ միայն եզակիից տարբեր չէ, այլև հետևում է բացարձակ ընդհանուր կանոնին և նույնիսկ այն բառերը, որոնք եզակիի մեջ բացառություն են կազմում կամ մասնավոր կանոնի են հետևում, հոգնակիի մեջ հետևում են նույն ընդհանուր կանոնին. այսպես՝ ճայրների, աղջիկների, մեծությունների, օրերի և այլն։ Միևնույն երևույթը տեղի է ունեցել նաև ուրիշ բազմաթիվ լեզուների մեջ. օրինակ՝ անգլ. սեռականի վերջավորություններն էին հին լեզվի մեջ es, e, re, an, հոգ. a, rə, na, ena, ana, երբևէ էլ միջին ձայնավորն էր փոխվում (boc սեռ. bec «գիրք»). նոր լեզուն բոլորը ջնջեց և դրավ միայն s։

Ըստ այսմ կանոնավորությունը լեզվի մեջ այն սկզբունքն է, որով լեզուն ձգտում է մի պաշտոնի համար հատկացնել մի միակ նշան և մի նշանին տալ մի միակ պաշտոն, ուրիշ խոսքով ասելով՝ մի քերականական կարգ միևնույն լեզվի մեջ միևնույն ձևով արտահայտել և ամեն մի ձևի միայն մի քերականական կարգ հատկացնել։ Բայց ա՛չ մի լեզու այդ իդեալին չի հասել, որովհետև գործոն ազդակները զանազան կողմից և զանազան ուղղությամբ են, հաճախ պատահարար առաջացած, ուստի և ոչ մի լեզվի ձևաբանության մեջ չենք կարող գտնել կատարյալ տրամաբանություն, կանուցվածքի միանմանություն և համաձևություն։

Երբ եզակիի հոլովները կազմում են տարբեր ձևով և հոգնակիի համապատասխան հոլովները տարբեր ձևով, դա կանոնավորության հակառակ երևույթ է։ Երբ բայի տարբեր ժամանակները միևնույն դեմքի համար ամեն մի ժամանակում տարբեր վերջավորություններ ունեն, դա կանոնավորության հակառակ երևույթ է։ Այսպես՝ պարսկերեն նեռի. xoram, xori, xorad, xorīm, xorīd, xorand և անկատար mi xordam, mi xordi, mi xord, mi xordīm, mi xordīd, mi xordand ներկայացնում են համապարապես am, i, d, īm, īd, and վերջավորությունները։ Նմանապես՝ թրք. ներկա sever-im, sever-sin, sever, sever-iz (դմ.

sever-ik), sever-siniz, sever-ler և անկ. sever-id-im, sever-id-in, sever-idi, sever-id-ik, sever-idi-niz, sever-ler-idi ներկայացնում են նույն կամ նման վերջավորություններ: Իսկ հայերեն ներկ. ուտեմ, ուտես, ուտէ, ուտեմք, ուտէք, ուտեն և անկ. ուտէի, ուտէիր, ուտէր, ուտէաք, ուտէիք, ուտէին ներկայացնում են իրարից գրեթե բոլորովին տարբեր վերջավորություններ: Եվ բարբառների մեջ երևան է եկել ձգտումը այս վերջավորությունները միացնելու. այսպես՝ պարսկահայ բարբառներում ունենք ուտէիմ, ուր մ վերջավորությունը նույնն է ներկայի հետ, Մուշեղյայի բարբառով ունենք ուտէիս, ուր ս վերջավորությունը նույնն է ներկայի եզ. բ. դեմքի հետ: Գրբ. ուտեմք և ուտէաք դարձել են ուտենք, ուտէինք, որով երկուսն էլ հավասարապես ստացել են ք վերջավորությունը:

Նույնիսկ բայի առաջին, երկրորդ և երրորդ դեմքերի համար տարբեր վերջավորություններ ունենալը համարվում է անկանոնություն և նոր լեզուներից շատերը աշխատել են ջնջել նաև այդ անկանոնությունը. այսպես՝. ֆրանս. je mange, tu manges, il manges միևնույն բայական ձևն են ներկայացնում (ուղղագրական զանազանությունը խաբուսիկ երևույթ է միայն) և տարբերվում են իրարից միայն դերանուններով, ինչ որ բավական է: Այսպես նաև՝ անգլ. I love, he love, we love, you love, they love. գերմաներենի մեջ առ այժմ միայն հոգնակին է վերածված այսպիսի կանոնավորության—wir haben, sie haben, իսկ ռուսերենը միայն կատարյալի մեջ—я кушал, ты кушал, он кушал և հգ. мы кушали, вы кушали, они кушали.

Լեզվի կանոնավորության մեծագույն ազդակը նրա ներքին ձգտումն է դեպի ընդհանրացում և միօրինակացում: Բայց այդպիսի ազդակ կարող է լինել նաև լեզվի տարածումը և նոր ժողովուրդների վրա տիրապետությունը: Երբ նվաճված նոր ազգեր յուրացնում են մի օտար լեզու, բնականաբար չեն կարող այդ լեզվի բոլոր երբությունները յուրացնել. ուստի բացառությունները, մանր-մունր երկրորդական կանոնները, հազվադյուտ ձևերը և հակատրամաբանական երևույթները ջնջվում են. մանավանդ որ իրենք էլ առաջնորդված են լինում իրենց բնական լեզվից, որ դեռ մի ժամանակ պահում են տիրող լեզվի հետ միասին. և անկարելի է ենթադրել, որ միատեսակ բացառություններ երկու տեսակ լեզուների մեջ էլ միաժամանակ

գոյություն ունեցած լիներին։ Այսպիսով, լեզուն դառնում է բան կարելիություն միօրինակ և կանոնավոր։ Ընդհակառակը այն ժողովուրդները, որոնք մի փոքրիկ սահմանի մեջ ամփոփված ու մեկուսացած ապրել են խաղաղ կյանքով, պահում են մի հնավիճակ կերպարանք։ Այսպես, օրինակ՝ պարսկերենը, Գարսից ծոցից մինչև Կասպից ծով և Սև ծովի հյուս. կողմից մինչև Գամիր տարածվելով՝ արդեն մեր Քվականության սկզբին այնպիսի մի տարբալուծյալ վիճակի էր հասել, որին հասավ լատիներենը նրանից միայն 10 դար հետո, իսկ ընդհակառակը լիտվաներենը պահել է դեռ այնպիսի հնություններ, որ հին հունարենի ու լատիներենի մեջ էլ կորած են վաղուց։

7. ԼԵԶՎԻ ՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվի հատակություն ասելով՝ հասկանում ենք այն հատկությունը, որով գրվածքը արտացոլում է ընթերցողի առաջ ճիշտ այն, ինչ որ մտածել է հեղինակը և տեղիք չի տալիս որևէ երկիմաստության՝ իմաստի կողմից։ *Հատակությունը*, այսպիսով, դառնում է ճշտության (précision) համանիշ։

Շատ հաճախ գրվածքի հատակ չլինելը հեղինակի հանցանքն է, և ոչ թե լեզվի պակասություն։

Օրինակ՝ Ալիշանը՝ «Սիսուանում», էջ 196ր գրում է. «Զվկայարան Տարագոսանց լինել յԱնապատին Մեծքար, վկայն ընդօրինակողք գրոց Գր. Նիւսացւոյ յամի 1260, Ստեփաննոս քահանայ, և ուսուցանի միոյ գրելոյ յետ ամաց ինչ՝ ի Թորոսէ սարկաւագէ վասն Ներսիսի սպասաւորի բանի՝ ձեռնադրեալ արեանաուսին իւրոյ՝ «մաքրակրօն արհիեպիսկոպոսին Տէր Յակոբայ, որ յամի 1268 ամբարձաւ ի գահ կաթողիկոսութեան, և գիտնական մականուանիւր. միւս ևս ուսուցանի գրիչ յամի 1293, «յաստուածարնակ ուխտս Մեծայրս», ասէ լինել զտեղին մերձ ի Սիս»։

Այս հանելուկի մեջ անիմանալի են միայն։

1) Գր. Նյուսացու գրքերը օրինակողները քանի հոգի են. եթե մեկը Ստեփաննոս քահանան է, մյուսը ով է,—Թորոս սարկավագն է։

2) Եթե Թորոս սարկավագն է, ինչու բացառական է դրած և ոչ ուղղական.

3) Բայց չէ՞ որ Թորոսը Ալեքսանդրան է արտադրել և անշուշտ այս ավելի ստույգ է։

4) Եթե այդպես է, ուրեմն պետք է հասկանալ «ընդօրինակողն գրոց... Մեսրոպ ... և Թորոս սարկաւագ...»։

5) Ո՞վ է «արեւանատուն» և ուր. Հակոբ արքեպիսկոպոսը Ներսեսին, թե Թորոս սարկավագին, և կամ թե Ներսեսը՝ Թորոսին։

6) Ո՞վ է գիտնականը, Հակոբ կաթողիկոսը, թե Թորոսը կամ Ներսեսը։

7) Մյուս ևս ալեքսանդրանի գրիչը ով է. Թորոսն է դարձյալ, թե մի ուրիշը, որի անունը չի բարեհաճում տալ։

Բայց կան նաև դեպքեր, ուր երկդիմությունը առաջանում է նույնիսկ լեզվի ոգուց։ Խոսակցության ժամանակ կարող են մարդիկ շեշտով ու տոնով վերացնել երկդիմությունը, բայց գրության մեջ, ուր շեշտն ու տոնը կարելի չէ արձանագրել, երկդիմությունը անխուսափելի է դառնում։ Այսպես, օրինակ, գրաբար՝

Մատուցին զթուղթն թագաւորին

կարելի է հասկանալ երկու ձևով.

1) Թագավորի թուղթը մատուցին.

2) Թուղթը թագավորին մատուցին[1]։

Այստեղ երկդիմության հանցանքը լեզվինն է, ուր սեռականը և տրականը միևնույն ձևն ունեն։ Խոսակցության ժամանակ երկդիմություն գրեթե չի առաջանում. նախ որ արդեն նյութը ցույց է տալիս, թե բուն միտքը ինչ է, և երկրորդ, որ առաջին նշանակության ժամանակ թագավորին բառը տևար շեշտ է առնում, իսկ երկրորդ նշանակության ժամանակ շեշտը դորանում է և հավասարվում մատուցին բայի շեշտի աստիճանին։ Գրության ժամանակ այսպիսի շեշտեր չեն նշանակվում և խնդիրը պիտի մնա անորոշ։ Հեղինակի պարտականությունն է բնականաբար այսպիսի դեպքերում փոխել խոսքի ձևը և ասել, օրինակ՝

1) Զթուղթն թագաւորին մատուցին.

---

[1] Իրապես պետք է հասկանալ 2-րդ իմաստով (թուղթը թագավորին մատուցին) և ոչ թե՝ 1-ին (թագավորի թուղթը մատուցին), որովհետև հատկացուցիչ հատկացյալ լինելու դեպքում գրաբարում հոդը դրվում է հատկացուցիչի վրա և ոչ հատկացյալի, այսինքն՝ պետք է լիներ՝ մատուցին զթուղթ թագաւորին, իսկ երբ ասինք հատուկ անունով՝ մատուցին զթուղթն Լևոնի, ոչ մի միջոց չկա որոշելու, թե որ իմաստով պետք է հասկանալ։

2) Մատուցին պուղքն առ թագաւորն։
Աշխարհաբարում այս երկիմաստությունը չկա և ասվում է
Պուղքը թագավորին մատուցին.
Թագավորի պուղքը մատուցին։
երբ ասում ենք ժամանակակից հայերենով՝
Եղբօրս ծառային հանձնեցի.
իմաստը երկիմի է և կարելի է հասկանալ՝
1) իմ եղբոր ծառային (որ.) հանձնեցի (մի բան).
2) իմ եղբորը (որ.) ծառային (հայց.) հանձնեցի.
3) իմ եղբորը (հայց.) հանձնեցի ծառային (որ.),
որ արևմտյան հայերենով պիտի լիներ՝
1) եղբօրս ծառային հանձնեցի.
2) եղբօրս հանձնեցի ծառան.
3) եղբայրս ծառային հանձնեցի։

«Արդ արձակեա զծառայս քո, Տէր» սովորական ձևով նշանակում է «արձակիր քո ծառաներին», բայց այստեղ նշանակում է «արձակիր ինձ, որ քո ծառան եմ։ Երկիմաստությունը առաջանում է նրանից, որ ս վերջավորությունը թե հոգնակի հայցականի նշան է և թե առաջին դեմքի անձնական հոդ։ Նույն երկիմաստությունը պիտի լինի ժամանակակից հայերենում, եթե ասենք. «արձակիր ծառաներիս», որ նշանակում է, թե «արձակիր իմ ծառաներին» և թե «մեզ, որ քո ծառաներն ենք»։

«Իբրև լսէին զայս ամենայն փարիսեցիքն» (Ղկ. ԺԶ. 14) երկու տարբեր իմաստ ունի. 1) երբ փարիսեցիները լսում էին այս բոլորը. 2) երբ բոլոր փարիսեցիները լսում էին այս. անշուշտ ճիշտը առաջինն է, որ կարելի էր նշանակել՝ դնելով բուն նշանը ամենայն բառի վրա։

Գրաբարի մեջ ածականների համաձայնությունը գոյականի հետ կարող է հաճախ երկիմաստյան տեղիք տալ։

Ի վերայ առանց մեծաց

կարող է նշանակել թե «մեծ առների վրա», և թե «մեծների առների վրա»։ Ըստ այսմ շատ երկիմի է եզնիկի այս դեղեցիկ հատվածը.

Այսպիսի անհատատ և դանդաչտացաց բանից ախմարաց մտաց կարկառելոց (էջ 115), ուր հայտնի չէ, թե տխմար ածական է բանից գոյականի, թե նրա սեռական հատկացուցիչը և կամ (նվազ հավանաբար) նախադաս համաձայնված ածական է մտաց բառի, թե նրա սեռական հատկացուցիչը. այսինքն՝

Տխմար խոսքերի
Տխմարների խոսքերի
Տխմար մտքերի
Տխմարների մտքերի

Հրամայեց դատաւորն Եւետոս դահճապետի տանել գերկոչեան *(Գոր. հ. դմ. էջ 69)*

կարող է նշանակել

1) Եվետոս դատավորը հրամայեց դահճապետին երկուսն էլ տանել.

2) դատավորը հրամայեց երկուսն էլ Եվետոս դահճապետին տանել.

3) Եվետոս դահճապետի դատավորը հրամայեց երկուսն էլ տանել.

4) Եվետոս դատավորը հրամայեց երկուսն էլ դահճապետին տանել.

5) դատավորը հրամայեց Եվետոս դահճապետին երկուսն էլ տանել.

6) դահճապետի Եվետոս դատավորը հրամայեց երկուսն էլ տանել։

Այսպես նաև ժամանակակից հայերենում.

Հրամայեց Եվետոսին տանել

կարելի է հասկանալ

1) հրամայեց Եվետոսին (տր.) տանել.

2) հրամայեց Եվետոսը (հայց.) տանել։

Դրաբարում, սծականը եւտադա դնելով, առաջանում է երկդիմութիւն. օրինակ՝

Տեսեալ զլոյս մեծ հայրապետին Գրիգորի.

Այս նախադասութեան մեջ մեծ սծականը կարող է թե լոյս-ին պատկանել, և թե հայրապետ-ին. երկուսն էլ հարմար են.

Մեծ հայրապետ Գրիգորը լուսը տեսնելով.

կամ՝ Գրիգոր հայրապետը մեծ լուսը տեսնելով[1]։

Գրաբարի մեջ բացահայտիչի համաձայնութիւնը բացահայտելի հետ՝ յանդգնում է հաճախ իմաստի հստակութեանը և երկդիմութիւն է առաջացնում։ Այսպես՝ խոր. Գ. կա.

---

[1] *Այս նյութի շուրջը տեղի ունեցած մի վեճի մասին տես «Նյութեր պատմության», 1932, № 5—6, էջ 161։*

Ոմանք ի չարափառացն աշակերտացն առեալ զդիբան Թէոդորոսի մամուխատացւոյ, զվարդապետին Նեստորի և զաշակերտին Թէոդորի, գնացին յաշխարհն Հայոց:

Այս հատվածի մեջ ոմն պատմութեան տեղյակ չէ և չգիտե, թե Թեոդորոսը Թեոդորի աշակերտն էր և Նեստորի ուսուցիչը, կարող է այդ բացահայտիչները իրը անկախ հատկացուցիչ ընդունել և կարծել թե չարափառ աշակերտները վերցրել են թե Թեոդորոս մամուխատացու գրքերը, թե Նեստորի ուսուցչի գրքերը և թե Թեոդորի աշակերտի գրքերը[1]։ Աշխարհաբարում այս երկդիմութեյունը տեղի չի կարող ունենալ, որովհետև ասում ենք առանց համաձայնութեյան՝

Աշակերտները վերցրին Նեստորի ուսուցիչ և Թեոդորի աշակերտ Թեոդորոս մամուխատացու գրքերը:

Ստորոգելիի համաձայնութեյունը ենթակայի հետ պատճառ կարող է դառնալ երկդիմութեյան. այսպես, օրինակ՝

Եւ Հելլենք կոչին Յոյնք... *(եղն. 207)*

հայտնի չէ թե հելլեններն են, որ կոչվում են հույն, թե հույներն են, որ կոչվում են հելլեն.— մեկայն հաջորդ տողերի բովանդակութեյունից է իմացվում, որ երկրորդն է ճիշտ (հույներն են, որ կոչվում են հելլեն). այսպես՝ Եւ հելլենք կոչին յոյնք՝ յառնէ միոջէ, որում Հեղինոս անուն էր յելլադացւոց աշխարհին: Բայց այլք ասեն՝ եթե ի ձիթենւոյն, որ յԱրէնս բուսաւ իւրովի. վասն զի ձիթենի յունարէն ելէա (ἐλαία) կոչի:

Աշխարհաբարում այսպիսի երկդիմութեյուն չպիտի առաջանար, որովհետև ստորոգելին չհամաձայնեցնելով՝ ասում ենք.

Հելլենները հույն են կոչվում...
Հույները հելլեն են կոչվում...
Հույն են կոչվում հելլենները...
Հելլեն են կոչվում հույները...

Գրաբարի մեջ անցյալ վերբայը մերթ իրը ածական և մերթ իրը վերբայ գործածվելով՝ կարող է երկդիմութեյան տեղիք տալ. օրինակ՝ Ագաթ. Դ. 296. Եւ խաւնն կատարեալ սիրով զնեցիր նորա... երկդիմի է առանց շարունակութեյունը կարդալու, որովհետև կարելի է հասկանալ «խաւնը կատարյալ (ած.) սիրով նրա խնդիրը...»,

[1] *Այսպես է հասկացել սխալմամբ Ստեփանեն, ինչպես երևան է հանում Ե. վ. Դուրեան, Ուսումն և քննագ. եմ., 1935, էջ 67։*

ինչպես և «խանը սիրով կատարելով նրա խնդիրը...»։ Երկդիմությունը վերացնելու համար կարելի էր ասել. եւ խանն սիրով կատարեալ զխնդիր նորա. *ժամանակակից հայերենում չկա երկդիմության երկյուղ, որովհետև մի դեպքում ասում ենք կատարյալ (ած.), մյուս դեպքում՝ կատարելով (դերբայ)։*

Աշխարհաբարում ասում ենք՝

Դրանից մեծ օգուտ չկա.

կամ արևմտահայ ձևով՝

Ադկե մեծ օգուտ չկա:

Երկուսն էլ երկդիմի են և ունեն երկու իրար բոլորովին հակառակ իմաստ.

1) Դան զայդ մեծ օգուտ չկա (= դա ամենաօգտավետ բանն է).

2) Դրանից չի կարելի մեծ օգուտ սպասել (= շատ օգտավետ բան չէ)։

Շփոթությունը ծագում է նրանից, որ բացառականը մի դեպքում կարելի է ընդունել իբրև ածականի համեմատական աստիճանի խնդիր, մյուս դեպքում՝ բայի բացառական ընութեան խնդիր։ Թյուրքերենն էլ այդպես է. համմ. Bundan böyük menfa'at yoq *(երկու իմաստով)։ Մինչդեռ գրաբարում շատ որոշ ձևով պիտի ասեինք.*

1) Զի՛ք օգուտ մեծ քան զայդ.

2) Զի՛ք օգուտ մեծ ի դմանէ։

Աշխարհաբար ասում ենք՝

Աղջիկը իր մորից շատ բան է սովորել:

Երկու իմաստ ունի.

1) Աղջիկը շատ բան է սովորել իր մորից, մայրը շատ բան է սովորեցրել իր աղջկան.

2) Աղջիկը սովորել է այնքան բան, որ գերազանցում է իր մորից։

Այս երկդիմությունը չկա գրաբարում, ուր ասում ենք.

1) Դուստրն (կամ դստերն) ուսեալ է բազում ինչ ի մօրէ իւրմէ.

2) Դուստրն (կամ դստերն) ուսեալ է առաւել քան զմայր իւր։

Աշխարհաբարը ուրիշ միջոց չունի այս երկդիմությունը վերացնելու, եթե ոչ փոխելով արտահայտության ձևը։

Աշխարհաբար ասում ենք դարձյալ՝
Միայն մենք չենք երջանիկ.
Ունի երկու տարբեր իմաստ.
1) Որ բոլորն էլ երջանիկ են և մենք նրանց մեջ բացառություն չենք կազմում.
2) Որ բոլորն էլ երջանիկ են, իսկ մենք բացառություն ենք կազմում նրանց մեջ և երջանիկ չենք։
Երկու իմաստները իրար հակառակ են դուրս գալիս. առաջին իմաստը ստանալու համար շեշտը դրվում է չենք բառի վրա, իսկ երկրորդ իմաստը ստանալու համար շեշտը դրվում է մենք բառի վրա։
Այսպես անորոշ է՝
աշխ. Ծովի և գետի ջրերի մեջ.
որովհետև կարելի է հասկանալ՝
Թե ծովի մեջ և թե գետի ջրերի մեջ, և՝ թե ծովի, և թե գետի ջրերի մեջ։
Գրաբարը, այս երկդիմությունից զերծ, պիտի ասեր՝
ա. դեպքում՝ ի ծովու և ի ջուրս գետոյ.
բ. » » ի ջուրս ծովու և գետոյ.
Ժամանակակից հայերենում էլ՝
ա. դեպքում՝ Ծովում և գետի ջրերում,
երկդիմի չէ, իսկ երկրորդ դեպքում՝ երկդիմի է։
Արևմտյան աշխարհաբարում՝
Ծովին և գետին ջրերուն մեջ
միշտ երկդիմի է։
Հայերը դիմեցին Ռուսաց օգնության.
երկու միտք ունի.
1) Հայերը գնացին օգնելու ռուսներին,
2) Հայերը խնդրեցին ռուսաց օգնությունը։
Երկդիմությունը առաջանում է այն պատճառով, որ դիմել ունի երկու առում. 1) գնալ, 2) խնդրել (որից՝ դիմում «պետրսագիր»)։
Այսպիսի դեպքերում բնականաբար իմաստը պարզվում է պատմության ընթացքից։ Օրինակ՝ եթե ասենք.
Հայերը պարսիկներից վախենալով՝ դիմեցին (ա) ռուսաց օգնության.
Ռուսները ընդունեցին խնդիրքը և դիմեցին (բ) հայոց օգնության. երբ պարսիկները լսեցին, որ հայերը խնդրել են ռուսաց օգնությունը և ռուսներն էլ դիմում են (գ) հայոց օգ-

նութեան, իրենք էլ դիմեցին (դ) տաճկաց օգնութեան և տաճիկներն էլ դիջելով՝ դիմեցին (ե) պարսից օգնութեան։

Ընթերցմանն ժամանակ անմիջապես հասկացվում է, որ դիմեցին նշանակում է «խնդրեցին» ա, դ դեպքերում, իսկ բ, գ և դեպքերում նշանակում է «գնացին»։

Իմաստը մի քիչ ավելի կպարզվեր, եթե ասեինք ժամանակակից հայերենով.

Հայերը դիմեցին (խնդրեցին) ռուսների օգնութեան,

Հայերը դիմեցին (գնացին) ռուսներին օգնութեան,

բայց արևմտյան աշխարհաբարում սեռական և տրական նույն ձևը ունենալով, չի կարելի այս հնարքին դիմել։ Իսկ երբ գործածենք ռուսաց, հայոց, պարսից, տաճկաց գրաբարյան ձևերը, ոչ մի դեպքում կարելի չէ ճիշտ իմաստը որոշել։ Ուստի լավագույն է խուսափել այսպիսի երկդիմի ձևերից։ Օրինակ՝

Ախոռապետ Քալֆարին և Անանիա Դվինեցուն ուղարկում են Շահ-Արմենի և Իլտիկուղի որդիների մօտ օգնութեան (Ա. Շահնազարյան, Շողակաթ, էջ 79)։

Ըստ սովորական հայերենի պետք է հասկանանք, թե Քալֆարն ու Անանիան գնացին օգնելու Շահ-Արմենին, բայց պատմութեունից երևում է, որ գնացել են օգնութեուն խնդրելու։ Ուստի սխալ է ասել «օգնութեան», այլ պետք է ասել անպատճառ «օգնութեուն խնդրելու»[1]։

Աշխարհաբարում շատ երկու տարբեր գործածութեուն ունի. 1) նշանակում է «բազմաթիվ, բազում, много» և 2) «հույժ, խիստ, очень». առաջին դեպքում ածական է և կցվում է գոյականին. երկրորդ դեպքում մակբայ է և կցվում է բային. օրինակ՝ շատ տներ, շատ եմ սիրում, բայց հայերենում մակբայը կարող է նաև ածականի վրա դրվել. այս դեպքում շատ բառի իմաստը պիտի տատանվի և տեղիք պիտի տա երկդիմութեան. ինչպես՝ շատ գեղեցիկ տներ կային, որ նշանակում է՝ 1) էին տունք բազումք գեղեցիկք, 2) էին տունք գեղեցիկք յոյժ։

---

1 Իմ այս աշխատութեան մեջ մի տեղ դրել էի «հինը նորից է հանում», որով ուզում էի ասել, թե «հին բառը նոր բառից է հանում». բայց զգացի, որ խոսքը երկդիմի է և ընթերցողը պիտի հասկանա «հինը դարձյալ է հանում». երկդիմութեան առաջքը առնելու համար փոխեցի ինձ բառերը նորերից է նաճում. այլևս երկդիմութեուն չկար։—Ամեն հեղինակ պարտավոր է զգուշանալ և որքէ հնարավոր ձևով խուսափել նման երկդիմի ձևերից։

Հատակության համար պետք պիտի լինի ասել.— բազմաթիվ գեղեցիկ տներ կային.— գեղեցիկ շատ տներ կային։

Ֆրանսերենը համարվում է առաջնակարգ հատակ լեզու, գերծ որևէ երկդիմությունից[1]։

Բայց նույնիսկ այստեղ կարելի է գտնել նախադասություններ, ուր իմաստը երկդիմի է.

elle appela les esclaves des chiennes որ կարելի է հասկանալ՝

1) Մորուկներին շուն անվանեց.

2) Շների մորուկներին կանչեց.

Հեղինակը անշուշտ առաջին իմաստով էր ուզում գրել և կարելի էլ չէ երկրորդ իմաստով առնել, որովհետև շները մորուկ չեն ունենում։ Բայց եթե «շուն» բառի տեղ դնենք «վայրենի» և ասենք՝ elle appela les esclaves des sauvages բոլորովին անխաթիր կերպով կարող էինք հասկանալ՝

1) Մորուկներին վայրենի անվանեց.

2) Վայրենիների մորուկներին կանչեց։

Նման երկդիմություններ են ներկայացնում՝

Entre dans la salle à manger des hommes!

1) Մարդ ուտելու սենյակը մտիր.

2) Մարդ սրահ՝ մարդկանց ուտելու

կամ արտասանության մեջ բոլորովին նույն՝ հետևյալ նախադասությունները և նմանները.

C'est lui qu'il a fait venir
„ „ qui l'a „ „
„ „ „ la „ „

Լեզվի հատակության դեմ մեղանչող գլխավոր բանը համանուններն են։ Երբ ասում ենք «տան հարկերը բարձրացան», լսողը կարող է հասկանալ թե «յարկերը» (этаж) և թե «հարկերը» (налог)։ Գրությունն է, որ փրկում է մեզ այս երկդիմությունից։ Բարեբախտաբար հայերենը չունի շատ համանուն բառեր։ Ընդհակառակը՝ ֆրանսերենը լիքն է համանուններով. այսպես u ձայնը կարող է նշանակել août «օգոստոս», ou՝ «ուր», ou «կամ». ver խումբը 5 տարբեր բառ է նշանակում, son — 10

[1] Ce qui n'est pas clair n'est pas français- «ինչ որ հատակ չէ, ֆրանսերեն չէ», պարծենում են ֆրանսիացիք և մինչև իսկ ավելացնում Ce qui n'est pas français n'est pas clair—ինչ որ ֆրանսերեն չէ, հատակ չէ!!!?.

տարբեր բան (տես էջ 67)։ Այս բոլոր բառերը միայն գրությամբ են զանազանվում. և վայ այն օրը, երբ ֆրանսերենի ուղղագրությունը վերածվի հնչականի։ Սակայն երբեմն ուղղագրությունն էլ չի օգնում. lui նշանակում է թե «նրան», և թե «փայլածը». neuf նշանակում է թե «ինը», և թե «նոր». երբ ձևոք են առնում օտար մի լեզվից ֆրանսերեն բառարան և օրինակ, թրք. dokuz — բառի դեմ դնում ենք «neuf», չենք կարող իմանալ, թե dokuz ինչ իմաստ ունի. «ինը», թե «նոր»։ Խոսակցության մեջ պարզվում է իմաստը, որովհետև neuf «ինը» դրվում է գոյականից առաջ, neuf «նոր» դրվում է գոյականից հետո։

Հատկության իդեալը այն պիտի լիներ, որ մի բառ միմիայն մի նշանակություն ուննար, և ամեն մի նշանակություն կամ միտք մի բառով բացատրվեր։ Նույնպես բոլոր մասնիկները և քերականական ձևերը մի-մի արժեք միայն ունենային։ Այսպես են մոտավորապես արվեստական լեզուները և գիտական լեզուն։ Բայց այն ժամանակ լեզուն անկենդան մի բան պիտի դառնար, զուրկ պատկերավորությունից, չափած ու ձևած, ինչպես մի մաթեմատիկական ֆորմուլա։ Լեզուն կենդանի լինելու համար դիմում է մերթ չափազանցության, մերթ հեգնանքի, մերթ ընդհանրացման, մերթ մասնավորացման և շատ հաճախ չի հետևում տրամաբանության։ Օրինակ՝ ասում ենք «Արաքսը թափվում է Կասպից ծովը», կարծես թե միայն այս րոպեիս է թափվում, բայց նա թափվել է, թափվում է և դեռ շատ պիտի թափվի։ Ասում ենք «շունը հավատարիմ է» և գոյականը դնում ենք եզակի, բայց այդ եզակիով հասկանում ենք բոլոր շները։ Ասում ենք «արցունքի հեզեղ թափեց», թեև ընդամենը մի քանի կաթիլ է թափվածը։

Այս չափազանցությունները գրական պատկերներ են, և թեև ամեն մարդ էլ գիտե, թե նրանք միդտնչում են ճշմարտության դեմ (précision), բայց, ոչ ոք իրական մտքով չի առնում։

8. ԼԵԶՎԻ ՊԱՐԶՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվի պարզություն ասելով՝ հասկանում ենք այն հատկությունը, որով ընթերցողը առանց իր միտքը չարչարելու, առանց իր վրա ճիգ գործ դնելու հասկանում է գրվածքի իմաստը։

Պարզությունը կախված է լինում քերականությունից, համաձայնությունից, շարադասությունից, բայց մանավանդ՝ ոճից։

Բարդ են հին հունարենի, լատիներենի, սանսկրիտի, գրաբարի քերականությունը, համաձայնությունն ու շարադասությունը։ Առհասարակ վերցրած՝ հին լեզուները պարզ չենք նրանն են, որ այս կողմից կատարել են մեծ առաջադիմություն։ Անգլերենի ու պարսկերենի քերականությունը, համաձայնությունն ու շարադասությունը ծայրագույն պարզության են հասած, այնքան որ քանի-քանի անգամ գերազանցում են վերացյալ լեզուներից։ Պարզ է նաև ֆրանսերենի շարադասությունը, բայց ոչ համաձայնությունն ու քերականությունը։

Բայց ամենից ավելի կարևոր է ոճի պարզությունը։ Այստեղ էլ շատ հաճախ հեղինակն է պատճառը, որ գրվածքը լինում է բարդ ու մթին։ Կան հեղինակներ, որոնք բարդությունը և մթությունը առավելություն են համարում, և կան ընթերցողներ էլ, որոնք այդ բարդությունը և մթությունը խորհրդավորության, մեծ գիտնականության նշան են համարում։ Սխալվում են երկուսն էլ։ Բարդ ու մութ ոճ կդործադրի նա, ով իր մտքերը չի պարզել, ով իր գաղափարները հավասարապես չի դասավորել, ով իր նյութին լավ չի տիրապետում, ով ինքն էլ չգիտե, թե ինչ է խոսում կամ գրում. կան գիտություններ, որոնք հենց իրենց նյութի պատճառով դժվար են, ինչպես՝ փիլիսոփայությունը կամ մի ուրիշ ճանր մասնագիտական առարկա։ Սրանք հաճախ խճողված են լինում մասնագիտական բառերով, որ մասնագետներին միայն ծանոթ են։ Բայց այդ բառերից դուրս, հեղինակը այնուամենայնիվ կարող է և պարտավոր է գործադրել այնպիսի մի ոճ, որ բան կարելության պարզ լինի։

Ընդհակառակը, անսովոր չէ տեսնել հեղինակներ, որոնք ոչ թե փիլիսոփայական կամ մասնագիտական, այլ նույնիսկ հասարակ մի խոսք մթության քողով են ծածկում։ Օրինակ՝

«Մթնոլորտային անդուենների հանդեպ անձնական պատասպարության առձեռն միջոցների հայթայթման գործում հարկավոր պատրաստություններ տեսել ենք։ Ես նման միջոցների մատակարարման հարցում հարյուր տոկոսով քևրացել եմ».— նշանակում է «հովանոց ունեք,— ես բնավ չունեմ»։

Մեր հին հեղինակների մեջ ամենից ավելի խրթնախոսը Բրթենավորը և Մագիստրոսն են։ Վերջինս ունի ընդհանրապես մութ ոճ, բայց մի քանի գրվածների մեջ, դիտմամբ, այդ մթությունը հասցնում է հանելուկային խրթնության։ Ահա այդ գրվածքներից մեկը։

Բառոտական բազդատական բազադանեալ բարգաւաճեալ,
Բարառաբար բախտական ներբուն բայի շարամանեալ,
Բարեհամ բուծող հյու բարշոք գեղոյ ձեզ ընձեռեալ,
Բիզևիկ բարմակ բեղուն բակեղեթիւ քեզ նուիրեալ:
Ներուն նամակ նիտան նորին նաքոր անբուժական,
Նախրուն նուէր նիսեան նմին նետիւ անփոխական,
Ներձուն նպատա նաջան նեռին նարին կիզողական,
Ներշուն նաւթ աննակին նոյեան նմին իւր պահապան:

Սրան հակառակ որքան պարզ, որքան դիւրըմբռնելի և միևնույն ժամանակ դեղեցիկ են հնչում հետևյալ հատվածները.

«Արդ բարիոք է արեգակն և գեղեցիկ բնութեամբ, և մեզ և ամենայն արարածոց՝ որ իր ներքոյ երկնից՝ յօգուտ և ի դարման, իբրև ճրագ մի ի մեծի տան՝ ի մէջ ձեղուան և յատակի լուցեալ՝ առ ի գիւաւարն և զտուեալն զերկուց մեծացն անօթոց ի բաց ի միջոյ փարատելոյ. բայց ինքն եթէ իցէ և եթէ չիցէ՝ զայն ոչ գիտէ, գի չէ ի բանաւորաց և ի մտաւորաց. նոյնպես և այլքն յանշնչոցն արարածոց» (Եզն. 14):

Ահա և մեր նոր գրականությունից մի հատված, թեև արդեն բավական հին և հնասեր լեզվով:

Ծաղկին վայրկ ի տես գնացեր, ով աղջիկ.
Ոչ ձեռք տնկեց զանդ, ձեռք բարեկամի կամ սիրուհվո:
Ոչ արտասվաթուրմ աչքերով՝ երեկոյան ստվերներուն խառնված՝ անծանոթ ոք եկավ ջուր տալ ինքնաբույս տունկին.
Ու միայն՝ զոր հետ աղջկան երդեց նա ի սեր կաթոգին, շաղն առավոտին ու ցողն երկնքին ու զեփյուռ հովտին, եկան այցելել անտերունջ ծաղկին...
Քրքմնջյունք բանաստեղծին տատասկ են եղել գերեզմանին բոլորտիք.
Փուշ փուշ կերևան մեն մի հառաչանք, որ կարծես կելնեն ի խորոց շիրմին:
Ծիծաղափայլ դաշտ ծիրանի՝ քու առ ոտիվդ ծավալի, ծառն ու ծաղիկ քեզ ժպտին ի բույր ի թույր քրքմենի...
Փչեն չար հողմունք, սուրան կայծակներ, խոնջեալ քունեդ կարթննաս, ոսկի անուրջդ ընդհատին, տրտմե սրտիկդ՝ այլ երկյուղ (Գ. Օտեան):

Նապերքնը (Growth, 136—137) ծաղրով հիշում է անգլիացի մի քանի հեղինակների մեջին (թեև նախորդներից շատ ավելի պարզ) գրվածքները, որ կարող ենք թարգմանել հետևյալ ձևով.—

Ավանդեց իր հոգին չքավոր պայմաններում (ազգատ մեռավ.)

Իր հոգին Քողեց իր երկրային բնակարանը, Քոավ իր ճանապարհը դնալի հավիտենականության, Քափ տվեց իրանից իր բեռը (մեռավ).

Հրկիզությունը ընդարձակեց իր ավերիչ ասպարեզը (հրդեհը տարածվեց).

Նստելով դալարիքի վրա հազորդակից եղավ չինական բույսից արտադրված բուրումնավետ ըմպելիքին (խոտի վրա նըստեց, թեյ խմեց).

Եվրոպական ազգերի մեջ ամենից ավելի ֆրանսիացիք և անգլիացիք են հայանի իրենց ոճի պարզությամբ, ընդհակառակը շատ մութ են գերմանացիք.

Մութ ոճի սերտնար է նաև թյուրքերենը (ոչ թե ժողովրդական լեզուն, այլ գրականը), որի շարադրության սովորական ձևն է երկրորդական նախադասությունները դնել սկիզբը, բոլոր նախադասությունները կազմել գերբայական ձևերով և այսպես տասնյակներով անդեմ նախադասությունների շղթայից հետո տալ գլխավոր նախադասությունը մի դիմավոր բայով (հաճախ է ժամդակը). Այս ոճին էին հետևում նաև Պոլսի այն հայ հեղինակները, որոնք մնծացած էին թյուրքական գրական շրջանում, կամ ուզում էին որևէ թյուրքական պաշտոնական գրություն հայերենի թարգմանել.

Իբրև օրինակ հիշենք Ազգային սահմանադրություն հայոց— Նիզամնամեի միլլեթի էրմէնիան (տպված Պոլիս, 1863), հայերեն և թյուրքերին (հայատառ) լեզուներով, որ պարունակում է 1) Բարձրագույն Դռան՝ Արտաքին գործոց նախարության մի գրություն, 2) Հանձնաժողովի մատուցած Հայոց ազգերը կառավարության, 3) Կայսերական հրովարտակը և 4) Սահմանադրության կանոնագրությունը. Սրանցից առնելով միայն առաջին երկուսը, կտեսնենք, որ առաջինը (մի էջ) թյուրքերեն բնագրում ունի միայն մի դիմավոր բայ (հայերեն թարգմանության մեջ 8 դիմավոր բայ), երկրորդը (5 էջ) թյուրքերեն բնագրում ունի 4 դիմավոր բայ (հայերեն թարգմանության մեջ վերածված 67 դիմավոր բայի!). Ահա և առաջին գրության պատճենը, որին առընթեր դնում եմ իմ կազմած բառացի արևմտահայ թարգմանությունը թյուրքական գերբայական ձևերով, ճիշտ պատկերը ներկայացնելու համար.

Խալահաթ ֆերմանը ալիսի հյուքմինճեն՝ հեր հեմա՝ աքըն պիր միհլի մուա՛յեն իչինաե իմթեկյադաթ վե մասֆիյաքը հադրըվերինին մուայենեսինին իպթիատար իլե, վագի վե ասարե մեհենին-յեք վե մալումաթը մյուքթեսեսինին իճապ իթթիբաքիի խալահաթը պիլ մյուդաքըն արդ էյլեմլերիս, վե բուհասաե բուհանիյեյե իթա պուլյուբրլմըշ օլան բուհասաթ վե իպթիատըն՝ իշլու ճեմաաթլարա քեմին օլընմըշ օլան հալ վե մեվզիի հեսիտ իլե քեվֆիդ օլընմասը լազըմ կելմիկինեն մեզնի մյուքեկերանը միլլեթեհեն մյուրեքքեպ պիր դոմխոռն քեշքիլ իլե, էրմենի միլլեթի հադրընտա պիր նիզամսըմաե լայիհասը քեբթիպ օլընմըշ իսե տե, պուռնըն պիր քերե տե Սարդիս պատրիդ դեմոնընտա քեշքիլ օլընան Մեճլիսի ումումիյե քելիսա ճեմաաթլարը քութքիշտան ինթիխապ օլընան վե էհլի քելիսատեն օլան, պադշըն էքսելենսիլերի արա իլե քեմերիդ իտեճելերի կամ քեշհեհեն մյուրեքքեպ դոմխոռնա իրսահե քենտիդ օլընարդրնտան, իքի յուզ հյուն զարֆընտա լազըմ օլան տավեք քեկքելելերի պիլելրսաղ, իշլու դոմխոռնըն ինթիխապսիյե, Պապը Ալիսե տիկեր դոմխոռն վե մեմուրը մահսուս իլե պիրլիշտիրըլերեք, իպթիդաի հալին իճրասընա հիմմեթ օլընմասը, վե պու վեճիլե ինթիխապ օլընմադ կամ ատեհին էվվել էմրե էտամխոռնի մյուտեհիհին օլան տեֆթերինին քարթը տոսթանեմիզդեն իթտաբ մյուլթեմեռ տիր։

Բարեկարդությանց բարձրագույն հրովարտակի համաձայն՝ բոլոր հասարակությունները որոշյալ պայմանաժամի մը մեջ իրենց արդի առանձնաշնորհություններու և արտոնություններու քննությանը ձեռնարկելով, ժամանակի և քաղաքակրթության արդյանց և ստացված գիտությանց պահանջած բարեկարգությունները խորհրդածելով իրենց, և հրոնական գլուխներուն շնորհված արտոնության և ձեռնհասության՝ այս հասարակությանց ապահովված վճակին և նոր դիրքին հետ համաձայնեցնելը պետք եկած ըլլալուն հետևանքը, ազգին պատվավորներեն բաղկացած հանձնաժողով մը կազմելով, հայոց ազգի մտոնին կանոնադրության մը ուրվագիծը իրեն պատրաստված, (բայց) ասիկա անգամ մալ Սարդիս պատրիարքի ժամանակ կազմված ընդհանուր ժողովի՝ եկեղեցիներու հասարակությանց կողմեն ընտրված և եկեղեցական անձերե եզող անդամներու քվեվկց ատավելությամբ ընտրելիք յոթը անձերե բաղկացած հանձնաժողովին ցույց տրվելը պատշաճ համարվելով, երկու երեք օրվան մեջցին պետք եղած հրավիրագրերու ատաքմամբ, սույն հանձնաժողովին ընտրելով բարձրագույն դասեն մեջ մյուս հանձնաժողովին և հասուկ պաշտոնյային հետ մեկտեղելով, հարկ եղածը կատարելու շնորհ ըլլվիլը և այս առթիվ ընտրվելիք յոթը անձանց նախապես անունները հայտնող ցուցակը մեր բարեկամության կողմե տրվիլը կխնդրվի։

Այս բոլորի մեջ, ինչպես տեսանք, մթություն առաջանում է դերբայների հաճախակի գործածությունից՝ վոխանակ դիմավոր բայերի։ Դիմավոր բայերը կազմում են ամբողջական նախադասություններ, և յուրաքանչյուր ամբողջական նախադասություն մտքի համար մի հանգրվան է։ Միտքը այդտեղ

հանգստանում է, եթե չի ըմբռնել, կանգ է առնում այդպես իբրև ապահով կայանում, մտորում է, դատում է, և երբ ըմբռնեց, շարունակում է իր ընթացքը գեպի հաջորդ նախադասությունը և այսպես՝ շարունակաբար։ Իսկ երբ դիմավոր բայերի տեղ դրված են դերբայներ կամ ըմբռնողությունը ձգձգող դանդաղ վերացական բառեր, բնականաբար նախադասությունը խճողվում է, անուղղի կերպով երկարում, այնպես, որ միտքը այլևս կովան չունի կանգնելու, հանգստանալու և դատելու, և կամ այդ կովանները ուշ-ուշ են գալիս, հակացողությունը դժվարանում է և նույնիսկ հասարակ նախադասությունը մթնանում է. օրինակ՝

1) Թերթը միաժամանակ շոշափում է անգլո-ճապոնական հարաբերությունները, նշելով Անգլիայում ճապոնիայի հետ մերձեցում հաստատելու ձգտման առկայությունը (*«Վարդգեսին Հայաստան», 1934, օգոստոս 29*)։ Կարելի է շատ հասարակ ձևով ասել «և նշում է, թե Անգլիայում ձգտում կա ճապոնիայի հետ մերձեցում հաստատելու»։

2) Բայց այն ընդհանրությունները, որ հայերենն ունի վրացերենի հետ, իրենց ձևա-բովանդակական դրսևորման բազմազանությամբ ու քանակով դժվար է ուրիշ որևէ լեզվի մեջ գտնել։

Ինչպես տեսնում ենք, շատ հաճախ, եթե ոչ միշտ, մթության համար մեղավոր են ոչ թե լեզուները, այլ հեղինակները, որոնք չեն կարողանում պարզ ու հասակ գրել։ Իսկ դա հաճախ արդյունք է այն բանի, որ նրանք իրենք էլ պարզ պատկերացում չունեն այն մասին, թե ինչ են ուզում ասել։

9. ԼԵԶՎԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս ընդհանուր անվան տակ առնում ենք լեզվի մի քանի հատկություններ, որոնք իրար նման բնույթ ունեն։

Սովորական է գրական քննադատների մոտ լսել, թե այսինչ բառը, ոճը կամ դարձվածը հարապատ չէ, ճիշտ չէ, վարկնչական (հնացած կամ մեռած) կամ ընդհակառակը՝ նորելուկ է։

Այն լեզուները, որոնք մեռած են և այլևս չեն խոսվում, ինչպես գրաբարը, լատիներենը կամ հին հունարենը, զերծ են այսպիսի անհանգստություններից։ Նմանապես այն լեզուները, որոնք ոչ մի գրական անցյալ չունեն և նոր են մտնում գրա-

կանության մեջ, ինչպես՝ քրդերենը, աբխազերենը և այլն. Առաջիններն ավելի հին են, որովհետև ամեն ինչ չափած ձևած և հին հեղինակների կողմից ավանդված է. ինչ որ չկա այդ հեղինակների մեջ, լեզվի շրջանակից էլ դուրս է։ Վերջիններն ավելի նոր են, ընդհակառակը, նրա համար, որ ոչ մի հին վկայություն չունեն. և գոյություն ունի միայն նա, ինչ որ այժմ լսվում է ժողովրդի բերանում։

Հարցը վերաբերում է, ուրեմն, գլխավորապես այն լեզուներին, որոնք մի հին շրջանի շարունակություն են կազմում, այսինքն՝ ունեն թե անցյալ, և թե նոր վիճակ, խոսվում են բավական ընդարձակ տարածության վրա, հետևաբար ունեն իրարից քիչ թե շատ տարբերվող բարբառներ, և վերջապես գտնվում են ուրիշ մի լեզվի կամ լեզուների ազդեցության տակ, որոնցից զանազան փոխառություններ ունեն։ Այսպիսի վիճակ ներկայացնում են, օրինակ, հունարենը, պարսկերենը և այլն, հատկապես մեր աշխարհաբար հայերենը։

Եթե մեկը գրի՝

1. Վարդի պսեմը մատս ծակեց.

2. Ժողովրդյան ձայնը լսելի չէր.

3. Ծառները բողբոջեցին.

4. Մատվընեռս կարյունին կոր.

5. Էն մեծ քաղաքն է.

6. Աչքատու երևույթ է.

7. Էս ու էն, էսպես էնպես...

8. Պատկվել է նրա վրա.

9. Պրոյեկտել է.

10. Հրամայում էր որպես զորավարի և այլն,

ապա այս բոլորի մեջ լեզվի մաքրության դեմ մեղանչած կլինի զանազան կողմերով.— 1. պսեմը հին գրաբար բառ է և այժմ՝ գործածությունից վտարված կամ անսովոր. 2. ժողովրդյան գրաբար հոլովաձև է, որ պետք է դարձնել ժողովուրդի կամ ժողովրդի. 3—4. ծառերը, մատվընեռս ժողովրդական, բարբառային ձևեր են, որոնց ավելի մաքուր ձևն է ծառերը, մատներս. այսպես նաև կոր բայական մասնիկը Պոլսի բարբառին հատուկ մասնավոր մի ձև է և հայության մեծամասնության համար՝ անհասկանալի, որ հին լեզվի մեջ գոյություն չունի և ձևացած է թյուրքերենի ազդեցությամբ, ուստի և օտար է ու անհարազատ. 5. էն զուտ թյուրքական մասնիկ է, փոխանակ ասելու

ամենից. ամենեն կամ ամենա-. 6. Աչքառու *տխալ կազմություն ունի, քանի որում գրաբարի Ձայնական օրինքներով աչք բառի ը Ձայնը ածանցման մեջ պետք է կորչի. քան այսմ պետք էր ասել աչառու. և որովհետև աչառու բոլորովին այլ իմաստ ունի, ուստի չենջվում է աչքառու բառը գործածությունից. պետք է ասել* ակնբախ, *ցայտուն և այլն.* 7. Էն, էնպես, էնպես *մասնավոր գավառական ձևեր են, որոնց դեմ ուրիշ բարբառներ էլ ունեն* աս, աճ, ասպես, աճպես *և այլն. ուստի հանուն բնդհանուր հայերենի պետք է ասել* այս, այն, այսպես, *և այլն.* 8. պահվել *մեկի վրա օտարաբանություն է, հայերենի մեջ անսովոր, նույնիսկ տարօրինակ, որի փոխարեն պետք է ասել* պահվել մեկի ճնաւ 9. Պրոյեկտել *դուռ նորաբանություն է, որ դեռ հազիվ գործածության է դրվում ոմանց կողմից։* 10. Որպես զորավարի *հատկացվում է արական իմաստով. ուղիղն է՝* որպես զորավար *և այլն։*

Այսպիսի օրինակների շարքը կարելի է չափազանց երկարել։ Կան հատուկ գրվածքներ զանազան լեզուներով այսպիսի սխալները մատնանշելու և ուղղելու համար. այսպես՝ ֆրանս. «Ne dites pas ... mais dites». *հայերեն էլ կան օրինակի համար՝ Այվազեան Գ. եպս. «Մանգարմունք հայկաբանութեան ի հնումն և ի նորումս», 1869, Թեոդոսիա. Ղազիկեան Հ. Ա. «Մի գրէք... այլ գրեցէք» Վենետ., 1930 (երկու տպագրություն)։*

*Լեզվի մաքրության հարցով մանրամասն զբաղվող եվրոպացի գիտնականների մեջ հիշատակելի են Նորինը, Ֆլոդստրոմը, Յոհաննսոնը, Սեթալան (*Noreen, Flodstrom, Johannson, Setälä), *որոնց աշխատանքի և տեսության ամփոփումն ու քննադատությունը տալիս է Նոպերսընը (*Mankind, Nation and individual from a linguistic point of view, Olso, 1925, *էջ 84—122 և 123—140)։*

Ըստ այս հեղինակների՝ լեզվի մաքրության համար երեք տեսակետ կա. 1) գրական-պատմական, 2) բնապատմական, 3) բնական. Առաջին տեսակետի համաձայն լեզվի մաքրության չափանիշը հին հեղինակներն են. որևէ ձև, որ գործածված կամ բնդունված է հին գրական ճեռագրերի մեջ, համարվում է մաքուր, իսկ ինչ որ նրանց մեջ չկա, խոտելի է։ Այս տեսակետը ուղիղ չէ. դա ստիպում է մեզ պահել միշտ մի հին հայացքով և մերժում է լեզվի նորոգության և առաջադիմության գաղափարը։ Ինչու լեզվի պատմության այսինչ շրջանը գերադասելի պիտի

համարվի որևէ մի ուրիշ շրջանից. և ինչ իրավամբ ժողովրդի տյուրվա լեզվական արտահայտությունները պիտի կառավարվեն նրա մի հին շրջանի արտահայտությունների համաձայն: Վերջապես լեզվական արտահայտությունները մարդկային մտքի ծընունդ են, որանք կարող են տարբեր ճանապարհներով գնալ, և հարիք չկա կարծելու, թե՝ այսինչ շրջանին ընտրված ճանապարհը ճշտիվ համապատասխան լինի նաև մի ուրիշ շրջանի ճանապարհի հետ: Մեսրոպյան շրջանի հայերենով ասվում էր պատասխանի, պատասխանի առնել կամ տալ, այժմ ասում ենք պատասխան, պատասխանել. առաջիններդ մաքուր են հին շրջանի համար, բայց երկրորդներն էլ մաքուր են նոր շրջանի համար և անկարելի է այսօր գործածել այն հին ձևերը:

Երկրորդ տեսակետը, որ կոչվում է բնապատմական, լեզուն համարում է իբրև մի օրգանական էակ և այլևս նրա համար վերանում է ուղիղի և սխալի գաղափարը: Բնությունը շարունակական փոփոխության մեջ է, և ինչ ձևերի տակ կա՝ այն է իրականություն: Հետևնակը այս տեսակետը ավելի ընդհանություն է կոչում: Այդ տեսակետի սխալը հենց երևակետի մեջ է. լեզուն օրգանիզմ չէ, այլ հաղորդակցման միջոց:

Երրորդ տեսակետը, որ կոչվում է բանական (ռացիոնալ) արտահայտում է հետևյալ բանաձևով.— ինչ որ ավելի ճիշտ և ավելի արագ ըմբռնելի է լսողի համար և ավելի հեշտ արտաբերելի է խոսողի համար՝ գլխավորն էր: Այս տեսակետը, սակայն, երկու թերի կողմ ունի. նախ՝ բավական սահմանված են այն դեպքերը, երբ խոսողն ու լսողը լեզվական հավասար աստիճանի վրա կանգնած լինեն. խոսողը հաճախ ավելի բարձր է, քան լսողը, և հետևաբար ինչ որ նրա համար հեշտ է, շատ հեշտ չէ լսողի համար: Կարող են նաև խոսողն ու լսողը տարբեր բարբառի մարդիկ լինել, և այն ժամանակ հարաբերությունը բավական խախտված կլինի: Երկրորդ, լսողները կարող են պահանջել զանազան խավերի, սկսած անդրագետից մինչև դիտնականը, և զանազան բարբառներով խոսող մարդիկ լինել: Այս դեպքում խոսողը ինչ դիրք պետք է բռնի, և ո՞րն է դառնում հեշտ:

Այսպիսով, առաջարկված երեք տեսակետներն էլ ընդվզում են:

Եսպերսենը սրանց փոխարեն քննում է հարցը այլ տեսակետով. 1) հեղինակավորություն, 2) աշխարհագրական, 3) գրական, 4) աղնվապետական, 5) ժողովրդական, 6) արտասրանա-

կան և 7) գեղեցկագիտական։ Մտորև տալիս ենք նրա հիմնավորումները՝ մեր քննության ու քննադատության։

1) Ջանադան Եվրոպական երկրների մեջ լուսավորության մինիստրությունը իր վրա է վերցրել լեզվական հարցերի քննությունը և վճիռը։ Կան ակադեմիաներ (նշանավոր է հատկապես Ֆրանսիական Ակադեմիան), որոնք քննում են գիրականական կանոնները, հատկապես բառերի ուղղագրությունը և հատուկ հրատարակված հրահանգներով, գիրականությամբ կամ բառարանով որոշում ուղիղն ու սխալը։ Այս որոշումները դպրոցի միջոցով մտնում են կյանքի մեջ և ի վերջո դառնում են ընդհանուրի սեփականություն. ամեն ոք պարտավոր է հետևել նրանց։ Միայն Անգլիան է, որ այս կողմից չգիտե որևէ այսպիսի կաշկանդում. ոչ որևէ մինիստրություն, և ոչ էլ որևէ ակադեմիա իրավունք չի համարում իրեն բռնանալ մարդկանց կարծիքի վրա կամ զանազան անօրինություններ անել։ Այս բանը չի խանդարում, սակայն, որ անգլերենն էլ ունենա այնքան կանոնավորված և ընդհանուրի հավանություն ստացած գիրականություն, բառարան և ուղղագրություն, որչափ ֆրանսերենը իր ակադեմիայով։ Մարդկային բնավորության հատկանիշներից մեկն է նաև լեզվական հարցերում մի որևէ հեղինակություն փնտրելը, ճիշտ ինչպես որ դիրձակի մոտ նորաձևության հանգեստում (մոդայի ժուռնալ) մեր հագուստի ձևն ենք փնտրում։ Այս դեպքում բառարանը և գիրականությունը դառնում են մեր առաջնորդը, և ոչ ոք չի խորանում հարցի քննության մեջ։ Բառարանագիրն ու գիրականն էլ իրենց առաջնորդ ունեն զանազան հեղինակների գրվածքները։ Սակայն հեղինակները իրենք չեն իմ մտածել օրենսգիր կամ առաջնորդ լինել լեզվի. նրանք բոլորն էլ գործ են ածել այն, ինչ որ ընդունված է եղել իրենց ժամանակի և շրջանի լեզվի մեջ։ Այսպես նաև բառարանները և ակադեմիանները։ Ֆրանսիական Ակադեմիան իրեն տեր և հեղինակ չի համարում ֆրանսերեն լեզվի, այլ միայն աշխատում է գրանել և հատատել այն, ինչ որ լավագույն հեղինակների լեզվի մեջ գտնում է ընդունված և սովորական։ Ըստ այսմ նորաձևությունները չեն մտնում իր շրջանակի մեջ. բայց հենց որ նրանք ապրեցին և կյանք առացան, ակադեմիան էլ իր հաջորդական հրատարակությունների մեջ ընդունում է։ Այսպիսով, ակադեմիայի հեղինակությունն էլ բացարձակ չի դառնում, թեև

քան ձևի բոլորն էլ ընդունում են նրան։ Նրա գործը սահմանափակվում է գոյություն ունեցող ձևերի որոշ ընտրությամբ։

2) Ամեն՝ երկրի մեջ էլ հաճախ որոշված և ընդունված է, թե ո՛ր գավառը կամ շրջանը խոսում է այն երկրի մաքուր լեզվով։ Օրինակ, ասում են, թե լավագույն ֆրանսերենը խոսվում է Պուատուում, լավագույն անգլերենը՝ Օքսֆորդում, լավագույն գերմաներենը՝ Համբուրգում, լավագույն ռուսերենը՝ Մոսկվայում, լավագույն պարսկերենը՝ Թեհրանում, մեր մեջ էլ լավագույն հայերենը՝ Երևանում։ Այս որոշումները, սակայն, սխալ են. ամեն մի բարբառ ուղիղ է իր մեջ և նրա մաքուր ձևը խոսվում է իր գավառում. լեզվաբանի համար բոլոր բարբառները հավասար են, և ոչ մեկը նրանցից առավելություն չունի մյուսից։ Եթե նույնիսկ գաուենք բարբառը հին կամ գրական լեզվին մոտիկության աստիճանից, լինում են դեպքեր, երբ «մաքուր» բարբառը ավելի ետ է մնում քան մի ուրիշ «ոչ-մաքուր» բարբառ. այսպես, օրինակ՝ Երևանի բարբառը գործածում է միշտ ա էականը (ասըմ ա), մինչդեռ այլուր ունենք՝ է։

3) Մաքուր լեզուն որոշելու համար հաճախ ասում են, թե պետք է դիմել լավագույն գրողներին։ Բայց լավագույն գրողներին որոշելու համար նախ պետք էր ունենալ գրական մի չափանիշ, որ չկա։ Լավագույն գրողներ ասելով՝ հասկացվում են յուրաքանչյուր լեզվի դասական հեղինակները. բայց դասական հեղինակները միշտ հին են և անտեղի բան է հնով շարունակ նորը կարկատել։ Բացի սրանից, շատ անգամ գրողները միևնույն լեզուն չունեն կամ թույլ են տալիս ընդ լեզվական սխալներ։ Գրական մեծություններ նաև լեզվական մեծություններ չեն։ Օրինակ՝ մեր գրական լեզվի համար ո՛ր գրողին կարելի է անսայթաք առաջնորդ համարել. Աբովյանը, Պռոշյանը, Սունդուկյանը բարբառային լեզու ունեն. Պատկանյանի լեզուն խառնուրդ է։ Բաֆֆին, Շիրվանզադեն հայերենի մեջ բավական թևեր են։ Շատ վատ էր լրագրությունը, որ օրը օրին ստիպված ամեն բանի հասնելու, խմբագրված շատ անգամ այնպիսի անձերից, որոնք ավելի հասարակական գործիչ են և հայերենի համար միջակություն, ստեղծում և դժբախտաբար արագությամբ տարածում էր բազմաթիվ սխալներ, անտեղի նորմուծություններ, օտար բառեր և այլն։

4) Մաքուր լեզու համարվում է հաճախ ազնվականների, «բարձր դասակարգի» ժարգոնը։ Մենք այսպիսի ազգ չունենք։

Մեր ազնվականները օտարախոս էին. Թյուրքիայում՝ ֆրանսախոս, Վրաստանում՝ վրացախոս, Կովկասում՝ ընդհանրապես ռուսախոս: Եվրոպական փոքր ազգերի մեջ էլ նկատելի են նման երևույթներ: Ամեն տեղ էլ ազնվականը արհամարհում է ժողովրդի լեզուն, ինչպես որ ժողովուրդն էլ գերագնահատում է ազնվականի լեզուն, աշխատելով օրինակել այն՝ նրա նխտուկացի, վարք ու բարքի և դեմսաի հետ: Բայց ազնվականն էլ մի առանձին լեզու չունի, և ևթե ունի, նա էլ օրևէ բարբառ է, որ դեպքերի բերմամբ դիրք է առացել: Կարիք չկա այս բարբառը մի ուրիշից մաքուր համարելու: Բայց ազնվականներից ավելի հեշտահասկելի է ինտելիգենցիան, հատկապես դեմարը այն անձերի, որոնք ազգային շրջանակում ազգային կրթություն են առացած: Մեր մեջ այս առերը անցյալում շատ էր թուլացել՝ Թյուրքիայում օտար կրթության շնորհիվ, և Կովկասում՝ ցարական ճնշման հետևանքով: Բայց և այնպես մեր մեջ էլ կար կրթություն առացած խավ, որի մշակմանը ևնթարկվեց մեր արդի գրական լեզուն: Այժմ այդ առերը մեզ մոտ չափազանց մեծ բազմություն է կազմում և իրոք մեր լեզվի իսկական մշակողն է:

3) Ազնվականների ժարդանի հակադիրն է ժողովրդական լեզուն, որին դիմում են հաճախ որոշելու համար, թե ինչն է մաքուր, ճիշտ կամ սխալ: Բայց ժողովուրդը, մանավանդ մեր մեջ, բազմաթիվ բարբառներով և ևնթաբարբառներով է խոսում. հաճախ մեկի տեղ մի քանի ձև գոյություն ունի, որի բացատրությունը, սակայն, ժողովուրդը չի կարողանում տալ և չդիտի: Այստեղ ձայնը արվում է մեծամասնության, թեև հայտնի է, որ մեծամասնությունն չի նշանակում նաև արդարություն: Ամենից ավելի շատ գործածված մի ձև կարող է չլինել ճիշտ, և, ընդհակառակը, հնասոր մի անկյունում ընկած մի ձև կարող է լինել ավելի հարատած կամ ճիշտ: Այստեղ էլ սովորությունն է արդարացնում գործածությունը. ամենատես բանակալը, ևթե հաստատվեց իր դահի վրա, օրինական է դառնում:

6) Տրամաբանությունը պատճառների և արդյունքների այն ուղիղ դասդությունն է, որ համազում է միտքը: Բայց լեզվի մեջ տրամաբանություն չկա, ոչ մի պատճառ չկա նրա համար, որ ամեն օրվա մեր անունդր «հաց» անունը պիտի կրեր, և թե այդ հացի ավելի փոքրը «հացիկ» պիտի կոչվեր: Չկա ոչ մի տրամաբանական պատճառ, որ բայը խոնարհելու համար եմ, ես, է, ենք,

էք, են վերջավորությունները պիտի դրվեին, իսկ եթե ժամանակը կատարյալ է, այդ վերջավորությունները պիտի դառնային եցի, եցեր, եաց և այլն։ Այս բոլորը պատմական իրողություններ են՝ հիմնված պայմանականության և պատահմունքի վրա։ Ուստի և երբեք չի կարելի որևէ ձևի մաքրությունը որոշելու համար դիմել տրամաբանության օրենքներին։

7) Շատ անգամ ձևի մաքրությունը որոշելու համար դիմում ենք գեղեցկագիտության, մի քանի անգամ կրկնում ենք բառը կամ ձևը իրար եւևից և մեր ականջը ուշադիր հետևում է. որ ձևը որ փայլեցց մեր գեղագիտական ճաշակը, նա էլ մաքուր է։ Բայց գեղագիտական ճաշակը նախապես կրթության արդյունք է և ինքը անկախ չէ. մեր ընտրությունն էլ, ուրեմն, այս դեպքում անկախ չէ, այլ նախորդ վարժությունների վերհիշումը։

Այսպիսով՝ արված 7 տեսակետներն էլ անբավարար են լեզվի մաքրությունը որոշելու համար։

Ըստ Եսպերսընի, լեզվի մաքրությունը որոշելու միակ միջոցը ընդունված նորման է։ Հասարակական մեր բոլոր երևույթները մի չափանիշ ունեն, որից դուրս ելնողը անպատասխանատու անձ է համարվում։ Այսպես՝ շորը, գլխարկը, ձեռքի սեղմումը և այլն։ Այս բոլորի համար կա մի ընդունված կարգ, որ բոլորին պարտադիր է։ Մի կարգ էլ կա լեզվի համար, թեև այս կարգը ավելի բարդ լինի քան մյուսներինը։ Գիտնականի համար լեզվական ամեն մի ձև, որ դոյություն ունի, համարվի ուղիղ թե սխալ, իր ծագման պատճառը և բացատրությունը ունի. հասարակ խոսողը այդ բոլորից հետու է և կարիք էլ չունի իմանալու։ Նրան կարևոր է միայն սովորությունը։ Ամեն մի ձև, որ սովորական կամ ընդունված է այսինչ կամ այնինչ համայնքի մեջ, դրանով էլ համարվում է ուղիղ կամ մաքուր։ Միևնույն բառը այս համայնքում ուղիղ է այս ձևով, մի ուրիշ համայնքում մի այլ ձևով. հակառակը սխալ է։ Այսպես՝ Երևանի բարբառում ուղիղ և մաքուր է փոր ձևը, Թբիլիսիի բարբառում փուր. և այսպես բոլորը։

Մանանավորենք այժմ մեր խոսքը արդի հայերենի համար։

Ունենք դրաբար մի լեզու, որ ե դարում եղել է խոսակցական լեզու, հետո դադարել է խոսվելուց, ապրել է եկեղեցում, անցյալ դարում մեր դպրոցական ուսման հիմնական առարկան էր և այժմ էլ բարձրագույն դպրոցներում ավանդվում է։ Ունենք

մինչև հայերեն լեզուն, որ ԺԱ դարից սկսած խոսակցական լեզու էր, բարձրացել է հիլիկիայում պետականության լեզվի աստիճանին, մշակվել է իբր գրական լեզու, հետո դադարել է խոսվելուց և այժմ հաղիվ թե ուշադրության է առնվում գիտնականների կողմից։ Ունենք բազմաթիվ բարբառներ և ենթաբարբառներ։ Բացի սրանից ժողովրդի մի սովոր մասը կամ հայախոս չէ և կամ երկլեզվյան է։ Անցյալ դարի սկզբում մեր գրական լեզուն գրաբարն էր, որ ժողովուրդը չէր հասկանում. նա գործ էր ածում իր դռնեդուռն բարբառները կամ օտար լեզուներ։ Երբ հիմի ազգային գիտակցություն, և հայերն էլ ուզեցին ունենալ մի նոր, աշխարհիկ, ժողովրդական լեզու, բնական դժվարության մեջ ի՛ր բարբառը պետք է ընտրեին։ Արևմուտքում՝ Զոլիսը և արևելքում՝ Երևանը (և էջմիածին) լինելով հայ ազգային կյանքի կենտրոնները, ընտրեցին այդ բարբառները։ Բայց Զոլսի ժողովրդական բարբառը լի էր թյուրքերեն բառերով, հայերեն բառերն էլ բավական աղավաղված էին։ Եթե հայերը ունեցած չլինեին գրաբարը, որ դեռ մշակվում էլ էր, անշուշտ գրի պիտի առնեին այդ զուտ ժողովրդական բարբառը՝ իր թյուրքերեն բառերով և խիստ փոփոխված ձևերով։ Մի կողմից՝ գրաբարի հակակշիռը, մյուս կողմից՝ ուրիշ բարբառների ներկայությունը, որոնք ավելի մոտիկ էին գրաբարին (այսինքն՝ թյուրքերեն բառեր քիչ ունեին և շատ բառեր հին ձևերով էին գործածում), ստիպեցին բռնել մինչև ճանապարհ. բառերը և ուղղագրությունը վերցրին գրաբարից, քերականությունը և համաձայնությունը՝ ժողովրդական բարբառից։ Այսպիսով կազմվեց հայերեն գրական լեզուն, որ դպրոցի և լրագրության միջոցով տարածվեց և այսօր էլ պետականության բարձրացած լինելով՝ վտարում է բոլոր բարբառները։

Այս պատկերը մեր առաջ ունենալուց հետո, այլևս մենք կարող ենք որոշել, թե ինչն է մաքուր, ուղիղ կամ սխալ, հարազատ կամ օտար։ Արդի գրական լեզվի համար ուղիղ են այն բոլոր բառային ձևերը, որոնք նույնն են գրաբարի հետ. հակառակը սխալ է։ Այսպես՝ օխտը, քիշեր, ճարսնիք (ժողովրդական ձևեր) սխալ են և ուղիղ են յոթ, գիշեր, ճարահանիք (գրաբար ձևեր)։ Օտար են այն բոլոր այլալեզու բառերը, որոնց համապատասխան մի այլ հայերեն բառ կա, թեև այդ բառը այժմ չլինի բարբառներում։ Այսպես՝ յախա, վարատնիկ օտար են և նրանց գործածությունը գրական լեզվի մեջ անթույլատրելի է. հարազատ

բառն է օձիք (գրաբար ձև, որ ոչ մի տեղ գործածականն չէ որևէ բարբառում); եթե մի օտար բառ գործածված է գրաբարի մեջ, նա այլևս օտար չէ. այսպես պատկեր, սնոտի և այլն։ [Նույնպես և՝ եթե մի բառի համապատասխանը չունենք, կարող ենք վերցնել, որով և կդառնա հարազատ հենց գործածության ընթացքում. այսպես, օրինակ՝ ինստիտուտ, ֆակուլտետ, դիալեկտիկա և այլն։ Վերջապես անհրաժեշտ դեպքերում կարելի է դիմել նաև բարբառներին, վերցնելով նրանցից հարկավոր բառերը, որոնք չկան գրաբարում, ինչպես՝ դաճուկ, շմուշկ և այլն։] Այս սկզբունքներով գըրված հայերենը կոչվում է մաքուր հայերեն։ Ինչ վերաբերում է ճաներին, դարձվածներին, խնդրառության և այլն, ապա այստեղ էլ մաքուր համարվում է այն, որ համապատասխան է ընդհանրապես հայերեն ժողովրդական բարբառների մտածողության կամ ոգուն։

Լեզվի մաքրությունից վեր կա նաև լեզվի մի ուրիշ հատկություն. դա է բարձր, գեղեցիկ, վսեմ լեզու. բայց որոնք մտնում են բանահյուսության տեսության մեջ, և լեզվաբանության նյութ չեն կազմում։

10. ԼԵԶՎԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Շատ դժվար է որոշել, թե ինչ է լեզվի կատարելությունը։ Այս հարցում ոչ ոք անկողմնակալ չէ. ամեն մի մարդ կշռադատում է մի որևէ լեզու՝ չափանիշ ունենալով իր լեզուն։ Եվ այս բանը նա անում է նույնիսկ անգիտակցաբար, որովհետև իր լեզուն և իր լեզվի մտածողությունը անբաժանելի են իր կյանքից։

Ռուսի համար անըմբռնելի է անկատարի, կատարյալի, հաբիկատարի և գերակատարի տարբերությունը, որովհետև չկա իր լեզվում. մինչդեռ, ընդհակառակը, մի հայ, մի ֆրանսիացի, մի թյուրք կամ պարսիկ, որոնք երբևէ լեզվի մեջ շատ սովոր են բայական այդ ժամանակներին, զարմանում են, որ ռուսերենը չունի այդպիսի ձևեր։

Վատ չափանիշ ունեն մեծ ազգերը, որոնք ազգամոլությամբ (շովինիզմով) տարված, սովորել են վերևից նայել մյուս, մանավանդ փոքր ազգերի վրա և արհամարհել նրանց լեզուն։ Վատ չափանիշ ունեն նաև փոքր ազգերը, որոնք, գիտակից իրենց փոքրության, սովոր են հիացմունքով նայել մեծ ազգերի վրա և լավ գտնել այն ամենը, ինչ որ նրանց է պատկանում։ Օրինակ

Բալլին (Bally. Le langage et la vie, էջ 60) ասում է, թե ֆրանսիացին, երբ ի ձայնը լսում է գերմաներէնի մէջ, վատ է զգում (nous choque), որովհետև ասում է գերմանացուն, իսկ երբ իտալացու մոտ է լսում, սրանչանում է (nous charme): Առաջ մեզ մոտ էլ, երբ մի հայ լսեր մի ուրիշից մի այսպիսի նախադասութիւն. «շուն լավ կենդանի» և կամ «շունչի նման», կծիծաղեր նրա վրա, թայց երբ ռուսն էր ասում собака-хорошее животное կամ ничего подобного լավ ու գեղեցիկ էր գտնում։

Ազգամոլութիւններից հետո կան և հնամոլութիւններ։ Նրանք, որոնք կրքված են մի որևէ հին լեզուով (հին հունարէն կամ լատիներէն), սովորութիւն ունեն գովելու և փառաբանելու այդ հին լեզուները և դատափետելու նորերը։ Հները «ճոխ» են, «գեղեցիկ» են, «ճկուն», «ներդաշնակ ու կատարեալ», նորերը «հասարակ», «ոսկի», «անկանոն», «խուլ և տկար»։ Այսպես էին և մեր երբեմնի անճարակ հեղինակները, որոնք գրաբարով մեծացած, աշխարհաբարը գտնում էին անարժէք մի լեզու։ Նրանք ուզում էին ծածկել սրանով իրենց սեփական անճարակութիւնը և գրաբարի ճամարտակութեան մէջ իրենց տգիտութիւն մարելին կարծում էին թե պերճանք են տալիս։

Նման դատողութիւններ ունի նաև Վիտնեյը։ Նա դատապարտում է այն վերաբերմունքը, որ ունեն շատերը, նաև հայտնի լեզուաբանները, դեպի այսինչ կամ այնինչ լեզուն՝ առանձնապես, և դեպի մյուսները՝ ընդհանրապես։ Նրանք այսինչ լեզուն համարում են գեղեցիկ ու կատարեալ, մյուսները բարբարոս, վայրենի, անկատար ու պակասավոր։ Այս վերաբերմունքը, ասում է նա, առաջանում է հաճախ շովինիզմից, նախապաշարմունքից և տգիտութիւնից։ Լեզուն մի գործիք է, ասում է նա, որ ծառայում է մարդկային մտքի արտահայտութեան. եթե մի ժողովուրդ զարգացել ու բարձրացել է կուլտուրապես, նրա լեզուն էլ՝ ինչքան որ անկատար լինի, լուսավոր մտքի հարմարեցրած մի գործիք կդառնա։ Օրինակ լինի չինարէնը, որ ձևաբանութիւնից զուրկ լինելով, և այդ պատճառով էլ շատերի կողմից սխալ կերպով «անկատար» մի լեզու համարված, կարողացել է մի ճոխ փիլիսոփայական գրականութիւն արտադրել (Whitney, La vie du langage, էջ 183—4 և 196)։

Աչքի առաջ ունենք մի խումբ լեզուներ, որոնք հազարամյա տարիների պատմական կյանք ունեն. այսպես, օրինակ, հնգկերենը՝ սկսած վեդայական շրջանից մինչև արդի բարբառ-

նները, հունարենը՝ սկսած Հոմերոսից մինչև այսօր, պարսկերենը՝ սկսած Դարեհից մինչև ներկա րոպեն, լատիներենը՝ սկսած մեր թվ. առաջ 9-դարից մինչև արդի ռոմանական լեզուներն ու բարբառները (ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն և այլն), գրաբարը՝ սկսած Մեսրոպից մինչև ժամանակակից հայերենը և բարբառները և այլն։ Այս հազարավոր տարիների ընթացքում թիչ ընթացք են ունեցել նրանք, ինչպես է լեզվի առաջդիմություն։

*Այս նկատմամբ զբաղվել է հատկապես Եսպերսենը (*lang. *էջ 324—365), որ լեզուների պատմական ընթացքի մեջ կատարված առաջդիմությունը ամփոփում է հետևյալ կետերով.*

1. Լեզուները գնում են դեպի համառոտություն. *օրինակ՝ գոթ.* habaidedeima *դառել է անգլ.* had «*ունեցա*», *լա.* augustus «*օգոստոս*» > *ֆր.* août, *լա.* metipsimum «*նույն*» > *իտալ.* medesimo, *իսպան.* mismo, *ֆր.* même. *մենք էլ կարող ենք օրինակ բերել հայերենից* արեասուք > արցունք, մեծացուցանել > մեծացնել, սիրեցուցանել > սիրցնել, հարսանիք > հարսնիք, բերանի > բերնի *և այլն։ Կան նաև սրանց հակառակ երկարած ձևեր, ինչպես՝* ծաղր > ծաղդր, մաղր > մաղդր. *բայց դրանց թիվը չափազանց քիչ է։ Այս բանը Եսպերսենը համարում է առաջդիմության նշան, որովհետև տալիս է մեզ ժամանակի և ուժի խնայողություն. լավագույն լեզուն այն է, որ մինիմում ջանքով մաքսիմում արդյունքի է հասնում (անգլ՝ 324)։*

2. Հին լեզուները բազմաձև են, նորերը՝ շատ ավելի պարզ. *օրինակ՝ նույն անգլ.* had *ձևը չի ներկայացնում միայն գոթ.* habaidedeima, *այլև նույն բայի մյուս ձևերը, որոնք են.* habaida, habaides, habaidedu, habaideduts, habaidedum, habaidedud, habaidedun, habaidedjau, habaidedeis, habaidedi, habaidedeiwa, habaidedeits, habaidedeima, habaidedeid, habaidedeina, *այսինքն՝ երկու եզանակի 3 թվի (եզ. երկ. և հոգ.) 2—3 դեմքերի ձևերը, ընդամենը 16 ձև, որոնց բոլորի դեմ անգլերենը հանում է միայն* had, *մնացյալը բացատրելով դերանուններով և այլն (անգլ, էջ 332)։*

3. Հին լեզուները ունեն բազմաթիվ անկանոնություններ, որոնք կոչում ենք բացառություն, և որոնք վերացված են նոր լեզուների մեջ։

4. Հին լեզուները համադրական են, նորերը վերլուծական. *առաջիններում մի բառի մեջ շատ բան են ասում, երկրորդներըամեն մի բան առանձին-առանձին են ասում. այսպես՝ լա.* can-

taveram *երգել էի* ձևի դեմ անգլ. I' had sung: *Համագույնն է վերջին ձևը, որ և թույլ է տալիս շեշտը քան պահանջի տեղափոխելու. ինչպես՝* I' had sung, I hâd sung, I had sûng *(անդ, էջ 334)։ Բացի սրանից վերլուծական ձևը մտածողության իրական գաղափարն է տալիս, քերականական հատկացողություններ ավելի ցայտուն է դարձնում։ Երբ հոլովում ենք լտ.* domini, dominos, dominis, dominorum, *գիտենք, որ բոլորն էլ հոգնակի են, բայց հոգնակի լինելու գաղափարը հայտնապես մեզ ոչով նշան չկա.* i, is *և այլն նշանները կարող էին նաև եզակիի նշան լինել, ինչպես որ իրոք էլ ունենք* rex «թագավոր» *բառի եզակի ձևերի մեջ՝* regis, regi *և այլն։ Ընդհակառակը անգլերենը՝ գնելով* -s *նշանը, իսկույն հայտնի է դարձնում հոգնակիի գաղափարը բոլոր հոլովների համար (անդ, էջ 338)։*

5. Ընդունելով վերլուծական դրությունը, բերականական ձևերի բիվը քչանում է, որով և մարի շփոթության առաջն առնվում է. *միևնույն ժամանակ կարելիություն է առնդվում նրանցով նորանոր խառնուրդներ ու բազադրություններ կազմել (ինչ որ հների մեջ աննման է) և այսպիսով, առանց ճոխության՝ ձևաստեղություն է առաջանում (էջ 364)։ Այսպես, օրինակ,* պիտի սիրեմ, սիրեմ պիտի, պիտի սիրեի, սիրած պիտի լինեմ, սիրած պիտի լինեի, սիրած եղած պիտի լինեմ, սիրած եղած պիտի լինեի, սիրած եղած պիտի լինեմ եղեր և այլն։

6. Հին լեզուների շարադասությունը ազատ է. *բառերը բան գրողի ճաշակի կամ քմահաճույքի ազ ու ձախ տեղափոխվելով՝ պահանջում են ընթերցողից լրիվ ուշադրություն՝ իմանալու համար, թե որ բառը որ բառի հետ պետք է կապել, որպեսզի իմաստը սխալ չհասկացվի։ Նոր լեզուները ունեն բառերի հաստատ շարք և մարդկային միտքը իմաստ հանելու համար պետք չունի քարթափումների։ Լավ օրինակ է անգլ. հետևյալ հատվածը*[1].

Her	eyes	like	angels	watch	them	still.
Իր	*աչքերը*	*իբր*	*հրեշտակներ*	*հսկում են*	*նրան*	*յուս.*

Այս նախադասության մեջ գործածված բառերից her *կարող է լինել առացական ածական և անձնական դերանվան հայցականը,* eyes *գոյական է և բայ,* like *ածական է, բայ է և*

[1] Jesperson, Growth, *էջ 158։*

շոգիակ, watch բայ է և դոյական, still ածական է, բայ է և մակբայ։ Բայց, հակառակ այս բոլորին, իմաստը երկդիմի չէ՝ բառերի այն հաստատ շարքի պատճառով, որ ունեն նախադասության մեջ՝ բուն իրենց պաշտոնի և հետևաբար՝ իմաստի։

7. Համաձայնության կանոնները շատ ավելի պարզված ու կանոնավորված են. մի անգամ ասելու բանը մի քանի անգամ կրկնելով խոսքը ծանրաբեռնելը, որ հների հատկությունն է, վերացված է նոր լեզուների մեջ (անդ, էջ 320)։

Այս բոլոր կետերն ի նկատի առնելով, եզրակացնում է, որ նոր լեզուները հների համեմատությամբ ավելի առաջադեմ ու կատարյալ են։

Այս բոլոր կետերի քննության ժամանակ եզրակացնում է նկատի ունի գլխավորապես անդլերենը. և մասնավորապես այս տեսակետից իրավացի է։ Բայց ճիշտ չէ, երբ ասում է, որ լեզուների հնից դեպի նոր ընթացքի մեջ՝ առաջադիմելու և կատարելագործվելու շարժումը բնդհանուր է բոլոր լեզուներին (անդ, էջ 365)։ Օրինակ առնենք Մարազայի բարբառը. ահա հնից դեպի նոր և դեպի ավելի նոր դիմելու մի շրջան. վերցնենք նրա հոգնակիի կազմությունը. 20-ից ավելի կանոն պետք է սովորել հոգնակի կազմելու համար (տես իմ Քննութիւն Մարազայի բարբառի, էջ 150—160)։ Կատարելագործություն է, երբ վոխանակ դրաբարի ճաց—սեռ. ճացի ձևի՝ ասում ենք Ագլ. ճօց — սեռ. ճա՛ցի, Զթ. ճօց—սեռ. ճացը՛ և այլն։ Լեզուն շարունակական շարժման մեջ է. անջատականից դեպի կցական, հետո դեպի թեքական, հետո նորից հետ՝ կցական ու անջատական և այսպես շարունակ։ Անցման շրջանները միշտ խառնակ ու անկանոն են, մինչև որ մրուրը իջնի հատակը, և խառնակը պարզվի։

Մի ուրիշ լեզվաբան՝ Վանդրիեսը (Le langage, էջ 412), առանձին արժեք չի տալիս լեզվի կատարելագործման այս գադափարին։ Միևնույն լեզուն, ասում է նա, իր հին և նոր վիճակում ներկայացնում է զանազան վիճակներ, որոշ ձևեր չնչվում անհետանում են, նորերն են առաջ գալիս և այլն։ Բայց վերջին հաշվով շահ ու զեղի հավասարակշռությունը գրեթե պահվում է։ Լեզուն իր բնական զարգացման մեջ երբեք չի կարող հասնել այն տրամաբանական կատարելության, որ կարող է ունենալ արհեստական լեզու։ Նա նմանեցնում է լեզվի զանազան շրջանները մի գեղադիտակի (կալեյդոսկոպ). ամեն կողմ

որ շարժեա՝ շարունակ դուրս կդա մի նոր սիրուն պատկեր։ Ամեն ինչ կախված է գեղագիտական շարժող ձևաքից։

Կատարյալ կարելի է կոչել այն լեզուն, որ միացնում է իր մեջ այն բոլոր հատկություններր, որ նկարագրեցինք վերևում։ Բայց այդ անկարելի է, որովհետև այդ հատկություններից քանի քանիսը իրար հակասում են և անհամատեղելի են (չեն կարող միաժամանակ գտնվել մի լեզվի մեջ)։ Առնենք նեղպաշնակություններ։ Նեղպաշնակ է այն լեզուն, որ ունի ձայնավորների ոսկոսական առավելություն բազաձայնների դեմ։ Բայց այդ հատկությունը տալիս է նրան մանկական փափկություն կամ կանացի քնքշություն, և հակառակ է ուժգնության ու կորովի պահանջին։ Առնենք մարտական մի հայտարարություն. իտալերեն լեզվով կլինի՝

Andiamo contro il nemico

Գնանք թշնամու դեմ

որքան թուլ է նա, որքան անկար ու մեղմ՝ համեմատությամբ գերմաներենի կամ նույնիսկ ֆրանսերենի.

Gehen wir gegen den Feind.
Allons contre l'ennemi.

Առնենք համառաոություններ և անգմություններ. դրանք լավ հատկություններ են անշուշտ, խնայում են մարդկային ժամանակն ու աշխատանքը. բայց հակառակ են վերլուծական դրության և իմաստի համար մութ են. brevis esse laboro, obscurus fio[1]. Գրր. հարց ձևը լավ է՝ որովհետև կարճ է, բայց վատ, որովհետև հատակ չէ. հայերեի լավ է, որովհետև վերլուծական հատակ ձև ունի, բայց վատ է, որովհետև մյուսից երեք անգամ երկար է. սիրեցից լավ է, որովհետև կարճ է, բայց վատ է, որովհետև վերլուծականի հատկությունը չունի. պիտի սիրեմ լավ է, որովհետև հատակ է, բայց վատ է, որովհետև մյուսից մի վանկ երկար է։ Այսպես նաև, կանոնավորությունը շատ լավ է, բայց միօրինակություն է մտցնում լեզվի մեջ, ինչ որ ձանձրալի է։ Վերականության պարզություններ, շարադասության հատատուն շարքը շատ լավ են, որովհետև վերացնում են իմաստի մթություններ, բայց վատ են, որովհետև միապաղաղություն են մտցնում լեզվի մեջ և այլն։

[1] «Աշխատանքի կարճ լինել, մութ գործ»։

Այս պատճառով, ահա, չկա աշխարհում կատարյալ լեզու։

«Հազարավոր տարիների փորձերից, ուղղումներից և սըրբագրություններից հետո, այն էլ զանազան երկրներում և զանազան ազգերի ձեռքով, դեռ ոչ մի հնդեվրոպական լեզու չհասավ կատարյալ կանոնավորության։ Պարսկերենը և հայերենը, անգլերենը և ֆրանսերենը լիքն են այնպիսի ձևերով, որոնք հատուկ են այսինչ կամ այնինչ բառին, սովորական լեզվով՝ բացառություններ ենն (Meillet, Esq. lat. էջ 235)։

Եթե գոնե համեմատական չափով մոտենանք ընդհանուր լեզուների քննության և վերացական կերպով ուզենանք որոշել այն լեզուն, որ ավելի մոտիկ է կատարելության, իրրև ավելի արամաբանական՝ պետք է առաջնորդվենք հետևյալ դատողություններով.

1) Կատարյալ չեն կարող կոչվել այն լեզուները, որոնք ունեն սեռի քերականական կարգը. օրինակ՝ ֆրանսերեն, գերմաներեն, հունարեն, իտալերեն, ռուսերեն և այլն, եվրոպական լեզուների ամենամեծ մասը։

2) Կատարյալ չեն կարող կոչվել այն լեզուները, որոնք ունեն մի քանի տեսակ հոլովմունք և խոնարհմունք, մանավանդ եթե հոլովմունքն ու խոնարհմունքը կազմում են հին համապրական դրության մեջ. օրինակ՝ հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, հունարեն, իտալերեն, գերմաներեն և այլն։

3) Կատարյալ չեն կարող կոչվել այն լեզուները, որոնք հետևելով կամ դասանիշների դրության և կամ մասնիկներ ու նախամասնիկներ ներմուծելու դրության, խճողում են բառի պարզ կազմությունը, ինչպես՝ աֆրիկյան լեզուները։

4) Կատարյալ չեն կարող կոչվել այն լեզուները, որոնք ունեն շեշտ, մանավանդ անկանոն շեշտ, ինչպես անգլերենը։

5) Կատարյալ չեն կարող կոչվել այն լեզուները որոնք քերականական առանձնահատկություններ չունեն և չգիտեն բնավ հոլովմունք ու խոնարհմունք։ Այսպես՝ միավանկային լեզուները։

6) Վերջապես՝ կատարյալ չեն կարող կոչվել այն լեզուները, որոնք բառերի նշանակությունները դանազանելու համար ոտնձգություն են գործածում իրրև միջոց. այսպես՝ չինարենը, աննամերենը և այլն։

*Այս վերացական դատողություններից հետևելով, մենք ոչ մի լեզու չենք կարող գտնել, որ բոլոր կետերին բավարարի, այսինքն՝ վերծ լինի այն բոլոր «արատներից», որոնք թվեցինք։ Միայն

անգլերենը և պարսկերենը կարող են մասամբ մոտենալ վերի պահանջները բավարարելուն։ Երկուսն էլ զուրկ են սեռից և ունեն չափազանց պարզ ու համառոտ քերականություն։ Արգելք չէ այն հանգամանքը, որ այս երկու լեզուներն էլ հակառակի նման շատ վատ ուղղագրություն ունեն։ Ուղղագրությունը լեզվի արտաքին և ձևական կողմն է և ամենևին գործ չունի լեզվի ներքին կազմի, խոսողության հետ։ Պարսկերենը միանգամից կվերացնի այդ դժվարությունը, երբ ընդունի լատինական ուղղագրությունը։ Բայց արգելք է այն հանգամանքը, որ անգլերենը ունի մի քիչ անկանոն շեշտ. պարսկերենը չունի անկանոն շեշտ. բայց բայերի խոնարհման մեջ վերլուծական կազմություն չունի, մինչդեռ անգլերենը քիչ հոլովման, և քիչ խոնարհման մեջ բոլորովին վերլուծական է։ Արգելք է նույնպես այն հանգամանքը, որ այս երկու լեզուների մեջ էլ մեծ քիվ են կազմում անկանոն բայերը։ Այսպիսով, սրանք էլ չեն բավարարում վերի պահանջներին և հետևաբար լեզվի բացարձակ կատարելություն չեն։ Վերի պահանջները միայն վերացական բնույթ ունեն։

[Մյուս կողմից, երբ ի հակառակն պատելով և իրականությունից ելնելով, հիշենք, որ այդ երկու լեզուների դեմ կանգնած է ժամանակակից ամենազարգացած լեզուների հոծ բազմություններ, ինչպես ռուսերեն, հայերեն, վրացերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլն, որոնցից շատերը ունեն սեռ, մի քանի հոլովմունք, անկանոն շեշտ և մյուս հատկություններ, որ քիվեցինք իբրև կատարելությունը բացառող հատկանիշներ, պետք է ընդունենք, որ հիբրավի լեզվի կատարելությունը որոշելու ընդհանուր չափանիշ չկա։ Ամեն մի լեզու հնարավորություն ունի լիովին արտահայտելու այն, ինչ կարող է մտածել նրանով խոսող մարդը. այդ պատճառով էլ ամեն մի լեզու այնքան զարգացած է, որքան նրանով արտահայտված մտածողություններ։ Իսկ դա արտահայտվում է ոչ քիչ վերլուծական կամ համադրական կառուցվածք ունենալով, այլ բառապաշարով, որի մասին վերը խոսվեց։ Ինչ վերաբերում է լեզվի առաջընթացին, ապա նա միշտ էլ առաջադիմում է ու կատարելագործվում։ Նրա ամեն մի նոր որակական վիճակը հինից ավելի բարձր է։]

* * *

Այն բոլոր հատկությունները, որ նկարագրեցինք վերևում, մասամբ արտաքին են, մասամբ՝ ներքին: Ներքին հատկությունները նկատելի և հասկանալի են միայն նրանց, ովքեր գիտեն լեզուն, իսկ արտաքին հատկությունները նկատելի են նույնիսկ նրանց, ովքեր չգիտեն բնավ այդ լեզուն: Այսպես՝ ներքին հատկություններ են լեզվի մաքրությունը, պարզությունը, հստակությունը, ճոխությունը և այլն, իսկ արտաքին հատկություններ են լեզվի գեղեցկությունը (ներդաշնակություն, հնչականություն) և համաոտությունը (տես վերը դրված նմուշները):

ԳԼՈՒԽ ԺԱ

ՕՏԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինքնաբանության իդեալը այն է, որ որևէ լեզու առանց ենթարկվելու որևէ արտաքին ազդեցության, որևէ ուրիշ լեզվի հարաբերություններից ազատ՝ ապրած լիներ անկախ ու անջատ, որպեսզի կարելի լիներ իմանալ լեզվի բնական ամման բնթացքն ու վախճանը, իմանալ, թե ինչ պրցյուններից պիտի բխեր, որ ճանապարհով պիտի գնար և ինչ արդյունքի պիտի հասներ։ Բայց այսպիսի երևույթ չկա։ Այդ իդեալը լոկ երազ է։ Չկա աշխարհում մի ժողովուրդ, որ իր գոյության ամբողջ ընթացքում բոլորովին անջատ ու մենակ ապրած լինի։ Բոլոր ժողովուրդներն էլ փոխադարձ հարաբերության մեջ են և այդ հարաբերություններից է կախված լեզուների բախտը։ Դա պատմական անհրաժեշտություն է։ Այդ հարաբերությունները կարելի է վերածել հետևյալ տեսակներին.

1. Երկու ժողովուրդ ապրում են իրրև հարևան, երկուսն էլ անկախ, փոխադարձ բարեկամական և տնտեսական ու քաղաքական հարաբերության մեջ. օրինակ՝ հայերը, վրացիները ու պարսիկները։

2. Երկու ժողովուրդ հարևան չեն իրար հետ, բայց հարաբերության մեջ են. մեկը կրում է մյուսի ազդեցությունը՝ գրական, կրթական, քաղաքակրթական կամ կրոնական տեսակետով, այսպես՝ աֆղանները և արաբները, կամ հայերը՝ Թյուրքիայում, և ֆրանսիացիները։

3. Մի ժողովուրդ ապրում է մի ուրիշի հպատակության տակ, օրինակ՝ հայերը հետում պարսկական, արաբական հպատակության տակ, կամ կազմում է մի փոքր գաղութ մի ուրիշ երկրի մեջ, ուրիշի հպատակության տակ. օրինակ՝ հայերը Ավստրիայում կամ Ամերիկայում և այլն։

4. Երկու ժողովուրդ ապրում են միասին, բայց երկուսն էլ մի երրորդի իշխանության տակ. օրինակ՝ հայերը և ասորիները Պարսկաստանում։ Կան երկրներ, որ այս տեսակետից ներկայացնում են մի զարմանալի խառնավայր, այսպես՝ Պալխոը, Բալկաններն և այլն, ուր ապրում են տասնյակ ժողովուրդներ միասին։

5. Իրրև հաղվադեպություն, բայց ապագայի համար ամբողջ աշխարհում սովորական դառնալիք օրինակ կարելի է տալ այն, երբ երկու և ավելի ժողովուրդներ ապրում են միասին կողք կողքի, բոլորն էլ անկախ և կուլտուրական ու պետական հավասար պայմաններում։ Այսպես է այժմ Կովկասը և ընդհանուր Սովետական Միությունը։

Լեզուն իրրև մի հասարակական երևույթ՝ անկարող է ճնշել առանց ազդվելու այս բոլոր պայմանների մեջ էլ, թեև տարբեր աստիճաններով։

Առաջին խնդիրը, որ առաջանում է ժողովուրդների փոխադարձ հարաբերությունից, կայանում է հաղորդակցության մի միջոց գտնելու մեջ, քանի որ այդ է հասարակության պահանջը։ Նայած ազգերի հարաբերության տեսակին ու աստիճանին, վճռվում է և խնդիրը։ Առաջին պայմանում՝ հարևանները փոխադարձաբար սովորում են միմյանց լեզուն՝ սահմանամերձ վայրերում։ Երկրորդ պարագային ազգերը կրում են իրենցից կուլտուրապես բարձր ժողովրդի ազդեցությունը, ինչպես հայերը՝ ռուսների, թյուրքերը և աղվաններն՝ պարսիկների, պարսիկները՝ արաբների և այլն, ուսումնականները սովորում են կուլտուրական լեզուն՝ առանց սակայն կորցնելու իրենց մայրենի լեզուն, իսկ, որ գլխավորն է, զանազան բառեր կուլտուրական լեզվից անցնում են մյուսին։ Այս կարգի բառերը կոչվում են օտար կամ փոխառյալ բառեր, որոնց մասին պիտի խոսենք քիչ հետո։

Երրորդ պարագային՝ նվաճված ազգը սովորում է տիրող լեզուն և դառնում է երկլեզու (այսպես՝ հայերը ամբողջ աշխարհում, մինչև 1920 թվը և դեռ այժմ էլ՝ Սովետական Միությունից դուրս), նույնպես և՝ տիրողի լեզվից զանազան բառեր անցնում են նվաճվողի լեզվին։ Երկլեզվյան ժողովուրդներ շատ կան աշխարհում. այս կարգին պատկանում են բոլոր փոքր ազգությունները, այսպես՝ հայերը, հույները և քրդերը՝ Թյուրքիայում, ասորիները՝ Պարսկաստանում, զանազան ազգային փոքրամասնություններ՝ Ավստրիայում և Բալկաններում, սորբները, որոնք սլավոնական մի ժողովուրդ են Գերմանիայում։

Երկլեզվյան ժողովրդի մի տարօրինակ պատկեր են ներկայացնում Փոքր-Անտիլյան կղզինները, ուր տղամարդիկ խոսում են առանձին լեզվով, իսկ կանայք և երեխաները՝ տարբեր լեզվով։ Այս տարօրինակ երևույթի պատճառը հետևյալն է։ Այդ կղզինները նախապես բնակված էին արաւակ կոչված ժողովրդով. իսպանական արշավանքից քիչ առաջ Կիխանայի կարայիբները (կռվող տղամարդիկ) արշավեցին նրանց վրա, ամբողջ արական տղաքարնակութիւնը կոտորեցին, իսկ կանանց իրենց կին դարձրին։ Կանայք շարունակեցին իրենց հին լեզուն (արաւակերենը), իսկ տղամարդիկ՝ իրենց լեզուն (կարայիբերենը)։ Տարօրինակն այն է, որ 400 տարվա ընթացքում գեռ խառնուրդ կամ ձուլում տեղի չի ունեցել և երկու լեզուները իրար կողքի ապրում են այսպիսի զարմանալի հանգամանքում[1]։

Երկլեզվյան ժողովուրդների մի ուրիշ հետաքրքրական պատկեր է ներկայացնում Ջավան, ուր իշխանավարները խոսում են առարտքյալների հետ նգոկո (ngoko) լեզվով, իսկ առարտքյալը պատասխանում է կրոմո (kromo) լեզվով։ Այսանդ էլ ուրևէ մի նվաճող ցեղ, որի լեզուն, ավելի ճիշտ բարբառ՝ բարձրացել է իշխանավորական պատվի, իսկ նվաճվածների բարբառը մնացել է ցածր խավի հետ։

Երբ նվաճած ժողովուրդը երկար կենակցութեամբ ընդունում է նվաճողի լեզուն, պետք է ենթադրել մի շրջան, երբ նա երկլեզվյան էր, այսինքն՝ խոսում էր քե տիրողների լեզվով, և քե իր մայրենի լեզվով։ Եվ որովհետև երկու լեզու ունենալը մարդի ձանրաբեռնութեան է, ուստի մեկը ջնջվում է և այդ մեկը լինում է սովորաբար նվաճված ժողովրդի լեզուն։

Իրար նման լեզուները ավելի հեշտութեամբ են հալվում ու միանում իրենցից ավելի զորավորի հետ, քան նրանք, որոնք ծագումով ու կազմավորմամբ շատ տարբեր են։ Այսպես, օրինակ՝ արամեերենը, ասորերենը, եբրայեցերենը և այլ սեմական տարբերուններ լեզուները հենց որ բնական արտարական տիրապետութեան

---

[1] Jespersen, language, էջ 238, բավական մանրամասն քննելով այս խնդիրը, գտնում է, որ երևույթը չափազանցված է. իրապես երկու տարբեր լեզու չկա այդպես, այլ մի, որովհետև երկուսի բնականութեան մեջ մնացել է միայն քե կանայք չեն գործածում որոշ բառեր, որոնց գումարը լեզվի հազարակաց բառերի միայն մեկ տասնհազարդ մասն է կազմում։ Այսպիսով՝ անթիլյանների երկլեզվութեան վերածվում է տարուն, որի մասին արդեն խոսել ենք։

տակ՝ շատ շուտով ջնջվեցին, որովհետև չափազանց նման էին արաբերենին։

Ինչ էլ լինի, սակայն, նվաճողների լեզվի ազդեցությունը իրենց աշխարհագրական սահմաններից այն կողմ չի անցնում. մինչդեռ քաղաքակրթական ազդեցությունը տանում է լեզուն իր սահմաններից շատ հեռու։ Այսպես՝ թյուրքերենի ազդեցությունը տարածվում է Թուրքեստանից մինչև Բալկանները և ավելի այն կողմ չի գնում. իսկ հույն լեզվի ազդեցությունը սփռված է ամբողջ աշխարհի վրա։ Նմանապես՝ միայն նվաճմամբ ձեռք բերված ազդեցությունը խոր և տևական չէ, մինչդեռ կուլտուրականը՝ ընդհակառակը։ Այսպես՝ աքեմենյան պետությունը, որ 200 տարի իր բռունցքի տակ պահեց Հնդկաստանից մինչև Եգիպտոս և Կասպից ծովից մինչև Պարսից ծոց, լեզվական տեսակետով ոչ մի ազդեցություն չունեցավ, որովհետև չուներ գրականություն, իսկ ողորմելի արամերենը, իր ճոխ գրականության պատճառով, ամբողջ Արևելքի մտավոր կյանքի վրա ազդեց և մանավանդ երբայեցերենը, իր Աստվածաշնչով՝ համաշխարհային ազդեցություն գործեց։

Երբ քաղաքակրթություն է պատճառ ազդեցության, այլևս ցեղական և ազգային խորություն չկա, լեզուն կարող է ազդել ծագմամբ բոլորովին տարբեր մի ժողովրդի վրա. թյուրքերենը խառնուրդ է մեծամասամբ պարսկերենի և արաբերենի, որոնք ոչ միայն ցեղով տարբեր ժողովուրդների լեզուներն են, այլև լեզվական հորինվածքությամբ բոլորովին տարբեր, այնպես որ թյուրքերենի բառապաշարը երեք տարբեր լեզուների բառերի գումարն է։

Զորրորդ պարագային՝ երկու ժողովուրդները միմյանց լեզու չեն սովորում, և իրրև հաղորդակցության միջոց ծառայում է սիրուղի լեզուն, որ սովորում են երկուսն էլ։ Այսպես՝ թյուրքիայում՝ հայերի ու հույների միջև՝ թյուրքերենը, հայերի ու ասորիների միջև՝ թյուրքերենը և այլն։ Այսպիսով երկուսն էլ դառնում են երկլեզու։ Կարող է պատահել նաև, որ այս պարագային էլ երկու հպատակ ժողովուրդների հարաբերությունը այնքան սերտ լինի միմյանց հետ, որ շատերը փոխադարձաբար սովորեն իրար լեզու, երկու լեզուները ազդեն միմյանց վրա, և երկու կողմից էլ տեղի ունենան փոխառություններ։ Այսպես հայերը և քրդերը, երկուսն էլ նվաճված թյուրքերից, բայց իրար հետ հարևան, ունեն փոխադարձ փոխառություններ։

Կեսարիայի հույները ունեն հայերենից փոխառյալ բառեր, քեև Կեսարիայի քե հայերը. և քե հույները Բյուրքերի իշխանության տակ և Թուրքախոս ժողովուրդներ էին Կեսարիայում։

Հինգերորդ պարագայի համար մենք այժմ օրինակ կարող ենք առնել միայն Շվեյցարիան։ Այստեղ տեսնում ենք, որ լեզուների մրցման հարցում վճիռը տալիս է անհատական մրցումը։ Շվեյցարիայում անհատական աճման, զարդացման ու մրցման հետևանքով այսինչ գյուղում գերմաներենն է դուրս մղել ֆրանսերենը, այսինչ գյուղում, ընդհակառակը, ֆրանսերենն է դուրս մղել գերմաներենը։

Նման օրինակներ, քեև ոչ նույն, կարելի է գտնել նաև ուրիշ տեղեր.— Հյուսիսային Ֆրանսիայում բրետաներեն և ֆրանսերեն լեզուները ապրում են կողք-կողքի, ոչ մեկի համար առանձին պաշտպանություն ցույց չի տրվում. երկուսն էլ հավասար են, բայց բրետաներենը տեղի է տալիս ֆրանսերենին. ծովի եզերքում և մեծ քաղաքներում բրետաներենը ընկել է, իսկ գյուղերում և լեռներում դեռ իշխում է։ Այստեղ էլ պատճառը զերադանցապես անհատականն է։

Ամերիկայում, ուր հավաքված են ամեն տեսակի ազգեր, բոլոր լեզուները տեղի են տալիս անգլերենին, նույնիսկ՝ գերմաներենը։ Պատճառը այստեղ անգլիախոս տարրերի թվական առավելությունը և զանազան տարրերի միջև մի միջազգային լեզու ունենալու անհրաժեշտությունն է։

Լեզվի պահպանության և մրցման մեջ դիմանալու միջոցներից մեկն էլ ազգային զգացմունքն է։

Բելգիայում դեմ-դեմի կանգնած են ֆրանսերենն ու ֆլամաներենը։ Երկուսն էլ բնիկ տարրեր են և ոչ մեկը ոչ մեկի դեմ թշնամական զգացմունք չունի։ Բայց որովհետև ժողովուրդը ազգային սեփականություն է համարում ֆրանսերենը, ուստի սիրում է այն, և տարածվում է։ Իտալիայում սեզական լեզուն կռվում է անգլերենի հետ և հաղթում՝ դուռ ազգային պատճառներով։

Վերևում հիշված 4 պայմանները մշտապես պարտադիր չեն մեկնույն ազգի համար։ Փոխվում է ազգերի ճակատագիրը, փոխվում են և նրանց հարևանական հարաբերությունները մյուսների հետ։ Այսպես՝ վրացիները նախապես անկախ հարևաններ էին հայոց հետ. մի ժամանակ բնկան հայոց իշխանության տակ (Տիգրան մեծ և այլն)։ Թեև անկախ, բայց կրում էին հայոց

Հունաար-հրոնական մեծ ազդեցությունը մինչև 551 թ., ապա Երկուսով ընկան պարսիկների, հույների և արաբների իշխանության տակ. նորից կազմեցին անկախ պետություն և իրենք նվաճեցին հայերին (ԺԲ դար), կրեցին միասին պարսիկների, թյուրքերի և ռուսական ցարիզմի լուծը երկար ժամանակ և 1920 թվին ձեռք բերին անկախություն սովետական կարգեր հաստատելու շնորհիվ։

Այս զանազան պայմանների և հանգամանքների համեմատ զանազան է լինում նաև լեզվական փոխադարձ ազդեցությունը. այսպես՝ ունենք բազմաթիվ փոխառություններ հայերենից վրացերենին, վրացերենից հայերենին, օտար լեզուներից թե՛ վրացերենին, և թե՛ հայերենին։

Ի՞նչ էլ լինի լեզվի ազդեցության ուժը, տեսակը, պայմաններն ու տևողությունը, օտար ազդեցությունը պետք է արտահայտվի մի լեզվի մեջ հետևյալ ձևերով՝

1. Փոխառյալ բառեր.
2. Ոճեր և դարձվածքներ.
3. Քերականություն և շարադասություն.
4. Մասնիկներ.
5. Ձայներ (հնչյուններ)։

Փոխառյալ բառերը օտար ազդեցությունների մեջ ամենից ցայտունն են. չկա ազգ, որ այս կամ այն լեզվից որոշ թվով փոխառություններ չունենա, և նրանց թիվը օրեցօր աճում է, քանի աճում են միջազգային հարաբերությունները։ Հայերենը ունի բազմաթիվ փոխառություններ եվրոպական և ասիական զանազան լեզուներից։ Թյուրքերենի մեջ, ուր բոլոր բառերի թիվը հաշվեցի 29 326, միայն 6 812 բառն է թյուրքական ծագումով, ճացյալը՝ մեծամասամբ՝ արաբերեն և պարսկերեն, փոքր չափով հունարեն, իտալերեն, ավելի քիչ ֆրանսերեն, այնպես որ փոխառությունների թիվը մոտ 4,5 անդամ գերազանցում է բնիկ տարրից։ Այսպիսով՝ թյուրքերենը իր բառարանի մեջ ներկայացնում է իրար բոլորովին անհարիր երեք տարբեր լեզվական դրությունների (ալթայական, հնդեվրոպական և սեմական) տարրեր։ Ռուսերենը ունի գերմանական, ռոմանական, նույնիսկ թյուրքական փոխառություններ։ Ալբաներենը խճողված է թյուրքական, հունական, սլավոնական ու իտալական փոխառություններով, այնպես որ լեզվի 5 150 արմատից 1 420 հատը

ռոմաններեն է, 1180 հատը՝ իտալերեն, 840՝ հունարեն, 540՝ սլավոներեն, ուրեմն՝ 3980 բառ օտար փոխառություն, և միայն 400 բառ բնիկ ալբաներեն, իսկ մնացյալ 770 բառն էլ անծանոթ ծագումով։ Բրգերենի մեծագույն մասը օտար է. այսպես և՝ անգլերենը, որի $^3/_4$ մասը ֆրանսերեն և գերմաներեն է։ Գերմաներենը ունի բազմաթիվ փոխառություններ ֆրանսերենից՝ սկսած ԺԲ դարից։ Ռումիներենի մեջ փոխառյալ բառերի քանակը (հուն, իտալերեն և սլավ) շատ ավելի մեծ է, քան բնիկ բառերինը։ Կորեական բառարանում կա 58717 բառ. սրանցից 40000-ից ավելին չինարեն է, որը անում է 75% (Холодович, էջ 15)։

Փոխառյալ բառերը բաժանվում են երկու տեսակի՝ գրական և ժողովրդական։ Առաջինները այն փոխառություններն են, որ կատարվում են գրքերի միջոցով, սովորաբար ներում են ուսումնականների շրջանում և շատ քիչ միայն թափանցում են ժողովրդի մեջ։ Բնականաբար այս կարգի փոխառությունները կատարվում են քաղաքակիրթ ազգերից։ Այսպես, օրինակ՝ հին ժամանակ հունարենը, նետո լատիներենը քաղաքակրթության միակ լեզուներն էին Արևմտյան ազգերի համար։ Արևելքում արաբերենն ու պարսկերենը, իսկ Հեռավոր Արևելքում հնդկերենն ու չինարենը խոշոր ազդեցություն են գործել դանազան ազգերի վրա։ Մեր վրա քաղաքակրթության տեսակետից մեծ ազդեցություն են ունեցել հունարենը, մի քիչ էլ՝ ասորերենը. առաջիններից ունենք բազմաթիվ գրական փոխառություններ. սրանից ավելի քիչ՝ երկրորդներից։ Հունարենը մեծ ազդեցություն ունի և այժմ գիտության մեջ և, ինչպես հայտնի է, բժշկական բառերի մեծագույն մասը կազմվում է հունարենից, մինչդեռ քիմիական, դեղաբանական և բուսաբանական բառերը կազմվում են լատիներենից։ Եվրոպական այս կարգի կազմությունները ազատորեն մտնում են նաև մեր լեզվի մեջ։

Երբ ռուսաց Գեւտական Դումայում բարձր կրթություն ստացած պատգամավորները բեմից գերմաներեն, ֆրանսերեն և լատիներեն բառերով ճոխացրած իրենց փքուռուչ ճառերն էին ասում, գյուղական պատգամավորները խնդրում էին պարոններից, որ մի քիչ էլ ռուսերեն խոսեն, որ իրենք էլ հասկանան։

Այժմ էլ, երբ որոշ ճառախոսներ պերճության հետևից ընկնելով, սովորական, հասկանալի հայերեն բառերի փոխարեն գոր-

ծածում են միջազգային անհատականալի բառեր, բնականաբար լսողները քիչ են հասկանում նրանց ճառից[1]։

Նման ուսումնական փոխառությունների ժողովրդին անմատչելի լինելու ապացույցներից մեկն էլ հնչական դանդաղությունն է. Եսպերսընը (Growth, էջ 132) ասում է, որ անգլ. gaseous բառը գիտուններին մի ժողովում կանոնավորապես 6 տարբեր տեսակ է արտասանվել. hegemony և phthisis բառերից յուրաքանչյուրը դանդաղ բառարաններում մինչև 9 տեսակ արտասանություն ունի։

Արեին ուսումնական փոխառությունների լավագույն օրինակը տալիս են Թյուրքերենն ու պարսկերենը. արանց մոտ գրագետները արաբերեն բառերի ամենաճշգրիտ փոխառությամբ կազմել են մի այնպիսի խրթին լեզու, որ ժողովրդին բոլորովին անհասկանալի ու անմատչելի է։ Օրինակներ այս լեզվից՝ մի քիչ հետո։

Այս կարգի խրթին օտարախառն լեզուների դեմ ամեն տեղ էլ պայքար կա այժմ։ Անգլերենում XIX դարից սկսում է պայքարը ի նպաստ սաքսոնական բառերի, և Տեննիսոնը պարծենում է, թե ինքը բոլոր բանաստեղծներից պակաս լատիներեն բառեր է գործածել (Jesperson, Growth, էջ 135)։ Թյուրքիայում ժողովրդական շարժումը սկսավ 90-ական թվերին և հանրապետական Թյուրքիայում իրագործվեց։ Պարսկաստանում էլ կա նույնպիսի շարժում, բայց դեռ իրական ձև չի ստացել։

Փոխառության համար մեծ աղդակ է եղել կրոնը. հայերը և պարսիկները երկուսն էլ հավասարապես գտնվում էին արաբական գերիշխանության տակ, բայց պարսիկները անհամեմատ ավելի ազդվեցին արաբներից, քան հայերը։ Հայերը իրենց գիրը, գրականությունը և լեզուն անաղարտ պահեցին, իսկ պարսիկները իրենց սեփական գիրը ջնջեցին, գրականությունը այրեցին և այլևս պարսկերեն չգրեցին, այլ արաբական այբուբենը վերցնելով՝ արդեն արաբերեն գրեցին, խոսակցության մեջ կիսովին արաբ բառեր ու արտահայտություններ յուրացրին։ Հայերը ունեն 702 փոխառյալ բառ արաբերենից, բայց սրանք ամենամեծ մասամբ ուսումնական բառեր են, մեծ մասը բժշկական, գրքերի մեջ միայն կան, ժողովուրդը չի գործածել,

[1] Այդպիսի «լեզվի» մի պարզանալի օրինակ բերում է անգլերենից Եսպերսընը, Growth, էջ 91։

այսօր էլ գործածության հանված են։ Ջեղավ ժամանակ, երբ հայը ձգիր, գիրք, գրիչ» ասելու փոխարեն harf, kitāb, qalam ասի, ինչպես պարսիկն է ասում մինչև այսօր։ Այս բոլորի պատճառը կրոնն է եղել։ Պարսիկները ընդունեցին իսլամը և կրոնի հետ՝ արաբերեն բառերը և գիրը։

Այսպես եղան նաև այն բոլոր ազգերը, որոնք գտնվում են Աֆրիկայի արևմտյան ծայրից մինչև Մալայա։ Բայց Իսպանիան թեև մեծ արաբական լծի տակ, բայց այս դրության չհամաձայնվ, որովհետև պահեց իր կրոնը և իսլամական չդարձավ։

Նույն դրությունը տեսնում ենք Հնդօվար Արևելքում, ուր բուդդայական կրոնի հետ տարածվել է հնդկական և չինական կուլտուրան մինչև Ճապոնիա։

Այսպես ուրեմն, տեսնում ենք, որ պատմության մի շատ երկար ժամանակամիջոցում կրոնի հետ կապված է եղել կուլտուրան, որա հետ էլ՝ գիրը։ Արաբական այբուբենը տարածվեց Աֆրիկայից մինչև Մալայա, բոլոր իսլամ ժողովուրդների մեջ։ Նույնիսկ հնդիկները, որոնք սքանչելի դևանագարի (սանսկրիտ) այբուբենն ունեին, երբ մահմեդական դարձան, թողեցին այն և արաբական աղքատ ու պակասավոր այբուբենն ընդունեցին։

Ժողովրդական փոխառությունները կատարվում են կենդանի կերպով՝ բերնից բերան և շատ ավելի կարևոր են լեզվաբանական տեսակետով, քան նախորդները։ Գլխավորապես նմանված ազգերն են, որ վերցնում են տիրող լեզվից զանազան բառեր, որոնց քիվը զանազանվում է տիրողների կուլտուրական աստիճանի և տիրապետության տևողության ու նմանյալների հակադրեցության համեմատ. այսպես՝ հայերը նմանվելով պարսիկներից, հռոմայեցիներից, հույներից, արաբներից, թյուրքերից՝ փոխ են առել նրանց լեզվից բազմաթիվ բառեր, մեկից՝ ավելի, մյուսից՝ պակաս։

Միայն նմանված ժողովուրդը չէ, որ ազդվում է տիրոջից. շատ անգամ տիրող ժողովուրդն էլ փոխադարձաբար ազդվում է նմանված ժողովրդից։ Այս ազդեցությունը այնքան մեծ է, որչափ մեծ է նմանված ժողովրդի քաղաքակրթությունը տիրոջի համեմատությամբ։ Հնդիկները, տիրելով Հնդկաստանի բնիկներին, փոխ առին նրանցից զանազան բառեր, ինչպես՝ արոր մի տեսակ (BSL, 24, 118), շաքար, փիղ, փղոսկր և այլն։ Հռոմայեցիք, տիրելով հույներին, փոխ առին նրանցից շատ բառեր։ Թևտոնական զանազան ցեղեր դրավեցին հռոմեական գավառ-

ները և, նրանց մեջ հաստատվելով, կորցրին իրենց լեզուն։ Թյուրքերը, տիրելով հույներին՝ փոխ առին նրանցից շատ ու շատ բառեր. նույնիսկ թյուրքական պաշտոնեության հատկանշական բառը (efendi) փոխառյալ է հունարենից, թյուրքերը փոխառյալ բառեր ունեն նաև հայերենից, թեև դրանց թիվը շատ մեծ չէ համեմատությամբ հունարենից փոխառյալ բառերի, ինչպես, օրինակ՝ փեթակ, խաչ, չափ, յուղ և այլն։ Գավառական թյուրքերենի մեջ հայերեն փոխառությունների թիվը հարյուրների է հասնում (ինչպես՝ հիմ, առաստաղ, ավանակ, շնորհք, ջրորդան և այլն)։ Ռուսները, իրրև շատ ավելի քաղաքակիրթ ժողովուրդ, քան հայերը, չազդվեցին նրանցից. այնուամենայնիվ Կովկասի ռուսերի մոտ գտնում ենք մածուն, կարաս, լավաշ բառերը։ Դանձակի Բորխովկա գյուղի մալականները գործածում են ադրբեջաներենից փոխառված շավտալ «գեղձ», չվալ «պարկ», բախմեջ, «սուպ», չարեք «չափ է», խուրջին «պարկ», լորի «լոբի», կարաուզ «կարոս», ազատքեղ, օրաղ «մի տեսակ մանգաղ», սելավ «հեղեղ» (մեռնելու մոտ է ռուս. ливень համանիշը) բառերը և հայերենից փոխառությամբ՝ ցակատ «ցաքատ»[1]։

Աստրախանի ռուսները գործածում են հյ. պանիր բառը՝ տեղական սալիտակ պանիրը նշանակելու համար, իսկ ռուս. сыр — եվրոպական պանիրները նշանակելու համար։ Հետաքրքրական էր քննել այս տեսակետից Հայաստանում հաստատված ռուս բնակչության (մալականների) լեզուն։

Ավելի հետաքրքրական են այն բառերը, որոնք առևտրի ու արհեստների միջոցով ազդից ազդ և լեզվից լեզու են անցնում։ Այսպես՝ վաճառականության մեջ զանազան տպրանքներ, հատկապես նոր նյութեր, նոր պտուղներ, անծանոթ բույսեր, որոնք ներմուծվում են նոր երկրներ, կրում են իրենց բնիկ երկրի բառը. ինչպես՝ չինական թեյը կամ չայը, չեշուճչան, իտալական մակարոնը, արաբական կոֆեն, հնդկական փուճչը, պարսկական թութը, ճասմիկը, պիստակը, ամերիկյան կակաոն, վանիլը, Մեքսիկայի տոմատը և շոկոլադը և այլն։ Նույնպես նաև անծանոթ կենդանիների անուններ, ինչպես՝ կապիկ, վագր, փիղ, կոկորդիլոս կամ ճռճռ, շիմպանզե (Աֆրիկայից), որանգ-ուտանգ (Մալայան), կենգուրու (Ամերիկայից) և այլն։ Նոր դյուտերի միջո-

[1] Հազորդեց Սիլիչ Առաքելյան, մեր համալսարանի շրջանավարտներից (նամակ 1929 թ. նոյեմբ. և 1933 մարտի 18)։

ցավ ներմուծված ապրանքները, ինչպես՝ գրամոֆոն, ֆոնոգրաֆ, կերոսինկա և այլն։ Ռուսաց սամավարը տարածվում է ամեն կողմ։ Ֆրանսիան տալիս է մեզ մոդայի վերաբերյալ բառեր, ինչպես նաև խոհանոցային արվեստի հետ կապված բառեր և գաստրոնոմների անուններ (բուֆետ, ռեստորան, կաֆե, մենյու, սուպ, կոտլետ, անտրիկոտ, վինեգրետ, և այլն)։ Վաճառականության և հաշվապահության վերաբերյալ բառերը իտալական ծագում ունեն (բանկ, բանկրոտ, բալանս, գրաֆիկ, դուկատ, ֆլորին և այլն)։ Իտալական են բոլոր երաժշտական բառերը (piano, allegro, andante, solo, basso, soprano, opera և այլն)։ Առողջապահական, մաթեմատիկական, քիմիական և այլ գիտական մի խումբ բառեր ծագում են արաբերենից. ինչպես՝ ալգեբրա, զերո, ազիմուտ, զենիթ, ալկոհոլ, ալկալի, տարիֆ և այլն։

Մեր ժամանակներում հատկապես նոր երևույթների, ինչպես և գիտության ու տեխնիկայի վերաբերյալ շատ բառերի աղբյուրը ռուսերենն է։ Նավային բառերը հնարավոր չէ փոխ առել ցամաքային բառերից և հետո փոխանցել հատկապես նավային բառերը իտալերեն, անգլերեն և հունարեն են։ Գոլորշով գործածված ձկների անունները, քիմիական տարրերի, և քիմիական միջ, հունարեն են, ինչպես՝ իտրիումբիա, իլիֆէր, բզմարիա, բատավրիա, բենթալ, արէրիա, փալամուտ, շիրոզ, վարօս, միտիա, փավուրիա, սարիտիա, շաղաշոզ և այլն, բան որում ձկնորսության հունական արտահայտ է եղել կոչակարական և ռակերչական բառերը գործյալ Գոլորշով իտալերեն և հունարեն են, ինչպես՝ մասկարէտա, ռասպա, լիմա, բարօքի, լուբէն, ֆացէտա և այլն, որից հետևում է, որ այդ արհեստները իտալացիներից անցել են հույներին և ապա՝ հայերին։ Իտալերեն են նաև դեղագործական բառերը, ինչպես՝ ռէչէրա, սիրուպա, սօլֆարօ, բևարքա, սօդա և այլն։ Հին հայոց մեջ բոլոր բժշկական բառերը արաբերեն էին, որից հետևում է, որ բժշկությունը արաբերենի միջոցով մտավ Հայաստան։

Կան բառեր, որոնք զարմանալի ճամբորդություններ են կատարում երկրից երկիր և ազգից ազգ. բնատնի կանկառը արաբերեն կոչվում է al-ḫaršaf. այս բառը անշուշտ նյութի հետ անցավ նաև Իսպանիա և այնտեղ դարձավ իսպան. alcachofa. այստեղից գնաց Իտալիա և վերածվեց իտալ. articiocco. այստեղից անցավ Ֆրանսիա և եղավ հին ֆր. artischault, նոր ֆրանս. ar. tichaut, հոլլ. artisjok, անգլ. artichoke և ԺԶ դարի կեսին Եվրո-

ցարխայի վրայով Գերմանիա մտնելով՝ դարձավ հին գերմ. artschoke, erdschocke, *նոր գերմ.* Artischocke, *վերջապես Գերմանիայի վրայով էլ Ռուսաստան մտնելով՝ եղավ ռուս.* артишок. *Նույն բառը միջին դարում Իտալիայից Կիլիկիա էլ է անցել և դարձել մհյ.* արտիճուկ:

Արաբ. mockayyar *բառը, որ մի տեսակ կերպասի անուն է, միջին դարում մտնում է Իսպանիա և Ֆրանսիա. այստեղ դառնում է Ֆրանս.* mocaiard. *Իսպանիայից մտնում է Անգլիա, ուր լինում է* mockaire, *հետո՝* mohair. *ԺԶ դարում նույն անգլերեն բառը մտնում է Ֆրանսիա և դառնում* moire. *ԺԹ դարի վերջում անգլերեն բառը դարձյալ մտավ Ֆրանսիա և այս անգամ, մի քիչ տարբեր իմաստով, դարձավ* mohair. *Ինչպես Ֆրանս.* moire *բառը անցավ Անգլիա, ինչպես և ուրիշ զանազան երկրներ:*

Ֆրանս. fleurette, bogète *«փոքր քսակ» բառերը անցան Անգլիա, այնտեղ դարձան* flirt, budget, *որոնք իրենց հերթին վերադարձան Ֆրանսիա և ամեն տեղ տարածվեցին:*

Փոխառությունները լինում են ուղղակի և անուղղակի. մի բառ մի լեզվից ճամբա ընկնելով՝ կարող է անցնել լեզվից լեզու և հասնել մի շատ հեռավոր երկիր: Այսպես՝ հյ. օրինակ բառը անցնելով թյուրքերենին (örnek), *այստեղից մտել է Բալկաններն և տարածվել զանազան լեզուների մեջ: Նարինջ բառը դուրս գալով Հնդկաստանից՝ անցել է Պարսկաստան, հետո Արաբիա, որոնցից էլ՝ Հայաստան: Այսպիսի ճամբորդություններ արել են նաև* նարակ, նարտ, պատինճան, շաքար *և այլն: Թեյ բառը չինարենից անցել է մալայերենին, այստեղից եվրոպացիներին, որոնցից էլ հայերին. բայց միևնույն բառը Հյուսիսային Չինաստանից մտել է Թաթարստան, այնտեղից՝ Ռուսաստան և Պարսկաստան, և այստեղից էլ նորից Հայաստան, որով բառը ստացել է մեր մեջ երկու ձև՝ թեյ և չայ:*

Գիտական և ժողովրդական փոխառությունները այն գլխավոր տարբերությունն ունեն, որ առաջիններդ գրքերից վերցրած լինելով՝ ներկայացնում են բնաձևի կատարյալ տառադարձություն, իսկ ժողովրդական փոխառությունները, անցած լինելով խոսող ժողովրդի բերանը, նրա ձայնական օրենքների համեմատ կրած են լինում այլևայլ փոփոխություններ: Օրինակ՝ ազգեցիները, վերցնելով ռուսերենից стакан *բառը, դարձրել են* իսթիքյան, *արաբները վերցնելով հն.* πλάτων *անունը, դարձրին*

Aflātūn. *Այս տեսակներից փոխառյալ բառերը շատ օգտակար են լեզվաբանության մեջ՝ որոշելու համար որևէ ձայնական օրենքի ծագման թվականը, տառերի ժամանակակից արտասանության թե փոխառու, և թե փոխատու լեզվի համար, և այլն։ Օրինակի համար ունենք թրք.* dolma *ելիցք կամ խճողակ, որ իբր կերակուրի անուն փոխ է առնված մեր գանազան բարբառներում։ Թրք. բառը թևև այժմ արտասանվում է* dolma, *բայց գրվում է* ṭolma طولمه, *ինչ որ նշան է, թե հին ժամանակ արտասանվել է ṭ-ով։ Ե՞րբ է եղել թյուրքերենի ṭ>d ձայնափոխությունը. թյուրքերեն լեզուն մեջից չունի տառգելու այդ։ Հայերեն բարբառներում բառը հատարակ դոլմա ձևն ունի, ինչպես է նաև արդի թյուրքերենը։ Բայց մեր Արարատյան բարբառը (Երևան, Վաղարշապատ և այլն) այդ բառը արտասանում է* ռօլմա *(և ոչ՝ դոլմա), ուստի և ներկայացնում է թյուրքերենի կորած հին հնչումը։ Որովհետև թյուրքերը 1021 թվին մտան Հայաստան և իրենց լեզուն հազիվ մի դարի սկզբից կարող էր ազդել հայերենի վրա, ուստի բնականաբար ṭ=տ հնչումն էլ այդ ժամանակից է, իսկ ṭ>d ձայնափոխությունը՝ մի դարից հետո։ Ահա այսպես հայերենի մեջ փոխառյալ մի բառ միջոց է տալիս գտնելու մի ուրիշ լեզվի ձայնաբանական օրենքների ծագման ժամանակը։*

Հայերենի մեջ գիտենք, որ ղ հնագույն լ հնչումն ուներ, որին ապացույց են օտար լեզուներից հայերեն և հայերենից դեպի մի օտար լեզու անցած բառերը և անունները. օրինակ՝ հն. Ἀλέξανδρος>Աղեքսանդր, *հյ. աղաղ<պրս.* sālār, *դեկ<աւտր.* lēqā, աղիւս *>վրաց.* ալիգի, Սաղամաս*>պարս.* Sālmās, *Մուշեղ> պրս.* Mušīl *և այլն։ Այս ղ ձայնը հետո ստացավ կոկորդային արդի հնչումը, բայց թև երբ արդյոք տեղի ունեցավ այդ ձայնափոխությունը, հայտնի չէ։ Մեզ իբրև ցուցանիշ պիտի ծառայի թյուրքական* Buγa *(բուն նշ. ցուլ) անունը, որ թ դարում տառադարձված է մեր մեջ Բուղա ձևով։ Սրանից հետևում է, որ ղ>ղ (γ) ձայնափոխությունը արդեն կատարված էր թ դարում։*

Լեզվից լեզու ամեն տեսակի բառեր սպառ և հավասար արագությամբ փոխ չեն առնվում։ Ամենից շատ փոխառնվող բառերը գոյականներն են. մինչև այստեղ տրված բոլոր օրինակներն էլ գոյական էին։ Երկրորդ հերթին գալիս են ածականները, ավելի քիչ են փոխ առնվում բայերը և այն էլ միայն վերջայի

անորոշ ձևով, ինչպես՝ հյ. փաթլամիշ ըլլալ, շաշըրմիշ ըցնել, պրս. raǰa kardan, թրք. add itmek և այլն։ Իսկ դերանուն (ես, դու, նա, մենք, դուք, նրանք), էական բայ և այլն երբեք փոխ չեն առնվում։ Նախադրություն, մակբայ, շաղկապ՝ չափազանց քիչ դեպքերում։ Թվականներից փոխ են առնվում միայն մեծ թվերը, որոնք կուլտուրական մեծ առաջադիմություն են նշանակում։ Այսպես պրս. hazār բառը փոխառյալ է գրեթե բոլոր հյուսիսային կովկասյան լեզուների և հայերենի մեջ. միլիոնը և միլիարդը մտել են շատ բազմաթիվ լեզուների մեջ։ Փոքր թվեր փոխ են առնվում միմիայն մասնավոր դեպքերում. այսպես՝ հայերենի, ինչպես և թյուրքերենի մեջ պրս. yek, du, se, čahar, panǰ, šaš «1—6» փոխ են առնված և գործ են ածվում միայն նարդախաղի մեջ։ Կովկասում սովորություն է լոտոյի ժամանակ թվերը ռուսերեն ասել։ Անգլիայում ինչ-որ խաղի ժամանակ գործածվում են ֆրանսերենից փոխառությամբ ace, deuce, tray, cater, cinque, size ձևերը։ Դանիայում թենիս խաղի ժամանակ թվերը անգլերեն են հաշվում։

Ինչպես ընդի, նույնպես և փոխառյալ բառերը ունեն իրենց ձայնական օրենքները և պատմական ու կուլտուրական պատճառներն ու բացատրությունները։ Որևէ բառ, որ մի կամ մի քանի հնչյունով նման է որևէ ուրիշ լեզվի համապատասխան կամ նույնանիշ մի բառի հետ, չի նշանակում, որ անպատճառ փոխառյալ է մեկի կամ մյուսի կողմից։ Հայերեն ուղի (կարդա ուլի), թրք. yol և չին. lu նման են հնչում, բայց մինը մյուսից փոխառյալ չէ։ Նույնպես և հյ. ուղտ և չին. lôt'o կամ հյ. փոկ «ծովախոզուկ» և ճապոն. fugu «ծովային շուն»։ Այս հանգամանքը ամենք ի նկատի չեն առնում և շարունակ ազդեցություններ է, որ գտնում են իրար հետ բնավ կապ չունեցող լեզուների մեջ։ Օրինակ՝ հայերենից հունգարերեն[1] և ալբաներեն[2] բազմաթիվ փոխառություններ[3]։

Բառերի փոխառության մի ավելի հասարակ ձևն է թարգմանությունը՝ օտար լեզվից մայրենի լեզվին. այսպես՝ քահանա հունարեն կոչվում էր πρεσβύτερος, որ բուն նշանակում է «երեց,

---

[1] *Patrubány*՝ „Sprachwissenschaftliche Abhandlungen" թերթում։

[2] Փառնակ՝ «Անահիտ» մեջ։

[3] Ամեն տեղ և ամեն լեզվի մեջ կարելի է գտնել նմանություններ, դուրգռվելություններ և պատահականություններ, որոնցով կազմվում են հանելուկներ, զվարճալիք և բառախաղեր։ Օրինակ՝ 1453 թիվը գոլխոփ առման

մնձ, ձևրունից (բան արում քանանան հնապես ընտրում էր համայնքի ծերերից), նույնը հայերեն թարգմանվեց երեց, այսպես նաև՝

հայրապետ<հն. πατριάρχης	բնձուղա<հն. καμηλο-πάρδαλις
կողակից<պրս. hampahlū	անգելոսյուր<հն. ἀρνό-κερως
ոանաման<թրք. ayak kabə	քերթող<հն. ποιητής
գլուխ (գրքի)<հն. κεφάλις	աստղարաշխ<հն. ἀστρονόμος
դուռն (գրքի)<արաբ. bāb	

Այս մասին լավագույն օրինակ տալիս է գիտական լեզուն, որ ամբողջ քաղաքակիրթ աշխարհում ծայրէ ի ծայր նույնն է՝ սկսած հին ժամանակներից։ Այսպես են քերականական, փիլիսոփայական, գիտական և այլ կարգի բառերը, լ. conscientia բառացի թարգմանված է գոթ. mith-wissei, հրգ. gi-wizzani, ռուս. сознание, գերմ. Gewissen, հյ. գիտակցություն, և այլն։

Լեզվից լեզու բան թարգմանելու լավ օրինակ է երկաթուղի բառը, որ ունի ֆրանս. chemen de fer, գերմ. Eisenbahn, ռուս. железная дорога, պրս. rāh-ī āhan, թրք. demir yolu և այլն ձևերը։ Անհրաժեշտ չէ կարծել, թե այս բոլորը թարգմանված են ֆրանսերենից, որովհետև ով էլ որ տեսներ այդ ճանապարհը, անպատճառ պիտի ասեր երկաթե ճամբա, ինչպես ասում է և մեր գյուղացին։

Փոխառության մի ուրիշ տեսակն են կազմում իմաստի կամ նշանակության փոխառությունները։ Երբ մի լեզվի մեջ այս ինչ բառը ունի երկրորդական մի իմաստ, փոխառու լեզուն էլ իր համապատասխան բառին տալիս է նույն երկրորդական իմաստը՝ փոխառությամբ։ Օրինակ՝ հն. κεφάλαιον նշանակում է գլուխ (մարմնի), որի փոխաբերական նշանակությունն է ցրբրիթ գլ-

---

թվականն է և հունաց կայսրության կործանումը։ այդ թվի դեմարն է 13, որ բան արևելյան և արևմտյան նախապաշարմունքների պատճառով թերազ թիվ է։ Հայոց ՈՂԲ (692) թվիվ (+331) համապատասխանում է 1243 թվին, որ քաթաթաց արշավանքի թիվն է և որ ամեն տեղ ազգ ու ազգ պահել։

Բուսերեն оклад բառը՝ սկզբից սկսած մի մի տուր ջնջելով՝ տալիս է клад, лад, зд. իսկ отрубили գտնում է трубили, рубили, убили, били, или, ли, и. Հայերեն չկան այսպիսի բառախաղեր. բայց Նապոլ չուռ տալով էլի կլինի Նապոլ. պարապ էլի՝ պարապ, իսկ մարդ — դրամ։ Բայց բառախաղերի ամենից զարմանալին Napoleon անունն է, որ մի մի տառ հապճուռմով տալիս է apoleon, poleon, oleon, leon, eon, on, որ հին հունարենով, փորրիկ սխալներով, նշանակում է ընտրելոնեը կործանեց քաղաքները բոլոր, տալուց հավիտենական լինելով։

նաղան մասերը կամ բաժիններըը», ֆր. chapitre։ Հայերենի մեջ էլ գլուխ բառը առացել է այս իմաստը՝ հունարենից փոխառնելով և մինչև այժմ առում ենք՝ գրքի գլուխները։ Նույն դաղափարի համար արաբները գործ են ածում bāb, որի իսկական իմաստն է «դուռ»։ Մի քանի հայերենում էլ, հատկապես բժշկական գրքածքներում, արաբերենից փոխառությամբ առում է դուռն, իբրև «գրքի դուխա»։ Լեզուները լցված են այսպիսի հազարավոր փոխառություններով, և դա կազմում է դաղափարների և մտածողության միջազգային կողմը։

Արդի հայերենում էլ, մանավանդ ժողովրդական լեզվի մեջ, շատ կան նման բառեր, որոնք առաջացել են թյուրքերենի օրինակով։

Ինչպես՝ անցած, որ նշանակում է սովորաբար «անցած», ունի նաև «թթված, փչացած» իմաստը. օրինակ՝ արևմտահայերեն՝ աս ձմերուկը անցած է (թրք. gečmiš բառի երկրորդ իմաստի նմանությամբ)...

Թրք. čekmek «քաշել» բայը, բացի իր այս սովորական իմաստից, նշանակում է նաև «կշռել». և ահա հայերենում էլ կազմվեց քաշել «կշռել», որի հետ նաև քաշ «կշիռ, ծանրություն», որ թրք. čeki բառից է թարգմանված, թե ինչու, երբ հյ. կշռել բայը կար, սրա կողքին էլ ավելացավ քաշել, դժվար է ասել[1]։

Ոճեր և դարձվածներ շատ հեշտությամբ թարգմանաբար անցնում են լեզվից լեզու։ Նվաճված լեզուն ապրվում է մեծ չափերով սերող լեզվի մտածողությունից. օրինակ՝ հյ. ասվում է քնար հարկանել, բայց նաև՝ փող հարկանել, որ շատ անճիշտ է, քանի որ փողը զարնելու գործիք չէ, այլ փչելու. թարգմանված է իրանականից, ուր ունենք պրս. bōrī zadan «փող զարկել»։ Ամբողջ Արևելքի լեզուները ոճաբանության կողմից միևնույնն են. օրինակ՝

---

[1] Թրք. հաճել «կշռել» առումը առաջացած է կշեռքի մի առանձին տեսակից, որ բաղկացած է մի երկաթե ձողից, որի մի ծայրից կախում են կշռելի առարկան. ձողի վրա ապուցված է մի օխա ծանրությամբ մի դունդ, որ քաշում են այս ու այն կողմ, նույն ձողի վրա, մինչև լծակի օրենքով գտնեն հավասարակշռությունը— բայց սրա օրինակով նժարներով կշեռքում կշռելն էլ կոչվում է «քաշել»։ Այս բառի «կշռել» իմաստով հայերենում գործածվելը թերևս էվֆեմիզմի պատճառով է. կառնմ, կառնեմ և այլ ձևերը համընկնում են շռել «մերկել» բառի ենթադրականի (արևմտահայ՝ ներկայի) ձևերի հետ. այսպես օր. Նոր-Նախիջևանում կառել բառն էլ ընդված է, իսկ Նուխիի պոլսահայ բարբառը պահում է կիսառել ձևով։

Իցե ին չ փուլի չէ = պրս. marā či, թրք. bana ne, վրաց. მ ნ ი:

Ո՞ր մեկը (որը—lequel) = պրս. kudām yak, թրք. hangə bir, վրաց. რომელი ერთი.

Ամեն մեկը (յուրաքանչյուր) = պրս. har yak, թրք. her bir, վրաց. ყოველი ერთი.

Ախ քաշել (հառաչել) = պրս. āhī kašīdan, թրք. ah čakmek.

Հաճեցեք = պրս. bə-farmāyīd, թրք. buyurun, վրաց. მ ო ვ ი ნ დ ე თ.

Նույնպես և Եվրոպայում. այսպես գրական ճանապարհով, ամբողջ բառակազմություններ և ձևաբանություններ սկսում են նույնանման, օրինակ՝ ֆր. arrière-pensée = գերմ. hintergedanke = գան. bagtanke = հյ. ետևին միտք և այլն. *այսպես և բազմաթիվ նմանները:*

Այսօր Երևանում մի ինչուչ բացատրության համար լսում ենք երեք տարբեր ձև[1]. *ուղղագիր ճիշտ հայկական մտածողությամբ ասում է՝*

Տրամվայ ճասեցի գնացի

(այս ձևը համապատասխան է գուրս գալիս նաև առևտրականին)

Ներգաղթած նորնկ հայերը ասում են՝

Թրամվայ ճնծա գացի

(որ թարգմանություն է tramvaya bindim ձևի, կարծես թե տրամվայի վրա բարձրացել-նստել է).

Ֆրանսախոս նկածները էլ ասում են՝

Թրամվայ առի գացի

(որ թարգմանություն է ֆրանս. j'ai pris un tramway *ձևի. կարծես թե մի տրամվայ է գնել):*

Մասնիկները առնատարակ քիչ են փոխ առնվում լեզվից լեզու. օրինակ՝ լտ. ex *մասնիկով ունենք ֆր.* ex-roi, *գերմ.* ex-könig, *անգլ.* ex-king *«նախկին թագավոր», մինչև անգամ հայերենի մեջ էլ գրական ճանապարհով շինված է էքս-վարպապետ: Անգլերենի մեջ ֆրանս.* -ess, -ment, -age, -ance, -ous, -ry, -tion, -able *և այլն մասնիկները ազատ գործածություն ունեն:*

Հայերենի մեջ ունենք մասնիկների փոխառության ուրիշ օրինակներ էլ. ինչպես՝ -կեն<պրս. gīn (ճաճիկեն, ծակոտկեն). *Գոյնի բարբառով՝* -սըզ<թրք. -səz (ճացսըզ, ջուրսըզ). *Մշո բար-*

[1] *Այս նկատողությունը ինձ իմ բարեկամ և ընկեր Հ. Աճառյանը:*

բառով՝ -ուկ<Թրք. -əq, (ճստուկ, կայճուկ, կոտրուկ, փիցուկ և այլն). Պոլսի բարբառով՝ -ճի<Թրք. -Jə, ji, (գիտեմճի, բաբիլուսճի «հացկատակ»): Եվ զարմանալի է, որ Երևանի բարբառումն էլ կա նույն մասնիկը -չի ձևով և միայն մի բառի մեջ, որ է կլեկչի «առևտրազօծող»: Այս բառը հայերն են սարքել իրենց բարբառում կլեկ բառից, որովհետև Թյուրքերեն ասվում է qalayči և ոչ Թե՝ կլեկչի:

Նոր-Նախիջևանի բարբառով ճաճա<Թրք. hana<պրս. xane, ինչպես՝ խանճաճա «գժանոց»: Կովկասում ամանք քաղաքավարական խոսակցության մեջ այո բառի վրա դնում են u մասնիկը (այոս), որ ռուսերենից է (տես վերը): Եղածը սակայն այսքանով էլ սահմանափակվում է. օրինակները միայն մի կամ երկու են. միայն Մշո -ուկ մասնիկն է, որ ընդհանուր գործածություն ունի և մի քիչ էլ դրբ. կէն մասնիկը:

Ֆրանսերեն -tion մասնիկը, որ այնպես ազատ գործածություն ունի գերմաներենում ու անգլերենում (գերմ. Direction, Dispensatin, Action, անգլ. supposition, motion, examination և այլն), չի դանվում բնավ զուտ գերմանական և անգլիական արմատների կցված ձևով, ինչ որ նշանակում է, Թե պատրաստ բառերն են ամբողջովին փոխառյալ և ոչ Թե մասնիկները: Պոլսի բարբառումն էլ Թեև ունենք սիւտճի, ֆասուլյաճի, էքմէքճի, խըլըճճի, տէմիրճի, պամյաճի, քեօմիւրճի, թիւֆէնկճի և այլ բազմաթիվ արհեստ ցույց տվող բառեր -ճի մասնիկով, բայց հայերեն բառի վրա դրված -ճի չունենք, բացի վերոհիշյալ երեք բառերից: Սա նշանակում է, Թե բառն է փոխ առնվում, և ոչ Թե մասնիկը:

Ընդհանրապես նոր հնչյունները լեզվից լեզու չեն անցնում, բայց պատահում է երբեմն, որ նվաճված լեզուն տիրող լեզվից ոտանա նոր հնչյուններ, որոնք պակասում էին իրեն:

Նոր-Ջուղայի հայերը չունեն ä ձայնը, բայց նորերս սկսել է մտնել պարսկերենի ազդեցությամբ: Պոլսի բարբառումն էլ ö, ü ձայնները Թյուրքերենի շնորհիվ ներմուծվեցին: Սլավական մի բարբառում քաղաքի բնակիչները ունեն սուլական արտասանություն, իսկ գյուղերի բնակիչները՝ շչական արտասանություն. քաղաքի երիկեղու բնակիչները ազատվել են վենետիկյան արտասանությունից, որ իրրև «բարձր դասի արտասանություն» օրինակել և յուրացրել են, մինչդեռ գյուղացիք պահում են իրենց բնիկ հնչյունը (BSL 30, № 91, էջ 210):

Բառերի ճիշտ հակառակ դիրքն ունի քերականությունը. չի պատահել, որ մի լեզու, ինչքան էլ որ ազդված լինի մի ուրիշ լեզվից, քերականությունն, այսինքն՝ հոլովմունք կամ խոնարհումնք փոխ առնի։ Անգլերենի $^3/_4$-ը գերմաներեն և ֆրանսերեն է, բայց ոչ մի քերականական ձև չկա փոխառնված։ Ուր որ պատահեն փոքր ի շատե նման փոխառություններ, նախ որ չափազանց բացառիկ երևույթներ են և երկրորդ՝ բացատրվում են ուրիշ ձևով։ Այսպես.

1. Հնդկաստանում պորտուգալերենը փոխ է առել անգլերենից սեռականի 's ձևը և ասում է govermandor's casa «նահանգապետի տունը». բայց սա առաջացել է governor's house «տուն անգլերեն ձևից, որ մի ամբողջական փոխառյալ բառ է, և որի ընդօրինակությունն է առաջինը։ Եթե 's սեռականի ձևը փոխառյալ լիներ ընդհանրապես, այն ժամանակ միայն կարելի էր ասել, որ հոլովմունքը փոխ է առնված։

2. Թյուրքերենը փոխ է առել պարսկերենից ki «որ» հարաբերականը, որից էլ փոխ է առել ժողովրդական հայերենը։ Բայց սա էլ քերականական ձև չէ, այլ մի ամբողջական բառ։

3. Իտալիայում սլավոնական մի բարբառ փոխ է առել իտալական որոշյալ հոդը. da mi káze *le* pute «որ ինձ ցույց տա ճանապարհները»։ Նմանապես սլովեններենը փոխ է առել գերմաներենից the *որոշյալ հոդը*, օրինակ՝ the lip čovak «գեղեցիկ մարդը»։

Սորաբերենը, որ Գերմանիայում խոսված սլավական մի լեզու է, ազդվելով գերմաներենից, առնդնել է իր մեջ որոշյալ հոդի գործածությունը, որ չրջակա բոլոր սլավական լեզուների մեջ գոյություն չունի։

Այս երկուսն էլ համարվում են բառիկ կամ անջատ մասնիկ, և ոչ ուղղ քերականական ձև, իսկ սլովեններենի որոշիչ հոդը՝ the՝ հորինված է te «այս» ցուցականի վրայից (Pečnik, էջ 109)։

4. Գրաբար և աշխարհաբար ունենք ձիւն, իշան *(իշեան)* «ձիեր, էշեր» հոգնակիները, որոնք կազմված են պրս. -ān հոգնակերտ վերջավորությամբ.— դա էլ անջատ մասնիկ է և նման չէ հոլովական կամ խոնարհման վերջավորության։

Նույն հոգնակերտ մասնիկը փոխառյալ է նաև սիրաներենի մեջ և պարսկերենի պես հատուկ է միայն շնչավոր էակներին. ինչպես՝ lēvạ «գայլ», lēvān «գայլեր». նույնը նաև պարսկական -gān, -yān ձևով, ինչպես՝ lēvagān «գայլեր», gadā-yān «մուրացիկներ» (պրս. gadāyān)։ Նույնը միանալով նաև զուտ սիրա-

նական հոգնակերտ -e վերջավորության հետ՝ դառնում է āne, gāne, yāne, *ինչպես՝* niya-gāne *«տատեր»*, tror-āne *«մորաքույրներ»*: *Այս բառերը կամ ամբողջովին պարսկերենից են փոխառյալ և կամ այդպիսի փոխառյալ բառերի օրինակով են առաջացած* (Grund. ir. Phil., I, *էջ 214*):

5. Նար-Նախիջևանի բարբառը թյուրքերենից փոխ է առել -իմիշ *ձևը, որ գործածում է թյուրքերենի մեջ ենթադրական կամ ծաղրական բայաձևեր կազմելու համար. օրինակ՝* կասէ իմիշ *«իբր թե կասէ»: Այս ձևը թյուրքերենի մեջ էլ ամբողջական բայական ձև կամ առանձին բառ է, որ և Պոլսի բարբառում թարգմանված է՝* եղեր.— *օրինակ՝* կըսէ եղէր, կուտէ եղէր:

6. Գերմաներենում ֆրանս. s-ից փոխառյալ է համարվում հոգնակիի մի ձև. die Kerls, die Mädels, die Jungens *(սակայն* Rogge. Der notstand, *էջ 33 համարում է գերմ. սեռականից. այսպես՝* wer ist das?—պատասխանել են. das sind Schulzes *(իմա* Leute), *որանով էլ ձևացել է հոգնակին (հյ. Շուլցին): Անգլերենի մեջ էլ հոգնակիի ընդհանուր նշան է* s, *բայց դա ֆրանսիական փոխառություն չէ, այլ առաջացած է նախկին* -as *վերջավորությունից* (Jespersen, Growth, *էջ 169*):

7. Հաճինի ենթաբարբառում անկատարը կազմվում է թրք. idi *մասնիկով (Բարբառագիտություն, էջ 204), հայերեն խոնարհման ձևը ամբողջովին պահելով և վրան իբր հավելվածական մասնիկ ավելացնելով թրք.* idi. *այսպես՝*

գաշդի իդի,	գագ'դի իդի	*գնում էի, գալիս էի և այլն:*
գաշդիյ իդի	գագ'գէյ իդի	
գաշդէյ իդի	գագ'գէյ իդի	

Այս զարմանալի ձևը, որ կարելի է կոչել հայերենի թյուրքացումը, զարմանալի կերպով գտնում ենք նաև Փոքր-Ասիայի Սիլլի կոչված վայրի հունարեն բարբառում: Այս բարբառում ասում են, օրինակ՝

írta itou	*«եկել էի»*
írtes itou	*«եկել էիր» և այլն,*

ուր պահված է հունարեն բայի խոնարհումը, ավելացնելով թյուրքերենի idi>idu *ձևը, որ էական բայի անկատարի եղ. գ դեմքն է* (BSL, № *64, էջ 60*):

Ինչպես Համինի բարբառում, նույնպես և հունական Սիլլի բարբառում, հնարավոր է եղել այս փոխառությունը, որովհետև Քրք. idi կամ idu ունի քիչ բայական սովորական մի վերջավորություն է, այլ առանձին բառ։ Այսպես է նաև Քրք. imiš «եղել է», որ տեսանք քիչ առաջ։ Թե այս ձևը իրրև առանձին բառ է ընդունված՝ հայտնի է նրանից, որ Գալսի բարբառում երբեք չի գործածվում Քրք. imiš ձևը, այլ միայն նրա հայերեն թարգմանությունը՝ եղեր։ Իսկ Նոր-Նախիջևանի բարբառում կա թե եղել է թարգմանական ձևը, և թե զուտ Քրք. իմիշ ձևը։ Եթե արանք (իմիշ կամ իդի) լինեին իսկական բայական վերջավորություններ, անշուշտ աննշան պիտի լիներ փոխ առնել, ինչպես չեն առնված Jek, -li և այլ վերջավորությունները, որոնք հատուկ են ապառնիի կամ հարկադրական ձևի կազմության և այլն։

8. Արդի կամչադալ լեզուն (հիպերբորյան լեզվախմբից) բայի աորիստական կազմելու համար փոխ է առել առաջևից бы մասնիկը, որ վերածել է bi ձևին (Bogoras, էջ 740)։

9. Քրդերենը այն շրջաններում, ուր ասորիների հետ խառն բնակչություն կա, փոխ է առել սեռ. d նախամասնիկը։

10. Պարսկերենը արաբերենից փոխ է առել āt հոգնակերա մասնիկը, որ կցվում է զուտ պարսկերեն բառերի վրա. օրինակ՝ nuvāzišāt «փայփայանքներ», dihāt «գյուղեր», fermāyišāt «հրամաններ», xāhišāt «փափագներ», nāmeǰāt «նամակներ», nivišteǰāt «գրություններ», meyveǰāt «պտուղներ»։ Սրանք և սրանց նման մի քանի ձևեր գործածված են նպատ շահի կենսագրության և ուրիշ մի քանի գրքերի մեջ (Works of Sir William Jones, London, 1799, հտ. II, էջ 152, Jensen, Neupers. Gram. էջ 36—37, Darmesteter, Et. ir., հտ. I, էջ 129—130)։ Սակայն այս բոլորն էլ գրագետների սարքած կեղծ ձևերից են, ժողովրդական լեզվի մեջ անգործածական և նույնիսկ գրագետների մեծ մասի համար խառնլիս։

11. Պարսկերենը փոխ է առել արաբերենից el որոշյալ հոդը, այսպես՝ ḥasb-el-fermāyiš «ըստ հրամանի», hasb-el-xāhiš «ըստ կամաց» (Jensen, էջ 30)։ Բայց սրանք լոկ ḥasb բառի հետ միացումներ են և el հոդը այստեղ իրր հոդ չի հասկացվում, այլ իրր անանջատ մաս ḥasb բառի։ Բացի սրանից, այսպիսի ձևեր միայն գրագետներին հատուկ մի քանի առանձին բառեր են, որ ժողովրդի մեջ գործածական չեն։ Եթե el հոդը ընդհանրապես

իբր քերականական կարգ գործածվելիս լիներ, կարելի էր այն ժամանակ խոսել փոխառության մասին։

12. Շամախիի հայ բարբառում փոխ է առնվել պրս. ez բացառականի մասնիկը. բայց միայն ղայր (ɣayr) բառի հետ. առվում է, օրինակ՝ ղայրէզ Գրիգորը «բացի Գրիգորից»։ Այստեղ էլ էզ իբր առանձին մասնիկ չի առնված, այլ համարվել է ղայր բառի անբաժան մասը, ինչպես աշխ. բացի, դեպի, որոնց մեջ ի նախդիր է, որ հաջորդ բառից անջատվելով կցվել է նախորդ բառին։

13. Շատ հետաքրքրական են այն դուռ պարսկերեն բառերը, որոնք առանում են արաբական անկանոն հոգնակի ձևեր. ինչպես՝ farmān-farāmīn «հրամաններ», bustān-basātīn «պարտեզներ», angūr-anāgūr «խաղողներ» և այլն. բայց այս բոլորը ոչ թե պարսկերենի մեջ կազմված ձևեր են, այլ արաբերենի. այդ բառերը նախ եղակի ձևերի տակ փոխ են առնված արաբերենի մեջ, այնտեղ ըստ արաբերենի հոգնակի դարձած, և հետո այդ ձևով անցած պարսկերենին (Jensen, էջ 36—37)։

14. Պարսուգալերենի մեջ փոխ է առնված իսպաներենի el որոշիչ հոդը, բայց միայն rei «թագավոր» բառի հետ (Anstett, էջ 278). բայց այս դեպքում el-rei-ը «թագավորը» իբր մի բառ համարելի է. ուրիշ բառի վրա նույն հոդը չի գործածվում և պարսուգալերենը ունի իր սեփական հոդը։

15. Պարսկերենը ունի իզաֆեթ կոչված քերականական կարգը, որ պարսից լեզվի քերականության ամենակարևոր մի մասն է կազմում։ Դա ոչ այլ ինչ է, եթե ոչ մի կարճ անշեշտ ի (հաճախ անդիր), որ դրվում է հատկացուցիչ-հատկացյալի և դոյականի և իր ածականի միջև։ Օրինակ՝

kitāb-i-Hasan «Հասանի գիրքը»
mīnāre-i buland «բարձր մինարե»

Բազմաթիվ բառեր կան, որոնք իզաֆեթով կազմված՝ մտել են հայերենի մեջ. ինչպես՝

զահրումար<պրս. zahr-i-mār «օձի թույն».

զեհիր-զըխըմ<պրս. zahr-i zaqqūm «դժոխքում աճող մի դառն բույսի (=դափնեվարդ) թույնն է».

զեհիր-զեմբէրէք «շատ դառն, սաստիկ լեղի բան»<պրս. zahr-i zambūrak «վայրի մեղվի թույնը».

գուլի-սաբահ<պրս. gul-i sabāh «ցայգածաղիկ».

բէդիճավա «ձրի»<պրս. bād-i hava «օդում քամի».

դարչին «կինամոն», հին հայոց ձևն էր դարիճնեիկ<պհլ. dār-i-čenīk «փայտ չինական», նորապարսիկ ձևով՝ dār-i-čīn «Չինաստանի փայտ», որից՝ դարչին. բոլորն էլ իզաֆեթով են։

Նկատել եմ, որ Գիրք Քղթոցի մեջ կան բազմաթիվ իշխանների առնմական անուններ, որոնք կազմված են այսպիսի իզաֆեթով. օրինակ՝ էջ 74։

Համազասպ ի Գուգվառամեան, ի տանէ Մամիկոնէից.—
Գրիգոր ի Համայեկան —
Սահակ ի Վարդանան —
Գառոյ ի Գարջուդեան,
Զաւրակ ի Գդաւնեան
Վարազ-Ցոհան ի Ցոհանան,
Վարդան ի Մուշեղեան,
Սահակ ի Համայեկեան,
Մևբշապուհ ի Շինական
Աբշոտ ի Վարազաթրոցեան,
Մուշեղ ի Համայեկեան,
Սամուէլ ի Մամիկան.
Վարդ ի Համայեկան և այլն։

Այս բոլորը Ներսես Բ. Աշտարակեցի կաթուղիկոսին (548—557 ԹԹ.) ժամանակակից իշխաններ են. ուրեմն Զ դարում կար հայոց իշխանական առնմանուններըը իզաֆեթով կազմելու սովորություն։ Ամենք կարող են կարծել, թե այս ի-ն բացառական նշան է. իրր թե՝ Վարդ ի Մամիկոնեաց տանէ. բայց այդ ճիշտ չէ, որովհետև ասորի իշխաններից էլ գանում ենք՝ Վարազպանդակ ի Մազոկան, Հաբթայ ի Մուշեղեան (անդ, էջ 41)։

Արաբերենում էլ կա իզաֆեթի նման մի ձև, որ կազմվում է երկու բառի միջև դնելով al *կամ* ul *որոշիչ հոդը. օրինակ՝* Harūn-al-rašīd *ամիրապետի անունը,* amir-al-mūminīn «պետ հավատացյալների, ամիրապետ, Մուհամմեդ մարգարեն»։

Այս ձևերից էլ կան շատ բառեր, որ մտել են հայերենի մեջ, սկսած մինչև արդի բարբառները. օրինակ՝

Ամիրալմումինք.

շեխիսլամ «մահմեդականների կրոնապետ»<արաբ. šeyx-ul-islām, սաթլըջան, սաթլըջամ «թռչների բարբառում, սլևերիա»<արաբ. zāt-ul-ǰanb «ցավ կողերի».

արդիլլեզիզ *Պլ. «մի տեսակ չոր պտուղ՝ թթի չիրի նման և նուշի համով. կոնձեղ, գետնանուշ, ֆրանս.* souchet<*արաբ.* habb-al-aziz *«համեղ գնդիկ», որ շփոթվելով Արդուլ-Ազիզ անվան հետ՝ այս ձևն է առացել հայերենում.*

ճապալաս *«մրտենու պտուղը», գործածված է Վստկ., էջ 105, 120. գործածական է այժմ էլ Սվեդիայի բարբառում՝ ճըմբալուս ձևով.*<*արաբ.* habb-al-ās *«մրտենու պտուղը».*

Շամշադին *(Հայաստանի արդի շրջաններից մեկն է)*<*արաբ.* šams-ad-dīn *«կրոնի արեգակ», որ արաբական անձնանուն է և անցել է նաև նույն դավառին:*

Դիադին, *Մասխի հարավային երեսում, դյուղաքաղաքի անուն է. արևմտահայ տառադարձությամբ գրվում է Տիատին (այս տեղի բնակիչները 1829 թ. գաղթեցին Սևանի շրջանը և հաստատվեցին Բասարդեչարում)*<*արաբ.* ziyā-ad-dīn *«փայլ կամ ցոլք կրոնի» անձնանուն, ապա՝ տեղանուն:*

Ծարական շրջանում Եկատերինոդարում. (այժմ Կրասնոդար) կար «Տէրիմօղուս» հայ ազգանունը, որ ներկայացնում է երեք լեզվի խառնուրդ. գրբ. տէ՞ր իմ, թրք. oğlu *(իզաֆեթ) և ռուս.* ев *ազգանվան վերջավորություն:*

Այս բոլորը քերականական ձևեր են, որ անցել են հայերենին (հին կամ նոր): Բայց կարելի է ասել, թե պարսկերենի կամ արաբերենի իզաֆեթի օրենքը մտել է հայերեն քերականության մեջ: Ո՛չ երբեք: Սրանք պատրաստի բառեր են, որ ամբողջությամբ մտել են մեր լեզվի մեջ իբրև մի-մի փոխառյալ բառ, որի կազմությունը չդիտենք մինչև անգամ: Հատկապես վերի տոհմական անուններդը, որոնք պարսիկ պետության կողմից տրված տիտղոններ էին, ինչպես այսօր ունենք տաճկական ձևով՝ Հյուսքյարպեյենյան («Թագավորը-հավանեց-հանձ» ամբողջ մի նախադասություն), Հաճեսօղլյան (Հանեսի որդի՝ տաճկական իզաֆեթի ձևով), կամ ավելի նոր՝ ռուսական ձևով՝ Արտեմ Գրիգորիչ խաչատուրով և այլն:

Քերականությունից տարբեր է քերականական ընդօրինակությունը, որ շատ ավելի ազատ ու սովորական է: Սրան իբրև լավ օրինակ կարող են ծառայել ֆիններենը, հունգարերենը և մանավանդ՝ էստոներենը: Սրանք թեև ուգրո-ֆիննական լեզվախմբին պատկանող լեզուներ են և ունեն իրենց որոշ սիստեմը, բայց այնպես են փոփոխվել, որ անճանաչելի են դարձել: Ֆիններենը՝ շվեդերենից, հունգարերենը՝ գերմաներենից և սլավե-

բննից, իսկ էասաններինը մանավանդ գերմաններինից այնպես է ապրվել, որ կարծես ուրիշ բառերով գերմաներեն է. ապառնին, կրավորականը, երկրորդական նախադասությունների կազմությունը և այլն բոլորովին գերմանականի պատճեն են ներկայացնում։

Հայերենի մեջ էլ ունենք նման երևույթներ. բայերի ժապրական ձևը Գալատա (եղեր) թրք. իմիշ ձևի թարգմանությունն է (օր. կատե եղեր=yer imiš։ Բայի անմիջական ձևը ցույց տալու համար գործածում ենք բայի դրական ու բացասական ձևերը միասին. ինչպես՝ եկավ-չեկավ, բերից-չբերից և այլն.— սա թարգմանություն է պարսկերենից, որ անցել է նաև թյուրքերենին, ինչպես՝ vārid šuda né-šuda. geldi gélmedi։

Նույնիսկ մեր արևելյան բարբառների սովորական ներկայի կազմությունը (-ում) իր բնիկերը գտնում է պարսկերենի մեջ. ինչպես՝ dar xāb ast «քնում է», az bād dar junbuš ast «ի հողմոյ ի շարժման է» (շարժվում է)։

Տևանված չէ. ասկայն, մի գեպք, նույնիսկ այն ժողովուրդների լեզուների մեջ, որոնք ամենամեծ չափերով փոխառություններ ունեն օտար կամ տիրող լեզվից, փոխ առնվելին հասկական կամ խոնարհման իսկական վերջավորություններ[1]։

---

[1] Փոխառությունը այն լեզվական երևույթներից է, որոնք անհատական չեն, այլ՝ ընդհանուր։ Մի մարդ, որ լավ ուսերեն գիտե, իր հայերեն խոսակցության մեջ կարող է փոխ առնել ուսերենից և գործածել մեկնաբանությունը, բայց դա կլինի անընդունելի, տարօրինակ երևույթ. իսկ պանդուվագոն, պատավոզ, մաշին սովորական գործածություն ունեն (ընդհանուր են)։ Թյուրքերենից փոխառյալ բազ, յախա, սօխախ ընդհանուր են Գալատա, բայց ևրեն հանկարծ մեկը վեր կենա և գիրք սկսու փոխարեն սոխ ինրար, ծիծաղելի կդառնա։

Միայն ուսումնական բառերը կարող են անհատական գործածության արդյունք լինել։ Իմ Հայոց լեզվի պատմության մեջ, Բ, էջ 10—34 գրել եմ մի երկար ցանկ՝ հունարենից փոխառյալ բառերի. բայց սրանցից մեծ մասը ուսումնական է. կան նրանց մեջ այնպիսիները, որոնք բնդամենը մի կամ երկու անգամ են գործածված գրականության մեջ, ուստի և անհատական են և արժեք չունեն ժողովրդի համար։ Բառագիրները կարող էին չգրել այս կարգի բառերը իրենց կազմած բառարաններում, բայց այդ արել են միայն բանասիրական նպատակով, ինչպես հենց առաջաբանության կանոնները թելադրում։

Հին մատենագրության համար ուրիշ մենք կարող ենք և պետք է, որ համարենք անհատական փոխառությունները։ Իսկ նոր հայերենի կամ բարբառների համար դա միայն չունեն։ Օրինակ՝ մեր համայարանի ուսանողնե-

Օտար փոխառյալ բառերի ընդհանուր օրենքը այսպես է.

Ամեն լեզու կարող է ունենալ օտար փոխառյալ բառեր, նույնիսկ շատ մեծ քանակությամբ, բայց այդ փոխառությունները այնպիսի ձևի տակ են լինում առնված, որ փոխառու լեզվի մեջ իրրև արմատ համարվելով՝ կարող են նրա (փոխառու լեզվի) քերականական կանոններին հպատակվել: Փոխառությունները, եթե գոյական կամ ածական են, ուղղական պարզագույն հոլովաձևով են առնված. եթե բայ են, դերբայի հերթարանքով են առնված. եթե ուրիշ որևէ անփոփոխելի խոսքի մաս են, նույնպես պարզագույն արմատական ձևով են առնված. և այս բոլորը կարող են հոլովվել կամ խոնարհվել նոր լեզվի կանոնների համաձայն և ոչ երբեք փոխառու լեզվի: Թյուրքերենն ու պարսկերենը հազարավոր փոխառություններ ունեն արաբերենի 9 տեսակ բայերից (իֆ'ալ, թեֆ'իլ, թեֆա'ուլ և այլն), բայց այս բոլոր ձևերը միայն դերբայ են և խոնարհվում են թրք. կամ պրս. «անել, լինել» օժանդակների միջոցով և բնավ չեն կարող ունենալ արաբական որևէ խոնարհման ձև: Պարսկերենն ու թյուրքերենը նույնիսկ չգիտեն նրանց ներքին կազմությունը և համարում են բոլորը իրրև անկախ բառ:

Ահա օրինակ Պոլսի ամիկ բարբառից՝ հետևյալ նախադասությունը.

Սա ենիչէրիին խալփախին թէքմէ մը երէշտիրմիշ ընէի քի,

բեց մեկը վերցրել էր Սունդուկյանի բոլոր գործերը, և նրանց մեջ գործածված բոլոր վրացերեն բառերը հավաքել: Ի՞նչ է սրա նպատակը: Սունդուկյանի իմացած վրացերեն բառերը հավաքել, թե Թիֆլիսի հայ բարբառում գործածված վրացերեն բառերը հավաքել: Երկու դեպքում էլ վերի մեթոդը սխալ է և անթավարար: Սխալ պիտի լինի նաև, եթե Թիֆլիսի բարբառով գրված հարյուրավոր հոդվածները (նախքան պոլսի բոլոր համարները էլ միասին) կարդար և վրացերեն բառերը հավաքեր: Գրականությունը երբեք չի կարող ժողովրդի գործածած բոլոր բառերը ներկայացնել իր սուղ էջերի մեջ: Ես կազմել եմ թյուրքերենից փոխառյալ բառերի հավաքածոն պոլսահայ բարբառում (1902), բայց դրա համար դիմել եմ ոչ թե բարբառով գրված գրականության (միշտ թերի), այլ վերցրել եմ օսմանյան ընդարձակ բառարանը, կարդացել ամբողջը, և ինքս էլ իրրև բնիկ՝ լավ իմանալով պոլսահայ ամիկ բարբառը, հավաքել եմ բոլոր այն բառերը, որոնք գործածական են նույն բարբառում (4000 բառ): Այս է միակ ուղիղ ճանապարհը: Վրացերենի համար էլ, եթե մեկը ուզենա, օրինակ, Թիֆլիսի հայ բարբառում գործածական բոլոր վրացերեն բառերը հավաքել, պիտի առնի վրաց լեզվի ընդարձակ մի բառարան և Թիֆլիսի հայ բարբառը լավ իմացող մեկի հետ միասին կարդալով ամբողջ բառարանը պիտի ջոկի բոլոր այդ կարգի բառերը:

խօս-խօճամաճ խալփախը եօխուշ աշախի թէքէր մէքէր գար *(այս էնիչներու գլխարկին ուզում էի մի այնպիսի քացի տալ, որ անագին գլխարկը գտիվայրից ցած գլորվել)։ Այստեղ գրեթէ բոլոր բառերը Թյուրքերէն են. բայց հոլովված կամ խոնարհված են հայերէն. հայերէն են միայն սա ցուցականը, մը անորոշ հոդը, ըենէի և գար բայերը. բայց հայերէն են նաև բոլոր հոլովական ու բայական վերջավորութիւնները. ոչ մի Թյուրքերէն ձև չկա։*

Նար-Նախիջևանի բարբառով՝

Ալաճ, խափլաճ, խուսպաղա, օսպաղա, ալայ ճանավարճէրը ճօճ էին *(առյուծ, վագր, գորա, կրիա, բոլոր անասունները այնտեղ էին)*. կամ սէմիճարիային ֆրանցուզճակին ուչիրէլին մատամե է *(դպրոցի ֆրանսերենի ուսուցչի տիկինն է)։ Այս երկու նախադասութիւններն էլ ամբողջապես կազմված են օտար բառերով, բայց հայերէն են ճոճ մակրայը, -ճակ մասնիկը, հայերէն են և մնում են բոլոր քերականական վերջավորութիւնները. ոչ մեկը օտար չէ։*

Ասարխանի հայոց ռուսախառն բարբառը ծաղրելու համար ասրքված է հետևյալ հատվածը.— Գնացի ճարէռէճճի գուլիատ աճելու, վէռէրը դուչէտ արավ, ժիվօտս բալիտ արավ, գնացի մամայիս ասէցի, սամավարը պատռա՛վիտ արավ, չայ վի՛պիտ արէցի, ժիվօտս վը՛զդարավիտցա էղավ *(դնացի դետափ ման գալու, քամին փչեց, փորս ցավեց, դնացի մորս ասացի, ինքնաեռը դրավ, թեյ խմեցի, փորս լավացավ)։ Այստեղ բացի գնացի և ասեցի բայերից, աճել օժանդակից և ը որոշյալ ու ս տացական հոդերից, ինացյալը ամբողջ ռուսերէն է։ Բայց չկա ոչ մի հոլովական ու բայական վերջավորութիւն, որ ռուսերէնից փոխառյալ լինի։*

Նմանապէս գրական պարսկերէնում, ուր հեղինակները սիրում են անհամար փոխառութիւններ անել արաբերէնից, բացերից ու տացվածներից դուրս չկա ոչ մի այլ փոխառյալ ձև, ոչ մի արաբերէն քերականական վերջավորութիւն, որ կցված լինի զուտ պարսկական մի բառի։ Ահա Դաւլիատեան արաբախառն առաջաբանի առաջին հատվածը. Minnat-i *xudayi*-ra azza va jalla *ki* ta'at-*aš* mujib-*i* gurbat *ast* va *ba*-šukr-*i andar*-*aš* mezid-*i* ni'mat.—

Այստեղ պարսկերէն են միայն xuda «աստված» *բառը,* andar «մեջ» *նախադրութիւնը,* ki «որ» *հարաբերականը և* ast *էական բայը. ինացյալը ամբողջապես արաբերէն է. բայց պարսկերէն*

են բոլոր քերականական վերջավորությունները, և ոչ մի արաբական ձև չկա։

Նույնպես է նաև խրթին օսմանյան գրական լեզվի մեջ, ուր արաբերեն ու պարսկերեն բառերի ու ասացվածների փոխառությունը սանձարձակորեն ազատ է. բայց ոչ մի քերականական վերջավորություն չի փոխ առնվում։ Նույնիսկ մասնիկների համար օրենք կա, որ արաբական մասնիկները կցվում են միայն արաբերեն բառերի, պարսկական մասնիկները թե արաբերեն, և թե պարսկերեն բառերի, իսկ թյուրքական մասնիկները թե արաբերեն, թե պարսկերեն, և թե թյուրքերեն բառերի։ Այդ նշանակում է, որ փոխառյալ բառերն այլևս օտար չեն համարվում, այլ սեփական հարստություն։

Ահա ամենախրթին օսմանյան մի նախադասություն. *ǰā-tiḥá-i kelām-əm tewtieten-lil-meqāl sérd-i berā'át-i istihlāl* deyil dir[1] «խոսքիս սկիզբը իրր ներածություն՝ դեղեցկազարդ առաջադրության հյուսվածք չէ». ամբողջը կազմված է արաբերեն փոխառություններով, թյուրքերեն են միայն -əm սոացական հոդը, deyil dir «չէ» բացասական բայը։ Եվ սակայն ոչ մի արաբական վերջավորություն փոխ առնված չէ։ Ահա և ֆուզուլի փաշայի դամբարանի վրա դրված խրթին ոտանավորից մի քանի տող.

Ey! zaír-i sahib-i neís
hûbbi sivaden meyli kes
bén-de fuád-i asr idim
Íiss-i nigin-i sadr idim.
Ո՛վ այցելու դու կենդանի,
Աշխարհի սիրուց կամքդ կորիր,
Ես էլ էի դարուս սիրտը,
Եղարքոսի մատանու ակը...

Ամբողջը արաբերեն է և միայն քերականական ձևերն են թյուրքերեն (բցո. den «-ից», հյց. -i «ը», bén-de «ես էլ», i-dim «էի») և մի հատ էլ բայ՝ kes «կորիր»։

Նույնիսկ այն դեպքերում, երբ բարբառները միախառնվում են ու ձուլվում ընդհանուր լեզվի հետ, նկատված է, որ առան-

[1] Աբեկյանի Mutavval sarf-ə osmani (Ընդարձակ քերականություն օսմանյան) դասագրքի առաջաբանի սկիզբն է, որ մեր աշակերտության ժամանակ քերանացի էինք սովորում։

Ձին բառեր են, որոնք ազատորեն փոխ են առնվում, իսկ քերականական ձևերը շատ ավելի պահպանողական են։ Այսպես՝ ֆրանսերենի և պարսկերենի բարբառների մեջ (BSL. № 97, էջ 89)։

Հակառակ քերականության, շարահյուսությունն էլ շատ ազատ է և կարող է ամբողջովին փոխ առնվել։ Գալի բարբառի ամբողջ շարահյուսությունը՝ իր խնդրառություններով, բայերի դասավորությամբ ու գերբայական ձևերով լիովին թյուրքերենի պատկերն է։

Qalem	qalən	oldəqdan	ma'da	eyisi	de
գրիչը	հատ	ըլլալէն	զատ՝	ազէկն	ալ
ôlmadəγə	sebebi-ile	yazdəəm	yazəlardan		
չըլլալուն	պէպէպ-ովը	գրած	գիրէրէս		
hlč	birisi	istediyim	gibi	güzel	čəqara
հիչ	մէկը	ուզածիս	պէս	ազմօր	հանել
bil-	meyor-əm.				
չէմ	կրնար	կօր։			

Ինչպես ասացինք, այս բոլոր փոխառությունների մեջ ամենից ցայտունները և սովորականը բառեր են, որոնք ամեն լեզվի մեջ էլ կան, մի տեղ՝ քիչ, մի տեղ՝ շատ։ Բայց ինչքան էլ մեծ լինի նրանց քիվը, լեզվի ընդհանուր կազմության, ոգու և հոբինվածության համար նշանակություն չունեն։ Ժողովուրդները շատ անգամ չգիտեն, թե իրենց գործածած այս կամ այն բառը օտար է։ Որքա՜ն դժվար էր համոզել նույնիսկ մեր անարուչ գիտուններին, որ հայերենի մեջ գտնված բազմաթիվ բառեր՝ ինչպես՝ հրեշտակ, հրովարտակ, բազ, պատգամ, նպաստ և այլն, և այլն, իրանյան լեզուներից են փոխառյալ։ Այսօր էլ շատերը չգիտեն, որ իրենց գործածած յախա «օձիք», խնյար «վարունգ», բօզ «փուշ», յօլա գնալ «հարմարվել մի կերպ», սազիլ «պատշաճիլ» և այլն բայերը ժողովրդական թյուրքերենից ու պարսկերենից են փոխառյալ։ Սահակ վրդ. Ամատունին հակառակ պրնդումներին՝ չէր համոզվում, որ Վաղարշապատում և Օշականում գործածված ակոշ «վարունգի մանր տեսակը» բառը ռուսերեն (окрошка) է, պատճառաբանելով, որ իր պապը, որ ոչ մի ռուսերեն բառ չգիտեր, գործածում էր նույն բառը. այս պատճառով էլ մոցրեց իր «Հայոց բառ ու բան» աշխատության մեջ, էջ 16-ում։ Նոր-Նախիջևանում արժանավոր մի բժիշկ կարծում էր, թե աչխառնիա «անոթություն» բառը, որ թրք. aĭ-qarnə-na «անոթի-փոր-ով»

ձևն է, հայերեն ծագում ունի և ստուգաբանում էր այքը խառն, ինչպես լինում է քաղցի ժամանակ։

Նոր-Նախիջևանցիք գործ են ածում խոյան բառը՝ «նապաստակ» նշանակությամբ. «բանդետ» մարդիկ մեկնում են հյ. խոյանալ բառից, առնելով նապաստակի արագավազ ընթացքից և համարում են զուտ հայերեն բառ, ինչպես որ ես էլ խաբվելով մուծեցի իմ Դավառական բառարանի մեջ (էջ 481 բ)։ Բայց խոյան թաթարներեն բառ է, որ չաղաթայերեն հնչվում է qoyan (Будагов, II, էջ 98), իսկ Ղրիմի թաթարների մոտ՝ xoyan, որից էլ Ննխ. խոյան։

Թիֆլիսի հայերը փոշի «կանոցի դլխածածկ» բառը, որ պրս. puší «ծածկոց» բառն է, հայերեն են կարծել և փոխանակել են այժմ թուրքերեն համանիշով։ Ոչ մասնագետ ուսը չգիտե, թե իր ամենօրյա գործածած арбуз, кухня, амбар, сарай, галстук, абрикос, айва, актер, осел, монета և այլ բառերը օտար են. վեճ կա այն մասին, թե копейка «կոպեկ» բառը թաթարական է, թե ռուսական. և այսպիսի վեճեր ամեն տեղ կան. հայերեն նավ և դավ բառերը կարող են լինել բնիկ հայերեն, կարող են նաև լինել պարսկերենից փոխառյալ. սովորություն է դարձել ընդունել առաջինը՝ հայերեն, երկրորդը՝ պարսկերեն։

Այս պատճառով պատահում են դեպքեր, երբ փոխառյալ բառը ավելի շատ ընթացիկ գործածություն ունենա փոխառու, քան փոխատու լեզվի մեջ։ Օրինակ՝ ֆր. clique ահմանափակ գործածությամբ մի բառ է, բայց անգլերենի մեջ տալիս է բազմաթիվ ածանցներ. ինչպես՝ cliquedom, cliqueless, cliquery, cliquomania, cliquomaniac, clique (իբր բայ), cliquish, cliquishness, cliquism, cliquy կամ cliquey (Jespersen, Growth, էջ 102)։ Մեր մեջ սովորական գործածություն ունեն, Միհրան, Վահան, Արտաշես, Միհրդատ, Բագարատ, Արտավազդ և այլն հատուկ անուններըը, որոնք պարսկերեն են, բայց այսօր Պարսկաստանում՝ բոլորովին անգործածական։ 1918 թվին Պարսկաստանի դեմոկրատական ներկայացուցչի հետ խոսելիս մի անգամ խոսակցության մեջ գործածեցի peykar «պատկեր» բառը. չհասկացավ. գործի nigār «նկար», գործյալ չհասկացավ. և ինչպես ծիծաղեց վրաս, երբ ասացի, թե դրանք պարսկերեն բառեր են։ Հայերենն, ուրեմն, ավելի հարազատորեն է պահել պատկեր և նկար բառերը, որոնք պարսկերենից են փոխառյալ, քան իրենք

պարթիները, որոնք կորցրել են դրանք։ Այսօր պարթիկը էպատկեր գազափարի համար գործածում է surāt կամ āks, երկուսն էլ արաբերեն, և կարծում է, թե իր սեփական բառերն են։

Ա՛յնտեղ միայն ժողովուրդները կարող են իրենց փոխառյալ բառերը ճանաչել, ուր որ փոխառվի հետ միասին են ապրում, գիտեն և ամեն օր լսում են սիրող լեզուն և կարող են հայտնի կերպով որոշել, թե այսինչ բառը փոխառություն է։ Այսպես, օրինակ՝ հայերը Թյուրքիայում՝ Թյուրքերին բառերի համար, երբ հաճախ օտարների մոտ հայերեն խոսելիս, չուզենալով իրենց գաղտնիքը մատնել և հայերեն ձեր չիմանալով, գործածում էին հայերեն բառեր, ինչպես՝ մուր ըաժուխա, ծուխ ըծխախոտ և այլն հնարավի իմաստներով։ Բայց հենց որ պատմության բերմամբ բաժանվեցին իրարից, այլևս կարելի չէ փոխառությունները ճանաչել. այսպես՝ հայերը Վրաստանում կամ նույնիսկ Հայաստանում, ուր նոր սերունդը այլևս Թյուրքերին չիմանալով՝ կարող է իր գործածած Թյուրքերեն բառերը որոշել։ Դրա համար էլ նույնիսկ ուսումնական համարված մարդիկ իրենց գրածների մեջ ազատ տեղ են տալիս Թյուրքերեն բառերի՝ պարզապես անգիտությամբ։

Գալով նոր հնչյունների, մասնիկների և շարադասության փոխառության, դրանք կազմում են բացառիկ հանգամանք և պահանջում են երկար ժամանակյա կենակցություն։ Նոր հնչյունները փոխ են առնվում ոչ թե անկախ, այլ այն բառերի մեջ միայն, որոնք փոխ են առնված սիրող լեզվից և այն էլ երբ փոխառուն երկլեզվյան է, այսինքն՝ ազատ խոսում է թե իր մայրենի, և թե սիրող լեզվով։ Ապա թե ոչ՝ միայն հազարակ փոխառություններով մի նոր հնչյուն չի կարող մտնել մի ուրիշ լեզվի մեջ (Meillet, BSL, № 103, էջ 97)։ Այսպես, հին հայերը թեև շատ բառեր փոխ են առել պարսկերենից, բայց ոչ մի նոր հնչյուն։ ժ ձայնը, թեև երևում է ընդհանրապես պարսկական փոխառությունների մեջ, բայց անծանոթ չէր հայերենին, ուր ունենք իժ՝ իրր բնիկ բառ։ Ընդհակառակը ֆ անծանոթ էր հայերենին, ուստի այն բոլոր բառերը, որ ունեին ֆ, գրվեցան ի կամ փ (հրաման, փարաս, հրեշտակ, փարդաստ)։ Այսպես նաև հունարեն և լատիներեն f (փիլիսոփա, Փիլիպպոս)։ Եթե հայերը այս շրջաններում նաև պարսկախոս, լատինախոս կամ հունախոս եղած լինեին, տարակույս չկա, որ ֆ ձայնն էլ պիտի փոխ առնվեր։ Կիլիկյան շրջանում հայերը նույնպես հունախոս կամ լատինախոս

չէին. բայց առին ֆ ձայնը, որի համար էլ նոր տառ հնարեցին. պատճառն այն է, որ հայերենի մեջ ինքնին արդեն ձևացել էր ֆ ձայնը՝ վ-ի փոփոխումով (ինչպես՝ հավաքել>հավքել>հաֆքել)։ Պոլսում, կամ ընդհանրապես Տաճկաստանում, հայերը առացան թյուրքական էօ, իւ հնչյունները, որովհետև կամ երկլեզվյան էին և կամ արդեն ունեին այդ հնչյունները։ Մոնղոլերենը v ձայնը չունի բնիկ բառերի մեջ. բայց ունի մի խումբ փոխառություններ չինարենից, տիբեթերենից, սանսկրիտից և ռուսերենից, որոնց մեջ v ձայնը կա. ուրեմն նոր հնչյունի փոխառությունը կատարվել է միայն փոխառյալ բառերի համար (Клюкин, էջ 56)։

Ավելի սովորական է այն, որ երբ մի լեզու բառեր է փոխառնում մի ուրիշ լեզվից և հանդիպում է այնպիսի ձայների, որոնք չկան իր մոտ, ոչ թե վերցնում է նաև այդ ձայները, այլ ձևափոխում է նրանք իր ունեցած ձայների համեմատ։ Այսպես, երբ ռուսերենը բառեր փոխ առավ բյուզանդական հունարենից և գտավ այնտեղ θ (անգլ. th) թվատ հնչյունը, դարձրեց f. սրանից ունենք Марфа. Феодосия, Фома և այլն (հյ. Մարթա, Թեոդոսիա, Թովմաս)։ Երբ թյուրքերը փոխ առին ֆրանսերենից journal, gendarme, pédagogie և այլն բառերը, որոնց մեջ ունենք ž ձայնը, որ անծանոթ է թյուրքերենին, դարձրին ǰ. ǰurnal, ǰandarma, pedagóǰi և այլն։ Այսպես և՝ մյուսները։

Եթովպական կունամա (kunama) լեզուն պանագան բառեր է փոխ առել հարևան տիգրե (tigré) լեզվից. դրանց մեջ կան č և ǰ ձայները, որ կունամա լեզուն չգիտե. բնիկներից շատերը չեն կարողանում հնչել այդ ձայները, ուստի և հնչում են ty, dy, մինչև անգամ՝ t, d (Reinisch, էջ 16)։

Նմանապես աֆրիկյան բիշարի (bischari) լեզվի մեջ ǰ հընչումը բնիկ չէ և գտնվում է միայն արաբերենից փոխառյալ բառերի մեջ. ուրիշ դեպքերում արաբ. ǰ ըստ տեղական բնիկ արտասանության դառնում է ḍ (Almkvist, 43)։

Մասնիկների համար էլ կա այն տեսությունը, թե նրանք չեն առնված իբր առանձին մասնիկ, այլ առանձին-առանձին բառերը փոխ առնվելուց հետո՝ փոխառու լեզվի մեջ բաժանված և առանձին մասնիկ են դարձած (Dauzat, La phil., էջ 103)։

Գալով ազդեցությունների խնդրին, այստեղ էլ պետք է մոտենալ առանձին զգուշությամբ, որովհետև կարող է պատահել, որ երկու բոլորովին անջատ ժողովուրդների մեջ միևնույն պատ-

կերը միևնույն ձևով ներկայացվի. օրինակ՝ մեղուն մեր արդի բարբառներում կոչվում է մեղրաճաճ, նույնը քրդ. məŝ-i həngəv և ֆրանս. mouche à miel. բոլորն էլ նույն կազմությունն ունեն, բայց անկարելի է ասել, թե ֆրանսերենը հայերենից կամ քրդերենը ֆրանսերենից ազդված լինի և կամ՝ հակառակը։

Երևանի, Մեղրու, Ղարաբաղի և Ինֆլիսի բարբառներով էծեր նշանակում է «բարկություն». օրինակ՝ էլի էծերդ եկաճ էլլի գժությունդ բռնեց։ Սա բնականաբար այծ բառի հոգնակին է և առնված է նույն անասունի բարքից։ Ֆրանսերեն էլ ասում են caprice, որից փոխ է առնված առս. каприз «քմահաճույք»։ Ֆրանսերեն բառը ծագում է լ. capra «այծ» բառից, ճիշտ այնպես՝ ինչպես հյ. գվո. էծեր։ Բայց կարելի է երբեք ասել, թե այս երկուսը իրարից են ազդված կամ օրինակված։

Մինչև այժմ չխոսեցինք հին լեզուների ազդեցության մասին նոր լեզուների վրա, որովհետև երևույթը մասնահատուկ է միայն մի քանի ազգերի, ինչպես, օրինակ՝ հույներին և հայերին, սերբերին և բուլգարներին և այլն։ Հույները դարերի ընթացքում ազդվելով թյուրքերենից, իրենց ազգային վերածնության ժամանակ մտածեցին նաև մաքրել իրենց լեզուն օտար տարրերից. այս մասին իրենց առաջնորդ պիտի հանդիսանար, բնականաբար, հին հունարենը, որ զերծ լինելով թյուրքական ազդեցությունից, իր ճոխ գրականությամբ և հարուստ բառարանով մատնանիշ պիտի աներ բնիկն ու օտարը։ Հույները փոխ առան ուրեմն իրենց հին լեզվից բոլոր օտար բառերի փոխարեն բնիկ հույն ձևեր և վերանորոգեցին իրենց գրականությունը՝ նոր լեզվի ոճով և քերականությամբ։ Այսպես և մենք, որ օգնության առանք մեզ համար գրաբար լեզուն և նրա միջոցով դուրս վտարեցինք մեր միջից նորամուտ օտար բառերը, մաքրելով ազգային լեզուն։ Այսպես արին նաև սերբերն ու բուլգարները մի դարում, իրենց գրական լեզուն կազմելիս, որ թեև բոլորովին ժողովրդական է, բայց դուրս է վտարած իր միջից բոլոր այն թյուրքերեն բառերը, որոնք դարավոր տերության արդյունք էին։ Նման մի շարժում տեղի ունեցավ նաև չեխերի մոտ։ Ազգային զգացումներով տարված, չեխերը իրենց լեզվից վտարեցին բոլոր գերմանական բառերը անխտիր և նրանց տեղ դուռ ստվոնական բառեր դրին։ Այս բանը այնպիսի ծայրահեղության էր հասել, որ մինչև անգամ համաշխարհային theater «թատրոն» բառը ջնջե-

լավ, նրա տեղը դրին divadlo, որ մինչև իսկ ուրիշ սլավոնական ժողովուրդներ չգիտեն։

Այս կարգի փոխառությունները դուրս են գիտական բառերը, որոնց դեմ նույնպես երբեմն մեր մեջ հալածանք էր սկսված, ուրիշները ընդունելու կողմնակիից են եղած։ Անշուշտ այս կարգի փոխառությունները ավելի լավ է պահել, քան թե թարգմանելով առաջ բերել մտքերի շփոթություն և գիտուններին համար ավելորդ ծանրաբեռնություն. ինչ պետք է օրինակի համար մագնեզիա, բրոմ, յոդ, քլոր և նման քիմիական, բժշկական, բուսաբանական և այլն բառերը հայերենի վերածել։

Օտար բառերի գործածության դեմ խիստ են եղել առհասարակ արևմտահայերը, իսկ Թուլլաուե՝ արևելահայերը։ Առաջիններդ, երբ սահմանված լինելին էլ գործածել մի օտար բառ, գրում էին շեղատառով, նոտրագիր կամ մինչև անգամ եվրոպական տառերով, եթե բառը եվրոպական է։ Այս դեպքում նրանք նման էին հին հռոմայեցիներին, որ սիրում էին հունական փոխառությունները գրել հունարեն տառերով՝ մի որևէ լատին գրության մեջ։

Հին լեզուների ազդեցությունից ավելի սովորական է գրական լեզուների ազդեցությունը բարբառների վրա և բարբառների ազդեցությունը իրար վրա։ Այս երևույթը նկատվում է այսօր աշխարհիս բոլոր կողմերը. դպրոցը, գրականությունը, լրագրությունը, պետական լեզուն թափանցում են հետզհետե ժողովրդի բոլոր խավերի մեջ, ամենահետին գյուղերը և բարբառները ջնջվում են։ Հայաստանում այսօր նկատվում է մանավանդ մի ուրիշ երևույթ. տաճկահայ բարբառները, որ գաղթականների մեծամեծ խմբերի հետ փոխադրվեցին Հայաստան, հետզհետե յուրացնում են Արարատյան բարբառը կամ գրական լեզուն և պիջում են։

Կա և սրա հակառակ երևույթը։

Լեզուներից ամենք, ինչպես հին գրականությունից փոխառություններ են անում, նույնպիսի փոխառություններ անում են և բարբառներից ու ժողովրդական լեզվից, ինչպես նաև միևնույն լեզվի շրջանում կազմված մասնագիտական «լեզուներից»։ Այստեղ երբեմն կարիքն է խոսում (ինչպես՝ երկրագործական, արվեստագիտական, և այլ կարգի բառերի համար), երբեմն գրվածքին ժողովրդական գույն տալու, նրա արտահայտությունը ցոլացնելու համար և այլն։ Բայց ինչպես էլ լինի, ժողովրդական բար-

բառերի ձևաբանությունը, ունեցած նոր հնչյունները և քերականական կանոնները չեն մտնում ընդհանուր լեզվի մեջ։

Մեր մեջ մի ժամանակ ձայն բարձրացավ՝ գրականության մեջ օգտվելու համար գավառական բարբառներից. ամենը գործը չափազանցության հասցնելով, նույնիսկ գավառական բարբառների արտասանությունը ընդունեցին գրական լեզվի մեջ, ինչպես՝ աղրուր, բուր. փխ. աղբյուր, բույր, էսպես, էնպես, փոխանակ՝ այսպես, այնպես և այլն։ Ուրիշները այնքան բառեր և ասացվածքներ գրին իրենց գրվածքների մեջ, որ գրանք այլևս անհասկանալի էին դառնում։ Երկուսն էլ չափը անցնում էին. լավագույն միջոցն այն էր, որ փոխ առնվին միայն այնպիսի բառեր, որոնց համազորը պահանջ էր գրական լեզվի մեջ, բայց պակասում էր։

Օտար ազդեցության մի վերջին աստիճանը կազմում է այն, երբ նվաճված ժողովուրդը խառնվում է տիրողների հետ այնպես, որ երկուսը մի ամբողջություն են կազմում, և նվաճվածները յուրացնում են տիրողների լեզուն։

Այս կարգի օրինակներ շատ կան պատմության մեջ. եգիպտացիք, որ մի շատ պահպանողական ժողովուրդ էին, չորս հազար տարի եգիպտացերենը պահելուց հետո արաբների տիրապետության տակ կորցրին իրենց լեզուն և արաբախոս դարձան։ Այսպես նաև՝ Ասորիք, Փյունիկիա, Միջագետք, Ասորեստան և Բաբելոն։ Ֆրանսիա, Իսպանիա, Գերմանիա և այլն, որտեղ բնիկ ժողովուրդները խոսում էին տեղական դանազան լեզուներով, հռոմեական տիրապետության տակ կորցրին այդ լեզուները և լատինախոս դարձան։ Մեր երկրի շրջաններից և մերձավոր Արևելքից առնելով օրինակը՝ տեսնում ենք, որ ջնջված ու անհետ կորած են աբքազերեն, սումերերեն, էլամերեն, կասայերեն, միտաններեն, խալդերեն, հաթերեն, կապադովկացերեն, լյուդերեն, փռյուգերեն և այլն, և այլն։ Հայերը և հույները Փոքր Ասիայում քանի ազգություն և կրոն պահել են, բայց թյուրքերի ազդեցության տակ իրենց մայրենի լեզուն կորցնելով՝ թյուրքախոս են դարձել։

Իրրև ջնջված լեզուների ուրիշ հետաքրքրական օրինակներ, հիշենք՝ պոլաբերենը (էլբայի վրա), որը ԺԸ դարում մեռավ, պրուսերենը, որ դեռ խոսվում էր ԺՉ դարում, այժմ մեռած է, և ոչ մի հետք չկա. կորներենը՝ Անգլիայում, միջին դարերում տարածված լեզու էր Կորնվալ թերակղզում, այժմ չկա։ Հետա-

քըրքիր է կորնեերենի անկման պատմությունը։ Դա մի կելտական լեզու էր. վերջին անձը, որ խոսում էր կորնեերեն՝ Dolly Pentreath *անունով մի կին էր, որ մեռավ 26-ին դեկտեմբերի 1777 թ., 102 տարեկան հասակում, բայց ժթ դարում էլ հավաքվում էին ազգքի բնակորներ, երդումներ, նախադասություններ դյուղացիների լեզվից։ 1875 թվին կորնվալում կային դեռ ծերեր, որ գիտեին հաշվել մինչև քսանը* (Vandryès, էջ 338)։ *Ահա լեզվի հոգեվարքը։*

Ահա և մանեերենը (Man կղզու լեզուն՝ Անգլիայում), որ մեռնում է մեր աչքի առաջ. 1901 թ. 4419 խոսող ուներ, 1921 թ. 896 հոգի, 1928-ին՝ 581 հոգի (BSL, հտ. 33, № 100, էջ 98)։

Բոնաբինները (Bonari) *Ամերիկայում մի ժամանակ շատ ուժեղ ցեղ էին։ Վերջին բոնաբին մեռավ շուրջ 1870 թվին և լեզուն չնչվեց* (Brinton, էջ 44)։

Այս օրինակը մեզ ցույց է տալիս, թե ինչպես մի լեզու մոռացվում և չնչվում է. դալիս է նոր, տիրող լեզուն, մարդիկ նախ երկլեզու են դառնում, տիրող լեզուն անհրաժեշտ է պաշտոնի, ուսման, պետական գործերի և այլ այս կարգի գործածության համար, իսկ նվաճվածի լեզուն երկրորդական տեղ է բռնում. նա միայն անհատական և ընտանեկան գործածության համար է։ Եվ որովհետև երկու լեզու ունենալը մի ավելորդ ծանրաբեռնություն է, կամ մի ժամանակավոր երևույթ, ուստի մեկը հետզհետե տեղի է տալիս. այս դեպքում նվաճվածը հետզհետե քաշվում է անկյունները, հետո՝ դյուղը, լեռները և վերջը անհետանում է բոլորովին։

Լեզվաբանության համար հետաքրքրական է նույնպես սեռերի դերը՝ երկլեզվության միջոցով մայրենի լեզվի չնչման և տիրող լեզվի տարածման խնդրում։ Գիտենք, որ կինը առհասարակ պահպանողական է, զարմանալի չէ, եթե ասենք, թե կինն է, որ ավելի է պահում լեզուն իր վաղնջական ձևի տակ. այն ձևերը, որ դրսի աշխարհում կորած և սովորությունից դուրս են ընկած, կինը դեռ գիտե։ Պոլսում այրերը հնչում են քիր քրել, կանայք՝ գիր գրել։ Բերբերական լեզուներում որոշ անկանոն բայեր տղամարդկանց լեզվի մեջ վերածվել են կանոնավորի, բայց կանայք դեռ պահում են հին անկանոն խոնարհումը (BSL, 36, № 106, էջ 76)։ *Այն տեղերում, ուր ընտանեկան կյանքը փակ է, և կնոջ հարաբերությունը դրսի աշխարհի հետ շատ սահմանափակ է, կինը մայրենի լեզվի պահապանն է և այն է, որ տարա-*

ծում է սիրող լեզուն։ Այսպես՝ Համշենում, ուր հայերը մահմեդականութիւնն ընդունելով՝ թյուրքացել և հայերենը թողնելով՝ թյուրքերենն են սկսում գործածել, կանայք դեռ հայախոս են։ Եվ համշենցի թյուրքացած հայերը իրենց խոսած այդ հայերեն բարբառը կոչում են «ճնկա» լեզու։ Գալում, ուր հայերը քե այր, և քե կին, գիտեն թյուրքերեն, կինը մայրենի լեզվի պահապանն է, հաճախ նկատելի է, որ ընտանիքում այրը խոսում է թյուրքերեն (քևև գիտե նաև հայերեն), բայց կինը պատասխանում է հայերեն։ Նույն երևույթը նկատվում է նաև ուրիշ երկրներում. այսպես՝ բազկ ընտանիքներում պատահում են դեպքեր, երբ այրը չգիտե բազկերեն, և միայն կինն է խոսում այդ լեզուն. լիվոնները, որ հիմա մեռած լեզու է, խոսվում է իգական սեռի մեջ, մինչ այրերը խոսում են լեթթերեն. ալբանացի կանայք միայն ալբաներեն գիտեն, մինչ տղամարդիկ հաճախ երկլեզու են (Jespersen, Lang., էջ 241)։ Վերջերս այս երևույթի ամենապարզ ատաճանը ցույց են տալիս Ամերիկայի գաղթական ժողովուրդները՝ գերման, սկանդինավյան, քե հայ, որոնք՝ իրենց երկրներից գալով, հաստատվում են այստեղ. այրերը գիտեն անգլերեն, իսկ կանայք դեռ չգիտեն կամ քիչ գիտեն։ Ընդհակառակը, այն վայրերում, ուր ընտանեկան կյանքը չունի առանձին սահմանափակումներ, կինն է առաջին գիտակից տարածիչը սիրող լեզվի։ Գրոմանսալ գյուղում, ինչպես և իտալոգական գյուղում, «14—20 տարեկան աղջիկները ավելի են սիրում ֆրանսերեն, անգլերեն բառեր ու դարձվածներ գործածել, քան նույն տարիքի երիտասարդները» (BSL, 29, № 87, էջ 69)։ Բազքենի գտնելու ցանկության արտահայտություններից մեկն է դա, որ ավելի ուժեղ է կնոջ, քան տղամարդու մեջ։ Բայց դրանով էլ ապագա մայրերը մեծ դեր են տանում մայրենի լեզվի ջնջման և սիրող լեզվի տարածման մեջ՝ իրենց երեխաների միջոցով։

Երբ նվաճվածները, մոռանալով իրենց լեզուն, ընդունում են սիրողների լեզուն, այդ ժամանակ էլ, բացի այն, որ նորամուտ լեզուն կրում է որոշ ձայնական ու քերականական փոփոխություններ, այնուամենայնիվ նվաճվածների լեզվից մնում են շատ հետքեր, որոնք անփոփոխություն են գտնում սիրող լեզվին։ Սրանք կարող են լինել բառական փոխառություններ, յուրահատուկ հնչյուններ, արտասանության եղանակ կամ ոճ, շարադրության առանձին ոճ, քերականական արտահայտություններ, ոճեր և այլն։ Լատիներենը մտնելով Իսպանիա և գտնալով

մայրենի լեզուս, ինքն էլ կրեց որոշ փոփոխություններ. օրինակ, հին սեղական լեզվի ճեացորդ է համարվում այն, որ լատ. f դառնում է իսպան. h, ինչպես՝ լատ. filius>hijo «որդի», fabulari>hablar «խոսել». արդարև հին իբերները չունեին f. այսօր բասկերենը f չդիտեն, և Իսպանիայի բոլոր աշխարհագրական անուններին մեջ f չկա բնավ։ Արաբերենը, մտնելով Աստրիք և ձուլելով սեղական ժողովուրդն ու լեզուն, ինքն էլ կրել է բավական ձևափոխություններ՝ համաձայն հին աստրերենի։ Բնիկ լիբանանցի Ֆեղհալին (Féghali) ուսումնասիրել է իրենց խոսած արաբերենը և դառնում է այնտեղ բազմաթիվ աստրերեն ճեացորդ բառեր (MSL, հտ. 21)։ Հնդկերենը դրավիդյան բնիկներից վերցրել է դանդալին կոչված ձայները (t, ṭh, ḍ, ḍh)։ Լատիներենը, դառնալով Գալլիայի լեզուն, պահել է հին կելտական լեզվից 30-ից ավելի բառ (alouette, bec, bruyère, quai և այլն)։ Ֆրանսիայի հարևային գավառներում նվաճված բասկերից բառեր կան, որ մտել են սեղական ֆրանսիական բարբառների մեջ։ Նման երևույթներ կան նաև Ֆրանսիայի Բրետան նահանգում։ Այսպես՝ Բրետանի քաղաքներում խոսվող ֆրանսերենում բառի շեշտը հաճախ բրետոնական է և պահում է դեռ բրետոն լեզվի շեշտի սաստկությունը։ Մի ուրիշ մասում բառի վերջընթեր վանկն են շեշտում շատ ուժեղ շեշտով. հաճախ բառավերջի թրթռուններըը խուլ են դարձնում, մանավանդ շփական ձայներըը. ինչպես՝ chemisse, neuf, fromache և այլն. համաձայն բրետոն ober բայի՝ ֆրանս. faire բայը իբրև օժանդակ են գործածում։ (Օրինակ՝ pour faire le diable s'irriter=pour que le diable s'irrite): par դնելու տեղ դնում են avec (ինչպես՝ tué avec son voisin, փխ. par son voisin) և այլն, Իռլանդիայի անգլերենում ասում են I will take it *of* you (փխ. from you), կամ what way are you=ինչպես եք և այլն (Vandryes, էջ 339)։

Լեզվական այս երևույթը, որ կոչվում է ենթաշերտ (substrat) լեզվաբանության մեջ վերջերս մեծ կարևորություն ստացավ։ Միևնույն լեզվական երևույթի տարբեր-տարբեր ձևավորումը զանազան ժառանգ լեզուների մեջ ուզում են բացատրել մի հին լեզվի առանձնահատկություններով, որոնք ժառանգաբար անցել են հաջորդ սերունդներին։ Այսպես, օրինակ՝ լատիներեն լեզվի ավելի խոշոր ձևափոխությունը Ֆրանսիայում և Իսպանիայում քան թե Իտալիայում՝ բացատրվում է այդ երկրներում խոսված նախորդ լեզուների ազդեցությամբ։ Այսպես են բացատրում նաև

հնդեվրոպական նախալեզվի կրած տարբեր տիպի ձևափոխությունները Եվրոպայի և Ասիայի այն երկրներում, ուր հաստատվել է նա, իր հետ ձուլելով տեղական գանազան նախաբնիկներին։ Օսերենը իրանական մի լեզու է և, սակայն, ունի այն բոլոր ձայները, որոնք հատուկ են կովկասյան լեզուներին, ուստի ենթադրում են, թե այդ բոլորը ժառանգություն են կովկասյան նախաբնիկներից։ Հայերենը հնդեվրոպական լեզու է, որի ձևախոսական դրությունը տարբեր է կովկասյան լեզուներից. բայց հայերենը ունի կովկասյան լեզուների հարուստ այբուբենը, ուստի ենթադրում են, թե ազգված է խալդերից, որոնց հետ միախառնվելով, մեկ ժողովուրդ ենք կազմել։

Հայոց լեզվի պատմության Ա հատորի մեջ ցույց ենք տվել, որ հայերի մեջ խառնված կան բազմաթիվ ցեղեր։ Սրանք, հայախոս դառնալով, իրենց հետ են բերել իրենց հին լեզվի հետքերը, որոնք և ենթաշերտեր են կազմել հայ լեզվի համար։ Այդ լեզուների մի մասը կորած լինելով (ինչպես՝ ասվաններինը, տայեցիների լեզուն, խալդերինը և այլն), չենք կարող այդ կարգի ենթաշերտային բառերը ճանաչել։ Բայց կարող ենք կենդանի մնացած լեզուների ենթաշերտային հետքերը գտնել. ինչպես՝ վրացերենից[1] ոչխար, փարախ, արտաքերենից կամ տաորերենից՝ աղա, ձեր, շղթա և այլն։

Գիտենք, թե ինչեր կարող են անցնել ենթաշերտից նոր յուրացված լեզվին։ Այստեղ էլ փոխառելի բառերը նույնն են, ինչ որ տեսանք վերը ընդհանրապես. այն է՝

1. Բառեր (սակայն որոնք հատարակ փոխառություններ են և կարող էին առանց այն էլ փոխ առնվել. նրանք լեզվի կազմության համար արժեք չունեն)։

2. Արտասանության ձևը.—Երբ հայը խոսում է ուսերեն, բացի ընդհանուր առնից, որ իր սեփականն է պահում, ջնջում է ուսերենին առանձնահատուկ փոփոխ հնչյունները, օրինակ՝ վալս փոխանակ՝ վալ'ս կամ մազ փս. մազ' և այլն։

3. Սեռը, եթե ենթաշերտում չկա, հավանաբար կջնջվի, բայց կարող է և պահվել. իսկ երբ սեռերը տարբեր տիպի են, ենթաշերտի տիպը կարող է անցնել նոր լեզվին։ Սովորական երևույթ է այն, երբ մի հայ, վրացի, պարսիկ կամ անգլիացի ֆրանսե-

[1] Հայոց լեզվի պատմության մեջ (Ա հատ. էջ 202—218), վրացերեն բառերից մի մասի փոխառությունը հայերենում՝ ենթադրել էի իբր ենթաշերտ եմ, որ Տամանը ևս (Общая лингвистика, Одесса, 1904) մեզանից 36 տարի առաջ նույն կարծիքն է հայտնած եղել։

րեն, գերմաներեն կամ ռուսերեն խոսելիս շփոթի քերականական սեռը և արտասան, իդեական և չեզոք իրար փոխարեն գործածի։ Պատճառն այն է, որ այս ժողովուրդները սեռ չունեն իրենց լեզվում։ Բայց անբնական չէ նաև այն, որ երբ մի ֆրանսիացի կամ մի գերմանացի ռուսերեն խոսի, ռուսերենի սեռը սխալ դնի և փոխադարձաբար՝ երբ մի ռուս ֆրանսերեն կամ գերմաներեն խոսի, նույնպիսի սխալի մեջ ընկնի։ Այս երեք ժողովուրդներն էլ իրենց լեզվի մեջ սեռ ունեն, բայց ամեն մեկի համար սեռը տարբեր է։ Օրինակ, «լեզու» նշանակող բառը լատիներեն և գերմաներեն լեզուների մեջ իգական է (lingua, la langue, la lingua, die Sprache), իսկ ռուսերենում արական (один язык)։ Ուսոմ և խոսողը իր լեզվի սեռը տալիս է մյուս լեզվի բառին. այսպես՝ մի ռուս տիկին 1898 թվին ֆրանսերեն մի դասախոսություն կարդալու ժամանակ Փարիզում գործածեց Écoles des langues orientaux ձևը, փոխանակ՝ orientales, այսինքն՝ langue «լեզու» բառը, որ ֆրանսերենում իգական է, դրավ արական, ըստ որում ռուս. язык «լեզու» արական է։

4. Դարձվածներ, ոճեր, ասացվածներ, յուրահատուկ արտահայտություններ և այլն, Կովկասի ժողովուրդները ռուսերեն խոսելիս մացնում են այնտեղ իրենց սովորական կրկնություն՝ մ–ով, ինչպես՝ խարաշո–մարաշո, սիր–միր, սուխարի–մուխարի և այլն, այդ նույնը վարժվել են անել նույնիսկ ռուսները։ Ընդհակառակը, չենջում են նրանից այնպիսի բաներ, որոնք իրենց մտածողության անհամաձայն ու անտրամաբան են. օրինակ՝ փխ. ասելու Карапета нет «Կարապետը չկա» (ուր ռուսերեն մտածողությամբ Карапета դրված է սեռ. հոլովով), ասում են Карапет нет կամ մանավանդ՝ нэт։ Իռլանդացին անգլերեն խոսելիս ասում է I lived in Cork *with* three years «Քորքում ապրել եմ երեք տարով». փխ. ասելու՝ երեք տարի, ուր գործիական with «–ով» ձևը իռլանդական le-ի թարգմանությունն է (BSL, հտ. 33, № 99, էջ 291)[1]։

[1] Լեզվից լեզու պատճենի լավ օրինակ է այն, երբ մեկը խոսում է օտար լեզվով, որին լավ չի տիրապետում և որի քերականությունը և շարահյուսությունը հորինում է իր լեզվի կաղապարով։ Ղարաբաղի հայերի գյուղախոսություններից են հետևյալները. большой кухни сын=մեծ օջախի զավակ է. понесу, принесу, так отдам, что пойдёшь, больше не придёшь=կտանեմ, կբերեմ էնպես կտամ, որ կգնաս էլ չես գա. глазам свет=աչքդ լույս։ Փարիզի Նորագաղթ հայերի ֆրանսերեն լեզվով, arménien nation grand nation il est, avenir il a=հայ ազգը մեծ ազգ է, ապագա ունի։

3. Շարադասության և խոսքի կազմության բնդհանուր ձևը, որ կարող է ամբողջապես փոխառնվել ևնթաշերտից, օրինակ՝ կովկասում հայը, ադրբեջանցին, վրացին կամ լեզգին և այլն ռուսերեն խոսելիս հաճախ երբեմն ասում են՝ դայ մնէ դվա բուտիլկա խարօշի կրասնի վինօ «տուր ինձ երկու շիշ լավ կարմիր գինի», փոխանակ զուտ ռուսական ձևով ասելու дай мне две бутылки хорошего красного вина, որ բառացի լինում է՝ «տուր ինձ երկու շիշեր լավի կարմիր գինուց»:

Թվականից հետո հոգնակի գնելը և ածականի համաձայնության գոյականի հետ, ինչպես նաև չափի համար սեռական գործածելը՝ այստեղ վերացված են համաձայն ևնթաշերտի ազդ:

6. Բևբականական վերջավորություններ, հոլովում և խոնարհում փոխ չի առնվում ևնթաշերտից, առաւավելն դրանք կարող են պարզվել ու միօրինակության վերածվել:

Ըստ որում միշտ մի ցեղ չէ միայն, որ նվաճվում և խառնվում է տիրող ժողովրդի հետ, այլ հաճախ մի քանի ցեղեր են, որ միանում են մի պետության տակ, ուստի ևնթաշերտն էլ լինում է մի քանիսը: Այսպես՝ միայն խալդերը չեն, որ խառնվել են հայոց մեջ, այլ ուրիշ մանր-մունր ցեղեր էլ, ինչպես ասորիները, տայիցիք, գուգարացիք, ուտիները և այլն, որոնցից յուրաքանչյուրը կարող է մի բան նևրմուծած լինել հայերեն լեզվի մեջ: Լեզվաբանությունը կարող է նկատել այս բոլորը, բայց ցույց տալ, երևան հանել նրանց նևրմուծությունները, անկարող է բնդհանրապես, որովհետև չգիտե այդ լեզուները:

Կան «լեզվաբաններ», որոնք այս հարցում բնդունում են մի ուրիշ տեսակետ: Իբր թե երկու լեզուներից կազմվում է մի այնպիսի խառնուրդ՝ որ ոչ միևնն է և ոչ մյուսը, այլ իր ամբողջ կազմով թե միևնն է, և թե մյուսը: Այսպիսի լեզուները կոչվում են խառնածին (гибрид, hybride): Ըստ այդմ ասեն մի ժողովուրդ, որ կազմված է այլ ժողովուրդների խառնուրդից, բնականաբար ունի մի լեզու, որ նույնպես մի խառնուրդ է: Օրինակի համար, ըստ ասանց, հայերենը խառնածին լեզու է, կազմված հնդեվրոպական և կովկասյան երկու տարբեր լեզուներից:

Հիբրիդ կամ խառնածին բառը վերցրած է բնական գիտությունների: Տեսնենք, թե ինչ նշանակություն ունի այս բառը այս գիտությունների շրջանում:

Բնական գիտությունների մեջ հիբրիդը այն տեսակն է, որ առաջանում է երկու տարբեր տեսակների խառնուրդից, մի նոր

տեսակ, որ ոչ առաջինն է և ոչ երկրորդը, այլ մի ուրիշ նոր տեսակ. կենդանաբանության մեջ սրա լավագույն օրինակը ջորին է, որ առաջանում է էշի և ձիու խառնուրդից։ Իրոք որ ջորին ոչ ձի է և ոչ էշ, այլ բոլորովին նոր տիպի մի կենդանի։

Դիտության մեջ այն կարծիքը կար, որ հիբրիդները անծնունդ են. այսպես՝ ջորին անընդունակ է արտադրելու իր նմանը։ Ջորիի օրինակը ճիշտ է։ Բայց (ինչպես հայտնեց ինձ մեր համալսարանի պատմաբան և կենսաբանության մասնագետ պրոֆ. Ավետիք Ներ-Պողոսյանը) գիտությունը այժմ գտել է, որ ճիշտ չէ այդ կարծիքը։ Գիտությունը կարող է շատ բազմաթիվ նոր տեսակներ ստեղծել ինչպես բույսերից, այնպես նաև զանազան մեջատներից, որոնք կարող են նաև արտադրել իրենց նմանը։

Բայց գիտության մեջ ճշմարտություն է նաև այն, որ ամեն մի տեսակ չի կարող մի որևէ տեսակի հետ խառնվելով առաջ բերել նոր արտադրող տեսակ։ Սրա համար կան անշուշտ օրինքներ ու պայմաններ, որոնց մասին տեղվույս չի խոսել։

Բայց լեզվաբանների մեջ կա նաև մի ուրիշ խումբ, որ հարցին նայում է ուրիշ հայացքով և չի ընդունում խառնածին դաղափարը՝ այն մտքով, որով ընդունում են կենսաբանները։ Մի քիչ մոտիկից տեսնենք վերը հիշված օրինակները։

Ճիշտ է, որ պոլսահայ ռամկերենը 4000 բառ ունի և տասնյակ քանակությամբ դարձվածներ, ոճեր ու ասացվածներ, որոնք ամբողջապես թյուրքերենից են փոխ առնված. նույնիսկ ամբողջ շարադասությունը, ինչպես տեսանք, թյուրքերեն է. Նոր-Նախիջևանի հայոց բարբառը ամբողջապես ռուսերենի և թաթարերենի մի խառնուրդ է. կան նախադասություններ, որոնց մեջ միայն էական բայն է հայերեն. օրինակներ տվեցինք վերևում. բայց, այնուամենայնիվ, թե՛ Պոլսի ռամկերենը, և թե՛ Նոր-Նախիջևանի բարբառը են և շարունակում են մնալ հայերեն, ինչպես որ իրենց խոսողների գիտակցության մեջ էլ է, և կարելի չէ համարել սրանք հայերենից տարբեր մի լեզու։

Ի՞նչ է տարբերությունը, և ի՞նչ է չափանիշը։ Պատճառն այն է, որ նրանց ձևաբանությունը, այն է՝ հոլովումն ու խոնարհումը, հայերեն է։ Բառերի, նույնիսկ ամբողջ բառերի մեծ մասի փոխառությունը, շարադասության ձևափոխությունը, ամբողջ սճաբանության ընդօրինակությունը բավական չեն մի լեզվի տիպը փոխելու. դրանք ազդում են միայն լեզվի արտաքին կազմի վրա և ուժ չունեն լեզվի ներքին կոզմի վրա, որ քերականու-

թյունն է։ Իսկ եթե երևակայենք մի բոպե, որ մի լեզու ընդունի մի ուրիշ լեզվի քերականությունը, այդ պարագային էլ նա գտնում է գոյություն ունենալուց և համարվում է ձուլված մյուս լեզվի մեջ։ Այս դեպքում գործ չկա խառնուրդ կամ խառնածին լեզու, այլ որևէ մեկի ջնջումը։ Որպեսզի կարելի լինի ընդունել խառնածին լեզուների տեսությունը, պետք է, որ քերականությունը ներկայացնի երկու կամ ավելի լեզուների քերականության մի խառնուրդ։ Այսպիսի երևույթ դեռ տեսնված չէ։

Դիտը (Einführung, էջ 18) *պատմում է մի այսպիսի դեպք. Ուտիացի մի փոքր երեխա մորն ասել է.* za haç t'ada *(ինձ հաց տուր) և իսկույն զգալով, որ սխալ է խոսել, ուղղել է՝* inj s'um tur *(ինձ շում տուր)։ Երկուսն էլ սխալ էին։ Ուտիերեն խոսելու համար պիտի ասեր* za s'um t'ada, *հայերեն խոսելու համար՝ ինձ հաց տուր։ Բայց սա էլ խառնուրդ չէ. առաջին դեպքում ուտիերեն է՝ հաց փոխառությամբ, երկրորդ դեպքում հայերեն է՝ s'um փոխառությամբ։ Այստեղ խառնուրդ չկա։*

Այն մանուկը, որ տեսանք վերևում[1]*, մի անգամ խաղում էր փայտե ձիով։ Պապը կանչեց Թոռնիկին՝*

— Держи!

Թոռնիկը պատասխանեց՝

— Держ-ում եմ։

Ըստ երևույթին այս մի բառը երկու լեզվի խառնուրդ է, բայց ոչ։

Մանուկը, որ երկլեզու էր, անշուշտ, ձիշտ էր հասկացել держи *«բռնիր» և պատասխանեց* держ-ում եմ *«բռնում եմ»։ Մենք էլ այսօր ասում ենք կնքում եմ, բժշկում եմ, մոնթում եմ, պնչատում եմ, հիմա էլ սկսել են ասել մորիլիզում եմ, որոնք կազմված են ասորական.* kunukku *«կնիք», պրս.* bizišk *«բժիշկ», արաբ.* muhr *«կնիք», ռուս.* печать *«կնիք», ֆրանս.* mobiliser *«շարժել» բառերից, որոնք բոլորը փոխառյալ են այդ լեզուներից և հայացված. և մենք այդ բառերը գործածում ենք իբրև հայերեն և առանց վարանելու խոնարհում ենք իբրև հայերեն։ Ոչ ոք չի մտածում, թե դրանով երկու լեզու խառնում ենք իբար։ Մանուկն էլ վարվել է այդպես։ Մեզ համար զարմանալին միայն այն է, որ մանուկը ռուսերենից փոխ է առել մի բառ, որ մենք փոխ չենք առել։ Բայց սրա պատճառը այն է, որ պապը*

[1] *Բժ. Գ. Հարությունյանի 2 տարեկան և 3 ամսական Թոռնիկը՝ Ռուբիկ (տե՛ս էջ 176—177)։*

դործ է ածել այդ բառը (թեև պապի մտադրությունը նույն բոպեին՝ ռուսերեն խոսելն էր)։

Սակայն այստեղ կա և մի ուրիշ նուրբ կետ. держи ձևը հրամայական է և վերջավորվում է շեշտյալ и ձայնավորով. ճիշտ այսպես է նաև հայերենի հրամայականը խոսակցական լեզվում, ինչպես՝ վառի՛, թափի՛, խմի՛ գրի՛, ճստի՛, գցի՛ և այլն։ Եվ քիչ գիտենք, թե մանուկը չվերցրեց այդ բառը իբրև հայերեն հրամայական, և հայերենի օրենքով էլ չկազմեց держ-ում եմ։

Երկու դեպքումն էլ չկա խառնուրդ ձև։

Օտարազգի մի կին, որ մի քիչ հայերեն գիտեր, մի անգամ խոսքը մի հայ երեխայի ուղղելով՝ ասաց.

Պե՛պե՛լնիցու տուր։

Այս նախադասությունը թեև երկու բառից է միայն բաղկացած, բայց ներկայացնում է երկու լեզուների իսկական խառնուրդ։ Խառնուրդ է ոչ այն պատճառով, որ մի բառ (պեպելնիցա) ռուսերեն է և մյուսը (տուր) հայերեն, այլ որովհետև առաջինը ձևավորված է ռուսերենի քերականության, երկրորդը՝ հայերենի քերականության։ Ռուսական քերականության օրենքներով են նախավանկի շեշտը և մանավանդ՝ հայցականի ու վերջավորության, ինչպես և որոշյալ հոդի բացակայությունը։ Եթե պես. ասելու պեպելնիցու, ասեր պեպելնիցուն, բայց մանավանդ, պեպելնիցան, դա կլիներ զուտ հայերեն քերականություն և «պեպելնիցան տուր» կլիներ զուտ հայկական նախադասություն։

Ահա այսպիսի երևույթներն են միայն, որ կարող են կոչվել խառնուրդ, բայց լեզուների մեջ այսպիսի երևույթ տեսնված չէ։ Ֆրանսիայի և Իտալիայի արդի բնակչությունը զանազան ժողովուրդների խառնուրդի արդյունքն է. բայց ֆրանսերեն ու լատիներեն քերականությունը բացատրվում է ամբողջապես լատիներենով, և ոչինչ չունի հին, ուրիշ ցեղերի լեզուների քերականությունից։ Ֆրանսիացի աշխարհակալների մի խումբ արշավից Անգլիա, տիրեց երկրին մի քանի դար ամբողջ և ֆրանսերենը փոխադրեց օտար հողի վրա։ Ժողովուրդը չսովորեց ֆրանսերեն, բայց անգլիացի ազնվականները ֆրանսերեն խոսեցին. շատ բազմաթիվ ֆրանսերեն բառեր մտան անգլերենի մեջ, բայց դրանք ոչ մի ազդեցություն չգործեցին անգլերենի քերականության վրա։ Հետևաբար և չկա խառնածին լեզու, նրանք, որ ունեն

խառնածին լեզվի երևույթ, ուրիշ բան չէն, եթե ոչ սովոր փոխառությունների անագին քանակով լցված լեզուներ։

«Խառնուրդ» լեզվի սարօրինակ պատկեր է ներկայացնում գնչուների լեզուն։ Գնչուները հնդկական մի ժողովուրդ են, որ ցրվել են աշխարհիս զանազան երկրները, ուր որ գնացել են՝ ընդունել են այն երկրի լեզուն, բայց հետ խառնելով նաև իրենց գնչուերեն բառերը։ Այսպես ձևացել են զանազան երկրներում զանազան տեսակի գնչուական լեզուներ, որոնց բառարանն է միայն գնչուերեն, իսկ քերականությունը տիրող լեզվինն[1] է։ Այսպես, օրինակ, իսպանական գնչուերեն ասվում է

El crallis *ha* nicobado *la* liri *de los* Cales[2], *Թագավորը ջնջել է օրենքները գնչուների, որ բուն իսպաներեն պիտի լիներ՝* El rey ha suprimado la lei de los gitanos.

անգլիական գնչուերենում՝

Never kin	*a*	pong dishler	*nor*	lel	
Երբեք չգնես	*մի*	*թաշկինակ,*	*ոչ էլ*	*ընտրես*	
a romni	by	momeli	dood		
մի կին	*ընդ*	*լուսնի*	*լուսով,*		

որ անգլերեն պիտի լիներ՝ never buy a handkerchief, nor chose a wife by moonlight.

Միևնույն տեսարանը տեղի է ունեցել նաև Հայաստանում, ուր գնչուները (բոշա) յուրացնելով հայերեն լեզուն, խառնել են այստեղ բազմաթիվ գնչուերեն բառեր, որով ձևացել է բոշայերենը, այն է Հայաստանի գնչուերենը։

Ահա և մի օրինակ այս լեզվից[3]*.*

Պապս	մուլէր է,	վէսէր էմ,	ուրրաճ	կը թօվիմ	կօ.
Հայրս	մեռել է,	նստել եմ,	վրան	կուլամ	կո.
Պապս	պանի	պիհէց,	նստուհէցավ		
Հայրս	ջուր	խմեց,	հիվանդացավ		

Լօմավախիս	կու չէնք	քէրավէն	քէրավ,	լէնվավէն	լէնվավ[2].
Բոշաներս	կմանգանք	քաղաքից	քաղաք,	դյուղից	դյուղ.

---

[1] Պատկանյան, Цыганы, СПБ. 1887, էջ 48, 86—87։

[2] Գնչուերեն նախադասությունների մեջ առաջադում եմ քերականությունը, որ գնչուերեն չէ։

[3] Առաջադված են հայերեն քերականության տարրերը։

Ռուսական ցիգաններեն լեզուն (գնչուներեն), որ անկախ լեզու է, ռուսերենից փոխ է առել մի խումբ նախամասնիկներ, որ ազատորեն կցվում է իր սեփական արմատներին՝ ճիշտ ռուսերեն համապատասխան բառերի օրինակով, ինչպես՝ գնչ. lava *«վերցնել» բայից՝*

vы-lava	«հանել» =	*ռուս.*	вынимать
z-lava	«հանել» =	»	снимать
ob-lava	«գրկել» =	»	обнимать
pod-lava	«բարձրացնել» =	»	поднимать
po-lava	«հասկանալ» =	»	понимать.

Բայց այս բոլորը նույնպես խառնածին լեզուներ չեն այն մտքով, որ հասկանում են խառնածին լեզուների կողմնակիցները. այս լեզուները խառնածին չեն, որովհետև չեն ներկայացնում երկու քերականությունների խառնուրդ. հիշված օրինակները իրավունք չունեն գնչուերեն կոչվելու, այլ են՝ խպաներեն, անգլերեն, հայերեն՝ խառնված գնչուերեն փոխառյալ բառերով: Ճիշտ այնպես՝ ինչպես «Մա ևնիչերին»... և այլն (տես էջ 393—4) հայերեն է, թյուրքերեն փոխառյալ բառերով լցված, կամ ինչպես զանազան ծածկալեզուները (գողերի լեզուն և այլն) ներկայացնում են մայրենի լեզուն՝ օտար բառամթերքով: Գնչուերենը իրավունք չունի լեզու կոչվելու, որովհետև քերականություն չունի. նա միայն բառարան է՝ դիմամարք խառնված որևէ իրական լեզվի հետ:

Լեզվի խառնուրդ չկա նաև այն դեպքում, երբ մի լեզու մի ուրիշ լեզվից փոխ է առնում մի ամբողջ բայական ձև՝ խոնարհված վիճակում, մինչև անգամ մի ամբողջ նախադասություն, որ իբր թե չակերտների մեջ առնված մի բառ կամ խոսքի մի հատված է: Օրինակ՝ արաբ. ma-ša-allah *բառացի նշանակում է «ինչ որ ասուված կամենա». ամբողջ մի նախադասություն է, բայց թյուրքերը, որոնցից նաև մենք, գործածում ենք իբրև բացագանչություն (մի բառ),* bravo! *«կեցցե» նշանակությամբ:*

Իբր. դիցուք «ևնթադրենք թե», գուցէ «կարելի է», մի գուցէ «չլինի թե», գոգցես «կարծես թե», այնուամենայնիւ, ի վերայ այսր ամենայնի և այլն, ամբողջական դարձվածներ, բայական խոնարհյալ ձևեր են (ապառնի, սոսրադասական), որոնք այժմ գոյություն չունեն աշխարհաբարում. բայց այդ ձևերը այժմ

փոխ առնվելով գրաբարից գործածվում են իբրև մի բառ, անջատ ու անկախ, առանց գիտակցելու նրանց կազմությունը։

Աշխարհիս ամեն կողմը տարածված մի բառ է ֆրանս. merci!, *որ այժմ գործածվում է «շնորհակալություն» իմաստով. բայց այդ բառը բուն նշանակել է «ծախեցիր» և առաջանում է լտ.* merce *ձևից, որ գտնում ենք նաև ռուս.* коммерсант «վաճառական» *բառի մեջ։ Մի ջին դարերում, Ֆրանսիայում, առևտրի ժամանակ, երբ երկու կողմից սակարկությունը վերջանում և գնի վրա համաձայնություն էր կայանում, իրար ձեռք էին տալիս և ասում* merci! «ծախեցիր», *որից հետո այլևս ոչ մի կողմը առարկություն անելու իրավունք չուներ։ Այս սովորությունն է, որ հին իմաստը կորցնելով և կատակից անցնելով, այժմ դարձել է շնորհակալության սովորական արտահայտություն։*

Մեր լեզվում ունենք Սենեքերիմ և Էմմանուել անուննե րը. երկուսն էլ եբրայերենից են՝ հունարենի միջոցով. առաջինը առօրեական է և նշանակում է «Սին (Լուսին աստվածը) ողջ պահեց ինձ», երկրորդը նշանակում է «աստված մեզ հետ» (երկուսն էլ ահա Աստ. բա.)։ Առաջինը մի ամբողջ նախադասություն է խոնարհյալ բայաձևով, երկրորդը նախադասության խնդիր, բայց մենք, անգիտակից այս բոլորին, գործածում ենք նրանք իբրև սովորական հատուկ անուն։ Նման հատուկ անուններ դեռ շատ կարելի է գտնել լեզուների մեջ։

Թյուրքերենում կան մի խումբ տեղանուններ, որոնք առաջացել են հունարեն տեղանվան նախդրի հայկական ձևից։ Այսպես՝ Գալիա, մայրաքաղաքի անունն է, բրբ. Սառամբուլ, որ ուրիշ բան չէ, եթե ոչ հուն. εἰς τὴν πόλιν «ի քաղաքն». հարցրել են. ո՞ւր ես գնում,— պատասխանել են՝ ի քաղաքն (Նախդրիվ հայկական) և այս ձևը դարձել է Կոստանդնուպոլիս մայրաքաղաքի անունը։ Ծագումը այնպես է մոռացվել, որ մինչև անգամ Թյուրքերը առուգաբանում էին մի ժամանակ իսլամ բոլ «մահմեդական շատ»!

Նույնպիսի նախդրիվ հայկական ձևեր են Թյուրքիայում հետևյալ անուննե րը.

Իզնիկ «ին Նիկեան—ի Նիկիա», Իզմիդ և ավելի կրճատ՝ Իզմիդ, որ է «ին Նիկոմի՛դիան—ի Նիկոմիդիա»։

Սամսոն «ին Ա՛միսոն», որ է «յԱմիսոս» (Պոնտոսի նշանավոր քաղաքի անունը)։

Աբանքյոյ (կղզի է Արշիպելագում, հին անունն է Քիոս) ծագում է հն. նախդրով հյց. «էս թին Քիոնա ձևից։

Բայց եթե քերականությունն է, որ կազմում է լեզուների չափանիշը, ուրեմն այն լեզուները, որ քերականություն չունեն, չունեն նաև չափանիշ որոշելու, թե ինչ են։ Ըստ այսմ, մի այնպիսի լեզու, ինչպես աննամերենն է, որի քերականությունը ուրիշ բան չէ, եթե ոչ անփոփոխելի հարադրություն, կարող է խառնվել մի ուրիշ լեզվի հետ, և մենք միջոց չենք ունենա որոշելու, թե ինչն է նրա մեջ բնիկ, և ինչն է խառնուրդի արդյունք։ Խառնուրդ լեզուների շարքը պետք է դասել նաև այն ժարգոնները կամ այն ազավաղյալ լեզուները, որ խոսում են զանազան ազգեր բնակվելով ուրիշ ժողովուրդների հետ կամ ուզելով խոսել նրանց հետ։ Այսպես՝ հրեաները Գերմանիայում, ընդունելով տիրողների լեզուն, հարմարեցնելով այն հրեական արտասանությանը և ավելացնելով նրա մեջ բազմաթիվ եբրայական բառեր, ձևացրել են մի լեզու, որ կոչվում է ժարգոն, բայց ոչ այլ ինչ է, եթե ոչ գերմանական մի բարբառ։

Այն աշխատության մեջ, որ հրատարակեց Բիռնբաումը (Birnbaum) հրեական իդիշ (yiddisch) լեզվի ուսումնասիրության համար, ամենևին չենք տեսնում, որ այդ լեզուն ինչ-որ խառնուրդ ներկայացնի։ Նա միայն գերմաներեն է. կան բառեր, որ գերմանական սովորական լեզվում չկան, ինչպես՝ lichtig «լուսավոր», փոխանակ ասելու hell, բայց նրանք էլ գերմաներեն են կամ հրեաների ձեռքով նոր կազմված կամ փոխ առնված այն բարբառից, որից ծագել է իդիշը։ Կան նաև եբրայական բառեր, ինչպես՝ lošon «լեզու», բայց սրանով խառնուրդ լեզու չի շինվում։ Ո՞ր լեզուն օտար փոխառյալ բառեր չունի։

Ֆրանսիական, իսպանական և հոլանդական գաղութների տարուկները, ուզենալով խոսել իրենց տերերի լեզվով, կազմել են կրեոլ (créole) կոչված լեզուները, որոնք նույն ֆրանսերենն ու հոլանդերենը կամ իսպաներենն են, միայն քերականությունը ջնջված, բառարանը կրճատված և արտասանությունը վերածված նեգրականի։ Մելանեզիայում էլ կազմված է մի տեսակ պիջին-անգլերեն (pidgin English), որ ուսումնասիրել է Հալլը (Hall, Melanesian Pidgin English: Grammar, texts, vocabulary, *Ամերիկա, 1943*)։ Հեռավոր Արևելքի ժողովուրդները եվրոպացիների հետ խոսելիս գործ են ածում նման ոճով այլափոխված պիջին-անգլերենը, որ չինարեն արտասանությամբ և անգլերեն

բառերով լեզու է։ Միջերկրականի նավահանգիստներում կան նաև ազավաղյալ լեզուներ, որոնք կոչվում են sabir կամ lingua franca և ամառնական տարրերով կազմված ազավաղյալ լեզուներ են։

Այսպիսի մի ֆրանկ-լեզվով (lingua franca) խոսում էր մի հայ գամիներիկյան, Փարիզում. Լայրնիցը, որ ապրել է Փարիզում, 1672—6 թվերին տեսել ու խոսել է նրա հետ։ Լայրնիցը ասում է, թե այդ լեզուն կազմված էր լատիներենից, որից հանված էին հոլովները, ժամանակները և մյուս թեքումները. այս լեզուն բավական հեշտությամբ հասկացվում էր, ինքը հայ գամիներիկյանը դյուրությամբ խոսում էր այդ լեզվով, որովհետև վարժվել էր։ Այդ լեզուն կամ գամիներիկյանը ինքն էր հնարել,—ասում է Լայրնիցը,—կամ ուրիշից էր սովորել։ Մաթորեզը (Mathorez), որ տալիս է մեզ այդ տեղեկությունը (REA, հա. 2, պրակ. 1, էջ 89), կարծում է, թե հավանաբար Լայրնիցը համաշխարհային մի լեզու հորինելու գաղափարը այն հայ գամիներիկյանի հետ խոսակցելու վրա է հղացել։

Այս բոլորը չի կարելի խառնաձին կոչել այն մտքով, որով հասկանում են ամենք «լեզվախառնուրդ». այդ լեզուներով խոսող ազգերն արդեն խառնուրդ ժողովուրդներ չեն ներկայացնում և այդ լեզուներով խոսում են միայն ներքաղաքների հետ, հետևաբար և վատ սովորած լեզուներ են, նման այն լեզվին, որից մի օրինակ տրինք (էջ 407—408), և, վերջապես, նրանց մեջ ջնջված է քերականությունը, մինչդեռ լեզուն խառնաձին կոչվել կարող է միայն այն դեպքում, երբ երկու քերականություններից խառնուրդ կա ձևացած։ Սիերրա-Լեոնայում ընիկները խոսում են broken-english, Բրազիլիայում՝ lingua geral Brazilica, որ Բրազիլիայի ծառաները օգտագործում են ապիտակ տերերի հետ խոսելիս։ Մադագասկարի կղզիներում խոսվում է Beach-la-mar-ը, որ անգլերեն է՝ Պոլինեզյան ձևով ազավաղյալ։ Ահա մի օրինակ Աֆրիկայի տեզացիների խոսած պիջին-անգլերենից (Garner, Apes and monkeys, Boston, 1900, էջ 269). Ntyii'e one; njina'e one; all two 'e one, one. Ntyii 'e one mudder; njina 'e one mudder; all two 'e one, one. Ntyii 'e one fader; njina 'e one fader. All two 'e one.

Ուզում է ասել, թե ntyii և njina (գորիլայի երկու տարբեր տեսակներ) ունեն մի հայր, բայց տարբեր մայր, այսինքն հարմանայր են, բայց ոչ համամայր, ուստի և՝ կես եղբայր են։

Ոմանք այս պիջին կամ կրեոլ և այլն լեզուների հետ ուզում են համեմատել, օրինակ, ֆրանսերենը, իսպաներենը, ռումիներենը, որոնք տեղացի ժողովուրդներից սովորած և իբր թե աղավաղված լատիներեն են։ Այս համեմատությունը սխալ է. պիջին լեզվով խոսողները իրենց մեջ չեն խոսում այդ լեզուն, այլ միայն օտարների հետ և շատ պարզ է, որ քանի շատանա շփումը օտարների հետ, հետզհետե ավելի պիտի սովորեն, այսինքն՝ պիտի մաքրեն աղավաղումները և ուղղակի պիտի դարձնեն ֆրանսերեն կամ անգլերեն։ Միայն այն դեպքում, երբ այդ տեղի կունենա, երևույթը կարելի կլիներ համեմատել ֆրանսերենի, իսպաներենի կամ ռումիներենի հետ, որովհետև տեղացիք, սովորելով լատիները, ամբողջապես դարձրին իրենց ամենօրյա սեփական լեզուն։ Ընդհակառակը, երբ շփումը պակասի ու վերանա, այդ լեզուները էլ պիտի ջնջվեն բոլորովին։ Այսպես եղավ, օրինակ, ռուսենորսկ (russenorsk) լեզուն սառուցյալ օվկիանոսի ափերին։ ԺԹ դարի 2-րդ կեսին նորվեգացի և ռուս ձկնորսներ հաստատվելով այստեղ, իրար հասկանալու համար սարքել էին առանց քերականության մի լեզու, սակայն ոչինչ հաստատուն բան չստացվեց և այժմ այդ լեզվից գրեթե ոչինչ չի մնացել[1]։

Ջ. վան Գիննեկենը (J. van Ginneken) այսպիսի խառնուրդ լեզուները կոչում է «հայր» և «մայր» անուններով և այս անունները դնում է ոչ իբրև բանաստեղծական պատկեր, այլ՝ իրական։ Երկու տարբեր լեզվով խոսող անձինք ամուսնանում են իրար հետ (օրինակ՝ մի հայ խալդի հետ) և նրանց զավակները խոսում են մի լեզու, որ թե հոր, և թե մոր լեզվի ազդեցության արդյունքը կամ գումարն է։ Ըստ այսմ՝ հայերենի մայրը կոչում է հնդեվրոպականը, իսկ հայրը խալդին։ Անգլերենը մոր կողմից գերմանական ընտանիքին է պատկանում, բայց նա ունի հազարավոր ֆրանսերեն և լատիներեն բառեր, ինչու հոր կողմից ռոմանական ընտանիքին չպիտի պատկանի. պատասխանը միշտ նույնն է, որովհետև ըստ ծագման լեզուն մեկ է և իր ծնողի անունով էլ կոչվում է. քերականությունը այս ծագման հարաբար նշանն է. փոխառությունները օտար, եկամուտ, հավելվածական տարրեր են, որ այսօր կան, բայց սկզբում չկային և վաղը պարագաների բերմամբ կարող են անհետանալ. քերականությունը

[1] Այդ լեզուն ուսումնասիրել է Olaf Broch, Russenorsk, Berlin, 1928. տե՛ս այս մասին BSL, 30, № 91, էջ 56—57։

միշտ կմնա։ Նույնիսկ հայր և մայր անվանակոչությունն էլ անհարմար է, որովհետև խառն ամուսնությունների դեպքում էլ ընտանիքի սովորական լեզուն ընդհանրապես մեկն է լինում և միայն երկլեզու ժողովուրդների մեջ է, որ ընտանիքի խոսակցական լեզուն կարող է կրկնակի լինել, ինչ որ առանց ամուսնության էլ կրկնակի պիտի լիներ։ Վ. Ֆիգանին զանազանելով երկու տարրերը, այսինքն նրանք, որ առաջացել են լեզվի նախնական ծագման պատճառով, և նրանք, որ առաջացել են մի արևէ այլ լեզվի հետ կենակցությամբ, կոչում է առաջիններըազգակցական (parentela), երկրորդները՝ հարակցական (affinità)։ Ամեն լեզու կարող է ունենալ բազմաթիվ հարակցական տարրեր, բայց իր ազգակցական տարրը միայն մեկ է, և այդ ճյուղին էլ պատկանում է բնականաբար։ Արժեք չունի նաև քանակը, քան որում հարակցական տարրերը կարող են պարագաների բերմամբ վանած լինել ազգակցական տարրերը և նրանից շատ ավելի գերազանց թիվ կազմել։

Մի ուրիշ հայացք ունի Վանդրիևը (Le langage, էջ 340) լեզուների խառնուրդի և ջնջման վրա։ Առնելով բրետան լեզվի և ֆրանսերենի խառնուրդի օրինակները, ասում է, թե որոշ ժամանակ այլևս անկարելի կլինի իմանալ, թե խոսում են բրետան՝ ներծծված ֆրանսերենով, թե ֆրանսերեն են խոսում բրետանի ինչ-որ մնացորդներով։ Բրետոնը կլիներ շաքարի մի կտոր, հալված ջրի մի զանգվածի մեջ։ Կարելի է այս դեպքում ասել, իհարկե, թե բրետոն չկա, բայց դա կլիներ երևութապես, իսկ իրապես բրետոնը գոյություն ունի՝ ցորչափ այդպիսի դեպքեր կան։ Սրանից էլ՝ հետևցնում է, թե ֆրանսիացիները գալլերեն են խոսում, որովհետև պահում են դեռ գալլերենի հետքեր, և դեռ ավելին՝ ֆրանսիացիները, ուրեմն, խոսում են միաժամանակ լատիներեն և ուրիշ մի քանի լեզուներով, այն բոլորով, որոնցից որևէ հետք խառնվել է լատիներենի մեջ։

Այսպես մտածելով կգանք այն տեսակետին, թե ամեն լեզու խառնածին է ավելի կամ պակաս չափով։ Սակայն սրան հակառակ է Մեյեի տեսությունը, որ ասում է, թե մի մարդ միաժամանակ մի լեզվով է խոսում։ Լեզվի միության գազափարը, ինչքան էլ որ քննիչը օտար տարրեր գտնի այնտեղ, հաստած է խոսողի գիտակցության մեջ։ Ֆրանսերենը լատինական լեզու է և անգլերենը՝ գերմանական, որովհետև այդ լեզուներով խոսող ան-

ձևերը, ինչքան էլ որ դեպի նախնիքը գնանք հետ, բոլորն էլ այդ դգացմունքն են ունեցել։

Ավելի մոտիկից նայելով հարցին՝ վանդրիեսը անում է հետևյալ դատողությունը. նախ դուրս է հանում բոլոր փոխառյալ բառերը, որովհետև փոխառյալ բառեր գործածողը ամենևին չգիտե, թե ինչ լեզվից է վերցրած դրանք։ Բայց մեծ կարևորություն է տալիս ընդօրինակյալ ձևերին (калька, պատճեն)։ Եթե, ասվում է, օրինակ՝ Հնդկաստանի պորտուգալերենում շատանան governador's casa-ի նման դեպքեր, չպիտի գա մի րոպե, երբ խոսողը չիմանա, թե անգլերեն է խոսում, թե պորտուգալերեն։ Այսպիսի վիճակը կոչվում է խառնածին լեզու։

Սակայն այդ եթե–ն չի եկել և չի գալիս. ոչ էլ գալու է։

Հայերեն էլ ասում ենք Լոռիս Մելիքով, բայց սա մեզ համար միակուռ մի անուն է և ամենևին չենք էլ գիտակցում, թե նա Լոռի գավառի անվան վրացերեն սեռականն է։ Սրան նման է Բեկթաբեկ անունը կամ Բեկթաբեկյան ազգանունը, որ նշանակում է «բեկերի բեկ», թրք. beglar-begi. բայց քանի՞ մարդ գիտե, թե սա բեկ բառի վրացերեն սեռական հոգնակին է։ Եվ կարելի՞ է ասել, եթե հայերենի մեջ շատանան ու շատանան Լոռիս Մելիքովի ու Բեկթաբեկի նման ձևեր, մի օր էլ վրացերենի սեռականը կմտնի հայերենի մեջ, և կստացվի հայ-վրացական խառնուրդ մի «լեզու»։ Ասում են, թե մի ծաղիկով գարուն չի գա, բայց սա ոչ միայն մի ծաղիկ չէ, այլ մի ծաղկի մի տերևի մի փշրանքն էլ չէ։

Լեզուների խառնուրդի վերաբերմամբ կարող ենք տալ հետևյալ եզրակացությունը։

Երբ մի լեզու մի ուրիշ լեզվի հետ շատ երկար կենակցություն ունենա և նրա ազդեցության ենթարկվի ամենամեծ չափերով, կվերցնի նրանից անթիվ բառեր (նույնիսկ ավելի, քան իր սեփականը), կվտխի իր շարադասության և համաձայնության կանոնները, կթարգմանի ամբողջ ոճաբանությունը, կարող է վերցնել շեշտը և արտասանության եղանակը, նաև իրեն պակասող այնպիսի ձայներ, որ կան ազդող լեզվի մեջ, երբեմն նաև դանազան մասնիկներ, մեկ խոսքով՝ կկապկի ամբողջ այն լեզվի հոբինվածությանը, բայց քերականությունը փոխ չի առնի։ Այն րոպեից, երբ հարցը հասնում է քերականության փոխ առնելուն, այլևս ամբողջ լեզուն է փոխ առնում, և իր հին լեզվականությունը դառնում է այժմ փոխառություն։ Այս բոլորի համար լավագույն

օրինակ է ուսխերինը, որ 2000 տարուց ի վեր գոնվել է հայոց քաղաքական, կուլտուրական և կրոնական ազդեցության տակ։ Այդ ազդեցության տակ ուսխացին գառել է երկվեզվյան. խոսում է ուսխերեն և հայերեն բոլորովին ազատ. շատ անգ մոռացել է բնիկ լեզուն (ուսխախոս են մնում միայն երկու գյուղ), ուր որ պահել է ուսխերենը, ունի հայերենից փոխառյալ բառեր, ազդվել է քերականորեն, օրինակ՝ ջնջել է դասանիշների սխտամբ, առնդել mano «որթ» հարաբերականը (Dirr, Einführ., էջ 334, 354), թերես և ուրիշ երևույթներ, բայց չի տեսնված մի գեպք, երբ ուսխերեն և հայերեն քերականության ձևերը իրար հետ մի նոր խառնուրդ կազմեին։ Ո՞ր լեզուն այսքան ժամանակ (2000 տարի) և այսքան ուժեղ ձևով գոնված է եղել պատմության մեջ մի ուրիշ լեզվի ազդեցության տակ, որպեսզի ենթադրենք, որ խառնուրդի գաղափարը որևէ լեզվում գոնե հնարավոր տեղի ունեցած է եղել։

Առանձին լեզվի շատ գործածական մանրանկարը տեսնում ենք ամեն օր խառն ամուսնությունների մեջ։ Կան այժմ մեր շատ քնատնիքներ, ուր այրը հայ է և կինը ռուս (կամ վրացի, ադրբեջանցի և այլն) և կամ՝ ընդհակառակը։ Երեխան մեծանում է երկուսի հետ միասին, սովորում է երկու լեզուներն էլ, խոսում է քե մինով և քե մյուսով շատ կանոնավոր կերպով, բայց չի առհդվում որևէ խառնուրդ լեզու։ Չի տեսնվել մի գեպք, երբ նորալեզու երեխան ասի, օրինակ, я виж-ում եմ (я вижу) կամ ես տեսն-ում եմ (ես տեսնում եմ), որոնք պիտի ներկայացնեին երկու քերականությունների (այսինքն երկու լեզվի) ձուլումը։ Այսպիսի օրինակ չկա։ Նրա՝ ծայրահեղ խառնուրդները պիտի լինեին, օրինակ՝ я կարդա-ю կամ ես чит-ում եմ, կամ ավելի սովորական՝ я կարդա буду կամ ես читать եմ անում։

Այն, ինչ որ այստեղ ակնարկեցի կարճ խոսքով, ընդարձակ ուսումնասիրության նյութ է դարձրել մի ֆրանսիացի լեզվաբան՝ ժ. Ռոնժա (J. Ronjat) և գրել է 157 էջանոց մի աշխատություն (Le développement du langage observé chez un enfant bilingue. Paris, 1913)։ Այդ լեզվաբանը ամուսնացած էր գերմանախոս մի կնոջ հետ. իրենց որդու հետ հայրը խոսում էր միշտ ֆրանսերեն, իսկ մայրը՝ միշտ գերմաներեն. իր շրջապատի անձինքն էլ խոսում էին՝ ոմանք միշտ ֆրանսերեն, ոմանք էլ՝ միշտ գերմաներեն։ Այսպես՝ մանուկը հենց սկզբից գոնվեց

երկլեզվյան շրջանում և այդպես էլ մեծացավ։ Լեզվաբան հայրը մեծ խնամքով և ուշադրությամբ հետևեց մանկան զարգացման և լեզու ձեռք բերելու բոլոր ելևէջներին։ Այսպիսի բացառիկ երևույթ աննկարին կամ շատ դժվարին է գտնել ուրիշ տեղ. ամեն տեղ էլ մարդիկ խոսում են մեկ այս մեկ այն լեզուն, բայց ոչ թե վճռապես ու դիտմամբ երկու տարբեր անձինք երկու տարբեր լեզուներ անխառն։ Բացի սրանից՝ կատարված ուսումնասիրությունները եղել են պատահական անձանց կողմից, իսկ այս դեպքում լեզվաբանի կողմից առեղծված և հատուկ ուսումնասիրված մի երևույթ էր։ Ուսումնասիրության արդյունքը հետևյալն է.— Երեխան սովորեց երկու իրարից շատ տարբեր այդ լեզուներն էլ բացարձակ մաքրությամբ և ճշտությամբ. երկու լեզուներն էլ միացին նրա մտքում առանձին-առանձին. ոչ մի խառնուրդ չկատվեց. ոչ մի լեզու չվտերվեց մյուսի հետ. երկու բառարան և երկու քերականություն գոյություն ունեին նրա գլխում։ Բացի սրանից, երկու լեզուների միաժամանակյան ուսումը ոչ ուշացրեց և ոչ էլ դանդաղեցրեց լեզվի, այն էլ երկու լեզվի առացումը։ Եվ երեխան երկու լեզուներն էլ սովորեց այնքան ժամանակում, որքան որ պետք էր մի լեզու սովորելու համար։ Այսպիսով, հաստատվում է ուրեմն, թե՝ 1) բազմալեզու անձանց մոտ ամեն մի լեզու առանձին տեղ ունի և մյուսների ազդեցության ենթակա չէ, 2) լեզուների խառնուրդ գոյություն չունի, 3) եթե երկու լեզուներից մեկն ու մեկը տեղի է տալիս կամ ջնջվում է, դա արդյունք է հասարակական պայմանների։

Առաջին երկու եզրակացությունները փաստապես ցուցադրվեցին Ռոնժա լեզվաբանի որդու օրինակով և նրա ուսումնասիրությամբ։ Երկրորդ եզրակացության համար էլ կա մի ուրիշ շատ հասարակ և շոշափելի օրինակ։

Օրինակը դարձյալ ֆրանսիական ընտանիքից է. հայրը ֆրանսիացի էր, մայրը՝ գերմանուհի. ապրում էին ֆրանսիական շրջանում։ Երկու որդի ունեցան. մայրը անդրանիկի հետ միշտ գերմաներեն խոսեց. ուստի երեխան էլ սովորեց երկու լեզու՝ անխառն։ Երկրորդ որդու հետ մայրը այլևս չունեցավ նույն հարաբերությունը և երբեմն գերմաներեն էր խոսում, երբեմն ֆրանսերեն։ Երեխան թեև դիտեր երկու լեզու, բայց նրա մեջ գերակշռեց միայն ֆրանսերենը, և այլևս գերմաներեն չէր խոսում։ Այս օրինակը ցույց է տալիս, որ երկլեզվությունը մտքի ծանրաբեռնու-

թյուն է. և մեկը կամ մյուսը պիտի վերանա, համաձայն հասարակական պահանջին։ Որը ավելորդ է, կջնջվի։

Հառնուրդի երևույթը ընդունելի է միայն բարբառների համար։ Մեր աչքի առաջ տեսնում ենք, թե ինչպես հայերենի բարբառները խառնվում են իրար հետ և գրականի հետ։ Օրինակ՝ պոլսեցի գաղթականը ապրելով Երևանում մի քանի ժամանակ և ազդվելով տեղական բարբառից՝ կազմում է այնպիսի նախադասություններ, որոնք երկու բարբառի խառնուրդ են. ինչպես՝

Աճիկա ասում է.

Տուճէ՞ն կուգաս, չէ ճէ խանութից.

քույրս Գոլսի և Ղարաբաղի բարբառների խառնուրդով կազմում էր.

Քա աճիկա մին պէն ասըմ ա...

Նման դրությյան մեջ կարող են գտնվել նաև իրար շատ մոտիկ լեզուները, ինչպես՝ արամերեն և արաբերեն, դանիերեն և նորվեգերեն և այլն։ Բայց այսպիսի բան կարող չէ լինել օտար կամ տարբեր լեզուների միջև։

Բարբառները փոխառություններ ունենում են նաև հին լեզվից, մեր մեջ գրաբարից, վերջին կարգի փոխառությունները լիքն են մեր ժողովրդական լեզվի մեջ. օրինակ՝ մեր ամենօրյա գործածական բառերից՝ հայրիկ, մայրիկ, քույրիկ բառերը գրականից են փոխառյալ և դրա համար էլ պահում են այ, ույ երկբարբառները. հակառակ դեպքում պիտի ունենայինք ա, է, ու և այլն։

Վերջացնում ենք այս գլուխը՝ տալով Համշենի հայոց բարբառից մի հետաքրքիր և տարօրինակ պատկեր, որ ոչ թե միայն ուրիշ հայ բարբառի, այլ կարծեմ ուրիշ որևէ լեզվի մեջ էլ դժուրյուն չունի։ Համշենցիք ունեն առանձին հայերեն բարբառ, բայց միևնույն ժամանակ գիտեն թյուրքերեն. շատ է պատահում, որ թյուրքերեն փոխառյալ բառերը խոնարհվեն թյուրքերեն քերականությամբ և այդ զուտ թյուրքերեն ձևով էլ մտնեն հայերեն նախադասության մեջ. ինչպես՝ էնիր Մաշօդին քիչ մը յարալադիլէր (Նրանք Մաշոյին մի քիչ վիրավորեցին), իրաց հէդ ույալում (իրար հետ հարմարվենք), էգաս մէզի հէդ կօշդի (առավ մեզ հետ միացրեց), գէդ թէ գ՛աս իրաց հէդ դօդուշ՛ուրուք (եթե

---

[1] *Այս բոլորի մասին տես Մեյեի հոդվածը* BSL, *1916, հատ. 19, № 62, էջ 25—27։*

գյուղ գաս, իրար հետ կկռվենք), դուք շատ փարա կազօնո՛ւրսուն ուզ (դուք շատ դրամ եք շահում)։

Այս խոսքերի մեջ ստորագծյալները զուտ թյուրքերեն են և թյուրքերենի քերականության համաձայն էլ խոնարհված. այսպես՝ յարալադիլէր կար. հոգ. գ, ուլայում հրմ. հգ. ա, կօշդի կար. հգ. գ, դօղուշուրուք ներկ. հգ. ա, կազօնուրսուն ուզ ներկ. հգ. բ։ Ուրիշ բարբառում պիտի լինեին նրանք յարալամիշ ըրին, ուլմիշ ըլլանք, դողուշմիշ կիլլանք, կօշմիշ ըրավ, կազանմիշ կըլլաք։ Բայց սրանք էլ խառնուրդ չեն, այլ ներկայացնում են երկլեզվյան նախադասություն. խոսողը, որ շատ լավ տիրապետում է երկու լեզուներին, սկսում է զուտ հայերեն, հանկարծ միտքը փոխում է և շարունակում է զուտ թյուրքերեն. ոչ մեկը երկու ձևի դուրմար կամ խառնուրդ չէ։

Երկլեզվյան դրության երևույթներից մեկն էլ հետևյալն է.—60 տարի առաջ, պոլսահայերս, երբ իրար որևէ հեքիաթ կամ անեկդոտ էինք պատմում, թեև պատմվածքը հայերեն էր լինում, բայց խոսակցությունները լինում էին երկու լեզվով։ Երբ պատմվածքի մեջ ներկայացնում էինք երկու խոսակիցներ, եթե նրանք սովորական անձեր էին և կամ հատկապես հայ (տերտեր, վարդապետ և այլն), խոսում էինք հայերեն լեզվով, իսկ եթե նրանք թյուրք էին (օրինակ՝ թաղավոր, զինվոր, մոլլա, դերվիշ, ինչպես և՝ ջին, փերի) խոսում էինք թյուրքերեն, որի հետ միաժամանակ տալիս էինք հայերեն թարգմանությունը. Օրինակ՝

«Թաղավորը կըսէ քի՝—Սէն քիմ սին, տուն վոյ էս».—Ան ալ կըսէ քի՝—Պէն սէնին քըղըն ըմ, էս քուկին աղջիկդ իմ» և այլն։

«Փերին կըսէ. Ւ՛ն մի սին, ջին մի սին. Ւ՛ն էս, չէնէ ջին էս».—Անսալ կըսէ. նէ ւ՛ն իմ, նէ ջին իմ, ինսան օղլու ինսան ըմ.—նէ ւ՛ն էմ, նէ ջին էմ, մարդու զավակ մարդ էմ»։

Այսպես բոլոր խոսակցությունները՝ երկու լեզվով միաժամանակ, առանց շփոթելու և առանց երկուսը իրար խառնելու։

Երևույթը այն է, ինչ որ հաճախ պատահում ենք այժմ մեր կյանքում։ Մեր թերակիրթ ինտելիգենտները, որոնք գիտեն բավականին թե ռուսերեն, և թե հայերեն և խոսում են երկու լեզվով էլ բավական ազատ, խոսակցությունը վարում են միաժամանակ թե մեկով, և թե մյուսով. սկսում են, օրինակ, հայերեն, անցնում են ռուսերենի, նորից հայերեն և այսպես շարունակ. հաճախ միևնույն խոսքը կրկնում են երկու լեզվով։ Ինչպես՝ այ

տա, слушай, знаешь что, *ես գնացի նրա մոտ, խոսեցի*, черт побери, *ասաց* я не могу... *ոնց անեմ ինքս էլ չեմ իմանում*, как делать, я сам не знаю.

Վերջապես այս երեսուչքի ամենի զարգացած պատկերն է այն, որ տալիս են մեզ մեր մի քանի հին աշուղները, շարադրելով իրենց աշուղական ստղերը հայերեն, թյուրքերեն և այլն մի քանի լեզուներով խառն։

Ահա Միսկին Բուրջիի կաժդիյ դեն ստղից մի տուն՝ հինգ լեզվով՝ հայերեն, ռուսերեն, վրացերեն, պարսկերեն և ադրբեջաներեն։

Մեյլի հարիֆ մարդ պիտի՝ խոսքերըս իմանայ,
Պադի սիւդա, սկազալ մընէ ադին բաղ անա,
Մօտի էրթի զարմանգի, գենացվալէ, չեմ Քանայ,
Դուբրանի Քու, զարդիմանդ, բիա՝ միրիմ զամխանա,
Միսկին Բուրջի էյլիր ինդի սանա իլթիմաս։
(Ինար Հայկական, Պետերբուրգ, 1868, էջ 396—7)։

Կարելի չէ ասել, Թե Միսկին Բուրջին խոսում էր հինգ լեզվից խառն մի լեզվով, այլ Թե՝ նա գիտեր հինգ լեզու, որ գործ էր ածում պետք եղած դեպքում։

Սրանցից ոչ մեկը խառնուրդ լեզու չէ. սրանք իրար կողքի դրված առանձին-առանձին լեզուներ են։

Միսկին Բուրջիի աշուղական երգին նման է պարսկահայ ֆոլկլորի մի կարճ երկտող, որ է

Այվասիլի էրքէքէ,
Ջամիչ-ֆընտըք ակիքէքէ։

Այս երկտողը՝ նախնված է երգելու համար հույների կազանդը, որ մեր էլ կազանդի հետ նույնն է։ Առաջին տողը զուտ հունարեն է՝ առանց խառնուրդի. երկրորդ տողը զուտ թյուրքերեն է. Թեև այդպես կա չամիչ բառը, որ հայերեն է, բայց չամիչ նաև թյուրքերեն է և զուտ թյուրքերեն լեզվով չամիչ բառ չկա (ասում են՝ քուրու իւզիւմ, որ է՝ «չար խաղող»)։ Նույնիսկ ֆընտըք «կապին» բառը, որ թյուրքերեն է, չի ասված ֆընտըխ, որ հայոց գործածած ձևն է, այլ ֆընտըք, որ զուտ թյուրքական ձևն է։

Այստեղ էլ, ուրեմն, հայերի կազմած այդ ժողովրդական օտարալեզու երկտողի մեջ, երկու տարբեր լեզուներ կողք կողքի են՝ առանց որևէ խառնուրդի։

Կան «գիտուններ», որ լեզվի ծագման հարցում մի ուրիշ ձևով են դատում։ Որովհետև մարդկությունը իր նախնական շրջանում կազմված էր իրարից անկախ ապրող բազմաթիվ հորդաներից, ուստի և նրանք ունեին առանձին լեզու։ Հետագայում իրար հետ շփման ժամանակ հորդաները իրար հետ միացան, ուստի միացան նաև նրանց լեզուները և այդ խառնուրդից կազմվեց մի նոր լեզու։ Այս դատաստարի պաշտպանն է Մառը, որը ասում էր, թե ոչ թե լեզուների ծագումը պետք է դնել մեկից, այլ բազմաթիվ լեզուներից պետք է հանել մեկ լեզու։

Այդ դատողությունը սխալ է. եթե ընդունենք, որ բազմաթիվ հորդաներ ամեն մեկը տարբեր լեզվով միացան իրար հետ և մի ամբողջություն կազմեցին, լեզուների միացման գործում առաջացավ ոչ թե խառնուրդ կամ խառնակություն, այլ պարզապես ձուլում։ Այսինքն՝ հաղթող հորդայի լեզուն հաղթեց նաև հաղթված հորդայի լեզվին և նրանցից մեկը դարձավ ընդհանուր։ Այսպես բոլոր հորդաների լեզուները մի առ մի ջնջվեցին և վերջին միակ հաղթական հորդայի լեզուն տիրապետեց բոլորի վրա։ Այս ենթադրությունը առ առավելն հանգում է այն բանի, որ, օրինակ՝ հնդեվրոպական նախալեզվով խոսող ժողովուրդը, թեև միալեզու, բայց միատարր չէր, այլ բազմաթիվ (թեկուզ հարյուրավոր) հորդաների գումարման և ձուլման արդյունքը։ Բայց որ նա վերջապես հասել էր մի ընդհանուր լեզվի, որ մենք կոչում ենք հնդեվրոպական նախալեզու, գիտական ճշմարտություն է։ Այսպես հասկանալ նաև մնացյալ բոլոր նախալեզուների համար։ Իսկ լեզուների ընդհանուր միության և մի նախալեզվի մասին տես այս գրքի «Ընդհանուր նախալեզու» գլուխը։

Մենք դիտմամբ այսքան երկարացրինք այս հարցի քննությունը, որովհետև նա սկզբունքային և շատ հիմնական նշանակություն ուներ մեր լեզվի համար։ Նրանք, որ հայերենը համարում են խառնուրդ լեզու՝ հնդեվրոպականից և կովկասյանից կազմված կամ բազադրված, գիտական սխալ տեսակետի վրա են կանգնած։ Լեզվաբանական օրենքներին հակառակ է լեզվի այսպիսի խառնուրդի դատաստարը։ 1) Եթե հայերենը կովկասյան է, ուրեմն հնդեվրոպական չէ և նրա հնդեվրոպական տարրերը փոխառություն են, 2) իսկ եթե հայերենը հնդեվրոպական է, ինչպես այժմ են տալիս նրա ամենաանհրաժեշտ բառերի ծագումը և քերականությունը, ուրեմն կովկասյան չէ, և նրա կովկասյան տարրերը փոխառություն են։

Առանձին լեզվի կողմնակիցները քիչ տան են չափացուցված և ենթադրական տեսություններ, այլ գործնական և իրական մի օրինակ։ Փոքր Ասիայի տասնյակ լեզուները (բյուրքաներեն, լյուզերեն, փոյուգերեն, կապադովկերեն, հաքերեն և այլն) առանձին և անկախ ապրեցին ամբողջ դարեր. հելլենական կուլտուրայի տակ նրանք ջնջվեցին և ամբողջովին անհետացան։ Բյուրքերի տիրապետության ժամանակ էլ նույնպես մոռացան և այսօր նրանք բյուրքախոս և բյուրք են։ Ո՛չ մի խառնուրդ լեզու դուրս չեկավ նրանցից։ Ասորեստանյան կայսրությունը մարերի ու պարսիկների արշավանքով կործանվեց։ Ասորեստանցիք մոռացան իրենց լեզուն, խոսեցին արամերեն, այսօր էլ արաբերեն են խոսում և արաբ են համարվում։ Ո՛չ մի խառնածին լեզու դուրս չեկավ դրանից։ Մարերը առանձին լեզու ունեին և մի մեծ կայսրություն կազմեցին. բայց հենց որ բնական պարսիկների տիրապետության տակ, լեզու և ազգություն մոռացան և պարսկախոս դարձան։ Այսօր պարսկական ապրելջանում բնակչությունը պետականորեն պարսիկ, կրոնով արաբ և լեզվով ադրբեջանցի է։ Մարից՝ պարսիկ և պարսիկից՝ ադրբեջանցի անցման շրջաններում ո՛չ մի խառնածին լեզու չստեղծվեց։ Նմանապես Փոքր Ասիայի հայերը առավար մեծամասնությամբ բյուրքախոս են, և նրանցից ո՛չ մի խառնածին լեզու չի առաջացել։ Վերը օրինակ բերի ուտիերենը, բայց այդ պատկանում էր Նախիի շրջանում գտնված ուտիներին, ինչ որ հին Ագվանից երկրի մասն է կազմում։ Իսկ երբ առանձնք Հին Հայաստանի Ուտի նահանգը, պատկերը ավելի ցայտուն կդառնա։ Ուտի նահանգը, իբրև Ագվանից երկրից խլված մի կտոր, ուտիական բնակչություն ուներ և խոսում էր, անշուշտ, ուտիերենն։ Հայոց տիրապետության տակ նրանք կորցրին իրենց լեզուն, դարձան հայախոս և հայ։ Ո՛չ մի խառնուրդ լեզու չառաջացավ նրանցից և այսօր Գանձակի շրջանում ո՛չ մի գյուղի և ո՛չ մի անկյունում ուտիերենի ո՛չ մի հետք չի մնացել, ոչ մնաց քիչ հայ-ուտիական խառնուրդ մի լեզու։

Նույն օրինակը ունենք այսօր մեր աչքի առաջ Ամերիկայում։

Հյուսիսային և Հարավային Ամերիկայում խոսվում է 300 տեղական լեզու (սրանք տեղացի կարմրամորթների լեզուներն են)։ Եվրոպացիից նեղս խուժեցին անգլիացիները, իսպանացիները և պորտուգալացիները։ Այսօր Հյուսիսային Ամերիկան ամ-

բողջապես անգլիախոս է։ Հարավային Ամերիկան՝ իսպանախոս (միայն Բրազիլիայում խոսվում է պորտուգալերեն)։ Բոլոր այն 300 լեզուները, որ ոչնչացել են կամ ոչնչանում են, լեզու կամ որ միայն 25—30 հոգի է խոսում։ Դրսից գաղթել են նաև մեծ քանակությամբ իռլանդացիներ, ֆրանսիացիներ, գերմանացիներ, լեհացիներ, նույնիսկ 200,000 հայ և ուրիշ նման ազգեր. բոլորն էլ անգլիախոս կամ իսպանախոս են դարձել կամ դառնում են։ Մեր են այն խառնուրդ լեզուները, որ պիտի առաջանային այսքան ազգերի խառնուրդից կամ համակեցությունից։ Չկան և չպիտի լինեն։

[Ինչ վերաբերում է այն լեզուներին, որոնք, ինչպես լեզվաբանության մեջ սովորական է դարձել ասել, քերականություն չունեն և դրա պատճառով էլ իբր չպիտի տարբերեն բնիկին ու օտարը, և իրապես պետք է խառնածին վիճակ ներկայացնեն, ապա այդ էլ հիմնովին սխալ է։ Նախ սխալ է այն, թե այդ լեզուները քերականություն չունեն. առանց քերականության լեզու չի կարող լինել և չկա։ Այն, ինչ որ տարբերում է անջատական լեզուները կցականներից ու թեքականներից, ոչ թե քերականության բացակայությունն է, այլ քերականական արտահայտության միջոցների տարբերությունը։ Աննամերենը և չինարենը, որոնք անջատական լեզուներ են, զուրկ չեն քերականությունից, այլ միայն մասնիկավորումից ու ներքին թեքումից։ Այնուհետև՝ այս կարգի լեզուները, թեև առաջին հայացքից խաչավորվելու մթնոլորտային հարմար, բայց իրականում բոլորովին թույլ չեն տալիս խաչավորում՝ հենց իրենց ուրույն քերականության պատճառով։ Այսպես, եթե հայերենը վերցնում է, օրինակ, –իստ մասնիկը օտար բառերի անուններին հետ, ինչպես մարքսիստ, կոմունիստ, և միաժամանակ նույն օտար բառերն առանձին առնելով, ինչպես՝ Մարքս, կոմունա, համոզում ենք, որ –իստ-ը մասնիկ է և կարող ենք, ժամանակի ընթացքում, այդպիսի մի շատ գործածվող մասնիկ դնել նաև հայերեն բառերի վրա, դրանով հայերենի քերականությունը ոչնչով չի փոխվի, որովհետև նա ինքը արդեն ունի մասնիկավորում. մասնիկի գաղափարը նորություն չի կցական լեզվի համար։ Ուստի և այսուհետ, ծայրահեղ դեպքում, փոխառվում է մի մասնիկ, թեև այս էլ, ինչպես ասվել է վերը, սակավ է տեղի ունենում, այն էլ փոխառվող բառերի շնորհիվ։ Բայց երբ մասնիկ չունեցող մի լեզու

վերցնի մի ածանցավոր բառ, որքան էլ այդ բառի մասնիկը դիտակցվի խոսողների կողմից, որքան էլ մեծ լինի նրանով կազմված փոխառյալ բառերի թիվը, զարձյալ անջատական լեզուն չպիտի օգտագործի այն որպես բառակազմական միջոց, իր սեփական բառերից նրանով նոր բառեր չպիտի կազմի, որովհետև մասնիկով բառ կազմելն իսկ խորթ է այդ լեզվի քերականությանը։ Իսկ եթե այսպես է բառակազմական մասնիկների նկատմամբ, ապա որչափ առավել ևս անկարելի է քերականության խաչավորումը այնպիսի անջատական լեզուների համար, ինչպիսիք են չինարենը, աննամերենը և այլն։

Այս բոլորն, ուրեմն, ցույց են տալիս, որ խառնածին լեզուներ գոյություն չունեն։ Լեզուները չեն կարող խաչավորվել և առաջ բերել մի նոր, երրորդ լեզու։ Պատմությունը այդպիսի բան չգիտե։ Ահա թե ինչու Ի. Վ. Ստալինը, քննադատելով Մառի և նրա հետևորդների «խաչավորման թեորիան», ասում է.

«Միանգամայն սխալ կլիներ կարծել, որ ասենք, երկու լեզուների խաչավորման հետևանքով առաջվում է մի նոր՝ երրորդ լեզու, որը նման չէ խաչավորվող լեզուներից և ոչ մեկին և որակապես տարբերվում է նրանցից յուրաքանչյուրից։ Իրականում, խաչավորման դեպքում լեզուներից մեկը սովորաբար հաղթող է դուրս գալիս, պահպանում է իր քերականական կառուցվածքը, պահպանում է իր բառային հիմնական ֆոնդը և շարունակում է զարգանալ իր զարգացման ներքին օրենքներով, իսկ մյուս լեզուն աստիճանաբար կորցնում է իր որակը և աստիճանաբար մահանում։

Հետևաբար, խաչավորումը ոչ թե տալիս է ինչ-որ նոր, երրորդ լեզու, այլ պահպանում է լեզուներից մեկը, պահպանում է նրա քերականական կառուցվածքն ու բառարանային հիմնական ֆոնդը և նրան հնարավորություն է տալիս զարգանալու իր զարգացման ներքին օրենքներով։

Ճիշտ է, այդ դեպքում տեղի է ունենում հաղթանակած լեզվի բառային կազմի որոշ հարստացում ի հաշիվ պարտված լեզվի, բայց դա ոչ թե թուլացնում, այլ, ընդհակառակը, ուժեղացնում է այն» (Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, 1951, էջ 66—67)։

Այս չի վերաբերում, իհարկե, ապագայի համամարդկային մի ընդհանուր լեզվին, որի մասին տես գլ. 2]։

* * *

«Հայոց լեզվի պատմության» Ա հատորի սկզբում խոսել ենք այն երեք ուղիների մասին, որոնցից անցնում է լեզուն իր գոյության ընթացքում: Սրանք են՝ ա) ներքին զարգացում, բ) արտաքին կամ օտար ազդեցություն, գ) անհատական ազդեցություն: «Հայոց լեզվի պատմության» երկու հատորների մեջ առաջինի մասին խոսում ենք 13 ընդարձակ գլուխներով, երկրորդի մասին 15 մեծ ու փոքր գլուխներով, իսկ երրորդի մասին 2 գլխով:

Այս աշխատության մեջ լեզվի ներքին զարգացման ուսումնասիրության նվիրեցինք Ա–Ժ գլուխները, օտար ազդեցության համար ԺԱ գլուխը, հաջորդը՝ ԺԲ գլուխը նվիրում ենք անհատական ազդեցությանը:

ԳԼՈՒԽ ԺԲ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՄՔԸ ԼԵԶՎԻ ՄԵՋ

Լեզվի ծագման մասին խոսելու ժամանակ մենք արդեն շոշափեցինք այն կետը, որ հաղորդակցումը մի անհրաժեշտ պահանջ էր հասարակության մեջ, պետք էր բավարարել այդ պահանջը և այդ պահանջի բավարարողը եղավ հոգեվոր լեզուն։ Բառերի առաջացման մասին խոսելիս մենք տեսանք, որ մի առարկա անվանելու համար մեկը մի անուն է տալիս, այդ անունը ընդունվում է ընդհանուրի կողմից և դրանով իսկ դառնում հասարակության համար ընդհանուր լեզվի սեփականություն։

Ուրեմն անհատական կամքը արժեք ունի՝ ցորչափ հասարակության ընդհանուր պահանջի արտահայտիչն է և ներգործում է միայն այն ժամանակ, երբ այդ պահանջին բավարարություն է տալիս և ընդհանուրի կողմից ընդունվում է։ Իսկ ընդունվելուց հետո այլևս նա անհատի հետ գործ չունի և չի կարող նրա կամքին հնազանդվել։ Այս պարագային անհատի կամքը դառնում է ոչ թե անհատի անկախ կամքը, այլ լինում է ընդհանրության կամքը։ Բացարձակ և անկախ անհատական կամքը արժեք չունի լեզվի մեջ։ Այս բանը պիտի ապացուցենք դեռ ավելի հետո՝ նորագույն օրինակներով։

Որովհետև լեզուն գոյություն ունի բառերով և քերականությամբ, ճանաչենք անհատական կամքի ազդեցությունը սրանցից յուրաքանչյուրի մեջ։

Նախորդ դլխում մենք խոսեցինք գրական փոխառությունների մասին. դրանք անհատական կամքի արդյունքն են. մի ուսումնական լսել կամ կարդացել է այսինչ բառը օտար գրականության մեջ, տառադարձում է և գործածում իր լեզվի մեջ։ Այսպիսի օրինակներ հարյուրներով ունենք մեր հին գրականության մեջ։ Բայց խնդիրն այն է, թե այդ կարգի բառերը մտնում են ժողովրդի մեջ։ Տարակույս չկա, որ ոչ։ Անկարելի է,

որ, օրինակ՝ եվրոս, եվրոճոտոս, եվրակիկլոճ, իկոսաեդրոճ, քայուփիե, ոպղիտ, որողոս, ոպղոմփիտ և այլ նման բառեր հայ ժողովրդի լեզվի մեջ մուտք գործած լինեն։ Ուստի և անհատական կամքը այս կողմից որևէ արդյունք ունեցած չէ։ Կարելի է ասել, թե այս կարգի բառերը տարածված են եղել ուսումնականների բավական ստվար շրջանակի մեջ, բայց այդ դեպքում անհատական կամք չկա, այլ մի ուրիշ լեզվի ենթարկություն։ Անհատական կամքը պիտի սկսեր այն դեպքում, երբ նույն ուսումնականները ձեռնարկեին հիշյալ բառերը տարածել ժողովրդի մեջ։

Անհատական կամքի գործածության երկրորդ ձևն են կազմում նորակերտ բառերը, կամ այսպես ասենք, ուսումնականների հորինած բառերը, որոնք ամեն լեզվի մեջ էլ մեծ թիվ են կազմում։ Ֆրանսերենի 32 000 բառերից 20 000-ը ուսումնական բառեր են և նրանց թիվը օրից օր ավելանում է, քանի զարգանում են գիտությունները։ Մեր մեջ էլ նորակերտ բառերը մեծ ծավալ են ստացել։ Դրանց սկիզբը է դրել հունարան դպրոցը՝ և դարի կեսից հետո և ավելի ուշ, որ հունաց փիլիսոփայական լեզվի նմանությամբ հարմարեցնելով զանազան նախամասնիկներ (ապա, բաղ, դեր, դել, վեր, ատոր, տար, տրամ, ներ, պար, հոմ և այլն), ստեղծել է բազմաթիվ նորակերտ բառեր։ Նորակերտ բառերի մի երկրորդ շրջան ունենք մեր դարից, երբ ազգային ինքնագիտակցության զարգացման հետ կարիք է զգացվում հայացնելու գիտական ու քաղաքակրթական զանազան բառեր։ Այս կարգին են պատկանում շոգենավ, շոգեկառք, ճեծանիվ, ապակեներոճացում, երեսփոխան, օդաչու, սավառնակ, ձիաքարշ, խմբագրապետ, խմբագրատուն, տպարանապետ, վիմատիպ, ձուլտրան, ծաճրաշափ և այլն, և այլն։ Այս բոլորը անհատական աշխատության արդյունքն են։ Մի քանիսի չենք իմանալու, թե որոնցից ո՞րը ո՞ւմ գործն է, բայց ընդհանրապես գիտենք, որ արևմտահայ հեղինակներից Ռուսինյան, Մամուրյան, Ճուխյաճյան, Տեմիրճիպաշյան և ուրիշներ՝ մեծ դեր ունեն նրանց հորինման մեջ։ Օրինակի համար՝ սավառնակ և սավառնորդ Երվանդ Սրմաքեշխանլյանի շինած բառերն են[1]։ Ուրիշների համար էլ կարելի էր գտնել հեղինակների անունը։

Սուրբ և խոհ բառերից հետո կարող ենք հիշել եղիճ և երասանչ բառերը, որոնք իմ մանկության ժամանակ գործածական

[1] Իր առաջարկությունը տե՛ս «Ազատամարտ», թ. 433։

էին Գալի հայկաբանների շրջանում։ Առաջինը նշանակում էր «փլավ», երկրորդը՝ «այն փայտյա առնամանն է, որ երես և ասկ չունի և միայն կաչյա մի ժապավենով բռնում է ատքի քաթքծ. գոբծածական էր բաղնիսում, խոհանոցում և գութարանում քրքճալըճ կամ լալըճ, որ է արաբ na'lein (բուն՝ երկու պայտ)։ Այս երկու բառերը արմատի կերպարանք ունեն, բայց քան իս շինված են եղ-բրիճճ և երես-աճկ բառերից (տե՛ս Արմ. բռ. հա. Բ)։

Արդ՝ ինչպե՞ս են շինվում այդ բառերը և ինչ արժեք են ունենում։

Գիտենք, որ յուրաքանչյուր մարդ ազատ է բառ շինելու-գիտուննների մեջ ընդունված սովորություն է, որ յուրաքանչյուր նորահնար առարկա առանձ իր անունը՝ հնդինակի ձևոքով։ Բայց ոչ մի հնդինակ չի կարող բոլորովին ինքնուրույն բառեր գուբս բերել, նա առնում է այս կամ այն բառը, որ արդեն գոյություն ունի լեզվի մեջ, և նրա օրինակով կազմում իր նոր բառը։ Առում են, թե միայն gaz[1], rococo, kodak բառերն են, որ կազմված են բոլորովին ինքնուրույն կերպով։ Առաջինը հնարեց մի հոլանդացի քիմիկոս՝ վան Հելմոնտը 1600 թվերին, բոլորովին կամայական ձևով (Whitney, La vie du langage, էջ 14). միևնույն քիմիկոսը հնարեց նաև blaz բառը, որով կոչում էր երկնային մարմինների ազդեցությունները երկրի բարեխառնության վրա. բայց այս բառը չհնցավ (Whitney, էջ 101)։ Մնացյալը լեզվի հին արմատներից նոր ածանցներ և բարդություններ են։ Եվրոպացիները այս կերպում օգտվում են հատկապես հունարենից և լատիներենից, մենք օգտվում ենք գրաբարից և առհասարակ աշխատում ենք թարգմանել եվրոպացիների կազմած բառերը։ Ուրեմն բացարձակ քմահաճույք չկա։ Եվ գեռ նորահնար բառը անպայման պարտադիր չէ. պետք է, որ գիտուննների հասարակության կողմից հավանություն գտնի, ինչ որ նշանակում է, թե նախապես ընդունված կանոններին և լեզվի ոգուն հավատարիմ պետք լինի, որպեսզի ընդունվի և տիրապետվի։

Բառը այս կերպում շատ անգամ գնահատության, սրբագրության և ընտրանքի է ենթարկվում։ Օրինակ՝ պաղպաղակի

[1] Համարում են թե հնդինակը Geist (ոգի), Chaos (քաոս) և Blas (յուրա օդ) բառերի գումարմամբ է ստեղծել (Wundt, Völkerpsich., I, բ մաս, էջ 568)։

համար արևմտյան հայոց մեջ շինված էր երկու բառ. պաղպաղակ և սառնանուշ. երկրորդը թեև շատ դյուրալուր ու գեղեցիկ (սառնանուշ), այնուամենայնիվ հաջողություն չգտավ, և ընդունվեց առաջինը: Ռուսինյանն առաջարկել էր ընդպակ և ընդդեմ, որոնք մերժվեցին և տարածվեցին թեր և դեմ, որ առաջարկել էին Պարտիզպանյանն ու Ծուխյուճյանը (Արևելք, 1898 դեկտ. 5): Galoche բառի դեմ հնարվեց արևմտահայոց մեջ սառմուճակ, արևվելահայոց մեջ՝ կրկնակոշիկ. այս երկուսից վերջինը միայն հաղթեց և ընդհանուր դարձավ: 1868 թ. Չիլինկերյանն հնարել էր ափեղուղի բառը (տես Թշվառներ, Զմյուռնիա, 1868, հտ. 4, էջ 11), բայց 1890-ական թվերին արդեն տարածված էր քարափ (ֆր. quai), այնպես որ նույն Չիլինկերյանը «Թշվառներին» 3-րդ տպագրության մեջ (Պ. 1909, հտ. Դ., էջ 8) դրել է քարափ:

Երբ հնարվեց velocipède-ը, իսկույն արևմտահայերից մեկը, հայանի չէ ով, հնարեց ճեճելանիվ ձևը. հասարակություն սըրբագրեց այս բառը և դարձրեց ճեճանիվ, որ և առհասարակ ընդունված է հիմա մեր մեջ ամեն կողմ: Լուցկիի համար հնարված էր նախապես լուցափայտ (գերմաներենից թարգմանաբար՝ zündholzchen). այս ձևը անախորժ գտան և դրաբարի լուցկիք բառը վերցնելով՝ հարմարեցրին մեր լուցկին (որ ավելի համապատասխան էր ֆրանս. allumette բառին), որ և ընդունվեց: Նույն բանը կարող ենք ասել նաև նորակերտ բառերի համար. բացատություն, բացատել ընդունվեցին, բայց՝ ապատություն, ապատություն, ապատել մերժվեցին. փաղաքուն մերժվեց, բայց նոմանիշ կամ նույնանիշ ընդունվեց:

Ժթ դարում, արևմտահայոց մեջ անհատական կամքի ուժի պոռթկումներ ցուցադրեցին երկու գործիչներ՝ Ռուսինյան և Չեյրոյ: Առաջինը հնարեց մի նորաձև հայ լեզու, որ կոչում էր արմեներեն, երկրորդը՝ մի ուրիշ տեսակ հայերեն, որ կոչում էր ընտրությական հայերեն: Այս երկուսի մասին ընդարձակ խոսված է իմ Հայոց լեզվի պատմության մեջ, հտ. Բ, էջ 509—526: Ընթերցողին հղում եմ այնտեղ մանրամասնություններին համար: Կարճ կասեմ, որ երկուսն էլ ձախողվեցին, հազիվ մի երկու հետևորդ ունեցան, և քիչ ժամանակ հետո իրենք էլ հրաժարվեցին իրենց շինած նորաձև «հայերենից»:

Անհատական կամքը ուժ չունի հարինվածքը փոխելու մեջ: Մեր դարում, Հայաստանում, շատ ավելի մեծ ձևի տակ, քան նախորդները, երևան եկավ Մանուկ Աբեղյանը, որ լեզվի մեջ

անհատական կամքի ազդեցության հավատացողներից էր դժբախտաբար։

Մ. Աբեղյանը հայերենի ներքին կազմության մեջ թևակոխեց։ Քանի որ արևելյան հայերենը գանագանում է հայցական մեջ շնչավորը անշնչից (ասում է՝ բժշկին կանչեց, բայց՝ սեղանը չարդեց), ապա քան Աբեղյանի պետք է գանագանել նաև սեռականի մեջ և ասել՝ նրա շնչավորների համար և էնոր անշունչների համար։ Օրինակ՝ նրա (մի մարդու) ոտքը և էնոր (սեղանի) ոտքը։

Այս նորմատիվությունը քարոզեց նա Լիմմիածնի «Արարատ» ամսագրում, սովորեցրեց ճեմարանի ուսանողներին և գործադրում էր իր հոդվածներում։ Բայց դա հաջողություն չունեցավ, և մի քանի տարի հետո ինքն էլ հրաժարվեց դրանից։

Մ. Աբեղյանը նշանավոր եղավ բառակերտության մեջ։ Սովետական շրջանի սկզբում, երբ կարիք կար նոր կյանքի համար նոր բառեր ստեղծել, Աբեղյանը մեծ թափով գործի անցավ։ Իր աշխատանքի պտուղներն են ոչ միայն ռազմական բառարանը ամբողջությամբ, այլև շատ ու շատ նորաստեղծ բառեր։ Սրանց ամենամեծ մասը մտել է հայ լեզվի գանձարանը։

Բառակերտության ժամանակ լեզվի կանոնների դեմ սխալներ էլ գործեց Աբեղյանը. հիշում եմ այստեղ նրանցից մի քանիսը։

Ածանց բառը նշանակում է «ժառանգված արեւ բառ». այսպես դիտեն «նոր Հայկազյան բառարանը», «Առձեռն բառարանը» և բոլոր բառարաններն ու քերականությունները, իրր ֆրանս. dérivé։ Աբեղյանը փոխեց իմաստը և դարձրեց «ժառանգիկ». ինչի համար՝ հայտնի չէ, այս իմաստով գործածեց նա իր քերականությունների մեջ, և այս իմաստով է ընդունված այժմ նույնիսկ մեր դպրոցներում։ Սրա հակադրությամբ կազմվեցին նախածանց, միջածանց, վերջածանց բառերը, «հոխանակ ասելու՝ նախդրանիկ, միջդրանիկ, հետդրանիկ, որոնք լեզվի սովորական բառերն էին։ Կորան նաև ածանցել, ածանցական, բարդածանց և այլն բառերը, կամ իրենց իմաստը փոխեցին՝ ըստ Աբեղյանի անհատական կամքի։

Հանածո նշանակում է «հանքերից հանված արտադրություններ». Աբեղյանը սրա փոխարեն ստեղծեց մի բոլորովին նոր բառ՝ ապար, որ, ինչպես ասում էր ինձ ինքը՝ հնարել էր հայ. ապառաժ բառի վերջին ժ մասը կրճատելով։ Ընդունված չէ ևս-

դուների մեջ մի որևէ բառի ծայրից մի երկու տառ պատահաբար կրճատել և միացածին անկախություն տալով նոր իմաստով նոր բառ ստեղծել։ Բայց Աբեղյանը արեց այդ և նորալուր ապարը մտավ բառարանների մեջ։

Նման ձևով կազմեց նա կերպար բառը, իբրև համազոր ռուս. образ «տիպար» բառի։ Այս բառը կազմել է նա կերպարանք բառի ծայրից կրճատելով անք մասը, իբր թե նա հոդնակիի նշան լիներ։ Արդարև ունենք հայերենում զարդարանք, մեծարանք, ճարդարանք ձևով բառեր, որոնց վերջին անք մասը նշան է հոդնակիի և կարելի է կրճատելով ասել զարդար, մեծար, ճարդար. այս բոլորի մեջ ար մասնիկ է, որ ավելացել է զարդ, մեծ, ճարդ արմատների վրա, և այդ հայտնի է նրանից, որ կարելի է ասել բայական ձևով զարդարել, մեծարել, ճարդարել։ Բայց կերպարանք բառը չի պատկանում այդ շարքին, որովհետև կազմված է կերպ արմատից՝ առանց մասնիկով, ք հոդնակիի նշանով. չկա նրանից կազմված կերպարել բայը, ուստի չկա նաև կերպար։ Աբեղյանը իր անկախ կամքով սարքեց այդ բառը և այսօր թե բառարաններում, և թե գրականության մեջ ազատ մուտք է ստացել այն։

Դիտմամբ այսքան երկարեցրինք այս վերջին մասը, ցույց տալու համար, թե մինչև ուր կարող է գնալ անհատական կամքը։ Դեպքերի բերմամբ անհատական կամքը կարող է բառերն էլ փոխել և կամ նոր իմաստներ ստեղծել, այս բոլորը լեզվի արտաքին կողմն է և ժամանակավոր երևույթ, որոնք կգան ու կանցնեն, բայց լեզվի ներքին կազմի՝ քերականության մեջ, անհատական կամքը ուժ չունի։

Նորահնար բառի մի ուրիշ ձև էլ կա, որ կարելի է գտնել մեր այն լեզուների մեջ, որոնք ունենալով շատ հին գրականություն, հնով նորը բարեփոխել են, ինչպես արդի հայերենը կամ հունարենը։ Դա որևէ սխալ ձևի հորինումն ու ներմուծումն է։ Այսպես, օրինակ՝ հյ. շերամ և շագանակ բառերը։ Շերամ բառը գործածվել է մի անգամ Վեցօրէից մեջ, գրված է շերաս կամ շէրաս, մասը գտնվելով մի բութ, ս կարդացվել է մ, և այսպես սխալմամբ առաջացել է շերամ բառը, այդ ձևով մտել է բառարանի մեջ, որից հետո էլ կազմվել են շերամատուն, շերամաբույծ, շերամապահություն, շերամաբուծություն և այլ բառերը։ Ավելի հետաքրքիր է շագանակ բառը։ Այս բառը գործածված է Մարհնացու աշխարհագրության մեջ մի անգամ. ձեռագիրներն ունեն շատ զանազան ձևերով՝ շանդակ, շանտանաճ, շանդանիճ,

շատանայ, սատանէլճ, աշահդանակ, շադդանակ, շադգանակ, շագանակ։ *Մխիթար Աբբան իր հայերէն բառարանը կազմելու ժամանակ (1769 թ.) ընտրել է սրանցից շագանակ ձևը. երևի այսպես ուներ իր լավագույն համարած ձեռագիրը։ Ինքնությունը ցույց է տալիս, որ բառի ամենից ուղիղ ձևն է շահդանակ, որ փոխառյալ է պրս. šāhdanak բառից և նշանակում է «կանեփի սերմ» (այժմ՝ շահդանա փոխառյալ է պարսկերենից)։ Բայց Մխիթար Աբբան կարծել է, որ շագանակ նշանակում է «քնատանձ» և այս իմաստով էլ մտցրել է բառարանի մեջ։ Նրան հետևել են ուրիշները։ Այսպես՝ առաջին անգամ կազմապարտ Սարաֆյանը, որ 1788 թվին Պետերբուրգում (այժմ Լենինգրադ) հրատարակել է «Բանալի դիտութեանց» անունով մի դիրք (որ է ռուսերենից—հայերէն և հայերենից—ռուսերէն բառարան և խոսակցություն երկու լեզվով) էջ 167 ընդունում է նույն բառը՝ „каштан, շագանագ, շամբալուդ»։ Այնուհետև անցնում է «նոր Հայկազյան» և «Առձեռն» բառարաններից մեջ և այժմ դրական հայերեն լեզվի ընդհանուր սեփականությունն է, որից կազմված են նաև շագանակենի, շագանակագույն, շագանակավանուտ։*

Մոտ կես դար առաջ կարելի էր լսել խայտաբղետ բառը (z ձայնով). ես լսել եմ այն՝ հայերենի ուսուցիչ Համբարձում Աբովյանից, որ Քաչաոուր Աբովյանի թոռն էր։ Այդ սխալը առաջացել է (ինչպես տարբեր հետո բացատրեց ինձ Մ. Աբեղյանը) այն բանից, որ Աբխազում Հովհաննիսյանի ռուսերեն բառարանում пёстрый *բառի դեմ վրիպակով գրված էր խայտաբզետ։*

Արդի գրականում ընդունված է պատշգամ կամ պատշգամբ բառը՝ բոլորն նշանակությամբ։ Բայց անհարին է շ-ից հետո հնչել գ. և իրոք այդ բառը մենք հնչում ենք պատշգամ, պատշգամբ, իսկ արևմտահայերենը՝ պատշգամ։ Բառի ծագումն էլ (իրան. pati-škamba «հյուսնաշարք») պահանջում է պատշգամբ ձևը, ինչ որ ամանված է նաև հին ձեռագրերում։ Բայց սրովհետև Հայկազյան բառարանում բուն այբուբենական կարգի դրված է նախ պատշգամ, ապա՝ պատշգամ, դրա համար էլ տարածվել է սխալագիր պատշգամ ձևը։

Այսպես, ուրեմն, ինչպես շերամ և շագանակ, նույնպես և խայտաբղետ և պատշգամ սխալմամբ բառերը բառարանների մեջ ոտքով մտել են գրականության մեջ։ Անհատական կամքի հանգուցության այս երևույթը, թեկուզ սխալման արդյունք, մեկնե-

վում է այն հեղինակությամբ, որ ունի անցյալը ներկայի հանդեպ։ Բայց այս էլ միայն առանձին բառերի հանդեպ և ոչ թե քերականության, որ պատկանում է ամբողջ ժողովրդին։

Կարծեմ թե կեղծ բառերի (կամ նորահնար արմատների) շարքին է պատկանում նաև գլխ. «ծակիչ գործիք, բուրղուզ. այս բառը առաջին անգամ հիշատակում է Մխիթար Աբբան իր բառարանում (ՀՀԲ). նույնը կրկնում են ՋԲ և Նորայր. Բառ. Ֆրանս. (vrillo) իբր նոր բառ, բայց չի նշանակված թե որ բարբառում։ ՆՀԲ և ԱԲ չունեն այսպիսի բառ— Աղբյուրը պետք է լինի հետևյալը։— Հայսմ. Նոյ, 21. այսպիսի մի հատված. «Արկն զսուրբն Աբգիսպաս ի գուբն մինչև ցգօտին. և տարան մանկունս ի դպրոցաց, որ երկաթի գրչօք ծակոտեցին զդագաթն և ապա քարկոծեցին»։ Ենթադրում եմ, որ վենետիկի ձեռագրատան պատկանող մի Հայսմավուրքում (հատկապես այն, որ տեսել է Մխիթար Աբբան), այստեղ սխալմամբ գրված է եղել գչրօք, որից Աբբան հետևցրել է գլխ «ծակիչ»։ Դժբախտաբար Աբբան իր բառարանում, այս բառի կողքին չի հիշում իր աղբյուրը, բայց անշուշտ իր ձեռագիր բնագրում կար, որ եթե այժմ էլ մխաբաններից մեկը որոնի, կարող է գտնել և մեր ասածը սուտ ելնել։

Այսպես, ուրեմն, բոլորովին մի անգո բառ, որ ոչ ձևով է իրական և ոչ նշանակությամբ, Մխիթար Աբբայի ձեռքով գոյության իրավունք է ստացել և արմատացել։ Այս երևույթը հակասակ է երևում այն գաղափարին, թե անհատի կամքը արժեք չունի լեզվի մեջ։ Բայց օրինակը ցույց է տալիս նաև, որ միայն այն գիտակցությունը, թե բառը եղել է երբևիցե հանրային սեփականություն, բավական է, որպեսզի նա հանրային դառնա։ Փորձ եմ արել երբեմն, երբ ինձ հարց են տվել, թե այսինչ բառի հայերենը ինչ է, հնարել որևիցե սուտ բառ և վերագրել հնության։ Նկատել եմ, որ սովորական անձինք գոհ են մնացել և ընդունել են իբրև ճշմարտություն, որովհետև համոզված են եղել, թե այդ բառը հնության մեջ ընդհանուր սեփականություն է եղել։

Ավելացնենք սակայն, որ ինչպես շերամ, նույնպես և շագանակ՝ միայն գրական լեզվի մեջ ընդունված ձևեր են և ժողովրդի սեփականություն են դառնում միայն այժմ, դարձյալ գրականության միջոցով։

Եթե առանձին բառերը այսպես խառնուբաստ են քննվում, ինչ պիտի լինեն, ուրեմն, մասնիկները, քերականությունը և շարադասությունը, որոնք լեզվի ներքին մասն են կազմում: Սրանց մեջ անհատական կամքը ամենևին արժեք չունի: Այսպես՝ մեր հին հունարան հեղինակները ուզեցին մացնել մեր մեջ արական, իգական և չեզոք սեռերը, առարատասական անկատարի ձևը (սիրեցեի), կրավորականի նոր կազմություն, բայերի վրա է հավելվածը և այլն, բայց սրանցից ոչ մեկը արմատ չբռնեց: Լատինարան հեղինակները էլ սկսեցին իրենց նորմաձևություններր, բայց իզուր: Նոր և նորագույն ժամանակներից ունենք Ռուսինյանին, որ իր «Հոդվախոսությամբ» աշխատեց փոխել հայերեն քերականության ինչ-ինչ կիսերը, Զերպեր հնարեց ըմնորոգական հայերենն», ուրիշները առաջարկեցին ավելի մանր փոփոխություններ, օրինակ՝ ոմանք առաջարկեցին մացնել իգականի գործածությունը, Մ. Աբեղյանը առաջարկեց ընդհանուր առարկաների համար գործածել նրա, նրան, իսկ անշունչների համար էնոր, և այլն: Բայց այս բոլորը, հակառակ նույնիսկ շատ արտարանական լինելուն, չընդունվեցին և մնացին միայն առաջարկ, որովհետև անհատական կամքը արժեք չունի լեզվի մեջ: Անհատական կամքի ազատության սահմանը ընդունված նորմաների համապատասխան և ամենքին հասկանալի լինելն է, ճիշտ այնպես, ինչպես մեր հասարակական կյանքի կառավարող օրենքները են: Մարդ կարող է կրծքին մի ծաղիկ, մի թաշկինակ կամ մի զարդ անցկացնել, բայց եթե մի վարունգ կամ պատրյան դնի, ամենքի ծիծաղին կարժանանա: Այսպես և լեզվի մեջ անհատները կարող են լեզվի այսինչ բառը նախընտրել և հաճախ գործածել, մի պատկերավոր բացատրությամբ մտածել և այլն, այդ բոլորը կարող են ընդունվել, ուրիշների կողմից հաճույքով և նմանության օրենքով էլ տարածվել. բայց դրանք միշտ լեզվի արդեն եղած պաշարից են քաղված և ոչինչ նոր բան չեն պարունակում: Հենց որ մեկը համարձակվեց անգան առնու տեղ առգան առել կամ թևկուղ ճացի տեղ՝ ճաս, նախ նա անհատականալի կլիներ, երկրորդ՝ ծիծաղի առարկա կդառնար:

Մի դաշտ միայն կա, ուր անհատական կամքը ազատ է ամեն կամայականության, նույնիսկ ամեն առնձարձակության. դա է գրականության դաշտը: Այստեղ անա կատարվել ու կատարվում են ամեն տեսակի ձևափոխություններ լեզվի վերաբերմամբ՝ սկսած ամենից ավելի գնահատելի ու քաջալերելի ձևե-

բից, մինչև ամենաանգիտական անճոռնությունները։ Այստեղ գրագետը ազատ է իր գրչի ծայրից դուրս վտարելու ամեն մի խժռանություն, օտար կամ եկամուտ ձև, և ընտրելու, ընդունելու և ստեղծագործելու ամենից գեղեցիկ, ամենից ներդաշնակ բաները, ամենից դյունագեղ դարձվածները, ամենից հարազատ ու նկարեն ոճերը։ Այստեղ գրագետը ազատ է նույնպես հնարելու բոլորովին այլանդակ, անհասկանալի, իրականության մեջ անգո և լեզվի ոգուն անհարազատ ձևեր։

Անհատական կամքի մի այլ ձևն է մութ ու խրթին գրելու արվեստը, որ ունեցել են զանազան հեղինակներ ամեն ազգի մեջ։ Հայոց մեջ այս կարգի հին գրողների մասին խոսել ենք վերը (Մագիստրոս)։

Մեզ մոտ նոր ժամանակներում էլ եղել են այսպիսի մութ գրողներ, թեև ոչ այս աստիճան։ Օրինակ՝ արևմտահայերից կարելի է հիշել Եղիա Տեմիրճիպաշյանին, որ կեղծ գեղեցկություն սարքելու մտադրությամբ, մերթ շարադասության անսովոր մի ձև էր գտնում, մերթ անհասկանալի մի բառ էր թխում. ինչպես՝

Նամակ ինձ ուղ մայիսին գրած է *(ուզում է ասել՝ մայիսի 8-ին ինձ մի նամակ է գրած)*.

երկնօձաձանգետ *(ուզում է ասել՝ կայծակնանման, որովհետև երկնային օձը կայծակն է)*։

Մեզ մոտ էլ երևան եկան մի ժամանակ ֆուտուրիստները, որոնք զանազան անսովոր նորաձևություններ հնարելուց հետո, սկսեցին նաև լեզուն և գրականությունը խանգարել ինչոր այլանդակ հայերենով։

Անհատական կամքի այս արատավոր երևույթներն էլ կյանք չունեցան և վազաշեջ աստղերի պես անհետ կորան։ Այլ կերպ չի էլ կարող լինել, որովհետև այդ բոլորը չեն պատկանում լեզվին, և ժողովուրդը, այսինքն՝ լեզվի իսկական տերը, այդ կարգի «նորություններըդ մահվան է դատապարտում։

Ինչպե՞ս պետք է բացատրել անհատական կամքի այս սահմանափակման, ապա՝ չեզոքացման և, ի վերջո, ջնջման երևույթը։ Ո՞վ է և ո՞ւր նրան հակազդող ուժը։ Այդ ուժը նախ կարիքի բացակայությունն է, երկրորդ՝ հին սովորությունը վերացնելու համ, որ նույն է՝ նոր սովորությունը մտցնելու դժվարությունն է և երրորդ՝ այս երկուսի հետևանքով՝ հասարակության դիմա-

դրութիւնը, որ արտահայտվում է լեզվի հարցում՝ անտարբերութեան պատճառ կարդութեամբ։

Ենթադրենք մի գյուղ բաղկացած է 100 շունից։ Ամեն մի անհատ ազատ և անկախ է այդ 100 շունի մեջ։ Եթե մի անհատ հատարակութեան օգտին մտածում կամ ձեռնարկում է մի բանի, իր հետ ունի գյուղի մեացյալ 99 շունը։ Եթե լինեն ակամայից բացառութիւններ, նրանք էլ կհալվին մեծամասնութեան ձայնի մեջ։ Իսկ եթե նա մտածի մի բան, որի կարիքը չկա, որ պահանջում է պիտանի, օգտակար մի բան մոռանալու կամ, որ նույն է՝ անպետք մի բան ընդգրկելու դժվարին և ավելորդ կամ անօգուտ պահանջը, այդ դեպքում, այդ ընդարարած անհատը իր դեմ կունենա 99 ձայն։ Այսպես, ամեն մի անհատ մեկ է 100-ի մեջ, և իր դեմ ունի միշտ 99 հակառակորդ, որի հակառակութեան գինքը կամ ուժը, ինչպես ասացինք, պատճառ անտարբերութեան է (լեզվի հարցում)։

ԳԼՈՒԽ ԺԳ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Լեզուն, լինելով բազմակողմանի մի երևույթ, կարելի է քննել զանազան տեսակետներով, ըստ այսմ լեզվաբանությունն էլ ունի իր զանազան բաժանմունքները։

Անհրաժեշտ է նախ ճանաչել նյութը, այսինքն՝ թե ինչ լեզուներ կան կամ եղել են, ունեն արդյոք նրանք իրար հետ որևէ կապ, և եթե այո, ո՛ր լեզուներն են, որ կապվում են իրար հետ՝ կազմելու համար առանձին խմբեր, ինչ է նրանց վիճակագրությունը։ Այս բոլորի մասին խոսում է լեզուների դասակարգությունը, որ լեզվաբանության առաջին մասն է։

Լեզուն բաղկացած է բառերից, և բառը որոշ ձայների գումարն է. քննել այդ ձայները, նրանք արտադրող դործարանները, արտադրության եղանակը, ձայների կրած փոփոխությունը բառի մեջ կամ ժամանակի տևողության մեջ՝ դարերի ընթացքում, այս բոլորը նյութ է կազմում ձայնաբանության (фонетика), *որ լեզվաբանության երկրորդ մասն է։*

Բառի առեղծումը իբրև նյութի պատկերացման մի միջոց, նրա կապը նշանակության հետ և այդ նշանակության փոփոխությունը ժամանակի ընթացքում նյութ են կազմում բառագիտության (лексикология) *և իմաստագիտության* (семантика)։

Բառերը կապվում են իրար հետ որոշ առնչություններով և այդ առնչությունները արտահայտվում են որոշ ձևերով, որոնք տարբերվում են՝ նախ լեզվից լեզու, և երկրորդ՝ յուրաքանչյուր լեզվի մեջ ժամանակի ընթացքում. այս առնչությունների համար հնարված ձևերի ուսումնասիրությունը կոչվում է ձևաբանություն (морфология), *որ լեզվաբանության երրորդ մասն է։*

Իսկ եթե ուսումնասիրենք բառերի ձևից դուրս նրանց առնչության պայմանները իրար հետ, նրանց գաղափարությունը կամ կարգը՝ իրրև անպակ նախադասության, կունենանք շարահյուսություն (СИНТАКСИС), որ լեզվաբանության չորրորդ մասն է։

Այս վերջին երկուսը միասին կազմում են քերականությունը։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՑԵՂԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Եթե մեկը ֆրանսերեն լեզուն համեմատի իտալերենի, իսպաներենի, պորտուգալերենի, ռումիներենի, պրովանսալի և ռոմանշի հետ, պիտի տեսնի, որ գրեթե բոլոր բառերն այդ բոլոր լեզուների մեջ էլ իրար չափազանց նման են։ Մի օրինակ բավական է այդ ուժեղ նմանությունը ակներև դարձնելու համար։ Դնենք «Աչնպես սիրեց աստված աշխարհը, որ իր միածին որդին տվավ» հատվածը՝ այս վերոհիշյալ լեզուներով[1]։

Ֆր. Dieu a de telle manière aimé le monde, qu'il a donné son fils unique.

Իտալ. Iddio ha tanto amato il mondo, che ha dato il suo unigenito figliuolo.

Իսպան. De tal manera amo Dios al mundo ,que ha dado á su hijo unigénito.

Պորտ. Deus amou o mundo de tal maniera, que deu o seu filho unigenito.

Ռոմանշ. Deis ha tant amâ il muond, ch'il ha dat seis unigenit figl.

Ռումին. Dumnezeu iubi lumea atât de mult, încât dete pe fiul seu unul nascut.

Ի՞նչ է այս զարմանալի նմանության պատճառը։—Պատասխանը տալիս է մեզ պատմությունը։

Պատմությունը ցույց է տալիս, որ հռոմայեցիները նվաճումով լատիներենը մտել է Իտալիա, Գալլիա, Իսպանիա, Ռու-

---

1 *Հեղինակը չի գտել մի աշխատություն, որ թարգմանված լիներ իր ուսումնասիրած բոլոր 567 լեզուներով. այդ պատճառով էլ հարկադրված է եղել վերցնել այս հատվածը, որ թարգմանված է աշխարհիս մոտ 600 լեզուներով, նախապես հիշված 567 լեզուներից։*

մինչեա, Գերմանգալիա, Գրաննա և այլ երկրներից յուրաքանչյուրի մեջ անկախաբար ու հետզհետե փոփոխվելով՝ առաջ է բերել այդ լեզուները։ Ուրեմն Ֆրանսերենը, իտալերենը, իսպաներենը, պորտուգալերենը, ռումիներենը, ռոմանշը և պրովանսալը, որոնք այժմ իբր անջատ ու անկախ լեզուներ գոյություն ունեն, հռոմայեցիներից առաջ չկային. նրանք ուշ ժամանակ առաջացած լեզուներ են, ծագած մինուլն մարից, որ է լատիներենը։ Ահա նույն հատվածի լատիներենը.

Sit dilexit Deus mundum, ut filium suum unigenitum daret.

Եթե մյուս կողմից համեմատության առնենք ռուսերենը, լեհերենը, չեխերենը, բուլգարերենը, սերբերենը կամ խորվաթերենը, ուկրաիներենը, սլովեներենը, սերբերենը և սլովակերենը, կտեսնենք նույնպես, որ սրանք էլ չափազանց նման են իրար։ Այստեղ էլ պատմությունը բացատրում է մեզ նմանության պատճառը, ցույց տալով, որ այդ լեզուները ծագած են բնիկ նույն սլավոններինից, որ նրանց մայրն է։

Ահա նույն օրինակը՝ վերոհիշյալ լեզուներով.

Ռուս. Так возлюбил бог мир, что отдал сына своего единородного.

Լեհ. Так Bůg umiłował s'wiat, z'e syna swego jednorodzonego dał.

Չեխ. Tak Bůh miloval svet, že syna svého jednorozeného dal.

Սերբ-խորվաթ. Bogu tako omilje svijet daje i sina svojega jedinorodnoga dao.

Բուլգ.—Богъ толкозъ възлюби света щото даде сина своего единородного.

Ուկրաին.—Так полюбив бог сьвіт, що сина свого единородного дав.

Հսլվ.— Такō возлюби' богъ міръ, якō и сна своего' единорòднаго дáлъ есть.

Սլովակ.—Tak miloval Bôh svet, že svojho jednorodeného syna dal.

Սլովեն.—Tako je Bog ljubil svet, da je dal sina svojega edinorojenega.

Սորաբ.—Tak jo Bog ten szwét lûbował, až won szwojogo jadnoporożonego szyna dał.

Վերջապես նուշնալխի արդյունքի ենք հասնում, երբ համեմատում ենք իրար հետ գերմաներենը, շվեդերենը, նորվեգերենը, դանիերենը, հոլանդերենը, ֆրիզերենը, որոնց բոլորի մայրն է հին գերմաներենը։

Ահա նուշն օրինակը այդ լեզուներով.

Գերմ.—Also hat gott die Welt geliebet, dass er seinen eingebornen Sohn gab.

Հոլանդ.—Alzoo lief heeft god de wereld gehad, dat hij zijnen eeniggeboren' zoon gegeven heeft.

Ֆրիզերեն.—God hat de wrâld sa lleave, det hy syn ienichstberne soan jown hat.

Դանիերեն.—Saaledes elskede gud Verden, at han gav sin søn den enbaarne.

Նորվեգ.—Saa har gud elsket verden, at han gav sin søn, den enbaarne.

Շվեդ.-Så älskade gud vörlden, att han utgav sin enföolde son.

Իսլանդ.—Svo elskaði guð heiminn, að hann gaf son sinn eingetinn.

Բայց եթե համեմատության առնենք լատիներենը, սլավերենը, գոթերենը, իսլանդերենը, ինչպես և հին հունարենը, պրաններենը, լիտվաներենը, հայերենը, սանսկրիտը և պարսկերենը, պիտի տեսնենք, որ սրանք էլ իրար մեջն ունեն մեծ նմանություն, թեև ոչ այնքան անձուկ, որչափ վերահիշյալները իրար հետ առանձին-առանձին։ Դնենք մի քանի օրինակ։

1) մայր.— *սանս.* mātár, *գնդ.* mātar, *հպրս.* mātar, *պհլ.* māt, *պրս.* mādar; *աֆղան.* mor, *հն.* μήτηρ, μάτηρ, *լատ.* māter, *հբգ.* muoter, *գերմ.* mutter, *հսլ.* mati, *լիտ.* mo'tyna, *լեթթ.* máte, *հիսլ.* ma'thir, *հիսլ.* mōðer, *պրան.* motrɛ և այլն.

2) տասն.— *սանս.* dáça, *գնչ.* deš, *բոշ.* լասը, *գնդ.* dasa, *պհլ. պրս.* dah, *քրդ. բելուջ.* deh, *հն.* δεκα, *լտ.* decem, *գոթ.* taihun, *հբգ.* zēhan, *գերմ.* zehn, *անգլ.* ten, *հսլ.* deseti, *լիտ.* de'szimtis, *հիսլ.* deich, *պրան.* djetɜ.

3) Դու.— *սանս.* tuvám, *թոխար.* tu, tuwo, *գնդ.* tūm, tvām, tū, *հպրս.* tuvam, *պրս.* tū, *հն.* τύ, σύ, *պրան.* ti, *լտ.* tu, *գոթ.* Ou, *հբգ.* du, *հսլ.* ty, *լիտ.* tû, *հիսլ.* tū.

4) մեռանել.— *սանս.* mriyátē, *գնդ.* miryeite, *հպրս.* amriyatā, *պհլ.* murtan, *պրս.* murdan, *լտ.* morior, *հսլ.* mreti, *լիտ.* mir'ti, *հիսլ.* marb·

Նմանութիւնը նկատելի է ոչ միայն արմատների ու բառերի, այլև նոյնիսկ մասնիկների, հոլովական ու բայական վերջավորութիւնների մէջ։

Ներկա. ա դէմքի համար.— սանս. âdmi, լիտ. ėdmi, հոլ. jamī, հն. ἔδομαι, հյ. ուտեմ. որոնց բոլորի մէջ էլ լսվում է m ձայնը։

Ներկ. գ դէմքի համար.— վեդ. bhásti, լտ. fert, հն. φέρτι երևում էր, որոնց բոլորի մէջ լսվում է t ձայնը։

Ածականի գերադրական աստիճան ցոյց տալու համար՝ սանս. svad- iṣṭha, հն. ἡδ-ιστος, հգ. suoz-isto, գերմ. klein-ste, անգլ. great-est, որոնց բոլորի մէջ էլ լսվում է st մասնիկը և այլն։

Բայց նմանութիւնը գնում է երբեմն էլ աւելի խորը. օրինակ՝ հյ. թևև ասում ենք ինձ, բայց 15 լինում է ինգնասան, որի մէջ գոնված և ձայնը նոյն է հն. πέντε-ի վերջաձայնի հետ. երկու բառի դեմ ունենք երկոտասան, որի ո ձայնը նոյն է հն. δυο-ի վերջաձայնի հետ. կին, հգ. լինում է կանայք, որի հետ նոյն է հն. γυναῖκες.

Եթե այժմ մեր քննութեան առարկա դարձնենք միջերկրականի շուրջը խոսված լեզուները, ինչպես ասորերէնը, փյունիկերէնը, եբրայեցերէնը, արաբերէնը, եթովպացերէնը և աւելի հետու ասուրերէնը, բաբելացերէնը և քաղդեերէնը, կտեսնենք, որ սրանց մէջ էլ կա շատ անձուկ նմանութիւն։ Բայց զարմանալի է, որ այս բոլոր լեզուները ինչքան նման են իրար մէջ, այնքան տարբեր են նախորդներից։ Ահա մի օրինակ այս լեզուներով.

ասոր. Ḥameš, ḥamšā, արաբ. ḫamsā, եբր. ḥāmeš, փյունիկ. ḫmš, սաբ. ḫmš, եթովպ. xames, ասոր. ḫamši «հինգ»։

Դարձյալ այսպիսի նման խմբակցութիւններ նկատելի են աչխարհիս ուրիշ վայրերում, յուրաքանչիւրը առանձին-առանձին և բոլորովին անջատ մյուսներից։ Ահա մի օրինակ.

Ֆիննն. vite, մորդվին. v'et'e, չերեմիս. biš, վոթյ. viť, ղիրյ. vit, վոգ. at, օսմյ. ẏeth, հունգ. öt «հինգ»։

Ի՞նչ է մի մասն այս հայտնի նմանութեան և մյուս մասն աւելի հայտնի տարբերութեան պատճառը։— Պատմութիւնը թևև յուսադրանել է մեզ յատկական, գերմանական և սլաւոնական լեզուների նմանութեան պատճառը, բայց այս վերջին կետերում ոչինչ չգիտեն, որովհետև ինքը նրանց ծագումից հետո է։

Նմանությունը կարելի է մի քանի ձևով բացատրել.

1) Այդ նմանությունը բոլորովին պատահական է. Պատահական նմանություններ, իրոք, կան լեզուների մեջ. հյ. քուն բոլորովին նման է չին. քուն «քնած, քնկոտ» բառի հետ։ Բայց այս նմանությունները կարող են սահմանափակվել միայն շատ փոքրաթիվ բառերի և ոչ թե լեզվի ամբողջ կառուցվածքի մեջ, մինչև հոլովման, խոնարհման, մասնիկների ու բառակազմական մանր նրբություններում։ Նաև այդ պարագային ինչ-ու նմանությունը չի տարածվում ամբողջ աշխարհի վրա զանազան ցանուցիր կետերում, այլ ալիքի նման մի որոշ շրջանում և յուրաքանչյուր խմբակցություն միայն իր մեջ ունի նմանություն և այդ նմանությունը այնքան ավելի անձուկ է յուրաքանչյուր փոքր խմբակի քան յուրաքանչյուր մեծ խմբակցության մեջ. ուրեմն պատահականությամբ բացատրել ճիշտ չէ։

2) Այդ նմանությունը բնական է. այսինքն՝ թե ի նկատի ունենալով մարդկային հոգու հիմնական նույնությունը, նույնանման տպավորությունները նույնանման արտահայտություններ պիտի ունենային։ Այս բացատրությունը շատ ճիշտ է բնաձայն բառերի համար. այսպես՝ կկուն բոլոր լեզուների մեջ էլ գրեթե նույն անունն ունի։ Բայց բացատրությունը ճիշտ չէ այն բառերի համար, որոնց անունը պայմանական է և հետևաբար՝ իմաստից անկախ. որովհետև հակառակ դեպքում ենթադրել է տալիս, թե առարկայի էության և նրա անվան միջև կա որևէ արտամարանական կապ, ինչ որ մենք արդեն զանազան ապացույցներով հերքել ենք ներածության մեջ։ Մարդիկ հավասար զանդակներ չեն, որ հավասար հարվածների տակ անհրաժեշտաբար տային հավասար ձայներ (Տրուբեցկոյ)։

3) Այդ նմանությունը ճակատագրական է, այսինքն՝ բնական բերմունքի արդյունք, որ իբր թե մարդկային ձայնը Հայաստանում հայերեն, Ռուսաստանում ռուսերեն, Ֆրանսիայում ֆրանսերեն և այլն պետք է դուրս գար։ Այս մտածմունքը ուրիշ բան չէ, եթե ոչ նախորդի մի այլ ձևակերպությունը. այն է՝ ընդունել գործյալ մի բնական կապ ձայնի և առարկայի միջև, ինչ որ անընդունելի է։ Բացի դրանից, դա ինչ ճակատագրական բերմունք է, որ ազգերի և լեզուների փոխադրությամբ չի ջնջվում. հայերենը կա և կար ոչ միայն Հայաստանում, այլև Փոքր-Հայքում, ավելի առաջ՝ Փոքր-Ասիայում և դեռ ավելի առաջ՝ Թրակիայում։ Անգլերենը խոսվում է ոչ միայն Անգլիա-

յում, այլև Ավստրալիայում, Ամերիկայում, Եգիպտոսում, Հընդկաստանում, քիչ թե շատ աշխարհիս ամեն կողմը, և սակայն ամեն տեղ էլ նույն անգլերենն է։ Ճակատագրականություններն էլ ուրեմն ոչինչ չի բացատրում։

4) Հնագույն եղել են մեծ-մեծ պետություններ, որոնք իրենց իշխանության տակ են առել աշխարհի այդ մեծամեծ շրջանները (օր. Անգլիայից մինչև Հնդկաստան) և իրենց լեզուն պարտադրել բոլոր նվաճված ժողովուրդներին և նրանց լեզուները ջնջելով, ավել են վերջապես իրենցը, ինչպես արել են հռոմայեցիները Գալլիայում։ Այս բացատրություններ թեև որոշ վերաբերում ճիշտ է, բայց դարձյալ բավարար չէ ամբողջ աշխարհի երևույթները բացատրելու համար։ Եթե եղած լիներին այդպիսի հզոր պետություններ, նրանք իրենց հետքերը ուրիշ ձևով էլ պիտի թողած լինեին։ Երկրորդ՝ նվաճված լեզվի ջնջումը կարելի է միայն այն ժամանակ, երբ նվաճողը բավական բարձր քաղաքակրթության աստիճան է։ Եթե հռոմայեցիները նվաճելով Գալլիան՝ կարողացան ջնջել տեղական լեզուն և դնել լատիներենը, այդ նրանից էր, որ իրենք շատ ավելի մեծ քաղաքակրթության տասած էին, քան բնիկները։ Արդ՝ նախնյաց ժամանակներում, երբ քաղաքակրթությունը իր սաղմնային դրության մեջ էր, երբ մարդիկ դեռ այնքան վայրենի վիճակի մեջ էին, որքան էին այդ խոշոր անծանոթ պետություններում, որոնք կարողացան Անգլիայից մինչև Հնդկաստան կամ Եթովպիայից մինչև Պարսկաստան ևս տիրապետել և իրենց քաղաքակրթությամբ ջնջելով տեղական այնքան բազմաթիվ լեզուները, կարողացան իրենց լեզուն դարձնել բնիկ լեզու։

Վերջապես պետք է նկատել, որ վագանցուկ տիրապետությունները ջնջում են անհետ և լեզվի վրա ազդեցություն չեն թողնում. կիմմերները և սկյութացիները, որ արշավեցին Փոքր-Ասիա, լեզվական ոչինչ չթողեցին. նույնպես հոները, բուլղարները և մոնղոլները չկարողացան ջնջել իրենց ճանապարհի վրա բնակած ժողովուրդների լեզուները և ոչ էլ տալ իրենց լեզուն։ Այսպիսի արդյունքի հասնելու համար հարկավոր է գաղթականական մեծ շարժում և տևական ու հաստատուն բնակություն։

5) Մնում է ուրեմն բնությունը, թե յուրաքանչյուր խմբակցության մի ծագում ունի, այսինքն՝ այդ խմբին պատկանող բոլոր լեզուները ճշմարիտ կազմում էին մի լեզու և այդ մեծ մայր լեզվի ժառանգներն են, ճիշտ այնպես, ինչպես ֆրանսերենը կամ

խառներինը ժառանգներն են լատիներենին։ Ուրիշ խոսքով՝ մի խմբի պատկանող բոլոր լեզուները միևնույն լեզվի տարբեր բարբառների արդյունքն են՝ անկախ տեղից, բայց տարբեր ժամանակներում։

Այսպիսով, հասնում ենք լեզուների ցեղակցության գաղափարին։ Ցեղակից են կոչվում այն լեզուները, որոնք միևնույն ծագումն ունեն, ընդհակառակը՝ ցեղակից չեն այն լեզուները, որոնք տարբեր ծագում ունեն։ Ավելի գիտական բացատրությամբ՝ լեզուների ցեղակցություն ասելով՝ հասկանում ենք այն պատմական իրողությունը, որով մի լեզու դարերի ընթացքում, աստիճանական փոփոխությամբ, հասել է մի վիճակից մի ուրիշ վիճակի։ Ըստ այսմ, եթե գիտությունը իր միջոցներով կարողանում է հաստատել երկու տարբեր լեզուների ծագման նույնությունը անցյալում, նրանք ցեղակից են. իսկ եթե անկարելի է այդ և չկա ոչ մի հնարավորություն առայժմ կերպով հաստատելու այդ, ուրեմն տվյալ լեզուները պատկանում են տարբեր լեզվախմբերի։

Վիճաբանության առարկա է դարձած նաև այն հարցը, թե անհատի կամ համայնքի գիտակցությունը որևէ կարևորություն ունի՞ նրա խոսած լեզվի ցեղակցությունը որոշելու համար։ Այսօր հայ ժողովրդի մի մասին էլ որ հարցնենք, թե ինքը ինչ լեզու է խոսում, պատասխան պիտի առանաք, թե հայերեն է խոսում։ Նույնիսկ գոկը, որի բարբառը այնքան ձևափոխված է, ունի այն գիտակցությունը, թե ինքը այլասիրախոս հայերեն է խոսում։ Տարբեր չեն նաև քրդերի գանազան ցեղերը. նույնիսկ գազանները գիտեն, որ իրենք քրդերենին մի տեսակն են խոսում։ Բայց այս երևույթը ընդհանուր չէ։ Մակեդոնիայում կան համայնքներ, որոնք չեն կարողանում որոշել թե իրենց խոսած բարբառը սլավոնական մի լեզվի մի ճյուղն է, հատկապես սերբերինի մի ճյուղն է, թե բուլգարերինի։

Ավելի վատ է զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող ժողովուրդների հարցը։ Ամերիկայում կան ժողովուրդներ, որ Հարավային Ամերիկայի մի ծայրից սկսած հասել են Հյուսիսային Ամերիկայի մի ուրիշ ծայրը. նրանք խոսում են ցեղակից լեզուների գանազան բարբառներով, բայց նրանք ոչ մի գիտակցություն չունեն ոչ իրենց նախահայրենիքի, ոչ իրենց գաղթի, և ոչ էլ իրենց խոսած լեզվի ծագման կամ մի ուրիշ լեզվի հետ ունեցած կապակցության մասին։

Բայց ինչ կարիք կա այսքան հետաքննելը գնալու։ Նույնիսկ այնպիսի կուլտուրական ժողովուրդներ, ինչպիսիք են՝ ֆրանսիացիները, իտալացիները, պորտուգալացիները կամ ռումինացիները, եթե գիտական դաստիարակություն ից զուրկ լինեն, շատ գիտակցություն ունեն այն մասին, թե իրենք ռոմանական լեզվի զանազան բարբառներն են խոսում։

Ուրեմն, հիմնվել խոսող ժողովրդի գիտակցության վրա՝ ամենևին արժեք չունի, որովհետև այդպիսի գիտակցություն գոյություն չունի։

Ահա թե ինչու այսօր էլ մենք՝ զանազան հնդեվրոպական ժողովուրդներս՝ չգիտենք հաճախ, թե մեր խոսած լեզուն հնդեվրոպական է, թե չէ. և մինչև անգամ այն րոպեին, երբ գիտուններըը հաստատում են այն, մենք կասկածում, վիճում, նույնիսկ համաձակվում ենք հերքել։

Բոլոր այն մեծ ու փոքր լեզուները, որոնք ցեղակից են, այսինքն՝ միևնույն ծագումն ունեն, ամբողջովին միասին առած, կազմում են մեկ ընտանիք[1]։ Ցեղակցական ընտանիք ունի մի նախամայր, որ կոչում ենք նախալեզու և որ բոլորին ծնունդ

---

1 *Կարևոր է որոշել, թե ինչպես պետք է կոչել այն լեզուների խումբը, որոնք լեզվաբանորեն միևնույն ծագումն ունեն։ Ֆրանսիացիները կոչում են* famille *«ընտանիք» կամ* groupe *«խումբ», գերմանացիները՝* sprachstamm *«լեզվաբուն» (իբր թե լեզուների այդ խումբը նմանեցնելով մի ծառի, որ ունի իր բունը և իր ճյուղերը)։ Հայերենում 80-ական թվերից շինված էր լեզվախումբ բառը, որ և շատ գործածական դարձավ։ Բայց ավելի ուշ, նկատելով, որ խումբ բառը անկարգություն է ցույց տալիս և լեզուների ծննդաբանական կապի մասին ոչինչ չի ասում, գերմաներենից թարգմանեցին լեզվարուն։*

Այս աշխատության մեջ մենք լավագույն համարեցինք գործածել ընտանիք բառը, որ բնագրված է նաև ասուրերենում (семья)։ *Այսպիսով՝ ամեն մի լեզվախումբ կազմում է մի լեզվական ընտանիք. ինչպես՝ հնդեվրոպական, ընտանիք, սեմական ընտանիք և այլն։*

Ամեն մի ընտանիքի պատկանող լեզուները առաջացել են մի լեզվից, որ գիտուններըը աշխատել են վերականգնել։ Այդ լեզուն էլ առաջացել է զանազան անուններ։ Գերմանացիները կոչում են Ursprache *կամ* Grundsprache, *որոնցից առաջինը թարգմանվեց հայերեն նախալեզու և այդ բառը գործածական է մեր մեջ 80-ական թվերից մինչև այժմ։ Ասում են, օրինակ հնդեվրոպական նախալեզու (համառոտագրությամբ հնե), սեմական նախալեզու և այլն։ Վերջերս երկրորդ գերմանական բառի նմանությամբ կազմվեց հիմնալեզու, որ համապատասխանում է ռուս.* ЯЗЫК-ОСНОВА *ձևին։*

Դանում եմ, որ նախալեզու բառը ճիշտ չէ, որովհետև նա չփոքրում է մարդկության առաջին կամ նախնական լեզվի հետ, որի մասին մենք ոչ մի

ավոգն է։ Ամեն մի նախամայր ծնել է մի քանի մայր լեզու, որոնք իրար հարաբերությամբ կոչվում են քույր լեզուներ։ Այս քույր լեզուները բաժանվելով իրարից և ապրելով իրենց ուրույն կյանքով, ծնել են նորից զանազան լեզուներ, որոնք կոչում ենք նախորդների համեմատությամբ նոր լեզուներ, և սրանք էլ իրենց մեջ աճելով և զարգանալով, ծնել են իրենց բարբառներն ու ենթաբարբառները։

Լեզուների ցեղակցության աստիճանը կամ ընթացքը կարելի է պատկերացնել հետևյալ ազյուսակով։

1.	Ընտանիք	Նախալեզու
		↓
2.		մայր լեզուներ
		↓
3.		նոր լեզուներ
		↓
4.		բարբառներ
		↓
5.		ենթաբարբառներ

պատճառը չունենք։ Այն, ինչ որ կոչում ենք հնդեվրոպական նախալեզու, ամենևին հնդեվրոպական այն հին ժողովրդի նախնական լեզուն չէ, այլ 2500 թվերին (մեր թվ. ա.) կամ ավելի առաջ խոսած լեզուն է, որ նույնպես ծագած պիտի լինի մի ուրիշ հին լեզվից և որ իրավունք ունի կոչվելու հնդեվրոպական նախալեզու։ 2500 թվերին հնդեվրոպացիների խոսած լեզուն սովորական մի լեզու էր, շատ ավելի նոր քան սումերերենը, չինարենը կամ եգիպտացերենը, նա նախալեզու է միայն մեզ՝ նորերիս համար (ռուս, հայ, հուն, լատին, գերմաներեն, պարսիկ և այլն), իսկ իրեն համար սա պարզապես լեզու էր։ Ֆրանսերեն նա կոչվում է l'indo-européen *կամ* l'indo-européen commun *(հնդեվրոպականը կամ հասարակաց հնդեվրոպականը) և՝ իրավամբ։ Մենք էլ այստեղ խուսափեցինք անդրադարձ կերպով գործածելուց նախալեզու բառը. և ասացինք միայն հնդեվրոպական լեզու։ Լավագույն պիտի լիներ ասել հնդեվրոպացերեն, եթե այս բառը ընդունելի դառնար։ Իսկ ընդհանուր բառով, բոլոր հնդեվրոպական կամ հնդեվրոպախոս ժողովուրդների համար հարմար է ասել հնդեվրոպական նախալեզու։*

Հնդեվրոպական լեզուն կարող ենք նաև, շատ հարմար ձևով, կոչել մայր լեզու, որի զավակներն էլ (հայերեն, սլավերեն, հունարեն և այլն), կոչվում են դուստր լեզուներ, իսկ իրար համեմատությամբ քույր լեզուներ, օրինակ՝ հայերենը և ռուսերենը դուստր լեզուներ են և իրենց մայրն է հնդեվրոպացերենը։

Դուստր և քույր ավելի բանաստեղծական բառեր լինելով, գիտական պարզ ձևով՝ դուստր լեզուները կարող ենք կոչել ճյուղ, հնդեվրոպականը (հնդեվ-

Դասավորությունը մոտավորապես այնպես է, ինչպես կենդանաբանության մեջ՝ ցեղ, սեռ, դաս, կարգ, ընտանիք, սեռ, տեսակ և զանազանություն, կամ ինչպես բուսաբանության մեջ (հատված, խումբ, տիպար, դաս, կարգ, ընտանիք, սեռ, տեսակ և զանազանություն)։ Ինչպես կենդանաբանության մեջ, նույնպես և այստեղ, ամենից ցածր գտնված աստիճանները իրար ավելի մոտիկ են, քան ավելի վերինները. քանի բարձրանանք ավելի վեր, այսինքն ավելի հին, համանությունը այնքան կհեռանա. այսպես՝ երկու ենթաբարբառ իրար ավելի մոտիկ են, քան երկու բարբառ, երկու բարբառ ավելի մոտիկ են՝ քան երկու լեզու, երկու լեզու ավելի մոտիկ են՝ քան երկու մայր լեզու։ Իսկ նախալեզուները իրար հետ կապ չունեն։

Յուրաքանչյուր լեզվախմբից ներկայացուց կենդանի են ենթաբարբառները, բարբառները և նոր լեզուները, մեռած՝ բայց գրքերում կենդանի են գանազան մայր լեզուներ, իսկ նախալեզուն բոլորովին զրկված է գոյությունից և լեզվաբանության ասն է, որ հնարավորին չափ վերականգնում է այն։

Աշխարհիս բոլոր լեզուները տակավին քննության առնված չեն։ Լեզվաբանները, լինելով եվրոպացի, բնականաբար շահագրգռված պիտի լինեին իրենց՝ եվրոպական լեզուների ուսումնասիրությամբ և իրենց լեզուներին ցեղակից լեզուներով։ Այս բանը անհրաժեշտ էր հատկապես ծանոթից անծանոթին գնալու

բազական մայր լեզուն կամ հնդեվրոպացիները) ունի 11 ճյուղ և կան ճյուղեր, որոնք ունեն իրենց բաժանմունքները։

Այժմ անցնում ենք խոսելու այն երկրի մասին, որ հնդեվրոպացիների բնակավայրը կամ հայրենիքը եղավ։

Հայրենիք կոչվում է այն երկիրը, ուր ապրում է մի ժողովուրդ և ուր ապրել են նաև իր նախնիքները։ Բայց լինում են նաև գեպքեր, երբ մի ժողովուրդ ամբողջությամբ գաղթած է լինում իր հայրենիքից և մի ուրիշ երկիր դարձած իրեն նոր հայրենիք։ Կարելի է նաև ենթադրել, որ մի ժողովուրդ, պատմության մեջ անհիշատակ գարերում, մի քանի անգամ գաղթած և նոր-նոր հայրենիքներ ունեցած լինի։

Հայերը այս վերջին կարգից են։

Այսօր մեր հայրենիքը Հայաստանն է, ուր ապրում ենք 2300 տարուց ի վեր։ Հայոց մի սոսկ մասը ժամ գարում գաղթեց Կիլիկիա և այդ երկիրը դարձրեց իրեն հայրենիք, առանց, սակայն, երբեք կորելու իր կապը Հայաստանի հետ, որ իր բուն հայրենիքն էր։

Պատմությունը հաստատում է, որ հայերը նախքան Հայաստան (Մեծ Հայք) գաղթելը բնակվում էին Փոքր-Հայքում (Ասիոյ հովտում)։ Ուրեմն, եթե Հայաստանը մեր արդի հայրենիքն է, Փոքր-Հայքը մեր նախահայրենիքն է։

սկզբունքի համաձայն։ Ապա թե ոչ՝ գիտության համար յուրի և օտարի, մեծի ու փոքրի, թույլի կամ ուժեղի խտրություն չկա։ Ամենաանկարևոր թվացող մի կետն անգամ հանկարծ դուրս է գալիս գիտության համար կարևոր։ Միայն վերջերս, երբ այդ մասին իրենց աշխատանքները գրեթե վերջացրել են, սկսել են հետաքրքրվել նաև մյուս լեզուներով։ Մինչև այժմ եղած քննությունները երևան են հանել և հաստատել միայն մի քանի լեզվական ընտանիք, իսկ մնացյալները կամ բնավ և կամ բավարար չափով քննված չեն (այսպես՝ Աֆրիկայի, Ավստրալիայի և Ամերիկայի բնիկների լեզուները), ուստի կազմում են անվանական խմբակցություններ։ Մանրամասնությունները թողնելով հաջորդ դասախոսներին, այստեղ թվում ենք իսկական և անվանական ընտանիքները։

1. Հնդեվրոպական ընտանիք, որ տարածվում է Իսլանդիայից սկսած՝ Միջերկրականի հյուսիսային ափերով մինչև Հընդկաստանի ծայրը։

2. Սեմական ընտանիք, որ տարածվում է Եթովպիայից սկսած, Միջերկրականի արևելյան ափերով՝ մինչև Պարսկաստան։

3. Քամյան ընտանիք, որ բռնում է ամբողջ հյուսիսային Աֆրիկան։

4. Աֆրիկյան ընտանիք, որ բռնում է Սահարայից մինչև Աֆրիկայի հարավային ծայրը։

5. Հոտենդոտ և բուշմեն (Աֆրիկայի հարավում)։

Բայց հայերը նախքան այդ նախահայրենիքում (Փոքր-Հայքում) բնակվելը, անշուշտ, բնակված պիտի լինեին մի ուրիշ երկրում (Թրակիա՞), ուր նույնպես գաղթել էին ավելի հին ժամանակ, ավելի հին հայրենիքից՝ իրը հնդեվրոպացիք։

Այդ նախավոր հայրենիքը (այսինքն հնդեվրոպացիների բնավայրը) հայոց, ինչպես և շատ ուրիշ ցեղակից ժողովուրդների (հուն, լատին, պարսիկ, հնդիկ, սլավոն և այլն) նախահայրենիքն է։

Այսպիսով՝ հայրենիք և նախահայրենիք գաղթում են հարաբերական իմաստով բառերը։

Կարող ենք ասել, թե Ռուսաստանի միջնաշխարհը հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքն է, բայց կարելի չէ ասել, թե նա հնդեվրոպացիների (իրրև մի առանձին ժողովրդի կամ ցեղի) նախահայրենիքն է, այլ միայն հայրենիքն է։ Անշուշտ հնդեվրոպացիներն էլ իրրև մի առանձին ժողովուրդ կամ տեղական մի խումբ՝ գաղթել են ուրիշ տեղերից և իրենց ամենանախնական հայրենիքը մարդկության օրրանն է (Ջավա կղզու մոտ), բայց այս բոլորի մասին ոչինչ չգիտեն գիտությունը։

6. Ավստրական ընտանիք, որ սկսելով Մոգոլասկար կզգուց հասնում է Հնդկական օվկիանոսի կզզիների վրայով մինչև Օվկիանիայի ծայրը։

7. Դրավիդյան ընտանիք, Հնդկաստանի հարավային մասում։

8. Անդաման ընտանիք, Հնդկաստանի արևելյան կողմը։

9. Չին-տիբեթական ընտանիք՝ Արևելյան Ասիայում։

10. Ուգրո-ֆիննական ընտանիք, որ բռնում է Եվրոպայի մի մասին և հյուսիսային մասերը (Սկանդինավիա և Հունգարիա), մինչև Ուրալյան լեռների ասիական կողմը։

11. Կովկասյան ընտանիք, որ տարածված է կովկասյան լեռնաշղթայի երկու կողմերը։

12. Ալթայական ընտանիք, որ տարածվում է Մի ջին Ասիայում, Ուրալյան լեռներից մինչև Խաղաղ օվկիանոսը։

13. Ճապոն-Կորեական, որ բռնում է այդ երկիրները։

14. Այնու (Ճապոնիայի հյուսիսում և Սախալինում)։

15. Հիպերբորյան կամ ենթասիական լեզուներ (Միջին հյուսիս-արևելյան մասերում)։

16. Ամերիկյան լեզուներ (Հյուսիսային և Հարավային Ամերիկայի բնիկների լեզուները)։

17. Ավստրալիական լեզուներ (Ավստրալիայում)։

Սրանցից զատ կան առանձին լեզուներ, որոնք ոչ մի գաղափարության տակ չեն մտնում կամ կապ չունեն որևէ հայտնի լեզվի հետ, այսպես են՝ բասկերենը, լիգուրերենը, էտրուսկերենը, նախահնդեվրոպական և փոքր-ասիական լեզուները՝ խալդերեն, կասկերեն, աստերներեն, էլամերեն և կանֆուտեերեն։ Ի նկատի ունենալով անցյալում խոսված բազմաթիվ լեզուների կորուստը, անհնար չէ ենթադրել, թե այս անհայտ լեզուները վերջին մնացորդներն են առանձին առանձին բնտանիքների, որոնք գոյություն են ունեցել մի ժամանակ և խոսվել թերևս շատ բնդարձակ տարածության վրա։

Այստեղ կարևոր է անել մի անհրաժեշտ նկատողություն։

Երբ ասում ենք լեզուների ցեղակցություն, պետք չէ հասկանալ նաև մարդաբանական ցեղակցություն։ Մարդաբանների համար ցեղակցությունը նշանակում է մարդկային ցեղերի ծագման նույնություն, այսպես՝ սպիտակ ցեղ, սև ցեղ, դեղին ցեղ, պղնձագույն ցեղ։ Իսկ լեզվաբանի համար ցեղ և լեզու տարբեր բաներ են։ Միևնույն սպիտակ ցեղը տվել է հնդեվրոպական բնտանիքը և սեմական բնտանիքը, ուգրո-ֆիննական և այլն.

ուրիշ ցեղեր ավելի են էլ ավելի բազմաթիվ լեզվաընտանիքներ։ Սրանից երևում է, որ լեզուն ցեղի հետ կապ չունի. ապա թե ոչ՝ մի ցեղը մի լեզվաընտանիք պիտի արտադրեր և ամբողջ մարդկությունը պիտի ունենար ընդամենը 4 լեզվաընտանիք։

Ինչ որ ասացինք ցեղի մասին, նույնը ավելի ևս պիտի հասկանանք ազգի մասին. հին լեզվաբաններըը կարծում էին, թե երբ մի քանի ազգեր խոսում են այնպիսի լեզուներով, որոնք իրար հետ նույն ծագումն ունեն, ուրեմն այդ ազգերն էլ նույն ծագումն ունեն։ Արդի լեզվաբանները անջատում են իրարից ազգի և լեզվի նույնության դաղափարը։ Ամեն մի մանուկ՝ ինչ ազգի էլ որ պատկանի, ծնվելով մի օտար երկրում և մեծանալով օտար երեխաների հետ, սովորում է նրանց լեզուն բոլորովին բնական կերպով և կարող է մինչև անգամ իր մայրենի լեզուն բոլորովին չիմանալ։ Նույնիսկ հարազատ երկրում և ծնողների ներկայությամբ, մի երեխա, որ մեծանում է մի օտար առնտուի խանութի տակ, սովորում է բնական կերպով օտարազգի առնտուի լեզուն։ Այս պատճառով էլ ահա, տեսնում ենք բազմաթիվ ազգեր, որոնք խոսում են մի ուրիշ ազգի լեզվով, առանց նրան պատկանելու. այսպես՝ բելգիացիները խոսում են ֆրանսերեն, բայց ֆրանսիացի չեն, հրեաները ունեին իրենց բնական լեզուն, որ է եբրայեցերենը. հետո արաբախոս դարձան, դաղթելով Եգիպտոս ընդունեցին հունարենը, այսօրեցիս էլ ցրված աշխարհիս երեսին խոսում են իրենց հաստատված երկրի լեզվով (գերմաներեն, իսպաներեն և այլն), առանց այն ազգին պատկանելու։ Հիշենք մեզ ավելի մոտիկ օրինակներ. Փոքր-Ասիայի հայերը խոսում էին թյուրքերեն իրրև մայրենի լեզու, բայց թյուրք չէին. Բեսարաբիայի հայերը խոսում էին բիղիմջի (այս է՝ տեղական թյուրքերենով), բայց թյուրք չէին, և այլն։ Ընդհակառակը՝ միևնույն ծագումն ունեցող մի ժողովուրդ քաղաքական դեպքերի բերմամբ կարող է խոսել զանազան տարբեր լեզուներով, ինչպես՝ հրեաները, որ խոսում են մի տեղ ֆրանսերեն, մի տեղ իսպաներեն, մի տեղ գերմանական ժարգոնը, բայց ցեղովին միևնույն հրեան են։ Լեզուների փոփոխության հետաքրքրական և ժամանակակից մի օրինակ տալիս է կամասի կոչված ժողովուրդը, որը խոսում էր սամոյեդերենի մի բարբառով. 1840 թվին սկսում են խոսել թյուրքերեն և քսան տարուց իրենց լեզուն մոռանում են. 1890-ին թողնում են թյուրքերենը և սկսում են խոսել ռուսերեն. այսպես, ուրեմն, 50 տարվա մեջ երկու լեզու են փոխում։

Է՛լ ավելի զարմանալին այն է, որ միևնույն ազգի մի հատվածը հաստատվելով մի ուրիշ աշխարհում, պահելով հանգիստ նույն ազգի լեզուն, կազմում է տարբեր ազգ. այսպես՝ Ամերիկայի (Միացյալ Նահանգներին)., Կանադայի, Ավստրալիայի ազգը (մեծ մասամբ անգլիացի), բրազիլիացիները (=պորտուգալացի), չիլիցիները և արգենտինացիները (իսպանացի) և այլն։

Ցեղի, ազգի և լեզվի բնական կապը մեկնելու լավագույն ապացույցներն են անգլիական ու ամերիկյան ազգերի գոյությունը։ Անգլերենը մեծ Բրիտանիա տարվից անցյալ աշխարհակալների միջոցով, այն է՝ արևմտյան գերմանական բնտանիքին պատկանող ժողովրդով, որոնք նախքին Եվրոպայից եկան։ Երկրում կար մի ուրիշ ժողովուրդ, որի հետ միասին խառնվեցին ու ձուլվեցին։ Հետո սկանդինավցիները հաստատվեցին երկրի զանազան կողմերը։ Հետո եկան Ֆրանսիայի նորմաննները և խառնվեցին սեզոցիների հետ։ Այսպես, ուրեմն, անգլիացիները խառնուրդ են արևմտյան գերմանացիների (անգլ և սաքսոն), սկանդինավցիների, ֆրանկո-նորմաննների և նախկին բնիկների, որոնք նույնպես խառնուրդ են ուրիշ ժողովուրդների (գլխավորապես՝ կելտ և բրիտանացի)։ Անգլերենը այս բոլորի լեզուն է և հենց հիմա էլ ունի այս բոլորից փոխառյալ բառերի մի գումար։

Այսպես նաև ամերիկյան ազգը, որ խառնուրդ է բազմաթասակ ազգերի և ցեղերի, աֆրիկյան նեգրերի, ասիական ժողովուրդների, ամերիկյան կարմրամաշկների, եվրոպացիների, ինչպես և մյուսների հրեաների, այս բոլորը միասին խոսում են այն լեզուն, որ խոսում են անգլիացիները, առանց որևէ մայրենի լեզվի ծագումնի կամ զգացմունքի (Whitney, La vie du langage, էջ 7)։

Լեզվաբանի համար ուրեմն՝ լեզուների ցեղակցություն ասելով՝ հասկացվում է միայն այդ լեզուների ծագման միությունը անկախ ազգերի ծագման միությունից։ Այսպես՝ հնդեվրոպական նախալեզուն մի առանձին լեզու է, բայց պետք չէ կարծել, թե այդ լեզվով խոսող ժողովուրդները նաև կազմում են մի առանձին հնդեվրոպական ցեղ։ Այսպես և հայերենը հնդեվրոպական լեզու է և իրրև լեզու ցեղակից է անգլերենին, գերմաներենին, իտալերենին, հունարենին և այլն, սակայն ո՛չ այն անհրաժեշտ պայմանով, թե ուրեմն հայերն էլ ցեղակից են անգլիացիներին, գերմանացիներին, իտալացիներին, հույներին և այլն։ Ազգի

ծագման խնդիրը պիտի լուծվի անկախ լեզվից, պատմական տվյալներով։

Սակայն, եթե յուրաքանչյուր ժողովուրդ բնականից այս կամ այն լեզուն չի ենթադրում, այնուամենայնիվ նա որևէ ընդհանուր լեզու իր համար ենթադրում է, ինչպես և յուրաքանչյուր լեզու անշուշտ մի ժողովուրդ ենթադրում է։ Չկա մի երևույթ առանց հոր և մոր։ Ամեն մի լեզու առնծագործություն է մի առանձին ժողովրդի միության։ Չի կարող լեզուն օդում կախված լինել։ Ուրեմն և այն առաջին ժողովուրդը, որ խոսել է այն լեզվով, պատկանում է հնապես նույն ցեղին՝ նաև իրը ժողովուրդ։ Ըստ այսմ հնդեվրոպական նախալեզուն էլ ենթադրում է մի հնդեվրոպական ժողովուրդ առանձին, որի անհրականությունն էր այդ լեզուն։ Հայերենն էլ, որ հնդեվրոպական լեզու է, ենթադրում է նախապես ցեղով հնդեվրոպացի մի ժողովուրդ, որի ժառանգներն ենք մենք լեզվով, բայց ոչ անպատճառ նաև ցեղով։ Օրինակ առնենք դարձյալ բելգիացիներին, որոնց լեզուն ֆրանսերեն է և ենթադրենք, թե ֆրանսերեն լեզուն չկա։ Բելգիացիների խոսած լեզուն, որ այն ժամանակ պիտի բելգերեն կոչենք, պիտի ենթադրեր մի ցեղ, որ խոսել է առաջին անգամ այդ լեզվով, որ ժառանգել են բելգիացիները. բայց բելգիացիները այն ցեղից (=ֆրանսիացի) չեն։

1. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ[1]

Տասնյոթ լեզվախմբերի մեջ ամենից մեծը հնդեվրոպական ընտանիքն է, որ բռնում է Իսլանդիայից սկսած գրեթե ամբողջ Եվրոպան՝ մինչև Հնդկաստանի ծայրը, նոր և նորագույն գաղթականություններով ու գաղութակալությամբ լցրել է արդեն Ամերիկան, Ավստրալիան և սպառնում է կլանել նաև Աֆրիկան։

Ռուսաստանը իրր օրրան հնդեվրոպացիների.—Մեղնից մի դար առաջ գիտունները սկսեցին զբաղվել այն հարցով, թե ուր էր հնդեվրոպացիների հայրենիքը։ Ուզելով հիմնվել իրրև թե բուն սկզբնական աղբյուրի վրա, վերցրին Հենդ-Ավեստան, որի մի գլխում հիշատակված են մի քանի աշխարհագրական անուններ։ Սրանցից եզրակացրին, թե հնդեվրոպացիների հայրենիքը գտնվում էր Հնդկաստանի հյուսիսային կողմը՝ Պամիրում։

Պամիրը մի լեռնադաշտ է, որ 5000 մետր բարձրություն

[1] Հնդեվրոպական ընտանիքի մասին շատ գեղեցիկ մենագրություն է Hermann Hirt. Die Indogermanen, Strassburg, 1905։

ունի և շատ ցուրտ կլիմա։ Աշխարհագրագիտները կոչում են Գամիրը ջաչխարհի կուրծք։ Ըստ այդ հին գիտունների տեսակետի ինդովրոպացիները ծագել են ուրեմն այդ լեռնաշխարհում, ապրել ու բազմացել, ապա գաղթել, մի կողմից՝ դեպի հարավ՝ մինչև Հնդկաստանի ծայրը, մյուս կողմից՝ դեպի արևմուտք՝ մինչև Իսլանդիա, ապա՝ Նոր-աշխարհ։

Նոր գիտությունները չեն ընդունում ամենևին այս կարծիքը։ Ընդհակառակն չէր կարող բնավ հիշողություններ պահած լինել այն հնագույն շրջանի մասին, որ իրենից շուրջ 2000 տարի առաջ էր։

Հնդեվրոպացիների հայրենիքը գտնելու ապահովագույն միջոցը իրենց լեզուն է, որ վերակազմել են գիտունները։ Այդ լեզուն անասուններից չգիտե փիղ, առյուծ, վագր, ճովազ, ուղտ, ոչխարագյուր և այլն, բույսերից չգիտե բրինձ, շաքարեղեգ, արմավենի և այլն։ Այդ լեզուն ունի, ասկյան, ձյուն, սառույց, ամպրի բառերը և ճանաչում է տարվա երեք եղանակները (գարուն, ամառ, ձմեռ), բայց չգիտե աշուն։ Սրանցից հետևում է, որ հնդեվրոպացիների հայրենիքը ոչ սառուցյալ գոտումն էր, և ոչ էլ այրեցյալ կամ տաք գոտում, այլ բարեխառն գոտում։ Կարևոր է հիշել, որ հնդեվրոպացիներին լավ ծանոթ էր ձին, որ անծանոթ կենդանի էր Միջագետքում և Եգիպտոսում։ Ջին Գարակառամից Բաբելոն մտավ 2000 թվերին և կոչվում էր տարբ էշ, իսկ Եգիպտոս մտավ Հիքսոսների հետ։ Այս հանգամանքը ցույց է տալիս, որ մեր որոնած շրջանից դուրս պետք է հանել նաև Եգիպտոսն ու Միջագետքը։ Դրնեի և արքատունկ չունեին հնդեվրոպացիները, որից հետևում է, որ Միջերկրականի շրջանից էլ ավելի վերև պետք է բարձրանալ։

Այս բոլորից երևում է, որ հնդեվրոպացիների հայրենիքը պետք է որոնել Եվրոպայի մեջ կամ Միջին Ասիայի շրջանում։

Նախահայրենիքը չէր կարող լինել Եվրոպայի արևմտյան և հարավային մասերում, որովհետև գիտենք սրսին, թե Իսպանիա, Իտալիա և Հունաստան հնդեվրոպացիների գաղթից առաջ բնակված էին տարբեր ցեղերով։ Եթե հնդեվրոպացիները լինեին Եվրոպայի արևմտյան մասերում, անշուշտ պիտի ունենային փոխադարձ փոխառություններ բասկերեն լեզվից, ինչ որ նկատված չէ։

Նույնպես նախահայրենիքը չէր կարող լինել Եվրոպայի արևելյան ասիմանում, որովհետև Ուրալի կողմերը ուգրո-ֆիննական ժողովուրդների հայրենիքն է։ Մնում է դնել Եվրոպայի

մինչեն մասերում, այն է՝ Ռուսաստանի հարավային տափաստաններում կամ ավելի հյուսիս՝ Բալթիկ ծովի արևելյան կողմը, արդի Լիտվայի սահմաններում։ Այսպես են մտածում նաև մարդաբանները, որոնք Եվրոպայում դնում են երեք տիպի մարդ (homo nordicus, homo alpinus և homo mediterraneus)։ Անշուշտ այս երեքից առաջինն էր, որ խոսեց հնդեվրոպական լեզվով։ Այդ ցեղի մարդիկ իջան նախ Ռուսաստանի տափաստանները, ապա քանի սառցային շրջանի սառույցը բարձրանում էր, իրենք էլ բարձրացան դեպի Բալթիկի շրջանը։ Այսպես մարդաբանները ուրախ են, որ լեզվաբանները թողել են արևելյան ծագման հին կարծիքը և ընդունում են այժմ Եվրոպան իբրև հնդեվրոպական նախահայրենիք։

Պամիրի հին կարծիքը հիմնվում էր նաև այն տեսության վրա, թե սանսկրիտ լեզուն (հնդկերենը) մարդկանց նախնական լեզվի տիպարն ունի։ Արդարև՝ հնդկերենի արմատները ընդհանրապես a ձայնավորն ունեն. բառեր կան, որ ամբողջապես a ձայնավորով են. այսպես՝ Mahābhārata, Rāmāyaṇa (հին հնդկական խոշոր գրական երկերի անուններ են)։ Հին ձայնագետները այն կարծիքն ունեն, թե մարդու արտաբերած առաջին ձայնը a ձայնավորն էր. սրանով ենթադրվում էր, թե սանսկրիտն էլ նախնական կամ նախնական լեզուն էր։ Հետագայում այս կարծիքը փոխվեց. այժմ բոլոր ձայնաբաններն էլ ընդունում են, որ հնդեվրոպական արմատների ձայնավորը e էր ընդհանրապես, որ սակայն ընդունակ էր դառնալու o կամ ջնջվելու (հմմտ. ռուս. беру, сбор, брать և այլն)։ Այսպիսով a-ի գլխացավը վերացավ, ինչպես վերացավ Պամիրը նախահայրենիք ընդունելու էլ կարծիքը, որ այժմ կարելի է միայն հին գրքերի մեջ գտնել։

Կարևոր նշանակություն է տրվում այն հանգամանքին, որ լիտվաններենը դիտուններին վերաբերվում հնդեվրոպական նախալեզվին շատ մոտիկ մի լեզու է. օրինակ՝ «ես եմ» նախալեզվով ասվում էր eg'o esmi և արդի լիտվաներենով էլ ասվում է ego esmi. Այս երևույթը համաձայն է գալիս այն սկզբունքին, որ լեզուն իր նախահայրենիքում ավելի անաղարտ է մնում, քան որևէ գաղթավայրում։

Ուրիշներ, հիմնվելով այն կետի վրա, որ 1) հնդեվրոպացիները «ծով» բառը չունեին, 2) ձկնորսության մեջ նշանավոր չէին, 3) չէին ճանաչում սաթը, որ Բալթիկ ծովի շրջանում վաղուց հայտնի մի հանք էր, հետացնում են նախահայրենիքը

Լիտվայից և գնում են Հարավային Թուրքեստանի սահմաններում: Այսպես է Շերազերը:

Ավելի ուշ Մորգանը (La préhistoire orientale, Paris, 1925), Ջայլաք, Շարպանտիեն (The original hom of the indo-europeans, Bulletin of the school of oriental studies, London, 1926, հտ. IV, էջ 147—170), մի քիչ էլ ավելի արևելք շարժվով, նախահայրենիքը գնում են Միջին Ասիայում, Օքսոս և Ցաքսարտես գետերի հովտում՝ Թուրքեստան կամ սրանից մի քիչ էլ հյուսիս կամ արևելք: Շարպանտիեի գլխավոր հիմքը ձիաբուծությունն է: Զին Միջին Ասիայի բնիկ կենդանին է և հնդեվրոպացիները, որ այնպես լավ ծանոթ են այս կենդանուն, չեն կարող ուրիշ տեղից լինել: Մորգանը հնդեվրոպացիների գոպիր կապում է Միրիրի սառեցման հետ: Այս բարեխառն և բարեբեր երկիրը հնագետ սառչելով, բնակիչները սկսեցին գաղթել: Պատմությունից գիտենք, թե հնագույն ժամանակներից սկսած մինչև Չինգիզ խան և Լանգթամուր ինչքան մեծամեծ գաղթականություններ են դուրս եկել Միջին Ասիայից: Բրանց նախորդող հնագույն գաղթերից մեկն էլ հնդեվրոպացիների գաղթն է: Շարպանտիեն արժեք չի տալիս լիովանգերենի հնաոիպ լեզու լինելու հանգամանքին: Որովհետև, նրան հակառակ, գիտեմանելինը, որ այնքան մոտիկ է ենթադրյալ նախահայրենիք Լիտվային, շատ ավելի հեռացած է նախատիպից, իսկ, ընդհակառակը, սանսկրիտը, որ այնքան հեռու է, շատ ավելի հավատարիմ է նախաձևին:

Նաև նախահայրենիքը եթե լիներ Հարավային Թուրքեստանում, հնդեվրոպացիները պիտի ճանաչեին ապր, որ Սև ծովի հովիտներում արդյունաբերություն է և շատ հին ժամանակներից ծանոթ: Եվրոպական լեզուները (նրանց հետ նաև հայերենը) գիտեն ապր, իսկ արիական լեզուները չգիտեն:

Միջին Ասիայում գնելով նախահայրենիքը, կրկնակի բացատրվում է շատ բնական ձևով: Ասիացիները բաժանվելով կենտրոնից, իջան դեպի հարավ, իսկ եվրոպացիները անցնելով Սև ծովի հյուսիսով, սովորեցին այստեղ ապր գործածություն:

Ավելացնենք, ասկայն, որ գիտունների մեծ մասը եվրոպական ծագման (այսինքն Թուրքեստանի) կողմնակից է: Անճիշտ է այն ենթադրությունը, որ հանդիպում է ապ բառից: Արիականները թեև չգիտեն ապր, բայց քուշերենը, որ չինական Թուրքեստանում խոսված հնդեվրոպական մի լեզու էր, գիտե ապր (sälyi),

Սրանից պիտի հետևցնենք, ընդհակառակը, թե աղը հնդեվրոպացիներին ծանոթ էր, իսկ արիացիները որևէ պատճառով կորցրել են այն, ճիշտ ինչպես լիտվաներենը, որ չունի աղ բառը, բայց իր մասին ցեղակիցները (լեթթերեն և հին պրուսերեն) ունեն. և նույնիսկ լիտվաներենը ունի saldùs «քաղցր» բառը, որ աղ բառից է ծագում: Համմ. հյ. աղու «քաղցր»:

Ի նպաստ հնդեվրոպական նախահայրենիքը միջին Ռուսաստանում դնելու դաշափարին, ևս անում եմ իմ կողմից հետևյալ նկատողությունը:

Երբ ժողովուրդները գաղթում են իրենց հայրենիքից, անհրաժեշտ չէ, որ հայրենիքը իսպառ դատարկվի: Հայերը ցրվել են ամբողջ աշխարհ մինչև Տրանսվալ և Ավստրալիա, բայց Սովետական Հայաստանը մի միլիոն հայութիւն պահում է իր մեջ. ռուսները գաղթել են մինչև Բեռլին, Սև ծով և Խաղաղ օվկիանոս, բայց Ռուսաստանը լի է ռուսների ամենամեծ բազմութիւամբ. անգլիացիները գաղթել են Աֆրիկա, Ամերիկա և Ավստրալիա, բայց Անգլիան ունի 40 միլիոն անգլիացի. Հունաստանից հույները գաղթեցին կղզիները, Ցանիա, Փոքր-Ասիայի ամեն կողմերը, Սև ծովի ափերը՝ մինչև Օդեսա, Ազով և այլն, բայց Հունաստանը չդատարկվեց. գերմանացիները՝ օստգոթերը, վիսիգոթները և այլն, գաղթեցին Իտալիա, Իսպանիա, Ղրիմ, Աֆրիկա, բայց Գերմանիան լիքն է գերմանացիներով. սեմական մեծ գաղութները գտնում ենք այն հնագույն գարերում՝ իրենց նախահայրենիք Արաբիայից և գնացին Ասորեստան, Բաբելոն, Քաղդեա, Ասորիք և Փյունիկիա, բայց Արաբիան երբեք դատարկ չմնաց. 7-րդ դարում արաբները էլ գաղթեցին Միջագետք, Հընդկաստան մինչև Մալայա, Ասորիք, Եգիպտոս, Իսպանիա, բայց այսօր էլ Արաբիան լիքն է արաբներով, որոնք կազմում են անկախ պետութիւն. փյունիկեցիները հիմնեցին հզոր մի գաղութ՝ Կարթագենն, բայց Փյունիկիան չդատարկվեց. կելտերը գաղթեցին ամբողջ Արևմտյան Եվրոպա, Իսպանիա, Աֆրիկա, մինչև Փոքր-Ասիա (Գալատիա, այսօր՝ Անկորա), ամեն տեղ չնչվեցին, բայց իրենց հայրենիքում (Հոլանդիա, Բրետան) շարունակում են իրենց գոյութիւնը: Թյուրքերն էլ դուրս գալով իրենց հայրենիքից՝ գաղթեցին մինչև Ղրիմ, Փոքր-Ասիա և Ադրիատիկ ծով. բայց Թուրքիստանը լիքն է զանազան թյուրքական ժողովուրդներով. միայն հնդեվրոպացիներն են, որ գաղթեցին մայր հայ-

բնիկ Թուրքեստանից, բայց Թուրքեստանում ոչ մի հնդեվրոպական ժողովուրդ չկաց։

Կարող են ասել, որ հնդեվրոպացիները կացին Թուրքեստանում, բայց ապա թյուրքացան։ Ինչու՞ հապա այն հնդեվրոպացիները, որ իրենցից ավելի քաղաքակիրթ եվրոպական և ասիական զանազան ժողովուրդներ ձուլեցին իրենց մեջ, չկարողացան ձուլել թյուրքերին և ընդհակառակը իրենք ձուլվեցին։ Վերջապես, եթե հնդեվրոպացիները ձուլվեցին Թուրքերի մեջ՝ ուր են հնդեվրոպական լեզվի հետքերը թյուրքերենում։

Հնդեվրոպացիների նախահայրենիքը գնելով Միջին Ռուսաստանում, ստացվում է մի կենտրոնավայր, որից ճառագայթում են գաղութները չորս կողմը, դեպի արևելք և արևմուտք, դեպի հյուսիս և հարավ։

Այսպիսով, Միջին Ռուսաստանը գնելով հնդեվրոպացիների նախահայրենիքը, արդի բոլոր եվրոպական և ամերիկյան կուլտուրական ժողովուրդների օրրանը դառնում է Ռուսաստանը և Սովետական Միության կենտրոնը իրավունք ունի պարծենալու իրրև արդի արևմտյան կուլտուրայի մայր հայրենիքը։

Նրանք, որոնք ընդունում են այն կարծիքը, թե մայր լեզուն մայր հայրենիքում ավելի լավ է պահվում, քան գաղութներում, իրավունք կունենան ասել լեզվի վաղնջական ձևերը (երկար ձեռ, վից տալով, բայերի կերպերը, մանավանդ շարժական շեշտը) անբնդհատ շարունակություն գնել հնդեվրոպական նախալեզվի։

Հնդեվրոպական ցեղերը, մի ժամանակ բնակվելով իրենց նախահայրենիքում՝ ավել են զանազան ժամանակ զանազան գաղթականություններ, որոնցից հայտնի են մեզ այժմ 11, որոնք հետևյալներն են (արևելքից արևմուտք բնթանալով).

1. Արիական ճյուղ
2. Թոխարական ճյուղ
3. Հայկական ճյուղ
4. Կամբրական ճյուղ
5. Փռյուգական կամ Թրակո-փռյուգական ճյուղ
6. Հունական ճյուղ
7. Իլյուրիկյան ճյուղ
8. Իտալական ճյուղ
9. Բալթիկ-սլավական (կամ լեթո-սլավական) ճյուղ
10. Գերմանական ճյուղ

11. Կելտական ճյուղ։

Լեզվական մերձավորության տեսակետից դասելով՝ այս 11 ճյուղերը բաժանվում են երկուսի. այսպես՝ արիականը, հայկականը, յունբիկյանը, լեթթո-սլավականը որոշ կետերում մոտենում են իրար, մինչ հունականը, գերմանականը, կելտականը և իտալականը մնում են իրար հետ. այսպես, օրինակ, կատկայինների, Տ շչականի արտասանության և որոշ բառերի գործածության մեջ։ Սրանից հետևում է, որ հնդեվրոպական նախալեզուն էլ այն հնագույն շրջանում ուներ երկու հիմնական բարբառ՝ արևելյան և արևմտյան, արևելյանն այն է, որից առաջացել է առաջին խումբը, իսկ արևմտյանը այն, որից առաջացել է երկրորդ խումբը։

Կարելի չէ իմանալ, թե հնդեվրոպական գաղթականությունների թիվը որչափ է, և այն հնագույն ժամանակներում քանի ժողովուրդ և լեզու պատկանում էին նույն լեզվախմբին։ Երբ մենք դիտենք 11 ճյուղ, պատճառ չկա ընավ կարծելու, թե դա է բոլորը։ Կարող են լինել ուրիշ հնդեվրոպական գաղթականություններ, որոնք կորել են առանց որևէ հետք թողնելու։ Դեռ մի քանի տարի առաջ, երբ Միջին Ասիայում հետազոտություններ ու պեղումներ կատարված չէին, ոչինչ հայտնի չէր Թոխարների մասին, և Թոխարների ու նրա մերձավոր ցեղակից քուշերեն լեզվի դյուտը մի զարմանալի հայտնություն եղավ։ Ավելի խոշոր անակնկալ եղավ կամխաբերենի դյուտը Փոքր-Ասիայում, I համաշխարհային պատերազմի ընթացքում, որը և բացեց մեր աչքի առաջ անցյալի գաղտնիքների մի լայն դուռ և ապագայի համար խոշոր հեռանկարներ։ Ոչինչ չկա ավելի սովորական, քան հնում ցեղերի ու լեզուների կորուստը։ Կելտերը մի ժամանակ Արևմտյան Եվրոպայի մեծ մասին տեր էին և մինչև Փոքր-Ասիա էին արշավել. այսօր հազիվ են ապրում նրանց լեզվի մնացորդները։ Նույնիսկ քաղաքական ու կուլտուրական մեծագույն զարգացման հասած ազգեր կորել ու անհետացել են աշխարհի երեսից. նախկին ասորեստանցիները, բաբելացիները, եդիպտացիները, հռոմեացիները անունով միայն կան այժմ։ Խաչիները, հուները, հնդիկները, հայերը նվաճել են իրենցից առաջ գոնված զանազան ժողովուրդներ և ոչնչացրել նրանց լեզուները։ Ցեղակից ժողովուրդները բացառություն չեն կազմում այս կողմից։ Հունաստանում նախ յոնիական հունարենն էր, դորիականը եկավ ջնջելու նրան, հետո աատիկյան կոյնեն (κοινή) եկավ ջնջելու դորիականը և այլն։ Եթե, ուրեմն, դեռ պատմական ժա-

մանաւանդ ուշի են ունեցել ազգերի ու լեզուների այսպիսի խոշոր կրնաւանդ, ով գիտե, թէ ամէնից հին ժամանակներում ինչքան ժողովուրդներ, նոյնիսկ հնդեվրոպացիների չլինում ինչքան ուրիշ հնդեվրոպացի ժողովուրդներ չեն եկած ու հետո նրանց մէջ ձուլված-անհետացած։

Ձանազան ժխյալներից հասկացվում է, որ հնդեվրոպական առաջին ժողովրդի գաղթականութիւնները բնականաբար եղել են ոչ թէ ոտաւմներով կամ աշխարհակալական հետագնաց արշաւանքներով, այլ տարածմամբ ու հանգարտ առաջխաղացմամբ։ Ժողովրդի ու լեզուի այս հաջողական տարածումը պատճառ է դարձել միութիւնը խախտելու և մի հնդեվրոպական ժողովրդից ու լեզուից նորանոր ժողովուրդներ ու լեզուներ գոյա բերելու։ Անշուշտ մի ժամանակ գոյութիւն ունեին մի արիական ժողովուրդ և լեզու, մի բալտիկ-սլաւական ժողովուրդ և լեզու, մի իտալական ժողովուրդ և լեզու և այլն. հայերէնն էլ՝ ևրեք ուներ իր հետ ուրիշ անձուկ ցեղակից լեզուներ. նրանց հետ միասին կազմում էր մի լեզու։ Հետագայում այս ժողովուրդները նորից տարածվելով ու անջատվելով իրարից՝ ծնունդ տվին մի նոր շարք ժողովուրդների լեզուներին, այսպես՝ մի արիական ժողովրդից ու լեզուից գուրս եկան հնդիկներն ու իրանացիները, հետո սրանցից էլ՝ բելուջիները, աֆղանները, պարսիկները, քրդերը, օսերը և այլն և այլն։ Այսպէս հասկանալ և մյուսների համար։

Թէ երբ են սկսել այս գաղթականութիւնները և ինչպես են հնդեվրոպացիները տարածվել Եվրոպայի և Ասիայի վրա, այս մասին ոչ մի պատմական ժխյալ չունենք։ Ամենահին հիշատակութիւններ, որ վերջերս եկան եկավ Փոքր-Ասիայում կամիների արձանագրութիւններն են։ Կամիները հիշատակված են Ասորեստանցիների մոտ մ. թ. ա. 1926 թվից առաջ, ուրեմն նրանց գաղթը և Փոքր-Ասիայում հաստատվելը սրանից շատ ավելի հին է, իսկ հնդեվրոպական ժողովուրդը էլ ավելի հին, ուստի շատ չենք հեռանա ճշմարտութիւնից, եթե դնենք մեր թվականութիւնից առաջ երրորդ հազարամյակին։

Գաղթականութիւնից բնական հետո՝ ժողովուրդները հաստատվելով իրենց նոր հայրենիքում, մոռնում են բազմադարեան ճամբի մէջ, ոանցնում են գիր ու գրականութիւն, ոմանք ավելի շուտ, ոմանք ավելի ուշ։ Կամիները առաջինը եղան, որ ասորեստանցիներից առացան գիրն ու գրականութիւնը։

Նրանցից հետո գալիս են արիականը, հունականն ու իտալականը, որոնք գրականություն ստեղծել են մեր թվականությունից առաջ, մյուսները՝ դրանից հետո և գլխավորապես հունական կամ հռոմեականի քաղաքակրթության ազդեցության տակ և հատկապես քրիստոնեական առաքելության նպատակով՝ Ս. Գրքի և Աստուածաշնչի թարգմանության համար. այսպես են խալանդերենը, դոթերենը, գոթերենը, հայերենը։ Թոխարերենը ավանդված է մեզ մեր թվականության 4—7-րդ դարերից։

Հնդեվրոպական լեզուների պատմության ամենահայտնի կետը նրանց տարածումն է։ Այսպես՝ արիական ճյուղը բռնել և բռնում է ամբողջ Հնդկաստանը. դեռ մեր թ. ա. 6 դարում կրետեում կային բնիկ ցեղեր, որոնց անծանոթ լեզվով մնում էլ են արձանագրություններ, բայց հույները եկան և ոչնչացրին նրանց. յատիներենը վտարեց իբերական լեզուն Իբերական թերակղզուց, որից էլ վիա մնում է տակավին բասկերենը. անգլերենը, իսպաներենը և պորտուգալերենը լցրեցին Ամերիկան, Օվկիանիան և մասամբ Աֆրիկան. սուսերենը տարածվեց Ասիայի մի խոշոր մասի վրա՝ մինչև Խաղաղ օվկիանոսը։ Մինչև իսկ այն տեղերը, ուր ոչ-հնդեվրոպական լեզուները դարձնելին իրենց արշավանքը, չկարողացան ամբողջապես ոչնչացնել հնդեվրոպական լեզուները. Փոքր-Ասիայում ֆյուրքերը կարողացան թեև մասամբ ջնջել հայերին, հույներին ու նրանց լեզուները, բայց քրդերենը կա դեռ և, մյուս կողմից՝ անագին տարածությամբ սեմական հողեր՝ Ասորիք, Պաղեստին և Միջագետք, մտան փրանսերենի և անգլերենի թևարկության տակ։ Որանք են այս խոշոր ծավալման հիմնական պատճառները։

Հնդեվրոպացիների տարածման առաջին միջոցը եղավ անշուշտ աշխարհակալությունը. հնդիկները զենքի ուժով տիրեցին Հնդկաստանին։ Լատիներենը նույն միջոցով տարածվեց Իտալիայում, սուսերենը հասավ մինչև Խաղաղ օվկիանոս, իսկ անգլերենը աշխարհակալությամբ տիրում է շատ գաղութներում։ Բայց աշխարհակալությունը և զենքի ուժը բավական չպիտի լինեին, եթե նրանց հետ միացած չլինեին նաև ուրիշ ավելի կարևոր հանգամանքներ։ Եվրոպացիները իրենց արշաված երկրների մեջ անշուշտ մեծ թիվ չէին կազմում, նվաճված ժողովուրդներից ավելի լավ զինված չէին. որովհետև սրանք իրենց քաղաքակրթությամբ հաճախ ավելի բարձր էին, քան եկվորները։

բը. այսպես Միջերկրականի ժողովուրդները, կրնացիք, համեմատել մանավանդ խալդերը՝ հայերի հետ։

Ամենք այդպիսի պատճառ են համարում հնդեվրոպացիների վարչական կազմակերպվածությունը, վարչական շնորհքը, յուրացման ընդունակությունը և բարձր կուլտուրան։

Ասորեստանցիներն ու Քաթարներն էլ,—ասում են նրանք,—աշխարհակալությամբ տիրապետեցին անագին երկրների, բայց որովհետև զուրկ էին այս շնորհներից, ուստի նրանց տիրապետությունը վազանցուկ եղավ և զարդացումը՝ շատ սահմանափակ։ Ընդհակառակը, հնդեվրոպացիները հաջողությամբ յուրացրել են ինչ-որ հնագույն քաղաքակրթություններ առնդել էին։ Այս միջոցով նրանք ավելի են քիչ հնում, և քիչ այժմ աշխարհիս ամենագեղեցիկ գրականությունները, գեղարվեստները, վարչական շնորհքը երևում է հենց նրանից, որ Եվրոպայի նախկին բոլոր ժողովուրդներն ու լեզուները ձուլվել են նրա մեջ, և հատիվ մի փշրանք է մնում նրանցից գեռ կենդանի (բասկերը)։ Նրանց բնակեցական ամուր կազմակերպության նշան են քաղաքական, կրոնական և բնակեցական կյանքին վերաբերյալ այն բառերը, որոնք նույնիսկ բարձրագույն քաղաքակրթության մեջ չեն վերացել-անհետացել և շարունակում են գեռ արդի հնդեվրոպական լեզուների մեջ։ Այսօր էլ չկա ոչ մի ազգ և ոչ մի քաղաքակրթություն, որ հանդգնի մրցել հնդեվրոպական կուլտուրայի հետ[1]։

Այս կարծիքը, սակայն, նույնպես ճիշտ չէ։ Կուլտուրայի հնագույն օջախներն են Քինաստանը, Բաբելոնը, Եգիպտոսը, որից կուլտուրան անցավ հույներին, ապա լատիններին և սրանց միջոցով էլ տարածվեց և տարածվում է Եվրոպա, Ամերիկա և համայն աշխարհ։ Այսօր, այն, կուլտուրան ծագել է Եվրոպայում (այս անվան մեջ առնելով, անշուշտ, նաև Ամերիկան)։ Բայց այդ կուլտուրայի համար հնդեվրոպացին անտիտուրությամբ պարծենալու իրավունք չունի, որովհետև այդ կուլտուրայի հիմնադիրը ինքը չէ, այլ Եգիպտոսը, Բաբելոնը, Էլամը և ուրիշներ։ Հնդեվրոպացին կամ Եվրոպան այդ կուլտուրայի վերջին առաջդն է և շարունակողը. նրա մեջ բաժին և հնագույն բաժինն ունեն նաև ուրիշները։ Հատկապես պիտի հիշենք այստեղ Քինաստանը, որ 4000 տարի առաջ հնարել է դիր, մինչև անգամ տպագրության արվեստը և այլն։ Այսօր էլ չինական կուլտուրան մի այնպիսի ինքնատիպ սա ունի, որ պարտավոր է պատճառում բոլորին։ Հե-

[1] Meillet, Esquisse d'une hist. de la langue latine, էջ 79։

առ չէ այն օրը, երբ չինացին էլ Ռուսաստանի նման, Սովետական Ռուսաստանի բարեկամությամբ, իրեն կանփականացնեն մարդկային մտքի, գիտության, կուլտուրայի բոլոր նվաճումները և այն ժամանակ, այդ 500 միլիոն կրթված ժողովուրդը, ձի գիտե, ինչ մեծ ծառայություններ պիտի մատուցանե համաշխարհային կուլտուրային։

[Հետևաբար, այդ տարածման պատճառը ոչ հնդեվրոպացիների բնականից զորեղ ու ընդունակ, կուլտուրական ու գործունյա լինելն է, ինչպես պնդում են ոմանք, և ո՛չ էլ հնդեվրոպական լեզվի «կենսունակությունը», ինչպես ասում են ուրիշներ։ Այդ տարածումը արդյունք է պատմական հանգամանքների։]

Հնդեվրոպացիների նախահայրենիքի, դաղթականական ճյուղերի, ժամանակի և այլ հանգամանքների մասին այս կարճ ծանոթությունից հետո, անցնենք քննելու յուրաքանչյուր ճյուղը և նրան պատկանող լեզուները առանձին-առանձին։

Հնդեվրոպական լեզվաբանության նվիրված ամենից ընդարձակ աշխատությունն է՝ Brugman, Delbrük, Grunriss der vergleichenden Grammatik der Indogermanischen Spachen, 2-րդ հրատ. Strassburg, 1897—1916 *(6 գիրք)*։

ԱՐԻԱԿԱՆ ՃՅՈՒՂ

Այս անունով հասկանում ենք Իրանի և Հնդկաստանի ընդարձակ տարածության մեջ խոսվող հնդեվրոպական լեզուների ամբողջությունը։

Այս ճյուղից մնացած հնագույն բնագրերները մյուս բոլոր ճյուղերից ավելի հարազատ կերպով են ներկայացնում հնդեվրոպական նախալեզվի ձևաբանության ընդհանուր վիճակը։ Նա միակն է, որ մեզ ցույց է տալիս արմատների խաղացած դերը նախալեզվի մեջ և նույնպես միակն է, որ պատմական շրջանին էլ պահել է հնդեվրոպական քերականության 6 հոլովները և այլն։ Ահա այս պատճառով հնդեվրոպական լեզուների համեմատական քերականությունը կազմվեց այն օրից, երբ արիական լեզուները համեմատության դրվեցին հունարենին, լատիներենին, սլավերենին և գերմանականին հետ։ Եվ այսօր էլ առանց հին արիական լեզուների գիտության անկարելի է որևէ լուրջ ուսումնասիրություն կատարել գիտության այս ճյուղի մեջ։

Արիական ժողովուրդները կազմելով մի շատ մեծ պետություն, իրենց իշխանությունը տարածեցին Հնդկաստանի հետագոր ծայրերից մինչև Արշիպելագ և Միջերկրական. նրանց լեզուն սիրելով բազմաթիվ ժողովուրդների մեջ, շատ շատ սկսաց այլափոխվել և հենց մեր թվականության սկզբից սրկին գանվում էր զարգացման այնպիսի աստիճանի վրա, որ գանում ենք լատինական ու գերմանական լեզուները նրանից 10 դար հետո։

Արիական ճյուղը բաժանվում է երկու մասի. ճնդկական և իրանյան։ Նախապես կարծվում էր, որ այս երկու մասերը իրարից անկախ ու անջատ են. բայց հետո, քննակատակը, տեսնվեց, որ երկուսը շատ անձուկ նմանություն ունեն իրար հետ։ Կարելի է գրել ամբողջ տառնախադասներ, որոնք թե հնդկերենով, և թե հին պարսկերենով նույն կամ գրեթե նույն ձևը գան։ Սրանից պետք է հետևցնել, սրտեն, որ հնդկերենն ու պարսկերենը մի լեզվի բարբառներ են, և թե հնդիկներն ու պարսիկները իրենց նախահայրենիքից միասին գաղթած, մի ժամանակ միասին ապրած և այնուհետև միայն բաժանված են երկուսից։

Եվրոպայից Հնդկաստան և Իրան հասնելու համար արիական գաղթականությունը երկու ճանապարհ ուներ. Հարավային Միջագետքի տափաստաններից վրայով գնալ արևելք և այնտեղից կամ Կասպից ծովի հյուսիսով գնալ Միջին Ասիա և կամ Կովկասով, այն է Կասպից ծովի արևմտյան կողմից գնալ հարավ, Իրան և Հնդկաստան։ Նախապես կարծվում էր, որ գաղթը առաջին ճանապարհով եղած պիտի լիներ, և արիական ցեղը բնակած պիտի լիներ երկար ժամանակ Կասպից ծովի և Արալ լճի միջև գտնված տարածության վրա, Օքսոս գետի հովտում, և հետո այստեղից հարավ իջնելով՝ բաժանված լիներ երկուսի, մեկը՝ բոնելու համար Հնդկաստանի ճանապարհը, մյուսը՝ Իրանը։ Բայց այս գեպքում սրդեյը պետք է լիներին այն ասիական անասպատները, որ գաղթողների ճանապարհի վրա փռված էին Օքսոսի հովիտը հասնելուց առաջ։ Ուստի ավելի հավանական է երկրորդ գիծը, մանավանդ որ ամբողջ այս ճանապարհի վրա մինչև այժմ էլ մնում են իրանյան ցեղի մնացորդներ, որոնցից գլխավորներն են օսերը։ Գետք է ընդունել, սրտեն, որ արիական գաղթականությունը եղել է Կովկասի վրայով, գեպի հարավ, Հայաստան, Մարաստան, Միջագետք, Պարսկաստան, այստեղից գեպի արևելք՝ Աֆղանիստան, Բելուջիստան և այստեղից

էլ կարելի անցքով՝ դեպի Հնդկաստան։ Արիները նախապես հաստատված էին, մի կողմից՝ սլավական ճյուղին և, մյուս կողմից՝ ուգրո-ֆիննական ժողովուրդներին. և սրանով պետք է բացատրել, մի կողմից՝ այն մոտավոր կապակցությունը, որ արիական լեզուները ունեն սլավական լեզուների հետ ավելի, քան մնացյալ հնդեվրոպական լեզուների հետ, և, մյուս կողմից՝ այն զանազան փոխառությունները, որ արել են ուգրո-ֆիննական լեզուները արիական լեզուներից։ Այս երկրորդ ճանապարհին հարմար է գալիս նաև այն փաստը, որ արիական զանազան ժողովուրդներ երևան եկան այժմ հաթերի կողքին (միտաննի և այլն), կապադովկիայից ոչ շատ հեռու։

Տեսնենք այժմ այս ճյուղի երկու խմբերը առանձին-առանձին։

ա. Հնդկական

Անցնելով դեպի Հնդկաստան, հնդիկները առաջին անգամ հաստատվեցին Ինդոս գետի հովիտը՝ Փենջաբ։ Այստեղից նրանք իջան հետո Գանգեսի հովիտը և ավելի հարավ՝ մինչև Դեկան։ Հնդկաստանը այն ժամանակ բնակված էր սևամորթ մի ցեղով, որին նվաճեցին հնդեվրոպացի հնդիկները և հեղհեղան դեպի հարավ քշելով՝ գրավեցին նրանց հողերը։ Այսօր Հնդկաստանը ներկայացնում է տարբեր ժողովուրդների մի խառնուրդ, հյուսիսում բնակվում են ևկվոր հնդեվրոպացիները, հարավում՝ բնիկ ոչ-եվրոպացի (դրավիդյան) ցեղերը։ Հակառակ դարերի երկար միջոցին, ևկվորները պահել են դեռ սպիտակ գույնը. բայց այդ՝ գերխավորապես այն պատճառով, որ իրենք իրենց դարձրել են ազնվական և կրոնական դասակարգ և խուսափել են խառնվելու բնիկ «սուիձծ» çudra-ների հետ։ Այնուամենայնիվ, բնիկների ջնջումը նույնիսկ հյուսիսում կատարյալ չի եղել և այսօր էլ Հիմալայայի ստորոտում կենդանի են զանազան բարբառներ, որոնք նույն են Դեկանի բարբառների հետ։

Հնդկերեն լեզուն ներկայացնում է մեզ 3 շրջան.

ա) Հին հնդկերեն, որ ունի երեք բաժանումներ. 1) վեդայական հնդկերեն. 2) դյուցազներգական հնդկերեն. 3) սանսկրիտ։

Վեդայական հնդկերենն ամփոփված է մեզ հնդկաց սրբազան մատյանի՝ Վեդաների մեջ, որի առաջին մասերը (Ռիգվեդա) գրված պիտի լինեն մեր թվականությունից 1500 տարի

կամ ավելի առաջ, այն ժամանակ, երբ գեռ հնդիկները Ինդոս գետի հովտումն էին։

Դյուցազներգական հնդկերենը ավանդված է Mahābhārata և Rāmāyaṇa խոշոր դյուցազներգություններին մեջ։

Սանսկրիտը այն լեզուն է, որ ավանդել է մեզ Pāṇini մեծ քերականագետը՝ ժամանակակից Ալեքսանդր մեծի (մ. թ. ա. 4 դար), իր ընդարձակ ու մանրակրկիտ քերականության մեջ։ Այս լեզուն է, որ դարձավ հնդիկների նվիրական լեզուն, որ թեև այժմ մեռած, բայց մշակվում և ուսումնասիրվում է գարձյալ գիտուններին կողմից։

բ) Միջին հնդկերեն, որ ունի բազմաթիվ բարբառներ, որոնք ընդհանուր անունով կոչվում են պրակրիտ (prākrit), այս բարբառներով կան գանազան Բուդիստական գրվածքներ, որոնց են պատկանում նաև բազմաթիվ բուդդայական արձանագրություններ, որ թողել են Աշոկա (Açoka) թագավորը և իր հետզհետե, և որոնց հնագույնը մ. թ. ա. 3 դարից է։ Սրանց հետ պետք է կցել նաև պալի (Pāli) կոչված լեզուն, որով գրված են Հարավային հնդկաստանի բուդդայական գրվածքները, որոնց հնագույնն է բուդդայական վարդապետարանը (մ. թ. ա. 4 դարից)։ Պրակրիտ լեզվի ընդարձակ քերականություն գրեց R. Pischel (Grammatik der Prakrit-sprachen, strassburg, 1900), բոլոր հին հնդկական բարբառների մանրակրկիտ քննությամբ։

Պալի լեզվի քերականություն գրեց V. Henry (Précis de grammaire pālie, Paris, 1904)։ Ըստ հեղինակի (էջ 1—2) պալի նշանակում է «բնագիր» և հատկապես բուդդայական նվիրական բնագրերը, որանից էլ՝ այն լեզուն, որով գրված են նրանք, ինչպես ասել են գինդկերեն=Ավետարանի լեզուն, ինչպես պիտի լիներ, եթե ասեինք Մ. Գրքի լեզուն=Աբրահեգերեն։ Պալին պրակրիտական լեզու է. բայց այսօր պալին ծագում է ոչ թե սանսկրիտից, այլ մի ավելի հին լեզվից, որ կարելի է կոչել «բնիկ հնդկերեն», որից ծագել են բոլորը, նաև սանսկրիտը։ Բայց սանսկրիտը շատ ավելի հին է, քան պալին։ Այնուամենայնիվ պալին էլ, թեև ուշ ժամանակի ծնունդ, ունի այնպիսի ձևեր, որոնք ավելի վաղնջական են, քան նույնիսկ սանսկրիտը։ Հայտնի չէ, թե ուր էր խոսվում պալին իբրև կենդանի լեզու, որ ապա անցավ գրականության։

գ) Նոր հնդկերեն, բնիկ հնդկական անվամբ կոչվում են գանա-

դան լեզուներ. դրխավորներ են 1) փենջաբի (16 միլ.[1]), որ խոսվում է Փենջաբի շրջանում. 2) սինդհի, տառրին Ինդոսի շրջանում. 3) գուջարաթի, խոսվում է Գուջարաթի թերակղզում, ինչպես և կրակատաշտ վարբինների լեզուն է. 4) մարաթի (19 միլ.), Բոմբեյից մինչև Հաջպուտանա. 5) հինդուստանի (63 միլ.), որ խոսվում է Հաջպուտանայում, Հիմալայայի շրջանում և Դանդեսի դետայում. ամբողջ Հյուսիսային Հնդկաստանի ազգամիջյան լեզու է. ունի երկու նշանավոր բարբառ. հինդի, որ առնակրթած ավելի հարատած ներկայացուցիչն է և ուրդու, որ չափազանց ազդված է պարսկերենից ու արաբերենից. 6) բենգալի (50 միլ.), որ բենգալցիների լեզուն է. 7) օրիա (10 միլ.), որ Օրիասյի լեզուն է: (Բենգալի լեզվի մանրամասն քննությունը կատարեց հնդիկ պրոֆեսոր Chatterji Suniti kamar, The origin and develop. of bengali, Calcuta, 1926):

Այս 7 դլխավոր լեզուներից դուրս նշանավոր են նաև ասսամի՝ Հնդկաստանի հյուսիս արևելյան շրջանում, սինգալի՝ Ցեյլոն կղզու հարավում, քաշմիրի և դարդու կամ քաֆիրների լեզուն՝ Հնդկաստանի հյուսիս-արևմտյան մասում: Այս վերջինս դավակն է գնշուերենը: Գնշուները եղել են մի հրնդկական ժողովուրդ, որ մեր թվ. Ե դարում գաղթել են դեպի արևմուտք և դանազան երկրներում բնակվելուց և մասամբ էլ ձուլվելուց հետո՝ հասել են Միջին Եվրոպա (1417 թ.) և այսօրվից էլ մինչև Եվրոպայի արևմտյան ծայրը: Ամեն տեղից էլ բառեր են փոխ առել և այս փոխառություններն են, որ մեզ այժմ ցույց են տալիս գաղթականության ուղեգիծը: Հինդուքուշից նրանք անցել են Պարսկաստան, որի հյուսիսային մասով մտել են Թուրքիստան և ապա՝ Հայաստան: Այստեղ բնակվել են երկար ժամանակ, որի ապացույցն են դանազան կարևոր փոխառություններ հայերենից. ինչպես՝ գրաստ, ջորի, բարև, փոշի (գնչ. grast, čori, paravén, poši) և այլն: Այնուհետև գնչուները մտել են Փոքր-Ասիա, հունական կղզիները, հատկապես Կրետե, ուր շատ երկար ժամանակ գոգար առնելուց հետո՝ Բալկաններն վրայով անցել են Եվրոպա: Այսպիսով՝ Եվրոպայից նախապատմական ժամանակներում Հնդկաստան գաղթած մի ցեղ,

[1] Այստեղ և հետագայում շեղատառով շարված թվերը վերցված են Tesnière, statistique des langue d'Europe աշխատությունից, որ իբր հավելված հրատարակված է Մեյեի Les langues dans l'Europe nouvell (Paris, 1928) գրքի վերջում (էջ 291—493):

գեպքերի բերմունքով նորից հետ է գալիս և գրկում նույն ճառնապարհով հասել Եվրոպա։ Գիշուերների մի ուրիշն է նայ բոլշևիկները, որի բառարանն է միայն գիշուերեն, իսկ ամբողջ գրականությունը հայերեն է։

Հնդկերենը բոլոր հնդեվրոպական լեզուների մեջ հնագույնն է և ամենահարուստը հին ժառանգության տեսակետից. ունի չափազանց մեծ գրականություն։ Նա տպել է հետամուտ Արևելքի բոլոր ժողովուրդների վրա. գրա գլխավոր պատճառը եղավ բուդդայական վարդապետությունը, որ տարածվեց շատ հետո, մինչև Ճկլյոն, Սունդյան կղզիները, Բոռնեո, Հնդկաչին, Ջավա, Ֆիլիպինյան կղզիները, կենտրոնական Ասիա, մինչև Ճապոնիա, ամեն տեղ իր հետ առնելով հնդկական լեզուն և գրականությունը։

Ներկայումս Հնդկաստանում (բացի Ճկլյոնից) խոսում են 723 լեզու և բարբառ, որոնց բնագրածակ վիճակագրությունը և նկարագրությունը կատարվեց Հնդկաստանի անգլիական կառավարության կողմից՝ 1911 թվի մարդահամարի ժամանակ։ Ամբողջ այս լեզվաբանական վիճակագրությունը հրատարակվեց 18 հատորների մեջ, խմբագրությամբ George Grierson-ի (Linguistic survey of India, Calcutta, 1903—1927)։ Նկարագրված են 849 լեզու և բարբառ. դրանց բոլորի ցանկը տպված է հա. Ա, մաս Բ։ Աշխարհիս մեջ նմանօրինակ բնագրածակ և դժվարին լեզվաբանական աշխատություն դեռ կատարված չէ։

Բոլոր այս լեզուներով ու բարբառներով բերված են գանազան բնագիրներ, խոսակցություն, 216 բառերի և ձևերի բառարան 291 լեզվով կամ բարբառով, տրված են քերականական ուրվագիծը, գրականության պատմությունը և այլն։ Գրքին բնկերանում են նաև առաջին 815 ֆոնոգրամներ, որոնց վրա առնված են գանազան բարբառներից նմուշներ՝ ճիշտ առոգանություններ ներկայացնելու համար։

Սակայն այս բոլոր լեզուները ու բարբառները չեն պատկանում հնդեվրոպական բնտանիքին և ավելի անձուկ մտքով հնդկերենին, այլ պարունակում են նաև սեմական ու չհնդեվրոպական լեզուները։ Առնատարակ հնդկերեն (հնդեվրոպական մտքով) խոսողների թիվը է 231 միլիոն անձ[1]։

[1] Les langues du monde, էջ 310։

բ. Իրանական

Իրանական լեզուները փոված են մի ընդարձակ տարածության վրա՝ Թերեքից մինչև Ինդոս կամ Հյուսիսային Կովկասից մինչև Հնդկաստան, և Պարսից ծոցից մինչև Թուրքեստան։

Իրանյան լեզուները և բարբառները դասավորվում են հետևյալ ձևով։

1) Հին պարսկերեն, որ ավանդել են մեզ պարսից Աքեմենյան թագավորները (մ. թ. ա. 560—330), իրենց բևեռագիր արձանագրություններով (Պերսեպոլիս և այլն)։ Սրանք ներկայացնում են Պարսիստանի լեզուն և իրանյան լեզուների ամենահին հիշատակարաններն են, թեև հնդկականներից նոյագ հին։ Սակայն ստույգ թվագրված հիշատակարաններից ամենահինն է ամբողջ հնդեվրոպական ընտանիքի մեջ։ Ավելացնենք նաև ամենաստույգը, որովհետև քարերի վրա արձանագրված լինելով, ոչ մի փոփոխության ենթարկված չեն, մինչդեռ ձեռագրները շատունակ կասկածելի են, որովհետև կարող են ենթարկված լինել ընդօրինակողների նորմածության։ Այս լեզվի և հնդկերենի մեջ կա շատ մեծ նմանություն։

Հին պարսկական բևեռագիր արձանագրությունների մեջ հնագույնը Կյուրոսի տապանագիրն է, որ բաղկացած է 4 բառից.

Adam	Kuruš	xšāyaθiya	haxāmanišiya
Ես	*Կյուրոս*	*Թագավոր*	*Աքեմենյանց*

Բոլոր արձանագրությունները միասին 30-ի չափ են և պարունակում են ընդամենը 400 բառ։

Հին պարսկերենը ավելի հետո ձևափոխվելով՝ առանում է միջին պարսկերեն անունը։ Այս անունով հասկանում ենք պահլավերենը, որ ունի երկու առորյաժամանակ. ա) հին պահլավերեն կամ արշակունյան պարթևական պահլավերեն, որ պարսից Արշակունի թագավորական տոհմի (մ. թ. ա. 250—226 մ. թ. հ.), լեզուն է. այս լեզվից մնում են Ավրոմանի մագաղաթները, մի քանի արձանագրություն և մի քանի մանիքեական բնագիրներ, որոնք գտնվեցին Թուրֆանում։ Խոսվում էր Պարսկաստանի հյուսիս-արևմտյան մասում, և հայերենը նրանից ունի շատ փոխառություններ. բ) նոր պահլավերեն կամ սասանյան պահլավերեն, որ պարսից Սասանյան տոհմի թագավորների (226—642) շրջա-

նի լեզուն է։ Պանդավերներ ավանդված է մեզ զանազան արձանագրություններով և գրքերով[1]։

Արձանագրություններին մեջ նշանագրերն է Աստանյան նահապետության հիմնադիր Արտաշիր Պապականի (226—241) արձանագրությունը. սրանից մի քիչ ավելի հին են մատենական գրականության մնացորդները, ինչպես՝ Արտավիրազ, Կարնամակ Մանոխրատ, Բունդահիշ և այլն։ Վերջին տարիներս հնագրանական Ասիայում գտան մի խումբ մանիքեական գրվածքներ, որոնց պանդավերներ մի քիչ տարբերվում է նախորդից, և որոնք քիչ ավելի նոր պետք է լինեն։ Պանդավերների գրությունը շատ անկատար է և յուրաքանչյուր բառ տեղ է տալիս բազմաթիվ սխալ ընթերցումների. մանիքեական պանդավերներն ավելի պարզ գրություն ունեն։ Հայերենը շատ է նպաստում առաջելու և ճշտելու պանդավ բառի անաստյդ և կասկածելի ընթերցումը։ Ուստի ամեն պանդավագետ պետք է իմանա նաև գոնե չափավոր հայերեն։

Միջին պարսկերենը դեռ ավելի Ձևափոխվելով կոչվում է նոր պարսկերեն, որի հնագույն հիշատակարանները հասնում են 9 դար։

Ամենահին գրվածքը մի քանի տող առանձին է Աբբաս Մերվեցու, 809 թվից. առաջին պատական հեղինակն է Ռուդագի բանաստեղծը (վեռ. 952-ից հետո). հնագույն արձակ գրվածքն է Դեղարանություն Աբու Մանսուր Մուվաֆֆակի (շուրջ 970 թ.)։ Դրեթե այս ժամանակից է Ֆիրդուսիի Շահնամեն (շուրջ 1000 թ.)։ Պարսկերենը շատ տարածված լեզու էր մինչև անգամ Հնդկաստանում, Դելիի արքունիքում պարսկերեն էին խոսում, որի արդյունքն են այն բազմաթիվ փոխառությունները, որ հինդուստանի լեզուն ժառանգել է։ Ավելի հետո ծագում են բազմաթիվ բանաստեղծներ և մատենագիրներ, այնպես որ նոր պարսկերենը ունի ճոխ ու հարուստ գրականություն և այսօր էլ Պարսկաստանի պետական լեզուն է, ինչպես և երկրի մեծագույն մասի մեջ ժողովրդական խոսակցական լեզուն։ Ֆիրդուսիի

[1] Պանդավերեն գրվածքները ձեռագած են բազմաթիվ արամեական բառերով. գրում էին արամերեն, կարդում էին պանդավերեն. որ դասական օրինակն է մալխան մալխա, որ թեև այսպես էր գրվում, բայց կարդացվում էր շահանշահ։ Այսպիսի գրչություններ (արամեական), որ անշուշտ գաղափարի հիմարության արդյունքն էր, կոչվում է հյուզվարեշ, իսկ նրա պանդավ ընթերցումը կոչվում է պազենդ։

պարսկերենը դուս պարսկերեն է, մինչդեռ մյուս հեղինակների լեզուն այնպես խճողված է արաբ բառերով, որ ավելի արաբերեն է, քան պարսկերեն։

Նոր պարսկերենը ունի բազմաթիվ բարբառներ, որոնք բաժանվում են երեք խմբի։

ա) Կենտրոնական բարբառներ, որոնց գլխավորն է փարսին կամ կրակապաշտ պարսիկների բարբառը։ Սրանք լինելով իսկական պարսիկների հարազատ ներկայացուցիչները, լեզվով էլ շատ հարազատ են։ Մինչդեռ բուն պարսկերենը մահմեդական կրոնի պատճառով խճողված է անհամար արաբերեն բառերով, փարսին զրադաշտական կրոնի պատճառով բոլորովին հեռու է մնացել այդ ավելորդ խառնուրդից։

Փարսերը ցրված են Հարավային Պարսկաստանում, բայց նրանց գլխավոր կենտրոնն է Եզդ քաղաքը։ Հնդկաստանում (Բոմբեյ) էլ շատ փարսիներ կան, բայց խոսում են գուջարաթի։

բ) Կասպյան բարբառներ, որոնք խոսում են Կասպից ծովի հարավային և արևմտյան եղերքները, սրանցից գլխավորներն են՝ արևելքից դեպի արևմուտք ընթանալով՝ մազանդարանի, սեմնանի, գիլաքի, բալիշի (91 000) և թաթերեն (125 000) բարբառները։ Վերջինը խոսվում է Շամախիի շրջանում։ Կան մինչև անգամ թաթախոս հայեր, որոնք բնակվում են Շամախիի Մադրասա, Ղուբայի Ծաչմաս և Բիլվար, Ղզլարի Բեգբեհեյ կամ Ղարաջալիլ գյուղերում։

գ) Պամիրի բարբառներ, որոնք կազմում են իրանյան լեզուների հյուսիս-արևելյան ճյուղը և սահմանակից են մի կողմից թյուրքերենի և մյուս կողմից հնդկերենին։ Այս բարբառները տարբերվում են թաջիկների բարբառից (որոնք Թուրքեստանի բնիկ իրանցիներ են) և սրանով ցույց են տալիս, թե Պամիրի շրջանի այս պարսիկները բուն իրանցի պարսիկներ են, որ փախչելով արաբական արշավանքից, ապաստանել են այս լեռները։ Նրանք ավելի երկար են պահել բնիկ զրադաշտական կրոնը (որի հետքերը մնում են մինչև այսօր էլ իրենց մեջ) և ավելի ուշ են դարձել մահմեդական։ Այս խմբի բարբառներն են՝ սարիքուլի, շիղնի, վախի, իշկաշմի, զեբակի, մինջանի, յիդղան, խովար, բաշգալի, ռուշանի, սանգլիչի։

2) Չենդերեն, որ ավանդված է մեզ Ավեստայի մեջ (զրադաշտական կրոնի սրբ. գիրքը, որ վերագրվում է Զրադաշտին)։ Թե ո՞ր էր խոսվում այս լեզուն և թե ինչ հնություն ունի

Ավեստան՝ հայտնի չէ Ներկա բարբառներից ոչ մեկը կապ չունի նրա հետ, որով նրա բնավայրը անծանոթ է մնում, բայց մի ինչ-որ ժամանակ երևում է դրանից, որ գինդիները բնակած տարածության վրա չէր խոսվում։ Մի ժամանակ գիտունները համարում էին մարների լեզուն, ուստի և՝ խոսված Մարատանում, որին համաձայն է գալիս այն ավանդությունը, թե Զրադաշտը ուրմեցի էր։ Ավելի հետո կարծեցին, թե Բակտրիայի լեզուն է (Գարինատանից դեպի արևելք. Գամիրի և Հինդուքուշի միջև) և քան այսօր կոչում էին հին բակտրիերեն։ Բայց այժմ գիտունները այս կարծիքն էլ են մերժում և հաստատվում է այն գաղափարը, թե Ավեստայի լեզուն պատկանում է Գարնատանի հյուսիս-արևելյան շրջանին։

Ավեստան բաղկացած է երկու մասից. հնագույնն են Gâthâ-ները, որոնց լեզուն իր հնությամբ հետ չի մնում առաջին Վեդաներից և երբեմն նույնիսկ գերազանցում է, երկրորդ՝ ամբողջ մնացյալ մասը, որ ավելի նոր լեզվով է և, ինչպես երևում է, հնդիկների գործածական լեզուն չէր, այլ մի ուսումնական լեզու, ինչպես գրաբարը մեր նոր դրականության շրջանին։ Ավեստան նախապես գրվել է արամեական տգրատ այբուբենով, հետո համաձայն ավանդական սխալ արտասանության աստիճանաբար է գինդական այբուբենով։ Մեզ մնում է միայն Ավեստայի մի մասը գինդական այս սխալ աստիճանաբար և հետևարար ճիշտ գաղափար չի տալիս հին գինդիերեն լեզվի մասին։ Ձեռագրերից ամենահինը է մեզ 4000 թուի Ավեստան գրված պիտի լինի մ. թ. ա. է դարում։

[3) Թաջիկերեն. որ Թաջիկական ՍՍՌ-ի լեզուն է։ Ունի դիալեկտական, ֆիլիսափյական, պատմական ու կրոնական ճոխ գրականություն։ Ժամանակակից արևելագետներից ոմանք կարծում են, թե Թաջիկստանը եղել է Ավեստայի հայրենիքը. և թե թաջիկերենն էլ Ավեստայի լեզվի ժառանգն է։ Բայց սա միայն կարծիք է, որ լեզվական ապացույցով չի ապացուցվում։ Իրականում թաջիկերենը և պարսկերենը այնքան մոտ են իրար, որ պետք է ենթադրել, թե նրանք երկուսն էլ մի ավելի հին լեզվի տարբեր ժառանգներն են։]

4) Աֆղաներեն. որ բնիկները կոչում են pəšō. այս լեզվով խոսող ժողովրդի թիվը է 4 միլիոն շուրջ, որոնք գլխավորապես բնակվում են Աֆղանիստանում, բայց Աֆղանիստանի ամբողջ ժողովուրդը աֆղաներեն չի խոսում, այլ նաև ուրիշ իրանյան

լեզուներով։ Աֆղաններենը խոսվում է նաև այս երկրից դուրս, բայական ընդարձակ տարածութեան վրա։ Նա կազմութեամբ ամենից մոտ է դենդերենին, և ոչ թե հին պարսկերենին, ինչ որ մի նոր ապացոյց է այն մասին, թե դենդերենը Մարատանի լեզուն չէ։ Գրականութիւնը սկսում է ԺԶ դարից և բայական ծագկած է եղել։ Այժմ շատ հարուստ է ժողովրդական գրականութեամբ։

5) Բելուջներեն. խոսվում է Աֆղանիստանի և Հնդկաստանի միջև, մինչև Ինդոս գետը։ Բայց բելուջինները ցրված են նաև հիւսիսից՝ մինչև Խորասան և հարաւից՝ մինչև Արաբական ծովը։ Թե արքան մարդ է խոսում այս լեզուով՝ հայտնի չէ, միայն դիտենք, որ հնդկական հողի վրա բելուջերեն խոսողների թիւը է 220 000 հոգի։ Այս լեզուն նման է Պարսկաստանի հիւսիս-արեւմտեան բարբառներին և փոխադրված է այդ շրջանից։

6) Քրդերեն, որ խոսվում է Եփրատի եղերքից և Ասորիքից մինչև Քիրմանշահ, Խորասան և Աֆղանիստան և Միջագետքից մինչև Նոր-Բայազետ։ Նրանց կենտրոնավայրը Զագրոս լեռների շրջանն է։ Քրդերը հին ցեղ են, որ ապահովապես նոյն է Քսենոֆոնի Καρδοῦχοι, ասորոց qordū և հին հայոց կորճայ կամ կորդվացի կոչված ցեղի հետ։ Նրանք բաժանված են բազմաթիւ աշիրեթների, որոնք շատ անգամ իրար հետ թշնամական հարաբերութեան մէջ են։ Նրանց ընդհանուր թիւը հայտնի չէ. մոտավորապես դրվում էր $1^1/_2$ միլիոն, որից մի մեծ թիւ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ոչնչացավ։ Նրանց ամենախիտ բնակութիւնն է Սղերդից մինչև Ուրմիա, Մակու և Քիրմանշահ։ Քրդերենը շատ մոտ է նոր պարսկերենին և ունի բազմաթիւ բարբառներ։ Բարբառների տարբերութիւնը ավելի է շեշտվում նրանով, որ քրդերը դեռ չունեն մի ազգային միութիւն, գրականութիւն և ընդհանուր գրական լեզու։ Ծանոթ բարբառներից գլխաւորներն են. կուրմանջի, որ բուն քրդերենն է, զազա, դմլի, քիրմանշահի։ Քրդերի մի առանձին ճիւղ են կազմում դերսիմցիք, որոնք մահմեդական չեն և խոսում են պազայերենի մի տեսակը։ Բոլորովին առանձին են նաև եզիդիները, որոնք բաժանված են երկու հատուածի. մի մասը բնակվում է Մուսուլի շրջանում, իսկ մյուսը՝ Արագածի լանջերում։ Նրանք ունեն առանձին կրոն, որ շատ հայտնի չէ. խոսում են քրդերեն, իսկ վերջին տարիներս ուսումնասիրվել այդ կրոնը, սկսեցին մշակել իրենց գրականութիւնը։

7) Օսներնեն (224,000). խոսում է Մինչին Կովկասի լեռներում մինչև Քեռնի մասերը։ Ապրում կան 3000 չուն օս, որ նոր գաղթականություն է։ Գիտուններդ հաստատում են, որ օսերինները հին սկյութացիք են, որոնք սարմատացիների և ուրիշ իրանական ժողովուրդների հետ բնակվում էին հնագույն ժամանակ ամբողջ Հարավային Ռուսաստանում, հետո պատվոնները նրանց քշեցին այդ շրջանից։ Նույնիսկ օսեր բառը ծագում է Սկյութիա ձևից։ Հին պատմագիրները շատ բան են ավանդել մեզ այս ժողովրդի մասին։ Բացի զանազան հատուկ անուններից, Հերոդոտոս տալիս է մեզ մի քանի սկյութական և սարմատական բառեր, որոնք բոլորը բացատրվում են իրանյան արմատներով և հատկապես օսերենով։ Օրինակ՝ սկյութական -tūrtas, որ գտնում ենք հնչն պատմիչների ավանդած սկյութական հատուկ անուններին մեջ ճիշտ ու ճիշտ նույն է օս. tūrt «երկիր» բառի հետ։ Օսերենը մասնատում է, մի կողմից՝ սոգդերենին և, մյուս կողմից՝ յազնոբի բարբառին, որ խոսվում է այժմ Սամարղանդի արևելյան կողմում։

8) Սոգդերեն, հին Զարեհաստանի Սոգդիանա նահանգի լեզուն է (մայրաքաղաքն էր Maracanda, արդի Սամարղանդ), որ կորած էր մինչև վերջին ժամանակները։ 1900—10 թվերին երևան եկավ չինական Թուրքեստանում՝ մի քանի բնագրերի մեջ, մի մասը քրիստոնեական և մեծ մասը բուդդայական նյութերի վերաբերյալ, որոնց թվականն է Ա դարից մինչև Թ դար։ Այս լեզուն էլ պատկանում է սկյութական խմբին և մոտիկ սոգդականն է օսերենին։ Միջին դարում մեծ տարածություն ուներ և ամբողջ կենտրոնական Ասիայի միջազգային լեզուն էր. սկսած Սոգդիանիայից տարածվում էր մինչև Մանջուրիա և Չինաստանի սիրտը, հասավ բավական բարձր քաղաքակրթության։ Իր ներկայացուցիչն է այսօր յաղնոբի բարբառը։

9) Սակերեն, նույնպես երևան եկավ Թուրփանի պեղումների ժամանակ, բազմաթիվ բնագրերով, որ թողել են Թուրքաների բուդդայականները. դժբախտաբար դեռ այդ բնագրերը հրատարակված և լեզուն էլ քննված չէ։ Հաճախ այս լեզուն անորոշ բառով կոչում են «արևելյան իրաներեն» և մոտիկ է սոգդերենին։

10) Մարերեն, որ Մարաստանի լեզուն էր։ Մարաստանը տարածվում էր Ուրմիա լճից արևելք՝ մինչև արդի Զարեհաստանի կենտրոնը, մայրաքաղաք ունենալով Եկբատանը, որ է

Ներկա Համադանը Մարերի լեզուն հայտնի չէ մեզ, բայց ասույդ է, որ նրանք արիական ճյուղին էին պատկանում։

Մ. թ. ա. 549 թվին պարսիկները, որոնք Պարսից ծոցի հարավում բնակվող մի ժողովուրդ էին, բարձրացան դեպի հյուսիս և մարերի պետության վերջ տվին։ Ցեղակցությունը և, անշուշտ, լեզվի նմանությունը պատճառ եղան, որ մարերը շուտով ձուլվին պարսիկների մեջ և մարերենը խապտո վերանար աշխարհից՝ առանց մի հետք թողնելու։

Իրանական լեզուների իրր արմատական բառարան ունենք Horn, Grundriss des Neupersischen Eyimologie (Strassbug, 1893), *որի քննադատությունն ու հավելվածն է* Nübschmann, Persische Studien (Strassburg, 1895). *կարևոր է նաև հիշել՝* Geiger, Grundriss des Iranischen philologie (*3 հա.*)։

ԹՈԽԱՐԱԿԱՆ ՃՅՈՒՂ

Այս ճյուղը մինչև վերջին ժամանակները բոլորովին անհայտ էր. սկսած 1892 թվից մինչև 1910 թ. Չինական Թուրքեստանում, Թուրֆանի շրջանում կատարվելով գիտական խուզարկություններ, երևան եկան մի քանի անծանոթ լեզուներ՝ գտնված ձեռագրերի մեջ։ Դրանց թվումն էին նաև A և B երկու իրար շատ մոտիկ բարբառներ, երկուսն էլ հնդեվրոպական մի ևնույն մար գավակ, որոնք խոսվել էին Քուչա, Կարշար և Թուրֆան գավառների շրջանում, այն է՝ հին Բակտրիայում։

Գիտունները համաձայնեցին կոչելու այս լեզուն թոխարերեն A և B, *վերջինը հատկապես անվանելով* քուչերեն։ *Այս անունը գտան նախ չին մատենագրության մեջ* tu-ho-lo *ձևով և հնդիկ մատենագրության մեջ* tukhāra *ձևով։ Այս ձևերի հետ նույն են Սարաբոնի* Τόχαροι *և Պտղոմեոսյան Աշխարհագրության մեջ (հրատ. Մուքր. էջ 43) հիշված Թուխարի ժողովուրդը՝ Թուրքեստանի և Սոդդիանիայի կողմերը։ Վերջապես նոր գտնված բնագրերից մեկի Թուրքերեն թարգմանության մեջ էլ հիշված է* toxrï *ձևը։*

Վերջերս լույս տեսան երկու աշխատություն այս լեզվի անվան վերաբերմամբ։ Առաջինն է Տոկիոյի համալսարանի դասախոսներից Ն. Ցուկուշիմայի մենագրությունը (On the designation-problém of the socalled tokharian language, *Տոկիո, 1935), ուր հեղինակը, քննության ենթարկելով այս լեզվի անվան հարցը, գտնում է, որ Թոխարներեն անունը բոլորովին անտեղի է, և թե այդ լեզուն պետք է կոչել արշներեն A և B. առա-

չինով հատկանալով կարաշարներնը, երկրորդով՝ բուչներնը (անդ. էջ 40)։

Երկրորդն է Bailey. Ttaugara (1936, էջ 883—917, մատենախոսականը տես BSL. № 111, էջ 40), որ ցույց է տալիս, թե 1) Թոխարիստան անունով հատկացվում էր Բակտրիա երկիրը Դ—Ը դարերում և հետևաբար Թոխարներնը այդ երկրի իրանական բարբառն էր. 2) արշի բառը կենտրոնական Ասիայի բարբառով ārya բառի ձևափոխությունն է և հետևաբար արշերեն տալով կարելի է հատկանալ միայն տանկրիար. 3) նորագյուտ լեզուներից B պահում է իր բուչերեն անունը, իսկ A, ինչպես տանկրիա գրականության մեջ ավանդված է, կոչվում է agni, որից և հայերեն կարող ենք կազմել ագներեն։

Երևան եկած ձեռագրերը բարեբախտաբար գրված էին հնդկական այբուբենով, և միևնույն ժամանակ կցված էր նրանց՝ հնդկերեն թարգմանություններ։ Այսպիսով, գիտուններդ կարողացան հեշտությամբ կարդալ և վերլուծել այդ անծանոթ լեզուն և դուրս բերել նրա համեմատություններ ուրիշ հնդեվրոպական լեզուների հետ։

Այս լեզուն շատ հնամիտակ կերպարանք ունի. իր բառամթերքով նա գտնվում է, մի կողմից՝ բալթիկ-սլավական և մյուս կողմից հուն-հայ ճյուղերի միջև. ամեն կողմից հետ է արխական ճյուղից։ Իր պատմական կյանքում մեծապես ազդվել է չինական և մանավանդ հնդկական քաղաքակրթությունից։

Բուչերնը խոսում էր Բուչայում մինչև Ը դարը, իսկ A բարբառ տեղ է մինչև ժ դարը։

Թոխարներնի՝ ընդարձակ քերականությունը կազմեցին Sieg und Siegling, Tocharische Grammatik (Göttingen, 1931)։

ՀԱՅԿԱԿԱՆ ՃՅՈՒՂ

Այս ճյուղի միակ ներկայացուցիչն է հայերենը, որ դրականության ծանոթ է ե դարու սկզբից։ Մյուս հնդեվրոպական ճյուղերը մեծ մասամբ ունեն նորանոր դավակներ (ինչպես՝ արխականը, լատինականը, սլավականը, կելտականը, գերմանականը և նույնիսկ Թոխարականը), իսկ հայերենը հուներեն և ալբաներենի պես ոչ մի ժառանգ կամ ցեղակից չունի։ Բացի սրանից, նա չունի նաև մերձավոր բնկերներ, որոնք ներկայացնեին մեզ իրար շատ նման մի կերպարանք (ինչպես են՝ սլավե

ու բալթիկը) կամ հավասար լեզվաբանական երևույթներ (ինչպես՝ լատինն ու կելտականը)։ Վերջապես հայերենը չունի հին բարբառներ (ինչպես ունի հունարենը). նա հասել է մեզ ե դարից մի միասին կերպարանքի տակ և ամբողջ հնդեվրոպական լեզվախմբի մեջ բոլորովին առանձնացած ու անկախ դիրք է բռնում։

Հայերենի ուսման օժանդակ միջոցներն են՝

Բառարանների մեջ՝ «Նոր բառագիրք Հայկազեան լեզուի», Վիեննական 1836—7 (երկու հատոր). գրաբարի լիակատար բառարանն է. յուրաքանչյուր բառի դեմ տրված են հունարենն ու լատիներենը, հայերեն համանիշները, ոամիկ և տաճկերեն ձևերը, և հատկապես՝ հին մատենագրությունից բազմաթիվ վկայություններ՝ աղբյուրների հիշատակությամբ։ Նման ճոխությամբ ոչ մի բառարան չունենք մինչև այսօր։ Վկայությունների համար իբրև լրացուցիչ դիրք պետք է գործածել «Համաբարբառը» (տպ. Երուսաղեմ, 1895), որ թեև իբրև համաբարբառ բավական թերի է, բայց լեզվի ուսումնասիրության համար կարող է մեծ ծառայություն մատուցել՝ նախ բառերի գործածության երանգները ճշտելու, երկրորդ՝ տեղն ու ժամանակը իմանալու, և երրորդ՝ հոլովման ու խոնարհման ձևերը ուսումնասիրելու համար։

Լսել ենք, որ Վիեննայի Մխիթարյանները կազմել են ամբողջ հին հայ մատենագրության համաբարբառը, իսկ Նորայր Բյուզանդացին՝ ոչ միայն համաբարբառը, այլև միջին հայերենի լիակատար բառարանը։

Սակայն սրանք դեռ անտիպ են։

Արդի հայերենի մեծագույն բառարանն է Ստ. Մալխասյանի «Բացատրական բառարանը» (Երևան, չորս հատ. 1944—5 թթ.), պարունակում է գրաբարի, արդի հայերենի, գավառական և թյուրքերեն, եվրոպական և ռուսերեն փոխառյալ բառերը։

Մինչև այսօր դեռ պակասում է մեզ արդի գրական լեզվի ամբողջական բառարանը։ Բարբառների համար, բացի այս կամ այն մասնավոր բարբառին նվիրված փոքր բառարաններից, ունենք երկու ամբողջական կամ ընդհանուր բառարան. այն է՝ Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանը», որ ունի 16 000 բառ ու ոճ. սրանից ավելի ընդարձակ է՝ Հ. Աճառյանի «Գավառական բառարանը» (Թիֆլիս, 1913), որ ունի 30 000 բառ ու ոճ։

Օտար բառերի համար հիշենք՝ Հ. Աճառյանի «Թուրքերեն փոխառյալ բառեր» (Վաղարշապատ, 1902) և նույնի «Եվրոպական փոխառյալ բառեր» (Վիեննա)։

Լեզվաբանական տեսակետից կարևոր է հիշել Հ. Աճառյանի «Արմատական բառարանը», 7 հատոր (Երևան 1926—35), որ պարունակում է հայերեն բոլոր 11000 արմատ բառերը՝ իրենց ծագման բացատրությամբ և բազմաթիվ գավառական ձևերով։

Հատուկ անունների լիակատար բառարանն է Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան» (Երևան, 1942—48, 4 հատ.), վերջին՝ 5-րդ հատորը դեռ չի ապված։

Բառարաններից պակասում են մեզ՝

1. Համանիշների բառարանը և 2. Հայոց տեղանունների բառարանը. երկուսին էլ ձեռնարկել եմ և բավական նյութ ունեմ հավաքած, բայց անուսյալ ծառին դժբախտաբար. 3. Ընդհանուր գավառական բառարան, որ պիտի բովանդակի բոլոր հայ բարբառների գավառական բառերը։ Այս աշխատության ձեռնարկել էի 1935 թվին. երեսադիմից առաջ 26 մատնավոր բարբառների բառարանների լուսանկարը. բոլորն էլ Գոլոթ Իզմիրյան մրցանակով վարձատրված լուրջ, արժեքավոր և ընդարձակ աշխատություններ էին. նրանց վրա ավելացնելով 4 ուրիշ բառարաններ, որոնք գնված էին հեղինակներից, «Մելքոնյան ֆոնդի» միջոցով, ընդամենը 30 բառարան անտիպ, ձեռագիր։ Բոլորի գումարով մի նոր ընդարձակ բառարան կազմելու գործը շատ դժվարին աշխատություն էր, կազմելի ընդամենը 100 էջ, բայց անուսյալ ծառ՝ «Մելքոնյան ֆոնդի» նախագահի անխուսափելի պատճառով։

Հայ լեզվի ուսումնասիրության ամենակարևոր, դժբախտաբար, մոռացված ապրյուրներից մեկն էլ այն «Հանգարանն» է, որ կազմել է Յարևն վ. Գալֆեյան (տպ. Թևոդոսիա, 1826, էջ 312)։ Հանգարանը կազմված է տպագրիչների համար, բայց շատ կարևոր է լեզվաբանների համար էլ։ Դիբրը պարունակում է շուրջ 30 000 բառ, որ թեև հայերենի սերտ հարաբերություն չէ, բայց որոշ հետևանք որոշ մատենիկներով կազմված բառերը դուրս են գրված, ուստի հայերենի հիմնական բառերի համար այս հանգարանը բավարար պետք է համարել։

Հանգարանը կազմված է բառերի վերջին վանկի ձայնավորների պատահության համաձայն։ Ուստի երբ որևէ մեկը ուզում է գտնել, թե այսինչ վերջավորությամբ կամ մատնիկով բառեր կան հայերենում, կարող է իր գանկացածը պատրաստի գտնել այս գրքում։

Քերականությունների մեջ ամենամեծն է՝ «Հայերեն քերականութիւն, ի պէտս զարգացելոց, ի Հ. Ա. Բագրատունւոյ (Վենետիկ, 1852)։ Պարունակում է բոլոր դարերի գրաբարի կանոնները՝ առանց բնագրության։ Լավագույնն է՝ «Հ. Վրքաճիսի Զալըխեան Քերականութիւն հայկազեան լեզուի» աշխատասիրելով Հ. Արսէնէ Այտընեան (Վիեննա, 1885), որ ուսուցանում է միայն ե դարի առաջին կեսի հայ լեզուն։

Միջին հայերենի (Կիլիկիան շրջան) քերականությունն ունի Կարապետ. Historische Grammatik des Kilikisch-armenischen (Strasburg, 1901)։

Հայերենի պատմական քերականությունն է Հ. Ա. Այտընեանի «Բննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի», Վիեննա, 1866։

Լեզվաբանական տեսակետից ամենակարևորն է Meillet, Esquisse d'une grammair comparée de l'arménien classique, (2-րդ տպ., Վիեննա, 1936)։

Կարելի է հիշել նաև՝

Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, ուրուագիծ և դասավորություն հայ բարբառների, Նոր-Նախիջևան 1911 (սրա երկրորդ, ավելի ճոխ հրատարակությունը պատրաստվել է)։

Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ա հտ., Երևան, 1940, Բ հտ., 1951։

Հայ լեզվի և հայ ժողովրդի ծագումն ու պատմությունը կարող ենք ամփոփել հետևյալ ձևով։

Այն կտրիճը, որից պիտի առաջանար հայ ժողովուրդը, լեզվից պատկով, բնակվում էր նախ հնդեվրոպական նախահայրենիքում (արդի Ռուսաստանի միջնաշխարհում), իրեն անմիջական հարևան ունենալով հունական, սլավ և իրանական ժողովուրդներին։ Մեր թվ. առաջ, երբորդ հազարամյակի կեսերին, կամ հույների հետ միասին և կամ առանձին գաղթեց դեպի հարավ և անցնելով Սև ծովի արևմտյան կողմով իջավ Թրակիա։ Այստեղ բավական ժամանակ բնակվելուց հետո, հայերը շարժվեցին դեպի Փոքր-Ասիա և հաստատվեցին Ալիսի հովտում (Փոքր Հայք), Հիթիթների և վուլուգացիների հարևանության մեջ։ Հայաստանում այն ժամանակ բնակվում էին խալդերը, ժողովուրդ, որի ծագումն ու նախնական պատմությունը անհայտ է։ Նրանք հիշվում են պատմության մեջ առաջին անգամ IX դարում, ասորեստանցիների դեմ մղած իրենց պաշտպանողական կռիվ-

Ներով, որոնք գարեր են տևում։ Ութերորդ գարում, կիմերների և սկյութացիների արշավանքի ժամանակ, ինչպես ամբողջ Արևվելքը, նույնպես և հատկապես Մալղիան, չարաչար տուժեց և կործանվեց։ Այդ միջոցին շարժվեցին մարները արևելքից և հասյերը Փոքր-Ասիայից. մարները նվաճեցին Ասորեստանը (608 թ.), դուրս քշեցին սկյութացիներին և գրավեցին Մալղիայի մայրաքաղաք Վանը։ Հայերը անցան Եփրատը և Արածանիի հովիտով մտան Մալղիա։ Երկու դար անց հայերը հյուսիսից հասան Կուբի հովիտը, իսկ հարավից՝ Տիգրիսի արևելյան ճյուղը, որ Հայաստանի սահմանն է։ Նոր նվաճողները խառնվեցին խալդերի և տեղացի ուրիշ ժողովուրդների հետ (թվով 18) և նրանց խառնուրդից առաջացավ արդի հայ ժողովուրդը։

Հայաստանը կազմեց վասալ իշխանություն մարերի, ապա պարսիկների գերիշխանության տակ։ Մակեդոնացիներին և սելևկյաններին հպատակելով, ապստամբեց մ. թ. ա. 189 թ. և անկախություն ձեռք բերեց։ Տիգրան մեծը կազմեց մի մեծ պետություն, որ տարածվում էր Կովկասյան լեռներից մինչև Միջերկրական ծով։ Բախվելով հռոմեացիների հետ՝ ամիսվեց հրաժարվել օտար երկրների տիրապետությունից և ամփոփվել Մեծ Հայքում (մ. թ. ա. 66 թ.)։ Պարթևների և հռոմեացիների, ապա Սասանյանների և հույների մրցակցության մեջ Հայաստանը պահում էր իր անկախությունը, վերջին երկուսը միասնալով՝ բաժանում են Հայաստանը իրենց մեջ (384 թ.), իսկ 428 թվին պարսիկները Հայաստանի անկախության վերջ են տալիս։ 640 թվին արաբները արշավում են Հայաստան և հույների դեմ կռվելով՝ գրավում են երկիրը 693 թ.։ Հայերը 885 թվին կազմում են արաբներին հարկատու իշխանություն, որ քիչ ժամանակից անկախ թագավորություն է դառնում։ Հույները 1046 թվին նվաճում են Հայաստանը, բայց 1064 թվին էլ արշավում են սելջուկյան թյուրքերը և հույներին վանելով՝ երկիրն իր են դառնում։ Այս թվից սկսվում է հայոց մեծ արտագաղթը դեպի հյուսիս (Վրաստան) և դեպի արևմուտք (Փոքր-Ասիա)։ Կիլիկիա տապստանած հայերի մի մեծ խումբ լեռների գլխին հիմնում է անկախ իշխանություն (1080 թիվ), որ 1199 թվին անկախ և բավական մեծ թագավորություն է դառնում։ 1275 թվին եգիպտացիները վերջ են տալիս այս թագավորության էլ, և սկսվում է հայոց երկրորդ մեծ արտագաղթը։ Այնուհետև Հայաստանը խաղալիք է դառնում թյուրքերի և պարսիկների մի-

ցև, մինչև օգնության են գալիս ռուսները, և նրանց օգնությամբ 1828 թվին պարսիկներից և 1829 թվից էլ թյուրքերից ազատվելով Արևելյան Հայաստանը կազմում է հայկական նահանգը։ 1920 թվին հիմնվելով Սովետական իշխանություն Հայաստանում՝ վերջ է տրվում հայոց դարավոր տառապանքին և բացվում է գիտության և առաջդիմության լայն ասպարեզ։

Հայոց լեզվի պատմության հիմնական հարցերը հետևյալներն են.

1. Նախքան Մեսրոպը հայերեն գիր ու գրականություն չկար։

2. Գրաբարը ե դարում ժողովրդական խոսակցական լեզու էր։

3. Ե դարում բարբառներ չկային և հայերեն բարբառները ուշ ժամանակի ծնունդ են՝ գրաբարից առաջացած։

Այս երեք հարցերը ընդարձակ մշակված և քննված են իմ Հայոց լեզվի պատմության մեջ, հատ. Բ. մանրամասնություններին համար ընթերցողին հղում ենք այնտեղ, իսկ այստեղ տալիս ենք նրանց մի համառոտ ամփոփումը։

1. Նախքան Մեսրոպը հայ գիր և գրականություն չկար. Հայաստանում չի գտնված նախահայ տառերով ոչ մի արձանագրություն։ Բոլոր տեսակի պեղումներն էլ նման բան երևան չեն հանած. գտնված են շատ ավելի հին արձանագրություններ, նույնիսկ մ. թ. ա. 820 թվից, բայց խալդերեն, ուրիշներ՝ շատ ավելի նոր, հունարեն և ասորերեն։ Այս բոլորը ցույց է տալիս, որ հնություններ, ժամանակի և արշավանքների կործանարար ազդեցությունը չէ, որ պատճառ է եղել հայ գրի ոչնչացմանն, այլ գիր չի եղել։ Հայաստանից դուրս, օտար երկրներում և օտար գրականությունների մեջ էլ, թեկուզ մի տող հայերեն չի գտնվել։ Նույնիսկ հին հայ թագավորների բոլոր փողերի վերտառությունը հունարեն է։ Եթե Գրիգոր Լուսավորչից և Մեսրոպից առաջ հայ գիր գոյություն ունենար, հենց Լուսավորիչը և Մեսրոպը հայերեն մի բան կգրեին։ Այն առարկությունը, թե Խորենացին հիշում է հուն և ասորի գրերով գրականություն Հայաստանում (իբր թե հայ լեզվով), սխալ է. Խորենացու մոտ գիր չի նշանակում «տառ», այլ գրվածք. ուստի այն գրվածքներն էլ հայերեն չէին, այլ հուն և ասորի լեզվով, որ իրոք էլ կան։

Իսկ այն երկրորդ առարկությունը, թե ե դարի այն գեղեցիկ և ճոխ գրականությունը միանգամից չէր կարող ծագել և

ընթացքում է նախավոր ավելի պարզուկ մի հոյ գրականութիւն, նոյնպես սխալ է, և հերքվում է Թիգ-Վենցի և Հոմերոսի Իլիականի և Ոդիսականի օրինակով, որոնք հնդիկ և նոյն գրականութեան հնագոյն և հոյակապ նմուշներն են՝ առանց նախավոր գրականութեան։

Արդարև, ծաղիկը միանգամից չի բացվում. գրականութիւնն էլ միանգամից չի ծագում. սակայն նրա պատրաստիչն է ժողովրդական բանավոր գրականութիւնը, որ ամեն ազգ էլ կա և հայոց մէջ էլ արդեն գոյութիւն ունէր նախքան մեր թվ. Ք դարից և ավելի առաջ «վիպասանական» անունով։

2. Գրաբարը ե դարում ժողովրդական խոսակցական լեզու էր, որովհետև կենդ ու շինծու լեզուներ չկան, և ամեն լեզու, նույնիսկ ամենազարմանալի լեզուները (սանսկրիտ, հունարեն, լատիներեն և արաբերեն) մի ժամանակ ժողովրդական խոսակցական լեզու են եղել։

Միանգամայն, թե խաբեական, քրմական, թե աղնվական դասակարգերի ձեռքով շինված «լեզուներին» և գրականութեան առասպելը մեռում է առասպել։

Իրր ապացույց այն բանի, թե գրաբարը շինծու լեզու չէ, կարելի է հիշել այն հանգամանքը, որ նրա բոլոր առարկերը կարելի է այսօր էլ գտնել հայերենի բոլոր բարբառների մեջ գրված։ Գրբ. առիս «ինձ մոտ» գրչագրերը ունի Ղարաբաղի բարբառը. Ախտ փոգ կա=ինձ մոտ գրում կա.— գրբ. յինէն, ի քէն «ինձնից, քեզնից» մեռում են Գոլթի բարբառում ինէ, քէնէ ձևով.—գրբ. ց նախդիրը մեռում է Գոլթի բարբառում ասկից ճօն, անկից ճօս «այստեղից այնտեղ, այնտեղից այստեղ» և օրէց օր «օրից օր» ձևերի մեջ. ապառնի դերբայի -լոց վերջավորութիւնը սովորական գործածութիւն ունի Նոր-Ջուղայի բարբառում -լէց ձևով. ինչպես՝ առնուլէց>առնլօց. նույն բարբառում կա պահված նաև գր. արարի ձևը.— գրբ. զ նախդիրը իրրև նշան հայցականի գտնում ենք Մշու, Տիգրանակերտի, Զեյթունի, Լեհաստանի և Սիրիայի բարբառներում. վերջինում պահված է նախդրիվ հայցականի ի ձևը.— բայերի անցյալ կատարյալի եզ. 3-րդ դեմքի նախանավելված ն-ն յոյնարեն գործածվում է Սիրիայի բարբառում, շատ անգամ նաև Վանի բարբառում.— գրաբարի մեջ գոյականների ծայրին դրված ն հանգը, որ շատ բարբառներում ջնջված է, կենդանի է դեռ Ղարաբաղի և Ճամախիի բարբառում. ինչպես՝ դուռն>Ճամ. առուռը,

Ղրբ. տօոնը, եզն>Ղրբ. Շմ. յէզնը, ձուկն>Ղրբ. ծիւկնը, Շմ. ծիւգնը և այլն.—այս կարգի բառերի -ին, -ան հոլովումը կենդանի է դեռ շատ բարբառներում. ինչպես՝ եզան, ձկան, մկան, գառան և այլն:

Պրոֆ. Ղափանցյանը մի պատշաճավոր դեպքում զվարճալի, բայց շատ խելացի արտահայտություն է արել գրաբարի գործածության մասին.— «Մենք մեր բարեկից սկսած մինչև ցեսությունն գրաբար ենք խոսում»:

Արդարև բարև ձևացած է գրբ. բարեաւ գործիականից, իսկ ցեսությունն զուտ գրաբար է՝ ց նախդիրով:

Հայտնի է, որ գրաբարի հատկանիշներն են հոգնակի ուղ. ք և հյց. ս. հայտնի է նաև, որ լեզուները, ավելի ևս բարբառները, իրարից թվական անուններ փոխ չեն առնում: Հայերեն բարբառները՝ Սուչավայից մինչև Ջավա գործածում են երկուք (երկուս), երեք, չորս (չորք), յոթը, ութը, իննը, տասը, որոնք ունեն ոչ միայն ք և ս, այլև գրաբարի ն հանգի կրճատ ը ձևը:

3. ե դարում բարբառներ չկային, որովհետև մեզ հասած գրականության մեջ ոչ քերականական, և ոչ էլ ձայնարձանական հետքեր չկան: Այն տեղեկությունները, որ տալիս են մեր հին քերականները հին հայ բարբառների մասին, վերաբերում են Հայաստանում ապրող ազգային փոքրամասնություններին և դարում գրաբարը ընդհանուր խոսակցական լեզու էր Հայաստանում. կարող էին միայն գտնվել ենթաբարբառային ձևեր: Բարբառները ծագեցին ավելի ուշ. նրանց առաջին ծիլերը երևում են արդեն է դարում, իսկ իսկական բարբառները ծագել են ԺԲ դարից սկսած և ավելի ուշ: Բոլորի աղբյուրը գրաբարն է, որի հետքերը պահում են դեռ բոլոր բարբառները, ինչպես ուսանք նախորդ հատվածում:

Հայ գրականությունը սկսվում է ե դարում, Մեսրոպի ձեռքով. նրանից առաջ թևև եղել է բանավոր գրականություն (վիպասանական երկերը), բայց գրավոր ոչինչ չկա, ոչ հայերեն, և ոչ որևէ օտար լեզվով (չհաշված մի քանի հատուկ անուններ հունարեն կամ լատիներեն տառերով):

Նրանք, որ հակասում են այս գաղափարին և ամեն գնով ուզում են ապացուցել նախամեսրոպյան գրավոր հայ գրականության գոյությունը, իբրև վերջին ապացույց մեջ են բերում այն երևույթը, թե ինչպե՞ս կարող էր հայերենը միանգամից, առանց նախավոր գրավոր գրականության, արտադրել այնպիսի

ձոխ, նրբաւսա ու կանոնաւոր լեզուով գրականութիւն, ինչպես և դարի առաջին գործերն են։

Գառնախան.—այնպես՝ ինչպես նոյն գրականութիւնը արտադրեց հայկապ Հոմերոսի Իլիականն ու Ոդիսականը. և նոքին գրականութիւնը չդնաց Իլիդ-Վկան՝ առանց նախաւոր գրականութեան։

Գրաբարի բնաւայրը որոշելու համար Մնկեն (Esquisse, 2 ապ., էջ 11) երկու կողմն է գնում. առաջինը լեզու բառի գործածութիւնը, և երկրորդ՝ զ նախդիրի գործածութիւնը արդի բարբառներում։ Արարատի շրջանը ունի այժմ լիզու ձևը և չգիտէ զ նախդիրը, իսկ Վանա լճի շրջանը ունի գրաբարի լեզու ձևը և պահում է զ նախդիրի գործածութիւնը հայցականում։ Սրանից հետևցնում է, թէ գրաբարի բնաւայրն է երկրորդը (Հարթավային Հայաստան) և ոչ թէ առաջինը (Հիւսիսային Հայաստան)։

Ըստ իս այս պատոդութիւնը ճիշտ չէ. Արարատը (էջ 37, տպ. Երևան, 1940) բուն Հայաստանը դնում է Արտաշատը, իսկ Վաղարշապատը և Տարոնը (Վան և Մուշ) սատրներից խլված գաւառներ։ Եթէ լեզու և զ նախդիրի գործածութիւնը կապենք իրար հետ, ապա ինչ անենք Այրարատի, Աւշականի և Ամիդիայի բարբառներըն, որոնք ունեն լիզու ձևը (ի-ով) և պահում են զ նախդիրը։ Ըստ իս լիզու ուշ առաջացած բարբառային մի ձև է, որ բուն Մնկեի (անդ, էջ 35) ամանդված է արդեն ժ դարից։ Եթէ այսօր որոշ բարբառներ չունեն զ նախդիրը, այդ չի նշանակում, թէ չեն ունեցել, այլ ունեցել են, ապա՝ կորցրել։ Այսպես՝ Գալաթի բարբառը չգիտէ զ նախդիրը, բայց իննըզինըը, մէկզմէկ, նորըզնոր «շատ նոր» բառերը ցոյց են տալիս, որ զ ունեցել է և ապա կորցրել։ Լամազոյն բացատրութիւնը տալիս է Գևդերքնը (Հայ և դր. լեզ., 136), որ լեզու դնում է լեզուլ ձևից, իսկ լիզու դնում է լիզուլ ձևից, երկուսն էլ համաստաբաղա հին են։

ԿԱՄԲՈՒԱԿԱՆ ՃՅՈՒՂ

Բոլոր հնդեվրոպական գաղթականութիւններին մեջ ամենահինն է. կամբոները մ. թ. ա. 3-րդ հազարամեակի վերջերը արևմուտքից արշաւել են Փոքր-Ասիա և նեաձելով տեղական ժողովուրդներին, սկսել են դարձել նրա կենտրոնական մասին։ Ապա նրանք առաջացան դեպի հարաւ և իրենց տիրապետու-

Թյան տակ առան Կիլիկիան, Ասորիքը և Միջագետքը. մ. թ. ա. 1900-ական թվերին նրանք մինչև անգամ Ասորեստանի վրա արշավեցին։

Կամխաբենը մինչև վերջերս անծանոթ լեզու էր. 1905 թվին Հուգո Վինքլեր գերմանացին պեղումներ կատարելով Բողազքեոյի ավերակներում (Անգորայից 145 կիլ. արևելք), դուրս բերավ նրանց մայրաքաղաքը, ուր գտնվեցին 13 000 կտոր Թրծուն կավե տախտակներ, ծածկված սրճանագրությամբ, ասորեստանյան բովանդակությամբ՝ հաճախ նաև թարգմանությամբ։ Չեխ գիտնական Հրոզնին կարդաց ու վերլուծեց այդ սրճանագրությունները (1915 թ.), հրատարակեց կամխաբենի քերականությունն ու բառարանը (1917 թ.)։ Իր դյուրը ընդունելություն գտավ ուրիշ գիտունների կողմից, որոնք ավելի առաջ տարան ընթերցման գործը և այժմ այս լեզվի ուսումնասիրությունը բոլորովին ճիշտ ու հաստատուն հիմքերի վրա է դրված։

Կամխաբենին մոտիկ մի բարբառ է լուվերենը, որից գտնված են 700 բառ և երկլեզվյան մի բնագիր՝ լուվերեն-կամխաբեն։

Շատերը կամխաբենը կոչում են հաթերեն. բայց այս բառով հասկանում ենք այն նախարձիկները, որոնք հնդեվրոպացի կամխաների լծի տակ էին ընկել։

Կամխաբենը, ինչպես ասացինք, մեզ ավանդված ամենահին հնդեվրոպական լեզուն է. նրա կազմությունը այնպես է, որ ներկայացնում է հնդեվրոպական նախալեզվի դեռ ոչ-զարգացած շրջանը։ Կամխաբենի ամենահին արձանագրությունը մ. թ ա. 1950 թվից է։

ՓՌՅՈՒԳԱԿԱՆ ԿԱՄ ԹՐԱԿՈ-ՓՌՅՈՒԳԱԿԱՆ ՃՅՈՒՂ

Թրակացիները մի հին ժողովուրդ էին, որ բնակվում էին արդի Հարավային Սլավոնական երկրներում, այն է՝ Դանուբի հովտում. նրանց սահմանն էր, մի կողմից՝ Ծովը և, մյուս կողմից, Մակեդոնիայի լեռները, իսկ գլխավոր բնակավայրը՝ արդի Ռումինիան։ Թրակացիների լեզուն հայտնի չէ մեզ. կան միայն մի քանի բառեր, որ ավանդել են հույն մատենագիրները և բազմաթիվ հասուկ անուններ։ Այս բոլորը, սակայն, ամենևին բավական չեն, որևիցե գաղափար կազմելու համար թրակացիների լեզվի մասին։ Ենթադրվում է, որ արդի ռումիներենը, բուլգարերենը և ալբաներենը, որոնք տարբեր ճյուղերի պատկանող լե-

գուներ լինելով հանգելիս՝ այնքան նմանություն ունեն իրար հետ, իրենց այդ նմանությունը պարտական են մի բնիանաւոր թրակյան հիմքի։ Համեմատելով ուսումնասիրելիս նամանավանդ թրակերենի վրա հորինված ռամանական լեզուս։ Այս ենթադրությունները, սակայն, սոսկ ենթադրություններ են, որովհետև ոչ մի հնարք չկա ճշտելու նրանք։ Միայն կողմից՝ նմանությունները կարելի է բացատրել հանգամանքի և ժողովրդերի երկար ժամանակյա սերտությամբ այս բոլոր լեզուների վրա։ Ստույգ է, սակայն, որ թրակերենը այնուամենայնիվ հնդեվրոպական լեզու է, որովհետև անձուկ կապ ունի փռյուգացիների լեզվի հետ։

Փռյուգերենը գանվում է ավելի բախտավոր վիճակի մեջ. նրանից ունենք շատ բառեր և բազմաթիվ արձանագրություններ։ Արձանագրություններից հնագույնները պատկում են մ. թ. ա. 8 դարից և գրված են մի առանձին այբուբենով, որ ծագում է հունականից։ Գան և շատ ավելի նոր արձանագրություններ հունարեն և փռյուգերեն լեզուներով, բայց բոլորն էլ լինելով տապանագրեր, պարունակում են միշտ միևնույն բառերն ու դարձվածքները և ոչինչ նոր բան չեն տալիս։

Հույն պատմիչները (Հերոդոտ և այլն) պատմում են, թե փռյուգացիները նախապես բնակվում էին Եվրոպայում, ուր կրում էին Briger անունը իրենց ցեղակից թրակացիների հետ։ Ավելի հետո Հելլեսպոնտոսի վրայով անցան Փոքր-Ասիա և հետզհետե ավելի ներս առաջացան, ուր ապա, հունական քաղաքակրթության ազդեցության տակ իրենց լեզուն կորցնելով, հունացան մյուս փոքրասիական ցեղերի հետ։

Ինչ որ հույն պատմիչները ասել են թրակացիների և փռյուգացիների ցեղակցության մասին, նոր բնությամբ հաստատում են Թոմաշեկը և Կրեչմերը, որոնք գտնում են, որ նրանք, փոքրասիական ուրիշ ժողովուրդների հետ (ինչ. Միսիացիները, բյութանացիները, որովագացիները և այլն) կազմում են մի առանձին ճյուղ հնդեվրոպական բնատոհմիքի մեջ։

ՀԻՒՆԱԿԱՆ ՃՅՈՒՂ

Թվում է, թե հույների նախնական հայրենիքը եղել է արդի Հունգարիան, ուր ապրում էին իտալական ճյուղի հարևանության մեջ։ Շատ հին ժամանակներում հույները այստեղից շարժվեցին դեպի հարավ և իջան Եպիրոս և Մակեդոնիա, իրենց արևելյան կողմում ունենալով թրակյան ճյուղը։ Հին մակեդո-

նական լեզուն մեզ հայտնի չէ, բայց եղած փոքր մնացորդների վրա հիմնվելով՝ ոմանք ուզում են կցել հունական ճյուղին։ Հոֆմանը հավաքել և իր մի քանի ամփոփել այն բոլոր տեղեկությունները, որ հները ավանդել են մակեդոնացիների մասին (Die Makedonen, Göttingen, 1906)։

Հունական դանագան գաղթեր են եղել դեպի Հունաստան. նախ արշավել է յանիական, աւտոխկյան և աքեյան ճյուղը, մ. թ. 13 դար առաջ և ջնջելով տեղական ժողովուրդներին՝ հելլենացրել է Հունաստանը։ Այնուհետև եգիպտոսից իջնում են դորիացիները և իրենց ցեղակից հույներին անջատում երկուսի, նախ՝ մտնում են Թեսալիա, հետո՝ մինչև Հունաստան և ապա՝ Կորնթոսի պարանոցով՝ Պելոպոնես։ Դորիացիների արշավանքից առաջված նախկին հունական ցեղերը շարժվում են դեպի կղզիները ու Փոքր-Ասիա և ջնջելով այն կողմերի հին ցեղերն ու լեզուները, հիմնում են նոր հունական գաղութներ։

Մ. թվ. ա Դ դարում վերջացել էր Բաբելոնի, Եգիպտոսի, Փյունիկիայի, ինչպես և եգիպտական ու Միջերկրական քաղաքակրթության դերը, հույները, աշակերտելով նրանց և յուրացնելով այդ քաղաքակրթությունները, առեղծում են մի ավելի բարձր կուլտուրա, որի նմանը աշխարհը չէր տեսել։ Այսպիսով, հույները կանգնում են համաշխարհային կուլտուրայի գլուխը։ Քաղաքակրթության հետ միանալով աշխարհակալությունը, իսկ ավելի հետո էլ հունարենը դառնալով քրիստոնեության պաշտոնական լեզու, նա դառնում է հին աշխարհի համար տիեզերական լեզու, որից ազատվել կամ օգտվել են բոլոր լեզուները՝ առանց բացառության։ Նույնիսկ չինարենը հույն լեզվից փոխառություններ ունի։ Այսօր էլ գիտական տերմինաբանությունը մեծ մասամբ հունարեն է և գիտական բառերը բոլոր եվրոպական լեզուների մեջ էլ կազմվում են հունարենից, որտեղից էլ տարածվում են ամբողջ աշխարհ. այսպես՝ հն. տելեֆոն, տելեգրաֆ, դիագրամմա և այլն, և այլն։

Հին հունարենը ավանդված է մեզ գրեթե սրբությանի ժամանակից. նրա մեջ հնդեվրոպական ձևաբանությունը ավելի պահպան է պահված, քան սրբությանում. բայց ձայնավորները ավելի հավատարիմ են մնացել։ Հունարենի դիրությունը սրբությանի հետ միասին անհրաժեշտ մասն է կազմում հնդեվրոպական լեզվաբանության։

Գիտենք, որ հին Հունաստանը բազմաթիվ անկախ քաղաքների մի միություն էր ներկայացնում. այս վիճակը ազդել է հունարեն լեզվի վրա, որ ներկայացնում է բազմաթիվ գրական լեզուներ ու բարբառներ։ Ամեն մի քաղաք իր լեզուն ունի, և չկա մի հելլինակ, որի լեզուն ամբողջովին նույնը լինելը մի ուրիշ հելլինակի լեզվի հետ։

Հին հունարենի բարբառները բաժանվում են չորս գլխավոր ճյուղի.

1. Յոնիական-ատտիկյան.
2. Էոլիական կամ հյուսիս-արևելյան.
3. Աքայան.
4. Դորիական (կամ արևմտյան)։

Յոնիական և ատտիկյան ճյուղերը այնքան նման են միմյանց, որ պետք է ընդունել, թե նախապես մեկ էին։ Յոնիական բարբառը գործածական էր Փոքր-Ասիայի Դոդեկապոլսում (Միլետ, Եփեսոս, Սամոս, Բիոս), Կիկլադյան կղզիների մի մասում (Պարոս, Թասոս, Նաքսոս, Կեոս)։ Եվբեա կղզում և մինչև Թասոս սփռված բազմաթիվ գաղութներում։ Հունաստանի մայր ցամաքի վրա չկա։ Այս բարբառով գրականություն սկսվում է մ. թ. ա. Է դարից. նշանավոր է Հերոդոտը (482—425)։ Յոնիան, լինելով Հունաստանի ամենաքաղաքակիրթ մասերից առաջինը, իր լեզուն էլ պարապարել է շրջակա բոլոր քաղաքներին, և նույնիսկ Ատտիկային։

Ատտիկյան բարբառը (Աթենքի և ամբողջ Ատտիկայի լեզուն է) ծանոթ է արդեն Ը դարից՝ բազմաթիվ արձանագրություններով և ավելի հետո մի ճոխ գրականությամբ, այնպես, որ հունական բոլոր բարբառներից ավելի նա է կատարելապես ծանոթ։ Լեզվաբանական աշխատությունների մեջ հիշված հունարեն բառերը սովորաբար այս բարբառով են լինում։

Յոնիական բարբառի հետ որոշ նմանություն ունի աքայան բարբառը, որ առաջ բնդարձակ տարածություն ուներ, բայց հետո վերացվեց և տեղի տվեց գորիական բարբառին. իր մնացորդներն են արկադյանը, պամֆյուլիականը և կիպրականը։ Այս բարբառներով ունենք զանազան արձանագրություններ։ Կիպրական բարբառով եղած արձանագրությունները թեև մ. թ. ա. Դ—ե դարերից չեն անցնում, բայց գրված են մի ուրիշ այբուբենով, որ վանկային է և սրանով էլ ներկայացնում են առանձին հետաքրքրություն։

Էոլիական ճյուղը պարունակում է 3 գլխավոր բարբառ. Թեսալացոց, բեոտիացոց և Լեսբոսի և Փոքր-Ասիայի էոլիական քաղաքների բարբառները։ Լեսբոսի բարբառը գրականության բարձրացավ մ. թ. ա. է—Զ դարում տեղացի երկու բանաստեղծների գրչով, որ և դարձավ էոլիական գրական բարբառը։ Բեոտիականը գրի առնվեց ե դարում. Թեսալականը և բեոտիականը հայտնի են մանավանդ արձանագրություններով. բեոտիական արձանագրությունները նշանավոր են տեղական արտասանության ճշգրիտ գրչության կողմից։

Այս երեքից անջատ է մնում դորիական ճյուղը, որ հունական նոր գաղթականության լեզուն է և իր մեջ էլ զանազան տարբերություն է ներկայացնում։ Այս խմբին են պատկանում. Լակոնիա, Մեսսենիա, Արգոս, Կորնթոս, Մեգարա, Կրետե, Եպիրոս, Եաոլիա, Փոկիա և սրանց գաղթականությունները, ինչպես՝ Կորկուրա, Սիրակուզա, Տարենտե, Հերակլեա, Սիցիլիա և այլն։ Այս բարբառը ծանոթ է գլխավորապես արձանագրություններով, որոնց մեջ գլխավորներն են Կրետեում՝ Գորտինի օրենքը, Դելփյան արձանագրությունները՝ սկսած ե դարից և Ոլիմպոսի արձանագրությունները։ Գրական գործերը քիչ են և լավ չեն պահել բարբառը։

Հույն գրականության ամենահին գործն է Հոմերոսի Իլիականն ու Ոդիսականը, և հունական ոչ մի բարբառի հետ նույն չէ. ընդհանուր երևույթը յոնիական է, բայց հին հիմքը էոլիական է, որի հնագույն ձևերը ավանդաբար պահել է։

Պատմական շրջանում բոլոր հույն բարբառները միասյան և նրանց խառնուրդից արդեն մ. թ. ա. Դ դարում, առաջացավ Կոյնե կոչված ընդհանուր հունական լեզուն՝ ատտիկյան հիմքով և յոնիականի ազդեցությամբ։ Տեղական բարբառները չնչվեցին իրար հետից։ Ավելի հետո, այս ընդհանուր լեզուն նորից բաժան-բաժան լինելով, ծագեցին արդի հունական բարբառները, որոնց սկիզբը դրվում է շուրջ մ. թ. 500 թ.։ Ըստ այսմ նոր հունարենի բարբառները հին հունարենի զավակները չեն և նրանց առանձնահատկությունները հանել մինչև հին հունական բարբառները՝ լոկ ձախող փորձ է։ Միայն յակոնական բարբառն է, որ ծագում է հին հունարենի լակոնական բարբառից։

Նոր հունարենի հնագույն հիշատակարանն է Նոր-Կտակարանը, որ ճիշտ ժողովրդի խոսած լեզուն է ներկայացնում։ Բյուզանդական հունարենը հին հունարենի արվեստական նմանո-

դությունն է, ինչպես որ արդի գրական հունարենն էլ, որ սկըսվում է ԺՉ դարից, քան կարելիություն մատչըված է արվեստական կերպով նոր-կատակարանի հունարենին և հնացրած ժողովրդական բարբառներից:

Հունախոս ժողովրդի ամբողջ թիվը համարվում է 7 միլիոն:

Հունարենի ուսումնասիրության ամենալավ աղբյուրներն են. Boisacque, Dictionnaire étymologique de la langue grecque, Heidelberg-Paris, 1923; Hermann Hirt, Handbuch der Grichischen Laut-und Formenlehre, Heidelberg, 1902.

ՀՅՈՒԲԻԿԵՑԻ ՅՈՒՂ

Հյուբիկեցիները կամ որ նույն է՝ իլիբացիները հնագույն մի մեծ ազգ էին նրանց նախահայրենիքն էր Արևելյան Գերմանիան, ուր բնակվում էին մինչև 500 թվից մ. թ. ա. նրանք հասել էին մինչև Բալթիկ ծովի հարավը և նույնիսկ Բալթիկ բառը իլլիրական baltos «ճահիճ» բառից է (BSL, 37, № 109, էջ 8). հետո նրանք եկան Դանուբի վերին հովիտը՝ Պաննոնիա երկիրը: Այսուհետև մ. թ. ա. 1000 թվին սպառնալիքով նրանք հասան մի կողմից Ալպյան լեռները և Ապրիական ծովի երկու ափերով Դալմաթիա, Սերբիա, Ալբանիա, Եպիրոս մինչև Մակեդոնիա և Հունաստան: Գաղթական ժամանակներում այս ազգից հայտնի են հետևյալ ժողովուրդները:

1. Վենետացիները՝ Ապրիական ափին Հյուսիսային Իտալիայում: Արդեն Հերոդոտը հիշում է նրանց իրըև իլլիրական ժողովուրդ: Սրանց լեզուն հայտնի չէ. բայց նոր ժամանակներս գտնվեցին գանազան արձանագրություններ Վենետիկի, Գաստուցիի շրջաններում, մի անծանոթ լեզվով, որ թեև մեկնված չէ, բայց երևում է, որ պատկանում է հնդեվրոպական ընտանիքին և հին վենետացիների լեզուն է: Արձանագրություններից ծագումից երևում է նաև, որ վենետացիները բռնում էին ամբողջ Հյուսիսային Իտալիան մինչև Տիբրոլ և Ալպյան լեռները: Այս ժողովրդի ժառանգորդներն են արդի վենետիկցիները, որոնք խոսում են մի առանձին իտալական բարբառով, որի առանձնահատկությունները վերագրվում են հին վենետացիների լեզվին:

2. Մեսապացիներ և յապիգացիներ, որոնք գանազան ուրիշ ցեղ երի հետ բնակվում էին Իտալիայի հարավային ծայրը՝ Կալաբ-

բիա և Ապուլիա գավառներում՝ Յոնիական և Ադրիական ծովերի եզերքում և հավանաբար ինը դար մեր թվականությունից առաջ գաղթել են Ադրիականի մյուս եզերից։ Մեսապացիների լեզվով էլ գտնվել են բազմաթիվ արձանագրություններ, բայց առայժմ չեն մեկնված։

3. Իտալիայի Picenum (Sammium) գավառում գտնվել են նույնպես մի խումբ արձանագրություններ, որոնց լեզուն անծանոթ է, բայց ցույց են տալիս, որ Ադրիականի ամբողջ արևմտյան եզերքը բնակված էր իլլիրական ցեղերով։

Դժբախտաբար Ադրիականի արևելյան ափերում, Իլլիրիայում, Սերբիայում և Եպիրոսում ո՛չ մի արձանագրություն չի գտնված. կան միայն հատուկ անուններ, որոնց վրա հիմնվելով գիտունները ուզում են հասկանալ ցեղի նույնությունը։

Գաղաթական շրջանում իլլիրացիները բոլորովին անհետացան. Իտալիայում նրանք լատինացան և այսօր խոսում են իտալական բարբառներով, Բալկաններում նրանք սլավացան, ինչպես Դալմաթիայում և Սերբիայում, և մասամբ էլ հուն դարձան, ինչպես Եպիրոսում և Մակեդոնիայում։

Բայց Բալկաններում կա նաև մի առանձին ցեղ, որ հակառակ հռոմեական, հունական և թյուրքական տիրապետություններին, մինչև այսօր էլ իր ազգային գոյությունը և լեզուն պահել է։ Այդ է ալբանական ժողովուրդը, որ վերջերս ստացավ անկախություն։

Ալբանացիները բաժանվում են երկու մասի՝ գեգա և թոսկա։ Առաջինները մահմեդական են և բնակվում են Հյուսիսային Ալբանիայում. իսկ երկրորդները հունադավան քրիստոնյաներ են և բնակվում են Հարավային Ալբանիայում։ Այս երկուսը ունեն ուրույն բարբառներ, որ սակայն իրարից շատ տարբեր չեն։ Առաջիններն թիվը է $1^1/_2$ միլիոն։

Ալբաներենը լցված է բազմաթիվ լատինական, իտալական, սլավական, հունական և թյուրքական փոխառություններով։ Հատկապես առաջինները այնքան շատ են, որ լեզվին տվել են ռոմանական կերպարանք։ Ըստ այսմ զանազան լեզվաբաններ զանազան կարծիքներ են հայտնել ալբաներեն լեզվի մասին։ Դժբախտաբար ալբաներենը ո՛չ մի հին հիշատակարան չունի և միայն ԺԵ դարում մտավ գրականության մեջ։ 1635 թվին կազմվել է առաջին ալբաներեն բառարանը. կան մի քանի բնագիրներ ԺԶ դարից։ Վերջին անգամ Գուստավ Մեյերը քննելով այս լե-

գուն, գտավ, որ նա հնդեվրոպական լեզվախմբի մեջ կազմում է առանձին ճյուղ և հին լյուբրիկյան լեզվի միակ ժառանգն է։ Ենաները, սակայն, չեն ընդունում այս միավորները և հին իլլիրիենն ու վենետներենը առանձին են դնում, իսկ ալբաներենն ու մեսապներենը առանձին (Brugmann, Abrégé, էջ 4)։

ԻՏԱԼԱԿԱՆ ՃՅՈՒՂ

Այս ճյուղը բաժանված է երկու մասի՝ լատինական և օսկյան-ումբրիական։ Բոլորի ընդհանուր հայրենիքը եղել է արդի Բոհեմիան[1], առաջին գաղթող խումբը եղել է լատինականը, որին հետևել է օսկյան-ումբրիականը։ Իտալիան այն ժամանակ բնակված է եղել զանազան ժողովուրդներով, ինչպես՝ էտրուսկները, վենետացիները, մեսապացիները և այլն։ Նոր գաղթողները ճանապարհ բաց անելով նրանց միջից՝ հաստատվեցին Իտալիայի զանազան կողմերը։ Լատինները հաստատվեցին Լացիումի մեջ, որ Հռոմի շուրջը մի փոքր երկիր էր։ Լատիններին մոտիկ ցեղակից էին ֆալիսկները, որոնք բնակվում էին Էտրուրիայի հարավային կողմը. որոնց լեզվով գտնվել են մի քանի արձանագրություններ, որոնց լեզուն շատ նման է լատիններենին։ Լատիններին մոտիկ ցեղակից էին նաև սիկուլացիները, որոնք բնակվում էին Լացիումից հարավ և հետո գաղթեցին Սիցիլիա կղզին. որոնց լեզվով գտնվել է Սիցիլիայում մի արձանագրություն, որ տակավին մեկնված չէ։

Հին շրջանում ավելի մեծ տարածում առացավ օսկյան-ումբրիական մասը, որ բավական տարբեր է լատիներենից. Նա բոլոր Լացիումից և Էտրուրիայից դեպի արևելք և հարավ եղած ամբողջ հողերը։ Ումբրիացիները բնակվեցին Ապենիններում, Էտրուրիայից դեպի արևելք. Նրանց լեզվից մնում են 7 բրոնզի տախտակներ, մ. թ. ա. I կամ II դարից, բավական տգիտություն են տալիս ումբրիների մասին։ Ումբրիացիների մի ճյուղն են թվում վոլսկները, որոնք բաժանվելով մայր խմբից, եկել բնակվել են Լացիումի հարավային մասում։ Օսկյան խումբը պարունակում է, նախ՝ սամնիտացիների լեզուն, որի հետ նույն են ֆրենտանացիների, հիրպինացիների և կամպանացիների, ինչպես նաև Լուկանիայի և Բրուտիումի լեզուները։ Երկրորդ՝

[1] Hirt, Die Indogermanen, I, էջ 103։

սաբելյան բարբառները, այն է՝ մարսացիների, պելիգնացիների, մարրուցինացիների և վեստինացիների բարբառները։ Երրորդ՝ սաբինացիների, պիցենացիների, հերնիկացիների, եքվացիների, եքվիկոլացիների և պրաուտուտիների բարբառները, որոնք բոնում են օսկյանների և ումբրիացիների միջին տեղը։ Օսկյան ու ումբրյան բարբառների քերականությունը և ընդարձակ ուսումնասիրությունը գրեց Պլանտան (Strassburg, 1918)։ Մ. թ. ա. Գ մինչև մ. թ. Ա դարը՝ օսկերենից մնում են զանազան արձանագրություններ, որոնք գտնվել են Իտալիայի այլևայլ վայրերում՝ մինչև Մեսինա։

Ահա այսքան լեզուների և բարբառների մի խառնուրդ էր ներկայացնում Իտալիան. ժողովուրդների փոխադարձ հարաբերությունը պահանջ էր դդում ունենալու ընդհանուր մի լեզու և այդ լեզուն եղավ լատիներենը, անձուկ մտքով Հռոմի լեզուն։ Լատիներեն գրականությունը սկսվում է մ. թ. ա. III դարից։ Քաղաքի և գյուղերի լեզուն բավական տարբեր էին, այսինքն՝ թե լատիներենը ուներ բարբառներ. գյուղական լեզուների մասին մասամբ գաղափար են տալիս Պրենեստում գտնված հին արձանագրությունները։ Քաղաքի և բարձր դասակարգի լեզուն մշակվելով հունական կուլտուրայով՝ կազմեց մի ճոխ լեզու և գրականություն, որ ամբողջապես կաղապարված է հունարենի վրա, սկսած այբուբենից։ Մ. թ. ա. Ա դարից արդեն կարելի էր զանազանել իրարից գրական լատիներենը և առօրին լատիներենը. մինչդեռ առաջինն ասում էր equus, «ձի», hebdomas «շաբաթ» pugna, «պատերազմ», *առօրին լատիներենը ասում էր* caballus, septimana, batualia.

Հռոմայեցիները աշխարհակալությամբ հետզհետե նվաճեցին Իտալիայի բոլոր մասերը և, արդեն մեր թվականության սկզբին այդ ցեղերին ու լեզուներին վերջ տալով, ամեն կողմ տարածեցին լատիներենը, որ դարձավ մի և միակ տիրող լեզուն։ Այստեղ է հունարենի և լատիներենի տարբերությունը. մինչդեռ առաջինը ներկայացնում է բազմազան բարբառների մի շարան՝ իբրև արդյունք քաղաքական կազմության, լատիներենը, ընդհակառակը, ներկայացնում է մի միակ ամբողջություն և մի բարբառ, իբրև արդյունք իր պետական միահեծան կառուցվածքի։ Նույնիսկ այն ժամանակ, երբ լատին պետությունը քայքայվել էր, լատին գրական լեզուն մնացել էր՝ իբրև լատին ևկեղեցու հատկանիշ։

Բայց լատիներենը Իտալիայի սահմանում չմնաց։ Գաղմատիքյաներից գիտենք, թե ինչքան մեծ տարածում ստացավ հռոմեական պետությունը՝ հին աշխարհի բոլոր մասերում։ Ամեն կողմ տարածվեց լատիներենը և դարձավ մի այնպիսի համաշխարհային լեզու, որի նմանը չի տեսել պատմությունը։ Հռոմեացիի գինվորները այդ լեզուն փոխադրեցին Գալլիա, Իսպանիա և Աւստրիա և այս երկրների ժողովուրդները՝ մոռանալով իրենց լեզուն, ընդունեցին լատիներենը, որ ձևափոխվելով՝ նաև այդ երկրների անկախությամբ, հռոմեական պետության կործանումից հետո ձեռքբերց տասնյակ ու անկախ լեզուներ, որոնք ընդհանուր բառով կոչվում են նորլատին կամ ռոմանական լեզուներ։

Լատիներենը տարածվեց նաև բյուզանդական պետության մեջ։ Ադրիականից արևելք ամեն կողմ տիրում էր լատիներենը. այդ երկրների բնակչության քառորդը 400 թվերին որպես լատիներեն էր խոսում։ Նախկին Իրակացիները և Իլլիրացիները լատինախոս դարձան, և լատիներենը բյուզանդական պետության պետական լեզուն դարձավ։ Ամեն պետական պաշտոնյա պարտական էր գիտենալ գրել ու խոսել լատիներեն։ Դ դարից հետո Ադրիականից արևելք և բյուզանդական պետության մեջ լատիներենը սկսում է տեղի տալ։ Գերմանական բարբարոս ժողովուրդները (վիսիգոթ, օստգոթ և այլն) կտտրում են Իրակացի և Իլլիրացի ժողովրդի մեծ մասը։ Ավարների և սլավոնների արշավանքի ժամանակ նրանք ենթարկվում են ավելի մեծ կտտրածների, իսկ մնացյալները խառնվելով նոր արշավող սլավոնների հետ՝ կորցնում են լատիներենը և դառնում սլավ։ Այսպես են առաջանում Սերբիան, Խորվաթիան և Ձերնոգորիան։ Լատինախոս մնում են միայն առանձնացիները։ Բյուզանդական պետության մեջ ևս 320-ից 620 թթ., 3 դարի ընթացքում լատիները հետզհետե վերանում է, և Հուստինիանոսը վերջին կայսրն էր, որ լատիներեն էր խոսում։

Լատիներենը մտավ նաև Աֆրիկա և մեր թվականության առաջին դարում արդեն տարածված լեզու էր՝ հատկապես Քարթագենում։ Արաբները մուտք գործելով Աֆրիկա ջնջեցին ու վտարեցին այն։

Ավելի նոր շրջանում, սկսած ԺԶ դարից՝ ֆրանսիական և իսպանական աշխարհակալությունները նորլատին լեզուները տարածում են աշխարհի զանազան կողմերը և հատկապես ամբողջ Հարավային Ամերիկա։

Ժամանակի ընթացքում լատիներենը փոխարինելով ձևացնում է սարդին լատիներենը. քայքայումը սկսվում է արդեն Գ—Դ դարերից: Սարդին լատիներենից էլ առաջանում են նորալատին լեզուները, որոնք արդեն անկախ լեզուներ են համարվում Թ դարից սկսած: Այնուամենայնիվ գրականության լեզուն Եվրոպայի մի ծայրից մյուսը լատիներենն էր. այդ վիճակը տևեց ամբողջ հազար տարի: Լատինական լեզուն այսպիսով դարձավ մեծության կոդմից մրցակից սլավականին ու անգլիականին, իսկ կրթական տեսակետով՝ մրցակից հունականին: Եվ այսօր էլ, թեև լատիներենը վաղուց դադարել է խոսակցական լեզու լինելուց, թեև բոլոր նորալատին լեզուները գրականության են բարձրացել իրենց մոր փոխարեն, բայց նրանց հորինվածության մեջ շատ բան կամ ուղղակի լատիներեն է և կամ լատիներենի թարգմանություն: Այսպես ամբողջ Եվրոպայի վրա նույնիսկ այսօր իշխում է լատին լեզուն, որովհետև լատիներենը է և մնում է գիտական լեզու ուսման բոլոր ճյուղերի համար, եկեղեցական պաշտոնական լեզու է ընդհանուր կաթոլիկության համար և բազմաթիվ փոխառություններով շարունակում է իր գոյությունը բոլոր նոր լեզուների մեջ:

Լեզվաբանական տեսակետից դատելով՝ լատիներենը բավական հնամենյակ է, թեև նվազ, քան արիականն ու հունականը. ձայնական և ձևաբանական հորինվածությունը ներկայացնում են զանազան նոր գծեր: Շատերը լատիներենը անճշտ կերպով մոտեցնում են հունարենին. նույնիսկ կազմել են հունարենի և լատիներենի համեմատական քերականություն, բայց դա ճիշտ չէ: Լատիներենը լեզվաբաններին մերձավոր կապ չունի հունարենի հետ, և կարելի է կազմել հունարենի և լատիներենի համեմատական քերականությունը այնպես, ինչպես հունարենի և գերմաներենի կամ լատիներենի և ռուսերենի և այլն: Նա ավելի շատ կապված է կելտական ճյուղի հետ, իսկ հունարենի հետ ունեցած նույնությունը առաջացած է հունարենի մեծ ազդեցությունից՝ լատիներենի վրա: Լատիներենը նման է հատկապես կելտականին և դրա համար էլ լեզվաբանները հնդեվրոպական շրջանից հետո ենթադրում են իտալա-կելտական մի ընդհանուր ընտանիք, հետո՝ բաժանված իրարից:

Լատիներենից ծագած նոր լեզուները հետևյալներն են.

1. Իտալերեն, որ խոսվում է բացի Իտալիայից, նաև Շվեյցարիայում և Սիցիլիա, Սարդինիա ու Կորսիկա կղզիներում.

խոսողների քիչ է ընդամենը 41 միլիոն: Ունի գանազան բարբառներ, որոնցից գլխավորներն են՝ տոսկանականը, վենետիկյանը, սիցիլիականը և սարդինա-կորսիկականը:

Այս բոլորից լավագույնը համարվում է Տոսկանայի բարբառը, որ և Դանթեի ձեռքով բարձրացավ գրականության ժդ դարում և է արդի գրական իտալերենն լեզուն: Իտալերենի ամենահին հիշատակարանը 960 թվից է:

2. Ֆրանսերեն, որ լատինական բնօրանքի արդի ամենատիպական ներկայացուցիչն է: Առաջին դարում կիսաբը՝ նվաճելով Գալլիան, հռոմեական բանակներբ մտան այս երկիրը և իրենց հետ բերին ատրին լատիներենը: Գալլիացիներբ մի գար չանցած, մոռացած իրենց կելտական լեզուն և ընդունելով ատրին լատիներենը, կազմեցին նրանից երկու նոր լեզու, հյուսիսում՝ langue d'oïl և հարավում՝ langue d'oc. առաջինը, որ բուն ֆրանսերենն է, գոնվում է Gironde-Lyon գծից դեպի հյուսիս, երկրորդը, որ պրովանսալ լեզուն է, գանվում է նրանից դեպի հարավ: Ֆրանսերենի բարբառներից նշանավոր են. Ile-de-France-ի բարբառը, որ խոսվում է Փարիզի շրջանում և բռնում է բոլորի մեջտեղը. նրանից հյուսիս՝ վալլոնի բարբառը, արևելքում՝ շամպայնի, Բուրգունդիայի և Լոթարինգիայի բարբառները, հյուսիս-արևմուտքում՝ Պիկարդիայի բարբառը, արևմուտքում՝ Նորմանդիայի բարբառը, հարավ-արևմուտքում Պուատուի և Սենտոնդի բարբառները, հարավ-արևելքում՝ ֆրանկո-պրովանսալ բարբառը, այն է՝ Լիոնի, Թաֆինյան և ավելի վեր՝ Սավոյայի բարբառը:

Այս բոլոր բարբառներբ, որոնք իրարից անկախաբար առաջացել են ատրին լատիներենից, նախապես խոսվում էին և գրվում: Ֆրանսերենի հնագույն հիշատակարանը 842 թվից է, չհաշվելով Ս. Գրոց մի բառացանկ 768 թվից: ԺԲ գարից սկսած Ile-de-France-ի թագավորներբ հետզհետե նվաճելով Ֆրանսիայի մյուս գավառներբ, իրենց բարբառն էլ, այն է՝ ֆրանսերենը, պարտադրեցին նրանց: Մինչև ԺԴ դար վերջացավ ամբողջ Ֆրանսիայի տիրապետությունը և, մյուս բարբառներբ գրական արժանիքից զրկելով, ֆրանսերենը դարձավ ընդհանուր լեզու:

Բացի Ֆրանսիայից, ֆրանսերեն խոսվում է նաև Բելգիայի, Լյուքսեմբուրգի, Շվեյցարիայի մի մասում, Հյուսիսային Իտալիայի մի քանի գավառներում, ինչպես նաև Ֆրանսիայից դուրս գանազան գաղթավայրերում, ինչպես Կանադայում, ս. Մա-

րիս կղզում, Հաիթի հանրապետությունում, ֆրանսիական Անտիլյան կղզիներում, նաև Ալժիր, Թունիս, Մարոկկո, Դվիանա, Սենեգալ, Քոշին-չին և այլն։ Ամբողջ ֆրանսերեն խոսողների թիվը է 45 միլիոն։

3. Ֆրանսերենից ավելի գեղեցիկ և բանաստեղծական է համարվում պրովանսալը, որ թեև ֆրանսերենից անկախ և առանձին լեզու է, բայց նրա տիրապետության տակ հետզհետե ջնջվում է։ Պրովանսալի բարբառներն են՝ արևմուտքում գասկոն բարբառը, որ մոտ է իսպաներենին և լանգեդոկ բարբառը, հյուսիսում լիմուզեն և օվերնյա բարբառները, որոնք բավական մոտիկ են Փարիզի բարբառին։ Պրովանսալի ամենահին հիշատակարանը 1102 թվից է։

4. Իսպաներեն, որ շատ տարածված լեզուներից մեկն է և խոսվում է ո՛չ միայն Իսպանիայում, այլև՝ Մեքսիկայում և ամբողջ Կենտրոնական ու Հարավային Ամերիկայում, մինչև Միացյալ Նահանգները (բացի Բրազիլիայից), Աֆրիկայի եղերքներում։ Իսպաներեն են խոսում նաև Մարոկկոյի, Սևլանիկի, Պոլսի հրեաները, որոնք Իսպանիայից գաղթել են այս երկրները ԺԶ դարում և պահել են դեռ հին իսպաներենը։ Իր ճյուղերն են՝ Լեոնայի, Կաստիլիայի, Արագոնի և Անդալուզիայի բարբառները։ Ամենահին հիշատակարանը 1145 թվից է։ Խոսողների թիվը 65 միլիոն է։

5. Կատալան, Իսպանիայի հյուսիս-արևելյան մասում, Ֆրանսիայի հարավում, խոսվում է Կատալոնում (Պիրենյան լեռների շրջան), Վալենցիայում, Բալեարյան կղզիներում և Սարդինիայում, հնագույն հիշատակարանը 1171 թվից է. այս լեզվի քերականությունը գրեց J. Huber, Katalanische Grammatik (Neidelberg, 1929), որ իր տեսակի մեջ լավագույնն է։ Այս լեզվով խոսում են 5 միլիոն հոգի։

6. Պորտուգալերեն (36 միլիոն), իսպաներենին շատ մոտիկ լեզու է, որ բացի Պորտուգալիայից, գաղթականությամբ տարածվել է նաև ամբողջ Բրազիլիայում, մասամբ նաև Աֆրիկա և Հնդկաստան. ավանդված է 1192 թվից։

7. Ռետոռոմաներեն (ռումանշ) կամ լադին (ladin) լեզու. խոսվում է Գերմանիայի մի մասում, Շվեյցարիայում և Իտալիայում. իր գրված գավառներն են Գրիզոն, Տիրոլ, Ֆրիուլ, Էնգադին, Գրոբյունդին և այլն։ Խոսողների թիվը է. Իտալիայում՝ 17,000 ոգի, Շվեյցարիայում՝ 44,000 ոգի. կոչվում է նաև chur-

wälsch, հին ռոմաներեն և այլն։ Լատիներենին ամենամոտ լեզուն է, որից մի նմուշ տես վերը։

8. Դալմատական, որ ամենաթույլ խումբն է, մինչև ԺԲ դարի վերջը խոսվում էին իր բարբառները Ադրիատիկի ափերում. այժմ բոլորովին ջնջված է։

9. Ռումիներեն (14 միլիոն). որ արդի Ռումինիայի լեզուն է։ Այս երկիրը նախապես կոչվում էր Դակիա, բնակված էր թրակացիներով։ Նա պարունակում էր բուն Ռումինիան (Մոլդովալաքիա), Տրանսիլվանիան և Բեսարաբիան։ Հռոմայեցիների Տրայանոս կայսրը նվաճեց այդ երկիրը և վերածեց հռոմեական գավառի (106 Ք.) և որպեսզի իր տիրապետությունը ապահովի այնտեղ, Իտալիայի զանազան մասերից բազմաթիվ հռոմայեցի գաղթականներ բնակվ-բնակեցրեց Դանուբի ձախ ափը։ Նրանք, հաստատվելով այդտեղ, երկիրը լատինացրին, թրակերենը անհետացավ, և նրա ավերակների վրա կերտվեց մի նոր լատինական լեզու, որ կոչվեց ռումիներեն։ Հնագույն հիշատակարանը ԺԶ դարից է։

Ռումիներենը մեծապես ազդված է սլավականից, որի գլխավոր պատճառն այն է, որ եկեղեցական լեզուն սլավ է։

Ռումիներենի բարբառներն են՝ վալախերեն, մոլդավերեն, Տրանսիլվանիայի բարբառ և մակեդոնա-ռումինական։ Վերջինը, որ բուն ռեպցիներեն կոչվում է արոմին (aromîn), խոսվում է մինչև այժմ գլխավորապես Թեսալիայում, Ալբանիայում և Մոնաստիրի ու Սալոնիկի շրջակայքում։

10. Մի ռոմանական լեզու էլ պետք կազմվել Աֆրիկայի հյուսիսային մասում, բայց արաբների տիրապետության տակ ջնջվեց։

ԲԱԼԿԱՆ-ՍԼԱՎԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՃՅՈՒՂ

Եվրոպայում մեծագույն հնդեվրոպական ճյուղը բալթիկ-սլավականն է, որ բաժանվում է երկու մասի՝ բալթյան և սլավական։ Երկուսը շատ կետերում նման են իրար հետ, այսպես՝ հոլովումը, ձայնաբանություններ, նախադասության հորինվածությունը, որոնք շատ հնամիճակ ձևի տակ են՝ ավելի քան հունարենը։ Բայց այս նմանություններից շատը առաջացել է երկու խմբերի զուգահեռ զարգացումից, քան թե նախավոր միությունից։

ա. Բալթյաց

Բալթյանը, որ կոչվում է նաև լեթթական, տարածվում է Բալթիկ ծովի արևելյան և հարավային կողմերը, ուր ընդարձակ տարածության վրա։

Նա պարունակում է հետևյալ լեզուները.

1) Լիտվաներեն, որ մատենագրության համար ծանոթ է մեզ 1547 թվից, Լութերի քրիստոնեականով, բայց հակառակ իր նորության, դեռ այսօր էլ շատ վաղնջական լեզու է։ Լեզվաբանները դանում են նրա մեջ շատ անգամ վեդայական հնդկերենի և հոմերական հունարենի համապատասխան ձևեր, նույնիսկ այնպիսիք, որ դիտական միջոցներով վերակազմել են իրըև հնդեվրոպական նախալեզվի ձևեր։ Օրինակ՝ լիտ. ēsti=սանս. ásti. հն. ἐστί «է», լիտ. gy'vas «կենդանի» (կարդա gīvas)=սանս. jīvás, լ. vīvas, ավելի հնաձև են քան հն. սանս. լ.։ Այս հանգամանքը ուշադրության արժանի է հենց նրա համար, որ հնդեվրոպական ցեղի նախահայրենիքն էլ համարվում է Լիտվան։ Քերականական կազմությունը շատ փոխված է, հատկապես բայը։ Լի է բևեռուներեն փոխառություններով, քան որում լիտվանացիները արևմտյան քաղաքակրթությունից հեռու, երկար ժամանակ կոպաշաղ մնացած, բևեռուաններին դիմեցին և նրանց միջոցով ստացան կուլտուրա։

Լիտվաներեն խոսող ժողովրդի թիվը է 2 միլիոն։

2. Լեթթերեն, որ ծագել է լիտվաներենից և նրա ավելի նոր ձևն է։ Ամանգված է մեզ գրեթե նույն թվականից։ Լեթթերը բնակվում են Լիտվայի հյուսիսային մասում, այնտեղ, ուր ֆիններն էին բնակվում. ուստի և կարծվում է, թե նախկին ֆիններ են՝ հետո հնդեվրոպականացած՝ լիտվանների ազդեցության համար։ Նրանց թիվը է 1,80,000 անձ։

3. Հին պրուսերեն, որ Պրուսիայի հին լեզուն էր և մեզ ավանդվել է ԺԵ դարից 800 բառերի մի ցանկով, 3 փոքրիկ քրիստոնեականով և Լութերի Encheiridion-*ով (1561 թվից)։ Լիտվաներենի պես սա էլ հնատիպ լեզու է, բայց դժբախտաբար անծանոթ։ Ընկնելով գերմանական պետության մեջ, պրուսացիները ավելի հետո գերմանացան և պրուսերեն լեզուն բոլորովին չնջվեց։ Նրա մահը տեղի է ունեցել ԺԷ դարում։*

Այս լեզվի մասին լավագույն և ամբողջական աշխատությունը գրեց. Trautmann, Die altpreussischen Sprachdenkmaler, Grammatik, Wörterbuch, Göttingen, 1920.

բ. Սլավական

Սլավական ցեղը նախապես բնակվում էր Դնեպր գետի միջին և վերին մասում՝ մի փոքրիկ տարածության վրա։ Թեև համեմատաբար ուշ է գալիս նկել պատմության մեջ, բայց շուտով այնպիսի բնագրական տարածում առացավ, որ բոլոր Եվրոպայի և Ասիայի մեծագույն մասը։ Ջ դարի վերջում, ավարների հետ արշավելով Բալկաններին վրա, նրանք կտտրեցին Բալկանների հյուսիսային մասի ամբողջ լատինախոս ժողովուրդը (նախկին Քրակացիներին և Իլլիրացիներին) և գրավեցին նրանց հողերը։ Ազատվեցին միայն ալբանացիները և ռումինները։ Այսպիսով, սլավները վերջապես հասան արևելքից մինչև Էլբա գետը, հարավից՝ Գելոպոնես, հյուսիսից՝ Սառուցյալ օվկիանոսը և արևելքից՝ Խաղաղ օվկիանոսը։ Ժամանակի ընթացքում սլավական ցեղը կորցրեց իր հողերի մի մասը, գերմանական ժողովուրդները քափանցելով Էլբայից արևելք՝ ամբողջ այդ շրջանի սլավներին գերմանացրին. Գելոպոնես հասած սլավները հունացան. Ալպյան լեռների սլավները նույնպես գերմանացան, իսկ հունգարացիները՝ իրրև տեղ ճնդելով սլավներին, անջատեցին նրանց իրարից։ Ընդհակառակը՝ սլավները տարածվեցին ի հարկի ուրիշների. հարավում պահեցին նրանք Քրակիացիների հողերը (Սերբիա, Զերնոգորիա, Բուլղարիա), հյուսիսում՝ ուգրա-ֆիննական հողերը, իսկ արևելքից՝ Սիբիրի և Կենտրոնական Ասիայի մեջ տիրացան ալթայական հողերին։ Վերջին տարիներս ռուսական ցարիզմը սպառնում էր ձուլել նաև ամբողջ կովկասյան ժողովուրդներին և այս հետաքրքրական պատերազմի ընթացքում հասան մի կողմից Եփրատ և մյուս կողմից Քիրմանշահ։ Սակայն Սովետական իշխանության հաստատումը վերջ դրեց ցարական Ռուսաստանի գաղութակալական քաղաքականության, աղատություն և անկախություն տվեց նախկինում ճնշված ժողովուրդներին։

Սլավական լեզուները բաժանվում են երեք խմբի՝ հետևյալ ձևով.

1) Արևելյան սլավական խումբ, որ պարունակում է՝

ա) ռուսերեն, տարածվում է ամբողջ Ռուսաստանում, արտասահմանյան ռուսարնակ վայրերում, ինչպես և խոսվում է ամբողջ Սովետական Միության մեջ, որպես ընդհանուր լեզու։

Գրականության մեջ մտել է ԺԲ դարից։ Ռուսերենի բարբառները այնքան մոտիկ են միմյանց, որ մինչև իսկ կարելի

է ասել, թե ռուսերենը բարբառ չունի և ամենահետաքրքիր տեղերի ռուսները իրար հասկանում են առանց դժվարության։

բ) Ուկրաիներեն (որ և՝ ռուսիներեն), որ բոնում է երկրի հարավային մասը, Ուկրաինա, Գալիցիա, Բուկովինա և այլն։ Այս լեզվով խոսում են 34 միլիոն մարդ։ Համարվում է առանձին լեզու, բայց ավելի քիչ տարբերություն ունի ռուսերենից, քան սերբերենը՝ բուլգարերենից, շատ ավելի քիչ, քան ֆրանսիական գավառական բարբառը բուն ֆրանսերենից և առաջին դերմաններենը բարձր գերմաներենից։

գ) Բելոռուսերեն, որ Բելոռուսական ՍՍՌ-ի լեզուն է. նախկինում անճիշտ կերպով համարվում էր ռուսերենի մի բարբառ, բայց բելոռուսների ազգային լեզուն է։ Սրանք նույնպես անկախության ստացան սովետական կարգերի շնորհիվ։

2. Արևմտյան սլավական խումբ, որ պարունակում է հետևյալ լեզուները։

ա) լեհերեն, որ խոսվում է Լեհաստանում (23 միլ. խոսող)։ Այժմ անկախ պետություն է, որ բոլոր արևմտյան սլավների մեջ մեծագույնն է. հնագույն հիշատակարանը ԺԴ դարից է։

բ) Չեխերեն, որ խոսվում է Չեխիայում (7 միլիոն). այս երկիրը Ավստրիայի իշխանության տակ էր, բայց առաջին համաշխարհային պատերազմից հետո սլովակների հետ միասին կազմեց անկախ պետություն՝ Չեխո-Սլովակիա։ Հնագույն հիշատակարանը ԺԴ դարից է։

գ) Սորաբերեն կամ վենդերեն, որ խոսվում է Պրուսիայի և Սաքսոնիայի մի մասում՝ Չեխոսլովակիայից դեպի հյուսիս (130,000 անձ)։

դ) Պոլաբերեն, որ խոսվում էր Հաննովերի շրջանում՝ Էլբա գետից դեպի արևմուտք, ԺՀ դարում անհետացավ. ավանդված է մի քանի բնագիրներով, որ այդ թվականից հին չեն։

ե) Կաշուբերեն, որի հետազոտողները կենդանի են դեռ Լեհաստանում (154,000) և Դանցիգի շրջանում (331)։

զ) Սլովենցերեն, որ Գոմերանիայում էր խոսվում. մի քանի տարի առաջ կային մի քանի տասնյակ հոգի խոսող. այժմ այս լեզուն մահացել է։

3. Հարավային սլավական խումբ, որ պարունակում է հետևյալ լեզուները.

ա) Սլովեներեն, որ խոսում է 1,500,000 հոգի, կենտրոնա-

կան Սլովենիայում, որ մասն է Հարավսլավիայի գրական ճապաղների ժե գարից են։

բ) Սերբերեն (9 միլիոն), որ տարածված է Սերբիայում, Բոսնիայում, Հերցեգովինայում, Դալմատիայում և Չերնոգորիայում. մինչև առաջին համաշխարհային պատերազմը սրանցից միայն առաջինն ու վերջինն էին անկախ, իսկ մյուսները պատկան էին Ավստրիային։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո բոլորը միասին կազմեցին մի անկախ պետություն Հարավսլավիա անունով։ Հնագույն հիշատակարանը ԺՉ գարից է։

գ) Բուլղարերեն (4.800.000 տեն). խոսվում է բուլղարական անկախ պետության մեջ, Արևելյան Թուրքիայում և Մակեդոնիայում։ Բուլղարները բուն սլավ չեն, այլ պատկանում են ալթայական ցեղին, որ Ասիայից գաղթելով Եվրոպա՝ հաստատվել է Թրակիայում 680 թվին (Лескин. Гр. էջ 3) և շրջակա սլավ ժողովուրդների ազդեցությամբ կորցրել է իր լեզուն և յուրացրել սլավական մի բարբառ։ Ի գարում սալոնիկցի երկու քարոզիչ՝ Կյուրեղ և Մեթոդիոս՝ թարգմանեցին ավետարանը և ուրիշ կրոնական գրքեր՝ իրենց մայրենի լեզվին, որ Մակեդոնիայի մեջ խոսված սլավերենն էր։ Այս լեզուն, որ ամբողջ սլավական գրականության ամենահին հատվածն է, կոչվում է հին սլավոներեն և շատ անգամ հիշվում է լեզվաբանության մեջ։ Թեև հին, բայց նա մի բարբառ էր, ուստի սխալ կլինի կարծել, թե մյուս սլավական լեզուները ծագած լինեն նրանից։ Այնուամենայնիվ այդ լեզուն ունի շատ կարևոր ձև և անշուշտ ո՛չ միայն շատ բարբառ չէր բնդհանուր սլավական նախամորից, այլև հետևությամբ հասկացվում էր բոլոր սլավական ժողովուրդների մեջ։ Այնուհետև նա գործած եկեղեցական լեզու և ամեն մի սլավ երկրի մեջ ձևափոխվեց տեղական արտասանության համեմատ։ Այսօր Մակեդոնիայի և Բուլղարիայի սլավերենը շատ այլափոխված է և ներկայացնում է բոլոր սլավ լեզուների մեջ ամենից ավելի նորաձևը։ Բալթիկ-սլավական ճյուղերի միության մասին խոսում է Մեյեն, Les dial ind., էջ 41—48 և մեջ է բերում մանրամասն այն ձայնաբանական պատճառները, որով այդ երկու ճյուղերի միությունը հաստատվում է։ Միանգամայն ցույց է տալիս այս ճյուղի հնատիպ լինելու հանգամանքը։ Շեշտի փոփոխությունն է պատճառ դարձել (հատկապես առաջին վանկի շեշտը), որ յուրհներենը այնքան փոփոխվել է և հետա-

ցել է նախաձևից։ Բալթիկ-սլավականում այդպիսի երևույթ չկա և նրա մեջ շեշտը մնում է միշտ շարժական՝ հին հնդեվրոպական լեզվի նման։ Այս պատճառով էլ շատ բառեր դեռ մեծապես կրում են այն պատկերը, որ ունեն լեզվաբանների ձեռքով վերակազմված բառերը հնդեվրոպականում։

Հիշում ենք այստեղ նրա մեջ բերած բառերը.

լիթ. gy'vas «կենդանի»,
» ēsti «է».
ռուս. пеку' «եփում եմ».
» семена «սերմեր.
» нова «նոր»։

Բալթիկ-սլավական միացյալ ճյուղի արմատական բառարանը կազմել է. Trautmann. Baltisch-Slavisches Wösterbuch (Göttingen, 1923), որ շատ վստահելի և լուրջ գիտական գործ է։ Միայն սլավական ճյուղի արմատական բառարանն է. Berneker. Slavisches etymologisches Wörterbuch (Heid elerg. 1924). լույս է տեսել միայն մի հատոր, A—L տառերը (1760 էջ). երկրորդ հատորը անտիպ մնաց հեղինակի երկարատև հիվանդության և ապա՝ մահվան պատճառով։ Համարվում է ընտիր և վստահելի գիտական գործ։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՃՅՈՒՂ

Հնդեվրոպական ամբողջ ցեղի մեջ ամենից զարմանալին գերմանականն է իր հարափոխոխ բախտով։

Հույներից, լատիններից և նույնիսկ կելտերից ավելի ուշ մտան նրանք պատմության մեջ։ Նախապատմական շրջանում նրանք գրավեցին Սկանդինավիայի հարավը, որտեղից իջան դեպի Սև ծով. Դ դարում Դանուբի և Դնեպրի միջև հիմնեցին մի թագավորություն, որ շատով երկուսի բաժանվեց. օստգոթ և վիսիգոթ. Ե դարում՝ բարբարոսների արշավանքին, նրանք արշավեցին դեպի հարավ-արևելք և արևմուտք։ Վիսիգոթները արշավեցին Թրակիա, Հունաստան, Իտալիա և ամբողջ Իտալիայի և Գալլիայի մեծ մասին տեր դարձան։ Վանդալները գրավեցին Աֆրիկան, Միջերկրականի կղզիները (Սիցիլիա, Սարդինիա և Կորսիկա) և Իտալիան։ Օստգոթները նվաճեցին Իտալիան, Իլլիրիան, Պաննոնիան, Ավստրիան և հիմնեցին մի խոշոր կայսրություն։ Բուրգոնդացիները հիմնեցին իրենց պետությունը Գալլիայի և Հելվեցիայի սահմանում։ Վիսիգոթների մի

ուրիշ ճյուղ նվաճեց Հարավային Ամերիկան և Հիմնեց Միացյալ Նահանգները գրավեցին Բրիտանիան, և գերմանական այլ ցեղեր բռնեցին ամբողջ Հյուսիսային Եվրոպան. Այսպիսով, մի անգին տարածություն, Իսլանդիայից մինչև Հիմ և Ափրիկայից մինչև Սկանդինավիայի ծայրը բռնված էր գերմանական ցեղերով և լեզուներով։ Բայց այս հզորությունը շատ վտանգուկ եղավ. Չ դարում Հուստինիանոս կայսրը Բելիսարիոսի և Նարսես հայ զորավարի ձեռքով վերջ է տալիս գերմանական աշխարհակալության։ Ափրիկայի վանդալները, Իտալիայի օստգոթերը և Իսպանիայի վիսիգոթները նվաճվում են և նրանց բոլոր տիրապետությունները անցնում են Բյուզանդացիներին։ Ամեն տեղ, ուր որ հասել էին գերմանները, ջնջվում են, և նրանց լեզուները անհետ կորչում են։ Մինչև անգամ Հիմում, ուր գոթերը մինչև ԺԸ դար իրենց պետությունն ու լեզուն պահել էին, ջնջվում են։ Գերման ցեղերը ապում և ապում են միայն Հյուսիսային Եվրոպայում, Սկանդինավիա և մինչև Իսլանդիա. ավելի նոր ժամանակներում գալիս նոր աշխարհակալության Հատկապես անգլիացիները՝ գրավելով Ամերիկան, Ավստրալիան, Օվկիանիան, Աֆրիկան, Հնդկաստանը, Միջագետքը և Պաղեստինը, կազմում են մի հսկայական պետություն։ Այսպիսով գերմանական լեզուները տարածվում են ամբողջ աշխարհի վրա՝ ավելի քան ուրիշ որևէ լեզու։

Գերմանական ճյուղի լեզուները բաժանվում են երեք խմբի.

ա) Արևմտյան գերմանական, որ պարունակում է հետևյալ լեզուները.

1. Գերմաներեն, որ կոչվում է նաև բարձր գերմաներեն. Հնուքյան կողմից զանազանվում են հին բարձր գերմաներեն, միջին բարձր գերմաներեն և նոր բարձր գերմաներեն (հբգ, մբգ, նբգ)։ Հին գերմաներենը սկսել է գրի առնվել Ը դարից և գնում է մինչև ԺԱ դար, բայց մեզ հասած բնագրերներից յուրաքանչյուրը ներկայացնում է մի առանձին բարբառ, Լեզվի միությունչկա։ Գերմաներենի բարբառներից նշանավոր է ֆրանկոներենը, որի վրա է հիմնված և նոր գերմաներենը, որ արդի Գերմանիայի և Ավստրիայի լեզուն է։ Նախքան առաջին համաշխարհային պատերազմը նա տարածված էր և հետզհետե տարածվում էր ամերիկան, աֆրիկյան և ամերիկյան գաղութներում. բայց համաշխարհային պատերազմից հետո այդ

բոլորը խլվեց դաշնակիցների ձեռքով, և գերմաններենը դուրս վտարվեց։ Քաղաքական անկումից հետո գերմաներենի աճող նշանակությունն էլ վերացավ։ Բոլոր խոսողների թիվը է 81 միլիոն։ Արևելյան Գերմանիան, որ այժմ իր անկախ ռեսպուբլիկան է կազմել, իսկական ազգային վերածնության ուղին է մտել։

Գերմաներենի մի բարբառ է հրեական ժարգոնը՝ իդիշը (yiddisch), որ կազմված է գերմաներեն լեզվից՝ միացած բազմաթիվ հրեական փոխառությունների հետ։ Այս լեզուն ԺԲ դարում ընդլեց Գերմանիայում։ Այս լեզվով են խոսում այժմ Ռումինիայի, Ռուսաստանի և Ամերիկայի հրեաները։ Միայն Եվրոպայում հաշվում են $7^1/_2$ միլիոն, չհաշվելով Ամերիկայի հրեաներին (միայն Նյու-Յորքում մի միլիոն հրեա կա)։

Իդիշ լեզուն ունի երկու բարբառ. u բարբառ և o բարբառ. սրանց տարբերությունը միմիայն ձայնավորների մեջ է. բազաձայնները, բառական մթերքը և հատկապես քերականությունը շատ աննշան տարբերություն ունեն։ U բարբառով խոսում է ամբողջ հրեության $^3/_4$ մասը, իսկ o բարբառով խոսում է Միացյալ թագավորը։ Առաջինը ունի երկու ենթաբարբառ՝ ai և āi ենթաբարբառները։

Իդիշ լեզվի մասին ընդարձակ աշխատություն ունի, Birnbaum, Praktische Grammatik der yiddischen Sprache, Wien, (թվականը չի նշանակված, որ միշտ նոր համարվի),

2. Ստորին գերմաներեն (կոչվում է նաև հին սաքսոներեն), որի հնագույն հուշարձանը է Hēliand պոեման, 830 թվերից. կան նաև ավելի ուշ ժամանակից գրական կտորներ. ներկայումս խոսվում է ամբողջ գերմանական դաշտավայրում՝ Հանոսից դեպի արևելք. իբրև պաշտոնական լեզու կազմում է հոլանդերենը կամ ֆլամաներենը (13 միլիոն), որ գաղթականության միջոցով փոխադրվել է Հնդկաստան, Անտիլյան կղզիները և բուերների ձեռքով էլ՝ Հարավային Աֆրիկա։

3. Անգլերեն, որ անգլո-սաքսոնների արշավանքով մտավ Մեծ Բրիտանիա և Սկոտիա, դուրս մղելով կելտական լեզուն՝ տիրապետեց այնտեղ։ Ավանդված է Ը դարից։ Այս ժամանակի լեզուն սովորաբար կոչվում է հին անգլերեն կամ անգլո-սաքսոներեն, որ տևեց մինչև ԺԱ դարի վերջը, և իրեն էլ հաջորդեց միջին անգլերենը։ Նոր անգլերենը, կամ պարզապես անգլերենը, դաղութակալության և գաղթականության միջոցով տարածվեց ամբողջ

Հյուսիսային Ամերիկա և այժմ Աֆրիկայի ազգի լեզուն է. Ավստրալիա, Նոր Զելանդիա և Աֆրիկյան ու ավիկանյան բազմաթիվ գաղութներում։ Ջուտ անգլիախոս ժողովուրդների քիչ է 170 միլիոն շուրջ։ Անգլերենը ունի բազմաթիվ փոխառություններ գերմանական, կելտական հյուզերից, ինչպես և իտալերենից։ Ամենաշատ ազդվել է դանիերենից և ֆրանսերենից[1]։ Սրանց վրա էլ ևՔև ավելացնենք գիտական հունարեն բառերը, կանոնենք, որ նա իր բառապաշարով մի խոշոր խառնուրդ է հնդեվրոպական լեզուներից։

Ոմանք կարծում են, թե անգլերենը գերմաներենի գավակն է. բացարձակ սխալ. անգլերենը և գերմաներենը երկու եղբայրներ են, երկուսն էլ հարազատ գավակ մինուլն մոր, որից բաժանվել են ե դարում և ամել են առանձին առանձին (V. Nenry, Gr. comp. angl. all., էջ 4)։

4. Ֆրիզներեն, որ խոսվում է Հոլանդիայի հյուսիսային գավառներում (340,000 շուրջ)։

բ. Հյուսիսային գերմանական, որի հնագույն ներկայացուցիչն է հին հյուսիսային (nordique, vieux-norrois) կոչված լեզուն։ Այս լեզուն խոսվում էր Հյուսիսային Եվրոպայում (Սկանդինավիա, Իսլանդիա և Գրենլանդիա), երբ այդ երկրները և ժողովուրդները մի միություն էին կազմում։ Ավանդված է մեզ մի խումբ runական արձանագրություններով, որոնք բոլոր մյուս գերմանական հիշատակարաններից հնագույններն են։ Դրանք քիվ 100-ից ավելի են և գտնված են Շվեդիայում, Նորվեգիայում և Դանիայում. հնագույնները՝ 300 քվից կամ մի քիչ ավելի հին. ոմանք էլ համարում են Գ դարից և հասնում են մինչև 700 քիվը կամ Ը դար։

Runական այբուբենը ուներ 24 տառ, ահա մի քանիսը այդ տառերից.

X	P	N	ł	I	W	B	ᛏ	M	ᛦ
g	w	h	n	i	r	b	t	e	l

[1] Ֆրանսերենից վերցրած փոխառյալ բառերի քիվը այնքան մեծ է, որ ֆրանսիացիները կատակով ասում են, L'anglais est d'un français mal prononcé «անգլերենը վատ արտասանված ֆրանսերեն է»։ Ֆրանսերենից փոխառյալ բառերի քիվը համարում են 60%, գերմաներենից փոխառյալներինը՝ 30%, իսկ անգլերենի համար ասում է 10% (իհարկե այս հաշիվը վայրկյան է և գիտական ճշտություն չունի)։

Ռունները նաև գրքերի մեջ անցան իբրև գիր, որ տևեց մինչև 1150 թ., որից հետո սկսվեց լատինական այբուբենի գործածությունը։ Այնուհետև ռունները ծառայեն իբրև արձանագրության տառեր, Նորվեգիայում՝ մինչև ԺԴ դարի վերջը, իսկ Իսլանդիայում՝ մինչև ԺԶ դար։

ԺԱ դարում (1000 թվից սկսած) արդեն այս լեզվի մասնությունը քայքայվել էր և նրանից զարգանալով առանձնացան չորս հետևյալ լեզուները.

1. Իսլանդերեն, որ խոսվում է այժմ Իսլանդիա կղզում և Եվրոպայի ամենահեռավոր հյուսիսային լեզուն է։ Հին իսլանդերենը ավանդված է մեզ ԺԲ դարի ձեռագրներով և շատ անդամ հիշվում է լեզվաբանության մեջ։ Իրենց գրական նշանավոր գործն են էդդաները, որոնք գրված են ԺԱ դարում։ Արդի խոսողների թիվը է 100,000 շուրջ։

2. Նորվեգերեն (2,700,000 խոսող). խոսվում է Նորվեգիայում. շատ մոտ է իսլանդերենին և նրա մեկ բարբառն է համարվում. ծանոթ է գրեթե նույն ժամանակից։

Նորվեգիան նվաճվեց և գարձավ դանիական մի նահանգ 1380 թվին։ Դանիերենը դարձավ Նորվեգիայի պետական լեզուն։ Մի կողմից Դանիայի պետական պաշտոնյաների ներկայությունը, երկրորդ՝ քաղաքների բուրժուազիայի օտարասեր ձգտումները, և երրորդ կողմից՝ դանիերենի և նորվեգերենի չափազանց նմանությունը այնպես ազդեցին, որ կարճ ժամանակում նորվեգերենը մնաում իբրև գրական լեզու մինչև դարի վերջում և նրա տեղ անցավ դանիական նորամուտ բարբառը (riksmaal)։ Բայց գյուղացիները խոսում էին միշտ իրենց նորվեգերենով։ Այսպես ստեղծվեց լեզվի երկվությունը երկրի ներսում. պաշտոնականները և պաշտոնական անձինք գործածում էին դանիերենը և գրում այդ լեզվով. իսկ ժողովուրդը՝ նորվեգերենը։ Ամեն երկրի մեջ էլ միշտ եղել է գրական ու ժողովրդական լեզվի մեջ այսպիսի պայքար. գրագետները աշխատել են մոտենալ ժողովրդական լեզվին, իսկ հասարակ ժողովուրդն էլ ձգտել է մոտենալ գրական լեզվին։ Վերջապես դպրոցը հաղթել է, և ամեն տեղ էլ կազմվել է ժողովրդական ոգով գրական լեզու։

Բայց Նորվեգիայում հարցը հակառակն էր. գրական լեզուն օտար էր, հետևաբար և հայրենասեր ազգայինների համար խոսելիս։ Միևնույն ժամանակ ժողովրդասիրական և դեմոկրատական շարժումը պահանջում էր առավելություն տալ ժողովրդի լեզ-

վին, այն է՝ նորվեգերենին։ Մի գաղափար վիճը ուժեղանում է։ Aasen-ը համեմատելով ժողովրդական բարբառները, կազմում է նրանց վրա հիմնված մի նոր ազգային գրական լեզու, որ հին նորվեգերենը չէր։ Այս լեզուն կոչվում է landsmaal և Իբսենի ու Բյորնսոնի լեզուն է։ 1918 թվին սկսեցին կազմել այս լեզվի բառարանը։ Այս լեզուն երկրի խոսակցական լեզուն չէ, այլ միայն գրական, որ նորվեգիացիները աշխատում են գպրոցի միջոցով նաև խոսակցական դարձնել։

3. Շվեդերեն, խոսվում է Շվեդիայում, հարևան է նորվեգերենին, որին շատ էլ նման է ձևով. խոսող՝ 6½ միլիոն շուրջ։

4. Դանիերեն (3,400,000 շուրջ). խոսվում է Դանիայում և իր գանազան գաղութներում. շատ նման է շվեդերենին։ Դանիերենից տարբեր մի բարբառ է ֆերոյերենը, որ խոսվում է ֆերոյի կղզում (23,000 հոգի)։

գ. Արևելյան գերմանական խումբ. Այս խմբի մեջ մտնում են վանդալները, բուրգոնդացիները և գոթերը։ Վերջիններից ուշնենք գոթացերեն (կամ գոթերեն) լեզուն, որ հայտնի է մեզ ս. Գրքի թարգմանությամբ, կատարված Դ դարում, Վուլֆիլա եպիսկոպոսի ձեռքով։ Կան և մի քանի բզկներ նույն լեզվով՝ գրված Զ դարում, Իտալիայում։ Գրվածքի գոթական լեզվից ետում է մեզ 60 բան, որ համաքել է մի հոյանդացի՝ Բուսբեկ անունով, ԺԶ դարում։ Դրանից առաջ գոթերենը ջնջված էր ամեն տեղ։ Վանդալների լեզվի մասին մանրամասն քննություն ունի Wrede F., Uber die Sprache der Wandalen (Strassburg, 1886), բայց նյութի չգոյության պատճառով ա՛չ մի արդյունքի չի հասնում։ Սրա նման է W. Bruckner, Die Sprache der Langobarden, (Strassburg, 1895), որ մանրախուզ կերպով քննության է առնում այն ամենը, ինչ որ կա լոմբարդացիների լեզվի մասին, բայց նյութի չափազանց սպառության պատճառով նույնպես որևէ արդյունքի չի հասնում։

ԿԵՂՏԱԿԱՆ ՃՅՈՒՂ

Այս ճյուղի լեզուները առանձնապես նման են յատիներենին և մասամբ էլ պելազականին, որից հետևում է, թե կելտերը բնակվում էին նախապես այս երկու ճյուղերի հարևանության մեջ, այն է՝ արդի Բոհեմիայում և Գերմանիայի սահմանների։ Կարելի է ասել նույնիսկ, որ հնդեվրոպական հայրենի-

քից դուրս, կելտական և իտալական ճյուղերը միասին մի միություն են կազմել (իտալո-կելտական ճյուղ), որ հետո բաժանվել է երկուսի։ Կելտերը տարածվեցին դեպի արևմուտք, հյուսիս և հարավ Եվրոպայի ամբողջ տարածության մեջ։ Նախ մոտ Ք. ա. Ի դարում արշավեցին Բալկանները, Թրակիա և Մակեդոնիա, մինչև անգամ անցան Փոքր-Ասիա, ուր հիմնեցին Գալատիայի թագավորությունը. Դանուբ և Հենոս գետերի անուննները կելտական բառեր են և մինչև այսօր պահում են նրանց հիշատակը։ Հռոմեացիների ժամանակ կելտերը հյուսիսային Իտալիայով անցան Գալլիա, Իսպանիա և Բրիտանիա։ Այսպիսով Սկոտիայի հյուսիսային ծայրից մինչև Գիբրալթարի հարավային ծայրը բռնել էին։ Բայց ուր որ էլ գնացին կելտերը, արագությամբ ջնջվեցին, մեծագույն մասը լատինացավ, և այժմ նրանցից միայն 3 միլիոնից մի քիչ ավելի շունչ, որից մի միլիոն Վալլեսում, մի քիչ ավելին Ֆրանսիայի Բրետանյը գավառում, կես միլիոն Իռլանդիայում, մնացյալը Սկոտիայում և այլն, բայց բոլորն էլ երկլեզու և խոսում են նաև անգլերեն կամ ֆրանսերեն։

Կելտերը գրված են նաև Հյուսիսային Ամերիկայում և Ավստրալիայում. սրանք արդեն մայրենի լեզուն կորցրել են։ Նրանք էլ, որ գտնվում են ֆրանսիական տիրապետության տակ նույնպես իրենց լեզուն կորցնելուց հետո չեն կանգնած։

Ըստ այսմ կելտերի ամենաուժեղ ներկայացուցիչը միայն է Իռլանդիան, որ առաջին համաշխարհային պատերազմից հետո ինքնավարություն ստանալով՝ ձեռք բերեց նաև լեզվի հարատևության գրավական. և թեև բնակչության 9 տոկոսը միայն դեռ խոսնդներն, բայց խոսնդացիները տոգորված ամենաբուռն ազգասիրությամբ, աշխատում են դպրոցի, գրականության և պետության միջոցով կենդանացնել մեռնող իռլանդերենը և ընդհանուր լեզու դարձնել բովանդակ Իռլանդիայում, ջնջելով նույնիսկ խոսնդական բարբառները։

Իռլանդերեն խոսողների թիվը է 390,000 անձ։

Կելտական ճյուղը բաժանվում է 3 խմբի.

ա) Գալլերենի, որ հին կելտերենն է. այս լեզվից մեծ բան չի մնում. կան միայն զանազան հատուկ անուններ, որ պահված են հույն և լատին հեղինակների մոտ, և մոտ 50 արձանագրություններ, որոնք գտնված են Ֆրանսիայում։ Այստեղ գտնվեցին վերջերս մի խումբ խեցեղեններ, որոնց վրա գրված էին

գալլական 1—10 դասական թվականները (Ա դարից)։ Այս բոլորը գաղափար տալիս են մեզ կելտական լեզվի խրթնաբանության մասին, որ բավական հնամիջակ է, բայց ձևաբանության և շարադասության մասին ոչինչ չեն ասում, որովհետև մութ ու սակավաթիվ են։

Այս լեզվի մասին ընդարձակ և բարեխիղճ ուսումնասիրություն ունի. G. Dottin. La langue gauloise (Paris. 1918), բայց այս գիրքը ավելի ծառայում է ցույց տալու համար, թե ինչքան բան չգիտենք այս լեզվից։ Հեղինակը գովում է լեզվի կազմը և էջ 309 եզրակացության մեջ ասում է. «Գալլերեն լեզուն Հռովմի և Աթենքի նշանավոր լեզուներից ցած չէր։ Այդ նույնքան նրա սեփական արժեքի, որքան արդիական սիրուց է հանդեպ մեր նախահայրերի, որ պետք է ցավենք նրա համար, որ ավելի լավ չենք ճանաչում այս լեզուն։ Երևակայենք թե ինչ պիտի լիներ մեր ծանոթությունը հունարենի մասին, եթե մեր ձեռքի տակ ունենայինք մի հինգյակ կարճ արձանագրություն votives կամ գամբանական, մի օրացույց, 15 բառից բազկացած մի բառացանկ, 200 հատարակ բառ և մի քանի հազար հատուկ անուններ։

բ) Բրիտաներեն, այն է՝ Մեծ Բրիտանիայի լեզուն, որ անգլերենի միջոցով վաղուց և որ պարունակում է հետևյալ լեզուները.

1. Կիմրերեն կամ վելշերեն (1 միլիոն), որ Անգլիայի վալլես գավառի լեզուն է և ավանդված է մեզ Ը դարից սկսած, բավական հարուստ բանաստեղծական գրականությամբ։ Այս լեզվի ընդարձակ քերականություններ գրեց Jones M., A Welsh grammar (okxford, 1930)։

2. Կորներեն, որ խոսվում էր Անգլիայի հարավ-արևմտյան ծայրը՝ Կորնվալ գավառում. ավանդված է մեզ ԺԴ դարից մի բառացանկով և ԺԷ դարից՝ մի քանի բնագիրներով. մեռավ ԺԸ դարում։

3. Բրետոներեն, որ այժմ էլ խոսվում է Ֆրանսիայի Բրետոնյը գավառի գյուղերում (1 միլ. շուրջ). ծանոթ է մեզ Ը դարից՝ մի քանի բառացանկերով, իսկ ԺԴ դարից՝ գրական հատվածներով։ Սա գալլերենի ճեպագրերը չէ, այլ է գարում Մեծ Բրիտանիայից տաքսոնական արշավանքին գաղթածների լեզուն։

դ) Գաելական (gaëlique կամ goïdelic. goël կամ gal բառից, որ celt=կելտ բառն է և որից >են. գալիացի և այլն)։ Հա-

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԾԱՌ
ԱՐԻԱԿԱՆ ԻՐԱՆԱԿԱՆ
ՀԻՆԴԿ. ԿԱՄ ՊԱՄԿ. ՀԱՅԿԱԿԱՆ
ՍԼԱՎՈՆԱԿԱՆ
ՀԻՆ ՍԼԱՎ.
ՌՈՄԱՆ.
ՈՒԿՐ.
ԲԵԼՈՌՈՒՍ.
ԼԵՀԵՐԵՆ
ՍԱՆՍԿՐԻՏ
ՀՆԴԿ. ՀԻՆ ՊԵՐՍ. ՍԱՆՍԿՐԻՏ
ՀՆԴԿ. ՀԻՆ ՊԵՐՍ.

ակ է մեզ Դ դարից. օդամական արձանագրություններով. սրանք շատ կարճ են և քիչ նյութ են տալիս. կան նաև բազմաթիվ իլանդական բառացանկեր՝ սկսած Է դարից. և ավելի հետո՝ իլանդական բավական ձախ գրականություններ. սրանք ներկայացնում են հին իլանդերենը, որ ունի հարուստ և հնամիաձև հոլովում. Այս խմբից կենդանի են այժմ հետևյալ լեզուները.

1. Իլանդերեն, որ Իլանդիայի լեզուն է.

2. Ֆլովերեն. որ Ֆերոյի կղզիական լեզուն է (կոչվում է նաև ersø). 149,000 հոգի:

3. Մաճ կղզու լեզուն (Անգլիայի և Իլանդիայի մեջ): Ասում են մեկ 581 հոգի ժնթունները:

Կելտական լեզուները ծանոթ են մեզ ուշ ժամանակից և անկատար ձևով, առանց կանոնավոր գրականության, գլխավորապես բառացանկերով. այնպես որ արդյունքը լեզվաբանության համար փոքր և հաճախ անապատ է:

2. ՍԵՄԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Այս լեզվախմբին պատկանող լեզուները տարածված են այժմ հյուսիսային Աֆրիկայի արևմտյան եզերքից սկսած Միջերկրականի եզերքով մինչև Պարսկաստանի արևմտյան սահմանները: Թիսաններքը նրանց նախահայրենիքը ասում համարում էին Միջագետքը, բայց հիմա Արաբիան են համարում: Արաբիան, որ այժմ մեծագույն մասամբ անապատ է, նախապես բարեբեր մի երկիր էր, որ երեք մեծ գետերով ոռոգված էր և ապրեցնում էր բավական մեծ բնակչություն: Գետերը հետզհետե ցամաքեցին և երկիրը անապատ դարձավ:

Այսպիսով սկսվեց սեմական ժողովուրդների գաղթը նախապատմական շրջաններում դեպի Բաբելոնաստան, Ասորիք, Եգիպտոս և Եգիպտոս: Քանի Արաբիան գտնում է անապատ, գաղթը ավելանում և զարգանում է: Այն երկրներում, որ նորեկները հաստատվեցին, կազմեցին նոր ժողովուրդներ, այսպես Հետացոց քաղաքացիները, ասորեստանցիները, բաբելոնացիները, ասորիները, փյունիկեցիները, եբռայեցիները և արաբները: Սեմական արշավանքի մի մեծ շրջան ունեցավ պատմական ժամանակում՝ Է դարում, երբ արաբները դուրս գալով Արաբիայից, մտան հանուց կայսրության երկրները՝ Ասորիք և Եգիպտոս. այսուհետև նրանք ավելի ուշ ստրածվելով՝ արևել-

քից հասան Հնդկաստան և Մալայան կղզիները, հյուսիսից անցան Կովկասյան լեռները, հարավից Աֆրիկայի բնիկների խորքերը, և արևմուտքից մինչև Աֆրիկայի ծայրը, ուր ձուլելով բերբեր և լիբիական ժողովուրդներին, այնտեղից անցան Ջիբրալտարի վրայով Իսպանիա, որին երկար ժամանակ տիրում էին: Եկավ մի բոպե, երբ արաբները ոգոդելու էին ամբողջ Եվրոպան, բայց ֆրանկները կանգնեցրին նրանց արշավը, և այդ օրից արաբները սկսեցին հետ-հետ քաշվել: Նվաճված երկրներից շատերը լքեցին արաբները, այսպես՝ Կովկաս, Հայաստան, Իսպանիա, Պարսկաստան, Հնդկաստան, բայց մյուսների մեջ այնպես խոր հաստատվեցին, որ ձուլելով տեղական ազգարնակչությանը, նույնիսկ նախապես գաղթած ուրիշ սեմական ժողովուրդներին, նրանց արտարայրին: Մահմեդականության պատճառով արաբերենը գարձավ բոլոր 250 միլիոն իսլամների կրոնական և, հետևաբար, կրթական լեզուն:

Սեմական բնութագիրը պարունակում է հետևյալ լեզուները.

Աբբադերեն *(կոչվում է նաև քաղդեարեն).*— Այս լեզուն է, որ մեր թվ. 4000 տարի առաջ սեմական մի գաղութ Արաբիայից բերավ Տիգրիսի հովիտը, նվաճելով և ձուլելով տեղացի սումերներին: Եկվոր սեմականները հիմնեցին երկու մեծ պետություն՝ Ասորեստան և Բաբելոն, որոնց քաղաքական ու կուլտուրական խոշոր նշանակություններ ամենքին հայտնի է: Աքքադերենը այս երկու երկրների լեզուն է, որ իր հերթին կարող է բաժանվել ասուրերենի (Ասորեստանի լեզուն) և բաբելացերենի: Այս երկու բարբառները ծանոթ են մեզ հազարավոր բնեռագիր արձանագրություններով, որոնց հնագույնը 3000 թվից է. նրանց ընթերցումը լիովին հաջողված է: Իրրև կուլտուրական լեզու աքքադերենը չի մնացել միայն Ասորեստանում և Բաբելոնում, այլ գործածական է եղել նաև Փոքր-Ասիայում, Ասորիքում և Եգիպտոսում, գլխավորապես իրրև ուսումնական լեզու, և մանավանդ իրրև դիվանագիտական հարաբերությունների համար իր ժամանակի միջազգային լեզու: Նինվեի անկումը (606 մ. թ. ա.) և հետո էլ Բաբելոնի անկումը (539 մ. թ. ա.) աքքադերենի վարկը գցեցին. իրրև գիտական լեզու նա շարունակվեց հաղիվ մինչև մեր թվականության սկիզբը, որից հետո տեղի տվեց արամերենին՝ բոլոր առարևելքներում:

Քանաներեն.— Պաղեստինի հին լեզուն է, որից մի շարք

բառեր մխայն ավանդված են մեզ մ. թ. ա. 1400 թվերի բնաագիր քղքակագրություններից մեջ։

Մովաբերեն.— Այս լեզվից՝ որ Եբրայեցերենին շատ մոտիկ է, Եռւմ է մխայն մի արձանագրություն մ. թ. ա. Թ դարից (մովաբացիների Մեշա թագավորի կոթողը)։

Փյունիկերեն.—Շատ մոտիկ է Եբրայեցերեն լեզվին։ Ապրում էր Փյունիկեի և իր բազմաթիվ գաղութների մեջ (Կիպրոս, Կարթագեն, Սիցիլիա, Սարդինիա, Մալթա և այլն). այս լեզվից Եռւմ են բազմաթիվ արձանագրություններ, որոնց հնագույնը մ. թ. ա. Թ դարից է։ Նոր պեղումները երևան հանեցին բնագրի տառերով գրված մի խումբ արձանագրություններ, որոնք փյունիկերենի հնությունը հասցրին մ. թ. ա. ԺԴ դար։ Փյունիկերենը ընդվզեց տեղի տալով արամերենին՝ մեր թվականությունից մեկ դար առաջ։ Բայց Կարթագենում շարունակվում էր մինչև մ. թ. Դ դարը և էլ ավելի ուշ՝ մինչև արաբների արշավանքը, որոնց մեջ ձուլվելով անհետացավ բոլորս։

Եբրայեցերեն.—Հրեաների լեզուն է, որ Պաղեստին են գաղթել մ. թ. ա. ԺԴ դարի վերջերում, այս լեզվով են Աստվածաշունչը և մի քանի արձանագրություններ։ Աստվածաշնչի հնագույն հատվածները համարվում են մ. թ. ա. 1000 թվից, իսկ մնացածի մասի խմբագրությունը կատարվել է մ. թ. ա. Թ—Է դարերին, այսինքն Դավթից և Սողոմոնից անմիջապես հետո։ Ջ դարում Եբուսացիների կործանվելով և հրեաները Բաբելոն գերի տարվելով՝ եբրայեցերենին մնացածն է հասնում. հրեաները Բաբելոնում սովորում են արամերեն, բայց չեն մոռանում եբրայեցերենը, որ գերությունից դարձին (538 մ. թ. ա.) գեռ կենդանի գտնում են Պաղեստինում։ Հելլենական տիրության սկսում է եբրայեցերենը վերանալ և Ալեքսանդրի ժամանակ, երբ նվաճեց Պաղեստինը (332 թ.), այլևս եբրայեցերենը մեռավ, և նրա փոխարեն սիրեց արամերենը։ Այնուհետև հրեաները ցրվելով հունաց կայսրության զանազան կողմերը, մայրենի լեզու դարձրին հունարենը, այնպես որ կրոնական գրքերը հունարենի վերածելու պահանջ կար։ Գ դարում Աստվածաշունչը Ալեքսանդրիայի հրեաների ձեռքով վերածվեց հունարենի (յոթանասնից Թրգմ.), որ քրիստոնեական եկեղեցու մեջ ընդունվելով իբր սրբազան մատյան, սկսեց թարգմանվել աշխարհիս գրեթե բոլոր լեզուներով։ Ուր որ գնացին հրեաները, ընդունեցին տեղական լեզուն, բայց կրոնական արարողություն-

ների մեջ պահեցին միշտ եբրայեցերենը, որ և ուսանում և գրում էին։ Մեր Թվականության Ա և Բ դարերում խմբագրվեցին Միշնա, Թալմուդ և այլ կրոնա-իրավաբանական կանոնադրքեր, որոնց լեզուն հաճախ կոչվում է նոր-եբրայեցերեն, կամ թալմուդերեն և կամ միշնայերեն (այս լեզվի քերականության դրեց Segal, A grammar of Mishnaic hebrew, Oxford, 1927)։ ԺԲ դարի վերջում սկսվեց սիոնական շարժումը, որ ջանքեր գործ դրավ վերականգնելու եբրայեցերենի գործածությունը իբրև խոսակցական լեզու։ Պաղեստինի ինքնավարությունը ավելի նպաստեց այս նպատակի իրագործմանն։ Այժմ ստեղծվել է եբրայական դպրականություն։

Եբրայեցերենի մի այլ ձևն է սամարացիների լեզուն, որ նույնպես չնջվեց և վերածվեց նախ արամերենի, հետո հունարենի և այժմ էլ արաբերենի։ Սրանից տարբեր է սամարական արամերենը, որ խոսում և գրում էին սամարացիները մ. թ. ա. 400 մինչև մ. թ. 600, մոտ 1000 տարի՝ Պաղեստինում։

Արամերեն.— Արամեացիք թափառական մանր ցեղեր էին, որ թափառում էին Արաբիայի հյուսիսային կողմից մինչև Պաղեստինի, Միջագետքի և Բաբելոնի սահմանները։ Նրանք երբեք մի մեծ պետություն չկազմեցին իրենց թափառական կյանքի մեջ. ամենք հաստատվեցին Եդեսիա, Դամասկոս, Պալմիրա և այլն, որտեղերում հետզհետե սկսեցին խառնվել տեղական ժողովուրդների հետ։ Արամեացիների մի մեծ գաղութ գտնվում էր Հայաստանի ու քրդական լեռների հարավակողմում, ամբողջ Տիգրիսի շրջանում, որ կոչվեց Արամի երկիր, պրս. Sūristān. Ասորեստանում և Բաբելոնում մի խոշոր մեծամասնություն էին կազմում։ Ըստ այսմ մի արամերեն լեզու չկա, այլ զանազան բարբառներ։ Այս բարբառները, սակայն, հնության մեջ ունեցան մեծ նշանակություն իբրև քաղաքակրթության լեզու։ Արամեացիները դարձան պետական պաշտոնյաներ Ասորեստանում, Բաբելոնում և պարսկական կայսրության մեջ. և երբ պարսիկները նվաճեցին ասորեստանցիների ու բաբելացիների պետությունը, արամերենը դարձրին պետական կամ պաշտոնական լեզու։ Մ. թ. ա. Ը դարում արամերենը դառնում է այսպիսով միջազգային առևտրական և դիվանագիտական լեզու և կամաց-կամաց գործածությունից վտարում է աքքադերենը, փյունիկերենը և եբրայեցերենը և բռնում նրանց տեղը։ Տարօրինակ պիտի լիներ մեզ համար այսպիսի մի երևույթ. մի խոշոր կայսրություն իր

վարչական գործառնությունները կատարում է իր նվաճած նպատակ մի ժողովրդի լեզվով, որ ո՛չ ազգնցիկ գիրք ունի և ո՛չ էլ փառավոր գրականություն։ Բայց պարսիկները սովոված էին գիմել մի այդպիսի միջոցի, որովհետև պարսկական բնագրերը քիվի վրա չէին դրվում, այլ միայն արձանագրվում էին, բացի արանից իշխանները ոչ կարդալ գիտեին և ոչ գրել. կարելի չէր գտնել այնքան բազմաթիվ դպիրներ, արամեացիները նման միայն, որ այս պայմաններում լրացրին՝ ունենալով գրելու համար մի հեշտ այբուբեն։ Նա այսպիսով մրցակից հանդիսացավ հունարենի և կանդնեցրեց նրա առաջ Արևելքի շատ երկրներում։ Քրիստոնեության ժամանակ արամեերեն դարձավ ասորածարանների լեզու և գարձյալ մեծ դեր խաղաց Արևելքի քրիստոնյաների (որոնց մեջ նաև հայերի) կրոնական և ուսումնական գաստիարակության գործում։ Իր ուժի ամենից մինչև 650 թիվը, երբ արաբների առաջ կամաց-կամաց սկսի տալ սկսեց։ Այսօր այդ լեզուն խոսող ժողովրդի թիվը շուրջ 200,000 է։

Արամեերենի գանազան ձևերից նշանավոր են.

1. Ասորիների մոտ իշխանության լեզուն, ավանդված է մեզ մ. թ. ա. Ը դարից և բոլոր արամեական հիշատակարանների մեջ ամենահինն է։

2. Եգիպտոսի արամերեն, որ խոսում էին Եգիպտոսի հրեա գաղթականները, այս լեզվով են գրված Ս. Գրքի որոշ մասերը (Եզրաս, Դանիել). այս լեզուն շատերը կոչում են քաղդեարեն, որ հիմնված է հին մեկնիչների մի սխալմունքի վրա. քաղդեացիներ ոչքաչերեն լեզուն էր, որ նույն ժամանակներում արդեն չնչված էր։

3. Պաղեստինի արամերեն, որ գործ էին ածում նույն երկրի հրեաները, սամարացիները, քրիստոնյաները և ավելի ուշ՝ մկլիմիանները (որոնք բուն հրեաներ են՝ Հուստինիանոսի ժամանակ. Ջ դարում բոլոր քրիստոնյա գարձած, հիմա էլ՝ կաթոլիկ), այս լեզվով են Թարգումը (Թալմուդի և Միշնայի թարգմանությունը), սամարացիների նեգամատյանը, մկլիմիների ավետարանը, նմանապես հունարեն ավետարանի մեջ մտած մի խումբ արամեական բառերը։ Այս բարբառը չնչվեց Թ դարում՝ տեղի տալով արաբերենին։

4. Նաբաթերեն, որ խոսում էին նաբաթացիները, այս ժողովուրդը ապրում էր Հրեաստանի հարավից սկսած դեպի Արաբիա. հիշված է մ. թ. ա. Գ դարից սկսած. համարվում է

արաբ։ Սրանք Ք դարում մի առանձին քաղաքություն կազմեցին, որ տարածվեց հյուսիսից մինչև Դամասկոս, հարավից մինչև Հիջազի սահմանները (Քարային Արաբիա)։ Նրանք կարևոր դեր խաղացին երբև միջնորդ Արաբիայի և Արևմուտքի միջև։ Հռոմայեցիները դուրս եկան նրանց դեմ և երկար պատերազմներից հետո 106 թվին դրավեցին Պետրա մայրաքաղաքը։ Այնուհետև մի փոքր ժամանակ էլ տևեց նրանց իշխանությունը հարավում, բայց շուտով աչնչացավ։ Թեև նաբաթացիները համարվում են արաբ, բայց նրանց լեզուն արամերեն է, և նույնիսկ ներկայացնում է արամերենի հնագույն ձևերը։ Կրել է, սակայն, արաբ լեզվի էլ ազդեցությունը։

Նաբաթերեն լեզվի մասին ամբողջական աշխատություն ունի I. Cantineau, Le nabatéen (Paris, I, 1930 և II, 1932)։ Առաջին հատորը այս լեզվի քերականությունն է, երկրորդը պարունակում է 41 արձանագրություն՝ իրենց տառադարձությամբ և թարգմանությամբ։ Վերջում կա բնդարձակ ամբողջական բառարան։

5. Պալմիրերեն, որ խոսում էր Պալմիրայի ժողովուրդը. Պալմիրան Քարախ ծովից մինչև Միջերկրական ձգվող կարավանների գլխավոր կենտրոնատեղին էր և մեծ առևտրական նշանակություն ունեցավ մ. թ. ա. Ա դարում. կործանվեց 273 թվին հռոմայեցիներից. այնուհետև ժողովուրդը քիչ-քիչ արաբացավ։

Եղել են պեղումներ Պալմիրայում և Դուրա կոչված վայրում. գտնվել են դանազան արձանագրություններ, որոնք գրված են առանձին այբուբենով, որ սեմական ծագում ունի և նման է փյունիկականին։ Այս արձանագրությունների համեմատական կազմից Rosenthal F., Die Sprache der palmyrenischen Inschriften und ihre stelling innerhalb des aramäischen (Leipzig, 1935)։

6. Իբրանաճի արամերեն, որ թեև բնավ գրականության բարձրացած չի եղել, բայց շատ ավելի երկար դիմացրել է արաբերենին. դեռ այսօր էլ կա 3 գյուղ, ուր խոսում են այս լեզվով։

7. Ասորեստանի և Բաբելոնի արամերեն, որ պարսից պետության ներքաղաքականությամբ նույնիսկ պաշտոնական լեզու դարձավ։

8. Ասորերեն, որ Եդեսիայի կամ Ուռհայի արամերենն էր. այս շրջանը մ. թ. ա. 136-ից մ. թ. 217 թվերին անկախ պետություն էր. Եդեսական գրականում արամերենը շատ մշակվեց,

և երբ քրիստոնեությունը տարածվեց այս կողմերը, եկեղեցի տարաբնները դարձավ քրիստոնեական քարոզչության պաշտոնական լեզուն այն բոլոր ժողովուրդների համար, որոնք ցրված էին Միջերկրականի եզերքից մինչև Պարսկաստանի լեռները։ Ս. Գիրքը թարգմանվեց (Ե դար) այս լեզվով և կոչվում է Փշիթթա։ Առեղծվեց ևս գրականություն, մանավանդ Գ—Է դարերին, որով կրթվեցին Արևելքի զանազան ժողովուրդներ։ Հայերս էլ այս լեզուն էինք սովորում և այս լեզվով էինք կարդում Ս.Գիրքը մեր եկեղեցիներում՝ մինչև Մեսրոպ Մաշտոց։

Հունական սխալ անվանակոչությամբ այնուհետև այս լեզուն կոչվեց ասորերեն, մինչդեռ այս անունը հարմար էր միայն Ասորիքի արտաբնին։ Ավելի մեծ և անհանգուրժելի սխալ է այն, որ անում են ամենք մեր մեջ՝ խառնելով ասորիներին ասորեստանցիների հետ։

Ե դարում ասորիները երկու կրոնական դավանության բաժանվեցին, միաբնակ հակորիկյան և երկրնակ նեստորական։ Հունները հալածեցին նեստորականներին, և նրանք գաղթեցին ու տարածվեցին Պարսկաստանի մեջ։ Նրանց գլխավոր կենտրոնը դարձավ Մծբինը։ Այստեղ փայլեց ասորական եկեղեցու նշանավոր հայր Ս. Եփրեմը, որի գործերը թարգմանված են նաև հայերեն՝ Ե դարում (չորս հատոր, հրատարակված Վենետիկում)։ Մծբինից սկսվեց մի նոր քարոզչական գործունեություն, մի կողմից՝ դեպի հարավ՝ աֆրիկյան երկրները (Եմեն, Նուբիա, Աբիսսինիա) և, մյուս կողմից՝ դեպի արևելք՝ մինչև Թաթարիստան Հնդկաստան և ավելի հետո՝ Չինաստան, իր հետ տանելով նաև ասորական այբուբենը և լեզուն։ Այս ժամանակ կազմվեցին ույղուր, մանդոլ, կալմիկ, մանչու այբուբենները՝ ասորական այբուբենի հետևողությամբ և ասորիների ձեռքով։ Այս շրջանը ասորական գրականության ոսկեդարն է, որ Դ դարից գնում է մինչև Ը դար։ Արաբական արշավանքների ազդեցության տակ ասորերենը սկսում է նեղվել։ Ը—Թ դարերում, մի կողմից՝ հունարենի և, մյուս կողմից՝ արաբերենի ազդեցության տակ նա սկսում է անկում տալ։ ԺԳ դարում Գրիգոր Բար-Հեբրեոս մի նոր փայլ է տալիս ասորական գրականության, որ նրա մահով էլ վերջանում է։ Արաբերենի ճնշման տակ ասորիները կորցնում են իրենց լեզուն և արաբախոս են դառնում։ Ասորական տառերով գրված արաբերենը կոչվում է քարշունի։

9. Մանդայերեն (սխալմամբ նաև սաբայերեն) է կոչվում հարավ-արևելյան կողմը, իրանական հավատալիքներով խառն արամեական մի համալեզուն, որ մնում է մինչև այժմ:

10. Նոր-ասորերեն, որ ասորիների կենդանի լեզուն է Ուրմիայում, Միջագետքում և Հայաստանի մի քանի գյուղերում: Այս լեզուն գրականության բարձրացավ հետևյալ հանգամանքներում:

Ինչպես ամեն մի նոր լեզու հին համեմատությամբ ներկայացնում է զանազան տարբերություններ, որոնք ըստ նորերի ազավազության են համարվում, այսպես նաև՝ այս նոր ասորերենը: Երբ ամերիկացի քարոզիչները հաստատվեցին Ուրմիա, բողոքականության տարածելու համար ասորիների մեջ, քարոզիչներից մեկը՝ Պերկինս, լուսամիտ գաղափարն ունեցավ գրականության բարձրացնելու այդ բարբառը: Եվ ինչպես հայերն ու հույները իրենց գրական աշխարհաբարը կազմելու համար նոր լեզուն կամ բարբառը հին լեզվի (գրաբարի) նմանության համար փոփոխեցին, ուղղեցին և կանոնավորեցին, նույնպես նաև՝ հիշյալ ամերիկացի քարոզիչները: Այսպես հիմնվեց նոր-ասորերեն լեզուն ու գրականությունը: Բազմաթիվ գրքեր ու թերթեր լույս տեսան: Քարոզիչներից մեկը՝ Stoddard կազմեց այս նոր գրական լեզվի քերականությունը:

Արաբերեն.— Արաբիայի զանազան ժողովուրդների խոսած լեզուն է. ունի զանազան բարբառներ: Նախքան Մուհամմեդը արաբները ունեին գեղեցիկ բանաստեղծություններ. նույն լեզվով գրվեց նաև Ղուրանը (է դար), որ նաև Մեքքայում խոսված արաբերենն էր: Դարձավ այնուհետև իսլամի պաշտոնական լեզուն, և որովհետև, ըստ մահմեդական կրոնի, արգելված էր թարգմանել Ղուրանը որևէ լեզվի, ուստի և մնաց միակ գրական լեզուն: Ո՛չ մի ուրիշ բարբառ չբարձրացավ գրականության: Իսլամի և արաբական աշխարհակալության հետ արաբերենը տարածվեց շատ հեռուները, Իսպանիայից մինչև Ջավա կղզին. այս տարածմամբ թեև առաջացան բազմաթիվ բարբառներ, բայց գրական լեզուն մնաց միշտ միևնույնը՝ Ղուրանի սրբազան լեզվի պատճառով, որ ամեն օր մահմեդականը մի քանի անգամ պիտի կրկներ աղոթելիս: Արաբալեզու գրականությունը աշխարհիս ամենահոյակապ գրականություններից մեկն է, և մեծ չափերով ազդել է ուրիշ լեզուների, մանավանդ իսլամ ժողովուրդների լեզվի վրա: Իսպաներենը, թյուրքերենը, պարսկերենը, քրդերենը,

աֆղանները, հինդուստանին, մալայները և այլն լցված են բազմաթիվ փոխառություններով։ Արաբերեն գրական լեզուն մի չափազանց հարուստ լեզու է, որի ճոխությանը նպաստել են ոչ միայն ուսումնականների հորինած բազմաթիվ բառերը, այլև գանազան բարբառներից ներմուծված ասպական բառերը։ Այս բարբառներից նշանավոր են Հիջազի, Եմենի, Բազդադի, Ասորիքի, Եգիպտոսի, Մաղրբի (քերբեր), Մարոկկոյի, Ալժիրի, Թունիսի և Տրիպոլիի բարբառները։ Հետաքրքրական են՝ Մալթայի քրիստոնյաների արաբերենը (գրվում է լատինական տառերով), անգլալուզերենը, որ Իսպանիայում խոսված ու գրված արաբերենն է Ը–ԺՉ դարերում, հասանի, որ Մավրիտանիայի մեջ խոսված արաբերենն է և, ծառայելով իբրև միջազգային լեզու բերբեր և սուդանցի զանազան ժողովուրդների մեջև, հետզհետե կլանում է ասպացիների բնիկ լեզուները։ Այսօր բոլոր արաբախոս ժողովուրդների թիվը է 37 միլիոն չուրչ։ Սուդանի լեզուն էլ հարազատ արաբերեն է և նրա քերականությունը գրել է Worsley, Sudânese grammer (London, 1925)։

Հարավային արաբերենը.— Հարավային Արաբիայի (Եմենի) գանազան ժողովուրդների լեզուն է, որ ծանոթ է հին արձանագրություններով. կոչվում է նաև հիմյարի, սաբեական և այլն։ Այսօր էլ գեռ կենդանի է այս լեզուն։

Այս շրջանում այժմ երեք կարևոր լեզու կա. մեհրի լեզուն, Սոքոտրա կղզու լեզուն (Բար-ել-մանդեբի մոտ) և շհաուրի լեզուն՝ Պարսից ծոցի վրա։ Երեքն էլ անկախ լեզուներ են, առաջինը ավելի նման է եթովպականին և ոչ թե արաբերենին։ Երեք լեզուներն էլ ուսումնասիրել է Մ. Բիանկիր, որ նախկին մեհրի լեզվին մի հատոր, երկրորդին մի հատոր և երրորդին 4 պրակ՝ Ա և Բ քերականությունը, Դ բնագրերը և Դ բառարանը։

Երևակայելին կամ հարևերեն.— Եթովպիան Աֆրիկայի բնագրածակ երկրներից մեկն է, կարծիր ծովի ափերում կոպտ փրոված, քուշյան լեզուներով հայրենիքն է, մեր թվականությունից շատ գարեր առաջ՝ Հարավային Արաբիայի սեմականների մի ճյուղը (Հաբեշ) գաղթից այս երկիրը և Ա դարում արդեն պետություն էր հիմնել։ Այսօր այս պետությունը շատ բնագրածակվել է և ունի 10 միլիոնից ավելի ժողովուրդ, որի մեծ մասը խոսում է սեմական հաբեշերեն լեզվով. մնացյալը՝ քուշյան և փոքր չափով էլ սուդանական լեզուներով, որոնք հետզհետե տեղի են

ասլիս պետական լեզվին։ Հարևշներենի հնագույն վիճակը բան ուղայիների կոչվում է գեզ, որ ավանդված է Դ դարից, երբ հարևշները ընդունեցին քրիստոնեությունը. Ս. Գիրքը թարգմանվեց այս լեզվով և պահում է իր դասությունը հարևշ եկեղեցու մեջ՝ իբրև գրաբար, որի աշխարհաբարներն են տիգրիներն և տիգրե լեզուները։ Հարևշական տարբեր լեզուներ են ամհարա, հարարի և այլն։

Սեմական լեզուները իրար չափազանց մոտիկ են թե բառերի հնչական նմանության կողմից, և թե քերականական հոլինվածության մեջ. լեզվից լեզու եղած նմանությունը այն չէ, ինչ որ, օրինակ, լատիներենից հունարեն կամ հայերեն, այլ ֆրանսերենից՝ իտալերեն կամ բուլղարերենից՝ ռուսերեն, այնպես որ նույնիսկ ոչ-մասնագետի համար սեմական լեզուների ցեղակցությունը զգալի և ըմբռնելի է։ Դրա համար է, որ դեռ ժ դարում մի հրեա ուսումնական (Եհուդա բեն Կորայշ) լեզվաբանական դիտության հիմնադրություններից դարեր առաջ, զգացել էր, թե սեմական լեզուները մի նախալեզվի ծնունդ են։ Այս նմանության պատճառով է, որ նվաճյալ սեմական ժողովուրդները արամերեն, ասորերեն, եբրայեցերեն և այլն, այնպես հեշտությամբ ուղի ալին և ձուլվեցին նորեկ արաբերենի մեջ (Տես և մեր կարծիքը Սինասարի մասին, էջ 61)։

3. ՔԱՄՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Քամյան լեզուները հնապես բռնում էին ամբողջ հյուսիսային Աֆրիկան՝ ծովից մինչև Սահարա, և կարմիր ծովի եզերքով, Եթովպիայի վրայով՝ մինչև հասարակածը։ Բաժանվում են 3 ճյուղի.

1) Եգիպտական.

2) Քուշյան.

3) Լիբիո–բերբերական։

Նախ, Եթովպացիները մասն քուշյանների մեջ և ձուլեցին սեղական գանագան լեզուներ։ Ավելի հետո մահմեդական արաբները էլ դարից սկսած Արաբիայից խուժելով Աֆրիկա, հետզհետե իրենց ձուլեցին քամյան ժողովուրդներին և այսօր շատ քիչ բան է մնացել նրանցից։

Եգիպտական լեզուն բոլորովին ջնջված է. լիբիո–բերբերենից մնում են միայն կղզյակներ։

Եգիպտացիները ծանոթ է մեզ մ. թ. ա. 4000 թվից. նա աշխարհս ամենահին գրավոր լեզուներից մեկն է. հազարավոր մեհենագիր արձանագրություններ, որոնց այրուրենը մինչև 3000 նշանից է բազկացած, ավանդում են մեզ այդ լեզուն գրից գար կրած ձևափոխություններով հանդերձ։ Դժբախտաբար մեհենագիր գրությունը չի տալիս մեզ ճիշտ հնչումը։ Եգիպտացիների շարունակությունն է դպիերենը, որ սկսել է գրի առնվել Գ գարից և Է գարից սկսել է ունի տալ արաբերենի առաջ. խոսվում էր դեռ ԺԷ գարում, իսկ այսօր գործ է ածվում միայն իբրև գպիների (քրիստոնյա եգիպտացիների) եկեղեցական մեռյալ լեզու։

Եգիպտացիների քերականությունն ունի Gardiner (Oxford, 1927. փառանգ հրատարակությամբ)։

Լիբիա-բերբեր անունով հասկանում ենք այն բոլոր բնիկ աֆրիկացի ժողովուրդները, որ բնակվում են Եգիպտոսի արևմտյան սահմանից սկսած մինչև օվկիանոսը և Կանարյան կղզիները։ Անցյալում այս ժողովուրդները մեծ դեր չեն խաղացել, հայտնի է միայն նումիդացիների պետությունը 238—148 մ. թ. ա.։ Հնից մեզ են մի քանի տարբեր կարճ արձանագրություններ, մ. թ. ա. Գ դարից, որոնք լավ կարդացված չեն։ ԺԲ դարում բերբերների Շլյոհ ցեղի մեջ ծագեց այմոշագների կրոնը, որի իբր հետևանք հիմնվեց Ազմոշագի պետությունը, և առանձին գրականություն, որ այժմ կոչել է Արաբերենը հետագայում բոլորի համար գործել է գրական և հետո՝ մայրենի լեզու, որով բերբերները հետզհետե ջնջվում-անհետանում է։ Այսօր բերբերական լեզուներով խոսող ժողովրդի թիվը հասնում է 7 միլիոնի. գլխավոր լեզուները են. Մառոքայում՝ տաշելհիթ, Ալժիրում՝ զենագա, Մարոկկոյում՝ ռիֆերի (3 միլիոն) և շլյոհների լեզուն, Ալժիրում՝ զենատա. կաբիլերենը, և Կանարյան կղզիների հին լեզուն, որ հիմա խոպանելենի առաջ ջնջվել է։

Քուշյան անունով կոչվում են Եթովպիայի նախարնիկները, որոնցից շատերը իրենց մայրենի լեզուն կորցրած, խոսում են Եթովպացիերեն. բնիկ լեզուներով խոսող ժողովրդի թիվը է 6 միլիոն. այդ լեզուներից նշանավոր են ամհարի և գալլա։ Քուշյանները ո՛չ մի գրականություն չեն ունեցել և չունեն։

Բամբարա լեզուների ցեղաբանության համար գանագան կարծիքներ կան. ամենը 3 ճյուղերը դնում են առանձին-առան-

ձին և սեմականների հետ միասին համարում են մի լեզվախումբ, որ կոչում են քամյան-սեմական. ուրիշներ քամյան 3 ճյուղերը կցում են աֆրիկյան մյուս լեզուների հետ, այնպես որ Աֆրիկայի հյուսիսային ծայրից մինչև Բարեհուսա հրվանդանը լինում է մի լեզվական բնաշանիք։ Վերջնական խոսքը ասված չէ։

4. ԱՖՐԻԿՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Այս անվան տակ միանում են այն բոլոր լեզուները, որոնք խոսվում են Աֆրիկայի ցամաքամասի վրա, սկսած Սահարայի հարավային կողմից (Նուբիան ներս առնելով) մինչև Բարեհուսա հրվանդանը (բացառությամբ Հոտենդոտների, Բուշմենների և Մադագասկարի)։

Այս ընտանիքը բաժանվում է երկու խմբի.

1. Սուդանական լեզուներ.

2. Բանտու լեզուներ։

Սուդանական խումբը բռնում է ամբողջ հյուսիսային մասը, իսկ բանտու խումբը՝ հարավային մասը. երկուսի միջսահմանն է Գվինեայի ծոցաբերանից կամ Քերնանդո-Պո կղզուց մինչև Զանզիբար քաշված թեք գիծը, որ և գրեթե համապատասխանում է հասարակածին։

Սուդանական ընտանիքի լեզուները թվով շուրջ 435 են և կազմում են 16 խումբ. ունեն ընդամենը 50 միլիոն խոսող. առհասարակ հետամնաց ցեղեր են, և 5 կամ 6-ը միայն գիր ունեն։

Բանտու լեզուներից ոմանք ծանոթ են ժէ դարից. նկատելի է, որ 400 տարվա ընթացքում նրանք չեն փոխվել։ Բանտու լեզուներով խոսող ժողովրդի թիվը համարվում է 50 միլիոն շունչ։ Գիտուններդ վերջերս առանձին ուշադրության առարկա դարձրին այս լեզուները. կազմվեց մինչև իսկ նրանց համեմատական քերականություններ և նախալեզուն։ Կազմվեց հազար բառի համեմատական բառարան։ Կարծիք կա, որ աֆրիկյան լեզուները նույն են քուշյան լեզուների հետ և, հատկապես, եգիպտացիներին ճյուղավորություններն են, և սրա համար էլ ոմանք աֆրիկյան ընտանիքը կոչում են նախաքամյան։ Այս ճյուղավորությունները չափազանց հին չեն. Բանտու նախալեզուն հազիվ մեր թվականության է հասնում։

Բանտու լեզուների ուսումնասիրության գրգռվեց առաջին անգամ Բլեքը (Bleck), *որ 1850-ական թվերին գրեց „A com-*

parative grammar of South African languages" աշխատությունը։ Սա թեև կիսատ Յաց, բայց շատ օգուտ տվից գիտությանն նրանից հետո Տորրենն (Torrend) հրատարակեց „Comparative grammar of the South African Bantu languages" (1891), որ շատ ավելի ճոխ էր, քան առաջինը։ Սակայն հեղինակը չկարողացավ լեզվաբանական ճիշտ օրենքներ գտնել։

Բանտու լեզուներից մեկի ուսումնասիրությանը նվիրված օքանչելի մի գիրք ունի Ն. Յունոդը (N. Yunod), Grammaire ronga (Lausanne, 1896), ուր հեղինակը թեև միայն մի լեզու է քննում, բայց այդ լեզուն կենարան դարձնելով՝ ուսումնասիրում է ամբողջ բանտու խումբը պարզ լեզվով, բացորոշ ոճով, ընդարձակ ձևով և հիմնավին պատճառաբանված։

Մայնհոֆը (Meinhof) հրատարակեց „Grundriss einer Lautlehre der Bantu Sprachen (Leipzig, 1899), որ լավ ընդունելություն գտավ և շատ հետաքրքնիր տեղեկություններ տվեց։ Գիրքը երկրորդ տպագրության արժանացավ 1910 թ.։ Նույն հեղինակի գործն է Grundzüge einer vergleichenden Grammatik der Bantu Sprachen (Berlin, 1906)։

Ավելի ուշ Մայնհոֆը գերմաներեն լեզվով գրեց բանտու լեզուների բնչհանուր ձայնաբանության, ապա՝ գիրքը քարոզմանավից անգլերենի. Introduction to the phonology of the bantu languages (Berlin, 1932). այս գրքում գտնում ենք նաև բանտու լեզուների 490 բայարմատների համեմատական ցուցակը (էջ 185—233)։

Աֆրիկյան լեզուների քննության համար մեծ արդյունքի է հասել օրիորդ Լ. Համբուրգերը (L. Homburger), որ մի քանիր հոդվածի մեջ (MSL. 19, էջ 224—242) հատուկուսում է ամբողջ աֆրիկյան բնտանիքի նույնության քե քերականության, և քե բառարանի համեմատական քննության։ Առաջ տանելով իր քննությունը (MSL. 23, էջ 168 և 277—312, BSL. № 89, էջ 1—50) և ուսումնասիրելով հատկապես փոքր լեզուն, Համբուրգերը գտնում է, որ եգիպտացիներն ու դրսի չարունակությունն է (և ոչ թե նրան ցեղակից)։ Եգիպտացիները տարածվել է Աֆրիկայում այնպես, ինչպես այժմ արաբներն է տարածվում, և կազմել է զանազան լեզուներ։

5. ՀՈՏԵՆԴՈՏ ԵՎ ԲՈՒՇՄԵՆ

Այս ժողովուրդները բնակվում են Աֆրիկայի հարավ-արևմտյան կողմի անապատներում և անապատներում, Բարեհուսո հրվանդանի մոտերքում: Հոտենդոտները[1] թվով 250 000 են, բուշմեննները[2] 50 000: Այս լեզուները պատկանում են միևնույն լեզվախմբին: Նրանց նախահայրենիքը դտնվում էր Աֆրիկայի հյուսիսային կողմերը: Ոչ հեռու անցյալում հոտենդոտները բռնել էին Զամբեզի գետից հարավ գտնված ամբողջ երկիրը. հյուսիսից բանտուները և հարավից եվրոպացիները քշելով նրանց ուժգնորեն արդի փոքր սահմանում: Իրենց թիվը էլ նվազել, և այժմ ապրում են նրանք ցանուցիր խմբակներով: Իրենց ցեղակից են համարվում նաև հասարակածի անապատներում բնակվող ամամոբթները: Հոտենդոտների լեզուներից քննված է հատկապես ևամա լեզուն: Նույն ճյուղին է պատկանում կորաևա լեզուն: Այս ժողովուրդը, որ հազիվ 1000 շունչ է, ընդունել է քրիստոնեությունը և թողել է իր լեզուն. Մեյնգարդը (Maingard) դտնել ծերուններին մի խումբ, որոնց գլխավորները 100-ամյա էին և դեռ չէին մոռացել իրենց բնիկ լեզուն, ուսումնասիրել է այն և հրատարակել (1932):

6. ԱՎՍՏՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Շմիդտ անունով գերմանացի միսիոները հաստատից վերջերս այս բնտանիքի գոյությունը: Նա տարածվում է մի շատ ընդարձակ տարածության վրա և դնում է Մադագասկար կղզուց մինչև Սպարզության կղզիները: Բաժանվում է երկու ճյուղի.

1. Ավստրո-ասիական լեզուներ.
2. Ավստրոնեզյան *կամ* մալայո-պոլինեզյան լեզուներ:

Ոմանք այս երկուսի միասնությունը չընդունելով, առանձին-առանձին լեզվախմբեր են համարում:

Ավստրո-ասիական լեզուները խոսում են Հնդկաստանի արևելյան մասից մինչև Աննամ. բայց ոչ թե միասար տարածությամբ, այլ այս ու այն կողմ ցանուցիր: Հնագիս նրանք բռնած էին ամբողջ տարածությունը. չին-տիբեթական, դրավիդյան և հնդեվրոպական դաղթերը նկան հետզհետե դրավելու

---

1 *Բուն նշ. հոլանդերեն* Hottentotte *ձևմամբ:*

2 *Բուն* Bosjesman *ձանաուռի մարդ:*

նրանց տեղը, շատերին ձուլեցին, և այժմվա ցանուցիր վիճակը գրա արդյունքն է։ Բաժանվում է 3 մասի, արևմտաքում (Հինդկաստանում) գանվում են մունդա լեզուները, մինչև մասում մոն-քմեր լեզուները, արևելքում՝ աննամերենը։ Մունդա խումբը ունի մինչև 30 լեզու (3 միլիոնից ավելի խոսող). մոն-քմեր խումբը պարունակում է 25 լեզու, որոնցից գլխավորն է քմեր կամ կամբոջերեն, որ ավանդված է 7-րդ դարից։ Աննամերեն խոսողների թիվը է 14 միլիոն, գրական հնագույն հիշատակարանը ժե դարից է։ Աննամերենը մեծապես ազդված է չինարենից։ Աննամի հարավային գավառները կազմում են կոխինչին (կոչինչին) երկիրը, որի լեզուն՝ կոխինչիներեն (կոչինչիներեն)՝ նույն է աննամերենի հետ։

Մալայո-պոլինեզյան լեզուները սփռված են մի ընդարձակ տարածության վրա, Մադագասկար կղզուց մինչև Զատկության կղզին, որ անում է լայնության 210 աստիճան։ Աշխարհագրականորեն նա պարունակում է 4 մաս. Ինդոնեզիա, Մելանեզիա, Միկրոնեզիա և Պոլինեզիա։ Ինդոնեզիան պարունակում է Մադագասկարը, Սումատրան, Ջավան, Բորնեոն, Ջելեբեսը, Ֆիլիպինյան կղզիները ու Ֆորմոզան և նրանց միջև մինչև Նոր-Գվինեա գանվող մանր մանր կղզիները, որոնք ունեն 30 միլիոն ազգաբնակչություն. գրանց լեզուների ու բարբառների թիվը հասնում է 170-ի, որոնց մեջ ամենագլխավորներն են մալայերենը և ջավայերենը, վերջինը՝ ավանդված է 800 թվից։ Մելանեզիան պարունակում է հատարակածից հարավ մի խումբ կղզիներ, որոնցից նշանավորներն են Բրնատնյը կղզին, Սոզոմանյան արշիպելագը, Նոր-Հիբրիդեան, Սանդվիչյան, Ֆիջի և այլն կղզիները։ Այս բոլորը դուրկ են գրականությունից։ Միկրոնեզիան պարունակում է հատարակածից հյուսիս գանված մի խումբ մանր-մունր կղզիներ, որոնցից նշանավորն են Մարշալյան, Կարոլինյան և Մարիանեան կղզիները։ Պոլինեզիան պարունակում է Մելանեզիայի արևելյան և հարավային կողմերում գանված կղզիները, որոնցից նշանավոր են Թահիթի, Նոր-Զելանդիա, Մարքիզյան, Հավայան, Հանոլուլու կղզիները. այս կղզիների հպատանում, գեղահասակ ժողովուրդները շատ արագությամբ ջնջվում են դպրությաբանների յմի առից։

Այս բոլորից դուրս Նոր-Գվինեայում և շրջակա մանր կղզիներում կան մի խումբ լեզուներ, որոնք մի ընդհանուր անունով կոչվում են պապուասյան և որոնք դիտուններից

ամանք կցում են մալայա-պոլինեզյան ճյուղին, ուրիշներ՝ ավստրալիական լեզուներին, ուրիշներն էլ՝ բոլորովին անկախ են համարում։

7. ԴՐԱՎԻԴՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Այս լեզուները խոսվում են Հնդկաստանի ամբողջ հարավային մասում և Ցեյլոն կղզու հյուսիսային կեսում, մի առանձին հատված էլ գտնվում է Բելուջիստանում։ Բոլոր խոսողների թիվը 64 միլիոն է, այսինքն՝ ամբողջ Հնդկաստանի ազգաբնակչության $^1/_5$-ը։ Ենթադրվում է, որ դրավիդյան լեզուները հնագույն ժամանակներում ավելի մեծ տարածություն ունեին, բայց հնդեվրոպական հնդիկների գաղթը քշեց նրանց դեպի հարավ, այսօր էլ հնդկական լեզուների առաջ նրանք հետզհետե տեղի են տալիս։

Դրավիդյան լեզուներից գլխավորն է թամուլերենը, որ խոսվում է Մադրասից մինչև Ցեյլոնի միջագիծը (19 միլիոն աճն)։ Սրա մի բարբառն է մալայալամը, որ խոսվում է Մալաբարի եզերքում (7 միլիոն) և, առանձին գրականություն ստեղծած լինելով՝ համարվում է անկախ լեզու։

Թամուլերենի գրականությունը գոնե 1000 տարվա հնություն ունի և սանսկրիտից հետո հնագույնն է ու ճոխագույնը՝ Հնդկաստանում. ունի զեղեցիկ գեղարվեստական գործեր, որոնցից մի քանիսը թարգմանված են եվրոպական լեզուներով։

Մյուս լեզուներից են կանարա (10 միլիոն), տելուգու (24 միլիոն)՝ դրավիդյաններից ամենամեծը, որոնք նույնպես ունեն հին ու ճոխ գրականություն. Ցեյլոնցիները մանր լեզուներ են. այդպես և՝ բրահուի լեզուն, որ խոսվում է Բելուջիստանում (174 000 հոգի) և կազմում է բոլորովին առանձնացած մի կղզի։

Այս լեզվաքննականի ուսումնասիրության նվիրված լավագույն աշխատությունն է Caldwell, A comparative grammar of the Dravidian or South-Indian family of languages, *որ ունի երեք հրատարակություն (Գ տպ., London, 1913)։*

8. ԱՆԴԱՄԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Մեծ և փոքր Անդամանյան կղզիների խումբը գտնվում է Բենգալյան ծոցում, Հնդկաստանի արևելյան կողմը, Ցեյլոնի, Միամի և Սումատրայի միջև, ընդամենը 24 000 բնակիչ ունեն,

բնակիչները, անդամանյան գամաճներ, խոսում են գանագան լեզուներով, որոնք պատկանում են մի առանձին լեզվաբնատանիքի և արևէ ուրիշ լեզվաբնատանիքի հետ կապ չունեն։ Այդ լեզուների քիչ է 12։

9. ՉԻՆ-ՏԻԲԵԹԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Այս անվան տակ լեզվաբանները միացնում են այն բոլոր լեզուները, որ խոսվում են մի շատ բնդարձակ տարածության վրա՝ սկսած հիմալայան լեռներից մինչև օվկիանոս։ Բաժանվում է 3 ճյուղի։

1. Տիբեթ-բիրմանական, 2. Չինական, 3. Թայ։

Տիբեթ-բիրմանական ճյուղը գրավում է Տիբեթը և Բիրման, բնդամենը 20 միլիոն խոսող ունի։ Մեր քվականությունից առաջ նրանք բնակվում էին ավելի հյուսիս, նետ արշավելին հարավ և գրավելին մոն-քմեր և մունդա լեզուների տարածքը։ Այս ճյուղին պատկանում են հարյուրից ավելի լեզուներ, որոնցից երկու գլխավորներն են՝ տիբեթերենը և բիրմաներենը։ Տիբեթերենը ունի հոխ բուդդայական գրականություն, որի հնագույն հիշատակարանը է գարից է։ Բիրմաներեն հնագույն արձանագրությունը ժԱ գարից է։ Նույն ճյուղից է նաև պյու (pyo) կոչված լեզուն, որ հայտնի է մի քանի հին արձանագրություններով, և որ այժմ կորած է։

Չինարենը աշխարհիս ամենամեծ լեզուն է. նա խոսվում է մի բնդարձակ տարածության վրա, որ Եվրոպայից ավելի մեծ է և մոտ 500 միլիոն բնակիչ ունի։ Բացի սրանից, չինարենը խոսվում է Մանջուրիայում, Մոնղոլիայի մի մասում և Հնդկաչինի և Ամերիկայի գանագան գաղութներում։ Այնպես որ չինարեն խոսողների քիվը ավելի քան 500 միլիոն է։ Միևնույն ժամանակ, չինարենը մի նշանավոր կուլտուրական լեզու է, որ մեծապես ազդել է հետևյալ Արևելքի բոլոր ազգերի վրա։ Աննամ, Կորեա, Ճապոնիա իրենց քաղաքակրթության և լեզվական պաշարի մեծ մասը պարտական են չինացիներին։ Չինական գրականությունը շատ հին է, և սկսում է մ. թ. ա. 2-րդ հազարամյակից։ Նա թափանցել և գործնական է դարձել նաև հիշյալ երկրների մեջ։ Նա ունի շատ բազմաթիվ բարբառներ, որոնք մյուսին անհասկանալի. ամենագլխավորն է մանդարինների լեզուն, որ կոչվում է կուան-հուա, համարվում է պետական կամ պաշտոնական լեզու և շատ գավառների համար բնդ-

հանուր է։ Հաստատված է, որ այս բոլոր չինական լեզուները ծագում են մի ընդհանուր չինարեն լեզվից, որ խոսվել է Թանգ հարատևության ժամանակ։

Թայ ճյուղը տարածված է Հնդկաչինի արևելյան կեսից մինչև հարավային չինական գավառները. մանր խմբակներ էլ կան մինչև Հնդկաստան. բոլորից գլխավորն է սիամերենը, որ խոսում են 6 միլիոն մարդիկ. ունի ճոխ գրականություն, սկսած ԺԴ դարից։ Pallegoix, Grammatica linguae Thai (Bangkok, 1850, էջ 1) ասում է, թե սիամցիները կամբոջացիների լուծը թոթափելուց հետո կոչվեցին Թայ, որ նշանակում է «ազատ»։ Թայ և Սիամ նույնն են։

Սիամերենի նման մի լեզու է լաոսերեն լեզուն, որ Հնդկաչինի Լաոս երկրի լեզուն է։

Այս լեզուների ցեղակցության ապացույցը ցույց տալու համար իբր օրինակ առնենք թվականներից՝

4 չին. si⁴, տիբ. bži, բիրմ. le, սիամ. si, լաոս. sī·
6 չին liu⁴ հինը՝ *lyuk, տիբ. drug.
8 չին. pa¹, հինը՝ *pat, տիբ. brgyad.
9 չին. čiu³, տիբ. dgu, բիրմ. kö, սիամ. kậo, լաոս. kāo·
չին ȵi «ականջ», տիբ. rna, սիամ. hna «ցեմք, ներս»։

10. ՈՒԴՐՈ-ՖԻՆՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Այն լեզուները, որ պատկանում են այս լեզվախմբին, տարածվում են այժմ Հունգարիայից մինչև Եվրոպայի հյուսիսային ծայրը և այնտեղից՝ Ուրալաստանի վրայով մինչև Ուրալ լեռների ասիական կողմը։

Այս ընտանիքը պարունակում է հետևյալ լեզուները.

1. Հունգարերեն կամ մաջարերեն, որ խոսվում է Հունգարական պետության մեջ, նաև Ռումինիայում, Բուկովինայում, Ավստրիայում, ընդամենը 10 միլիոն շունչ։ Բոլոր ուգրո-ֆիննական ժողովուրդներից մեծագույնն է. նրանց գրականությունն էլ հնագույնն է. սկսվում է ԺԱ դարից։

2. Վոգուլերեն՝ Ուրալի մոտ, խոսում են 5000 հոգի։

3. Օստյակերեն, նախորդի հարևանության մեջ։

4—5 Զիրյեներեն (176 000), և վոտյակերեն (464 000), որոնք միասին կոչվում են պերմական խումբ։ Զիրյենները բնակվում են Վոլոգդայի և Արխանգելսկի նահանգներում, իսկ վոտյակնե-

բը բնակվում են Վյատկայի, Կազանի և Ուֆայի նահանգնե-րում։ Կոչվում է նաև կոմի։

6. Չերեմիսներեն (430 000). Գլխավորապես Վյատկայի, Կազանի և Ուֆայի նահանգներում։

7. Մորդվիներեն. այս լեզուն խոսող ժողովուրդը (մորդվիններ) մոտ 1 միլիոն է և բնակվում է Սիմբիրսկի, Պենզայի, Սարատովի, Սամարայի, Նիժնի-Նովգորոդի և Տամբովի նահանգներում։ Մի դյուղ էլ գտնվել է Հայաստան և բնակվում է Սևանի ափին՝ Նորժա դյուղում։

8. Ֆիններեն, որ խոսվում է Ֆինլանդիայում և Շվեդիայի ու Նորվեգիայի հյուսիսային կողմերում 3 300 000 խոսող ունի։ Ֆիններենի հետ անմիջական կապ ունեն և մի խումբ են կազմում՝

ա) Կարելերեն, որ խոսվում է Կարելիայում, Արխանգելսկի, Օլոնեցի, Տվերի և Նովգորոդի շրջաններում (մոտ 106 000 հոգի)։

բ) Վեպսերեն, որ և չուդ (15 000 անձ).

գ) Վոտերեն (466 անձ.), Լենինգրադի շրջանում։

դ) Էստոներեն (1 միլիոն չուրջ). Էստոնիայում և Լիվլանդիայում։

ե) Լիվերեն, Կուրլանդիայի հյուսիսում, տակիվ 1255 հոգի։

9. Լապոներեն կամ Լապպերեն (28 000 չուրջ). Շվեդիայի և Նորվեգիայի հյուսիսային կողմում, Լապլանդիայում, մասամբ Ֆինլանդիայում և Ռուսաստանում. թվում է, թե սրանք պատկանել են մի ուրիշ ցեղի, բայց հետագայում փոխ են առել ֆիննական լեզուն։

Այսպիսով, ուգրո-ֆիննական լեզուներով խոսող բոլոր անձերի քիվը մոտ $16\frac{1}{2}$ միլիոն է, որից հունգարերեն 10 միլիոն, ֆիններեն 3 300 000, մորդվիներեն 1 միլիոն, էստոներեն 1 միլիոն, մնացյալները՝ մանր լեզուներ։

Ուգրո-ֆիննական լեզվախմբի նախահայրենիքը գտնվում էր այն տարածության վրա, որ գտնվում է, մի կողմից՝ Սառուցյալ օվկիանոսի և Ազիատիկ ծովի միջև և մյուս կողմից՝ Մինջին Վոլգայի վրա՝ Ուրալից այս կողմ։ Այսպես նա տարում էր, մի կողմից՝ հնդեվրոպական բնաւանիքի և հատկապես արիական և բալթիկ-սլավոնական ճյուղերի և, մյուս կողմից՝ ալթայական բնաւանիքի հարևանության մեջ։ Սրան ևնք պարտական այն բազմաթիվ հին փոխառություններըր, որ տեղի են ունեցել փոխադարձաբար այս երեք լեզվախմբերի միջև։ Արիական խմբից եկած բազմաթիվ փոխառություններըր կարևոր են մեզ ա՛յ մի-

այն այն տեսակետով, որ ցույց են տալիս արխական ճյուղի աշխարհագրական դիրքը այդ հնագույն ժամանակներում, այլև նրանց քաղաքակրթական բարձրությունը առնասարակ և մասնավորապես ուգրո-ֆիննական ժողովուրդների համեմատությամբ, առանց որի այդ փոխառությունները կամ բնավ տեղի չպիտի ունենային և կամ շատ ավելի սահմանափակ թվով պիտի լիներին: Հետագայում զանազան ժողովուրդներ դուրս գալով նախահայրենիքից՝ գաղթեցին զանազան ուղղությամբ. օստյակները և վոգուլները անցան Ուրալը և հաստատվեցին Ախայում, հունգարացիները երկար ճամբորդությունից հետո, Թ դարում հասան արդի Հունգարիան. վոտյակները և զիրյանները բարձրացան հյուսիս. ֆիննները Զ դարում գնացին Ֆինլանդիա. մերձֆիննները և չերեմիսները ճեպացին իրենց տեղում:

Գիտնականները ուգրո-ֆիննական ընտանիքին են կցում նաև նենեցների լեզուն՝ նենեցերենը (սամոյեդերենը), որանք 18 000 հոգի են՝ ցրված մի ընդարձակ տարածության վրա՝ Ուրալից մինչև Սառուցյալ օվկիանոսը: Հետզհետե հասատատվում է, սակայն, այն ենթադրությունը, թե նենեցերենը ո՛չ թե մի ճյուղն է ուգրո-ֆիննական լեզվարնի, այլ երկուսը միասին նախապես կազմում էին ուրալյան խումբը, որի նախահայրենիքը Ուրալի սարերն էր. ապա բաժանվեցին երկու ճյուղի՝ նենեց և ուգրո-ֆիննի: Նենեցները անցան Ասիա և մտան թյուրքական լեզուների հարևանության մեջ, իսկ ուգրո-ֆիննները իջան դեպի Վոլգա, որտեղից էլ հետո ցրվեցին զանազան ուղղությամբ:

Ուրալյան խմբին պատկանում է նաև էսկիմոսերենը, որով խոսողները բնակվում են Գրենլանդիայի և բևեռային Ամերիկայի եզերքների վրա, այսպիսով նրանք դառնում են կապ հին և նոր աշխարհների միջև:

Ուգրո-ֆիննական ընտանիքի համեմատական բառարանը կազմել է Դոններբը. „Vergleichendes Wörterbuch der Finnisch-ugrischen Sprachen“ (Helsingfors, I 1874, II 1877, III 1888-անավարտ): Հունգարերենի ընդարձակ արմատական բառարանը կազմեցին Գոմբոզը (Gombocz) և Մելիխը (Melich), որ սկսեց հրատարակել Հունգարական ակադեմիան, սկսած 1914 թվից:

11. ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Կովկասյան լեռնաշղթայի երկու կողմերի վրա, մի ծովից մինչև հակառակ ծով գտնված տարածության մեջ խոսվում են բազմաթիվ լեզուներ, որոնք ընդհանուր անունով կոչվում են կովկասյան լեզուներ։

Ճանապարհորդներ ուշադրություն են դարձրել այս լեզուների վրա, ինչպես՝ Ուսլար, Շիֆներ, Դիրր, Լոպատինսկի և այլն։ Համեմատաբար լավագույն աշխատությունը R. von Erckert-ի Die Sprachen der kaukasischen Stammes (Wien, 1895) է, որ կովկասյան 30-ի չափ լեզուների համեմատական քերականությունն է, գիտական տեսակետից։ Համառոտ այս բոլորի, կովկասյան լեզուների համեմատական քերականության գոյությունը չունի գիտ[1]։ Նորագույն և ամենից ավելի գիտական լուրջ աշխատությունն է Dirr, Einführung in das Studium der kaukasischen Sprachen, որ 35 կովկասյան լեզուների քերականությունն է։

[Ավելի նոր և ավելի վստահելի են վրաց գիտնականների (Ջիկորավա, Շանիձե և այլք) վերջին տարիներում հրատարակած աշխատությունները, որոնք, ասկայն, մեծ մասամբ վրացերեն են և այդ պատճառով էլ անմատչելի գիտության լայն շրջանների համար։]

Ըստ Դիրի բոլոր կովկասյան լեզուները՝ ծննդաբանական սահմանով նայելով՝ բաժանվում են երեք խմբի. 1) հարավային կովկասյան կամ թաքվելյան խումբ. 2) հյուսիսային արևմտյան խումբ. 3) հյուսիսային արևելյան կամ կասպյան խումբ։

Հարավային կովկասյան խումբը պարունակում է հետևյալ լեզուները. 1) վրացերեն (850,000[2]. 2) մինգրելերեն (24.000). 3) լազերեն (20,000). 4) սվաներեն։ Վրացերենի բարբառներն են քուշերեն (23 000. տարբեր է չնչինական քուշերենից). դուբրա, խևերել, փշավ, խևսուր, ինգիլո։

---

[1] Troubetzkoy, Les langues du monde. էջ 327—342.

Немировский, Из прошлого и настоящего кавказской лингвистики, Владикавказ, 1928.

[2] *1926 թ. վիճակագրությամբ Վրաստանի բնակչության քիվը էր 2 667 000, որից 1 580 000 խոսում էին վրացերեն, 285 000 մինգրելերեն, 13 000 սվաներեն, 2000 լազերեն, 228 000 հայերեն, 180 000 քյուրքերեն, 120 000 ռուսերեն, 110 000 օսերեն, 56 000 աբխազերեն, 40 000 հունարեն, 11 000 գերմաներեն։*

Հյուսիս-արևմտյան խումբը պարունակում է՝ 5) աբխազերեն (61 000), *որ Կովկասի ամենադժվար լեզուն է, 6)* ուբիխերեն *(այս ժողովուրդը այժմ դադրել է Թյուրքիա և մոռացել իր լեզուն). 7)* չերքեզերեն (108 000), *որի գլխավոր բարբառն է* կաբարդին (117 000), *երկուսը միասին կոչվում են* ադիղե:

Շատ յուրջ դիտական աշխատանք են նամարում Deeters, Das kharthwelische verbum (Leipzig, 1930), *որ նաև հարավային-Կովկասյան լեզուների համեմատական քերականության ուրվագիծն է:*

Կասպյան խումբը պարունակում է.

ա) Ձեչենական լեզուներ.

8) Ձեչեներեն (300 000 *և* ինգուշերեն (60 000).

9) Բաց (2 000), *սխալմամբ կոչված նաև* թուշ:

բ) Ավարո-անդի լեզուներ:

10) Ավարերեն. *որ Դաղստանի ամենից կարևոր լեզուն է և ամբողջ այս շրջանի ազգամիջյան լեզուն* (211 000).

11) Անդի (7780).

12) Բոտլիխ (1363).

13) Գոդոբերի (1339),

14) Կարատա (5600)·

15) Բագուլալ.

16) Ճամալալ (4900).

17) Տինդի (1753).

18) Ախվախ *կամ* ալվալ (3300).

19) Խվարչի (1561).

20) Դիդո (6000).

21) Կապուճի (2803).

22) Խունզալ (799).

գ) Թարգվա լեզուներ (130 000).

23) Հյուրկան *կամ* խյուրկիլի *և* ակուշա.

24) Վարկուն *և* կարա-կայտաղ.

25) Կուբաճի:

դ) Կենտրոնական լեզուներ.

26) Լակերեն *կամ* կազիկումուխ (90 000).

27) Արճի. *խոսվում է միայն մի գյուղում* (800).

ե) Սամուրյան լեզուներ.

28) Թաբասարան (28 000).

29) Ադուլ (8 000).
30) Կյուրին կամ լեզգի (131 6000).
31) Թուռուլ (12 000).
32) Մախուր (5 000).
33) Բուդուխ (3 410).
34) Ջեկ (7 200).
35) Խինեալուղ. խոսվում է միայն մի գյուղում (2196 անձ).
36) Ուտիերեն (9 600):

Այս լեզուներից վրացերենն ունի հոխ և հին գրականություն:

Ապագա քննությունները կվերապահված պարզելու, թե կովկասյան այս խմբի լեզուները լեզվաընտանիք կազմում են, թե ոչ, և թե որևէ ուրիշ լեզվաընտանիքի հետ ցեղակից են, ինչպես աշխատում են ապացուցել ոմանք, բայց առանց լուրջ գիտական մեթոդի:

12. ԱԼԹԱՅԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Թեև վերջնականապես հաստատված չէ, բայց թվում է, թե վոլգայից մինչև օվկիանոսը փռված զանազան լեզուները պատկանում են մի խմբի: Այս լեզվաընտանիքի անունը շատ ձևափոխություններ և քննությունների տեղիք է տվել. այն ժամանակ, երբ գիտուններըը կարծում էին, թե հնգավոլգականից ու ակմականից դուրս բոլոր մյուս լեզուները քյուրքականի հետ միասին մի խումբ են կազմում, այդ խումբը կոչում էին Ուրալ-ալթայական. ավելի հետո, երբ ձայնավորների ներդաշնակության օրենքի վրա միայն հիմնվելով, որ հատուկ է թե ֆիննականի, և թե քյուրքական լեզուներին, կարծում էին, թե ուգրո-ֆիննական լեզուները ցեղակից են այս խմբին, երկուսը միասին կոչում էին ուրալ-ալթայական: Հիմա ապացուցված է, թե ոչ միայն ֆիննականները կապ չունեն սրանց հետ, այլև նենեցները, որ Ուրալի ժողովուրդ են, նախապես ֆիննական ժողովուրդների հետ մի խումբ էին կազմում. հունգար և այլ լեզուների մեջ գտնված քյուրք և մոնղոլ բառերը ցեղակցական չեն, այլ միայն փոխառություն, որ կատարված է հին հարևանության շրջանում: Այս դեպքում հարմար է ուրալական անունը հատկացնել նենեցներին, իսկ ալթայական անունը պահել այս լեզվաընտանիքին:


ԿՈՎԿԱՍՅԱՆ ԼԵՋՎԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ
ՍԵՎ ԾՈՎ
ԿԱՍՊԻՑ ԾՈՎ
ՎՐԱՑԻՔ
ՀԱՅԵՐ
ԹԲԻԼԻՍԻ
ԱՁԱՐԱՑԻՔ
ԱԲԽԱԶԱ
ՍՎԱՆ
ԶԱՆ
ԱՂԴԻ
ԱՂՈՒԼ
ՈՒՏԻ
ՂԱԶԱՐ

Շատ անգամ էլ գործածվում է թաթարական կամ բյուրթաթարական բառը։ Թաթարները սկզբում մոնղոլական մի ցեղով խոսող ժողովուրդ էին, այնպես որ մասի անունը ամբողջին հատկացնել անտեղի է։ Բյուրք-թաթարական բառը կարող է հատկացվել ու առավելն բյուրքերին և մոնղոլներին միասին և իր մեջ չի պարունակում տունգուսներին։

Ալթայական բնտանիքը ունի 3 ճյուղ, որոնք են՝ 1) բյուրքական, 2) մոնղոլական, 3) տունգուսական։

Ալթայական ժողովուրդների ներգույն հիշատակությունը հասնում է մ. թ. ա. երկրորդ հազարամյակին. չինացիները շատ շուտ մեջ էին մի բարբարոս ժողովրդի հետ, որին կոչում են Niong-nou, որոնք (չինական պարիսպներից այն կողմ) կազմում էին մի մեծ պետություն, որ 9 դարում կործանվեց։ Կարծում են, թե որոնք հոները են և պատկանում են վերոհիշյալ ցեղին։ 9 դարում հիշվում է sien-pi ժողովուրդը, որ շարժվել է Մանջուրիայից, և որ ոմանք մոնղոլ, ոմանք էլ տունգուս են համարում։ Մոնղոլ են համարում նաև ավարներին։ Ավելի ուշ է բյուրքերի պատմությունը, որոնց չինացիները կոչում են թուքիու, և որոնք ավարների պետության ավերակների վրա 552 թվին հիմնեցին մի մեծ կայսրություն, որ տրոհվեց Կասպից ծովից մինչև Կորեա և 8-րդ դարում կործանվեց. իրենց հաջորդներն ույղուրներն։ Մոնղոլները հիշատակվում են չինացիների մոտ է դարից։ Մոնղոլ մի ժողովուրդ էին թի-ուանները, որոնք 907 թվին Չինաստանի հյուսիսային մասին տեր դարձան, և որոնց անունից են առաջացած արաբ. xaṭāy, ռուս. китай, հր. խթայ ձևերը, որոնք նշանակում են Չինաստան, և Ղարաթագի բարբառով՝ խաթայի կամ խաթայի հասի, որ նշանակում է տգետ, անճաշակ։ 10 դարի սկզբում Չինգիզ խանի ձեռքի տակ մոնղոլները կազմում են մի մեծ պետություն, որ տասկալի արագությամբ նվաճում է Հնդկաստանից մինչև Ադրիական ծովի ափերն բնկած երկրները։ Շուտով այս խոշոր պետությունը վերածվեց մոնղոլական պետությունների, այն է՝ չինական կայսրությունը բուդդայական մոնղոլների տիրապետության տակ Քանբալըղ (որ է՝ Գնկին) մայրաքաղաքով, Բաթու խանի պետությունը Ղիպչաղում և Ռուսաստանում, Հուլաղու խանի պետությունը Պարսկաստանում և Ջագաթայ խանի պետությունը Թուրքեստանում։ 14 դարում այս բոլոր պետությունները կործանվեցին, և դարս հետ Լենկթիմուրը, որ ծագ-

մամբ մոնղոլ, բայց արդէն թիւրք էր, և վերանորոգեց Զինգիզ խանի մեծ պետութիւնը։ Սակայն այս պետութիւնն էլ, ինչպես և իրեն հաջորդող մյուս մոնղոլական պետութիւնները (Քաշղարի, Ղրիմի և Հնդկաստանի) վաղանցուկ կեանք ունեցան, և մոնղոլները ժէ և ժԲ դարում ընկան մանջուրների տիրապետութեան տակ։

Թիւրքերի և մոնղոլների պատմութիւնից նվազ ծանոթ է տունգուսների պատմութիւնը։ Սրանք Մանջուրիայի հին ժողովուրդն են, որ հիշատակվում են դեռ մ. թ. 2000 (?) տարի առաջ։ Մ. թ. է դարում սրանք կազմել էին մի քաղաքակիրթ պետութիւն, որ տիրում էր ամբողջ Մանջուրիային և Կորեային, մինչև ժ դարը, երբ մոնղոլ քի-տաննները գալով նվաճում են այս երկրները։ Այնուհետև մի քանի անգամ Մանջուրիան անցնում է մերթ մոնղոլների և մերթ տունգուսների տիրապետութեան տակ, մինչև որ ԺԸ դարում հիմնվում է տունգուսական Մանջու նոր հարստութիւնը, որ տիրում է նաև մոնղոլներին և Զինգիսխանի գահին՝ մինչև 1912 թիվը, երբ հռչակվեց ռեսպուբլիկան։

Թիւրքական ճյուղի լեզուները շատ ընդարձակ տարածութիւն ունեն. գաղթականութեամբ և աշխարհակալութեամբ նրանք փռված են այսօր Մակեդոնիայից մինչև Սիբիրի Կոլիմ գետը, Յակուտների մոտ (21—150) և ունեն մոտ 39 միլիոն խոսող։ Գլխավորներն են՝ ալթայ, քոյբալ, կարագաս, թուբար, կիրգիզ, բաշկիր, սարտ, թյուրքմեն, ույղուր, կփչաք, կումուխ (112000), նոգայ (58 000), բալկար (25 000), յուրուք, ազերբեյջանի ($1^1/_2$ միլիոն), Ղրիմի թաթարերեն (197 000), կարաչայ (30 000), թաթար (1 750 000), օսմանյան, որոնց ավելացնել պետք է Բալկանների գագաուզները և չթախները և հին կորած լեզուներից՝ օղուզ, պեչենեգ[1], բուլղար, չաղաթայ։ Հակառակ իրենց շատ ընդարձակ տարածութեան՝ այս բոլորը չեն ներկայացնում իրենց մեջ մեծ տարբերութիւններ. միայն չուվաշերենը (1 միլ.) սովորական տիպից հեռանում է։ Թիւրքական լեզուների ամենահին հիշատակարանը Օրխոնի արձանագրութիւններն են 735 թվից, կարակորում մայրաքաղաքի մոտ։ 2—3 դար հետո սկսում է

[1] Պեչենեգ թիւրքական լեզվով արձանագրութիւնների մի հավաքածու վերլուծեց և հրատարակեց հունգարացի Թրքագետ Նեմեթը (Բուդապեշտ, 1932)։

Բյուրքական կրոնական գրականությունը ժԴ դարում անկումի-նները թողել են մի տեսակ գրականություն, բայց սամանյան բյուրքերը 1300 թվից սկսած հետզհետե առաջ են տանում։

Բյուրքերը մեծ ազգություն են գոթդել իրենց գրացի և նվաճած ազգերի վրա. այսպես՝ սարքերը բյուրքացած պարթևիկ են. մանդոլների պետական լեզուն բյուրքերենն էր։ Հնուսաստանում հայերը բյուրքախոս էին և ունեին հայատառ բյուրքերեն գրականություն. նույնը նաև Թյուրքիայում, այսպես և՝ նույնները Հայերենը, հունարենը, քրդերենը, պրաներենը, բուլղարերենը, ռուսերենը և ռումիներենը շատ բառեր ունեն փոխառած բյուրքերենից։ Ընդհակառակը՝ բյուրքերը շատ են ազդված արաբներից, պարսիկներից, մասամբ և հույներից. բուլղարները բյուրքերենը մոռացած սկսվ են գառել։

Մոնդոլական (իրենք իրենց կոչում են monγol*) լեզուները, հակառակ մոնդոլական խոշոր արշավանքներին, իրենց երկրից դուրս՝ բնդարձակ տարածություն վրա փոված չեն և բյուրքական լեզուներից ավելի նման են իրար։ Գլխավորներն են, բացի Մոնդոլիայի և Տիբեթի մոնդոլներենից, կալմիկերենը (Աստրախանի շրջանում 102 000), բուրիաթերենը (Սիբիրում), և այժմուկ կամ ենթադրաբար, որ Աֆղանիստանում խոսված մոնդոլերենն է։ Բոլորը միասին՝ 3 միլիոն։ Հնագույն հիշատակարանք ժԴ դարից է* (Владимирцев, Сравн. грам. Монг., Л., 1929, էջ 34)։

Տունգուսական լեզուները տարածվում են Ենիսեյ գետից մինչև օվկիանոս։ Տոհմերի քիվը հազիվ կլինի մի միլիոն։ Տունգուս գրականությունը սկսվում է ԺԲ դարից։ Զինուց կոչերները, լինելով մանջուրի, պետական հանձնաժողովության տակ են առել գրական մանջուրերենն լեզուն, հրատարակել են ավել բազմաթիվ աշխատություններ. նշանավոր է հատկապես մանջուրերեն հինդկզյան մի բառարան՝ 36 հատոր։ Գիտական պաշտոնյաները պարտավոր էին սովորել այս լեզուն։ Սակայն հակառակ այս բոլոր ջանքերին, մեռյալ լեզուն հետզհետե մոռացվեց և ԺԲ դարում այս կողմ այլևս լքվել է։

13. ՃԱՊՈՆԵՐԵՆ ԵՎ ԿՈՐԵԵՐԵՆ

Այս երկու լեզուների վերաբերմամբ գիտական աշխատանքներ չկան. եղածները գտնում են, որ թե բառերի, և թե քերականական կազմության կողմից երկուսը իրար շատ նման են.

բայց թե ինչ լեզվաընտանիքի մեջ պետք է դնել դրանք, դեռ որոշված չէ։ Դժվարության գլխավոր պատճառներից մեկն էլ այն է, որ կորեերենը ժե դարում միայն գրականության բարձրացավ։ Մինչև այդ Կորեան ապրում էր ամբողջապես չինական լեզվով ու գրականությամբ. դրա համար էլ այս լեզվից եղած փոխառությունները անթիվ են։ Ճապոնական գրականությունը սկսվում է 8-րդ դարից։ Այժմ ունի 55 միլիոն խոսող, Կորեայում՝ 17 միլիոն։ Ամենանոր աշխատություններից են Nobushiro Matsumoto ճապոնացու գործը (Le japonaise et les langues austroasiatique, *1928 թ.*), որ 113 բառեր նույն է գտնում ճապոներեն և ավստրոասիական լեզուներով և հետևցնում է, որ պատկանում է այս լեզվախմբին։ Այս համեմատություններից ճիշտ 100-ը հաստատված և վստահելի են։ Բայց բառերի նույնությունը անպատճառ ցեղակցության նշան չէ. կարող էին այս 100 բառերը, և դեռ ուրիշ շատ բառեր, փոխառյալ լինել։ Եթե ճապոներենը կարող էր հարյուր բառ փոխ առնել ալթայական լեզուներից (ըստ համեմատության Matsumoto-ի), եթե ճապոներենը կարող էր իր բոլոր թվականները՝ մեկից մինչև վերջ, փոխ առած լինել չինարենից, զարմանալի չէ, որ բազմաթիվ փոխառություններ ունենա նաև ավստրական ընտանիքից։

Բերականական ապագա համեմատությունները միայն պիտի կարողանան լուծել այս հարցը։

14. ԱՅՆՈՒ

Այս լեզուն ճնացորդն է մի լեզվախմբի, որ խոսում էին Հեռավոր Արևելքում բնակվող և ոսկեսակ ցեղերին պատկանող մի քանի ժողովուրդներ։ Այնուների թիվը 20 000 անձ է միայն, որոնք բնակվում են Սախալինի հարավային մասում ու նրա մոտ գտնված երկու կղզիներում և Ճապոնիայի մի մասում։ Նրան ցեղակից բոլոր մյուս լեզուները մեռած պետք է համարել։ Այնու լեզուն էլ արդեն վտանգի մեջ է, ունենալով խոսողների այնքան փոքր մի թիվ։ Ոչ մի գրականություն չկա այս լեզվով։ Շտեռնբերգը (Sternberg) իր The Ainu-problem հոդվածում այս լեզուն ավստրոնեզյան խմբին է կցում։

15. ՀԻՊԵՐԲՈՐՑԱՆ ԿԱՄ ՀՆԱՄԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ

Գտնվում են Սիբիրի հյուսիս-արևելյան ծայրում, Կամչատկա թերակղզում, Սախալինի հյուսիսային կեսում և մերձակա

մի քանի մանր կդպիներում։ Ոչ մի գրականություն չունեին մինչև ամերիկան կարգերի հաստատումը։

Ասողների քիվը հասնում է միայն մի քանի տասնյակ հազարի։ Սրանցից նշանավոր են յուիգիր. չուբշի (10 000), կորյակ, կամչադալ (2000). գիլյակ։

Յուիգիր լեզուն խոսվում է Կալիմա և Տունգրա կոչված վայրերում, Ասուցյալ օվկիանոսի մոտ. Լենա գետից մինչև Կալիմա գետ ած ափը։

16. ԱՄԵՐԻԿՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ

Այս անվան տակ միացնում ենք այն բոլոր լեզուները, որոնցով խոսում են Հյուսիսային և Հարավային Ամերիկայի և Անտիլյան կղզիների բնիկ ժողովուրդները։ Դրանց քիվը բնակվում 15 միլիոն չուրչ, որ գրված է մոտ 200 միլիոն ազգաբնակության մեջ։ Քվում է թե կոլումբոսի գյուտի ժամանակ այդ ժողովուրդները պիտի լինեին մինչև 45 միլիոն, բայց եվրոպական ժողովուրդների ձնշումը և իրենց հետաքրքրությամբ հետզհետե նվազեցրել է նրանց և հետզհետե նվազեցնում է։ Լեզուներ կան, որ խոսվում են ամենափոքրիկ մի տարածության վրա (մի քանի տասնյակ մղձ), օրինակ՝ Հարավային Ամերիկայում յաբարանա (yabaràna) լեզուն, Վինդարի գետի ակի մոտ. խոսում են միայն 25—30 հոգի (Kiekers, էջ 224). Բոդդարդն իր՝ հնդկա ամերիկյան լեզվի ձևաբանության մեջ (Berkeley, 1905, էջ 9) ասում է, թե այդ լեզվով խոսողների քիվը 1866 քվին 650 հոգի էր, որոնց թևքված գնդի քաղաքակրթություն։ Այժմ (1905 թ.) նրանց քիվը է չուրջ 450. Ինդուններից խոսում են գլխավորապես իրենց լեզվով, քիչ բան միայն փոխ առնելով անգլերենից։ Երիտասարդները ասեր և իրար հետ խոսում են հնդկա լեզվով, իսկ ոսիտակների հետ՝ մասամբ անգլերենով։

Ամերիկյան գանազան լեզուների քիվը հասնում է հարյուրների, բայց Բասաբ (Handbook, I, 1911, էջ 69) անցնում է 300-ից, որոնք չունենալով ո՛չ անցյալի գրական պատմություն, ո՛չ էլ այժմ մանրամասն քննության ենթարկված լինելով, կարելի չէ նկել ցեղակցական կապերով կապել իրար հետ։ Կենտրոնական Ամերիկայի նահուատլ և մայա կոչված ցեղերի լեզվով քիչ գանված են արձանագրություններ, բայց դրանք միայն պատ-

կերներ լինելով՝ կամ նրանց ունեցած ձայնական մասերը դեռ յուծված չլինելով՝ ոչինչ չեն ավելացնում ամերիկյան լեզուների ծագման պատմության ու ցեղակցության վրա։ Առայժմ միայն կարելի է եղել այդ հարյուրավոր լեզուները վերածել 123 ընտանիքի (Les langues du monde, էջ 602), սպագա քննությունները անշուշտ ավելի պիտի կրճատեն դրանց թիվը, և թերևս կարելի լինի մի օր այդ բոլորը վերածել մի կամ մի քանի լեզվաընտանիքի։

Առաջին հարցը, որ ներկայանում է մեզ, այդ այն է, թե ամերիկյան լեզուները կապ ունեն հին աշխարհի լեզուների հետ։ Պ. Ռիվե (P. Rivet) լեզվաբանը (BSL, հտ. 26, №. 79, էջ 23—63) բառերի համեմատության վրա հիմնվելով հաստատում է, որ հյուսիսային Ամերիկայի լեզուներից հոկա (hoka) լեզվախումբը կապ ունի մելանեզյան-պոլինեզյան լեզուների հետ և Հարավային Ամերիկայի պատագոնցիների չոն (ճոն) լեզվախումբը նույն է Ավստրալիայի լեզուների հետ։ Այս նմանությունը առաջացել է դաղթականությամբ։ Շատ հին ժամանակ Ավստրալիայի արևելյան կողմից մի խումբ անցել է հարավային Ամերիկա։ Երկրաբանները ընդունում են, որ հնագույն շրջանում Ավստրալիան միացած էր Հարավային Ամերիկայի ցամաքի հետ, բայց դաղթը այս ժամանակ չի եղել, որովհետև այդ ցամաքամասը ոչնչացած էր դեռ այն ժամանակ, երբ մարդկությունը չէր կարող արևել դաղութ կազմակերպել։ Ուստի պետք է ընդունել, թե դաղթը կատարված է օվկիանոսի վրայով և նավերով։

Այս եղանակով նաև մելանեզյան-պոլինեզյան ժողովուրդները առհասարակ ցամաքից անցել են Հարավային Ամերիկայի ավելի հյուսիսային եղերքները. արդեն Ա դարում նրանք երևան են գալիս Պերուի եղերքներում, ուր փոխադրում են իրենց կուլտուրան։ Այս բոլորը, ասկայն, պատկանում են ամերիկյան լեզուների մի փոքրիկ մասին. մյուս լեզուները մնում են առայժմ առանձին ու անկախ։

17. ԱՎՍՏՐԱԼԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ

Ավստրալիական մեծածավալ կղզին 5 մլիոն բնակիչ ունի, որի մեջ 30 000 բնիկ միայն կա. մնացյալը եվրոպացի է։ Այս 30 000-ը գտնվում է մարդկության ամենանախնական վիճա-

կում, գրականությունից դուրկ և հետևեալ աչքանում է եվրոպական գաղութարարների ընշման ներքո։ Նրանք խոսում են բազմաթիվ լեզուներով, որոնցից շատ քիչ բան մինչև ժամանակ է գիտությանս։ Կան բառերի աննշան ցանկեր, բայց ո՛չ մի լեզվի մասին քերականություն չկա։ Իրերի այս վիճակում չի կարելի ո՛չ այդ լեզուները դասակարգել, ո՛չ էլ մանավանդ, որևէ ուրիշ լեզվամերի հետ միացնել։

Օգտագործելով այդ ոգորմելի աշխատությունները Պ. Վ. Շմիդտ (P. W. Schmidt) գիտնականը և, համեմատելով Ավստրալիայի զանազան լեզուները իրար հետ, գտնում է, որ նրանք կազմում են մի ամբողջական բնտանիք, որ բռնում է Ավստրալիայի մեծագույն մասը, խոկ հյուսիսում կան մանր խմբակներ (BSL, № 68, էջ 136)։

Ռ. Ռիվե լեզվաբանը ավելի առաջ տարավ աշխատանքը։ Համեմատելով ավստրալիական բազմաթիվ բառեր մոն-քմեր լեզուների հետ, նա գտնում է, որ ավստրալիական լեզվախումբը նույն է ավստրասիանի հետ և, այս երկու խմբերը միացնելով մի անուան տակ՝ կոչում է Օվկիանյան լեզվախումբ։ Ավստրալիացիները Հնդկաստանի, Հնդկաչինի և Մալայան թերակղզու նախաբնիկներից են, ինչ որ հաստատվում է նաև բրաձոների դյուտով (BSL, № 83, էջ 141)։

Ավստրալիայի հարավային կողմը գտնվում է Տասմանիա կղզին, որի բնիկներին եվրոպացիները բնաջինջ արին։ Բայց նրանց լեզուների մասին մնացել են սակավաթիվ տեղեկություններ, որոնց վրա հիմնվելով ամանք համարում են անկախ լեզվախումբ, ուրիշներ, միացնում են ավստրալիական խմբին (Schmidt, Die Sprachfamilien, էջ 161—165)։

18. ԱՆՀԱՅՏ ԼԵԶՈՒՆԵՐ

ա. Բասկերեն

Բասկերենը խոսվում է Պիրենյան լեռների երկու կողմում, Հյուսիսային Իսպանիայում և Հարավային Ֆրանսիայում։ Այդ լեզվով խոսողների թիվը 712 000 է։ Նրանք իրենց անվանում են եվսկալդունակ (Euskaldunac), իսկ լեզուն կոչում են եվսկարա (euskara)։ Այս լեզվի հնագույն հիշատակարանները ԺԶ դարից են, այսօր ունեն բավական հոխ գրականություն։ Գիտունները շատ փորձեր են արել կապելու այդ լեզուն հին կամ նոր

արևէ լեզվի հետ, բայց այդ բոլոր փորձերը անցել են ապարդյուն։

Տարակույս չկա, որ բառերը հին իբերացիների հաջորդներն են։ Իբերները հայտնի են իբրև Իսպանիայի հին բնիկները։ Հռոմեացի դասական հեղինակները հիշում են նրանց շատ վաղուց, բայց իբերացիների լեզուն հայտնի չէ մեզ։ Նրանցից մնում են մի խումբ բառեր, որ ավանդել են լատին հեղինակները, բայց նրանց թիվը այնքան մեծ չէ, որ կարողանա ծառայել արևէ արդյունքի հասնելու համար։ Կան նաև մի խումբ աշխարհագրական անուններ՝ բուն Իսպանիայում և ուրիշ տեղեր։ Վերջապես մեր ձեռքն են հասել բազմաթիվ իբերական արձանագրություններ, բայց, գրված լինելով մի անծանոթ այբուբենով, լեզուն մեզ անհայտ է մնում։

Իբերները բնակվում էին ո՛չ միայն Իսպանիայում և հարևան Պորտուգալիայում, այլև շատ ավելի հեռուները, Ակվիտանիայում, Բալեարյան կղզիներում, Սիցիլիայում, Սարդինիայում, Կորսիկայում, ինչպես և Աֆրիկայի հյուսիսային մասերում, ուր մտել էին Ջիբրալտարի նեղուցով։ Թե կղզիներում հատկապես կար իբերական բնակչություն՝ հաստատում են հույն և լատին հեղինակները, հատկապես Թուկիդիդեսը։ Ակվիտանիայում, Աֆրիկայում և կղզիներում մինչև այժմ մնում են իբերական աշխարհագրական անուններ։

Մ. թ. ա. Ջ դարում կելտերը Գալլիայից մտան Իբերիա և սկսեցին խառնվել տեղական ժողովրդի հետ։ Ստրաբոնի ժամանակ արդեն Իբերիայում խոսվում էին կելտական լեզուներ։ Այնուհետև եկան հռոմեացիները, նվաճեցին ամբողջ Թերակղզին և լատիներենը տարածելով՝ վերջ տվին իբերական լեզվին։ Այժմ այդ լեզվից մնում են մի քանի բառեր՝ պահված իսպաներենում, որոնք ուրիշ ռոմանական լեզուներում չկան, և հենց այդ պատճառով էլ համարվում են իբերական մնացորդներ։

Բայց իբերների լեզվի հավատարիմ շարունակությունն է բասկերենը, որ հայտնի է մեզ միայն ԺԶ դարից։

Իբերների հետ Թերևս կապ ունեն Բրիտանիայի հին բնիկները, կալեդոնիացիները (Սկոտիա) և այլն, որոնց գոյությունը՝ կելտերի գալուստից առաջ՝ հաստատում են լատին հեղինակները։ Նրանց լեզվի մասին ոչինչ հայտնի չէ։ Կելտերի արշավանքից հետո հին բրիտանական լեզուն բոլորովին անհետացավ։ Իբր մնացորդ այդ բոլորից կան մի քանի արձանագրու-

քյուններ. որ գիտուններդ վերագրում են հին պիկտերին։ Գրոֆ. Թայլոր, քննելով այդ արձանագրութիւնների լեզուն, գտնում է, որ նա ո՛չ կելտական է, և ո՛չ հնդեվրոպական, այլ ապրկան է բառկերևներին։ Այսպիսով. Բրիտանիան Իսպանիայի վրայով կապվում է Աֆրիկայի հետ, և իրևներդ գտնում են մի մեծ ցեղ, որ բռնել էր Եվրոպայի այդ բնագաւառի մասը և Հյուսիսային Աֆրիկան։

բ. Լիպուրներ

Լիգուրները մի նշանավոր ժողովուրդ էին, որոնք կարևոր դեր են խաղացել նախապատմական և պատմական շրջանում։ Նրանք բնակվում էին գլխավորապես Հյուսիսային Իտալիայում, Հարավային Ֆրանսիայում և Ալպյան լեռների շրջանում։ Ֆրանսիայում նրանք հասնում էին մինչև Ռոն գետը և Քևրևն ավելի հետո՝ մինչև Իսպանիա մտած լեռները։ Համառոտաբար նրանք Գալլիայի նախաբնիկներն էին, որ հետո իրենց տեղը դիջեցին կելտերին։ Իտալիայում լիգուրները ապաշխատած էին մինչև Հռոմ. իրենցն էր նաև Էլբա կղզին և Կորսիկան։ Քև հյուսիսից արշավ հետու էին տարածված նրանք, հայտնի չէ, բայց կիսում է, քև մինչև Լենատան հասնում էին։

Լիգուրների լեզուն մեզ հայտնի չէ. միայն մի քանի բառեր և աշխարհագրական անուններ։ Հայտնի է, օրինակ, որ Ռոն, Գենևա և Ալբա լիգուրական բառեր են. վերջին անունից են դանազան համանուն քաղաքներ, հատկապես Հռոմի մրցակից Ալբա-լոնգա, Էլբա կղզու անունը և նշանավոր Ալպյան լեռները։

Իտալիայի և Շվեյցարիայի միջև, Լուգանո շրջանում գտնվելուն զանազան արձանագրություններ, որոնք գրված են մի անծանոթ այբուբենով։ Ամենը կարծում են, որ այդ արձանագրությունները լիգուրներին են պատկանում, քան որում գտնված են նրանց հայրենիքում։ Դժբախտաբար այդ անծանոթ այբուբենը դեռ մինչև չէ, որով լիգուրերենի հարցը մեծ չափ անորոշ։

Մի քանի գիտնականներ ուզում են հաստատել, քև լիգուրերենը հնդեվրոպական լեզու է և կապում է մի առանձին ճյուղ (Brugmann, Abrégé, էջ 4)։

գ. Էտրուսկերեն

Էտրուսկները մի նշանավոր ժողովուրդ էին Իտալիայում։ Նրանք գաղթել են Փոքր-Ասիայից և, նվաճելով ումբրիացիներին նաև նրանց տերը մ. թ. ա 1187 թվին։ Մ. թ. ա. է—ե դարերում նրանք կազմեցին մի ուժեղ պետություն, որ տեր էր դարձել ամբողջ Կենտրոնական Իտալիային։ Նրանք նշանավոր հաղթություններով չմիայն քաղաքական դիրքով, այլև կրթությամբ և արվեստներով։ Լատիններից նրանց միջոցով առացան գիրը։ Իրենք իրենց կոչում էին ռասենի (Raseni), իսկ երկիրը Ռասենա (Rasena), լատինները՝ Էտրուրիա (Etruria) կամ Տուսցիա (Tuscia), իսկ հույները՝ Տյուռենիա։ Հռոմեացիները պատերազմի դուրս եկան էտրուսկների հետ և մ. թ. ա. 4-րդ դարում նվաճեցին նրանց։ Էտրուսկները մի քանի անգամ ապստամբեցին, բայց չարաչար ուժեցին։ Այնուհետև խառնվեցին հռոմեացիների հետ և իրենց պետությունն ու լեզուն կորցրին։ Օգոստոս կայսեր ժամանակ նրանց լեզուն և գրագրները դեռ ծագիած վիճակի մեջ էին, այնպես որ հռոմեացիները անգամ աշակերտում էին նրանց։ Լատիներենում շատ փոխառյալ բառեր կան էտրուսկերենից։ Էտրուսկերենը դեռ գործածական էր մ. թ. 360 թվին իբրև կրոնական լեզու։

Էտրուսկների գրականությունը կորած է, բայց նրանց լեզվով մնում են 8000 արձանագրություններ, սկսած մ. թ. ա. 600 թվից մինչև Օգոստոսի դարը՝ 99 տակոս ուսպանագրեր։ Արձանագրություններից մեկը ունի 200 տող և պարունակում է 1200 բառ։ Կան նաև երկլեզվյան արձանագրություններ։ Բայց այս բոլորը մեծ բան չեն տալիս էտրուսկերենի համար։ Արձանագրությունները բաղկացած են մեծագույն մասամբ հատուկ անուններից, և բառ չկա. շատ անորոշ են նաև երկլեզվյան արձանագրությունները. այնպես որ էտրուսկերենի բառերից շատերը ծանոթ են, բայց նշանակությամբ անհայտ։ Հետաքրքրական է, օրինակ, մի խաղի քվեա (դաս), որի վրա փոխանակ կետերի, ինչպես լինում է սովորաբար, գրված են max, θu, zal, huθ, ci, ša բառերը։ Այս բառերը ներկայացնում են մեզ էտրուսկերենի 1—6 թվանշանները, բայց թե որը որ թվանշանն է, հայտնի չէ։ Ընդունված էր իբր՝ max—1, zal—2, θu—3, huθ—4, ci—5, ša—6. տասնյակներ կազմելու համար գրվում է alx, ինչպես՝ ce-alx «հինսուն»։ Բայց համաձայն Սլոտտիի (Slotty) նորագույն մի ուսումնասիրության, գրանք պետք է հաս-

կանալ հետևյալ ձևով. Ծu-1, ci-2, zal-3, huð-4, šə-5, max-6, (տես Archiv orientální, IX, № 1—2, Praha, 1937, էջ 231), իսկ բուա էդ. Հրկալի (Ed. Hrkal, Etrusk., էջ 39)՝ zal-1, ci-2, thu-3, huth-4, sa-5, mach-6, և cealchl-s-20, huthalch-40, sealch-50, muvalchl-60, semphalchl-90 ?, մի ուրիշ ուսումնական (Pallotino, էջ 50) նույն թվերը այսպես է հաստատում. Ծu-1, zal-2, ci-3, ša-4, max-5, hut-6, cezp-7, semi-8, nurl-9, šar ? 10։

Այսպիսի վիճակի մեջ են նաև Ռասցյալ ովյալները (բառեր և այլն)։

Գիտնականները բազմաթիվ փորձեր են արել լուծելու էտրուսկերենի գաղտնիքը և կապելու որևէ ծանոթ լեզվի հետ։ Բուգգե հայտնաբեր աշխատեց կապել հայերենի հետ։ Բայց այս բոլոր փորձերը անհաջող անցան, որովհետև նախապես էտրուսկերեն բառերի նշանակությունը ճշտված չէր և համեմատությունները լինում էին բուռ ձայներ։ Ի՞նչ արժեք ուներ, օրինակ ասել, թե max=հյ. մեկ, erus=հյ. արի, lusxnei=հյ. լուսին և այլն, *քանի որ նրանց նշանակությունը ստույգ չէր։*

Վերջին ժամանակներս Լեմնոս կղզում գտնվել է ուզական լեզվով մի կարճ արձանագրություն, որ բուռ կերևույթին կապ ունի էտրուսկերենի հետ։ Բայց այս խնդիրն էլ լուծված չէ, և էտրուսկերենի հարցը մնում է դեռ անհայտ։

Էտրուսկների անունը շարունակում է արդի Իտալիայի Տոսկանա գավառը, որ նրանց բնակարանն էր։ Գիտունները հաստատում են նույնիսկ, թե Տոսկանայի արդի իտալացիների արտաքինությունը կրում է հեռավոր նախկին էտրուսկների ազդեցության։

գ. Նախահնդեվրոպական և փոքր-ասիական լեզուներ

Հնդեվրոպական ժողովուրդների գալուց առաջ՝ Հունաստանից մինչև Փոքր-Ասիայի ծայրը բնակվում էին զանազան ժողովուրդներ։ Հունաստանում բնակվում էին պելազգները, լելեգները, դրիոպները, կարիացիները և այլն, Կրետեում՝ մի առանձին ժողովուրդ, որ հասել էր մեծ քաղաքակրթության և ծանոթ է կրետացի անունով, Փոքր-Ասիայում՝ լյուկիացիք, որոնք ծովի եզերքից տարածվում էին դեպի ներս, գլխավորապես բնակվում էին Քսանթոսի հովտում, ավելի հետո՝ կարիացիները, լյուդիացիները, մյուսիացիները, պիսիդիացիները, խաովրիացիները, լիկաոնացիները, կապադովկիացիները և այլն։

Թե որտեղից են եկել այս ժողովուրդները՝ ստույգ հայտնի չէ. լյուկիացիները մ.թ. 14 դար առաջ հիշատակված են եգիպտական արձանագրությունների մեջ, ուստի այն թվականին արդեն իրենց երկրում էին։ Ըստ Հերոդոտի նրանք գաղթել են Կրետեից. նույն տեղից էին նաև կարիացիները։ Հերոդոտը պատմում է նույնպես, թե մյուսիացիները, լյուդիացիները և կարիացիները եղբայր էին և միևնույն կարիական Զևսը պաշտում էին միասին։ Որովհետև Հերոդոտը կարիացի էր, ուստի իր տեղեկությունն էլ ճիշտ պետք է համարել, ինչ որ ցույց է տալիս, թե այդ երեք ժողովուրդները մի ցեղի էին պատկանում։

Այս բոլոր ժողովուրդների լեզվով էլ մեզ հասել են ավելի կամ պակաս քանակությամբ նյութեր։ Բոլորից էլ ունենք նախ աշխարհագրական անուններ. Աքենք, Սպարտա, Թերև, Կորնթոս և այլն, պելասգներից մնացած անուններ են. այսպիսի անուններ կան նաև մյուս լեզուներով։ Երկրորդ՝ հունարեն լեզվի մեջ կան մի խումբ աչքի ընդհարվածական բառեր, որոնք փոխառյալ պետք է լինեն պելասգների լեզվից։ Երրորդ՝ կան մի խումբ բառեր, որ ավանդել են մեզ հույն հեղինակները։ Վերջապես՝ կան զանազան արձանագրություններ այս լեզուներով։ Այս կողմից հարուստ է լյուկիերենը (150 արձանագրություն), որ ունի առանձին այբուբեն՝ կազմված հունարեն այբուբենից՝ նոր հավելումներով։ Նշանավոր է Քսանթոսի արձանագրությունը, որ ունի 250 տող։

Կրետացիների լեզվով կան զանազան արձանագրություններ՝ առանձին այբուբենով, որ անծանոթ է. կան և հունարեն տառերով, բայց կրետական լեզվով արձանագրություններ։ Մի քանի արձանագրություններ էլ կան կարիացիների լեզվով, որոնք թեև հունարեն այբուբենով են գրված, բայց դրա վրա ավելացել են այնքան նոր նշաններ, որ ոչինչ չի հասկացվում։ 1885 թ. Լեմնոսում գտնվեց մի արձանագրություն, որ թերևս պելասգների լեզվով է, բայց կարելի չի եղել դեռ վերծանել։

Լյուդիացիների լեզվով արձանագրություններ նորերս գտնվեցին Sardis մայրաքաղաքի պեղումների ժամանակ, որոնք և հաջողապես կարդացված են, բայց մեծ բան չեն տալիս. մյուսիացիների լեզվով մնում է միայն երեք բառ. խակ պիսիդիացիների և լիկաոնացիների, կիլիկեցիների, խաավրացիների լեզուներով ոչինչ չի մնում։ Արձանագրություններից ոմանք երկ-

լեզվյան են, բայց այնքան քիչ նյութ ունեն, որ ոչ մի օգուտ չեն տալիս։

Ահա այսպիսի անբավարար նյութերի քննությամբ գրաղելով՝ գիտունները հայտնել են զանազան կարծիքներ, որոնք իրար հակառակ են։ Այս կարգի քննությունների մեջ ամենից բնագրածակն է Kretschmer Einleitung in die Geschichte der grichischen Sprache (Göttingen 1896), ուր հեղինակը միացնելով այս բոլոր լեզուները, համարում է մի ծագումից, որ կոչում է «փռյգո-առիական» և ոչ-հնդեվրոպական։ Սրան հակառակ Բուգգեն (Lykische Studien. Christiana, I. 1897, II 1901) գտնում է բնիկառական, որ արված փաստերը անբավարար են, և քի այդ լեզուները ավելի մերձավոր են հայկերենին և, հետևաբար, հնդեվրոպական են։ Նորագույն մի աշխատության մեջ (Meriggi, La declinazione del Licio. Համ. 1929) գտնում է, որ լյուկիերենը բնիկ հնդեվրոպական չէ, բայց նրան մոտիկ ազգակից է։

Այս խնդիրը, ասկյն, այն ժամանակ միայն իր ճշմարիտ լուծումը կարող է առանալ, երբ գտնվեն ավելի մեծ քանակությամբ արձանագրություններ՝ իրենց բարեմանությամբ, և բավարի հարագատ իմաստը որոշվի։

Թեպետ հայերենի հետ կապակցության հարցին, կան իրար հակառակ նմանություններ, օրինակ՝ լյուկիերենի մեջ անգամ ցույց տվող անունները վերջանում են azi, ezi և azn մասնիկներով, որոնք մեր -ացի, եցի, -ազն ձևերն են։ Կարոլիդեսը իր Γλωσσάριον συγκριτ 'αλληνοκαππαδοκικῶν λεξεων (Զմյուռնիա, 1885) աշխատության մեջ համարում է այն բոլոր բառերը, որոնք գոյաժամանակ են Կապադովկիայի արդի հունաց բարբառում, բայց հունարեն չեն, և ենթադրում է, որ դրանք հին կապադովկացիների մնացորդներն են, որ՝ այս բառերը բոլորովին նույն են հայերենի հետ, ինչպես՝ καλακόν «գայլիկոն», πατσάϊ «փայծաղն», μαρούκα «մորաքր», μαζίκα «ծոպ», παγάρζι «բազարջ» և այլն, որանից հետևում է, որ կապադովկիերեն և հայերեն ցեղակից լեզուներ են։ Բայց մի փոքրիկ քննություն բավական է ցույց տալու համար, որ այդ բառերը հայերենից փոխառություն են, այն էլ կատարված ուշ ժամանակ, ինչպես ցույց են տալիս ը-ի չ արտասանությունը՝ փոխանակ լ և ր, գ բազաձայնների π, κ հնչումը։

Փռքրասիական լեզուների հարցն էլ այսպիսով մնում է անձանոթ և կարոտ մեկնության։

ե. Հաթերեն

Հաթերը Փոքր-Ասիայի նախաբնիկներն են. հիթիթների արշավանքի ժամանակ նվաճվեցին և նրանց իշխանության տակ մնացին: Սրանց լեզվով գտնված է 50 կտոր արձանագրություն, որ դեռ չի վերլուծված: Լեզուն պատկանում է նախամասնիկային դրության, որից երևում է, որ հնդեվրոպական չէ: Անծանոթ է նաև բալայերեն լեզուն, որ երևան եկավ հաթերենի հետ, փոքր-ասիական վերջին պեղումների ժամանակ, շատ սակավաթիվ արձանագրությունների մեջ: Հաթերեն անունով են կոչվում նաև այն մի խումբ անծանոթ նշաններով արձանագրությունները, որոնց հավաքածուն հրատարակից Ենաևները, կարծելով նաև լուծել դագանիքը, և որ սակայն բոլորովին անճիշտ դուրս եկավ:

զ. Խալդերեն

Հայաստանի հին բնիկների լեզուն է, որ ավանդված է մեզ 200 կտոր արձանագրություններ, որոնք գրված են մ. թ. ա. 820 թվերից սկսած մինչև Ը դարի վերջը: Գրությունը սեպագրական բնեռագիր գրությամբ է, դանդաղ դադափարանիշերով: Այս դադափարանիշերը տալիս են մեզ բառի իմաստը, բայց հայտնի չէ, թե խալդերենում այդ իմաստով բառը ինչպես էր հնչվում. մյուս բառերը, ընդհակառակը, վանկագիր լինելով՝ կարդացվում են ճշտիվ, բայց այս անգամ էլ իմաստն է ենթադրական: Այսպիսով, խալդյան բնեռագրությունների լեզուն բնդհանրապես անհայտ է: Երկլեզվյան մի արձանագրության դյուտը պիտի լուծի դագանիքը:

Սկզբն էր, որ առաջին անգամ հրատարակեց խալդյան բնեռագիր արձանագրությունների ժողովածուն, քերականությունը և բառարանը: Ուրիշներ շարունակեցին իր աշխատանքը: Ժամանակակից խալդագետներից նշանավոր է Ֆրիդրիխը, որ Einführung ins Urartische (Leipzig, 1933) *աշխատության մեջ տալիս է խալդերեն լեզվի համառոտ քերականությունը և մի բառարան: Սրանց ամփոփումը տես իմ «Հայոց լեզվի պատմության», Ա, էջ 150—190: Ավելի ուշ, երբ բացվեցին որոշ դագանիքներ նորագյուտ հուրրի կամ խուրրի լեզվի մասին, Ֆրիդրիխը սկսեց համեմատել խուրրիերենը խալդերեն լեզվի հետ և գտավ որոշ նմանություններ: Նույն նյութով զբաղվեց նաև Ե. Շտայները, որ իր* Studien in Hurrian grammar *աշխատության մեջ*

(տե՛ս Journal of the American Oriental Society, հ. 39, էջ 289—324) ուշ միայն հասատատում է Ֆրիդրիխի գտած նմանությունները, այլև նորերն է ավելացնում (էջ 290 ծան. և 323).

Ահա մի փոքրիկ ցանկ խուրրիերէն նորահայտ բառերի.

šeniwwu — *եզրայր*
ašti — *կին*
eš — *երկինք*
ešenera awənuenera — *երկնքով և երկրով*
elli — *քույր*
šatti — *միասին*
šinellaman šattellān — *երկուսը միասին*
tan — *անել, շինել*
ittain — *ոտ երբա, երբիցէ*
una — *նէ գալիս է*
šawala — *տարի, տա*

-na վերջնահար մասնիկը կազմում է հոգնակի. օրինակ՝ նաև šawala բառից՝ *šawala-na *տարիներ*, որ գառնում է šawalla ինչպես որ *-uli-na>ulla (Friedrich-ը այս šawalla բառի հետ համեմատում է խալդ. šali).

man «լինել» (էական բայն է), որի հետ Ֆրիդրիխը համեմատել է խալդ. manu «լինել»:

Խուրրիերէն man բայի խոնարհումն է

mannatta — *եմ*	mannattila — *ենք*
manni — *է*	mannalla — *են*

(Սրանից հետևում է, թե ա գեմքի վերջավորությունն է tta, հոգնակիի նշանն է -na, որ գոնում ենք քե գոյականի վրա, և քե բայի հոգն. ա և գ գեմքերի վրա):

Առացական հոգներն են

	եզ.	հոգն.
ա)	-iwwə	-iwwaš
բ)	-p	...
գ)	-t	-aš(e)

Համեմատական հայտնագործություններ այս բոլորի մեջ՝ երկու հատ խուրրիերէն թվականներ են. այն է՝ šin «երկու» և eman «տասը» (Speiser, անդ, էջ 320).

Ամեն լեզվի ամենահատկանշական կողմը իր թվականներն են. խալդերենից ուշ մի թվական հայտնի չէ մեզ. նրանցը բո-

լորը գրված են թվանշաններով, որոնց հնչումը չգիտենք։ Այժմ գաղտնիքի վարագույրը բացված է՝ խալդերենի ծագման մասին։ Եթե խուրրիերեն և խալդերեն ազգակից են իրար, նրանց թվականներն էլ պետք է որ ազգակից լինեն։ Ուստի մտածում եմ, որ խալդ. 2 և 10 թվերն էլ šin և eman բառերի նման մի բան պիտի լինեին։ Սրանք ոչ մի նմանություն չունեն ոչ միայն հայերենին, այլև որևիցե ուրիշ ծանոթ լեզվի հետ. ուստի և խալդերենը ցեղակից գնել հայերենի կամ ուրիշ որևէ ծանոթ լեզվի հետ՝ աննպատակ է։

Է. Կոսայերեն

Կոսայցիները մի քաջ լեռնական ժողովուրդ էին, որ տարածվում էին Մարասուանի և Էլամի միջև, մինչև Բաբելոն և Դիարբեքիր՝ Զագրոս լեռների հովիտներում։ Մ. թ. ա. ԺԷ դարում նրանք մեծ ազդեցություն ունեին Բաբելոնում և այդ ժամանակ կոսայցի թագավորներ իշխել են Բաբելոնի վրա։ Կոսայցիները պահեցին իրենց դոյությունը գլխավորապես Զագրոս լեռան շուրջը, մինչև մ. թ. ա. Դ դար, երբ Ալեքսանդր Մակեդոնացին նվաճեց նրանց։

Այս լեզվով մնում են միայն՝ մի փոքր բառարան ծ դարից և զանազան աշխարհագրական անուններ։ Այդ բառերի մեջ կան այնպիսիք, որ արիական ծագում ունեն, ուստի և ամենք կոսայերենը գրել են իրանական լեզուների շարքը, ուրիշներ կցում են կովկասյաններին. ավելի մեծ բնագրերի դյուտը միայն կարող է վճռել հարցը։

Կոսայերեն լեզվի մասին առանձին մենագրություն ունի Դելիչը (Delitzsch, Die Sprache der Kossäer, Leipzig, 1884). *Այստեղ հեղինակը տալիս է այդ ժողովրդի պատմությունը, նրանց պատերազմները ասորեստանցիների հետ, կրոնը և մի բառարան, որ պարունակում է 54 կոսայերեն բառ (մի քանիսը աստվածների անուն է)։ Պնդում է այս լեզվի կապը էլամերենի, սումերերենի և մարերենի հետ, բայց արդյունքը բացասական է։*

Ը. Սումերերեն

Սումեր կամ, ավելի ճիշտ՝ Շումեր անունը կրող ժողովուրդը պատմական շրջանում բնակվում էր Բաբելոնից մինչև Պարսից ծոցը գտնված տարածության մեջ։ Իրենք երկրի բնիկները չէին և հավանաբար գաղթել էին այդտեղ հարևան մի բարձր

յեռնային երկրից՝ ավելի շուտ քան մ. Ք. ա. 3-րդ հազարամյակը։ Լինելով կուլտուրական ժողովուրդ, նրանք ունեցել էին մի սեռակ մեհենագիր գրություն, որից առաջացավ հետո բեհառգրական գրությունը, որով և գրել են բազմաթիվ արձանագրություններ, ունագույնը մ. Ք. ա. 4000 թվից։ Այս արձանագրությունների մեջ գանում ենք գրականության բոլոր սեռերը՝ պատմություն, քերականություն, բանաստեղծություն, կրոն, աստղաբաշխություն, իրավաբանություն և այլն։ Այնուհետև Աբաբիայից գալիս է սեմական մի ցեղ (աքքադները) և սեպագիրներին ներմուծում հիմնում սաոբնատյան ու բաբելական պետություններ։ Բայց սումերները չի ջնջվում, այլ պահվում է մինչև իրը կրոնական ու գիտական լեզու (ինչպես լատիներենը Եվրոպայում) մինչև մ. Ք. ա. 9 դար, որից հետո անհետանում է։

Շատ փորձեր են կատարվել սումերները որևէ ծանոթ լեզվաընտանիքի մեջ դնելու համար. այսպես՝ հնդեվրոպականի, սեմականի, այթիոպականի, եգիպտականի, կովկասյան լեզուների, մանջուրերենի և այլն, բայց այդ փորձերը անհաջող են անցել։ Վերջին մի մենագրություն է Autran, Sumérien et indo-européen (Paris, 1925), որ ուզում է սումերները համարել հնդեվրոպական բնտանիքի շատ հին մի ճյուղը, բայց արված փաստերը այնպես անբավարար են, որ հետաքրքրություն ցույց են տալիս, քան այս ուղղությամբ որևէ աշխատանք ապարդյուն է։

բ. Էլամերեն

Էլամերենը այն հին քաղաքակիրթ աշխարհի լեզուն է, որ տարածվում էր Պարսից ծոցից մինչև Համադան (արդի Էքբատանը և Սուզիանան)։

Այս լեզվով են գրված Աքեմենյան թագավորներից Դարեհի և Քսերքսեսի արձանագրությունների Բ սյունակը, որի ինքնուրույնը երկար ժամանակ գիտունները չէին ճանաչել։ Բացի սրանից, կան մի խումբ էլամերեն արձանագրություններ, սկսած մ. Ք. ա. 2600 թվից մինչև 600, որոնք մեզ ցույց են տալիս այս լեզվի 2000 տարվա կյանքը։ Արձանագրություններից մի մասը երկլեզվյան և երեքլեզվյան լինելով՝ մեծապես նպաստել են վերծանման, բայց էլամերեն լեզվի ծագումը որոշելը դեռ կարելի եղած չէ։

Էլամերեն լեզվի մասին մի մենագրություն ունի Ֆ. Վայսբախը (F. Weisbach, Die achämeniden-inschriften zweiter Art, Leipzig, 1890)։

Այս գրքում գտնում ենք հետևյալ տեղեկությունները Էլամերենի մասին.

Էջ 50.— Հոդնակին կազմվում է p, pe *մասնիկով. օրինակ՝*

aššurap — *ասորեստանցիներ*
matape — *մարեր*
katpatukašpe — *կապադովկիացիներ*
papilappe — *բաբելացիներ*
zunkukip — *թագավորներ*

Այս բառերի դրչությունը ցույց է տալիս, որ պայթական բաղաձայնները անորոշ հնչում ունեին, այսինքն՝ խուլ և թրթռուն շփոթվում էին իրար հետ։

Հոլովները կազմվում են հետսարդիկներով. այսպես՝

սեռական.— -na,
allatif.— -ikki, -ikka,
ներգոյական.— -ma, -atima, -ikki, -ikka,
բացառական.— -mar, -ikki, -mar,
comitativ.— -itaka,
առջևը.— appuka.

Հոդնակիում նախ դրվում է p *մասնիկը, ապա՝ հոլովական մասնիկները. ինչպես՝*

mata-re-ikki — *մարերի, մարերին*
Paršin-ikka — *Պարսկաստանում*
Arminiyar-ikki — *Ի հայս*
Paršin-ikka-mar — *Պարսկաստանից*

Էջ 51.— Թուական թվականները կազմվում են բացարձակների վրա ավելացնելով -umme (*համմա. պրա.*— -um), *բայց ոչ մի թվական մեզ հայտնի չէ, որովհետև գրված են թվանշաններով և ոչ թե տառերով։ Հայտնի է միայն* kir, *որ է «մեկ»։*

ժ. Միտաննեները

Փոքրասիական պետությունները եգիպտական և հնդկական արձանագրությունների հետ երևան հանեցին նաև մի լեզու, որ է միտաննեները։ Մարդերից առաջ Հայաստանում բնակված է եղել միտանի ժողովուրդը, որի լեզուն էլ միտաննեերինն է, որ ունի

մ. թ. ա. 3000 տարվա հնություն։ Այս լեզվով ունենք Տաբուշատա քաղաքի մի նամակը եգիպտական փարավոնին, երկու նամակ Արզավայի լեզվով, որ միտաննիների մի բարբառն է թվում և վերջապես Փոքր-Ասիայում գտնված մի քանի արձանագրություններ՝ խուրրիների լեզվով, որոնց մեծագույնը 3500 տողանոց մի օրհներգ է։ Խուրրիները էլ միտաննիների մի ճյուղն էին և նրանց լեզուն միտաննիների մի բարբառն էր։ Բացի սրանցից կան գանազան քաղաքների և տեղերի անուններ։

Միտաննիերեն լեզվի մասին մի մենագրություն ունի Ֆ. Բորկը (F. Bork, Die Mitannisprache, Berlin, 1909)։ Լավ հեգնական քննության, այս լեզուն բայի մեջ մասնում է գերանվանական մասնիկներ՝ շնչավոր և անշունչ իրերի համար. օրինակ՝ par-uša-u+ani+il-an «նա քեզ նրանք ուղարկեցին» (էջ 11)։

Հեղինակը դիտավորապես բայի այս հատկության վրա հիմնվելով՝ միտաննիերենը կցում է հարավային կովկասյան չերքեզ, ավար, հյուրկիլի և այլ լեզուների խմբին (էջ 71)։ Հենց ինքը, ասելով հանդերձ, թե արժեք չունեք է տալ բառական համեմատություններին, որովհետև 3500 տարիներ բաժանում են միտաննիերենը արդի լեզուներից (էջ 71), այնուամենայնիվ, մի կողմից՝ համեմատում է էլամիերենի հետ և, մյուս կողմից՝ կովկասյան լեզուների հետ։ Ջրմանալի է օրինակ, միտաննիերեն iwri «քաղաքը» բառը, որ համեմատում է վրաց. me-uph-e «քաղաքը» բառի հետ, որին ոչ մի չափով հավասար։

Ուրիշներ, հիմնվելով անունների վրա, որոնք բոլորովին իրանական են (ինչ. Artatama, Artašuara և այլն), համարում են իրանական։ Վերջնական լուծումը ապագային է մնում։

Ժա. Ուկիրուա

Նոր գտնված մի լեզու է, բոլորովին անծանոթ։ Այդ լեզուն գտնվել է Փոքր-Ասիայում Ռաս Շամրա կոչված տեղում։ Յ. Բորկ ուսումնասիրեր այդ լեզուն կոչել է ուկիրուա՝ արձանագրությունների գտնված վայրի անունով։ Այդ ուսումնասիրեր հրատարակեց մի աշխատություն (Das Ukirutische, die unbekannte Sprache von Ras Schamra, Leipzig, 1938), որ վերլուծման առաջին քայլերը անելով, գտնում է, որ այդ լեզուն հնադարյան ազգական է խուրրիերենին, ապա՝ միացնելով էլամ, միտաննի, խալդի և այլ լեզուների հետ, ազգակից է դնում բոլորը հյուսիսային կովկասյան լեզուներին։

Անծանոթ ապրանքի մասին ինչքան ուզում ես տակարկիր։

Ժբ. Կանջուտերեն

Խոսվում է Հիմալայան շրջանում, իր շրջակա լեզուներից ոչ մեկի հետ հարաբերություն չունի։ Հակառակ խոսողների քվի փոքրության (20000 շունչ), այս լեզուն էլ ունի զանազան բարբառներ, ինչպես՝ վերշիկերեն, բուրուշասկի։

Այս լեզվի մասին առաջին տեղեկությունները տվել է Լայտները (1873). Նորերս երկու գիտնականներ, մեկը՝ Զարուբին, երկրորդը՝ Լորիմեր, ավելի ծանոթ դարձրին այս անծանոթ լեզուները (Տես Зарубин, Вершикское наречие канджутского языка, Л., 1927)։

Նույն լեզվի վրա նկարագրական և քննական աշխատություններ ունի Բլայխշտայները (WBKL, I, 1930, էջ 289—331)։

Կանջուտերենի գոյությունը ցույց է տալիս, որ հնդեվրոպացիների արշավանքից առաջ՝ Հնդկաստանում բացի դրավիդյան և մունդա լեզուներից, կար և մի երրորդ լեզվաընտանիք, որի միակ ներկայացուցիչն է կանջուտերենը, ինչպես բասկերենը Իբերիայում։

Ժգ. Ադաի

Չին-տիբեթական ընդարձակ ընտանիքից պաշարված, Չինաստանի արևելյան մի անկյունում խոսվում է մի փոքրիկ լեզու լաղի կամ լաչի, որ գտնվում է Յունանի և Տանկինի սահմանում, լայնությամբ 105 և երկ. 23 աստիճանի վրա։ Այս լեզվով խոսողների թիվը է միմիայն 450 անձ։ Ո՛չ մի ծանոթ լեզվի հետ կապ չունի։

ԳԼՈՒԽ ԺԲ

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Նախորդ գլուխներէ մէջ քիչերնիս բոլոր լեզուախմբերը իրենց պատկանած լեզուներով միասին։ Այս ցուցակը սակայն կատարեալ չէ և չի էլ կարող լինել, որովհետև հային անչուշտ բազմաթիվ լեզուներ, որոնք բոլորովին անհետացել են առանց որևիցե հետք թողնելու, և որոնց մասին գիտութիւնը ոչինչ չգիտե։ Եվ, իրօք, ևթէ նոյնիսկ պատմական շրջանից կան այնպիսի լեզուներ, որոնցից հազիվ մի երկու բառ է հասել մեզ, ուրեմն ինչ պետք է լինի հնագոյն նախապատմական շրջանում, որի գոյութիւնը միայն գիտական վարկածներով է հաստատւում։

Հետաքրքրական է իմանալ մեզ ծանօթ հին ու նոր լեզուների ընդհանուր թիվը։

Արևելեան ազգերի մէջ ընդունված կարծիք է աշխարհի բոլոր ազգերի և լեզուների թիվը դնել 72։ Նոյնիսկ կատակով այս թիվին ավելացնում են նաև $^1/_2$, գնչուների համար, որ համարում են կէս ազգ և կէս լեզու։

Այս 72 թիվը առաջացել է Մ. Գրքից. յայտնի (Ծն. ժ 1—32) թված է Նոյի երեք որդիների և նրանց թոռների անուններն և նրանցից ծագած ազգերը, որոնց հանրագումարն է 72։ Մինգոց գրքի նախագրութեան մէջ նոյն գլխի վերնագիրն է «Ծնունդք երից որդւոցն Նոյ՝ ի բնականսն և երկուց ազգացն»։ Նոյն գագափարը կրկնվում է և ուրիշ տեղեր. օրինակ՝ Հայոց մատենագրքի մէջ (մատ 27) ս. Կատարինեի համար ասում է. «Եւ եղև գիտակ ամենայն բարբարոսաց լեզուացն, մինչ զի ի քերան ընթեռնոյր զամենայն հին և նոր Կտակարանս և զ 72 ազգաց խոսս և զլեզուս ուսուցս։ Բարեկ Մաշկեցրցի, Մեկն. Մարկոսի էջ 409. «յամենայն լեզուս գտանի խոսսումանոց աստուածութեանն Քրիստոսի և չգոյ այլ ինչ կրօնք որ բնկալեալ եղև յ72 լեզուս, բայց միայն քրիստոնէից»։

Տաթևացին (Գիրք հարցմանց, էջ 298) պատմում է, որ Սիւնաստում գոդին ի նմանութիւն հոգմոյ եկեալ գմիննն 72 բաժանեացն։ Նա նույնիսկ տալիս է այդ 72 ազգերի կամ լեզուների անուննները՝ հետևյալ ձևով։

Եբրայեցիք	Եմանացիք	Սպանդիացիք
Ասորիք	Երուսացիք	Տիկիացիք
Բազդէացիք	Սամարացիք	Դազմատք
Մարիանոսք	Փիւնիկեցիք	Լամիմանացիք
Ազուանք	Կիլիկեցիք	Ուզդիրացիք
Բասանացիք	Մարացիք	Եզդոնացիք
Տաճիկք	Գամիրք	Կրէտացիք
Հուսք	Հայք	Բուբաստանցիք
Բուլղարք	Տայգերեցիք	Տարսացիք
Պեճենեկք	Վիրք	Կիւրենացիք
Մունդք	Սկիւթացիք	Մոսոմիացիք
Ռիկոյք	Կաղքացիք	Դէտուղացիք
Միսիք	Յոյնք	Ղևտացիք
Թղուկք	Ղևոնացիք	Ղափիրացիք
Թևովպացիք	Վեսդիացիք	Մաղիացիք
Մազրուտք	Գաղատացիք	Դամատրանք,
Գարգանացիք	Պանփիւլացիք	որ են բերդացիք.
Արաբացիք	Աքայեցիք	Մայիմոնք
Լերգարացիկք	Տուրացիք	Հնդիկք
Քևտացիք	Մուսաք	Եգիպտացիք
Քանանացիք	Նուսաք	Ելլադացիք
Փերեզացիք	Գարգացիք	Ուզդարացիք*
Խևացիք	Սարմատք	Ազդանացիք
Ամաւրհացիք	Գեմոնացիք	
Գերգեսացիք	Գեմոնացիք	

Թողնելով ավանդություննները և ժողովրդական կարծիքները, դառնանք գիտությանն։ Որքան զարմանալի պիտի լինի, երբ ասենք, թե գիտուննները լեզուների թվի մասին համաձայնիք չեն։ Ոմանք դնում են դրանց թիվը 733 (Եվրոպայում՝ 53**,

* Նույն է վերևի Ուզդիրացոց հետ, ուստի դրանցից մեկը ջնջելով պետք է դնել Գարսիկք, որ մոռացված է. դումարը լինում է 72։

** Տևանիները մանրամասն վիճակագրությամբ հաշվելով Եվրոպայի լեզուները, նրանց թիվը դրել է 120, բայց դրանց մեջ մացրել է նաև այն լե-

Ասիայում՝ 143, Աֆրիկայում՝ 115, Ամերիկայում և Օվկիանիայում՝ 422). ուրիշներ հասցնում են 2000-ի, վերջապես կան, որ 4000, 6000 և մինչև 8000 լեզու են ընդունում: Այսպես՝ Յորիդրիխ Արլունդը գնում է 3064 լեզու (որից Եվրոպայում՝ 387, Ասիայում՝ 937, Աֆրիկայում՝ 276, Ամերիկայում և Օվկիանիայում 1264), Բալբին գնում է 860 լեզու (Եվրոպայում՝ 48, Ասիայում՝ 153, Աֆրիկայում՝ 118, Ամերիկայում՝ 424, Օվկիանիայում՝ 117), որի վրա ավելացնելով 3000 բարբառ, բոլորը՝ 3860:

Ի՞նչ է այս անագին անհամաձայնության պատճառը:

Բնության մեջ ոչ մի ուղղ սահման չկա. նյութը իր ամենադարձ վիճակից մինչև իր ամենաբարձր ձևը ներկայացնում է հաջորդական ձևափոխությունների մի այնպիսի անընդհատ շարունակություն, որ եթե երկու հեռավոր ծայրերը չտեսնանք տարբեր են թվում մեզ, միջին և դրացի կետերը գրեթե անկարելի է զանազանել: Բուսաբանության մեջ գիտնականները 300 000 ուսումն բույսեր են հաշվում. միմիայն խոզդը, որ մի առանձին տեսակ է, ունի 3600 զանազանություն: Բայց ինչ դժվարություն որոշելու տեսակները զանազանություններից և, մանավանդ, զանազանությունները՝ իրարից:

Այսպես է նաև լեզուն, որ ներկայացնում է էլ ավելի բարդ և հարափոփոխ մի դրություն: Մենք չգիտենք, թե ուր է սկսում լեզուն և ուր վերջանում, որովհետև հին լեզվի և նոր լեզվի սահմանագիծը, ինչ է լեզուների, բարբառների և ենթաբարբառների սահմանագիծը:

Լեզու ասելով ընդհանրապես հասկանում ենք այն սահմանը, ուր երկու հոգի այնպես տարբեր են խոսում իրարից, որ իրար չեն հասկանում. բայց իրար բոլորովին հասկանալուց մինչև բոլորովին չհասկանալը կան բազմաթիվ վիճակներ, որոնց յուրաքանչյուրի մաթեմատիկական ճիշտ դրությունը որոշել անհնար է:

1063 թվին Յրանսիայի Աննա թագուհին ստորագրել է իր անունը այսպես՝ ana ruina. երկար վիճաբանություններ են ու-

---

գուններըդ որոնք թեև հապես ասիական են, բայց գաղթականների պատճառով խոսվում են նաև Եվրոպայում, ինչպես՝ հայերենն, արաբերենն, և այլն: Եվրոպայումն է հաշվել նաև վրացերենը, քյուրքերենը, ուտիերենը(!) և կոնտոն կովկասյան լեզուներ: Այս բոլորը դուրս գալով՝ Եվրոպայում կոնում ենք միայն 60 լեզու

դի ունենալ գիտական աշխարհի մեջ որոշելու համար, թե թագուհին այդ երկու բառն արձանագրելով լատիներեն մտածելով է դրել, թե ֆրանսերեն։ Հարցը դեռ վճռված չէ։ Բայց դա մեզ համար մի հետևելի օրինակ է ցույց տալու համար, թե որքան դժվար է որոշել լեզվի սահմանը։

Ինդիերը ավելի է բարդանում, երբ լեզուների բնական պրոցեսի մեջ խառնվում են նաև քաղաքական և ազգային զանազանություններ։ Գիտությունը գալիս է սահմաններ գծելու այնտեղ, ուր իրապես սահման չկա. այսպիսով՝ լեզուները արվեստականորեն սահմանորոշվում են, իսկ բարբառները խառնվում են և կորցնում իրենց անհատականությունը։ Այսպես՝ մենք գիտենք, որ ֆրանսերենը առանձին լեզու է, և պրովանսալը նույնպես առանձին լեզու է. իսկ ինչ են գասկոնը, օվեռնիան, որոնք ֆրանսերենի բարբառներ ենք համարում։

Մակեդոնիայում խոսվում են զանազան սլավ բարբառներ, որոնցից ոմանք սերբական են համարվում, մյուսները՝ բուլղարական, բայց լեզվաբանորեն անկարելի է որոշել, թե որոնք պետք է սերբ համարել և որոնք բուլղար։

Յարական շրջանում ուկրաիներենը բարբառ էր համարվում. թեև գիտուններն ճանաչում էին իբր անկախ լեզու։ Դա ցարական քաղաքականության շնորհքն էր։ Յանկանում էին փոքր ազգերը ջնջել Մեծ Ռուսաստանի հաշվին։ Բայց երբ Սովետական իշխանությունը եկավ, ոչ միայն ճանաչեց ուկրաիներենը իբրև անկախ լեզու, այլև Ուկրաինան անկախ երկիր դարձրեց։

Ցարական շրջանում վրացերենը անկախ լեզու ճանաչված էր. իսկ մինգրելերենը՝ ոչ, թեև գիտությունը նրան էլ անկախ լեզու էր համարում։ Այժմ երկուսն էլ անկախ լեզու են համարվում։

Հայերենը առանձին լեզու է. իսկ Ագուլիսի և Ղարաբաղի բարբառները լեզու չեն. սակայն հայերենը, «ագուլեցերենը» և «ղարաբաղցերենը» շատ ավելի տարբեր են իրարից, քան, օրինակ, իսպաներենն ու պորտուգալերենը, կամ դանիերենն ու նորվեգերենը, որոնք անշուշտ առանձին լեզուներ են։

Ահա մի փոքրիկ օրինակ.

գրբ. Զի այնպէս սիրեաց աստուած զաշխարհ.
աշխ. Որովհետև աստված այնպես սիրեց աշխարհը.
գլ. Ինչու վոր աստված անանդ սիրէց աշխարքը.

գրբ. Ընդբա մհար վբէր աստուծ ինդի սիրից աիշարբ.
գոկ. Ընդբունդի աստած անդի սայրաց աշխարքը.
պորտ. Porque deus amou o mundo de tal maneira
իսպան. „ dios amo' al „ „ „ manera

Այս վերջին երկուսի մեջ 8 բառից չորսը կատարելապես նույն են, մյուսներըբ՝ գրեթե նույն, մինչդեռ հայերենի գանազան ձևերի մեջ չկա մեկը, որ կատարելապես նույն լինի մյուսի հետ։ Եթե Իսպանիան և Պորտուգալիան առանձին պետություններ չլինեին, մանավանդ, եթե պորտուգալերենը գրականության բարձրացած չլիներ, անշուշտ այդ երկուսը մի լեզու պիտի համարեինք. ինչպես որ՝ եթե Ղարաբաղը առանձին պետություն կազմեր և իրը պաշտոնական լեզու ընդուներ Ղարաբաղի բարբառը և գրականություն ստեղծվեր, դա պիտի գառնար առանձին լեզու։

Ավելացնենք վերջապես այն, որ նույնիսկ հայոնի լեզուները գետնի համար բարբառներ են. օրինակ՝ ասուերները, որ անշուշտ մի լեզու է, բարբառ է մայր սլավոնական լեզվի համար և այս մայր սլավոնական լեզուն էլ մի բարբառ է ընդհանուր հնդեվրոպական նախալեզվի համար։

Այսպես, ուրեմն, լեզու և բարբառ, մանավանդ բարբառ և ենթաբարբառ հարաբերական բառեր են և ստեղծված են միայն ժամանակավոր հարմարության համար։ Կարելի է նրանց քիվը անհունապես մեծացնել կամ, ընդհակառակն, շատ փոքրացնել. նայելով, թե ինչ չափանիշ ենք բռնում։ Ճիշտ խոսքով լեզուները հաշվել անկարելի է։

Լեզուների վիճակագրության նվիրված մեծագույն աշխատանքն է գրել Մյուլլերը (1876—88), որ բացի լեզուների գասավորությունից տալիս է նաև նրանց համառոտ քերականական ուրվագիծը և յուրաքանչյուրից մի նմուշ։ Այս աշխատությունը հիմա հնացած է։ Շատ ավելի ամփոփ, բայց ավելի նոր է Finck, Die Sprachstämme des Erdkreises (Leipzig, 1909), *որ տալիս է բոլոր լեզուների գասավորությունը և վիճակագրությունը, համառոտ նկարագրությամբ, առանց նմուշների։ Ամենանոր աշխատությունն է* Les langues du monde (Paris, 1924. *խմբագրությամբ մի խումբ լեզվաբանների), որի գասավորության հետևել ենք մենք էլ մեր նախորդ գլուխներում։ Սրան հաջորդեց Շմիդտի* Die Sprachfamilien und Sprachenkreise der Erde (1926) *աշխատությունը։*

Ջանազան լեզուների իբրև նմուշ պետք է հիշել Ադելունգի Mithridates (Berlin, 1806—1817), որ պարունակում է Հայր մերը 500 լեզվով կամ բարբառով։ Նորագույններից կարելի է հիշել մի շատ մատչելի և հետաքրքրական տետրակ, որ Բրիտանական բիբլիական ընկերությունը հրատարակում է հաճախ նորանոր տպագրություններով և որ պարունակում է Մ. Գրքի հետևյալ պարբերությունը այլևայլ լեզուներով. «Չի այնպես սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զորդին իւր միածին եա, զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանան յաւիտենականս» (Յովհ. Գ. 16)։ Աչքի առաջ ունեմ նույնի 1921 թվի հրատարակությունը (The Gospel in many tongues, London), որ պարունակում է նույն հատվածի թարգմանությունը 543 լեզվով ու բարբառներով (բարբառներից ոմանք էլ հաշվի մեջ չեն առնված)։ Կա և նույնի ռուսական հրատարակությունը լեզուների դիտական դասավորությամբ և լեզուների քարտեզով։

1948 թ. Ռուսաստանում հրատարակվեց Իոսիֆ Ստալինի համառոտ կենսագրությունը 54 լեզվով, մեծ մասը Սովետական Միության ժողովուրդների, մի քանիսն էլ այլ երկրների լեզուներով։

Հետաքրքրության համար հիշենք վերջապես երկու հայկական բազմալեզվյան հրատարակություն, մեկը՝ «Հաւատով Յոհաննէսի» ապոթքը 36 լեզվով (Վենետիկ, 1882) և մյուսը՝ «Ըստ օրինակ գայնոսիկ» ապոթքը 50 լեզվով (Վիեննա, 1893)։

Լեզուների թվից հետո հետաքրքիր պետք լիներ իմանալ նաև լեզուների տարածման աստիճանը, այն է (իբրև մայրենի լեզու) խոսողների թիվը։ Այս մասին լավագույն աշխատությունն է Tesnière, Statistique des langue dans l'Europe, որ իբր հավելված հրատարակված է Մեյեի Les langues dans l'Europe nouvelle (Paris, 1928) գրքի վերջում (էջ 291—493)։ Ըստ Տեսնիերի, աշխարհիս լեզուների թիվը դնելով 1500 և ամբողջ երկրագնդի բնակչությունը 1 800 միլիոն, որանցից մոտ քառորդը (400 միլ.) խոսում է չինարեն, որ աշխարհիս ամենատարածված լեզուն է. կեսը բաժանվում է 7 լեզվի վրա, երեք քառորդը՝ 22 լեզվի վրա, և մնացյալ մի քառորդը՝ 1478 լեզվի վրա։

Հաշվելով միայն առնվազն 10 միլիոն խոսող ունեցող լեզուները, վիճակագրությունը[1] տալիս է մեզ հետևյալ ցուցակը.

[1] Այս վիճակագրության մասին պետք է անել հետևյալ հետևությունները. թվերը վերցված են առաջին համաշխարհային պատերազմից հետո կա-

1. Ջինաբեն	500 միլ.	16. Հինդի (արևել.)	23 միլ.
2. Անգլերեն	170 »	17. Տեյուգու	24 »
3. Գերմաներեն	81 »	18. Լհնդերեն	23 »
4. Բուսերեն	100 »	19. Մարաթի	19 »
5. Իսպաներեն	65 »	20. Թամուլերեն	19 »
6. Ճապոներեն	55 »	21. Կորեերեն	17 »
7. Բենգալի	50 »	22. Փենջաբի	16 »
8. Ֆրանսերեն	45 »	23. Աննամերեն	14 »
9. Իտալերեն	41 »	24. Բուրմներեն	14 »
10. Թյուրք-թաթ.	39 »	25. Ռաջաստանի	13 »
11. Հինդի (արևմ.)	38 »	26. Հոլանդերեն	13 »
12. Արաբերեն	37 »	27. Կանարերեն	10 »
13. Բինարի	36 »	28. Օրիյա	10 »
14. Պորտուգալ.	36 »	29. Հունգարերեն	10 »
15. Ուկրաիներեն	34 »		

Մի վերջին հաշիվ էլ պետք է տալ այն մասին, թե մի լեզու որչափ տարածված է արտաքին աշխարհում, այսինքն՝ իբրև կուլտուրական օժանդակ լեզու տարածված է այլախոս ժողովուրդների մեջ, մայրենի լեզվի կողքին։ Մինչև ԺԲ դարը տարածված կենը այս դերը ֆրանսերենինն էր, որ միջազգային հարաբերությունների պաշտոնական լեզուն էր և տարածում էր աշխարհիս 3 մասերում իբրև կուլտուրական լեզու։ Ֆրանս-պրուսական պատերազմից հետո այս դիրքը սկսեց խախտվել և գերմաներենը տարջ անցավ ֆրանսերենից, հատկապես՝ Ռուսաստանում, Բալկաններում, Թյուրքիայում և Ավբրիկայում։ Առաջին համաշխարհային պատերազմը նկավ միանգամայն վերջ տալու գերմաներենի այս դիրքին, և սա շուտով տեղի տվեց անգլերենին, որ ոչ միայն նրան հաղթեց, այլև սկսեց արտոբոին դուրս վել ֆրանսերենի էլ տարածքից։

[Գտահեղը արժատապես փոխվեց երկրորդ համաշխարհային

տարված վիճակագրություններից, որ այժմյան դրության չի համապատասխանում։ Նոր ավյալների համաձայն փոխել ենք ռուսերեն և չինարեն խոսողների քիվը, իսկ մյուսների համար նոր ավյալներ չունենք։ Անգլերենը, թեև համարված է 170 միլիոն մարդու մայրենի լեզու, բայց այդտեղ ակնհայտորեն չափազանցում կա, որ արդյունք է անգլո-ամերիկյան չհաղթահարված վիճակագրության։ Այսպիսով, այս քվական ավյալները պետք է մոտավոր համարել։ Ծանոթ. խմբ.։

պատերազմի ժամանակ և նրանից հետո։ Միջազգային հարաբերությունների մեջ Սովետական Միության խաղացած բացառիկ դերի շնորհիվ, մանավանդ հիտլերյան Գերմանիայի ջախջախման ու ամբողջ աշխարհում խաղաղություն հաստատելու գործին մատուցած բացառիկ ծառայության շնորհիվ ռուսերենն այժմ մեկն է դիվանագիտական հարաբերությունների մեջ գործածվող միջազգային լեզուներից։ Մյուս կողմից՝ հենց այդ բոլորի շնորհիվ աշխարհի ազատասեր ու առաջադեմ մարդկության հայացքն այժմ դեպի մեր Միությունն է ուղղված, որ և իր հերթին ավելի ևս բարձրացնում է ռուսական կուլտուրայի, գիտության ու ռուսաց լեզվի հեղինակությունը։ Այս բոլորի շնորհիվ էլ, ահա, ռուսերենը աշխարհի առաջնակարգ լեզուներից մեկն է այժմ։]

Այժմ խոսենք լեզուների դասակարգության մասին։

Շատ դիտությունների մեջ կարևոր է դասակարգությունը կամ բնության առաջ բերած զանազան երևույթների և առարկաների մեջ գտնված հաջորդական զարգացման աստիճանները որոշելու համար, և կամ նման կազմություն ունեցող առարկաները իրար հետ միասին խմբավորելու համար։ Դրանով մարդկային միտքը գտնում է այն կապակցությունը, որ կա այդ զանազան երևույթների և առարկաների մեջ, որով և զանազան երևույթներն ու առարկաները դադարում են այլևս անջատ ու առանձին լինելուց և ենթարկվում են ընդհանուր օրենքների։

Լեզուների դասակարգությունը կարելի է անել մի քանի մեթոդով.

1) Մարդու բնական տեսակետով.— Ամբողջ լեզուները բաժանվում են չորս ճյուղի. սպիտակ ցեղի լեզուներ, դեղին ցեղի լեզուներ, սև ցեղի լեզուներ և պղնձագույն ցեղի լեզուներ։ Այս բաժանումը, որին հետևել է Մյուլլերը իր խոշոր աշխատության մեջ, ամենից ավելի անճիշտ ու անգիտականն է։ Ոչ մի կապ չկա մարդու գույնի և նրա խոսած լեզվի միջև. միևնույն գույնին պատկանող ժողովուրդներ խոսում են բոլորովին տարբեր տիպի լեզուներ. և հաճախ են պատահել պատմության մեջ ազգեր և ժողովուրդներ, որ փոխել են իրենց լեզուն, մինչև իսկ մի քանի անգամ։

2) Կենսաբանական տեսակետով.— Ըստ այսմ լեզուները դասավորվում են 3 մեծ խմբի. անջատական, կցական և թևքական։ Բայց այս բաժանումն էլ ճիշտ չէ և չի կարող տալ իրա-

կան պատկերը. Նախ, որովհետև շատ լեզուներ գտնվում են մի-ջին շրջաններում, և երկրորդ՝ որ մի լեզու իր կյանքի ընթաց-քում կարող է մի վիճակից մյուսը անցնել՝ համաձայն իր գոր-գության:

3) Աշխարհագրական տեսակետով.— Լեզուները բաժանվում են բուն աշխարհամասերի, այսպես՝ Եվրոպական, ասիական, աֆ-րիկյան, ամերիկյան, օվկիանյան լեզուներ: Բայց այս բաժա-նումն էլ ոչ մի գիտական արժեք չունի, որովհետև նախ՝ ազգերը շարունակ գաղթականության ճանապարհին են. այսպես՝ հուն-գարիները և բուլգարները մեկ այժմ Եվրոպայում են խոսում, բայց առաջ Ասիայում էին. երկրորդ՝ կան լեզուներ, որոնք խոսվում են զանազան ցամաքամասերի վրա. ինչպես՝ թյուր-քերենը, ռուսերենը, որոնք խոսվում են թե Եվրոպայում, և թե Ասիայում, արաբերենը խոսվում է թե Ասիայում, և թե Աֆրի-կայում (մի ժամանակ նաև Եվրոպայում), անգլերենը խոսվում է թե Եվրոպայում, թե Օվկիանիայում և թե Ամերիկայում:

4) Սննդաբանական տեսակետով.— Լեզուները դասավորվում են համաձայն իրենց ծագման, անկախ ազգերի մարդաբանական ծագումից, բնական երկրներից և անկախ այն կենսաբանական դրությունից, որ ներկայացնում է լեզուն այսինչ կամ այնինչ ժամանակ:

Այս տեսակետն է, ահա, որ մենք էլ ընդունել ենք իբր հիմք մեր դասակարգության:

Բայց բոլոր լեզուները ծննդաբանական տեսակետով քննված ու որոշված չեն. այս պարագային միայն ստիպված մենք վերցրել ենք աշխարհագրական տեսակետը:

Ի լրումն այս բոլորի տալիս ենք այսպես լեզուների և լեզ-վախմբերի ծննդաբանական ծառը: Ծառը ներկայացնում է ամ-բողջ մարդկությունը, ծառից բխած յուրաքանչյուր ճյուղ ներ-կայացնում է մի ընտանիք, իսկ ճյուղից բխած ոստերը և ոս-տիկները ներկայացնում են նույն ընտանիքին պատկանող լեզ-վաճյուղերը և առանձին լեզուները: Բնականաբար բարբառները նշանակել կարելի չի եղել:

Ծառը, ինչպես ասացինք, ծննդաբանական է. լեզուներն ու լեզվախմբերը դասավորված են բուն իրենց ծագման: Բայց ինչ-պես գիտենք, շատ լեզուների ծագումը դեռ որոշված չէ. այս-պես, սրբնակ, ավստրալիական, ամերիկյան և այլ նույնպիսի լեզուներ: Այս պատճառով այդ լեզվախմբերը բնև նշանակված

են իբրև մի մի ճյուղ, բայց այդ բաժանումը վերջնական չէ և չունի գիտական ճշտություն։ Դրանց վրա պիտի նայել լոկ իբրև աշխարհագրական արտահայտություն։ Այսպես նաև՝ նրանց պատկանող լեզուները։

Անհայտ լեզուները դրված են ծառի գագաթում, իբրև առանձին ծիլեր։


Լեզուների ծննդաբանական ծառից հետո դնում ենք լեզուների աշխարհագրական քարտեզը։ Քարտեզը ներկայացնում է մեր կիսագունդը, այն է Եվրոպա, Ասիա, Աֆրիկա, հետո առնելով նաև Ավստրալիան և Օվկիանիայի կղզիների մի մասը (չենք առել Ամերիկան, որովհետև ամերիկյան լեզուների համար չկա դեռ գիտական ծննդաբանական դասակարգություն)։ Քարտեզով նշանակված են լեզվաբանական ընտանիքները առանձին գույներով և նրանց մեջ էլ լեզուները առանձին սահմանագծերով։ Քաղաքական բաժանումները բնականաբար ի սպաս անտես են առնված։


Լեզվաբանական քարտեզից դուրս կա նաև լեզվաբանական ատլասը։

Լեզվաբանական ատլասը նոր երևույթ է գիտության մեջ. պատկանում է վերջին քսանամյակին։ Նա ներկայացնում է մի որոշ լեզվի համար բազմաթիվ քարտեզների մի հավաքածո, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է մի բառի կամ քերականական ձևի վիճակագրության։ Մի առ մի նշանակված է, թե այդ բառը կամ ձևը երկրի զանազան կողմերում, քաղաքներում և գյուղերում ինչ ու ինչ ձևով է հնչվում։

Առաջին անգամ վենկերը սկսեց կազմել Գերմանիայի լեզվաբանական ատլասը. պատրաստեց 40 կարճ նախադասությունների մի ցանկ և առաջարկեց բոլոր դպրոցների ուսուցիչներին. ստացավ 40,736 տեղից պատասխան, որոնց վրա Մարբուրգում պիտի պատրաստվեր ատլասը։ Այս ծրագիրը չիրականացավ։

Իրապես առաջին լեզվաբանական ատլասը կազմեցին ֆրանսիացիները, բաղկացած 1750 քարտեզից, որ պարունակում է Ֆրանսիան, և Բելգիայի ու Շվեյցարիայի ֆրանսախոս մասերը։ Սրանց հետևեցին Կորսիկայի, Բրբրաների, Կատալոնիայի, Իտալիայի և մասամբ Սլովենիայի և Լհասատանի ատլասները։ Այժմ կազմվում է ռուսերենի բարբառագիտական ատլասը, ինչպես հայտարարեց ՏԱՍՍ-ի հաղորդագրությունը (10 մայիսի, Սովետական


ՀԱՅԿԱԶՆԵՐ
ՀԱՅԿԱԶՆԵՐ
ՀԱՅԿԱԶՆԵՐ



Հին աշխարհի քարտեզ

Հայաստան, 1949, № 109)։ Ատլասը պիտի բաղկանա 11 հատորից և պիտի պարունակի ավելի քան 3000 քարտեզ։

Այսպիսի խոշոր ձեռնարկութիւնների մասին մենք միայն այժմ կարող ենք մտածել։ Հայերենի համար կա բարբառների մի պարզ քարտեզ, որ հրատարակել եմ նախ Ֆրանսերեն (տես իմ Classification des dialectes arméniens) *և հետո հայերեն (տես իմ «Հայ բարբառագիտութիւն»-ը)։*

ԳԼՈՒԽ ԺԶ

ԼԵԶՎԱԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

Լեզվի բարեշրջության մասին խոսելիս տեսանք, որ լեզուները շարունակական փոփոխության մեջ են. նույնպես լեզվի կենսաբանության մասին խոսելիս՝ ասացինք, որ լեզուն շարունակ փոխում է իր կազմական հարինվածությունը, սկսելով անջատական ձևից, անցնելով կցականից և հասնելով թևքականի, հետո նորից ետ, և այսպես՝ շարունակ։

Արդ՝ եթե այսպես է, կարելի չէ ուրեմն մի որևէ լեզվաընտանիքի հարինվածության մասին տալ որևէ ընորոշում, որովհետև յուրաքանչյուր լեզվաընտանիքի անհատ լեզուները պարտավոր չեն զուգահեռաբար և հավասար աճունությամբ զարգանալ։ Ռուսերենը կատարյալ թևքական լեզու է, մինչդեռ անգլերենը վերածվել է անջատական ստոիճանի. և սակայն երկուսն էլ պատկանում են հնդեվրոպական լեզվախմբին։ Ի հակառակն դատելով՝ որևէ լեզվի հարինվածական ընորոշումը կարող չէ որոշել, թե այդ լեզուն ո՛ր լեզվաընտանիքին է պատկանում. այսպես, օրինակ, եթե մեկը անգլերեն ու ռուսերեն լեզուների հարինվածական ձևը ի նկատի առնելով ուզեր որոշել նրանց ծագումը, պիտի ասեր, թե նրանք տարբեր լեզվաընտանիքների զավակ են, մինչդեռ անգլերենը ցեղակից պիտի դներ չինարենին, քանի որ այս երկուսն էլ անջատական լեզուներ են։ Այսպիսի մի սխալ էր, որ առաջնորդել էր հին լեզվաբաններին՝ ցեղակից համարելու թևթառական և ուգրո-ֆիննական լեզուները, որովհետև երկուսն էլ կցական էին կամ երկուսի մեջ էլ գոյություն ուներ ձայնավորների ներդաշնակության օրենքը։

Ինդիրը ավելի է բարդանում, երբ նկատի ենք առնում զանազան լեզուների ձայնական և քերականական կազմության ընդհանուր գծերը. այսպես՝ հայերենը երկար ու կարճ ձայնավորների զանազանությունը չգիտե, վերմաներենը և ուրիշ հնդ-

հվրոպական լեզուներ գիտեն. լատիներենը, հունարենը, սանսկրիտը գիտեն գանազանել երեք սեռ (արական, իգական և չեզոք), սամանական լեզուները, ականդինավյան լեզուները և լիտվանական խումբը ունեն միայն երկուսը (արական և իգական), իսկ հայերենը, անգլերենը, պարսկերենը ոչ մի սեռ չունեն։ Սանսկրիտը, սլավներենը և հայերենը ունեն լիակատար հոլովում, հունարենը և լատիներենը՝ պահպանվող, ֆրանսերենը՝ ավելի պահպանվող վիճակում, ամեն մի ֆեսի մեջ էլ մխիթարյան լեզվաբանագիրքն պատկանող լեզուները ներկայացնում են գանազան տարբերություններ և այս ոչ թե միայն հնդեվրոպական բնատանիքի համար, այլ առհասարակ բոլոր բնատանիքների համար։

Լեզուների ցեղակցությունը որոշելու համար ոչ մի արժեք չունի մարդաբանական նույնությունը։ Այս մասին արդեն խոսել ենք։ Սխալվում էին հին լեզվաբանները, որոնք լեզուները կապում էին մարդաբանական ցեղակցության, մազերի գույնի հետ և այլն։ Դրա անիմաստ լինելը հենց նրանից է հայտնի, որ միևնույն սպիտակ ցեղը բաժանվում է մի քանի անկախ, ուրույն, անջատ լեզվաբնատանիքների. ինչպես՝ հնդեվրոպական, սեմական, ուգրո-ֆիննական, մինջերկրյան, բասկերը և այլն, միևնույն գեղին ցեղը ունի չինական, հապոնական և այլն խմբերը։ Գիտության մեջ շատ է պատահել, որ միևնույն ազգը մի քանի անգամ լեզու է փոխել, ուրեմն ոչ մեզ լեզվի և ազգի ու ցեղի նույնությունը։

Լեզուների ցեղակցությունը որոշելու համար մարդաբանական նույնությունից էլ ավելի քիչ արժեք ունի քաղաքակրթության և կամ ազգագրական նույնությունը։ Երկու ազգ կարող են ունենալ նման կամ բոլորովին նույն քաղաքակրթություն, ինչպես կարող են ունենալ նմանապես հագուստ, բնակարան, ազգագրական սովորներ, նախապաշարմունքներ, սովորություններ, կրոն, հեքիաթներ, առածներ, հանելուկներ և այլն, և այլն, բայց և պատկանել բոլորովին տարբեր լեզվաբնատանիքների։ Այն բանից, որ Գիբրալտարի լեռների բասկ հովիվները, ինչպես և մեր Մոկաց լեռների հովիվները, սովորություն ունեն դաշտում կամբ տաքացնելու համար նրա մեջ հրավառ քարի կտորներ դնել, չի հետևում, թե երկու ժողովուրդների լեզուները էլ նույն բնատանիքին են պատկանում։ Եվ այս շատ բնական է, քանի որ, ինչպես քիչ առաջ տեսանք, երկու ժողովուրդների ցեղակցական նույնությունն անգամ բավական չէ ենթադրելու լե-

դունների ցեղակցություն։ Բաղաքակրթությունը պայմանների և դաստիարակության արդյունք է, մանավանդ ենթակա ուսանելու և օրինակության, հետևաբար հնչությամբ տարածվում է երկրից երկիր և անկախ է ժողովուրդների խոսած լեզվի բնույթից։

Ուրեմն ինչ նշան կա ճանաչելու համար, թե որևէ լեզու պատկանում է այս կամ այն լեզվաընտանիքին։

Դրա համար առաջին և հայտնի նշանը բառերի արտաքին նմանություն է. եթե մի լեզվի մեջ գտնենք mtr «մայր», ptr «հայր», dk կամ ds «տատան» ձևի զանազան բառեր, որոնք, ինչպես դիտենք, հնդեվրոպական ընտանիքին պատկանող բազմաթիվ լեզուներին հատուկ բառեր են, հասկանում ենք, որ այդ լեզուն հնդեվրոպական է։ Եթե մի ուրիշ լեզվի մեջ գտնենք xms «հինգ», 'arš «տատան» ձևի բառեր, որոնք այլուստ գիտենք, թե սեմական ընտանիքին հատուկ բառեր են, հետևցնում ենք, որ այդ լեզուն սեմական է։ Այսպես և՝ մյուսները։

Բայց մենք դիտենք, որ բառերը կարող են երկրից երկիր ճանապարհորդել. ամեն լեզու փոխառություններ ունի իր հարևան և նույնիսկ ոչ-հարևան լեզուներից. հետևաբար բառերի համեմատության ժամանակ մեր առաջին գործը պետք է լինի ստուգել, թե արդյոք տրված լեզվի մեջ այդ բառերը բնիկ են, թե փոխառյալ։ Մի հին լեզվաբան՝ քննելով հայերենը Պոլսի բնտանեկան բարբառի վրա և գտնելով այնտեղ բազմաթիվ թյուրքերեն բառեր, հետևցրեց, թե հայերենը պատկանում է թաթարական ճյուղին։ Բազմաթիվ հնդեվրոպագետներ և մեր հայ լեզվաբաններից շատ շատերը, գտնելով հայերենի մեջ բազմաթիվ բառեր, որոնք այնպես նման են պարսկերենի հետ, հետևցրին, որ հայերենը իրանական ճյուղին է պատկանում։ Մինչդեռ իրականությունն այն էր, որ ինչպես Պոլսի բարբառի թյուրքերեն բառերը, նույնպես և հայերենի իրանական բառերը հետին փոխառություններ են։

Այսպես, ուրեմն, փոխառությունները ճակատագրական նշանակություն ունեն լեզվի մեջ և նրանց հետ պետք է վարվել ամենայն զգուշությամբ։

Որոշելու համար, թե բառերը բնիկ են թե փոխառյալ, կան զանազան միջոցներ. նախ՝ լեզվի պատմությունը, երկրորդ՝ բառի կազմությունը կամ ստուգաբանությունը. թե արդյոք այդ բառը նույն լեզվի մեջ արմատ է թե ածանց, և թե նույն արմատով կան ուրիշ կազմություններ նույն լեզվի կամ նրա հետ հարե-

մատած լեզվի մեջ, երբորդ՝ ձայնական օրենքները: Այս վերջինը շատ անգամ վճռական գեր է խաղում:

Այսպես՝ բարեկենդան բառը ունենք նաև պարթևերենի մեջ baryandān ձևով. սրանք երկուսն էլ բնիկ են, իրրև երկուսն էլ հնդեվրոպական, քէ մինը մյուսից փոխառյալ է, և ևթէ՝ այն, որը որից է փոխառյալ: Հարցը վճռում է բառի առաջաբանությունը: Հայերենի մեջ բառը կարող են առաջաբանել բարի և կենդան բառերից կազմված, ինչպես որ ունենք էլ ևԵս ասացի ի բարեկենդանութիւնն իմում» գործածը (ագ. խԲ. 7), մինչդեռ պարթևի մեջ ոչ մի առաջաբանություն չի գիտանում: Սրանից հետևում է, որ բառը հայերեն է և պարթևին է, որ փոխ է առել մեզանից:

Կա հայ. աղյուս բառը, որի հետ նույնն է պրս. ăxīz ձևը. ինչ հարաբերություն ունեն սրանք իրար հետ. հարցը վճռում է ձայնական օրենքը: Մենք գիտենք, որ պրս. x դառնում է հայ. խ և չի կարող լինել ղ, որի հին հնչումն էր լ. հետևաբար պրս. ăxīz չի կարող դառնալ հայ. աղյուս, այն է՝ ալյուս, ինչպես ցույց է տալիս նաև վրաց. ալիզի: Մնացին մեկնաւն ժամանակ գիտենք, որ հյ. ղ < լ ձայնը ավելի հետո առացել է ղ (γ) կոկորդային հնչումը, որ կարող է դառնալ պրսկ. x. ուրեմն պարթևերենն է, որ փոխ է առել նույն բառը հայերենից և այն էլ այն ժամանակ՝ երբ հյ. ղ ձայնը արդեն գարձած էր կոկորդային:

Երբ համեմատելի բառերը պատկանում են տարբեր լեզվաընտանիքների, այս դեպքում խնդիրը շատ անգամ ավելի հնչուն է լուծվում: Երբ տեսնում ենք, որ նույն բառը գտնվում է տրված լեզվաընտանիքի գանազան լեզուների մեջ անկախաբար, ուրեմն հետևցնում ենք, որ նա բնիկ է այդ լեզվաընտանիքին և հետևաբար նաև նրա գավակ լեզվին: Այսպես՝ հայերենի մեջ ունենք ոչխար բառը, որ ձևով այնպես նման է վրաց. ցխովարի, ինգիլ. ցխօր, մինգ. շխուրի և լազ. չխուրի բառերի հետ: Մի՞ն է սրանցից փոխառու: Գիտենք, որ հայերենը հնդեվրոպական լեզու է, իսկ վրացերենը և մյուսները պատկանում են կովկասյան ընտանիքին: Արդ՝ քանի որ բառը բոլոր կովկասյան լեզուների մեջ էլ անկախաբար գոյություն ունի, իսկ հայերենից դուրս ուրիշ հնդեվրոպական լեզվի մեջ չկա, ուրեմն հնդեվրոպական չէ կամ որ նույն է՝ հայերեն չէ և փոխառյալ է կովկասյան լեզուներից:

Մեր ասածը հաստատում է նաև բառի առուգաբանությունը, կովկասյան ընտանիքի մեջ։ Բառը կազմված է ցխով «կյանք, ապրել» արմատից (համմտ. վրաց. ցխովելի «շնչավոր, անասուն», ցխովրեբա «կյանք, կենագրություն, պատմություն», սացխովարի, սացխովրեբելի «կենսական, ուտելիք, անուռդ, բնակություն, բնակարան», սացխուրե «ոչխարային, փարախ», մեցխվարե «ոչխարների հովիվ»)։ Ուրեմն բառը կովկասյանների մեջ առուգաբանվում է «կենդանին», մինչդեռ հայերենի մեջ ոչ մի համապիչ մեկնություն չունի, հետևաբար և փոխառյալ է նախորդներից։

Նման ձևով կարելի է վճռել նաև այն բառերի հարցը, որոնք հասարակաց են հայերենի և ասորերենի կամ արաբերենի, հայերենի և թյուրքերենի համար և այլն։

Փոխառությունների թիվը երբեմն կարող է այնքան մեծ լինել, որ նույնիսկ խեղդի բնիկ բառերը (օրինակները տես վերը «Օտար ազդեցություններ» գլխում)։

Այստեղ ասելս եմ և մի հետաքրքրական հարիվ գիտական լեզվից։

Իմ ընկերներից մի նշանավոր քիմիկոս հայտնեց, թե գերմանացիների կազմած քիմիական բառարանը ունի անօրգանական քիմիայի 500 000 և օրգանական քիմիայի 600 000 բառ, որ անում է 1 միլիոն 100,000 քիմիական բառ։ Այս բոլորը հունարենից և լատիներենից կազմված և գերմաներեն գիտական լեզվի մեջ մտցրած բառեր են։ Ուրեմն ինչ համեմատություն բնիկ և փոխառյալ բառերի միջև քանակի կողմից։

Սակայն ինչքան էլ շատ լինեն փոխառյալ բառերը մի լեզվի մեջ, այնուամենայնիվ նրանք պատկանում են որոշ տիպի. օրինակ՝ կրթական, կուլտուրական, կրոնական և այլն. իսկ լեզվի անմիջական հարաբերությունը կազմող բառերը դժվարավ լինում են փոխառյալ. ինչպես՝ ընտանիքի վերաբերյալ բառերը (հայր, մայր, քույր, եղբայր), անձնական դերանուններ (ես, դու, նա, մենք, դուք, նոքա), թվականներ (մի, երկու, հինգ, տասը), հասարակ խոնատով բայեր (ուտել, խմել, երթալ, գալ) և այլն, և այլն։ Այս կարգի բառերի համեմատությունը առնասարակ տալիս է մեզ վստահելի արդյունք։

Ուրեմն բառերի քանակի առավելությունը պետք չէ մեզ խաբի, որովհետև մեր փնտրածը քանակը չէ, այլ՝ որակը։

Բայց երբեմն բառերը այնքան ձևափոխված են լինում,

որ անկարելի է լինում տեսնել նրանց նմանությունը մի ուրիշի հետ։ Օրինակ, արևմտահայ հնչումով Воуоs հասուկ ասուն, որ հայանի կերպով գիտենք, որ փոխառյալ է հն. πατὴρ; ձևից, այնքան է փոխվել (π>b,τ>d,ρ>r), որ բացի վերջավանկի ր-ից ուրիշ ոչ մի նմանություն չունի։ Նմանապես՝ թեև սանս. bhrātar, գնգ. brātar, տպրս. brātā, պհլ. brātar, պրս. brādar, հն. φράτηρ, լտ. frātĕr, գերմ. Brader, անգլ. brother, սաս. ōþar, իսլ. bräthir իրար հետ բոլորովին նման են, բայց հյ. եղբայր, ալբան. vlā, աֆղան. wrōr այնքան տարբեր են սրանցից, որ ոչ ոք չի կարող դուշակել, թե սրանք էլ միևնույն բառերն են։ Այսպիսի դեպքերում մեզ օգնության է հասնում ձայնարանությունը, որ բազմաթիվ բառերի համեմատությամբ և նման դեպքերի կրկնությամբ կարողանում է գտնել, թե ձայները ժամանակի ընթացքում ինչ փոփոխությունների են ենթարկվում և ինչ ձայն ինչ է դառնում։ Այսպիսով, բոլորովին ձևափոխված ու անճանաչելի վիճակի հասած բառերն էլ կարողանում են կապել իրենց նախաձևին, եթե նրանք իրոք նրանից են ծագած։

Բառերից ավելի վստահելի միջոց է համեմատության համար լեզվի քերականական հարինվածությունը. արդարև՝ հոգևոր ու բարոյական վերջավորությունները, խոնարհման ձևը և այլն այնպիսի տարրեր են, որ կարող չեն լեզվից լեզու փոխանցվել։ Դժբախտաբար սրանք էլ իրրև ավելի մանր տարրեր և ավելի մաշված ձևեր չունեն շատ անգամ ակնթարթ նմանություն։ Նրանք շատ անգամ կարող են հասած լինել այնպիսի մի ատենից, որ հնից ոչ մի հետք ետացած չլինի։ Բայց հենց որ լեզվաբանը ձայնական օրենքների միջոցով ստուգից դրանց համեմատությունը, եզրակացությունը կատարելապես ապահով է։ Ամենալավ միջոցներն են ոչ թե քերականության ընդհանուր օրենքները, ինչպես՝ սեռը, թիվը, խոնարհման մեջ՝ յոթերորդությունների կամ ժամանակների բաժանումը, որոնք ամեն տեղ էլ նույնն են, այլ զանազան անկանոնություններ և քերականական փոքրիկ մանրամասնություններ, որոնք շատ անգամ վրիպում են աչքից և համարվում են կարևորություններից զուրկ. դրանք են, որ մեծագույն նշանակություն ունեն հարցի որոշման մեջ, որովհետև չեն կարող պատահականության արդյունք լինել։ Այսպես՝ հայերենի մեջ կատարյալի կրկնված արարի ձևը, կատարյալի եզ. գ դեմքի վրա երևացած է հավելվածը (եաս, եհաբց), և այլն։

Եզրակացնելով մեր ասածները, ապացուցանելու համար, որ մի որևէ լեզու պատկանում է մի որևէ լեզվաբոտանիքի, պետք է և բավական է ցույց տալ նրա մեջ որոշ թվով հատկություններ, մանավանդ մանրամասնություններ, որոնք կարող են բացատրվել միայն նույն լեզվաբոտանիքի միջոցով և ուրիշ լեզվաբոտանիքի միջոցով կլինան անիմաստ, և որոնք անըմբռնելի կլինեին, եթե այդ լեզուն նույն լեզվաբոտանիքին չպատկաներ։ Այս նպատակին հասնելու համար, սակայն, անհրաժեշտ է, որ լեզվամարդի լեզվաբանական ուսումնասիրությունը գոնե բավարար չափով կատարված ու լրացված լինի։ Այսպես է, օրինակ, հնդեվրոպական ընտանիքի լեզվաբանությունը։ Գիտության այս ճյուղը այնքան է առաջ գնացել, որ երբ քոխարևենը և հաթևենը հանկարծ անհայտությունից երևան եկան, անմիջապես ճանաչվեցին իբրև հնդեվրոպական։ Կարելի չէ ասել, որ աշխարհիս վրա այժմ խոսված լեզուներից որևէ մեկը հնդեվրոպական ընտանիքին պատկանելիս լինի և գիտության կողմից ճանաչված չլինի։ Գրեթե նույնը կարելի է ասել սեմական ընտանիքի համար։ Ընդհակառակը՝ ամերիկյան կամ ավստրալիական բազմաթիվ լեզուներից ոչ մեկը դեռ չի դասավորված։

Հնդեվրոպական լեզվաբոտանիքի 11 ճյուղերից մեկը հայերենն է կամ հակառակ դիրքից խոսելով՝ հայերենը հնդեվրոպական լեզու է։

Կան մարդիկ, գիտության տվյալներին մակերեսաբար ծանոթ թերուսներ, որոնք կասկածում են այս ճշմարտության մասին և այլ ընդ այլ կարծիքներ են հայտնում։

Եղած այս սխալ կարծիքներից գլխավորը, կամ գուցե և հրապուրիչը այն է, որ հայերենը համարվում է կովկասյան լեզու, ցեղակից վրացերենին։ Այս բանը ապացուցելու համար իբրև հիմնական փաստ մեջ է բերվում այն հանգամանքը, որ հայերենի հնդեվրոպական բառերը շատ քիչ են քանակով, իսկ վրացերենի հետ նման բառերի թիվը 1254 հատ է (տես Ն. Մառի անվան Կաբինետի աշխ. № 2, էջ 227)։

Ամենից առաջ ասենք, ինչպես վերն էլ հիշեցինք, որ բառերի քանակը բնավ ամենևին արժեք չունի լեզվաբանության մեջ, այլ՝ որակը։ Հայերենի հնդեվրոպական բառերի քանակը ըստ մեզ 927 է։ Նրանք, որ հակառակ են հայերենի հնդեվրոպական լինելու դատափետին, աշխատում են իջեցնել այս թիվը նվազագույնին։ Մեկը դնում է 500, մյուսը՝ 300. բայց եթե

նույնիսկ միայն 100 բառ էլ գրվի. գործյալ այդքանը բավական է բնդունելու համար, որ հայերենը հնդեվրոպական է. որովհետև, ինչպես ասացինք, այս գիտության համար քանակը արժեք չունի, այլ՝ որակը։ Բավական է, եթե ասես, որ ես ճա, մեք, դուք ճորա, մի, երկու ... հինգ, տասն հնդեվրոպական են։ Բավական է, որ հյ. առնում, առնուս, առնու նույն են հն. ჯუოմი, հաթ. arnumi, սանս. grnomi.

Բավական է, որ հյ. արարի, արարայ նույն են հն. ჭკარაv, ჭკარკ, գեղ. ɜrɜnâvi «արարատ» ձևերի հետ։ Բավական է, որ բերեմ, բերես, բերէ նույն են սանս. bhárâmi, bhárâsi, bharâti համանիշ ձևերի հետ։ Եթե սրանք հնդեվրոպական են, հայերենն էլ հնդեվրոպական է, նույնիսկ եթե ապացուցվի, որ նրա մեջ ոչ թե 1254, այլ 12540 վրացերեն բառ կա, ինչպես կարող էր դուրս մի որ լինել Քրիլիոնի հայերեն բարբառում։ Եթե բառերի քանակը արժեք ունենալու լիներ, ամենից առաջ հայերենը ոչ թե վրացերեն, այլ պարսկերեն պիտի լիներ, որովհետև հայերենում ունենք 1411 պարսկերեն բառ, որ վրացերենից 157 բառ ավելի է։

Ամենք էլ դիմում են կոմպրոմիսի. հայկերենը թե վրացական ճյուղին է պատկանում, և թե հնդեվրոպական բնատնիքին։ Առանուրդ լեզու է։

Բնությունը խառնուրդ չդիտե. մի գառը մի մաքի գիտե մայր. մի երեխան մի միակ մորից է ծնվում. նաև բազմակին ժողովուրդների մեջ ամեն մի զավակ մի մոր ծնունդ է։ Նույնիսկ կենսաբանական օրենքով ոչ թե միայն մայրը, այլև հայրը մի է, թեկուզ բազմայրություն (polyandria) բնդունած ժողովուրդների մեջ։ Նույնիսկ ե գտնում նզնիկը դիտե, որ ես և ոչ միւսի արդանդի երկուս սերմանս այլ և այլս բնդունել։ Զի թէպէտ և բազում արք ի մի կին մերձենայցեն, այլ ոչ եթէ ամենեցուն սերմանքն կուսիցին. քանզի առաջին անկեալ սերմունքն զայլսն իբրև զաւելորդս ի բաց քշանէ» (նշն., էջ 133)։

Ըստ այսմ հայերենը չի կարող լինել միաժամանակ թե վրացական, և թե հնդեվրոպական. այլ՝ կամ մինը, կամ մյուսը։ Եթե նա հնդեվրոպական է, ապա՝ նրա 1254 վրացերեն բառերը փոխառություն են վրացերենից, իսկ եթե նա վրացական է, ապա՝ բոլոր հնդեվրոպական բառերը փոխառություն են որևէ հնդեվրոպական լեզվից։

Գանք այժմ այս վերջին կետին, որ և երրորդ խմբի մատ-

ծողների դաղափարն է.— հայերենը վրացական լեզու է, իսկ նրա հնդեվրոպական բառերը հետին փոխառություն են։

Երկրաբաններն ու հնագետները մեզ չկարողանան էլ որոշել որևէ հնության ճիշտ թվականը, գոնե կարող են ճիշտ որոշել, թե երկու կամ ավելի իրերի մեջ ո՞րն է հնագույնը։

Այսպես է նաև լեզվաբանությունը, որի համար ամենահասարակ բանն է ցույց տալ, թե երկու բառերից կամ ձևերից ո՞րն է ավելի հինը։

Ահա երկու բառ. հայր և պատրիարք. երկուսն էլ գրեթե նույն ծագումն ունեն. առաջինը կապվում է հն. patēr հոմանիշի հետ, երկրորդը՝ հն. patriarchēs հոմանիշի հետ։ Առաջինը (հայր) ի հնուց անտի գոյություն ունի հայերենի մեջ, իսկ երկրորդը (պատրիարք), կրոնական բառ, փոխ է առնված հունարենից, ամենաշուտը Դ կամ Դ դարում։ Առաջինը ամենաքիչը 2 000 տարի ավելի հին է երկրորդից, որ ամենաքիչը 2000 տարի նոր է նրանից։

Հնությունը և նորությունը երևում է նրանով, որ առաջինում p նախաձայնը չափազանց մաշվելով դարձել է h, իսկ երկրորդի մեջ նույն նախաձայն p դեռ չի մաշվել և մնում է պ։

Այժմ առնենք վրացերեն որևէ բառ նույն նախաձայնով. և որպեսզի ձայնական տարբերություններ մեջ չբերվեն, վերցնենք ճիշտ վրաց. պատարա բառը, որի համապատասխանն է հյ. պատառ։ Ի՞նչ ենք տեսնում այստեղ։ Այստեղ, ինչպես վրացերենի բոլոր նման համեմատություններում մեջ, գտնում ենք նախաձայն պ=հյ. պ, ճիշտ ինչպես պատրիարք բառի մեջ։ Ուրեմն նրանք նոր են, լեզվի ուշ շրջանի բառ և հետևաբար՝ մի կամ մյուս կողմից փոխառություն։

Թերևս գտնվի այնպիսի մեկը, որ գերագրական անմտությամբ ասի, թե ճիշտ այդ մաշված h ձայնն է նոր, և թե նախաձայն պ-ի վարժված բերաններին համար խորթ է թվացել հնդեվրոպացիների բառը և իբրև անսովոր ձև՝ այդ օտար բառերը դարձրել են հայր և այլն։ Բայց այս դեպքում արդելք են հանդիսանում հենց հն. պատրիարք կամ հպրս.* partu>պարտ-ք ձևով բառերը, որոնք անհերքելի կերպով ցույց են տալիս, թե նախաձայն p>հյ. պ ուշ ժամանակի փոխառության արդյունք է։

ՆԱԽԱԼԵԶՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Վերևում ասացինք, որ յուրաքանչյուր լեզվաընտանիքից ներկայացիս կենդանի են ենթաբարբառները, բարբառները և նոր լեզուները. մեռած, բայց գրքերում կենդանի են գրաբար մայր լեզուներ. իսկ նախամայրը գրված է գործածությունից և լեզվաբանության նպատակներից մեկն էլ այդ նախամայրը կամ նախալեզուն վերականգնելն է։

Այսուհետև պետք է քննենք, թե ինչ միջոցով կարելի է հասնել դրան։

Լեզվաբանությունը այս նպատակին հասնելու համար գործ է դնում համեմատական մեթոդը։

Եթե մի բառ նույն կամ նման ձևերով գտնվում է մի լեզվաընտանիքի պատկանող գրաբար լեզուների մեջ միանգամայն, ենթադրվում է, որ այդ բառը գոյություն ուներ նաև նույն լեզվաընտանիքի նախամայր լեզվի մեջ։ Այսպես, օրինակ՝ մայր բառը կա սանսկրիտի մեջ՝ mātār, հունարենի մեջ՝ μήτηρ, լատիներենի մեջ՝ māter, հին սլավերենի մեջ՝ mati, հին բարձր գերմաներենի մեջ՝ muoter, հայերենի մեջ՝ մայր ձևով, որոնք իրար հետ նույն կամ նման են, ուստի հետևում է, որ ինդովրոպական նախալեզվում էլ կար նման ձևով և «մայր» նշանակությամբ մի բառ։ «Հաւկ» կամ «հարպագ» բառը հունգարերենի մեջ՝ vāi, սլավյակերենի մեջ՝ woi, վոգուլերենի մեջ՝ loi, գերմներենի մեջ՝ vyi, վոտյակերենի մեջ՝ vōi, մորդվիներենի մեջ՝ vay, ֆիններենի մեջ՝ vci ձևերն ունի. որոնք հայտնի կերպով միևնույն բաներն են, ուստի հետևում է, թե նման հնչումով և «յուղ» կամ «կարագ» նշանակությամբ մի բառ գոյություն ուներ նաև ուրալո-ֆիննական նախալեզվի մեջ։

Բայց բավական չէ իմանալ միայն, թե այսինչ նախալեզվում այսինչ նշանակությամբ մի բառ գոյություն ուներ. պետք

է որոշել նաև, թե այդ բառը այդ նախալեզվի մեջ իրոք ինչ ձև ուներ. ուրիշ խոսքով՝ պետք է վերականգնել նախալեզվի բառաձևը և այդ՝ ըստ կարելվույն ճիշտ կերպով։ Այս նպատակին հասնելու համար պետք է գտնել նախ ձայնական համապատասխանությունները յուրաքանչյուր լեզվաընտանիքին պատկանող գոնազան լեզուների միջև, և ապա՝ ձայնաբանության տվյալների համաձայն եզրակացնել նրանցից, թե ուրեմն ինչ պետք է լիներ նույն ձայնի արտադրիչը կամ սկզբնական ձևը համապատասխան նախամայր լեզվի մեջ։ Յուրաքանչյուր բառի բոլոր ձայնների նախնական արտադրիչների դումարը լինում է վերականգնյալ նախալեզվյան ձևը։

Առնենք վերի օրինակը՝ հնդեվրոպական ընտանիքից, որովհետև սիստեմը ընդհանուր է բոլոր լեզուների համար.

1) սանս. mātár=հն. μήτηρ=լա. māter=հալ. mati=հպգ. muoter=հյ. մայր։

Գիտենք, որ այս բառերը միևնույն մոր տարբեր ժառանգներն են, այսինքն՝ բոլորն էլ համապատասխան միևնույն բառի ձևափոխություններն են. ուստի մենք նրանց մեջ կդրինք հավասարության նշանը։ Առաջին ձայնը՝ m, անփոփոխ կրկնվում է բոլորի մեջ, ուրեմն ներկայացնում է հետևյալ ձայնական համապատասխանությունները.

սանս. m=հն. μ=լա. m=հալ.m=հպգ. m=հյ. մ։

Այս միևնույն եզրակացության պիտի հասնեինք նաև, եթե համեմատեինք հնդեվրոպական ուրիշ գոնազան բառեր, որոնք ունեն իրենց մեջ m ձայնը, ինչպես՝ սանս. mádhu=հն. μέθυ=հալ. mioðr=հպգ. meto կամ mriyáti=լա. morior=հալ. mreti=հյ. մեռանել։

Արդ ինչ պետք է լիներ նախնական լեզվի այն ձայնը, որ հավասարապես այս բոլոր ժառանգների մեջ էլ դառնար m։ Անշուշտ այդ ենթաձևերը պիտի լինեին m։ Այս պարագային վերի հավասարությունից առացվում է՝

ա) հնխ. *m>սանս. m=հն. m=լա. m=հալ. m=հյ. մ=հպգ. m կամ՝ որ նույն է՝

ա) սանս. m=հն. m=լա. m=հալ. m=հպգ. m=հյ. մ<հնխ. *m։

Առաջինը նշանակում է, թե հնդեվրոպական նախամոր m ձայնից առաջանում են սանս. m, հն. m, լա. m, հալ. m, հպգ. m և հյ. մ ձայները. իսկ երկրորդը նշանակում է, թե սանս. m,

հն. m, յն. m, հալ. m, հբգ. m և հյ. մ ձայնները առաջանում են հնդեվրոպական նախամոր m ձայնից։

Ուրեմն հնդեվրոպական նախամայր լեզվի մեջ «մայր» բառի նախաձայնը պիտի լիներ m։

Այս ձևով շարունակելով մյուս բոլոր ձայների ձայնական համապատասխանությունները և գտնելով նրանց նախնական ձևը, կգտնենք ամբողջ բառի նախամայրը, որ է հնխ. *mātēr *«մայր»։

Առնենք մի ուրիշ օրինակ.

2) սանս. nābhas *«մառախուղ»* = հն. νέφος = հատ. nebal = հյ. ամպ։

Այստեղ բոլոր լեզուները ունեն n, *բայց հայերենի մեջ գտնում ենք* մ. *ձրն է նախամայր ձևը.— ձայնափոխությունը մեզ ստիպողացնում է, թե ն առանձին ձայնը, երբ պատահի հաջորդ բ-ի մոտ, դառնում է* մ. *այսպես՝ հյ. անբիծ գարձել է հետո* ամբիծ, անբաւ > ամբաւ, անպարիշտ > ամբարիշտ *և այլն. ուստի և այստեղ էլ հյ.* ամբ *ծագում է ավելի հին* *անբ *ձևից։ *Ըստ այսմ վերի օրինակից հետևում է հետևյալ համապատասխանությունը.*

բ) հնխ. *n = սանս. n = հն. ν = հատ. n = հյ. ն։

Վերոհիշյալ երկու համեմատություններից շատ պարզ էին. այժմ անցնենք ավելի բարդ համեմատությունների.

Առնենք հետևյալ օրինակները.

1) սանս. madhu *«մեղր»* = հն. μέθυ = հիսլ. mioðr = հբգ. meto.

2) սանս. ádhāt *«գրաւ»* = հյ. եղ = հն. ἔθηκε = գոթ. ga-de-ðs.

Սրանից հետևում է, թե

գ) սանս. dh = հն. θ = հյ. դ = (գերմ. d), գոթ. d, հբգ. t։

Այժմ առնենք մի ուրիշ խումբ.

3) սանս. nābhas *«մառախուղ»* = հն. νέφος = հատ. nebal = հյ. ամպ = կամբր. nepiš.

4) սանս. bhārāmi = հյ. բերեմ = հն. φέρω = գոթ. baira։

Սրանից էլ հետևում է, որ

դ) սանս. bh = հյ. բ = հն. φ = գերմ. b։

Գ և դ համապատասխանությունները ցույց են տալիս սանսկրիտ, հայ, հուն, գերմանական և այլ լեզուների համապատասխանությունները, որոնք իրար համաձայն են նաև արամաբանորեն, որովհետև ինչ հարաբերություն որ կա սանս. bh *և* dh *ձայների*

միջև, նույն հարաբերությունը կա նաև հյ. դ, բ, գերմ. d, b. և հն. ϑ, φ ձայնների միջև։ Ի՞նչ պետք է լինեին նախալեզվի այն ձայները, որոնցից կարող էին ծագել սանս. dh, bh, հյ. դ, բ և այլն։ Ձայնաբանական քննությունները մեզ միջոց են տալիս ասելու, որ նախալեզվի այդ ձայները պիտի լինեին dh, bh, այսինքն շնչեզ թրթռուն պայթուցիկ բաղաձայն, որից շունչը կտրվելով առաջ եկան հյ. և գերմ. d, b կամ նույն շնչի մոտ b, d տարրերը թալանալով՝ հն. ϑ, φ։ Կարող ենք ուրեմն գրել.

դ) հնխ. *dh>սանս. dh=հն. ϑ=հյ. դ=գերմ. d=գոթ. d=հրգ. t.

բ) հնխ. *bh=սանս. bh=հյ. բ=հն. φ=գերմ. b։

Աներևույթ դժվարություն է ծագում այն ժամանակ, երբ համեմատությունների մեջ գտնում ենք մի լեզվի երկու տարբեր ձայների դեմ ուրիշների մեջ միշտ մի ձայն և կամ մի լեզվի մի ձայնի դեմ մի ուրիշ լեզվի մեջ երկու տարբեր ձայն։ Այսպես՝ երրորդ (գ) հավասարության դեմ իրանյան, լիտվաներեն, սլավական և կելտական լեզուները ունեն ž, բայց այդ նույն լեզուները նույն ձայնն ունեն նաև հետևյալ հավասարության մեջ.

ե) սանս. d=հն. ð=հյ. տ=գերմ. t. Օրինակ՝ հսլ. medu № 1 խմբի դեմ։

Այսպես նաև դ հավասարության դեմ լատիներենը երբեմն ունենում է f և երբեմն էլ b, օր. № 4 խմբի համապատասխանն է լտ. ferō, իսկ № 3 խմբի համապատասխանն է լտ. nebula.

Այս անհամաձայնությունները չպետք է մեզ շփոթեն, ծանոթ երևույթ է լեզուների մեջ, որ երկու տարբեր ձայներ հանդեն միևնույն ձայնին. այսպես՝ Պոլսի, Վանի, Ղարաբաղի, Մարաղայի, Շամախու և այլ բարբառների մեջ գրաբարի բ և պ հավասարապես դառնում են պ, կամ գ և կ հավասարապես դառնում են կ, Վանի բարբառի մեջ գրաբարի խ և ճ հավասարապես դառնում են խ և այլն։ Այսպես և նախալեզվի dh և d ձայները կարող էին հավասարապես դառնալ d հիշյալ լեզուների մեջ, բայց մնալ թեկուզ մի լեզվում անաղարտ։

Սանս. sáṇa=գնդ. hana=հն. ἓνος=լտ. senex=գոթ. sineigs=լիտ. sēnas=հին. sen=կիմր. hēn=հյ. հին։

Այս համապատասխանությունների մեջ տեսնում ենք մի կողմից s, մյուս կողմից h, որ մինչև անգամ ջնջված է (նոր հն. հնչվում է enos և ոչ henos)։ Ո՞րն է այս երկուսից նախ-

նախանք։ Միջամասնություններ s-ի կողմն է. բայց միջամասնություններն դեռ բավական չէ, որովհետև կարող էր նույն ձայնը ամեն անգ փոխված և միայն մի անգ հիշված պահված լինել։ Այսանգ մեզ օգնության է հասնում ձայնաբանության, որ մեզ պիտի ցույց տա, թե լեզուների բարեշրջության ընթացքում s կարող է դառնալ h, բայց հակառակ երևույթը գոյություն չունի։ Այս ապացույցը պատմական է, այսինքն՝ նկատված այնպիսի լեզուների մեջ, որոնց գանազան շրջաններում գրավորապես մեզ ավանդված լինելով, հայտնի կերպով մեզ ցույց են տալիս անգի անցնած երևույթները։ Բայց ձայնաբանության վկայության օգնության է հասնում նաև ձայնախոսություններ, որ մեզ բացատրում է, թե ինչպես է առաջանում այդ երևույթը։ s արտաբերած ժամանակ լեզուն պետք է բարձրանա գեպի առաջները և այնտեղ ձևացրած անցքից պիտի հոսի օդը. եթե այս բարձրացումը մի քիչ ավելի քան չափ կատարվի, s-ի անգ կըստացվի h։

Ահա այս պատճառաբանություններով առաջնորդվելով՝ կարող ենք հետևցնել, թե հիշյալ s=h=o համապատասխանությունների կարգն է՝ s>h>o, որ և առաջանում է հնից. s նախամնից։

Դալով մի լեզվի երկու տարբեր ձայնափոխություններին, սրանք էլ արդյունք են ձայնաբանական տարբեր պայմանների։ Այսպես՝ լատիներենի մեջ նախալեզվական bh դառնում է f, եթե բառասկզբին է, և b, եթե բառամիջին է։ Այսպիսի երևույթները փոխանակ քանդելու մեր ձգտումը ճշմարտացիություն, բնդհակառակը, ավելի հաստատում ու զորացնում են։

Պատահում է երբեմն, որ մի լեզու մինչդեռ այսինչ ձայնի դեմ միշտ էլ միևնույն համապատասխանությունն է ներկայացնում, հանկարծ մի օրևէ կնտում չեզոում և մի ուրիշ ձայն է ներկայացնում։ Այսպես՝ մինչդեռ «9» գաղափարի համար բոլոր հնդեվրոպական լեզուները, թե հին և թե նոր, ներկայացնում են n ձայնը (այսպես՝ սանս. հոլս. և գնդ. nava, պրս. ափղան, բելուջ. nuh, քրդ. neh, գաղ. nau, Թոխար. ñu, հն. ennéa, գնչ. enia, լտ. novem, իտալ. nove, ֆրանս. neuf, իսպան. nueve, ռում. noue, գոթ. հրդ. niun. գերմ. neun, հաթս. nigun, հոլլ. negen, անգլոս. nigon. անգլ. nine, իսլ. nōi, սլրան. nandr և հյ. ինն), բալթիկ-սլավական բոլոր լեզուները ներկայացնում են d (այսպես՝ հալ. devęti, ռուս. девять, լհհ. dziewięć, լիտ.

devyni, լիթ. depvin'i և այլն)։ Սրա պատճառն ուրիշ բան չէ, եթե ոչ՝ հաջորդ 10 բառի նախաձայն d-ն, որ ազդել է նաև այս բառի վրա, այնպես որ, հիշյալ բալթիկ-սլավ. ձևերը պետք է հատկանալ *nevętī և այլն։ Ճիշտ այսպես, այսօր էլ գվո. լեզվով փոխանակ ասելու ubsuուն, իննսուն, յոթանասուն բառի ազդեցությամբ ասում են ubաանասուն, իննսանասուն։

Լեզվական այս երևույթը կոչվում է համաբանություն (аналогия) և մեծ դեր ունի լեզուների մեջ ձայնների և ձևերի ձևափոխության խնդրում։ Սրա մասին պիտի խոսենք հետո՝ առանձին գլխով։ Այստեղ նկատենք միայն, որ զանազան լեզուների ձայնական համապատասխանությունները կազմելու ժամանակ, շատ կարևոր է ճշտել համաբանությամբ առաջացած ձևերը և քան այնմ կատարել նախաձևերի վերականգնումը։

Այս բոլորը, ակնհայտ, ցույց են տալիս, որ համեմատությունները պետք է կատարվեն մեծ ուշադրությամբ. յուրաքանչյուր շեղում ընդհանուր կանոնից պետք է նկատի առնվի և բացատրվի կամ հնդեվրոպական նախալեզվի և կամ շեղում ցույց տվող լեզվի ձայնարանությամբ։ Կարճ ասած՝ յուրաքանչյուր բառ և յուրաքանչյուր բառի յուրաքանչյուր տառը կամ ձայնը, և նրա յուրաքանչյուր դիրքը առանձին-առանձին քննության բովից պետք է անցնի։ Ավելի պարզ խոսելով՝ ձայնական համապատասխանությունները պետք է ներկայացնեն իրականության ճշգրիտ պատկերը, իրրև մաթեմատիկական ֆորմուլաներ և ոչ թե անորոշ կամ անհատական նմանություններ, որպեսզի զանազան լեզուների բառերի համեմատությունն էլ հիմնվի այս հատատառուն համապատասխանությունների վրա և ոչ թե պատահական նմանության։

Այս մեթոդով, ահա, երևան ենք հանում յուրաքանչյուր ձայնի համապատասխանությունները և նրանց նախնական վիճակը, որոնց գումարը լինում է նախամոր վերականգնումը թե՛ ձայնական դրության և թե՛ բառական հարստության տեսակետից։

Ինչ որ ասացինք երկրորդ գլխում լեզուների ցեղակցության որոշման մասին խոսելիս, նույնը ավելի իրավամբ պետք է կրկնել նաև այստեղ. այն է՝ փոխառյալ բառերի հարցը։ Զանազան լեզուների մեջ գտնված նման բառերի համեմատությունից, եթե դրանք իրարից փոխառյալ ձևեր են, պետք չէ հետևցընել ընդհանուր ցեղակցություն։ Այսպես հունվար, փետրվար, մարտ և այլ ամսանունները գոյություն ունեն եվրոպացի բոլոր

լեզուներէն, ինչպես նաև հայերենի մէջ. բայց դրանից պետք չէ հետևցնել, որ այդ ամառանուններդ կային նաև հնդեվրոպական մայր լեզվի մէջ, որովհետև այդ բոլոր բառերը փոխառյալ են յատներենից։ Կատու բառը տարածված է աշխարհիս գրեթե բոլոր կողմերը. բայց դրանից պետք չէ հետևցնել, թե ուրեմն աշխարհիս բոլոր լեզուները ծագում են մեկ ապրյուրից, որովհետև այդ ձևերը առնասարակ փոխառյալ են մեկը մյուսից (ինչպես՝ հայերենը սանրերենից), և բոլորը միասին յատներենից ու կելտերենից։ Կամ աշխարհում քրիստոնյա կամ մահմեդական ազգի մի լեզու, որ ամէն տեղից բառ չունենա. բայց այս բառից կարելի է հետևցնել, թե այդ բոլոր լեզուները մի ծագում ունեն։

Այսպես, ուրեմն, ձայնական համեմատությունները կազմելիս պետք է նախ դուրս վտարել բոլոր փոխառությունները, հաշվի առնել համարանությամբ ձևացած բառերը և ի նկատի ունենալ համապատասխան բառերի բոլոր հանգամանքները։

Այսպէս հարց է ծագում, թե մի որևէ մայր ձևի գոյությունը հաստատելու համար մինչև քանի ժառանգ լեզուների վկայությունն է բավական։ Բնականաբար ինչքան շատ լինի վկաների թիվը, այնքան էլ հաստատուն կլինի վկայությունը, ինչպես որ ինչքան երկար լինի համեմատության դրված բառը և բազմազանաչատ, այնքան էլ ուսումնասիրության արդյունքը վստահելի կլինի, մանաւանդ երկու լեզվի մէջ համաստարակ գտնված և բնագրենը երկու ձայնից բազկացած բառի գոյությունը շատ կասկածելի է անշուշտ։ Վկայության կոչվելիք լեզուների համար գիտնականները նվազագույն թիվը համարում են երեք, որովհետև երկու լեզվի վկայությունը կարող է պատահական լինել։ Եվ լեզվաբանության ծնվից այն օրից, երբ հունարենի և յատներենի կողքին երևան եկավ մի երրորդ տարր, այն է սանսկրիտ լեզուն։ Գրա. bad և անգլ. bad բառերի նմանությունը, հակառակ իրենց ձևի և իմաստի նույնության, բոլորովին պատահական է. բայց եթե մի երրորդ լեզու էլ ունենար նույն ձևով մի բառ, շատ զարմանալի պիտի լիներ, եթե այս երկուսից մեկի հետ կապ չունենար։ Այսպես կարևոր է նաև, որ այդ երեք լեզուները իրար դրացի չլինեն. հակառակ պարագային ծանրանում է փոխառության կասկածը։ Կան բառեր, որոնք գոյությունն ունեն հնդեվրոպական լեզուների որոշ մի խմբակի մէջ և պակասում են ուրիշների մէջ. այսպես՝ որոշ բառեր կան

միայն արիական և սլավական լեզուների մեջ, ուրիշներ՝ միայն բալթիկ-սլավական, կելտական, գերմանական և իտալական լեզուների մեջ, վերջապես կան այնպիսի բառեր, որոնք գտնվում են միայն եվրոպական լեզուների մեջ և գոյություն չունեն ասիական լեզուներում։ Այս բոլորը ցույց է տալիս գանազան բարբառների գոյությունը հնդեվրոպական նախալեզվի մեջ՝ լեզուների բաժանումից էլ առաջ։

Կան բացառիկ պարագաներ, երբ միայն երկու լեզվի էլ վկայությունը բավական է հատատելու բառի գոյությունը՝ նախամայր լեզվի մեջ. օրինակ՝ հն. πῖων և սանս. pīvā «գեր, պարարտ» բառերը, թեև չունեն իրենց համապատասխանը ուրիշ լեզուների մեջ, բայց համարվում են բավարար, ընդունելու սրանց հնդեվրոպական գոյությունը, այն պատճառով, որ ցույց են տալիս կատարյալ նույնություն իրենց իգականի (հն. πῖείρα, սանս. pīvarī) տարօրինակ կազմության, ինչպես և նշանակության, հոլովման ձևի և շեշտադրության կողմից։ Նույնպես՝ հին պրս. rādiy «պատճառով» և սլ. radi «պատճառ», չեն գտնվում ուրիշ լեզուների մեջ, բայց իրենց բացարձակ նմանության պատճառով համարվում են նույն։

Բառերի համեմատության մեջ լեզվի բարոյական արժեքը կամ նյութական մեծությունը բնավ նշանակություն չունի. համեմատության համար բոլորն էլ միևնույն բաներն են, ճիշտ ինչպես բուսաբանի համար՝ հասարակ մասրենին կամ փարթամ վարդենին։ Դեպքերի ընդհանուր երևմն նվազ տարածված մի լեզու ավելի արժե, քան մի հզոր լեզու. օրինակ՝ ալբաներենը, որ մի երկու միլիոն ժողովրդի լեզուն է, կամ լիտվաներենը, որ գրեթե նույնչափ տարածություն ունի, լեզվաբանության համար շատ ավելի արժեք ունի, քան ֆրանսերենը, իտալերենը, անգլիերենը, իսպաներենը միասին վերցրած, որոնք 300 միլիոն ժողովրդի լեզուն են։

Շատ անգամ մի աննշան բարբառի անկյունում գտնված մի ձև կարող է տալ մի այնպիսի լուսաբանություն, որ դուր էր ինարել պերճ լեզուների փառավոր գրականության մեջ։ Այսպես՝ լտ. mordeo «կծել», որ գրեթե մենակ է լեզուների համեմատության մեջ, գտնում է իր համապատը Ղարաբաղի մոռաէլ «կրծել» (մօկնը շոքոռ ո մօռաըմ) բառի մեջ և դրանով էլ գտնում է հնդեվրոպական նախատիպ անփականություն։ Բայց այդ մոռաել բառը ոչ միայն հայերեն գրական լեզվի բառ չէ, այլև

Նույնիսկ Ղարաբաղի մեջ շատ սահմանափակ գործածություն ունի. բացի մեր ընտանիքից, ես գտել եմ միայն հինգ հոգի Շուշում, որ գիտեին կամ գործ էին ածում այդ բառը։ Լա. lac, lactis «կաթ», որ կցվում է հն. γάλα, γάλακτος համանիշի հետ, միանում է հյ. կաթն համանիշին Ագուլիսի և Մեղրու բարբառների կախյալ ձևի միջոցով և սրա միջնորդությամբ էլ որոշվում, թե ինչպես էր այդ բառի ուղիղ ենթադրական նախալեզվի մեջ։ Արդ՝ այն, ինչ որ չէին կարողացել վճռել Օգոստոս, Գևրիկևսկի և Վոսմշագուն շրջանի գրականությունը, վճռում է մի գյուղի աննշան բարբառային ձևով։

Այս մոնոգրաֆիայով էլ պետք է լուծել այն հարցը, թե կարելի է արդյոք, միայն երկու լեզվի համեմատությամբ և նրանց նմանության վրա միայն հիմնվելով լուծել ծննդաբանական կապը։

Հարցը հատկապես հայերենի և ռուսերենի մասին է։

Պատասխանը գրական է. բայց շատ փոքրաթիվ բառերի համար. օրինակ՝

ուսանիլ — ռուս. учить «ուսուցանել»
միս — ռուս. мясо
սիրտ — ռուս. сердце
ամիս — ռուս. месяц
տասն — ռուս. десять
տամ, տալ — ռուս. дам, дать և այլն։

Այս բառերը, որ հիշեցինք, երկու լեզուների ամենից ավելի նման բառերն են. բայց նույնիսկ այս հար և նման բառերը կասկածական և անորոշ պիտի մնային՝ առանց ուրիշ լեզուների համեմատության։ Այսպես՝ ուսանիլ, սիրտ, տասն բառերի մեջ u=ռուս. ç ծագում է հնխ. k՛ ձայնից, իսկ միս և ամիս բառերի մեջ u=ռուս. s ծագում է հնխ. s (ավելի ճիշտ ns) ձայնից։ Այդ մեզ ծանոթ է այժմ հունարենի, սանսկրիտի և այլ լեզուների համեմատությամբ։ Իսկ եթե այդ համեմատությունը չլիներ, սլավոնագետների և անորոշ գրության մեջ պիտի մնայինք այդ u-երի ծագումը որոշելու համար, և գուցե բոլորն էլ ենթադրեինք հնխ. s-ից, որ անհնարին է։

Նաև ամիս=месяц բառի մեջ չպիտի կարողանայինք որոշել, թե հայ բառի նախաձայն ա հավելված է հայերենի մեջ, թե պակաս է ռուսերենի մեջ։

Իսկ ինչ վերաբերում է, օրինակ՝ քուն=ռուս. сон համեմատության, այդ երևի երբեք էլ մեր մտքից չպիտի անցներ, կամ եթե մտածեինք էլ, հայերենի և ռուսերենի համեմատությամբ երբեք էլ չպիտի կարողանայինք հաստատել։

Նույնիսկ ռուսերենի մեջ անկարելի պիտի լիներ գտնել կապը և նույնությունը ռուս. сон և спать «քնել» բառերի, ինչ որ հնարավոր է այժմ ուրիշ լեզուների օգնությամբ։

Որ նախալեզվի որևէ բառ կարող է պահված լինել միայն երկու կամ նույնիսկ մեկ լեզվի մեջ, բոլորովին էլ զարմանալի չէ։

Անհնարին է ենթադրել, թե բոլոր հնդեվրոպական բառերն էլ բոլոր լեզուների մեջ պահված լինեին։ Եթե մեր աշխարհաբարը, որ 1500 տարվա կյանք էլ չունի (հաշվելով ե դարից մինչև այժմ) հազարավոր բառեր կորցրել է գրաբարից (միշտ էլ դրականություն ունենալով հանդերձ), ինչպես կարող էին բոլոր լեզուները պահել հնդեվրոպականի բոլոր բառերը, այն հնդեվրոպականի, որ հինգ հազարամյակ հնություն ունի և դրականություն բնավ ունեցած չէ։ Մեր «Հայոց լեզվի պատմության Ա. հատորում (էջ 34—80) դրված են հայերենի բոլոր հնդեվրոպական բառերը, իրենց համապատասխան այլալեզու ձևերով հանդերձ։ Սրանցից միայն 166 հատն է, որ ընդհանուր է բոլորին, իսկ մնացյալ 547 բառերը մի կամ մի քանի լեզվի մեջ պահպանում են։ Օրինակի համար հայր<*pətēr բառը, որ ամեն տեղ կա և ենթադրվում է, թե պիտի լիներ, պահպանում է բալթիկ-սլավական տասնյակ լեզուների հոյակապ և հարուստ շարքում։

Ի՞նչ է սրա պատճառը։

Ամեն լեզու համանիշներ կարող է ունենալ և ունի։ Անհրաժեշտ չէ, որ մի լեզու իր նախորդ շրջանի բոլոր համանիշներն էլ անպատճառ պահի։ Հնդեվրոպականը իր pətēr «հայր» բառի հետ ուներ նաև մի քանի մանկական համանիշ ձևեր. ինչպես՝ atta, tata, appa, pappa, սլավականը pətēr ձևի փոխարեն պահել է atta մանկականը, որից էլ՝ ռուս. отец։

Վերևում ցույց տվինք, որ հնդեվրոպական նախալեզուն էլ նախքան լեզուների բաժանումը ուներ զանազան բարբառներ։ Ոչինչ չկա ավելի բնական, քան այն, որ զանազան հարևան բարբառներ զանազան բառեր իրարից փոխ առնեին և կամ թե որոշ բառեր, որ բնաշխ պատկանում էին այսինչ բար-

բառին, կամ մի օտար լեզվի, փոխառությամբ տարածվելն շատ հեռուները, նույնիսկ լեզուների վերջնական բաժանումից հետո։

Այսպես օրինակ՝ հն. κάνναβις, հիսլ. hanpr, հրգ. hanaf «կանեփ» առանձին-առանձին և անկախաբար կատարված փոխառություններ են մի որևէ հարավ-արևելյան եվրոպական լեզվից։ Ըստ այմ բառերը կարելի է բաժանել երեք կարգի։ ա) այն բառերը, որոնք ի բնե ընդհանուր էին ամբողջ նախալեզվին. ինչպես՝ ես, դու, ես, մի, երկու, երեք և այլն. բ) այն բառերը, որոնք հնդեվրոպական մի բարբառից տարածվել են մյուս բարբառների մեջ, և գ) այն բառերը, որոնք լեզուների բաժանումից հետո օտար լեզուներից փոխառնվելով՝ տարածվել են հնդեվրոպական խմբի մեջ մասամբ կամ ամբողջովին։ Արդ՝ լեզվաբանությունը միջոց չունի ամեն անգամ որոշելու և զանազանելու բառերի այս երեք կարգերը. ուրիշ խոսքով՝ հնդեվրոպական նախամոր գարգացման ընթացքը գարեգար երևան հանել չի կարող։ Նա տալիս է մեզ միայն մի համայնական պատկեր, ճիշտ ինչպես աստեղագարդ երկնքի տեսարանը, ուր պարզ աչքը տեսնում է հազարավոր աստղեր մի մակարդակի վրա՝ առանց գաղափար ունենալու նրանց խորության կամ տարբեր անջրպետության մասին։

Շատ հեշտ բան է երկու տարբեր լեզվախմբերի միջև եղած փոխառությունները որոշել։ Օրինակ՝ հայերենի մեջ կան հաշիվ, խավիծ բառերը. սրանք կան նաև տարս. xəšiv և xəwišā ձևերով։ Ո՞ր լեզվի մեջ բնիկ են դրանք և ո՞ր լեզվի մեջ՝ փոխառյալ։ Հեշտ է վճռելու խնդիրը, երբ նկատենք, որ այդ բառերը գոյություն չունեն որևէ ուրիշ հնդեվրոպական լեզվի մեջ, բայց կան երբ. xašab, արաբ. ḥisāb, եթովպ. ḥasaba և արաբ. xabīṣ ձևերով։ Այս բոլորը պատկանում են սեմական բնատնիքին, որին պատկանում է նաև աստրելենը. ուստի և հաշիվ, խավիծ բնիկ են աստրելենի մեջ և փոխառյալ՝ հայերենում։

Այս ոճով հնարավոր է լինում լուծել նաև հայերենի և վրացերենի հատարակաց բառերի խնդիրը. հայերենի մեջ բնիկ են այն բառերը, որոնք հնդեվրոպական ծագում ունեն, վրացերենի մեջ բնիկ են այն բառերը, որոնք կովկասյան ծագում ունեն։

Ամենից կարևորը և գուշակին մի լեզվախմբի գանագան բնատնիքների միջև եղած փոխառյալ բառերի խնդիրն է։ Հայերենի մեջ կան շատ բառեր, որոնք փոխառյալ են իրանական։ Մի ժամանակ լեզվաբանները գաղափար չունենալով այդ

մասին՝ հայերենի այդ եկամուտ բառերն էլ հարազատ էին համարում և նրանց ներհույթից ու քանակից խաբվելով՝ հայերենը իրանական լեզու էին համարում, մինչև եկավ Հյուբշման հայագետ-իրանագետը և հիմնվելով նրանց ձայնական օրենքների վրա՝ ցույց տվեց, թե ինչն է հայերենի մեջ հայերեն (բնիկ բառեր) և ինչն է հայերենի մեջ պարսկերեն (փոխառյալ բառեր)։ Այսպիսով օտար, եկամուտ բառերը դուրս հանելով և միայն բնիկ բառերի վրա հիմնվելով՝ կարելի եղավ որոշել, մի կողմից՝ հայերենի անկախ հնդեվրոպական լինելու հանգամանքը և, մյուս կողմից՝ թե նա ինչ դերք է գրավում այդ ամբողջ ընտանիքի մեջ։

Մինչև այժմ էլ կան մարդիկ (լեզվաբանության մեջ սկսնակներ անշուշտ), որոնք չեն կարողանում ըմբռնել մի լեզվի բնիկ բառերի և ցեղակից լեզուներից փոխառյալ բառերի զանազանությունը։ Նրանց համար բնիկ է ամեն մի բառ, որ նույն լեզվարնին է պատկանում։ Այս հաշվով հայերենի մեջ, օրինակ՝ բնիկ պետք է համարել պատրիարք բառը, որովհետև հնդեվրոպական pətēr «հայր» բառից է ծագում (թեև նա հունարենից փոխառյալ բառ է հայերենում)։

Այս կետը լավ ըմբռնելու համար կարելի է տալ հետևյալ նյութական օրինակը։ Մի մարդ կարող է ունենալ հարազատ զավակներ, որոնց կարող է միացնել նաև մի քանի որդեգիր։ Այդ որդեգիրները կարող են լինել նույնիսկ օտարազգի կամ նաև որդեգրողի շատ մոտավոր ազգականներից մեկի զավակը. բայց սրա համար կարելի չէ ասել, որ այս վերջին որդեգիրը հորուն հարազատ զավակն է։

Երբեք պետք չէ մոռանալ այն, որ եթե ամբողջ լեզուներ կարող են կորչել և անհետանալ նույնիսկ ներկա քաղաքակիրթ դարում, որչափ բառեր, որոնք շատ հասարակ և սովորական էին նախամայր լեզվի մեջ, ջնջված լինեին այսօր բոլոր ժառանգների մեջ, կամ թեկուզ միայն մի լեզվի մեջ ավանդված լիններին. վերևում հիշված մոռտել բառը, որ 6 ընտանիք միայն գիտեր Շուշում, լավ օրինակ է սրա համար։ Ի հակառակն դատելով՝ եթե այսօր մեր տվյալներով չկարողանանք վերականգնելով որոշ առարկաների համար մի ընդհանուր ձև, պետք չէ դրանից հետևցնել, թե այդ բառը, ավելի ևս այդ առարկան, անծանոթ էր նախալեզվյան շրջանին։ Եթե այսօր մեզ հասած լեզուների մեջ չկա մի ընդհանուր բառ բլթակի կամ բթամատի

մասին, գրանից պետք չէ հետևցնենք, որ ուրիշ մեր նախահայրերի ականջները բիրտ չունեին և ձեռքերը բիրամասից գուրկ էին։ Զգալով չի նշանակում չկա։ Վերոհանգնումների մեջ ինչ որ գրական է՝ վերջնական է. բայց ինչ որ բացառական է՝ վերջնական չէ։

Կարևոր կետ է նաև այն հանգամանքը, որ հնագույն լեզուները հասած լինելով մեզ մի քիչ գրականության միջոցով, իսկ գրականություններ լինելով քաղաքակրթված շրջանի լեզուն, մենք միջոց չունենք իմանալու կիսավայրենի ժամանակների լեզուն և բուն ժողովրդական հասարակ կյանքի բառարանը։

Ամեն մի ժողովուրդ ունենում է միշտ իր գանազան խաղերը. լինում են կանայք և երեխաներ, լինում են գիմբամխաններ և կռվարարներ. մարդիկ ունենում են գիմբի ու լուրջ բազեներ. երբեմն հարսանիք են անում, երբեմն կերուխումով են պարապում, երբեմն էլ կռվի պատրաստություն են անում։ Հանգամանքների, բնավորության, գիրքի և խոսվելի համեմատ լեզվի բառերը հաճախ փոխվում են։ Արգի բարբառները գիտեն մանկական բառեր, ծաղկալեզվի բառեր, գիմբամխաություններ, կատակաբանություններ, փուտանաններ, հայհոյանքներ, բառերի գիտավորյալ աղճատումներ և այլն։ Մի բառով այս բոլորը կարելի է կոչել զգայական լեզու (langue affectif)։ Ո՞ւր են այս բոլորը հնդեվրոպական նախալեզվում։ Ոչ վեդան և Հոմերոսը չպիտի ներկայացնեին գրանք։

Երբ մեկը աչքից անց կացնի մի որևէ հնդեվրոպական առածաբանական բառարան, պիտի տեսնի այնտեղ չարունակ բնդհանուր և վերացական բառեր և հնդեվրոպական նախալեզվի մասին այսպիսի սխալ գաղափար պիտի կազմի. մինչդեռ իրականություն այն է, որ հնդեվրոպական նախալեզուն պիտի ներկայացներ մեզ մի այնպիսի վիճակ, ինչպես է, օրինակ, որևէ քրիստական բարբառ. այսինքն պիտի ունենար այնպիսի բառարան, որ հարուստ էր մասնավոր գործողություններ և հասարակ կյանքն ու առարկաները նշանակող բառերով, և, բնդհակառակը, աղքատ էր վերացական և բնդհանուր գաղափարներով։

Հնդեվրոպական նախաձևը կազմելու համար առանձին դժվարություն են ներկայացնում հենց այդպիսի հասարակ կամ առմիկ բառերը՝ որոնք առարկա գառնալով ձայների անգործություն, տարամանություն, կրճատման և մասնավանգ ժողովրդական առածաբանության, առօրյականից ավելի ձևափոխու-

թյան են ենթարկված։ Հիշենք այսպիսի բառերից մի քանիսը.— լտ.— այս բառը ունենք նախ լիտ. blusà, լեթթ. blusa, հալ. bluxa ձևերով, որոնց համապատ է դրվում սֆղան. vraža. *սրանք միևնույն բառերն են, բայց նրանց նախաձայն թըրթրռունը չի գոնվում ոչ մի ուրիշ տեղ։ Հայերենը հեշտությամբ տալիս է* plusos *նախաձևը, որի նախաձայնը չի կարելի ենթադրել* bhl- *(որովհետև այս դեպքում պիտի ունենայինք հյ.* եղր-, աղր-, *ինչպես ցույց են տալիս* եղբայր, աղբյուր *բառերը)։ Հայերենի ներկայացրած նախաձայնը՝* plu-, *գոնում ենք նաև ալբան.* pléšt *և սանս.* pluṣiḥ *ձևերի մեջ։ Հայտնի չէ, թե ինչ է պատճառը առաջիննների* b *կամ* bh *և երկրորդների* p *ձայների տարբերության։ Հունարենը՝ ունենալով* ψύλλα *և* ψύλλος *ձևերը ներկայացնում է* plusos *ձևի դեմ՝ նրա տեղափոխյալ* psul- *ձևը, որ թևրևս նման մի քանի բառերի ազդեցության արդյունքն է։ Գերմանականում ունենք հիալ.* flō, *հանգլ.* fléah, *հրգ.* flōh, *որոնք ներկայացնում են գերմ.* flauh- *նախաձևը, այս էլ ձևավորված է հգերմ.* fliohan «թռչել, փախչել» *բայից, ճիշտ ինչպես երբ.* par'oš=արաբ. burγuš «լու» *ծագել են «ցատկել» արմատից։ Լատիներենում* psul- *կամ* plus- *նույնպես տեղափոխվելով դարձել է* pusl- *և ապա՝ առանալով մի նոր մասնիկ, եղել է* pulex *(համմտ.* culex), *իռլ.* cuil *ձևի դեմ)։ Այսպիսով՝ ընդհանուր նախաձևը կարելի է դնել* bhlusō, *որ հնխ.* blus, plus, psul, pusl *ձևերն առանալով, տվել է վերոհիշյալ բառերը (տես* Meillet, MSL, *22, 142—3 և Արմ. Բառարան)։*

Մերկ.— *Այս բառը լեզվից լեզու այնքան տարբեր կերպարանքներ է առացել, որ դրեթե անճանաչելի է դարձել։ Նախաձևը պետք է դնել* nog-[2]։ *Այս անխառն ձևի տակ երևում է հալ.* nágu, *լիտ.* nû'gas, *լեթթ.* nuõgs «մերկ», *հհիւս.* nkkua «մերկացնել» *բառերի մեջ։ Դերբայական* -to *վերջավորությամբ ձևեր են՝ հրգ.* nackut, nahhut, *գերմ.* nackt, *անգսք.* nacod, *անգլ.* naked, *հհիւս.* nǫkkueðr, *գոթ.* naqaþs, *բոլորը նախագերմանական* *nogotó- *ձևից։ Այսպես նաև հիռլ.* nacht, *կիմբ.* noeth *և այլն՝* *nog[2]-to *ձևից։ Նույն* -to *դերբայական վերջավորության առջ* -na- *մասնիկն են ներկայացնում՝ հհիւս.* nakinn, *հֆրիզ.* naken, *սանս.* nagnâ, *պնդ.* maγna-։ *Մի ուրիշ մասնիկ ունի լտ.* nūdus *(իրր՝* *nog[2]edhos)։ Վերջապես, անճանաչելի կերպարանքի է հասել հն.* γυμνός, *որի դեմ Հեսիքիոսը տալիս է* λυμνὸς *ձևը։ Դժվար բացատրելի է պնդ.* maγva- *իր նախաձայն* m-*ի պատճա-*

ասվ. որից անկարելի է բաժանել մյուս իրանյան ձևերը. ինչպես, սոգդ. βaγnāk. օս. bāγnāγ. աֆղան. laγar. պհլ. brahnak. պրս. brahna: Իրանյան ձևերը միջոց են տալիս բացատրելու նաև հայերենը, որի մ և բ ձայնները գանում ենք նաև իրանյան ձևերի մեջ: Ըստ այսմ՝ հայերենի նախաձևն է ենթ. (ե ձայնգործով) *neg²-ro->meg²-ro-> մերկ, կազմված -ro- մասնիկով (տես Աբեղ. Բառարան):

Ավելի դանդաղում է խնդիրը, երբ բառը ենթարկված է տարբեր: Այս դեպքում երբեմն այնպես ձևափոխվում է բառը (դիտմամբ), երբեմն էլ ուղղակի մոռացության արվելով՝ փոխանակվում է բոլորովին մի ուրիշ բառով, որ այլևս անհնարին է լինում գտնել նախնական ձևը: Այս կարգի բառերից հիշենք արջ, կամուրջ, օձ, մեղու և այլն:

Ինչ միջոց որ բացատրելիք բառերի վերականգնման համար, նույնը գործ է գրվում նաև քերականական ձևերի համար:

Ենթադրենք, թե ունենք հետևյալ ձայնական համապատասխանությունները.

հնխ. t>սանս. t=հն. t=լիտ. սլ. t=հյ. p=հաթ. z.
հնխ. i=սանս. i=հն. i=սլ. i=լիտ. i=հյ. h=հաթ. i:

Եթե այժմ ուսանենք, թե բայերի խոնարհման մեջ որոշ դեպքում հնչ. կ. գ դեմքը վերջավորվում է՝

սանս. ti=հն. ti=հուս. ti=լիտ. ti=կելտ. ti=յս. ti=հաթ.zi,

նույն համապատասխանությունների հիման վրա կարող ենք ասել, թե հիշյալ վերջավորությունը նախալեզվի մեջ էլ ուներ ti ձևը: Օրինակ՝ էական բայի կ. գ դեմքը՝ սանս. ásti, հն. ēsti, հուս. jesti, հիտ. esti, գոթ. ist, յս. est, պրս. ast, ուրեմն և նախալեզվում՝ *esti, որի մեջ վերջավորությունն է ti, արմատը՝ es:

Բնականության մեջ գործողություններ ավելի կարևոր է, որովհետև այսանդ է, որ սխալմունքները վերածված են բնականության, շատ ձևեր կազմված են ամենօգտակար և կամ բնական ճանապարհով գանազան լեզուների մեջ անկախաբար առաջացած երևույթներ հանգել են վերջապես մեկին: Այն երևույթից, թե հայերենը, անգլերենը և պարսկերենը ահա չունեն, պետք չէ հանգչել, որ ուրեմն հնդեվրոպական նախալեզուն էլ ահա չուներ: Եվրոպացի բոլոր արդի լեզուների մեջ էլ կատարյալը կազմվում է անցյալ դերբայի և էական բայի միացումով, այսպես՝ ֆրանս. j'ai porté, լին. nosit-em, նաև նույնիսկ Աուգուստի հայոց բար-

բառով՝ տարիլ իմ «տարել եմ». Բայց այս բոլորը իրարից անկախ և զանազան լեզուների մեջ դուգահեռաբար առաջացած երևույթներ են, և ոչ թե նախալեզվի անընդհատ շարունակությամբ։ Ցուրաքանչյուր լեզվի մեջ էլ կարելի է գտնել զանազան ձևեր, որոնք չեն կարող այդ լեզվի սովորական օրենքներով բացատրվել. օրինակ՝ հյ. կին տալիս է հգ. կանայք, կանաց, կանամբք ձևերը, որոնց մեջ ա ձայնը ապօրինի է, որովհետև փոփոխման ժամանակ ի դառնում է ը և ոչ ուրիշ բան.— երկու բառը թեև հոլովման ժամանակ լինում է երկուց, յերկուց, երկուք, բայց դասականի վերածվելու ժամանակ դառնում է երկոտասան, որի մեջ ո անկանոն է.— լատիներեն, գերմ. պրս. էական բայի եզ. գ դեմքը est, ist, ast հոգնակիի մեջ հանկարծ դառնում է sund, sind, and, որոնք բոլորովին անկանոն են։ Ահա ընդհանուր կանոնից շեղվող այս երևույթներն են, որ վրատահաբար նախալեզվյան են, քանի որ չեն կարող նույն լեզվի սովորական կանոններով բացատրվել։ Դրանք նախապես սովորական, բայց հետո ջնջված երևույթների քարացած մնացորդներն են, որ հնագիտական բրածոների պես պիտի պատկերացնեն մեզ հին վիճակը։

Նախալեզվի բառերն ու քերականությունը վերակազմելուց հետո սկսնք այնպես առաջ գնացին, որ ուզեցին ամբողջ մի բնագիր կազմել. օրինակ՝ Ավգուստ Շլայխերը գրեց մի առակ հնդեվրոպական նախալեզվով. բայց այս քայլը չքաջալերվեց, և ոչ ոք չհետևեց նրա օրինակին։

Որևէ լեզվի որևէ ձևի նախավիճակը վերականգնելու համար մենք պետք է նախ ձեռք բերենք նրա հնագույն վիճակը, որչափ որ կարելի է։ Մեր նպատակն է հասնել ամենահին շրջանի, որ անծանոթ է և եթե մեր գրավոր աղբյուրները մի փոքրիկ քայլ ավելի մոտեցնեն նրան, ավելի լավ։ Լեզվաընտանիքներից շատերը դուրս են այդ միջոցներից, այսպես՝ աֆրիկյան, ամերիկյան, ալթայական և այլն լեզուները այսօր միայն ծանոթացած են մեզ. ուրիշներ ընձեռում են շատ հին աղբյուրներ։ Այսպես՝ քամյան ընտանիքի համար եգիպտական մեհենագրությունները, որոնք գրված են մեր թվականությունից մի քանի հազար տարի առաջ, սեմական ընտանիքի համար ասորեստանյան և բաբելական բևեռագիր արձանագրությունները՝ դրեթե նույնչափ պատկառելի հնությամբ։ Դժբախտաբար սրանք մի լեզվով են միայն և ներկայացնում են մի ընտանիքի մի

լեզվի հնագույն վիճակը, ինչ որ բավական չէ լեզվաբանի համար, որովհետև լեզվաբանությունը հիմնված է մի քանի ցեղակից լեզուների համեմատության վրա։ Այն լեզուները, որոնք ցեղակիցներ չունենալով՝ համեմատության ենթակա չունեն, չեն կարող ունենալ և իրենց պատմությունը։ Այսպես օրինակ՝ խարդենին, էլամերենն, էտրուսկերենն լեզուների պատմությունը և նրանց ծագումը անհայտ են ու պիտի մնան, ցորչափ չեն գտնված համեմատելի ցեղակից լեզուներ։ Ավելի վատ է չինարենի վիճակը, որ թեև շատ հին գրականություն ունի, բայց գրված լինելով գաղափարագիր տառերով, հնչման մասին ոչ մի գաղափար չի տալիս։ Երբ հին ազգությունները լուծում են, բնականաբար օգնության պետք է կանչել նոր լեզուները. սխալ կլիներ մտածել, թե գրաբարը հայերենի ամբողջ հարստությունը բովանդակում է. որքան բառեր ու ձևեր չեն ունեցել գրականությամբ մեզ հասնելու, որ ասկյան ժողովրդի լեզուն պահել է։ Այս և նման բոլոր դեպքերում նոր լեզուների և բարբառների քննությունն էլ, ուրեմն, կարևոր է և մեզ ի մեզ պետք է գնա հին ազգությունների քննության հետ։

Լավագույն վիճակը ներկայացնում է հնդեվրոպական բնատիպը։ Նախ՝ այստեղ նոր լեզուներից շատերի մայրը դեռ կենդանի է գրքերում, ինչպես՝ լատիներենը՝ ռոմանական լեզուների համար, սանսկրիտը, զենդը և հին պարսկերենը՝ արիական լեզուների համար, գրաբարը՝ հայերենի նոր բարբառների համար և այլն։ Լեզվաբանի գործը շատ է հեշտանում սրանով, և նրան մնում է որոշել ձայնական ու ձևական օրենքները նրի ու նորի մեջ, հետևելով նույնիսկ քայլ առ քայլ շղթայի մի ջիղին օգակներին, եթե կան մի ջիղին շրջաններից գրական հատուկտորներ։ Թողած նրանց, որոնց մայրը կորած է, ինչպես ալբաներենը, դրանք էլ օգտվում և բացատրվում են բուն կարելիության՝ մյուսների համեմատությամբ։

Երկրորդ՝ հնդեվրոպական լեզուների և բարբառների թիվը շատ ավելի մեծ է, քան մյուսներինը, այնպես որ գիտնականը իր ձեռքը տակ ունի անագին նյութ՝ հարկավոր պրպտումներ կատարելու և վճռական եզրակացություններ դուրս բերելու համար։

Երրորդ՝ հնդեվրոպական մայր լեզուներից երեքը՝ հայերենը, արիականն ու հունականը, ամենքված են մեզ բավական պատկառելի հնությամբ և այն էլ բավական հնավիճակ (արխա-

յին) ձևի տակ, այնպես որ դյուրությամբ նրանց միջով կարելի է նշմարել հնդեվրոպական նախալեզվի նկարագիրը։

Ընդորում՝ հնդեվրոպական արմատներն ու բառերը սովորաբար երկավանկ կամ եռավանկ են և ունեն բազմազան թեքումներ, որով և ավելի նպատակահարմար հանգամանքներ են ներկայացնում քննության, քան, օրինակ, չինարենը, որի բառերը լինելով միշտ միավանկ ու առանց թեքման, քննության համար ընդարձակ կովանոցներ չի ներկայացնում։

Այս պատճառներով, ահա, հնդեվրոպական լեզուների համեմատական քերականությունը կազմված է լավագույն ձևով, և նրա սկզբունքներն են, որ իբր օրինակ են ծառայում ուրիշ լեզվաընտանիքների համեմատական քերականություններ կազմելու համար։

Այս բոլորով հանդերձ պետք չէ կարծել, թե վերականգնումը կարող է լինել կատարյալ։ Այս բոլոր քննությունները՝ ձայնաբանական, ձևաբանական ու շարադասական, տալիս են մեզ նախալեզվի մասին միայն մի ընդհանուր գաղափար, տեղ տեղ մի փոքրիկ մանրամասնություն, բայց նրա ամբողջական պատկերը, ինչպես նաև նրա զարգացումը և ընդհանուր միության ժամանակաշրջանից մինչև բաժանման րոպեն եղած զարգացման պատկերը մեծագույն մասամբ մնում են անհայտ. և այս ոչ միայն հնդեվրոպական, այլև սեմական ընտանիքի նկատմամբ, որ իբր շատ ավելի մերձավոր լեզուներից է բազկացած։ Ձայնների և հնչումների որպիսությունը լիովին պարզ չի կարող լինել. շատ որոշ կերպով չգիտենք, օրինակ, k^1 և k^2 տարբերությունը և այլն. և եթե, օրինակ, ասում ենք, թե նախալեզուն ուներ w ձայնը, սա մի ընդհանուր խոսք է միայն, և կարելի չէ ճշտել, թե այդ w կրկնաշրթնայինն էր, թե ատամնաշրթնային էր. այսպես, և ավելի վատ՝ մյուս հնչյունները։ Մինչև անգամ նախալեզվի բառամթերքը, որ լեզվի շատ ավելի հաստատուն կողմն է, ամբողջովին երևան հանված չէ. այսպես, օրինակ, հնխ-ից անհայտ են մեզ շրթունք, կուրծք, բոք, մազ, մատ, ան (դույնը), կույս (աղջիկ) և ուրիշ բազմաթիվ հաստատուն բառեր։ Այս առիթով հետո կարիք չկա բացատրելու ուրեմն, թե կարելի չէ նաև հնդեվրոպական նախալեզվով որևէ նախադասություն վերակազմել, ուր մնաց, թե մի ամբողջ պատմվածք, ինչպես փորձել են անել հանդուգն ոմանք։ Լեզվաբանության կարողությունը մինչև այդտեղ չի հասնում դժբախտաբար։

Այսուհետ պետք է ցավելով հիշել այն սխալ վերաբերմունքը (չասելու համար ծաղրը) այն մարդկանց, որ ցույց են տվել կամ տալիս են այդ գիտնականների վերաբերմամբ, որ հանգրգռնել են գրել որևէ բնագիր հնդեվրոպական նախալեզվով կամ նույնիսկ թարգմանել «Հայր մերը»։ Իրոք որ սրանք հանգիստ ծաղր են։ Բայց մեզնից որևէ մեկը իրավունք ունի ծաղրելու Ֆյուլ Վլոնի կամ Կամիլ Քլամարիոնի երևակայական գիտական վեպերը։ Այն հանգուցն փոքձերն էլ սրանց նման բաներ են։ Բայց, իրոք, ևքե անհնար է կազմել այդպիսի ամբողջական բնագրեր, գոնե փոքրիկ և շատ առմամնափակ տոգեր կարելի է հարթնել հնդեվրոպական նախալեզվի արդեն վերակազմված բաևերով ու ձևերով։ Օրինակ՝ կազմենք հետևյալ նախադասությունները.

pətēr,	mātēr,	dhuktēr	antāi	dems
հայրն	մայրն	դուստրն (են)	ի տեսս	տան.
bhrātēr	ébheret	ek'wām	brєvrós	ėgo
եղբայրն	երեր	գնին	յաղթել.	ես

ésmi pōtir dems
եմ տանուտէրն։

Հնդեվրոպական նախալեզվի վերաբերմամբ շատ բաներ անհայտ մնալու պատճառներից մեկն էլ այն է, որ հին ժամանակից և հնամենի ձևի տակ ավանդված են մեզ միայն երկու ճյուղ՝ արիականն ու հունականը, որանցից առաջինը ներկայացնում է նախալեզվի արևելյան ճյուղը, երկրորդը՝ կենտրոնական ճյուղը։ Զալով արևմտյան ճյուղի լեզուներին, դրանք պատմության մեջ երևում են բավական ուշ և այն էլ սահած ձևի տակ, և այս հանգամանքը մեծ թերություն է ներկայացնում հնդեվրոպական լեզվագիտության համար։ Արիականն ու հունականը բավական չեն նախալեզվի բոլոր գաղանիքները երևան հանելու. օրինակ՝ մինչև վերջին ժամանակը կարծվում էր, թե կրավոբականի զ վերջավորությունը, որ ներկայացնում են իտալական և կելտական ճյուղերը, նրանց հատուկ նորմություն է. սակայն քոխարերենի հայտնությամբ, որ արևելյան ճյուղին պատկանող մի լեզու է, պարզվեց, որ դա էլ ընդհանուր հնդեվրոպական էր։

Վերջացնում ենք մեր խոսքը բացատրելով, թե ինչ պետք հասկանալ նախալեզու բառով։ Առաջ հնդեվրոպագիտները կար-

ծում էին, թե իրենց վերականգնած նախալեզուն իրոք հնդեվրոպական նախացեղի առաջին լեզուն է, որ և ցույց է տալիս լեզվի առհասարակ նախնական վիճակը, ճիշտ ինչպես ներուլոգները՝ տիեզերքի մեջ կամ պրոտոզոերները՝ կենդանական թագավորության մեջ։ Դա սխալ է։ Ինչպես հնդեվրոպական, նույնպես և մյուս լեզվաընտանիքների նախալեզուները շատ հին լեզուներ են, բայց ոչ նախնական, և մայր լեզուների հետ ունեն ճիշտ այն համեմատությունը, ինչ որ գրաբարը՝ աշխարհաբարի հետ կամ լատիներենը՝ ֆրանսերենի հետ։ Ջուր է նրանց մեջ փնտրել լեզվի սաղմնական վիճակը, որովհետև նրանք 10 000 տարվա հնություն էլ չունեն, մինչդեռ խոսողությունը 100 000 տարի է, որ կա։ Այդ 90 000 տարիների լեզվական վիճակի մասին ոչինչ չգիտենք։ Այն առաջին ցեղերը, որ խոսում էին այդ նախալեզուներով, նախամարդիկ չէին, այլ վայրենիներ, մոտավորապես քաղաքակրթական այն վիճակի մեջ, ուր գտնվում էին անցյալ դարում Աֆրիկայի և Ամերիկայի բնիկները, որոնք խոսում էին բավական հարուստ և կանոնավոր լեզվով, որոնց մեջ ոչինչ չկար սաղմնական։ Հատկապես հնդեվրոպական նախալեզվի մասին խոսելով՝ նա էլ այնպիսի մի լեզու է, ինչպես որևէ մի ուրիշը և հնությամբ էլ ժամանակակից եգիպտացերենին և աքքադերենին։ Լեզուների բարեշրջության պատմությունից դատելով կարող ենք ասել, որ նա էլ երկար դարերի պատրաստության արդյունք է և կենսաբանորեն գտնվում է զարգացման երրորդ աստիճանի վրա, այն է՝ ներկայանում է մեզ իբր թևքական լեզու, որի նախավոր շրջաններն են կցական ու անջատական վիճակները։ Բայց այդ հնագույն վիճակները և այդ հնագույն դարերի պատմությունը ի վեր հանել մենք անկարող ենք։ Իսկ եթե որևէ մեկը նախալեզու բառի առաջին եղրը միայն վերցնի և նախալեզվի մեջ հոլովում ու խոնարհում զետեղելը nonsens (անիմաստ բան) համարի, նա ոչ միայն բառի մեջ կեղծիք, այլև գիտության մեջ խարդավանք մտցրած կլինի։ Միևնույն է, թե նա ասեր. «Որովհետև չինարենը հոլովում և խոնարհում չունի, ուստի նա նախալեզու է»։

Հնդեվրոպական լեզվաընտանիության հաջողության պատճառներից գլխավորը պետք է դնել այն, որ մի քանի հնդեվրոպական լեզուների գրականությունը ավանդված է մեզ խոր հնությունից, որ մտնենում է գաղթականության շրջանին։ Ի՞նչ պիտի անեինք, եթե հանկարծ հրապարակի վրա ունենայինք հայերեն և ֆրանսերեն լեզուները։ Անշուշտ գիտուններն այստեղ էլ մի բան

կդանեին, սակայն արքան դժվար, արքան քերականաբար, մանավանդ՝ արքան սխալ, և կասկածելի և անհավատալի:

Նաբագուն լեզուները, որոնք մի մայր լեզվից են ծագում և նրա միջոցով կապվում նախալեզվի հետ, երկու տեսակ են: Դան որ այնպես են փոփոխված և այնքան են ձևասնված, որ միևնույն արմատի զանազան ածանցները անկարելի է ճանաչել և նրանց միությունը հաստատել: Այսպես է, օրինակ, ֆրանսերենը, որի մայրն է լատիներենը: Սովորական ուսումնասիրողը ինչպես կարող է իմանալ, թե ֆրանս. lire ընթերցել, lecture, ընթերցվածք, lu ընթերցած և leçon դաս, որոնց մեջ միայն l ձայնն է ընդհանուր, մի արմատից են բխում, նույնպես՝ ֆրանս. boire խմել, bu խմած, boisson խմիչք և imbiber ներծծել, որոնց մեջ միայն b ձայնն է ընդհանուր, մի արմատից են ծագում: Բայց, իրոք, որոնց մայրն է լատ. legere ընթերցել և bibere խմել: Գիտնականները հասնում են այդ արդյունքին, մի կողմից՝ ցեղակից լեզուների (իտալերեն, իսպաներեն, ռումիներեն և այլն) համեմատությամբ և, մյուս կողմից՝ միջնադարյան բնագիրների օգնությամբ, որոնք լատիներենի նոր շրջանից սկսած մինչև ֆրանսերենի հնագույն շրջանը շարունակվում են: Վերջապես, ամենից վեր կանգնած են հին և առաջին լատիներեն լեզուները, որոնցից առաջանում են ֆրանսերենն ու մյուս նորլատին լեզուները:

Մյուս նոր լեզուները (ինչպես աշխարհաբար հայերենը կամ ռուսերենը) այսքան դժվարությունների հետ չեն կապվում: Արդարև, նոր հայերենը, մանավանդ մի քանի լավ պահված բարբառներ, մեծ տարբերություն չի ներկայացնում գրաբարից, ինչպես և ռուսերենը՝ հին սլավոներենից: Դժվարություն առնվում է միայն գրաբարը և հին սլավոներենը նախամայր հնդեվրոպականի հետ կապելու մեջ, որ և կատարվում է մյուս հնդեվրոպական հին լեզուների համեմատությամբ՝ լեզվաբանության միջոցով: Ասում ենք, թե լեզուների ցեղակցությունը որոշելու համար միայն բառերի նմանությունը բավական չէ, այլ նաև քերականությունն է պետք: Իսկ ի՞նչ պիտի անենք, եթե մեր ձեռքին ունենայինք մի անգլերեն և չինարեն, որոնք երկուսն էլ անջատական լինելով՝ քերականությամբ նույնանում են: Ուրեմն միայն քերականությունն էլ բավական չէ, այլ անհրաժեշտ է նաև բառարանը, միայն այն դիտողությամբ, որ փոխառյալ բառերը դուրս հանվեն ցուցակից:

Ոմանք կարծել են, թե լեզվի սաղմնական վիճակը գտնելու համար բավական է քննել վայրենիների լեզուն։ Դժբախտաբար այս միջոցն էլ անպարզություն է. վայրենիները, ինչպես ասացինք, խոսում են այնպիսի կանոնավոր լեզուներով, ինչպես քաղաքակիրթ ազգերը և այդ լեզուներն էլ այնքան հին են և այնքան ապրած ու փոփոխված, որքան որևէ ժամանակակից քաղաքակիրթ լեզու։ Հնդկաստանի կոլարիական ցեղերը, որոնք այնքան նախնական վիճակում են, որ դեռ ամանեղեն ու մետաղներ չեն ճանաչում, ունեն հարուստ և ճարտարարվեստ մի լեզու, զանազան նուրբ դարձվածներով առատ (Bally, Le langage et la vie, էջ 89)։

Վերջապես, ուրիշներ էլ կարծել են, թե մանուկների լեզվի քննությունը բավական է լեզվի սաղմնական վիճակը երևան հանելու համար։ Ճիշտ չէ և այս, որովհետև մանուկները իրենք չեն, որ հնարում են լեզուն, այլ ընդունում են դարերի պատրաստած աշխատանքը իրենց ծնողների միջոցով. և առ առավելն ուրիշ բան չեն ցույց տալիս, եթե ոչ այն, թե ինչպես նրանք կարողանում են յուրացնել դարերի աշխատանքը այդքան կարճ ժամանակում։

Մարդկային լեզվի սաղմնական վիճակը գտնելու համար ուրիշ ոչինչ չունենք, եթե ոչ վարկածներ։

* * *

Վերևում ասացինք, որ հնդեվրոպական նախալեզվի հնագույն վիճակը երևան հանելու համար որքան շատ վիճաներ (լեզուներ) լինեն, այնքան լավ, բայց առնվազն երեք լեզու, մանավանդ իրարից հեռու և հին գրականությամբ օժտված՝ անհրաժեշտ է նախաձևը երևան հանելու համար։ Ի՞նչ կլիներ մեր վիճակը, եթե սանսկրիտը, հունարենը, լատիներենը գոյություն չունենային և գոյություն ունենային միայն մի երկու նոր լեզու, օրինակ՝ ռուսերեն և հայերեն աշխարհաբար։

Մերձավորապես այդպիսի մի երևույթ եղավ անցյալ դարում, երբ իրանագետները հայերենը սկսեցին համեմատել նոր պարսկերենի հետ։ Ի՞նչ արդյունք ունեցավ այդ համեմատությունը։ Դժբախտ գիտնականները հասան այն եզրակացության, թե հայերենը պարսկերենի զավակն է։ Եվ այս դեռ այն ժամանակ, երբ հին պարսկերենը, սանսկրիտը և բազմաթիվ արևմտյան լեզուները կային առանձին։ Իսկ ինչ կլիներ, եթե նրանք էլ դո-

յութիւն չունենային։ Այժմ դուրս են եկել ամառք, որ հայերենը համեմատում են միայն գերմաներենի հետ, կամ անգլերենը հայերենի հետ. սրանք անօգուտ և անդիտական աշխատանքներ են։ Ապարդիւն ջանք, որ առաստաղին քերի կամ սխալ եզրակացութիւն է հասցնում մեզ։

Ամենք էլ ցանկութիւն ունեցան հայերենը համեմատել ռուսերենի հետ։ Հնարաւոր է այդ, բայց արդիւնքը քերի։ Երբ կա հին սլաւոներենը և մյուս սլաւոնական լեզուները, ինչ կարիք կա այդպիսի սեղմ շրջան առնդելու։ Օրինակի համար ռուսերէն брат և հայերեն եղբայր. ինչ կապ կարող էին ունենալ իրար հետ առանց համանիշ բառերին և հնդկերեն ձևերի համեմատութեան։ Pater բառը կրճատ է ռուսերենում, փոխառնակվելով отец բառի հետ, որ նոյն բառի մանկական, փաղաքշական ձևն է եղել։ Այս դեպքում հնարաւոր չպիտի լիներ, հյ. հայր բառի համեմատութիւնից օրէնք հետևանքի հասնել, կամ հյ. աճառ և ռուսերէն узкий բառերի համեմատութիւնը կարելի պիտի լիներ երբեմն մատնել՝ առանց հին սլաւոնական язык ձևի։

Այսպիսի համեմատութիւններ անոգները նման են մի պատուհորի, որ օրեկ պատի ժամանակ, երբ վիկա են ներկայացնում մի անուղղակի պատանի և տասը լավատեղեակ ձեր ու երիտասարդ, պատուհորը տաս վիկաներին դուրս է հանում պատարանից և լսում է միայն պատանու վիկայութիւնը։ Ինչպես որակել այդ պատուհորին։

Հայերենի և անդլերենի, հայերենի և գերմաներենի, ինչպես և հայերենի և ռուսերենի համեմատութիւնը կարող է միայն մի բանի պետք գալ, այն է՝ գտնել դյուրընտիր միջոցներ, որպեսզի հայ աշակերտը ամենից հեշտ յուրացնի ռուսերենի, անգլերենի, գերմաներենի ուսումը, իսկ սա լեզուարանութիւն չէ, այլ՝ մանկավարժութիւն։

ԳԼՈՒԽ ԺԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԱԼԵԶՈՒ

Գիտնականներից ոմանք հարց են հարուցել, թե կարելի չէ արդյոք լեզվաընտանիքների թիվը ավելի ևս կրճատել, այսինքն՝ այս կամ այն լեզվաընտանիքը կցելով մի ուրիշի հետ՝ դնել մի նախալեզվից։ Եղել են նույնիսկ գործնական փորձեր։ Այսպես՝ հնդեվրոպական ընտանիքի և ուգրո-ֆիննական ընտանիքի միջև գտնվել են զարմանալի համապատասխանություններ։

հնխ. vedo «ջուր», ֆիննն. vete-, հունգ. vīz, էստոն. vesi, չերեմ. būt, վոգ. bit «ջուր»։

հնխ. homen «անուն», ֆիննն. nimi, էստոն. nimi, պերյ. վոտ. n'im, վոգ. nām, օստ. nèm «անուն»։

հնխ. vedh- «վարել, քշել», ֆիննն. vetā-, էստոն. veõa, չերեմ. būdt, հնգ. vāzā «քաշել»։

Սրանց վրա ավելացնենք ձևաբանական նմանություններ, ինչպես բացառականի վերջավորությունը՝ -d և ֆիննն. -ta, հայցականի վերջավորությունը՝ հնխ. -m և ֆիննն. -n կամ -m և այլն (Kiekers. Die Sprachst., էջ 64)։

Նույնպիսի նմանություններ գտնվել են, մի կողմից՝ սեմականի և, մյուս կողմից՝ քամյան ընտանիքի միջև։ Օրինակ՝ Սեմական լեզուների նմանությունը քամյան լեզուներից եգիպտականի հետ, շատ ակնհայտ է. համմտ.

երկու — սասր. šinā, *արաբ.* iθnāni, *եբր* šənaiim = *եգիպ.* sn.
շրթունք — արաբ. šafat, *եբր.* sâfâ, *սասր.* sefθā, *սասր.* šaptu = = *եգիպտ.* spt.
ջուր — արաբ. mā', *եթովպ.* māi, *եբր.* maiim, *սասր.* maiia, *սասր.* mē = *եգիպտ.* mu.

մաքի — արաբ. šā՛, եբր. սուբ. šu՛u, = եգիպ. su՛.
մարդ — եբր. meḏim, սուբ. mutu, եթովպ. met = եգիպտ. mi-

կատարված է մինչև անգամ առանձին փորձ՝ հիմնելու քամյան-սեմական ընդհանուր համեմատական քերականություն[1].

Ամենից ավելի մանրամասն է կատարված հնդեվրոպական և սեմական բնականիքների համեմատությունը. այս կարգի համեմատություններով զբաղվել են Կլապրոթը, Բոպը, Նորբերգը, Լեպսիուսը, Գեզենիուսը, Ջյուրջաս, Դելիչը և ավելի գիտուն կերպով՝ Հումբոլդտը, Բենֆայը, Շտայնթալը և այլք, որանց քննադատությամբ զբաղվում է Թրնանը (Hist. des langues sémit, I², 1863, էջ 446—459), որից հետո ինքն էլ տալիս է հնդեվրոպական և սեմական համեմատությունների մի ցանկ. սակայն այդ բոլորն էլ համարում է բնաձայն:

Սեմական և հնդեվրոպական համեմատությունների հարցը այնքան ասպէ գնաց, որ մինչև անգամ կազմվեց երկու բնականիքների համեմատական բառարանը (Möller, Vergl. indogerman.-semit. Wörterbuch, Göttingen, 1911), որի մասին անկարելի չենք համարում տալ մի քանի տեղեկություններ:

*Մյոլլերի հնդեվրոպական-սեմական բառարանը 272 էջից բաղկացած մի գործ է. յուրաքանչյուր էջում դնելով առնվազն 3 արմատ, ամբողջը կհնարավորի 800 հնդեվրոպական-սեմական բնիկ արմատ, որ լիովին բավարար պաշար է: Բնավոր արմատներից մի մասը շատ կասկածական է. այսպես՝ էջ 133 հնդ. *longhos «երկար», արմատը՝ lngh, համարում է n միջամտությամբ, նախնական արմատը՝ lgh, ուր l դնելով = r, և gh = k, կգտնի է սեմական ark արմատին. համմ. սուբ arāku և եբր. ʾrk «երկար»: Բայց կան նաև հաջող համեմատություններ. ինչպես՝ էջ 232, հնդ. sru «հոսել» = սեմ. srb «հոսել»: Ապագա աշխատանքների արդյունքը պիտի լինի որոշել, թե այս բոլորից ինչն է սուտ, ինչն է պատահական:*

*Վերջերս լույս տեսավ մի աշխատություն, բավական լուրջ գործ, որ քննում է հնդեվրոպական, սեմական և քամյան ընդհանուր նախալեզուն, արդեն վերակազմված վիճակում, որ և կոչում է nostratique (A. Cuny. Recherches sur le vocalisme, le consonantisme et la formation des racines en *Nostratique*,*

[1] Ember, Egypto-semitic studies, Leipzig, 1930.

ancêtre de l'indo-européen et du chamito-sémitique. Paris. 1943)։

Հեղինակը ծանոթ է բոլոր լեզվաբանական լուրջ գործերին և ինքն էլ լրջությամբ է վերաբերվում գործին։ Առանձին կարևորություն է տալիս հայերենին, որ ալբաներենի և հունարենի հետ միասին համարում է միջին օղակ սեմականից հնդեվրոպականին անցնելու շրջանում։ Այն բացառիկ ձայնաբանական երևույթները, որ ցույց է տալիս հայերենը, հեղինակի մոտ առանձին կարևորություն են ստանում՝ վերակազմելու համար nostratique *ձևերը։*

Նկատել են մինչև իսկ՝ նմանություններ էսկիմոսների և հնդեվրոպական նախալեզվի միջև (տես Uhlenbeck-*ի հոդվածը* Mélanges Pedersen, *էջ 110—114)։*

Մի ուրիշ պիտանական (հոպկինսյան) դանում է ինչ որ նմանություններ հնդեվրոպական լեզուների և կովկասերենի ու նրա ազգակից լեզուների միջև, ենթադրում է մի ավելի հին լեզվաընտանիք, որ կոչում է եվրասիական, և որի ճյուղերն են հնդեվրոպականը, կովկասերենը և այլն։

Ընդհանրապես այն բոլոր աշխատությունների մեջ, որոնք կատարված են այս ուղղությամբ, կան մի քանի սկզբունքային սխալներ.

1) Համեմատությունները կատարված են միայն բառական մեկերքի վրա. բայց մենք գիտենք, որ բառամեկերքի նմանությունը վճռական չէ, որովհետև նրանք կարող են լինել պատահական կամ փոխառյալ՝ ազգակից կամ անազգակից ճանապարհով։

2) Համեմատությունները կատարված են առանց սխեմայի, այսինքն՝ առանց որոշելու, ճշտելու և հաստատելու ձայնական համապատասխանությունները։

3) Քերականական կողմը նկատի առնված չէ։

Օրինակ՝ Կ. Օշտիրը (K. Oštir, Beiträge zur alarodischen Sprachwissenschaft, Wien, *1921) կազմել է մի շատ հին ընդարձակածավալ լեզվաընտանիք, որ կոչում է ալարոդյան և որի ժառանգներն է դնում կովկասյան բոլոր լեզուները, էտրուսկերենը, բասկերենը, սումերերենը, հաթերենը, եգիպտացերենը և այլն։ Նա վերականգնում է նաև ալարոդյան նախալեզվի բառաձևերը, բայց ոչ սովորական ձայնական օրենքներին է հետևում, և ոչ էլ բառակազմության կանոններին. այսպես՝ ալարոդյան նախաձևն է՝ «3» բառի համար՝*

	ϑ	w	b	n
արից՝ էաբուակ.	ϑ	u		n
բաակ.	h	e	.	r
եգիպտ.	ḫ		m	n
վրաց.	s	a	m	
ծախուր.	x	e	b	
աւստեր.	pe	š		
լակ.		š	a	n

Այսպես, ուրեմն, b ազատութեան գառնում է m կամ ջնջվում է, n գառնում է r կամ ջնջվում է, ϑ լինում է h, ḫ, s, š, x, վերջապես բառասկիզբը կարելի է դնել ամէնտրդ pe մասնիկը և նախամայրը պահելով՝ ետացյալ բոլորը ջնջել և այլն։

Այսպիսի համեմատութիւններ բնականաբար գիտութեան համար անտրժէք են։ Բայց նուիրեսկ հաջող համեմատութիւնների գնպատմ, գանձած նմանութիւնները այնքան տակավաքիվ են, որ լուրջ կամ գժվարահաս մտածողի համար անբաւարար են։ Աւելի խոր քննութիւններ կամ չնախատեսված նոր հայտնութիւններ պիտի կարողանան քեզնս մի որ ավելի մեծ բան տեսնել մեզ այս մասին։ Բայց ինչ էլ լինի, հատատուած լեզուաբանութիւնների հարցը վճռական է, գրութեան մեջ ոչինչ չի փոխվիլու և հաջողութեան գնպատմ պիտի կազմվին մեծ, այսպես ասած, ընտանեաները, որոնց գամակները են լինելու արդի նախալեզուներից մի քանիսը։

Ուրիշ գիտնականներ ավելի են բարձրացրել խնդիրը և հարց են արել, թե արդյոք բոլոր լեզուաբանութիւնները միևնոյն ծագումը չունեն։ Այս խնդիրը ուղղակի կապ ունի նախ մարդկութեան ծագման հետ։ Արդյոք մարդկութիւնը մի անգամ էր ծագել, թե երկրագնդի մի քանի տարբեր կետերում և տարբեր ժամանակներ։ Այս մասին մարդաբաններըը բաժանվում են երկու մասի՝ պոլիգենիստներ և մոնոգենիստներ։ Առաջիններըը բնդունում են, որ մարդկութիւնը չորս տարբեր ծագում ունի. 1) սպիտակ ցեղ, որ բնակվում է Եվրոպայում, Հիւսիսային Աֆրիկայում, Արևմտյան Ասիայում և մասամբ Ամերիկայում, 2) դեղին ցեղ, որ բնակվում է Ասիայի մեծ մասում և Օվկիանիայի մի մասում, 3) պղնձագոյն ցեղ, որ բնակվում է Ամերիկայում և Օվկիանիայում, 4) սև ցեղ, որ բնակվում է Աֆրիկայում, Օվկիանիայում և Ասիայի ու Ամերիկայի գանազան կողմերում։

Պոլիգլոտների կարծիքով աշխարհիս զանազան մասերում իրարից անկախաբար առաջ են եկել զանազան տիպի նախամարդիկ, որոնք հետո բազմանալով՝ բռնել են հիշյալ աշխարհամասերը և ձևացրել հիշյալ ցեղերը։ Ընդհակառակը՝ մոնոգլոտները ընդունում են, որ ամբողջ մարդկությունը երկրագնդի մեկ կետի վրա մեկ տիպի նախամարդուց է առաջացել և հետո տարածվել է աշխարհիս զանազան մասերը, ուր կլիմայի և շրջապատի ազդեցությամբ առանձին գույն և կերպարանք, առաջ է բերել հիշյալ ցեղերը։

Այս հարցի լուծումը տալիս է կենսաբանությունը, որ քննդունում է թե բուսական, և թե կենդանական աշխարհում տեսակների ծագման միությունը (տես Դարվինի «Տեսակների ծագումը» աշխատությունը)։

Սակայն ընդունելով, թե մարդկությունը մի ծագում ունի, այնուամենայնիվ լեզուների ծագման միության հարցը չի վճռվում։ Կարող էր մարդկությունը ունենալ մի ծագում և մի անդամից էլ հնարած լինել իր լեզուն։ Բայց կարող էր նաև ունենալ մի ծագում, հետո ցրվել աշխարհիս զանազան կողմերը, այդ տեղերում հաստատվել ու բազմանալ, և հետո միայն առեղծել իր լեզուն՝ ամեն մեկը առանձին առանձին։ Այսպիսով հասնում ենք լեզուների բազմաձևության «Անկարելի չէ, ասում է Ռենանը, որ լեզուների ծագումից առաջ գոնված լինի թխաման (incubation) մի շրջան, որի մեջտեղին զանազան պատճառներ, որոնք ուրիշ որևէ ժամանակ երկրորդական պիտի համարվեին, ուժգնապես ազդել և փորել են անջատման այնպիսի անդունդներ, որոնք մեզ համար զարմանալի են։ Մարդկության սկիզբը կորչում է մի այնպիսի խավարի մեջ, որ երևակայությունն էլ չի հանդգնում քայլեր անել այնպիսի մի հողի վրա, ուր բոլոր ենթադրություններն էլ չքանում են» (Hist. des langues sémit., I, 4, 1863, էջ 445)։

Լեզվաբաններն առհասարակ կողմնակից են լեզուների բազմաձևության կարծիքին. քչերը միայն կան, որ ընդունում են լեզուների ընդհանուր միությունը։ Այս կարծին է պատկանում հատկապես նոր ուսումնասիրողներից Տրոմբետտին, որ իր L'Unità d'origine del Linguaggio (Bologna, 1905) բավական ընդարձակ աշխատության մեջ քննում է այս հարցը և եզրակացնում է. «մարդկային լեզվի միակ և միասեռ ծագումը (էջ 6)», և ի վերջո «բոլոր մարդիկ պատկանում են մի միակ տեսակի և

իրապես եղրայր էն (էջ 58)։ Ինքը մտածում է նախ ընդհանուր խոսքերով։ Այնուհետև պիտի տալ իր ապացույցները։ Այս եղրակացության հասնելու համար նա համեմատում է աշխարհի զանազան լեզուների մասնիկները, հոլովական ու բայական վերջավորությունները, թվականները և հատկապես արմատները (40 արմատ մանրամասն քննությամբ, 97 արմատ կամ բառ՝ ընդհանրի)։

Ընդհանուր պատկերությունները բնականաբար բավական չէն այսպիսի մի հիմնական հարց լուծելու համար. նրա լեզուների ծագման շատերը բազմաթիվ կորուստների պատճառով կարելի չէ ապացուցել, մինչդեռ պատճառով կարելի չէ ապացուցել նաև նրանց ծագման միությունը։ Ինչ էլ որ լինի, վճռական խոսքը պատկանում է լեզվական համեմատություններին։ Այս պատճառով, անշուշտ, վերին աստիճանի հետաքրքրական են Տրումպետտիի բերած համեմատությունները։ Սակայն ինչպես են կատարված այս համեմատությունները և ինչ արդյունք են տալիս նրանք։

Համեմատությունների մեջ կան այնպիսիները, որոնք իրոք շատ ակնթարթ են. օրինակ՝ մի արդնկական-բայասականը (էջ 72), որ հնդեվրոպական լեզվախմբի մեջ կա mē ձևով, բանաւոր խմբի մեջ ma, *անմակառնում (արաբ.)* mā, *եգիպտ.* m, ym, *կուշական լեզուներում՝ թուշ. ատթ* ma, *արխազ.* -m-, *քյուրքերեն* -ma-, *դրավիդյան* ma, mi, *աբխազական՝* ma, *չին.* mot, *ամերիկյան բնագյա կամ տուկանո լեզվով* -mai, *ամերիկյան մայա լեզվով՝* ma, *որ դրվում է բայից առաջ (ինչպես՝* ma-in bin *չեմ գնում»* ma-bin-eč *չենք գնում»), աֆրիկյան նիլոտա լեզվով՝* mā *(ինչպես* mā di *«մի՛ ասիր»,* mā se *«մի՛ ասա»,* mā nā, *«մի՛ ասր»)։ Ամերիկյան կարաիբ լեզվով* m *բացառական նախամասնիկ է, որ սակայն հատուկ է կանանց լեզվին և այլերը չեն կիրառում, ինչպես՝* marametentina *«չեմ քաքցնում»։ Ամերիկյան արավակ լեզվով բացառականի նախամասնիկն է* ma- *(օրինակ՝* hallikebbede *«ուրախանում եմ»,* ma-hallikebbede *«չեմ ուրախանում»)։ Ամերիկյան բոլն լեզվով բացառական մասնիկն է* ma, me, mo։ *Ամերիկյան մայարի խմբին պատկանող շատ լեզուներ բացառականը կազմում են* ma, mo *նախամասնիկով. ինչպես՝*

մասագ լեզվով՝ ūssa *«երթիս», massan «երթիս չունենալ»,*

բոլն լեզվով՝ iti *«արյուն», ma-iti-na «արյունոտ, անարյուն».*

մայաուրև լեզվով՝ ma-arrute-ni-ca-na *«շատ չունեմ».*

մոքո՝ լեզվով՝ nituco *«կարող եմ»,* nu-mo-itico *«չեմ կարող».*

անտան լեզվով՝ gime *«մայր, ամուսին»,* ma-gime-ro *«մայրի կին».*— a-yempita *«լսողություն, ականջ»,* a-ma-yempite *«խուլ լինել»,* ma-yempite *«չլսել, չհնազանդվել»* (L. Adam, Indios Antis, էջ 9)։

Հնդկական նևվարի լեզվով բայերի բացասականը կազմվում է ma *մասնիկով։*

Ամերիկյան պաուինա լեզվով արգելական մասնիկն է ama. *օրինակ՝* ama hallanaquench *«մի ապանիր».*

Աֆրիկյան վակուֆի լեզվով՝ šam *«սիրել»,* nanu ašam *«ես սիրում եմ»,* mášam *«չեմ սիրում»։*

Աֆրիկյան մինիանկա լեզվով բացասականի նշանն է mè, *որ դրվում է միշտ նախադասության վերջը. ինչպես՝*

me	na	šye	Segi	ni	mè
ես	*դնացել*	*եմ*	*»*		*ոչ։*

Քամյան ափար լեզվում բացասականը կազմվում է mą *մասնիկով։*

Մոն-քմեր խասսի լեզվով բայի բացասականը կազմելու համար սկզբում դնում են ym, *որ կրճատվելով դառնում է* m. *օրինակ՝*

ngā,	m	long
ես	*չ*	*եմ (= չեմ)*

Թայ = Սիամ ընտանիքի ահոմ լեզվով բացասականը կազմվում է mā *բառով, որ նշանակում է «ոչ»։*

Նույն Թայ = Սիամ ընտանիքի քամտի լեզվով բացասականի մասնիկն է n՝ *կամ* mā։

Բիրմանական լևխաս կամ անդ լեզվում բացասական կազմելու համար բայից առաջ դնում են ma *և վերջում* ne. *ինչպես՝* ma nóng-ne *«դուք չտվեցիք»,* ma nyiu-ne *«նա չէ»։*

Իսկ արգելական կազմելու համար բայից առաջ դնում են ma *և վերջը* nun. *ինչպես՝*

ma-li-nun *«մի խոսիր».*

Հնդկական գուջարաթի լեզվում արգելականը կազմում են հատուկ mā *մասնիկով. ինչպես՝* bīhō mā *«մի վախենար»։*

Եթովպական բարևա լեզվով բացասականը կազմվում է ma, ʒni, me *մասնիկներով։*

Բիրմաներենում բացասական նախամասնիկն է mā.

Տիբեթական սիկիմ-բուտիա լեզվով բացառականի մասնիկն է ma կամ mi։

Մելանեզյան ամբոխա լեզվով արգելականը կազմվում է meke նախդիրով, որ պատահաբար նման է մեր ժողովրդական մի՛ք ձևին, ինչպես՝ meke hiko «մի՛ գոգանար»։

Աֆրիկյան դանդ լեզուում ժխտականը կազմվում է mo մասնիկով. ինչպես՝

fo	mo	yo	չդնացիր։
գու	ոչ	գնալ	

Տիբեթիբենում բացառական կազմող մասնիկների մեջ կան նաև ma, mi։

Աֆրիկյան էվե լեզվով բացառականը կազմվում է me մասնիկով. ինչպես՝ yi «երթալ» բայից՝ meyi o «նա չի գնում»։

Աֆրիկյան մանդինգ լեզվի մեջ բացառականի նշանն է mā. օրինակ՝

a	mā	yege	mina	
նա	ոչ	ձուկ	բռնել	«նա ձուկ չբռնեց»։

Հնդկական նագա լեզվի մեջ բացառականի նշանն է mo։

Դրավիդյան գոնդի լեզվի մեջ արգելականը կազմվում է mā մասնիկով, որ արխականից փոխառյալ պիտի լինի։

Աֆրիկյան սամալի լեզվով բացառականը կազմվում է ma մասնիկով. ինչպես՝ aneka ma yogin «ես չեմ»։

Եթովպական ամհա լեզվով բացառականը կազմվում է ma նախդիրով։

Աֆրիկյան ագնի լեզվով բացառականը կազմում են ma կամ na մասնիկով. օրինակ՝ di «ուտել» բայից na di «չուտել», wo di ma «գու չես ուտում»։

Եթովպական կունամա լեզվով բացառականը կազմվում է -immi կամ imme մասնիկով։

Եգիպտացիերենում արգելականը կազմվում է m նախամասնիկով. օրինակ՝ m snd «մի՛ վախեցար», m ir «մի՛ շինիր»։ Բացառականը կազմվում է n բառով, որի առաջականն էլ nu է։

Այսպիսի ճշգրիտ զուգադիպություններ, սակայն, չափազանց քիչ են։ Ամենաարտ համեմատությունները կատարված են շատ անպատասխանատու ձևի տակ։ Տրամբետտին ուշադրություն չի դարձնում նախ՝ նշանակությունների նույնության վրա, որ-

նակ՝ «դնել» և «անել» իր համար միևնույն գաղափարներն են (էջ 153), այսպես նաև «ծուռ» և «այրել» (էջ 147), «մարդ» և «երթալ» (էջ 145) և այլն։ Երկրորդ՝ արմատները աջից ու ձախից կրճատվում են քան կամ և հարմարեցվում են այս կամ այն լեզվին. և այս բաները հաստատելու համար ոչ մի ճշգնական օրենք չկա. մինչդեռ լեզվաբանության մեջ միակ համոզիչ փաստը ճշգնական համապատասխանություններն են և նրանց անշեղ կիրառումը։ Սրանից դուրս լեզվաբանություն չկա, այլ՝ միայն պատահական զուգադիպություններ։ Վերջապես Տրոմբետտին համեմատությունները կատարում է ոչ թե լեզվաընտանիքների մեջ, այլ քան լեզուների։ Այս դրությունը ճիշտ չէ. այսօրվա լեզուները փոփոխված պատկերներն են միայն. և եթե ուզում ենք գտնել հների հինը, այսինքն՝ այն առաջին «նախատատը», որից ծագել են բոլոր լեզվաընտանիքների նախալեզուները, պետք է իրար հետ համեմատենք ոչ թե հին կամ արդի լեզուները, այլ միմիայն նախալեզուները։ Շատ լեզվաընտանիքներ դեռ քննված չեն, ուր մնաց նրանց նախալեզուների վերականգնումը։ Իսկ Տրոմբետտին նույնիսկ հնդեվրոպական ձևերի համար ո՛չ թե արդին կազմված ու վերականգնված նախալեզուն է օգտագործում, այլ՝ առնակրիտը, հունարենը, լատիներենը, հայերենը և այլն, ինչ որ սխալ ճանապարհ է։ Գուցե թե բոլոր լեզվաընտանիքները մի միակ «նախատատից» են առաջանում, բայց այդ հարցը լուծելու համար մենք պիտի հետևենք ուրիշ ճանապարհի։ Նախ պետք է կազմել, վերջացնել յուրաքանչյուր լեզվաընտանիքների ուսումնասիրությունը, վերականգնել բոլոր նախամայր լեզուները, այնուհետև միայն՝ այդ նախամայրերի համեմատությամբ, եթե կարելի է, որոնումներ անել «նախատատի» գոյության մասին և ընդունել կամ հերքել սրա գոյությունը։ Եթե դեռ լեզուները մինչև այժմ չի կարողացել քննել ներկայումս գոյություն ունեցող բոլոր լեզուների ու լեզվաընտանիքները, վաղաժամ է խոսել ընդհանուր նախամոր կամ նախալեզվի մասին։

Տրոմբետտիի աշխատության նման մի գործ ունի Վայլերը (Der Turm von Badel, 1935, 452 էջ), ուր հեղինակը նույն աճով և նույն ոգով աշխատում է ապացուցել լեզուների ընդհանուր միությունը։ Այստեղ էլ սխալները նույն են. համեմատությունն անհատ լեզուների, և ո՛չ թե նախալեզուների միջև և ոչ թե նախնական խմբատների, ձևի համեմատություն, այլ նրանց, իբր թե զարգացրած, հետագա առումների։ Լեզուների նախնա-

կան մխիթյան մասին խոսում է նաև Քրնանք (Hist. des langues sémit.. I, 4. 1863. էջ 443) և ասում է. «Երբեք կարելի չպիտի ինի բացատրել, թե ինչպես գենգերենը կամ սանսկրիտը կարող էին հնդեվրոպական ձևափոխություններով գոյանալ երբայեցերեն. լոյ էլ՝ թե ինչպես երբայեցերենը կարող էր գոյանալ սանսկրիտ կամ չինարեն: Այս երեք դրությունների մեջն (չխոսենք ուրիշների մասին) կա մի այնպիսի անջրպետ, որ թույլ չի տալիս բնությանը նրանք իրեն մի տիպի տարբերակներ. Ինչ էլ լինեն դիտության ապագա վարկածները ծագման հարցերի մասին, նրն դարերով այն սկզբունքը, թե երեսը լեզուներն էլ մի մեկ լեզվի բարբառներն են, պետք է դեն գցել ընդ միշտ:

Կանգնելս ձեր վերածելով այս ընդհանուր խոսքերը, մենք կարող ենք հարց տալ, թե ինչպես կարելի էր ենթադրել, որ օրինակ, «մայրը» բառը մարդկային քաղաքակրթության կամ լեզվական զարգացման էտապա-ներից անցնելով՝ գոյանար չինարեն ma, վրացերեն deda, հնդ. եվրոպերեն ana.

Այս երկու կարծիքների միջին ուղն է բռնում Դարվինը: Ընդունելով մարդկային ցեղի միասին ծագումը, բնականաբար պիտի ընդուներ նաև, որ մարդկությունը հնդ է տարածվել երկրագնդի վրա և բաժանվել ցեղերի: Այս տարածումը ենթադրում է որոշ մտավոր բարձրություն, որ առանց լեզվի գործածության անկարելի է: Սրանից հետևում է, որ մարդկությունը դեռ աշխարհիս վրա չտարածված և ցեղեր չկազմած՝ իր նախորդանում արդեն մի լեզու ունեցել էր: Բայց այդ լեզուն շատ ավելի անկատար էր, քան այժմ խոսվող որևիցե լեզու. այնպես որ ավելի ուշ և ավելի շատ զարգացած լեզուների մեջ ոչ մի հետք չի մնացել:

Սակայն ճիշտ է արդյոք այն ենթադրությունը, թե մարդկության տարածումը անպատճառ որոշ մտավոր բարձրություն և լեզու է ենթադրում: Անասուններն էլ տարածվել են աշխարհիս գրեթե մասերի վրա, բայց ո՛չ ենթադրված մտավոր բարձրություն ունեն և ո՛չ էլ լեզու: Ուրեմն կարելի է ընդունել, թե մարդկությունը իր լեզուն կազմել է տարածումից և ցեղերի բաժանումից հետո: Հակառակ պարագային, այսինքն ընդունելով նախնական մարդկության համար մի որևէ լեզու, նոր արժեք է առնում Տրամբետտիի տեսությունը, և այն ժամանակ հարկ է լինում փնտրել, թե լեզուների մեջ ինչն է, որ ընդհանուր է բոլորին և ծագում է այն ամենանախնական շրջանից:

Բայց այս մասին կա և մի ուրիշ կարծիք։ Որովհետև լեզուների և լեզվաընտանիքների ամենամեծ մասը ծանոթ է մեզ միայն ամենանոր ժամանակներից (այսպես՝ ֆիննական, ամերիկյան, ավստրալիական, հյուսիս-կովկասյան և այլն) և դիտության միջոցներով վերակազմելիք նրանց նախամայրը հազիվ մի քանի դար հնություն միայն կարող է ունենալ, ուստի ավելի խորը երթալ, և հնդեվրոպական ու քամյան նախամայրերից ավելի հին մի նախամոր հետ այս նոր նախալեզուների միությունը ապացուցել անկարելի է և բոլոր ապացույցները խարուսիկ են (Les langues du monde, էջ 4)։

ՀԱՎԵԼՎԱԾ

№ 1

ՍՈՒԱԿԻ ԵՐԳԻ ԴՐԱՆՑՈՒՄԸ ԸՍՏ ԲԵՒՇՏԱՑՆԻ

Թխու, թխու, թխու, թխու.
Ագռը-թխու, թօ-քուա.
Թքօ, թքօ, թքօ, թքօ.
Քուուքխու, քուուքխու, քուուքխու.
Ցքուօ, ցքուօ, ցքուօ, ցքուօ.
Ցխի, ցխի, ցխի, ցխի, ցխի, ցխի.
Ցխի, ցխի, ցխի, ցխի.
Քուօռօռ-թխու.— Ցքուա փխփխցքռնէ դի.
Ցօ-ցօ-ցօ-ցօ-ցօ-ցօ-ցօ-ցօ.
Ցօ-ցօ-ցօ.
Ծխռռռ-կաաինկ.
Ծխդի, դխի, թօգի, ծի ծի ծի ծի ծի ծի ծի ծի
Ցօռռէ, ցօռռէ, ցօռռէ, ցօռռէկի.
Ցաթ, ցաթ, ցաթ, ցաթ, ցաթ, ցաթ.
Ցաթ-ցխի.
Տլօ, տլօ, տլօ, տլօ, տլօ, տլօ, տլօ.
Քույօօօ, թռռռռռռռիճ.
Լաւ լաւ լաւ, լի լի լի, լը լը լը.
Քուօ տխտխլ լի լուլխլի
Կաւ կխաւթ, քաւի քուօ.
Կաւյքօ, կօռռաւխ, կաւաւխ.
Կաւի, կաւի, կաւի, կաւի, հի, հի, հի.
կհօլլ, կհօլլ, կհօլլ, կհևա, կաւռևաւռաւա,
Կաւի, կաւի, խօռռ, խա տևա տևա տխլլբխխ.
Հէց, հէց, հէց, հէց, հէց, հէց, հէց, հէց.
Հէց, հէց, հէց, հէց, հէց, հէց.

Քաւառոխս, խաւիկաւս.
Քաւչեա, քաւչեա, քաւչեա, քաւչեա, քաւչեա, քաւչեա.
Քաւչեա—քաւչեաքի.
Կաւթ, կաւթ, կաւթ, հս, հս, հս, հս, հս, հս, կաւթ.
Լքեաւ, լքէ, լօր, սքաթ, հս, կաւս.
Հիկեաւէ, կքւէ, կքւէ, կքւէ, կքւէ, կքւէ, կքւէ.
Քաւչեօր, ցքս, ցքոփքի[1]:

Դժբախտաբար գերմանացի դիտնականը չէ քննած այս երգի իմաստը, բայց բնախոսությունից գիտենք, որ դա արու քրոջուն սիրային հրավերն է գնալի էգը:

№ 2

ՀԱՐԳԱՑՄԱՆ ՅԱՅՐ ԱՍՏՃԱՆԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՅԵՂԵՐԻ ՄՈՏ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՆՇԱՆԱՑԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻ ԽՈՒՄԲ ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Կանգոյի լուճգա լեզվից

1. Կնաոբը նշանակելու համար բարձրացնում են աջ ձեռքը գեպի վեր-ի՛ր: 2. Ժամը առավոտյան վեցը ցույց տալու համար՝ աջ ձեռքը երկարում են գեպի արևելք: 3. Երեկոյան ժամը վեցը՝ ցույց են տալիս արեմուտքը: 4. Առավոտյան ժամը 9 և երեկոյան ժամը 3՝ երկարում են ձեր՝ համապատասխան անկյուններին երկնաթիչ գծի ուղղությամբ (արևելք և արեմուտք): 5. Օրվա զանազան բաժանմունքները ցույց տալու համար ձեռքերը ամեն կամ պահկա մատնացույց են վերոնիշյալ կողմերին: 6. Հետաքրքրությունները ցույց տալու համար ձախ ձեռքը գնում են կրծքի վրա, աջ ձեր տարածում է ձեռքով ցույց տալիս խնդրական անգի ուղղությունը. մինուրյն ժամանակ ձախ ձեռքով ծեծում են իրենց կուրծքը, ցույց տալու համար իշխանները, միաժամանակ մատները չխկացնում են, իբր ձի քշելիս ձեռքերը ձեռնելու համար: 7. Ծիգը հետ լինելը ցույց տալու համար մատները չրխկացնում են և որքան հետ է, այնքան ավելի հաճախ: 8. Երբ անգը մատ է, ասում են ah! ka! ձեռքերով մի անգամ խփում և խոսքն արհամարհական ձևով շուռ են տալիս: 9. Ձափի ծեծու-

[1] Տես «Մատենադարան», 1863, էջ 334, որից արտատպ. «Բյուրակն», 1899, էջ 294:

թյուն, հաստություն ցույց տալու համար արունքը՝ կոճից մինչև ազդրը, ձևոքերի մեջ առնելով՝ ցույց են տալիս այն մասը՝ որի մեծությունը համապատասխան է առարկայի մեծության։ 10. Եթե խոսքը մի խոշոր փայտի մասին է, խոսողը վեր է կենում, ծռվում է գետի առաջ, որքան կարող է, թևերին կլոր ձև է տալիս, մեջտեղը մի մեծ տարածություն թողնելով և մի քանի անգամ կրկնում է՝ ah! ka! ka! (միաժամանակ մեկ այս կողմ, մեկ այն կողմ նայելով), iči ikyepe (սա փոքր է)։ 11. Փղի ժանիքի ծանրությունը ցույց տալու համար իրրև մեծություն գործածվում է նույնպես արունքը։ Ձի ձևոքը դնում են արունքի վրա, ավելի կամ պակաս բարձր, նայելով թե ինչքան մեծ քաշ են ուզում նշանակել։ 30 կիլոյից պակաս քաշերը ցույց են տրվում կոճի և բազկի միջև, 40 կիլոյից բարձր քաշերը ցույց են տրվում ծունկից վերև։ 12. Լաման կամ տեսածը բանի տեղ չդնելու իրրև նշան՝ ուսերը արագ վեր են բարձրացնում, աջը ավելի, քան ձախը։ 13. Արագությունը ցույց տալու համար աջ թևը երկարում են և մատները չփակցնում. միևնույն ժամանակ շրթունքները հետացնում են իրարից և կոկորդային մի ձայն հանում՝ rururu։ 14. Մեծ կտորած ցույց տալու համար աջ թևը շարժում են ամեն կողմ, իբր թե ձևոքը լիներ մի թուր, որ ջարդում է գլուխները. միևնույն ժամանակ արագ-արագ շարժում են շրթունքները, պռռում հոնքերն ու քիթը, գլուխը շարունակ առաջից հետև շարժում, այս բացատրությամբ. pum, pum, pum, հետո kutapa, kutapa, ni kutapa... pum, pum, pum.., kutapa... և այլն, որ կարելի է թարգմանել. «Գոհվեր մեծ էր. շատ մարդ ջարդեցին հրով ու սրով»։ 15. Անցունդը ներկայացնելու համար թևը թեի շուրջը 3 անգամ պտտացնում են և հետո աջ թևը ցած գցում։ 16. Իսկ անկումը նշանակելու համար՝ գրանից անմիջապես հետո աջ ձևոքը խփում է ձախ ձևոքի մեջ։ 17. Կախումը ցույց տալու համար մատները արագությամբ վեր են բարձրացնում, ասելով՝ wohwo (Carvalho. Methodo pratico para fallar a lingua da Lunda. Lisbonne, 1899. էջ 14. քսա Passy, Étude sur changements phonétiques, էջ 47—49)։

Ահա մի ընդարձակ պարբերություն էլ ամերիկյան կոմանչ (Comanche) կոչված բնիկների նշանաց լեզվով։ Սրանք թևև ունեն իրենց լեզուն կամ լեզուները, բայց նրա հետ միասին ունեն նաև կատարյալ նշանաց լեզու։ Երբ ծալապատիկ նստած իրենց հյուղերում խոսակցում են իրար հետ, ամեն մի բառին

բնկերացնում են ձեռքի մի շարժում, որ պարզապես այն բառի կրկնությունն է. այնպես որ, եթե մի կույր և մի խուլ ներկա լինեին նրանց խոսակցության համապատասխան պահի հանդիպին, Օրինակ՝ հարցնելու համար, թե ժամանակ վեց ապր. որ լրած էին եղներով և որոնց վարում էին վեց հոգի, երեքը մեքսիկացի և երեքը ամերիկացի, սրանց հետ նաև մի ձիավոր,— պետք է անել հետևյալ նշաններըր Նախ ցույց տալ մատով անձը, որ նշանակում է ես». Հետո ցույց տալ աչքերը, որ նշանակում է տեսնել». այնուհետև տարածել աջ ձեռքի հինգ մատները և ձախ ձեռքի ցուցամատը, որ նշանակում է վեց». Հետո երկու ձեռքի բթամատն ու ցուցամատի ծայրերը միացնելով իրար հետ՝ ձևացնել մի-մի կլորակ, երկու ձեռքերը առաջ պարզել և անթիթերի պատչաի նմանությամբ դարձնել, որ նշանակում է տասը». աջ ու ձախ ձեռքերով հակառակ աջ ու ձախ կողմից մի մի նշան անել, որ ցույց է տալիս եղջյուրները և հետևաբար նշանակում է եզներ». Հետո բարձրացնել երեք մատ և աջ ձեռքը դնելով առաջին չրքունքի վրա, կամաց կամաց իջեցնել մինչև կրծքի մեջտեղը, որ ցույց է տալիս մերուքը, այսինքն տեղաբնիկներ». Հետո դարձյալ բարձրացնել երեք մատ և աջ ձեռքը հակառակ ձախ կողմից մինչև աջը քաշել, որ ցույց է տալիս ջլժուն գիծը կամ սպիտակ մարդ և նշանակում է տեղերիկացի». վերջապես բարձրացնել մի մատ, որ նշանակում է մեկ» և ձախ ձեռքի ցուցամատը դնել աջ ձեռքի ցուցամատի և միջամատի մեջտեղը, որ նշանակում է ձիավոր». Միևնույն ժամանակ ամբողջ ձեռքերին մի շարժում, որ ձիու բնթացքը ներկայացնի. Այսպիսով ստացվում է տես, տեսնել, վեց ապր, եզներ, երեք մեքսիկացի, երեք ամերիկացի, մի ձիավոր». Եթե խոսակիցը բարձրացնի ցուցամատը և իսկույն իջեցնի ցած, իբրև թե հոգի վրա մի բան ցույց տալու համար, նշանակում է տալ». իսկ եթե բարձրացած մատը աջ ու ձախ տատանի, ինչպես մենք շարժում ենք մեր գլուխը, նշանակում է ոչ» (Lubbock, Les origines de la civilisation, ֆրանս. թարգմ., Paris, 1873, էջ 408—9).

№ 3

ՋԳԱՑԱՆԻՇ ՆՇԱՆՆԵՐ

Այս կարգի նշաններից առաջին հերթին պետք է հիշել լաց ծիծաղ կամ ուրախության հայտնող նշաններ, ցավի, կսկիծի

արտահայտություն, կամ այնպիսի բնական նշաններ, որոնք ներքին կրքերը թարգմանում են դրսի աշխարհին. ինչպես՝ կարմրել, դժգունել, դողալ, կակազել, թոթովել և այլն։ Մանուկը, որ դեռ չգիտե խոսել, ինքնաբուխ կերպով գիտե այդ նշանները և գիտե լավագույնս օգտվել նրանցից։

Այս նշաններից մի քիչ ավելի բարդ կամ զարգացած ձև ունեն հետևյալները.

1. Աչքերը չռել, բերանը բանալ, ձեռքերը պարզել վերև. ցնցվել կամ հանկարծ կանգնել.— նշան է զարմանքի։

2. Բիթը հավաքել՝ ունքերի մասնակի պռատման հետ զուգընթացաբար, նշանակում է զղվանք՝ գարշ հոտից կամ մի անախորժ երևույթից։

3. Հորանջել, ճապկռել.— նշան է ձանձրույթի։

4. Ձեռքերը ծնկան կամ գլխին խփել.— նշան է ցավի, կսկծանքի։

5. Ծոր շնչել և գլուխը թևքել.— նշան է վշտի և հուսահատության։

6. Ձգվանքի ձևով քիթը հավաքել և այտերը վերև ցնցել արագ կերպով.— նշան է արհամարհանքի։

7. Թուքը կում անել.— նշան է զայրույթը դադարեցնելու և համբերության չափը ավարտելու։

8. Զարմացման նշանները, ավելի ուժեղ կերպով արտահայտված.— նշան են վախի, երկյուղի, սարսափի։

9. Գլուխը մեղմիկ օրորել.— նշան է ափսոսանքի։

10. Գլուխը թևքել և վիզը ծռել.— նշան է խեղճության և ապերասանքի։

№ 4

ԳՈՐԾԱՆԻՔ ՆՇԱՆՆԵՐ

1. Թիլ կամ քանակություն.— ցույց է տրվում մի կամ երկու ձեռքի վրա, մատները պարզելով կամ ծալելով։ Եթե թիվը ցույց է տրվում մի ձեռքով, յուրաքանչյուր հնգյակը նշանակվում է օդի մեջ մի բախումով, իսկ եթե երկու ձեռքով է ցույց տրվում, բախումը լինում է յուրաքանչյուր տասնյակին։

2. Չափ.— ցույց է տրվում գանազան ձևերով. կամ ձեռքը գետնին զուգահեռաբար բռնած, առարկայի բարձրության չափով, կամ մի ձեռքով մյուս թևի վրա երկարությունը նշանա-

կելով և կամ ձեռքերը իրարից հեռացնելով. այնպես որ մինչև սաթածուխները հավասար լինի առարկայի մեծությանը. Շատ փոքրիկ առարկաները ցույց են տրվում մատի վրա։

3. Կլոր (շրջանակաձև).— մատով գծում են մի շրջանակ՝ առարկայի մեծության համեմատ։

4. Կլոր (գնդաձև).— երկու ձեռք դեմ դեմի գոգաձև բռնած՝ առարկայի մեծության համեմատ իրարից հեռացնելով. ավելի մեծ կլորությունն ցույց տալու համար երկու քեռերը գոգաձև պարզում են։

5. Հարթ.— ձեռքը հորիզոնական դիրքով շարժելով։

6. Ջառիվեր.— ձեռքը քիչ պարզած՝ ցածրից դեպի վեր ճեպակի շարժելով։

7. Ջառիվայր.— նույնը՝ հակառակ ուղղությամբ։

8. Ալեձև.— ձեռքը ալեձև շարժելով։

9. Ես, իմ.— ցուցամատով կամ ամբողջ ափով կուրծքը բախելով։ Առատությանն դեպքում բախումը կրկնվում է։

10. Դու, քո.— ցուցամատով ցույց տալով խոսակցին։

11. Ամբ, ևկեք.— մի մատ կամ բոլոր մատները վեր ցցած դեպի իրեն շարժելով։ Կարելի է նաև բոլոր մատները դեպի ցած կախած շարժել, բայց ոչ քե՝ միայն մեկը։ Երբ կանչվողները հեռու են կամ բազմաթիվ են, շարժումը լինում է ամբողջ քեռով կամ նույնիսկ երկու քեռով։

12. Գնա, գնացեք.— մատները պարզած ձեռքը դեպի հեռու շարժել։ Նույն գործողությունը, եթե երկրորդ դեմքի հրամայականն չէ. նշանակվում է ձեռքը ուղղահայաց բռնած՝ ափի մեջ ցնցելով։

Հեռացեք.— նույնի սաստկականն է։

13. Ուտել.— մատները միացրած դեպի բերան ցնցելով։

14. Ծխել.— մեջտեղում ու ցուցամատը մոտ մատի պրած տանել բերանին, շունչը ներս քաշել և դուրս փչել (որ և նշանակում է ծխախոտ)։

15. Խմել.— մատները պահած այնպես՝ որ իբր թե բաժակ է բռնել, բերանի մեջ դատարկելու ձևն անել՝ գլուխը հետ թեքելով։

16. Քնել.— գլուխը թեքելով դնել ափի մեջ, աչքերը փակած։

17. Թրել.— բութ մատը և ցուցամատը միացրած ափի մեջ շարժելով։

18. Կարդալ.— ուղիղ դիրքով ափկիցի մեջ նայելով, կամ միաժամանակ գլուխը կամաց-կամաց աջ ու ձախ տանելով։

19. Տուր.— ափը պարզած պահել.— նույնին, եթե միացվի ժպիտով միացած գլխի թևքում, նշանակում է «խնդրեմ տուր»։

20. Թրիքու կանչել (մանկիկին).— Ագդրը ծեծելով։

21. Փախիր, փախեք.— ձեռքը բացած մի քանի անգամ շարժել դեպի հակառակ կողմի ուսը։

22. Կարել.—մի ձեռքը ուղղահայաց բռնած՝ մյուսի վրա գծել։

23. Լալ.— բռունցքներով աչքերը տրորել կամ մատով արցունքի կաղձերը շփել։

№ 5

ԴԱՂԱՓԱՐԱՆԻՇ ՆՇԱՆՆԵՐ

1. Գլուխը կամ ունքերը վերև բարձրացնել նշանակում է ոչ (Garner, The speech of monkeys, էջ 79—80 հեռացման բնազդական ձևից է առաջանում, մինչդեռ հաջորդը մոտեցման)։

2. Գլուխը մի անգամ ցած շարժել՝ նշանակում է այո։

3. Գլուխը մի քանի անգամ ցնցել՝ նշանակում է բոլորովին ճիշտ, այո՛, այո՛, այո՛։

4. Գլուխը խոնարհեցնել (գլուխ տալ)՝ նշանակում է բարև։

5. Գլուխը մի քանի անգամ աջ ու ձախ տարուբերել, երբեմն նաև ձեռքի աջ ու ձախ տարուբերումներ միացնելով՝ նշանակում է՝ ամենևի՛ն ոչ։

6. Գլուխը դեպի կուրծքը ցնցել, երբեմն աչքերն էլ փակելով նշանակում է արի։

7. Գլուխը դեպի ձախ թևքել, միաժամանակ ձախ ուսը բարձրացնելով նշանակում է լավ է, վատ չէ։

8. Գլուխը թևք կերպով շարժել դեպի ցած՝ նշանակում է համաձայն եմ։

9. Նույնը ավելի հանդիսավոր ձևով, երբեմն էլ ժպտախառն, նշանակում է շնորհակալ եմ։

10. Գլուխը երկու կողմ տատանել նշանակում է ինչ լավ է։

11. Գլուխը բարձրացնելով՝ վղի միսը բռնել, նշանակում է՝ թախանձագին խնդրում եմ, ինձ մորթեք, թե չկատարես։

12. Ունքերը բարձրացրած, աչքերը չռած գլուխը ցնցել, նշանակում է մթթե, իսկապե՞ս։

13. Աչքերը կիսացած, ունքերը պռոտած՝ գլուխը ալ ու ձախ ցնցել, նշանակում է գազանի կերպով նայիլ, քե ձվ կամ ինչ մարդ է։

14. Աչքերն ու գլուխը մի կողմ թեքել նշան է գրկիս մի պատանեության սալու։

15. Մեկ աչքը գանդագործն կիսացել և խուփն բանալ (աչքով անել, աչք կոտրել) նշանակում է երեվիլը մեքնավորության։

16. Հանքը մի քիչ պռոտած գլուխը ցած չարժել նշանակում է քեզ գլաստ պահիր։

17. Մի քիչ քիթը հավաքելով գլուխը վեր ցնցել նշանակում է սուտ է, մի հավատաս։

18. Նույնին բնկերացնելով ձեռքի չարժում նշանակում է գաստարկ անմիտ բան է։

19. Շրթունքները ուռցնել, մեկնուչն ժամանակ հանքերը և ուսերը քեքեաւի վեր բարձրացնել նշանակում է չգիտեմ։

20. Լեզու հանել նշանակում է ծագր։

21. Աստեղերով սարքին շրթունքը կծել, աչքերը մի քիչ չռելով նշանակում է ամոթ է։

22. Նույնը՝ ալտի մերը ձեռքով քաշելով՝ նշանակում է ամոթ է։

23. Նույնը ափով բերանը ծածկելով նշանակում է ամոթ է։

24. Մերուքը կամ բեխերը շոյել նշանակում է երջվում եմ։

25. Մերուքը կամ ծնոտը բռնած, ապատագական դրությամբ գլուխը քեզած պահել նշանակում է ազաչում եմ։

26. Վիզը երկարելով գլուխը քոթվել դեպի ալ ու ձախ նշանակում է ձեր, ինչ կամ ինչպես։

27. Նույն դիրքի մեջ, ապատագական դիրքով գլուխը պահել, ականջը քեքելով խոսակցի ուղղությամբ նշանակում է ինչ ասացիր։

28. Ծոծրակը քորել, երբեմն ունքերը բարձրացնելով, շրթունքները հետ քաշելով նշանակում է գժվար խնդիր է։

29. Ուսերը վերև ցնցել նշանակում է անտեղություն, ինձ ինչ։

30. Ուսը կամ քիկունքը ծեծել նշանակում է կեցցես, ապրես։

31. Քեզ պարզել և ժառանգը վեր գարձած ձեռքը հանկարծ վեր բարձրացրած պահել, ափը խոսակցին ցույց տալով՝ նշանակում է կանգնիր։

32. Թևը անկյունաձև բռնած, բռունցքը մի անգամ թափ տալ նշանակում է ուժգին մերձավորություն։

33. Ձեռքի մատներով բերանը փակել կամ մի քանի անգամ բերանը ծածկել նշանակում է լռիր, մի ասիլ։

34. Ձեռքը բաց արած, ափի մեջ փչել նշանակում է սուտ է, դառարիկ է։

35. Ձեռքը դնել աչքին կամ ճակատին նշանակում է սիրով կկատարեմ (աչքիս վրա, գլխիս վրա)։

36. Ձեռքը բարձրացնելով մի անգամ ուժգին հետ ցնցել նշանակում է թող, ձեռ քաշիր։

37. Ձեռքերը խաչաձևելով կրծքի վրա, գլուխը ծռել նշանակում է ծառագ եմ։

38. Ձեռքը վերև բռնած շարժել նշանակում է հեռու։

39. Բուռը ծալելով՝ բթամատը դուրս ցցել և ուսից հետև շարժել նշանակում է — երեկ, անցյալ օր (ամիս կամ տարի)։

— Աջ ձեռքը ամփոփել, մատները բուռն մեջ ծալել և միայն բթամատը դուրս ցցել, նշանակում է լավ եմ, շատ լավ եմ, գործս հաջող է։

— Նույն ձևի տակ, միայն ցուցամատը կորացրած ցույց տալ, նշանակում է բնդհակառակը վատ եմ, թուլ եմ, գործս վատ է, անհաջող է։

40. Բուռը պինդ սեղմել — ժլատ մարդ է։

41. Բթամատի և ցուցամատի պաղունցները իրար քսել նշանակում է դրամ։

42. Բթամատների եղունդները իրար քսել նշանակում է գրպանի։

43. Բթամատի եղունգը վերին կարիչ ատամին խփելով հեռացնել նշանակում է բնավ չկա, վերջացել է։

44. Բթամատը քթի ծայրին կպցնելով՝ մատները իրարից հեռու վերև պարզել նշանակում է ծաղր։

45. Բթամատը և միջամատը օդակաձև միացրած վզի աջակողմին՝ կպցնելով պլնդրիկ տալ՝ նշանակում է — հարբած կամ բմպելիքի պահանջ։

46. Ցուցամատ և միջամատ իրար քսել նշանակում է — ալյուր ու կին կամ քույր ու եղբայր։

47. Աջ ու ձախ ձեռքի ցուցամատները մոտ բերել և պարզած պահել նշանակում է — նման կամ հավասար։

48. Ցուցամատն ու միջամատը իրարից հեռու պարզել և հետո միացնել նշանակում է — մտերմություն։

49. Աչ ու ձախ ցուցամատները շրթյամբն միացնել նշանակում է խոովում, թշնամություն։

50. Աչ ու ձախ ցուցամատները պարզած իրար հետ շփել նշանակում է կռիվ, գրգռել։

51. Ցուցամատը ուղղահայաց շրթունքին պահել նշանակում է լռիր։

52. Ցուցամատը բերանը կոխել և դուրս քաշելով վերև ցույց տալ նշանակում է ոչինչ չունեմ։

53. Ցուցամատով կամ միջամատով գանգը ծնծել նշանակում է գդում գլուխ։

54. Ցուցամատը բարձրացրած քաշ տալ մեկի վրա. երբեմն նաև ունքերը պատռելով նշանակում է — ապառնալ։

55. Ցուցամատը քունքին կամ բերանը բանալով ատամին դնել և հետո մատը քաշ տալ նշանակում է — այժմ միայն մտաբերեցի կամ հասկացա (գլխի ընկա)։

56. Ցուցամատը կծել — նշան է զարմանքի ատելիքներն էլ ասվում է sabbabe-geza ցուցամատը կծել ի նշան զարմացման։

57. Երկու ձեռքի չորս մատները (բացի բթամատից) ուղղահայաց դիրքով, իրար վրա դարսած, ձեռքին կլոր ձև տալով, եղունգները իրար մոտեցնել և մի քանի անգամ իրար քսել նշանակում է ատամիկ գրգռել։

58. Հինգ մատները բաց, ձեռքերը վերև բարձրացրած ցընցել, միաժամանակ գլուխը ցնցելով նշանակում է քանի։

59. Հինգ մատները բացած գնդի խոտակիցը շարժել նշանակում է անհնձք հրավիրել (մուր տալ, մրճիկ տալ)։

60. Մատները միացրած և գնդի վեր պարզած նշանակում է կոկիկ, սիրուն, լավ։

Ինչպես ասված է, այս շարժուձևերը, իբրև պայմանական նշաններ, տարբերվում են տեղից տեղ։ Վերևում նշված ձևերը գործածական են առնատարակ մեր և մեր շրջակա ժողովուրդների մեջ, բայց կարելի է ասել, որ կրում են նաև միջազգային բնույթ, թեև մի քանիսը ավելի մատնավոր են, օրինակ՝ № 24, երբեմն ձևը գործածական է վանում և Ատրպատականում միայն։ № 32 գործածական է միայն Քավիրզում։ № 45՝ որ հոգի, դինի կամ հարբեցողության իմաստն ունի, ռուսական ձև է և գործածվում է նաև Կովկասում. ուրիշ տեղ անծանոթ է։ Գլխի այն

շարժումը, որ Գերմանիայում նշանակում է ոչ, զարմանալի, Բուլղարիայում նշանակում է այո,— ասում է Ռոգեն (Rogge, Der Notsand, էջ 195) և բացատրում է նրանով, որ բուլղարների մոտ շարժումը դեպի խոսողն է կատարվում, իսկ գերմանացիների մեջ՝ դեպի հետ։

Արաբների մոտ մի քանի հետաքրքրական և բարդ դադարանշաններ էլ եմ գտնում. օրինակ՝

1. Աջ ձեռքի բթամատի և ցուցամատի եղունգները իրար կցել և ձախ ձեռքի մատներով պոնտ անել նրանց ձևացրած միջին օղակում, նշան է ժամադրություն տալու։

2. Ձախ ձեռքի բթամատի և ցուցամատի եղունգների ծայրերը իրար հետ միացնելով օղակ շինել և աջ ձեռքի բթամատի եղունգը մյուսի դրսի կողմի հետ պոնտ դարնել — նշան է սխրանարների ժամադրության և համաձայնության։

Սրանք արաբերեն կոչվում են زنجر zanǰara և նկարագրված են Կամուս, Ա. էջ 880։

Կարելի էր դեռ շատ երկարել նշանացի խոսակցության մեջ գործածվող նշանների շարքը, որովհետև կարելի է յուրաքանչյուր առարկա, տեղ, դիրք կամ ուղղություն մատնանիշ անել, ինչպես և որևէ գործողություն կամ գործողությունների մի շարք ցուցադրել։ Վերջինիս վրա է հիմնված մնջկատակը (пантомимия), որ մի ամբողջ ներկայացում է՝ առանց խոսքի, միմիայն ձևերով և շարժուձևերով։ Այսպիսով մնջկատակը լինում է միջազգային մի լեզու, որ եթե լավ կատարվի, կարող է հասկանալի դառնալ ամեն ազգի անհատներին։

№ 6

ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԱՌԵՐԻ ԱՐԺԵՔՆԵՐՆ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ՔԵՐՈՎԲԵ ԹԱԳՎՈՐՅԱՆԻ

ա — անել, գործողություն.
բ — բովանդակություն. 2. արակ.
գ — զսպում, արգելք, հակազդում, կապ, պահել, ծածկել.
դ — դիրք, հակառակ, դեմ առ դեմ, դեմ.
ե — եղելություն, գոյություն.
զ — հզոնականություն, ծայրահեղ. 2. քիչ, պակաս.
է — գոյություն.
ը — ե կամ է.
թ — ավելի, վեր, բարձր. 2. վայր, ցածր.

ց — ձգողություն, համակրություն. 2. մերժում, հակակրանք.
ք — իրականություն. 2. գոյականը գործնում է ած. 2. նախադրություն.
ւ — նրանց, մեկնելու. տարածություն, հավասարություն.
ֆ — անգր բան. 2. այլ բան. 3. գանազան. ձևափոխություն.
ձ — ի վայր. նեղքեն. երբեմն էլ = բ կամ վ.
կ — գոյություն, կյանք. ամբություն, կրկնակի. առավել.
ճ — նման. նույն.
ձ = ձ.
ղ = լ և բ.
ճ — ի վայր. մի քանի. նեղքեի կողմը. երբեմն էլ գ.
մ — 1. անձ, վերաբերություն. 2. ամենայն.
յ — 1. հավելում. 2. այնուհետ.
ն — 1. այնուհետ. մեջը. 2. նշան է անցյալի.
շ — ուղղություն, շարունակություն, չիտակություն. արագություն, բնակելի. մշակելի վիճակ, կանոնավորություն.
ո — բացառականն է ա և է առաների.
չ — արգելք, բացառում.
պ — 1. շատ. մեծ. 2. քիչ. փոքր. = վ և բ.
ջ — մեջ. նույնն է ի-ի հետ.
ռ — ամբություն, շատություն, կրկնություն, երկայնություն, ավելի, բազմապատկություն.
ս — 2-րդ դեմքի նշան. = մ առաին.
վ — 1. բարձր, ավելի. 2. ցած. 3. առաջ, 4. հետո.
տ — 1. մեջ, ներս. 2. դուրս (այն է՝ բացառական).
ր — ռ-ի մեկմացած իմաստն ունի.
ց — 1. ամեն կողմ. 2. լույս. 3. մինչև.
ւ — 1. գործիականի նշան. 2. նույնն է վ-ի հետ.
փ = բ և պ
ք = 1. քանակություն, ամբություն. 2. գերադրական կամ գոյություն. 3. շատություն. 4. = կ-ի.
օ — 1. գրական է. մի առաի առաջ գրվելով՝ ցոյնում է նրա նշանակությունը. 2. մեկ. մի.

Սրանից դուրս կան նաև ար, ապ, ապ և այլն բազադրությունները. մինչև վերջ. օրինակ՝ այ նշանակում է այր. ան-

սություն. 2. տաքություն, կրակ և այլն։ Այս ձայներով վերլուծվում են հայերեն բառերը. օրինակ՝ այգ կազմված է ա ձայնից, որ է գործողութ յունց. այ նշանակում է գաչք», գ նշանակում է «ծածկել». սրանով այդ եղավ գործողութ յուն աչքերը փակելուց. և իրոք որ այգուն դեռ մարդկանց աչքերը փակված էին դրանից էլ առաջանում է քուն (որ պետք է գրել, ասում է, գուն) թրք. ույգու «քուն» և այլն։

ՅԱՆԿԵՐ

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ[1]

Աբխազերեն—163, 215, 216, 226—227, 351, 538, 539, 612

Ագուերեն—482

Ագնի—*Աֆրիկյան ազգի ցեղի լեզուն, որ պատկանում է սուդանական կամ կվա խմբին*—285—286, 614

Ադիղե—539

Ադրբեջաներեն—9, 122, 377, 379, 424, 426, 543

Ադերբէյջանի—*Նույնն է ադրբեջաներեն*

Ալառոդյաց—609—610

Ալբաներեն—373—374, 381, 404, 447, 482, 491, 497—498, 544, 580, 588—589, 591, 597, 600, 609

Ալեուտերեն—*Ալեուտյան կղզիներում (ԱՄՆ) և Կամանդորյան կղզիներում (ՍՍՌՄ) ապրող բնիկների լեզուն. կոչվում է նաև ունանդաներեն, պատկանում է հնասիբիական (հիպերբորյան) բնտանիքին*—243—244

Ալթայական լեզուներ—373, 456, 536, 540—544, 558, 599

Ալթայերեն—543

Ալյասկայի բնիկների լեզու—*Նույնն է կոլոշեն*

Ալվալ—*Նույնն է աֆոխոլ*

Ախախա կամ ալվալ—539

Ակուսա—*Նույնն է հյաուքիլլե*

Ահոմ—*Քին-Տիբեթական բնտանիքի լեզու, որ պատկանում է թայ հյուղին*—613

Այվաներեն—*Կովկասյան ազվանների լեզուն, որ, ինչպես ենթադրում են, պատկանել է կովկասյան բնտանիքին*—405

Աղուլ—540

Ամհառա կամ ամհարիկ—119, 527

Ամհարիկ—*Նույնն է Ամհառա*

Ամերիկյան լեզուներ—13, 22, 286, 377, 426—427, 455, 456, 546—547, 570, 581, 599, 614

Այմուկ կամ հեզարա—544

Այնու—283, 456, 545

Անգլերեն—38, 55, 56, 66, 67, 68, 129, 137, 138, 139, 142, 146, 147, 151, 152, 155, 154, 186, 189—190, 191, 192, 223, 224, 237, 247—248, 255, 256, 257, 278, 279, 291, 300, 312, 313, 334, 345, 346, 354, 355, 361, 362—363, 365—366, 372, 374, 375, 378, 379, 381, 384, 385, 386, 387, 397, 404, 405, 407, 411, 413, 415—416, 417, 418—419, 447—448, 449—450, 458, 467, 501, 511—512, 515, 546, 568, 570, 575, 576, 580, 588—589, 590, 591, 597, 598, 604, 605

Անգլիկ—*Հնչյունագրության վերածված անգլերենը (ըստ Զախրիսոնի), որ ունի նաև արվեստականության տարբեր*—152—153

Անգլո-սամսոներեն—511, 588—589, 597

Անդալուզերեն—526

Անդալուզիայի բարբառ իսպաներենի—503

Անդամանյան լեզուներ—456, 533—534

Անդի—539

Անեամերեն—204, 206—209, 308, 365, 415, 427, 532, 568

Անտե—*Ամերիկյան հնդկացիական լեզու, որ պատկանում է մայոյուրե խմբին*—613

---

[1] *Ծանոթություններ արվում են այն լեզուների մասին, որոնք «Լեզուների ցեղակցությունը» գլխում չեն հիշվում*

Աֆրիկյան լեզուներ — *Աֆրիկան մայր ցամաքում խոսվող լեզուները*—9, 373
Ասորեստանի և Բաբելոնի առումներն — *Նույնն է ասորիների*
Ասորիներ—66, 68, 140, 289, 370—371, 374, 380, 388, 398, 405, 410, 414, 426, 448, 487, 523—524, 527, 579, 590, 594, 607—608
Ասեմի—473
Աստված—*Ամենքիկյան հնդեվրոպական լեզու, որ պահպանում է մայրության իմաստը*—612
Աստուրներն—*Ամերիկան բնաբանների հյուսիսային հնդկի մեծամեծ լեզու, որ խոսվել է Ատլանտյան (կոչվում է նաև հյուսիս-արևմտյան) և որ ավանդված է հարուստ քրիստոնեական գրականությամբ*—141, 410, 426, 448, 519, 523, 607—608
Ավարներն—539, 560
Ավարո-ացոյի լեզուներ—539
Ավեստայի լեզու—124, 472
Ավստրալիական լեզուներ—455, 456, 533, 547—548, 570, 581, 617
Ավստրական լեզուներ—456, 531—533, 545, 548
Ավստրո-ասիական լեզուներ—531—532, 545
Ավստրոնեզյան կամ մալայո-պոլինեզյան լեզուներ—531, 532—533, 545
Ասիլյան բարբառ հին հունարենի—141, 494, 495
Ասորիներ—17, 50—51, 67, 68, 116—117, 123, 137—138, 163, 190, 191, 198, 218, 229—239, 245, 246, 248, 250, 258—259, 292—300, 301, 302—303, 304, 308, 371, 373, 374, 375—976, 377, 378—380, 382, 383, 388—389, 390—391, 393, 394—395, 399, 405, 410, 413, 422, 425, 432, 448, 473, 488, 519, 521, 522, 523, 524, 525—526, 527, 528, 530, 542, 564, 568, 570, 579, 594, 597, 607—608, 612, 631
Ասորոնի բարբառ խոպանիերենի—503
Ասոմական լեզուներ—522—525
Ասոմիերեն—370—371, 405, 422, 426, 476, 519, 520, 521—525, 527
Ասորական—*Ասորական ամենատարածված լեզվական խմբերից մեկը, որ կոչվում է Ասլանյան ավելորդ բնակվող ցեղերից մեկի (արտաքինից)* անունով—309, 370, 612
Ասղավայի լեզու—560
Արեևյան գերմանական լեզուներ—514
Արեևյան իռաներեն ան՝ս ասկերեն.
Արեևյան հյուս ՏՀնդեվրոպական լեզուների—602
Արեևյան սլավ(ոն)ական լեզուներ—506—507
Արեմյան գերմանական լեզուներ—510—512
Արեմյան հյուս ՏՀնդեվրոպական լեզուների—602
Արեմյան սլավ(ոն)ական լեզուներ—507
Արիական լեզուներ—462, 464—465, 467, 469—481, 482, 501, 535—537, 590—591, 600—601, 602
Արկադյան բարբառ հին հունարենի—494
Արճի—23, 224—225, 539
Արմեներեն—*Բասպիների հարևան հնաոարվեսական հայերեն*—433, 438
Արտակուցյան պարթևական պահլավերեն—475
Արտերեն—481—482
Արտին—*Նույնն է մոլիկոնա-ասոմական բարբառ ասոմիներենի*.
Արշինիերեն—*Նույնն է արքի*.
Աֆղաներեն կամ խոզկարեն—181, 402, 448, 519, 521, 522, 603
Աֆրաց բարբառ հին հունարենի—494
Աֆար—*քամյան բնաբանների լեզու, որ պահպանում է բուշյան հյուրերն*—613
Աֆղաններեն—195, 386—387, 447, 478—479, 526, 580, 588—589, 597, 598
Աֆրիկաներեն—*Աֆրիկայում հասասա-*

ված հոլանդական գաղութի լեզուն, որ գարգացել է հոլանդերենի հիման վրա։— 138
Աֆրիկյան լեզուներ— 13, 22, 151, 195, 216, 220—221, 286, 365, 377, 455, 529, 599, 614

Բարելացերեն— 448, 519
Բագուլալ— 539
Բալայերեն— 555
Բալկարերեն— 543
Բալթիական (Բալթյան) լեզուներ—482—483, 504—505
Բալթիկ-սլավ(ոն)ական կամ լեռթո-սլավ(ոն)ական լեզուներ— 464—465, 482, 504—509, 536, 588—591, 593
Բանտու լեզուներ— 215, 216, 221, 223, 304, 529—530, 612
Բազալի բարբառ նոր պարսկերենի—477
Բաելիերեն— 543
Բասա— *Աֆրիկյան լեզու (Կամերուն)։*—221
Բասկերեն— 404, 405, 456, 460, 467, 548—550, 561, 609—612
Բասուտո— *Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու լեզվախմբին։*— 56
Բարեա— *Բամյան բնաոնիքի լեզու։*— 613
Բարձր գերմաներեն— 507, 510—511
Բաց— 539
Բելոռուսերեն— 505, 507
Բելուջերեն— 447, 479, 588—589
Բեյզիկ անգլերեն— *Անգլերենի արհեստականորեն պարզեցրած վիճակը, որ օգտագործում են անգլիական ու ամերիկյան գաղութներում։*— 153—154
Բենգա— *Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու լեզվախմբին։*— 221
Բենգալի— 473, 568
Բեռվերիական բարբառ հին ճուճարենի— 495
Բեռոյա կամ տուկանո— *Ամերիկյան հնդկացիական լեզու։*—612
Բերբերական լեզուներ— 403
Բերբեր(երեն)— 123
Բիզիմջե— *Բեռաբարիայի հայերի խոսած քյուրքերենը։*— 457
Բինարի— 568
Բիսարի— *Աֆրիկյան լեզու, որի մասին հատկացնում են քամյան բնաոնիքի քուշյան խմբին։*— 399
Բիչ-լա մար— *Ծագող օվկիանոսում անգլերենի և պոլինեզյան լեզուների հիմքի վրա կազմված կիսաարվեստական լեզու։*— 416
Բիրմաներեն— 534, 535, 613
Բյուզանդական ճուճարեն— 495—496
Բյուրաներեն— 426
Բոնարի— *Ամերիկյան լեզու, որ, խոսողների ոչնչացման հետևանքով, մահացել է 19-րդ դարում։*— 403
Բոշայերեն— *տե՛ս գնչուական լեզուներ*
Բոցիխ(երեն)— 539
Բոտոկուդոս— *Բրազիլիայի հնդկացիական բոտոկուդոս ցեղի լեզուն, որ պատկանում է ամերիկյան լեզուների ժեզ խմբին։*— 80
Բուն— *Ամերիկյան հնդկացիական լեզու, որ պատկանում է մայոյուրե խմբին։*— 612
Բուռնոյի բնակիչների լեզու— 55
Բուռնուի — 533
Բրետոներեն (բրետոներեն) — 51, 191, 372, 405, 418, 516
Բրիտանական խումբ կելտական լեզուների— 516
Բրոկեն ինգլիշ— *Մեքրա-Լեոնայի բրնձիկների խոսած անգլերենը։*— 416
Բուլուխ(երեն)— 540
Բուլղարերեն կամ բուլղարերեն— 400, 446, 451, 491, 507, 508, 527, 544, 565
Բուտմներեն— 46, 531
Բուրգինիոն— *Ֆրանսերենի բուրգունդական բարբառը։*— 141, 502
Բուրիաթերեն— 544
Բուրուշասկի—*Նույնն է կանջութերենը*

Գագաուզերեն 543

Դանչական խառը կնդրական լեզուների — 516–518
Դալա— 528
Դալլերեց— 58, 418, 585–586
Դանգ—Աֆրիկյան լեզու— 221, 614
Դանգի— Ֆրանկյան բնաոնիքի լեզու— 614
Դասկոց— 503, 565
Դեգ— 527
Դերմանական լեզուներ— 24, 147, 191—192, 247, 376–377, 407, 417, 448, 464—465, 469, 479, 482, 509–514, 560—591, 597
Դերմաներեց— 9, 85, 56, 60–61, 66, 68, 112, 113, 119, 121, 125, 130, 142, 159, 177, 192, 194, 196, 210—211, 223, 242, 255, 256, 257, 278, 279, 290—291, 301—302, 306, 309, 310, 312, 313, 335, 355, 364, 365, 366, 372, 373, 374, 379, 382, 384, 385, 386, 387, 391—392, 400, 406—407, 415, 420—421, 432, 433, 447—448, 457, 458, 462, 501, 510—511, 512, 538, 568, 575—576, 579, 580, 586—589, 597, 599, 606
Դիլակ(երեց)— 249, 546
Դիլաֆ— 477
Դնդուական լեզուներ— 412, 413, 447
Դնդուերեց— 473—474, 562, 588–589
Դոգոբեր— 539
Դոբերեց (գոբացերեց)— 361, 382, 447, 467, 514, 586—589, 597; 598
Դուբարաթի— 473, 477, 613
Դուբիա բարբառ վոգերեցի— 538
Դումա— Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտուական խմբի ժողովրդական նիվթաբանների— 370

Դալմատական լեզու—504
Դանիերեց—56, 312, 384, 422, 447, 513—514, 565
Դարգվա լեզուներ—227, 539
Դարդու—473
Դիզո(յերեց)—539
Դմլի բարբառ Տրեց—479
Դոբիական բարբառ Տին Տուհարեցի—494, 495
Դոմֆիլյան լեզուներ — 57, 62, 456, 539, 561, 642

Ընդհանրական լեզուներ)—26, 59, 67, 125, 181, 183, 190, 370—371, 414, 415, 448, 457, 472, 530—521, 527, 527, 594, 597, 607—608, 616
Եգիպտական հին համյան բնաոնիի — 527–528, 529, 530, 558
Եգիպտերեց—402, 448, 453, 527—528, 603, 607—608, 609—610, 612, 614
Եգիպտոսի արամերեց—522
Երովպացերեց կամ Տարիներեց — 183, 526–527, 528, 594, 607–608
Եվրոասիական բնաոնիի—609
Եվրոպական լեզուներ—Հնդեվրոպական Եվրոպայի լեզուները, ժամանակակից Եվրոպայի Ընդհանրական նոր լեզուները, Ներածություն նաև տե՛ս բնաոնը— 9, 22, 113, 216, 365, 373, 454, 462, 483, 493, 533, 591

Ջաղա բարբառ Տղերեցի—479, 588—589
Ջերսկի բարբառ նոր պատկերեցի—477
Ջնեցոզա—528
Ջնեցոտա—528
Ջնեցերեց (Ամհառայի լեզու)—3, 395, 447, 472, 477—478, 479, 580, 582, 587—589, 597—598, 600
Ջիրեցերեց—448, 535—536, 594, 607
Ջոլ—46
Ջուլու, գալլատերեց—Աֆրիկյան գալլատական ցեղերի լեզուն (Տարածում Աֆրիկյան Միությունում), որ պատկանում է բանտու լեզուների Տարավարձյան խմբին—221

Էալիական բարբառ Տին Տուհարեցի—494, 495
Էլամերեց—402, 426, 557, 558—559, 560, 600
Էսկիմոսերեց—125, 240—243, 244, 309, 537
Էսպերանտո—Արվեստական լեզու, որ

հոբինել է գոհաոբ Ջամենհոֆը—146, 147—150
Խասոներեն—391—392, 535, 607
Խվիներեն կամ լամուտներեն—239
Խոտուկներեն—66, 141, 456, 551, 600

Ընդհանուր այվոներեն—446
Ընտրական հայերեն—*Մինոա Ջերպի հոբինած կիսաարվեստական հայերենը*:—433, 438

Թաբասարան—227, 539
Թաթարական լեզուներ—542, 575, 577
Թաթարերեն—143, 397, 409, 543
Թաթերեն—477
Թալիշի—477
Թալմուդերեն, նոր-եբրայեցերեն կամ միջնադերեն—521
Թամիլ(երեն) | Թամուլերեն | 286, 533, 568
Թայ նյուղ չին-տիբեթական ընտանիքի—534, 535
Թաջիկերեն—478
Թեսալական բարբառ հին հունարենի—495
Թյուրքական լեզուներ—190, 195
Թոխարական նյուղ ինդնվրոպական ընտանիքի—464—465, 481—482
Թյուրքական լեզուներ—537, 540, 542, 543—544
Թյուրքերեն—9, 25, 66, 67, 68, 113, 142, 192, 211—215, 246, 252, 255, 256, 257, 278, 279, 289, 307, 310, 312, 313, 331—332, 334—335, 341, 345, 348—349, 351, 358, 371, 373—374, 375, 376, 377, 378, 379, 380, 381, 382, 383, 384—385, 386, 387—388, 391, 392, 393—394, 395, 396—397, 398, 499, 400, 401, 409, 413, 414, 419, 422—423, 424, 432, 457, 477, 481, 483, 492, 525—526, 538, 543—544, 564, 570, 577, 579, 630
Թյուրք-թարարական լեզուներ—542, 568
Թուրխինեներեն—543
Թոխարերեն—15, 141, 447, 467, 481—482, 581, 588—589, 602

Թոնգա-տոնգա կամ թոնգա-տանգատաճ—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու լեզուների հարավ-արևելյան խմբին*:—221, 223
Թրակերեն—14, 491—492, 504
Թուբ(երեն)—539
Թուրերեն բարբառ վրացերենի—538
Թուրանական լեզուներ—540

ԻԱԼԱ—*Արվեստական լեզու, որ հոբինել է Մաթիենեն*—147
Իբերական լեզու—467
Իլիե—415, 457, 511
Իդո—*Էսպերանտոյի հիմքի վրա հոբինված նոր արվեստական լեզու, որի հեղինակներն են Բոֆրոնը և Կուտյուրան*:—146
Իլ դը Ֆրանսի բարբառ Ֆրանսերենի—502
Իլլիրերեն—496—498
Իմերել բարբառ վրացերենի—538
Ինգիլո բարբառ վրացերենի—538, 578
Ինգուսերեն—227, 539
Ինտերլինգվա—*Արվեստական լեզու*:—147
Իռկատմի բարբառ նոր պարսկերենի—474
Իտալերեն—68, 191, 372, 407, 447, 467, 513, 515, 518, 588—589, 597
Իսավրացիների լեզու—553
Իտալերեն—447, 580
Իսպաներեն—137, 138, 142, 151, 191, 361, 378, 389, 405, 413, 415, 417, 445—446, 457, 467, 503, 525—526, 528, 549, 565—566, 568, 588—589, 591, 604
Իտալական նյուղ ինդնվրոպական լեզուների—464—465, 467, 498—504, 590—591, 602
Իտալա-կելտական նյուղ ինդնվրոպական լեզուների—501, 515
Իտալերեն—9, 45, 61, 68, 113, 119, 138, 142, 159, 191, 192, 195, 253, 255, 257, 278, 279, 280, 282, 310, 312, 313, 361, 364, 365, 373, 377, 386, 411, 445—446, 450—451, 458, 497, 501—502, 514, 528, 568, 588—589, 591, 604

Բառակազմական (բառակազմական) խումբ ճգնաժամային բնաճանկի ճգնաժամային (տերմինական) հյուսքի—15, 121, 396, 436, 470, 475—481, 557, 560, 577, 587, 594—595, 597—598

Լայնքերեկ կամ սեռատամանի—281, 303—304
Լայնքերեկ—60, 538, 578
Լայն—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*—221
Լակերեկ կամ կապիկատուն—539
Լանդշաֆտային բարդատ ճիճ հոսքատերեկի—496
Լամուտերեկ տես Էվենկերեկ:
Լանգ-դյա—*Աբխազական լեզու, որ հնչում է գրեթե բոլորովին*—146
Լանգքրդակ բարդատ պատվանդանի—302, 503
Լանգ գոյլ—502
Լատաներեկ—209—210, 224, 535
Լատգոներեկ կամ լատգոլերեկ—117, 536
Լայի կամ լատի—561
Լատինական խումբ ճգնաժամային բնատանկի խոլտական հյուսքի—407, 448, 482, 498—504, 514
Լատիներեկ—23, 55, 58, 60—61, 66, 68, 113, 119, 120, 121, 131, 137—138, 139, 141, 146, 147, 151, 188, 191, 192, 194, 197—198, 199, 211, 228, 247, 278, 288, 305, 331, 332, 336, 346, 350, 360, 361—362, 374, 275, 376, 382, 384, 409, 401, 404—405, 411, 414, 416, 417, 418, 432, 445—446, 447—448, 450—451, 452, 467, 469, 470, 476—477, 483, 488, 497, 498—501, 505, 508—509, 527, 551, 558, 565, 576, 579, 580, 584—590, 591—592, 597, 598, 599, 600—601, 603, 604, 605, 606
Լեզվի(երեկ) տես կյուրիներեկ:
Լեքսիկական լեզուներ տես բալթյան լեզուներ
Լեքսերեկ—404, 447, 463, 505, 589, 597
Լեներեկ—67, 468, 507, 568, 588—589, 598
Լոգոպեդական բարդատ ճիճ հոսքատերեկի—495
Լոճայի բարդատ խոպանների—503
Լիրանայի տարածերեկ—523
Լիրիա-բերբերական լեզուներ—527—528
Լեզուներեկ—456, 550
Լիբվաներեկ տես լիբվաներեկ:
Լիկոաներեկ—523
Լիմուզին բարդատ պատվանդանի—503
Լինգվա ֆերոյ Բոազիլիկա—*Բրազիլիայի բնիկների խոսած անդլիերեն*— 416
Լիվոներեկ— 404
Լիվերեկ— 536
Լեզվական խումբ— 576
Լեզվաներեկ— 121, 191, 336, 447—448, 461, 462, 463, 505, 509, 587—589, 591, 597, 598
Լյուդ(ի)երեկ— 14, 402, 426, 553—554
Լյուդիներեկ— 553, 554
Լյուդիներեկ — 14, 498
Լյուդիկյան հյուսքի ճգնաժամային լեզուներեկ— 464—465, 496—498
Լոքարիճգիայի բարդատ Ֆրանսներեկի— 502
Լոմբարդացիների լեզու— 514
Լուհյորա (Լուհյորո)— *Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*— 221
Լուդերեկ— 191

Խալդերեկ— 14, 66, 141, 402, 406, 417, 456, 487, 555—557, 560, 600
Խակաս(երեկ)— *Հնասիբիական բնաճանքին պատկանող լեզու*— 68
Խնամատական բարդատ վոտգերեկի— 538
Խիճնալուզ— 540
Խոմարի բարդատ ճոր պատակերեկի—477
Խորմաթերեկ— 446
Խմարչի— 539
Խուճգալ— 539
Խուտրի(երեկ) կամ հուտրի—535—537, 560

Ծախուր— 540

Պաբարդինեներեն— 539
Պաբիլներեն— 528.
Պադուրու—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*:—221
Պազիկումուխ *տե՛ս* լակներեն:
Պալմիկներեն—544
Պամբա—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*:—221
Պամբոջներեն *տե՛ս* Ֆմեր:
Պամիռական հյուս ճիղնվռոպական բնատաճիրի— 490—491
Պամիռներեն— 465, 490—491, 586
Պամչադալ— 388, 546
Պաճառա— 533
Պաճառներեն— 568
Պաճարյան կղզիների լեզու— 528
Պաճղուբներեն— 456, 561
Պաբուրներեն— 507
Պապադովկներեն— 14, 402, 426
Պապուճի— 539
Պապյան բարբառներ նոր պարսկերենի— 477
Պապյան հյուս կովկասյան լեզուների— 538, 539—540
Պապիլիայի բարբառ իսպաճերենի—503
Պապալաճ— 503
Պարագաս— 543
Պարաիրներեն— *կարախրների լեզուն*:— 121, 125, 370
Պարա-Կայսադ— 539
Պարաճգա—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու լեզուների մաշնա (ռոդեզիական) խմբին*:— 221, 222, 282
Պարաբարներեն— 482
Պարայայ(երեն)—543
Պարապա— 539
Պարելներեն— 536
Պարիացիների լեզու— 553
Պարրիներ—*Ամերիկյան հնդկացիական լեզու, որ պատկանում է ամերասկյան խմբին*:— 215
Պաֆիա—*Քամյան բնաճանքի եթովպական հյուսքի լեզու՝ Աֆրիկայում*:— 45—46
Պելտական հյուս ճիղնվռոպական բնատաճիրի:— 403, 405, 464—465, 482, 583, 501, 512, 514—518, 549—550, 587, 590—591, 602
Պելտներեն— 465, 502, 511, 590, 598
Պենտռոճական բարբառներ նոր պարսկերենի— 477
Պենտռոճական լեզուներ կովկասյան բնատաճիրի կասպյան հյուսքի— 539
Պենտռոճական հյուս ճիղնվռոպական լեզուների— 602
Պիլիկնցիների լեզու— 553
Պիկամի—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*:— 221
Պիկոճգա—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*:— 221
Պիմրներեն կամ վելշներեն— 516, 587, 597
Պինգա—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*:— 221
Պիպրական բարբառ հին հունարենի— 494
Պիրգիզ(երեն)— 543
Պյուրին(երեն) կամ լեզգի(երեն)— 540
Պոլոշեն—*Ալյասկայի բնիկների լեզուն*— 310
Պոխինխիներեն (կոչինչիներեն)— 532
Պոմի— 536
Պոյեն— 141, 465, 495
Պոնգո—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*:— 222, 223—224, 283
Պոնկո *տե՛ս* Պոնգո:
Պոչինչիներեն *տե՛ս* Պոխինխիներեն:
Պոռայներեն— 402, 456, 557
Պովկասյան լեզուներ— 9, 22, 215, 225, 406, 456, 538—540, 541, 558, 560, 578—579
Պորաճա— 531
Պորներեն— 374, 544—545, 568
Պորյակ *տե՛ս* Նիմիլյան:
Պորներեն— 402—403, 516
Պրամա, Պրոմա — 127—128
Պրեոլ—*Նեգրական ցեղերի մատ գրածծվող պարզեցրած ֆրանսերեն, իսպաներեն կամ հոլանդերեն*:—415, 417

Ներառյինների լեզու— 553
Ներառ-ներառ— 534—535
Ներքանի— 539
Ներմուխ— 543
Ներհամա— Համյան բնաշխիքի սիրափոփոխ հյուսի լեզու— 399
Ներհանքի բարբառ հոդերենի— 479
Ներքամ(ներեն)— 543

Հարեւաններեն ած՝ ենթավարչներեն:
Հարեւներեն— 14, 23, 190, 402, 426, 491, 555, 581, 582, 598, 600—601
Հասանի— 526
Հարավային արաբերեն— 526
Հարավային կովկասյան լեզուներ ած՝ հարբվելական լեզուներ:
Հարավային սլավոնական լեզուներ— 507—508
Հարարի—527
Հեզարա ած՝ Հյմանի:—
Հիբիբերեն—189
Հիմյարի—526
Հին-անգլերեն (անգլս-սաքսոներեն) — 511, 597
Հին բակտրիերեն—478
Հին բարձր գերմաներեն—210, 382, 447, 448, 584—589, 594, 597
Հին բրիտանական լեզու—549—550
Հին գերմաներեն—447, 597
Հինդի—473, 568
Հինդուստանի—473, 526
Հին իբերերեն—549—550
Հին իտալներեն—447, 597
Հին իտալներեն—447, 585—589, 594, 597
Հին իրանական լեզու ած՝ հին պարսկերեն:
Հին լատիներեն—604
Հին լիտվաներեն—598
Հին կապադովկ(աց)երեն—554
Հին կելտերեն—515
Հին հյուսիսային լեզու—512—513, 597
Հին պարսկերեն—192—193, 201, 447, 470, 475, 479, 580, 583, 588—589, 600, 605
Հին պրուսերեն—402, 463, 505
Հին սամաներեն կամ սեռառամաց—503—504
Հին սուսերեն—598
Հին սամսոներեն—117, 511, 586—589
Հին սլավ(ոն)երեն—120, 121, 447—448, 453, 508, 584—589, 597, 604, 606
Հին Ֆրիգերեն—597
Հիպերբորյան կամ ենսախական լեզուներ—240, 388, 456, 545—546
Հյուզվարեր—476
Հյուսիս-արեւելյան բարբառ հին նուճարենի—494
Հյուսիսային արեւելյան կամ կասպյան խումբ կովկասյան բնաշխիի—538, 539—540
Հյուսիսային արեւմտյան խումբ կովկասյան բնաշխիի—538—539
Հյուսիսային խումբ ճղճվրապական բնաշխիի գերմանական հյուսի—512—514
Հյուսիսային կովկասյան լեզուներ—224, 381, 560
Հյուրհան, հյուրկիլի կամ ակուբա—539, 560

Ընտանական կամ հիպերբորյան լեզուներ—240, 388, 456, 545—546
Ընդհանրապական լեզուներ—23, 195, 241, 365, 373, 417, 452, 455, 459—518, 536, 540, 550, 558, 575—576, 581, 582, 584—591, 600—601, 607—608
Ընդհանրապական նախալեզու—24, 120, 131, 190, 194, 249, 405—406, 425, 452, 453—454, 458, 459, 460, 461, 464, 465, 566, 584—592, 593—594, 595, 599, 601—604, 607, 608—609
Ընդհական լեզուներ—470, 471—474, 533
Ընդհերեն—14—15, 23, 360—361, 374, 377, 405, 448, 461, 470, 471—474, 477, 482, 505, 606
Ընդհանրեն կամ Ֆրամաներեն—138, 378, 415, 447, 511, 531, 568, 588—589
Ընկա լեզվախումբ ամերիկյան լեզուների—547
Ընտանդոս-բուսմենական լեզուներ—455, 531

Հոտնդոտներեն—531
Հունարեն—9, 14, 23, 28, 58, 60, 61, 66, 67, 68, 120, 121, 131, 137—138, 142, 159, 189, 190, 198, 228, 248, 255, 257, 278, 279, 288, 310, 312, 313, 336, 346, 350, 351, 360, 361, 365, 371, 373—374, 376, 377, 378, 379—380, 381—383, 387—388, 392, 398, 400, 401, 414, 415, 424, 426, 427, 432, 435, 447—448, 453, 457, 458, 464, 465, 467, 469, 482, 483, 487, 488, 489, 492—496, 499, 501, 504, 505, 512, 515, 520, 521, 522, 524, 527, 538, 544, 553, 554, 576, 579, 580, 532, 583, 584—590, 591, 592, 594, 597, 598, 600, 602, 605
Հունգարերեն կամ մաջարերեն—211, 276, 279, 381, 391—392, 448, 535, 536, 540, 563, 570, 584, 607
Հուպա—546
Հուրրի *տե՛ս* խուրրիերեն:

Պալիերեն—528
Պրիմի բարբարերեն—543

Ռամալալ—225—226, 539
Ռապանուերեն—66, 118—119, 125—126, 245, 255, 257, 312, 313, 381, 544—545, 568
Ռապան-կարոլական լեզուներ—456
Ռոճ *տե՛ս* չոճ:

Մադյա—127—128
Մազանդարանի բարբառ նոր պարսկերենի—477
Մալայալամ—533
Մալայան լեզուներ—377
Մալայերեն—379, 526, 532
Մալայո-Պոլինեզյան լեզուներ *տես* ավստրոնեզյան լեզուներ:
Մակեդոնա-ռումանական բարբառ ռումիներենի—504
Մայա—546—547
Մանդայերեն—525
Մանդինգո—*1) Աֆրիկյան լեզուների մի խումբ Սուդանում, Լիբերիայում, Սիերրա-Լեոնեում և Գվինեայում, կոչվում է նաև մանդե: 2) Նույն խմբի մանդե-ֆու հյուղի մեջ մտնող գլխավոր լեզուներից մեկը, որ կոչվում է նաև մալինկե:*—142—143
Մանիերեն—503, 518
Մանիհեական պահլավերեն—476
Մանջուրերեն—544, 558
Մաոնա—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին:*—221
Մաջարերեն *տե՛ս* հունգարերեն:
Մարաթի—473, 568
Մարերեն—480—481, 557
Մարիզյան կղզիների լեզու—*պատկանում է Ավստրոնեզիական բնտանիքի պոլինեզիական հյուղին:*—287
Մելանեզյան-Պոլինեզյան լեզուներ—547
Մերի—529
Մեսապերեն—496, 497—498
Մեհսիկայի լեզու—377
Միգրելերեն—533, 565, 578
Միջագետի բարբառ նոր պարսկերենի—477
Միջեայերեն *տե՛ս* Թալմուդերեն:
Միջին բարձր գերմաներեն—210
Միջին հնդկերեն—472
Միջին պարսկերեն *տե՛ս* պահլավերեն:
Միտաներեն 402, 559—560
Միխ—*Ամերիկյան հնդկացիական լեզու:*—46
Մյուսիերեն—553
Մոլդավերեն—504
Մոնղոլական լեզուներ—542, 544
Մոնղոլերեն—399, 540, 544
Մոն-Խմեր—532, 534, 548
Մոսի—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին:*—222
Մովաբերեն 520
Մորվիներեն 448, 536, 584
Մունդա լեզուներ—532, 534, 561

Ցաբարաննա—546
Ցաղնոբի—480
Ցանա—*Ամերիկյան հնդկացիական լեզու:*—126

Տառ—*Աքրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*:—221
Տարեգիրեց—496—497
Տատուցիկ—*Աքրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*:—221
Ցիզղան բարբառ նոր պարսկերենի—477
Ցանիական բարբառ հին նուճարենի—494, 495
Ցուկագիր—124, 546
Ցուռուֆ—543

Նաբաթերեց—522—523
Նախանճլլնեական լեզուներ—436, 532—534
Նախամոյաց լեզուներ—529
Նահուատլ—546—547
Նամա—531
Նգոկո—127—128
Նգոնի—*Աքրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*:—221
Նեգերերեց—250, 457, 537
Նիմիլյանների կամ հարյակերեց—244, 546
Նյանջա—*Աքրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*:—221
Նոգայ(երեց)—543
Նովիալ—*Արմենական լեզու, որի հնդիկն է Նպակրաները*:—147
Նորալաիհի լեզուներ տե՛ս Թամանական լեզուներ:
Նոր սաորերեց—525
Նոր երթայեցիերեն տե՛ս Թալմուդերեց:
Նոր ճոգիերեց—472—474
Նորմանդերեն կամ Նորմանդիայի բարբառ Ֆրանսերենի—141, 502
Նոր պարսկերեց տե՛ս Պարսկերեց:
Նորվեգերեց—120, 422, 447, 513—514, 565

Շամպայնի բարբառ Ֆրանսերենի—502
Շիլլուգ—*Աքրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*:—221
Շիզնի բարբառ նոր պարսկերենի—477
Շլյոհ—528
Շխաուրի— 526
Շոնա— *Աքրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*:—221
Շոպյանցիերեն— *Ընդմիջոցական բնաբնյուն կիլոտական լեզու*:— 129
Շվեդերեց— 56, 312, 391, 447, 514
Շուրվելը նույնն է՝ տե՛ս Սուրվելը:

Ջազաբայերեց— 397, 543
Ջեխերեց— 195, 400—401, 446, 507
Ջիլնեական բառերեց— 538
Ջիլնեական լեզուներ— 539
Ջիլներեց— 224—227, 539
Ջերմիսերեց— 448, 536, 607
Ջերվերեց— 57, 226, 539, 560
Ջթախերեց— 543
Ջիլուբա— *Աքրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*:— 221
Ջիկիտա— *Ամերիկյան ընդլեզվական լեզու*:— 126—127
Ջինական նյուղ չին-տիբեթական բնաճիի— 534
Ջինանեկ— *Ամերիկյան ընդլեզվական լեզու*:— 68
Ջինարեց— 22, 57, 66, 68, 137, 146, 150, 155, 190, 204—206, 209, 245—248, 302—304, 306, 308, 312, 313, 360, 365, 374, 376, 379, 381, 399, 415—416, 427, 449, 453, 493, 532, 534—535, 545, 568, 575, 600, 601, 603, 604
Չին-տիբեթական լեզուներ— 456, 534—535
Չոն կամ ճոն— 547
Չուղ տե՛ս Վեպսերեց:
Չուվաշերեց— 543
Չուխչի— 125, 546

Պազենդ— 476
Պալի— 472
Պալմիրերեց— 523
Պահլավերեց— 25, 193, 201, 380, 390, 436, 447, 475—476, 580, 598
Պամիրի բարբառներ նոր պարսկերենի— 477
Պամփյուլիական բարբառ հին նուճարենի— 494
Պապուասերեց
Պապուասյան լեզուներ } 244, 532—533

Պարսկերեն— 9, 57, 66—68, 119, 121, 122, 137, 138, 140, 163, 192, 193, 198, 201, 247—248, 255—257, 280—281, 300, 305, 306, 310, 312—314, 336, 346, 351, 355, 360, 365—366, 371, 373—377, 381, 394, 396—398, 410, 424, 436, 447, 473, 479, 525—526, 559, 576—578, 580, 582, 588—591, 595, 598, 599, 605
Պելասգերեն— 553
Պեչենեգ— 543
Պերմական խումբ ուգրո-ֆիննական ընտանիքի— 535
Պիկարդերեն կամ պիկարդական բարբառ ֆրանսերենի— 141, 502
Պիջին անգլերեն— *Առավել չափով պարզեցրած անգլերեն, որ գործածվում է Մեյանկիայի և Հեռավոր արևելյան մի շարք ժողովուրդների մոտ*:— 415—417
Պյու— 534
Պիսիդացիների լեզու— 553
Պոլաբերեն— 402, 507
Պոլինեզյան լեզուներ— 190, 215
Պորտուգալերեն— 142, 191, 223, 386, 389, 419, 445, 467, 507, 565—566, 568
Պրակրիս— 472
Պրովանսալ— 280, 445—446, 502, 503, 565
Պրուսերեն *տե՛ս* Հին պրուսերեն:
Պուտոսի բարբառ ֆրանսերենի— 502

Ջանջերո (ցանգերո)— *Բամյան բնաառնիքի քուշյան խմբի լեզու*:— 133—134
Ջավայերեն— 56, 127—129, 135, 308—309, 370, 530
Ջեկ— 540
Ջինգի— *Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*:— 221

Ռաջաստանի— 568
Ռեհաոմաց— 281, 445—446, 503—504
Ռիֆ— 281, 528
Ռոմանական կամ նորալատին լեզուներ — 119, 121, 147, 191, 198, 361, 373—374, 417, 500, 501—504, 549, 576, 600, 604
Ռոմաներեն *տես* ռեհաոմաց
Ռոմաներ կամ ռոմաներ *տե՛ս* ռեհաոմաց
Ռոնգա— 539
Ռոշաճի բարբառ նոր պարսկերենի—477
Ռումիներեն— 191, 374, 417, 445—446, 491—492, 504, 544, 568, 588—589, 604
Ռուսական ցիգաներեն *տես* Գնչուական լեզուներ
Ռուսերեն— *Առաջյալ օվիհանոսի տիեզերն ուսա և նորվեգացի ձկնորսների հորինած լեզուն, որ հիմնված էր ռուսերենի և նորվեգերենի վրա*:—417
Ռուսերեն— 9, 20, 22, 56, 60, 66—68, 112, 114, 121, 122, 130, 137, 140, 142, 143, 145, 146, 150, 160, 163, 189—190, 195, 211, 217, 228, 252, 253, 255—257, 279, 288, 291, 303, 304, 310—313, 335, 355, 359, 360, 365, 370, 373, 374, 377—379, 381, 382, 384, 385, 388, 391, 392, 394—397, 399, 400, 403—411, 414, 420, 423—424, 435, 436, 446, 449, 452, 453, 457, 461, 464, 467, 483, 501, 506—507, 509, 527, 538, 542, 544, 566, 568, 570, 575, 576, 580, 588—589, 592, 593, 604—606
Ռուսիներեն *տե՛ս* ուկրաիներեն:
Ռուտուլ— 540

Սաբայերեն—448, 525
Սաբեական լեզու—526
Սաբելյան բարբառներ հնդեվրոպական ընտանիքի իտալական ճյուղի օսկյան-ումբրիական խմբի—498—499
Սաբիր *տես* Ֆրանկ լեզու
Սակերեն—480
Սանկեռաչ—*Աբիսեռական լեզու, որի հնդինակն է գմյուռնիացի մի հայ*:—146
Սամարերեն—521
Սամոյեդերեն *տես* Ենենցերեն

Սամուրյան լեզուներ կովկասյան բնաճիւղի կասպյան ճյուղի—539—540
Սանգլիչի բարբառ ճար պարսկերենի—477
Սանսկրիտ—14—15, 58, 68, 121, 150—151, 189, 228, 254, 258, 277—278, 288, 303—305, 309, 346, 376, 447—448, 451, 462, 471, 472, 477, 482, 488, 505, 530, 576, 580, 582, 584—586, 591, 592, 597, 598, 600, 605
Սասանյան պահլավերեն տես Պահլավերեն:
Սարդինա կարթիկական բարբառ իտալերենի—502
Սարիխուլի բարբառ ճար պարսկերենի—477
Սաոս—543
Սեմական լեզուներ—50, 190, 195, 229, 246, 370—371, 373, 452, 455, 518—527, 529, 540, 558, 576, 581, 594, 599—601, 607—609
Սեմական նախալեզու—452
Սեմնանի բարբառ ճար պարսկերենի—477
Սենա—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանաոա խմբին:*—221
Սենտոգի բարբառ ֆրանսերենի—502
Սեսուտո—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանաոա խմբին*—221
Սերբերեն—113, 255, 278, 400, 446, 451, 507, 508, 565
Սերեր—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանաոիգ լեզվախմբի առանձնական հյուղին:*—222
Սիամերեն—204, 203, 224, 535
Սիկուլերեն—498
Սինգալի—473
Սինդի—473
Սիցիլիական բարբառ իտալերենի—502
Սիուան—*Ամերիկյան լեզուների համանուն խմբի դյուտոր լեզուներից մեկը*—125
Սլավ(ոն)ական լեզուներ—147, 373—374, 385, 385, 391—392, 400, 448, 471, 482—483, 501, 504, 506—509, 587—591, 593, 606
Սլավ(ոն)ական մեռոր լեզու—565
Սլավ(ոն)երեն—447, 467, 469, 526, 591, 598
Սլավոներեն—448
Սլավներեն—386, 446, 507—508
Սլավնգներեն—507
Սկանդինավյան լեզուներ—576
Սկյութերեն—480
Սկոչերեն—518
Սոգդերեն—480, 598
Սոմալի—528
Սորոքերեն կամ Վեպսերեն—385, 446, 507
Սոնղորի—525
Սվահիլի—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանաոա խմբին*—217—220
Սվաներեն—538
Սեռերի գերմաներեն—507, 511
Սեռերի լատիներեն—66, 499, 501, 502, 604
Սուդանական լեզուներ—526—527, 529
Սուկում—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանաոա խմբին*—221
Սումերերեն—102, 453, 455, 557—558

Վալոխերեն բարբառ ռումիներեն—504
Վալլոնի բարբառ ֆրանսերենի—502
Վախի բարբառ ճար պարսկերենի—477
Վանգալերեն—514
Վարկուճ—539
Վեսախի—*Ամերոնդիլիական բնաոանիքի մեկանգյան խմբի լեզու*—120
Վեզայական ճգնկերեն—131, 471
Վելշերեն տես կիմրերեն:
Վենդերեն տես սորաբերեն:
Վենետերեն—496
Վենետիկյան բարբառ իտալերենի—502
Վեպսերեն կամ Զուդ—536
Վերիկերեն կամ կանթաբերեն—224, 225, 561
Վոգուլերեն—448, 535, 584, 607
Վոթյակերեն տես Վոտյակերեն:
Վոլտայուկ—*Արվեստական լեզու, որ հորինել է Շլայերը*—146, 150
Վոլոֆ—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանաոիգ խմբի առանձնական հյուղին*—221, 223

Վասյակերեն—448, 535—536, 584, 607
Վրացերեն 9, 60, 66, 113, 140, 191, 215, 245, 255—257, 279, 312, 313, 366, 373, 380, 384, 392—393, 405, 419, 424, 538, 540, 560, 564, 565, 578—579, 581—582, 583, 594

Տաբասարան տե՛ս բաբասարան:
Տախտա—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*—221
Տակուենա—*Բրազիլիայի բնիկների լեզուներ*—56
Տանիսի—*Ավստրոնեզիական ընտանիքի պոլինեզյան ճյուղի լեզու*—283—284
Տանկերեն տե՛ս բյուրմերեն:
Տայեցիների լեզու—406
Տասմանացիների լեզու—548
Տելուգու—533, 568
Տիբեթ-Բիրմանական լեզուներ—534
Տիբեթերեն—133, 204, 282, 534, 535
Տիգրե—399, 527
Տիգրինյա—527
Տիմուկվա—*Ամերիկյան հնդկացիական լեզու*—286—287
Տինգի—539
Տիվ—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*—221
Տոսկանական բարբառ իտալերենի—502
Տրանսիլվանիայի բարբառ ռումիներենի—504
Տուկ—*Ավստրոնեզիական ընտանիքի մելանեզիական ճյուղի լեզու*—217
Տուարեգ(երեն)—528
Տուլուդ—*Ամերիկյան հնդկացիական լեզու*—284
Տունգուսական լեզուներ—542, 544
Տունգուսերեն—245, 544
Տունգուս—*Մանջուրական լեզուներ*—23
Տուրուբալ—*Ավստրալիական լեզու*—285

Ցակոնական բարբառ նոր հունարենի—495
Ցվա—*Աֆրիկյան լեզու, որ պատկանում է բանտու խմբին*—221

Ուբիխերեն—225, 539
Ուգրո—Ֆիննական լեզուներ—391, 456, 471, 535—537, 540, 575, 576, 607
Ուգրո—Ֆիննական նախալեզու—584
Ուդի կամ ուդեխ—*Տունգուս-մանջուրական խմբի լեզու*—23
Ուկիուս 560—561
Ուկրաիներեն—446, 507, 567, 568
Ումբր(ի)երեն—498—499
Ունդուրերեն—543
Ունիվերսալ—*Արվեստական լեզու, որ հորինել է դոկտոր Մոլենարբյ*—146
Ուտիերեն—410, 420, 426, 540, 564
Ուրալ—Ալթայական լեզուներ—540
Ուրալական (ուրալյան) լեզուներ—537, 540
Ուրդու—473

Փաեզու—478
Փարսի—477
Փենջաբի—473, 568
Փյունիկերեն—141, 448, 520, 521
Փշավ բարբառ վրացերենի—538
Փոյլ—530
Փոքր-ասիական լեզուներ—456, 552—554
Փոյուգական կամ Բրակո-փոյուգական ճյուղ ինդոեվրոպական լեզուների—464—465, 491—492
Փոյուգերեն—14, 181, 402, 426, 442
Քաղդեարեն } *տե՛ս* Աքքադերեն
Քաղդիերեն }
Քամյան լեզուներ—455, 527—529, 599, 607—609
Քամյան-սեմական լեզուներ—529, 608
Քանաներեն—519—520
Քաոմիրի—473
Քարթվելական կամ Հարավային կովկասյան ճյուղ կովկասյան բնիսաների—538, 539
Քարօնցի—524
Քաֆիր(ի)—221, 473
Քիրմանճահի բարբառ իրլերենի—479
Քմեր կամ Կամբոջերեն—532
Քոյբալ—543
Քրդերեն—68, 195, 252, 351, 371, 374,

388, 400, 447, 451, 467, 479, 525—526, 544, 588—589
Բառյաց լեզուներ—526, 527, 528—529
Բառերեն—462, 465, 481—482

Գրաբարեն—543
Գան(ք)երեն—406, 480, 538, 598—599, 598
Գոհյաց խումբ ճգնավորական լեզուների խոտական հյուսի—498—499
Գոհյաց—ուժբրիական (ուժբրյաց) խումբ ճգնավորական բնռաճիի խոտական հյուսի—498—499
Գամանյաց «ծ'» բյուրերեն:
Գաղակերեն—448, 535, 584, 607
Գվիրյա | բարբառ պրովանսալի—303, Գվեռյա | 565
Գվկիաճիայի լեզուներ | —13, 548
Գվկիաճյաց լեզվախումբ |
Գրիա—173, 568
Գմախնեցոյ—Հրչեռաբաղեն լեզու—147

Դալիսկներեն լեզու—498
Դերոյերեն—514
Դիցաբանական լեզուներ—540
Դիցներեն—391—392, 448, 536, 584, 607
Դյուամներեն (նեղաճղերեն)—372, 511
Դրանի լեզու—[illegible] հարևան գրաբարյան արչեռաբաղեն լեզու—416
Դրանիզներեն բարբառ գերմաներեն—510
Դրանիա—Գրոմանսալ բարբառ ֆրանսերենի—502
Դրանսերեն—9, 13, 35, 36, 60—61, 66—68, 212, 113, 117—119, 121—123, 129, 138, 141—142, 146, 151, 152, 159, 172, 177, 188, 191, 192, 194, 196, 199, 211, 223, 247—248, 252, 253, 255, 257, 278, 279, 288, 290, 291, 302, 305, 310, 311, 312, 313, 335, 344—345, 346, 354, 355, 360, 361, 364, 365, 366, 372, 373, 374, 379, 379—380, 382, 383, 384, 385, 386, 387, 391, 396, 397, 399, 400, 404, 405—406, 410, 411, 414, 415, 417, 418—419, 420—421, 431, 433, 434, 437, 445—446, 449, 450—451, 453, 457, 459, 467, 502—503, 507, 515, 527, 565, 568, 576, 588—589, 591, 598, 603, 604,
Դոիգներեն—447, 512

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ա. ԼԵԶՈՒՆԵՐ

(Բառասկզբում՝ ճ = ճիճ, մ = միջին, ճ = ճոր)

աբեղ.—աբեղաներն
այր(ան).— այրաններն
ակկաց.— տե՛ս *աբբաց.*
անգլ.— անգլներն
անգոք.— անգլոսաքսոներն
աշխ.— աշխարհաբար
ասք(որ).— ասքերներն
առուբ.— առուբներն
ավաբ.— ավաբերեն
արաբ.— արաբերեն
արամ.— արամերեն
աբբաց.— աբբացներն
ածիղ(ան).— ածիղաններն
բարբ.— բարբառներն
բասկ.— բասկերեն
բելուջ.— բելուջներն
բոշ(ա).— բոշաներն
բուլղ(ար).— բուլղարերեն
բուբ(յաթ).— բուբյաթերեն
բրեհ(ան).— *բրբռ(ան)* } բրեհաններն
գաել.— գաելյան
գալլ.— գալլերեն
գերմ.— գերմաներեն
գնչ.— գնչուներն
գոթ.— գոթերեն
դբր.— դպրաբար
դան.— դանիերեն
դրավիդ.— դրավիդյան
երբ.— երբայեցերեն
եգիպտ.— եգիպտացերեն
եթովպ.— եթովպացերեն
եվր.— եվրոպական
զիբ(յան).— զիբյաներեն
զնդ.— զենդերեն
էսկ(իմոս.).— էսկիմոսերեն
էստ(ոն).— էստոներեն
էտրուսկ.— էտրուսկերեն
թաթ.— թաթերեն
թբք.— թաթարերեն
թոխ(ար).— թոխարերեն
թուշ.— թուշերեն
թրք.— թուրքերեն
ինգուշ.— ինգուշերեն
իռլ.— իռլանդերեն
իսլ.— իսլանդերեն
իտալ(ան).— իտալներեն
իտալ.— իտալերեն
իրան.— իրանական
լադ.— լադերեն
լակ.— լակերեն
լապպ.— լապպերեն
լատ.— լատիներեն
լեզգ.— լեզգիերեն
լեթթ.— լեթթերեն
լեհ.— լեհերեն
լեռնբ.— լեռնբական
լիվ.— լիվերեն
լիտ(վան).— լիտվաներեն
լտ.— լատիներեն
կաշուբ.— կաշուբերեն
կելտ.— կելտերեն
կելտկ.— կելտական հայերեն
կիմբ.— կիմբերեն

ֆիզ.գիտ.— ֆիզիկա-գիտական
ֆոտ.— ֆոտոնկարչություն
ֆոտոռեպ.— ֆոտոռեպորտաժ
ֆտիզ.— ֆտիզիատրիա
քաղ.— քաղաքագիտություն
քանդ.— քանդակագործություն
քանակ.— քանակական
քարտ.— քարտեզագրություն
քեմ.— քեմիական
քերթ.— քերթողություն
քիմ.— քիմիական
քիմ. տեխն.— քիմիական տեխնոլոգիա
քոլեջ.— քոլեջական
քրիստ.— քրիստոնեական
քրոմոլ.— քրոմոլիտոգրաֆիա
քրոնիկ.— քրոնիկական
քրտնագ.— քրտնագործական
քրտնաբ.— քրտնաբերական
քրտնագ.— քրտնագործական
քրտնագ.— քրտնագործական
քրտնագ.— քրտնագործ

բ. ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐ, ԵՆԹԱԲԱՐԲԱՌՆԵՐ ԵՎ ԽՈՍՎԱԾՔՆԵՐ

Ագլ.— Ագուլիս՝
Ալշ.— Ալաշկերտ
Ախց.— Ախալցխա
Ախք.— Ախալքալաք
Անտ.— Անտիոք
Առտ.— Աստիալ
Ասլ.— Ասլանբեկ
Աբբ.— Աբարկիր
Բգ.— Բագեշ
Գոբ.— Գոբիս
Եվդ.— Եվդոկիա
Երև.— Երևան
ՋԲ.— Զեյթուն
Թբիլ.— Թբիլիսի
Թևհ.— Թեհրան
Լհ., Լհհ.— Լեհաստան
Ներք.— Ներքերդ
Կես.— Կեսարիա
Կր.— Կարին
Կրճ.— Կարճևան
Հճ.— Հաճին
Համշ.— Համշեն
Հնդ.— Հունդաբահայ
Հվբ.— Հավարիկ
Ղբ.— Ղրիմ
Ղբբ.— Ղարաբաղ
Մժ.— Մուժումբար
Մլք.— Մալաքիա
Մկ.— Մակք
Մղ. Մղբ.— Մեղրի
Մն.— Մանիսա
Մշ.— Մուշ
Մրզ.— Մարզպա
Նկ.— Նիկոմեդիա
Ննխ.— Նոր-Նախիջևան
Նջ.— Նոր-Ջուղա
Շմ.— Շամախի
Ոզմ.— Ոզմի
Զլ.— Զալթը
Գլ.— Գալիս
Զղ.— Զուղա
Ռ.— Ռոտոսթո
Ռմ., Ռում.— Ռումինահայ
Սեբ.— Սեբաստիա
Սլմ.— Սայմաստ
Սչ.— Սուչավա
Սվ.— Սիվրիհիսար
Սվեդ.— Սվեդիա
Վն.— Վան
Տիզ.— Տիգրանակերտ
Տբ.— Տրապիզոն
Ցղ.— Ցղնա

ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

	Էջ
Հրատ. Աճառյանը և իր «Վիճակաւոր Ռուսկաճուրյան հետաքրքրությունը»	I
ԱՌԱՋԻՆ ՄԱՍ. ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	
Դասախ Ա. Լեզվաբանությունը իր գիտությունն	3—21
1. Ի՞նչ է լեզվաբանությունը	3
2. Լեզվաբանության տեղը գիտությունների մեջ	
3. Լեզվաբանության կապը ուրիշ գիտությունների հետ	
4. Հայերենի ժամանցած ծառայությունը գիտության	22
Դասախ Բ. Ի՞նչ է լեզուն	27—48
Դասախ Գ. Լեզվի ծագումը	49—85
Դասախ Դ. Լեզվի հոգեբանական կողմը. ներքին լեզու և արտաքին լեզու	86—98
1. Լեզուն իբրև գործիք քաղաքացիության	93
2. Լեզուն իբրև գործիք հղմաբանության	93
3. Լեզուն իբրև գործիք համառոտության	94
4. Լեզուն իբրև միջոց հիշողության	95
5. Լեզուն իբրև գործիք վերլուծման	96
Դասախ Ե. Լեզվի բնախոսական կողմը	99—109
Դասախ Զ. Լեզվի հասարակական կողմը	110—130
Դասախ Է. Լեզվի փոխանցումը	131—185
Դասախ Ը. Լեզվի էվոլյուցիան	186—202
Դասախ Թ. Լեզվի կենսաբանությունը	203—230
Դասախ Ժ. Լեզվի հատկություններ և կատարելություն	231—367
1. Լեզվի գեղեցկություն	231
2. Լեզվի հարստություն	287
3. Լեզվի հոխություն	303
4. Լեզվի համառոտություն	307
5. Լեզվի անգամություն	331
6. Լեզվի կանոնավորություն	333
7. Լեզվի հասկություն	336
8. Լեզվի պարզություն	345
9. Լեզվի ժպրություն	350
10. Լեզվի առոգանիություն և կատարելություն	359
Դասախ ԺԱ. Ուսուցչության	368—429
Դասախ ԺԲ. Աշխատական կամքը լեզվի մեջ	430—440
Դասախ ԺԳ. Լեզվաբանության բաժինները	441—447

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ. ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ ԺԲ. Լեզուների ցեղակցությունը . . . . . 445—561
1. Հնդեվրոպական ընտանիք 459
2. Սեմական ընտանիք 518
3. Քամյան ընտանիք 52
4. Աֆրիկյան ընտանիք 53
5. Ամատական ընտանիք 531
6. Դրավիդյան ընտանիք 532
7. Անդաման ընտանիք 533
8. Չին-տիբեթական ընտանիք 534
9. Ուգրո-ֆիննական ընտանիք 535
10. Կովկասյան ընտանիք 538
11. Ալթայական ընտանիք 540
12. Ճապոներեն և կորեերեն 544
13. Այնու 545
14. Հիպերբորյան կամ հնասիական լեզուներ 545
15. Ամերիկյան լեզուներ 546
16. Ավստրալիական լեզուներ 547
17. Անհայտ լեզուներ 549
Գլուխ ԺԵ. Լեզուների վիճակագրությունը և դասակարգումը . . 562—573
Գլուխ ԺԶ. Լեզվարեւսաճիճների բնորոշումը . . . . . 575—583
Գլուխ ԺԷ. Նախալեզուների վերակազմումը . . . . . 584—606
Գլուխ ԺԸ. Ընդհանուր նախալեզու . . . . . 607—617
Հավելված . . . . . 519—633
Ցանկեր . . . . . 635—656
Լեզուների ցանկ 637
Համառոտագրությունների ցանկ 651
Նյութերի ցանկ 655

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅ
Ց. Ի Ա Ն
ԳՐԱԴԱ Ն Հ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱՉՅԱ ՀԱԿՈԲՅԱՆ

«Վիսկոզատար ճեղքանցության»
Ներածություն

Տեխ. խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՑԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ Ա. Հ. ՇԱՂԿԱՄՑԱՆ

Վ 13728 Հրատ. 1122 Պատվեր 1 Տիրաժ 3000 Նշ. 241

Հանձնված է արտադրության 30/XII 1954 թ., ստորագրված է տպագրության 13/XI 1955 թ., քուղթ 70×108¹/₁₆, տպագր. 4³/₄ մաս.+ 1 ներդիր, հրատ. 35,9 մամուլ, Գինը 21 կ. 50 կ., կազմը 2 կ. Ը.Ո. 3Ճկ.

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան, Երևան, Աբովյան, 124.

ՎՐԻՊԱԿՆԵՐ

էջ	տող	տպված է	պետք է լինի
73	վ. 3	22200	222000
80	» 12	գանում ևն	գանում եմ
89	» 17—18	հնչյունախումբ է	հնչյունախումբ չէ
128	» 4	տարբեր պրակներր	տարբերբակներր
128	» 9	ѕărâ	čărâ
163	ն. 10	մեանում է	մնում է
204	» 5	բառկց	բայկց
237	վ. 9	uktunbnāni	uktubnāni
283	ն. 4	dictionsary	dictionary
284	» 2	land.	lang.
345	» 5	ձևոք ևն	ձևոք ևնք
362	» 19	աառություն	շաառություն
381	» 22	թարգմանություն	թարգմանություն է
396	» 13	hlč	hič
411	ն. 9	բառֆներեն	խառլերեն
415	վ. 1	Ա֊ի անքյոյ	Ս֊ի անքյոյ
415	» 1	Գլուխ Ա.	Գլուխ ԺԴ
446	» 12	սևբրևերնը	սոբաբևերնը
465	» 19	թոխաբներբ	թոխաբևերնի
465	ն. 3	(ջոյոր՝)	(ջոյոր՝)
469	վ. 18	Brugman, Grunriss	Brugmann, Grundriss
481	» 10	Eyimologie (strassbug)	Etymologie (Strassburg)
481	» 11	Nübschman	Hübschmann
488	ն. 10	առնուլէց > առնլոց	առնուլէց < առնլոց
523	» 11	stelling	Stellung
597	» 1	majva	majna
599	վ. 10	գասականի	ասասկանի
607	» 1	ժՍ.	ԺՀ
616	» 5	լոչ	ոչ

ՎՅ 13728 Հրատ. 1123 Պատվեր 1 Տիրաժ 3000 Թուղթ 241

Հանձնված է արտադրության 30/XII 1954 թ., ստորագրված է տպագրության 15/XI 1955 թ., թուղթ 70×108¹/₁₆, տպագր. 43¹/₄ մամ.+ 1 ներդիր, հրատ. 35,9 մամուլ, Գինը 21 կ. 50 կ., կազմը 2 կ. Ը.Ո. 3Հկ.

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան, Երևան, Աբովյան, 124.

2n.354

ԳԱԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0053954

ЦЕНА
II
814